Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

И. С. ТУРГЕНЕВ

Избранные произведения

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН–1985

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

Ընտիր գրքեր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ–1985

ԳՄԴ 84 Ռ 1
Տ 991

Կազմեց
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵԼԵՔՅԱՆԸ

Տուրգենև, Ի. Ս.
Տ 991 ... Ընտիր երկեր. Թարգմ. ռուս. (Կազմ. Հ. Ֆելեքյան).— Եր.: Սովետ. գրող, 1985. 736 էջ։

Ժողովածուն ներկայացնում է ռուս մեծ գրողի «Նախօրեին», «Հայրեր և զավակներ» վեպերը, «Մումու» վիպակը, «Որսորդի հիշատակարան» պատմվածքների շարքը և արձակ բանաստեղծությունները։

4702010100 (275)
Տ ——————— 85 «Տ» ԳՄԴ 84 Ռ 1
705 (01)

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1985

ՆԱԽՕՐԵԻՆ

I

Բարձր լորենու շվաքում, Մոսկվա գետի ափին, Կունցևոյից ոչ հեռու, 1853 թվի ամառային ամենաշոգ մի օր, խոտի վրա պառկել էին երկու երիտասարդ։ Մեկը՝ տեսքով մոտ քսաներեք տարեկան, բարձրահասակ, թխադեմ, սուր և մի քիչ ծուռ քթով, բարձր ճակատով, զսպված ժպիտը լայն շրթունքների վրա, պառկել էր մեջքին և մտախոհ նայում էր դեպի հեռուն, փոքր ինչ կկոցելով իր փոքրիկ գորշ աչքերը. մյուսը պառկել էր կրծքի վրա, շիկահեր գանգուր գլուխը հենած երկու ձեռքին, նույնպես նայում էր հեռուն, մի ինչ-որ կետի։ Նա երեք տարով մեծ էր իր ընկերոջից, բայց ավելի ջահել էր երևում. նրա բեղերը նոր-նոր սկսում էին ծլել, իսկ ծնոտի վրա արդեն ոլորվում էր քնքուշ աղվամազը։ Մի ինչ-որ մանկական սիրունատեսություն, ինչ-որ գրավիչ վայելչություն կար նրա թարմ, կլոր դեմքի նուրբ դիմագծերում. նրա դուրալի շագանակագույն աչքերում, գեղեցիկ, ուռուցիկ շրթունքների և սպիտակ ու փոքրիկ ձեռքերի մեջ։ Ամեն ինչ նրա մեջ շնչում էր առողջության բախտավոր խրնդությամբ, շնչում էր երիտասարդությամբ, անհոգությամբ, ինքնավստահությամբ, շոյվածությամբ, երիտասարդական սքանչելիությամբ։ Նա աչքերը ման էր ածում դես ու դեն, և ժպտում, և գլուխը դնում ձեռքերի վրա, ինչպես այդ անում են այն երեխաները, որոնք գիտեն, որ իրենց վրա նայում են հաճույքով։ Նա հագել էր բլուզի նման լայն սպիտակ վերարկու, կապույտ թաշկինակ կապել բարակ վզին.

ճիլոված հարդե գլխարկն ընկած էր խոտի մեջ, նրա կողքին։

Ընկերը՝ նրա հետ համեմատած, երևում էր ծեր, և նայելով նրա անճոռնի կերպարանքին՝ ոչ ոք չէր կարծի, թե նա էլ է զմայլվում, նա էլ է իրեն լավ զգում։ Նա պառկել էր անհարմար դիրքով. նրա մեծ, վերևում լայն, իսկ ներքևում սրածայր գլուխը անհարմար էր նստել երկար պարանոցի վրա. անհարմարությունը արտահայտվում էր հենց ձեռքերի դրության մեջ, հենց նրա իրանի մեջ, որի վրա պինդ նստած էր կարճլիկ սերթուկը, նրա բարձրացրած ծնկներով երկար ոտների մեջ, որոնք նմանում էին ճպուռի հետևի ոտներին։ Այդ ամենով հանդերձ՝ չէր կարելի չընդունել, որ դա լավ դաստիարակված մարդ էր. «օրինավորության» դրոշմը նկատելի էր նրա ամբողջ ծանր ու անճոռնի էության վրա. և նրա դեմքը, որ գեղեցիկ չէր և մինչև անգամ քիչ էլ ծիծաղելի էր, արտահայտում էր մտածելու սովորություն և բարություն։ Նրան կոչում էին Անդրեյ Պետրովիչ Բերսենև. նրա ընկերը, խարտյաշ երիտասարդը, անվանվում էր Պավել Յակովլևիչ Շուբին։

— Ինչու դու էլ չես պառկում ինձ նման կրծքի վրա,— սկսեց Շուբինը։— Այսպես ավելի լավ է։ Մանավանդ երբ բարձրացնում ես ոտներդ և միմյանց ես խփում կրունկներդ, ահա այսպես։ Քթիդ տակ է խոտը. երբ կզվեցնի դաշտանկարները դիտելը՝ նայիր մի որևէ տոզիկ բզեզի, տես ինչպես է նա սողում ծղոտի վրա, կամ թե ինչպես մրջյունը ոտք ու ձեռք է ընկել։ Ճիշտ եմ ասում, այսպես լավ է։ Թե չէ դու այժմ մի ինչ-որ կեղծ-կլասիկ դիրք ես ընդունել, ճիշտ այնպես, ինչպես բալետում պարող դերասանուհին, երբ նա կոթնում է ստվարաթղթից շինած ժայռին։ Հիշիր, որ դու այժմ կատարյալ իրավունք ունես հանգստանալու։ Հանաք բան է ասել—ավարտողների մեջ երրորդ թեկնածուն ես։ Հանգստացեք, սբր, հերիք է, ինչքան լարվեցիք, ազատ մեկնեցեք ձեր անդամները։

Շուբինը այս ամբողջ ճառն արտասանեց քթի մեջ, կիսով չափ ծուլորեն, կիսով չափ հանաքով (երևս առած երեխաներն այսպես են խոսում տանու բարեկամների հետ, որոնք կոնֆետ են բերում նրանց համար) և, չսպասելով պատասխանի, շարունակեց.

— Ամենից շատ ինձ ապշեցնում է մրջյունների, բզեզների և այլ պարոն միջատների զարմանալի լրջությունը. վազվզում են ետ ու առաջ այնպիսի կարևոր կերպարանքով, կարծես թե նրանց կյանքն էլ մի բան է նշանակում։ Ասացեք խնդրեմ. մարդը, արարածների թագավորը, էակներից բարձրագույնը նայում է նրանց, իսկ նրանք իսկի ասես գործ էլ չունեն մարդու հետ. թերևս, դեռ մի ինչ-որ մոծակ կնստի արարածների թագավորի քթին ու նրան իր կերակուրը կդարձնի։ Դա վիրավորական է։ Իսկ մյուս կողմից, նրանց կյանքն ինչո՞վ է վատ մեր կյանքից։ Եվ ինչո՞ւ նրանք չպիտի հպարտանան, եթե մենք թույլ ենք տալիս մեզ հպարտանալ։ Հապա, փիլիսոփա, բացատրիր ինձ այս խնդիրը։ Ի՞նչ ես լռում։ Հը՞։

— Ի՞նչ...— խոսեց, սթափվելով, Բերսենևը։

— Ինչ,— կրկնեց Շուբինը։— Բարեկամդ քո առաջ խոր մտքեր է արծարծում, իսկ դու չես էլ լսում։

— Ես հրճվում էի տեսարանով։ Տես, ինչպես են այս դաշտերը ջերմությամբ փայլում արևի տակ (Բերսենևը մի փոքր շշնջալով էր խոսում)։

— Կարևոր բան է,— արտասանեց Շուբինը։— Բնությո՞ւն...

Բերսենևը գլուխը թափահարեց։

— Դու պետք է ինձանից ավելի շատ հրճվեիր այս բոլորով։ Դա վերաբերում է քեզ. դու արտիստ ես։

— Ո՛չ, սա իմ բնագավառը չէ,— առարկեց Շուբինը և գլխարկը դրեց ծոծրակին։— Ես մսագործ եմ. իմ գործը— միսն է. միսը ծեփել, կպցնել ուսեր, ոտներ, ձեռքեր, իսկ այստեղ ձև չկա, ավարտվածություն չկա, ամեն ինչ ցրիվ եկած այս ու այն կողմ... Դե գնա, բռնիր։

— Բայց չէ՞ որ այստեղ էլ գեղեցկություն կա,— նկատեց Բերսենևը։— Ի դեպ, վերջացրի՞ր բարելյեֆդ։

— Ո՞րը։

— Երեխան այծի հետ։

— Գրողի ծոցը գնա թող։ Գրողը տանի,— բացականչեց Շուբինը։— Նայեցի իսկականներին, ծերունիներին, հին դասական ստեղծագործություններին ու փշրեցի իմ անհեթե-

թությունը։ Դու լենձ ցույց ես տալիս բնությունն ու ասում. «Այստեղ էլ կա գեղեցկություն»։ Իհարկե, գեղեցկություն կա ամեն բանի մեջ, մինչև անգամ քո քթի մեջ էլ, բայց ամեն տեսակ գեղեցկության հետևից չեն վազում։ Մերերը չէին էլ վազում դրա հետևից, գեղեցկությունն ինքն էր մտնում նրանց ստեղծագործությունների մեջ. իսկ թե որտեղից՝ աստված գիտե, երկնքից թե որտեղից։ Նրանց պատկանում էր ամբողջ աշխարհը, իսկ մենք այդքան լայն պարզվել չենք կարող, ձեռքներս կարճ է։ Մենք նեռում ենք կարթը մի փոքրիկ կետի վրա և հսկում. եթե կտցում է, հիանալի է։ Թե չի կտցում...

Շուբինը դուրս հանեց լեզուն։

— Սպասիր, սպասիր,— առարկեց Բերսենևը։— Դա պարադոքս է—անիմաստ կարծիք։ Եթե դու չես համակրի գեղեցկությանը, չես սիրի գեղեցկությունը ամեն տեղ, ուր որ էլ հանդիպես, այն քեզ մատչելի չի լինի, քո արվեստի մեջ չի երևա։ Եթե գեղեցիկ տեսարանը, գեղեցիկ երաժշտությունը ոչինչ չի ասում քո հոգուն, ես ուզում եմ ասել, եթե դու դրանց չես համակրում...

— Է՛հ, դու, համակիր...— վրա բերեց Շուբինը և ինքն էլ ծիծաղեց այդ նոր հնարած խոսքի վրա, իսկ Բերսենևը մտածության մեջ ընկավ։— Ոչ, սիրելիս,— շարունակեց Շուբինը,— դու խելոք ես, փիլիսոփա ես, Մոսկվայի համալսարանի երրորդ թեկնածուն ես, քեզ հետ վիճելը սարսափելի է, մանավանդ ինձ համար, որպես ուսումը չավարտած մի ուսանողի. բայց ահա թե ինչ կասեմ քեզ. բացի իմ արվեստից, գեղեցկությունը ես սիրում եմ միայն կանանց մեջ... աղջիկների մեջ, այն էլ մի քանի ժամանակից ի վեր...

Նա շուռ եկավ մեջքի վրա և ձեռքերը դրեց գլխատակին։

Մի քանի վայրկյաններ անցան լռության մեջ։ Կեսօրվա տաքի լռությունը ծանրացել էր շողշողուն ու քնած երկրի վրա։

— Ի դեպ, կանանց մասին,— նորից խոսեց Շուբինը։— Ինչո՞ւ ոչ ոք իր ձեռքը չի առնում Ստախովին։ Դու տեսե՞լ ես նրան Մոսկվայում։

— Ոչ։

— Մերուկը բոլորովին թացրել է խելքը։ Ամբողջ օրերով

նստում է Ավգուստինա Խրիստիանովնայի մոտ, սարսափելի տաղտկանում է, բայց էլի նստում է։ Շարունակ նայում են իրար. որքան հիմարություն... Մինչև իսկ զզվելի է նայել։ Դե արի ու հասկացիր. աստված այդ մարդուն ինչպիսի ընտանիք է շնորհել. չէ, նա Ավգուստինա Խրիստիանովնային է ուզում։ Ես այդ բադի կերպարանքից ավելի զզվելի բան չեմ ճանաչում։ Այս քանի օրերս ես կերտեցի նրա ծաղրանկարը Դանտանի ոճով[1]։ Վատ չի դուրս եկել։ Ես ցույց կտամ քեզ։

— Իսկ Ելենա Նիկոլաևնայի կիսանդրին,— հարցրեց Բերսենևը,— առա՞ջ է գնում։

— Չէ, սիրելիս, առաջ չի գնում։ Այդ դեմքից կարելի է միայն հուսահատվել։ Նայում ես. գծերը մաքուր են, խիստ, ուղիղ, թվում է, թե դժվար չէ որսալ նմանությունը։ Բայց չէ... Չի հաջողվում... Դու նկատե՞լ ես, ինչպես է նա ականջ դնում։ Դեմքի ոչ մի գիծը չի շարժվում, միայն հայացքի արտահայտությունն է անդադար փոխվում, իսկ դրանից էլ փոխվում է ամբողջ կերպարանքը։ Ի՞նչ անի այդ դեպքում քանդակագործը։ Զարմանալի էակ է... տարօրինակ էակ,— ավելացրեց նա կարճատև լռությունից հետո։

— Այո, նա զարմանալի աղջիկ է,— կրկնեց նրա հետևից Բերսենևը։

— Իսկը Նիկոլայ Արտեմիչ Ստախովի աղջիկն է։ Դրանից հետո դե արի ու դատողություններ արա արյան, ցեղի մասին։ Եվ զվարճալին այն է, որ Ելենան ճիշտ որ նրա աղջիկն է. նման է նրան, և նման է մորն էլ՝ Աննա Վասիլևնային։ Ես Աննա Վասիլևնային հարգում եմ ամբողջ սրտով, ախր նա իմ բարեբարն է. բայց չէ՞ նա մի հավ է... Որտեղի՞ց է Ելենան ժառանգել այդ հոգին։ Ո՞վ վառեց այդ կրակը։ Ահա կրկին մի խնդիր ևս քեզ համար, ով փիլիսոփա։

Բայց «փիլիսոփան» առաջվա պես ոչինչ չէր պատասխանում։ Բերսենևը, առհասարակ, շատախոսությամբ չէր

[1] Դանտանի ոճով—ֆրանսիական քանդակագործ Դանտանի ոճով, որը հռչակվեց մանավանդ իր փոքրիկ կիսանդրիներով և արձանիկներով, որոնք ներկայացնում էին նրա ժամանակակից հայտնի մարդկանց ծաղրանկարները։

մեղանչում և, երբ խոսում էր, արտահայտում էր իր միտքը անշնորհք կեցվածքով, հաճախ դեմ ընկնելով, անտեղի շարժելով ձեռքերը. իսկ այս անգամ մի առանձին խաղաղություն էր իջել նրա հոգու վրա, որը նման էր հոգնածության ու վշտի։ Նա նորերս էր բնակություն հաստատել քաղաքից դուրս, երկար և դժվար աշխատանքից հետո, որը օրական մի քանի ժամ էր խլում նրանից։ Անգործությունը, օդի մաքրությունն ու մեղմությունը, իրագործված նպատակի գիտակցությունը, քմահաճ և անփույթ խոսակցությունը ընկերոջ հետ, սիրելի էակի անսպասելիորեն հառնած պատկերը, այդ բոլոր բազմապիսի և միևնույն ժամանակ ինչ-որ պատճառով միմյանց նման տպավորությունները միաձուլվել էին նրա մեջ և գոյացրել մի ընդհանուր զգացմունք, որը նրան թե հանգստացնում էր, թե հուզում, թե ուժաթափ անում... Նա մի շատ ջղային երիտասարդ էր։

Լորենու տակ զով էր և հանգիստ. նրա շվաքի շուրջը թռչող ճանճերն ու մեղուները կարծես թե ավելի մեղմ էին բզզում. դմբուխտի գույն ունեցող և ոսկեգույն ցոլքերից գլուխ մաքուր, մանր խոտը չէր տատանվում. բարձր ցողունիկները կանգնած էին անշարժ, ասես հմայված. անկենդան կախվել էին դեղին ծաղիկների փոքրիկ փնջերը լորենու ստորին ճյուղերից։ Քաղցր հոտը ամեն մի շնչառության հետ նորս էր թափանցում կրծքի խորքը, բայց կուրծքը սիրով էր ներշնչում այդ հոտը։ Հեռվում, գետի մյուս կողմում, մինչև երկնակամարը ամեն ինչ շողշողում էր, ամեն ինչ վառվում. երբեմն միայն այնտեղ վազում էր թեթև քամին և մանրատում ու սաստկացնում այդ փայլը. երկրի վրա օրորվում էր ճառագայթափայլ գոլորշին։ Թռչունների ձայնը չէր լսվում. նրանք տոթ ժամերին չեն երգում. բայց ծղրիդները շրթշրթում էին ամենուրեք, և ախորժելի էր զով տեղ նստած, հանգիստ, լսել կյանքի այդ կրակոտ ձայնը, նա քուն էր բերում և զարթեցնում ցնորքներ։

— Դու նկատե՞լ ես,— հանկարծ սկսեց Բերսենևը՝ ձեռքերի շարժումներով օգնելով իր խոսքերին,— ինչ օտարոտի զգացմունք է զարթեցնում մեր մեջ բնությունը։ Ամեն ինչ բնության մեջ այնպես կատարյալ է, այնպես պարզ է. ես ուզում եմ ասել՝ այնպես զոհ է ինքն իրենից, և մենք

այդ հասկանում ենք և զմայլվում դրանով, և միևնույն ժամանակ նա, գոնե իմ մեջ, միշտ զարթեցնում է ինչ-որ անհանգստություն, ինչ-որ տագնապ, մինչև իսկ վիշտ։ Ի՞նչ է դա նշանակում։ Արդյո՞ք ավելի զորեղ կերպով ենք մենք զգում նրա առաջ մեր ամբողջ անկատարելությունը, մեր անորոշությունը, թե մեզ համար քիչ է դեռ այն բավարարությունը, որով նա բավականանում է, իսկ մյուսը, այսինքն ես ուզում եմ ասել՝ այն, ինչ որ մեզ հարկավոր է, նա չունի։

— Հըմ,— առարկեց Շուբինը,— ես քեզ կասեմ, Անդրեյ Պետրովիչ, թե ինչից է այդ ամենը առաջանում։ Դու նեգրագրեցիր մենակ մարդու զգացմունքները, որը չի տպրում, այլ միայն նայում է ու ընդարմանում։ Ինչո՞ւ նայել։ Ինքդ էլ ապրիր ու ամեն ինչ լավ կլինի։ Որքան էլ բախես բնության դուռը, նա հասկանալի խոսքով պատասխան չի տա, որովհետև նա համր է։ Նա ձայն կհանի, կմղկատ, ինչպես լար, իսկ երգ նրանից մի սպասիր։ Կենդանի հոգին. ահա նա կպատասխանի և այն էլ առավելապես կանացի հոգին։ Ուստի, իմ ազնիվ բարեկամ, քեզ խորհուրդ եմ տալիս օրորի բարեկամուհի ձեռք բերել, և քո տխրագին զգացմունքներն իսկույն կչքանան։ Ահա թե ինչ է մեզ «հարկավոր», ինչպես դու ես ասում։ Չէ՞ որ այդ անհանգստությունը, այդ վիշտը, պարզապես յուրովի սով է։ Տուր ստամոքսին խոկոկան կերակուր, և իսկույն ամեն ինչ կարգի կգա։ Գրավիր քո տեղը տարածության մեջ, մարմին եղիր, սիրելիս։ Եվ վերջապես ի՞նչ է, ինչացո՞ւ է «բնությունը»։ Դե դու ինքդ լսիր. ինչպիսի ուժեղ, հրաշունչ խոսք։ Բնություն... ինչպիսի սառը, դպրոցական արտահայտություն։ Եվ, ուստի (Շուբինը երգեց) «կեցցե Մարիա Պետրովնան» կամ ոչ,— ավելացրեց նա,— ոչ Մարիա Պետրովնան... Դե լավ, միևնույն է ով լինի... Վու մը քոմպրենե[1]։

Բերսենևը քիչ բարձրացավ և իր ծնոտով հենվեց միմյանց վրա ծալած ձեռքերին։

— Ի՞նչ կա ծաղրելու,— խոսեց նա, չնայելով ընկերոջ վրա.— ինչո՞ւ ծանակել։ Ա՜յո՛, դու ճշմարիտ ես. սե՛ր—դա մեծ խոսք է, մեծ զգացմունք է... Բայց ո՞ր սիրո մասին ես դու խոսում։

[1] Դուք ինձ հասկանում եք (ֆրանս.)։

Շուբինը նույնպես քիչ բարձրացավ։

— Որ սիրո մասի՞ն։ Որը ուզես, միայն թե լինի։ Խոստովանում եմ, ըստ իս, ամենևին չկան սիրո զանազան տեսակներ։ Եթե դու սիրում ես...

— Ամբողջ հոգով,— ընդհատեց Բերսենևը։

— Այո, այդ ինքնին հասկանալի է. հոգին խնձոր չէ։ Նրան չես կարող բաժանել։ Եթե դու սիրեցիր, դու, ուրեմն, իրավացի ես։ Իսկ ես չէի էլ ուզում ծաղրել։ Իմ սրտում այժմ այնպիսի քնքշություն կա, այնպես է նա փափկացել... Ես միայն ուզում էի բացատրել, թե ինչու բնությունը, ինչպես ասում ես, մեզ վրա այդպես է ներգործում։ Որովհետև նա մեր մեջ զարթեցնում է սիրո պահանջը և ուժ չունի բավարարելու այն։ Նա մեզ թաքուն քշում է դեպի ուրիշ։ կենդանի գիրկ, իսկ մենք նրան չենք հասկանում և դեռ հենց նրանից էլ ինչ-որ բան-ենք սպասում։ Ա՜խ, Անդրեյ, Անդրեյ, գեղեցիկ է այս արեգակը, այս երկինքը, ամեն ինչ, ամեն ինչ մեր շուրջը գեղեցիկ է, իսկ դու տխրում ես, բայց եթե այս նույն վայրկյանին բռնած ունենայիր քո ձեռքում քո սիրած կնոջ ձեռքը, եթե այդ ձեռքը և այդ կինը լիներին քոնը, եթե նույնիսկ դու նայեիր այդ կնոջ աչքերով, զգայիր ոչ թե քո միայնակ, այլ նրա զգացմունքով — տխրություն և անհանգստություն չէր զարթեցնի քո մեջ բնությունը և դու չէիր էլ նկատի նրա գեղեցկությունը՝ ինքը, բնությունը կուրախանար և կերգեր, նա ինքը կկրկներ քո օրհներգը, որովհետև դու նրա մեջ, այդ համր բնության մեջ այն ժամանակ լեզու կդնեիր։

Շուբինը վեր թռավ, ոտքի կանգնեց, մի երկու անգամ ետ ու առաջ անցավ, իսկ Բերսենևը կախ գցեց գլուխը, և նրա դեմքը ծածկվեց թույլ կարմրությամբ։

— Ես այնքան էլ համաձայն չեմ քեզ հետ,— սկսեց նա,— բնությունը միշտ չէ մեզ ակնարկում... սիրո մասին (նա միանգամից չարտասանեց այդ խոսքը)։— Նա սպառնում էլ է մեզ, հիշեցնում է սարսափելի... այո, անմատչելի գաղտնիքների մասին։ Մի՞թե նա չի կլանելու մեզ, անդադար չի՞ կլանում մեզ։ Նրա մեջ է և Կյանքը, և Մահը. և Մահը նրա մեջ նույնպես բարձր է խոսում, ինչպես և Կյանքը։

— Սիրո մեջ էլ կա Կյանք և Մահ։— Ընդհատեց Շուբինը։

— Եվ ապա,— շարունակեց Բերսենևը,— երբ ես, օրինակ, կանգնում եմ դարնանը անտառում, կանաչ թավուտի մեջ, երբ ինձ այնպես է թվում, թե ես լսում եմ Օբերոնի[1] եղջյուրի ռոմանտիկ ձայները (Բերսենևը մի քիչ ամոթ զգաց, երբ արտասանեց այդ խոսքերը), մի՞թե դա էլ...

— Սիրո ծարավն է, երջանկության ծարավը, ուրիշ ոչինչ,— վրա բերեց Շուբինը,— ես ևս ճանաչում եմ այդ ձայները. ճանաչում եմ ես այն հուզմունքն ու ակնկալությունը, որոնք համակում են հոգին անտառի հարկի տակ, նրա խորքերում. կամ երեկոյան, բաց դաշտերում, երբ արեգակը մայր է մտնում, և գետը ծխում է թփերի հետևում։ Բայց թե անտառից, թե գետից, թե երկրից ու թե երկնքից, յուրաքանչյուր ամպիկից, յուրաքանչյուր խոտից ես սպասում եմ, ես ուզում եմ երջանկություն. և ամեն մի բանի մեջ ես զգում եմ երջանկության մոտենալը, լսում եմ նրա կոչը։ «Իմ աստվածը—լուսավոր և ուրախ աստվածն է»։ Ես այսպես էի ուզում սկսել մի բանաստեղծություն. խոստովանիր, առաջին տունը հիանալի է, բայց այ, երկրորդը ոչ մի կերպ չկարողացա գտնել։ Երջանկություն, երջանկություն, քանի կյանքը դեռ չի անցել, քանի մեր բոլոր անդամները ենթարկվում են մեզ, քանի մենք սարից չենք իջնում, այլ գնում ենք դեպի սարը։ Սատանան տանի,— շարունակեց Շուբինը հանկարծակի պոռթկումով,— մենք երիտասարդ ենք, այլանդակ չենք, հիմար չենք. մենք երջանկություն կնվաճենք մեզ համար։

Նա թափահարեց իր գանգուրները և ինքնավստահ, համարյա մարտահրավերով նայեց դեպի վեր, երկնքին։

Բերսենևը աչքերն ուղղեց նրան։

— Կարծես թե երջանկությունից բարձր բան չկա՞,— ասաց նա ցած ձայնով։

— Օրինա՞կ,— հարցրեց Շուբինը և կանգ առավ։

— Թեկուզ հենց, օրինակ, ես և դու, ինչպես ինքդ ես ասում, երիտասարդ ենք, ասենք թե մենք լավ մարդիկ ենք, մեզանից ամեն մեկը իր համար երջանկություն է ուզում... Բայց մի՞թե այդ այն խոսքն է. «երջանկությունը», որը մեզ միացներ, երկուսիս բոցավառեր, հարկադրեր մեզ իրար ձեռք

[1] Բերսենևը նկատի ունի Վեբերի «Օբերոն» օպերան։

տալու։ Ես ուզում եմ ասել. արդյո՞ք հասկան չէ, անշատող չէ՞ այդ խոսքը։

— Իսկ դու գիտե՞ս այնպիսի խոսքեր, որոնք միացնում են մեզ։

— Այո, և քիչ չեն այդպիսի խոսքերը, դու էլ գիտես դրանք։

— Հապա՞, ո՞ր խոսքերն են։

— Թեկուզ հենց արվեստը—որովհետև դու էլ գեղարվեստագետ ես— հայրենիքը, գիտությունը, ազատությունը, արդարությունը։

— Իսկ սե՞րը,— հարցրեց Շուբինը։

— Սերն էլ է միացնող խոսք, բայց ոչ այն սերը, որին դու այժմ ծարավի ես. ոչ թե սեր-վայելչությունը, այլ սեր զոհաբերությունը։

Շուբինը հոնքերը հավաքեց։

— Այդ լավ է գերմանացիների համար։ Իսկ ես ուզում եմ սիրել ինձ համար. ես ուզում եմ առաջին համարը լինել։

— Առաջին համարը,— կրկնեց Բերսենևը։— Իսկ ինձ թվում է, թե ինքն իրեն երկրորդ համար դարձնելը՝ մեր ամբողջ կյանքի կոչումն է։

— Եթե ամենքն այդպես վարվեն, ինչպես դու ես խորհուրդ տալիս,— ասաց Շուբինը խղճալի դիմածությունն անելով,— աշխարհում այլևս ոչ ոք չի ուտի անանաս. ամենքքն էլ դրանք կթողնեն ուրիշներին։

— Նշանակում է՝ անանասներ հարկավոր չեն. սակայն, մի վախենա, միշտ էլ կգտնվեն ուրիշի բերանի հացը խլելու սիրահարներ։

Երկու բարեկամներն էլ միաժամանակ լռեցին։

— Մոտ օրերս ես կրկին հանդիպեցի Ինսարովին,— սկսեց Բերսենևը,— ես նրան ինձ մոտ հրավիրեցի, անպատճառ ուզում եմ ծանոթացնել նրան քեզ հետ... ու Ստախովների հետ։

— Այդ ո՞ր Ինսարովն է։ Հա, այն սերբը թե բուլղարը, որի մասին դու ինձ ասում էիր։ Այն ազգասե՞րը։ Հո նա՞ չի ներշնչել քո մեջ այդ փիլիսոփայական մտքերը։

— Գուցե։

— Նա այդպիսի արտասովոր մե՞կն է, ինչ է։

— Այո։

— Ելո՞ք։ Շնորհալի՞։

— Ելո՞ք... այո։ Շնորհալի՞... չգիտեմ, չեմ կարծում։

— Չէ՞։ Ուրեմն ի՞նչ նշանավոր բան կա նրա մեջ։

— Ահա կտեսնես։ Իսկ այժմ, ես կարծում եմ, մեր գնալու ժամանակն է։ Աննա Վասիլևնան, երևի, արդեն մեզ սպասում է։ Ժամը քանի՞սն է։

— Երեքը։ Գնանք։ Ինչ տոթ է։ Այս խոսակցությունը բորբոքեց արյունս։ Դու էլ մի պահ... Ես իզուր չէ, որ արտիստ եմ. ամեն ինչ նկատող եմ։ Խոստովանի՛ր, քեզ զբաղեցնո՞ւմ է կինը։

Շուբինն ուզում էր նայել Բերսենևի երեսին, բայց նա երեսը շուռ տվեց և դուրս եկավ լորենու տակից։ Շուբինը գնաց նրա հետևից, նրբագեղ անփութությամբ փոխելով իր փոքրիկ ոտները։ Բերսենևը շարժվում էր անշնորհք կերպով, գնալիս վեր քաշելով ուսերը, ձգելով պարանոցը. այնուամենայնիվ նա ավելի օրինավոր մարդ էր երևում, քան Շուբինը, ավելի ջենտլմեն էր, կասեինք մենք, եթե այդ բառը մեզ մոտ այնքան գռեհկացած չլիներ։

II

Երիտասարդներն իջան Մոսկվա գետի կողմը և գնացին նրա ափով։ Ջրից բուրում էր զովություն, և փոքրիկ ալիքների մեղմ ծփանքը շոյում էր նրանց լսողությունը։

— Ես նորից կլողանայի,— խոսեց Շուբինը,— բայց վախենում եմ ուշանալ։ Նայիր գետին. կարծես մեզ կանչում է։ Հին հույները նրա մեջ հավերժահարս կգտնեին։ Բայց մենք հույներ չենք, ով հավերժահարս. մենք հատամորթ սկեպտիկներ ենք։

— Մենք էլ ունենք ջրալքեր,— նկատեց Բերսենևը։

— Գնա դու էլ քո ջրալքերի հետ։ Ինձ, քանդակագործիս, ինչ պետք են վախեցած, սառը երևակայության այդ ծեռունդները, այդ պատկերները, որոնք ծնվել են խրճիթի հեղձուկ օդում, ձմեռային գիշերների խավարի մեջ։ Ինձ հարկավոր է լույս, լայնարձակություն... Ախ, ասաված իմ, ե՞րբ կգնամ ես Իտալիա։ Ե՞րբ։

— Այսինքն դու ուզում ես ասել Մալոռո՞սիա։

— Ամոթ է քեզ, Անդրեյ Պետրովիչ, հանդիմանել ինձ այն անմիտ հիմարությանս համար, որի համար ես առանց այդ էլ դառնությամբ զղջում եմ։ Դե, այո, ես հիմարաբար վարվեցի. ամենաբարի Աննա Վասիլևնան ինձ փող տվեց Իտալիա գնալու համար, իսկ ես ճանապարհվեցի խոխոլների երկիրը, այնտեղ կարկանդակներ ուտելու և...

— Մի՛ շարունակիր, խնդրում եմ,— ընդհատեց Բերսենևը։

— Այնուամենայնիվ ես կասեմ, որ այդ փողերը զուր չեն ծախսվել։ Ես այնտեղ տեսա այնպիսի տիպեր, մանավանդ կանացի... Իհարկե, ես գիտեմ, որ Իտալիայից դուրս փրկություն չկա։

— Դու կգնաս Իտալիա,— ասաց Բերսենևը՝ երեսը չդարձնելով դեպի նա,— և ոչինչ էլ չես անի։ Միայն թևերդ կշարժես, բայց չես թռչի։ Ճանաչում ենք քեզ։

— Ստավասսերը[1] թռավ, չէ՞... Եվ ոչ մենակ։ Իսկ եթե ես չթռչեմ, կնշանակի ծովային պինգվին եմ, առանց թևերի։ Այստեղ ինձ համար խեղդուկ է օդը։ Իտալիա եմ ուզում,— շարունակեց Շուբինը,— այնտեղ արևն է, գեղեցկությո՞ւնը...

Մի երիտասարդ աղջիկ, գլխին հարդե լայն գլխարկ, վարդագույն հովանոցն ուսին, այդ վայրկյանին երևաց նույն շավիղի վրա, որով գնում էին բարեկամները։

— Բայց ի՞նչ եմ տեսնում։ Այստեղ էլ մեր հանդեպն է գալիս գեղեցկությունը։ Ողջույն խոնարհ գեղարվեստագետից հրաշագեղ Զոյային,— բացականչեց հանկարծ Շուբինը՝ թափերաբար ճոճելով գլխարկը։

Երիտասարդ աղջիկը, որին վերաբերում էր այս բացականչությունը, կանգ առավ, մատը թափ տվեց Շուբինի վրա և, թույլ տալով երկու բարեկամներին մոտենալ իրեն, ասաց հնչեղ ձայնով ու փոքր-ինչ թլվատելով.

— Այդ ինչո՞ւ, պարոններ, չեք գալիս ճաշելու։ Սեղանը պատրաստ է։

— Ի՞նչ եմ լսում,— ձեռքերն իրար զարկելով՝ ասաց Շուբինը։— Մի՞թե դուք, քնաղ Զոյա, մի այսպիսի շոգին

[1] Ստավասսեր Ն. Ա.—ռուս ճարտարապետ։

վճռեցիք գալ մեզ որոնելու։ Այսպե՞ս պիտի ես հասկանամ ձեր խոսքերի իմաստը։ Ասացեք, մի՞թե... Կամ ոչ. ավելի լավ է այդ բառը մի՛ արտասանեք. զղջումը մի ակնթարթում կսպանե ինձ։

— Ախ, բավական է, Պավել Յակովլևիչ,— առարկեց աղջիկը ոչ առանց բարկության.— ինչո՞ւ դուք երբեք չեք խոսում ինձ հետ լրջորեն։ Ես կբարկանամ,— ավելացրեց աղջիկը պշրական ծամածռանքով ու ուռցրեց շրթունքները։

— Դուք չեք բարկանա ինձ վրա, իդեալական Զոյա Նիկիտիշնա, դուք չեք ուզի ինձ գլորել մոլեգին հուսահատության մռայլ անդունդը։ Իսկ լրջորեն խոսել ես չեմ կարողանում, որովհետև ես լուրջ մարդ չեմ։

Աղջիկը վեր քաշեց ուսերը և դիմեց Բերսենևին.

— Ահա նա միշտ այդպես է. ինձ հետ վարվում է ինչպես մի երեխայի հետ. իսկ ես արդեն տասնութ տարեկանից անց եմ։ Ես արդեն մեծ եմ։

— Օհ, աստված իմ,— հեծեծաց Շուբինը և աչքերը մռայլեցրեց, իսկ Բերսենևը լուռ ծիծաղեց։

Աղջիկը ոտը գետնին խփեց։

— Պավել Յակովլևիչ, ես կբարկանամ... Հելենը ուզում էր գալ ինձ հետ,— շարունակեց նա,— բայց մնաց այգում։ Նրան շոգը վախեցրեց, բայց ես շոգից չեմ վախենում։ Գնանք։

Նա առաջ գնաց շավիղով, թեթև օրորելով իր նուրբ իրանը ամեն քայլ փոխելիս և երեսից քաշելով փափուկ ու երկար խոպոպները իր գեղեցիկ, կիսաձեռնոցով փոքր ձեռքով։

Բարեկամները գնացին նրա հետևից (Շուբինը մերթ անխոս սեղմում էր ձեռքերը սրտին, մերթ բարձրացնում գլխից վերև) և մի քանի վայրկյանից կանգ առան Կունցեվոն շրջապատող բազմաթիվ ամառանոցներից մեկի առաջ։ Մի փոքրիկ փայտյա տնակ կիսավերնահարկով, ներկված վարդագույն, կանգնած էր այգու մեջ և մի տեսակ միամտաբար երևում էր ծառերի կանաչների հետևից։ Զոյան առաջինը բաց արեց դռնակը, ներս վազեց այգին և գոչեց. «Բերի թափառականներին»։ Մի ջահել աղջիկ, գունատ և արտահայտիչ դեմքով, վեր կացավ ճանապարհի կողքին գտնվող նստարանի վրայից, իսկ տան շեմքին երևաց մանուշակա-

էլն մետաքսե զգեստ հագած մի տիկին և, բարձրացնելով իր գլխից վերև ասեղնագործ թաշկինակը արևից պաշտպանվելու համար, ժպտաց նվաղկոտ և ալարելով։

III

Աննա Վասիլևնա Ստախովա, ծնունդով Շուբինա, յոթը տարեկան հասակում մնաց բոլորովին որբ և բավականաչափ խոշոր կալվածքի ժառանգ. նա ուներ շատ հարուստ և շատ աղքատ ազգականներ. աղքատները՝ հոր կողմից, հարուստները՝ մոր կողմից. սենատոր Վոլդին, Ջիկուրասով իշխանները։ Իշխան Արդալիոն Ջիկուրասովը, որ խնամակալ էր նշանակված նրա վրա, տվեց Աննային Մոսկվայի ամենաշավ պանսիոնը. իսկ պանսիոնից դուրս գալուն պես, վերցրեց տարավ իր տունը։ Նա ապրում էր լավ և ձմեռը պարահանդեսներ էր տալիս։ Աննա Վասիլևնայի ապագա ամուսինը, Նիկոլայ Արտեմևիչ Ստախովը նվաճեց նրան այդ պարահանդեսներից մեկի ժամանակ, ուր նա հագել էր սքանչելի վարդագույն զգեստ և գլխին դրել կուաֆյուր[1] փոքրիկ վարդերից։ Աննա Վասիլևնան խնամքով պահում էր այդ կուաֆյուրը... Նիկոլայ Արտեմևիչ Ստախովը, որ տասներկու թվին վիրավորված և Պետերբուրգում եկամտաբեր տեղ ստացած պաշտոնաթող կապիտանի որդի էր, տասնվեց տարեկան հասակում մտավ յունկերական դպրոց և դուրս գալով մտավ գվարդիայի մեջ։ Նա գեղեցիկ մարդ էր, լավ կազմվածքով, համարյա ամենից լավ կավալերն էր համարվում միջին կարգի երեկույթներում, ուր նա գլխավորապես հաճախում էր. բարձր շրջաններ մտնելու ճանապարհ չուներ նա։ Երիտասարդ հասակից նրան երկու փափագ էր միայն զբաղեցնում. դառնալ ֆլիգել-ադյուտանտ և շահավետ կերպով ամուսնանալ։ Առաջին փափագից նա շուտով հրաժարվեց, բայց դրա փոխարեն ավելի պինդ կպավ երկրորդին։ Այդ պատճառով էլ ամեն ձմեռ Մոսկվա էր գնում. Նիկոլայ Արտեմևիչը բավական լավ խոսում էր ֆրանսերեն և համարվում էր փիլիսոփա, որովհետև քեֆեր չէր անում։ Դեռ

[1] Կուաֆյուր—կանացի գլխազարդ։

պրապորշչիկի աստիճանում՝ նա սիրում էր համառ կերպով վիճաբանել, օրինակ, այն մասին, թե կարո՞ղ է մարդը իր ամբողջ կյանքի ընթացքում երկրագնդի շուրջը ճանապարհորդել, կարո՞ղ է մարդը իմանալ, թե ինչ է տեղի ունենում ծովի հատակում—և միշտ այն կարծիքին էր՝ թե չի կարող։

Քսանհինգ տարին արդեն լրացրել էր Նիկոլայ Արտեմեվիչը, երբ «ճանկեց» Աննա Վասիլևնային. նա թողեց պաշտոնը և գնաց գյուղ՝ տնտեսությամբ պարապելու։ Գյուղական կյանքը շուտով զզվեցրեց նրան, իսկ կալվածը տրրված էր վարձով. նա բնակվեց Մոսկվայում, իր կնոջ տանը։ Երիտասարդ ժամանակ նա չէր խաղում ոչ մի խաղ, իսկ այստեղ տաքացավ լոտոյի վրա, իսկ երբ լոտոն արգելեցին՝ երալաշի վրա։ Տանը տաղտկանում էր. մտերմացավ գեղամանական ծագում ունեցող մի այրի կնոջ հետ և նրա մոտ էր անցկացնում համարյա ամբողջ ժամանակը։ 53 թվականի ամառը նա Կունցեվո չտեղափոխվեց, մնաց Մոսկվայում, թբր թե նրա համար, որպեսզի օգտվի հանքային ջրերով, բայց իսկապես, նա չէր ուզում բաժանվել այրի կնոջից։ Ասենք նա այրու հետ էլ շատ քիչ էր խոսում, այլ ավելի վիճում էր այն մասին, թե կարելի՞ է արդյոք նախագուշակել եղանակը և այլն։ Մի անգամ մեկը նրան անվանեց frondeur[1]. դա շատ դուր եկավ նրան։ «Այո,— մտածում էր նա, ինքնաբավական կերպով վայր թողնելով շրթունքների անկյունները և օրորվելով,— հեշտ չէ ինձ բավարարություն տալ. ինձ խաբել չի կարելի»։ Նիկոլայ Արտեմևիչի ֆրոնդյորությունը կայանում էր նրանում, որ նա, դիցուք, լսում էր մի բառ՝ ջղեր, և ասում էր. «Բայց ի՞նչ է ջղերը», կամ թե մեկը նրա ներկայությամբ խոսում է աստղաբաշխության հաջողությունների մասին, նա իսկույն ասում է. «Իսկ դուք հավատո՞ւմ եք աստղաբաշխությանը»։ Իսկ երբ նա ուզում էր վերջնականապես հաղթահարել հակառակորդին՝ ասում էր. «Այդ բոլորը միայն ֆրազներ են»։ Պետք է խոստովանել, որ շատ մարդկանց այդպիսի առարկությունները թվում էին

[1] Ֆրոնդյոր—մի մարդ, որը որևէ բանի դեմ դժգոհություն է արտահայտում («ֆրոնդա» խոսքից—ազնվականական-բուրժուական քաղաքական շարժում Ֆրանսիայում 17-րդ դարում՝ ընդդեմ միահեծան իշխանության)։

(և մինչև այժմ էլ թվում են) անհերքելի։ Բայց Նիկոլայ Արտեմևիչը ոչ մի կերպ չէր ենթադրում, որ Ավգուստինա Խրիստիանովնան իր մորաքրոջ աղջկան՝ Թեոդոլինդա Պետերզիլիուսին գրած նամակներում անվանում էր նրան Mein Pinselchen[1]։

Նիկոլայ Արտեմևիչի կինը, Աննա Վասիլևնան, մի փոքրիկ և նիհար կին էր, նուրբ դիմագծերով, մի կին, որ տրամադիր էր հուզվելու և տխրելու։ Պանսիոնում նա պարապում էր երաժշտությամբ և կարդում էր վեպեր, բայց հետո թողեց այդ բոլորը, սկսեց զուգվել և այդ էլ թողեց. փորձեց զբաղվել իր աղջկա դաստիարակությամբ, այդտեղ էլ թուլացավ և տվեց աղջկան տնային դաստիարակչուհու ձեռքը. վերջացավ այդ բոլորը նրանով, որ նա միայն այն էր անում, որ տխրում էր և հանգարտ հուզվում։ Ելենա Նիկոլաևնայի ծնունդը քայքայեց նրա առողջությունը, և նա այլևս երեխաներ ունենալ չէր կարող։ Նիկոլայ Արտեմևիչը ակնարկում էր այդ հանգամանքի վրա, արդարացնելով իր ծանոթությունը Ավգուստինա Խրիստիանովնայի հետ։ Ամուսնու անհավատարմությունը շատ էր վշտացնում Աննա Վասիլևնային, մանավանդ ցավ էր պատճառում նրան այն, որ ամուսինը մի անգամ խաբեությամբ նվիրեց իր գերմանուհուն մի զույգ մոխրագույն ձի Աննա Վասիլևնայի սեփական ձիաբուծարանից։ Դեմ առ դեմ նա երբեք չէր հանդիմանում իր ամուսնուն, բայց ծածուկ գանգատներ էր անում նրա մասին տանը ամենքի մոտ, մինչև իսկ իր աղջկա մոտ։ Աննա Վասիլևնան տանից դուրս գալ չէր սիրում, և գոհ էր լինում, երբ նրա մոտ նստում էր հյուրը և որևէ բան պատմում. մենակության մեջ նա իսկույն տկարանում էր։ Նա ուներ սիրող և փափուկ սիրտ. կյանքը նրան շուտով ջախջախեց։

Պավել Յակովլևիչ Շուբինը նրա մոտ ազգականն էր։ Նրա հայրը ծառայում էր Մոսկվայում։ Եղբայրները մտան կադետների կորպուսը։ Պավելը ամենից փոքրն էր և մոր սիրելին, ուներ քնքուշ կազմվածք. այդ պատճառով էլ մնաց տանը։ Նրան որոշել էին համալսարան տալ և դժվարությամբ էին պահում գիմնազիայում։ Վաղ հասակից նա հակումն ցույց տվեց դեպի քանդակագործությունը։ Ծանրակշիռ սենատոր Վոլգինը մի անգամ տեսավ նրա պատրաստած մի փոքրիկ արձանիկը մորաքրոջ մոտ (այդ ժամանակ Պավելը տասնվեց տարեկան էր) և հայտնեց, որ մտադիր է երիտասարդ տաղանդի հովանավորը դառնալ։ Շուբինի հոր հանկարծական մահը քիչ էր մնում թե բոլորովին փոփոխեր երիտասարդի ամբողջ ապագան։ Տաղանդների հովանավոր սենատորը ընծայեց նրան Հոմերոսի գիպսե անդրին, ուրիշ ոչինչ։ Բայց Աննա Վասիլևնան օգնում էր նրան փողով. և նա մի կերպ մտավ համալսարանի բժշկական ֆակուլտետը, երբ արդեն տասնինը տարեկան էր։ Պավելը ոչինչ հակում չուներ դեպի բժշկականությունը, բայց այն ժամանակ համալսարանում գոյություն ունեցող ուսանողական հաստիքով մի որևէ ուրիշ ֆակուլտետ մտնել անկարելի էր. բացի դրանից, նա հույս ուներ այդտեղ սովորել մարդակազմություն։ Բայց չսովորեց. նա չանցավ երկրորդ կուրս և, չսպասելով մինչև քննությունը, դուրս եկավ համալսարանից այն մտքով, որ բացառապես նվիրվի իր կոչմանը։ Նա աշխատում էր ջանասիրությամբ, բայց ընդհատումներով, թափառում էր Մոսկվայի շրջակայքում, կավից ծեփում էր և նկարում գյուղական աղջիկների պատկերներ, շփվում էր զանազան մարդկանց հետ, թե երիտասարդ և թե ծեր, թե բարձր և թե ստորին դասի մարդկանց հետ, իտալացի կաղապարագործների և ռուս նկարիչների հետ. ակադեմիայի անունը չէր էլ ուզում լսել և չէր ընդունում ոչ մի պրոֆեսոր։ Նա անկասկած տաղանդ ուներ, Մոսկվայում սկսել էին նրան ճանաչել։ Նրա մայրը, ծագումով Փարիզից, լավ ընտանիքից, բարի և խելոք մի կին, սովորեցրեց նրան ֆրանսերեն, օր ու գիշեր հոգ էր տանում նրա մասին, աշխատում էր, հպարտանում էր նրանով և դեռ երիտասարդ հասակում մեռնելով թոքախտից, խնդրեց Աննա Վասիլևնային՝ նրան իր ձեռքի տակ առնել։ Պավելն այդ ժամանակ քսանմեկ տարեկան էր։ Աննա Վասիլևնան կատարեց մոր վերջին ցանկությունը. երիտասարդն ուներ մի փոքրիկ սենյակ ամառանոցին կից շենքում։

[1] Իմ հիմարիկը (գերմ.)։

IV

— Գնանք ճաշելու, գնանք,— ասաց տանտիկինը խղճալի ձայնով, և ամենքը գնացին սեղանատուն։— Նստեցեք ինձ մոտ, Zoé,— ասաց Աննա Վասիլևնան,— իսկ դու, Hélène, զբաղեցրու մեր հյուրին, իսկ դու, Paul, խնդրեմ շարունակիր մի արա և մի գրգռի Zoé-ին։ Այսօր գլուխս ցավում է։

Շուբինը նորից բարձրացրեց իր աչքերը դեպի երկինք։ Zoé-ն պատասխանեց նրան կիսաժպիտով։ Այդ Zoé-ն, կամ ավելի ճիշտն ասելով Զոյա Նիկիտիշնա Մյուլլերը, մի փոքրիկ ռուսական գերմանուհի էր, ծայրը երկատված քթով և կարմիր ու շատ նուրբ շրթունքներով, շիկահեր ու թմբլիկ։ Նա շատ լավ երգում էր ռուսական ռոմանսներ, մաքուր նվագում էր դաշնամուրի վրա զանազան մերթ ուրախ, մերթ զգայական բաներ։ Նա հագնվում էր ճաշակով, բայց մի տեսակ երեխայի նման, և չափազանց մաքուր։ Աննա Վասիլևնան նրան վերցրել էր իբրև ընկերուհի իր աղջկա համար և համարյա միշտ իր մոտ էր պահում նրան։ Ելենան այդ բանի վրա չէր զանգատվում. նա ուղղակի չգիտեր, թե ինչի մասին խոսի Զոյայի հետ, երբ պատահում էր մենակ էին մնում։

Ճաշը բավական երկար տևեց. Բերսենևը խոսում էր Ելենայի հետ համալսարանական կյանքի մասին, իր դիտավորությունների ու հույսերի մասին. Շուբինը ականջ էր դնում ու լռում, ուտում էր չափազանց ագահությամբ, մեկմեկ կոմիկական տաղտուկ հայացքներ գցելով Զոյայի վրա, որը միշտ պատասխանում էր նրան միանման ֆլեգմատիկ ժպիտով։ Ճաշից հետո Ելենան Բերսենևի և Շուբինի հետ գնաց այգի. Զոյան նայեց նրանց հետևից և, թեթև վեր քաշելով ուսը, նստեց դաշնամուրի առաջ։ Աննա Վասիլևնան ասաց «Ինչո՞ւ դուք չեք գնում զբոսնելու», բայց չսպասելով պատասխանի՝ ավելացրեց. «Ինձ համար մի տխրալի բան նվագեցեք»։

— La dernière pensée de Weber?[1],— հարցրեց Զոյան։

— Ախ, այո, Վեբեր,— ասաց Աննա Վասիլևնան, նրանց բազկաթոռի վրա, և արտասուքի կաթիլը կախվեց նրա թերթերունքներից։

Մինչդեռ Ելենան երկու բարեկամներին առաջնորդեց դեպի ակացիաների զովանոցը, որի մեջտեղը դրած էր փայտե փոքրիկ սեղան և շուրջը՝ նստարաններ։ Շուբինը նայեց իր չոքս կողմը, մի քանի անգամ թռչկոտեց և շշնջալով ասաց. «Սպասեցեք», վազեց իր սենյակը, բերեց մի կտոր կավ և սկսեց կերտել Զոյայի կերպարը, գլուխը թափահարելով, փնթփնթալով և ծիծաղելով։

— Էլի հին հանաքներ,— արտասանեց Ելենան, նայելով նրա գործին, և ապա դարձավ Բերսենևին, որի հետ շարունակում էր ճաշին սկսած խոսակցությունը։

— Հին հանաքներ,— կրկնեց Շուբինը։— Նյութը հո չափազանց անսպառ էր։ Այսօր մանավանդ նա ինձ համբերությունից հանում է։

— Այդ ինչո՞ւ,— հարցրեց Ելենան։— Կարելի է կարծել, թե դուք խոսում եք մի որևէ շար, անհաճելի պառավի մասին։ Սիրուն, ջահել աղջիկ է...

— Իհարկե,— ընդհատեց Շուբինը,— նա սիրուն է, շատ սիրուն. ես համոզված եմ, որ ամեն մի անցորդ, նայելով նրան, անպատճառ պիտի մտածի, ահա թե ում հետ լավ կլինի... պուկա պարել. ես համոզված եմ նույնպես, որ նա գիտե այդ բանը և այդ շատ հաճելի է նրա համար... էլ ինչո՞ւ են այդ ամոթխած ծոմռումները, այդ համեստությունը։ Դե, ձեզ հայտնի է, թե ինչ եմ ուզում ես ասել,— ավելացրեց նա ատամների արանքից։— Սակայն դուք այժմ ուրիշով եք զբաղված։

Եվ կոտրելով Զոյայի կավե անդրին, Շուբինը սկսեց շտապով և կարծես նեղսրտելով կպցնել կավը և տրորել։

— Այդպես ուրեմն, դուք կկամենայի՞ք պրոֆեսոր դառնալ,— հարցրեց Ելենան Բերսենևին։

— Այո,— պատասխանեց նա, ծնկների արանքը խրելով իր կարմիր ձեռքերը։— Դա իմ սիրած տենչանքն է։ Իհարկե, ես շատ լավ գիտեմ, թե ինչն է ինձ պակասում, որպեսզի արժանանամ այդպիսի մի բարձր... ես ուզում եմ ասել, որ ես չափազանց քիչ եմ պատրաստված, բայց հույս ունեմ թույլտվություն ստանալ արտասահման գնալու. այնտեղ

[1] Վեբերի «Վերջին մտածումը» (ֆրանս.)։

կմնամ երեք-չորս տարի, եթե հարկավոր է, և այն ժամանակ...

Նա կանգ առավ, գլուխը կախեց, հետո արագ բարձրացրեց աչքերը և, տարօրինակ կերպով ժպտալով, ուղղեց իր դեպ աչքերը։ Երբ Բերսենևը խոսում էր կնոջ հետ, նրա խոսքերը էլ ավելի էին դանդաղում և նա ավելի էր շշնջում խոսելիս։

— Դուք ուզում եք դառնալ պատմության պրոֆեսո՞ր,— հարցրեց Ելենան։

— Այո, կամ փիլիսոփայության,— ավելացրեց նա, ցածրացնելով իր ձայնը,— եթե այդ հնարավոր կլինի։

— Ես հիմա էլ սատանայի պես ուժեղ է փիլիսոփայության մեջ,— նկատեց Շուբինը, եղունգով խոր գծեր քաշելով կավի վրա,— ի՞նչ պետք ունի նա արտասահման գնալու։

— Եվ դուք ձեր դրությամբ միանգամայն զո՞հ կլինեք,— հարցրեց Ելենան, հենվելով արմունկի վրա և ուղիղ նրա դեմքին նայելով։

— Կատարելապես, Ելենա Նիկոլաևնա, կատարելապես։ Էլ ի՞նչ ավելի լավ կոչում կարող է լինել։ Մի մտածեցեք։ գնալ Տիմոֆեյ Նիկոլաևիչի[1] հետքերով... Այդպիսի գործունեության մի միտքն անգամ համակում է ինձ ուրախությամբ և շփոթությամբ, այո... շփոթությամբ, որին... որը տեղի է ունենում իմ փոքրիկ ուժերի գիտակցությունից։ Հանգուցյալ հայրս ուզում է ինձ այս գործին գնալու համար... Ես երբեք չեմ մոռանա նրա վերջին խոսքերը։

— Ձեր հայրը մեռավ ա՞յս ամռան։

— Այո, Ելենա Նիկոլաևնա, փետրվարին։

— Ասում են,— շարունակեց Ելենան,— նա թողել է մի նշանավոր ձեռագիր ստեղծագործություն։ Ճշմարի՞տ է այդ։

— Այո, թողել է։ Նա մի սքանչելի մարդ էր։ Դուք նրան կսիրեիք, Ելենա Նիկոլաևնա։

— Ես դրանում համոզված եմ։ Իսկ այդ ստեղծագործությունը ի՞նչ բովանդակություն ունի։

[1] Տիմոֆեյ Նիկանորի Գրանովսկի (1813—1855) Մոսկվայի համալսարանի պատմության սիրված պրոֆեսորներից մեկը։ Գերցենի ասելով, Գրանովսկու գործունեության մեջ զգացվում էր «մշտական խորը բողոք Ռուսաստանում տիրող կարգերի դեմ»։

— Ստեղծագործության բովանդակությունը, Ելենա Նիկոլաևնա, մի քանի խոսքով մի քիչ դժվար է ձեզ բացատրել։ Իմ հայրը շատ գիտուն մարդ էր։ Շելլինգական էր. նա արտահայտություններ էր գործածում... ոչ միշտ հասկանալի...

— Անդրեյ Պետրովիչ,— ընդհատեց Ելենան,— ներեցեք իմ անգիտությունը, ի՞նչ է նշանակում շելլինգական։

Բերսենևը թեթև կերպով ժպտաց։

— Շելլինգական նշանակում է գերմանացի փիլիսոփա Շելլինգին հետևող, իսկ թե ինչ էր Շելլինգի վարդապետությունը...

— Անդրեյ Պետրովիչ,— հանկարծ բացականչեց Շուբինը,— ի սեր աստծո, հո չե՞ս ուզում դու Ելենա Նիկոլաևնայի համար դասախոսություն կարդալ Շելլինգի մասին։ Խնայիր...

— Ոչ թե դասախոսություն,— թոթովեց Բերսենևը և կարմրեց,— ես ուզում էի...

— Իսկ ինչո՞ւ ոչ դասախոսություն,— վրա բերեց Ելենան,— ինձ և ձեզ համար, Պավել Յակովլևիչ, դասախոսությունները շատ հարկավոր են։

Շուբինն աչքերը հառեց Ելենայի վրա և հանկարծ ծիծաղեց։

— Ինչո՞ւ եք ծիծաղում,— հարցրեց Ելենան սառնությամբ և համարյա խստությամբ։

Շուբինը լռեց։

— Լավ, բավական է, մի բարկանաք,— ասաց նա քիչ ժամանակից հետո։— Ես մեղավոր եմ։ Բայց իսկապես այդ ի՞նչ ցանկություն է, այժմ, այսպիսի եղանակին, ծառերի տակ, խոսել փիլիսոփայության մասին։ Ավելի լավ է եկեք խոսենք սոխակների ու վարդերի մասին, երիտասարդ աչքերի և ժպիտների մասին։

— Այո, նույնպես և ֆրանսիական վեպերի, կանանց փալասների մասին,— շարունակեց Ելենան։

— Ինչո՞ւ չէ, կարելի է և փալասների մասին, եթե նրանք գեղեցիկ են,— պատասխանեց Շուբինը։

— Կարելի է։ Բայց եթե մենք չե՞նք ուզում խոսել փալասների մասին։ Դուք ձեզ անվանում եք ազատ գեղար-

գիտատար, ապա ինչո՞ւ եք բարկանում ուրիշների ազատության դեմ։ Եվ թույլ տվեք հարցնել ձեզ. ունենալով այդպիսի մտքեր, ինչո՞ւ եք դուք հարձակվում Զոյայի վրա։ Մանավանդ որ նրա հետ ավելի հարմար է խոսել թե փալասների և թե վարդերի մասին։

Շուբինը հանկարծ բորբոքվեց և վեր կացավ նստարանի վրայից։

— Ահա թե ինչ,— սկսեց նա անհաստատ ձայնով։— Ես հասկանում եմ ձեր ակնարկը. դուք ինձ Զոյայի մոտ եք ուղարկում, Ելենա Նիկոլաևնա։ Ուրիշ խոսքերով՝ ես այստեղ ավելորդ եմ։

— Ես չեմ ուզում ձեզ ուղարկել այստեղից։

— Դուք ուզում եք ասել,— շարունակեց Շուբինը բարկացկոտ ձայնով,— որ ես արժանի չեմ մի այլ հասարակության, որ ես Զոյայի ընկերն եմ, որ ես նույնպես դատարկ եմ ու ցնդաբան և մանր, ինչպես այդ քաղցրահամ գերմանուհին։ Այդպես չէ՞։

Ելենան կիտեց հոնքերը։

— Դուք նրա մասին այդպես չէիք արտահայտվում միշտ, Պավել Յակովլևիչ,— նկատեց նա։

— Էհե։ Հանդիմանություն։ Հանդիմանություն այժմ,— բացականչեց Շուբինը։— Դե, իհարկե, ես չեմ ծածկում, եղել է բոպե, միայն մի բոպե, երբ այդ թարմ, լպիրշ թշիկները... Բայց եթե ես կամենայի ձեզ հատուցել նույնպես հանդիմանությամբ և հիշեցնել ձեզ... Մնացեք բարով,— ավելացրեց նա հանկարծ,— ես պատրաստ եմ ստեր էլ խոսել...

Եվ ձեռքը զարնելով գլխի ձև տված կավին, նա դուրս վազեց զովանոցից և գնաց իր սենյակը։

— Երեխա,— արտասանեց Ելենան՝ նայելով նրա հետևից։

— Գեղարվեստագետ,— ասաց Բերսենևը մեղմ ժպիտով։— Բոլոր գեղարվեստագետներն էլ այդպես են։ Պետք է ներել նրանց քմահաճությունները։ Դա նրանց իրավունքն է։

— Այո,— առարկեց Ելենան,— բայց Պավելը մինչև այժմ դեռ ոչ մի բանով չի հաստատել իր այդ իրավունքը։ Ի՞նչ է արել նա մինչև այժմ։ Տվեք ինձ ձեր ձեռքը և գնանք ծառուղով։ Նա մեզ խանգարեց։ Մենք խոսում էինք ձեր հոր աշխատության մասին։

Բերսենևը բռնեց Ելենայի ձեռքը և գնաց նրա հետ այգու միջով, բայց սկսված խոսակցությունը, որ չափազանց շուտ ընդհատվեց, չվերանորոգվեց։ Բերսենևը նորից սկսեց արտահայտել իր հայացքները պրոֆեսորական կոչման մասին, իր ապագա գործունեության մասին։ Նա հանդարտ շարժվում էր Ելենայի հետ կողք-կողքի, անշնորհք կերպով առաջ էր ընկնում, անվարժ բռնել էր նրա ձեռքը, երբեմն-երբեմն հրում էր նրան իր ուսով և ոչ մի անգամ էլ չնայեց նրան. սակայն նրա ճառը հոսում էր հեշտությամբ, թեև ոչ բոլորովին ազատ, նա արտահայտում էր իր մտքերը պարզ և ճիշտ կերպով և նրա աչքերում, որոնք դանդաղ թափառում էին ծառերի ճյուղերի վրայով, ծառուղու ավազի և խոտերի վրայով, փայլում էր ազնիվ զգացմունքների մեղմ հրճվանքը, իսկ խաղաղված ձայնի մեջ լսվում էր այն մարդու ուրախությունը, որը գիտակցում է, որ իրեն հաջողվում է արտահայտվել մի ուրիշ, իր համար թանկագին մարդու առաջ։ Ելենան լսում էր նրան ուշադրությամբ և, կիսով չափ շուռ եկած դեպի նրա կողմը՝ չէր հեռացնում իր հայացքը նրա փոքր-ինչ գունատված դեմքից, նրա աչքերից, որոնք բարյացակամ էին և հեզ, թեև խուսափում էին իր աչքերի հետ հանդիպելուց։ Ելենայի հոգին բացվում էր, և մի ինչ-որ քնքուշ, արդար, լավ բան կարծես թե թափվում էր նրա սրտի մեջ, ներաճում էր այդ սրտի մեջ։

V

Շուբինը մինչև ուշ գիշեր դուրս չեկավ իր սենյակից։ Արդեն բոլորովին մթնել էր, կիսալուսինը կանգնած էր երկնքում։ Հարդագողի ճանապարհը սպիտակին էր տալիս, և աստղերը փայլփլում էին, երբ Բերսենևը, հրաժեշտ տալով Աննա Վասիլևնային, Ելենային և Զոյային, մոտեցավ իր բարեկամի դռանը։ Նա տեսավ, որ դուռը փակված է, թխկթխկացրեց։

— Ո՞վ է,— լսվեց Շուբինի ձայնը։

— Ես,— պատասխանեց Բերսենևը։

— Ի՞նչ ես ուզում։

— Ներս թող ինձ, Պավել, բավական է քմահաճություն անես, ինչպե՞ս չես ամաչում։

— Ես քմահաճություն չեմ անում, ես քնած եմ և երազում տեսնում եմ Զոյային։

— Վերջ տուր, խնդրեմ։ Դու երեխա չես։ Բաց արա դուռը։ Ես ուզում եմ քեզ հետ խոսել։

— Դու մի՞թե չես կշտացել Ելենայի հետ խոսելուց։

— Բավական է, բավական. ներս թող ինձ։

Շուբինը պատասխանում էր կեղծ խռմփոցով։ Բերսենևը ուսերը թոթվեց ու գնաց տուն։

Գիշերը տաք էր և կարծես մի առանձնապես լուռ, ասես չորս կողմում ամեն ինչ ականջ էր դնում ու հսկում. և Բերսենևը, պարուրված մի անշարժ մշուշով, ակամա կանգ էր առնում և նույնպես ականջ դնում ու հսկում։ Կանացի զգեստի խշխշոցի նման մեղմ շրշյունը ժամանակ առ ժամանակ բարձրանում էր մոտակա ծառերի կատարներին և դրդռում Բերսենևի մեջ անուշ և հոգեմաշ զգացում, մասամբ վախի զգացում։ Երեսը փշաքաղվում էր, աչքերը սառում էին վայրկենական արտասուքից. նա ուզում էր առաջ գնալ բոլորովին անլսելի, թաքնվել, գաղտագողի գնալ։ Սուր քամին վազում էր նրա կողքից. նա մի փոքր ցնցվեց ու տեղնուտեղը կանգ առավ. մի քնաթաթախ բզեզ պտտվեց ճյուղի վրայից և թրխկոցով դիպավ ճանապարհին. Բերսենևը կամաց «ահ» արեց և նորից կանգ առավ։ Բայց նա սկսեց մտածել Ելենայի մասին, և այդ բոլոր թոուցիկ զգացողությունները չքացան միանգամից. մնաց միայն գիշերային զբոսանքի կենսատու տպավորությունը. նրա ամբողջ հոգին գրավեց երիտասարդ աղջկա պատկերը։ Բերսենևը գնում էր գլուխը կախ և հիշում Ելենայի խոսքերը, հարցերը։ Նրան թվաց, թե հետևից արագ քայլերի ձայն է լսվում։ Նա ականջ դրեց. ինչ-որ մեկը վազում էր, ինչ-որ մարդ աշխատում էր հասնել նրան. արդեն լսվում էր ընդհատ շնչառություն, և հանկարծ նրա առաջ, մեծ ծառից ընկած շվաքի սև շրջագծից, առանց գլխարկի, խճճված մազերով, լուսնի լույսի տակ բոլորովին գունատ՝ դուրս պրծավ Շուբինը։

— Ես ուրախ եմ, որ դու այս ճանապարհով գնացիր,— խոսեց նա դժվարությամբ,— ես ամբողջ գիշերը չէի քնի, եթե չհասնեի քո հետևից։ Տուր ինձ ձեռքդ։ Դու տուն ես գնում, չէ՞։

— Այո։

— Ես քեզ ճանապարհ կդնեմ։

— Բայց ինչպե՞ս դու կգաս առանց գլխարկի։

— Ոչինչ։ Ես փողպատս էլ հանեցի։ Այժմ տաք է։

Բարեկամները մի քանի քայլ արեցին։

— Ճշմարիտ չէ՞, այսօր ես շատ հիմար էի,— հանկարծ հարցրեց Շուբինը։

— Անկեղծ ասած, այո։ Ես քեզ հասկանալ չկարողացա։ Ես քեզ երբեք չեմ տեսել այդպես։ Եվ, իսկապես, դու ինչի՞ց բարկացար։ Ի՞նչ դատարկ բաներից։

— Հըմ,— մռնչաց Շուբինը։— Ահա ինչպես ես դու արտահայտվում, իսկ ինձ դատարկ բաները չէ, որ զբաղեցնում են։ Գիտե՞ս,— ավելացրեց նա,— ես պիտի նկատեմ, որ ես... որ... Ինչ ուզում ես մտածիր իմ մասին, ես... այո։ Ես սիրահարված եմ Ելենային։

— Դու սիրահարված ես Ելենային,— կրկնեց Բերսենևը ու կանգ առավ։

— Այո,— բռնաղբոսիկ անփութությամբ շարունակեց Շուբինը։— Դա քեզ զարմացնո՞ւմ է։ Կասեմ քեզ ավելին։ Մինչև այս երեկո ես կարող էի հուսալ, որ նա էլ ժամանակին կսիրե ինձ։ Բայց այսօր համոզվեցի, որ իզուր է իմ հույսը։ Նա սիրեց ուրիշին։

— Ուրիշի՞ն։ Իսկ ո՞ւմ։

— Ո՞ւմ։ Քե՛զ,— բացականչեց Շուբինը և խփեց Բերսենևի ուսին։

— Ի՞նձ։

— Քե՛զ,— կրկնեց Շուբինը։

Բերսենևը մի քայլ ետ գնաց ու մնաց անշարժ։ Շուբինը սուր հայացք գցեց նրա վրա։

— Եվ այդ քեզ զարմացնո՞ւմ է։ Դու համեստ պատանի ես։ Բայց նա քեզ սիրում է։ Այդ կողմից դու կարող ես հանգիստ լինել։

— Ինչ հիմար բաներ ես դուրս տալիս,— վերջապես վրդովմունքով պատասխանեց Բերսենևը։

— Ո՛չ, հիմար բաներ չեն։ Սակայն ինչո՞ւ ենք մենք կանգնած։ Առաջ գնանք։ Գնացիս հեշտ է խոսելը։ Ես Ելենային վաղուց եմ ճանաչում և լավ եմ ճանաչում։ Սխալվել չեմ կարող։ Դու նրա սրտի ուղածն ես։ Կար ժամանակ, որ ես նրան դուր էի գալիս։ բայց նախ՝ ես նրա համար չափազանց թեթևամիտ երիտասարդ եմ, իսկ դու լուրջ էակ ես, դու բարոյապես և ֆիզիկապես մաքուր անձնավորություն ես, դու... սպասի՛ր, ես չեմ վերջացրել, դու՝ բարեխիղճ, չափավոր խանդավառվող երիտասարդ ես, իսկական ներկայացուցիչ գիտության այն քարտերի, որոնցով, ո՛չ, ոչ թե որոնցով, այլ սրպիսիներով այնքան արդարացի հպարտանում է ռուս միտքը։ Իսկ երկրորդ, Ելենան մոտ օրերս տեսավ ինձ Զոյայի ձեռքերը համբուրելիս։

— Զո՞յայի։

— Այո։ Զոյայի։ Ի՞նչ արած։ Այդ աղջկա ուսերը այնքան լավն են։

— Ուսե՞րը։

— Այո, հենց ուսերը կամ ձեռքերը, միևնույն չէ՞։ Ելենան ինձ տեսավ այս ազատ զբաղմունքների մեջ ճաշից հետո, իսկ ճաշից առաջ ես նրա ներկայությամբ հայհոյում էի Զոյային։ Ելենան, դժբախտաբար, չի հասկանում նման հակասությունների ամբողջ բնականությունը։ Հենց այդ միջոցին էլ պատահեցիր դու։ դու իդեալիստ ես, դու հավատում ես... ինչի՞ ես հավատում... Դու կարմրում ես, շփոթվում ես, ճառում ես Շիլլերի, Շելլինգի մասին (իսկ Ելենան միշտ էլ որոնում է նշանավոր մարդկանց), և ահա դու հաղթեցիր, իսկ ես, թշվառս, աշխատում եմ հանաքներ անել... և... և... մինչդեռ...

Շուբինը հանկարծ լաց եղավ, մի կողմ քաշվեց, նստեց գետնին և բռնեց իր մազերից։

Բերսենևը մոտեցավ նրան։

— Պավել,— սկսեց նա,— այդ ի՞նչ երեխայություն է։ Ասա խնդրեմ։ Այսօր ի՞նչ է պատահել քեզ։ Աստված գիտե, թե ինչ հիմարություն է մտել քո գլուխը, և դու լաց ես լինում։ Ինձ, ճիշտն ասած, թվում է, թե դու ձևանում ես։

Շուբինը բարձրացրեց գլուխը։ Արտասուքները լուսնի

շողերի տակ փայլում էին նրա այտերի վրա, բայց նրա դեմքը ժպտում էր։

— Անդրեյ Պետրովիչ,— խոսեց նա,— դու կարող ես մտածել իմ մասին ինչ ուզում ես։ Ես մինչև անգամ պատրաստ եմ համաձայնվել, որ ինձ հետ այժմ հիստերիկա է պատահել, բայց ես, աստված վկա, սիրահարված եմ Ելենային, և Ելենան քեզ է սիրում։ Սակայն, ես խոստացա ճանապարհ դնել քեզ մինչև տուն, և խոստումս կկատարեմ։

Նա վեր կացավ։

— Ինչ գիշե՛ր է։ Արծաթափայլ, մութ, զով։ Ի՞նչ լավ է այժմ նրանց համար, ովքեր սիրում են մեկին։ Որքան ուրախալի է նրանց համար չքնելը։ Դու կքնե՞ս, Անդրեյ Պետրովիչ։

Բերսենևը ոչինչ չէր պատասխանում և արագացրեց քայլերը։

— Ո՞ւր ես շտապում,— շարունակեց Շուբինը։— Հավատա իմ խոսքերին, այսպիսի գիշեր քո կյանքում էլ չի կրկնվի, իսկ տանը քեզ սպասում է Շելլինգը։ Ճիշտ է, նա այսօր քեզ լավ ծառայություն մատուցեց, բայց և այնպես, մի շտապիր։ Նրգի՛ր, եթե կարողանում ես, երգիր էլ ավելի բարձրաձայն, եթե չես կարողանում՝ հանիր գլխարկդ, բարձրացրու գլուխդ և ժպտա աստղերին։ Նրանք բոլորն էլ քեզ են նայում, միմիայն քեզ. աստղերը միայն այն են անում, որ նայում են սիրահարված մարդկանց, դրա համար էլ նրանք այնքան սքանչելի են։ Չէ՞ դու սիրահարված ես, Անդրեյ Պետրովիչ... Դու ինձ չես պատասխանում... Ինչո՞ւ չես պատասխանում,— նորից խոսեց Շուբինը։— Օ, եթե դու զգում ես քեզ երջանիկ, լռի՛ր, լռի՛ր։ Ես շատախոսում եմ, որովհետև ես վշտահար եմ, ես սիրելի չեմ, ես ձեռնածու եմ, արտիստ եմ, խեղկատակ, բայց ինչպիսի անիծս սքանչացումներ կիմանի ես այս գիշերային շիթերից, այս աստղերի տակ, այս աղամանդների տակ, եթե իմանայի, որ ինձ սիրում են... Բերսենև, դու երջանի՞կ ես։

Բերսենևն առաջվա պես լուռ էր և արագ գնում էր հարթ ճանապարհով։ Առջևում, ծառերի միջև, պսպղացին այն գյուղի լրակները, ուր նա ապրում էր. այն ամբողջովին բաղկացած էր մի տասնյակ փոքրիկ ամառանոցներից։ Գյուղի

հենց սկզբում, ճանապարհի աջ կողմում, երկու լայն տարածված կեչիների տակ գտնվում էր մանրավաճառի խանութը, նրա բոլոր պատուհաններն արդեն փակված էին, բայց լույսի լայն շերտը հովհարաձև ընկած էր բաց դռան վրա, կոխկրտած խոտի վրա, և այնտեղից էլ խփում էր դեպի վեր՝ ծառերին՝ խիստ լուսավորելով խիտ տերևների տակի սպիտակավուն կողերը։ Մի աղջիկ, ըստ երևույթին ինչ-որ աղախին, կանգնած խանութում, մեջքը դեպի շեմքը դարձրած, սակարկում էր խանութպանի հետ. կարմիր թաշկինակի տակից, որը նա գցել էր գլխին և բռնել էր ծնոտի տակ մերկ ձեռքով, հազիվ էր երևում նրա կլորիկ այտը և նուրբ պարանոցը։ Երիտասարդները մտան լույսի շերտի մեջ. Շուբինը նայեց խանութի ներսը, կանգ առավ և կանչեց. «Աննուշկա»։ Աղջիկն արագ շուռ եկավ։ Երևաց սիրունատես, մի քիչ լայն, բայց թարմ դեմքը, ուրախ, շագանակագույն աչքերով և թուխ հոնքերով։ «Աննուշկա»,— կրկնեց Շուբինը։ Աղջիկը նայեց նրան, վախեցավ, ամաչեց և, առևտուրը չվերջացրած, ցած իջավ սրահից, ժիր անցավ մոտիկից և հազիվ դես ու դեն նայելով՝ գնաց ճանապարհով դեպի ձախ։ Խանութպանը, մի թմբլիկ ու դեպի աշխարհի ամեն մի բանն անտարբեր մարդ, ինչպես բոլոր մանրավաճառները, որոնք առևտուր են անում քաղաքից դուրս, աղջկա հետևից ձայնեց ու հորանջեց, իսկ Շուբինը դիմեց Բերսենևին՝ ասելով. «Սա... սա, ա՛յ, տեսնո՞ւմ ես... այստեղ ես ունեմ մի ծանոթ ընտանիք... սա նրանց մոտ է, դու չկարծես...», և, չվերջացնելով խոսքը, վազեց հեռացող աղջկա հետևից։

— Գոնե սրբիր արտասուքդ,— կանչեց նրա հետևից Բերսենևը, չկարողանալով զսպել իր ծիծաղը։ Բայց երբ նա վերադարձավ տուն, նրա դեմքի վրա չկար ուրախ արտահայտություն. նա այլևս չէր ծիծաղում։ Նա մի վայրկյան անգամ չհավատաց Շուբինի ասածներին, բայց նրա արտասանած խոսքը խորը թափանցեց իր հոգու խորքը։ «Պավելը ինձ հիմարացնում էր,— մտածում էր նա,— բայց Ելենան երբևիցե կսիրե... Ո՞ւմ կսիրե նա»։

Բերսենևի սենյակում դրած էր դաշնամուր, ոչ մեծ էր, ոչ էլ նոր՝ բայց մեղմ ու հաճելի, թեև ոչ բոլորովին մաքուր տոնով։ Բերսենևը նստեց դաշնամուրի առաջ և սկսեց ակկորդներ վերցնել։ Ինչպես բոլոր ռուս ազնվականները, նա էլ փոքր ժամանակ սովորել էր երաժշտություն և, ինչպես համարյա բոլոր ռուս ազնվականները, նվազում էր շատ վատ. բայց նա սաստիկ սիրում էր երաժշտությունը Իսկապես ասած՝ երաժշտության մեջ նա սիրում էր ոչ թե արվեստը, ոչ թե ձևերը, որոնցով արտահայտվում էր այն (սիմֆոնիաները և սոնատները, նույնիսկ օպերաները նրան վհատություն էին ազդում), այլ նրա տարերքը. սիրում էր այն անորոշ ու քաղցր, անառարկայական և ամեն ինչ ընդգրկող զգացումները, որ զարթեցնում են հոգու մեջ ձայների ներդաշնակությունն ու ելևէջները։ Մի ժամից ավել նա չէր հեռանում դաշնամուրից, շատ անգամներ կրկնելով միևնույն ակկորդները, անհաջող կերպով որոնելով նորերը, կանգ առնելով նվազեցրած սեպտիմների վրա։ Նրա սիրտը մրմնջում էր, և աչքերը մի անգամ չէր, որ լցվում էին արտասուքով։ Նա չէր ամաչում այդ արտասուքից, որովհետև նա լացում էր խավարի մեջ։ «Ճշմարիտ է Պավելը,— մտածում էր նա,— ես նախազգում եմ՝ այս երեկոն այլևս չի կրկնվի»։ Վերջապես նա վեր կացավ, վառեց մոմը, խալաթը վրան գցեց, գարակից վերցրեց Ռաումերի «Հոհենշտաուֆենների պատմության»[1] երկրորդ հատորը և, մի երկու անգամ հոգոց հանելով, ջանասիրությամբ զբաղվեց ընթերցանությամբ։

VI

Մինչդեռ Ելենան վերադարձավ իր սենյակը, նստեց բաց պատուհանի առաջ և գլուխը հենեց ձեռքերին։ Ամեն երեկո մի քառորդ ժամի չափ իր սենյակի պատուհանի մոտ անցկացնելը նրա համար դառել էր սովորություն։ Նա այդ ժամանակ խոսում էր ինքն իր հետ, անցած օրվա մասին հաշիվ էր տալիս իրեն։ Մոտ ժամանակներս լրացել էր նրա քսան տարին։ Հասակով նա բարձր էր, ուներ գունատ և թուխ դեմք, խոշոր գորշ աչքեր, բոլորաձև հոնքերի տակ, շրջա-

[1] Ռաումեր Ֆ. (1781—1873)—գերմանացի պատմաբան։

պատված շատ մանրիկ պեպեններով, ճակատն ու քիթը բոլորովին ուղիղ, սեղմած բերան և բավականին սուր ծնոտ։ Նրա մուգ ծամը կախվում էր բարակ պարանոցի վրա։ Նրա ամբողջ էության մեջ, ուշադիր և մի փոքր վախկոտ դեմքի արտահայտության մեջ, պայծառ, բայց փոփոխական հայացքի մեջ, նրա ժպիտում, որը կարծես լարված էր, մեղմ ու անհավասար ձայնի մեջ կար մի ինչ-որ ջղային, էլեկտրական, ինչ-որ հախուռն շտապողական բան, մի խոսքով, մի այնպիսի բան, որը չէր կարող ամենքին դուր գալ, որը ոմանց նույնիսկ ետ էր մղում իրենից։ Նրա ձեռքերը նեղ էին, վարդագույն, երկար մատներով, նեղ էին նաև ոտները. նա քայլում էր արագ, համարյա սրընթաց, մի քիչ դեպի առաջ թեքված։ Նա շատ տարօրինակ պայմաններում էր մեծացել. առաջ պաշտում էր իր հորը, հետո ջերմ կերպով կապվեց մոր հետ, ու սառեց երկուսից էլ, մանավանդ հորից։ Վերջին ժամանակներս մոր հետ վարվում էր ինչպես հիվանդ տատի հետ. իսկ հայրը, որ հպարտանում էր նրանով, երբ նա դեռ համարվում էր մի արտասովոր երեխա, սկսեց վախենալ նրանից և, երբ մեծացավ, ասում էր, որ Ելենան մոլի հանրապետական է։ Աստված գիտե, թե ում է քաշել։ Թուլությունը վրդովեցնում էր Ելենային, հիմարությունը զայրացնում, սուտը նա չէր ներում «հավիտյանս հավիտենից», նրա պահանջները ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում, նույնիսկ աղոթքները հաճախ խառնվում էին հանդիմանությունների հետ։ Բավական էր, որ մի մարդ կորցներ նրա հարգանքը,— իսկ նա դատավճիռն արձակում էր շատ շուտ, հաճախ չափազանց շուտ,— և այդպիսին այլևս գոյություն չուներ նրա համար։ Բոլոր տպավորությունները խորապես ազդում էին նրա հոգու վրա. կյանքը նրա համար դյուրին չէր։

Դաստիարակչուհին, որին Աննա Վասիլևնան հանձնել էր վերջացնել իր աղջկա դաստիարակությունը,— մի դաստիարակություն, նկատենք փակագծերի մեջ, որը նույնիսկ դեռ չէր սկսել տաղտկացնող օրիորդը,— ռուսներից էր, մի սնանկացած կաշառակերի աղջիկ, ինստիտուտը վերջացրած, շատ զգայուն, բարի և կեղծ արարած. նա մի գլուխ սիրահարվում էր, և վերջացրեց նրանով, որ հիսուն տարեկան հասակում

(երբ Ելենան տասնյոթ տարեկանից անցել էր արդեն) ամուսնացավ ինչ-որ սպայի հետ, որն իսկույն էլ թողեց նրան։ Այս դաստիարակչուհին շատ էր սիրում գրականությունը և ինքն էլ ոտանավորներ էր գրում. նա Ելենայի մեջ սեր զարթեցրեց դեպի ընթերցանությունը. բայց լոկ ընթերցանությունը նրան չէր բավարարում։ Ելենան մանկությունից ծարավի էր գործունեության, գործնական բարության. աղքատները, քաղցածները, հիվանդները նրան զբաղեցնում էին, անհանգստացնում, տանջում. նա տեսնում էր նրանց երազի մեջ, նրանց մասին հարց ու փորձ էր անում իր բոլոր ծանոթներին, ողորմություն էր տալիս նրանց հոգատարությամբ, ակամա լրջությամբ, համարյա հուզմունքով։ Բոլոր ճնշված կենդանիները, նիհար շները, մահվան դատապարտված կատվի ձագերը, բնից վայր ընկած ծտերը, մինչև իսկ միջատներն ու սողունները վայելում էին Ելենայի հովանավորությունն ու պաշտպանությունը. նա անձամբ կերակրում էր նրանց, չէր զզվում։ Մայրը չէր խանգարում նրան. բայց հայրը շատ էր զայրանում իր աղջկա վրա, նրա, ինչպես ինքն էր ասում, գռեհիկ քնքշության համար և հավատացնում էր, որ շների և կատուների ձեռքից տանը շարժվելու տեղ չկա։ «Լենոչկա,— կանչում էր նա երբեմն,— շուտ արի, սարդը ճանճին ծծում է, ազատիր թշվառին»։ Եվ Լենոչկան, ռաստիկ հուզված, վազում էր, ազատում ճանճին, արձակում նրա թաթիկները։ «Դե, հիմա թող քեզ կծոտեմ, եթե դու այդպես բարի ես»,— հեգնաբար նկատում էր հայրը. բայց աղջիկը չէր լսում նրան։ Տասը տարեկան հասակում Ելենան ծանոթացավ մի մուրացկան աղջկա՝ Կատյայի հետ, և ծածուկ գնում էր նրա հետ տեսակցելու այգում, բերում էր նրա համար քաղցրավենիքներ, նվիրում էր նրան թաշկինակներ, տասը կոպեկանոցներ. Կատյան խաղալիքներ չէր վերցնում։ Ելենան նրա հետ նստում էր շոր գետնի վրա, մի խուլ տեղ, եղինջի թփերի հետևում. մի ուրախ հեզության զգացումով ուտում էր մուրացիկի կոշտ հացը, լսում նրա պատմությունները։ Կատյան ուներ մի մորաքույր, շատ չար պառավ, որը հաճախակի ծեծում էր նրան։ Կատյան ատում էր այդ պառավին և միշտ խոսում այն մասին, թե ինչպես ինքը կփախչի նրանից, ինչպես կապրի ազատ աշխարհում։ Ելե-

նան գաղտնի հարգանքով ու երկյուղով ականջ էր դնում այդ անծանոթ, նոր խոսքերին, ուշադիր նայում էր Կատյային, և նրան թվում էր, թե ամեն ինչ այդ աղջկա մեջ, ամեն ինչ—նրա սև, շարժուն, համարյա գազանային աչքերը, նրա արագաշարժ ձեռքերը, խուլ ձայնը, մինչև իսկ նրա պատառոտած զգեստը թվում էին Ելենային ինչ-որ առանձնահատուկ, համարյա սրբազան բաներ։ Ելենան վերադառնում էր տուն և հետո երկար-երկար մտածում էր մուրացկանների մասին, ազատության մասին. մտածում էր այն մասին, թե ինչպես ընկուզենուց կկտրի իր համար ձեռնափայտ, մախաղը կգցի վիզը և կփախչի Կատյայի հետ և ինչպես կթափառի ճանապարհներին, կապտագույն տերեփուկներից հյուսած պսակը դրած գլխին. նա մի անգամ տեսավ Կատյայի գլխին մի այդպիսի պսակ։ Եթե այդպիսի ժամանակ հարազատներից մեկնումեկը սենյակ էր մտնում, Ելենան քաշվում էր նրանից ու վայրենու նման հոնքերը կիտում։ Մի անգամ, անձրև ժամանակ, Ելենան վազում էր Կատյայի հետ տեսնվելու և ցեխոտեց իր զգեստը։ Հայրը տեսավ նրան և անվանեց կեղտոտ գեղջուհի։ Ելենան զայրույթից կարմրեց և նրա աչքում տիրեց սոսկում ու ճնշում։ Կատյան հաճախ երգում էր մի կիսավայրենի, զինվորի երգ. Ելենան նրանից սովորեց այդ երգը... Աննա Վասիլևնան լսեց այդ երգը և զայրացավ.

— Ո՞րտեղից ես դու վերցրել այդ զզվելի բանը,— հարցրեց նա իր աղջկան։

Ելենան միայն նայեց մորը և ոչ մի խոսք չասաց. նա զգաց, որ ավելի շուտ թույլ կտա պատառ-պատառ անել իրեն, քան թե կհայտնի իր գաղտնիքը, և նորից նա զգաց իր որոտում թե սարսափ, թե քաղցրություն։ Սակայն նրա ծանոթությունը Կատյայի հետ երկար չտևեց. խեղճ աղջիկը ջերմախտով հիվանդացավ և մի քանի օրից հետո մեռավ։

Ելենան շատ տխրեց և երկար ժամանակ գիշերները քնել չէր կարողանում, երբ իմացավ Կատյայի մահը։ Մուրացիկ աղջկա վերջին խոսքերը անընդհատ հնչում էին նրա ականջներում և նրան թվում էր, թե իրեն կանչում են...

Իսկ տարիներն անցնում էին իրար հետևից, արագ ու անշշուկ, ինչպես ձյունատակի ջրերը։ Ելենայի երիտասարդությունն արտաքուստ անցավ անգործության մեջ, իսկ ներքուստ՝ պայքարի ու հուզումների մեջ։ Ընկերուհիներ նա չուներ. Ստախովների տունն այցելող բոլոր աղջիկներից ոչ մեկի հետ նա չմտերմացավ։ Մնողական իշխանությունը երբեք չէր ծանրացած Ելենայի վրա, իսկ տասնվեց տարեկան հասակից նա դարձավ համարյա բոլորովին անկախ. նա սկսեց ապրել սեփական, բայց մենավոր կյանքով. նրա հոգին բռնկվում էր և հանգչում միայնակ։ Նա թպրտում էր, ինչպես թռչունը վանդակում, իսկ վանդակ չկար, ոչ ոք չէր ճնշում նրան, ոչ ոք չէր բռնում նրան, իսկ նա ձգտում էր դուրս թռչել և տանջվում էր։ Երբեմն նա ինքն իրեն չէր հասկանում, մինչև իսկ վախենում էր ինքն իրենից։ Այն ամենը, ինչ շրջապատում էր նրան, թվում էր նրան, թե անմիտ և թե անհասկանալի։ «Ինչպե՞ս ապրել առանց սիրո, իսկ չկա մեկը, որին սիրես»,— մտածում էր նա, և այդ մտքերը, այդ զգացումները սարսափեցնում էին նրան։ Տասնութ տարեկան հասակում նա քիչ էր մնում մեռներ ջերմախտից. նրա ամբողջ կազմվածքը, ի բնե առողջ և պինդ, հիմնովին քայքայվել էր և երկար ժամանակ չէր կարողանում կազդուրվել. հիվանդության վերջին հետքերը վերջապես չքացան, բայց Ելենա Նիկոլաևնայի հայրը դեռ էլի առանց բարկության չէր կարողանում խոսել նրա ջղերի մասին։ Երբեմն Ելենայի գլուխն էր մտնում, որ ինքը մի բան ուզում է, մի ինչ-որ բան, որը ոչ ոք չի ուզում, որի մասին ոչ ոք չի մտածում ամբողջ Ռուսաստանում։ Հետո նա հանդարտվում էր, մինչև իսկ ծիծաղում էր իր վրա, անհոգ անց էր կացնում օր-օրի հետևից, բայց հանկարծ ինչ-որ հզոր, անանուն բան, որը հաղթահարել չէր կարողանում նա, բորբոքվում էր նրա մեջ, ուզում էր դուրս ժայթքել։ Փոթորիկն անցնում էր, ցած էին ընկնում հոգնած, անվարժ թևերը, բայց այս մղումները զուր չէին անցնում։ Որքան էլ աշխատում էր նա չմատնել այն, ինչ որ տեղի էր ունենում իր ներսում, հուզված հոգու թախիծը երևան էր գալիս նրա արտաքին հանգստության մեջ, և նրա հարազատները հաճախ իրավունք ունեին թոթվել իրենց ուսերը, զարմանալ ու չհասկանալ նրա «տարօրինակությունները»։

Այն օրը, որից սկսվեց մեր այս պատմությունը, Ելենան սովորականից ավելի երկար ժամանակ չէր հեռանում պատուհանից։ Նա շատ էր մտածում Բերսենևի մասին, նրա հետ ունեցած իր խոսակցության մասին։ Երիտասարդը դուր էր գալիս նրան, նա հավատում էր Բերսենևի զգացմունքների ջերմությանը, դիտավորությունների մաքրությանը։ Երբեք նա իր հետ չէր խոսել այնպես, ինչպես այդ երեկո։ Ելենան մտաբերեց նրա անհամարձակ աչքերի արտահայտությունը, նրա ժպիտները և ինքն էլ ժպտաց ու մտածմունքի մեջ ընկավ, բայց արդեն ոչ նրա մասին։ Նա սկսեց դիտել «գիշերին» բաց պատուհանից։ Երկար նա նայում էր մութ, ցած կախված երկնքին. ապա վեր կացավ, գլխի շարժումով երեսից ետ վանեց մազերը և, ինքն էլ չիմանալով թե ինչու, մեկնեց դեպի նա, դեպի այդ երկինքը, իր մերկացած ու պաղած ձեռքերը. հետո նա ցած գցեց թևերը, ծունկ չոքեց իր անկողնի առաջ, երեսը սեղմեց բարձին և, չնայելով իր բոլոր ջանքերին՝ անձնատուր չլինելու իրեն համակող զգացմունքին, լաց եղավ ինչ-որ օտարոտի, անհասկանալի, բայց այրող արտասուքներով։

VII

Մյուս օրը, ժամը տասներկուսին, Բերսենևը Մոսկվա գնաց վերադարձող կառքով։ Նրան հարկավոր էր փող ստանալ փոստից, ինչ-որ գրքեր գնել և, ի դեպ, ուզում էր տեսնվել Ինսարովի հետ ու խոսել։ Շուբինի հետ ունեցած վերջին խոսակցության միջոցին Բերսենևի մեջ միտք հղացավ հրավիրել Ինսարովին իր մոտ ամառանոց։ Բայց նա շուտ չգտավ Ինսարովին, իր վերջին բնակարանից սա տեղափոխվել էր ուրիշ բնակարան, որին հասնելը այնքան էլ հեշտ բան չէր. այդ բնակարանը գտնվում էր մի անճոռնի քարաշեն տան հետևի բակում։ Այդ տունը Պետերբուրգի ձևով շինված էր Արբատի և Պովարսկայա փողոցի միջև։ Բերսենևն ապարդյուն թափառում էր մի կեղտոտ պատշգամբից մյուսը, իզուր էր դուռ կանչում մերթ դռնապանին, մերթ որևէ մեկին։ Դռնապանները Պետերբուրգում էլ աշխատում են խույս տալ այցելուների հայացքից, իսկ Մոսկվայում՝ առավել ևս։ Ոչ ոք չպատասխանեց Բերսենևին. միայն մի հարցասեր դերձակ, որ միայն ժիլետ ուներ հագին, իսկ ուսի վրա գցել էր գորշ թելի մի կաժ, լուսամուտի բարձր օդանցքից ցուցադրեց իր աղտոտ և չածիլած գեմքը՝ կապտացրած աչքով, մեկ էլ մի անպոզ սև այծ, որ բարձրացել էր աղբակույտի վրա, շուռ եկավ, ազիոզորմ ձայնով մկկաց և սկսեց առաջվանից ավելի եռանդով որոճալ։ Մի ինչ-որ կին, հին սալոպ հագին, բնդբնդած երկարաճիտք կոշիկներով, վերջապես խղճաց Բերսենևին և ցույց տվեց Ինսարովի բնակարանը։ Բերսենևը նրան գտավ տանը։ Ինսարովը սենյակ էր վարձել այն իսկ դերձակի մոտ, որն այնքան անտարբեր կերպով նայում էր օդանցքից մոլորված մարդու դես ու դեն ընկնելուն. այդ մի մեծ, համարյա դատարկ սենյակ էր՝ մութ կանաչ պատերով, երեք քառակուսի պատուհաններով. մի անկյունում դրած էր մի շատ փոքրիկ մահճակալ, մյուս անկյունում մի կաշվե բազմոց, իսկ ուղիղ առաստաղից կախված էր մի ահագին վանդակ. այդ վանդակում ժամանակին ապրում էր մի սոխակ։ Ինսարովը դիմավորեց Բերսենևին, հենց որ սա դռան շեմքից ներս մտավ, բայց չբացականչեց «Ա՜խ, այդ դուք եք», կամ «Ախ, աստված իմ, այդ ո՞ր խաչից է», մինչև անգամ «բարև» չասաց, այլ ուղղակի սեղմեց նրա ձեռքը և տարավ նրան սենյակում գտնվող միակ աթոռի մոտ։

— Նստեցե՛ք,— ասաց նա ու ինքն էլ նստեց սեղանի ծայրին։

— Ինձ մոտ, ինչպես տեսնում եք, դեռ անկարգություն է տիրում,— ավելացրեց Ինսարովը, ցույց տալով հատակի վրա կիտված գրքերը և թղթերը.— դեռ կարգի չեմ բերել ինչպես հարկն է։ Ժամանակ չունեի։

Ինսարովը խոսում էր ռուսերեն կատարյալ ճշտությամբ, յուրաքանչյուր բառը արտասանելով ամուր և մաքուր, բայց նրա կոկորդային, բայցև դուրեկան ձայնը հնչում էր ինչ-որ ոչ ռուսական շեշտով։ Ինսարովի օտարերկրյա ծագումը (նա ազգով բուլղար էր) էլ ավելի պարզ էր նկատվում նրա արտաքինի մեջ. դա մոտ քսանհինգ տարեկան մի երիտասարդ էր, նիհար և մկանոտ, ներս ընկած կրծքով, հանգու-

ցավոր ձեռքերով. նրա դեմքի գծերը խիստ էին, քիթը սապատավոր, կապտասպին տվող, ուղիղ մազեր, նեղ ճակատ, փոքրիկ, սուր նայվածքով փոս ընկած աչքեր, թավ ունքեր. երբ նա ժպտում էր, նրա գեղեցիկ սպիտակ ատամները երևում էին մի վայրկյան նուրբ, կոշտ, չափազանց որոշակի գծագրված շրթունքների տակից։ Նա հագել էր հին, բայց մաքուր սերթուկ, կոճկված մինչև վեր։

— Ինչո՞ւ տեղափոխվեցիք ձեր նախկին բնակարանից,— հարցրեց Բերսենևը։

— Սա ավելի էժան է, համալսարանին էլ մոտ։

— Բայց չէ՞ որ հիմա արձակուրդ է... Եվ ինչ հաճույք եք զգում ամառն ապրել քաղաքում։ Կվարձեիք ամառանոց, քանի որ վճռել էիք տեղափոխվել։

Ինսարովը ոչինչ չպատասխանեց այդ դիտողությանը և առաջարկեց Բերսենևին ծխամորճը՝ ասելով. «Ներեցեք, պապիրոս և սիգար չունեմ»։

Բերսենևը ծխեց ծխամորճը։

— Այ ես,— շարունակեց նա,— վարձել եմ մի տնակ Կունցեվոյի կողքին։ Շատ էժան է և շատ հարմար։ Այնպես որ նույնիսկ մի ավելորդ սենյակ էլ կա վերևում։

Ինսարովը դարձյալ ոչինչ չէր պատասխանում։

Բերսենևը հանեց բերնից ծխամորճը։

— Ես մինչև անգամ մտածում էի,— ասաց նա նորից բաց թողնելով ծուխը բարակ շիթերով,— որ եթե, օրինակ, գոնվեր մեկը... օրինակ հենց դուք, ես մտածում էի, որը եթե կամենար... եթե համաձայնվեր բնակվել ինձ մոտ, այնտեղ վերևում... որքան լավ կլիներ։ Ի՞նչ եք կարծում, Դմիտրի Նիկանորիչ։

Ինսարովը նրա վրա ուղղեց իր փոքրիկ աչքերը։

— Դուք առաջարկում եք ինձ ապրել ձեր ամառանոցո՞ւմ։

— Այո՛, ինձ մոտ, վերևում կա մի ավելորդ սենյակ։

— Շատ շնորհակալ եմ ձեզնից, Անդրեյ Պետրովիչ, բայց ես կարծում եմ, իմ միջոցները թույլ չեն տա ինձ այդ բանն անել։

— Այսինքն ինչպե՞ս թե չեն թույլ տալիս։

— Չեն թույլ տալիս ապրել ամառանոցում։ Ես չեմ կարող երկու բնակարան պահել։

— Չէ որ ես...— սկսեց Բերսենևն ու կանգ առավ։— Դրանից դուք ոչ մի ավելորդ ծախք չէիք ունենա,— շարունակեց նա։— Այստեղի բնակարանը ասենք թե ձեզ վրա կմնար, բայց այնտեղ ամեն ինչ շատ էժան է. կարելի է նույնիսկ այնպես հարմարվել, որ մենք ճաշենք միասին։

Ինսարովը լուռ էր։ Բերսենևն զգաց իրեն անհարմար վիճակում։

— Գոնե երբևիցե այցելեցեք ինձ,— սկսեց նա քիչ սպասելուց հետո։— Ինձանից երկու քայլ հեռու ապրում է մի ընտանիք, որի հետ ես շատ եմ ուզում ծանոթացնել ձեզ։ Այնտեղ ինչ հրաշալի աղջիկ կա, եթե իմանայիք, Ինսարով։ Այնտեղ է ապրում նույնպես իմ մի մոտիկ ծանոթը, մեծ տաղանդով օժտված մի մարդ. ես համոզված եմ, որ դուք նրա հետ կմտերմանաք։ (Ռուս մարդը սիրում է հյուրասիրել, եթե ոչ ուրիշ բանով, գոնե իր ծանոթներով)։ Իսկապես, եկեք։ Իսկ ավելի լավ է, հենց տեղափոխվեցեք ինձ մոտ, ճշմարիտ։ Մենք կարող էինք միասին աշխատել, կարդալ... Ես, ինչպես գիտեք, զբաղվում եմ պատմությամբ, փիլիսոփայությամբ։ Այդ բոլորը ձեզ հետաքրքրում է։ Ես շատ գրքեր էլ ունեմ։

Ինսարովը վեր կացավ և մի քանի անգամ դնաց-եկավ սենյակում։

— Թույլ տվեք իմանալ,— հարցրեց նա վերջապես,— որքա՞ն եք վճարում դուք ձեր ամառանոցի համար։

— Հարյուր ռուբլի արծաթով։

— Իսկ քանի՞ սենյակ կա այնտեղ։

— Հինգ։

— Կնշանակի, այդ հաշվով, ամեն մի սենյակի համար քսան ռուբլի։

— Հաշվով այդպես... Բայց, ներեցեք, այդ սենյակն ինձ բոլորովին էլ հարկավոր չէ։ Ուզղակի մնում է դատարկ։

— Շատ կարելի է, բայց լսեցեք,— ավելացրեց Ինսարովը գլխի մի կտրուկ և միևնույն ժամանակ բարեհոգի շարժումով,— ես միայն այն դեպքում կարող եմ օգտվել ձեր

առաջարկից, եթե դուք համաձայնվեք վերցնել ինձանից փոխ, ըստ հաշվի։ Քանի ռուբլի վճարել ես կարող եմ, մանավանդ որ, ինչպես ասում եք, ես այնտեղ մյուս բոլոր ծախքերում խնայողություն կանեմ։

— Հասկանալի է, բայց ճշմարիտ, ես ամաչում եմ։

— Այլ կերպ անկարելի է, Անդրեյ Պետրովիչ։

— Դե, ինչպես ուզում եք, միայն թե ինչ համառն եք։

Ինսարովը դարձյալ ոչինչ չպատասխանեց։

Երիտասարդները պայմանավորվեցին, թե որ օրը պիտի տեղափոխվի Ինսարովը։ Կանչեցին բնակարանի տիրոջը. բայց նա նախ ուղարկեց իր աղջկան, որ յոթ տարեկան մի երեխա էր, գլխին գցած մի ահագին խայտաբղետ գլխաշոր. աղջիկը ուշի-ուշով, համարյա թե սաբսափով լսեց այն ամենը, ինչ ասաց Ինսարովը և լուռ հեռացավ։ Նրանից հետո եկաց նրա մայրը, մի հղի կին, նույնպես գլխաշորով գլուխը ծածկած, բայց շատ փոքրիկ գլխաշորով։ Ինսարովը բացատրեց նրան, որ ինքը տեղափոխվում է ամառանոց Կունցեվոյի մոտ, բայց բնակարանը թողնում է իր վրա և նրան, այդ կնոջն է հանձնում իր բոլոր իրերը։ Դերձակի կինն էլ կարծես վախեցավ ու հեռացավ։ Վերջապես եկավ ինքը, դերձակը։ Սա սկզբից կարծես հասկացավ ամեն բան և միայն մտախոհ ասաց. «Կունցեվոյի մոտ», իսկ հետո հանկարծ բաց արավ դուռը և բղավեց. «Իսկ բնակարանը ձեզ վրա է մնում, չէ՞»։ Ինսարովը հանգստացրեց նրան։ «Պետք է իմանալ, չէ՞»,— կրկնեց դերձակը խստությամբ և հեռացավ։

Բերսենևն իր գործին գնաց, շատ բավական իր առաջարկության հաջողությունից։ Ինսարովը ճանապարհ դրեց նրան մինչև դուռը մի այնպիսի սիրալիր քաղաքավարությամբ, որպիսին Ռուսաստանում քիչ է գործածական, և, մնալով մենակ, խնամքով հանեց սերթուկը և զբաղվեց իր թղթերը դասելով։

VIII

Նույն օրը երեկոյան Աննա Վասիլևնան նստած էր իր հյուրասենյակում և պատրաստվում էր լաց լինել։ Բացի նրանից, այդ սենյակումն էր նրա ամուսինը և մի ոմն՝ Ուվար Իվանովիչ Ստախովը, Նիկոլայ Արտեմևիչի հորեղբայրը, պաշտոնաթող կորնետ՝ մոտ վաթսուն տարեկան մի մարդ, անշարժության աստիճանի չաղ, քնկոտ դեղին մանր աչքերով և անգույն հաստ շրթունքներով՝ դեղին ուռած դեմքի վրա։ Նա պաշտոնը թողնելու օրից մշտապես ապրում էր Մոսկվայում այն փոքրիկ դրամագլխի տոկոսներով, որ մնացել էր նրան վաճառականների դասին պատկանող կնոջից։ Նա ոչինչ չէր անում և հազիվ թե մտածում էր, իսկ եթե մտածում էլ էր, իր մտքերը պահում էր իր մեջ։ Իր կյանքում մի անգամ միայն նա հուզվեց և գործունեություն ցույց տվեց. այն է՝ նա կարդաց լրագրերում Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսում գրած մի նոր գործիքի մասին, որ կոչվում էր «Կոնտրոբոմբարդոն» և ուզեց բերել տալ իր համար այդ գործիքը, մինչև անգամ հարց ու փորձ արեց, թե ուր պետք է ուղարկել փողերը և որ գրասենյակի միջոցով։ Ուվար Իվանովիչը հագնում էր ծխախոտագույն լայնարձակ սերթուկ և սպիտակ թաշկինակ կապում վզին, ուտում էր հաճախ ու շատ, և միայն դժվարին դեպքերում, այսինքն ամեն անգամ, երբ նրան հարկավոր էր որևէ կարծիք հայտնել, ցնցելով շարժում էր աջ ձեռքի մատները օդում նախ բթամատից դեպի ճկույթը, ապա ճկույթից դեպի բթամատը, դժվարությամբ արտասանելով. «պետք էր... մի կերպ... էն...»։

Ուվար Իվանովիչը նստած էր բազկաթոռում պատուհանի մոտ և շնչում էր լարված։ Նիկոլայ Արտեմևիչը խոշոր քայլերով անցուդարձ էր անում սենյակում, ձեռքերը գրպանները դրած. նրա դեմքը անբավականություն էր արտահայտում։

Նա վերջապես կանգ առավ և օրորեց գլուխը։

— Այո,— սկսեց նա,— մեր ժամանակ երիտասարդները ուրիշ կերպ էին կրթված։ Երիտասարդները իրենց թույլ չէին տալիս արհամարհել մեծերին։ Իսկ այժմ ես միայն նայում եմ ու զարմանում։ Գուցե անարդարը ես եմ, իսկ նրանք արդարացի. կարելի է։ Բայց և այնպես ես ունեմ իմ սեփական հայացքն իրերի վերաբերմամբ. ես հիմար հո չեմ ծնված։ Ինչպե՞ս եք կարծում, Ուվար Իվանովիչ։

Ուվար Իվանովիչը միայն նայեց նրան և խաղացրեց իր մատները։

— Ելենա Նիկոլաևնային, օրինակ,— շարունակեց Նիկոլայ Արտեմևիչը,— Ելենա Նիկոլաևնային ես չեմ հասկանում, ճշմարիտ է։ Նրա համար ես բավականաչափ բարձր չեմ։ Նրա սիրտն այնքան ընդարձակ է, որ ընդգրկում է ամբողջ բնությունը, մինչև ամենափոքրիկ ուտիճը կամ գորտը, մի խոսքով ամեն ինչ, բացի իր հարազատ հորից։ Շատ լավ, այդ գիտեմ և չեմ խառնվում։ Որովհետև այդտեղ կան և ջղեր, և գիտնականություն, և թռիչք դեպի երկինք, այդ բոլորը մեր մասնագիտությունը չէ։ Բայց պ. Շուբինը... ասենք նա զարմանալի, արտակարգ արտիստ է, ես այդ մասին չեմ էլ վիճում. սակայն արհամարհել մեծին, մի մարդու, որին նա, այնուամենայնիվ, կարելի է ասել, շատ բանով է պարտական. այդ, ես խոստովանում եմ, dans mon gros bon sens[1], թույլ տալ չեմ կարող։ Ի բնե ես խստապահանջ չեմ, ոչ. բայց ամեն ինչ չափ ունի։

Աննա Վասիլևնան հուզմունքով զանգահարեց։ Ներս մտավ սպասավոր կազակ տղան։

— Ինչո՞ւ Պավել Յակովլևիչը չի գալիս,— ասաց նա,— այդ ինչո՞ւ չեմ կարողանում կանչել այստեղ։

Նիկոլայ Արտեմևիչը թոթվեց ուսերը։

— Ի՞նչ հարկ կա, ասացեք խնդրեմ, կանչել նրան։ Ես բոլորովին չեմ պահանջում այդ բանը, մինչև իսկ չեմ ցանկանում։

— Ինչպե՞ս թե ինչ հարկ կա, Նիկոլայ Արտեմևիչ։ Նա ձեզ անհանգիստ է արել. գուցե խանգարել է ձեր բժշկվելու ընթացքը։ Ես ուզում եմ բացատրվել նրա հետ։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչով է նա ձեզ բարկացրել։

— Ես կրկնում եմ, որ այդ ես չեմ պահանջում։ Եվ ինչ հաճույք է... devant les domestiques...[2]։

Աննա Վասիլևնան թեթև շառագունեց։

— Իզուր եք այդպես ասում, Նիկոլայ Արտեմևիչ։ Երբեք ես... devant... les domestiques... Գնա, Ֆեդյուշկա, և նայիր տես, որ իսկույն այստեղ բերես Պավել Յակովլևիչին։

Սպասավորը դուրս գնաց։

[1] Իմ ամբողջ առողջ դատողությամբ (ֆրանս.)։

[2] Սպասավորի առաջ (ֆրանս.)։

— Եվ բոլորովին հարկավոր էլ չէ այդ բոլորը,— ասաց Նիկոլայ Արտեմևիչը ատամների արանքից ու նորից սկսեց քայլել սենյակում։

— Ես բոլորովին այդ մասին չեմ խոսում։

— Ինչ եք ասում, Paul չպիտի՞ ներողություն խնդրի ձեզնից։

— Էհ, ինչի՞ս է պետք նրա ներողությունը։ Եվ ինչ բան է ներողություն խնդրելը։ Միայն ֆրազներ։

— Ինչպե՞ս թե... նրան պետք է խրատել։

— Խրատեցեք ինքներդ։ Նա ձեզ ավելի շուտ կլսի։ Իսկ ես նրանից դժգոհ չեմ։

— Ոչ, Նիկոլայ Արտեմևիչ, դուք, այսօր, հենց գալուց սկսած վատ տրամադրության մեջ եք։ Դուք վերջին ժամանակներս մինչև անգամ իմ աչքում նիհարած եք երևում։ Վախենում եմ, որ գուցե ձեր բուժումը ձեզ չի օգնում։

— Բուժումն ինձ անհրաժեշտ է,— նկատեց Նիկոլայ Արտեմևիչը,— իմ լյարդը կարգին չէ։

Այդ վայրկյանին ներս մտավ Շուբինը։ Նա հոգնած էր երևում։ Թեթև, հազիվ նկատելի հեգնական ժպիտը խաղում էր նրա շրթունքների վրա։

— Դուք ինձ հարցնո՞ւմ էիք, Աննա Վասիլևնա,— ասաց նա։

— Դե, իհարկե, հարցնում էի։ Ի՞նչ ասել է դա, Paul, գա սարսափելի է։ Ես շատ դժգոհ եմ քեզանից։ Ինչպե՞ս կարող ես արհամարհել Նիկոլայ Արտեմևիչին։

— Նիկոլայ Արտեմևիչը գանգատվել է ձեզ իմ մասի՞ն,— հարցրեց Շուբինը և նույն հեգնանքը շրթունքների վրա՝ նայեց Ստախովին։ Վերջինս շուտ եկավ և աչքերը կախեց։

— Այո, գանգատվել է։ Ես չգիտեմ, թե դու ինչով ես մեղավոր նրա առաջ, բայց դու իսկույն պիտի ներողություն խնդրես նրանից, որովհետև նրա առողջությունն այժմ շատ խանգարված է և, վերջապես, մենք ամենքս երիտասարդ տարիներում պարտավոր ենք հարգել մեր բարերարներին։

«Էհ, տրամաբանություն է հա»,— մտածեց Շուբինը և դիմեց Ստախովին.

— Ես պատրաստ եմ ձեզանից ներողություն խնդրել,

Նիկոլայ Արտեմևիչ,— ասաց նա քաղաքավարությամբ թեթև դուխ տալով,— եթե ես իսկապես ձեզ վիրավորել եմ մի բանով։

— Ես ամենևին էլ... այդ մտքով չեմ,— առարկեց Նիկոլայ Արտեմևիչը, առաջվա պես խույս տալով Շուբինի հայացքից։— Սակայն, ես սիրով ներում եմ ձեզ, որովհետև, դուք գիտեք, ես պահանջկոտ մարդ չեմ։

— Օ, այդ կասկածից դուրս է,— ասաց Շուբինը։— Բայց թույլ տվեք հետաքրքրվել, արդյոք հայտնի՞ է Աննա Վասիլևնային այն, թե որն է իմ մեղքը։

— Ոչ, ես ոչինչ չգիտեմ,— նկատեց Աննա Վասիլևնան և միզը մեկնեց։

— Ո՞հ, ասուած իմ,— բացականչեց Նիկոլայ Արտեմիչը։— Քանի անգամ ես խնդրեցի, աղաչեցի... քանի անգամ ասացի, թե որքան ինձ ատելի են այս բոլոր բացատրություններն ու տեսարանները։ Հազարից մի անգամ գալիս ես տուն, ուզում ես հանգստանալ—ասում են ընտանեկան շրջան, intérieur[1], եղիր ընտանեսեր, իսկ այստեղ տեսարաններ, անախորժություններ։ Մի բոպե էլ հանգստություն չկա։ Ակամա կգնաս կլուբ կամ... կամ մի որևէ այլ տեղ։ Աշխույժ մարդ, նա ունի ֆիզիկա, ունի իր հատուկ պահանջները, իսկ այստեղ...

Եվ, չվերջացնելով սկսած ճառը, Նիկոլայ Արտեմևիչը շտապ դուրս եկավ և թրխկացրեց դուռն ու գնաց։ Աննա Վասիլևնան նայեց նրա հետևից։

— Կլո՞ւբ,— դառնությամբ շշնջաց նա,— դուք կլուբ չեք գնում, թեթևսոլիկ մարդ։ Կլուբում չկա այնպիսին, որին պարգևեք սեփական երամակի ձիերը ու այն էլ մոխրագույնները։ Իմ սիրած տեսակի։ Այո, այո, թեթևամիտ մարդ,— ավելացրեց նա բարձրացնելով իր ձայնը,— կլուբ չեք գնում։ Իսկ դու, Paul,— շարունակեց նա տեղից վերկենալով,— չե՞ս ամաչում։ Կարծեմ երեխա չես։ Ահա այժմ գլուխս սկսեց ցավել։ Ո՞ւր է Զոյան, չգիտե՞ս։

— Կարծեմ իր սենյակումն է, վերևում։ Այդ խոհեմ աղջիկը այսպիսի եղանակին միշտ իր որջի մեջ է թաքնվում։

— Դե բավական է, բավական։— Աննա Վասիլևնան որոնեց իր շուրջը,— ո՞ւր է իմ գավաթը, որի մեջ կա տրորված ծովաբողկ, դու չե՞ս տեսել։ Paul, բարի եղիր խնդրեմ, այսուհետև ինձ մի բարկացնի։

— Ինչո՞ւ պիտի բարկացնեմ ձեզ, մորաքույր։ Տվեք ձեր ձեռքը համբուրեմ։ Իսկ ձեր ծովաբողկը ես տեսա առանձնասենյակի փոքրիկ սեղանի վրա։

— Դարյան միշտ մոռանում է ու թողնում մի որևէ տեղ,— ասաց Աննա Վասիլևնան և հեռացավ՝ խշխշացնելով իր մետաքսյա զգեստը։

Շուբինն ուզեց գնալ նրա հետևից, բայց կանգ առավ՝ լսելով իր հետևից Ուվար Իվանովիչի դանդաղկոտ ձայնը.

— Այդպես չէր հարկավոր քեզ նման կաթնակերին... — ասում էր պաշտոնաթող կորնետը ընդհատումներով։

Շուբինը մոտեցավ նրան։

— Իսկ ինչի՞ համար էր հարկավոր ինձ... հարգոյապատիվ Ուվար Իվանովիչ։

— Ինչի՞։ Դու չահել ես, ուրեմն պիտի հարգես։ Այո։

— Ո՞ւմ։

— Ո՞ւմ։ Հայտնի է, թե ում։ Ատամներդ մի ցույց տուր։

Շուբինը ձեռքերը խաչեց կրծքի վրա։

— Ահ դուք, խմբական սկզբունքի ներկայացուցիչ,— բացականչեց նա,— սևահողային ուժ, հասարակական շենքի հիմունքը։

Ուվար Իվանովիչը խաղացրեց իր մատները։

— Բավական է, եղբայր, ինձ մի՛ գայթակղեցրու։

— Ահա ձեզ,— շարունակեց Շուբինը,— կարծեմ չահել ազնվական էլ չէ, բայց նրա մեջ որքան երջանիկ, մանկական հավատ կա դեռ թաքնված։ Հարգե՞լ։ Բայց գիտե՞ք դուք, տարերային մարդ, ինչ պատճառով է Նիկոլայ Արտեմևիչը բարկանում ինձ վրա։ Չէ՞ որ ես այսօր նրա հետ ամբողջ առավոտն անց եմ կացրել նրա գերմանուհու մոտ. այսօր մենք երեքս երգում էինք «Մի հեռանար ինձանից». այ թե դուք կլսեիք։ Կարծեմ այս բանը ձեզ դուր է գալիս։ Երգեցինք մենք, պարոնս, երգեցինք, և ես ձանձրույթ զգացի. տեսնում եմ բանը լավ չէ, քնքշություն շատ կա։ Ես էլ սկսեցի երկուսին շարացնել։ Լավ հաջողվեց։ Սկզբում գերմանուհին բարկացավ ինձ վրա, հետո՝ նրա վրա. ապա Նի-

[1] Այստեղ—ընտանեկան կյանք (ֆրանս.)։

կոլայ Արտեմևիչը բարկացավ նրա վրա և ասաց, թե ինքը միայն տանն է երջանիկ և թե տունը մի դրախտ է։ Իսկ գերմանուհին ասաց, որ նա բարոյականություն չունի. իսկ ես գերմանուհուն՝ «ախ» գերմաններեն։ Նիկոլայ Արտեմևիչը գնաց, իսկ ես մնացի։ Նա եկավ այստեղ, այսինքն՝ դրախտը, իսկ դրախտում նա տանջվում է։ Եվ ահա նա սկսեց փնթփնթալ։ Դե հիմա ասա, ո՞վ է, ձեր կարծիքով, մեղավորը։

— Իհարկե, դու,— առարկեց Ուվար Իվանովիչը։

Շուբինը հառեց իր աչքերը նրա վրա։

— Համարձակվում եմ հարցնել ձեզ, հարգելի դյուցազն,— սկսեց նա շողոքորթ ձայնով,— այդ հանելուկային խոսքերը դուք բարեհաճեցիք արտասանել ձեր մտածողական ընդունակության որևէ ըմբռնողության հետևանքո՞վ, թե ունենալով մի վայրկենական պահանջ՝ օդի մեջ առաջացնելու մի ցնցում, որն անվանվում է ձայն։

— Մի՛ գայթակղեցրու, ասում եմ,— հեծեծաց Ուվար Իվանովիչը...

Շուբինը ծիծաղեց և դուրս վազեց։

— Է՛յ,— բացականչեց քառորդ ժամ հետո Ուվար Իվանովիչը։— Էն ինչը... մի բաժակ օղի տուր...

Կաղակ ծառան բերեց օղին և ուտելիքը մատուցարանի վրա։ Ուվար Իվանովիչը ղգույշ վերցրեց բաժակը մատուցարանից և երկար, լարված ուշադրությամբ նայում էր նրան, կարծես լավ չհասկանալով, թե ինչ է բռնել իր ձեռքում։ Ապա նա նայեց ծառային և հարցրեց, արդյոք Վասկա չէ՞ նրա անունը։ Ապա նա վշտալից տեսք ընդունեց, խմեց օղին, մի բան ճաշակեց և ապա ձեռքը տարավ գրպանից թաշկինակ հանելու։ Բայց ծառան վաղուց արդեն տարել էր մատուցարանն ու օղու գրաֆինը դրել իր տեղը և կերել տաքեր մնացորդը, նույնիսկ կարողացել էր մի քիչ էլ քնել, գլուխը դնելով աղայի վերարկուի վրա, իսկ Ուվար Իվանովիչը դեռևս բռնել էր թաշկինակը իր առաջ չուված մատների վրա և նույն լարված ուշադրությամբ նայում էր մերթ պատուհանին, մերթ հատակին ու պատերին։

XI

Շուբինը վերադարձավ իր վերնատունը և ուզում էր բաց անել գիրքը, Նիկոլայ Արտեմևիչի սենեկապանը զգուշությամբ ներս մտավ և տվեց նրան մի փոքրիկ, եռանկյունաձև տոմսակ, կնքված խոշոր դրոշմանիշ կնիքով։ «Ես հույս ունեմ, գրված էր այդ տոմսակի մեջ, որ դուք, իբրև ազնիվ մարդ, թույլ չեք տա ձեզ նույնիսկ մի հատ խոսքով ակնարկել այն մուրհակի մասին, որի առթիվ խոսք եղավ այսօր առավոտյան։ Ձեզ հայտնի են իմ հարաբերությունները և իմ կանոնները, գումարի չնչինությունը և ուրիշ հանգամանքներ։ Վերջապես կան ընտանեկան գաղտնիքներ, որոնք պետք է հարգել, և ընտանեկան անդորրությունը այնպիսի մի սքրբություն է, որը միայն êtres sans coeur-ներն[1] են մերժում. իսկ ես պատճառ չունեմ ձեզ այդպիսիների թվին դասելու (այս տոմսակը վերադարձրեք)։ Ն. Ս.»։

Շուբինը ներքևում մատիտով ավելացրեց. «Մի՛ անհանգստանաք, ես առայժմ գրպաններից թաշկինակներ չեմ հանում»։ Վերադարձրեց տոմսակը սենեկապանին և նորից ձեռքն առավ գիրքը։ Բայց գիրքը շուտով սահելով ընկավ նրա ձեռքերից։ Նա նայեց շառագունած երկնքին, երկու ջահել հզոր սոճիներին, որոնք կանգնած էին մյուս ծառերից առանձնակի, մտածեց՝ «ցերեկը սոճիները կապտագույն են լինում, իսկ երեկոները ինչ սքանչելի կանաչ են», և ուղղվեց դեպի այգին, այստեղ Ելենային հանդիպելու գաղտնի հույսով։ Նա խաբված չէր։ Առջևում, թփերի միջից անցնող ճանապարհի վրա, երևաց Ելենայի զգեստը։ Շուբինը հասավ նրան և հավասարվելով նրա հետ՝ ասաց.

— Դեպի իմ կողմը մի նայեք, ես արժանի չեմ։

Ելենան հարևանցի նայեց նրան, հարևանցի ժպտաց և շարունակեց ճանապարհը դեպի այգու խորքը։ Շուբինը քայլեց նրա հետևից։

— Ես խնդրում եմ չնայել ինձ վրա,— սկսեց նա,— և խոսում եմ ձեզ հետ. պարզ հակասություն է։ Բայց դա միևնույն է. առաջին անգամը չէ ինձ հետ այսպես պատահում։

[1] Անսիրտ էակ (ֆրանս.)։

ես այս բոպեին միայն հիշեցի, որ դեռևս ձեզանից ինչպես հարկն է ներողություն չեմ խնդրել երեկվա իմ հիմար վարմունքի համար։ Դուք ինձ վրա չե՞ք բարկանում, Ելենա Նիկոլաևնա։

Օրիորդը կանգ առավ և իսկույն չպատասխանեց նրան, ոչ այն պատճառով, որ նա բարկանում էր, այլ որովհետև նրա մտքերը հեռու էին։

— Ոչ,— ասաց նա վերջապես,— ես ամենևին չեմ բարկանում։

Շուբինը կծեց շրթունքը։

— Ինչպիսի մտահոգ... և ինչպիսի անտարբեր դեմք,— փնթփնթաց նա։— Ելենա Նիկոլաևնա,— շարունակեց նա, բարձրացնելով ձայնը,— թույլ տվեք պատմել ձեզ մի փոքրիկ անեկդոտ։ Ես մի բարեկամ ունեի, իսկ այդ բարեկամն էլ մի ուրիշ բարեկամ ուներ, որը սկզբում պահում էր իրեն ինչպես վայել է օրինավոր մարդուն, բայց հետո սկսեց խմել։ Եվ ահա մի անգամ, վաղ առավոտյան, իմ բարեկամը հանդիպում է նրան փողոցում (նկատեցեք, որ նրանք այլևս իրար հետ ծանոթություն չէին պահում), հանդիպում է և տեսնում, որ նա հարբած է։ Իմ բարեկամը ուղղակի երես է դարձնում նրանից։ Իսկ նա մոտենում է և ասում. «Ես չէի բարկանա, եթե դուք չբարևեիք, բայց ինչո՞ւ երես դարձնել։ Գուցե ես վշտից եմ խմում։ Հանդիստ իմ աճյունին»։

Շուբինը լռեց։

— Միայն ա՞յդ,— հարցրեց Ելենան։

— Միայն։

— Ես ձեզ չեմ հասկանում։ Ինչի՞ մասին եք ակնարկում։ Այս բոպեին դուք ասացիք ինձ, որ ես չնայեմ դեպի ձեր կողմը։

— Այո, իսկ հիմա ես ձեզ պատմեցի, թե ինչպես վատ է երես շրջելը։

— Մի՞թե ես...— ուզում էր սկսել Ելենան։

— Բայց մի՞թե ոչ։

Ելենան թեթև կերպով կարմրեց և ձեռքը մեկնեց Շուբինին։ Սա ամուր սեղմեց ձեռքը։

— Ահա դուք ինձ իբրև թե բռնեցիք մի վատ զգացմունքի մեջ,— ասաց Ելենան,— բայց ձեր կասկածը անարդար է։

Իմ մտքով անգամ չէր անցնում խուսափել ձեզնից։

— Դիցուք թե այդպես է։ Բայց խոստովանեցեք, որ ձեր գլխում այս բոպեին հազարավոր մտքեր կան, որոնցից ոչ մեկն էլ ինձ չեք վստահում ասել։ Ի՞նչ է։ Ես ճիշտ չասացի՞։

— Գուցե։

— Ինչի՞ց է այդ, ինչի՞ց։

— Իմ մտքերը պարզ չեն նույնիսկ ինձ համար,— ասաց Ելենան։

— Հենց այդ պատճառով էլ պետք է վստահել դրանք ուրիշներին,— վրա բերեց Շուբինը։— Բայց ես կասեմ, թե բանն ինչումն է։ Դուք վատ կարծիք ունեք իմ մասին։

— Ե՞ս։

— Այո՛, դուք։ Դուք երևակայում եք, որ իմ մեջ ամեն ինչ կիսով չափ կեղծ է, որովհետև ես գեղարվեստագետ եմ, որ ես ընդունակ չեմ ոչ միայն որևէ գործի— այդ բանում դուք, հավանաբար, իրավացի եք—այլև ոչ մի իսկական, խորը զգացմունքի, որ ես անկեղծ կերպով լաց լինել էլ չեմ կարող, որ ես շատախոս եմ և բամբասասեր, և այդ բոլորն այն պատճառով, որ ես գեղարվեստագետ եմ։ Եվ այդ բոլորից հետո ինչ ենք մենք, ինչ դժբախտ, աստծուց սպանված մարդիկ ենք։ Դուք, օրինակ, ես պատրաստ եմ երդվել, չեք հավատում իմ զղջմանը։

— Ո՛չ, Պավել Յակովլևիչ, ես հավատում եմ ձեր զղջմանը, ձեր արտասուքներին էլ հավատում եմ։ Բայց ինձ թվում է, որ ձեր այդ զղջումը ձեզ զվարճացնում է, նույնպես և արտասուքները։

Շուբինը ցնցվեց։

— Գիտեք, ես տեսնում եմ որ այդ, ինչպես ասում են բժիշկները, անբուժելի կազուս է, casus incurabilis։ Այդտեղ մնում է միայն գլուխը կախել և հնազանդվել։ Մինչդեռ, տեր աստված, մի՞թե դա ճշմարիտ է, մի՞թե ես միայն ինձանով եմ զբաղվում, այն ժամանակ, երբ իմ կողքին ապրում է այսպիսի մի հոգի։ Եվ իմանալ, որ երբեք չես թափանցի այդ հոգու մեջ, երբեք չես ըմբռնի, թե ինչու է նա թախծում, ինչու է նա ուրախանում, ինչ է եռում նրա մեջ, ինչ է նա ուզում, ուր է գնում... Ասացեք,— արտասանեց նա մի քիչ

լռելուց հետո,— դուք երբեք, ոչ մի կերպ, ոչ մի դեպքում չէ՞ք սիրի գեղարվեստագետի։

Ելենան ուղիղ նայեց նրա աչքերին։

— Չեմ կարծում, Պավել Յակովլևիչ, ոչ։

— Հենց այդ էլ պետք էր ապացուցել,— ասաց Շուբինը կոմիկական վստահությամբ։— Ապա ուրեմն, ես կարծում եմ, ինձ համար ավելի վայելուչ կլինի չխանգարել ձեր մեծ նավոր զբոսանքը։ Պրոֆեսորը կհարցներ ձեզ. իսկ ի՞նչ տվյալների հիման վրա դուք ասացիք ո՛չ։ Բայց ես պրոֆեսոր չեմ, ես երեխա եմ, ձեր հասկացողությամբ. սակայն երեխաներից երես չեն շրջում, հիշեցեք այս բանը։ Մնաք բարով։ Հանգիստ իմ աճյունին։

Ելենան ուզում էր կանգնեցնել նրան, բայց մտածեց և նույնպես ասաց.

— Մնա՞ք բարով։

Շուբինը դուրս եկավ բակից։ Ստախովների ամառանոցից քիչ հեռու նրան հանդիպեց Բերսենևը։ Նա գալիս էր աշխույժ քայլերով, գլուխը կախ արած և գլխարկը քաշած դեպի ծոծրակը։

— Անդրեյ Պետրովիչ,— կանչեց Շուբինը։

Նա կանգնեց։

— Գնա, գնա,— շարունակեց Շուբինը,— ես հենց այնպես ձայն տվի, ես քեզ չեմ ուշացնում, և անցիր ուղիղ այդին. այնտեղ դու կգտնես Ելենային։ Նա, կարծեմ, քեզ է սպասում... Համենայն դեպս մեկին նա սպասում է... Հասկանո՞ւմ ես դու այս խոսքերի ուժը. նա սպասում է։ Բայց գիտե՞ս, եղբայր, ինչ զարմանալի հանգամանք կա։ Երևակայիր, ահա երկու տարի է, ինչ ես ապրում եմ Ելենայի հետ մի տան մեջ, ես սիրահարված եմ նրան, և միայն այժմ, այս բոպեին միայն՝ ոչ թե հասկացա նրան, այլ տեսա։ Տեսա ու զարմացա։ Մի՛ նայիր ինձ, խնդրեմ, այդ կեղծ-խայթող հեգնությամբ, որը սազ չի գալիս քո լրջմիտ գծերին։ Այո, հասկանում եմ, դու ուզում ես ինձ հիշեցնել Աննուշկայի մասին։ Ի՞նչ կա որ։ Ես չեմ հրաժարվում։ Մեզ պես մարդկանց Աննուշկաներն են սազում։ Ուրեմն կեցցեն Աննուշկաներն ու Զոյաները և նույնիսկ Ավգուստինա Խրիստոֆորովնաները։ Դու այժմ գնա Ելենայի մոտ, իսկ ես գնում եմ... դու կարծում ես Աննուշկայի մո՞տ։ Ոչ, սիրելիս, ավելի վատ տեղ՝ իշխան Զիկուրասովի մոտ։ Կա մի այդպիսի մեկենաս Կազանի թաթարներից, Վոլգինի տեսակի։ Տեսնո՞ւմ ես դու այս հրավեր-նամակը, այս տառերը R.S.V.P[1]։ Գյուղումն էլ ինձ համար հանգստություն չկա։ Addio![2]։

Բերսենևը լսեց Շուբինի այդ երկար ճառը լուռ և կարծես մի քիչ ամաչելով նրա փոխարեն, ապա նա մտավ Ստախովների ամառանոցի բակը։ Իսկ Շուբինը ճիշտ որ գնաց իշխան Զիկուրասովի մոտ և նրան ամենասիրալիր ձևով շատ կծու և հանդուգն խոսքեր ասաց։ Կազանի թաթարներից դուրս եկած մեկենասը քրքջում էր, մեկենասի հյուրերը ծիծաղում էին, բայց ոչ ոք ուրախ չէր, և երբ հրաժեշտ տվին միմյանց, ամենքը չարացած էին։ Այսպես, երկու միմյանց քիչ ծանոթ պարոններ, հանդիպելով Նևսկի պրոսպեկտի վրա, հանկարծ միմյանց վրա ատամներ են կրճտացնում, իրար աչքով ուտում, և իսկույն էլ, բաժանվելով իրարից՝ ընդունում են իրենց նախկին, անտարբեր կամ մռայլ, մեծ մասամբ հեմորոիդային արտահայտությունը։

X

Ելենան բարեկամաբար դիմավորեց Բերսենևին, բայց ոչ այդում, այլ հյուրասենյակում, և իսկույն էլ, համարյա անհամբերությամբ, վերսկսեց երեկվա խոսակցությունը։ Նա մենակ էր. Նիկոլայ Արտեմևիչը կամացուկ թաքնվել էր մի ինչ-որ տեղ, Աննա Վասիլևնան պառկած էր վերևում և գլխին թրջոց դրած։ Զոյան նստել էր նրա կողքին, զգեստի փեշը կանոնավոր հավաքած և ձեռքերը ծալած ծնկների վրա։ Ուվար Իվանովիչը ննջում էր վերնաշենքի մի սենյակում, լայն և հարմար բազմոցի վրա, որը ստացել էր «ինքնանինջ» անունը։ Բերսենևը նորից հիշեց իր հոր մասին, նա սրբությամբ հարգում էր նրա հիշատակը։ Մենք էլ մի քանի խոսք կասենք նրա մասին։

Ուքսուներկու ճորտերի տեր, որոնց նա ազատեց իր մա-

[1] Répondez s'il vous plait.—*պատասխանեցեք, խնդրեմ* (ֆրանս.)։
[2] *Մնաք բարով* (իտալ.)։

հից առաջ, իլլյումինատ[1], Գյոտտինգենի հին ուսանող, հեղինակ «Ոգու հեղաշրջություններ կամ նախերպություններ աշխարհի մեջ» ձեռագիր աշխատության,— մի աշխատություն, որի մեջ շելլինգականությունը, սվեդենբորգիականությունը և հանրապետականությունը միախառնված էին խիստ յուրօրինակ ձևով,— Բերսենևի հայրը բերեց նրան Մոսկվա դեռ մանուկ ժամանակ, անմիջապես իր մոր մահվանից հետո, և ինքն անձամբ զբաղվեց որդու դաստիարակությամբ։ Հայրը պատրաստվում էր յուրաքանչյուր դասի համար, աշխատում էր արտասովոր բարեխղճությամբ և միանգամայն ապարդյուն։ Նա երաղող էր, գրքի մարդ, միստիկ, խոսում էր կմկմալով, խուլ ձայնով արտահայտվում էր մութ, անպաճույճ ոճով, ավելի շուտ համեմատություններով, քաշվում էր նույնիսկ որդուց, որին սաստիկ սիրում էր։ Զարմանալի չէ, ուրեմն, որ որդին աչքերը միայն բաց ու խուփ էր անում նրա դասերի ժամանակ և մազաչափ անգամ առաջադիմություն չէր ցույց տալիս։ Վերջինին (նա մոտ հիսուն տարեկան էր, ամուսնացել էր շատ ուշ) հասկացավ վերջապես, որ բանը լավ չի գնում և տվեց իր Անդրյուշային գիշերօթիկ դպրոց։ Անդրյուշան սկսեց սովորել, բայց ծնողական հսկողության տակ էր, հայրն այցելում էր նրան անդադար, ձանձրացնում էր դպրոցի տիրոջը իր խրատներով և զրույցներով. վերակացուները նույնպես նեղանում էին անկոչ հյուրից. նա բերում էր նրանց համար ինչ-որ, նրանց ասելով, խիստ խրթին գրքեր կրթության մասին։ Մինչև իսկ դպրոցական աշակերտներն էլ քաշվում էին, տեսնելով ծերունու մռայլ և ծաղկատար դեմքը, նրա վտիտ կազմվածքը, նա միշտ հագնում էր ինչ-որ սուր փեշերով մոխրագույն ֆրակ։ Աշակերտները այն ժամանակ չգիտեին, որ միշտ նոթերը կիտած, երբեք չժպտացող, կոռնկի քայլվածքով և երկարաքիթ այդ պարոնը սրտանց ցավում էր ամեն մեկի համար, համարյա այնպես, ինչպես մտածում էր իր սեփական որդու մասին։ Նա մի անգամ ուզեց խոսել երեխաների հետ Վաշինգտոնի մասին։ «Պատանի սաներ», սկսեց նա, բայց նրա օտարոտի ձայնի առաջին իսկ հնչյուններից բոլոր պատանի սաները փախան։

[1] Այս անունով հայտնի էր մի գաղտնի ընկերություն։

Ազնիվ գյոտտինգենացին[1] վարդերի վրա չէր ապրում, նա շարունակ ճնշված էր պատմության ընթացքով, զանազան տեսակի հարցերով և խորհրդածություններով։ Երբ երիտասարդ Բերսենևը մտավ համալսարան, հայրը նրա հետ գնում էր դասախոսությունների, բայց առողջությունը սկսել էր դավաճանել նրան։ 48 թվականի դեպքերը ցնցեցին նրան հիմնավորապես (պետք էր փոփոխել ամբողջ գիրքը), և նա մեռավ 53 թվականի ձմեռը, չսպասելով իր որդու համալսարանից դուրս գալուն, բայց վաղօրոք շնորհավորելով նրա թեկնածու դառնալը և օրհնելով նրան ծառայելու գիտությանը։ «Տալիս եմ քեզ ջահը,— ասում էր նա մահից երկու ժամ առաջ,— ես կրում էի այն, քանի կարողանում էի, դու էլ ձեռքից բաց չթողնես ջահը մինչև վերջ»։

Բերսենևը երկար խոսում էր Ելենայի հետ իր հոր մասին։ Այն անհարմարությունը, որ նա զգում էր օրիորդի ներկայությամբ, չքացավ, և խոսելիս նա այժմ այնքան սաստիկ չէր սվսվացնում։ Խոսակցությունն անցավ համալսարանին։

— Ասացեք,— հարցրեց նրան Ելենան,— ձեր ընկերների մեջ կա՞յին նշանավոր մարդիկ։

Բերսենևը մտաբերեց Շուբինի խոսքերը։

— Ոչ, Ելենա Նիկոլաևնա, ճիշտն ասած, մեր մեջ ոչ մի նշանավոր մարդ էլ չկար։ Եվ որտեղից լիներ։ Եղել է, ասում են, մի ժամանակ Մոսկվայի համալսարանում։ Բայց ոչ այժմ։ Այժմ դա մի դպրոց է, այլ ոչ թե համալսարան։ Ինձ համար ծանր էր իմ ընկերների հետ,— ավելացրեց նա, ցածրացնելով ձայնը։

— Ծանր էր...— շշնջաց Ելենան։

— Ասենք,— շարունակեց Բերսենևը,— ես պետք է մի վերապահություն անեմ։ Ես ճանաչում եմ մի ուսանողի, ճիշտ է, իմ կուրսից չէ. նա իսկապես որ երևելի մարդ է։

— Ինչպե՞ս է նրա անունը,— աշխույժ հարցրեց Ելենան։

— Ինսարով, Դմիտրի Նիկանորովիչ։ Նա բուլղար է։

— Ռուս չէ՞։

— Ոչ, ռուս չէ։

[1] Գյոտտինգենի համալսարանն ավարտած։

— Հապա ինչո՞ւ է նա Մոսկվայում ապրում։

— Եկել է այստեղ ուսում առնելու։ Եվ գիտե՞ք ինչ նպատակով է ուսում ստանում։ Նա մի մեծ միտք ունի. իր հայրենիքի ազատությունը։ Եվ նրա ճակատագիրն էլ արտասովոր է։ Նրա հայրը բավական հարուստ վաճառական էր, Տիրնովից, Տիրնովը այժմ փոքրիկ քաղաք է, իսկ հին ժամանակները դա Բուլղարիայի մայրաքաղաքն էր, երբ Բուլղարիան անկախ թագավորություն էր։ Հայրը առևտրով էր պարապում Սոֆիայում, հարաբերություններ ուներ Ռուսաստանի հետ. նրա քույրը, Ինսարովի հարազատ հորաքույրը, մինչև այժմ էլ ապրում է Կիևում, ամուսնացած է տեղական գիմնազիայի պատմության ավագ ուսուցչի հետ։ 1885 թվին, ուրեմն տասնութ տարի սրանից առաջ, տեղի ունեցավ մի սարսափելի եղեռնագործություն. Ինսարովի մայրը հանկարծ անհետ կորավ. մի շաբաթից հետո նրան գտան մորթված։

Ելենան ցնցվեց։ Բերսենևը կանգ առավ։

— Շարունակեցեք, շարունակեցեք,— ասաց օրիորդը։

— Լուրեր էին պտտում, որ Ինսարովի մորը առևանգել և ապանել էր թուրք աղան։ Նրա ամուսինը, Ինսարովի հայրը, իմացավ ճշմարտությունը, ուզեց վրեժ լուծել, բայց գաշույնով միայն վիրավորեց աղային։ Նրան գնդակահարեցին։

— Գնդակահարեցի՞ն։ Առանց դատարանի՞։

— Այո։ Ինսարովն այն ժամանակ ութ տարեկան էր։ Նա մնաց հարևանների ձեռքին։ Քույրը իմացավ իր եղբոր ընտանիքի վիճակը և կամեցավ եղբոր որդուն վերցնել իր մոտ։ Ինսարովին հասցրին Օդեսա, իսկ այնտեղից էլ Կիև։ Կիևում նա ապրեց ամբողջ տասներկու տարի։ Դրանից է, որ նա այնպես լավ է խոսում ռուսերեն։

— Նա խոսո՞ւմ է ռուսերեն։

— Ինչպես մենք ձեզ հետ։ Երբ լրացավ նրա քսան տարին (դա 48 թվականի սկզբին էր), նա ուզեց վերադառնալ հայրենիք։ Եղավ Սոֆիայում և Տիրնովում, շրջեց ամբողջ Բուլղարիան ծայրից ծայր, երկու տարի մնաց այնտեղ, նորից սովորեց իր մայրենի լեզուն։ Թուրքական կառավարությունը հալածում էր նրան և նա, երևի, այդ երկու տարին մեծ

վտանգների էր ենթարկված. ես մի անգամ տեսա նրա վզի վրա մի լայն սպի, պետք է որ վերքի հետք լինի. բայց նա այդ մասին խոսել չի սիրում։ Նա էլ յուրովի լուսակյաց է։ Ես փորձեցի նրան հարց ու փորձ անել ամեն ինչի մասին, բայց հեշտ բան չէր դա։ Պատասխանում է ընդհանուր ֆրազներով։ Նա սարսափելի համառ մարդ է։ 50 թվականին նա նորից եկավ Ռուսաստան, Մոսկվա, նպատակ ունենալով լիակատար կրթություն ստանալ, մոտենալ ռուսներին, իսկ հետո, երբ դուրս կգա համալսարանից...

— Ի՞նչ կանի այն ժամանակ,— ընդհատեց Ելենան։

— Ինչ որ ասված կտա։ Հեշտ չէ առաջուց գուշակել։

Ելենան երկար ժամանակ աչքերը չէր հեռացնում Բերսենևից։

— Դուք ինձ շատ հետաքրքրեցիք ձեր պատմությամբ,— ասաց նա։— Ինչպիսի՞ տեսք ունի ձեր այդ, ինչպես անվանեցիք... Ինսարովը։

— Ինչպես ասեմ, իմ կարծիքով, տգեղ չէ։ Բայց ահա շուտով դուք ինքներդ նրան կտեսնեք։

— Ինչպե՞ս։

— Ես նրան կբերեմ այստեղ, ձեզ մոտ։ Վաղը չէ, մյուս օրը նա կտեղափոխվի մեր գյուղը և կապրի ինձ հետ նույն բնակարանում։

— Մի՞թե։ Բայց կուզենա՞ մեզ մոտ գալ։

— Ինչպես չէ։ Նա շատ ուրախ կլինի։

— Նա հպարտ չէ՞։

— Նա՞։ Ամենևին։ Այսինքն, եթե ճիշտն ասենք՝ նա հպարտ է, միայն թե ոչ այն մտքով, ինչպես դուք եք հասկանում։ Օրինակ, նա փող պարտք չի վերցնի ոչ մեկից։

— Իսկ նա աղքա՞տ է։

— Այո՛, հարուստ չէ։ Գնալով Բուլղարիա, նա հավաքել է մի քանի փշրանքներ, որոնք մնացել էին հայրական կարողությունից, և հորաքույրն էլ նրան օգնում է. բայց այս բոլորը չնչին բաներ են։

— Նա, երևի, ուժեղ բնավորություն ունի,— նկատեց Ելենան։

— Այո։ Դա երկաթյա մարդ է։ Եվ միևնույն ժամանակ, դուք կտեսնեք, նրա մեջ կա ինչ-որ մանկական, անկեղծ

բան, չնայած իր կենտրոնացած լինելուն և նույնիսկ ծածկամտությանը։ Ճշմարիտ է, նրա անկեղծությունը մեր անպետք անկեղծությունը չէ, այն մարդկանց անկեղծությունը, որոնք ծածկելու ոչ մի բան չունեն... Ա՜յ, ես կբերեմ նրան ձեզ մոտ, սպասեցեք։

— Եվ ամոթխած է՞լ չէ նա,— նորից հարցրեց Ելենան։

— Ոչ, ամոթխած չէ։ Միայն ինքնասեր մարդիկ են ամոթխած լինում։

— Բայց մի՞թե դուք ինքնասեր եք։

Բերսենևը շփոթվեց և ձեռքերը տարածեց։

— Դուք զրկում եք իմ հետաքրքրությունը,— շարունակեց Ելենան։— Ասացեք խնդրեմ, նա վրեժ չի՞ լուծել այդ թուրք աղայից։

Բերսենևը ժպտաց։

— Վրեժ են լուծում միայն վեպերում, Ելենա Նիկոլաևնա, բացի դրանից, տասներկու տարվա մեջ այդ աղան կարող էր մեռնել։

— Այնուամենայնիվ, պարոն Ինսարովը ձեզ այդ մասին ոչինչ չի՞ ասել։

— Ոչինչ։

— Ինչո՞ւ էր նա գնացել Սոֆիա։

— Այնտեղ էր ապրում նրա հայրը։

Ելենան մտածմունքի մեջ ընկավ։

— Աղատել իր հայրենի՞քը,— շարունակեց Ելենան։— Այդ խոսքերն արտասանել անգամ սարսափելի է, այնքան նրանք վեհ են...

Այդ վայրկյանին սենյակը մտավ Աննա Վասիլևնան, և խոսակցությունը ընդհատվեց։

Օտարոտի զգացումները հուզում էին Բերսենևին, երբ նա տուն էր վերադառնում նույն երեկո։ Նա չէր զգում, որ դիտավորություն ուներ ծանոթացնել Ելենային Ինսարովի հետ. նա շատ բնական էր գտնում այն խոր տպավորությունը, որ գործեց օրիորդի վրա իր պատմությունը երիտասարդ բուլղարի մասին... մի՞թե ինքը չէր աշխատում ուժեղացնել այդ տպավորությունը։ Բայց մի գաղտնի և մութ զգացմունք գաղտագողի բուն էր դնում նրա սրտի մեջ. նրան տխրեցնում էր մի վատ թախիծ։ Սակայն այդ

թախիծը արգելք չեղավ նրան՝ վերցնել «Հոհենշտաուֆենների պատմությունը» և սկսել կարդալ նույն էջից, որի վրա կանգ էր առել նա նախընթաց օրը։

XI

Երկու օր հետո Ինսարովը, ինչպես խոստացել էր, եկավ Բերսենևի մոտ իր իրերով։ Ծառա նա չուներ. առանց որևէ օգնության նա կարգի բերեց իր սենյակը, շարեց կահկարասին, սրբեց փոշին և լվաց հատակը։ Մանավանդ շատ քաշքշեց իր գրասեղանը, որ ոչ մի կերպ չէր ուզում տեղավորվել նշանակված անկյունում. բայց Ինսարովը, իրեն հատուկ լուռ հաստատակամությամբ իր ուզածն արեց։ Կարգի բերելով ամեն ինչ, նա խնդրեց Բերսենևին վերցնել իրենից տասը ռուբլի այս գլխից և, զինվելով մի հաստ մահակով, գնաց տեսնելու իր նոր բնակարանի շրջակայքը։ Նա վերադարձավ մոտ երեք ժամ հետո. Բերսենևը հրավիրեց նրան ընկերանալ իր ճաշին և նա ասաց, որ չի հրաժարվի ճաշել նրա հետ այսօր, բայց արդեն խոսել է տանտիկնոջ հետ և այսուհետև նրանից պիտի ստանա իր կերակուրը։

— Ի՞նչ եք ասում,— պատասխանեց Բերսենևը,— ձեզ շատ վատ կկերակրեն. այդ կինը բոլորովին չգիտե պատրաստել։ Ինչո՞ւ չեք ուզում ճաշել ինձ հետ. մենք ծախսը կկիսեինք։

— Իմ միջոցները չեն ներում ճաշել այնպես, ինչպես դուք եք ճաշում,— պատասխանեց Ինսարովը հանգիստ ժպիտով։

Այդ ժպիտի մեջ կար մի բան, որ չէր թույլ տալիս ստիպել, Բերսենևը մի խոսք էլ չավելացրեց։ Ճաշից հետո նա առաջարկեց Ինսարովին՝ տանել նրան Ստախովների մոտ. բայց նա պատասխանեց, որ ուզում է նվիրել ամբողջ երեկոն իր բուլղարներին նամակներ գրելուն, ուստի խնդրում է հետաձգել Ստախովներին այցելելը մինչև մյուս օրը։ Ինսարովի անհողդողդ կամքը առաջուց հայտնի էր Բերսենևին. բայց միայն այժմ, գտնվելով նրա հետ մի հարկի տակ, նա կարողացավ վերջնականապես համոզվել, որ Ինսարովը երբեք չէր հետաձգում տված խոստման կատարու-

մը։ Բերսենևին, ինչպես մի բնիկ ռուս մարդուն, այս ավելի քան գերմանական ճշտապահությունը սկզբում թվում էր վայրենի, նույնիսկ մի քիչ ծիծաղելի. բայց նա շուտով ընտելացավ այդ ճշտապահությանը, և վերջապես համարում էր այն եթե ոչ հարգելի, գոնե շատ հարմար բան։

Իր տեղափոխության երկրորդ օրը Ինսարովը վեր կացավ առավոտյան ժամը չորսին, համարյա ամբողջ Կունցեվոն ծայրե-ծայր ման եկավ, լողացավ գետում, խմեց մեկ բաժակ կաթ և գործի կպավ. իսկ գործ նա քիչ չուներ. նա սովորում էր և ռուսաց պատմություն, և իրավագիտություն, և քաղաքական տնտեսություն, թարգմանում էր բուլղարական երգերը և տարեգրությունները, հավաքում էր նյութեր արևելյան հարցի մասին, հորինում էր ռուսաց քերականություն բուլղարների համար, բուլղարական քերականություն ռուսների համար։ Բերսենևը մտավ նրա մոտ և խոսք բացեց Ֆոյերբախի մասին։ Ինսարովը լսում էր նրան ուշադրությամբ, պատասխանում էր սակավ, բայց խելացի կերպով. նրա պատասխաններից երևում էր, որ նա աշխատում է ինքն իրեն հաշիվ տալ, թե արժե՞ արդյոք զբաղվել Ֆոյերբախով, թե կարելի է առանց նրան էլ յոլա գնալ։ Բերսենևը հետո խոսեց նրա պարապմունքների մասին և հարցրեց. արդյոք նա ցույց չի՞ տա մի որևէ բան։ Ինսարովը կարդաց երկու թե երեք բուլղարական երգերի իր կատարած թարգմանությունը և կամեցավ իմանալ նրա կարծիքը։ Բերսենևը գտավ թարգմանությունը ճիշտ, բայց ոչ բավականաչափ կենդանի։ Ինսարովն ի գիտություն ընդունեց այդ դիտողությունը։ Երգերից Բերսենևն անցավ Բուլղարիայի այժմյան դրությանը և այդտեղ նա առաջին անգամ միայն նկատեց, թե ինչ փոփոխություն կատարեց նրա մեջ հայրենիքի լոկ հիշատակումը. ո՛չ թե նրա դեմքը բռնկվեց կամ ձայնը բարձր հնչեց, ո՛չ. այլ նրա ամբողջ էությունը կարծես պրկվեց և առաջ նետվեց, շրթունքների գծագրությունը նշմարվեց ավելի խիստ ու անողոք, իսկ աչքերի խորքում վառվում էր ինչ-որ խուլ ու անշեջ կրակ։ Ինսարովը չէր սիրում երկար խոսել հայրենիքում կատարած իր ճանապարհորդության մասին, բայց Բուլղարիայի մասին առհասարակ հաճույքով էր խոսում ամեն մեկի հետ։ Նա խոսում

էր առանց շտապելու, թուրքերի, նրանց լուծի, իր հայրենակիցների վշտի, դժբախտությունների և հույսերի մասին. նրա յուրաքանչյուր խոսքի մեջ լսվում էր վաղեմի ու միակ կրքի կենտրոնացած մտածվածությունը։

«Ո՞վ գիտե,— մտածում էր Բերսենևը—թուրք աղան, երեվի, հենց սրա ձեռքով էլ կյանքից զրկվել է հոր և մոր սպանության համար»։

Ինսարովը դեռ չէր լռել, երբ դուռը բացվեց և շեմքում երևաց Շուբինը։

Նա սենյակ մտավ արձակ-համարձակ, բարեհոգ տեսքով. Բերսենևը, որ նրան լավ էր ճանաչում, իսկույն հասկացավ, որ նրան ինչ-որ բան ճնշում է։

— Ներկայանում եմ առանց այլևայլությունների,— սկսեց նա դեմքի պարզ ու բաց արտահայտությամբ.— իմ ազգանունը Շուբին է. ես այս երիտասարդի բարեկամն եմ (նա ցույց տվեց Բերսենևին)։ Դուք պարոն Ինսարովն եք, այնպես չէ՞։

— Ես Ինսարովն եմ։

— Ուրեմն տվեք ձեր ձեռքը և ծանոթանանք։ Չգիտեմ, արդյոք Բերսենևը խոսե՞լ է իմ մասին, բայց ինձ նա շատ բան է ասել ձեր մասին։ Դուք այստեղ բնակություն հաստատեցի՞ք։ Շատ լավ։ Մի՛ բարկանաք ինձ վրա, որ ես այսքան ուշադրությամբ եմ ձեզ նայում։ Արհեստով ես քանդակագործ եմ և նախատեսում եմ, որ շուտով կխնդրեմ թույլ տաք, որ ձեր գլուխը քանդակեմ։

— Իմ գլուխը պատրաստ է ձեզ ծառայելու,— ասաց Ինսարովը։

— Այսօր ի՞նչ ենք անում մենք, հը՞,— խոսեց Շուբինը, հանկարծ նստելով ցածրիկ աթոռի վրա և երկու ձեռքով հենվելով միմյանցից հեռացրած ծնկներին։— Անդրեյ Պետրովիչ, ձերդ ազնվությունը որևէ ծրագիր ունի՞ այսօրվա համար։ Եղանակը հիանալի է. չոր խոտերի և չոր մորենու հոտը այնպես է փչում... կարծես կուրծք փափկացնող թեյ ես խմում։ Պետք է մի որևէ հնար գտնել։ Ցույց տանք Կունցեվոյի նոր բնակչին այստեղի բազմաթիվ գեղեցկությունները (բայց նա կարծես փշերի վրա լինի նստած, շարունակում էր ինքն իրեն մտածել Բերսենևը)։ Հը, ի՞նչ ես լռել,

իմ բարեկամ Հորացիո։ Բաց աբա քո պատգամախոս շըրթունքները։ Մի հնաբ կգտնե՞նք մենք թե ոչ։

— Ես չգիտեմ,— նկատեց Բերսենևը,— ինչպես ուզում է Ինսարովը։ Նա, կարծեմ, ուզում է աշխատել։

Շուբինը շուռ եկավ աթոռի վրա։

— Դուք ուզում եք աշխատե՞լ,— հարցրեց նա քթի մեջ։

— Ոչ,— պատասխանեց նա,— այսօրվա օրը կարող եմ նվիրել զբոսանքի։

— Դեհ,— արտասանեց Շուբինը։— Շատ գեղեցիկ։ Գնացեք, իմ բարեկամ Անդրեյ Պետրովիչ, ծածկեք ձեր իմաստուն գլուխը գլխարկով և գնանք, ուր աչքերս կտրի։ Մեր աչքերը չահել են, հեռուն են տեսնում։ Ես գիտեմ մի անպետք պանդոկ, ուր մեզ կատաղի ճաշ, բայց մենք շատ ուրախ կլինենք։ Գնանք։

Կես ժամ անց նրանք երեքով գնում էին Մոսկվա գետի եզերքով։ Ինսարովը մի բավական տարօրինակ, ականջավոր գլխարկ ուներ, որը Շուբինին ոչ բոլորովին բնական հրճվանք պատճառեց։ Ինսարովը քայլում էր շտապելով, նայում էր, շնչում էր, խոսում և ժպտում հանգիստ. նա այդ օրը նվիրել էր զվարճության և կատարելապես լիանում էր։ «Խելացի երեխաները այսպես են զբոսնում կիրակի օրերը»,— փսփսաց Շուբինը Բերսենևի ականջին։ Ինքը՝ Շուբինը շատ գժություններ էր անում. առաջ էր վազում, հայտնի արձանների դիրքն էր ընդունում, թավալվում էր խոտի վրա. Ինսարովի հանգստությունը ոչ թե գրգռում էր նրան, այլ ստիպում էր կոտրատվել։ «Ի՞նչ ես այդպես շարաճճիություն անում, ով ֆրանսիացի»,— մի երկու անգամ նկատեց նրան Բերսենևը։ «Այո՛, ես ֆրանսիացի եմ. կես ֆրանսիացի,— առարկեց Շուբինը,— իսկ դու հանաքի և լրջության մեջտեղը բռնիր, ինչպես ինձ ասում էր պանդոկի մի ծառայող»։ Երիտասարդները հեռացան գետից և գնացին մի նեղ ու խոր խանդակով, ոսկեգույն, բարձրահասակ հաճարի երկու պատերի միջով, որոնցից կապտավուն ստվեր էր ընկնում նրանց վրա. ճաճանչափայլ արեգակը կարծես թե սահում էր հաճարի կատարներով. արտույտները երգում էին, լորերը կանչում էին. ամենուր կանաչում էր խոտը։ տաք հողմիկը շարժում և բարձրացնում էր նրանց թերթիկները, օրորում էր ծաղիկների գլուխները։ Երկար թափառումներից, դադարներից, շատախոսություններից հետո (Շուբինը փորձեց մինչև անգամ «ինծաշարուկ» խաղալ մի անցորդ անատամ գյուղացու հետ, որը շարունակ ծիծաղում էր, ինչ էլ անում էին նրան պարոնները) երիտասարդները հասան «անպետք» պանդոկին։ Ծառան քիչ էր մնում, որ նրանցից յուրաքանչյուրին վայր գցի, և ճիշտ որ կերակրեց նրանց շատ վատ ճաշով, ինչ-որ անդրբալկանյան գինիով, որը, սակայն, չէր խանգարում նրանց զվարճանալ սրտանց, ինչպես նախագուշակել էր Շուբինը։ Նա ինքն ամենքից աղմկալի էր զվարճանում և ամենքից քիչ։ Նա խմում էր «չհասկացված», բայց մեծ Վենելինի[1] կենացը, բուլղարական Կրում, խրում թե խրոմ թագավորի կենացը, որ ապրում էր «համարյա Ադամի ժամանակները»։

— Իններորդ դարում,— ուղղեց Ինսարովը։

— Իններո՞րդ դարում,— բացականչեց Շուբինը։— Օ՜, ինչ երջանկությո՜ւն։

Բերսենևը նկատեց, որ իր բոլոր «խելառություններին», հանաքների ու արարքների մեջ Շուբինը շարունակ կարծես թե հարցաքննում էր Ինսարովին, կարծես թե շոշափում էր նրան և ներքուստ հուզվում էր, իսկ Ինսարովը առաջվա պես մնում էր հանգիստ և պարզ։

Վերջապես նրանք տուն վերադարձան, փոխեցին իրենց շորերը, և առավոտվանից բռնած ուղղությունից դուրս չգալու համար վճռեցին նույն երեկոյան գնալ Ստախովների մոտ։ Շուբինը առաջ վազեց, որպեսզի իմաց տա նրանց գալու մասին։

XII

— Հերոս Ինսարովը այս բոպեիս շնորհ կբերի այստեղ,— հանդիսավորությամբ բացականչեց նա՝ մտնելով Ստախովների հյուրասենյակը, ուր այդ բոպեին գտնվում էին Ելենան և Զոյան։

---

[1] Վենելին Ցու. Ի. (1802—1859)—բուլղարական ազգային-ազատագրական շարժման գործիչ։

— Wer[1]?— գերմաներեն հարցրեց Զոյան։ Հանկարծակիի եկած միջոցին նա միշտ մայրենի լեզվով էր խոսում։

Ելենան ուղղվեց։ Շուբինը նայեց նրան չարաճճի ժպիտը շուրթերին։ Ելենայի համար այդ վքդովեցուցիչ էր, բայց ոչինչ չասաց։

— Դուք լսեցի՞ք,— կրկնեց Շուբինը,— պարոն Ինսարովը գալիս է այստեղ։

— Լսեցի,— պատասխանեց Ելենան,— և լսեցի, թե ինչպես նրան անվանեցիք։ Զարմանում եմ ձեզ վրա, ճշմարիտ։ Պարոն Ինսարովը դեռ այստեղ ոտ չի դրել, և դուք արդեն հարկավոր եք համարում կոտրատվել։

Շուբինը հանկարծ թուլացավ։

— Դուք ճշմարիտ եք, դուք միշտ ճշմարիտ եք, Ելենա Նիկոլաևնա,— փնթփնթաց նա,— բայց ես, աստված վկա, հենց այնպես էի ասում։ Մենք ամբողջ օրը զբոսնում էինք միասին և նա, հավատացնում եմ ձեզ, շատ լավ մարդ է։

— Ես այդ մասին ձեզ չէի հարցնում,— ասաց Ելենան և վեր կացավ տեղից։

— Պարոն Ինսարովը ջահե՞լ է,— հարցրեց Զոյան։

— Նա հարյուր քառասունչորս տարեկան է,— պատասխանեց Շուբինը բարկությամբ։

Ծառան հայտնեց երկու բարեկամների գալուստը։ Նրանք ներս մտան։ Բերսենևը ներկայացրեց Ինսարովին։ Ելենան խնդրեց նրանց նստել և ինքն էլ նստեց, իսկ Զոյան գնաց վերև. պետք էր իմաց տալ Աննա Վասիլևնային։ Սկսվեց մի աննշան խոսակցություն, ինչպես որ բոլոր առաջին խոսակցությունները։ Շուբինը լռելյայն դիտում էր անկյունից, բայց դիտելու կարիք չկար։ Ելենայի մեջ նա նկատում էր զուսպ անբավականության հետքեր իր, Շուբինի դեմ, ուրիշ ոչինչ։ Շուբինը նայում էր Բերսենևին և Ինսարովին և, ինչպես քանդակագործ՝ համեմատում էր նրանց դեմքերը։ Երկուսն էլ, մտածում էր նա, գեղեցիկ չեն, բուլդարն ունի բնորոշ, ռելիեֆային դեմք, այ, այժմ նա լավ լուսավորվեց. իսկ վելիկոռուսի դեմքը ավելի նկարչական է, գծեր չկան, կերպարանք կա։ Ասենք, թե մեկի և թե մյուսի վրա սիրահարվել կարելի է։ Ելենան դեռ չի սիրում, բայց կսիրի Բերսենևին, վճռեց նա ինքն իր մեջ։ Աննա Վասիլևնան ներս մտավ հյուրասենյակ և խոսակցությունը բոլորովին ամառանոցային բնույթ ընդունեց, ճիշտ ամառանոցային, այլ ոչ գյուղական։ Դա շատ բազմակողմանի խոսակցություն էր քննվող առարկաների առատությամբ, բայց կարճառոտ, բավական հոգնեցուցիչ դադարները ընդհատում էին այն համարյա յուրաքանչյուր երեք րոպեն մեկ։ Այդպիսի դադարներից մեկի ժամանակ Աննա Վասիլևնան դարձավ դեպի Զոյան։ Շուբինը հասկացավ նրա անխոս ակնարկը և թթու դեմք ընդունեց, իսկ Զոյան նստեց դաշնամուրի առաջ, նվագեց և երգեց իր իմացած բոլոր կտորները։ Ուվար Իվանովիչը երևաց դռան հետևից, բայց շարժեց մատները և իսկույն էլ հեռացավ։ Հետո թեյ բերին, հետո բոլորով միասին պտույտ արին այգում... Դրսում մութը կոխեց, և հյուրերը հեռացան։

Ինսարովը իսկապես քիչ տպավորություն գործեց Ելենայի վրա, քան Ելենան ինքը սպասում էր կամ, ավելի ճիշտն ասած, նա այն տպավորությունը չգործեց, որ սպասում էր Ելենան։ Նրան դուր եկավ Ինսարովի շիտակությունը և անբռնազբոսիկությունը. նրա դեմքը ևս դուր եկավ. սակայն Ինսարովի ամբողջ էությունը, հանդարտ ու սովորականի պես հասարակ, չէր ներդաշնակում այն պատկերի հետ, որ կազմվել էր օրիորդի գլխում Բերսենևի պատմածներից։ Ելենան, անգիտակցաբար, սպասում էր ավելի մի ինչ-որ «ճակատագրական» բանի։ Բայց, մտածում էր նա, այսօր Ինսարովը շատ քիչ խոսեց, մեղավորը ես ինքս եմ. ես հարց ու փորձ չարի նրան, սպասենք մյուս անգամվա... բայց նրա աչքերը արտահայտիչ են, աղնիվ աչքեր են։ Նա զգում էր, որ ինքը խոնարհվել չէր ուզում Ինսարովի առաջ, այլ բարեկամաբար ձեռք տալ նրան, և նա տարակուսում էր. այսպես չէր նա պատկերացնում Ինսարովի նման մարդկանց՝ «հերոսներին»։ Այս վերջին խոսքը հիշեցրեց նրան Շուբինին, և Ելենան, որ արդեն պառկել էր անկողնում, բորբոքվեց ու բարկացավ։

— Ձեզ դուր եկա՞ն ձեր նոր ծանոթները,— հարցրեց վերադառնալու ժամանակ Բերսենևը Ինսարովին։

[1] Ո՞վ (գերմ.)։

— Նրանք ինձ շատ դուր եկան,— պատասխանեց Ինսարովը,— մանավանդ աղջիկը, երևի, հիանալի աղջիկ է։ Նա հուզվում է, բայց նրանում այդ լավ հուզմունք է։

— Հարկավոր է նրանց մոտ հաճախակի գնալ,— նկատեց Բերսենևը։

— Այո, հարկավոր է,— ասաց Ինսարովը և այլևս ոչ մի խոսք չարտասանեց մինչև տուն հասնելը։ Նա խկույն փակվեց իր սենյակում, բայց մոմը նրա մոտ վառվում էր կեսգիշերից շատ անց։

Բերսենևը դեռ չէր կարողացել մի էջ էլ կարդալ Ռաումերից, երբ դրսից շպրտած մի բուռ ավազ դիպավ նրա պատուհանի ապակիներին։ Նա ակամա ցնցվեց, բաց արեց պատուհանը ու տեսավ Շուբինին, կտավի նման գունատ։

— Ինչ անհանգիստ ես եղել։ Կատարյալ գիշերային թիթեռնիկ,— ասաց Բերսենևը։

— Սո՛ւս,— ընդհատեց նրան Շուբինը,— ես ծածուկ եկա քեզ մոտ, ինչպես Մաքսը Ազաթայի[1] մոտ։ Ես անպատճառ երկու խոսք պիտի ասեմ քեզ առանձին։

— Դե ներս մտիր սենյակ։

— Ոչ, չի հարկավոր,— առարկեց Շուբինը և արմունկներով հենվեց պատուհանին.— այսպես զվարճալի է, ավելի նման է Իսպանիային։ Նախ և առաջ շնորհավորում եմ քեզ. քո արժեքները բարձրացան։ Քո գովաբանած արտասովոր մարդը տապալվեց։ Այս մասին ես կարող եմ երաշխավոր լինել։ Իսկ որպեսզի ապացուցեմ իմ անկողմնապահությունը, լսիր. ահա պարոն Ինսարովի «ցուցակ ծառայությանը»։ Ոչ մի տաղանդ, պոեզիա չկա, աշխատելու ընդունակություններն անվերջ, մեծ հիշողություն ունի, խելքը բազմակողմանի չէ և ոչ էլ խոր, բայց առողջ ու վառվռուն. չորություն և ուժ և նույնիսկ խոսելու ձիրք, երբ խոսքը վերաբերում է իր, մեր մեջ ասած՝ շատ տաղտկալի Բուլգարիային։ Ի՞նչ է։ Դու կասես, թե ես արդարացի չեմ։ Էլի մի դիտողություն. դու երբեք նրա հետ դ ո ւ-ով չես խոսի, և ոչ ոք նրա հետ դ ո ւ-ով չի խոսել. ես, որպես արտիստ, նրան ատելի եմ, որով և հպարտանում եմ։ Չոր, ցամաք, խակ մեզ ամենքիս

[1] Մաքս և Ազաթա—Վեբերի «Նախարդական հրաձիգ» օպերայի պերսոնաժներ։

կարող է տրորել, փոշի դարձնել։ Նա կապված է իր հողի հետ, ոչ այնպես, ինչպես մեր դատարկ ամանները, որոնք քսմսվում են ժողովրդին և ասում են. դե թափվիր մեր մեջ, կենդանի ջուր։ Դրա փոխարեն նրա գործն էլ հեշտ է, դյուրըմբռնելի է։ Պետք է միայն թուրքերին վռնդել, մեծ բան է, էլի։ Բայց այդ բոլոր հատկությունները, փառք աստծո, կանանց չեն դուր գալիս։ Հմայք չկա, ուրիշ բան ենք ես ու դու։

— Ի՞նձ ինչու խառնեցիր,— փնթփնթաց Բերսենևը։— Մնացածների մեջ էլ դու անարդար ես. դու բնավ նրան ատելի չես, և իր հայրենակիցների հետ էլ նա դ ո ւ-ով է խոսում... ես այդ գիտեմ։

— Այդ ուրիշ բան է։ Հայրենակիցների համար նա հերոս է, բայց ես, խոստովանում եմ, ուրիշ կերպ եմ երևակայում հերոսներին. հերոսը խոսել չպիտի իմանա, հերոսը բառաչում է, ինչպես եզը. բայց հենց որ պողը շարժի, պատերը փուլ կգան։ Նա ինքն էլ չպիտի իմանա, թե ինչու է պողը շարժում, բայց շարժում է։ Սակայն գուցե մեր ժամանակներում պահանջվում են ուրիշ չափի հերոսներ։

— Ինչո՞ւ է Ինսարովը քեզ այդքան հետաքրքրում,— հարցրեց Բերսենևը։— Մի՞թե դու հենց նրա համար ես վազել այստեղ, որպեսզի նկարագրես նրա բնավորությունը։

— Ես եկա այստեղ,— սկսեց Շուբինը,— որովհետև տանը շատ տխուր էի զգում։

— Այ թե ինչ։ Հո չե՞ս ուզում էլի լաց լինել։

— Միծաղիր։ Ես եկա այստեղ, որովհետև պատրաստ եմ արմունկները կրծել, որովհետև հուսահատությունն ինձ կրծում է, զայրույթը, խանդոտությունը...

— Խանդոտությո՞ւնը։ Դեպի ո՞ւմ։

— Դեպի քեզ, դեպի նա, դեպի ամենքը։ Ինձ կեղեքում է այն միտքը, որ եթե ես Ելենային առաջ հասկանայի, եթե ես լավ գործին կպչեի... Բայց ինչ խոսել։ Բանը նրանով կվերջանա, որ ես միշտ կծիծաղեմ, հիմարություններ կանեմ, կկոտրատվեմ, ինչպես Ելենան է ասում, և ապա կվերցնեմ ու կխեղդվեմ։

— Խեղդվելը, ասենք, դու չես խեղդվի,— նկատեց Բերսենևը։

— Այսպիսի գիշերը, իհարկե, ոչ. բայց թող հասնենք

աշնան։ Այսպիսի գիշերը մարդիկ նույնպես մեռնում են, բայց միայն երջանկությունից։ Ա՜խ, երջանկություն։ Ցուրաքանչյուր ծառի տակեր, որ ճանապարհի վրայով երկարացած է, կարծես այժմ շշնջում է. «Գիտեմ ես թե ուր է երջանկությունը... Ուզո՞ւմ ես ասեմ»։ Ես քեզ կկանչեի մանգալու, բայց դու այժմ պրոզայի ազդեցության տակ ես։ Քնիր, և թող մաթեմատիկական ձևեր երևան քեզ քնում։ Իսկ իմ մեջ հոգիս պատառ-պատառ է դառնում։ Դուք, պարոններ, տեսնում եք, որ մարդը ծիծաղում է, ուրեմն, ձեր կարծիքով, թեթև է զգում իրեն։ Դուք կարող եք ապացուցել նրան, որ նա ինքն իրեն հակասում է, ուրեմն և չի տանջվում։ Աստված ինձ հետ։

Շուբինը արագ քայլերով հեռացավ պատուհանից։ «Անուշկա», ուզում էր կանչել Բերսենևը նրա հետևից, բայց զսպեց իրեն։ Շուբինի վրա, իսկապես որ, գույն չէր մնացել։ Մի երկու րոպեից հետո Բերսենևին թվաց, թե լսում է մեկի հեծեծանքները. նա վեր կացավ, բաց արեց պատուհանը. ամեն ինչ հանդարտ էր, միայն հեռվում, ինչ-որ տեղ, երեկի ճանապարհորդ գյուղացի, երգում էր «Մոզդոկի տափաստանը»։

XIII

Կունցեվոյի մոտ տեղափոխվելու առաջին երկու շաբաթների ընթացքում Ինսարովը չորս թե հինգ անգամից ավել չէր այցելել Ստախովներին, Բերսենևը գնում էր նրանց մոտ օրումեջ։ Ելենան միշտ ուրախ էր նրա գալուց. միշտ երկուսի մեջ սկսվում էր աշխույժ և հետաքրքրական խոսակցություն, և այնուամենայնիվ Բերսենևը վերադառնում էր տուն հաճախ տխուր դեմքով։ Շուբինը համարյա չէր երևվում. նա տենդային եռանդով պարապում էր իր արվեստով, կամ նստում էր իր փակ սենյակում և դուրս էր վազում այնտեղից բլուզով, ամբողջովին կավոտված, կամ օրերով մնում էր Մոսկվայում, որտեղ նա ուներ արվեստանոց, ուր գալիս էին նրա մոտ բնատիպարները և իտալացի կաղապարողները, նրա ընկերներն ու ուսուցիչները։ Ելենան ոչ մի անգամ չխոսեց Ինսարովի հետ այնպես, ինչպես ինքն էր ուզում. նրա բացակայությամբ Ելենան պատրաստվում էր

հարց ու փորձ անել շատ բաների մասին, բայց հենց որ Ինսարովը գալիս էր, ամաչում էր իր պատրաստություններից։ Ինսարովի լոկ հանգստությունը շփոթեցնում էր նրան. նրան այնպես էր թվում, որ ինքը իրավունք չունի հարկադրելու երիտասարդին արտահայտվելու, և նա վճռեց դեռ սպասել. այդ բոլորի հետ միասին նա զգում էր, որ երիտասարդի յուրաքանչյուր այցելությամբ որքան էլ աննշան լինեին նրանց փոխանակած խոսքերը, Ինսարովը ավելի ու ավելի էր գրավում նրան, սակայն նրանց չվիճակվեց միասին առանձնանալ, իսկ մեկի հետ մոտենալու համար հարկավոր է գոնե մի անգամ խոսել նրա հետ երես առ երես։ Ելենան շատ էր խոսում Բերսենևի հետ Ինսարովի մասին։ Բերսենևը հասկանում էր, որ Ելենայի երևակայությունը հափշտակել է Ինսարովը, և ուրախ էր, որ իր բարեկամը չէր տապալվել, ինչպես հաստատում էր Շուբինը։ Նա բուռն ոգևորությամբ, ամենայն մանրամասնությամբ պատմում էր Ելենային այն ամենը, ինչ գիտեր Ինսարովի մասին (մենք հաճախ, երբ ինքներս ուզում ենք դուր գալ մի ուրիշ մարդու, սաստիկ գովում ենք նրա հետ խոսելիս մեր բարեկամներին, համարյա երբեք չկասկածելով, որ դրանով մենք մեզ ենք գովում)։ Եվ միայն ժամանակ առ ժամանակ, երբ Ելենայի գունատ այտերը թեթև կարմրում էին, իսկ աչքերը փայլում և լայնանում, այն վատ թախիծը, որ արդեն հայտնի էր Բերսենևին, սեղմում էր նրա սիրտը։

Մի անգամ Բերսենևը եկավ Ստախովների մոտ ոչ սովորական ժամերին, առավոտյան. ժամը տասնմեկի մոտ։ Ելենան գնաց նրա մոտ դահլիճը։

— Երևակայեցեք,— սկսեց Բերսենևը բռնազբոսիկ ժպիտով,— մեր Ինսարովը կորել է։

— Ինչպե՞ս թե կորել է,— ասաց Ելենան։

— Կորել է։ Անցյալ օրը երեկոյան գնացել է մի ինչ-որ տեղ և մինչև այժմ չկա։

— Նա ձեզ չասա՞ց, թե ուր է գնում։

— Ոչ։

Ելենան նստեց աթոռի վրա։

— Նա, երևի, Մոսկվա է գնացել,— ասաց նա, աշխա-

տելով անտարբեր երևալ, միևնույն ժամանակ ինքն էլ զարմանալով, որ աշխատում է անտարբեր երևալ։

— Չեմ կարծում,— առարկեց Բերսենևը։— Նա մենակ չէր։

— Հապա ո՞ւմ հետ էր։

— Անցյալ օրը, ճաշից առաջ, նրա մոտ եկան ինչ-որ երկու մարդիկ, երևի նրա հայրենակիցները։

— Բուլղարնե՞ր։ Ինչո՞ւ եք դուք այդպես կարծում։

— Նրա համար, որ, որքան ես կարողացա լսել, նրանք խոսում էին նրա հետ մի լեզվով, որ ինձ անծանոթ էր, բայց սլավոնական... Ա՛յ, դուք, Ելենա Նիկոլաևնա, շաբաթակ գտնում եք, որ Ինսարովի մեջ խորհրդավոր բան քիչ կա. այս այցելությունից ավելի էլ ի՞նչ խորհրդավոր բան եք ուզում։ Երևակայեցեք, մտան նրա մոտ, և սկսեցին բղավել ու վիճել և այնպես վայրենի, կատաղի կերպով... Նա էլ էր բղավում։

— Նա է՞լ։

— Նա էլ։ Բղավում էր նրանց վրա։ Նրանք կարծես գանգատվում էին միմյանցից։ Եվ եթե դուք նայեիք այդ այցելուներին։ Թուխ, լայն այտոսկրավոր դեմքեր, բութ, բազեի քթերով, ամեն մեկը քառասուն տարեկանից ավելի կլինեն, հագնված էին վատ, փոշոտված, քրտնած։ Արտաքին տեսքով արհեստավորներ են—արհեստավորներ չեն, ոչ էլ պարոններ... Աստված գիտի, թե ինչ մարդիկ են։

— Եվ նա գնաց նրա՞նց հետ։

— Նրանց հետ։ Կեռակրեց նրանց ու դուրս գնաց նրանց հետ։ Տանտիկինն ինձ ասում էր—նրանք երկուսով մի ահագին ման կաշա կերան։ Այնպես էին իրար հետևից կուլ տալիս, կարծես գայլեր լինեին։

Ելենան թույլ ծիծաղեց։

— Դուք կտեսնեք,— արտասանեց նա,— այս բոլորը կվերջանա մի շատ պրոզայիկ բանով։

— Աստված տա։ Միայն թե դուք զուր գործածեցիք այդ բառը։ Ինսարովի մեջ պրոզայիկ բան չկա, թեև Շուբինը հավատացնում է...

— Շուբի՞նը,— ընդհատեց Ելենան և թաթվեց ուսերը։—

Բայց խոստովանեցեք, որ այդ երկու պարոնները, որոնք կլանում էին կաշան...

— Թեմիստոկլեան էլ Սալամինյան ճակատամարտի նախընթաց օրն ուտում էր,— ժպտալով նկատեց Բերսենևը։

— Այդ այդպես է. բայց չէ՞ որ մյուս օրն էլ ճակատամարտը տեղի ունեցավ։ Դուք այնուամենայնիվ ինձ իմաց տվեք, երբ նա կվերադառնա,— ավելացրեց Ելենան և փորձեց փոխել խոսակցությունը, սակայն խոսակցությունը չէր կապվում։ Երևաց Զոյան և սկսեց ման գալ սենյակում ոտների մատների վրա, իմաց տալով դրանով, թե Աննա Վասիլևնան դեռ քնից չի զարթնել։

Բերսենևը գնաց։

Նույն օրը երեկոյան բերին նրա երկտողը Ելենային։ «Վերադարձավ,— գրում էր նա,— արևակեզ, փոշու մեջ թաթախված մինչև հոնքերը. բայց ինչու և ուր էր գնացել՝ չգիտեմ. արդյոք չե՞ք իմանա դուք»։

«Չե՞ք իմանա դուք,— շշնջաց Ելենան։— Մի՞թե նա խոսում է ինձ հետ»։

XIV

Մյուս օրը, ժամը մոտ երկուսին, Ելենան կանգնած էր այգում մի փոքր բնի առաջ, ուր նա կրթում էր գամփռի երկու ձագեր։ (Այգեպանը գտել էր նրանց ցանկապատի տակ գցած և բերել էր օրիորդին, որի մասին նրան ասել էին լվացարարները, թե նա ամեն գազաններին և անասուններին սիրում է։ Նա չսխալվեց. Ելենան նրան 25 կոպեկ տվեց)։ Ելենան նայեց բնին, համոզվեց, որ շան ձագերը աղջ և առողջ են և նրանց տակ թարմ, շոր հարդ են փռել, շուտ եկավ և քիչ մնաց, որ ճչա. ուզիղ դեպի նա ծառուղիով գալիս էր Ինսարովը մենակ։

— Բարև ձեզ,— ասաց նա մոտենալով օրիորդին և վերցնելով գդակը։ Ելենան նկատեց, որ ճիշտ է, վերջին երեք օրերում նրա դեմքը արևակեզ է դարձել։— Ես ուզում էի գալ այստեղ Անդրեյ Պետրովիչի հետ, բայց նա ուշացավ։ Եվ ահա եկա առանց նրա։ Ձեր տանը ոչ ոք չկա.

ամենքը քնած են կամ դրոսնում են, ուստի ես եկա այստեղ։

— Դուք կարծես թե ներողություն եք խնդրում,— պատասխանեց Ելենան։— Այդ բոլորովին հարկավոր չէ։ Մենք բոլորս շատ ուրախ ենք ձեզ տեսնել... Նստենք այստեղ, նըստարանի վրա, շվաքում։

Ելենան նստեց։ Ինսարովը տեղավորվեց նրա կողքին։

— Դուք կարծեմ տանը չէիք այս վերջին օրերը,— սկսեց Ելենան։

— Այո,— պատասխանեց նա,— ես գնացել էի... Ձեզ Անդրեյ Պետրո՞վիչն ասաց։

Ինսարովը նայեց օրիորդին, ժպտաց և սկսեց խաղացնել գդակը։ Ժպտալով, նա արագ թարթում էր աչքերը և շրթունքները առաջ էր ձգում, և այս բանը նրան շատ բարեհոգի կերպարանք էր տալիս։

— Անդրեյ Պետրովիչը, երևի, ձեզ նույնպես ասաց, որ ես գնացի ինչ-որ... անճոռնի մարդկանց հետ,— ասաց նա, շարունակելով ժպտալ։

Ելենան փոքր-ինչ շփոթվեց, բայց իսկույն զգաց, որ Ինսարովին միշտ ճշմարիտը պետք է ասել։

— Այո՛,— ասաց նա վճռական ձևով։

— Իսկ դուք ի՞նչ մտածեցիք իմ մասին,— հարցրեց նա հանկարծ։

Ելենան բարձրացրեց աչքերը, նրան նայեց։

— Ես մտածում էի,— ասաց նա,— մտածում էի, որ դուք միշտ գիտեք, թե ինչ եք անում և որ դուք որևէ վատ բան անելու ընդունակ չեք։

— Շնորհակալ եմ ձեզնից դրա համար։ Գիտե՞ք, Ելենա Նիկոլաևնա,— սկսեց նա մի առանձին, կարծես վստահությամբ մոտ նստելով նրան,— մերոնցից այստեղ մի փոքրիկ ընտանիք կա. կան նրանց մեջ քիչ կրթված մարդիկ, բայց ամենքը թունդ նվիրված են ընդհանուր գործին։ Դըժբախտաբար, առանց վեճերի, կռիվների չի լինում, իսկ ինձ ամենքն էլ ճանաչում են, ինձ հավատում են. և ահա կանչեցին ինձ, որ մի այդպիսի վեճ քննեմ։ Ես էլ գնացի։

— Հեռո՞ւ այստեղից։

— Ես վաթսուն վերստից ավելի գնացի։ Տրոիցկի պոսադը։ Այնտեղ, վանքում, նույնպես կան մերոնցից։ Գոնե աշխատանքս զուր չկորավ, գործը շտկեցի։

— Եվ դժվա՞ր էր ձեզ համար։

— Դժվար էր։ Մեկը շարունակ համառում էր։ Փողը չէր տալիս։

— Ինչպե՞ս։ Վեճը փողի՞ համար էր։

— Այո. և փողն էլ մեծ փող չէր։ Իսկ դուք ի՞նչ էիք ենթադրում։

— Եվ դուք այդպիսի դատարկ բաների համար վաթսուն վերստ ճանապա՞րհ գնացիք. երեք օր կորցրի՞ք։

— Դատարկ բան չէ, Ելենա Նիկոլաևնա, երբ հայրենակիցներդ են խառնված։ Այդ դեպքում մերժելը մեղք է։ Դուք, ահա տեսնում եմ, նույնիսկ շան ձագերին չեք մերժում ձեր օգնությունը, և ես ձեզ գովում եմ դրա համար։ Իսկ եթե ես ժամանակ կորցրի, հոգ չէ, ես գործս հետո էլ կանեմ։ Մեր ժամանակը մեզ չի պատկանում։

— Իսկ ո՞ւմ է պատկանում։

— Ամենքին, ով կարոտ է մեր օգնության։ Այս ամենը ես ձեզ պատմեցի վայրիվերո, որովհետև ինձ համար թանկ է ձեր կարծիքը։ Ես երևակայում եմ, թե Անդրեյ Պետրովիչը ինչպես կլինի ձեզ զարմացրած։

— Ձեզ համար թանկ է իմ կարծիքը,— ասաց Ելենան կիսատ ձայնով։— Ինչո՞ւ։

— Որովհետև դուք լավ օրիորդ եք, արիստոկրատուհի չեք... ահա թե ինչու։

Փոքրիկ լռություն տիրեց։

— Դմիտրի Նիկանորովիչ,— ասաց Ելենան,— գիտե՞ք դուք, որ առաջին անգամն եք ինձ հետ այդքան սրտաբաց։

— Ինչպե՞ս։ Ինձ թվում է, թե ես միշտ ասել եմ ձեզ այն, ինչ մտածում եմ։

— Ոչ, սա առաջին անգամն է, և ես դրանով շատ ուրախ եմ, ես էլ ուզում եմ ձեզ հետ սրտաբաց լինել։ Կարելի՞ է։

Ինսարովը ծիծաղեց և ասաց.

— Կարելի է։

— Նախազգուշացնում եմ ձեզ, որ ես շատ հետաքրքրասեր եմ։

— Ոչի՞նչ, ասացեք։

— Անդրեյ Պետրովիչը ինձ շատ բան է պատմել ձեր կյանքի, ձեր երիտասարդության մասին։ Ինձ հայտնի է մի հանգամանք, մի սարսափելի հանգամանք... Ես գիտեմ, որ դուք հետո գնացել եք ձեր հայրենիքը... Մի՛ պատասխանեք ինձ, ի սեր աստծո, եթե իմ հարցը ձեզ անհամեստ կթվա, բայց ինձ տանջում է մի միտք... Ասացեք, դուք հանդիպեցի՞ք այն մարդուն...

Ելենայի շնչառությունը կանգ առավ։ Նա թե ամաչեց և թե սարսափեց իր համարձակությունից. Ինսարովը հառել էր նրա վրա իր կիսախուփ աչքերը և մատներով իր ծնոտն էր շոշափում։

— Ելենա Նիկոլաևնա,— սկսեց նա վերջապես, և նրա ձայնը սովորականից էլ հանդարտ էր, որը և համարյա վախեցրեց Ելենային,— ես հասկանում եմ, թե ինչ մարդու մասին հիշատակեցիք այս րոպեին։ Ո՛չ, ես նրան չհանդիպեցի, և փառք աստծու։ Ես նրան չէի որոնում. ոչ այն պատճառով որ իրավունք չէի համարում սպանել նրան, ես շատ հանգիստ կեր պով կսպանեի նրան, այլ այն պատճառով, որ մասնավոր վրեժի բան չի կարող լինել այնտեղ, ուր ժողովրդի, ընդհանուրի վրեժի գործ կա... ոչ, այս խոսքը անպետք է... երբ խնդիրը վերաբերում է ժողովրդի աղաղակներին։ Մեկը մյուսին կխանգարեր։ Ժամանակին այն մարդն էլ չի պրծնի... Նա էլ չի պրծնի,— կրկնեց նա և շարժեց գլուխը։

Ելենան նրան նայեց կողքից։

— Դուք շա՞տ եք սիրում ձեր հայրենիքը,— հարցրեց Ելենան երկյուղով։

— Այդ դեռ հայտնի չէ,— պատասխանեց նա։— Ահա, երբ մեզանից մեկնումեկը կմեռնի հայրենիքի համար, այն ժամանակ կարելի կլինի ասել՝ թե նա սիրում էր հայրենիքը։

— Այնպես որ, եթե ձեզ զրկեին Բուլղարիա վերադառնալու հնարավորությունից,— շարունակեց Ելենան,— ձեզ համար շա՞տ ծանր կլիներ Ռուսաստանում։

Ինսարովը գլուխը կախեց։

— Ինձ թվում է, որ ես չէի կարող տանել այդ բանը,— ասաց նա։

— Ասացեք,— նորից սկսեց Ելենան,— դժվա՞ր է բուլղարական լեզուն սովորելը։

— Ամենևին։ Ռուսի համար ամոթ է բուլղարերեն չիմանալը։ Ռուսը պիտի իմանա բոլոր սլավոնական բարբառները։ Կամենո՞ւմ եք, ես ձեզ համար բուլղարական գրքեր կբերեմ։ Դուք կտեսնեք, թե որքան հեշտ է։ Որպիսի երգեր ունենք մենք, սերբերենից վատ չեն։ Սպասեցեք, ես հիմա ձեզ համար կթարգմանեմ դրանցից մեկը։ Բայց դուք, գոնե, քիչ ծանո՞թ եք մեր պատմությանը։

— Ոչ, ես բոլորովին ծանոթ չեմ,— պատասխանեց Ելենան։

— Սպասեցեք, ես կբերեմ ձեզ մի գիրք։ Դուք նրանից գեթ գլխավոր փաստերը կիմանաք։ Ուրեմն լսեցեք երգը... Բայց ավելի լավ է, ես կբերեմ գրած թարգմանությունը։ Համոզված եմ, որ դուք կսիրեք մեզ, դուք բոլոր ճնշվածներին սիրում եք։ Եթե դուք իմանայիք, ինչ օրհնյալ երկիր է մեր երկիրը։ Մինչդեռ նրան կոխոտում են, նրան տանջում են,— ավելացրեց նա ձեռքի ակամա շարժումով, և նրա դեմքը մթագնեց,— մեզնից խլեցին ամեն ինչ, ամեն ինչ. մեր եկեղեցիները, մեր իրավունքները, մեր հողերը. անիծված թուրքերը մեզ քշում են նախրի պես, մեզ մորթում են...

— Դմիտրի Նիկանորովիչ,— բացականչեց Ելենան։

Ինսարովը կանգ առավ։

— Ներեցեք ինձ։ Ես չեմ կարող այդ մասին խոսել սառնասրտությամբ։ Բայց դուք այս րոպեին հարցնում էիք ինձ՝ սիրո՞ւմ եմ ես իմ հայրենիքը։ Էլ ուրիշ ի՞նչ բան կարելի է սիրել երկրի վրա։ Ի՞նչն է միակ անփոփոխը, ի՞նչն է բոլոր կասկածներից բարձրը, որին չի կարելի չհավատալ աստծուց հետո։ Եվ երբ այդ հայրենիքը կարոտ է քեզ... Նկատեցեք. Բուլղարիայի վերջին գյուղացին, վերջին մուրացկանը և ես, մենք միևնույն բանն ենք ցանկանում։ Մենք ամենքս մի նպատակ ունենք։ Հասկացեք, թե ի՞նչ վստահություն և ուժ է տալիս այդ։

Ինսարովը մի վայրկյան լռեց, և նորից խոսեց Բուլղարիայի մասին։ Ելենան լսում էր նրան մի բաց, խոր և

մխուր ուշադրությամբ։ Երբ Ինսարովը վերջացրեց, նա մի անգամ էլ հարցրեց նրան.

— Ուրեմն դուք ոչ մի կերպ չէ՞ք մնա Ռուսաստանում։

Իսկ երբ Ինսարովը գնաց, նա երկար նայում էր նրա հետևից։ Բուլղարը այդ օրը նրա համար ուրիշ մարդ դարձավ։ Երկու ժամ առաջ նա այնպես չէր դիմավորում երիտասարդին, ինչպես այժմ ճանապարհ էր դնում։

Այդ օրից Ինսարովը սկսեց ավելի ու ավելի հաճախակի գալ, իսկ Բերսենևը ավելի ու ավելի սակավ։ Երկու բարեկամների մեջ մի ինչ-որ օտարոտի բան գոյություն ուներ, որը երկուսն էլ լավ էին զգում, բայց անվանել այն չէին կարողանում, իսկ բացատրել վախենում էին։ Այսպես անցավ մի ամիս։

XV

Աննա Վասիլևնան, ինչպես հայտնի է ընթերցողին, սիրում էր տանը նստել, բայց երբեմն, բոլորովին անսպասելի կերպով նրա մեջ երևան էր գալիս մի ինչ-որ անհաղթահարելի ցանկություն, ինչ-որ անսովոր բան, մի որևէ զարմանալի partie de plaisir-ի[1] ցանկություն, և որքան դժվարին էր այս partie de plaisir-ը, և որքան շատ պատրաստություններ էր պահանջում, որքան ավելի էր հուզվում ինքը՝ Աննա Վասիլևնան, այնքան այդ բոլորը ախորժելի էր նրա համար։ Եթե այդ «քամին» ձմեռն էր փչում նրա վրա՝ նա հրամայում էր երկու-երեք օթյակներ վարձել միմյանց կողքի, հավաքում էր իր բոլոր ծանոթներին և գնում էր թատրոն կամ նույնիսկ դիմակահանդես։ Եթե ամառն էր փչում՝ գնում էր քաղաքից դուրս, մի որևէ հեռու տեղ։ Մյուս օրը նա գանգատվում էր, թե գլուխը ցավում է։ Տնքում էր, անկողնից չէր դուրս գալիս, իսկ մի երկու ամսից հետո նրա մեջ էլի սկսվում էր այդ «անսովոր բանի» ցանկությունը։ Նույնը պատահեց և այժմ։ Ինչ-որ մեկը խոսեց նրա մոտ Ցարիցինի գեղեցկությունների մասին, և Աննա Վասիլևնան հանկարծ հայտարարեց, որ նա

[1] Զվարճալի զբոսանք (ֆրանս.)։

էգուց չէ մյուս օրը մտադիր է գնալ Ցարիցին։ Տան մեջ իրարանցում սկսվեց. հատուկ սուրհանդակ գնաց Նիկոլայ Արտեմևիչի հետևից, Մոսկվա. նրա հետ գնաց և վերադարձավ՝ գինի, պաշտեղ և այլ ուտելեղեններ գնելու, հրաման արձակեց Շուբինին՝ վարձել մի՛ կառք ևս (կար մի կառք, այդ բավական չէր) և պատրաստել ձիեր՝ ճանապարհին փոխելու համար. ծառան երկու անգամ վազեց Բերսենևի և Ինսարովի մոտ և տարավ նրանց երկու հրավիրաթուղթ, որոնք գրված էին Զոյայի ձեռքով նախ՝ ռուսերեն, հետո ֆրանսերեն։ Ինքը՝ Աննա Վասիլևնան, հոգ էր տանում օրիորդների ճանապարհորդական զգեստի մասին։ Մինչդեռ partie de plaisir-ը քիչ էր մնում թե խանգարվի. Նիկոլայ Արտեմևիչը եկավ Մոսկվայից թթված և անբարյացակամ, հակառակ տրամադրությամբ (նա դեռ շարունակում էր դժգոհ լինել Ավգուստինա Խրիստիանովնայից) և, իմանալով, թե ինչումն է բանը, վճռականապես հայտարարեց, թե ինքը չի գնա, որ արշավել Կունցեվոյից Մոսկվա, և Մոսկվայից էլ Ցարիցին, իսկ Ցարիցինից դարձյալ Մոսկվա և Մոսկվայից դարձյալ Կունցեվո—անհեթեթություն է. և, վերջապես, ավելացրեց նա, թող նախ ինձ ապացուցեն, որ երկրագնդի մի կետում կարող է ավելի զվարճալի լինել, քան մի այլ կետում, այն ժամանակ ես կերթամ։ Այդ բանը նրան, իհարկե, ոչ ոք չէր կարող ապացուցել, և Աննա Վասիլևնան, լուրջ կավալեր չունենալու պատճառով, արդեն պատրաստ էր հրաժարվել partie de plaisir-ից, երբ հիշեց Ուվար Իվանովիչին և վրշտից մարդ ուղարկեց նրա հետևից՝ ասելով. «Խեղդվողը հարդից է բռնում»։ Ուվար Իվանովիչին զարթեցրին. նա ցած իջավ իր սենյակից, լուռ լսեց Աննա Վասիլևնայի առաջարկությունը, խաղացրեց մատները և, ի զարմանս բոլորի, համաձայնեց։ Աննա Վասիլևնան համբուրեց նրա թուշը և անվանեց նրան սիրելի. Նիկոլայ Արտեմևիչը ատելությամբ ժպտաց և ասաց. guelle bourde![1] (նա սիրում էր տեղը եկած ժամանակ գործածել ֆրանսիական շքեղ բառեր), իսկ մյուս առավոտը, ժամը յոթին, կառեթը և սայլակը ծայրեծայր բեռնավորված դուրս եկան Ստախովների ամա-

[1] Ինչ անհեթեթություն (ֆրանս.)։

ռանոցի բակից։ Կառեթում նստած էին կանայք, աղախինը և Բերսենևը։ Ինսարովը տեղավորվեց կառապանի կողքին, իսկ սայլակում՝ Ուվար Իվանովիչն ու Շուբինը։ Ուվար Իվանովիչն անձամբ մատի շարժումով իր մոտ կանչեց Շուբինին, թեև գիտեր, որ նա ամբողջ ճանապարհին մի գլուխ պիտի իրեն ղղայնացնի, բայց «արգավանդ ուժի» և երիտասարդ գեղարվեստագետի մեջ գոյություն ուներ մի ինչ-որ տարօրինակ կապ և ամբարիշտ սրտաբացություն։ Պետք է ասել, որ այս անգամ Շուբինն իր հաստ բարեկամին հանգիստ թողեց. նա լուռ էր, ցրված ու մեղմ։

Արեգակն արդեն բարձր կանգնած էր անամպ երկնակամարի վրա, երբ կառքերը մոտեցան Ցարիցինի ամրոցի մայր ու ահավոր, նույնիսկ կեսօրին, ավերակներին։ Ամենքը ցած իջան խոտի վրա և իսկույն դիմեցին դեպի այգին։ Առջևից գնում էին Ելենան և Զոյան Ինսարովի հետ, նրանց հետևից կատարյալ երջանկություն արտահայտող դեմքով շարժվում էր Աննա Վասիլևնան Ուվար Իվանովիչի հետ թևանցուկ։ Վերջինս փնչում էր և օրորվելով քայլում, հարդե նոր գըլխարկը կտրում էր նրա ճակատը, իսկ ոտները այրվում էին կոշիկների մեջ, բայց նա իրեն լավ էր զգում։ Շուբինը և Բերսենևը փակում էին երթը։ «Մենք, սիրելիս, կմնանք պահեստի մեջ, ինչպես որոշ վետերաններ»,— շշնջաց Շուբինը Բերսենևի ականջին։ «Այնտեղ այժմ Բուլղարիան է»,— ավելացրեց նա, հոնքերով ցույց տալով Ելենային։

Եղանակը հրաշալի էր։ Շուրջն ամեն ինչ ծաղկում էր, բզզում ու երգում. հեռվում փայլում էին լճակների ջրերը։ Տոնական պայծառ զգացողությունը հափշտակում էր մարդու հոգին։— «Ախ լավ է, ախ լավ է»— անդադար կրկնում էր Աննա Վասիլևնան։ Ուվար Իվանովիչը ի նշան նրա խնդագին բացականչությունների հավանությամբ թափ էր տալիս իր գլուխը, և մի անգամ նույնիսկ արտասանեց «Ի՞նչ ասել կուզի»։ Ելենան և Ինսարովը մեկ-մեկ խոսքեր էին փոխանակում իրար հետ։ Զոյան երկու մատիկներով պահում էր լայն գլխարկի եզրը, կոկետաբար դուրս էր հանում իր վարդագույն շրջազգեստի տակից փոքրիկ, բութ քիթերով բաց մոխրագույն կոշիկներ հագած իր ոտիկները. նա նայում էր

կամ դեպի կողք կամ դեպի ետ։ «Էհե՛,— հանկարծ կիսաձայն բացականչեց Շուբինը,— չլինի՞ թե Զոյա Նիկիտիշնան ետ-ետ է նայում։ Ավելի լավ է գնամ նրա մոտ։ Ելենա Նիկոլաևնան հիմա ինձ արհամարհում է, իսկ քեզ, Անդրեյ Պետրովիչ, հարգում է, որ միևնույնն է դուրս գալիս։ Է՛հ, գնամ, բավական է որքան թթվեցի։ Իսկ քեզ, բարեկամս, խորհուրդ եմ տալիս բուսաբանել, քո դրության մեջ դա ամենալավն է, ինչ որ դու կարող ես հնարել։ Եվ այդ գիտական տեսակետից էլ օգտակար է։ Մնաս բարով»։ Շուբինը վազեց Զոյայի մոտ, թևը կեռացրած առաջարկեց նրան՝ ասելով «Ihre Hand, Madame»[1], վեր առավ նրան և առաջ անցավ նրա հետ։ Ելենան կանգ առավ, իր մոտ կանչեց Բերսենևին և նույնպես վերցրեց նրա թևը, բայց շարունակում էր խոսել Ինսարովի հետ։ Նա հարցնում էր նրանից, ինչպե՞ս է իրենց լեզվով կոչվում շուշանը, թիկին, կաղնին, լորենին... («Բուլղարիա»,— մտածեց խեղճ Անդրեյ Պետրովիչը)։

Հանկարծ առջևից լսվեց ճիչ. ամենքը բարձրացրին գլուխները. Զոյայի ձեռքով նետված Շուբինի սիգարամանը թռչում էր դեպի թփերը։ «Սպասեցեք, ես այդ բանը այդպես չեմ թողնի»,— բացականչեց Շուբինը, մտավ թփերի մեջ, գտավ այնտեղ իր սիգարամանը և ուզում էր վերադառնալ Զոյայի մոտ, բայց դեռ չէր կարողացել մոտենալ նրան, երբ էլի սիգարամանը թռավ ճանապարհի վրայով։ Զորս-հինգ անգամ կրկնվեց այդ բանը։ Շուբինը շարունակ քրքջում էր ու սպառնում, իսկ Զոյան միայն գողտուկ ժպտում էր և կատվի նման կծկվում։ Վերջապես Շուբինը բռնեց նրա մատները և այնպես սեղմեց, որ նա ծվաց և հետո երկար ժամանակ փչում էր մատներին, առերես բարկանում էր, իսկ Շուբինը այդ ժամանակ ինչ-որ երգում էր նրա ականջին։

— Զարահճիներ... ջահելներ են,— ուրախ-ուրախ նկատեց Աննա Վասիլևնան Ուվար Իվանովիչին։

Նա խաղացրեց մատները։

— Տեսնո՞ւմ եք ինչպիսին է եղել Զոյա Նիկիտիշնան,— ասաց Բերսենևը Ելենային։

[1] Տվեք ձեր ձեռքը, տիկի՛ն։

— Իսկ Շուբի՞նը,— պատասխանեց նա։

Մինչ այս՝ ամբողջ խումբը մոտեցավ հովանոցին, որ հայտնի էր «Միլովիդովայի հովանոց» անունով և կանգ առավ, որպեսզի զմայլվի Ցարիցինի լճակների տեսարանով։ Այդ լճակները մեկ մեկի հետևից շարված էին մի քանի վերստ տարածության վրա։ Միապաղաղ անտառները սևին էին տալիս նրանց հետևից։ Կանաչ խոտը, որ ծածկում էր բլրի լանջերը մինչև գլխավոր լիճը, տալիս էր ջրին արտասովոր փայլուն, զմրուխտի գույն։ Ոչ մի տեղ, նույնիսկ ափի մոտ, ոչ մի ալիք չէր կազմվում, սպիտակին չէր տալիս փրփուրը. նույնիսկ թեթև ծփանք էլ չէր անցնում ջրերի կոկ հարթության վրայով։ Թվում էր, թե ապակյա ծանր ու փայլուն պաղած զանգվածն է լցվել այդ ահագին ավազանի մեջ, և երկինքն էլ մտել է նրա հատակը, իսկ խուճուճ ծառերն անշարժ նայում էին նրա թափանցիկ ջրերին։ Ամենքը երկար ժամանակ և լուռ զմայլվում էին այդ տեսարանով. նույնիսկ Շուբինը հանդարտվեց, նույնիսկ Զոյան մտածմունքների մեջ ընկավ։ Վերջապես ամենքը միաբերան կամեցան զբոսնել մակույկով ջրի վրա։ Շուբինը, Ինսարովը և Բերսենևը խոտերի միջով դեպի ցած վազեցին, աշխատելով միմյանց հետևից հասնել։ Նրանք գտան մի մեծ, ներկած մակույկ, վերցրին երկու թիավարներ և կանչեցին կանանց։ Կանայք իջան նրանց մոտ, Ուվար Իվանովիչը զգուշությամբ իջավ կանանց հետևից։ Մինչև նա կմտներ մակույկը, մինչև կնստեր, շատ ծիծաղ առաջ բերեց։ «Տեսեք, աղա, մեզ ջրասույզ չանեք», նկատեց թիավարներից մեկը, մի ջահել, կճատ քթով երիտասարդ, որ հագել էր ալեքսանդրիական շապիկ։ «Լավ, լավ, սպասիր»,— արտասանեց Ուվար Իվանովիչը։

Նավակը հեռացավ ափից։ Երիտասարդներն ուզում էին վերցնել թիակները, բայց նրանցից միայն Ինսարովը գիտեր թիավարել։ Շուբինը առաջարկեց խմբովին ռուսական մի որևէ երգ երգել և ինքը սկսեց «Դեպի ցած մայր գետով» երգը... Բերսենևը, Զոյան և նույնիսկ Աննա Վասիլևնան ձայնակցեցին (Ինսարովը չգիտեր երգել), բայց աններդաշնակություն առաջացավ. երրորդ տունը երգելիս երգիչները շփոթվեցին՝ և միայն Բերսենևն էր փորձում շարունակել

բասով «Ալիքներում ոչինչ չի երևում», բայց շուտով նա ևս ամոթահարվեց։ Թիավարները միմյանց աչքով էին անում և կամաց ծիծաղում էին։ «Ի՞նչ է,— դիմեց նրանց Շուբինը,— աղաները երգել չգիտեն, հա՞»։ Ալեքսանդրիական շապիկ հագած երիտասարդը միայն շարժեց գլուխը։ «Որ այդպես է, սպասիր, կճատ,— ասաց Շուբինը,— մենք քեզ ցույց կտանք։ Զոյա Նիկիտիշնա, երգեցեք մեզ համար Նիդերմեյերի «Le lac»-ը[1]։ Մի՛ թիավարեք»։ Թաց թիակները բարձրացան օդում, ինչպես թևեր և այդպես էլ սառած մնացին, հնչեղ թափելով կաթիլները. մակույկը մի քիչ լողաց ու կանգ առավ, հազիվ նկատելի պտտվելով ջրի վրա, ինչպես կարապ։ Զոյան նազ էր անում, կոտրատվում էր... «Allons»[2],— փաղաքշանքով ասաց Աննա Վասիլևնան. Զոյան դեն գցեց գլխարկը և երգեց.

O lac! L'année à peine a fini sa carrière...[3]

Նրա փոքրիկ, բայց մաքուր ձայնը ասես թռավ լճակի հայելու վրայով. հեռու անտառներում արձագանք էր տալիս յուրաքանչյուր խոսքը. թվում էր, թե այնտեղ էլ մեկը երգում էր պարզ և խորհրդավոր, բայց ոչ մարդկային, ոչ երկրային ձայնով։ Երբ Զոյան վերջացրեց, գետափնյա հովանոցներից մեկում լսվեց բարձրաձայն «բռավո», և այնտեղից դուրս թռան մի քանի կարմրամորուք գերմանացիներ, որոնք եկել էին Ցարիցինո՝ խնջույքի։ Նրանցից մի քանիսն առանց սերթուկի էին, առանց փողպատի, նույնիսկ առանց ժիլետի, և այնքան աղմկալի էին «bis» կանչում, որ Աննա Վասիլևնան հրամայեց շուտով նավակն ուղղել դեպի լճակի մյուս ծայրը։ Բայց նախքան նավակը մոտեցել էր ափին, Ուվար Իվանովիչին մի անգամ էլ հաջողվեց զարմացնել իր ծանոթներին. նկատելով, որ անտառի մի կողմում արձագանքը մի առանձին պարզությամբ էր կրկնում յուրաքանչյուր ձայնը, նա հանկարծ սկսեց լորի պես կանչել։ Սկզբում ամենքը վեր թռան, բայց իսկույն զգացին մի իսկական բա-

---

[1] Լիճ (ֆրանս.)։

[2] Դե, լավ (ֆրանս.)։

[3] Օ՜հ, լիճ։ Տարին հազիվ ավարտեց իր վազքը (ֆրանս.)։

վականություն, մանավանդ որ Ուվար Իվանովիչը ճիշտ լորի պես էր կանչում։ Այդ բանը նրան խրախուսեց, և նա փորձեց մլավել. բայց մլավոցը այնքան լավ չէր դուրս գալիս. նա մի անգամ էլ լորի պես կանչեց, նայեց ամենքին և լռեց։ Շուբինը վրա ընկավ, որ համբուրի սրան, նա դեն հրեց Շուբինին։ Այդ րոպեին նավակը մոտեցավ ափին, և ամբողջ խումբը ափ իջավ։

Մինչ այս, մինչ այն կառապանը ոպասավորի և աղախնու հետ բերին կողովները կառքից և ճաշ պատրաստեցին խոտի վրա, հինավուրց լորենիների տակ։ Ամենքը նստեցին խոտի վրա, հինավուրց լորենիների տակ։ Ամենքը նստեցին տարածած սփռոցի շուրջը և սկսեցին ուտել պաշտեստը և ուրիշ խորտիկները։ Ամենքը լավ ախորժակ ունեին, իսկ Աննա Վասիլևնան, անվերջ հյուրասիրում էր և թախանձում իր հյուրերին, որ ավելի շատ ուտեն. նա հավատացնում էր, որ բաց օդում դա շատ առողջարար է։ Այդ տեսակ խոսքերով նա դիմեց և Ուվար Իվանովիչին։ «Միամիտ կացեք»,— փնթփնթաց նա լցրած բերանով։ «Ինչ հիանալի օր է տվել աստված»,— կրկնում էր անդադար Աննա Վասիլևնան։ Նրան ճանաչել չէր կարելի. նա կարծես քսան տարով ջահելացել էր։ Բերսենևը այդ բանը հայտնեց նրան։ «Այո՛, այո՛,— պատասխանեց նա,— ես էլ, մի ժամանակ այնպես էի որ... առաջիններից էի»։ Շուբինը ընկերացավ Զոյային և անդադար գինի էր լցնում նրա համար։ Զոյան հրաժարվում էր, Շուբինը նրան հյուրասիրում էր և վերջացնում էր նրանով, որ ինքն էր խմում բաժակը և հետո էլի հյուրասիրում Զոյային։ Նա նույնպես հավատացնում էր Զոյային, թե՝ կամենում է խոնարհեցնել իր գլուխը, դնել նրա ծնկների վրա։ Զոյան ոչ մի կերպ չէր ուզում թույլ տալ նրան «այդպիսի մեծ ազատություն»։ Ելենան ամենից լուրջ էր երևում, բայց նրա սրտում մի այնպիսի հրաշալի հանդգնություն էր տիրում, որի նմանը նա վաղուց չէր զգացել։ Նա իրեն զգում էր անսահման բարի, և ցանկանում էր ունենալ իր մոտ ոչ միայն Ինսարովին, այլև Բերսենևին։... Անդրեյ Պետրովիչը աղոտ կերպով հասկանում էր, թե ինչ է դա նշանակում, և ծածուկ հառաչում էր։

Ժամերը սլանում էին. երեկոն մոտենում էր։ Աննա Վասիլևնան հանկարծ սկսեց անհանգստանալ։ «Ա՜խ, տեր իմ, որքան ուշ է այժմ,— ասաց նա։— Կերանք, խմեցինք, պարոններ, ժամանակ է վերջացնել»։ Նա դես ու դեն ընկավ, և ամենքն էլ շտապեցին, վեր կացան ու գնացին գետի ամրոցը, ուր գտնվում էին կառքերը։ Անցնելով լճակների մոտով, ամենքը կանգ առան, որ վերջին անգամ զմայլվեն Ցարիցինի տեսքով։ Ամեն տեղ վառվում էին իրիկնապահի պայծառ գույները։ Երկինքը շառագունել էր, ոսկե տերևները ծփալով փայլում էին՝ հուզված բարձրացող քամուց. հեռավոր ջրերը հալված ոսկու պես էին հոսում, ծառերի մութ կանաչներից խիստ կերպով զանազանվում էին կարմրագույն աշտարակներն ու հովանոցները, որոնք դրված էին այգու այս ու այն կողմերում։ «Մնաս բարով, Ցարիցին, չենք մոռանա մենք այսօրվա ճանապարհորդությունը»,— արտասանեց Աննա Վասիլևնան... Բայց այդ վայրկյանին, կարծես թե ի հաստատություն նրա վերջին խոսքերի, տեղի ունեցավ մի օտարոտի պատահար, որը ճիշտ որ այնքան էլ հեշտ չէր լինի մոռանալ։

Այսինքն, դեռ չէր վերջացրել Աննա Վասիլևնան իր հրաժեշտի ողջույնն ուղարկել Ցարիցինին, երբ հանկարծ, մի քանի քայլ հեռու նրանից, թանթրվենու բարձր թփի հետևում, լսվեցին անկարգ բացականչություններ, քրքջոց և աղաղակներ, և գզգզված տղամարդկանց մի ամբողջ խումբ, երգի այն իսկ սիրողների խումբը, որ այնքան աշխույժով ծափահարում էր Զոյային, դուրս թափվեց ճանապարհը։ Պարոն սիրողները խմիչքից սաստիկ տաքացած էին երևում։ Տեսնելով կանանց, նրանք կանգ առան, բայց նրանցից մեկը, վիթխարի հասակով, եզան պարանոցով և եզան բորբոքված աչքերով, բաժանվեց ընկերներից և անշնորհք կերպով գլուխ տալով ու քայլելիս օրորվելով, մոտեցավ երկյուղից քարացած Աննա Վասիլևնային։

— Բոնժուր, մադամ,— խոսեց նա խռպոտ ձայնով,— ինչպե՞ս է ձեր առողջությունը։

Աննա Վասիլևնան ետ-ետ գնաց։

— Իսկ ինչո՞ւ դուք,— շարունակեց վիթխարին վատ ռուսերենով,— չկամեցաք երգել bis, երբ մեր ընկերները կանչում էին bis, բռավո, ֆորո...

— Այո, այո, ինչո՞ւ չէիք երգում,— լսվեց նրա ընկերների շարքում։

Ինսարովը ուզեց առաջ քայլել, բայց Շուբինը կանգնեցրեց նրան և ինքը կանգնեց գերմանացու և Աննա Վասիլևնայի միջև։

— Թույլ տվեք,— սկսեց նա,— հարգելի անծանոթ, արտահայտել ձեզ այն անկեղծ զարմանքը, որ պատճառում եք դուք մեզ ամենքիս ձեր վարմունքով։ Դուք, որքան ես կարող եմ դատել, պատկանում եք կովկասյան ցեղի սաքսոնական ճյուղին, հետևաբար մենք պետք է ենթադրենք, որ դուք ծանոթ եք աշխարհիկ վայելչության կանոններին, մինչդեռ դուք խոսում եք մի տիկնոջ հետ, որին դուք չեք ներկայացված։ Հավատացեք, մի ուրիշ ժամանակ ես, մանավանդ, շատ ուրախ կլինեի մոտենալ ձեզ, որովհետև նկատում եմ մկանների մի այնպիսի գերբնական զարգացում bicers, tricers և deltoideus[1], որ, ինչպես քանդակագործ, մի իսկական երջանկություն կհամարեի այդպիսի բնօրինակ ունենալը. բայց այս անգամ մեզ հանգիստ թողեք։

«Հարգելի անծանոթը» լսեց Շուբինի ամբողջ ճառը, արհամարհանքով գլուխը մի կողմ թեքած և ձեռքերը կողքերին դրած։

— Ես ոչինչ չեմ հասկանում, թե դուք ինչ ասում,— խոսեց նա վերջապես։— Դուք գուցե կարծում, թե ես կոշկակար եմ կամ ժամագործ, է... Ես օֆիցեր եմ, ես աստիճանավոր եմ, այո։

— Ես չեմ էլ կասկածում այդ մասին,— սկսել էր Շուբինը...

— Իսկ ես ինչ եմ ասում,— շարունակեց անծանոթը, հեռացնելով նրան իր ուժեղ ձեռքով, ինչպես մի ճյուղ, ճանապարհից,— ես ասում եմ ինչու դուք չերգեցիք bis, երբ մենք գոչում էինք bis։ Իսկ այժմ ես այս ժամին, այս բոպեին կհեռանամ, միայն հարկավոր է, որ այս օրիորդը, ոչ թե այս տիկինը, չէ՛, սա հարկավոր չէ, այլ սա կամ սա (նա ցույց տվեց Ելենային և Զոյային) տա ինձ einen Kuss,— ինչպես մենք ասում ենք գերմաներեն, պաշիկ։ Այո, ի՞նչ կա, դա ոչինչ բան է։

[1] Մկանների անունները (լատին.)։

— Ոչինչ է, einen Kuss, դա ոչինչ է,— նորից լսվեց ընկերների շարքում։

— Ih! Der Sakramenter[1],— ասաց ծիծաղից խեղդվելով մի արդեն բոլորովին փցնած գերմանացի։

Զոյան բռնեց Ինսարովի ձեռքից, բայց նա դուրս պրծավ նրա ձեռքից և ուղիղ կանգնեց բարձրահասակ լրբի դիմաց։

— Հաճեցեք հեռանալ այստեղից,— ասաց նա նրան մի ցած, բայց խիստ ձայնով։

Գերմանացին ծանր կերպով քրքջաց։

— Ինչպե՞ս հեռանալ։ Այ, ես սիրում եմ այս։ Մի՞թե ես էլ չեմ կարող քեֆ անել։ Ի՞նչպես թե հեռանալ։ Ինչո՞ւ հեռանալ։

— Այն պատճառով, որ դուք հանդգնեցիք անհանգստացնել տիկնոջը,— ասաց Ինսարովը և հանկարծ սփրթնեց,— այն պատճառով, որ դուք հարբած եք։

— Ինչպե՞ս։ Ես հարբած։ Լսո՞ւմ եք։ Hören Sie das, Herr Provisor[2]։ Ես օֆիցեր եմ, իսկ նա համարձակվում է... Այժմ ես պահանջում եմ Satisfaction. Einen Kuss will ich![3]։

— Թե դուք էլի մի քայլ անեք,— սկսեց Ինսարովը...

— Հա՛։ Հետո ի՞նչ։

— Ես ձեզ ջուրը կգցեմ։

— Ջո՞ւրը։ Herr Je![4]։ Միայն այդ։ Լավ, տեսնենք, այդ շատ հետաքրքիր է, ինչպես թե ջուրը կգցեք։

Պարոն օֆիցերը բարձրացրեց ձեռքերը և դեպի առաջ թեքվեց, բայց հանկարծ մի անսովոր բան տեղի ունեցավ. նա տնքաց, նրա ահագին իրանը երերաց, բարձրացավ գետնից, ոտները շարժվեցին օդի մեջ, և նախքան կանայք կարող էին ճչալ, նախքան կհասկանային, թե այդ ինչպես պատահեց, պարոն օֆիցերը իր ամբողջ մարմնով, մի ծանր ճողփյունով թրմփաց լճակի մեջ և իսկույն էլ անհետացավ ալեկոծված ջրի տակ։

— Ա՜յ,— միաբերան ճչացին կանայք։

[1] Ա՜խ, անիծյա՛լ (գերմ.)։

[2] Դուք լսո՞ւմ եք այդ, պարոն պրովիզոր (գերմ.)։

[3] Բավարարություն։ Ես ուզում եմ մի պաշ (գերմ.)։

[4] Տեր Հիսուս (գերմ.)։

— Mein Gott[1],— լսվեց մյուս կողմից։

Անցավ մի րոպե... և կլոր գլուխը, որին ամեն կողմից կպել էին թաց մազերը, երևաց ջրի վրա, այդ գլուխը պղպջակներ էր արձակում, երկու ձեռքեր ջղաձգաբար շարժվում էին նրա շրթունքների մոտ...

— Նա կխեղդվի, ազատեցեք նրան, ազատեցեք,— կանչեց Աննա Վասիլևնան Ինսարովին, որ կանգնած էր ափին, ոտները միմյանցից հեռու դրած և խոր շնչում էր։

— Դուրս կգա,— խոսեց նա արհամարհական և անողորմ անփութությամբ։— Գնանք,— ավելացրեց նա բռնելով Աննա Վասիլևնայի ձեռքը...— գնանք, Ուվար Իվանովիչ։ Ելենա Նիկոլաևնա։

— Ա՛...ա՛...ա՛...— լսվեց այդ վայրկյանին դժբախտ գերմանացու հեծեծանքը. նա արդեն կարողացել էր բռնել ափում բուսած եղեգնից։

Ամենքը գնացին Ինսարովի հետևից և ամենքն անցան քեֆ անող խմբի մոտից։ Բայց, ղրկվելով իրենց գլխավորից, նրանք հանդարտվել էին, մի խոսք անգամ չասացին. միայն մեկը, նրանցից ամենաքաջը, փնթփնթաց՝ թափահարելով գլուխը. «Բայց այդ... այդ աստված գիտե, թե... դրանից հետո»։ Իսկ մյուսը մինչև իսկ հանեց գլխարկը։ Ինսարովը նրանց շատ ահարկու էր երևում. և դա առանց պատճառի չէր. ինչ-որ չար, ինչ-որ վտանգավոր բան էր երևան եկել նրա դեմքի վրա։ Գերմանացիները շտապեցին դուրս հանել ջրից իրենց ընկերոջը, և նա, հենց որ կանգնեց պինդ հողի վրա, սկսեց արտասվալից հայհոյել և բղավել այդ «ռուս սրիկաներին» հետևից, թե ինքը պիտի գանգատվի, թե կգնա նույնիսկ նորին գերազանցություն կոմս ֆոն-Կիզերիցի մոտ։

Բայց «ռուս սրիկաները» ուշադրություն չէին դարձնում նրա աղաղակների վրա և որքան կարելի է շտապով գնում էին դեպի ամրոցը։ Ամենքը լուռ էին, քանի որ այդու միջով էին գնում, միայն Աննա Վասիլևնան մի քիչ տնքում էր։ Բայց նրանք մոտեցան կառքերին, կանգ առան, և մի անդուսպ, անընդհատ ծիծաղ բարձրացավ նրանց մեջ, ինչպես Հոմերոսի երկնաբնակների մեջ։ Առաջինը խեղճարի պես տուր կերպով ծիծաղել սկսեց Շուբինը, նրա հետևից Բերսենևը,

[1] Աստված իմ (գերմ.)։

հետո Զոյան կչկչաց։ Աննա Վասիլևնան էլ հանկարծ ծիծաղից թուլացավ, նույնիսկ Ելենան էլ չկարողացավ չժպտալ, ի վերջո Ինսարովն էլ չդիմացավ։ Բայց ամենից բարձր, ամենից երկար և ամենից թունդ քրքջում էր Ուվար Իվանովիչը. նա քրքջում էր այնքան, որ կողերը ծակում էին, որ փոշտում էր, մինչև խեղդվելու աստիճանին էր հասնում։ Փոքր-ինչ հանգարտվում էր, բայց էլի սկսում էր արտասուքների միջից. «Ես էլ... ասում եմ... այս ինչ թրքխկաց... իսկ դա... նա էր... շրմփաց»։ Եվ այս վերջին, ջղաձգաբար դուրս մղված խոսքի հետ քրքջոցի մի նոր պայթյուն ցնցում էր նրա ամբողջ մարմինը։ Զոյան ավելի ևս գրգռում էր նրան։ «Ես,— ասում էր նա,— տեսնում եմ, ոտները օդի մեջ»... «Այո, այո,— նրա խոսքը խլեց Ուվար Իվանովիչը,— ոտները, ոտները... մեկ էլ թրմփ... մեկնվեց»։ «Եվ ինչպե՞ս պարոնը արավ այդ բանը, չէ՞ որ գերմանացին նրանից երեք անգամ մեծ էր»,— հարցրեց Զոյան։ «Ես ձեզ կզեկուցեմ,— պատասխանեց աչքերը սրբելով Ուվար Իվանովիչը,— ես տեսա, մի ձեռքով բռնեց նրա գոտկատեղից, ոտը դեմ տվեց և այնպես թրմփացրեց։ Ես էլ լսում եմ. ի՞նչ բան է սա... իսկ այդ նա էր... շրմփաց»։

Կառքերը վաղուց արդեն գնում էին։ Ցարիցինի ամրոցը ծածկվել էր հեռվում, իսկ Ուվար Իվանովիչը չէր կարողանում հանգստանալ։ Շուբինը, որ էլի նրա հետ էր նստած կառքի մեջ, վերջապես հանգստացրեց նրան։

Իսկ Ինսարովը ամաչում էր։ Նա նստած էր կառքի մեջ Ելենայի դիմաց (կառապանի մոտ նստել էր Բերսենևը) և լուռ էր. Ելենան էլ լուռ էր։ Ինսարովը կարծում էր, թե Ելենան նրան դատապարտում է. բայց Ելենան չէր դատապարտում նրան։ Առաջին րոպեին նա շատ վախեցավ. հետո նրան ապշեցրեց Ինսարովի դեմքի արտահայտությունը. իսկ դրանից հետո նա շարունակ խորհրդածություններ էր անում։ Բոլորովին պարզ չէր նրա համար, թե ինչի մասին էին իր խորհրդածությունները։ Օրվա ընթացքում նրա մեջ կազմված զգացումը անհետացել էր, այդ նա հասկանում էր, բայց այդ զգացումը փոխվել էր մի ուրիշ զգացումի, որը նա առայժմ չէր հասկանում։ Partie de plaisir-ը չափազանց

երկար շարունակվեց. երեկոն աննկատելի կերպով գիշեր դարձավ։ Կառքը արագ գնում էր կամ հասունացող արտերի միջով, ուր օդը հեղձուկ էր և հոտավետ, հացի հոտն էր բուրում, կամ թե լայն մարգագետինների երկարությամբ. սրանց թարմությունը թեթև ալիքների պես խփում էր դեմքին։ Երկնքի ծայրերը կարծես ծխում էին։ Վերջապես դուրս եկավ աղոտ և կարմիր լուսինը։ Աննա Վասիլևնան ննջում էր. Զոյան գլուխը հանեց պատուհանից և նայում էր ճանապարհին։ Սերգեևան վերջապես հիշեց, որ մի ժամից ավելի է, ինչ չի խոսել Ինսարովի հետ։ Նա մի աննշան հարց տվեց նրան. Ինսարովը իսկույն ուրախությամբ պատասխանեց նրան։ Օդի մեջ սկսեցին տարածվել ինչ-որ անորոշ հնչյուններ, կարծես հեռվում խոսում էին հազարավոր ձայներ. Մոսկվան էր, որ գալիս էր նրանց ընդառաջ։ Առջևում պսպղացին փոքրիկ կրակներ. դրանց թիվը գնալով ավելանում էր. վերջապես, անիվների տակ աղմկեցին քարերը։ Աննա Վասիլևնան զարթնեց. ամենքը խոսեցին կառքի մեջ, թեև ոչ ոք այլևս չէր կարող լսել, թե խոսքը ինչի մասին է, այնքան սաստիկ էր որոտում փողոցի սալահատակը երկու կառքերի և ձիերի երեսուներկու ոտների տակ։ Երկար և տաղտկալի թվաց ճանապարհորդությունը Մոսկվայից Կունցևո, ամենքը քնած էին կամ լուռ, սեղմելով իրենց գլուխները զանազան անկյունների. միայն Սերգեևան չէր փակում աչքերը. նա չէր հեռացնում իր հայացքը Ինսարովի մութ պատկերից։ Շուրինի վրա թախիծ էր իջել. թեթև քամին փչում էր նրա աչքերին և գրգռում նրան. նա փաթաթվեց վերարկուի օձիքի մեջ և քիչ էր մնում, որ լաց լինի։ Ուվար Իվանովիչը շենքով-շնորհքով խոմփացնում էր, աջ ու ձախ օրորվելով։ Կառքերը կանգ առան վերջապես։ Երկու լաքեյներ հանեցին Աննա Վասիլևնային կառքից, տիկինը բոլորովին քայքայվել էր և հրաժեշտի ողջույն տալով իր ուղեկիցներին, հայտարարեց, թե ինքը ողջ չէ, մեռած է, ուղեկիցները սկսեցին շնորհակալություն հայտնել նրան, իսկ նա միայն կրկնեց. «Ողջ չեմ, մեռած եմ»։ Սերգեևան առաջին անգամ սեղմեց Ինսարովի ձեռքը և երկար ժամանակ նստած էր պատուհանի տակ, շորերը չէր հանում, իսկ Շու-

բինը ժամանակ գտավ շշնջալու գնացող Բերսենևի ականջում.

— Ինչպե՞ս ասես, թե հերոս չէ, հարբած գերմանացիներին ջուրն է գցում...

— Իսկ դու այդ էլ չարիր,— պատասխանեց Բերսենևը և գնաց տուն Ինսարովի հետ։

Արշալույսն արդեն բացվում էր, երբ երկու բարեկամները վերադարձան իրենց բնակարանը։ Արեգակը դեռ չէր երևում, բայց արդեն առավոտյան ցուրտը եկավ անցավ, ալեոր ցողը ծածկեց խոտերը, և առաջին արտուտիկները հնչեցնում էին իրենց ձայնը բարձր-բարձր մի տեղ, օդային կիսամութ մի անդունդի մեջ, որտեղից, միայնակ աչքի պես, նայում էր խոշոր, վերջին աստղը։

XVI

Ինսարովի հետ ծանոթանալուց շատ չանցած՝ Սերգեևան սկսեց (հինգերորդ թե վեցերորդ անգամ) իր հուշատետրը։ Ահա կտորներ այդ հուշատետրից.

Հունիսի... Անդրեյ Պետրովիչը ինձ համար գրքեր է բերում, բայց ես դրանք կարդալ չեմ կարողանում։ Խոստովանել նրան՝ ամաչում եմ. վերադարձնել գրքերը, սուտ ասել, թե կարդացել եմ՝ չեմ ուզում։ Ինձ թվում է, թե այս բանը նրան կվշտացնի։ Նա իմ բոլոր արածները նկատում է։ Նա, թվում է, ինձ հետ շատ է մտերմացել։ Շատ լավ մարդ է Անդրեյ Պետրովիչը։

...Ի՞նչ եմ ես ուզում։ Ինչի՞ց է, որ սիրտս այսքան ծանր ճնշում է զգում։ Ինչո՞ւ ես նախանձով եմ նայում թռչող թռավորներին։ Թվում է, թե ես էլ կթռչեի նրանց հետ, կթռչեի, ուր՝ չգիտեմ, միայն թե հեռու-հեռու այստեղից։ Եվ մի՞թե մեղք բան չէ այս ցանկությունը։ Ես այստեղ ունեմ մայր, հայր, ընտանիք։ Մի՞թե ես նրանց չեմ սիրում։ Ոչ, ես չեմ սիրում նրանց այնպես, ինչպես կուզեի սիրել։ Ես սարսափում եմ ասել այդ, բայց դա ճշմարտություն է։ Գուցե շատ մեծ է հանցանքս. գուցե հենց դրանից է, որ ես այսքան վշտահար եմ, որ ես հանգիստ չունեմ։ Մի ինչ-որ ձեռք ընկած է ինձ վրա ու ճնշում է ինձ։ Կասես թե բան-

տում եմ ես և ահա ուր որ է իսկույն ինձ վրա կփլվեն պատերը։ Հապա ինչու ուրիշներն այս նույնը չեն զգում։ Ուրիշում պիտի սիրեմ ես, եթե ես սառն եմ դեպի մերոնք։ Երևի, հայրիկս իրավացի է. նա հանդիմանում է ինձ, թե ես միայն շներին և կատուներին եմ սիրում։ Պետք է այս մասին մտածել։ Ես քիչ եմ աղոթում. պետք է աղոթել... Իսկ թվում է, թե ես կարող էի սիրել։

...Ես էլի քաշվում եմ պարոն Ինսարովից, երբ լինում եմ նրա հետ։ Չգիտեմ ինչից է. ես, կարծեմ, շատ էլ չահել չեմ, իսկ նա այնքան հասարակ է և բարի։ Երբեմն նրա դեմքը շատ լուրջ է լինում։ Երևի նրա բանն ու գործը մենք չենք։ Ես այդ զգում եմ, և կարծես թե ամոթ եմ համարում ինձ՝ խլել նրա ժամանակը։ Անդրեյ Պետրովիչը ուրիշ բան է։ Ես պատրաստ եմ շատախոսել նրա հետ թեկուզ ամբողջ օրը։ Բայց նա էլ ինձ հետ շարունակ Ինսարովի մասին է խոսում։ Եվ ի՞նչ սարսափելի մանրամասնություններ։ Ես այս գիշեր երազումս տեսա նրան՝ դաշույնը ձեռքին։ Եվ թբրև թե նա ասում էր ինձ. «Ես քեզ էլ կսպանեմ, ինձ էլ կսպանեմ»։ Ի՞նչ հիմարություններ։

...Օ՜հ, եթե մեկն ինձ ասեր ահա թե ինչ պիտի անես դու։ Լինել բարի՝ այդ քիչ է, անել բարություն... այո՛, սա գլխավորն է կյանքի մեջ։ Բայց ինչպե՞ս բարություն անել։ Օհ, եթե ես կարողանայի ինձ տիրապետել։ Չեմ հասկանում, թե ինչու եմ ես այսքան հաճախ մտածում պարոն Ինսարովի մասին։ Երբ նա գալիս է ու նստում և լռում ուշադրությամբ, իսկ ինքը ջանք չի անում, չի աշխատում, ես նայում եմ նրա վրա և ինձ դուր է գալիս, հաճելի է, բայց այդքանը միայն, իսկ երբ նա գնում է, ես շարունակ հիշում եմ նրա խոսքերը, բարկանում եմ ինձ վրա և նույնիսկ հուզվում եմ... Ինքս էլ չգիտեմ, թե ինչու։ (Նա վատ է խոսում ֆրանսերեն, և չի ամաչում, այդ ինձ դուր է գալիս)։ Ասենք ես միշտ շատ եմ մտածում նոր անձնավորությունների մասին։ Նրա հետ խոսելիս ես հանկարծ հիշեցի մեր բուֆետապան Վասիլին, որը այրվող խրճիթից դուրս հանեց ոտից զուրկ մի ծերունու, իսկ ինքը քիչ մնաց թե զոհ գնա։ Հայրիկս նրան կտրիճ անվանեց, մայրիկս հինգ ռուբլի տվեց նրան, իսկ ես ուզում էի մինչև նրա ոտները գլուխ խոնարհել. ու նրա դեմքը շատ հասարակ էր, նույնիսկ հիմար դեմք, և նա հետո հարբեցող դարձավ։

...Ես այսօր գրոշներ տվի մի մուրացիկ կնոջ, իսկ նա ինձ ասաց. «Ինչո՞ւ դու այդքան տխուր ես»։ Ես իսկի չէի էլ կարծում, թե ես տխրալի տեսք ունեմ։ Ես կարծում եմ այդ նրանից է, որ ես մենակ եմ։ Ամբողջ ժամանակ մենակ, իմ բոլոր բարությամբ, իմ բոլոր չարությամբ։ Չկա մեկը, որին ձեռքս մեկնեմ։ Ով մոտենում է ինձ, նա ինձ հարկավոր չէ, իսկ ում ես եմ ուզում... նա անցնում է մոտիցս։

...Ես չգիտեմ ի՞նչ է պատահել ինձ այսօր. գլուխս պատած է երկյուղով, ես պատրաստ եմ ծունկ չոքել և խնդրել, աղաչել, որ ինձ խնայեն։ Չգիտեմ ով և ինչպես, բայց ինձ կարծես սպանում են, և ես ներքուստ աղաղակում եմ, դժգոհում եմ, լալիս եմ ու չեմ կարող լռել... Աստված իմ, աստված իմ, զսպիր իմ մեջ այս բուռն ձգտումները։ Դո՜ւ միայն կարող ես այդ, մնացածն անզոր է. ոչ իմ շնչին ողորմությունները, ոչ իմ զբաղմունքները, ոչինչ, ոչինչ, ոչինչ չեն կարող ինձ օգնել։ Կգնայի մի որևէ տեղ, աղախին կմտնեի, ճշմարիտ. գոնե թեթևություն կզգայի։

Ինչի՞ս է պետք ջահելությունը, ինչո՞ւ եմ ապրում, ինչո՞ւ ես հոգի ունեմ, այս բոլորը ինչի՞ համար են։

...Ինսարովը, պարոն Ինսարովը,— ես, ճշմարիտ, չգիտեմ՝ ինչպես գրեմ,— շարունակում է զբաղեցնել ինձ։ Ես ուզում եմ իմանալ, թե ի՞նչ կա նրա հոգու մեջ։ Նա, թվում է ինձ, այնքան բաց է, այնքան մատչելի, իսկ ինձ ոչինչ չի երևում։ Երբեմն նա նայում է ինձ մի տեսակ փորձող հայացքով... թե դա լոկ իմ երևակայության արդյունքն է։ Պոլը ինձ շարունակ վրդովեցնում է, զայրացնում, ես բարկացած եմ Պոլի վրա։ Ի՞նչ է նա ուզում ինձնից։ Նա սիրահարված է ինձ վրա... բայց ինձ հարկավոր չէ նրա սերը։ Նա Զոյայի վրա էլ է սիրահարված։ Ես չեմ կարողանում լինել արդար կիսով չափ... այդ ճիշտ է։ Այդ շատ վատ է։

Ա՜խ, ես զգում եմ, որ մարդուն հարկավոր է դժբախտություն, կամ աղքատություն, կամ հիվանդություն, թե չէ հպարտությունից կմոռանաս չափ ու սահման։

...Ինչո՞ւ Անդրեյ Պետրովիչը պատմեց ինձ այսօր այդ երկու բուլղարների մասին։ Նա կարծես դիտմամբ պատմեց ինձ։ Ի՞նչ գործ ունեմ ես պարոն Ինսարովի հետ։ Ես բարկացած եմ Անդրեյ Պետրովիչի վրա։

...Գրիչ եմ վերցնում և չգիտեմ ինչպես սկսեմ։ Որքան անսպասելի նա այսօր խոսեց ինձ հետ այգում։ Որքան նա սիրալիր էր ու դյուրավստահ։ Ինչպե՞ս այդ շուտ կատարվեց։ Կարծես մենք հին բարեկամներ ենք և միայն այժմ ճանաչեցինք իրար։ Ինչպե՞ս ես մինչև այժմ չէի կարողացել հասկանալ նրան։ Որքան նա այժմ մոտ է ինձ։ Եվ ահա թե ինչն է զարմանալի. ես այժմ անհամեմատ հանգիստ դարձա։ Միծաղելի է ինձ համար. երեկ ես բարկանում էի Անդրեյ Պետրովիչի վրա. նրա վրա. ես նույնիսկ անվանեցի նրան պարոն Ինսարով, իսկ այսօր... Ահա, վերջապես, ճշմարտախոս մարդը, ահա թե ում կարելի է վստահել։ Սա սուտ չի խոսում. սա առաջին մարդն է, որին ես հանդիպում եմ, որը սուտ չի խոսում. բոլոր մյուսները սուտ են խոսում, ամենքը ստում են։ Անդրեյ Պետրովիչ, սիրելի, բարի, ինչո՞ւ համար եմ ես ձեզ վշտացնում։ Ո՛չ։ Անդրեյ Պետրովիչը, կարող է պատահել, ավելի է գիտուն նրանից, գուցե նույնիսկ ավելի է խելոք... Բայց ես չգիտեմ, նա նրա առաջ այնքան փոքրիկ է։ Երբ նա խոսում է իր հայրենիքի մասին, նա աճում է, մեծանում, և նրա դեմքը սիրունանում է, և նրա ձայնը պողպատի պես է, և չկա, թվում է թե, աշխարհում մի այնպիսի մարդ, որի առաջ նա խոնարհեր իր աչքերը։ Եվ նա ոչ միայն խոսում է, նա գործել է և կգործի։ Ես նրան հարց ու փորձ կանեմ... Ինչպես նա հանկարծ շուռ եկավ դեպի ինձ ու ժպտաց... Միայն եղբայրներն են այդպես ժպտում։ Ա՜հ, որքան գոհ եմ։ Երբ նա առաջին անգամ եկավ մեզ մոտ, ես բոլորովին չէի կարող կարծել, թե մենք այդպես շուտ կմոտենանք իրար։ Իսկ այժմ ինձ մինչև անգամ դուր է գալիս, որ ես առաջին անգամ անտարբեր մնացի... Անտարբեր։ Մի՞թե ես այժմ անտարբեր չեմ։

...Վաղուց է չեմ զգացել այսպիսի ներքին անդորրություն։ Այնպես խաղաղ է հոգիս, այնպես հանգիստ։ Գրելու

ոչինչ չկա։ Ես նրան հաճախ եմ տեսնում, այդ էլ բավական է։ Էլ ի՞նչ գրեմ։

...Պոլը փակվել է, Անդրեյ Պետրովիչը սկսել է ուշուշ գալ... Խեղճ տղան, ինձ թվում է, որ նա... Ասենք, այդ չի կարող լինել։ Ես սիրում եմ խոսել Անդրեյ Պետրովիչի հետ. երբեք ոչ մի խոսք չի ասում իր մասին, միշտ խոսում է մի որևէ խելոք, օգտակար բանի մասին։ Շուբինի պես չէ նա։ Շուբինը պճնազարդ է ինչպես թիթեռնիկ և զմայլվում է իր պչրանքով. թիթեռնիկները այդպիսի բան չեն անում։ Սակայն Շուբինն էլ, Անդրեյ Պետրովիչն էլ... ես գիտեմ՝ թե ինչ եմ ուզում ասել։

...Նրա համար հաճելի է մեզ մոտ գալը, ես այդ տեսնում եմ։ Բայց ինչո՞ւ։ Ի՞նչ է գտել նա իմ մեջ։ Ճիշտ է, մեր ճաշակները նման են իրար. թե նա, թե ես, երկուսս էլ ոտանավորներ չենք սիրում. երկուսս էլ հասկացողություն չունենք գեղարվեստի մեջ։ Բայց որքան նա լավ է ինձանից։ Նա հանգիստ է, իսկ ես միշտ տագնապի մեջ. նա ունի իր ճանապարհը, ունի նպատակ, իսկ ե՞ս, ո՞ւր եմ ես գնում։ Ո՞ւր է իմ բունը։ Նա հանդարտ է, բայց նրա բոլոր մտքերը հեռու են։ Կգա ժամանակ և նա էլ ընդմիշտ կթողնե մեզ, կգնա իր վայրը, այնտեղ, ծովի մյուս կողմը։ Ինչ արած։ Աստված տա նրան։ Իսկ ես, այնուամենայնիվ, ուրախ կլինեմ, որ ճանաչեցի նրան, երբ նա այստեղ էր։

Ինչո՞ւ նա ռուս չէ։ Ոչ, նա չէր կարող ռուս լինել։

Մայրիկս էլ է սիրում նրան. ասում է համեստ մարդ է։ Բարի մայրիկ։ Նա չի հասկանում նրան։ Պոլը լռում է. նա պիտի ընկավ, որ ինձ համար նրա ակնարկներն անախորժ են. բայց նա խանդում է նրան։ Զար տղա։ Եվ ի՞նչ իրավունքով։ Մի՞թե ես երբևիցե...

Այս բոլորը դատարկ բաներ են։ Ինչո՞ւ է այս բոլորը միտս գալիս։

...Այնուամենայնիվ, տարօրինակ բան է, որ ես մինչև այժմ, մինչև քսան տարեկան լինելս, ոչ ոքի չեմ սիրել։ Ինձ թվում է, թե Դ-ի (նրան կանվանեմ Դ., ինձ դուր է գալիս նրա անունը՝ Դմիտրի) հոգին այն պատճառով է այնքան պայծառ, որ նա ամբողջովին նվիրվել է իր գործին, իր իդեային։ Ինչի՞ համար պիտի նա հուզվի։ Ով նվիր-

վել է ամբողջովին... ամբողջովին... ամբողջովին... Նրա համար էլ ի՞նչ... Նա այլևս ոչ մի բանի համար պատասխանատու չէ։ Ուզողը ես չեմ. այն է ուզում։ Ի դեպ, նա էլ, ես էլ միատեսակ ծաղիկներ ենք սիրում։ Ես այսօր պոկեցի մի վարդ։ Մի թերթիկն ընկավ, նա այն վեր առավ... Ես նրան տվի ամբողջ վարդը։

Ես մի քանի ժամանակից ի վեր տարօրինակ երազներ եմ տեսնում, ի՞նչ կնշանակե այդ։

...Դ-ն հաճախ է գալիս մեզ մոտ։ Երեկ նա նստեց ամբողջ երեկոն։ Նա ուզում է սովորեցնել ինձ բուլղարերեն։ Նրա հետ ես ինձ լավ եմ զգում, ինչպես տանը։ Էլ ավելի լավ, քան տանը։

...Օրերը թռչում են... Ես և լավ եմ զգում ինձ, և չգիտեմ, թե ինչու վախվխում եմ. ուզում եմ աստծուն շնորհակալություն հայտնել, բայց արտասուքներս էլ հեռու չեն։ Օհ, դուք, ջերմագին, պայծառ օրեր։

...Առաջվա պես ես ինձ թեթև եմ զգում։ Միայն երբեմն- երբեմն թախիծ է գալիս վրաս։ Ես երջանիկ եմ... Արդյո՞ք երջանիկ եմ ես։

...Երկար չեմ մոռանա ես երեկվա ճանապարհորդությունը։ Ինչ օտարոտի, նոր, սարսափելի տպավորություններ։ Երբ նա հանկարծ վերցրեց այդ վիթխարի մարդուն և խաղաղնդակի պես շպրտեց ջուրը, ես չվախեցա... Բայց նա ինձ վախեցրեց։ Եվ հետո՝ ինչպիսի՜ շարագուշակ, համարյա անգութ դեմք ուներ։ Ինչպես նա ասաց՝ «դուրս կլողա»։ Դա ինձ տակնուվրա արեց։ Կնշանակե, ես նրան չէի հասկանում։ Եվ հետո, երբ ամենքը ծիծաղում էին, երբ ես ծիծաղում էի, որքան ցավում էի նրա համար։ Նա ամաչում էր, ես այդ զգում էի, նա ինձանից էր ամաչում։ Այդ բանը նա ինձ ասաց հետո, կառեթում, մթության մեջ, երբ ես աշխատում էի լավ դիտել նրան և վախենում էի նրանից։ Այո, հանաք անել նրա հետ չի կարելի, նա պաշտպան հանդիսանալ էլ գիտե։ Բայց ինչո՞ւ է այդ շարակամությունը, այդ դողդոջուն շրթունքները, աչքերի միջի այդ թույնը։ Թե՞ գուցե ուրիշ կերպ չի կարելի։ Չի՞ կարելի լինել տղամարդ, մարտիկ, և մնալ հեզ ու փափկասիրտ։ Կյանքը կոպիտ բան է, ասաց նա ինձ մոտ ժամանակներս։ Ես այդ խոսքը կրկնեցի Անդրեյ

Պետրովիչի մոտ. նա չհամաձայնեց Դ-ի հետ։ Ո՞վ է նրանցից իրավացի։ Իսկ ինչպե՞ս սկսվեց այդ օրը։ Որքան լավ էր ինձ համար գնալ նրա հետ միասին, նույնիսկ լուռ... Բայց ես ուրախ եմ այդ պատահմունքին։ Երևի, այդպես էր հարկավոր։

...Դարձյալ անհանգստություն... Ես այնքան էլ առողջ չեմ։

...Այս քանի օրերը ես ոչինչ չգրեցի այս տետրակում, որովհետև գրել չէի ուզում։ Ես զգում էի, որ ինչ էլ գրելու լինեմ, բոլորովին այն չի լինի, ինչ հոգուս մեջ է... Իսկ հոգուս մեջ ի՞նչ կա։ Ես մի մեծ խոսակցություն ունեցա նրա հետ, որը ինձ համար շատ բան պարզեց։ Նա պատմեց ինձ իր ծրագրերը (ի դեպ, ես այժմ գիտեմ, թե նա ինչու սպի ունի վզի վրա... Աստված իմ, երբ ես մտածում եմ, որ նա արդեն մահվան էր դատապարտված, որ նա հազիվ ազատվեց, որ նրան վիրավորեցին...)։ Նա նախազգում է, որ պատերազմ կլինի և ուրախ է դրա համար։ Եվ այնուամենայնիվ, ես երբեք չեմ տեսել Դ-ին այդքան տխուր... Ինչի՞ մասին նա... նա... կարո՞ղ է տխրել։ Հայրիկը վերադարձավ քաղաքից, երկուսիս տեսավ միասին և մի տեսակ օտարոտի կերպով նայեց մեզ։ Եկավ Անդրեյ Պետրովիչը. ես նկատեցի, որ նա շատ նիհարել է ու գունատվել։ Նա ինձ հանդիմանեց, որ իբր ես չափազանց արդեն սառն ու անփույթ եմ վարվում Շուբինի հետ։ Իսկ ես բոլորովին մոռացել եմ Պոլի մասին։ Կտեսնեմ նրան, կաշխատեմ մեղքս քավել։ Այժմ իմ մտածմունքը նա չէ... և ոչ ոք էլ չէ այս աշխարհում։ Անդրեյ Պետրովիչը խոսում էր ինձ հետ մի տեսակ ափսոսանքով։ Ի՞նչ է նշանակում այդ բոլորը։ Ինչո՞ւ այսքան մութն է իմ շուրջը և իմ ներսում։ Ինձ թվում է, թե շուրջս և իմ ներսում ինչ-որ խորհրդավոր բան է տեղի ունենում, որ պետք է մի խոսք գտնել...

...Ես չքնեցի գիշերը, գլուխս ցավում է։ Ինչո՞ւ գրել։ Նա այսօր այնքան շուտ գնաց, իսկ ես ուզում էի խոսել հետը... Նա կարծես խուսափում է ինձանից։ Այո՛, նա խուսափում է ինձանից։

...Խոսքը գտնված է, լույսը պայծառացրեց միտքս։ Տեր աստված, խղճա ինձ... Ես սիրահարված եմ...

XVII

Հենց նույն օրը, երբ Ելենան գրում էր այս վերջին, ճակատագրական խոսքն իր հուշատետրում, Ինսարովը նստել էր Բերսենևի սենյակում, իսկ Բերսենևը կանգնել էր նրա առջև զարմանքի արտահայտությունը դեմքին։ Ինսարովը հենց նոր էր հայտնել նրան իր դիտավորությունը՝ մյուս օրը տեղափոխվել Մոսկվա։

— Ի՞նչ եք ասում,— բացականչեց Բերսենևը,— այժմ սկսվում է ամենասիրուն ժամանակը։ Ի՞նչ պիտի անեք Մոսկվայում։ Այդ ի՞նչ հանկարծակի վճիռ է։ Թե՞ դուք որևէ լուր եք ստացել։

— Ես ոչ մի լուր չեմ ստացել,— առարկեց Ինսարովը,— բայց իմ նկատառումներով, ես չեմ կարող մնալ այստեղ։

— Ախր, ինչպե՞ս կարելի է այդ...

— Անդրեյ Պետրովիչ,— ասաց վերջապես Ինսարովը,— բարի եղեք, մի ստիպեք, խնդրում եմ։ Ինձ համար էլ ծանր է ձեզանից հեռանալը, բայց ինչ արած, ուրիշ կերպ չի կարելի։

Բերսենևը ուշի ուշով նայեց նրան։

— Ես գիտեմ,— խոսեց նա վերջապես,— ձեզ համոզել չի կարելի։ Ուրեմն այդ վճռված բան է։

— Կատարելապես վճռված,— պատասխանեց Ինսարովը, վեր կացավ և հեռացավ։

Բերսենևը անցուդարձ արեց սենյակում, վերցրեց գլխարկը և գնաց Ստախովների մոտ։

— Դուք ինձ որևէ բա՞ն ունեք հաղորդելու,— ասաց նրան Ելենան, երբ նրանք մենակ մնացին։

— Այո, ինչի՞ց գլխի ընկաք։

— Այդ միևնույն է։ Ասացեք, ի՞նչ կա։

Բերսենևը հայտնեց նրան Ինսարովի որոշումը։

Ելենան զունատվեց։

— Այդ ի՞նչ է նշանակում,— արտասանեց նա դժվարությամբ։

— Դուք գիտեք,— ասաց Բերսենևը,— որ Դմիտրի Նիկանորովիչը չի սիրում հաշիվ տալ իր վարմունքների մասին։ Բայց ես կարծում եմ... Նստենք, Ելենա Նիկոլաևնա, դուք

կարծես թե բոլորովին առողջ չեք... Ես, կարծեմ, կարող եմ գլխի ընկնել, թե, իսկապես, ինչն է այդ հանկարծակի հեռանալու պատճառը։

— Ի՞նչ, ի՞նչ պատճառ,— կրկնեց Ելենան, պինդ սեղմելով, ինքն էլ այդ չնկատելով, Բերսենևի ձեռքը իր սառած ձեռքի մեջ։

— Գիտեք,— սկսեց Բերսենևը թախծալի ժպիտով,— ինչպե՞ս այդ ձեզ բացատրեմ։ Ես պետք է վերադառնամ այս տարվա գարնանը, այն ժամանակին, երբ ես մոտիկ ծանոթացա Ինսարովի հետ։ Ես այն ժամանակ պատահեցի նրա հետ իր մի ազգականի տանը. այդ ազգականն ուներ մի շատ սիրունատես աղջիկ։ Ինձ թվաց, թե Ինսարովն անտարբեր չէ դեպի այդ աղջիկը, և ես այդ ասացի Ինսարովին։ Նա ծիծաղեց և պատասխանեց ինձ, որ ես սխալվում եմ, թե իր սիրտը չի խոցվել, բայց որ իսկույն կգնար այստեղից, կհեռանար, եթե այդպիսի մի բան պատահեր իր հետ, որովհետև նա չի ուզում,— սրանք նրա սեփական խոսքերն էին,— իր անձնական զգացմունքին բավարարություն տալու համար դավաճանել իր գործին և իր պարտականությանը։ «Ես բուլղար եմ,— ասաց նա,— և ինձ ռուսական սերը չի հարկավոր»...

— Է... հետո ինչ... դուք այժմ.. — շշնջաց Ելենան՝ ակամա գլուխը շուռ տալով, ինչպես մի մարդ, որը սպասում է հարվածի, բայց էլի բաց չթողնելով Բերսենևի պինդ բռնած ձեռքը։

— Ես կարծում եմ,— խոսեց Բերսենևը՝ ինքն էլ ցածրացնելով իր ձայնը,— ես կարծում եմ, որ այժմ կատարվեց այն, ինչ ես իզուր ենթադրում էի այն ժամանակ։

— Այսինքն... Դուք կարծում եք... ինձ մի տանջեք,— հանկարծ դուրս թռան այս խոսքերը Ելենայի բերանից։

— Ես կարծում եմ,— շտապով վրա բերեց Բերսենևը,— որ Ինսարովը այժմ սիրեց մի ռուս աղջկա և, համաձայն իր խոստման, վճռել է փախչել։

Ելենան է՛լ ավելի պինդ սեղմեց նրա ձեռքը և է՛լ ցած խոնարհեց գլուխը, կարծես կամենալով թաքցնել օտարի հայացքից ամոթի կարմրությունը, որ հանկարծակի բռնավառեց նրա ամբողջ դեմքն ու վիզը։

— Անդրեյ Պետրովիչ, դուք բարի եք հրեշտակի նման,— ասաց նա,— բայց չէ՞ որ նա կգա հրաժեշտ տալու։

— Այո՛, ես կարծում եմ, նա հավանաբեն կգա, որովհետև չի ուզի գնալ...

— Ասացեք նրան, ասացեք...

Բայց այստեղ խեղճ աղջիկը չդիմացավ. արտասուքները հորդ հոսեցին նրա աչքերից, և նա սենյակից դուրս վազեց։

«Ահա թե ինչպես է նա սիրում Ինսարովին»,— մտածում էր Բերսենևը, դանդաղ տուն վերադառնալով։ «Ես այդ չէի սպասում, ես չէի սպասում, որ այդ արդեն այդքան սաստիկ է։ Ես բարի եմ, ասում է Ելենան,— շարունակում էր Բերսենևն իր խորհրդածությունները...— Ո՞վ կասեր, թե ինչ զգացումներից և մղումներից դրդված ես հաղորդեցի այդ բոլորը Ելենային։ Բայց ոչ բարությունից, ոչ բարությունից։ Նույն այն անիծված ցանկությունից՝ համոզվելու, թե իսկապես, արդյոք դաշույնը նստա՞ծ է վերքի մեջ։ Ես պետք է գոհ լինեմ—նրանք սիրում են իրար, և ես նրանց օգնեցի... «Ապագա միջնորդը գիտության և ռուս հասարակության միջև», այսպես է անվանում ինձ Շուբինը, երևի իմ ճակատին գրված է միջնորդ լինել։ Բայց եթե ես սխալվե՞լ եմ։ Մ՛չ, ես չեմ սխալվել...»։

Անդրեյ Պետրովիչի համար չափազանց դառն էր այդ բոլորը, և Ռուսները նրա գլուխը չէր մտնում։

Մյուս օրը, ժամը մոտ երկուսին, Ինսարովը եկավ Ստախովների մոտ։ Կարծես դիտմամբ, այդ խիստ ժամին Աննա Վասիլևնայի հյուրասենյակում նստած էր մի հյուր՝ հարբեվան երեցկինը, մի շատ լավ և հարգելի կին, որ սակայն մի փոքրիկ անախորժություն էր ունեցել ոստիկանության հետ այն պատճառով, որ օրվա ամենաշոգ ժամին ուղեցել էր լողանալ լճակի մեջ, այն ճանապարհին մոտիկ, որով հաճախ անցնում էր ինչ-որ երևելի գեներալի ընտանիք։ Կողմնակի մարդու ներկայությունը սկզբում նույնիսկ հաճելի էր Ելենայի համար, որի դեմքին արյունի մի կաթիլ իսկ չէր մնացել, հենց որ նա լսեց Ինսարովի քայլերի ձայնը, բայց նրա սիրտը կտոր առավ, երբ մտածեց, որ Ինսարովը կարող է հրաժեշտ տալ, չխոսելով իր հետ առանձին։

Իսկ Ինսարովը շփոթված էր երևում և խուսափում էր Ելենայի հայացքից։ «Մի՞թե նա հենց իսկույն կսկսի մնաք բարով ասել»,— մտածում էր Ելենան։ Եվ իրավ, Ինսարովը սկսեց, իր խոսքը ուղղելով Աննա Վասիլևնային. Ելենան շտապով վեր կացավ տեղից և կանչեց նրան մի կողմ, դեպի պատուհանը։ Երեցկինը զարմացավ և փորձեց շուռ գալ այդ կողմը. բայց նա այնքան պինդ էր կապել կորսետը, որ վերջինս ճռճռում էր ամեն անգամ, երբ նա շարժվում էր։ Ուստի նա մնաց անշարժ։

— Լսեցե՛ք,— շտապով ասաց Ելենան,— ես գիտեմ, թե ինչու եք եկել. Անդրեյ Պետրովիչը ինձ հաղորդել է ձեր մտադրությունը, բայց ես ձեզ խնդրում եմ, ես ձեզ աղաչում եմ՝ հրաժեշտ չտալ մեզ այսօր, այլ գալ այստեղ վաղը, սրանից մի քիչ շուտ, ժամը մոտ տասնմեկին։ Ես պիտի երկու խոսք ասեմ ձեզ։

Ինսարովը լուռ խոնարհեց գլուխը։

— Ես ձեզ չեմ պահի... խոստանո՞ւմ եք ինձ։

Ինսարովը նորից գլուխ տվեց, բայց ոչինչ չասաց։

— Լենոչկա, այստեղ արի,— ասաց Աննա Վասիլևնան,— տե՛ս երեցկինը ինչ հիանալի ռիդիկյուլ ունի։

— Ինքս եմ գործել,— նկատեց երեցկինը։

Ելենան հեռացավ պատուհանից։

Ինսարովը քառորդ ժամից ավելի չմնաց Ստախովների մոտ։ Ելենան դիտում էր նրան գողտուկ։ Ինսարովը կանգնած տեղը դադար չուներ, առաջվա պես չէր իմանում, թե ուր դարձնի աչքերը, և գնաց ինչ-որ օտարոտի կերպով, հանկարծակի, ասես անհետացավ։

Դանդաղ անցավ այդ օրը Ելենայի համար, ավելի դանդաղ էր անցնում երկար-երկար գիշերը։ Ելենան կամ նստում էր մահճակալի վրա, գրկելով ծնկները և գլուխը դնելով ծնկներին, կամ մոտենում էր պատուհանին, այրվող ճակատը կպցնում պաղ ապակուն և մտածում էր, մտածում, թուլանալու չափ միշտ մտածում էր միևնույն խոհերը։ Նրա սիրտը ոչ այն է քարացել էր, ոչ այն է՝ չքացել էր կրծքից. նա չէր զգում, թե նա կա, բայց գլխի մեջ ծանրագին խփում էին երակները, և այրում էին նրա մա-

ղերը, շրթունքներն էլ շորանում էին։ «Նա կգա... նա հրաժեշտ չտվեց մայրիկին... նա չի խաբի... Մի՞թե Անդրեյ Պետրովիչը ճիշտ ասաց։ Անկարելի է... Նա խոսքերով չխոստացավ գալ... Մի՞թե ես ընդմիշտ բաժանվեցի նրանից»... Ահա ինչ մտքեր էին տոչորում նրան, չէին հեռանում նրանից... իսկապես որ չէին թողնում. այդ մտքերը չէին գալիս, չէին վերադառնում, նրանք անդադար տարուբերվում էին նրա մեջ, ինչպես մշուշը։ «Նա ինձ սիրում էր», հանկարծ բռնկվում էր այդ միտքը նրա ամբողջ էության մեջ, և նա ուշի ուշով նայում էր խավարի մեջ. անտեսանելի գաղտնի ժպիտը բաց էր անում նրա շրթունքները... Բայց նա իսկույն էլ թափահարում էր գլուխը, ձեռքերի միահյուսած մատները տանում էր դեպի ծոծրակը և նորից, ինչպես մշուշ, տարուբերվում էին նրա մեջ նախկին մտքերը։ Լուսադեմին նա հանվեց և պառկեց անկողնում, բայց քնել չկարողացավ։ Արեգակի առաջին հրեղեն ճառագայթները խփեցին նրա սենյակին... «Օ՜, եթե նա ինձ սիրում է»,— բացականչեց նա հանկարծ, և չամաչելով իրեն լուսավորող շողերից, բաց արեց իր գիրկը...

Նա վեր կացավ, հագնվեց, ցած իջավ։ Տանը ոչ ոք դեռ չէր զարթնել։ Նա գնաց պարտեզ, բայց պարտեզում այնպիսի հանգստություն էր տիրում, այնպիսի կանաչ կար, այնպիսի թարմություն, թռչուններն այնքան միամիտ ճռվողում էին, ծաղիկներն այնպես ուրախ նայում, որ նա մի տեսակ երկյուղով համակվեց։ «Օ՜,— մտածեց նա,— եթե այդ ճիշտ է, ապա չկա ոչ մի հատ խոտ, որ բախտավոր լինի ինձանից, բայց ճի՞շտ է դա արդյոք»։ Նա վերադարձավ իր սենյակ և, որպեսզի ժամանակը մի կերպ սպանած լինի, սկսեց փոխել հագուստը։ Բայց ամեն ինչ սահում, ընկնում էր նրա ձեռքերից, և նա դեռ կիսով չափ հանված նստած էր իր զարդասեղանի հայելու առաջ, երբ նրան կանչեցին թեյ խմելու։ Նա ցած գնաց. մայրը նկատեց նրա դունատությունը, բայց միայն ասաց՝ «Այսօր դու ինչ հետաքրքիր ես» և, հայացք գցելով նրա վրա՝ ավելացրեց. «Այդ շորը քեզ շատ սազում է, դու այդ հագիր ամեն ժամանակ, երբ կամենում ես մեկին դուր գալ»։ Ելենան ոչինչ չպատասխանեց և նստեց անկյունում։ Մինչ այս՝ խփեց ժամը ինը։ Մինչև

տասնմեկը դեռ երկու ժամ կար։ Ելենան ձեռքն առավ մի գիրք, հետո կարը, հետո էլի գիրքը։ Ապա նա խոսք տվեց իրեն՝ հարյուր անգամ անցնել մի ծառուղիով, և անցավ հարյուր անգամ. հետո նա երկար նայում էր, թե ինչպես Աննա Վասիլևնան պասյանս էր դարսում խաղաթղթերով... ու նայեց ժամացույցին. դեռ տասն էլ չկար։ Շուբինը եկավ հյուրասենյակ։ Ելենան փորձեց խոսել նրա հետ և ներողություն խնդրեց նրանից, ինքն էլ չիմանալով, թե ինչի համար... Նրա յուրաքանչյուր խոսքը չէ թե ջանքեր էր պահանջում նրանից, այլ նրա մեջ ինչ-որ զարմանք էր առաջացնում։ Շուբինը կռացավ դեպի նա. Ելենան ծաղրի էր սպասում, աչքերը բարձրացրեց՝ տեսավ իր առջև մի տխուր և բարեկամական դեմք... Նա ժպտաց այդ դեմքին։ Շուբինը նույնպես ժպտաց նրան լռելյայն և հանդարտ քայլերով դուրս գնաց։ Ելենան կամենում էր նրան կանգնեցնել, բայց իսկույն չհիշեց, թե ինչպես կանչի նրան։ Վերջապես խփեց ժամը տասնմեկը։ Նա սկսեց սպասել, սպասել, սպասել և ականջ դնել։ Նա այլևս ոչինչ չէր կարողանում անել, մինչևիսկ դադարեց մտածելուց։ Նրա սիրտը կենդանացավ և սկսեց ավելի ու ավելի պինդ խփել, և տարօրինակ բան, ժամանակը կարծես սկսեց ավելի արագ թռչել։ Անցավ քառորդ ժամ, անցավ կես ժամ, անցան էլի մի քանի րոպեներ, Ելենայի կարծիքով, և հանկարծ նա ցնցվեց. խփեց ոչ թե ժամը տասներկուսը, այլ մեկը։ «Նա չի գա, նա կգնա առանց հրաժեշտ տալու...»։ Այս միտքը, արյունի հետ միասին, խփեց նրա գլխին։ Նա զգաց, որ շունչը կտրվում էր, որ նա պատրաստ է հեկեկալ... Նա վազեց իր սենյակը և երեսնիվայր ընկավ անկողնի վրա, դեմքը դնելով ծալած ձեռքերին։

Կես ժամ պառկած էր նա անշարժ, նրա մատների արանքով արտասուքները թափվում էին բարձի վրա։ Նա հանկարծ վեր կացավ և նստեց. մի ինչ-որ օտարոտի բան էր կատարվում նրա մեջ. նրա դեմքը փոխվեց, թաց աչքերը իրենք իրենց չորացան և փայլատակեցին, հոնքերը ցած իջան, շրթունքները սեղմվեցին։ Անցավ էլի կես ժամ։ Ելենան վերջին անգամ ականջ դրեց. արդյոք չի՞ հասնի նրան ծանոթ ձայնը։ Վեր կացավ, դրեց գլխարկը, հագավ ձեռնոց-

ները, թիկնոցը գցեց ուսերին և անկատելի վերպով դուրս գալով տնից, աշխույժ քայլերով գնաց այն ճանապարհով, որը տանում էր դեպի Թերսենևի բնակարանը։

XVIII

Ելենան գնում էր գլուխը կորացրած և անշարժ հայացքն ուղղելով դեպի առաջ։ Նա ոչնչից չէր վախենում, նա ոչ մի բան չէր հասկանում։ Նա ուզում էր մի անգամ էլ տեսնվել Ինսարովի հետ։ Գնում էր նա, չնկատելով, որ արեգակը վաղուց էր ծածկվել ծանր սև ամպերի տակ, որ քամին կատաղաբար աղմկում էր ծառերի մեջ և բարձրացնում նրա շորերը, որ փոշին հանկարծակի բարձրանում էր և այնանձև սլանում ճանապարհով... Խոշոր անձրև կաթկաթեց, նա այդ էլ չէր նկատում, բայց անձրևը սկսեց ավելի սաստկանալ, փայլատակեց կայծակը, որոտը դղրդաց։ Ելենան կանգ առավ, չորս կողմը նայեց... Նրա բախտից, քիչ հեռու այնտեղից, ուր վրա էր հասել փոթորիկը, գտնվում էր մի հին, մոռացված մատուռիկ, որ շինված էր քանդված ջրհորի վրա։ Ելենան վազեց դեպի այնտեղ և մտավ ցածրիկ ծածկի տակ։ Անձրևը թափվում էր առվի պես. երկինքն ամբողջապես ծածկվել էր ամպերով։ Համբ հուսահատությամբ Ելենան նայում էր արագ թափվող կաթիլների խիտ ցանցին։ Ինսարովին տեսնելու վերջին հույսը կորավ։ Մուրացիկ մի պառավ կին մտավ մատուռը, թափ տվեց շորերը, գլուխ տալով ասաց. «Անձրևից, աղջիկ-պարոն», և տնքտնքալով ու ախ քաշելով, նստեց ջրհորի մոտ, պատի բեկորների վրա։ Ելենան ձեռքը տարավ գրպանը. պառավը նկատեց այս շարժումը և նրա կնճռոտ ու դեղին դեմքը, որ մի ժամանակ գեղեցիկ էր եղել, կենդանացավ։ «Շնորհակալ եմ քեզանից, սիրելիս»,— սկսեց նա։ Ելենան գրպանում չգտավ իր քսակը, իսկ պառավը արդեն մեկնել էր իր ձեռքը...

— Փող չկա մոտս, տատիկ,— ասաց Ելենան,— բայց ահա, վերցրու, մի բանի պետք կգա։

Նա տվեց պառավին իր թաշկինակը։

— Օ-օհ, սիրունիկս,— ասաց մուրացկան կինը,— ինչի՞ս է պետք թաշկինակը։ Բայց կարելի է թոռանս նվիրել,

երբ նա մարդու կգնա։ Աստված քո բարության փոխարեն տա։

Կանչեց որոտի հարվածը։

— Տեր Հիսուս Քրիստոս,— մրմնջաց մուրացկան կինը, և երեք անգամ խաչակնքեց։— Ախր կարծես ես քեզ տեսել եմ,— ավելացրեց պառավը և քիչ սպասելուց հետո շարունակեց,— դու չէ՞իր, որ ինձ քրիստոսի ողորմությունը տվիր։

Ելենան ուշի-ուշով նայեց պառավին և ճանաչեց նրան։

— Այո, տատիկ,— պատասխանեց նա։— Դու դեռ հարցրիր ինձանից, թե ինչո՞ւ այդքան տխուր եմ ես։

— Այդպես է, աղունակս, այդպես է։ Ասում էի, որ դու նա ես։ Եվ դու կարծես այժմ էլ դարդոտ ես։ Ահա քո թաշկինակն էլ թաց է, երևի արտասուքներից։ Օ՜հ, դուք, ջահելներ, ձեզ բոլորիդ համար միայն մի դարդ կա, միայն մի մեծ վիշտ։

— Ի՞նչ վիշտ, տատիկ։

— Ի՞նչ վիշտ։ Էհ, սիրուն աղջիկ, դու մի խաբիր ինձ, պառավիս։ Գիտեմ ես, թե քո դարդը ինչ է. դա որբի վիշտ չէ։ Չէ՞ որ ես էլ եմ եղել ջահել, սիրելիս. այդ բոլոր տառապանքներն իմ գլխովս էլ են անցել։ Իսկ ես քեզ, քո բարության փոխարեն, ահա ինչ կասեմ. եթե քեզ հանդիպել է լավ մարդ, ոչ թե մի ցանցառը, պինդ բռնիր։ Եթե կլինի՝ կլինի, եթե չի լինի, երևի աստծուն այդպես է հաճելի։ Ուզում ես՝ ես կտանեմ քո թաշկինակի հետ քո ամբողջ վիշտը։ Կտանեմ և կպրծնի։ Տեսնում ես, հիմա անձրևը բարակեց. դու դեռ սպասիր, իսկ ես կգնամ։ Անձրևը ինձ հո առաջին անգամը չպիտի թրջե։ Միտդ պահիր, սիրելիս, կար տխրություն, կորավ տխրությունը, անունն էլ չմնաց։ Տեր աստված, դու օգնես։

Մուրացկան կինը վեր կացավ տեղից, դուրս եկավ մատուռից և գնաց իր ճանապարհով։ Ելենան ապշած նայում էր նրա հետևից։ «Ի՞նչ է սա նշանակում»,— ակամա շշնջաց նա։

Անձրևը գնալով բարակում էր, արեգակը մի րոպե փայլեց։ Ելենան արդեն պատրաստվում էր թողնել իր ապաստանը... Հանկարծ, մատուռից մի տասը քայլ հեռու, նա տեսավ Ինսարովին։ Թիկնոցի մեջ փաթաթված՝ նա գալիս էր

նույն ճանապարհով, որով եկել էր Ելենան. թվում էր, թե նա տուն է շտապում։

Ելենան ձեռքով հենվեց փոքրիկ դստիկոնի հին վանդակին, ուզեց կանչել նրան, բայց ձայնը դավաճանեց... Ինսարովը արդեն անցնում էր մոտով, չբարձրացնելով գլուխը...

— Դմիտրի Նիկանորովիչ,— արտասանեց նա վերջապես։

Ինսարովը հանկարծակի կանգ առավ, նայեց... Առաջին րոպեին նա չճանաչեց Ելենային, բայց իսկույն մոտեցավ նրան։

— Դո՛ւք, դուք այստե՞ղ,— բացականչեց նա։

Ելենան լուռ ետ գնաց մատուռը։ Ինսարովը հետևեց նրան։

— Դուք այստե՞ղ,— կրկնեց նա։

Ելենան շարունակում էր լռություն պահպանել և միայն նայում էր նրան երկար, փափուկ հայացքով։ Ինսարովը հայացքն իջեցրեց։

— Դուք մեր տանի՞ց եք գալիս,— հարցրեց Ելենան։

— Ոչ... ձեր տանից չեմ գալիս։

— Ո՞չ,— կրկնեց Ելենան և աշխատեց ժպտալ։— Այդպե՞ս եք դուք կատարում ձեր խոստումները։ Ես ձեզ սպասում էի առավոտից։

— Ես երեկ, հիշեցեք, Ելենա Նիկոլաևնա, ոչինչ չխոստացա։

Ելենան նորից հազիվ-հազ ժպտաց և ձեռքը սահեցրեց գեմքի վրայով։ Դեմքն էլ, ձեռքն էլ շատ գունատ էին։

— Դուք, ուրեմն, կամենում էիք գնալ առանց հրաժեշտ տալու։

— Այո,— կոշտ ու խուլ կերպով արտասանեց Ինսարովը։

— Ինչպե՞ս։ Մեր ծանոթությունից հետո, այն խոստակցություններից հետո, այդ բոլորից հետո՞... Ուրեմն, եթե ես այստեղ ձեզ չհանդիպեի պատահաբար (Ելենայի ձայնը սուր հնչեց, և նա մի վայրկյան լռեց)... դուք կգնայիք և վերջին անգամ չէիք էլ սեղմի իմ ձեռքը, և դուք չէիք էլ ափսոսա։

Ինսարովը շուռ եկավ։

— Ելենա Նիկոլաևնա, խնդրում եմ այդպես մի խոսեք։ Ես առանց այդ էլ ուրախ չեմ։ Հավատացեք, իմ վճիռը կայացրել եմ մեծ ջանքեր գործ դնելով։ Եթե դուք իմանայիք...

— Ես չեմ էլ ուզում իմանալ,— վախեցած ընդհատեց նրան Ելենան,— թե ինչու եք դուք գնում... Երևի այդպես է հարկավոր։ Երևի մենք պիտի բաժանվենք։ Դուք առանց պատճառի չէիք կամենա վշտացնել ձեր բարեկամներին։ Բայց մի՞թե այդպես են բաժանվում բարեկամները։ Մենք բարեկամներ ենք, այնպես չէ՞։

— Ոչ,— ասաց Ինսարովը։

— Ինչպե՞ս...— ասաց Ելենան։ Նրա այտերը ծածկվեցին թեթև կարմրությամբ։

— Ես հենց այդ պատճառով էլ գնում եմ, որ մենք բարեկամներ չենք։ Մի հարկադրեք ինձ ասել այն, ինչ ես չեմ ուզում ասել, ինչ չեմ ասի։

— Դուք առաջ ինձ հետ անկեղծ էիք,— թեթև հանդիմանությամբ արտասանեց Ելենան։— Հիշո՞ւմ եք։

— Այն ժամանակ ես կարող էի լինել անկեղծ, այն ժամանակ ես թաքցնելու բան չունեի, իսկ այժմ...

— Իսկ այ՞ժմ,— հարցրեց Ելենան։

— Իսկ այժմ... Իսկ այժմ ես պիտի հեռանամ։ Մնաք բարով։

Եթե այդ վայրկյանին Ինսարովը բարձրացներ աչքերը, նայեր Ելենային, կնկատեր, որ նրա դեմքը ավելի պայծառանում էր, որքան ինքը կիտում էր հոնքերը և մռայլվում։ Մինչդեռ նա համառությամբ նայում էր հատակին։

— Դեհ, մնաք բարով, Դմիտրի Նիկանորովիչ,— սկսեց Ելենան։— Բայց քանի որ մենք արդեն հանդիպել ենք իրար, գոնե տվեք ինձ այժմ ձեր ձեռքը։

Ինսարովը մեկնում էր ձեռքը։

— Ոչ, ես այս էլ չեմ կարող,— ասաց նա և նորից ետ գարձավ։

— Ձե՞ք կարող։

— Չեմ կարող։ Մնացեք բարով։

Եվ նա գնաց դեպի մատուռի դուռը։

— Քիչ էլ սպասեցեք,— ասաց Ելենան։— Դուք կարծես վախենում եք ինձանից։ Իսկ ես ձեզնից քաջ եմ,— ավելացրեց նա մի հանկարծակի թեթև դողոցով, որ տարածվեց նրա ամբողջ մարմնի մեջ։— Ես կարող եմ ձեզ ասել... կամենո՞ւմ եք... թե ինչու դուք այստեղ հանդիպեցիք ինձ։ Գիտե՞ք ուր էի ես գնում։

Ինսարովը զարմացած նայում էր Ելենային։

— Ես գնում էի ձեզ մոտ։

— Ինձ մո՞տ։

Ելենան ծածկեց դեմքը։

— Դուք կամենում էիք ինձ հարկադրել, որ ես ասեմ, թե ձեզ սիրում եմ,— շշնջաց նա,— ահա... ես ասացի։

— Ելենա,— գոչեց Ինսարովը։

Ելենան ընդունեց նրա ձեռքերը, նայեց նրան և ընկավ նրա կրծքին։

Ինսարովը պինդ գրկեց նրան և լուռ էր։ Հարկավոր չէր, որ նա ասեր, թե սիրում է Ելենային։ Միայն նրա բացակայությունից, մարդու այդ վայրկենական կերպարանափոխությունից, միայն նրանից, թե ինչպես բարձրանում և իջնում էր այդ կուրծքը, որին նա այնպիսի հավատով կպել էր, միայն նրանից, թե ինչպես նրա մատների ծայրերը կպան իր մազերին, Ելենան կարող էր հասկանալ, որ ինքը սիրված է։ Ինսարովը լուռ էր, բայց Ելենային հարկավոր չէին խոսքեր։ «Նա այստեղ է, նա սիրում է... էլ ուրիշ ի՞նչ»։ Երջանկության խաղաղությունը, անվրդով նավահանգստի խաղաղությունը, կատարված նպատակի խաղաղությունը, այն երկնային խաղաղությունը, որ նույնիսկ մահին էլ տալիս է թե իմաստ և թե գեղեցկություն, լցրել էր Ելենայի հոգին իր աստվածային հորձանքով։ Ելենան ոչինչ չէր ուզում, որովհետև տիրացել էր ամեն ինչի։ «Օ՜հ, իմ եղբայր, իմ բարեկամ, իմ սիրելի...»,— շշնջում էին նրա շրթունքները, և նա չգիտեր, թե ո՞ւմ սիրտն էր, նրա՞նը արդյոք, թե իրենը, որ այդպես քաղցր բաբախում ու հալվում էր իր կրծքի մեջ։

Իսկ Ինսարովը կանգնած էր անշարժ, նա իր պինդ գրկախառնությամբ շրջապատել էր այդ երիտասարդ, նրան անձնատուր եղած կյանքը, նա կրծքի վրա շոշափում էր այդ

նոր, անվերջ թանկագին լուծը, հիացմունքի, անբացատրելի շնորհակալության զգացումը ջարդել, փոշի էր դարձրել նրա ամուր հոգին, և դեռ երբեք չտեսած արտասուքները երևացին նրա աչքերում...

Իսկ Ելենան չէր արտասվում. նա միայն կրկնում էր. «Օ՜հ, իմ բարեկամ, օհ, իմ եղբայր»։

— Ուրեմն դու կգա՞ս ինձ հետ ամենուր,— ասում էր Ինսարովը նրան, քառորդ ժամ անց, առաջվա պես պահելով նրան իր գրկի մեջ։

— Ամենուր, աշխարհի վերջը։ Ուր դու կլինես, այնտեղ էլ ես կլինեմ։

— Եվ դու քեզ չե՞ս խաբում, դու գիտե՞ս, որ քո ծնողները երբեք չեն համաձայնի մեր ամուսնությանը։

— Ես ինձ չեմ խաբում. ես այդ գիտեմ։

— Դու գիտե՞ս, որ ես աղքատ եմ, համարյա մուրացկան։

— Գիտեմ։

— Որ ես ռուս չեմ, որ ինձ վիճակված չէ ապրել Ռուսաստանում, որ քեզ հարկավոր կլինի կտրել քո բոլոր կապերը հայրենիքիդ, ազգականներիդ հետ։

— Գիտեմ, գիտեմ։

— Դու գիտե՞ս նույնպես, որ ես ինձ նվիրել եմ մի դժվար, անշնորհակալ գործի, որ ինձ... մեզ պետք կլինի ենթարկվել ոչ միայն վտանգների, այլև զրկանքների, քուցե ստորացման։

— Գիտեմ, ամեն ինչ գիտեմ... Ես քեզ սիրում եմ։

— Որ դու պիտի հրաժարվես քո բոլոր սովորություններից, որ այնտեղ, մենակ, օտարների մեջ, գու, քուցե, հարկադրված լինես գործել...

Ելենան ձեռքը դրեց նրա շրթունքներին.

— Ես սիրում եմ քեզ։

Ինսարովը ջերմ համբուրում էր նրա նեղլիկ, վարդագույն ձեռքը։ Ելենան չէր հեռացնում ձեռքը նրա շրթունքներից և մի ինչ-որ մանկական ուրախությամբ, մի ծիծաղելի հետաքրքրությամբ նայում էր, թե ինչպես նա ծածկում էր համբույրներով մեկ ձեռքը, մեկ մատները...

Հանկարծ նա կարմրեց և թաքցրեց իր դեմքը նրա կրծքի վրա։

Ինսարովը քնքշությամբ բարձրացրեց նրա գլուխը և ուշի-ուշով նայեց նրա աչքերին։

— Ուրեմն, կեցցես,— ասաց նա նրան,— իմ կինը մարդկանց և աստծու առաջ...

XIX

Մի ժամ անց Ելենան, գլխարկը մի ձեռքում, ծածկոցը մյուսում, հանդարտ մտնում էր ամառանոցի հյուրասենյակը։ Նրա մազերը թեթևակի ցրվել էին, այտերի վրա երևում էր փոքրիկ վարդագույն բիծը, ժպիտը չէր ուզում իջնել նրա շրթունքներից, աչքերը փակվում էին և կիսախուփ՝ նույնպես ժպտում էին։ Նա հազիվ էր քայլում հոգնածությունից, և նրան հաճելի էր այդ հոգնածությունը. և ամեն ինչ հաճելի էր նրան։ Ամեն ինչ նրան թվում էր սիրելի և քնքուշ։ Ուվար Իվանովիչը նստած էր պատուհանի տակ, Ելենան մոտեցավ նրան, գցեց իր ձեռքը նրա ուսին, քիչ ձգվեց և ակամա ծիծաղեց։

— Ինչո՞ւ,— հարցրեց նա զարմանալով։

Ելենան չգիտեր, թե ինչ ասի։ Նա ուզում էր համբուրել Ուվար Իվանովիչին։

— Շրմփաց,— արտասանեց նա վերջապես։

Բայց Ուվար Իվանովիչը հոնքն անգամ չշարժեց, և շարունակում էր զարմացած նայել Ելենային։ Սա գցեց նրա վրա իր ծածկոցն էլ, գլխարկն էլ։

— Սիրելի Ուվար Իվանովիչ,— ասաց Ելենան,— ես քնել եմ ուզում, ես հոգնել եմ,— և նա էլի ծիծաղեց ու ընկավ նրա կողքին դրած բազկաթոռի վրա։

— Հըմ,— արտասանեց Ուվար Իվանովիչը և խաղացրեց մատները։— էն ինչը... պետք է, հա...

Իսկ Ելենան նայում էր շուրջը և մտածում. «Այս բոլորից ես շուտով պիտի բաժանվեմ... Օտարոտի բան. ինձանում ոչ երկյուղ կա, ոչ կասկած, ոչ ափսոսանք... Ո՛չ, խղճում եմ մայրիկիս»։ Հետո էլի պատկերացավ նրա առաջ մատուռը, նորից հնչեց նրա ձայնը. նա զգաց իր շուրջը Ինսարովի ձեռքերը։ Նրա սիրտը ուրախ, բայց թույլ կերպով շարժվեց. երջանկության հոգնածությունը սրտի վրա էլ էր ընկած։ Հիշեց նա մուրացկան պառավին։ «Իրոք որ նա տարավ իմ վիշտը,— մտածում էր նա,— օ՛հ, որքան երջանիկ եմ ես, որքան շուտ եղավ։ Որքան անարժան եմ այդ երջանկության»։ Եթե նա մի փոքր ազատություն տար, կթափվեին նրա աչքերից քաղցր, անվերջ արտասուքները։ Նա զբաղում էր այդ արտասուքները միայն նրանով, որ ծիծաղում էր։ Ինչ դիրք էլ ընդունում էր նա, թվում էր, թե ավելի լավ ու հարմար չէր կարելի. կարծես նրան օրորում էին։ Նրա բոլոր շարժումները դանդաղ էին և փափուկ, որտե՞ղ մնացին նրա փութկոտությունն ու կտրուկությունը։ Մտավ Զոյան, Ելենան վճռեց, որ նրանից ավելի չքնաղ դեմք ինքը չի տեսել։ Մտավ Աննա Վասիլևնան. մի ինչ-որ բան ծակեց Ելենային, բայց որպիսի քնքշությամբ նա գրկեց իր բարի մորը և համբուրեց նրա ճակատը, արդեն թեթևակի սպիտակած մազերի մոտ։ Հետո նա գնաց իր սենյակը. ինչպես այնտեղ ամեն ինչ ժպտում էր նրան։ Ամոթխած հանդիսավորության և հեզության ինչպիսի զգացումով նստեց նա իր մահճակալի վրա, այն իսկ մահճակալի, ուր երեք ժամ առաջ նա այնքան դառն վայրկյաններ էր անցկացրել։ «Բայց ես հո այն ժամանակ էլ գիտեի, որ նա ինձ սիրում է,— մտածեց Ելենան,— նույնիսկ առաջ էլ... Ա՛հ, ո՛չ, ո՛չ, սա մեղք է»։ «Դու իմ կինն ես...»,— շշնջաց նա՝ երեսը ծածկելով ձեռքերով և ծունկ չոքեց։

Երեկոյան դեմ նա ավելի մտախոհ դարձավ։ Տխրություն պատեց նրան, երբ մտածեց, թե դեռ շուտ չի տեսնվի Ինսարովի հետ։ Ինսարովը չէր կարող, կասկածներ շհարուցելով, մնալ Բերսենևի մոտ, ուստի ահա թե ինչ էին վճռել նա և Ելենան. Ինսարովը պիտի վերադառնար Մոսկվա և մինչև աշունը մի երկու անգամ հյուր գնար նրանց մոտ. իր կողմից Ելենան խոստացավ գրել նրան նամակներ և, եթե կարելի լիներ, նշանակել տեսակցություն Կունցեվոյի մոտ մի որևէ տեղ։ Թեյին նա իջավ հյուրասենյակ և այնտեղ գտավ իր բոլոր տնեցիներին և Շուբինին, որ մի սուր հայացք գցեց նրա վրա, հենց որ նա երևաց։ Ելենան ուզում էր խոսել նրա հետ բարեկամաբար, ինչպես առաջներում, բայց վախեցավ,

ար Շուբինը մի բան կհասկանա, վախեցավ ինքն իրենից։ Նրան թվում էր, թե Շուբինը իզուր չէր երկու շաբաթից ավելի իրեն հանգիստ թողել։ Շուտով եկավ Բերսենևը և հայտնեց Աննա Վասիլևնային ողջույն Ինսարովի կողմից, միևնույն ժամանակ ներողություն այն պատճառով, որ նա վերադարձավ Մոսկվա, չհայտնելով նրան իր հարգանքները։ Ինսարովի անունը օրվա ընթացքում առաջին անգամն էր արտասանվում Ելենայի առաջ. նա զգաց, որ կարմրեց. միևնույն ժամանակ նա հասկացավ, որ իրեն հարկավոր է ամբողջապես հայտնել այդպիսի մի լավ ծանոթի գնալու առթիվ. բայց նա իրեն չէր կարող հարկադրել ցեղծելու և շարունակում էր նստել անշարժ ու անխոս։ Մինչդեռ Աննա Վասիլևնան ախ էր քաշում և վշտացած էր։ Ելենան աշխատում էր Բերսենևի մոտ լինել։ Նրանից չէր վախենում, թեև նա գիտեր իր գաղտնիքի մի մասը. նա Բերսենևի թևի տակ ազատվում էր Շուբինից, որ շարունակ նայում էր նրան ոչ թե հեգնանքով, այլ ուշադրությամբ։ Բերսենևի վրա էլ այդ երեկո իջել էր մի տարակուսանք. նա սպասում էր, թե կտեսնի Ելենային ավելի տխուր։ Ելենայի բախտից, Բերսենևի և Շուբինի մեջ ոգվեց վեճ արվեստի մասին։ Ելենան ետ քաշվեց և կարծես քնի մեջ լսում էր նրանց ձայները։ Փոքր առ փոքր, ոչ միայն նրանք, այլև ամբողջ սենյակը, այն ամենը, ինչ շրջապատում էր նրան, թվաց իբրև երազ. ամեն ինչ, և՛ սեղանի վրա դրած ինքնաեռը, և՛ Ուվար Իվանովիչի կարճլիկ ժիլետը, և՛ Զոյայի հարթ եղունգները, և՛ մեծ իշխան Կոստանդին Պավլովիչի յուղաներկ պատկերը պատի վրա, ամեն ինչ կուլ էր գնում, ամեն ինչ ծածկվում էր թեթև ծխով, ամեն ինչ դադարում էր գոյություն ունենալուց։ Նա միայն խղճում էր ամենքին։ «Ինչի համար են ապրում»,— մտածում էր նա։

— Դու քնե՞լ ես ուզում, Լենոչկա,— հարցրեց նրան մայրը։ Նա չլսեց մոր հարցը։

— Անարդար ակնարկությո՞ւն, ասում ես դու... — Այս խոսքերը, որ սուր կերպով արտասանեց Շուբինը, հանկարծակի գրգռեցին Ելենայի ուշադրությունը։— Շնորհ արա,— շարունակեց նա,— հենց ճաշակն էլ դրա մեջ է։ Արդար ակնարկությունը վհատություն է պատճառում, դա քրիստոնեաբար չէ, դեպի անարդարը մարդն անտարբեր է՝ սա հիմար բան է, իսկ կիսաարդարից նա թե զայրույթ է զգում և թե անհամբերություն։ Օրինակ, եթե ես ասեմ՝ Ելենա Նիկոլաևնան սիրահարված է մեզանից մեկի վրա, ի՞նչ տեսակի ակնարկություն կլինի, հը՞։

— Ախ, մուսիո Պոլ,— ասաց Ելենան,— ես կկամենայի ցույց տալ ձեզ իմ անբավականությունը, բայց, ճշմարիտ, չեմ կարողանում։ Ես շատ հոգնած եմ։

— Ինչո՞ւ դու չես պառկում,— ասաց Աննա Վասիլևնան, որ երեկոյան ինքն էլ միշտ նիրհում էր, ուստի և հաճույքով ուզարկում էր քնելու մյուսներին։— Հրաժեշտ տուր ինձ և գնա։ Աստված քեզ հետ, Անդրեյ Պետրովիչը ներողամիտ կլինի։

Ելենան համբուրեց մորը, գլուխ տվեց ամենքին և գնաց։ Շուբինը ճանապարհ դցեց նրան մինչև դուռը։

— Ելենա Նիկոլաևնա,— շշնջաց նա շեմքում,— դուք ոտի տակ եք տալիս մուսիո Պոլին, դուք անգթաբար մատ եք գալիս նրա վրայով, իսկ մուսիո Պոլը օրհնում է ձեզ, և ձեր ոտները, և կոշիկները ձեր ոտների վրա, և ձեր կոշիկների տակը։

Ելենան ուսերը վեր քաշեց, ակամա ձեռքը մեկնեց նրան, ոչ այն ձեռքը, որ համբուրել էր Ինսարովը, և, վերադառնալով իր սենյակը, իսկույն հանեց շորերը, պառկեց և քնեց։ Նրա քունը խոր էր, անվրդով, այդպես երեխաներն էլ չեն քնում. այդպես քնում է միայն առողջացած մանուկը, երբ մայրը նստում է նրա օրորոցի կողքին և նայում նրան, և լսում նրա շնչառությունը։

XX

— Մի բոպե ինձ մոտ մտիր,— ասաց Բերսենևին Շուբինը, հենց որ հրաժեշտ տվեց Աննա Վասիլևնային,— ես մի քանի բան ունեմ քեզ ցույց տալու։

Բերսենևը գնաց նրա սենյակը։ Նրան զարմացրեց արձանիկների, անդրիների բազմությունը, որոնք փաթաթված էին թաց փալասների մեջ և շարված էին սենյակի բոլոր անկյուններում։

— Դու, ինչպես տեսնում եմ, լուրջ կերպով ես աշխատում,— նկատեց նա Շուբինին։

— Պետք է մի բան արած լինել,— պատասխանեց նա։— Մեկը չի հաջողվում, պետք է փորձել մյուսը։ Բայց ես, իբրև կոբսիկացի, ավելի վրիժառությամբ եմ զբաղվում, քան զուտ արվեստով։ Trema, Bisanzia[1]։

— Ես քեզ չեմ հասկանում,— ասաց Բերսենևը։

— Ա՛յ, սպասիր։ Ահա, հաճեցեք նայել, սիրելի բարեկամս և բարերարս, իմ վրեժը՝ համար առաջին։

Շուբինը բաց արեց մի պատկեր, և Բերսենևը տեսավ Ինսարովին շատ նման հիանալի անդրին։ Դեմքի գծերը Շուբինը ըմբռնել էր ճիշտ ամենամանր մանրամասնությունների մեջ անգամ և տվել էր նրանց մի փառավոր արտահայտություն, անկեղծ, ազնիվ և համարձակ։

Բերսենևը հիացավ։

— Սա ուղղակի մի հիանալի բան է,— աղաղակեց նա։— Շնորհավորում եմ քեզ։ Կարելի է ցուցահանդես ուղարկել։ Ինչո՞ւ դու այս փառահեղ գործը անվանում ես վրեժ։

— Այն պատճառով, սըր, որ ես մտադիր եմ մատուցել այս, ինչպես դուք բարեհաճեցիք անվանել, հոյակապ գործը Ելենա Նիկոլաևնային նրա անվանակոչության օրը։ Հասկանո՞ւմ եք դուք այս այլաբանությունը։ Մենք կույր չենք, մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում մեր շուրջը, բայց մենք ջենտլմեններ ենք, ողորմած պարոն, և վրեժ ենք լուծում ջենտլմենի պես։

— Իսկ ահա,— ավելացրեց Շուբինը՝ բաց անելով մի ուրիշ պատկեր,— որովհետև արվեստագետը, համաձայն նորագույն գեղագետների կարծիքին, ունի նախանձելի իրավունք՝ մարմնացնելու իր մեջ ամեն տեսակ կեղտոտություններ, դարձնելով դրանց ստեղծագործության գոհարներ, ուստի մենք, այս գոհարը կառուցանելիս, որ համար երկրորդն է կազմում, վրեժ ենք լուծել ոչ թե ջենտլմենների պես, այլ ուղղակի en canaille[2]։

---

[1] Սարսափից դողա, Բյուզանդիա (իտալ.)։

[2] Ինչպես արիկա (ֆրանս.)։

Նա ճարպկությամբ ետ քաշեց կտավը, և Բերսենևը տեսավ դանտանյան ճաշակով մի արձանիկ, որ ներկայացնում էր նույն Ինսարովին։ Ավելի շար և սրամիտ բան չէր կարելի հնարել։ Երիտասարդ բուլղարը ներկայացրած էր խոյի կերպարանքով, որ հետևի ոտների վրա բարձրացել էր և խոնարհեցրել էր եղջյուրները՝ հարված տալու համար։ Բուռ փքվածությունը, գոռոզությունը, համառությունը, անտաշությունը, սահմանափակ միտքը կնքված էին «նրբագեղմ ոչխարների ամուսնու» դեմքի վրա, մինչդեռ նմանությունը այնքան շլացուցիչ էր, անկասկած, որ Բերսենևը չկարողացավ չքրքջալ։

— Ի՞նչ է, զվարճալի՞ է,— ասաց Շուբինը,— ճանաչեցի՞ր հերոսին։ Նույնպե՞ս խորհուրդ ես տալիս ցուցահանդես ուղարկել։ Այս մեկը, եղբայր, ես ինձ կնվիրեմ իմ անվան օրը... Ձերդ մեծապատվություն, թույլ տվեք մի օրին հանել։

Եվ Շուբինը երեք անգամ վեր ցատկեց, խփելով իր հետևին կրունկներով։

Բերսենևը հատակից վերցրեց կտավը և գցեց արձանիկի վրա։

— Ահ դու մեծահոգի,— սկսեց Շուբինը,— ո՞վ է պատմության մեջ առանձնապես մեծահոգի համարվում։ Բայց դա միևնույն է։ Իսկ այժմ,— շարունակեց նա՝ հանդիսավոր և տխուր բաց անելով երրորդ պատկերը, որ կավի մի բավական մեծ կտոր էր,— դու կտեսնես մի բան, ինչ կապացուցի քո բարեկամի ճշմարտությունը և նրբատեսությունը։ Դու կհամոզվես, որ նա, այնուամենայնիվ, իբրև իսկական գեղարվեստագետ, զգում է և ինքն իրեն ապտակելու կարիքը և օգուտը։ Նայի՛ր։

Կտավը բարձրացավ, և Բերսենևը տեսավ երկու միմյանց կողքի և մոտիկ դրած, կարծես իրար կպած գլուխներ... Նա իսկույն չհասկացավ, թե բանն ինչ է, բայց, ուշադրությամբ նայելով՝ ճանաչեց, որ մեկը Աննուշկան էր, մյուսը՝ ինքը Շուբինը։ Բայց դրանք ավելի ծաղրանկարներ էին, քան պատկերներ։ Աննուշկան ներկայացրած էր իբրև գեղեցիկ, չաղ աղջիկ ցածրիկ ճակատով, ուռած աչքե-

ռով և ցցված քթով։ Նրա խոշոր շրթունքները անպատկառ ծիծաղում էին. ամբողջ դեմքն արտահայտում էր զգայնություն, անհոգություն և կորիճություն, ոչ առանց բարեհոգության։ Իրեն Շուբինը ներկայացրել էր խմած, նիհարած մի զվարճասեր՝ նեղս ընկած թշերով, նոսր մազերի անզոր կախված հյուսերով, անմիտ արտահայտությամբ հանված աչքերի մեջ, մեռելի սրված քթով։

Բերսենևը զզվանքով ետ քաշվեց։

— Ինչպես է այս երկուսը, եղբայր,— ասաց Շուբինը։— Չե՞ս բարեհաճի արդյոք հնարել արժանավոր ստորագրություն։ Առաջին երկու բաների համար ես արդեն գտել եմ ստորագրություններ։ Անդրիի տակ կլինի՝ «Հերոս, որ մտադիր է ազատել իր հայրենիքը»։ Արձանիկի տակ՝ «Զգուշացեք, երշիկագործներ»։ Իսկ այս մեկի տակ, ի՞նչ ես կարծում՝ «Գեղաբվեստագետ Պավել Յակովլևիչ Շուբինի ապագան»... Լա՞վ է։

— Բավական է,— պատասխանեց Բերսենևը։— Արժե՞ր ժամանակ կորցնել այդպիսի... — Նա իսկույն չգտավ հարմար խոսք։

— Զզվելի բանի համար, ուզում ես ասել։ Ո՛չ, եղբայր, ներիր, եթե մի բան կա, որ պիտի ցուցահանդես գնա, դա հենց այս արձանիկն է։

— Իրոք որ զզվելի բան,— կրկնեց Բերսենևը։— Ի՞նչ դատարկաբանություն։ Քեզանում բալորովին չկան այդ տեսակ զարգացման դրավականներ, որոնցով մինչև այժմ դժբախտաբար, այնքան առատորեն օժտված են մեր արտիստները։ Դու ուղղակի ցրպարեալ ես քեզ։

— Դու ենթադրո՞ւմ ես,— մռայլ ասաց Շուբինը։— Եթե ինձանում չկան այդ գրավականները և եթե դրանք պատվաստվեն ինձ վրա, դրա մեջ մեղավոր կլինի... մի անձնավորություն։ Դու գիտե՞ս,— ավելացրեց նա ողբեգորեն հոնքերը կիտելով,— ես արդեն փորձել եմ խմել։

— Սուտ ես ասում։

— Փորձել եմ, աստված վկա,— պատասխանեց Շուբինը և հանկարծ ժպտաց. նրա դեմքը բացվեց,— բայց համ չունի, եղբայր, կոկորդովս չի գնում և գլուխս հետո թմբուկի նման է։ Ինքը, մեծ Լուշչիխինը՝ Խաբլամպի Լուշչիխինը,

Մոսկվայի, իսկ ուրիշների ասելով՝ Վելիկոտուֆայի առաջին ձագարը—հայտարարեց, թե ինձանից բան չի գուրս գա։ Ինձ, ինչպես նա հայտնեց, չիշը ոչինչ չի ասում։

Բերսենևը բարձրացրեց ձեռքը, որ խփի մի խումբ արձանիկներին, բայց Շուբինը կանգնեցրեց նրան։

— Բավական է։ Մի խփիր, սիրելիս, սա հարկավոր կլինի իբրև դաս, իբրև խրատվիլակ։

Բերսենևը ծիծաղեց։

— Այդ դեպքում ես կվնասեմ քո խրատվիլակը,— ասաց նա,— և կեցցե հավիտենական, մաքուր արվեստը։

— Կեցցե,— վրա բերեց Շուբինը։— Նրա հետ թե լավն է ավելի լավ, թե վատը՝ ցավ չէ։

Բարեկամները պինդ սեղմեցին իրար ձեռք և բաժանվեցին։

XXI

Ելենայի առաջին զգացումը, երբ նա արթնացավ, ուրախալի վախն էր։ «Մի՞թե, մի՞թե»,— հարցնում էր նա իրեն, և նրա սիրտը թալկանում էր երջանկությունից։ Հիշողությունները գրոհեցին նրա վրա... Նա ընկղմվեց նրանց մեջ։ Հետո էլի նրա վրա խլավ նույն երանավետ, հիացական հանգարտությունը։ Բայց առավոտվա ընթացքում Ելենային հետզհետե տիրապետեց անհանգստությունը, իսկ հետևյալ օրերին և թուլություն, և ձանձրույթ էր զգում։ Ճիշտ է, նա հիմա գիտեր, թե ինչ էր ուզում, բայց այդ գիտակցումը թեթևություն չէր բերում նրան։ Այն անմոռանալի տեսակցությունը ընդմիշտ դուրս էր նետել նրան հին ճանապարհից. նա այլևս կանգնած չէր այդ ճանապարհի վրա, նա հեռու էր, մինչդեռ նրա շորս կողմում ամեն ինչ կատարվում էր սովորական կարգով, ամեն ինչ ընթանում էր առաջվա պես, կարծես ոչինչ չէր փոխվել. առաջվա կյանքը առաջվա նման ընթանում էր, առաջվա նման հույս դնելով Ելենայի մասնակցության և աջակցության վրա։ Ելենան փորձեց սկսել մի նամակ Ինսարովին, բայց այդ էլ չհաջողվեց, խոսքերը թղթի վրա դուրս էին գալիս ոչ այն է մեռած,

ոչ այն է կեղծ։ Իր հուշատետրին նա վերջ տվեց. վերջին տողի տակ նա քաշեց մի մեծ գիծ։ Դա անցյալն էր, իսկ նա իր բոլոր մտածմունքներով, իր ամբողջ էությամբ մտնում էր ապագայի մեջ։ Ծանր էր նրա համար։ Նստել մոր հետ, որը ոչինչ չի կասկածում, ականջ դնել նրան, պատասխանել նրան, խոսել նրա հետ՝ Ելենային թվում էր ինչ-որ հանցավոր բան. նա զգում էր իր մեջ մի ինչ-որ կեղծիք. նա վրդովվում էր, թեև կարմրելու պատճառ չուներ. մի քանի անգամ նրա հոգու մեջ գլուխ բարձրացրեց համարյա անհաղթահարելի ցանկություն՝ ասել ամեն ինչ առանց թաքցնելու, ինչ էլ լիներ հետո։ «Ինչո՞ւ,— մտածում էր նա,— Դմիտրին հենց այն ժամանակ էլ, հենց մատուռից չտարավ ինձ ուր կամենում էր։ Չասա՞ց նա, որ ես նրա կինն եմ աստծու առաջ։ Ինչո՞ւ ես այստեղ եմ»։ Նա հանկարծ սկսեց խուսափել ամենքից, նույնիսկ Ուվար Իվանովիչից, որն այժմ ավելի, քան երբևիցե, տարակուսանքի մեջ էր և խաղացնում էր մատները։ Այլևս ոչ անուշ, ոչ սիրելի, ոչ նույնիսկ երազ չէր թվում նրան ամբողջ շրջապատը. նա մղձավանջի նման ճնշում էր նրա կուրծքը մի անշարժ, մեռյալ ծանրությամբ, նա կարծես և՛ հանգիստանում էր նրան, և՛ զայրանում էր, և՛ խմանալ նրա մասին չէր ուզում։ Դու էլի, այնուամենայնիվ, մերն ես։ Նույնիսկ Ելենայի խեղճ սանիկները, ճնշված թրուչուններն ու գաղանները նայում էին նրա վրա, գոնե այդպես էր թվում նրան, անվստահաբար ու թշնամաբար։ Նա ամոթ էր զգում և ամաչում էր իր զգացմունքներից։ «Չէ՞ որ սա, այնուամենայնիվ, իմ տունն է,— մտածում էր նա,— իմ ընտանիքը, իմ հայրենիքը...» «Ոչ, սա այլևս քո հայրենիքը չէ, քո ընտանիքը չէ»,— ասում էր նրան մի ուրիշ ձայն։ Երկյուղը տիրում էր նրան, և նա վրդովվում էր իր փոքրոգության վրա։ Փորձանքը նոր էր միայն սկսվում։ Իսկ նա արդեն կորցնում էր իր համբերությունը... Ա՞յդ էր միթե նա խոստացել։

Շուտ չկարողացավ նա խելքը գլուխը հավաքել։ Բայց անցավ մի շաբաթ, երկրորդը... Ելենան մի քիչ հանգստացավ և սովորեց իր նոր դրությանը։ Նա գրեց երկու փոքրիկ երկտող Ինսարովին և ինքը տարավ փոստը, նա ոչ մի դեպքում, թե ամոթխածությունից, թե հպարտությունից, չէր

վստահի իր աղախնին։ Նա արդեն սկսել էր սպասել նրան, իրեն, Ինսարովին... Բայց Ինսարովի փոխարեն, մի գեղեցիկ առավոտ եկավ Նիկոլայ Արտեմիևիչը։

XXII

Գվարդիայի պաշտոնաթող պորուչիկ Ստախովի տանը դեռևս ոչ ոք չէր տեսել նրան այնպես թթված և միևնույն ժամանակ ինքնավստահ և ծանրակշիռ, ինչպես այդ օրը։ Նա մտավ հյուրասենյակ վերարկու և գլխարկ հագած, մտավ դանդաղ, լայն քայլեր անելով և թրխկացնելով կրունկները, մոտեցավ հայելուն և երկար նայում էր իրեն, մի հանդարտ խստությամբ գլուխը շարժելով և շրթունքները կծոտելով։ Աննա Վասիլևնան հանդիպեց նրան արտաքուստ հուզված և ներքուստ ուրախ (նա ամուսնուն երբեք ուրիշ կերպ չէր էլ հանդիպում)։ Նիկոլայ Արտեմիևիչը նույնիսկ չվերցրեց գլխարկը, չբարևեց նրան և լուռ կերպով թույլ տվեց Ելենային համբուրել իր կաշվե ձեռնոցը։ Աննա Վասիլևնան սկսեց հարցուփորձ անել, թե ինչպես է գնում նրա բժշկությունը. նա ոչինչ չպատասխանեց. եկավ Ուվար Իվանովիչը, նայեց նրան և ասաց. «Բա՜»։ Ուվար Իվանովիչի հետ նա առհասարակ սառն էր վարվում և նայում էր նրան բարձրից, թեև ընդունում էր, որ նրա մեջ կան Ստախովների իսկական արյան հետքեր։ Հայտնի է, որ համարյա բոլոր ռուս ազնվական տոհմերը համոզված են, թե գոյություն ունեն բացառիկ, ցեղային առանձնահատկություններ, որոնք հատուկ են միայն իրենց. մեզ քիչ չէ պատահել լսել զրույցներ «Պոդսալասկիններին» քթերի և «Պերեպրեեսկիններին» վզակոթերի մասին։ Զոյան դուրս եկավ և նստեց Նիկոլայ Արտեմիևիչի առաջ։ Սա տնքաց, բազկաթոռի մեջ նստեց, սուրճ պահանջեց և միայն այդ ժամանակ վերցրեց գլխարկը։ Նրա համար սուրճ բերին. նա խմեց մի բաժակ և, հերթով նայելով ամենքին, արտասանեց ատամների արանքով. «Sortez, s'il vous plait»[1] և, դիմելով կնոջը, ավելացրեց՝ «et vous, madame, restez, je vous prie»[2]։

---

[1] Դուրս եկեք, խնդրեմ (ֆրանս.)։

[2] Իսկ դուք, տիկի՛ն, խնդրեմ մնացեք (ֆրանս.)։

Ամենքը դուրս գնացին, բացի Աննա Վասիլևնայից։ Նրա գլուխը դողաց հուզմունքից։ Նիկոլայ Արտեմևիչի ձեռքերի հանդիսավորությունը նրան ապշեցրեց։ Նա մի ինչ-որ անսովոր բան էր սպասում։

— Ի՞նչ կա,— բացականչեց նա, հենց որ դուռը փակվեց։

Նիկոլայ Արտեմևիչը մի անտարբեր հայացք գցեց Աննա Վասիլևնայի վրա։

— Առանձին ոչինչ. այդ ի՞նչ ձև է, իսկույն ինչ-որ զոհի կերպարանք ընդունել,— սկսեց նա, առանց որևէ հարկավորության ցած թողնելով շրթունքների անկյունները յուրաքանչյուր խոսքի վրա։— Ես միայն կամենում էի ձեզ վաղօրոք հայտնել, որ այսօր մեզ մոտ պիտի ճաշե մի նոր հյուր։

— Ո՞վ է։

— Կուրնատովսկի, Եգոր Անդրեևիչ։ Դուք նրան չեք ճանաչում։ Ավագ քարտուղար է սենատում։

— Նա այսօր ճաշելո՞ւ է մեզ մոտ։

— Այո։

— Եվ դուք միայն նրա համար, որ ասեք ինձ այդ, հրամայեցիք բոլորին դո՞ւրս գնալ։

Նիկոլայ Արտեմևիչը նորից մի հայացք գցեց Աննա Վասիլևնայի վրա, այս անգամ արդեն հեգնաբար։

— Ձեզ զարմացնում է այդ։ Դեռ սպասեցեք զարմանալ։— Նա լռեց։ Աննա Վասիլևնան էլ մի քիչ լռեց։

— Ես կկամենայի,— խոսեց Աննա Վասիլևնան...

— Ես գիտեմ, դուք ինձ միշտ համարել եք բարոյականությունից զուրկ մարդ,— սկսեց հանկարծ Նիկոլայ Արտեմևիչը։

— Ե՞ս,— զարմացած փնթփնթաց Աննա Վասիլևնան։

— Եվ գուցե դուք իրավացի էլ եք։ Ես չեմ ուզում ժխտել, որ, ճշմարիտ, ես ձեզ երբեմն առիթ եմ տվել արդարացի անբավականության («գորշ ձիերը»,— անցավ Աննա Վասիլևնայի մտքով), թեև դուք ինքներդ պիտի համաձայնեք, որ ձեր կազմվածքի ձեզ հայտնի դրության մեջ...

— Դե ես ձեզ բոլորովին էլ չեմ մեղադրում, Նիկոլայ Արտեմևիչ։

— C'est possible[1]։ Համենայն դեպս ես դիտավորություն չունեմ ինձ արդարացնելու։ Ինձ կարդարացնի ժամանակը։ Բայց ես պարտք եմ համարում հավատացնել ձեզ, որ գիտեմ իմ պարտավորությունները և կարող եմ հոգ տանել... ինձ վստահած ընտանիքի... Օգուտների մասին։

«Ի՞նչ է նշանակում այս բոլորը»,— մտածում էր Աննա Վասիլևնան (նա չէր կարող իմանալ, որ նախընթաց օրը, Անգլիական կլուբում, բաղմոցների սենյակի անկյունում, վիճաբանություն էր սկսել այն մասին, թե ռուսները բաժակաճառեր արտասանելու ընդունակություն չունեն։ «Մեզանում ո՞վ կարող է խոսել, տվեք մեկի անունը»,— բացականչեց վիճողներից մեկը։ «Հենց Ստախովը, օրինակի համար»,— պատասխանեց մյուսը և ցույց տվեց Նիկոլայ Արտեմևիչին, որ կանգնած էր այդտեղ, և քիչ մնաց ճիչ արձակի բալկանությունից)։

— Օրինակի համար,— շարունակեց Նիկոլայ Արտեմևիչը,— իմ աղջիկը, Ելենան, դուք չե՞ք գտնում, թե ժամանակն է, որ նա ամուր ոտք դնի շավղի վրա... մարդու գնա, ուզում եմ ասել ես։ Խելոք-խելոք խոսելը, մարդասիրությունը լավ են, բայց մինչև մի որոշ աստիճան, մինչև որոշ տարիներ։ Ժամանակն է, որ նա թողնի իր մշուշները, դուրս գա զանազան արտիստների, դպրոցականների և ինչ-որ չերնոգորցիների հասարակությունից և գառնա այնպես, ինչպես ամենքն են լինում։

— Ինչպե՞ս պետք է ես հասկանամ ձեր խոսքերը,— հարցրեց Աննա Վասիլևնան։

— Այ, շնորհ արեք լսելու,— պատասխանեց Նիկոլայ Արտեմևիչը, առաջվա պես վայր քաշելով շրթունքները,— կասեմ ձեզ ուղղակի, առանց դես ու դենի. ես ծանոթացա, ես մտերմացա այդ երիտասարդի՝ պ. Կուրնատովսկու հետ, հույս ունենալով նրան փեսա ունենալ։ Համարձակվում եմ կարծել, թե տեսնելով նրան, դուք ինձ չեք մեղադրի կողմնապահության կամ դատողությունների շտապողականության մեջ (Նիկոլայ Արտեմևիչը խոսում էր և ինքն էլ զմայլվում իր պերճախոսությամբ)։ Շատ լավ կրթության տեր, նա իրա-

[1] Հնարավոր է (ֆրանս.)։

վագեստ է, ձևերը գեղեցիկ, երեսուներեք տարեկան ավագ քարտուղար, կոլեգիական խորհրդական և Ստանիսլավի շքանշանը վզին։ Դուք, հույս ունեմ, արդարադատ կլինեք իմ վերաբերմամբ, որ ես չեմ պատկանում այն pères de comédje[1]-ների թվին, որոնք զառանցում են միայն աստիճանների մասին. բայց դուք ինքներդ էիք ինձ ասում, թե Ելենա Նիկոլաևնային դուր են գալիս գործունյա, դրական մարդիկ։ Եգոր Անդրեևիչը իր բաժնի մեջ առաջինն է իբրև գործարար մարդ այժմ, մյուս կողմից՝ իմ աղջիկը թուլություն ունի դեպի մեծահոգի արարքները. արդ՝ իմացեք, որ Եգոր Անդրեևիչը, հենց որ հասավ հնարավորության, դուք հասկանում եք ինձ, հնարավորության առանց պակասության ապրելու իր ոճիկով, իսկույն հրաժարվեց հօգուտ իր եղբայրների այն տարեկան գումարից, որը նշանակել է նրա հայրը։

— Իսկ ո՞վ է նրա հայրը,— հարցրեց Աննա Վասիլևնան։

— Նրա հա՞յրը։ Նրա հայրը նույնպես իր տեսակի հայտնի մարդ է, շատ բարձր բարոյականության տեր, un vrai stoïcion[2], պաշտոնաթող, կարծեմ մայոր Բ... կոմսերի բոլոր կալվածքներն է կառավարում։

— Հա՜-ա,— արտասանեց Աննա Վասիլևնան։

— Հա՛, ի՞նչ է,— կրկնեց Նիկոլայ Արտեմևիչը։— Մի՞թե դուք էլ եք վարակվել նախապաշարմունքներով։

— Դե ես ոչինչ չասացի,— սկսել էր Աննա Վասիլևնան...

— Չէ՛, դուք ասացիք՝ հա՜-ա... ինչ էլ լինի, ես հարկավոր համարեցի ձեզ նախազգուշացնել իմ մտածմունքների եղանակի մասին, և համարձակվում եմ կարծել... համարձակվում եմ հուսալ, որ պ. Կուրնատովսկին կընդունվի à bras ouverts[3]։ Դա մի ինչ-որ չերնոգորցի չէ։

— Հասկանալի է։ Պետք է միայն խոհարար Վանկային կանչել, հրամայել, որ մի տեսակ կերակուր էլ ավելացնի։

— Դուք հասկանում եք, որ ես այդ բաներում չեմ խառնը-

[1] Կոմեդիայի հայրերից (ֆրանս.)։
[2] Իսկական ստոյիկ (ֆրանս.)։
[3] Գրկաբաց (ֆրանս.)։

վում,— արտասանեց Նիկոլայ Արտեմևիչը, վեր կացավ, գլխարկը դրեց և շվացնելով (նա մեկից լսել էր, որ շվացնել կարելի է միայն ամառանոցում և ձիավարժարանում) գնաց այգին զբոսնելու։ Շուրինը նայեց նրան իր սենյակի պատուհանից և լուռ հանեց լեզուն դեպի նա։

Ժամը չորսից տասը րոպե պակաս, Ստախովի ամառանոցին մոտեցավ մի կառեթ, և մի դեռևս երիտասարդ մարդ բարեձև արտաքինով, պարզ ու ճաշակով հագնված՝ դուրս եկավ նրանից և հրամայեց իր մասին իմաց տալ տանտերերին։ Դա Եգոր Անդրեևիչ Կուրնատովսկին էր։

Ահա, ի միջի այլոց, ինչ էր գրում մյուս օրը Ելենան Ինսարովին.

— Շնորհավորիր ինձ, սիրելի Դմիտրի, ես փեսացու ունեմ։ Նա երեկ ճաշեց մեզ մոտ. հայրիկս ծանոթացել է նրա հետ, կարծեմ, Անգլիական ակումբում և հրավիրել է նրան։ Իհարկե, նա երեկ դեռ իբրև փեսացու չէր եկել։ Բայց բարի մայրիկը, որին հայրիկը հաղորդել էր իր հույսերը, ականջիս շշնջաց, թե ինչ հյուր է դա։ Նրա անունն է Եգոր Անդրեևիչ Կուրնատովսկի. նա ծառայում է սենատում և ավագ-քարտուղար է։ Նախ նկարագրեմ նրա արտաքինը։ Նա բարձրահասակ չէ, քեզանից ցածր է, լավ կազմվածք ունի. նրա դիմագծերը կանոնավոր են, նրա մազերը կարճ խուզած են, պահում է մեծ բակենբարդ։ Նրա աչքերը փոքր են (ինչպես քո աչքերը), շագանակագույն, արագաշարժ. շրթունքները տափակ են, լայն, աչքերում և շրթունքների վրա խաղում է մշտական ժպիտ, մի տեսակ պաշտոնական է, կարծես այդ ժպիտը նրանում հերթապահություն է անում։ Իրեն նա շատ հասարակ է պահում, խոսում է պարզ, և ամեն ինչ նրանում պարզ է. նա ման է գալիս, ծիծաղում է, ուտում է այնպես, որ կարծես գործ է կատարում։ «Ինչպե՞ս է ուսումնասիրել»,— մտածում ես դու, գուցե, այս րոպեին։ Այո, նրա համար եմ ուսումնասիրել, որ նկարագրեմ նրան քո առաջ Եվ ինչպե՞ս չուսումնասիրել իր փեսացուին։ Նրա մեջ ինչ-որ երկաթե բան կա... և՛ բութ, և՛ դատարկ միևնույն ժամանակ, և՛ ազնիվ. ասում են, որ նա, իրավ, շատ ազնիվ է։ Դու էլ երկաթե ես, բայց ոչ թե այնպես, ինչպես այս մեկը։ Ճաշին նա նստում էր ինձ մոտ, մեր դիմացը նստած

էր Շուբինը։ Նախ խոսք սկսվեց ինչ-որ վաճառականական ձեռնարկությունների մասին. ասում են, թե նա դրանց մեջ գլուխ ունի և քիչ էր մնում, որ թողնի իր ծառայությունը, որպեսզի իր ձեռքն առնի մի մեծ գործարան։ Այ, լավ կլիներ նա։ Հետո Շուբինը խոսեց թատրոնի մասին. պարոն Կուրնատովսկին հայտնեց, և ես պիտի խոստովանեմ առանց վերջի հաճեստության, որ ինքը գեղարվեստից ոչինչ չի հասկանում։ Սա ինձ քեզ հիշեցրեց... բայց ես մտածեցի. ոչ, ես և Դմիտրին այնուամենայնիվ ուրիշ կերպ չենք հասկանում գեղարվեստը։ Նա կարծես թե ուզում էր ասել, ես չեմ հասկանում գեղարվեստը, և նա իսկի հարկավոր էլ չէ, բայց բարեկարգ պետության մեջ թույլատրվում է։ Պետերբուրգի և comme il faut-ի[1] վերաբերմամբ նա, սակայն, բավական անտարբեր է. նա մի անգամ մինչև իսկ իրեն պրոլետար անվանեց։ Մենք, ասաց, սևագործ բանվորներ ենք։ Ես մտածեցի, եթե այդ բանը Դմիտրին ասեր, ինձ չէր դուր գա, իսկ սա թող ասում է՝ ասի։ Թող պարծենա։ Ինձ հետ նա շատ քաղաքավարի էր, բայց ինձ շարունակ այնպես էր թվում, թե ինձ հետ զրուցում է մի շատ ու շատ ներողամիտ իշխանավոր։ Եթե նա ուզում էր գովել մեկին, ասում էր, թե այսինչի համար կանոն է, սա նրա սիրած խոսքն է։ Նա պետք է որ լինի ինքնավստահ, աշխատասեր, ընդունակ ինքնազոհության (դու տեսնում ես՝ ես անաչառ եմ), այսինքն ընդունակ զոհելու իր օգուտները, բայց նա մի մեծ բռնակալ է։ Դժբախտություն կլինի նրա ձեռքն ընկնելը։ Ճաշի վրա խոսեցին կաշառքի մասին...

— Ես հասկանում եմ,— ասաց նա,— որ շատ դեպքերում կաշառք վերցնողը մեղավոր չէ. նա ուրիշ կերպ վարվել չէր կարող։ Եվ, սակայն, երբ նա բռնվում է, պետք է նրան ճիպել։

Ես գոչեցի՝ ճիպել անմեղին։

— Այո, հանուն սկզբունքի։

— Ո՞ր սկզբունքի,— հարցրեց Շուբինը։ Կուրնատովսկին կամ շվոթվեց, կամ զարմացավ, և ասաց՝ «Այդ բացատրելու կարիք չկա»։

[1] Բարձր շրջաններ (ֆրանս.)։

Հայրիկս, որ, կարծեմ, խորին ակնածությամբ է վերաբերվում նրան, կրկնեց թե, իհարկե, կարիք չկա, և խոսակցությունը, ի ցավ իմ, վերջացավ։ Երեկոյան եկավ Բերսենևը, և նրա հետ սարսափելի վեճ սկսվեց։ Ես դեռ երբեք չեմ տեսել մեր բարի Անդրեյ Պետրովիչին այնքան հուզմունքի մեջ։ Պարոն Կուրնատովսկին բոլորովին չէր ժխտում գիտության, համալսարանների և այլնի օգուտը... և սակայն, ես հասկանում էի Անդրեյ Պետրովիչի վրդովմունքը։ Կուրնատովսկին այդ բոլորի վրա նայում էր իբրև մի տեսակ մարմնամարզության վրա։ Ճաշից հետո Շուբինը մոտեցավ ինձ և ասաց. «Ահա սա և մի ուրիշը (քո անունը արտասանել չի կարողանում), երկուսն էլ գործնական մարդիկ են, բայց տեսեք ինչքան տարբերություն կա, այնտեղ իսկական կենդանի, կյանքի արտադրած իդեալն է, իսկ այստեղ նույնիսկ պարտականության զգացում էլ չկա, այլ պարզապես պաշտոնյայի ազնվություն, և գործունյա մարդն է առանց բովանդակության»։ Շուբինը խելոք է, և ես քեզ համար միտս պահեցի նրա խոսքերը. իսկ եթե ինձ հարցնես, ինչ նմանություն քո և Կուրնատովսկու մեջ։ Դու հավատում ես, իսկ նա՝ ոչ, որովհետև միայն ինքն իրեն հավատալ անկարելի է։

Նա ուշ գնաց, բայց մայրիկս կարողացավ ինձ հաղորդել, որ ես նրան դուր եմ եկել, որ հայրիկը հիացած է... Հո չի ասել նա իմ մասին էլ, թե ես կանոններ ունեմ։ Իսկ ես քիչ էր մնացել պատասխանեի մայրիկին. թե ես շատ ափսոսում եմ, բայց ես արդեն ունեմ ամուսին։ Ինչո՞ւ հայրիկը քեզ այնպես չի սիրում։ Մայրիկի հետ դեռ կարելի է մի կերպ...

Օհ, սիրելիս։ Ես քո առաջ այնքան մանրամասն նկարագրեցի այդ պարոնին այն պատճառով, որ խլացնեմ իմ կարոտը։ Ես չեմ ապրում առանց քեզ, ես անդադար քեզ եմ տեսնում, լսում... Ես սպասում եմ քեզ, միայն թե ոչ մեզ մոտ, ինչպես դու ուզում էիր։ Երևակայիր, թե որքան ծանր և անհարմար կլիներ մեզ համար. իսկ գիտե՞ս, թե որտեղ էի ես քեզ գրում. այն անտառում... Օ՜հ, սիրելի՜ս։ Ինչպե՞ս եմ ես սիրում քեզ»։

XXIII

Կուրնատովսկու առաջին այցելությունից երեք շաբաթ անց Աննա Վասիլևնան, ի մեծ ուրախություն Ելենայի, տեղափոխվեց Մոսկվա, իր մեծ փայտաշեն տունը, որը գտնվում էր Պրեչիստենկիի մոտ, տունը սյուներով, սպիտակ քնարներով և պակներով յուրաքանչյուր պատուհանի վրա, վերնատնակով և հարմարություններով, փոքրիկ այգիով, ահագին կանաչ բակով, բակում ջրհոր և շան բունը ջրհորի մոտ։ Աննա Վասիլևնան երբեք այդքան վաղ չէր վերադարձել ամառանոցից, բայց այս տարին աշնանային առաջին ցրտերից սկսեց տառապել լինդուռուցքով։ Նիկոլայ Արտեմևիչը, իր կողմից վերջացնելով բժշկությունը, կնոջ կարոտն էր քաշում. մանավանդ որ Ավգուստինա Խրիստիանովնան գնացել էր հյուր իր ազգականուհու մոտ, Ռևել քաղաքը։ Մոսկվա էր եկել ինչ-որ արտասահմանյան ընտանիք, որը ցույց էր տալիս պլաստիկական դիրքեր des poses plastiques, որոնց նկարագրությունը «Московские ведомости» լրագրի մեջ՝ սաստիկ գրգռել էր Աննա Վասիլևնայի հետաքրքրությունը։ Մի խոսքով, ամառանոցում այլևս մնալը անհարմար դատվեց, և նույնիսկ, Նիկոլայ Արտեմևիչի ասելով, ավելորդ մնալը չէր կարելի համաձայնեցնել իր «նախասահմանումների» հետ։ Վերջին երկու շաբաթը շատ երկար թվացին Ելենային։ Կուրնատովսկին եկավ երկու անգամ, կիրակի օրերը. մյուս օրերը նա զբաղված էր. նա գալիս էր հատկապես Ելենայի համար, բայց ավելի խոսում էր Զոյայի հետ, որին նա շատ դուր էր եկել։ «Das ist ein Mann»[1] մտածում էր Զոյան ինքն իրեն, նայելով նրա արևառ առնական դեմքին, լսելով նրա ինքնահավան, ներողամիտ ճառերը։ Զոյայի կարծիքով՝ ոչ ոք չուներ այնպիսի հրաշալի ձայն, ոչ ոք չէր կարողանում այնպես հիանալի կերպով արտասանել «ես պատիվ ունեցա» կամ «ես շատ գոհ եմ»։ Ինսարովը չէր եղել Ստախովների մոտ, բայց Ելենան տեսավ նրան մի անգամ, գողտուկ, մի փոքրիկ անտառում Մոսկվա-գետի վրա, ուր նա նշանակել էր տեսակցություն։ Նրանք հազիվ կարողացան մի քանի խոսք ասել միմյանց։ Շուբինը Մոսկվա վերադարձավ Աննա Վասիլևնայի հետ, Բերսենևը մի քանի օր ուշ։

[1] Սա իսկական տղամարդ է (գերմ.)։

Ինսարովը, նստած իր սենյակում՝ երրորդ անգամ էր կարդում այն նամակները, որոնք ուղարկված էին Բուլղարիայից եկողների միջոցով. փոստով վախենում էին ուղարկել։ Նամակները շատ անհանգստություն էին պատճառել Ինսարովին։ Դեպքերը Արևելքում զարգանում էին արագ կերպով. ռուսաց զորքերը գրավել էին իշխանների տիրությունները, և այդ հանգամանքը հուզում էր մտքերը. փոթորիկն աճում էր, արդեն զգացվում էր մոտիկ, անխուսափելի պատերազմի հովը։ Զորս կողմը ծավալվում էր հրդեհը, և ոչ ոք չէր կարող նախատեսել, թե դեպի ո՞ւր կերթա նա, որտե՞ղ կանգ կառնի. հին վիրավորանքները, վաղեմի հույսերը—բոլորը շարժվեց։ Ինսարովի սիրտը սաստիկ խփում էր, նրա հույսերը ևս իրականանում էին։ «Բայց արդյո՞ք վաղ չէ, արդյո՞ք իզուր չէ»,— մտածում էր նա՝ ձեռքերը սեղմելով։ «Մենք դեռ պատրաստ չենք։ Բայց թող այդպես լինի։ Պետք է գնալ»։

Ինչ-որ բան թեթև կերպով աղմկեց դռան հետևում, դուռը արագ կերպով բացվեց, և սենյակ մտավ Ելենան։

Ինսարովը ամբողջովին դողաց, վազեց դեպի նա, ընկավ նրա առաջ ծնկաչոք, գրկեց նրա իրանը և իր գլուխը պինդ սեղմեց նրան։

— Ինձ չէի՞ր սպասում,— խոսեց Ելենան հազիվ շունչ քաշելով (նա արագ վազել էր սանդուղքով դեպի վեր)։— Սիրելիս, սիրելիս։—Նա իր երկու ձեռքերը դրեց նրա գլխին ու նայեց շուրջը։— Ահա թե դու որտեղ ես ապրում։ Ես քեզ շուտ գտա։ Քո բնակարանի տիրոջ աղջիկն ինձ առաջնորդեց։ Մենք երրորդ օրն է, որ տեղափոխվել ենք։ Ես ուզում էի գրել քեզ, բայց մտածեցի, որ ավելի լավ է ինքս գնամ։ Քեզ մոտ եկել եմ քառորդ ժամով։ Վեր կաց, փակիր դուռը։

Ինսարովը վեր կացավ, արագ փակեց դուռը, վերադարձավ Ելենայի մոտ և բռնեց նրա ձեռքերը։ Նա չէր կարողանում խոսել. ուրախությունը նրան խեղդում էր։ Ելենան

ժպտալով նայում էր նրա աչքերին... Նրանց մեջ այնքան երջանկություն կար... Ելենան ամաչեց։

— Սպասի՛ր,— ասաց նա՝ քնքշությամբ ձեռքերը հանելով նրա ձեռքերից,— թող գլխարկս հանեմ։

Նա արձակեց գլխարկի ժապավենները, դեն գցեց այն, ուսերից իջեցրեց թիկնոցը, ուղղեց մազերը և նստեց փոքրիկ, հնամաշ նստարանի վրա. Ինսարովը չէր շարժվում և նայում էր նրան կարծես դյուրված։

— Դե նստի՛ր,— խոսեց Ելենան, շարժրացնելով աչքերը և ցույց տալով իր կողքի տեղը։

Ինսարովը նստեց, բայց ոչ թե նստարանի վրա, այլ հատակին, նրա ոտների մոտ։

— Ա՛ռ, հանիր ձեռնոցներս,— ասաց Ելենան անհավասար ձայնով։ Նա ասրսափ էր զգում։

Ինսարովը սկսեց նրա ձեռնոցի կոճակները արձակել, հետո հանել մի ձեռնոցը. հանեց մինչև կեսը և շրթունքներով ագահաբար կպավ ձեռնոցի տակից սպիտակին տվող բարակ և քնքուշ դաստակին։

Ելենան ցնցվեց և ուզում էր հեռացնել Ինսարովին մյուս ձեռքով, բայց նա սկսեց համբուրել մյուս ձեռքը։ Ելենան ձեռքը քաշեց դեպի իրեն, Ինսարովը ետ գցեց գլուխը, Ելենան նայեց նրա դեմքին, ցած խոնարհվեց, և նրանց շրթունքները միացան...

Անցավ վայրկյանը... Ելենան դուրս պրծավ, վեր կացավ, շշնջաց՝ «Չէ՛, չէ՛», և արագ կերպով մոտեցավ գրասեղանին։

— Չէ՞ որ այստեղ ես տանտիրուհի եմ, ինձ համար քեզ մոտ գաղտնիք չպիտի լինին,— ասաց նա աշխատելով անհոգ երևալ, և իր մեջքը դարձնելով դեպի Ինսարովը։— Որքա՞ն թղթեր։ Սրանք ի՞նչ նամակներ են։

Ինսարովը կիտեց հոնքերը։

— Այդ նամակները,— ասաց նա վեր կենալով հատակից,— դու կարող ես կարդալ։

Ելենան շուռումուռ տվեց նամակները իր ձեռքում։

— Նրանք այնքան շատ են, այնքան մանր գրված, իսկ ես պիտի այս րոպեիս գնամ... Տերը նրանց հետ... Հո իմ մբցակից կնոջի՞ց չեն... Եվ նրանք ռուսերեն էլ չեն,— ավելացրեց նա՝ շուռ տալով բարակ թերթերը։

Ինսարովը մոտեցավ նրան և դիպավ նրա իրանին։ Ելենան հանկարծ շուռ եկավ դեպի նա, պայծառ դեմքով ժպտաց և հենվեց նրա ուսին։

— Այդ նամակները Բուլղարիայից են, Ելենա, բարեկամներս են գրում ինձ, նրանք կանչում են ինձ։

— Ա՞յժմ։ Այնտե՞ղ գնալ։

— Այո... այժմ։ Քանի դեռ ժամանակ կա, քանի գնալ կարելի է։

Ելենան հանկարծ իր երկու ձեռքերով գրկեց նրա շլինքը։— Դու հո կվերցնե՞ս ինձ քեզ հետ։

Ինսարովը սեղմեց նրան իր սրտին։

— Օ, իմ սիրելի աղջիկ, օ, իմ հերոսուհի, ինչպե՞ս դու արտասանեցիր այդ խոսքը։ Բայց արդյոք հանցանք չէ՞ իմ կողմից, անխելքություն չէ՞, ինձ, անտուն, միայնակ մարդուս համար, քարշ տալ քեզ ինձ հետ... Եվ այն էլ ո՞ւր...

Ելենան ձեռքով փակեց նրա բերանը։

— Սսս... թե չէ ես կբարկանամ և այլևս երբեք չեմ գա քեզ մոտ։ Մի՞թե ամեն ինչ դեռ չի վճռված, ամեն ինչ չի վերջացված մեր մեջ։ Մի՞թե ես քո կինը չեմ։ Մի՞թե կինը ամուսնուց բաժանվում է։

— Կանայք պատերազմի չեն գնում,— ասաց Ինսարովը տխրամած ժպիտով։

— Այո, երբ սրանք կարող են մնալ։ Բայց մի՞թե ես կարող եմ մնալ այստեղ։

— Ելենա, դու հրեշտակ ես... Բայց մտածի՛ր, ինձ, գուցե, հարկ կլինի մեկնել Մոսկվայից... երկու շաբաթ հետո։ Ես այլևս անկարող կլինեմ մտածել ոչ համալսարանական դասախոսությունների, ոչ աշխատանքներս վերջացնելու մասին։

— Ի՞նչ կա որ,— ընդհատեց Ելենան։— Դու պետք է շուտով գնա՞ս։ Ուզում ես, ես հենց այժմ, այս րոպեիս էլ, կմնամ քեզ մոտ, քեզ հետ ընդմիշտ և տուն չեմ վերադառնա։ Գնանք հենց այս րոպեին, ուզո՞ւմ ես...

Ինսարովը կրկնապատկված ուժով նրան իր գիրկն առավ։

— Որ այդպես է, թող ինձ պատժի աստված,— բացա-

կանչեց նա,— եթե ես վատ բան եմ անում։ Այսօրվանից մենք հավիտյանս միացած ենք։

— Ես մնո՞ւմ եմ,— հարցրեց Ելենան։

— Ո՛չ, իմ անարատ աղջիկ, ոչ, իմ գանձ։ Դու այսօր կվերադառնաս տուն, բայց պատրաստ եղիր։ Այս գործը չի կարելի միանգամից կատարել, պետք է լավ կշռադատել։ Հարկավոր են փող, անցագիր...

— Փող ես ունեմ,— ընդհատեց Ելենան,— ութսուն ռուբլի։

— Դե, դա շատ չէ,— նկատեց Ինսարովը,— բայց և այնպես պետք կգա։

— Ես կարող եմ գտնել, ես փոխարինաբար կվերցնեմ, ես կխնդրեմ մայրիկից... Ոչ, ես նրանից չեմ խնդրի... Կարելի է ժամացույցս ծախել... Ես ականջօղեր ունեմ, երկու ապարանջան, ժանյակներ...

— Բանը փողը չէ, Ելենա. անցագիրը, քո անցագիրը. ինչպե՞ս անենք։

— Այո, այդ ինչպե՞ս անենք։ Եվ անցագիրն անպատճա՞ռ հարկավոր է։

— Անպատճառ։

Ելենան ծիծաղեց։

— Ինչ միտս եկավ։ Հիշում եմ, ես դեռ փոքր էի... Մեզանից հեռացավ աղախինը։ Նրան բռնեցին, ներեցին, և նա այնուհետև երկար ապրեց մեզ մոտ... Բայց և այնպես ամենքը նրան անվանում էին փախստական Տատյանա։ Չէի կարծում ես այն ժամանակ, որ ինքս էլ, գուցե, փախստական կլինեմ, ինչպես նա։

— Ելենա, ինչպե՞ս չես ամաչում։

— Ի՞նչ է որ։ Իհարկե, ավելի լավ կլիներ գնալ անցագրով։ Բայց եթե անկարելի է...

— Այդ բոլորը մենք կհարթենք հետո, հետո, սպասիր,— ասաց Ինսարովը։— Թող միայն մի քիչ շրջահայաց լինեմ, մտածեմ։ Մենք ամեն ինչի մասին կխորհրդակցենք քեզ հետ, ինչպես հարկն է։ Իսկ փող ինձ մոտ էլ կա։

Ելենան ձեռքով ետ քաշեց իր ճակատի վրա կախված մազերը։— Օ՜, Դմիտրի, որքան ուրախալի կլինի մեզ համար ճանապարհ գնալ երկուսով։

— Այո,— ասաց Ինսարովը,— իսկ այնտեղ, ուր մենք կգնանք...

— Ի՞նչ կա որ...— ընդհատեց Ելենան,— մի՞թե երկուսով միասին մեռնելը նույնպես ուրախալի չէ։ Դե չէ, ինչու մեռնել։ Մենք կապրենք, մենք ջահել ենք։ Քանի՞ տարեկան ես։ Քսանվե՞ց։

— Քսանվեց։

— Իսկ ես՝ քսան։ Դեռ առջևում շատ ժամանակ կա։ Հը՞։ Դու ուզում էիր փախչե՞լ ինձանից։ Քեզ հարկավոր չէ՞ ռուսական սերը, ով բուլղար։ Տեսնենք այժմ ինչպես կազատվես ինձանից։ Բայց ի՞նչ կլիներ մեզ երկուսիս հետ, եթե ես այն ժամանակ չգայի քեզ մոտ։

— Ելենա, դու գիտես ինչն էր ինձ հարկադրում հեռանալ։

— Գիտեմ. դու սիրեցիր և վախեցար։ Բայց մի՞թե դու չէիր զգում, որ քեզ էլ են սիրում։

— Ազնվությամբ երդվում եմ, Ելենա, ո՛չ։

Ելենան արագ և անակնկալ կերպով համբուրեց նրան։

— Ահա հենց դրա համար էլ ես քեզ սիրում եմ։ Իսկ այժմ մնաս բարով։

— Դու այլևս չե՞ս կարող մնալ,— հարցրեց Ինսարովը։

— Ո՛չ, սիրելիս։ Կարծում ես, թե հե՞շտ էր մենակ դուրս գալ տանից։ Քառորդ ժամը վաղուց արդեն անցել է։— Նա հագավ թիկնոցը և գլխարկը։— Իսկ դու եկ մեզ մոտ վաղը երեկոյան։ Ո՛չ, հետևյալ օրը։ Մի քիչ լարված, ձանձրալի կլինի, բայց ինչ արած, գոնե կտեսնվենք։ Մնաս բարով։ Ինձ դուրս թող։— Ինսարովը վերջին անգամ գրկեց նրան։— Ահ, տես, կոտրեցիր շղթաս։ Օ՜, դու, իմ անշնորհք։ Բայց ոչինչ։ Ավելի լավ։ Ես կանցնեմ Կուզնեցկի կամուրջը, կտամ շղթան նորոգելու։ Եթե ինձ հարցնեն, կասեմ Կուզնեցկի կամուրջի վրա էի։— Ելենան բռնեց դռան կոթից։

— Ի դեպ, ես մոռացա քեզ ասել. մուսիո Կուրնատովսկին հավանորեն այս քանի օրերը ինձ առաջարկություն անի։ Բայց ես կասեմ նրան... ահա ինչ կանեմ։— Նա ձախ ձեռքի բթամատը դրեց քթի ծայրին և մյուս մատները խաղացրեց օդի մեջ։— Մնաս բարով։ Ցտեսություն։ Այժմ ես

ճանապարհը ճանաչում եմ... Իսկ դու ժամանակ մի՛ կորցրու...

Ելենան քիչ բաց արեց դուռը, ականջ դրեց, շուռ եկավ դեպի Ինսարովը, գլուխ տվեց և դուրս պրծավ սենյակից։

Մի րոպեի չափ կանգնած մնաց Ինսարովը փակված դռան առջև և նույնպես ականջ էր դնում։ Ցածրում բակ տանող դուռը թրխկաց։ Ինսարովը մոտեցավ բազմոցին, նստեց և փակեց աչքերը ձեռքերով։ Նրա հետ երբեք այդպիսի բան չէր պատահել։ «Ինչո՞վ արժանացա ես այսպիսի սիրո,— մտածում էր նա,— երազ չի՞ արդյոք սա»։

Բայց հափրուկի նուրբ հոտը, որ թողել էր Ելենան նրա աղքատիկ, մութ սենյակում, հիշեցնում էր օրիորդի այցելության մասին։ Դրա հետ միասին, թվում էր, թե դեռ մնում էին օդի մեջ նաև երիտասարդ ձայնի հնչյունները, և թեթև, երիտասարդ քայլերի աղմուկը, և մատաղ, կուսական մարմնի ջերմությունն ու թարմությունը։

XXIV

Ինսարովը վճռեց սպասել էլ ավելի դրսևորման տեղեկությունների, իսկ ինքը սկսեց պատրաստվել ճանապարհվելու։ Այդ շատ դժվար գործ էր։ Իսկապես, նրա հանար առանձին արգելքներ չկային. հարկավոր էր միայն անցագիր պահանջել, բայց ի՞նչ անել Ելենայի հետ։ Նրա համար օրինական ճանապարհով անցագիր ձեռք բերել անհնարին էր։ Պատկվել նրա հետ ծածուկ և ապա ներկայանալ նրա ծնողներին... «Ներանք այդ ժամանակ մեզ բաց կթողնեն,— մտածում էր նա։— Իսկ եթե բաց չթողնե՞ն։ Մենք, այնուամենայնիվ, կգնանք։ Իսկ եթե նրանք գանգատվե՞ն... Եթե... Ո՛չ, ավելի լավ է աշխատել մի որևէ անցագիր ձեռք բերել»։

Նա վճռեց խարհուրդ անել (իհարկե, ոչ ոքի անունը չտալով) իր մի ծանոթի հետ, մի պաշտոնաթող, թե պաշտոնից հեռացված դատախազի հետ, որը մի փորձված և ճարպիկ՝ ամեն տեսակ գաղտնի գործերում շատ վարպետ մարդ էր։ Այդ պատվելի մարդն ապրում էր ոչ մոտիկ. Ինսարովը մի ամբողջ ժամ խարխուլ կառքով հազիվ-հազ հասավ նրա բնակարանին և այն էլ տանը չգտավ նրան. իսկ

վերադարձին էլ նա միանգամ ոտքորները թրջվեց հանկարծահաս հորդառատ անձրևից։ Մյուս առավոտ Ինսարովը, չնայած գավակաս սառակ գլխացավին, նորից գնաց պաշտոնաթող դատախազի մոտ։ Պաշտոնաթող դատախազը լսեց նրան ուշադրությամբ, քթախոտ քաշելով մի տուփից, որը զարդարված էր լիակուրծք հավերժահարսի պատկերով, և ծուռծուռ նայելով հյուրին իր խորամանկ, մուլնպես քթախոտի գույն ունեցող աչքերով, լսեց և պահանջեց «ավելի պարզ փաստական տեղեկություններ տալ» և, նկատելով, որ Ինսարովը չի հոժարում մանրամասնությունների մեջ մտնել (նա զոռով էր սիրտ արել դատախազի մոտ գալու), բավականացավ խորհուրդ տալով, որ ամենից առաջ զրահավորվի «հոնորարով» և խնդրեց գալ մի ուրիշ անգամ, «երբ ձեր մեջ,— ավելացրեց նա, քթախոտ քաշելով բաց տուփից,— ավելի կշատանա վստահությունը և կպակասի անվստահությունը»։ «Իսկ անցագիրը,— շարունակեց նա կարծես ինքն իրեն,— մարդու ձեռքի գործ է, դուք, օրինակ, գնում եք. ով գիտե, Մարիա Բրեդիցինա եք դուք, թե Կարոլինա Ֆոդելմեյերա Ջղվանքի զբաղում շարժվեց Ինսարովի մեջ, բայց նա շնորհակալություն հայտնեց դատախազին և խոստացավ մոտ օրերս նորից գալ։

Նույն երեկոյան նա գնաց Ֆատխուլինների մոտ։ Աննա Վասիլևնան զիմավորեց նրան քաղաքավարությամբ, թեթև կեղծով հանդիմանեց նրան, որ բոլորովին իրեն մոռացել է, և գանգատվեց, որ նրա գուցեր փոած է՝ ուղեկցավ, թե ինչպես է նրա առողջությունը։ Նիկոլայ Վերսենևիչը մի քանի անգամ շտապեց նրան, միայն նստեց նրան մի մատանի անփույթ հետաքրքրությամբ։ Շուտինը սառը վարվեց նրա հետ, բայց Ելենան ջերմաջրեց նրան։ Նա սպասում էր Ինսարովին. նրա համար հաստատ էր այն փոքր զգեստը, որ կրում էր նա մատուռում անցած ունեցած տեսակցության օրը. բայց Ելենան այնպես հանդիսաբար տղղանեց նրան և այնպես ափրալիր ու անհոգ ուրախ էր, որ նայելով նրան, ոչ ոք չէր կասկածի, թե այդ աղջիկը ճակատագրին սրտանց վճռված է, և թե նրան սիրո ծածուկ գիտակցությունը միայն տալիս էր գեղեցկություն նրա դիմագծերին, թեթևություն և չքնաղություն նրա շարժումներին։ Նա թեյ էր լցնում Ջոյայի տեղ, հանաքներ էր

անում, շատախոսում էր. նա գիտեր, որ իրեն պիտի դիտեր Շուբինը, որ Ինսարովը չի կարողանա դիմակ հագնել, չի կարողանա անտարբեր ձևանալ, և զինվեց վաղօրոք։ Եվ Ելենան սխալված չէր... Շուբինը աչք չէր հեռացնում նրանից, իսկ Ինսարովը շատ լուռ էր և ամպած ամբողջ երեսը։ Ելենան այն աստիճան իրեն երջանիկ էր զգում, որ ուզեց քիչ նրա հոգու հետ խաղալ։

— Հը, ինչպե՞ս է,— հարցրեց նա Ինսարովին հանկարծ,— ձեր ծրագիրը առա՞ջ է գնում։

Ինսարովը շփոթվեց։

— Ի՞նչ ծրագիր,— ասաց նա։

— Մոռացե՞լ եք,— պատասխանեց Ելենան, ծիծաղելով նրա երեսին. միայն Ինսարովը կարող էր հասկանալ այդ երջանիկ ծիծաղի նշանակությունը,— ձեր բուլղարական քրեստոմատիան ռուսների համար։

— Quelle bourde[1],— ատամների արանքից փնթփնթաց Նիկոլայ Արտեմևիչը։

Զոյան նստեց դաշնամուրի առաջ, Ելենան հագիվ նկատելի ուսը թոթվեց և Ինսարովին աչքով ցույց տվեց դեպի դուռը, կարծես արձակելով նրան, որպեսզի տուն գնա։ Հետո նա զատ-զատ երկու անգամ մատը դիպցրեց սեղանին և նայեց նրան։ Ինսարովը հասկացավ, որ նա նշանակում է տեսակցություն երկու օրից հետո, և Ելենան արագ ժպտաց, երբ տեսավ, որ նա իրեն հասկացել է։ Ինսարովը վեր կացավ և սկսեց հրաժեշտ տալ. նա իրեն առողջ չէր զգում։ Նկավ Կուրնատովսկին։ Նիկոլայ Արտեմևիչը տեղից վեր թռավ, աջ ձեռքը բարձրացրեց գլխից վերև և փափուկ իջեցրեց ավագ քարտուղարի ափի վրա։ Ինսարովը էլի մի քանի րոպե մնաց, որ նայի իր հակառակորդին։ Ելենան ծածուկ, խորամանկությամբ գլուխը շարժեց, տանտերը հարկավոր չհամարեց նրանց ներկայացնել իրար, և Ինսարովը դուրս գնաց, վերջին անգամ հայացք փոխանակելով Ելենայի հետ։ Շուբինը մտածեց, մտածեց և, սաստիկ տաքացած՝ վիճեց Կուրնատովսկու հետ մի իրավաբանական հարցի մասին, որից ինքը ոչինչ չէր հասկանում։

[1] Ինչ անմտություն (ֆրանս.)։

Ինսարովը ամբողջ գիշերը չքնեց և առավոտյան իրեն վատ էր զգում. սակայն նա զբաղվեց կարգի բերելով իր թղթերը և նամակներ գրելով, բայց նրա գլուխը ծանր էր և խառնափնթոր։ Ճաշի մոտ նա տաքության մեջ ընկավ և ոչինչ չկարողացավ ուտել։ Տաքությունը արագ կերպով բարձրացավ իրիկնադեմին, նրա բոլոր անդամները կոտրատվում էին և տանջում էր գլխացավը։ Ինսարովը պառկեց այն իսկ փոքրիկ բազմոցի վրա, ուր անցած օրը նստած էր Ելենայի հետ։ Նա մտածում էր. «Տեղն է, որ ես պատրժված եմ. ինչո՞ւ ախր ես քարշ եկա այն հին խաբեբայի մոտ», և փորձեց քնել... Բայց տկարությունն արդեն տիրել էր նրան։ Սարսափելի ուժով սկսեցին զարկել նրա երակները. տենդային սաստկությամբ բորբոքվում էր նրա արյունը, մտքերը սկսում էին պտույտ գալ թռչունների նման։ Նա ընկավ ինքնամոռացության մեջ։ Ջարդված նա ընկած էր երեսի վրա, և հանկարծ նրան երևացին տեսիլներ. մեկը նրա վրա կամաց քրքջում էր և շշնջում. նա զորով բաց արեց աչքերը. ճրագի լույսը դանակի պես ծակեց աչքերը... Ի՞նչ է սա. ծեր դատախազը նրա առջևն է, խալաթը հագին, ինչպես տեսել էր նախընթաց օրը... «Կարոլինա Ֆոդելմեյեր»,— փնթփնթում էր անատամ բերանը։ Ինսարովը նայում է, իսկ ծերունին լայնանում է, ուռչում, մեծանում, նա այլևս մարդ չէ, նա ծառ է... Ինսարովը պիտի մագլցի վերձիգ ճյուղերով։ Նա կպչում է ճյուղերին, կրծքի վրա ընկնում է սրածայր քարին, իսկ Կարոլինա Ֆոդելմեյերը նստել է ծալապատիկ, մանրավաճառ կնոջ կերպարանքով և թոթովում է՝ «կարկանդակներ, կարկանդակներ, կարկանդակներ», իսկ այնտեղ հոսում է արյունը, և սրերը անտանելի շողշողում են... Ելենա. և ամեն ինչ չքացավ բոսորագույն քառսում։

XXV

— Ձեզ մոտ եկավ մի ինչ-որ մարդ, ով գիտե, փականագործ էր, թե ինչ,— ասում էր մյուս երեկոյան Բերսենևին նրա ծառան, որ աչքի էր ընկնում իր պարոնի հետ խիստ

վարվեցողությամբ և մոքի հոռետես ուղղությամբ,— ուզում էր ձեզ տեսնել։

— Կանչեք,— ասաց Բերսենևը։

Մտավ «փարկանագործը»։ Բերսենևը ճանաչեց նրան. դերձակն էր, այն բնակարանի տերը, ուր ապրում էր Ինսարովը։

— Ի՞նչ կա,— հարցրեց նա։

— Ես եկա ձերդ ողորմածության մոտ,— սկսեց դերձակը, դանդաղ փոխելով ոտները կանգնած տեղը և ժամանակ առ ժամանակ շարժելով աջ ձեռքը, որի վերջին երեք մատներով բռնել էր հանդերձի թեզանիքը։— Մեր անվորը, ով է նրան հագցնում, շատ հիվանդ է։

— Ինսա՞րովը։

— Այո, մեր տնվորը։ Ինչ իմանաս, դեռ երեկ առավոտվանից ոտի վրա էր, երեկոյան միայն խմելու ջուր ուզեց, մեր տանտիրուհին ջուր տարավ, իսկ գիշերը զառանցում էր, մենք լսում էինք, որովհետև բարակ միջնապատ է. իսկ այսօր առավոտյան լեզուն կապվել է։ Ընկած է անշարժ, իսկ տաքությունը՝ աստված ցույց չտա։ Ես մտածեցի, ով գիտե, մեկ էլ տեսար մեռավ. ոստիկանության պետք է իմաց տալ։ Որովհետև մենակ է նա. բայց տանտիկինն ինձ ասում է. «Գնա այն տնեցի մոտ. որի մոտ նա ամառանոց էր վարձել. գուցե քեզ մի բան կասի, կամ ինքը կգա...»։ Ահա ես էլ եկա ձեզ մոտ, որովհետև մենք չենք կարող, այսինքն։

Բերսենևը վերցրեց գլխարկը, մի ռուբլիանոց կոխեց դերձակի ձեռքը և իսկույն թռավ նրա հետ Ինսարովի բնակարանը։

Նա տեսավ Ինսարովին պառկած բազմոցի վրա, ուշաթափ, շորերը չհանած։ Նրա դեմքը սարսափելի կերպով փոխվել էր։ Բերսենևը իսկույն հրամայեց դերձակին և նրա կնոջը հանել նրա շորերը և պառկեցնել անկողնում, իսկ ինքը վազեց բժշկի մոտ և բերեց նրան։ Բժիշկը միանգամից նշանակեց տզրուկներ, բանկաներ, սնդկաքլոր և հրամայեց արյուն առնել։

— Դրությունը վտանգավո՞ր է,— հարցրեց Բերսենևը։

— Այո՛, շա՛տ,— պատասխանեց բժիշկը։— Շատ սաստիկ բորբոքում թոքերի մեջ. պերիպնևմոնիան սաստիկ զարգացման մեջ է, գուցե անցել է ուղեղն էլ, իսկ հիվանդը

երիտասարդ է։ Նրա ուժերը այժմ ուղղված են իր դեմ։ Ուշ եք իմաց տվել, սակայն մենք ամեն ինչ կանենք, ինչ պահանջում է գիտությունը։

Բժիշկը դեռ ինքն էլ երիտասարդ էր և հավատում էր գիտությանը։

Բերսենևը մնաց այդտեղ գիշերելու։ Դերձակն ու իր կինը բարի մարդիկ դուրս եկան և նույնիսկ ժրաջան, հենց որ գտնվեց մի մարդ, որն ասում էր նրան, թե ինչ պետք է անել։ Եկավ ֆելդշերը, և սկսվեցին բժշկական խոշտանգումները։

Առավոտյան մոտ Ինսարովը մի քանի րոպե զարթնեց, ճանաչեց Բերսենևին ու հարցրեց. «Ես, կարծեմ, հիվանդ եմ», նայեց իր շուրջը ծանր հիվանդի բութ և դալուկ տարակուսանքով ու էլի ընկավ ինքնամոռացության մեջ։ Բերսենևը գնաց տուն, շորերը փոխեց, մի քանի գրքեր վերցրեց հետը և վերադարձավ Ինսարովի բնակարանը։ Նա վճռեց բնակվել նրա մոտ գեթ մի քանի ժամանակ։ Նա շրջապատեց հիվանդի մահճակալը վարագույրներով, իսկ իր համար բազմոցի մոտ մի փոքրիկ տեղ պատրաստեց։ Օրը ուրախ և շուտ չանցավ։ Բերսենևը դուրս գնաց միայն ճաշելու համար։ Հասավ երեկոն։ Նա վառեց ճրագը, որ ուներ լուսամփոփ և սկսեց կարդալ։ Շուրջը ամեն ինչ հանդարտ էր։ Միջնապատի մյուս կողմում, բնակարանի տերերի մոտ լսվում էր կամ զսպված շշնջոց, կամ հորանջում, կամ հառաչանք... Մեկը նրանցից փոշտաց, և նրան փսփսոցով հայհոյեցին, շիրմայի հետևում լսվում էր ծանր և անհավասար շնչառություն, որ ժամանակ առ ժամանակ ընդհատվում էր մի կարճ տնքոցով կամ գլուխը բարձի վրա այս ու այն կողմ գցելով... օտարոտի մտքեր էին ծագում Բերսենևի մեջ։ Նա գտնվում էր մի մարդու սենյակում, որի կյանքը կախված էր մազից, մի մարդու, որին, նա գիտեր, սիրում էր Ելենան... Հիշեց նա այն գիշերը, երբ Շուբինը հասավ իր հետևից և հայտնեց, թե Ելենան սիրում է նրան, նրան, այսինքն՝ Բերսենևին։ Իսկ այժմ... «Հիմա ի՞նչ անեմ ես»,— հարցնում էր նա ինքն իրեն։ «Տեղեկացնե՞մ Ելենային նրա հիվանդության մասին, թե՞ սպասեմ։ Այս լուրը ավելի տխուր կլինի, քան այն, որ ես ինքս հաղորդեցի նրան մի ժամանակ. տարօրի-

նակ բան է, ինչպես ճակատագիրը միշտ ինձ դնում է նրանց միջև իբրև երրորդ անձ։ Նա վճռեց, որ ավելի լավ է սպասել։ Նրա հայացքն ընկավ սեղանին, որը ծածկված էր թղթերի կույտերով։ «Կկատարի՞ նա իր մտահղացումները,— մտածում էր նա,— մի՞թե բոլորը կշքանա»։ Եվ նա ափսոսում էր այդ շահել, խորտակվող կյանքը, և նա իրեն խոսք տվեց փրկել նրան...

Գիշերը լավ գիշեր չէր։ Հիվանդը շատ էր զառանցում։ Մի քանի անգամ վեր կացավ Բերսենևը իր բազմոցից, ոտների մատների վրա մոտեցավ անկողնին և տխրությամբ ականջ էր դնում նրա անկապ թոթովանքին։ Միայն մի անգամ Ինսարովը արտասանեց հանկարծակի պարզությամբ. «Ես չեմ ուզում, ես չեմ ուզում, դու չպետք է...»։ Բերսենևը ցնցվեց և նայեց Ինսարովին. նրա դեմքը, տանջալի և միևնույն ժամանակ մեռնողի, բոլորովին անշարժ էր, և ձեռքերն ընկած էին թուլացած... «Ես չեմ ուզում,— կրկնեց նա հազիվ լսելի։

Բժիշկը եկավ առավոտյան, գլուխը շարժեց և նոր դեղեր նշանակեց։ «Դեռ ճգնաժամը հեռու է»— ասաց նա գնալիս դնելով։

— Իսկ ճգնաժամից հետո՞,— հարցրեց Բերսենևը։

— Ճգնաժամից հետո՞։ Ելքը երկու տեսակ է լինում auf Caesar, aut nihil[1]։

Բժիշկը գնաց։ Բերսենևը մի քանի անգամ անցուդարձ արեց փողոցում. նրան հարկավոր էր մաքուր օդ։ Նա վերադարձավ և վերցրեց գիրքը։ Ռաումերը նա վաղուց էր վերջացրել, այժմ ուսումնասիրում էր Գրոտը։

Հանկարծ դուռը հանդարտ ճռռաց և զգուշությամբ ներս մտավ բնակարանի տիրոջ աղջկա գլուխը, որ ծածկված էր սովորականի պես ծանր թաշկինակով։

— Այստեղ է,— ասաց նա կիսաձայն,— այն աղջիկը, որ այն ժամանակ ինձ տասը կոպեկ...

Դերձակի աղջկա գլուխը հանկարծ թաքնվեց և նրա փոխարեն երևաց Ելենան։

Բերսենևը տեղից վեր թռավ խայթվածի պես. բայց Ելենան չշարժվեց, չճչաց... Կարծես նա ամեն ինչ հասկացավ մի ակնթարթում։ Սարսափելի գունատությունը ծածկեց նրա դեմքը, նա մոտեցավ շիրմային, նայեց նրա հետևը, ձեռքերով մի շարժում գործեց և քարացավ։ Մի ակնթարթ ևս, և նա կընկներ Ինսարովի վրա, բայց Բերսենևը կանգնեցրեց նրան։

— Ի՞նչ եք անում,— ասաց նա դողացող փսփսոցով,— դուք նրան կարող եք սպանել։

Ելենան երերաց։ Բերսենևը մոտեցրեց նրան բազմոցին և նստեցրեց։

Ելենան նայեց նրա դեմքին, հետո շափեց նրան մի հայացքով, հետո աչքերը հառեց հատակին։

— Նա մեռնո՞ւմ է,— հարցրեց Ելենան այնպես սառնությամբ և հանդարտ, որ Բերսենևը վախեցավ։

— Ի սեր աստծո, Ելենա Նիկոլաևնա,— սկսեց նա,— ի՞նչ եք այդպես... Նա հիվանդ է, ճիշտ է, և բավականին վտանգավոր... Բայց մ ե ն ք նրան կփրկենք. սրա համար ես երաշխավորում եմ։

— Նա գիտակցությունը կորցրե՞լ է,— հարցրեց Ելենան նույն ձևով, ինչպես առաջին անգամ։

— Այո՛, նա այժմ ինքնամոռացության մեջ է... Այդպես է լինում այդ հիվանդությունների սկզբում, բայց դա ոչինչ նշանակություն չունի, ոչինչ, հավատացնում եմ ձեզ։ Ջուր խմեցեք։

Ելենան բարձրացրեց իր աչքերը, և Բերսենևը հասկացավ, որ նա չէր լսում իր տված պատասխանները։

— Եթե նա մեռնի,— ասաց նա միշտ միևնույն ձայնով,— ես էլ կմեռնեմ։

Ինսարովը այդ միջոցին թեթև կերպով հառաչեց. Ելենան դողաց, բռնեց իր գլուխը, հետո սկսեց արձակել գլխարկի ժապավենները։

— Այդ ի՞նչ եք անում,— հարցրեց նրան Բերսենևը։

Նա չպատասխանեց։

— Ի՞նչ եք անում,— կրկնեց Բերսենևը։

— Ես մնում եմ այստեղ։

— Ինչպե՞ս... երկա՞ր ժամանակով։

[1] Կամ՝ Կեսար, կամ՝ ոչինչ (լատին.)։

— Չգիտեմ, գուցե ամբողջ օրը, գիշերը, միշտ... չգիտեմ։

— Ի սեր աստծո, Ելենա Նիկոլաևնա, ուշքի եկեք։ Ես, իհարկե, ոչ մի կերպ չէի կարող սպասել, թե կտեսնեմ ձեզ այստեղ, բայց, այնուամենայնիվ, ես... ենթադրում եմ, որ դուք կարճ ժամանակով եք մտել այստեղ։ Հիշեցեք, տանը կիմանան...

— Եվ ի՞նչ։

— Ձեզ կորոնեն... Ձեզ կգտնեն...

— Եվ ի՞նչ։

— Ելենա Նիկոլաևնա... Դուք տեսնում եք... Ինսարովը այժմ ձեզ պաշտպանել չի կարող։

Ելենան գլուխը կախ գցեց, կարծես մտածմունքի մեջ ընկավ, մոտեցրեց թաշկինակը շրթունքներին, և ջղաձգական հեկեկանքները ցնցող ուժով, հանկարծ դուրս ժայթքեցին նրա կրծքից... Նա երեսն ի վայր ընկավ բազմոցի վրա, աշխատում էր խլացնել հեկեկանքները, բայց նրա ամբողջ մարմինը թպրտում էր, ինչպես նոր բռնված թռչուն։

— Ելենա Նիկոլաևնա... ի սեր աստծո...— կրկնում էր Բերսենևը, խոնարհված նրա վրա։

— Հը՞, ի՞նչ է,— հանկարծ լսվեց Ինսարովի ձայնը։

Ելենան ուղղվեց տեղում, իսկ Բերսենևը քարացել, մնացել էր... Քիչ սպասելով, նա մոտեցավ անկողնին։ Ինսարովի գլուխը առաջվա նման թույլ ընկած էր բարձի վրա. աչքերը փակված էին։

— Նա զարթնում է,— շշնջաց Ելենան։

— Վարժեմ,— պատասխանեց Բերսենևը,— բայց դա ոչինչ, միշտ այդպես է լինում, մանավանդ որ...

— Ի՞նչ նա տվաբացավ,— ընդհատեց Ելենան։

— Երեկ չէ անցյալ օրը։ Երեկվանից ես այստեղ եմ։ Վստահ եղեք ինձ վրա, Ելենա Նիկոլաևնա։ Ես չեմ հեռանա ներսից։ Բոլոր միջոցները կգործադրվեն։ Եթե հարկավոր լինի, մենք բժշկական համախորհուրդ կհրավիրենք։

— Նա կմեռնի առանց ինձ,— բացականչեց Ելենան, ձեռքերը կոտրատելով։

— Ես խոսք եմ տալիս ամեն օր հաղորդել ձեզ հիվանդության ընթացքի մասին, և եթե վրա հասնի իսկական վտանգը...

— Երդվեցեք, որ դուք իսկույն մարդ կուղարկեք իմ հետևից, երբ էլ լինի, ցերեկը, գիշերը, երկտող գրեցեք ուղղակի ինձ... Այժմ ինձ համար միևնույն է։ Դուք լսո՞ւմ եք, խոստանո՞ւմ եք այդպես անել։

— Խոստանում եմ աստծո առաջ։

— Երդվեցեք։

— Երդվում եմ։

Ելենան հանկարծ բռնեց նրա ձեռքը և, նախքան նա կարողացավ ետ քաշել ձեռքը, Ելենան իր շրթունքները սեղմեց նրան։

— Ելենա Նիկոլաևնա... Ի՞նչ եք անում,— թոթովեց Բերսենևը։

— Ոչ... ոչ... հարկավոր չէ... — արտասանեց Ինսարովը ցածրաձայն և ծանր հառաչեց։

Ելենան մոտեցավ շիրմային, թաշկինակը սեղմեց ատամներով և երկար-երկար նայում էր հիվանդին։ Անխոս արտասուքները հոսում էին նրա այտերի վրայով։

— Ելենա Նիկոլաևնա,— ասաց նրան Բերսենևը,— նա կարող է ուշքի գալ, ճանաչել ձեզ, աստված գիտե, լա՞վ կլինի դա։ Եվ, բացի դրանից, ես ժամ առ ժամ սպասում եմ բժշկին...

Ելենան վերցրեց պխարկը բազմոցից, դրեց գլխին և կանգ առավ։ Նրա աչքերը տխուր թափառում էին սենյակի մեջ։ Թվում էր, թե նա հիշում էր...

— Ես չեմ կարող հեռանալ,— արտասանեց նա վերջապես։

Բերսենևը սեղմեց նրա ձեռքը։

— Հավաքեցեք ձեր ուժերը,— ասաց նա,— հանգստացեք. դուք թողնում եք նրան իմ խնամքին։ Ես այսօր երեկոյան կգամ ձեզ մոտ։

Ելենան նայեց նրան ու ասաց.

— Օ՜, իմ լավ բարեկամ,— հեկեկաց ու դուրս վազեց։

Բերսենևը կոթնեց դռներին։ Մի վշտալի և գաղտնի զգացմունք, որ զուրկ չէր թեթև-որ օտարատի ուրախությունից,

ճնշում էր նրա սիրտը։ «Իմ լավ բարեկամ», մտածեց նա, և վեր քաշեց ուսը։

— Ո՞վ է այստեղ,— լսվեց Ինսարովի ձայնը։

Բերսենևը մոտեցավ նրան։

— Ես եմ այստեղ, Դմիտրի Նիկանորովիչ։ Ի՞նչ եք ուզում։ Ինչպե՞ս եք ձեզ զգում։

— Մենա՞կ,— հարցրեց հիվանդը։

— Մենակ։

— Իսկ նա՞։

— Ո՞վ նա,— համարյա վախեցած հարցրեց Բերսենևը։

Ինսարովը լռեց։

— Հափրուկը,— շշնջաց նա, և նրա աչքերը նորից փակվեցին։

XXVI

Ինսարովը ամբողջ ութ օր կյանքի և մահվան մեջ էր գտնվում։ Բժիշկը գալիս էր անդադար, հետաքրքրվելով, գարձյալ իբրև երիտասարդ մարդ, ծանր հիվանդով։ Շուբինը լսեց Ինսարովի վտանգավոր դրության մասին և այցելեց նրան. երևացին Ինսարովի հայրենակիցները՝ բուլղարները. նրանց թվում Բերսենևը ճանաչեց այն երկու տարօրինակ կերպարանքները, որոնք նրա զարմանքն էին գրգռել իրենց անակնկալ այցելությամբ ամառանոցում. ամենքն անկեղծ ցավակցություն էին հայտնում, մի քանիսը առաջարկում էին Բերսենևին՝ փոխարինել նրան հիվանդի անկողնի մոտ, բայց նա չէր համաձայնում, հիշելով Ելենային տված խոստումը։ Նա ամեն օր տեսնում էր Ելենային և թաքուն հայտնում էր նրան, երբեմն խոսքերով, երբեմն փոքրիկ տոմսակով, հիվանդության ընթացքի բոլոր մանրամասնությունները։ Սրտի որպիսի անձկությամբ էր Ելենան սպասում նրան, ինչպե՞ս էր նա լսում Բերսենևին և հարցուփորձ անում։ Նա ինքը շարունակ ձգտում էր դեպի Ինսարովը, բայց Բերսենևն աղաչում էր չանել այդ բանը. Ինսարովը քիչ էր մենակ լինում։ Առաջին օրը, երբ իմացավ Ինսարովի հիվանդանալը, ինքն էլ հազիվ չհիվանդացավ։ Հենց որ վերադարձավ Ինսարովի մոտից, փակվեց իր սենյակում. բայց նրան ճաշի կանչեցին, նա մտավ սեղանատունը մի այնպիսի գեմ-

քով, որ Աննա Վասիլևնան վախեցավ և ուզեց անպատճառ պառկեցնել նրան անկողնում։ Ելենային սակայն հաջողվեց կոտրել իրեն։ «Եթե նա մեռնի, կրկնում էր նա, ես էլ չեմ լինի»։ Այս միտքը նրան հանգստացրեց և ուժ տվեց անտարբեր երևալու։ Ասենք ոչ ոք նրան շատ չէր անհանգստացնում։ Շուբինը աշխատում էր մոլեգնությամբ. Զոյան անձնատուր էր եղել մելանխոլիային և պատրաստվում էր կարդալ Վ ե ր թ ե ր ը. Նիկոլայ Արտեմևիչը շատ անբավական էր «դպրոցականի» հաճախակի այցելություններով, մանավանդ որ նրա «դիտավորությունները» Կուրնատովսկու վերաբերմամբ չափազանց ծանր էին առաջ գնում. գործնական ավագ քարտուղարը տարակուսանքի մեջ էր և սպասում էր. Ելենան նույնիսկ շնորհակալություն չէր հայտնում Բերսենևին. կան ծառայություններ, որոնց համար ծանր և ամոթալի է շնորհակալություն հայտնել։ Միայն մի անգամ, չորրորդ տեսակցության ժամանակ (Ինսարովը շատ վատ էր անցկացրել գիշերը, բժիշկն ակնարկել էր համախորհուրդի մասին), միայն այդ տեսակցության միջոցին նա հիշեցրեց Բերսենևին նրա երդումի մասին, «որ այդպես է՝ գնանք»,— ասաց նա Ելենային։ Սա վեր կացավ և ուզում էր գնալ հագնվելու։ «Ոչ,— ասաց Բերսենևը,— սպասեք մինչև վաղը»։ Իրիկնադեմին Ինսարովը քիչ թեթևացավ։

Ութ օր շարունակվեց այս տանջանքը։ Ելենան հանգիստ էր երևում, բայց ոչինչ չէր կարողանում ուտել, գիշերները չէր քնում։ Մի բութ ցավ նստել էր նրա բոլոր անդամների մեջ. մի ինչ-որ չոր, այրող ծուխ լցրել էր նրա գլուխը։ «Մեր օրիորդը ճրագի պես հալվում է»,— ասում էր նրա մասին նրա աղախինը։

Վերջապես, իններորդ օրը, ճգնաժամն անցավ։ Ելենան նստած էր հյուրասենյակում, Աննա Վասիլևնայի մոտ և, ինքն էլ չհասկանալով, թե ինչ է անում, կարդում էր նրա համար «Московские ведомости»։ Բերսենևը ներս մտավ։ Ելենան նայեց նրան (ինչպես արագ և երկչոտ, թափանցիկ ու հուզված էր լինում նրա առաջին հայացքը, որ ամեն անգամ գցում էր Բերսենևի վրա) և իսկույն իմացավ, որ նա բարի լուր է բերել. Ելենան վեր կացավ նրան դիմավորելու։

— Գիտակցությունը վերականգնվել է, նա փրկված է, մի շաբաթից հետո լրիվ առողջ կլինի,— շշնջաց Բերտենևը։

Ելենան մեկնեց ձեռքերը, կարծես հեռացնելով հարվածը, և ոչինչ չասաց, միայն նրա շրթունքները դողացին և աղ գույնը տարածվեց նրա ամբողջ դեմքի վրա։ Բերտենևը սկսեց խոսել Աննա Վասիլևնայի հետ, իսկ Ելենան գնաց իր սենյակը, ծնկների վրա ընկավ և սկսեց աղոթել, շնորհակալություն հայտնել աստծուն... Թեթև, չինչ արտասուքները թափվեցին նրա աչքերից։ Նա հանկարծ զգաց ծայրահեղ հոգնածություն, դրեց գլուխը բարձի վրա, շշնջաց «խնայեմ Անգրեյ Պետրովիչ» և իսկույն քնեց խոնավ թերթերությունքներով և այտերով։ Նա վազուց էր, ինչ չէր քնել և լաց չէր եղել։

XXVII

Բերտենևի խոսքերը կատարվեցին, բայց մասամբ միայն. վտանգն անցավ, բայց Ինսարովի ուժերը դանդաղ էին վերականգնվում, և բժիշկը խոսում էր ամբողջ օրգանիզմի խոր և ընդհանուր ցնցման մասին։ Թեև այդպես, հիվանդը թողեց անկողինը և սկսեց ման գալ սենյակում։ Բերտենևը փոխվեց իր բնակարանը, բայց ամեն օր մտնում էր իր, գնում թուլ բաղեկամի մոտ և ամեն օր, առավոտվա պես, լուր էր տալիս Ելենային նրա առողջական վիճակի մասին։ Ինսարովը չէր համարձակվում գրել Ելենային, և միայն կողմնակի կերպով, Բերտենևի հետ ունեցած խոսակցությունների մեջ, ակնարկներ էր անում նրա մասին. իսկ Բերտենևը, առանց անուղղակիությամբ, պատմում էր նրան Սառավինների ապրած իր ապրելությունների մասին, աշխատելով սակայն հասկացնել տալ նրան, որ Ելենան շատ վշտացած էր և այժմ նա հանգստացել է։ Ելենան նույնպես չէր գրում Ինսարովին. նրա ուղեղում այժմ ուրիշ բան կար։

Մի անգամ Բերտենևը նոր էր հաղորդել նրան ուրախ դեմքով, թե բժիշկը թույլ է տվել Ինսարովին կտրիճ ուտել և թե նա, երևի, շուտով դուրս կգա, Ելենան մտածմունքի մեջ ընկավ, գլուխը կախ գցեց...

— Գուշակեցեք, թե ինչ եմ ուզում ասել ձեզ,— խոսեց նա։ Բերտենևը շփոթվեց։ Նա հասկացավ Ելենային։

— Երևի,— ասաց նա, նայելով մի կողմ,— դուք կամենում եք ինձ ասել, թե ուզում եք տեսնել նրան։

Ելենան կարմրեց և հազիվ լսելի ձայնով արտասանեց.

— Այո։

— Է՛հ, ի՞նչ կա որ։ Այդ բանը ձեզ համար, կարծում եմ շատ հեշտ է։ «Ցի՛»,— մտածեց նա,— ինչ զզվելի զգացում կա իմ սրտում»։

— Դուք ուզում եք ասեք, որ ես տրտնջում առաջ...— սկսեց Ելենան— Բայց ես փոխանում եմ... Այժմ նա, ինչպես դուք ասում եք, քիչ է մնում մեռնում։

— Դրան դժվար չէ օգնելը,— առարկեց Բերտենևը, շատ ուշադիր փոխելով հայացքը։— Նախազգուշացնեք նրան, ես, հասկանալի է, չեմ կարող. բայց ասեք ինձ երկուսդ։ Ո՞վ կարող է արգելել ձեզ, որ դուք նրան, ինչպես բոլոր ծանոթներ, որոնց դուք կարդկցում եք, այդպես զբաղեցնելու բան չունեք նշանակեցեք նրան... այդ ինքն դրեցեք նրան, թե երբ կլինեք։

— Ես ամաչում եմ,— շշնջաց Ելենան։

— Ինչեր երևակայեք, ես կտանեմ։

— Այդ հարկավոր չէ, բայց ես ուզում էի ձեզ խնդրեմ մի բարկանաք ինձ վրա։ Ենարեց Պետրովիչ— վերջը չարաբ նրա մոտ։

Բերտենևը ինձ շրթունքը։

— Այո՛, այո՛, ես հասկանում եմ, շատ լավ, շատ լավ— ով երբեք երեք տարի ապրեցնելով նա շատ հեռացավ։

«Ավելի լավ, ավելի լավ,— մտածում էր Բերտենևը՝ շտապելով տուն։— Ես նոր բան չիմացա, բայց ավելի լավ։ Ի՞նչ հանգիստ է կարելի ասաբ բնի ձայրին։ Ես ոչ մի բանի համար չեմ դղրդում, ես արեցի այն, ինչ խելքս հրամայում էր, բայց այժմ բավական է։ Երեկոյ գնանք։ Դուք չեք հայրս ասում ինձ. մենք, սիրելիս, սիբարիտներ չենք, արիստոկրատներ չենք, ճակատագրի և բնավորության սիրեցյալներ չենք, մենք նույնիսկ նահատակներ չենք, մենք աշխատավորներ ենք, աշխատավորներ ու աշխատավորներ։ Ուրեմն, հազիր քո կաշվի գոգնոցը, ով աշխատավոր, անցիր քո բանվորական

դաղդահի մոտ, քո մութ արհեստանոցում։ Իսկ արեգակը թող փայլի ուրիշների վրա։ Մեր խուլ կյանքն էլ ունի իր հպարտությունը և իր երջանկությունը»։

Մյուս առավոտ Ինսարովը քաղաքային փոստով ստացավ մի համառոտ նամակ. «Սպասիր ինձ, գրում էր նրան Ելենան, և հրամայիր ոչ ոքի չընդունել։ Ա. Պ-ն չի գա»։

XXVIII

Ինսարովը կարդաց Ելենայի տոմսակը և իսկույն սկսեց կարգի բերել իր սենյակը, խնդրեց տանտիկնոջը դուրս տանել դեղերի սրվակները, հանեց շլաֆրոկը, հագավ սերթուկը։ Թուլությունից և ուրախությունից նրա գլուխը պտույտ էր գալիս, և սիրտը խփում էր։ Նրա ոտները թուլանում էին. նա նստեց բազմոցի վրա և սկսեց հետևել ժամացույցին։ «Այժմ տասներկուսին քառորդ է մնում,— ասաց նա ինքն իրեն,— տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չի կարող գալ, կմտածեմ ուրիշ մի որևէ բանի մասին քառորդ ժամի ընթացքում, թե չէ՝ դիմանալ չեմ կարող։ Տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չի կարող...»։

Գոները բացվեցին, և Ելենան, թեթև մետաքսյա զգեստով, ամբողջովին գունատ և ամբողջովին թարմ, երիտասարդ, երջանիկ, ներս մտավ և մի թույլ ուրախության ճիչով ընկավ Ինսարովի կրծքին։

— Դու կենդանի ես, դու իմն ես,— կրկնում էր Ելենան, գրկելով և գուրգուրելով նրա գլուխը։

Ինսարովը ամբողջովին ընդարմացել էր, նա շնչասպառ էր լինում այդ մերձավորությունից, հպումներից, այդ երջանկությունից։

Ելենան նստեց նրա կողքին և սեղմվեց Ինսարովին ու սկսեց նայել նրան այն ծիծաղկոտ և փաղաքշող ու քնքուշ հայացքով, որ լուսավորվում է միայն կանացի սիրող աչքերի մեջ։

Նրա դեմքը հանկարծակի տխրեց։

— Ինչպես մաշվել ես, իմ խեղճ Դմիտրի,— ասաց նա՝ ձեռքը տանելով նրա այտի վրա,— ինչպիսի միրուք ունիս դու։

— Դու էլ մաշվել ես, իմ խեղճ Ելենա,— պատասխանում էր Ինսարովը, իր շրթունքներով որսալով նրա մատները։

Ելենան ուրախ-ուրախ թափահարեց իր գանգուրները։

— Ոչինչ։ Տես թե ինչպես մենք կկազդուրվենք։ Փոթորիկը վրա տվեց, ինչպես այն օրը, երբ մենք հանդիպեցինք միասին մատուռում, վրա տվեց և անցավ։ Այժմ մենք կապրենք։

Ինսարովը պատասխանում էր նրան միայն ժպիտով։

— Ա՜խ, ինչ օրեր էին, Դմիտրի, ինչ դաժան օրեր։ Ինչպե՞ս է լինում, որ մարդիկ ապրում են իրենց սիրածից հետո։ Ես ամեն անգամ առաջուց գիտեի, թե ինչ կասի Անդրեյ Պետրովիչը. ճիշտ եմ ասում, իմ կյանքը ընկնում և բարձրանում էր քոնի հետ։ Ողջույն քեզ, իմ Դմիտրի։

Ինսարովը չգիտեր, թե ինչ ասի նրան։ Նա ուզում էր ընկնել նրա ոտները։

— Էլ ինչ եմ նկատել ես,— շարունակեց նա, ձեռքով ետ տանելով Ինսարովի ճակատից մազերը,— ես այս ամբողջ ժամանակը շատ դիտողություններ էի անում պարապությունից. երբ մարդը շատ-շատ դժբախտ է, ինչպիսի հիմար ուշադրությամբ է նա հետևում այն ամենին, ինչ տեղի է ունենում նրա շուրջը։ Ես, ճշմարիտ, երբեմն ուշադրությամբ նայում էի ճանճին, իսկ իմ հոգու մեջ այնպիսի սառնություն ու սարսափ էր տիրում։ Բայց այդ բոլորն անցավ։ Անցավ, այնպես չէ՞։ Ամեն ինչ լուսավոր է մեր առջևում, այնպես չէ՞։

— Դու ես իմ առջև,— պատասխանեց Ինսարովը,— ինձ համար ամեն ինչ լուսավոր է։

— Հապա ի՞նձ համար... Իսկ դու հիշո՞ւմ ես այն ժամանակը, երբ ես քեզ մոտ էի, ո՛չ վերջին անգամ... ոչ, ոչ թե վերջին անգամ,— կրկնեց նա ակամա սարսուռ զգալով,— երբ խոսում էի քեզ հետ, ես, չգիտեմ ինչու հիշեցի մահը, այն ժամանակ ես չէի էլ կարծում, թե մահը հետևում է մեզ։ Բայց դու հո այժմ առո՞ղջ ես։

— Ես բավականաչափ լավ եմ, ես համարյա առողջ եմ։

— Դու առողջ ես, դու չմեռար։ Ո՜հ, որքան երջանիկ եմ ես։

Կարճատև լռություն տիրեց։

— Ելենա՞,— հարցրեց նրան Ինսարովը։

— Ի՞նչ է, սիրելիս։

— Ասա ինձ, դու մտքովդ չե՞ս անցկացրել, թե այս հիվանդությունը մեզ պատժելու համար էր ուղարկված։

Ելենան լուրջ նայեց նրան։

— Այդ միտքն անցնում էր մտքովս, Դմիտրի։ Բայց ես մտածում էի. ինչի՞ համար պիտի ես պատժվեմ։ Ի՞նչ բան եմ ես պարտազանց եղել։ Ինչի՞ դեմ եմ մեղանչել ես։ Գուցե իմ խիղճն այնպես չէ, ինչպես ուրիշներինը, բայց նա լուռ էր. գուցե ես եմ մեղավոր քո առաջ։ Ես քեզ կխնդրեմ, ես կկանգնեցնեմ քեզ...

— Դու ինձ չես կանգնեցնի, Ելենա, մենք կգնանք միասին։

— Այո, Դմիտրի, մենք կգնանք միասին, ես կգնամ քո հետևից... Դա իմ պարտքն է... Ես քեզ սիրում եմ... ուրիշ պարտք ես չեմ ճանաչում։

— Օ՜հ, Ելենա,— արտասանեց Ինսարովը,— ի՞նչ ամենասարսափելի շղթաներ է դնում ինձ վրա քո յուրաքանչյուր խոսքը։

— Ինչո՞ւ խոսել շղթաների մասին,— վրա բերեց Ելենան։— Մենք ազատ մարդիկ ենք։ Այո,— շարունակեց նա մտախոհ նայելով հատակին, իսկ մի ձեռքով առաջվա նման ուղղելով նրա մազերը,— շատ բաներ ես ապրեցի այս վերջին ժամանակներս, որոնց մասին ես գաղափար չունեի երբեք։ Եթե մեկը գուշակեր իմ մասին, թե ես, մի բարեկիրթ օրիորդ, միայնակ դուրս եկած տանից, զանազան հնարովի պատրվակներով, և այն էլ ո՞ւր գնալու. մի երիտասարդի բնակարանը, ինչպիսի վրդովմունք պիտի զգայի։ Եվ այս բոլորը կատարվեց, և ես ոչինչ վրդովմունք չեմ զգում։ Ճստված վիճակ է,— ավելացրեց նա և դարձավ դեպի Ինսարովը։

Մա նայեց Ելենային պաշտելու մի այնպիսի արտահայտությամբ, որ Ելենան հանդարտ ինքզգով իր ձեռքը նրա մազերից իջեցրեց նրա աչքերի վրա։

— Դմիտրի,— սկսեց նա նորից,— դու չգիտես, չէ՞ որ ես քեզ տեսել եմ այնտեղ, այդ սարսափելի անկողնում, ես տեսել եմ քեզ մահվան ճիրանների մեջ, ուշաթափ...

— Դու ինձ տեսե՞լ ես։

— Այո։

Ինսարովը լռեց։— Ինչպե՞ս էլ արտասանել էր։

Ելենան գլխով արավ։

Ինսարովը խոնարհվեց դեպի նա։— Օհ, Ելենա,— ցրտաշունչ նա,— ես չեմ համարձակվում նայել քեզ։

— Ինչո՞ւ. Անդրեյ Պետրովիչն այնքան բարի է։ Ես նրանից չէի ամաչում։ Եվ ինչո՞ւ ամաչեմ։ Ես պատրաստ եմ ասելու ամբողջ աշխարհին, թե ես քոնն եմ... Իսկ Անդրեյ Պետրովիչին ես հավատում եմ, իբրև եղբայր։

— Նա ինձ փրկեց,— բացականչեց Ինսարովը։— Նա ամենաազնիվ, ամենաբարի մարդն է։

— Այո... Եվ գիտե՞ս դու, որ ես ամեն ինչով նրան եմ պարտական։ Գիտե՞ս դու, որ նա առաջինը ինձ ասաց, թե դու ինձ սիրում ես։ Եվ եթե ես կարողանայի ամեն ինչ բաց անել... Այո, նա ամենաազնիվ մարդն է։

Ինսարովը ուշադրությամբ նայեց Ելենային։— Նա սիրահարված է քեզ, այնպես չէ՞։

Ելենան աչքերը խոնարհեց։

— Նա ինձ սիրում էր,— ասաց նա կիսաձայն։

Ինսարովը պինդ սեղմեց նրա ձեռքը։

— Օ, դուք, ուսանողներ,— ասաց նա,— ասկի են ձեր սրտերը։ Եվ նա, պատհասա-պատհասանում էր ինձ, նա գիշերները չէր քնում... Եվ դու, դու, իմ հրեշտակ... Ոչ հանգիստություն, ոչ տատանում... և այս բոլորը ինձ, ինձ...

— Այո, այո, ամեն ինչ քեզ, որովհետև քեզ սիրում են։ Ախ, Դմիտրի։ Որքան այդ տարօրինակ է։ Ես, կարծեմ, քեզ արդեն ասել եմ այդ մասին, գուցե միևնույն է, ինձ հաճելի է այդ կրկնել, իսկ քեզ հաճելի կլինի այդ լսել,— երբ ես քեզ տեսա առաջին անգամ...

— Ինչո՞ւ աչքերդ արտասուք դա,— ընդհատեց նրան Ինսարովը։

— Իմ աչքերում։ Արտասո՞ւք։— նա սրբեց աչքերը թաշկինակով։— Օ՜, անմիտ։ Նա դեռ չգիտե էլ, որ երջանկությունից էլ են լաց լինում։ Հա, ես ուզում էի քեզ ասել. երբ ես քեզ տեսա առաջին անգամ, քնքանում, ճշմարտան ասած,

ես մի առանձին բան չգտա։ Ես հիշում եմ, սկզբում Շուբինն ինձ ավելի էր դուր գալիս, թեև ես երբեք չեմ սիրել նրան, իսկ ինչ վերաբերում է Անդրեյ Պետրովիչին,— օ, կար մի բոպե, երբ ես մտածում էի. դա չէ՞ արդյոք։ Իսկ դու— ոչինչ. բայց դրա փոխարեն... հետո... հետո... դու զույգ ձեռքով վերցրիր իմ սիրտը։

— Խնայի՛ր ինձ...։ — խոսեց Ինսարովը։ Նա ուզեց վեր կենալ, բայց իսկույն նստեց բազմոցի վրա։

— Ի՞նչ պատահեց քեզ,— հոգատարությամբ հարցրեց Ելենան։

— Ոչինչ... ես դեռ քիչ թույլ եմ... Այո՛, երջանկությունը իմ ուժերից վեր է...

— Ուրեմն հանդարտ նստիր։ Մի շարժվեք, մի հուզվեք,— ավելացրեց նա, մատը նրա վրա թափ տալով։— Եվ ինչո՞ւ դուք հանել եք ձեր շլաֆրոկը։ Վաղ է ձեզ համար պճնվելը։ Նստեցեք, իսկ ես ձեզ կպատմեմ հեքիաթներ։ Լսեցեք ու լռեցեք։ Ձեր հիվանդությունից հետո ձեզ վնաս է երկար խոսելը։

Ելենան սկսեց խոսել Շուբինի, Կուրնատովսկու մասին և պատմել, թե ինքը ինչ էր անում վերջին երկու շաբաթվա ընթացքում, և, որ լրագրերին նայելով, պատերազմն անխուսափելի է և, հետևաբար, հենց որ Ինսարովը բոլորովին առողջանա, հարկավոր կլինի, առանց բոպե կորցնելու, միջոցներ գտնել ճանապարհվելու... Նա ասում էր այս բոլորը, նստած Ինսարովի կողքին, հենվելով նրա ուսին...

Ինսարովը լսում էր նրան, լռում մերթ գունատվելով, մերթ կարմրելով... Նա մի քանի անգամ ուզում էր կանգնեցնել նրան, և հանկարծ նստած տեղը ուղղվեց։

— Ելենա,— ասաց նա նրան մի օտարոտի և սուր ձայնով,— թող ինձ, հեռացիր։

— Ինչպե՞ս,— խոսեց Ելենան զարմացած։— Դու վա՞տ ես զգում քեզ,— ավելացրեց նա աշխույժ կերպով։

— Ոչ... ես ինձ լավ եմ զգում... բայց, խնդրեմ, թող ինձ։

— Ես քեզ չեմ հասկանում։ Դու ինձ վռնդո՞ւմ ես... Այդ ի՞նչ ես ասում,— ասաց նա հանկարծ։ Ինսարովը կռացավ

բազմոցից համարյա մինչև հատակը և իր շրթունքները սեղմեց Ելենայի ոտներին։— Մի՛ արա այդ, Դմիտրի... Դմիտրի...

Ինսարովը տեղից վեր բարձրացավ։

— Ուրեմն, թող ինձ։ Այ, տեսնում ես, Ելենա, երբ ես հիվանդացա, հո իսկույն ուշաթափ չեղա. ես գիտեի, որ անդունդի ծայրին եմ, նույնիսկ տաքության մեջ, զառանցանքի մեջ, ես հասկանում էի, աղոտ կերպով զգում էի, որ մահն է ինձ մոտենում, հրաժեշտ էի տալիս կյանքին, քեզ, ամեն ինչին, ես հրաժեշտ էի տալիս հույսին... Եվ հանկարծ այս վերածնությունը, այս լույսը խավարից հետո, դու... դու... իմ կողքին, ինձ մոտ... քո ձայնը, քո շունչը... Այս բոլորը իմ ուժերից վեր է։ Ես զգում եմ, որ սիրում եմ քեզ ջերմ սիրով, ես լսում եմ, որ դու ինքդ անվանում ես քեզ իմը, ես ոչ մի բանի համար պատասխանատու չեմ... Հեռացիր։

— Դմիտրի,— շշնջաց Ելենան և իր գլուխը թաքցրեց նրա ուսին։ Նա միայն այժմ հասկացավ նրան։

— Ելենա,— շարունակեց նա,— ես քեզ սիրում եմ, դու այդ գիտես, ես իմ կյանքը պատրաստ եմ տալ քեզ համար... Էլ ինչո՞ւ եկար դու ինձ մոտ այժմ, երբ ես թույլ եմ, երբ ես ինձ չեմ տիրապետում, երբ իմ ամբողջ արյունը այրված է... դու իմն ես, ասում ես դու... դու ինձ սիրում ես...

— Դմիտրի,— կրկնեց Ելենան և ամբողջովին բռնկվեց և էլ ավելի պինդ սեղմվեց նրան։

— Ելենա, խղճա ինձ, հեռացիր, ես զգում եմ, որ ես կարող եմ մեռնել, ես չեմ դիմանա այդ հույզերին... ամբողջ հոգիս ձգտում է դեպի քեզ... մտածիր, մահը քիչ էր մնում, որ բաժաներ մեզ... և այժմ դու այստեղ, դու իմ գրկում... Ելենա։

Ելենան ամբողջովին դողում էր։

— Ուրեմն, վերցրու ինձ,— շշնջաց նա հազիվ լսելի ձայնով...

XXIX

Նիկոլայ Արտեմևիչը, հոնքերը կիտած, ետ ու առաջ էր գնում իր առանձնասենյակում։ Շուբինը նստած էր պատու-

հանի մոտ և, ասը ոտի վրա դրած, հանդարտ ծխում էր սիգարը։

— Դադարեցնեք, խնդրեմ, անկյունից անկյուն քայլել,— ասաց Շուբինը թափ տալով մոխիրը սիգարի վրայից։— Ես շարունակ սպասում եմ, որ դուք կխոսեք, հետևում եմ ձեզ, վիզս ցավեց։ Բացի դրանից, ձեր քայլվածքի մեջ ինչ-որ լարված, մելոդրամատիկ բան կա։

— Ձեր բանը մի-գլուխ շաղակրատելն է,— պատասխանեց Նիկոլայ Արտեմիևիչը։— Դուք չեք ուզում մտնել իմ դրության մեջ, դուք չեք ուզում հասկանալ, որ ես ընտելացել եմ այդ կնոջը, որ ես, վերջապես, կապված եմ նրան, թե նրա բացակայությունը ինձ պիտի տանջի։ Ահա արդեն հոկտեմբերն է, ձմեռը մոտեցել է... Ի՞նչ կարող է նա անել Ռևելում։

— Երևի զուլպա է գործում... Իր համար, իր, ոչ թե ձեզ համար։

— Ծիծաղեցնեք, ծիծաղեցնեք, իսկ ես ձեզ կասեմ, որ նրա նման կին չեմ ճանաչում։ Այդ ազնվությունը, այդ անշահասիրությունը...

— Ներկայացրե՞ց նա մուրհակը գանձելու համար,— հարցրեց Շուբինը։

— Այդ անշահասիրությունը,— կրկնեց, ձայնը բարձրացնելով, Նիկոլայ Արտեմիևիչը,— զարմանալի է։ Ինձ ասում են, թե աշխարհում միլիոն ուրիշ կանայք կան, իսկ ես կասեմ. ցույց տվեք ինձ այդ միլիոնը, ցույց տվեք ինձ այդ միլիոնը, ասում եմ ես, ces femmes—qu'on me les montre[1]։ Եվ չի գրում, ահա ինչն է սպանիչը։

— Դուք պերճախոս եք, ինչպես Գյուլնազարաբ,— նկատեց Շուբինը,— բայց, ասեմ՞ք, ինչ խորհուրդ կտայի ձեզ։

— Ի՞նչ։

— Երբ Ավգուստինա Երիսաֆանովնան կվերադառնա... դուք հասկանո՞ւմ եք ինձ։

— Դե, հա։ Հետո։

— Երբ դուք նրան կտեսնեք... Դուք հետևո՞ւմ եք իմ մտքի զարգացմանը։

[1] Թող ինձ ցույց տան այդ կանանց (ֆրանս.)։

— Դե, հա, հա։

— Փորձեցեք նրան ծեծել. ի՞նչ դուրս կգա դրանից։ Նիկոլայ Արտեմիևիչը եռեսը շուռ տվեց վրդովված։

— Ես էլ կարծում էի, թե նա մի իսկական խելացի խորհուրդ կտա։ Եվ ի՞նչ տարատես նրանից։ Արտիստ, մի մարդ, որ զուրկ է կանոններից...

— Զուրկ կանոններից։ Բայց ահա, ասում են, ձեր սիրելին, պարոն Կուրնատովսկին, կանոններ ունեցող մարդը, երեկ ձեզանից տարել է հարյուր ռուբլի արծաթ։ Սա արդեն քաղաքավարություն չէ, համաձայնեցեք։

— Ի՞նչ անենք։ Մենք խաղում էինք փողով։ Իհարկե, ես կարող էի ապասել... Բայց նրան այնքան քիչ են գնահատում այս տանը...

— Ի՞նչ էր նա մտածում,— վրա բերեց Շուբինը,— թող այդպես լինի։ Նա աներ է, թե չէ՝ այդ դեռ թաքնված է ճակատագրի սափորի մեջ. մինչդեռ հարյուր ռուբլին լավ է մի մարդու համար, որ կաշառք չի վերցնում։

— Ձեր։ Գրողը տանի, ի՞նչ աներ եմ ես։ Vous rêvez, mon cher[1]։ Իհարկե, ամեն մի ուրիշ աղջիկ ուրախ կլինի սրդրդիի փեսացուով։ Ինքներդ դատեցեք. մի մարդ, ճարպիկ, խելոք, ինքն իրեն մարդամեջ է մտել, երկու նահանգներում ծանր աշխատանք է տարել...

— ...յան նահանգում նահանգապետին քթից բռնած մեն էր ածում,— նկատեց Շուբինը։

— Շատ կարելի է։ Երևի այդպես էլ հարկավոր էր։ Գործնական մարդ է, գործեր սարքող...

— Լավ էլ թուղթ է խաղում,— նորից նկատեց Շուբինը։

— Դե հա, լավ էլ թուղթ է խաղում։ Բայց Ելենա Նիկոլաևնան... Մի՞թե նրան կարելի է հասկանալ։ Ուզում եմ իմանալ, ո՞ւր է այն մարդը, որ հանձն առներ ըմբռնել նրան, թե ինչ է նա ուզում։ Մերթ նա ուրախ է, մերթ ձանձրանում է. հանկարծ այնպես կմաշվի, որ վրան նայել չի լինում, բայց հանկարծ կլավանա, և այս բոլորը առանց որևէ հայտնի պատճառի...

Նրա մտավ անհրապուր տեսքով լաքեյը, բերելով մա-

[1] Դուք զառանցում եք, սիրելի՛ս (ֆրանս.)։

տուցարանի վրա մի բաժակ սուրճ, սերամանը և պաքսիմատ։

— Հորը դուր է գալիս փեսացուն,— շարունակեց Նիկոլայ Արտեմևիչը՝ պաքսիմատը ձեռքում շարժելով,— իսկ աղջիկն ի՞նչ գործ ունի դրա հետ։ Այդ լավ էր նախկին, նահապետական ժամանակներում, իսկ այժմ մենք այդ բոլորը փոխել ենք։ Nous avons changé tout ça[1]։ Այժմ օրիորդը խոսում է ում հետ կամենում է, կարդում է, ինչ որ իրեն հաճելի է՝ մենակ ման է գալիս Մոսկվայում, առանց լաքեյի, առանց աղախնու, ինչպես Փարիզում. և այս բոլորն ընդունված է։ Այս քանի օրերը ես հարցնում եմ. ո՞ւր է Ելենա Նիկոլաևնան։ Ասում են, բարեհաճեց դուրս գնալ։ Ո՞ւր։ Հայտնի չէ։ Սա ի՞նչ է—կա՞րգ է։

— Դե, վերցրեք ձեր գավաթը և արձակեցեք ծառային,— ասաց Շուբինը։— Ինքներդ եք ասում, թե չպետք է devant les domestiques,— ավելացրեց նա ցածրաձայն։

Լաքեյը հոնքերի տակից նայեց Շուբինին, իսկ Նիկոլայ Արտեմևիչը վերցրեց սուրճի բաժակը, սեր լցրեց և մոտ տասը պաքսիմատ քաշեց առաջը։

— Ես ուզում էի ասել,— սկսեց նա, հենց որ լաքեյը դուրս եկավ,— թե ես այս տան մեջ ամենևին նշանակություն չունեմ։ Ահա բոլորը։ Որովհետև մեր ժամանակ ամենքը դատում են արտաքինով. մի մարդ, դատարկ էլ լինի նա ու հիմար, բայց որ իրեն փքված է պահում—նրան հարգում են. իսկ մյուսը գուցե տաղանդներ ունի, որոնք կարող էին... կարող էին մեծ օգուտ բերել, բայց համեստության պատճառով...

— Դուք պետակա՞ն մարդ եք, Նիկոլինկա,— հարցրեց Շուբինը շատ բարակ ձայնով։

— Բավական է որքան ծաղրածվություն արիք,— բացականչեց Նիկոլայ Արտեմևիչը բարկացած։— Դուք չափը անց եք կացնում։ Ահա ձեզ մի նոր ապացույց, որ ես այս տանը ոչինչ նշանակություն չունեմ, ոչինչ...

— Աննա Վասիլևնան ձեզ նեղում է... խեղճ մարդ,— ասաց Շուբինը ծոր տալով։— Է՛հ, Նիկոլայ Արտեմևիչ, մենք

[1] Մենք այդ բոլորը փոխել ենք (ֆրանս.)։

մեղավորներ ենք։ Ավելի լավ կլինի, որ Աննա Վասիլևնայի համար մի ընծա պատրաստեիք։ Այս քանի օրերը նրա ծնունդն է, դուք գիտեք, թե որքան թանկ է նրա համար ուշադրության ամենափոքրիկ նշանը ձեր կողմից։

— Այո՛, այո՛,— շտապով պատասխանեց Նիկոլայ Արտեմևիչը.— շատ շնորհակալ եմ ձեզանից, որ հիշեցրիք։ Ինչպես չէ, անպատճառ։ Այ, ես ունեմ մի բան. մի մանյակ այս քանի օրը գնեցի Ռոզենշտրաուխից, բայց չգիտեմ, ճշմարիտ, լա՞վ կլինի։

— Դուք այդ բանը չէ՞ որ այն մյուսի, Ռեվելի բնակչուհու համար եք գնել։

— Այսինքն... ես... այս ես... մտածում էի...

— Որ այդպես է, անպատճառ լավ կլինի։

Շուբինը վեր կացավ աթոռից։

— Ո՞ւր գնանք այսօր երեկոյան, Պավել Ցակովլևիչ, հը՞,— հարցրեց նրան Նիկոլայ Արտեմևիչը, սիրալիր կերպով նայելով նրա աչքերին։

— Չէ՞ որ դուք ակումբ կգնաք։

— Ակումբից հետո... ակումբից հետո։

Շուբինը նորից ձգվեց։

— Ոչ, Նիկոլայ Արտեմևիչ, ես վաղը պետք է աշխատեմ։ Մի ուրիշ անգամ։— Եվ նա դուրս գնաց։

Նիկոլայ Արտեմևիչը հոնքերը կիտեց, մի երկու անգամ անցուդարձ արեց սենյակում, գզրոցից հանեց թավշե արկղիկը, որի մեջ դրված էր մանյակը, և երկար տնտղում էր այն ու շփում մետաքսե բարակ շորով։ Ապա նա նստեց հայելու առաջ և սկսեց խնամքով սանրել իր խիտ թուխ մազերը, դեմքի վրա մի վեհություն պահելով, խոնարհում էր գլուխը կամ դեպի աջ կամ դեպի ձախ, լեզուն այտին դեմ տալով և աչքը չհեռացնելով սանրվածքից։ Մեկը հաղաց նրա թիկունքում. նա ետ նայեց և տեսավ լաքեյին, որ սուրճ էր բերել նրա համար։

— Ի՞նչ կա,— հարցրեց նա։

— Նիկոլայ Արտեմևիչ,— արտասանեց լաքեյը ոչ առանց հանդիսավորության։— Դուք մեր աղան եք։

— Գիտեմ, հետո՞ ինչ։

— Նիկոլայ Արտեմևիչ, դուք ինձ վրա հաճեցեք չբար-

կանալ, միայն ես, գտնվելով ձեր ողորմածության մոտ ծառայության մեջ փոքր հասակից, ստրկական, նշանակում է, ջանասիրությունից, պետք է հայտնեմ ձեր ողորմածությանը...

— Ախր ի՞նչ ես ուզում։

Լաքեյը մի քիչ ջղոթվեց։

— Գուք ահա հաճում եք ասել,— սկսեց նա,— թե չեք հաճում իմանալ, թե ուր է Ելենա Նիկոլաևնան հաճում գնալ։ Ես այդ մասին տեղյակ եղա։

— Ի՞նչ ես սուտ գուրս տալիս, հիմար։

— Կամքը ձերն է, միայն ես երեք օր առաջ տեսա, թե ինչպես նա մի տուն մտնել հաճեց։

— Ո՞ւր։ Ի՞նչ։ Ո՞ր տունը։

— ...յան փողոցի նրբանցքում, Պովարսկայա փողոցի մոտ։ Այստեղից հեռու չէ։ Ես հարցրի դռնապանին էլ, թե ովքե՞ր են կենում այդտեղ։

Նիկոլայ Արտեմևիչը ոտքերը հատակին խփեց։

— Լռել, անպիտան, ինչպե՞ս ես համարձակվում... Ելենա Նիկոլաևնան, իր բարությունից, այցելում է աղքատներին, իսկ դու... Դուրս կորիր, հիմար։

Վախեցած լաքեյը ուզում էր վազել դեպի դռները։

— Կաց,— բացականչեց Նիկոլայ Արտեմևիչը։— Ի՞նչ ասաց քեզ դռնապանը։

— Ոչ...ինչ չասաց, ասում է ուս...ուսանող։

— Լռիր, անպիտան։ Լռիր, լիքը, եթե դու երազումդ անգամ մեկին տրևէ բան ասես...

— Ի՞նչ եք հրամայում...

— Լռի՛ր։ Եթե դու քերթիցդ բան թողնես... Եթե մեկը... Եթե ես իմանամ... Դու իմ ձեռքից հոգի տակ էլ տեղ չես գտնի։ Լսո՞ւմ ես։ Կորի՛ր։

Լաքեյը անհետացավ։

«Տեր աստված։ Այս ի՞նչ է նշանակում,— մտածեց Նիկոլայ Արտեմևիչը մենակ մնալով։— Ի՞նչ ասաց ինձ այս ավանակը, հը՞։ Այնուամենայնիվ հարկավոր է իմանալ, թե այդ ինչ տուն է և ով է այնտեղ ապրում։ Ինքս անձամբ կգնամ։ Այ թե բանը որտեղ հասավ վերջապես... Un laquais! Quelle humiliation!»[1]

[1] Լաքե՛յ։ Ինչպիսի ստորացում (ֆրանս.)։

Եվ բարձրաձայն կրկնելով un laquais! Նիկոլայ Արտեմևիչը փակեց մանյակը գզրոցի մեջ և գնաց Աննա Վասիլևնայի մոտ։ Վերջինիս նա գտավ անկողնում, կապած թշով։ Բայց նրա տանջանքների տեսքը միայն գրգռեց Նիկոլայ Արտեմևիչին, և սա շատ շուտ հասցրեց Աննա Վասիլևնային արտասուքների։

XXX

Մինչ այս, մինչ այն՝ Արևելքում կուտակվող փոթորիկը պայթեց։ Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին. կնյաժեստվոներից ռուսաց զորքերը հեռացնելու համար նշանակված ժամկետն անցել էր արդեն. աղբեն հեռու չէր Սինոպի ջարդի օրը։ Ինսարովի ստացած վերջին նամակները թախանձագին կանչում էին նրան հայրենիք։ Նրա առողջությունը դեռ բոլորովին չէր ուղղվել, նա հաղում էր, զգում էր թուլություն, ջերմի թեթև բռնկումներ, բայց նա համարյա չէր նստում տանը։ Նրա հոգին բորբոքվեց. նա այլևս չէր մտածում իր հիվանդության մասին։ Անդադար դես ու դեն էր գնում Մոսկվայում, ծածուկ տեսնվում էր զանազան մարդկանց հետ, ամբողջ գիշերները գրում էր, անհետանում էր ամբողջ օրերով. բնակարանի տիրոջը նա հայտնեց, որ շուտով գնալու է, վաղօրոք նրան ընծայեց իր աղքատիկ կահ-կարասին։ Ելենան ևս իր հերթին պատրաստվում էր ճանապարհվելու։ Մի երեկո, վատ եղանակին, նա նստած իր սենյակում թաշկինակներ էր կարում և ակամա վհատությամբ ականջ էր դնում քամու հեծեծանքներին։ Նրա աղախինը ներս մտավ և ասաց նրան, թե հայրիկը մայրիկի ննջարանումն է և կանչում է նրան այնտեղ... «Մայրիկը լաց է լինում,— շշնջաց աղախինը Ելենայի հետևից դուրս գնալու ժամանակ,— իսկ հայրիկը բարկանում է»...

Ելենան թեթև կերպով ուսերը վեր քաշեց և մտավ Աննա Վասիլևնայի ննջարանը։ Նիկոլայ Արտեմևիչի քարեհոգի ամուսինը կիսով չափ պառկած էր բազկաթոռի մեջ և հոտոտում էր օդեկոլոնով թրջած թաշկինակը. ինքը՝ Նիկոլայ Արտեմևիչը, կանգնած էր վառարանի մոտ, բոլոր կոճակները կոճկած, բարձր, պինդ փողկապը կապած և խիստ օսլայած

օձիքով։ Իր կերպարանքով նա աղոտ կերպով հիշեցնում էր պառլամենտական հռետորի։ Ձեռքի հռետորական շարժմամբ նա ցույց տվեց իր աղջկան աթոռը և երբ աղջիկը, չհասկանալով նրա շարժումը, հարցական հայացք գցեց նրա վրա, նա արժանապատվությամբ, բայց առանց գլուխը շուռ տալու, ասաց.

— Խնդրում եմ ձեզ նստել (Նիկոլայ Արտեմևիչը իր կնոջը միշտ ասում էր դուք, իսկ աղջկան՝ արտակարգ դեպքերում)։

Ելենան նստեց։

Աննա Վասիլևնան լացախառը խնչեց։ Նիկոլայ Արտեմեվիչը աջ ձեռքը դրեց սերթուկի օձիքի տակ։

— Ես ձեզ կանչեցի, Ելենա Նիկոլաևնա,— սկսեց նա երկարատև լռությունից հետո,— այն պատճառով, որ բացատրեք մի բան, կամ ավելի լավ է ասել՝ որ ձեզանից բացատրություն պահանջենք։ Ես ձեզանից դժգոհ եմ, բայց ոչ, դրանով ես շատ քիչ բան եմ ասում. ձեր վարքը ինձ վշտացնում է, ինձ վիրավորում է, ինձ և ձեր մորը... ձեր մորը, որին դուք տեսնում եք այստեղ։

Նիկոլայ Արտեմևիչը գործ էր դնում իր ձայնի միայն բաս նոտաները։ Ելենան լուռ նայեց նրան, հետո Աննա Վասիլևնային, և գունատվեց։

— Կար մի ժամանակ,— նորից սկսեց Նիկոլայ Արտեմևիչը,— երբ աղջիկները թույլ չէին տալիս բարձրից նայել իրենց ծնողների վրա, երբ ծնողական իշխանությունը հարկադրում էր անհնազանդներին դողալ։ Այդ ժամանակն անցավ, դժբախտաբար, գոնե այսպես են կարծում շատերը, բայց, հավատացեք, դեռևս գոյություն ունեն օրենքներ, որոնք թույլ չեն տալիս... թույլ չեն տալիս... մի խոսքով, դեռևս գոյություն ունեն օրենքներ։ Խնդրում եմ ձեզ ուշադրություն դարձնել այդ բանի վրա. օրենքներ գոյություն ունեն։

— Բայց, հայրիկ,— սկսեց Ելենան...

— Խնդրում եմ ձեզ չընդհատել ինձ։ Մտքով տեղափոխվենք անցյալը։ Ես և Աննա Վասիլևնան կատարել ենք մեր պարտքը։ Ես և Աննա Վասիլևնան ոչինչ չենք խնայել ձեր կրթության համար, ոչ ծախս, ոչ խնամք։ Ի՞նչ օգուտ

քաղեցիք այդ բոլոր խնամքներից, այդ ծախսերից՝ դա ուրիշ հարց է, բայց ես իրավունք ունեի կարծելու... Ես և Աննա Վասիլևնան իրավունք ունեինք կարծելու, որ դուք գոնե սրբությամբ կպահպանեք բարոյականության այն կանոնները, որ... որ մենք ձեզ, իբրև մեր միակ աղջկան... que nous vous avons inculqués[1], որը մենք ներշնչեցինք ձեզ։ Մենք իրավունք ունեինք կարծելու, որ որևէ նոր «գաղափարներ» չեն դիպչի այդ, այսպես ասած, նվիրական սրբությանը։ Եվ ի՞նչ։ Չեմ խոսում այլևս այն թեթևամտության մասին, որ հատուկ է ձեր սեռին, ձեր հասակին... բայց ո՞վ կարող էր սպասել, որ դուք մինչև այն աստիճան կմոռանաք ձեզ...

— Հայրիկ,— ասաց Ելենան,— ես գիտեմ, թե ինչ եք ուզում ասել...

— Ոչ, դու չգիտես, թե ինչ եմ ուզում ասել,— բացականչեց Նիկոլայ Արտեմևիչը, հանկարծակի դավաճանելով թե պառլամենտական վեհությանը, թե ճառի կարևորությանը և թե բաս նոտաներին,— դու չգիտես, հանդուգն աղջիկ։

— Ի սեր աստծո, Nicolas,— թոթովեց Աննա Վասիլևնան,— vous me faites mourir[2]։

— Մի ասեք ինձ այդ. que je vous fais mourir[2], Աննա Վասիլևնա։ Դուք երևակայել էլ չեք կարող, թե ինչ կլսեք իսկույն։ Պատրաստվեցեք ավելի վատին, նախազգուշացնում եմ ձեզ։

Աննա Վասիլևնան տեղնուտեղը թուլացավ։

— Ոչ,— շարունակեց Նիկոլայ Արտեմևիչը՝ դառնալով Ելենային,— դու չգիտես, ինչ եմ ուզում ասել։

— Ես մեղավոր եմ ձեր առջև,— սկսեց Ելենան...

— Հա, վե՛րջապես...

— Ես մեղավոր եմ ձեր առջև,— շարունակեց Ելենան,— այն պատճառով, որ վաղուց չեմ խոստովանել...

— Դու գիտե՞ս,— ընդհատեց նրան Նիկոլայ Արտեմևիչը,— որ ես կարող եմ քեզ ոչնչացնել մի խոսքով։

---

[1] Որը մենք ներշնչեցինք ձեզ (ֆրանս.)։

[2] Դուք ինձ սպանում եք (ֆրանս.)։

[3] ...որ ես ձեզ սպանում եմ (ֆրանս.)։

Ելենան բարձրացրեց աչքերը, նրան նայեց։

— Այո, միրուշի, մի խոսքով։ Ինչո՞ւ ես նայում,— նա խաչեց ձեռքերը կրծքի վրա։— Թույլ տվեք ձեզ հարցնել։ Հայտնի՞ է ձեզ մի տուն ...յան փողոցում, Պովարսկայա փողոցի մոտ։ Դուք այցելե՞լ եք այդ տունը,— նա խփեց ոտքով հատակին։— Պատասխանիր, անպիտան աղջիկ, և չմտածես էլ խորամանկություն անել։ Մարդիկ, մարդիկ, լաքեյները, միրուշի, de vils laquais[1] տեսել են ձեզ, ինչպես եք մըտնում այնտեղ, ձեր...

Ելենան ամբողջովին բորբոքվեց, և նրա աչքերը փայլատակեցին։

— Ես խորամանկություն բանեցնելու կարիք էլ չունեմ,— արտասանեց նա,— այո, ես այցելում եմ այդ տունը։

— Շատ գեղեցիկ։ Լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք, Աննա Վասիլևնա։ Եվ դուք, անշուշտ, գիտեք, թե ով է այնտեղ ապրում։

— Այո, գիտեմ, իմ ամուսինը։

Նիկոլայ Արտեմևիչը չռեց աչքերը։

— Ք...

— Իմ ամուսինը,— կրկնեց Ելենան։— Ես ամուսնացել եմ Դմիտրի Նիկանորովիչ Խեսարովի հետ։

— Դու... ամուսնացել ես... — հազիվ կարողացավ խոսել Աննա Վասիլևնան։

— Այո, մայրիկ... ներեցեք ինձ։ Երկու շաբաթ առաջ մենք ծածուկ պսակվեցինք։

Աննա Վասիլևնան ընկավ բազկաթոռի մեջ. Նիկոլայ Արտեմևիչը երկու քայլ ետ գնաց։

— Ամուսնացա՞ծ։ Այդ չիլաղի, այդ չիրնոգորցու հետ։ Տոհմային ազնվական Նիկոլայ Ստախովի աղջիկը ամուսնացել է մի Թափառական, մի տարատոհմիկի հետ։ Առանց ծնողական օրհնության։ Եվ դու կարծում ես, թե ես այդ բանը այդպես էլ կթողնե՞մ։ Որ ես չե՞մ գանգատվի։ Որ ես թո՞ւյլ կտամ քեզ... որ դու... որ... Քեզ վանք կուղարկեմ, իսկ նրան տաժանակիր աշխատանքների, կալանավորների

[1] Արհամարհված լաքեյները (ֆրանս.)։

վաշտերը։ Աննա Վասիլևնա, բարեհաճեցեք այս րոպեին ասել նրան, որ դուք նրան զրկում եք ժառանգությունից։

— Նիկոլայ Արտեմևիչ, ի սեր աստծո,— հեծեծաց Աննա Վասիլևնան։

— Եվ ե՞րբ, ինչպե՞ս կատարվեց այդ։ Ո՞վ պսակեց ձեզ, որտե՞ղ, ինչպե՞ս։ Աստված իմ։ Այժմ ի՞նչ կասեն մեր բոլոր ծանոթները, ամբողջ աշխարհը։ Եվ դուք, անամոթ, կեղծավոր, կատարյալ այդպիսի արարքանքից հետո ապրել ծնողական հարկի տակ։ Դուք չվախեցաք... երկնային պատուհասից։

— Հայրիկ,— ասաց Ելենան (նա դողում էր ամբողջովին՝ ոտից գլուխ, բայց նրա ձայնը ամուր էր),— դուք ազատ եք անելու ինձ հետ, ինչ կամենում եք, բայց խնդրում եք ինձ մեղադրում անամոթություն և կեղծիք։ Համաձայն ես չեի ուզում... վշտացնել ձեզ փաղաքշանքով, բայց ես ակամա այս քանի օրերը ինքս կտանի ձեզ ասելն ինչ որ հիմա մենք եկող շաբաթ գնում ենք։

— Գնո՞ւմ եք։ Ո՞ր։

— Ամուսնուս հայրենիքը, Թուրքիա։

— Թուրքերի մոտ,— բացականչեց Աննա Վասիլևնան և ուշաթափվեց։

Ելենան վազեց մոր մոտ։

— Հեռու,— գոռաց Նիկոլայ Արտեմևիչը և բռնեց աղջկա ձեռքը։— Հեռու, անարժան...

Բայց այդ վայրկյանին ննջարանի դուռը բացվեց և երևաց մի գունատ դեմք փայլող աչքերով։ Դա Շուբինն էր։

— Նիկոլայ Վասիլևիչ,— կանչեց նա իր ձայնի բոլոր ուժով։— Եվդոկիա Խրիստոֆորովնան եկել է և ձեզ կանչում է։

Նիկոլայ Արտեմևիչը կատաղությամբ նա նայեց, բռնկվեց թափ տվեց Շուբինի վրա, մի բառի կանգ առավ և աստիճանաբար դուրս եկավ ննջարանից։

Ելենան ընկավ մոր ոտքերը և գրկեց նրա ծնկները։

Ռուսար Իվանովիչը սրտակոտ էր իր անկողնի վրա։ Առանց ծիքի շապիկը, խոշոր կոճակներով, բռնել էր նրա լիքը վիզը և լայն, ազատ ծալքերով փռվել էր նրա հսկայական կանանցի

կրծքի վրա, բայց պահելով մեծ կիպարիսե խաչն ու սրբապատկերը։ Թեթև վերմակը ծածկում էր նրա լայնարձակ անդամները։ Ճրագը աղոտ լույս էր տալիս գիշերային փոքրիկ սեղանի վրա, կվասով լի մեծ բաժակի մոտ, անկողնի վրա, նստել էր վշտահար Շուբինը։

— Այո՛,— մտախոհությամբ ասում էր նա,— Ելենան ամուսնացած է և պատրաստվում է գնալ։ Ձեր հորեղբոր որդին աղմուկ և գոռգոռոց էր բարձրացրել ամբողջ տան մեջ. փակվեց ննջարանում իբրև թե գաղտնապահության համար, մինչդեռ ոչ միայն լաքեյներն ու աղախինները, նույնիսկ կառապաններն էլ կարող էին լսել ամեն ինչ։ Նա այժմ էլ փրփրել, կրակ է կտրել, քիչ էր մնում հետս կռվեր, մի գլուխ իր հայրական անեծքն էր թափում, բայց բանը այդ չէ։ Աննա Վասիլևնան կիսամեռ ընկած է, բայց նրան ավելի շատ աղջկա գնալն է հոգեհան անում, քան ամուսնանալը։

Ուվար Իվանովիչը խաղացրեց մատները։

— Մայր է,— խոսեց նա,— դե... էդպես է։

— Ձեր հորեղբոր որդին,— շարունակեց Շուբինը,— ապառնում է միտրոպոլիտի մոտ գնալ, և գեներալ նահանգապետի, և մինիստրի մոտ գանգատվելու, իսկ բանը կվերջանա նրանով, որ Ելենան կգնա։ Ո՞ւմ է ախորժելի խորտակել հարազատ աղջկան։ Աքաղաղի պես կբարկանա, հետո էլ պոչը կախ կանի։

— Իրավունք... չունեն,— նկատեց Ուվար Իվանովիչը, խմելով մեծ բաժակից։

— Այդպես է, այդպես է։ Իսկ Մոսկվայում ինչպիսի՞ դատապարտություններ, ասեկոսեների, զանազան բամբասանքների տարափ կբարձրանա։ Ելենան չվախեցավ նրանցից... Ասենք, նա դրանցից բարձր է։ Գնում է նա, և ո՞ւր։ Սարսափելի է մտածել անգամ։ Ինչքան հեռո՛ւ, ի՞նչ խուլ տեղ։ Ի՞նչ է սպասում նրան այնտեղ։ Ես նայում եմ նրան, կարծես թե գիշերը, բուքի ժամանակ, երեսուն աստիճան սառնամանիքին, գնում է իշևանատեղից։ Հեռանում է հայրենիքից, ընտանիքից, և ես նրան հասկանում եմ։ Ո՞ւմ է նա այստեղ թողնում։ Ո՞ւմ է տեսել. Կուրնատովսկիներին, Թերսենևներին, մեկ էլ ինձ նմաններին. և սրանք դեռ լավերն են։ Ի՞նչ կա այստեղ ափսոսալու։ Մի բան միայն վատ

է. ասում են, նրա ամուսինը,— սատանան տանի, լեզուս էլ պտույտ չի գալիս այդ բանը արտասանելու,— ասում են, Ինսարովը արյուն է թքում. այդ վատ է։ Ես նրան տեսա այս քանի օրը. դեմքը այնպես է, որ նրանից իսկույն կարելի է ծեփել Բրուտոսի արձանը... Դուք գիտե՞ք ով էր Բրուտոսը, Ուվար Իվանովիչ։

— Ի՞նչ իմանաս։ Մարդ էր։

— Այո՛, «մարդ էր նա», և հրաշալի դեմքով, բայց տկար, շատ վատառողջ։

— Իսկ պատերազմել... միևնույն է,— խոսեց Ուվար Իվանովիչը։

— Պատերազմելը դե, միևնույն է, ճիշտ է. դուք այսօր միանգամայն ճիշտ եք արտահայտվում. բայց ախր ապրելը միևնույնը չէ։ Բայց չէ՞ որ Ելենան կուզի ապրել նրա հետ։

— Ջահելության բան է,— պատասխանեց Ուվար Իվանովիչը։

— Այո, ջահել, փառավոր, համարձակ բան է։ Մահ, կյանք, կռիվ, անկում, հաղթանակ, սեր, ազատություն, հայրենիք... Լավ է, լավ է։ Աստված տա ամեն մեկին։ Դա այն չէ, ինչ մինչև կոկորդը ճահճի մեջ նստել և աշխատել այնպես ցույց տալ՝ թե քեզ համար միևնույն է, երբ քեզ համար իրոք միևնույն չէ։ Իսկ այնտեղ լարերը ձգված են։ Ողողանջիր ամբողջ աշխարհի առաջ կամ կտրվիր։

Շուբինը գլուխը կախեց կրծքի վրա։

— Այո,— շարունակեց նա երկար լռությունից հետո։— Ինսարովը արժանի է Ելենային։ Ինսարով... Ինսարով... Ինչի՞ է պետք կեղծ հեզությունը։ Լավ. ասենք թե նա կտրիճ է, կարող է իրեն պահել, թեև մինչև այժմ նա անում էր նույնը, ինչ և մենք, մեղավորներս. բայց մի՞թե մենք այդպես կատարելապես անպետքություններ ենք։ Վերցնենք հենց ես. մի՞թե ես անպետք բան եմ, Ուվար Իվանովիչ։ Մի՞թե ինձ աստված զրկել է ամեն բանից։ Ո՞վ գիտե, գուցե Պավել Շուբինի անունը մի ժամանակ փառավոր անուն կլինի։ Ահա ձեր սեղանի վրա ընկած է մի պղնձի գրոշ։ Ով գիտե, գուցե, երբևիցե, մի հարյուր տարուց հետո, այդ պղինձը գործ կածվի Պավել Շուբինի արձանի համար, որը

կկանգնեցնի ի պատիվ նրան շնորհապարտ սերունդը։

Ուվար Իվանովիչը հենվեց արմունկի վրա և ապշերը հառեց տաքացած գեղարվեստագետին։

— Հեռավոր երգ է դա,— խոսեց նա վերջապես, մտաբերելով սովորականի պես խաղացնելով,— խոսքը ուրիշների մասին է, իսկ դու... էն է... քո մասին։

— Օ՜, մեծ փիլիսոփա ռուսաց երկրի,— բացականչեց Շուրինը։— Ձեր յուրաքանչյուր խոսքը զուտ ոսկի է, և ի՜նձ չէ, որ վիճակված է արձան կանգնեցնել, բայց այդ բանը ես ինքս կանեմ։ Այ, ինչպես այժմ պառկած եք, այդ դիրքով մի դիրք, որի մեջ չգիտես ինչ կա ավելի՝ ծուլությո՞ւն թե ուժ,— այդպես էլ ես ձեզ կձուլեմ։ Արդարացի հանդիմանությամբ դուք խայթեցիք իմ եսամոլությունը և իմ ինքնասիրությունը։ Այո՜, այո՜, հարկ չկար խոսել իմ մասին. պետք չէ պարծենալ։ Դեռ մեզ մոտ ոչ ոք չկա, դեռ չկան մարդիկ, ուր էլ նայես։ Բոլորը կամ մանրուքներ են, կրծողներ, փոքրիկ Համլետիկներ, սամոեդներ, կամ տգիտություն և ստորերկրյա խլություն, կամ թե խթանողներ, մի դատարկությունից մյուսը թափողներ ու թմբուկի փայտիկներ։ Կամ թե ահա ինչպիսինքն էլ են լինում. մինչև խայտառակ նողությունը իրենց ուսումնասիրել են, անգամ իրենց լուրաքանչյուր զբաղմունքի զարկերակն են շոշափում և իրենք իրենց զեկուցում. ահա, իբրև թե, ես ինչ եմ զգում, ահա ինչ եմ ես մտածում։ Օգտակար, գործնական պարապմունք։ Ա՛խ, եթե մեզանում խելացի մարդիկ լինեն, չէր հեռանա մեզանից այդ աղջիկը, այդ զգայուն հոգին չէր գուրս պրծնի, ինչպես ջուրն ընկնող ձուկը։ Սա ի՞նչ բան է, Ուվար Եվսեևիչ։ Ե՞րբ կգա մեր ժամանակը։ Ե՞րբ կծնվեն մեզանում մարդիկ։

— Ժամանակ տուր,— պատասխանեց Ուվար Իվանովիչը,— կլինեն։

— Կլինե՞ն։ Հոգ։ Սեահոգի ուժ։ Դու ասացիր՝ կլինե՞ն։ Տես, ես կգրեմ ձեր խոսքը։ Բայց ինչո՞ւ եք ճրագը հանգցրեցնում։

— Քնել եմ ուզում, մնաս բարով։

XXXI

Հուբինը Ելենան առաց։ Ելենայի ամուսնության անակնկալ լուրը քիչ էր մնում կործաներ Աննա Վասիլևնային։ Նա ընկավ անկողին։ Նիկոլայ Արտեմիչը պահանջում էր նրանից, որ թույլ չտա աղջկան երևալ իր աչքին. նա կարծես ուրախացել էր, որ առիթ է ներկայանում ցույց տալու իրեն տանտիրոջ լիակատար նշանակությամբ, ընտանիքի գլխավորի ամբողջ ուժի մեջ. նա անընդհատ աղմկում էր և որոտում մայրիկանց վրա, մի գլուխ ասելով. «Ես ձեզ կապացուցեմ ով եմ ես, ես ձեզ զգացնել կտամ ինձ, սպասեցեք»։ Քանի նա նստած էր տանը, Աննա Վասիլևնան չէր տեսնում Ելենային և բավականանում էր Զոյայի ներկայությամբ, որը շատ հեռանալով ծառայում էր նրան, իսկ ինքն իրեն մտածում էր «Disen Insaroff vorziehen—und vem![1], բայց հենց որ Նիկոլայ Արտեմիչը տանից հեռանում էր (իսկ այդ բաժականին հաճախ էր պատահում. Ավգուստինա Խրիստիանովնան ճիշտ որ վերադարձել էր), Ելենան գալիս էր մոր մոտ, և սա, երկար, լուռ, արտասվելով, նայում էր նրան։ Այդ համր հանդիմանությունը ամեն ուրիշ բանից ավելի խորն էր թափանցում Ելենայի սրտի մեջ. զղջում չէր նա զգում այդպիսի ժամանակ, այլ խորին, անվերջ խղճահարություն, որ նման էր զղջման...

— Մայրիկ, սիրելի մայրիկ,— կրկնում էր նա՝ համբուրելով նրա ձեռքերը,— ի՞նչ կարող էի անել։ Ես մեղավոր չեմ, ես սիրեցի նրան, ես ուրիշ կերպ վարվել չէի կարող։ Մեղադրեցեք ճակատագրին. նա ինձ կապեց մի մարդու հետ, որը դուր չի գալիս հայրիկին, որը տանում է ինձ ձեզանից։

— Օ՜հ,— ընդհատում էր նրան Աննա Վասիլևնան,— մի հիշեցրու ինձ այդ մասին։ Հենց որ միտս եմ բերում, թե դու ուր ես ուզում գնալ, սիրտս թուլանում է։

— Սիրելի մայրիկ,— պատասխանում էր Ելենան,— մխիթարվեցեք գոնե նրանով, որ կարող էր ավելի վատը լինել. ես կարող էի մեռնել։

[1] Ինչպես Ինսարովին և ոմի՞ց (գերմ.)։

— Եվ ես հենց այժմ էլ հույս չունեմ այլևս տեսնելու քեզ։ Կամ դու կյանքդ կվերջացնես այնտեղ, մի որևէ շարժական խրճիթի մեջ (Աննա Վասիլևնային Բուլղարիան պատկերանում էր Սիբիրի տունդրաների նման մի բան), կամ թե ես չեմ տանի անջատումը...

— Մի ասեք այդ, բարի մայրիկս, մենք դեռ կտեսնվենք, աստված կտա։ Իսկ Բուլղարիայում այնպիսի քաղաքներ կան, ինչպես այստեղ։

— Ինչ քաղաքներ, ինչ բան։ Այնտեղ այժմ պատերազմ է. այնտեղ այժմ, ես կարծում եմ, ուր էլ որ գնաք, թնդանոթներն են արձակում։ Դու պատրաստվում ես շո՞ւտ գնալ։

— Շուտ... եթե միայն հայրիկը... Նա ուզում է գանգատվել, նա սպառնում է բաժանել մեզ։

Աննա Վասիլևնան աչքերը դեպի երկինք բարձրացրեց.

— Ո՛չ, Լենոչկա, նա չի գանգատվի։ Ես ինքս ոչ մի կերպ համաձայն չէի լինի այս հարսանիքին, կմեռնեի՝ չէի համաձայնի։ Բայց հո եղածը եղել է պրծել, իսկ ես չեմ թույլ տա խայտառակել իմ աղջկան։

Այսպես անցավ մի քանի օր։ Վերջապես Աննա Վասիլևնան սիրտ առավ, և մի երեկո փակվեց իր ամուսնու հետ միասին իր ննջարանում։ Տան մեջ ամեն ինչ լռեց ու անշարժացավ... Սկզբում ոչինչ չէր լսվում. հետո որոտաց Նիկոլայ Արտեմևիչի ձայնը, հետո վեճ սկսվեց, բարձրացան աղաղակներ. լսվեցին նույնիսկ հեծեծանքներ էլ... Արդեն Շուբինը աղախինների և Զոյայի հետ միասին պատրաստվում էր նորից օգնության հասնել, բայց աղմուկը ննջարանում սկսեց հետզհետե թուլանալ, փոխվել խոսակցության և լռեց։ Միայն երբեմն-երբեմն լսվում էին թույլ հեկեկանքներ—դրանք էլ վերջացան։ Զրնգացին բանալիները, լսվեց բացվող գզրոցի ճռռոցը... Դուռը բացվեց և երևաց Նիկոլայ Արտեմևիչը։ Խստությամբ նայեց նա բոլոր պատահողների վրա և գնաց ակումբ, իսկ Աննա Վասիլևնան իր մոտ պահանջեց Ելենային, պինդ գրկեց նրան և դառն արտասուքներ թափելով ասաց.

— Ամեն ինչ հարթված է, հայրդ պատմություն չի սարքի, և այժմ ոչինչ չի խանգարում քեզ գնալ... ձգել մեզ։

— Դուք թույլ կտա՞ք Դմիտրիին՝ գալ շնորհակալություն

հայտնել ձեզ,— հարցրեց Ելենան իր մորը, երբ նա մի քիչ հանգստացավ։

— Սպասի՛ր, հոգյակս, չեմ կարող ես այժմ տեսնել մեզ բաժանողին։ Մեկնելուց առաջ կարելի է։

— Մեկնելուց առաջ,— տխրությամբ կրկնեց Ելենան։

Նիկոլայ Արտեմևիչը համաձայնեց «պատմություն չսարքել», բայց Աննա Վասիլևնան չասաց իր աղջկան, թե ինչ գնով նա տվեց իր համաձայնությունը։ Նա չասաց, որ խոստացավ վճարել նրա բոլոր պարտքերը և ձեռքից ձեռք տվեց նրան հազար ռուբլի արծաթ դրամով։ Բացի դրանից, նա վճռականապես հայտնեց Աննա Վասիլևնային, որ չի ուզում հանդիպել Ինսարովին, որին շարունակում էր չերնոգորցի անվանել, իսկ գնալով ակումբ, առանց որևէ հարկավորության, խոսեց Ելենայի հարսանիքի մասին իր խաղընկերոջ, պաշտոնաթող ինժեներական գեներալի հետ։ «Դուք լսե՞լ եք,— խոսեց նա մի շինծու անփութությամբ,— իմ աղջիկը չափազանց շատ գիտնականությունից ամուսնացել է ինչ-որ ուսանողի հետ»։ Գեներալը նայեց նրան ակնոցների միջից ու մնաց, «հը՛մ» արեց և հարցրեց, թե ինչով է նա խաղում։

XXXII

Իսկ մեկնելու օրը մոտենում էր։ Նոյեմբերն արդեն վերջանում էր։ Անցնում էին վերջին ժամկետները։ Ինսարովը վաղուց վերջացրել էր իր բոլոր պատրաստությունները և այրվում էր Մոսկվայից շուտով դուրս գալու ցանկությամբ։ Բժիշկն էլ էր շտապեցնում նրան. «Ձեզ հարկավոր է տաք կլիմա,— ասում էր նա նրան,— այստեղ դուք չեք լավանա»։ Անհամբերությունը ճնշում էր և Ելենային. նրան անհանգստացնում էր Ինսարովի գունատությունը, նրա նիհարությունը։ Ելենան հաճախ ակամա երկյուղով նայում էր նրա փոխված դիմագծերին։ Ծնողների տան մեջ նրա դրությունը անտանելի էր դառնում։ Մայրը աղոթում էր նրա վրա, ինչպես մեռածի վրա, իսկ հայրը վարվում էր նրա հետ արհամարհական սառնությամբ, անջատման մոտիկությունը հորն էլ էր գաղտնի տանջում, բայց նա իր պարտքն

էր համարում, վիրավորված հոր պատիվը, թաքցնել իր զգացմունքները, իր թուլությունը։ Աննա Վասիլևնան ցանկացավ վերջապես տեսնվել Ինսարովի հետ։ Վերջինիս տարան նրա մոտ ծածկաբար, հետևի անդրանցով։ Երբ նա մտավ սենյակ, Աննա Վասիլևնան երկար ձեր կարողանում խոսել նրա հետ, նույնիսկ սիրտ չէր անում նայել նրան։ Ինսարովը նստեց նրա բազկաթոռի մոտ և մի հանդարտ հարգանքով սպասում էր նրա առաջին խոսքին։ Ելենան նստած էր այդտեղ և իր ձեռքի մեջ բռնած ուներ մոր ձեռքը։ Աննա Վասիլևնան վերջապես բարձրացրեց աչքերը, ասաց. «Ասաված ինի ձեր դատավորը, Դմիտրի Նիկանորովիչ»... և կանգ առավ. հանգիմանությունները սառեցին նրա շրթունքների վրա։— Բայց դուք հիվանդ եք,— բացականչեց նա,— Ելենա, նա հիվանդ է։

— Ես տկար էի, Աննա Վասիլևնա,— պատասխանեց Ինսարովը,— և այժմ էլ դեռ բոլորովին չեմ կազդուրվել, բայց ես հույս ունեմ, որ հայրենիքի օդը ինձ վերջնականապես կկազդուրի։

— Այո՛... Բալդաբան,— թոթոփեց Աննա Վասիլևնան և մտածեց. «Ասված իմ, բուլդարացի, մեռնող, ձայնը կարծես տակառից է դուրս գալիս, աչքերը խոր ընկած, կատարյալ կմախք, նրա սերթուկը ասես ուրիշի ուսերից լինի հանված, դեղին է, ինչպես երիցուկ, և Ելենան նրա կինն է, նրան սիրում է... սիրտ սա մի ինչ-որ երազի է նման...»։ Բայց նա խակուն գոչեց իրեն։— Դմիտրի Նիկանորովիչ,— ասաց նա,— դուք անպատճառ, անպատճառ պիտի դնաք։

— Անպատճառ, Աննա Վասիլևնա։

Աննա Վասիլևնան նայեց նրան։

— Օ՛հ, Դմիտրի Նիկանորովիչ, ասաված չանի, որ դուք ապրեք այն, ինչ ես եմ այժմ ապրում... Բայց դուք խոստանում եք ինձ պահպանել Ելենային, սիրել նրան... Նյութական կարիք դուք չեք զգա, քանի ես կենդանի եմ։

Արտասուքները խլացրին նրա ձայնը։ Նա բաց աթոց իր գրիչը, Ելենան ու Ինսարովը փարվեցին նրան։

Ճակատագրական օրը հասավ վերջապես։ Որոշված էր, որ Ելենան հրաժեշտ տա իր ծնողներին տանը, իսկ ճանապարհ կընկներ Ինսարովի բնակարանից։ Մեկնումը նշանակված էր ժամը տասներկուսին։ Նշանակված ժամից քառորդ ժամ առաջ եկավ Բերսենևը։ Նա կարծում էր, որ կպատահի Ինսարովի մոտ նրա հայրենակիցներին, որոնք կկամենան նրան ճանապարհ դնել, բայց պարզվեց որ, նրանք բոլորն էլ առաջ էին գնացել։ Գնացել էին նույնպես և ընթերցողին հայտնի երկու խորհրդավոր անձնավորությունները (նրանք էին վկաները Ինսարովի պսակադրության)։ Դերձակը դիմավորեց «բարի աղային» գլուխ տալով։ Նա, երևի, վշտից, բայց գուցե և ուրախությունից, որ կահ-կարասին իրեն էր մնում, սաստիկ խմել էր. կինը նրան շուտով տարավ։ Սենյակում ամեն ինչ արդեն հավաքած էր։ Թոկով կապած ճամպրուկն ընկած էր հատակին։ Բերսենևը մտածմունքի մեջ ընկավ. շատ հիշողություններ անցան նրա հոգու միջով։

Ժամը տասներկուսը վաղուց էր խփել և կառապանն արդեն բերել էր ձիերը, իսկ «նորապսակները» դեռ չէին երևում։ Վերջապես լսվեցին սանդուղքի վրա շտապ քայլեր և Ելենան ներս մտավ Ինսարովի և Շուբինի հետ։ Ելենայի աչքերը կարմիր էին. նա թողել էր իր մորը ուշաթափ պառկած. հրաժեշտը շատ ծանր էր։ Ելենան շաբաթից ավելի էր, ինչ չէր տեսել Բերսենևին. վերջին ժամանակները Բերսենևը շատ քիչ էր գնում Ստախովների մոտ։ Ելենան չէր սպասում, թե կհանդիպի նրան, ու բացականչեց. «Դուք, շնորհակալություն ձեզ», և փաթաթվեց նրա պարանոցին։ Ինսարովը նույնպես գրկեց նրան։ Ճնշող լռություն տիրեց։ Ի՞նչ կարող էին ասել այս երեք մարդիկ, ի՞նչ էին զգում այս երեք սրտերը։ Շուբինը հասկացավ, որ անհրաժեշտ է մի կենդանի ձայնով, խոսքով վերջ դնել այդ ճնշող դրությանը։

— Էլի հավաքվել է մեր երրորդությունը,— խոսեց նա,— վերջին անգամ։ Հնազանդվենք ճակատագրի հրամաններին, բարությամբ հիշենք անցյալը և աստուծով ընթանանք դեպի նոր կյանք։ «Աստուծով դեպի հեռավոր ճանապարհը» երգեց նա և կանգ առավ։ Հանկարծ նա ամաչեց ու անհարմար զգաց։ Մեղք բան է երգել այնտեղ, ուր դրված է մեռելը, իսկ այս վայրկյանին, այս սենյակի մեջ, մեռնում էր այն անցյալը, որի մասին նա հիշեց, անցյալը այն մարդկանց, որոնք հավաքվել էին այնտեղ։ Նա մեռնում էր։

ասենք, նոր կյանքի համար վերածնվելու... բայց և այնպես էլի մեռնում էր։

— Դեհ, Ելենա,— սկսեց Ինսարովը դիմելով կնոջը,— կարծեմ ամեն ինչ վերջացավ։ Ամեն ինչ վճարված է, դասավորված է։ Մնում է միայն այս ճամպրուկը քարշ տալ։ Բնակարանատե՛ր։

Բնակարանատերը ներս մտավ իր կնոջ և աղջկա հետ։ Նա, թեթև կերպով օրորվելով, լսեց Ինսարովի հրամանը, ճամպրուկը գցեց ուսին և արագ վազեց սանդուղքով դեպի ցած, թրխկացնելով իր կոշիկներով։

— Այժմ, ռուսական սովորությամբ, պետք է նստել,— նկատեց Ինսարովը։

Ամենքը նստեցին, Բերսենևը տեղավորվեց հին բազմոցի վրա. Ելենան նստեց նրա կողքին, դերձակի կինն ու աղջիկը կանգնեցին շեմքի մոտ։ Ամենքը լռեցին. ամենքը լարված ժպտում էին, և ոչ ոք չգիտեր, թե ինչու է ժպտում. ամեն մեկն ուզում էր հրաժեշտի մի որևէ խոսք ասել, և ամեն մեկը (բացի, իհարկե, դերձակի կնոջից և նրա աղջկանից, որոնք միայն պլշել էին իրենց աչքերը) զգում էր, որ այս պիսի բոպեներին կարելի է միայն լպիրշ բառեր արտասանել, որ յուրաքանչյուր խելացի կամ պարզապես սրտագին խոսքը կլիներ անտեղի, համարյա կեղծ բան։ Ինսարովն առաջինը վեր կացավ և սկսեց խաչ հանել երեսին... «Մնաս բարով, մեր սենյակ»,— բացականչեց նա։

Լսվեցին համբույրներ, բաժանման հնչուն, բայց սառը համբույրներ, ողջերթի թերասած բարեմաղթություններ, գրելու խոստումներ, վերջին, ճնշված մնաս բարովի խոսքեր...

Ելենան, ամբողջովին արտասուքների մեջ, արդեն նստում էր սայլակ։ Ինսարովը հոգատարությամբ ծածկում էր նրա ոտները գորգով. Շուբինը, Բերսենևը, բնակարանատերը, նրա կինը, աղջիկն իր անխուսափելի թաշկինակը գլխին, դռնապանը, մի օտար արհեստավոր, որը հագել էր զոլ-զոլ խալաթ, ամենքը կանգնած էին պատշգամբի մոտ, երբ հանկարծ բակ ներս թռավ մի հարուստ սահնակ, որին լծած էր մի՛ ամեհի արագավազ ձի, և սահնակից, թափ տալով ձյունը վերարկուի օձիքից, ցած թռավ Նիկոլայ Արտեմևիչը։

— Հասա, փառք աստծո,— բացականչեց նա և վազեց սայլակի մոտ։— Ահա քեզ, Ելենա, մեր վերջին ծնողական օրհնությունը,— ասաց նա՝ հանելով սերթուկի գրպանից մի փոքրիկ եկեղեցական պատկեր, որը կարված էր թավիշե քսակի մեջ, կախեց նրա վզից։ Ելենան հեկեկաց և սկսեց համբուրել նրա ձեռքերը, իսկ կառապանը, այդ միջոցին հանեց սահնակի առջևից կես շիշ շամպայն և երեք բաժակ։

— Դե՛,— ասաց Նիկոլայ Արտեմևիչը, իսկ նրա արտասուքները կաթկաթում էին վերարկուի մորթե օձիքի վրա,— պետք է ճանապարհ դնել... և ցանկալ...— Նա սկսեց շամպայնը լցնել. նրա ձեռքերը դողում էին, փրփուրը բարձրանում էր բաժակների եզրերից և թափվում ձյունի վրա։ Նա վերցրեց մի բաժակ, իսկ մյուս երկուսը տվեց Ելենային և Ինսարովին, որ արդեն կարողացել էր տեղավորվել նրա կողքին։— Աստված տա ձեզ...— սկսեց Նիկոլայ Արտեմևիչը և չկարողացավ վերջացնել ու խմեց դինին. նրանք նույնպես խմեցին։— Այժմ պետք է, որ դուք, պարոններ,— ավելացրեց նա դիմելով Շուբինին և Բերսենևին, բայց այդ վայրկյանին կառապանը շարժեց ձիերը։ Նիկոլայ Արտեմևիչը վազեց սայլի կողքից։— Տե՛ս, գրիր մեզ,— ասում էր նա ընդհատվող ձայնով։ Ելենան բարձրացրեց գլուխը, ասաց՝ «Մնացեք բարով, հայրիկ, Անդրեյ Պետրովիչ, Պավել Յակովլևիչ, բարով մնացեք ամենքդ, բարով մնաս, Ռուսաստան» և ետ նստեց։ Կառապանը մտրակը շարժեց, շվացրեց, սայլակը ճռռալով ձյունի վրա դռներից դեպի աջ ծռվեց ու անհետացավ։

XXXIII

Ապրիլյան մի պայծառ օր էր։ Լայն ծովախորշով, որը բաժանում էր Վենետիկը ծովի բերած ավազի այն շերտից, որը կոչվում էր Լիդո, սահում էր սրակուրծք մի գոնդոլ, հանդարտ օրորվելով ամեն անգամ, երբ գոնդոլավարն ընկնում է նրա երկար թիակի վրա։ Գոնդոլի ցածրիկ կտուրի տակ, կաշվե փափուկ բարձերի վրա, նստած էին Ելենան և Ինսարովը։

Ելենայի դեմքի գծերը քիչ էին փոխվել Մոսկվայից ճա-

նապարհվելու գրից, բայց նրանց արտահայտությունը ուրիշ էր դառել. այդ արտահայտությունն ավելի խելամիտ էր ու խիստ, իսկ աչքերը նայում էին ավելի համարձակ։ Նրա ամբողջ մարմինը ծաղկել էր, և մազերը կարծես ավելի փարթամ ու խիտ կերպով էին ընկած սպիտակ ճակատի և թարմ այտերի երիտասարդությամբ։ Միայն նրա շրթունքների մեջ, երբ նա չէր ժպտում, հազիվ նկատելի ծալքով հայտնվում էր ինչ-որ մշտական զգաստի հոգի ներկայությունը։ Ինսարովի դեմքի արտահայտությունը, ընդհակառակը, մնացել էր նույնը, բայց նրա գծերը ստատիկ փոխվել էին։ Նա նիհարել էր, ծերացել, գունատվել, կորացել. նա համարյա անդադար հոգում էր կարճ, չոր հազով, և նրա խոր ընկած աչքերը մի ստատիկ փայլ էին տալիս։ Գուանտանամոյից այստեղ գալիս, Ինսարովը համարյա երկու ամիս հիվանդ պառկեց Վիեննայում, և միայն մարտի վերջին կնոջ հետ եկավ Վենետիկ. նա այդտեղից հույս ուներ Զարուի վրայով անցնել Սերբիա, Բուլգարիա. մյուս ճանապարհները նրա համար փակված էին։ Գատերագմն արդեն եռում էր Դանուբի վրա, Սերբիան և Ֆրանսիան հայտարարել էին Ռուսաստանին պատերազմ, բոլոր սլավոնական երկրները հուզվում էին և պատրաստվում ապատամբության։

Գոնդոլը մոտեցավ Լիդոյի ներքին ծայրին։ Ելենան և Ինսարովը գնացին նեղ ավազոտ ճանապարհով, որի երկու կողմով անկված էին փոքրիկ դալուկ ծառեր (տնկում են ամեն տարի, և այդ ծառերը մեռնում են ամեն տարի), դեպի Լիդոյի արտաքին ծայրը, դեպի ծովը։

Նրանք գնացին ափով։ Ադրիատիկ ծովը թավալում էր նրանց առաջ իր պղտոր-կապույտ ալիքները. դրանք փրփրում էին, ֆշշում, առաջ էին վազում, և ետ-ետ գլորվում, թողնելով ավազի վրա փոքրիկ խխունջներ և ծովային խոտերի կտորտանք։

— Ինչ տխուր տեղ է,— նկատեց Ելենան։— Ես վախենում եմ, որ միգուցե այստեղ քեզ համար չափազանց ցուրտ լինի. բայց ես հասկանում եմ, թե ինչու ուզեցիր այստեղ գալ։

— Ցուրտ է,— պատասխանեց արագ, բայց դառն հեգնությամբ Ինսարովը։— Լավ զինվոր կլինեմ ես, եթե վախենամ ցրտից։ Իսկ այստեղ եկա ես... կասեմ թե ինչու։ Նայում եմ ես այս ծովին, և ինձ թվում է, թե այստեղից մոտիկ է իմ հայրենիքը։ Նա ախր այնտեղ է,— ավելացրեց Ինսարովը, ձեռքը մեկնելով դեպի արևելք։— Ահա քամին էլ այն կողմից է գալիս։

— Այդ քամին արդյոք չի՞ բերի դեպի այս կողմ այն նավը, որին դու սպասում ես,— ասաց Ելենան։— Ահա ապրիլին է տալիս առագաստը, նա չէ՞ արդյոք։

Ինսարովը նայեց ծովային հեռավորությանը, դեպի որը ցույց էր տալիս Ելենան։

— Ռենդիչը խոստացավ մինչև շաբաթ ամեն ինչ սարքել մեզ համար,— նկատեց նա։— Նրան, կարծեմ, կարելի է վստահել... Լսե՞լ ես դու, Ելենա,— ավելացրեց նա հանկարծակի ոգևորվելով,— ասում են դալմատական ափերում ձկնորսները նվիրեցին իրենց կապարիկները, գիտե՞ս ինչ են դրանք։ Դրանք այն ծանրություններն են, որոնցով ուսկանները ջրի տակն են իջեցնում, գնդակներ ձուլելու համար ժեռ։ Փող նրանք չունեին, ապրում են միմիայն ձկնորսությամբ, բայց ուրախությամբ տվին իրենց վերջին ունեցածը, և այժմ ազատ են։ Ինչ ժողովուրդ է։

— Aufgepasst![1],— կանչեց նրանց հետևում մի դուռ ձայն։ Լավեց ձիու սմբակների խուլ դոփյունը, և ավստրիական մի սպա, կարմիկ մորթազուրկ տյունիկ հագած և կանաչ գլխարկ դրած, սլացավ նրանց մոտով... Նրանք հազիվ կարողացան մի կողմ քաշվել։

Ինսարովը մռայլ կերպով նայեց նրա հետևից։

— Նա մեղավոր չէ,— ասաց Ելենան,— գիտես, նրանք ուրիշ տեղ չունեն, որպեսզի ձիերին վարժեցնեն։

— Նա մեղավոր չէ,— պատասխանեց Ինսարովը,— բայց իմ արյունը շարժեց իր աղաղակով, իր բեղերով, իր գլխարկով, իր ամբողջ արտաքինով։ Վերադառնանք։

— Վերադառնանք, Դմիտրի։ Բացի դրանից, այստեղ իսկապես որ փչում է։ Դու Մոսկվայի հիվանդությունից հետո քեզ չպահպանեցիր, դրա համար տուժեցիր Վիեննայում։ Այժմ պետք է զգույշ լինել։

---

[1] Զգո՞ւյշ (գերմ.)։

Ինսարովը լռեց, միայն նախկին դառն հեգնանքը սահեց նրա շրթունքների վրայով։

— Ուզո՞ւմ ես,— շարունակեց Ելենան,— զբոսնենք Canal Grande-ով։ Չէ՞ այն ժամանակից վեր, ինչ մենք այստեղ ենք, դեռ լավ չենք տեսել Վենետիկը։ Իսկ երեկոյան կգնանք թատրոն. ես օթյակի համար երկու տոմսակ ունեմ. ասում են, թե նոր օպերա են տալիս։ Ուզում ես, այսօրվա օրը մենք նվիրենք միմյանց, մոռանանք քաղաքականությունը, պատերազմը, ամեն ինչ, իմանանք միայն մի բան, որ մենք ապրում ենք, շնչում ենք, մտածում ենք միասին, որ մենք միացած ենք ընդմիշտ... Ուզո՞ւմ ես։

— Դու այդ ես ուզում, Ելենա,— պատասխանեց Ինսարովը,— նշանակում է, ես էլ եմ այդ ուզում...

— Ես այդ գիտեի,— նկատեց Ելենան ժպտալով։— Գնանք, գնանք։

Նրանք վերադարձան գոնդոլի մոտ, նստեցին և հրամայեցին տանել իրենց, առանց շտապելու, Canal Grande-ով։

Ով չի տեսել Վենետիկը ապրիլին, նրան հազիվ թե ծանոթ լինի այդ կախարդական քաղաքի ամբողջ աննկարագրելի չքնաղությունը։ Գարնան հեզությունն ու քնքշությունն այնպես են սազում Վենետիկին, ինչպես որ ամառվա պայծառ արևը հոյակապ Ճենովային, ինչպես աշնան ոսկին ու ծիրանին մեծ ծերունի Հռոմին։ Գարնան նման, Վենետիկի գեղեցկությունն էլ և՛ հուզում է, և՛ բորբոքում ցանկությունները. նա տանջում է և գրգռում անփորձ սիրտը, ինչպես մոտիկ առեղծվածային, բայց խորհրդավոր երջանկության խոստումը։ Ամեն ինչ նրա մեջ պայծառ է, հասկանալի, և ամեն ինչ սքողված ինչ-որ սիրահարված խաղաղության քնաբեր մուխով. ամեն ինչ նրա մեջ լուռ է, և ամեն ինչ հաճելի. ամեն ինչ նրա մեջ կանացիական է, սկսած հենց նրա անունից. իզուր չեն նրան տվել Չ ք ն ա ղ ա գ ե ղ անունը։ Վիթխարի պալատներն ու եկեղեցիները կանգնած են թեթև, հրաշալի, ինչպես երիտասարդ աստծու ներդաշնակ երազը. ինչ-որ հեքիաթային, ինչ-որ թովիչ ու օտարոտի բան կա ջրանցքների համր ալիքի կանաչագորշ երանգի և մետաքսանման փայլփլոցի մեջ, գոնդոլների անձայն վազքի մեջ, քաղաքային կոպիտ ձայների, կոպիտ թխկթխկոցի, ճայթյունների և աղմուկի բացակայության մեջ։ «Վենետիկը մեռնում է, Վենետիկը դատարկվել է» ասում են ձեզ նրա բնակիչները, բայց գուցե հենց այդ վերջին չքնաղությունը, գեղեցկության ծաղկման և հաղթանակի մեջ տեղի ունեցող թառամումի չքնաղությունն է, որ պակասում էր նրան։ Եվ ով այդ չի տեսել, նա չի ճանաչում. ոչ Կանալետտին, ոչ Գվարդին (չխոսելով այլևս նորագույն նկարիչների մասին) ուժ չունեն արտահայտելու օդի այդ արծաթային քնքշությունը, այդ հեռացող և մոտակա հեռավորությունը, այդ ամենագողտրիկ գծագրությունների և հալվող գույների ներդաշնակությունը։ Սքանչելի կյանքն իր անցկացրած, կյանքից խորտակված մարդը Վենետիկ այցելելու կարիք չունի. Վենետիկն այդպիսի մարդու համար դառն կլինի, ինչպես սկզբնական օրերին չիրականացած իղձերի հիշողությունը, բայց քաղցր կլինի Վենետիկը նրա համար, ում մեջ դեռևս եռում են ուժերը, ով իրեն բարեբախտ է զգում. թող այդպիսին բերի իր երջանկությունը Վենետիկի հմայված երկնքի տակ, և որքան էլ այդ երջանկությունը լուսաճաճանչ լինի, Վենետիկը էլի կոսկեզօծի նրան իր անթառամ փայլով։

Գոնդոլը, որի մեջ նստած էին Ինսարովը և Ելենան, կամացուկ անցավ Riva dei Schiavoni, Դոժերի պալատի, Պիազզետտայի մոտով և մտավ Մեծ Ջրանցքը։ Երկու կողմերից սկսվեցին մարմարյա պալատները. նրանք, կարծես, հանդարտ լողում էին մոտով, հազիվ թույլ տալով հայացքին՝ ընդգրկել և ըմբռնել իր բոլոր գեղեցկությունները։ Ելենան զգում էր իրեն խորապես երջանիկ. նրա երկնքի կապուտակության մեջ մի մութ ամպիկ կար միայն, այն էլ հեռանում էր. Ինսարովը այդ օրն անհամեմատ լավ էր զգում իրեն։ Նրանք հասան Ռիալտոյի թեք կամարին և ետ դարձան։ Ելենան վախենում էր եկեղեցիների ցրտությունից Ինսարովի համար. բայց նա հիշեց delle Belle Arti ակադեմիան և հրամայեց գոնդոլավարին գնալ այնտեղ։ Նրանք շուտով պտտեցին այդ փոքրիկ թանգարանի բոլոր դահլիճները։ Չլինելով ո՛չ հմուտ, ո՛չ էլ սիրող, նրանք կանգ չէին առ-

նում յուրաքանչյուր պատկերի առաջ, չէին բռնադատում իրենց, մի ինչ-որ պատիժ ուրախություն անակնկալ կերպով համակեց նրանց։ Նրանց հանկարծ ամեն ինչ թվաց զվարճալի (երեխաներին լավ է հայտնի այդ զգացումը)։ Ի՞նչ զարմանք երեք այցելու անգլիացիներին, Ելենան արտասվելու չափ քրքջում էր Ֆինտորետտոյի տարբ Մարկոսի վրա, որը թռչում է երկնքից, ինչպես գորտը ջրի մեջ՝ խոշտանգվող սարսուռին ազատելու համար. իր կողմից Ինսարովը հիացած մնաց՝ տեսնելով կանաչ քղամիդ հագած այն եռանդոտ մարդու մեջքն ու սրունքները, որ կանգնած է Տիցիանի Հ ա մ բ ա ր ձ մ ա ն պատկերի առաջին պլանում և բարձրացնում է ձեռքերը տիրամոր հետևից, բայց ինքը տիրամայրը,— մի չքնաղագեղ ուժեղ կին, որը հանգիստ և վեհ կերպով սլանում է դեպի հայր-աստծու գիրկը,— ապշեցրեց թե՛ Ինսարովին և թե՛ Ելենային. դուր եկավ նրանց նույնպես և ծերունի Ջիմա դե-Կոնելյանոյի խիստ և սուրբ պատկերը։ Դուրս գալով ակադեմիայից, նրանք մի անգամ էլ նայեցին իրենց հետևից եկող անգլիացիներին, որոնք նապաստակի պես երկար ատամներ և կախ ընկած այտամորուք ունեին, և ծիծաղեցին. տեսան իրենց գոնդոլավարին իր պոչատ բաճկոնով և կարճիկ վարտիքով և ծիծաղեցին. տեսան մանրավաճառ կնոջը, որ սպիտակ մազերը կապել, փունջ էր արել գագաթի վրա՝ և ավելի թունդ ծիծաղեցին. վերջապես միմյանց դեմքի նայեցին և ծիծաղից թուլացան, իսկ հենց որ նստեցին գոնդոլի մեջ՝ պինդ սեղմեցին իրար ձեռքերը։ Նրանք եկան հյուրանոց, վազեցին իրենց սենյակը և հրամայեցին ճաշ բերել իրենց համար։ Նրանց ուրախությունը շարունակվեց ճաշի վրա ևս։ Նրանք իրար հյուրասիրում էին, խմում էին Մոսկվայի բարեկամների կենացը, ծափահարում էին ծառային ձկան համեղ խորտիկի համար, և շարունակ պահանջում էին նրանից կենդանի frutti di mare[1]։ Սպասավորը ուսերը վեր էր քաշում և ոռոներով քստացնում, իսկ նրանց սենյակից դուրս գալիս շարժում էր գլուխը, և մի անգամ նույնիսկ հառաչելով

[1] Ծովային պտուղներ, այսինքն ուտելի խխունջներ (իտալ.)։

շշնջաց։ poveretti (խեղճեր)։ Ճաշից հետո նրանք գնացին թատրոն։

Թատրոնում տալիս էին Վերդիի, խղճալի ասած, բավականին գռեհիկ, բայց եվրոպական բոլոր բեմերում արդեն ընդունված և մեզ, ռուսներիս, լավ հայտնի «Տ ր ա վ ի ա տ ա» օպերան։ Թատերաշրջանը Վենետիկում անցել էր, և բոլոր երգիչները միջակությանից մակարդակից չէին բարձրանում, ամեն մեկը բղավում էր, որքան ուժ ուներ։ Վիոլետտայի դերը կատարում էր մի արտիստուհի, որը համբավ չուներ, և դատելով հասարակության վերաբերմունքից՝ նրան չէին սիրում, թեև շնորհքից զուրկ չէր։ Դա մի երիտասարդ, ոչ շատ գեղեցիկ, սևաչյա աղջիկ էր՝ ոչ բոլորովին համաչափ և արդեն ջարդված ձայնով։ Նա հագել էր միամտության չափ խայտաբղետ և անճաշակ. կարմիր ցանցը ծածկում էր նրա մազերը, գունաթափ կապույտ կերպասից կտրած հագուստը ճնշում էր նրա կուրծքը, շվեդական հատ ձեռնոցները հասնում էին սուր արմունկներին. և ի՞նչպես կարող էր նա, մի որևէ բերդամցի հովվի աղջիկ, իմանալ, թե ինչպես են հագնվում Փարիզի կամելիաները։ Բեմի վրա իրեն պահել էլ չէր իմանում նա. բայց նրա խաղի մեջ կար շատ ճշմարտություն և միամիտ պարզություն, և երգում էր նա արտահայտության և ռիթմի մի այնպիսի կրքոտությամբ, որն հաջողվում է միայն խտալացիներին։ Ելենան և Ինսարովը նստած էին երկուսով մութ օթյակում, բարբրոլին մոտ բեմին. ասես ուրախ տրամադրությունը, որ համակել էր նրանց delle Belle Arti ակադեմիայում, դեռ չէր անցել։ Երբ գայթակղեցնող կնոջ ցանցերն ընկած գրգռիչ պատանու հայրը երևաց բեմի վրա իր սխտորագույն ֆրակով և սպիտակ, ցրված կեղծ մազերով, բաց արեց ծուռ բերանը և, ինքն էլ առաջուց շփոթվելով, արձակեց վիճաբասային տ ր ե մ ո ր ո ն, նրանք երկուսով քիչ էր մնում փոթկացին... Բայց Վիոլետտայի խաղը ազդեց նրանց վրա։

— Այս խեղճ աղջկան հանդիսատեսները չեն ծափահարում,— ասաց Ելենան,— իսկ ես հազար անգամ նախապատվություն եմ տալիս նրան մի որևէիցն ինքնավստահ, երկրորդական հաջողի տեր դերասանուհուց, որը կկոտրատ-

վեր և ծամածռություններ կաներ, ամբողջ ժամանակ ջանում է տպավորություն գործել։ Այս մեկը կարծես հանաքներ անելու տրամադրություն չունի. տե՛ս, նա չի նկատում հասարակությանը։

Ինսարովը օթյակի բազրիքին ընկավ և ուշադրությամբ նայեց Վիոլետտային։

— Այո,— արտասանեց նա,— նա հանաք չի անում, մահվան հոտ է գալիս։

Ելենան լռեց։

Սկսվեց երրորդ գործողությունը։ Վարագույրը բարձրացավ... Ելենան ցնցվեց, տեսնելով այդ անկողինը, այդ կախ գցած վարագույրները, դեղերով լի սրվակները, կիսով չափ իջեցրած լամպը... Նա հիշեց մոտիկ անցյալը... «Իսկ ապագա՞ն, իսկ ներկա՞ն»,— փայլեց նրա գլխում։ Կարծես դիտմամբ, ի պատասխան դերասանուհու կեղծ հազին, օթյակում լսվեց Ինսարովի խուլ, իսկական հազը... Ելենան զողտուկ նայեց նրան և իսկույն տվեց իր գծերին անշփոթ և հանգիստ արտահայտություն. Ինսարովը նրան հասկացավ և ինքն էլ սկսեց ժպտալ և շատ ցած ձայնով մասնակցել երգեցողության։

Բայց նա շուտով լռեց։ Վիոլետտայի խաղը գնալով լավանում էր ու դառնում ազատ։ Նա դեն գցեց այն ամենը, ինչ որ կողմնակի էր, ինչ որ ավելորդ էր, և գտավ իրենց. հազվագյուտ, մի բարձրագույն պարգև գեղարվեստագետի համար։ Նա հանկարծ անցավ այն գծից, որը որոշել անկարելի է, բայց որի հետևում ապրում է գեղեցկությունը։ Հասարակությունը ցնցվեց, զարմացավ, ուշադիր աչքերը հառեց։ Բեկված ձայնով այդ տգեղ աղջիկը սկսում էր նրան իր ձեռքի մեջ առնել, տիրապետել նրան։ Բայց այլևս երգչուհու ձայնը բեկվածի պես չէր հնչում. նա տաքացավ և պնդացավ։ Երևաց «Ալֆրեդոն»։ Վիոլետտայի խնդալի աղաղակը քիչ էր մնում բարձրացնի այս փոթորիկը, որի անունն է fanatismo և որի առջև ոչինչ են մեր հյուսիսային ոռնոցները։ Մի ակնթարթ՝ և հասարակությունը դարձյալ անշարժացավ։ Սկսվեց դուետը, օպերայի ամենալավ կտորը, որի մեջ կոմպոզիտորին հաջողվել է արտահայտել անմտորեն վատնված երիտասարդության բոլոր ափսոսանքները, հուսահատ և անզոր սիրո վերջին կռիվը։ Ոգևորված ու տարված ընդհանուր համակրության շնչով, գեղարվեստական ուրախության և իսկական տանջանքի արտասուքները աչքերին, երգչուհին անձնատուր եղավ իրեն բարձրացնող ալիքին, նրա դեմքը կերպարանափոխվեց և հանկարծակի մոտեցող մահվան ահավոր ուրվականի առաջ պաղատանքի մի այնպիսի, մինչև երկինք հասնող ուժգնությամբ նրա բերանից դուրս ժայթքեցին խոսքերը «Lascia mi vivere... morir si giovane!» (թույլ տուր ինձ ապրել... մեռնե՞լ այսպես ջահել), որ ամբողջ թատրոնը դղրդաց մոլեգին ծափահարություններից և ոգևորված աղաղակներից։

Ելենան ամբողջովին սարսռաց։ Նա սկսեց կամաց որոնել իր ձեռքով Ինսարովի ձեռքը, գտավ և ամուր սեղմեց։ Ինսարովը պատասխանեց նրա սեղմումին, բայց ոչ Ելենան նայեց Ինսարովին, ոչ Ինսարովը Ելենային։ Այս սեղմումը նման չէր այն սեղմումին, որով նրանք, մի քանի ժամ առաջ, միմյանց ողջունում էին գոնդոլում։

Նրանք նավարկեցին դեպի իրենց հյուրանոց դարձյալ Canal Grande-ի վրայով։ Գիշերն արդեն վրա էր հասել, պայծառ, մեղմ գիշերը։ Նույն պալատները շարեշար ընդառաջեցին նրանց, բայց այժմ նրանք ուրիշ էին թվում, լուսնի լույսից ոսկեգույն սպիտակություն էին ստանում և այդպիսի սպիտակության մեջ կարծես կորչում էին մանրամասնությունները և պատուհանների ու պատշգամբների գծագրությունները. դրանք ավելի պարզ երևում էին այն ջինուությունների վրա, որոնք ծածկված էին հավասար ստվերի թեթև մթությամբ։ Գոնդոլները իրենց—փոքրիկ կարմիր կրակներով, կարծես, էլ ավելի անլսելի և արագ էին վազում. խորհրդավոր փայլում էին նրանց պողպատյա ցոռունները. խորհրդավոր կերպով բարձրանում և ցած էին ընկնում թիերը վրդովված ջրի արծաթե ծփանքների վրա. այստեղ-այնտեղ, կարճ և ոչ բարձր ձայնով բացականչում էին գոնդոլավարները (նրանք այժմ երբեք չեն երգում). ուրիշ ձայներ համարյա չէին լսվում։ Հյուրանոցը, ուր ապրում էին Ինսարովը և Ելենան, գտնվում էր Riva dei Schiavoni-ի վրա, չհասած այդտեղ, նրանք դուրս եկան գոնդոլից և մի քանի անգամ պտտեցին սուրբ Մարկոսի հրապարակի շուրջը.

կամարների տակ, ուր մանրիկ սրճարաններ առաջ խմբվում էր շատ պարապ ժողովուրդ։ Ման գալ երթուսով սիրած էակի հետ օտար քաղաքում, օտար մարդկանց մեջ, մի առանձին հաճելի բան է. ամեն ինչ թվում է գեղեցիկ և նշանավոր, ամենքին ցանկանում ես բարիք, խաղաղություն և նույն երջանկությունը, որով լցված ես ինքդ։ Բայց Ելենան այլևս չէր կարողանում անհոգությամբ անձնատուր լինել իր երջանկության զգացումին. նրա սիրտը, որ ցնցվել էր օրվա տպավորություններից, չէր կարողանում հանգստանալ, իսկ Ինսարովը, անցնելով Դոժերի պալատի մոտով, լուս կերպով ցույց տվեց ավստրիական թնդանոթների բերանները, որոնք նայում էին ստորին կամարների տակից, և դխարիը քաշեց հոնքերի վրա։ Միևնույն ժամանակ նա իրեն զգում էր հոգնած, և վերջին անգամ նայելով ս. Մարկոսի եկեղեցուն, նրա գմբեթներին, ուր լուսնի շողերի տակ կապտագույն կամարի վրա վառվում էին ֆոսֆորային լույսի բծերը, նրանք դանդաղ քայլերով տուն վերադարձան։

Նրանց սենյակի պատուհանները նայում էին այն բոլոր ծովային խորշին, որ տարածվում է Riva del Schiavoni-ից մինչև Զիոդիկիա։ Համարյա նրանց հյուրանոցի դիմաց բարձրանում էր ս. Գեորգի սրածայր աշտարակը՝ աջ կողմում, բարձր, տրի մեջ, պսպղում էր Դոգանի ոսկե գունդը— և պճնված, իբրև հարս՝ կանգնած էր եկեղեցիներից գեղեցկագույնը, Պալլադիի Redentore-ն, ձախակողմում սեին էին տալիս նավերի կայմերն ու առագաստները, շղթաների ծխնիները. այս և այն կողմում կախված էր, ինչպես մեծ թև, երկսով չափ ծալված առագաստը, և դրոշակները հաղիվ էին շարժվում։ Ինսարովը նստեց պատուհանի առաջ, բայց Ելենան թույլ չտվեց նրան երկար զբաղմանով տեսարանով. հանկարծ Ինսարովը զգաց տարաբերություն, նրան ընդգրկեց մի տեսակ լափող թուլություն։ Ելենան պատեցրեց նրան անկողնում, և սպասելով, մինչև որ նա քնեց, հանդարտ կերպով վերադարձավ պատուհանի մոտ։ Ինչպես անդորր ու փաղաքշական էր գիշերը, որպիսի աղոտային հեզությամբ էր շնչում կապտագույն օդը, ինչպես ամեն մի տանջանք, ամեն մի վիշտ պիտի լուծվեր ու քներ այս

պարզ երկնքի տակ, այս սուրբ, անմեղ ճառագայթների տակ։ «Օ՜, ասված,— մտածում էր Ելենան,— ինչի՞ համար են մահը, տանջանքը, հիվանդությունը և արտասուքները։ Կամ թե՞ չէ այս գեղեցկությունը, հույսի այս քաղցր զգացումը, ինչի՞ համար է հաստատուն ապագայի, անփոփոխ պաշտպանության, անմահ հովանավորության այս հանգստացնող գիտակցությունը։ Ի՞նչ է նշանակում այս ժպտացող, արհամարհող երկինքը, այս երջանիկ, հանգստացող երկիրը. մի՞թե այս բոլորը միայն մեր մեջ է. իսկ մեզանից դուրս հավիտենական ցուրտն է ու լռությունը։ Մի՞թե մենք մենակ ենք... մենակ... իսկ այնտեղ, ամենուրեք, այդ բոլոր անհամաչափ անդունդներում և խորխորատներում ամեն ինչ, ամեն վիշտ վարի է մեզ։ Եթե այդպես է, էլ ինչի՞ համար է տրտմքի այդ ծարավն ու խնդությունը («Morir si giovane»,— հնչեց նրա հոգու մեջ)... Մի՞թե չի կարելի նվաղեցնել, կասեցնել, փրկել... Օ՜վ ասված, մի՞թե չի կարելի հավատալ հրաշքին»։ Ելենան գլուխը դրեց տեղված ձեռքերի վրա։ «Բավակա՞ն է,— շշնջաց նա։— Մի՞թե արդեն բավական է։ Ես երջանիկ էի, ոչ միայն րոպեներ, ոչ թե ժամեր, ոչ ամբողջ օրեր, ամբողջ շաբաթներ շարունակ։ Բայց ի՞նչ իրավունքով»։ Նա սկսեց սարսափել իր երջանկությունից։ «Իսկ եթե այդ չի՞ կարելի,— մտածեց նա,— եթե այդ բանը ձրի չի տրվո՞ւմ։ Չէ՞ որ դա երկինքն էր... Իսկ մենք մարդիկ, խեղճ, մեղավոր մարդիկ... Morir si giovane... Օ՜, մութ տեսիլ, հեռացի՜ր։ Միայն ինձ համար չէ, որ հարկավոր է նրա կյանքը»։

«Բայց եթե սա պատի՞ժ է,— մտածեց նա նորից,— եթե մենք պարտավոր ենք այժմ լիապես հատուցե՞լ մեր մեղքի համար։ Իմ խիղճը լռել էր, և այժմ էլ լուռ է, բայց մի՞թե դա անմեղության ապացույց է։ Օ՜վ ասված, մի՞թե մենք այդքան հանցավոր ենք։ Մի՞թե դու, որ ստեղծել ես այս գիշերը, այս երկինքը, կկամենաս պատժել մեզ այն պատճառով, որ մենք սիրում էինք։ Իսկ եթե այդպես է, եթե նա մեղավոր է, եթե ես մեղավոր եմ,— ավելացրեց նա ակամա ուժգնությամբ,— թող նրան, ով ասված, թող մեզ երկուսիս ենթակենք դատի ազնիվ, փառավոր մահով ապնտեղ, նրա

հայրենի դաշտում, և ոչ թե այստեղ, ոչ այս խուլ սենյակում»։

«Իսկ մենավոր, խեղճ մոր վի՞շտը»,— հարցրեց նա ինքն իրեն ու շփոթվեց և առարկություն չգտավ իր հարցի դեմ։ Ելենան չգիտեր, որ յուրաքանչյուր մարդու բախտավորությունը հիմնված է ուրիշի դժբախտության վրա, որ նույնիսկ նրա օգուտը և հարմարությունը պահանջում են, ինչպես արձանը՝ պատվանդան, ուրիշների վնասն ու անհարմարությունները։

«Ռենդիչ»,— քնի մեջ թոթովեց Ինսարովը։

Ելենան ոտների մատների վրա մոտեցավ նրան, խոնարհվեց նրա վրա և սրբեց քրտինքը նրա դեմքից։ Ինսարովը բարձի վրա մի քիչ դես ու դեն ընկավ և հանդարտվեց։

Իսկ նա նորից մոտեցավ պատուհանին և նորից մտածմունքները համակեցին նրան։ Նա սկսեց ինքն իրեն խրատել և հավատացնել, որ վախենալու պատճառ չկա։ Նա մինչև իսկ ամաչեց իր թուլությունից. «Մի՞թե վտանգ կա, մի՞թե նա այժմ լավ չէ,— շշնջաց նա,— չէ որ, եթե մենք այսօր թատրոնում չլինեինք, այս մտքերը իմ գլուխը չէին գա»։ Այդ վայրկյանին նա, ջրից բարձր մի սպիտակ ծովորոր տեսավ. նրան, երևի, վախեցրել էր ձկնորսը, և նա թռչում էր լուռ, անհավասար թռիչքով, կարծես տնտղելով, թե ուր կարելի է ցած իջնել։ «Ահա, եթե նա թռչի այս կողմը,— մտածեց Ելենան,— դա կլինի լավ նշան»... Ծովորորը տեղնուտեղը պտույտներ արեց, թևերը դարսեց և նետհարի նման, մի խղճալի ձայն արձակելով՝ ընկավ մի ինչ-որ հեռու տեղ, մութ նավի հետևը։ Ելենան ցնցվեց, բայց հետո ամաչեց, որ ցնցվեց. և նա, առանց շորերը հանելու, պառկեց անկողնում, Ինսարովի մոտ, որ շնչում էր դժվարությամբ։

XXXIV

Ինսարովը ուշ զարթնեց, խուլ ցավով գլխի մեջ, ամբողջ մարմնի մեջ, ինչպես նա էր ասում, անճոռնի թուլության զգացումով։ Այնուամենայնիվ, նա վեր կացավ։

— Ռենդիչը չեկա՞վ,— այս եղավ նրա առաջին հարցը։

— Դեռ ոչ,— պատասխանեց Ելենան և տվեց նրան

Osservafore Triestino լրագրի վերջին համարը, ուր շատ էր խոսվում պատերազմի մասին, սլավոնական երկրների և կնյաժեստվոների մասին։ Ինսարովը սկսեց կարդալ, իսկ Ելենան նրա համար սուրճ էր պատրաստում... Մեկը բախեց դուռը։

«Ռենդիչը»,— մտածեցին երկուսն էլ, բայց բախողը խոսեց ռուսերեն՝ «Կարելի՞ է մտնել»։ Ելենան և Ինսարովը զարմացած իրար նայեցին, և, չսպասելով նրանց պատասխանին, սենյակը մտավ մի շատ լավ հագնված մարդ, փոքրիկ, սուր դեմքով և աշխույժ մանր աչքերով։ Նա ամբողջովին զվարթ փայլում էր, կարծես թե հենց նոր էր տարել ահագին գումար կամ լսել շատ հաճելի մի նորություն։

Ինսարովը աթոռից վեր բարձրացավ։

— Դուք ինձ չե՞ք ճանաչում,— ասաց անծանոթը, արձակ-համարձակ մոտենալով նրան և սիրալիր ողջունելով Ելենային։— Լուպոյարով, հիշո՞ւմ եք, մենք Մոսկվայում հանդիպեցինք Ե...ի մոտ։

— Այո, Ե...ի մոտ,— արտասանեց Ինսարովը։

— Իհարկե, իհարկե։ Խնդրում եմ ձեզ ներկայացնել ինձ ձեր ամուսնուն։ Տիկին, ես միշտ խորապես հարգում էի Դմիտրի Վասիլևիչին... (նա ուղղեց) Նիկանոր Վասիլևիչին, և շատ երջանիկ եմ, որ վերջապես պատիվ ունեմ ձեզ հետ ծանոթանալու։ Երևակայեցեք,— շարունակեց նա դիմելով Ինսարովին,— ես միայն երեկ երեկոյան իմացա, որ դուք այստեղ եք։ Ես նույնպես այս հյուրանոցում եմ ապրում։ Ի՜նչ քաղաք է սա, այս Վենետիկը, կատարյալ պոեզիա է։ Մի բան միայն սարսափելի է. անիծյալ ավստրիացիներն են ամեն քայլափոխում, օ՜հ, այդ ավստրիացիները։ Ի դեպ, լսե՞լ եք, Դանուբի վրա վճռական պատերազմ է տեղի ունեցել, 300 թուրք սպաներ են սպանված, Սիլիստրիան գրավված է, Սերբիան արդեն իրեն անկախ է հայտարարել։ Դուք, իբրև հայրենասեր, հրճվանքի մեջ պիտի լինեք, այնպես չէ՞։ Իմ մեջ էլ սլավոնական արյունը եռում է ու եռում։ Բայց ես խորհուրդ եմ տալիս ձեզ զգույշ լինել, ես հավատացած եմ, որ ձեզ հետևում են։ Լրտեսությունն այստեղ սարսափելի է։ Երեկ մոտենում է ինձ մի ինչ-որ կասկածելի մարդ, հարցնում է ո՞ւս եմ ես արդյոք։ Ես նրան ասացի, թե դանիացի

եմ... Սակայն, դուք պետք է, որ տկար լինեք, սիրելի Նիկանոր Վասիլևիչ։ Դուք պետք է բժշկվեք. տիկին, դուք պետք է բժշկեք ձեր ամուսնուն։ Ես երեկ խելագարի պես վազվզում էի պալատները և եկեղեցիները, դուք հո եղե՞լ եք Դոժերի պալատում։ Ինչ հարստություն է ամեն տեղ։ Մանավանդ այդ մեծ դահլիճը և Մարինո Ֆալիերոյի տեղը՝ այդպես էլ գրված է՝ decapitati pro criminibus[1]։ Ես եղա և հոչակավոր բանտերի մեջ, ահա թե որտեղ իմ հոգին վրդովվեց, ես, գուցե դուք հիշում եք, միշտ սիրում էի զբաղվել սոցիալական հարցերով և արիստոկրատիայի դեմ էի. ահա թե ուր կբերեի ես արիստոկրատիայի պաշտպաններին՝ այդ բանտերը. միանգամայն հիշտ է ասել Բայրոնը «I stood in Venice on the Bridge of sighs»[2]. սակայն նա էլ արիստոկրատ էր։ Ես միշտ առաջադիմության կողմն էի։ Մատաղ սերունդն ամբողջովին առաջադիմության կողմն է։ Իսկ ինչպե՞ս են անգլո-ֆրանսիացիները։ Տեսնենք, շատ բան կանեն նրանք. Բուատրապան և Պալմերստոնը[3]։ Գիտե՞ք դուք, Պալմերստոնը առաջին մինիստր է դարձել։ Ոչ, ինչ էլ ուզում է ասեք, ռուսական բռունցքը հանաք բան չէ։ Սաքսափելի խարեբա է այդ Բուատրապան։ Եթե ուզում եք, ես ձեզ կտամ Les Châtiments de Victor Hugo[4], զարմանալի է։ L'avenir — le gendarme de Dieu-ը[5] մի քիչ համարձակ է ասված, թեև, բայց ուժ, ուժ։ Լավ է նույնպես ասել թշխան Վյազեմսկին. «Եվրոպան կրկնում է, Բաշ-Կաղիկ-խար[6], աչք չհեռացնելով Սինոպից»։ Ես սիրում եմ բանաստեղծությունները։ Ինձ մոտ կա նույնպես և Պրուդոնի[1] վերջին գրքույկը, ինձ մոտ ամեն բան կա։ Չգիտեմ, դուք ինչպես, բայց ես շատ ուրախ եմ պատերազմի համար, միայն թե չպահանջեին տուն վերադառնալ։ Ես այստեղից պատրաստվում եմ գնալ Ֆլորենցիա, Հռոմ։ Ֆրանսիա գնալ չի կարելի, ուստի մտածում եմ Իտալիա գնալ—այնտեղ, ասում են, զարմանալի կանայք կան, բայց աղքատություն է, և միջատներ շատ կան։ Կգնայի Կալիֆոռնիա, մեզ, ռուսներիս համար ամեն ինչ դժվար բան չէ, բայց ես մի խմբագրի խոսք եմ տվել ուսումնասիրել մանրամասնաբար վաճառականության հարցը Միջերկրական ծովում։ Դուք կասեք, թե անհետաքրքրական առարկա է, մասնագիտական է, բայց մեզ հարկավոր են մասնագետներ, հերիք է որքան փիլիսոփայություններ արինք, այժմ հարկավոր է գործնականը, գործնականը... Բայց դուք շատ տկար եք, Նիկանոր Վասիլևիչ, ես ձեզ գուցե հոգնեցնում եմ, բայց միևնույն է, ես քիչ էլ կնստեմ...

Եվ դեռ երկար այսպես շատախոսում էր Լուպոյարովը, և դուրս գնալով խոստացավ էլի գալ։

Ինսարովի այցելությունից տանջված Ինսարովը պառկեց բազմոցի վրա։

— Ահա,— դառնությամբ ասաց նա, նայելով Ելենային,— ահա ձեր երիտասարդ սերունդը։ Մի ուրիշը իրեն ավելի լարջ է ձևացնում, բայց հոգով նույն քամին է, ինչպես այս պարոնը։

Ելենան չառարկեց իր ամուսնուն, այդ վայրկյանին նրան ավելի շատ անհանգստացնում էր Ինսարովի թուլությունը, քան Ռուսաստանի ամբողջ երիտասարդ սերնդի գրությունը... Նա նստեց նրա մոտ, վերցրեց ձեռագործը։ Ինսարովը փակեց աչքերը և պառկեց անշարժ, խիստ գունատ և նիհար։ Ելենան նայեց նրա սրված դիմագծերին, նրա մեկնված ձեռքերին, և հանկարծակի երկյուղից ճմլվեց նրա սիրտը։

---

1 Հանցանքի համար դլխատված (լատին.)։ Մարինո Ֆալիերոն Վենետիկի դոժերից մեկն էր (նա ցմահ ընտրված էր հանրապետության նախագահ), որը 1355 թվին դավադրություն կազմակերպելու համար դլխատվեց։ Դոժերի պալատում մյուս բոլոր դոժերի նկարների շարքում Ֆալիերոյի տեղը թողնված է դատարկ և միայն կա մակագրություն—«Այստեղ Ֆալիերոյի տեղն է, որը դլխատված է հանցանքի համար»։

2 Ես կանգնած էի Վենետիկում «Հառաչանքների կամուրջի վրա» (անգլ.)—Բայրոնի «Չայլդ Հարոլդի ճանապարհորդությունը» պոեմից։

3 Բուատրապան՝ Նապոլեոն 3-րդի մականունն է։ Պալմերստոնը 19-րդ դարի 30—50-ական թվականների անգլիական ակամավոր քաղաքական գործիչ։

4 «Հատուցում»—Վ. Հյուգոյի (ֆրանս.)։

5 Ապագան նախախնամության կատարածուն է (ֆրանս.)։

6 Պ. Վյազեմսկու «Ի զեն» ոտանավորից։

1 Պրուդոն (1809—1865) ֆրանսիացի սոցիալիստ-ուտոպիստ—անարխիզմի հիմնադիրներից մեկը։

— Դմիտրի...— սկսեց նա։

Ինսարովը վեր թռավ։

— Ի՞նչ է, Ռենդիչը եկա՞վ։

— Դեռ ոչ... Բայց ի՞նչ ես կարծում, դու տաքություն ունես, դու ճիշտ որ բոլորովին առողջ չես. չուղարկե՞նք, արդյոք, բժշկի հետևից։

— Քեզ վախեցրեց այդ շատախոսը։ Չի հարկավոր։ Քիչ կհանգստանամ և ամեն ինչ կանցնի։ Ճաշից հետո մենք էլի կգնանք... Մի որևէ տեղ։

Անցավ երկու ժամ... Ինսարովը դեռ պառկած էր բազմոցի վրա, բայց քնել չէր կարողանում, թեև աչքերը փակ էին։ Ելենան նրա մոտից չէր հեռանում։ Նա վայր գցեց ձեռագործը ծնկների վրա և անշարժ նստեց։

— Ինչո՞ւ չես քնում,— հարցրեց նա վերջապես։

— Ա՛յ, մի քիչ էլ սպասիր,— Ինսարովը վերցրեց Ելենայի ձեռքը և դրեց իր գլխի տակ։— Ա՛յ, այսպես... Լավ է։ Զարթեցրու ինձ խսկույն, հենց որ կգա Ռենդիչը։ Եթե նա կասի, որ նավը պատրաստ է, մենք նույն ժամին կճանապարհվենք... Պետք է ամեն ինչ կապել, պատրաստել։

— Պատրաստվելը երկար չի քաշի,— պատասխանեց Ելենան։

— Ինչ էր այդ մարդը դուրս տալիս ճակատամարտի մասին, Սերբիայի մասին,— խոսեց քիչ հետո Ինսարովը։— Երևի իրենից էր հնարում։ Բայց պետք է, պետք է գնալ։ Ժամանակ կորցնել չի կարելի... Պատրաստ եղիր։

Նա քնեց, և սենյակում ամեն ինչ հանդարտվեց։

Ելենան գլուխը թեքեց դեպի բազկաթոռի մեջքը և երկար նայում էր պատուհանին։ Եղանակը վատացավ. քամի բարձրացավ։ Սպիտակ մեծ մեծ ամպերն արագությամբ անցնում էին երկնքի վրայով, բարակ կայմը օրորվում էր հեռվում, կարմիր խաչ ունեցող երկար դրոշակն անդադար վեր ու վար էր թռչում, ցած ընկնում և էլի բարձրանում։ Հին ժամացույցի ճոճանակը թխկթխկում էր ծանրությամբ, մի ինչ-որ տխուր ֆշշոցով։ Ելենան փակեց աչքերը։ Ամբողջ գիշերը նա վատ էր քնել. քիչ հետո նա էլ քնեց։

Օտարոտի երազ տեսավ նա։ Նրան թվաց, թե նավակով լողում է Ցարիցինի լճակի վրա ինչ-որ անծանոթ մարդկանց հետ։ Նրանք լուռ են ու նստած են անշարժ, ոչ ոք չի թիավարում. նավակը ինքն իրեն շարժվում է։ Ելենան սարսափ չի զգում, բայց ձանձրանում է. նա կկամենար իմանալ, ի՞նչ մարդիկ են դրանք և ինչո՞ւ ինքը դրանց հետ է։ Նա նայում է. լճակը լայնանում է, իսկ ափերը կորչում են. այլևս լճակ չէ դա, այլ մի անհանգիստ ծով. ահագին, բաց կապույտ, լռիկ ալիքները փառահեղ օրորում են նավակը. ինչ-որ որոտացող, ահռելի բան բարձրանում է հատակից. անհայտ ուղեկիցները հանկարծ տեղներից վեր են թռչում, կանչում են, շարժում իրենց ձեռքերը... Ելենան ճանաչում է նրանց դեմքը. նրա հայրը նրանց մեջ է։ Բայց մի սպիտակ փոթորիկ գրոհում է ալիքների վրա, ամեն ինչ պտույտ է գալիս, իրար խառնվում...

Ելենան նայում է չորս կողմը. առաջվա պես ամեն ինչ սպիտակ է նրա շուրջը, բայց դա արդեն ձյուն է, ձյուն, անվերջ ձյուն։ Եվ Ելենան այլևս նավակում չէ, նա գնում է, ինչպես որ Մոսկվայից, սայլակով։ Նա մենակ չէ. նրա կողքին նստած է մի փոքրիկ արարած, փաթաթված հնամաշ սալոպի մեջ։ Ելենան նայում է նրան. դա Կատյան է, նրա խեղճ բարեկամուհին։ Ելենան սարսափ է զգում։ «Մի՞թե Կատյան չի մեռել»,— մտածում է նա։

— Կատյա, այս ո՞ւր ենք գնում քեզ հետ։

Կատյան չի պատասխանում և ավելի է փաթաթվում իր սալոպի մեջ. նա ցրտից դողում է։ Ցուրտ է և Ելենայի համար. նա նայում է ճանապարհի երկարությամբ. քաղաքը երևում է հեռվում, ձյունե փոշու միջից։ Բարձր, սպիտակ աշտարակները արծաթյա գլուխներով... Կա՛տյա, Կատյա, սա Մոսկվա՞ն է։ Ոչ, մտածում է Ելենան, սա Սոլովեցկի վանքն է. այնտեղ շատ ու շատ մանր ու նեղ խուցեր կան, ինչպես փեթակի մեջ, այնտեղ հեղձուկ է, նեղվածք է, այնտեղ փակված է Դմիտրին։ Ես պետք է նրան ազատեմ... Հանկարծ մի ճերմակ, խոր անդունդ բացվում է նրա առաջ։ Սայլակն ընկնում է։ Կատյան ծիծաղում է։ «Ելենա, Ելենա»,— լսվում է մի ձայն անդունդից։

«Ելենա»,— հնչեց պարզ կերպով նրա ականջներում։ Նա արագ բարձրացրեց գլուխը, ետ նայեց և քարացավ։ Ին-

սարովը, սպիտակ, ինչպես իր երազի ձյունը, բարձրացել կիսով չափ բազմոցի վրա և նայում էր Ելենային իր խոշոր, փայլուն, սարսափելի աչքերով։ Նրա մազերը ցրվել էին ճակատի վրա, շրթունքները բացվել օտարոտի կերպով։ Սարսափը, խառնված ինչ-որ կարոտագին գորովանքի հետ, արտահայտվում էր նրա հանկարծակի փոխված դեմքի վրա։

— Ելենա,— արտասանեց նա,— ես մեռնում եմ։

Ելենան ճչալով ընկավ ծնկաչոք ու սեղմվեց նրա կրծքին։

— Ամեն ինչ վերջացած է,— կրկնեց Ինսարովը,— ես մեռնում եմ... Մնաս բարով, իմ խեղճ։ Մնաս բարով, իմ հայրենիք...

Եվ նա մեջքի վրա ընկավ բազմոցի վրա։

Ելենան սենյակից դուրս վազեց, սկսեց օգնություն կանչել, ծառան վազեց բժշկի հետևից։ Ելենան ընկավ Ինսարովի վրա։

Այդ րոպեին դռան շեմքում երևաց մի լայնաթիկունք, արևառ դեմքով մարդ, բայկայե հաստ վերարկուն հագին, ցածրիկ մոմլաթե գլխարկով։ Նա կանգ առավ տարակուսանքով։

— Ռենդիչ,— բացականչեց Ելենան,— այդ դո՞ւք եք։ Նայեցեք, ի սեր աստծո, նա վատ է։ Ի՞նչ պատահեց նրան։ Տեր աստված, տեր աստված։ Երեկ տանից դուրս եկավ, այս րոպեին խոսում էր հետս։

Ռենդիչը ոչինչ չասաց և միայն ճանապարհ տվեց։ Նրա մոտով աշխուժությամբ անցավ մի փոքրիկ կերպարանք, կեղծամով և ակնոցով. դա բժիշկն էր, որ ապրում էր միևնույն հյուրանոցում։ Նա մոտեցավ Ինսարովին։

— Սինյորա,— ասաց նա մի քանի վայրկյանից հետո,— պարոն օտարերկրացին վախճանվել է il signore forestiero è morte—անևրիզմից, միացած թոքերի խանգարման հետ։

XXXV

Մյուս օրը, այդ նույն սենյակում, պատուհանի մոտ կանգնած էր Ռենդիչը. նրա առջև, շալի մեջ փաթաթված, նստել էր Ելենան։ Հարևան սենյակում, դագաղում պառկած էր Ինսարովը։ Ելենայի դեմքը թե վախեցած էր, թե անկենդան, ճակատի վրա, հոնքերի մեջտեղում, հայտնվել էին երկու կնճիռներ. դրանք լցված արտահայտություն էին տալիս նրա անշարժ աչքերին։ Պատուհանին ընկած էր Աննա Վասիլևնայի բացված նամակը։ Նա կանչում էր իր աղջկան Մոսկվա, գոնե մի ամիս ժամանակով, գանգատվում էր իր մենակության վրա, Նիկոլայ Արտեմևիչի վրա, բարևում էր Ինսարովին, տեղեկություն էր ուզում նրա առողջության մասին և խնդրում էր նրան՝ բաց թողնել կնոջը։

Ռենդիչը դալմատացի էր, ծովագնաց, որի հետ Ինսարովը ծանոթացել էր առաջին անգամ դեպի հայրենիք կատարած ճանապարհորդության ժամանակ և որին նա որոնեց ու գտավ Վենետիկում։ Դա մի խստաբարո, կոպիտ, համարձակ, սլավոնական գործին նվիրված մարդ էր։ Նա արհամարհում էր թուրքերին և ատում ավստրիացիներին։

— Որքա՞ն ժամանակ դուք պիտի մնաք Վենետիկում,— հարցրեց նրան Ելենան իտալերեն։ Նրա ձայնն անկենդան էր, ինչպես և դեմքը։

— Մի օր, որպեսզի գնաք վերցնեմ և կատարած շնորհակալեմ. իսկ հետո՝ ուղիղ Ջորա։ Ուրախ լուր չեմ տանի ես մեր հայրենակիցներին։ Նրան վատուց արդեն սպասում էին, նրա վրա հույս ունեին։

— Նրա վրա հույս ունեին,— մեքենաբար կրկնեց Ելենան։

— Ե՞րբ եք նրան թաղում,— հարցրեց Ռենդիչը։

Ելենան իսկույն չպատասխանեց։

— Վաղը։

— Վա՞ղը։ Ես կմնամ։ Ես ուզում եմ մի բուռ հող գցել նրա գերեզմանին։ Պետք է ախր ձեզ էլ օգնել։ Բայց ավելի լավ կլիներ, որ նա պառկեր սլավոնական հողի մեջ։

Ելենան նայեց Ռենդիչին։

— Նավապետ,— ասաց նա,— վերցրեք ինձ նրա հետ և տարեք մեզ ծովի մյուս կողմը, հեռու այստեղից։ Կարելի՞ է այդ։

Ռենդիչը մտածեց։

— Կարելի է, միայն թե շատ զլխացավանք կլինի։ Պետք կլինի այստեղի անիծված իշխանության հետ գործ

ունենալ։ Բայց, ասենք, մենք այդ բոլորը գլուխ կբերենք, կթաղենք նրան այնտեղ, իսկ ինչպե՞ս ձեզ հետ բերեմ։

— Ձեզ հարկավոր չի լինի ինձ հետ բերել։

— Ինչպե՞ս։ Հապա որտե՞ղ կմնաք դուք։

— Ես ինձ համար տեղ կգտնեմ. միայն թե վերցրեք մեզ, վերցրեք ինձ։

Ռենդիչը քորեց ծոծրակը։

— Ինչպես կուզեք, բայց այդ բոլորը շատ գլխացավանք է։ Կգնամ, կփորձեմ, իսկ դուք սպասեցեք ինձ այստեղ երկու ժամ հետո։

Նա գնաց։ Ելենան անցավ հարևան սենյակը, հենվեց պատին և երկար կանգնած էր քարացածի նման։ Հետո նա ծունկ չոքեց, բայց աղոթել չէր կարողանում։ Նրա հոգում հանդիմանություններ չկային. նա չէր հանդգնում հարցնել աստծուն՝ ինչո՞ւ չխնայեց, չխղճաց նրան, ինչո՞ւ պատժեց մեղքից ավելի, եթե մեղք էլ կար։ Մեզանից ամեն մեկը մեղավոր է հենց նրանով, որ ապրում է, և չկա մի այնպիսի երևելի մտածող, չկա մարդկության մի այնպիսի բարեբար, որ իր բերած օգուտի ուժով կարողանար հուսալ, որ իրավունք ունի ապրելու... Բայց Ելենան աղոթել չէր կարողանում. նա քարացել էր։

Նույն գիշերը մի լայն նավակ հեռացավ այն հյուրանոցից, ուր ապրում էին Ինսարովները։ Նավակում նստել էր Ելենան Ռենդիչի հետ, և դրված էր մի երկար արկղ՝ ծածկված սև մահուդով։ Մոտ մի կես ժամ նավեցին նրանք և մոտեցան վերջապես մի փոքրիկ երկհայտ նավի, որ խարիսխ էր գցել նավահանգստի հենց մուտքի մոտ։ Ելենան և Ռենդիչը բարձրացան նավը. նավաստիները ներս բերին արկղը։ Կես գիշերին բարձրացավ փոթորիկ, բայց վաղ առավոտյան նավն արդեն անցել էր Լիդոն։ Օրվա ընթացքում փոթորիկը սարսափելի ուժի հասավ և փորձված ծովագնացները «Լլոյդի» գրասենյակներում շարժում էին գլուխները և բարի բան չէին սպասում։ Ադրիատիկ ծովը Վենետիկի, Տրիեստի և դալմատական ափի միջև չափազանց վտանգավոր է։

Ելենայի Վենետիկից ճանապարհվելուց երեք շաբաթ հետո Աննա Վասիլևնան Մոսկվայում ստացավ հետևյալ նամակը.

«Իմ սիրելի ծնողներ, ես ընդմիշտ հրաժեշտ եմ տալիս ձեզ։ Դուք այլևս չեք տեսնի ինձ։ Երեկ վախճանվեց Դմիտրին։ Ամեն ինչ վերջացավ ինձ համար։ Այսօր ես նրա դիակի հետ ճանապարհվում եմ Զարա։ Կթաղեմ նրան, իսկ հետո ինչ կլինի ինձ հետ, չգիտեմ։ Բայց այլևս ուրիշ հայրենիք չկա ինձ համար, բացի Դ-ի հայրենիքից։ Այնտեղ սպասվում է ապստամբություն, պատրաստվում են պատերազմել։ Ես գթության քույր կդառնամ, կգնամ հիվանդներին և վիրավորվածներին խնամելու։ Չգիտեմ ինչ կլինի ինձ հետ, բայց Դ-ի մահից հետո էլ ես հավատարիմ կմնամ նրա հիշատակին, նրա ամբողջ կյանքի գործին։ Ես սովորել եմ բուլղարերեն և սերբերեն։ Երևի ես այս բոլորին չեմ դիմանա. ավելի լավ։ Ես հասել եմ անդունդի ծայրին և պիտի ընկնեմ։ Զուր չէ ճակատագիրը միացրել մեզ. ով գիտե, գուցե ես սպանեցի նրան. այժմ նրա հերթն է ինձ իր հետևից տանել։ Ես երջանկություն էի որոնում և կգտնեմ՝ երևի մահ։ Երևի այսպես էր հարկավոր, երևի մեղք ունեի... Բայց մահը ամեն ինչ ծածկում է ու հաշտեցնում, այդպես չէ՞։ Ներեցեք ինձ՝ ձեզ պատճառած բոլոր վշտերի համար. իմ կամքից չէ կախված այդ բանը։ Վերադառնալ Ռուսաստա՞ն, ինչո՞ւ։ Ի՞նչ անել Ռուսաստանում։

Ընդունեցեք իմ վերջին համբույրները և օրհնությունները և մի դատապարտեք ինձ։ Ե.»

Այն ժամանակից անցել է արդեն մոտ հինգ տարի, և ուրիշ ոչ մի լուր այլևս չի ստացվել Ելենայի մասին։ Ապարդյուն անցան բոլոր նամակները, բոլոր հարցումները։ Իզուր անձամբ Նիկոլայ Արտեմևիչը, հաշտություն կնքելուց հետո, գնաց Վենետիկ, Զարա, Վենետիկում նա իմացավ այն, ինչ որ արդեն հայտնի է ընթերցողին, իսկ Զարայում ոչ ոք չկարողացավ նրան դրական տեղեկություններ տալ Ռենդիչի և այն նավի մասին, որը նա վարձել էր։ Մութ լուրեր էին պտտում, թե իբր, մի քանի տարի առաջ ծովը, սաստիկ փոթորկից հետո, ափ էր նետել մի դագաղ, որի մեջ գտել էին տղամարդու դիակ... Ուրիշ, ավելի արժանահավատ տեղեկությունների համաձայն, այդ դագաղը ամենևին ծովը չէր դուրս նետել, այլ բերել ու ափին թաղել էր մի օտարերկրացի տիկին, որը եկել էր Վենետիկից։ Մի քանիսներն էլ

ավելացնում էին, թե այդ տիկնոջը հետո տեսել էին Հերցեգովինայում այն զորքի հետ, որ հավաքվում էր այն ժամանակ. նկարագրում էին նույնիսկ նրա հագուստը, որ սև էր ոտքից մինչև գլուխ։ Ինչ որ է. Ելենայի հետքը կորավ ընդմիշտ և անդառնալի կերպով, և ոչ ոք չգիտե, կենդանի՞ է նա դեռ արդյոք, թաքնվա՞ծ է մի որևէ տեղ, թե արդեն վերջացել է կյանքի այդ փոքրիկ խաղը, վերջացել է նրա թեթև խմորումը և հասել մահվան հերթը։ Պատահում է, որ մարդ, զարթնելով քնից, ակամա երկյուղով հարցնում է ինքն իրեն— մի՞թե ես արդեն երեսուն... քառասուն... հիսուն տարեկան եմ։ Ինչպե՞ս կյանքն այդպես շուտ անցավ։ Ինչպե՞ս է, որ մահը այդքան մոտիկացավ։ Մահը նման է այն ֆկնորսին, որը բռնել է ձուկն իր ցանցով և միառժամանակ պահել ջրի մեջ. ձուկը դեռ լողում է, բայց ցանցը նրա վրա է և ձրկնորսը դուրս կքաշե նրան, երբ կկամենա։

Ի՞նչ եղան մեր պատմության մյուս անձինք։

Աննա Վասիլևնան դեռ Կենդանի է. իրեն դիպած հարվածից հետո նա շատ պառավել է, գանգատվում է ավելի քիչ, բայց ավելի շատ է տխրում։ Նիկոլայ Արտեմիևիչը նույնպես ծերացել է և սպիտակել ու բաժանվել է Ավգուստինա Խրիստիանովնայից... Նա այժմ հայհոյում է ամեն օտարերկրյա բան։ Նրա մոտեսուհին, երեսուն տարեկան մի գեղեցիկ ռուս կին, մետաքսյա շորեր է հագնում և կրում ոսկե մատանիներ ու ականջի օղեր։ Կուրնատովսկին, իբրև բուռն խառնվածքի տեր մարդ և միբև եռանդուն բրյունետ, սիրում է սիրունատես շիկահեր կանանց, ամուսնացել է Զոյայի հետ. սա բոլորովին հպատակվել է նրան և նույնիսկ դադարել է գերմաններեն մտածելուց։ Բերտենևը գտնվում է Հեյդելբերգում։ Նրան պետական հաշվով ուղարկել են արտասահման. նա այցելել է Գեոլին, Փարիզ, և զուր չի անցկացնում ժամանակը։ Նրանից խելացի պրոֆեսոր դուրս կգա։ Գիտական հասարակությունը ուշադրություն դարձրեց նրա երկու հոդվածների վրա՝ «Հին գերմանական իրավունքի մի քանի առանձնահատկությունների մասին՝ դատական գրաֆիների հարցում» և «Քաղաքային զգզումների նշանակությունը քաղաքակրթության հարցում»։ Սխալս մի՞այն, որ երկու հոդվածներն էլ գրված են փոքր-ինչ խրթին լեզվով և

խճողված են օտար բառերով։ Շուբինը Հռոմում է. նա ամբողջապես նվիրվել է իր արվեստին և համարվում է ամենանշանավոր ու ապագա խոստացող երիտասարդ քանդակագործներից մեկը։ Խստապահանջ պուրիտանները գտնում են, որ նա բավականաչափ չի ուսումնասիրել անտիկ արվեստը, որ նա «ոճ» չունի և, դասում են նրան ֆրանսիական դպրոցին հետևողների շարքը։ Անգլիացիներից և ամերիկացիներից նա անթիվ պատվերներ ունի։ Վերջին ժամանակներս շատ աղմուկ հանեց նրա մի Բաքոսուհին. ռուս կոմս Բարոշկինը, մի հայտնի հարուստ, ուզում էր գնել այն 1000 սկուդիով, բայց ավելի լավ համարեց 3000 տալ մի ուրիշ քանդակագործի, որ ֆրանսիացի էր pur sang[1], այն իսկական արձանի համար, որը պատկերում էր «Երիտասարդ գեղջկուհուն, որ մեռնում է սիրուց. Գարնան Ոգու կրծքին»։ Շուբինը շատ քիչ է նամակագրություն պահպանում Ռավար Իվանովիչի հետ, որը միակն է, որ բոլորովին չի փոխվել և ոչ մի բանում։ «Հիշո՞ւմ եք,— գրում էր Շուբինը նրան մի քանի ժամանակ առաջ,— թե ինչ ասացիք ինձ այն գիշերը, երբ հայտնի դարձավ խեղճ Ելենայի ամուսնությունը, երբ ես նստած էի ձեր մահճակալի վրա և խոսում էի ձեզ հետ։ Հիշում եք, ես հարցնում էի ձեզ այն ժամանակ՝ «կլինե՞ն մեզ մոտ մարդիկ», և դուք ինձ պատասխանեցիք՝ «կլինե՛ն»։ Օ, սևահոգի ուժ ես ունեցել, ահա, այժմ ես այստեղից իմ «չքնաղ հեռավորությունից», նորից եմ հարցնում ձեզ՝ «Հը՛, ի՞նչ է, Ռավար Իվանովիչ, կլինե՞ն»։

Ուրախ Իվանովիչը խառնվեցին մատները և դեպի հետևն նուղեց իր խորհրդավոր հայացքը...

1. Զտարյուն (ֆրանս.)։

ՀԱՅՐԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ

Նվիրվում է
Վիսսարիոն Գրիգորևիչ Բելինսկու
հիշատակին

I

— Ի՞նչ է, Պյոտր, դեռ չե՞ն երևում։

Այդ հարցնողը քառասունն անց կալվածատեր մի պարոն էր, որ 1859 թվի մայիսի 20-ին, փոշոտ վերարկուով և աղյուսակազարդ հյուսվածքից կարած վարտիքով, գլխաբաց դուրս գալով*** խճուղու վրա գտնվող իշևանատան մուտքի ցածլիկ պատշգամբը, դիմեց իր ծառային՝ երիտասարդ ու լիաթուշ, սպիտակավուն աղվամազը ծնոտին ու մանրիկ մարած աչքերով մի տղայի։

Ծառան, որի մեջ՝ ամեն ինչ՝ թե ականջի փիրուզյա օղը, թե օծված, գույնզգույն մազերը, թե քաղաքավարի շարժումները, մի խոսքով բոլորը ցույց էին տալիս, որ նա նորագույն, կատարելագործված սերնդի մարդ էր։ Նա ներողամտաբար նայում էր ճանապարհի երկարությամբ և պատասխանում.

— Ոչ. դեռ չեն երևում։

— Չե՞ն երևում,— կրկնեց պարոնը։

— Չեն երևում,— նորից պատասխանեց ծառան։

Պարոնը հառաչեց ու նստեց փոքրիկ նստարանի վրա։ Մինչ նա ոտները տակը ծռած-նստած մտախոհ նայում է իր չորս կողմը, ընթերցողին ծանոթացնենք նրա հետ։

Նրան անվանում են Նիկոլայ Պետրովիչ Կիրսանով։ Իշևանատնից 15 վերստ հեռավորության վրա նա ուներ մի լավ կալված, երկու հարյուր շնչից, կամ, ինչպես նա ինքն էր ասում այն ժամանակից ի վեր, երբ սահմանազատվեց

գյուղացիներից և հիմնեց իր «ֆերման», երկու հազար դեսյատինից բաղկացած։ Նրա հայրը, որ 1812 թ. մարտական գեներալ էր, մի կիսագրագետ, կոպիտ, բայց ոչ չարտուս մարդ, իր ամբողջ կյանքը ծառայության մեջ էր անցկացրել. սկզբում՝ բրիգադայի հրամանատար, հետո էլ՝ դիվիզիայի, շարունակ ապրում էր գավառում, որտեղ իր աստիճանի շնորհիվ բավականին կարևոր դեր էր խաղում։ Նիկոլայ Պետրովիչը իր ավագ եղբոր՝ Պավելի նման, որի մասին կխոսենք քիչ հետո, ծնվել էր Ռուսաստանի հարավում և մինչև տասնչորս տարեկան հասակը դաստիարակվել էր տանը՝ շրջապատված էժանագին տնային դաստիարակներով, համարձակ, բայց շողոքորթ ադյուտանտներով և գնդային ու շտաբային ուրիշ անձերով։ Նրա մայրը, որ Կոլյազինների տոհմից էր, աղջիկ ժամանակը՝ Agathe, իսկ գեներալի կին լինելուց հետո՝ Ագաֆոկլեա Կուզմինիշնա Կիրսանովա էր դարձել, պատկանում էր «մայրիկ-հրամանատարների» թվին, դնում էր շքեղ չեպչիկներ և հագնում խշխշան մետաքսե շորեր, եկեղեցում առաջինն էր մոտենում խաչը համբուրելու, խոսում էր շատ բարձր ձայնով, թույլ էր տալիս, որ առավոտները երեխաները մոտենան և իր ձեռքը համբուրեն, իսկ երեկոներին քնելուց օրհնում էր նրանց։ Մի խոսքով, ապրում էր քեֆն ուզածի պես։ Նիկոլայ Պետրովիչը, որ թեև ոչ միայն աչքի չէր ընկնում քաջասրտությամբ, այլև վախկոտի անուն էր վաստակել, իբրև գեներալի որդի, պետք է որ իր եղբոր, Պավելի նման, զինվորական ծառայության մտներ. բայց հենց այն օրը, երբ տեղեկություն ստացվեց, որ նա ընդունված է ծառայության, ոտքը կոտրվեց և, երկու ամիս անկողնում պառկելուց հետո, ամբողջ կյանքում մնաց «կաղլիկ»։ Հայրը ձեռք քաշեց նրանից և թույլ տվեց, որ պատրաստվի քաղաքացիական պաշտոնի համար։ Հենց որ նա տասնութ տարեկան եղավ, հայրը նրան Պետերբուրգ տարավ ու տվեց համալսարան։ Այդ իսկ միջոցին նրա եղբայրը գվարդիական գնդի սպայություն ստացավ։ Երիտասարդները սկսեցին ապրել միասին, միևնույն բնակարանում, իրենց մոր կողմից ազգական Իլյա Կոլյազինի հեռավոր հսկողության տակ, որը մի կարևոր պաշտոնյա էր։ Նրանց հայրը վերադարձավ իր դիվիզիան և իր ամուսնու մոտ, և

միայն մեկ-մեկ ուղարկում էր որդիներին գորշ թղթի քառորդ թերթիկներ խզբզված գրագրերին հատուկ խոշոր-խոշոր գրերով։ Այդ թերթիկներն վերջում խնամքով ատորագրված էին լինում հետևյալ խոսքերը. «Պիոտր Կիբասանով, գենեռալ-մայոր»։

Նիկոլայ Պետրովիչը 1835 թ. թեկնածուի կոչումով ավարտեց համալսարանը, և նույն տարին էլ գենեռալ Կիրսանովը, որ անհաջող զորատեսի պատճառով արձակվել էր պաշտոնից, կնոջ հետ եկավ Պետերբուրգ ապրելու։ Նա ուզում էր տուն վարձել Տավրիկյան այգու մոտ և արդեն Անգլիական ակումբի[1] անդամ էլ գրվեց, բայց հանկարծակի մեռավ կաթվածից։ Շուտով Ագաֆոկլեա Կուզմինիշնան էլ հետևեց նրան. նա չկարողացավ ընտելանալ մայրաքաղաքի խուլ կյանքին. անցյալի կարոտը նրան մաշեց։

Մինչդեռ Նիկոլայ Պետրովիչը դեռ ծնողների կենդանության ժամանակ և ի մեծ ցավ նրանց արդեն սիրահարվել էր իր բնակարանի նախկին տիրոջ, պաշտոնյա Պրեպելովենսկու աղջկան, որ մի սիրունատես և, ինչպես ասում են, զարգացած աղջիկ էր—նա ամառվերում կարդում էր «Գիտություն» բաժնի լուրջ հոդվածները։ Հենց որ սգի օրերն անցան, նա ամուսնացավ նրա հետ և, թողնելով պետական կալվածների մինիստրությունը, ուր հայրը հովանավորների շնորհիվ տեղավորել էր նրան, երջանիկ կյանք էր վարում իր Մաշայի հետ նախ՝ Անտառային ինստիտուտի մոտակայքում վարձած ամառանոցում. հետո՝ քաղաքում, մի փոքրիկ ու սիրունիկ բնակարանում՝ մաքուր սանդուղքով և ցուցամ ընդունարանով, ու վերջում էլ գյուղում, ուր նա վերջնականապես բնակություն հաստատեց և որտեղ էլ շուտով ծնվեց նրա Արկադի որդին։

Ամուսինները շատ լավ ու խաղաղ կյանք էին վարում՝ գրեթե երբեք իրարից չէին բաժանվում, միասին կարդում էին, միասին շրջում ձեռքով դաշնամուր նվագում, դուետներ երգում. կինը ծաղիկներ էր աճեցնում-խնամում և հավանացին վերահսկում, իսկ ինքը շատ ուշ-ուշ գնում էր որսի և

1. Անգլիական ակումբ, որի անդամները բացառապես հարուստ և տոհմիկ անձնավորություններ էին։

զբաղվում էր տնտեսությամբ. իսկ Արկադին աճում էր ու աճում—նույնպես լավ և խաղաղ։ Տասը տարին երազի պես անցավ։ 47 թվին Կիրսանովի կինը վախճանվեց։ Նա հազիվ դիմացավ այդ հարվածին և մի քանի շաբաթվա մեջ ճերմակեց. վիշտը թեկուզ փոքր-ինչ փարատելու համար ուզում էր արտասահման գնալ... բայց վրա հասավ 48 թվականը։ Ակամայից նա վերադարձավ գյուղ և, բավական երկար անգործ մնալուց հետո, զբաղվեց տնտեսական բարեփոխություններով։ 55 թվին նա որդուն տարավ համալսարան. երեք ձմեռ ապրեց նրա հետ Պետերբուրգում, համարյա առանց տնից դուրս գալու և աշխատելով ծանոթություն հաստատել Արկադիի նորատի ընկերների հետ։ Վերջին ձմեռը նա չկարողացավ գալ,— և ահա 1859 թ. մայիսին նրան մենք տեսնում ենք արդեն բոլորովին զառամած, փափկիկ և մի փոքր էլ կորացած. նա սպասում է որդուն, որը, ինչպես մի ժամանակ ինքը, ստացել էր թեկնածուի կոչում։

Ծառան, քաղաքավարության զգացումից դրդված, կամ գուցե թե չցանկանալով իր պարոնի աչքի առաջ մնալ, մտավ դարպասի տակ ու սկսեց շիբուխը ծխել։ Նիկոլայ Պետրովիչը գլխահակ կանգնել նայում էր պատշգամբի խարխուլ աստիճաններին. մի խոշոր խայտաբղետ ճուտ ծանրաքայլ ման էր գալիս նրանց վրա, իր խոշոր, դեղին ոտներով ամուր թխկթխկացնելով։ Աղտոտված կատուն, կողքը պատշգամբի վանդակին դեմ տված, անբարեհաճ դիտում էր նրան։ Արևն այրում էր. իշևանատան կիսամութ հաշտից տաք սև հացի հոտ էր գալիս։ Մեր Նիկոլայ Պետրովիչը անձնատուր եղավ երազանքների։

«Որդիս... թեկնածու... Արկաշան...» շարունակ պտտում էր նրա գլխում։ Նա փորձեց մտածել մի որևէ ուրիշ բանի մասին, բայց նորից էին վերադառնում նույն մտքերը։ Նրա միտքն ընկավ հանգուցյալ կինը... «Չարժանացավ»,— շշնջաց նա հուսալքված... Մի թուխ-կապտավուն աղավնի թռավ եկավ ճանապարհի վրա ու շտապ գնաց ջրհորի մոտի փոսում շռավաքված ջրից խմելու։ Նիկոլայ Պետրովիչը սկսեց նայել նրան, բայց ականջը արդեն որսում էր մոտեցող անիվների թիկոցը...

— Հենց իմանաս նրանք գալիս են,— հայտնեց ծառան գարպասի տակից դուրս թռչելով։

Նիկոլայ Պետրովիչը վեր կացավ իսկույն և աչքերն ուղղեց ճանապարհին։ Երևաց փոստային երեք ձի լծած մի տարանտաս. տարանտասում փայլեց ուսանողական գլխարկի շրջանակը և երևաց Թանկագին դեմքի ծանոթ ուրվագիծը...

— Արկաշա, Արկաշա,— կանչեց Կիրսանովը, առաջ վազելով և ձեռները թափահարելով... Մի քանի վայրկյան անց նրա շրթունքները հպվել էին երիտասարդ թեկնածուի անմորուս, փոշոտված և արևառ թշին։

II

— Հայրիկ, թող մի շորերս թափ տամ,— ճանապարհից փոքր-ինչ խզված, բայց պատանեկական զիլ ձայնով ասում էր Արկադին՝ ուրախ-զվարթ պատասխանելով հոր փաղաքշանքին,— տես, ես քեզ էլ բոլորովին կփոշոտեմ։

— Ոչինչ, ոչինչ,— խնդագին ժպիտով կրկնում էր Նիկոլայ Պետրովիչը, և մի երկու անգամ էլ ձեռքով խփեց որդու շինելի օձիքին ու իր սեփական վերարկուին։— Հապա մի տեսնեմ, հապա մի տեսնեմ,— ասաց նա ետ-ետ քաշվելով, և իսկույն էլ շտապ քայլերով գնաց դեպի իջևանատուն՝ խոսելով. «Ա՛, այս կողմ, այս կողմ։ Դե՛, ձիերը շուտ բերեք»։

Նիկոլայ Պետրովիչը որդուց ավելի էր հուզված երևում. ասես թե մի փոքր շշմել էր, փոքր-ինչ էլ շշկլվել։

Արկադին նրան կանգնեցրեց։

— Հայրիկ,— ասաց նա,— թույլ տուր ծանոթացնեմ քեզ իմ բարի ընկերոջ, Բազարովի հետ, որի մասին ես քեզ այնքան հաճախակի գրում էի։ Նա այնքան սիրալիր էր, որ համաձայնեց հյուր գալ մեզ մոտ։

Նիկոլայ Պետրովիչը արագ շուռ եկավ և, մոտենալով մի բարձրահասակ, փնջավոր երկայն վերնազգեստ հագած մարդու, որը հենց նոր էր տարանտասից դուրս եկել, պինդ սեղմեց նրա մերկ, կարմիր ձեռքը, որը նա միանգամից չմեկնեց նրան։

— Սրտանց ուրախ եմ,— սկսեց նա,— և շնորհակալ մեզ

այցելելու բարի դիտավորության համար. հուսով եմ... Թո՞ւյլ կտաք իմանալու ձեր անունն ու հայրանունը։

— Եվգենի Վասիլևիչ,— ծույլ, բայց առնական ձայնով պատասխանեց Բազարովը և շուռ տալով վերնազգեստի օձիքը, իր ամբողջ դեմքը ցույց տվեց Նիկոլայ Պետրովիչին։ Նա երկար էր, նիհար, լայն ճակատով, վերը տափակ, իսկ ներքևը սրված քթով, խոշոր կանաչավուն աչքերով և ավազագույն, կախ ընկած բակենբարդներով. հանդարտ ժպիտը կենդանություն էր տալիս նրա դեմքին և արտահայտում ինքնավստահությունն ու խելքը։

— Հուսով եմ, սիրելի Եվգենի Վասիլևիչ, որ դուք մեզ մոտ չեք ձանձրանա,— շարունակեց Նիկոլայ Պետրովիչը։

Բազարովի նուրբ շրթունքները հազիվ շարժվեցին. բայց նա ոչինչ չպատասխանեց և միայն գլխարկը մի փոքր վեր բարձրացրեց։ Նրա երկայն և խիտ մուգ-դեղձան մազերը չէին ծածկում ընդարձակ գանգի խոշոր կորնթարդությունները։

— Ուրեմն ինչպե՞ս անենք, Արկադի,— նորից խոսեց Նիկոլայ Պետրովիչը, որդուն դառնալով,— ձիերը հիմա՞ լծել տանք։ Թե՞ ուզում եք հանգստանալ։

— Տանը կհանգստանանք, հայրիկ, հրամայիր թող լծեն։

— Այս րոպեին, այս րոպեին,— վրա բերեց հայրը։— Է՛յ, Պյոտր, լսո՞ւմ ես։ Դե՛, ախպերս, դե շուտ կարգադրիր։

Պյոտրը, որ, իբրև կատարելագործված ծառա, չմոտեցավ իր պարոնի աջը առնելու, այլ միայն հեռվից գլուխ տվեց նրան, նորից պահվեց դարպասի ներքև։

— Ես կառքով եմ այստեղ եկել, բայց ձեր տարանտասի համար էլ երեք ձի կա,— հոգածությամբ ասում էր Նիկոլայ Պետրովիչը, այնինչ Արկադին ջուր էր խմում երկաթյա թասից, որ բերել էր իջևանատան տիրուհին, իսկ Բազարովը ծխամորճը վառեց և մոտեցավ կառապանին, որը ձիերն էր արձակում։

— Միայն կառքս երկու տեղանի է և ահա չգիտեմ, ինչ անենք ընկերոջդ...

— Նա տարանտասով կգա,— կիսաձայն ընդհատեց Արկադին։— Դու, խնդրեմ, նրա համար մի մտահոգվիր։ Նա հրաշալի տղա է, այնպես պարզ։ Այ, կտեսնես։

Նիկոլայ Պետրովիչի կառապանը ձիերը դուրս բերեց։

— Դե՛, իրար եկ, հաստամորուս,— դիմեց Բազարովը կառապանին։

— Լսիր, Միտյուխա,— վրա բերեց մյուս կառապանը, որ ձեռները մուշտակի հետևի ճեղքվածքների մեջ խրած կանգնել էր հենց այդտեղ,— աղեն ի՞նչ ասաց։ Հենց հաստամորուս էլ ես, որ կաս։

Միտյուխան միայն գլխարկը շարժեց և քրտնած միջնակ ձիու վրայից քաշեց երասանները։

— Դե՛, շուտ, շուտ, տղերք, դո՛ւք էլ օգնեցեք,— բացականչեց Նիկոլայ Պետրովիչը։— Ընծա կտամ։

Մի քանի րոպեում ձիերը լծած պատրաստ էին. հայրը որդու հետ տեղավորվեց կառքում։ Պյոտրը նստեց կառապանի կողքին. Բազարովը թռավ մտավ տարանտասը, գլուխը թաղեց կաշվե բարձի մեջ, և երկու կառքն էլ մեկնեցին։

III

— Ա՛յ թե ինչ, վերջապես դու թեկնածու ես, և եկել ես տուն,— ասում էր Նիկոլայ Պետրովիչը ձեռքը Արկադիի երբեմն մեջքին և երբեմն ծնկանը խփելով։— Վերջապես։

— Իսկ ի՞նչ է անում հորեղբայրս։ Առո՞ղջ է,— հարցրեց Արկադին, որը, չնայելով իրեն համակող անկեղծ, համարյա մանկական ուրախությանը, ուզում էր այդ խոսակցությունը շուտով փոխել հուզիչ տրամադրությունից առօրյա խնդիրներին։

— Առողջ է։ Ուզում էր հետս քեզ դիմավորելու գալ։ բայց չգիտեմ ինչու հետո էլի միտքը փոխեց։

— Իսկ դու վաղո՞ւց է ինձ սպասում էիր։

— Մոտ հինգ ժամ կլինի։

— Բարի՞ հայրիկ։

Արկադին աշխուժությամբ շուռ եկավ հոր կողմը և պինդ համբուրեց նրա երեսը։ Նիկոլայ Պետրովիչը կամացուկ ծիծաղեց։

— Քեզ համար ինչ լավ ձի եմ պատրաստել,— ասաց

նա,— այ, կտեսնես։ Մենյակիդ պատերն էլ պատատեղ եմ տվել։

— Իսկ Բազարովի համար սենյակ կա՞։

— Նրա համար էլ կճարվի։

— Խնդրում եմ, հայրիկ, գուրգուրիր նրան։ Չեմ կարող խոսքով հասկացնել, թե ինչ ստոփճանի բարձր եմ գնահատում ես նրա մտերմությունը։

— Նո՞ր ես ծանոթացել նրա հետ։

— Այո, վաղուց չէ։

— Գիտեմ ախր, անցյալ ամեռ ես նրան չեմ տեսել։ Ինչո՞վ է պարապում։

— Նրա գլխավոր առարկան բնական գիտություններն են։ Ասենք նա ամեն բան էլ գիտե։ Եկող տարի ուզում է բժշկի քննություն տալ։

— Հըմ, ուրեմն բժշկական բաժնումն է,— նկատեց Նիկոլայ Պետրովիչն ու լռեց։— Պյոտր,— վրա բերեց նա ու ձեռքը մեկնեց,— այս եկողները իսկ մեր գյուղացիները չե՞ն։

Պյոտրը նայեց դեպի այն կողմը, ուր ցույց էր տալիս պարոնը։ Մի քանի սայլեր, լծած տանձերն արձակած ձիերը, արագությամբ առաջ էին գլորվում միջգյուղյա նեղ ճանապարհով։ Ամեն մի սայլում մեկ-մեկ, կամ էլ՝ երկու-երկու ռամիկ էին նստած, հագի մուշտակների կրծքները բացած։

— Այո, մեր գյուղացիներն են,— ասաց Պյոտրը։

— Ո՞ւր են գնում, քաղա՞ք չեն գնում, արդյոք։

— Պետք է ենթադրել, որ քաղաք են գնում։ Երևի օղեռուն,— ավելացրեց նա արհամարհանքով և մի փոքր կռացավ դեպի կառապանի կողմը, կարծես նրան վկա կանչելով։ Բայց սա տեղից անգամ չշարժվեց—դա հին հայացքների տեր մարդ էր, կողմնակից չէր նոր աշխարհայացքների։

— Այս տարի մեծ գլխացավանքների մեջ եմ գյուղացիների հետ,— շարունակեց Նիկոլայ Պետրովիչը, դիմելով որդուն։— Բահրան չեն վճարում։ Ի՞նչ կարող ես անել։

— Իսկ վարձու մշակներից դու գո՞հ ես։

— Այո,— ատամների արանքով արտասանեց Նիկոլայ Պետրովիչը։— Ցավն այն է, որ նրանց էլ են խելքից հանում և դեռ իսկական ջանք էլ չի նկատվում, չէ։ Ջիասարքը փչաց-

նում են։ Ասենք, հերկում էին, ոչինչ։ Է, աղունը աղացվի՝ այլուր կդառնա։ Բայց մի՞թե քեզ այժմ տնտեսական գործերը հետաքրքրում են։

— Ցավն այն է, որ դուք ստվերոտ տեղ չունիք,— նկատեց Արկադին, վերջին հարցին չպատասխանելով։

— Հյուսիսային կողմից պատշգամբի վրա մի մեծ մարկիզա[1] եմ շինել տվել,— ասաց Նիկոլայ Պետրովիչը,— այժմ կարելի է բացօթյա էլ ճաշել։

— Այդ հո շատ նման կլինի ամառանոցի... Ասենք, այդ բոլորը չնչին բաներ են։ Բայց ինչ օդ է այստեղի օդը։ Ինչ անուշ հոտ։ Ճիշտ եմ ասում, ինձ թվում է, թե աշխարհիս երեսին ոչ մի տեղ այնպիսի բուրմունք չունի, ինչպես մեր այս վայրերն ունեն։ Այստեղի երկինքն անգամ...

Արկադին հանկարծ կանգ առավ, շեղակի հայացք ձգեց դեպի հետև ու լռեց։

— Իհարկե,— նկատեց Նիկոլայ Պետրովիչը,— այստեղ ես ծնվել, այդ պատճառով էլ այստեղ ամեն ինչ քեզ պիտի թվա առանձնահատուկ...

— Է՛հ, հայրիկ, այդ միևնույն է, մարդս որտեղ էլ ծնված լինի։

— Այնուամենայնիվ...

— Ոչ, այդ բոլորովին միևնույն է։

Նիկոլայ Պետրովիչը կողքից նայեց որդուն, և կառքը կես վերստի չափ անցած կլիներ, որ խոսակցությունը վերսկսվեց նրանց մեջ։

— Չեմ հիշում գրե՞լ եմ քեզ թե չէ, որ քո նախկին դայակը, Եգորովնան, մեռավ,— սկսեց Նիկոլայ Պետրովիչը։

— Մի՞թե։ Խեղճ պառավ։ Իսկ Պրոկոֆիչը կենդանի՞ է։

— Կենդանի է և ամենևին էլ չի փոխվել։ Էլի այնպես շարունակ փնթփնթում է։ Առհասարակ Մարյինոյում դու մեծ փոփոխություն չես գտնի։

— Քո գործակատարը էլի միևնո՞ւյնն է։

— Այ, մենակ գործակատարին է, որ ես փոխել եմ։ Վճռել եմ այլևս ճորտությունից ազատված արձակվածներից մոտս ոչ ոքի չպահել, կամ գոնե նրանց ոչ մի պատասխանատու պաշտոն չտալ։ (Արկադին աչքով Պյոտրին ցույց տվեց) Il est libre, en effet[1],— ցած ձայնով նկատեց Նիկոլայ Պետրովիչը,— բայց ախր նա սենեկապան է։ Այժմ իմ գործակատարը քաղքենիներից է, թվում է, աչքաբաց տղա է։ Տարեկան երկու հարյուր հիսուն ռուբլի եմ նշանակել։ Ասենք,— ավելացրեց Նիկոլայ Պետրովիչը՝ ճակատն ու ունքերը շփելով, որը միշտ նրա ներքին շփոթության նշանն էր,— հենց նոր ասացի քեզ, որ Մարյինոյում դու փոփոխություն չես գտնի... Այդ այնքան էլ իրավացի չէ։ Պարտքս եմ համարում քեզ նախազգուշացնելու, որ թեպետ...

Նա մի վայրկյան կմկմաց ու հետո արդեն շարունակեց ֆրանսերեն.

— Խստապահանջ բարոյագետը իմ անկեղծությունը կարող է անտեղի համարել, բայց, նախ որ այդ բանը թաքցնել չի կարելի, իսկ երկրորդն էլ, քեզ հայտնի է, ես միշտ էլ առանձին սկզբունքներ եմ ունեցել հոր վերաբերմունքի մասին դեպի որդին։ Ասենք, դու, իհարկե, իրավացի կլինես ինձ դատապարտելու։ Իմ տարիքում... Մի խոսքով, այն... այն աղջիկը, որի մասին դու, հավանորեն, արդեն լսել ես։

— Ֆե՞նիչկան,— առանց քաշվելու հարցրեց Արկադին։

Նիկոլայ Պետրովիչը կարմրեց։

— Խնդրում եմ, նրա անունը բարձր մի ասա... Այո... Նա այժմ մոտս է ապրում։ Ես նրան տեղավորեցի տանս... այնտեղ երկու մանր սենյակներ կային։ Բայց այդ ամենը կարելի է փոխել։

— Ներեցեք, հայրիկ, ի՞նչ հարկ կա։

— Բարեկամդ մեզ մոտ հյուր է լինելու... անհարմար է...

— Բազարովի վերաբերմամբ դու մի անհանգստանա։ Նա այդ բոլորից բարձր է։

— Է՛հ, դու էլ, վերջապես,— բացատրեց Նիկոլայ Պետրովիչը։— Ցավն այն է, որ կից տնակն էլ հարմար չէ։

— Զարմանալի մարդ ես, հայրիկ, դու կարծես թե նե-

1 Մարկիզա — կտավե ծածկոց պատուհանի վրա կամ հովանոց պատշգամբի վրա արևից պաշտպանելու համար։

1 Նա իսկապես որ ազատ է (ֆրանս.)։

բողություն ես խնդրում,— վրա բերեց Արկադին։— Ձե՞ս ամաչում։

— Իհարկե, ես պետք է ամաչեմ,— պատասխանեց Նիկոլայ Պետրովիչը, ավելի ու ավելի կարմրելով։

— Հերիք է, հայրիկ, հերիք է, արա ինչպես ուզում ես։— Արկադին անուշ ժպտաց։ «Տես ինչ բանի համար է ներողություն խնդրում»,— մտածեց նա ինքն իրեն, և դեպի իր բարի ու փափկասիրտ հայրը տածած վեհանձն քնքշության զգացումը, միախառնված մի ինչ-որ ծածուկ գերակշռության գիտակցության հետ, համակեց նրա հոգին։— Հերիք է, խնդրում եմ,— նորից կրկնեց նա ակամա զարմանալով իր սեփական զարգացման և ազատության գիտակցությունից։

Նիկոլայ Պետրովիչը, որ շարունակում էր շփել իր ճակատը, մատների արանքից նայեց որդու վրա, և մի ինչ-որ բան ծակեց նրա սիրտը... Բայց իսկույն էլ նա ինքն իրեն մեղադրեց։

— Այ, այստեղից արդեն մեր արտերն են գալիս,— ասաց նա երկար լռությունից հետո։

— Իսկ այս դիմացինը կարծեմ մեր անտառն է,— հարցրեց Արկադին։

— Այո, մերն է։ Միայն թե ես այն ծախել եմ։ Այս տարի կտրելու են։

— Ինչո՞ւ ծախեցիր։

— Փող էր պետք. մանավանդ որ այդ հողն անցնում է գյուղացիներին։

— Որոնք քեզ հարկ չե՞ն տալիս։

— Այդ արդեն իրենց գործն է։ Բայց հո վերջիվերջո մի օր տալու են։

— Ափսոս անտառ,— նկատեց Արկադին և սկսեց չորս կողմը դիտել։

Այն տեղերը, որտեղից նրանք անցնում էին, չէին կարող գեղեցիկ կոչվել։ Դաշտեր ու անվերջ դաշտեր էին, որ տարածվում էին մինչև երկնակամարին հասնող հորիզոնը, մերթ բարձրանում էին թեթև, մերթ նորից ցած իջնում։ Տեղ-տեղ երևում էին փոքրիկ անտառներ և ցիր ու ցան ընկած կարճահասակ թփեր, ոլորապտույտ ձորակներ, որոնք հիշեցնում էին նրանց սեփական պատկերը Եկատերինայի ժամանակներից մնացած հին հատակագծերի վրա։ Պատահում էին նաև գետակներ, խորն ընկած ափերով, փոքրիկ լճակներ՝ անպետք ամբարտակներով, և գյուղակներ՝ ցածր խրճիթներով, սևացած, հաճախ կիսով չափ քամուց պոկված տանիքների տակ, և ցախահյուս պատերով, կաղ անելուց ծռված շինություններ և դատարկ մնացած մարագի կողքին բացած ահագին դարպաս, և եկեղեցիներ, մերթ աղյուսաշեն ու տեղտեղ ծեփը թափված, մերթ փայտաշեն, վրայի խաչը ծռված ու ավերված գերեզմանատներով։ Արկադիի սիրտը հետզհետե ճմլվում էր։ Կարծես դիտմամբ հանդիպող գյուղացիները բոլորը գզլոտված էին, քոնձոռտ ձիերի վրա. ճանապարհի կողքին բսնած եղևնիներն էլ նմանում էին ցնցոտի հագած մուրացականների՝ պոկոտված կեղևներով ու կոտրված ճյուղերով, փրշոտ, լղարած, կարծես կրծոտած, կովերը ագահությամբ պոկոտում էին առուների մեջ բուսած խոտը։ Այնպես էր թվում, թե նրանք հենց նոր էին դուրս պրծել ինչ որ մեկի ահռելի, մահաբեր ճիրաններից, և այս ուժասպառ կենդանիների ողորմելի տեսքը, գարնանային այս կարմիր օրվա մեջ, մարդու աչքերի առաջ, պատկերացնում էր անմխիթար, անվերջ ձմեռվա սպիտակ ուրվականը իր բուքերով, սառնամանիքներով ու ձյուներով... «Չէ՛,— մտածեց Արկադին,— աղքատ երկիր է սա. ոչ աշխատանք է երևում և ոչ ունևորություն։ Ո՛չ, ո՛չ, չի կարելի նրան այսպես թողնել, անհրաժեշտ է բարեփոխություններ մտցնել... բայց ինչպե՞ս անել, որտեղից սկսել»...

Այսպես էր մտածում Արկադին... և մինչ նա այդպես մտածում էր, գարունն իր անելիքն անում էր։ Ջորս կողմն ամեն ինչ փթթում էր ոսկյա կանաչով, ամեն ինչ ընդարձակ ու քնքուշ կերպով հուզվում էր ու պսպղում ջերմ քամու անդորր շնչի տակ, ամեն բան՝ ծառերը, թփերն ու խոտերը... Ամեն տեղ անվերջ ու հնչուն հոսանքի նման գեղգեղում էին արտույտները. վայրի սիրամարգերը մեկ ճչում էին՝ սավառնելով հարթ մարգագետինների վրա, մերթ լռիկ վազում էին կոշտերի վրայով։ Տուլաշները գբսսնում էին դեռ գարնանացանի քնքուշ, մով կանաչներում, սևին տալով, նրանք կորչում էին արդեն սպիտակին տվող տարեկանի մեջ և երբեմն միայն գլուխներն էին երևում ցանքի ծխագույն ալիքների մի-

ջից։ Արկադին նայում էր, նայում, և նրա մտքերը կամաց-կամաց թուլանալով անհետանում էին... Նա վրայից ձգեց շինելը և այնպիսի զվարթ կերպարանքով, այնպես պատանու նման նայեց հորը, որ սա կրկին գրկախառնվեց նրանից։

— Արդեն հասնում ենք,— նկատեց Նիկոլայ Պետրովիչը,— հենց որ բարձրանանք այս բլրակը, տունը կերևա։ Լավ ժամանակ կանցկացնենք, Արկաշա, դու ինձ կօգնես տնտեսական գործերում, եթե միայն քեզ այդ չի ձանձրացնի։ Այժմ հարկավոր է, որ մենք իրար հետ սերտ կերպով բարեկամանանք, միմյանց լավ հասկանանք, այնպես չէ՞։

— Իհարկե,— ասաց Արկադին,— բայց ինչ հրաշալի օր է այսօր։

— Քո գալու պատճառով է, հոգիս։ Այո, գարնան ամենափայլուն ժամանակն է։ Իսկապես, ես համաձայն եմ Պուշկինին—հիշո՞ւմ ես «Եվգենի Օնեգինի» մեջ.

Դու ինձ համար թախիծ ես բերում,
Սիրո եղանակ, ով գարուն, գարուն.
Ինչպես...

— Արկադի,— կանչեց Բազարովը տարանտասի միջից,— լուցկի ուղարկիր ինձ. լուցկի չկա ծխամորճս կպցնեմ։

Նիկոլայ Պետրովիչը լռեց, իսկ Արկադին, որ նոր-նոր սկսում էր լսել նրան ոչ առանց զարմանքի և ոչ առանց համակրանքի, շտապեց հանել գրպանից արծաթյա տուփիկով լուցկին ու Պյոտրի միջոցով ուղարկեց Բազարովին։

— Սիգար կուզե՞ս,— դարձյալ կանչեց Բազարովը։

— Ուղարկիր,— պատասխանեց Արկադին։

Պյոտրը վերադարձավ և տուփի հետ միասին Արկադիին տվեց նաև մի հաստ սև սիգար։ Արկադին իսկույն սիգարը կպցրեց, իր շուրջը տարածելով մի այնպիսի սուր ու թթու ծխախոտի հոտ, որ Նիկոլայ Պետրովիչը, որը իր կյանքում երբեք չէր ծխել, ակամա, թեև որդուն չվիրավորելու համար, աննկատելի կերպով քիթը մյուս կողմն էր շուռ տալիս։

Քառորդ ժամից հետո երկու կառքն էլ կանգ առան նոր կառուցված փայտաշեն տան պատշգամբի առաջ, որը ներկված էր մոխրագույն ներկով, իսկ երկթեքատ կտուրը

կարմիր ներկով։ Հենց այս էլ Մարյինոն էր, նույնպես Նոր-Շենը, կամ թե չէ, գյուղացոց լեզվով, Բոբիլի-Խուտորը։

IV

Իրենց պարոններին դիմավորելու համար տան ծառաների բազմությունը դուրս չէր եկել պատշգամբ. միայն տասներկու տարեկան մի աղջիկ երևաց այնտեղ, իսկ նրա հետևից էլ տնից դուրս եկավ մի ջահել տղա, որ շատ նման էր Պյոտրին, հագել էր բաճկոնի ձևի սպիտակ, զինանշավոր կոճակներով մոխրագույն համազգեստ։ Սա Պավել Պետրովիչ Կիրսանովի սպասավորն էր։ Նա անխոս բաց արեց սայլակի դռնակը ու ետ քաշեց տարանտասի ծածկոցը։ Նիկոլայ Պետրովիչը որդու և Բազարովի հետ անցավ մութ և համարյա դատարկ դահլիճով, որի դռան հետևից հարևանցի կերպով երևաց մի կանացի երիտասարդ դեմք, ու մտավ ընդունարան, որը կահավորված էր նորագույն ճաշակով։

— Ահավասիկ այս էլ մեր տունը,— ասաց Նիկոլայ Պետրովիչը, գլխարկը հանելով ու մազերը թափահարելով։— Այժմ ամենագլխավորն այն է, որ մի լավ ընթրենք ու հանգըստանանք։

— Հիրավի, ուտելը վատ չէր լինի,— ձգձգվելով նկատեց Բազարովն ու նստեց գահավորակի վրա։

— Այո, այո, ընթրիքը տվեք, շուտ արեք։— Նիկոլայ Պետրովիչն առանց մի ակնհայտ պատճառի ոտներով թքխկթքխկացրեց։— Ահավասիկ, Պրոկոֆիչն էլ եկավ։

Ներս մտավ վաթսուն տարեկան մի մարդ, սպիտակահեր, լղար ու թխադեմ. նա հագել էր պղնձե կոճակներով դարչնագույն ֆրակ և վզին փաթաթել վարդագույն թաշկինակ։ Նա հարգալից ժպտաց, մոտեցավ Արկադիի ձեռքը համբուրեց և, հյուրին գլուխ տալով, քաշվեց դռան մոտ ու ձեռները հետևը դրած կանգնեց։

— Ահա նա, Պրոկոֆիչ,— սկսեց Նիկոլայ Պետրովիչը։— Վերջապես մեզ մոտ եկավ... Հը, ինչպե՞ս ես գտնում նրան։

— Շատ լավ դրության մեջ,— ասաց ծերունին ու նորից ժպտաց, բայց և իսկույն էլ թավ ունքերը կիտեց։— Կհրամայե՞ք սեղան պատրաստեմ,— ասաց նա ազդու շեշտով։

— Այո՛, այո՛, խնդրեմ։ Բայց դուք նախ ձեր սենյակը չե՞ք գնա, Եվգենի Վասիլիչ։

— Ոչ, շնորհակալ եմ, կարիք չկա։ Միայն պատվիրեցեք, որ ճամպրուկս այնտեղ տանեն և մեկ էլ ահա այս վերնազգեստս,— ավելացրեց նա վրայից հանելով բալախոնը։

— Շատ լավ։ Գրոկոֆիչ, դե վերցրու նրանց շինելը։ (Գրոկոֆիչը կարծես տպրակուսանքով երկու ձեռքով վերցրեց Բազարովի «վերնազգեստը» և, գլխից բարձր բռնած, ուսքերի մատների վրա հեռացավ)։

— Իսկ դու, Արկադի, մի րոպե քո սենյակը կերթա՞ս։

— Այո՛, պետք է փոքր ինչ մաքրվել,— պատասխանեց Արկադին և արդեն ուզում էր դեպի դուռը գնալ, բայց այդ րոպեին ընդունարանը մտավ միջակ հասակով, անգլիական մոդի այուտ[1] հագած մի մարդ, վզին մոդայիկ, նոր ձևի ցածվիզ փողպատ, ոտներին լայքե կոշիկ. դա Պավել Պետրովիչ Կիրսանովն էր։ Ըստ արտաքին տեսքի նա քառասունհինգ տարեկան կլիներ. նրա կարճ խուզած սպիտակ մազերը, նոր արծաթի նման, մուգ փայլ ունեին. դեմքը, որ մաղձոտ էր, բայց առանց կնճիռների, և արտակարգ կանոնավոր ու մաքուր, կարծես թե հմուտ անգրիագործի նուրբ կտրիչով էր դուրս բերված, զարմանալի գեղեցկության հետքեր ուներ։ Մանավանդ շատ սիրուն էին պայծառ, սև, երկարավուն աչքերը։ Արկադիի հորեղբոր ամբողջ կերպարանքը՝ գեղեցկատես ու ազնվազարմ, պահպանել էր իր պատանեկական վայելչակազմությունը և այն ձգտումը հեռանալու հողից դեպի վեր, որը մեծ մասամբ քսան տարեկանից հետո անհետանում է։

Պավել Պետրովիչը վարտիքի գրպանից հանեց իր երկար, կարմրագույն եղունգներով գեղեցիկ ձեռքը, որ արևակնյա կոճակավոր բազպանի քնքուշ սպիտակության պատճառով ավելի ևս գեղեցիկ էր թվում, և մեկնեց եղբոր որդուն։ Նախապես կատարելով եվրոպական «shake hands»[2], նա երեք անգամ, ռուսական սովորությամբ, համբուրվեց

[1] Այուտ (անգլ.) անգլիական տարազի հագուստ։
[2] Ձեռքսեղմոցը (անգլ.)։

նրա հետ, այսինքն իր անուշահոտ բեղերով երեք անգամ կպավ նրա թշերին ու ասաց՝ «Բարի գալուստ»։

Նիկոլայ Պետրովիչը նրան ներկայացրեց Բազարովին։ Պավել Պետրովիչը իր ճկուն իրանը խոնարհեց ու թեթևակի ժպտաց, բայց ձեռքը չտվեց և նույնիսկ ձեռքը նորից գրպանը դրեց։

— Ես արդեն կարծում էի, թե այսօր այլևս չեք գա,— հաճելի ձայնով ասաց նա՝ սիրալիր շորորալով, ուսերը վեր քաշելով ու սպիտակ, սիրուն ատամները ցույց տալով։— Ճանապարհին հո որևէ բան չպատահե՞ց...

— Ոչինչ չպատահեց,— պատասխանեց Արկադին,— ճանապարհին փոքր-ինչ ուշացանք։ Դրա համար էլ մենք այժմ գայլի նման քաղցած ենք։ Հայրիկ, Գրոկոֆիչին շտապեցրու, իսկ ես այս րոպեիս կգամ։

— Սպասիր, ես էլ հետդ գամ,— բացականչեց Բազարովը, տեղից վեր թռչելով։ Երկու երիտասարդները դուրս եկան։

— Այս ո՞վ է,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Արկաշայի ընկերը. նրա ասելով, մի շատ խելոք մարդ։

— Նա մեզ մոտ հյո՞ւր է մնալու։

— Այո։

— Այս երկարամա՞զը։

— Այո, այո։

Պավել Պետրովիչը եղունգներով սեղանը թխկթխկացրեց։

— Ինձ թվում է, որ Արկադին s'est dégourdi[1],— նկատեց նա։— Ուրախ եմ նրա վերադարձին։

Ընթրիքին քիչ էին խոսում։ Մանավանդ Բազարովը համարյա ոչինչ չէր ասում, բայց ուտում էր շատ։ Նիկոլայ Պետրովիչը զանազան դեպքեր էր պատմում իր, ինչպես ինքն էր ասում, ֆերմերական կյանքից, խոսում էր առաջիկայում կառավարության ձեռք առնելիք միջոցների մասին, մասնաժողովների, պատգամավորների, մեքենաներ մտցնելու անհրաժեշտության մասին և այլն։ Պավել Պետրովիչը ծանր-ծանր ետ ու առաջ էր քայլում սեղանատան մեջ (նա

[1] Փոխվել է (ֆրանս.) (դեպի լավը)։

երբեք ընթրիք չէր անում), երբեմն-երբեմն բերանին էր տանում կարմիր գինով լի փոքրիկ բաժակը, մի կում խմում, և էլ ավելի հազվադեպ որևէ դիտողություն կամ, ավելի շուտ, այսպիսի բացականչություն անում. «հը, էհե, հըմ»։ Արկադին մի քանի նորություններ հաղորդեց Պետերբուրգի կյանքից, բայց նա իրեն մի փոքր անհարմար դրության մեջ էր զգում, դա այն անհարմարությունն էր, որ սովորաբար համակում է երիտասարդ մարդուն, երբ նա արդեն երեխա լինելուց նոր է դադարել և վերադարձել է այն տեղը, ուր նրան սովոր են տեսնել ու համարել երեխա։ Նա անտեղի ձգձգում էր իր ասածները, խուսափում էր տալիս «հայրիկ» խոսքից և մինչև իսկ մի անգամ փոխարինեց նրան «հայր» բառով, ճիշտ է, այդ բառը քթի տակ արտասանեց, ավելորդ համարձակությամբ իր բաժակի մեջ ավելի գինի լցրեց, քան ինքն ուզում էր, և բոլոր գինին էլ խմեց։ Պրոկոֆիչն աչքը նրանից չէր հեռացնում և միայն շրթունքներն էր ծամծմում։ Ընթրիքից հետո ամենքն էլ անմիջապես բաժանվեցին։

— Ինչ տարօրինակ մարդ է եղել հորեղբայրդ,— ասում էր Բազարովը գիշերազգեստով Արկադիի անկողնի մոտ նըստած ու կարճ ծխամորճը ծծելով։— Ինչ պճնամոլություն է գյուղ տեղում։ Հապա եղունգնե՞րը... իսկ և իսկ ցուցահանդես ուղարկելու բան է։

— Դե, դու, իհարկե, չգիտես,— պատասխանեց Արկադին,— թե նա ինչ անուն է ունեցել իր ժամանակին։ Մի ուրիշ անգամ ես նրա պատմությունը կպատմեմ քեզ։ Ախր նա շատ գեղեցիկ տղամարդ է եղել, կանանց գժվացրել է իր գեղեցկությամբ։

— Ահա թե ի՞նչ։ Ուրեմն, ըստ հին սովորության։ Ափսոս, որ այստեղ հրապուրելու մարդ չկա։ Ես շարունակ դիտում էի նրան. ինչ զարմանալի օձիքներ ունի, կարծես քարից լինի, կզակն էլ այնպես մաքուր սափրված է։ Սիծաղելի բան չէ՞, Արկադի Նիկոլայիչ։

— Գուցե։ Միայն թե նա իրոք լավ մարդ է։

— Հնամենի երևույթ է։ Իսկ հայրդ պատվական մարդ է։ Նա իզուր է ոտանավորներ կարդում և տնտեսությունից էլ հազիվ թե բան է հասկանում, բայց բարի մարդ է։

— Հայրս իսկապես ոսկի մարդ է։

— Նկատեցի՞ր ինչպես քաշվում է։

Արկադին գլխով արավ, որպես թե ինքը չէր քաշվում։

— Զարմանալի մարդիկ են այս ծեր ռոմանտիկները,— շարունակեց Բազարովը։— Իրենց նյարդային համակարգն այնքան կզարգացնեն, որ գրգռման աստիճանի հասնի... և դրանով էլ խանգարվում է հավասարակշռությունը։ Սակայն, ներիր։ Իմ սենյակում անգլիական լվացարան է դրված, մինչդեռ դուռը փակ չունի։ Այնուամենայնիվ պետք է այդ բանը խրախուսել՝ անգլիական լվացարանները, այսինքն՝ առաջադիմությունը։

Բազարովը գնաց, իսկ Արկադիին համակեց բերկրության զգացումը։ Ինչ քաղցր բան է քնել հայրենի կտրի տակ, ծանոթ անկողնի մեջ, այն վերմակի տակ, որի վրա աշխատել են սիրելի ձեռներ, գուցե և դայակի ձեռները, այդ բարի, քնքուշ ու անխոնջ ձեռները։ Արկադին հիշեց Եգորովնային և հառաչեց, և մաղթեց նրան երկնային արքայություն։ Նա իր համար չէր աղոթում։

Նա էլ, Բազարովն էլ շատ շուտով քնեցին, բայց տանը եղած մյուս անձինք դեռ երկար ժամանակ չէին քնում։ Որդու վերադարձը հուզել էր Նիկոլայ Պետրովիչին։ Նա անկողին մտավ, բայց մտքերը չհանգցրեց և, գլուխը ձեռքին հենած, երկար մտածմունքների մեջ էր։ Եղբայրը կեսգիշերը վաղուց անց դեռ նստած էր իր առանձնասենյակում գամբասմյան լայն բազկաթոռում, բուխարու դիմաց, որի մեջ թույլ վառվում էր քարածուխը։ Պավել Պետրովիչը չէր հանվել, միայն չինական անկրունկ կարմիր հողաթափերն էին փոխարինել նրա ոտներին լայքավոր ոտնամաններին։ Ձեռքին բռնել էր նա Galignani[1]-ի վերջին համարը, բայց չէր կարդում. նա աչքը հառած նայում էր բուխարուն, որտեղ մերթ մարելով, մերթ բորբոքվելով թրթռում էր կապտավուն բոցը... Աստված գիտե, թե որտեղ էին թափառում նրա մտքերը. բայց նրանք մենակ անցյալում չէր, որ թափառում էին՝ նրա դեմքի արտահայտությունը կենտրոնացած էր ու մռայլ, որը չի լինում, երբ մարդ զբաղված է միմիայն

[1] «Գալյան լրաբեր» ամսաթերթը հրատարակվում էր Փարիզում անգլերեն լեզվով։

հիշողություններով։ Իսկ հետևի փոքրիկ սենյակում, մեծ սնդուկի վրա, կապույտ բաճկոն հագած և մուգ մազերի վրայից սպիտակ գլխաշոր ձգած, նստել էր մի նորատի կին, Ֆենիչկան, և երբեմն ականջ էր դնում, երբեմն նիրհում, երբեմն էլ նայում էր բաց դռանը, որի մյուս կողմում երևում էր մանկական մահճակալը և լսվում քնած մանկան համաչափ շնչառությունը։

V

Մյուս օրն առավոտյան Բազարովը ամենքից վաղ զարթնեց և դուրս եկավ տնից։ «Էհե՜,— մտածեց նա իր չորս կողմը նայելով։— էս ինչ անպետք տեղ է եղել»։ Երբ Նիկոլայ Պետրովիչը իր գյուղացիներից սահմանաբաժանվեց, ստիպված էր իր նոր դաստակերտի համար հատկացնել չորս դեսյատին բոլորովին տափարակ ու լերկ տարածություն։ Նա շինեց տուն, ֆերմա և ծառաների համար բնակարաններ, պարտեզ դցեց, լճակ ու երկու հոր փորեց. բայց մատղաշ ծառերը լավ չէին բռնում, լճակում շատ քիչ ջուր հավաքվեց, իսկ ջրհորների ջուրը աղահամ էր։ Միայն հասմիկների և ակացիաների տունկերից կազմված զովանոցը բավականաչափ աճեց. այնտեղ երբեմն թեյում էին ու ճաշում։ Բազարովը մի քանի բոպեում անցավ պարտեզի բոլոր ուղիներով, գոմ ու ախոռ մտավ, երկու տղա գտավ և նրանց հետ իսկույն էլ ծանոթություն հաստատեց և հետները միասին գնաց դաստակերտից մի վերստ հեռու, փոքրիկ ճահճուտը՝ գորտեր որսալու։

— Ինչի՞ դ են պետք գորտերը, պարոն,— հարցրեց տղաներից մեկը։

— Այ թե ինչի համար,— պատասխանեց Բազարովը, որ մի առանձին ընդունակություն ուներ ստորին կարգի մարդկանց վստահությունը գրավելու, թեև երբեք նրանց երես չէր տալիս և հետները անփույթ էր վարվում,— էս գորտը շերտատում եմ ու սկսում նայել, թե ինչ է կատարվում նրա ներսը. և որովհետև ես էլ, դու էլ միևնույն գորտն ենք, միայն թե մենք ոտների վրա ենք մեր գալիս, ես էլ կարող եմ իմանալ, թե ինչ է կատարվում նաև մեր ներսում։

— Ախր, ինչի՞ դ է հարկավոր։

— Որպեսզի, երբ դու հիվանդանաս ու ես քեզ բժշկելու լինեմ, չսխալվեմ։

— Դու ի՞նչ է, գոխտոր ես։

— Այո։

— Վասկա, լսիր, պարոնն ասում է, թե ես էլ դու էլ միևնույն գորտն ենք։ Զարմանք բան է։

— Ես նրանցից, գորտից վախում եմ,— նկատեց Վասկան, որ յոթնամյա, վուշի նման սպիտակ մազերով տղա էր. ոտաբոբիկ, հագին օձիքավոր բաճկոն։

— Ինչ կա վախենալու։ Մի՞թե նրանք կծում են։

— Դեհ, մտեք ջուրը, փիլիսոփաներ,— ասաց Բազարովը։

Մինչ այդ Նիկոլայ Պետրովիչն էլ էր արթնացել ու գնացել Արկադիի սենյակը։ Արկադին արդեն հագնված էր։ Հայր ու որդի դուրս եկան պատշգամբ. զովանոցի տակ, բաղրիքի մոտ գրված սեղանի վրա, հասմիկի խոշոր փնջերի միջև պրդեն եռում էր հեշտաեռը։ Եկավ այն աղջիկը, որ երեկ առաջինը դիմավորեց նրանց պատշգամբում, և բարակ ձայնով ասաց.

— Ֆեդոսյա Նիկոլաևնան մի քիչ հիվանդ է, չեն կարող գալ. հրամայեցին ձեզ հարցնել՝ ինքնե՞րդ եք թեյ լցնելու, թե Դունյաշային ուղարկի։

— Ես, ես ինքս կանեմ,— շտապ վրա բերեց Նիկոլայ Պետրովիչը։— Դու թեյ ինչո՞վ ես խմում, Արկադի, սերո՞վ թե լիմոնով։

— Սերով,— պատասխանեց Արկադին և փոքր-ինչ լռելուց հետո հարցական եղանակով արտասանեց,— հայրի՞կ։

Նիկոլայ Պետրովիչը շփոթվելով նայեց որդուն։

— Ի՞նչ է,— ասաց նա։

Արկադին աչքերը կախեց։

— Ներիր, հայրիկ, եթե հարցս քեզ անտեղի թվա,— սկսեց նա,— բայց դու ինքդ քո երեկվա անկեղծությամբ ստիպում ես ինձ էլ անկեղծ լինել... հո չե՞ս բարկանա...

— Ասա։

— Դու ինձ համարձակություն ես տալիս քեզ հարցնելու... Արդյոք Ֆեն... արդյոք նրա թեյ լցնելու չգալը այն պատճառով չէ՞, որ ես այստեղ եմ։

Նիկոլայ Պետրովիչը մի փոքր շուռ տվեց երեսը։

— Գո՛ւցե,— ասաց նա վերջապես,— նա կարծում է... նա ամաչում է...

Արկադին աչքերն արագ ուղղեց հոր վրա։

— Իզուր է ամաչում։ Նախ՝ քեզ արդեն հայտնի է իմ մտածելակերպը (Արկադին շատ մեծ հաճույք էր զգում այդ խոսքերն արտասանելիս) և երկրորդն էլ՝ մի՞թե ես մազաչափ անգամ կուզենամ նեղել քո կյանքը, քո սովորությունները։ Մանավանդ, համոզված եմ, որ դու չէիր կարող վատ ընտրություն անել։ Եթե դու թույլ ես տվել նրան ապրել քեզ հետ միևնույն հարկի տակ, ասել է, թե նա դրան արժանի է։ Համենայն դեպս՝ որդին հոր դատավորը լինել չի կարող, մանավանդ ես, և մանավանդ քեզ նման մի հոր նկատմամբ, որը ոչ մի ժամանակ և ոչ մի բանում իմ ազատությունը չի ճնշել։

Սկզբում Արկադիի ձայնը դողում էր. նա զգում էր իրեն մեծահոգի, բայց հասկանում էր, որ հոր գլխին խրատի նման մի բան է կարդում։ Սակայն սեփական խոսքերի ձայնը սաստիկ ազդում է մարդու վրա, և Արկադին վերջին խոսքերն արտասանեց անդրդվելի և նույնիսկ տպավորիչ։

— Շնորհակալ եմ, Արկաշա,— խուլ ձայնով խոսեց Նիկոլայ Պետրովիչը, և նրա մատները դարձյալ ճակատի և հոնքերի վրայով սկսեցին շարժվել։— Քո ենթադրությունները իրոք արդարացի են։ Իհարկե, եթե այդ աղջիկն արժանի չլիներ... Սա մի թեթևամիտ քմահաճույք չէ։ Ինձ համար հեշտ չէ այդ մասին քեզ հետ խոսել։ Բայց դու հասկանում ես, իհարկե, որ նրա համար դժվար էր քո ներկայությամբ, այն էլ այստեղ գալուդ հենց առաջին օրը։

— Թե որ այդպես է, ես ինքս կգնամ նրա մոտ,— բացականչեց Արկադին մեծահոգության զգացմունքների նոր թափով և տեղից վեր թռավ։— Ես նրան կհասկացնեմ, որ ամենևին ինձանից քաշվելու ոչինչ չկա։

Նիկոլայ Պետրովիչն էլ վեր կացավ։

— Արկադի,— ասաց նա,— ախր... ինչպես կարելի է... այնտեղ... Քեզ չեմ նախազգուշացրել, որ...

Բայց Արկադին այլևս չէր լսում նրան և վազեց, գնաց պատշգամբից։ Նիկոլայ Պետրովիչը նայեց նրա հետևից ու շփոթված նստեց աթոռի վրա։ Նրա սիրտը բաբախում էր...

Այդ րոպեին նրան պատկերացավ արդյոք իր և որդու ապագա փոխհարաբերությունների անխուսափելի տարօրինակությո՞ւնը, թե՞ գիտակցում էր նա, որ Արկադին գուցեև ավելի հարգանք ցույց տար իրեն, եթե բոլորովին չշոշափեր այդ հարցը, կամ կշտամբո՞ւմ էր նա արդյոք ինքն իրեն իր թուլամորթության համար՝ դժվար է ասել. այդ բոլոր զգացումներն էլ կային նրանում, բայց իբրև զգացողություններ և այն էլ անորոշ. իսկ երեսի կարմրությունը չէր անցնում, և սիրտն էլ բաբախում էր։

Լսվեցին շտապ քայլեր, և պատշգամբ եկավ Արկադին։

— Հայր, մենք ծանոթացանք,— բացականչեց նա, և նրա դեմքի վրա փայլեց մի քաղցր ու բարի հանդիսավորություն։— Ճիշտ որ, Ֆեդոսյա Նիկոլաևնան մի քիչ առողջ չէ այսօր և կգա քիչ ուշ։ Բայց ինչպես է, որ դու ինձ չես ասել, թե ես եղբայր ունեմ։ Եթե իմանայի, ես հենց երեկ երեկոյան կհամբուրեի նրան, ինչպես որ այս րոպեին համբուրեցի։

Նիկոլայ Պետրովիչն ուզում էր մի բան ասել, ուզում էր վեր կենալ տեղից և գիրկը բանալ... Արկադին ինքը նրա վզովն ընկավ։

— Այդ ի՞նչ է։ Դարձյա՞լ գրկախառնվել եք,— նրանց հետևից լսվեց Պավել Պետրովիչի ձայնը։

Հայր ու որդի երկուսն էլ հավասարապես ուրախացան, որ նա երևաց այդ րոպեին։ Լինում են սրտաշարժ վիճակներ, որոնցից սակայն մարդ ուզում է շուտ դուրս գալ։

— Ինչո՞ւ ես զարմանում,— ուրախ-ուրախ ասաց Նիկոլայ Պետրովիչը։— Ախր այնքան եմ սպասել Արկաշային... Երեկվանից չեմ հասցրել մի կուշտ նայելու վրան։

— Ամենևին էլ չեմ զարմանում,— նկատեց Պավել Պետրովիչը,— ես ինքս էլ կուզենայի հետը համբուրվել։

Արկադին մոտեցավ հորեղբորը ու նորից երեսին զգաց նրա անուշաբույր բեղերի հպումը։ Պավել Պետրովիչը սեղանի մոտ նստեց։ Նա հագել էր անգլիական ճաշակի նուրբ հագուստ, գլխին դրել էր փոքրիկ ֆես։ Այս ֆեսն ու անփույթ կերպով կապած փողկապը ակնարկ էր գյուղական կյանքի ազատության։ Սակայն շապկի քիփ օձիքը, որ, ճշմարիտ է, սպիտակ չէր, այլ խայտաբղետ, ինչպես որ վայել է առավոտ-

յան զգեստին, սովորական անոգորմությամբ սեղմում էին սափրած կզակը։

— Ո՞րտեղ է քո նոր բարեկամը,— հարցրեց նա Արկադիին։

— Տանը չի. սովորաբար նա վաղ է վեր կենում և մի որևէ տեղ գնում։ Գլխավորն այն է, որ նրա վրա ամենևին չպետք է ուշադրություն դարձնել, նա ձևականություններ չի սիրում։

— Այո, երևում է։— Պավել Պետրովիչն սկսեց առանց շտապելու հացին կարագ քսել։— Երկա՞ր է մեզ մոտ հյուր մնալու։

— Տեսնենք։ Նա հոր մոտ էր գնում և ճանապարհին եկավ մեզ մոտ։

— Իսկ հայրը որտե՞ղ է ապրում։

— Մեր նահանգում, այստեղից ութսուն վերստ հեռու։ Այնտեղ մի փոքրիկ կալվածք ունի։ Առաջ նա եղել է զինվորական բժիշկ։

— Հա՜... Ես էլ հարց եմ տալիս ինքս ինձ, թե այս ի՞նչ ծանոթ ազգանուն է՝ Բազարո՞վ... Հիշո՞ւմ ես, Նիկոլայ, կարծեմ հայրիկի դիվիզիայում Բազարով ազգանունով մի բժիշկ կար։

— Կարծեմ, կար։

— Այո, այո։ Ուրեմն այդ բժիշկը սրա հայրն է։ Հրմ։— Պավել Պետրովիչը բեղերը շարժեց։— Իսկ ինքը, պարոն Բազարովը, ի՞նչ է իսկապես,— հարցրեց նա շեշտելով։

— Բազարո՞վն ինչ է,— Արկադին քթի տակ ծիծաղեց։— Ուզո՞ւմ եք, հորեղբայր, ասեմ ձեզ, թե նա իսկապես ինչ բան է։

— Ճնորհ արա, եղբորորդի։

— Նա նիհիլիստ է։

— Ինչպե՞ս,— հարցրեց Նիկոլայ Պետրովիչը, իսկ Պավել Պետրովիչը օդի մեջ բարձրացրեց դանակը, որի ծայրին մի կտոր կարագ կար, ու մնաց անշարժ։

— Նա նիհիլիստ է,— կրկնեց Արկադին։

— Նիհիլի՞ստ,— ասաց Նիկոլայ Պետրովիչը։— Ինչքան ես գիտեմ, դա լատիներեն nihil—ոչինչ բառից է. հետևաբար այդ բառը նշանակում է այնպիսի մի մարդ, որը... որը ոչի՞նչ չի ընդունում։

— Առա՝ որը ոչինչ չի հարգում,— վրա բերեց Պավել Պետրովիչը, և նորից սկսեց հացին կարագ քսել։

— Որը ամեն բանի քննադատաբար է վերաբերվում,— նկատեց Արկադին։

— Իսկ դա միևնույն բանը չէ՞։— Հարցրեց Պավել Պետրովիչը։

— Նիհիլիստը մի այնպիսի մարդ է, որը ոչ մի հեղինակության առաջ չի խոնարհվում, ոչ մի սկզբունք, ինչքան էլ այդ սկզբունքը հարգանքի արժանացած լինի, չի ընդունում լոկ հավատքով։

— Եվ ինչ է, այդ լա՞վ բան է,— ընդհատեց Պավել Պետրովիչը։

— Նայած թե ում համար։ Ոմանց համար դա լավ է, ուրիշների համար՝ շատ վատ։

— Մի՞թե։ Է՜հ, ինչպես տեսնում եմ, դա մեր խելքի բանը չէ։ Մենք հին դարու մարդիկ ենք և կարծում ենք, որ առանց պրինսիպների (Պավել Պետրովիչն այդ բառն արտասանում էր փափուկ, ֆրանսիացիների նման։ Մինչդեռ Արկադին, ընդհակառակը, արտասանում էր «պրինցիպ», շեշտը գցելով առաջին վանկի վրա), առանց, ինչպես դու ես ասում, պրինսիպների, լոկ հավատքով ընդունելով որևէ քայլ անել, շունչ քաշել չի կարելի. Vous avez changé tout cela[1], ասում եմ ես ձեզ առողջություն և գեներալական աստիճան, իսկ մենք մտիկ կտանք ձեզ ու կուրախանանք, պարոնայք...

— Նիհիլիստներ,— որոշակի ասաց Արկադին։

— Այո. Առաջ կային հեգելիստներ[2], իսկ այժմ՝ նիհիլիստներ։ Տեսնենք, թե ինչպե՞ս պետք է մենք գոյություն ունենանք դատարկության մեջ, օդազուրկ տարածության մեջ. իսկ այժմ խնդրեմ, եղբայր, Նիկոլայ Պետրովիչ, զանգը տուր, արդեն կտկատ խմելուս ժամանակն է։

---

1 Դուք ամեն բան փոխել եք, ասկնովրա արել։ Ս. Թ.։

2 Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգել (1770—1831 թ.) իդեալիստ փիլիսոփա։ Նրա վարդապետությունը 30—40-ական թվականներին խիստ տարածված էր Մոսկվայի ինտելիգենտ հասարակության մեջ. «սլավյանոֆիլ» և «զապադնիկ» կոչված ուղղությունները յուրաքանչյուրն իր տեսակետով էր ըմբռնում Հեգելի վարդապետությունը։

Նիկոլայ Պետրովիչը զանգը տվեց և գոռաց. «Դունյաշա»։ Բայց Դունյաշայի փոխարեն Ֆենիչկան ինքը դուրս եկավ։ Դա մի երիտասարդ կին էր, քսաներեք տարեկան, ամբողջովին սպիտակ ու փափլիկ, թուխ մազերով ու աչքերով, կարմիր, մանկական-փափլիկ շրթունքներով ու քնքուշ ձեռներով։ Նա հագել էր չՔե մաքուր զգեստ, կապտագույն նոր գլխաշորը թեթև գրկել էր նրա կլոր ուսերը։ Նա մի մեծ գավաթով կակաո բերեց և, Պավել Պետրովիչի առաջը դնելով, սաստիկ ամաչեց, ջերմ արյունը հորձանք տվեց նրա սիրուն դեմքի նուրբ մաշկի տակով, և նրա երեսը կարմրատակեց։ Ֆենիչկան աչքերը խոնարհեց և կանգ առավ սեղանի կողքին և թեթևաքեն հենվեց մատների ծայրերին։ Թվում էր, թե նա մեկ ամոթ էր համարում, որ եկել էր, և միևնույն ժամանակ նա կարծես թե զգում էր, որ իրավունք ուներ գալու։

Պավել Պետրովիչը խստությամբ հոնքերը հավաքեց, իսկ Նիկոլայ Պետրովիչը շփոթվեց։

— Բարև, Ֆենիչկա,— ասաց նա ատամների արանքով։

— Բարև ձեզ,— պատասխանեց Ֆենիչկան ոչ բարձր, բայց հնչուն ձայնով և, աչքի ծայրով նայելով Արկադիին, որը բարեկամաբար ժպտում էր նրան, կամացուկ դուրս գնաց։ Նա փոքր-ինչ շորորալով էր ման գալիս, բայց այդ էլ էր նրան սազ գալիս։

Մի քանի րոպե պատշգամբում լռություն տիրեց։ Պավել Պետրովիչը խմում էր իր կակաոն և հանկարծ գլուխը վեր բարձրացրեց։

— Ահավասիկ պարոն նիհիլիստն էլ է շնորհ բերում այստեղ,— ասաց նա ցածրաձայն։

Հիրավի, պարտեզով, ծաղկանց թմբերը շրջանցելով, գալիս էր Բազարովը։ Նրա կտավե վերարկուն ու վարտիքը ցեխոտվել էին, ճահճային կպչուն բույսը փաթաթվել էր նրա հին, կլոր գլխարկին, աջ ձեռքին բռնել էր մի փոքր տոպրակ. տոպրակի մեջ մի կենդանի բան էր շարժվում։ Նա արագությամբ մոտեցավ պատշգամբին և, գլխով անելով, ասաց.

— Բարև ձեզ, պարոններ. ներեցեք, որ թեյին ուշացա. այս րոպեին կվերադառնամ։ Հարկավոր է այս գերիներին տեղավորել։

— Այդ ի՞նչ է ձեզ մոտ, տղրուկնե՞ր,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Ոչ, գորտեր են։

— Դուք դրանց ուտո՞ւմ եք, թե՞ բազմացնում։

— Փորձերի համար է,— անտարբերությամբ պատասխանեց Բազարովն ու տուն գնաց։

— Նա այդ գորտերին պիտի կտրատի,— նկատեց Պավել Պետրովիչը։— Պրինսիպներին չի հավատում, իսկ գորտերին հավատում է։

Արկադին ափսոսանքով նայեց հորեղբորը, և Նիկոլայ Պետրովիչն էլ ծածուկ ուսերը թոթվեց։ Պավել Պետրովիչը ինքն էլ զգաց, որ անհաջող սրախոսեց, և սկսեց խոսել տընտեսության ու նոր կառավարչի մասին, որը նախօրյակին եկել էր իր մոտ գանգատվելու, թե մշակ Ֆոման արբեցություն է անում և բոլորովին ձեռից գնացել է... «Այնպիսի Եզոպոսն է,— ասաց նա ի միջի այլոց.— ամեն տեղ իրեն ցույց է տվել որպես վատ մարդ։ Կապրի և այդպես հիմար էլ կմեռնի»։

VI

Բազարովը վերադարձավ, սեղանի մոտ նստեց ու սկսեց շտապով թեյ խմել։ Երկու եղբայրներն էլ լռիկ նրան էին նայում, իսկ Արկադին աչքի տակով մեկ հորն էր նայում, մեկ՝ հորեղբորը։

— Հեռո՞ւ էիք գնացել,— հարցրեց վերջապես Նիկոլայ Պետրովիչը։

— Այստեղ, ձեր կաղամախի պուրակի մոտ ճահճուտ կա։ Մի հինգ հատ կտցար ես փախցրի։ Արկադի, դու կարող ես սպանել նրանց։

— Իսկ դուք որսորդ չե՞ք։

— Ոչ։

— Դուք, իսկապես, ֆիզիկայո՞վ եք զբաղվում,— իր հերթին հարցրեց Պավել Պետրովիչը։

— Ֆիզիկայով, այո. առհասարակ բնական գիտություններով։

— Ասում են վերջին ժամանակներս գերմանացիները խիստ առաջ են գնացել այդ կողմից։

— Այո. գերմանացիներն այդ կողմից մեր ուսուցիչներն են,— անփույթ կերպով պատասխանեց Բազարովը։

Պավել Պետրովիչը գերմանացիներ խոսքը գործածեց հեգնաբար, սակայն այդ բանը ոչ ոք չնկատեց։

— Դուք այդքան բարձր համարո՞ւմ ունիք գերմանացիների մասին,— վերին աստիճանի քաղաքավարությամբ ասաց Պավել Պետրովիչը։ Նա սկսել էր ներքուստ զայրանալ։ Բազարովի չափազանց ազատ վարմունքը վրդովեցնում էր նրա արիստոկրատական բնավորությունը։ Այդ հեքիմի որդին ոչ միայն չէր քաշվում, այլև պատասխանում էր գժկամաբար և կցկտուր, և նրա ձայնն էլ հնչում էր մի տեսակ կոպիտ ու հանդուգն։

— Այնտեղի գիտնականներն էլ բանիմաց մարդիկ են։

— Լավ, իսկ ռուս գիտնականների մասին, դուք, երևի, նույնքան լավ համարում չունի՞ք։

— Հենց այդպես էլ է։

— Այդ խիստ գովելի ինքնաժխտումն է,— ասաց Պավել Պետրովիչն իրանն ուղղելով և գլուխը ետ գցելով։— Հապա ի՞նչ էր Արկադի Նիկոլայիչը նոր ասում, որ դուք ոչ մի հեղինակություն չեք ընդունում։ Չեք հավատում նրանց։

— Եվ ինչո՞ւ պիտի ես նրանց ընդունեմ։ Եվ ինչի՞ պիտի հավատամ։ Խելոք բան կասեն՝ կհամաձայնեմ. պրծավ գնաց։

— Իսկ գերմանացիները բոլո՞ր էլ խելոք բան են ասում,— ասաց Պավել Պետրովիչը, և նրա դեմքը մի այնպիսի անտարբեր, անհոգ արտահայտություն ստացավ, որ կարծես ամբողջապես խորասուզվեց երկնային բարձունքների մեջ։

— Ոչ ամենքը,— կարճ հորանջումով պատասխանեց Բազարովը, որ ակնհայտ կերպով չէր ցանկանում վեճը շարունակել։

Պավել Պետրովիչը նայեց Արկադիին, կարծես ուզում էր ասել նրան. «Խոսք չունիմ, շատ քաղաքավարի է բարեկամդ»։

— Ինչ վերաբերում է ինձ,— նորից խոսեց նա աշխատելով իրեն զսպել,— ես, ինչ մեղքս պահեմ, գերմանացիներին չեմ սիրում։ Ռուսական գերմանացիների մասին չեմ

էլ խոսում, արդեն հայտնի է, թե նրանք ինչ պտուղներ են։ Բայց հենց Գերմանիայի գերմանացիներն էլ ինձ դուր չեն գալիս։ Առաջվա գերմանացիները էլի տանելի էին. այն ժամանակ նրանք ունեին Շիլլեր է, ինչ է, Գյոթե... Մանավանդ եղբայրս առանձնապես սիրում է նրանց... Իսկ այժմ բոլորն էլ ինչ-որ քիմիկոսներ են ու մատերիալիստներ։

— Կարգին քիմիկոսը քսան անգամ ավելի է օգտակար ամեն տեսակ բանաստեղծներից,— ընդհատեց Բազարովը։

— Ահա թե ինչ,— ասաց Պավել Պետրովիչն ու, ասես թե քնի մեջ ընկնելով, հոնքերը մի քիչ վերև բարձրացրեց։— Ասել է, դուք գեղարվեստը չե՞ք ընդունում։

— Փող վաստակելու արհեստը, կամ այլևս չկա գեմարոյը,— արհամարհական ծաղրով բացականչեց Բազարովը։

— Լա՜վ։ Ահա թե դուք ինչպես եք բարեհաճում կատակել։ Ուրեմն այդպիսով ժխտում եք ամե՞ն ինչ։ Լավ։ Նշանակում է, դուք հավատում եք միայն գիտությա՞նը։

— Ես արդեն ասացի ձեզ, որ ոչնչի չեմ հավատում. և ի՞նչ բան է գիտություն ասածդ, ընդհանրապես գիտությունը։ Կան գիտություններ, ինչպես որ կան նաև արհեստներ, կոչումներ. իսկ ընդհանրապես գիտություն ասած բանդ բոլորովին գոյություն չունի։

— Շատ լավ։ Իսկ ուրիշ, մարդկային կենցաղավարության մեջ ընդունված կանոններին, դրանց վերաբերմամբ ի՞նչ այդպիսի բացասական ուղղության եք հետևում։

— Սա ի՞նչ բան է, հարցաքննությո՞ւն,— հարցրեց Բազարովը։

Պավել Պետրովիչը թեթևակի գունատվեց... Նիկոլայ Պետրովիչը հարկ համարեց խոսակցությանը միջամտել։

— Այդ մասին, սիրելի Եվգենի Վասիլիչ, մի ուրիշ անգամ ավելի մանրամասն կերպով կխոսենք. ձեր կարծիքներն էլ կիմանանք, մերն էլ կհայտնենք։ Իմ կողմից ես շատ ուրախ եմ, որ բնական գիտություններով եք պարապում։ Լսել եմ, որ Լիբիխը[1] զարմանալի գյուտեր է արել հողը պարարտացնելու վերաբերմամբ։ Դուք կարող եք օգնել ինձ

---

1 Յուստուս Լիբիխ (1803—1873 թ.)—գերմանացի քիմիկոս։

գյուղատնտեսական աշխատանքներում, դուք կարող եք մի որևէ օգտակար խորհուրդ տալ։

— Ես ամենայն ուրախությամբ պատրաստ եմ, Նիկոլայ Պետրովիչ, բայց մենք որտեղ, Լիբիխը որտեղ։ Առաջ պետք է դեռ այբուբենը սովորել, և հետո միայն ձեռներս գիրք առնել։ Իսկ մենք դեռ սևը սպիտակից չոկել չենք կարողանում։

«Ինչպես տեսնում եմ, ճիշտ որ դու նիհիլիստ ես եղել», մտածեց Նիկոլայ Պետրովիչը։

— Այնուամենայնիվ, թույլ տվեք, հարկավոր դեպքում ձեր օգնությանը դիմելու,— ավելացրեց նա։— Իսկ այժմ, եղբայր, ժամանակն է գնալ խոսելու կառավարչի հետ։

Պավել Պետրովիչը վեր կացավ աթոռից։

— Այո,— խոսեց նա առանց որևէ մեկին նայելու,— կատարյալ դժբախտություն է այսպես մի հինգ տարի ապրել գյուղում, հանճարեղ մարդկանցից հեռու։ Տխմարից տխմար կդառնաս։ Դու աշխատում ես չմոռանալ այն, ինչ սովորեցրել են, իսկ հետո բանից դուրս է գալիս, որ այդ ամենն անմիտ բաներ են եղել, և քեզ ասում են, որ խելոք մարդիկ այդպիսի դատարկ բաներով այլևս չեն զբաղվում և որ դու, իբր, դատարկ թասակ ես։ Ինչ արած։ Երևի երիտասարդությունը, արդարև, մեզանից խելոք է։

Պավել Պետրովիչը կրունկների վրա դանդաղ շուռ եկավ ու դանդաղ էլ դուրս գնաց։ Նիկոլայ Պետրովիչն էլ նրա հետևից գնաց։

— Ի՞նչ է, նա մի՞շտ այդպես է,— սառն կերպով հարցրեց Բազարովը Արկադիից, երբ որ երկու եղբայրների ետևից դուռը փակվեց։

— Լսիր, Եվգենի, դու արդեն չափազանց խիստ վարվեցիր նրա հետ,— նկատեց Արկադին։— Նրան վիրավորեցիր։

— Հա, այդ էր պակաս, որ հիմա ես դրանց, այդ գավառական արիստոկրատներին, երես էլ տամ։ Ախր, այդ բոլորը անձնասիրություն է, առյուծային սովորություններ, պճնամոլություն։ Դն, եթե նա այդպիսի ձգտումներ ունի, այդ դեպքում թող շարունակեր իր ասպարեզը Պետերբուրգում...

էհ, տերը նրա հետ։ Գիտե՞ս, ջրային բզեզի մի բավականին հաղվագյուտ Dytiscus marginatus օրինակ եմ գտել։ Ցույց կտամ քեզ։

— Ես քեզ խոստացել էի նրա պատմությունը պատմել,— սկսեց Արկադին։

— Միշտի՞ պատմությունը։

— Դե, հերիք է, Եվգենի։ Հորեղբորս պատմությունը։ Կտեսնես, որ նա այնպիսի մարդ չէ, ինչպիսին դու նրան պատկերացնում ես։ Նա ավելի շատ արժանի է կարեկցանքի, քան ծաղրի։

— Չեմ վիճում։ Բայց հերիք է այդ մասին խոսել։

— Պետք է արդարամիտ լինել, Եվգենի։

— Ա՞յդ ինչից է հետևում։

— Չէ՛, լսի՛ր...

Եվ Արկադին պատմեց իր հորեղբոր պատմությունը։ Ընթերցողն այդ պատմությունը կգտնի հաջորդ գլխում։

VII

Իր կրտսեր եղբոր, Նիկոլայի նման, Պավել Պետրովիչ Կիրսանովն էլ սկզբում դաստիարակվում էր տանը, հետո զինվորական ուսումնարանում (պաժեսկի կորպուս)։ Մանկությունից աչքի էր ընկնում զարմանալի գեղեցկությամբ, մանավանդ որ ինքնավստահ էր, մի քիչ ծաղրասեր և մի տեսակ ծիծաղելի-մաղձոտ. նա չէր կարող դուր չգալ։ Հենց որ նա սպա դարձավ, սկսեց ամեն տեղ մտնել-դուրս գալ։ Նրան ձեռք-ձեռք էին խլում, և նա ինքն էլ իրեն երես էր տալիս, մինչև անգամ գժություններ էր անում, մինչև անգամ կոտրատվում էր։ Բայց այդ էլ էր նրան սազում։ Կանայք նրա համար գժվում էին, տղամարդիկ նրան թեթևսոլիկ էին անվանում ու թաքուն նախանձում նրան։ Ինչպես արդեն ասված էր, նա ապրում էր եղբոր հետ միևնույն բնակարանում և նրան անկեղծորեն սիրում էր, թեպետ ամենևին նրան նմանություն չուներ։ Նիկոլայ Պետրովիչը կաղին էր տալիս, ուներ մանր ու հաճելի դիմագծեր, բայց մի քիչ թախծալի մանր սև աչքեր ու փափուկ ցանցառ մազեր։ Նա սիրում էր ծուլանալ, բայց սիրում էր և կարդալ ու վախե-

նում էր հասարակությունից։ Պավել Պետրովիչը ոչ մի երեկոն չէր մնում, համարձակ ու ճարպիկ մարդու հռչակ ուներ (բարձր հասարակության երիտասարդների մեջ մարմնամարզությունը նա քիչ էր մնում մոդա դարձներ) և ընդամենը հինգ թե վեց ֆրանսերեն գիրք էր կարդացել։ Քսանութ տարեկան հասակում նա արդեն կապիտան էր. փայլուն ապագա էր սպասում նրան։ Հանկարծ այդ ամենը փոխվեց։

Այն ժամանակ Պետերբուրգի բարձր շրջաններում երբեմն-երբեմն երևում էր մի կին, որին մինչև օրս էլ չեն մոռացել. դա իշխանուհի Ռ-ն էր։ Նա ուներ բարեկիրթ ու վայելուչ, բայց մի փոքր պակասամիտ ամուսին և երեխաներ չուներ։ Այդ իշխանուհին մեկ տեսար՝ հանկարծ արտասահման կգնար, մեկ էլ տեսար՝ հանկարծ Ռուսաստան կվերադառնար, և առհասարակ տարօրինակ կյանք էր վարում։ Նա թեթևամիտ կոկետուհու համբավ ուներ, մեծ հաճույքությամբ անձնատուր էր լինում ամեն տեսակի զվարճությունների, ուժասպառ լինելու աստիճան պարում էր, կկիսալով ծիծաղում էր ու հանաքներ անում երիտասարդների հետ, որոնց ընդունում էր նա ճաշից առաջ կիսախավար հյուրասենյակում, իսկ գիշերները լաց էր լինում և աղոթում. ոչ մի տեղ նա հանգիստ չէր գտնում, և շատ անգամ էլ մինչև լույս իր սենյակում դես-դեն էր ընկնում, թախծագին մատները կոտրտելով, կամ էլ, բոլորովին դժգույն ու սառը, նստում էր սաղմոս կարդում։ Բայց օրը բացվում էր թե չէ, նա դարձյալ նույն աշխարհիկ կինն էր, դարձյալ հյուր կգնար, կծիծաղեր, կշաստախոսեր և ասես թե ընդառաջ կգնար ամեն բանի, որ իրեն կարող էր ամենաչնչին հաճույք պատճառել։ Նա զարմանալի գեղեցիկ կազմվածք ուներ, նրա ոսկեգույն և ոսկու նման ծանր հյուսը ծնկներից ցած էր իջնում, սակայն ոչ ոք նրան գեղեցկուհի չէր անվանի. նրա ամբողջ դեմքի վրա միակ լավը նրա աչքերն էին, և նույնիսկ բուն աչքերն էլ չէին—նրանք մանր էին ու գորշ—բայց նրանց հայացքը. արագ և խորունկ, կտրիճության աստիճանի անհոգ և վհատության աստիճանի մտախոհ,— խորհրդավոր հայացք։ Մինչև անգամ այն ժամանակ, երբ նրա լեզուն ամենադատարկ խոսքեր էր բլբլում, նրա հայացքի

մեջ ինչ-որ արտասովոր բան էր փայլում։ Նա հագնվում էր նուրբ ճաշակով։

Պավել Պետրովիչը նրան հանդիպեց մի պարահանդեսում, հետը մազուրկա պարեց, որի ընթացքում իշխանուհին ոչ մի խելոք խոսք չասաց, բայց Պավել Պետրովիչը սաստիկ սիրահարվեց նրան։ Հաղթանակների սովոր լինելով, նա այստեղ էլ շուտով իր նպատակին հասավ, բայց հաղթության հեշտությունը չատեցրեց նրան։ Ընդհակառակն, ավելի ևս շարատանջ, ավելի ուժեղ կապվեց այդ կնոջ հետ, որի մեջ, մինչև անգամ այն միջոցին, երբ նա անվերադարձ անձնատուր էր լինում, կարծես թե դարձյալ մնում էր մի ինչ-որ նվիրական ու անմատչելի բան, որտեղ ոչ ոք չէր կարող մուտք գործել։ Ի՞նչ էր բուն դրել այդ հոգու մեջ— աստծուն է հայտնի։ Թվում էր, թե նա գտնվում էր իրեն էլ անհայտ խորհրդավոր ուժերի իշխանության տակ։ Այդ ուժերը խաղում էին նրա հետ ինչպես ուզում էին. նրա ոչ այնքան մեծ խելքը չէր կարողանում նրանց քմահաճույքներին դիմադրել։ Նրա ամբողջ վարքը անհեթեթությունների մի շարան էր. միակ նամակները, որոնք կարող էին ամուսնու մեջ արդարացի կասկածներ հարուցել, նա գրել էր մի մարդու, որը համարյա թե իրեն օտար էր, իսկ սերը նրա մեջ միայն թախիծ էր առաջացնում. նա այլևս չէր ծիծաղում և կատակներ չէր անում այն մարդու հետ, որին ընտրում էր, և նրա ասածներին ականջ էր դնում ու նրան նայում էր վարանումով։ Երբեմն, մեծ մասամբ հանկարծակի այդ վարանումը սառը սարսափի էր փոխարկվում. դեմքը մեռելային ու վայրենի արտահայտություն էր ստանում. նա փակվում էր իր ննջարանում, և սպասուհին, միայն ականջը դռան կպցրած, լսում էր նրա խուլ հեկեկանքները։ Կիրառնովը շատ անգամ, քնքուշ տեսակցությունից հետո տան վերադառնալով, իր մեջ զգում էր այն դառն ու տրտամաղ ցասումը, որ բարձրանում էր սրտում վերջնական անհաջողությունից հետո։ «Էլ ի՞նչ եմ ուզում»— հարցնում էր նա ինքն իրեն, իսկ սիրտը շարունակում էր կսկծալ։ Նա մի անգամ իշխանուհուն նվիրեց մի մատանի, որի ակի վրա սֆինքսի պատկեր էր փորագրած։

— Ի՞նչ է սա,— հարցրեց իշխանուհին,— սֆի՞նքս։

— Այո,— պատասխանեց նա,— և այս սֆինքսը դուք եք։

— Ե՞ս,— հարցրեց իշխանուհին և իր խորհրդավոր հայացքը դանդաղ բարձրացրեց նրա վրա։— Գիտե՞ք, որ այդ ինձ համար շատ նպաստավոր է,— ավելացրեց նա թեթև հեգնությամբ, իսկ աչքերը նայում էին դարձյալ նույն տարօրինակ արտահայտությամբ։

Ծանր էր Պավել Պետրովիչի վիճակը նույնիսկ այն ժամանակ, երբ իշխանուհի Ռ-ն նրան սիրում էր. բայց երբ իշխանուհին սառեց դեպի նա, իսկ այդ բավականին շուտ պատահեց, քիչ էր մնում խելքը կորցներ։ Նա տանջվում էր ու խանդում, իշխանուհուն հանգիստ չէր տալիս ու ամեն տեղ հետևից քարշ էր գալիս։ Իշխանուհուն ձանձրացրին նրա հետապնդումները, ու նա մեկնեց արտասահման։ Պավել Պետրովիչը, չնայած իր ընկերների խնդրանքներին, իր մեծավորների խրատներին, թողեց պաշտոնն ու գնաց իշխանուհու հետևից. չորս տարի նա ապրեց օտար երկրներում, երբեմն հետամտելով սիրուհուն, երբեմն՝ դիտմամբ նրա հետքը կորցնելով. նա ինքն իրենից ամաչում էր, իր փոքրոգությանվրա զայրանում... բայց ոչինչ չէր օգնում։ Իշխանուհու պատկերը, այդ անհասկանալի, համարյա անիմաստ, բայց դյութական պատկերը չափազանց խորն էր տպավորվել նրա հոգում։ Բաղենում նրանք նորից առաջվա նման մոտեցան իրար. թվում էր, թե իշխանուհին երբեք այդպես բուռն կերպով չէր սիրել նրան... բայց մի ամսից հետո ամեն ինչ արդեն վերջացել էր, կրակը բռնկվեց վերջին անգամ և ընդմիշտ հանգավ։ Նախաղգալով անխուսափելի անջատումը, Կիրսանովն ուզում էր, որ գոնե մնա նրա բարեկամը, կարծես թե մի այդպիսի կնոջ հետ բարեկամությունը հնարավոր էր... Իշխանուհին թաքուն հեռացավ Բաղենից և այնուհետև միշտ էլ խույս էր տալիս Կիրսանովից։ Պավել Պետրովիչը վերադարձավ Ռուսաստան, փորձեց ապրել առաջվա նման, բայց այլևս նախկին հունի մեջ չկարողացավ ընկնել։ Նա հալածականի պես շարունակ մեկ տեղից մյուս տեղն էր թափառում. նա դեռ այցելություններ էր անում, պահպանել էր աշխարհիկ մարդու բոլոր սովորությունները, կարող էր պարծենալ իր երկու-երեք նոր հաղթանակներով. բայց այլևս ոչ մի առանձին բան չէր սպասում նա ոչ իրենից, ոչ ուրիշներից, և ոչինչ չէր ձեռնարկում։ Նա ծերացավ, ճերմակեց. երեկոները նստել ակումբում, մաղձոտ տրամադրությամբ ձանձրանալ, ամուրիների շրջանում անտարբեր վիճաբանել՝ այս ամենը նրա համար պահանջ դարձավ, որը, ինչպես հայտնի է, վատ նշան էր։ Իհարկե, ամուսնանալու մասին չէր էլ մտածում։ Տասը տարի անցավ այսպես անգույն, ապարդյուն և արագ, չափազանց արագ։ Ոչ մի տեղ ժամանակն այնպես արագ չի վազում, ինչպես Ռուսաստանում. ասում են, բանտում այն էլ ավելի արագ է անցնում։ Մի անգամ ակումբում ճաշելիս Պավել Պետրովիչն իմացավ իշխանուհի Ռ-ի մահվան մասին։ Նա մեռել էր Փարիզում, համարյա խելագարության մոտիկ վիճակում։ Պավել Պետրովիչը վեր կացավ սեղանի մոտից և երկար ժամանակ անց ու դարձ էր անում ակումբի սենյակներով, արձանացած կանգնում էր թուղթ խաղացողների մոտ, բայց սովորականից վաղ տուն չվերադարձավ։ Մի քանի ժամանակից հետո նա ստացավ իր անունով հասցեագրված մի ծրար. ծրարի մեջ գտնվում էր իշխանուհուն նվիրած իր մատանին։ Իշխանուհին սֆինքսի վրա խաչ էր քաշել և պատվիրել նրան ասելու, որ սֆինքսի բացատրությունը խաչն է։

Այս բանը պատահեց 48 թվականի սկզբներին, հենց այն միջոցին, երբ Նիկոլայ Պետրովիչը կնոջից զրկվելով՝ Պետերբուրգ էր եկել։ Այն օրվանից, երբ Նիկոլայ Պետրովիչը բնակություն էր հաստատել գյուղում, Պավել Պետրովիչը համարյա եղբոր հետ չէր տեսնվել— Նիկոլայ Պետրովիչի հարսանիքը զուգադիպել էր իշխանուհու հետ Պավել Պետրովիչի ծանոթության ամենասկզբի օրերին։ Արտասահմանից վերադառնալով նա գնաց եղբոր մոտ մի երկու ամիս այնտեղ հյուր մնալու և նրա երջանկությամբ ուրախանալու դիտավորությամբ, բայց միայն մի շաբաթ կարողացավ մնալ։ Երկու եղբայրների դրության մեջ եղած տարբերությունը խիստ մեծ էր։ 48 թվին այդ տարբերությունը պակասեց։ Նիկոլայ Պետրովիչը կնոջը կորցրեց, Պավել Պետրովիչն էլ կորցրեց իր հիշողությունները. իշխանուհու մահվանից հետո աշխատում էր նրա մասին չմտածել։ Բայց Նիկոլայի մեջ կար կանոնավոր անցկացրած կյանքի

զգացումը, և որքին էլ մեծանում էր իր աչքի առաջ։ Պավելը, ընդհակառակը, մենակյաց ամուրի լինելով, ուրբ էր դնում այն անորոշ, ազջամուզջային ժամանակի մեջ, ափսոսանքների ժամանակի, որ նման էին հույսերի, հույսերի, որոնք նման են ափսոսանքների, երբ երիտասարդությունն անցել է, իսկ ծերությունը դեռ չի հասել։

Այդ ժամանակն ավելի դժվարին էր Պավել Պետրովիչի համար, քան որևէ մի ուրիշի համար. իր անցյալը կորցնելով, նա կորցրել էր ամեն բան։

— Ես այժմ քեզ Մարյինո չեմ հրավիրում,— Նիկոլայ Պետրովիչն ասաց նրան մի անգամ (իր գյուղը նա այդ անունով էր կոչում ի պատիվ կնոջ),— դու հանգուցյալի կենդանի ժամանակն էլ ձանձրանում էիր այնտեղ, իսկ այժմ, կարծում եմ, ձանձրույթից բոլորովին կկորչես։

— Ես այն ժամանակ հիմար էի ու անհանգիստ,— պատասխանեց Պավել Պետրովիչը,— այն ժամանակից ի վեր, եթե չեմ խելոքացել, գոնե հանդարտվել եմ։ Այժմ, ընդհակառակը, եթե դու թույլ կտաս, ես պատրաստ եմ ընդմիշտ բնակվել քեզ մոտ։

Նիկոլայ Պետրովիչը պատասխանելու փոխարեն գրկեց նրան, համբուրեց։ Բայց մինչև Պավել Պետրովիչը իր այդ մտադրությունը կիրագործեր, տարիուկեսից ավելի ժամանակ անցավ այդ խոսակցությունից։ Բայց դրա փոխարեն հենց որ արդեն բնակվեց գյուղում, նա այլևս չհեռացավ այնտեղից։ Անգամ այն երեք ամիսներն էլ, երբ Նիկոլայ Պետրովիչը Պետերբուրգում որդու հետ անցկացրեց։ Նա սկսեց ընթերցանությամբ զբաղվել, կարդում էր ավելի շատ անգլերեն։ Նա առհասարակ իր ամբողջ կյանքը կառուցել էր անգլիական ճաշակով, հաքսանների հետ շատ քիչ էր տեսնվում և միայն ընտրությունների համար էր դուրս գալիս, որտեղ մեծ մասամբ լուռ էր մնում, և մեկմեկ միայն իր ազատամիտ արարքներով զբաղում ու վախեցնում էր հին հասկացողություններ ունեցող կալվածատերերին, իսկ նոր սերնդի ներկայացուցիչների հետ էլ չէր մոտենում։ Թե մեկը և թե մյուսները նրան գոռոզ էին համարում, թե մեկը և թե մյուսները նրան հարգում էին իր արիստոկրատական հիանալի ձևերի համար, նրա տարած հաջողանակ-

ների մասին տարածված լուրերի համար, նրա համար, որ նա շատ լավ հագնվում էր և միշտ լավագույն հյուրանոցի լավագույն սենյակումն էր իջնում։ Նրա համար, որ նա առհասարակ լավ էր ճաշում, իսկ մի անգամ էլ նույնիսկ Լյուդովիկոս Ֆիլիպի մոտ Վելինգտոնի հետ էր ճաշել։ Նրա համար, որ նա ամեն տեղ իր հետ տանում էր իսկական արծաթյա նեսեսերն ու ճանապարհի լոգարանը, որ միշտ վրայից մի ինչ որ արտասովոր, զարմանալի «ազնիվ» օծանելիքների հոտ էր բուրում, նրա համար, որ շատ վարպետ կերպով վիստ էր խաղում ու միշտ էլ տանուլ տալիս։ Վերջապես նրան հարգում էին նաև նրա անբասիր ազնվության համար։ Կանայք նրան զմայլելի մելամաղձիկ էին անվանում, բայց նա կանանց հետ ծանոթություն չէր հաստատում։

— Այ, տեսնում ես, Եվգենի,— ասաց Արկադին իր պատմությունն ավարտելով,— ինչքան անարդարացի ես դատում հորեղբորս մասին։ Էլ չեմ խոսում այն մասին, որ նա քանի-քանի անգամ հորս ազատել է նեղությունից, իր ունեցած բոլոր փողը տվել է նրան, իսկ կալվածքը, գուցե դու չես էլ իմանում, դեռ բաժանված չէ, նա պատրաստ է ամեն մարդու էլ օգնել և, ի միջի այլոց, միշտ գյուղացիների կողմն է բռնում. ճիշտ է՝ նրանց հետ խոսելիս դեմքը կնճռոտում է և օդեկոլոն է հոտոտում։

— Հասկանալի բան է, նյարդերը կարգին չեն,— ընդհատեց Բազարովը։

— Կարող է պատահել. միայն թե նա շատ բարի սիրտ ունի։ Եվ խելոք էլ մարդ է։ Ինչպիսի օգտակար խորհուրդներ էր տալիս ինձ... մանավանդ... մանավանդ կանանց հետ վարվելու մասին։

— Չալ օձ տեսնողը չալ չաթուից էլ կվախենա։ Գիտենք։

— Մի խոսքով,— շարունակեց Արկադին,— նա շատ անբախտ մարդ է, հավատա ինձ. հանցանք է նրան արհամարհելը։

— Ախր ո՞վ է նրան արհամարհում,— առարկեց Բազարովը։— Իսկ այնուամենայնիվ պիտի ասեմ, որ մի մարդ, որն իր ամբողջ կյանքը կապել է կանացի սիրո հետ, և երբ այդ կապը կտրել են, նա թթվել է ու այն աստիճանին հասել, որ ոչ մի բանի այլևս ընդունակ չէ, այդպիսի մարդը

տղամարդ չէ, արու չէ։ Ասում ես, թե նա դժբախտ է. իհարկե, դու այդ բանը ավելի լավ կարող ես իմանալ. բայց նրա գլխի հոպոպները դեռ բոլորովին չեն դուրս եկել։ Հավատացած եմ, որ նա, առանց կատակի, իրեն համարում է գործունյա մարդ, որովհետև կարդում է Գալինիաշկան[1] և ամիսը մի անգամ գյուղացուն կազատի մարմնական պատժից։

— Ախր հիշիր նրա ստացած դաստիարակությունը այն ժամանակը, երբ նա ապրում էր,— նկատեց Արկադին։

— Դաստիարակությո՞ւնը,— վրա բերեց Բազարովը։— Ամեն մի մարդ պարտավոր է ինքն իրեն դաստիարակել, այ, եթե կուզես հենց ես, օրինակ... իսկ ինչ վերաբերում է, ժամանակին, ինչո՞ւ պետք է ես նրանից կախված լինեմ։ Ավելի լավ է թող նա՛ ինձանից կախված լինի։ Չէ, սիրելիս, այդ ամենը մեղկություն է, դատարկություն։ Եվ այդ ի՞նչ խորհրդավոր հարաբերություն կարող է լինել տղամարդու և կնոջ մեջ։ Մենք, բնախոսներս, գիտենք, թե այդ ինչ հարաբերություն է։ Հապա մի ուսումնասիրիր աչքի կազմությունը. այդտեղ ի՞նչ գործ ունի, ինչպես դու ես ասում, խորհրդավոր հայացքը։ Այդ բոլորը ռոմանտիզմ է, անհեթեթություն, նեխածություն, գեղարվեստ։ Ավելի լավ է գնանք բզեզը տեսնենք։

Եվ երկու բարեկամները գնացին Բազարովի սենյակը, ուր արդեն մի տեսակ բժշկա-վիրաբուժական հոտ էր տիրել, որ խառնվել էր էժանագին ծխախոտի հոտին։

VIII

Պավել Պետրովիչը կարճ ժամանակ ներկա եղավ եղբոր և կառավարչի խոսակցությանը։ Կառավարիչը, որ մի բարձրահասակ, նիհար մարդ էր, թոքախտավորի քաղցր ձայնով ու խարդախ աչքերով, Նիկոլայ Պետրովիչի բոլոր նկատողություններին պատասխանում էր. «Ի՞նչ խոսք, հայտնի բան է», և աշխատում էր գյուղացիներին ներկայացնել արբեցող ու գող։ Վերջին ժամանակներս նոր ձևի կազմակերպված

1 Գալինիաշկան — հեգնական-արհամարհական անունն է «Գալլիական լրաբերի»։

տնտեսությունը ճռնչում էր, ինչպես չյուղած անիվ, ճաքճաքում, որպես խամ փայտից տանու շինած կարասիք։ Նիկոլայ Պետրովիչը չէր հուսահատվում, բայց հաճախ հառաչում էր ու մտածմունքի մեջ ընկնում. նա զգում էր, որ առանց փողի գործը առաջ չի գնա, իսկ ունեցած փողերը համարյա բոլորն էլ ծախսված էին։ Արկադին ճիշտ էր ասել. Պավել Պետրովիչը մի անգամ չէր, որ օգնել էր եղբորը, քանի-քանի անգամ, տեսնելով, թե ինչպես էր եղբայրը շարշարվում, գլուխ կոտրում մտածելով մի ելք գտնելու, Պավել Պետրովիչը ծանրաքայլ մոտեցել էր պատուհանին և, ձեռները գրպանը դրած, ատամների արանքից փնթփնթացել. Mais je puis vous donner dé l'argent»[1] և նրան փող էր տալիս։ Բայց այդ օրը նա ինքն էլ փող չուներ, ուստի լավ համարեց հեռանալ։ Տնտեսական գլխացավանքը նրան ձանձրույթ էր պատճառում. մանավանդ որ նրան միշտ թվում էր, թե Նիկոլայ Պետրովիչը, շնայելով իր եռանդին ու աշխատասիրությանը, այնպես չի գործը բռնում, ինչպես որ պետք է, թեև ցույց տալ, թե ինչ բանում է, իսկապես, սխալվում Նիկոլայ Պետրովիչը, նա չէր կարող։ «Եղբայրս,— մտածում էր նա ինքն իրեն,— այնքան էլ գործնական մարդ չէ. նրան խաբում են»։ Իսկ Նիկոլայ Պետրովիչը, ընդհակառակը, մեծ համարում ուներ Պավել Պետրովիչի գործնականության մասին և միշտ նրանից խորհուրդ էր հարցնում։ «Ես կակուղ, թույլ մարդ եմ, ողջ կյանքս անց եմ կացրել խուլ անկյունում,— ասում էր նա,— իսկ դու զուր չի, որ այնքան երկար ես ապրել մարդկանց հետ, դու նրանց շատ լավ ես ճանաչում. արծվի հայացք ունես»։ Պավել Պետրովիչը ի պատասխան այդ խոսքերին՝ շուռ էր գալիս, բայց եղբոր կարծիքը չէր ժխտում։

Նիկոլայ Պետրովիչին առանձնասենյակում թողնելով, նա անցավ միջանցքով, որը տան առաջին մասը զատում էր հետին մասից և, ցածրիկ դռանը հավասարվելով, մտախոհությամբ կանգ առավ, բեղերը ձգեց ու բախեց դուռը։

— Ո՞վ է։ Մտեք,— լսվեց Ֆենիչկայի ձայնը։

— Ես եմ,— ասաց Պավել Պետրովիչը և ներս մտավ։

1 Բայց ես կարող եմ ձեզ փող տալ (ֆրանս.)։

Ֆենիչկան վեր թռավ աթոռից, որի վրա նա նստել էր երեխայի հետ, և երեխային տալով աղջկա ձեռքը, որը նրան իսկույն էլ սենյակից դուրս հանեց, շտապով ուղղեց գլխի շորը։

— Ներեցեք, եթե խանգարեցի,— սկսեց Պավել Պետրովիչը, առանց նրա վրա նայելու,— ես միայն ուզում էի ձեզ խնդրել... կարծեմ այսօր մարդ են ուղարկում քաղաք... հրամայեցեք, որ ինձ համար կանաչ թեյ գնեն։

— Շատ բարի,— պատասխանեց Ֆենիչկան։— Ինչքա՞ն կհրամայեք առնել։

— Կարծում եմ մի կես ֆունտ առնեն հերիք է։ Այսուհետև, ձեր սենյակում ես տեսնում եմ փոփոխություններ,— ավելացրեց նա արագ հայացք ձգելով շուրջը, որը սահելով անցավ Ֆենիչկայի գեմքի վրայով։— Ահա այս վարագույրները,— ասաց նա, տեսնելով, որ Ֆենիչկան իր ասածը չի հասկանում։

— Վարագույրների՞ մասին է։ Նիկոլայ Պետրովիչը մեզ նվիրեց։ Եվ վաղուց է, որ կախված են։

— Առնեք ես էլ վաղուց է, որ ձեզ մոտ չեմ եղել։ Այժմ շատ լավ է ձեզ մոտ։

— Նիկոլայ Պետրովիչի շնորհիվ,— շշնջաց Ֆենիչկան։

— Ձեզ համար այստեղ ավելի լա՞վ է, քան առաջվա տանը,— հարցրեց Պավել Պետրովիչը քաղաքավարությամբ, բայց առանց ժպիտի։

— Իհարկե, լավ է։

— Այժմ ո՞ւմ են ձեր տեղը տեղավորել։

— Լվացք անող կանայք են։

— Հըմ։

Պավել Պետրովիչը լռեց։ «Հիմա դուրս կգնա»,— մտածեց Ֆենիչկան։ Բայց նա դուրս չէր գնում, և Ֆենիչկան ստիպված էր նման կանգնել էր նրա առաջ, մատները թեթև կերպով շարժելով։

— Ինչո՞ւ ասացիք, որ ձեր փոքրին դուրս տանեն,— խոսեց վերջապես Պավել Պետրովիչը։— Ես երեխաներ սիրում եմ։ Հապա նրան ցույց տվեք ինձ։

Ֆենիչկան շփոթվեցավ և ուրախությունից քոլորովին

կարմրեց։ Նա Պավել Պետրովիչից վախենում էր—նա համարյա երբեք իր հետ չէր խոսում։

— Դունյաշա,— կանչեց նա,— Միտյային ներս բերեք (Ֆենիչկան տանը ամենքի հետ դուք-ով էր խոսում)։— Կամ թե չէ սպասեցեք. պետք է շորը հագցնել։— Ֆենիչկան դեպի դուռը գնաց։

— Միենույն է,— նկատեց Պավել Պետրովիչը։

— Այս րոպեին,— պատասխանեց Ֆենիչկան և արագ դուրս գնաց։

Պավել Պետրովիչը մենակ մնաց և այս անգամ առանձին ուշադրությամբ դիտեց շուրջը։ Դա մի փոքրիկ, ցածլիկ սենյակ էր, շատ մաքուր ու հարմարավետ։ Սենյակի հատակը նոր էր ներկած և ներկի հոտը խառնված էր երիցուկի ու խնձաղեղի հոտի հետ։ Պատերի երկարությամբ շարված էին քնարաձև մեջքով աթոռներ։ Այդ աթոռները դեռ հանգուցյալ գեներալն էր գնել Լեհաստանում, պատերազմի ժամանակ,[1] մի անկյունում դրված էր փոքրիկ մահճակալ՝ շղարշյա վարագույրով սքողված, կողքին մի երկաթապատ սնդուկ բոլորակ խուփով։ Հանդիպակաց անկյունում Նիկոլայ հրաշագործի մեծ, սևացած պատկերի առաջ վառվում էր կանթեղը. սուրբի կրծքին կախած էր հախճապակյա մի փոքրիկ ձու՝ կարմիր ժապավենով կապած սրբի ճառագայթներին։ Պատուհանների վրա շարված էին ապակյա ամաններ անցյալ տարվա եփած մուրաբաներով լի։ Նրանց բերանին խնամքով կապած թղթե բոլորակների վրա Ֆենիչկան իր ձեռքով խոշոր տառերով գրել էր «կրուժովնիկ»։ Նիկոլայ Պետրովիչն ամենից շատ այս մուրաբան էր սիրում։ Առաստաղից երկար թելերով կախած վանդակի մեջ փակած էր կարճ պոչով մի դեղձանիկ, որը շարունակ թռչկոտում էր ու ճռվողում. իսկ վանդակն անդադար օրորվում էր ու դողում։ Կանեփի սերմերը թեթև չխկոցով ընկնում էին հատակի վրա։ Երկու պահարանի արանքում, պահարանից վերև, պատի վրա կախած էին Նիկոլայ Պետրովիչի բավականին անհաջող լուսանկարները, զանազան դիրքով, որ պատրաստել էր մի պատահական անցորդ լուսանկարիչ։ Հենց այդտեղ էլ կախած էր նաև

[1] Խոսքը վերաբերում է 1812 թ. Հայրենական պատերազմին՝ Նապոլեոնի դեմ։

Ֆենիչկայի լուսանկարը, խիստ անհաջող։ Մի ինչ-որ անաչք դեմք լարված ժպտում էր սև շրջանակի միջից—ուրիշ ոչինչ չէր կարելի ջոկել։ Իսկ Ֆենիչկայից վերև կախած էր յափնջավոր Երմոլովը, որի դեմքը կնճռոտած, ահարկու հայացքով ուղղված էր Կովկասյան հեռավոր սարերի վրա, նայում էր մի մետաքսյա ոտնամանի տակից, որը հատկացրած էր գնդասեղներ պահելու համար և կախ էր ընկած ուղիղ Երմոլովի ճակատին։

Անցել էր հինգ րոպե. կողքի սենյակում լսվեց խշխշոց ու փսփսոց։ Պավել Պետրովիչը պահարանի վրայից վերցրեց մի յուղոտված գիրք, որը Մասալսկու «Ստրելցիների» քրքրված, բաժան-բաժան եղած հատորն էր, մի քանի թերթ շուռ տվեց... Դուռը բացվեց։ Ներս մտավ Ֆենիչկան՝ Միտյային գրկած։ Նա երեխային հագցրել էր կարմիր շապիկ, օձիքին ոսկեթել ժապավեն կարած, մազերը սանրել էր, երեսը լվացել։ Երեխան ծանր շունչ էր առնում, ամբողջ մարմնով ձգտում առաջ և թաթիկները շարժում, ինչպես որ անում են բոլոր առողջ երեխաները։ Բայց ինչպես երևում էր, շքեղ շապիկը նրա վրա ներգործել էր. բավականության արտահայտությունը երևում էր նրա ամբողջ փափլիկ կերպարանքի վրա։ Ֆենիչկան իր մազերն էր կարգի բերել, և գլխի ծածկոցն էլ ավելի լավ էր հագել, բայց նա կարող էր ինչպես կար այնպես էլ մնալ։ Եվ իսկապես, մի՞թե աշխարհիս երեսին կա ավելի հրապուրիչ բան, քան նորատի գեղեցիկ մայրը՝ առողջ երեխան գրկին։

— Մի այս տղիկին տես,— ներողամտաբար ասաց Պավել Պետրովիչը և ցուցամատի երկար եղունգի ծայրով խոտոտ ածեց Միտյայի կրկնակզակը։ Երեխան աչքը հառեց դեղձանիկին ու ծիծաղեց։

— Սա հորեղբայրդ է,— ասաց Ֆենիչկան երեխայի վրա խոնարհվելով և նրան թեթևակի ցնցելով։ Մինչդեռ այդ միջոցին Դունյաշան պատուհանի մեջ, կոպեկանոցի վրա դնում էր վառած հոտավետ մոմը։

— Քանի՞ ամսական է,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Վեց ամսական. շուտով, ամսի տասնմեկին յոթը կմտնի։

— Ուրը չպիտի՞ մտնի, Ֆեդոսյա Նիկոլաևնա,— քաշվելով մեջ մտավ Դունյաշան։

— Չէ, յոթերորդը կմտնի. ինչպե՞ս կարելի է։— Երեխան նորից ծիծաղեց, աչքը սնդուկին հառեց, և հանկարծ բոլոր հինգ մատներով բռնեց մոր քիթն ու շրթունքները։— Ջարաճքճի,— ասաց Ֆենիչկան, առանց երեսը նրա մատներից հեռացնելու։

— Նա եղբորս նման է,— նկատեց Պավել Պետրովիչը։

«Հապա էլ ո՞ւմն է նմանելու»,— մտածեց Ֆենիչկան։

— Այո,— կարծես ինքն իրեն հետ խոսելով, շարունակեց Պավել Պետրովիչը,— անկասկած նման է նրան։— Նա ուշադրությամբ, համարյա տխուր նայեց Ֆենիչկային։

— Սա հորեղբայրդ է,— կրկնեց Ֆենիչկան, բայց արդեն շշնջալով։

— Պավել, դու այստե՞ղ ես եղել,— հանկարծ լսվեց Նիկոլայ Պետրովիչի ձայնը։

Պավել Պետրովիչը շտապով շուռ եկավ և ունքերը հավաքեց, բայց եղբայրն այնպես ուրախ-ուրախ, մի այնպիսի երախտագիտությամբ էր նայում նրան, որ նա չէր կարող ժպիտով չպատասխանել նրան։

— Շատ լավ տղա ունես,— ասաց նա ու նայեց ժամացույցին,— ես եկա այստեղ թեյի համար...

Եվ, անտարբեր արտահայտություն ընդունելով, Պավել Պետրովիչն իսկույն դուրս գնաց սենյակից։

— Ի՞նքն իրեն եկավ,— հարցրեց Ֆենիչկային Նիկոլայ Պետրովիչը։

— Նա ինքը. դուռը ծեծեց ու մտավ։

— Հապա Արկաշա՞ն. էլ չի՞ եկել քեզ մոտ։

— Ոչ։ Չի եկել։ Լավ չի՞ լինի, Նիկոլայ Պետրովիչ, որ ես նորից մյուս տունը փոխադրվեմ։

— Այդ ինչո՞ւ։

— Ես մտածում եմ. ավելի լավ չի՞ լինի այդպես անել գոնե սկզբի շրջանում։

— Չէ...— կմկմալով ասաց Նիկոլայ Պետրովիչը և ճակատը շփեց։— Պետք էր առաջ անել... բարև, տկճոր,— ասաց նա հանկարծ աշխուժացած, ու երեխային մոտենալով՝ նրա թուշը համբուրեց. հետո նա կռացավ և շրթունքները կպցը-

րեց Ֆենիչկայի ձեռքին, որ Միտյայի կարմիր շապկի վրա կաթի նման սպիտակ էր երևում։

— Նիկոլայ Պետրովիչ, այդ ի՞նչ եք անում,— թոթովեց նա և աչքերը խոնարհեց։ Ապա կամացուկ վեր բարձրացրեց... Հրաշալի էր նրա աչքերի արտահայտությունը, երբ որ նա կարծես թե ունքերի տակից էր նայում ու փաղաքուշ և փոքր-ինչ անմիտ կերպով քմծիծաղ էր տալիս։

Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկայի հետ հետևյալ կերպով էր ծանոթացել։ Մի անգամ, սրանից երեք տարի առաջ, ստիպված էր եղել գավառական մի հեռավոր քաղաքում մնալ ու իշխանում գիշերել։ Նա ապշած էր մնացել, տեսնելով իր սենյակի մաքրությունն ու անկողնու սպիտակեղենի թարմությունը. տանտիկինը հո գերմանուհի չէ՞, մտածեց նա. բայց դուրս եկավ, որ տանտիկինը մոտ հիսուն տարեկան, մաքուր հագնված, վայելչակազմ, խելացի դեմքով և խոհեմ խոսակցությամբ մի ռուս կին էր։ Թեյի ժամանակ նա խոսքի բռնվեց այդ կնոջ հետ և խիստ հավանեց նրան։ Այդ միջոցին Նիկոլայ Պետրովիչը նոր էր իր դատարկերը փոխադրվել, և, չցանկանալով իր մոտ ճորտեր պահել, վարձու մարդիկ էր փնտրում. միևնույն ժամանակ հիշյալ կինն էլ գանգատվում էր, թե քիչ մարդ է գալիս քաղաք, ծանր ժամանակներ են։ Նիկոլայ Պետրովիչը նրան առաջարկեց իր մոտ տնտեսուհի մտնել. կինը համաձայնեց։ Նրա մարդը վաղուց էր մեռած և թողել էր նրան մի աղջիկ, Ֆենիչկային։ Մի երկու շաբաթից հետո Արինա Սավիշնան (այդպես էր նոր տնտեսուհու անունը) իր աղջկա հետ եկավ Մարյինո և բնակություն հաստատեց կից տնակում։ Նիկոլայ Պետրովիչը հաջող ընտրություն էր արել։ Արինան տան մեջ կարգ ու կանոն մտցրեց։ Ֆենիչկայի մասին, որն այդ ժամանակ տասնյոթ տարեկան էր, ոչ ոք չէր խոսում, և քչերն էին նրան տեսնում. ապրում էր շատ սուս ու փուս, համեստ և միայն ճիրակի օրերն էր, որ Նիկոլայ Պետրովիչը նկատում էր ծխական եկեղեցու մի անկյունում նրա սպիտակ դեմքի նուրբ կիսապատկերը։ Մի տարուց ավելի անցավ այդպես։

Մի առավոտ Արինան եկավ նրա առանձնասենյակը և ըստ սովորականին խոնարհ գլուխ տալով հարցրեց, թե արդյոք չէ՞ր կարող օգնել իր աղջկան, որի աչքի մեջ վառա-

բանից կայծ էր թռել։ Նիկոլայ Պետրովիչը, ինչպես բոլոր տնից դուրս չեկող մարդիկ, բժշկություն էլ էր անում և մինչև անգամ հոմեոպատային դեղարան էր բերել տվել։ Իսկույն պատվիրեց, որ հիվանդին բերեն իր մոտ։ Երբ Ֆենիչկան իմացավ, որ պարոնը կանչել է, շատ վախեցավ, բայց և այնպես մոր հետևից գնաց։ Նիկոլայ Պետրովիչը նրան տարավ պատուհանի մոտ և գլուխը երկու ձեռքի մեջն առավ։ Նրա կարմրած ու բորբոքված աչքը լավ դիտելուց հետո պատվիրեց, որ աչքին թրջոց դնեն, և հենց տեղնուտեղը, թաշկինակը պատռեց ու ցույց տվեց, թե ինչպես պետք էր այդ բանն անել։ Ֆենիչկան լսեց ասածը և ուզում էր գնալ. «Աղայի ձեռքը պաչի, հիմարիկ», ասաց Արինան։ Նիկոլայ Պետրովիչը ձեռքը չտվեց և, շշկլված, ինքը համբուրեց նրա խոնարհած գլուխը։ Ֆենիչկան շուտով առողջացավ, բայց Նիկոլայ Պետրովիչի վրա նրա թողած տպավորությունը շատ չանցավ։ Շարունակ նրա աչքի առաջն էր գալիս այդ մաքուր, քնքուշ, երկչոտությամբ վերև բարձրացրած դեմքը. իր ձեռքերի ափերի մեջ նա զգում էր նրա փափուկ մազերը, տեսնում էր այդ անմեղ, մի քիչ բաց շրթունքները, որոնց ետևից արևի առաջ ֆաց փայլում էին մարգարտանման սպիտակ առամները։ Նա սկսեց եկեղեցում ավելի ուշադրությամբ դիտել նրան, աշխատում էր հետը խոսել։ Սկզբում աղջիկը նրանից փախչում էր, և մի անգամ իրիկնապահին, երբ նա անց էր կենում մի նեղ կածանով, որ անցորդները բաց էին աթել տերեփուկով ու օշինդրով բուսած տաբեկանի արտի միջից, հանդիպեց Նիկոլայ Պետրովիչին և որպեսզի նրա աչքին չերևա, մտավ բաթար ու խիտ արտի մեջ։ Նիկոլայ Պետրովիչը հասակերի ոսկեգույն ցանցի միջից տեսավ նրա գլուխը, որ փոքրիկ գաղանի նման իրեն էր մտիկ տալիս, և քնքշությամբ ձայն տվեց։

— Բարև, Ֆենիչկա։ Մի վախիր, ես մարդ ուտող չեմ։

— Ասածու բարին,— շշնջաց աղջիկը՝ առանց իր թաքստոցից դուրս գալու։

Ֆենիչկան կամաց-կամաց սկսեց նրան ընտելանալ, բայց էլի նրա առաջ քաշվում էր, երբ հանկարծ մայրը, Արինան, խոլերայից մեռավ։ Ո՞ւր գնար Ֆենիչկան։ Նա մոտից ժառանգել էր սեր դեպի կարգապահությունը, խոհեմությունն

ու լրջմտություն. բայց նա այնքան ջահել էր, այնպես մեանակ։ Նիկոլայ Պետրովիչն ինքն էլ խիստ բարի էր ու համեստ... Հարկ չկա մնացածը պատմելու...

— Ուրեմն եղբայրս հենց այնպես ուղղակի նե՞րս մտավ,— հարցնում էր նրան Նիկոլայ Պետրովիչը։— Դուռը ծեծեց ու մտա՞վ։

— Այո։

— Այդ լավ է։ Դե հիմա Միտյային ինձ տուր, մի քիչ գրկեմ։

Եվ Նիկոլայ Պետրովիչը սկսեց երեխային վեր-վեր թռցնել, համարյա մինչև առաստաղը, ի մեծ բավականություն մանկան, որից մայրը սաստիկ անհանգստանում էր և ամեն անգամ, երբ երեխան վեր էր թռչում, ձեռքը մեկնում էր նրա մերկ ոտներին։

Իսկ Պավել Պետրովիչը վերադարձավ իր նրբաճաշակ առանձնասենյակը, որի պատերին մոխրագույն գեղեցիկ պաստառ էր կպցրած, պարսկական երփներանգ գորգի վրա զենքեր էին կախված. կահ-կարասիքը ընկույզի փայտից էր՝ երեսին մուգ-կանաչ կտոր քաշած. սենյակում կային ռենեսանսի ոճի գրադարան՝ հին, սև կաղնուց փառահեղ դրասեղանի վրա բրոնզե արձանիկներ, բուխարի... Նա ընկավ գահավորակի վրա, ձեռները ծալեց գլխի հետև և մնաց անշարժ, համարյա հուսահատությամբ նայելով առաստաղին։ Արդյոք պատերի՞ց էլ էր ուզում նա ծածուկ պահել այն, ինչ որ կատարվում էր նրա դեմքի վրա, թե՞ մի այլ պատճառով, միայն թե նա վեր կացավ, պատուհանների ծանր վարագույրները բաց թողեց, և նորից ընկավ գահավորակի վրա։

XI

Նույն օրը Բազարովն էլ ծանոթացավ Ֆենիչկայի հետ։ Նա Արկադիի հետ ման էր գալիս պարտեզում ու նրան բացատրում, թե ինչն է պատճառը, որ մի քանի ծառեր, մանավանդ կաղնիները, չեն բռնել։

— Այստեղ պետք է ավելի արծաթատերև կաղամախի ու եղևնի, մեկ էլ գուցե լորի տնկել ու մի քիչ սևահող ավելացնել։ Տես զովանոցը լավ է եղել,— ավելացրեց նա,— որովհետև հասմիկն ու ակացիան լավ թփեր են, խնամք չեն պահանջում։ Վահ, այստեղ մարդ է եղել։

Զովանոցում նստած էր Ֆենիչկան Դունյաշայի ու Միտյայի հետ։ Բազարովը կանգ առավ, իսկ Արկադին Ֆենիչկային, իբրև հին ծանոթի, գլխով արեց։

— Սա ո՞վ է,— հարցրեց Բազարովը, հենց որ հովանոցի կողքից անցան։— Ինչ լավիկն է։

— Այդ դու ո՞ւմ մասին ես խոսում։

— Հայտնի բան է ում մասին, մեկն է միայն գեղեցիկ։

Արկադին՝ փոքր ինչ շփոթված՝ կարճ խոսքերով բացատրեց, թե ով է Ֆենիչկան։

— Ըհը,— ասաց Բազարովը։— Երևում է հայրդ բերանի համը գիտե։ Ինչ կա—հայրդ ինձ դուր է գալիս, ճիշտ եմ ասում։ Կտրիճն է։ Սակայն հարկավոր է ծանոթանալ,— ավելացրեց նա ու ետ դարձավ դեպի զովանոցը։

— Եվգենի,— վախեցած կանչեց Արկադին նրա հետևից,— ի սեր աստծո, զգույշ եղիր։

— Մի հուզվիր,— ասաց Բազարովը,— մենք քաղաքներում ապրած, եփված մարդ ենք։

Բազարովը, Ֆենիչկային մոտենալով, գլխարկը հանեց։

— Թույլ տվեք ներկայանալու,— սկսեց նա քաղաքավարությամբ գլուխ տալով։— Արկադի Նիկոլայիչի ընկերը և մի խոնարհ մարդ։

Ֆենիչկան նստարանից վեր կացավ ու լուռ նայում էր նրան։

— Ինչ հրաշալի երեխա է,— շարունակեց Բազարովը։— Մի անհանգստանաք, կյանքումս ես դեռ ոչ ոքի աչքով չեմ տվել։ Այս ինչո՞ւ են թշերը կարմրած։ Հո ատամներ չի՞ հանում։

— Այո,— ասաց Ֆենիչկան,— արդեն չորս ատամ հանել է, իսկ այժմ լնդերը դարձյալ ուռել է։

— Հապա մի ցույց տվեք... Միք վախենա, ես բժիշկ եմ։

Բազարովը գրկեց երեխային, որ, ի զարմանս մոր և Դունյաշայի, ոչ վախեցավ և ոչ էլ ընդդիմացավ։

— Տեսնում եմ, տեսնում... Ոչինչ, ամեն բան կանոնավոր է, լավ ատամներ պիտի ունենա։ Եթե որևէ բան պատահի, ասացեք ինձ։ Իսկ դուք ինքներդ առո՞ղջ եք։

— Փառք աստծո, առողջ եմ։

— Փառք աստծուն — ամենից լավն է։ Իսկ դո՞ւք,— ավելացրեց Բազարովը Դունյաշային դառնալով։

Դունյաշան, որ աղայի տանը շատ խստաբարո էր, իսկ դուրսը սաստիկ ծիծաղկոտ, պատասխան չտվեց և միայն փոթկաց։

— Շատ լավ, ահա ձեզ ձեր հսկան։

Ֆենիչկան մանկանը իր գիրկն առավ։

— Ինչպես նա հանգիստ էր ձեր գրկում,— ցած ձայնով ասաց նա։

— Բոլոր երեխաներն էլ հանգիստ են նստում իմ գրկում,— պատասխանեց Բազարովը,— ես դրա գաղտնիքը գիտեմ։

— Երեխաներն զգում են, թե ով է իրենց սիրում,— նկատեց Դունյաշան։

— Այդ ճիշտ է,— հաստատեց Ֆենիչկան։— Այ հենց մեր Միտյան. ոչ մի կերպ ուրիշին չի գնա։

— Իսկ ինձ կգա՞,— հարցրեց Արկադին, որը, մի քիչ ժամանակ հեռվում կանգնելուց հետո, մոտեցել էր զովանոցին։

Նա Միտյային ձեռքով արեց, ուզեց վեր առնել, բայց Միտյան գլուխը ետ գցեց ու ճչաց, որով շատ շփոթեցրեց Ֆենիչկային։

— Մի ուրիշ անգամ, երբ կընտելանա,— ներողամտաբար ասաց Արկադին, և երկու բարեկամները հեռացան։

— Ինչպե՞ս էր այդ կնոջ անունը,— հարցրեց Բազարովը։

— Ֆենիչկա... Ֆեդոսյա,— պատասխանեց Արկադին։

— Իսկ հայրանո՞ւնը։ Այդ էլ պետք է իմանալ։

— Նիկոլաևնա։

— Bene[1]. Ինձ նրանում զուր է գալիս այն, որ նա շատ ամաչկոտ չէ։ Մեկ ուրիշը, ով գիտե, հենց այդ բանն էլ

[1] Լավ (լատ.)։

կդատապարտեր։ Ինչ հիմարություն է, ի՞նչ կա ամաչելու։ Նա մայր է—և իրավացի է։

— Ասենք նա իրավացի է,— նկատեց Արկադին,— բայց այ, հայրս...

— Նա էլ իրավացի է,— ընդհատեց Բազարովը։

— Է, ոչ, ես կարծում եմ իրավացի չէ։

— Ինչպես երևում է ավելորդ ժառանգը մեր սրտովը չի։

— Ջե՞ս ամաչում, այդպիսի բան ես մտածում իմ մասին,— տաքացած վրա բերեց Արկադին։— Այդ տեսակետից չէ, որ հորս իրավացի չեմ համարում. իմ կարծիքով նա պարտավոր էր նրա հետ ամուսնանալ։

— Էհե—հե,— հանդարտ կերպով ասաց Բազարովը։— Այ թե ինչ մեծահոգի ենք մենք։ Մի՞թե ամուսնությանը նշանակություն ես տալիս. քեզանից այդ բանը չէի սպասում։

Ընկերները մի քանի քայլ անցան լռիկ։

— Ես տեսա հորդ բոլոր տնտեսությունը,— նորից սկսեց Բազարովը։— Անասունները վատ են, ձիերն էլ ուժասպառ են։ Շինությունները խարխլվել են, և մշակները, երևում է, սարսափելի ծույլ մարդիկ են, իսկ կառավարիչը կամ հիմար է, կամ խաբեբա է, այդ դեռ լավ չեմ հասկացել։

— Այսօր դու շատ խստապահանջ ես, Եվգենի Վասիլիչ։

— Եվ բարի գյուղացիներն էլ անպատճառ խաբելու են հորդ։ Հո գիտես ռուսական առածը. «Ռուս մուժիկը աստծուն էլ կծախի»։

— Ես սկսում եմ հորեղբորս հետ համաձայնվել,— նկատեց Արկադին,— դու բոլորովին վատ կարծիք ունես ռուսների մասին։

— Շատ հարկավոր է։ Ռուս մարդը հենց նրանով է լավ, որ ինքն իր մասին շատ վատթար կարծիք ունի։ Կարևորն այն է, որ երկու անգամ երկուսը չորս է, իսկ մնացյալ բոլորը դատարկ բաներ են։

— Բնությունն է՞լ է դատարկ բան,— ասաց Արկադին՝ մտախոհ նայելով հեռավոր գույնզգույն արտերին, որ գեղեցիկ ու քնքուշ լուսավորված էին ոչ շատ բարձրացած արևի շողերով։

— Այն մտքով, ինչ մտքով որ դու ես հասկանում, բնու-

թյունն էլ դատարկ բան է։ Բնությունը տաճար չէ, այլ արհեստանոց, իսկ մարդը նրա մեջ լոկ մշակ է։

Այդ միջոցին տան կողմից նրանց ականջին հասան թավջութակի ծորուն հնչյուններ։ Մեկը, թեպետ անփորձ ձեռքով, բայց զգացմունքով նվագում էր Շուբերտի Ակնկալությունը, և քաղցրահունչ մեղեդին անուշ զեղվում էր օդում։

— Ա՞յս ով է,— զարմացած ասաց Բազարովը։

— Հայրս։

— Հայրդ թավջութա՞կ է նվագում։

— Այո։

— Քանի՞ տարեկան է հայրդ։

— Քառասունչորս։

Բազարովը հանկարծ քրքջաց։

— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Միր ինչպե՞ս չծիծաղեմ. քառասունչորս տարեկան մարդը, pater familias[1], ...ի գավառում թավջութակ է նվագում։

Բազարովը շարունակում էր քրքջալ. բայց Արկադին, որքան էլ պատկառում էր իր ուսուցչից, այս անգամ նույնիսկ չժպտաց։

X

Մոտ երկու շաբաթ էր անցել։ Մարյինոյում կյանքն անցնում էր իր կարգով — Արկադին անհոգ սիբարիտի կյանք էր վարում, Բազարովն աշխատում էր։ Տանը ամենքն էլ ընտելացել էին նրան, նրա անփույթ ձևերին, նրա հակիրճ ու կցկտուր խոսքերին։ Մանավանդ Ֆենիչկան այն աստիճան ընտելացել էր նրան, որ մի գիշեր մարդ ուղարկեց, որ նրան զարթեցնեն.— Միտյային չղաձգություն էր պատահել. և Բազարովը եկավ և ըստ սովորականի կես կատակով-կես հորանջելով նստեց նրա մոտ երկու ժամվա չափ և օգնեց երեխային։ Դրա փոխարեն Պավել Պետրովիչը իր հոգու բոլոր ուժերով ատում էր Բազարովին։ Նա նրան համարում էր

[1] Ընտանիքի հայրը (լատ.)։

գոռոզ, լիրբ, շնաբարո, ստրուկ, կասկածում էր, որ Բազարովն իրեն չի հարգում և նույնիսկ համարյա թե արհամարհում է իրեն՝ Պավել Կիրսանովին։ Նիկոլայ Պետրովիչը երիտասարդ «նիհիլիստից» վախենում էր և կասկածում էր, որ նա կարող լիներ Արկադիի վրա բարերար ազդեցություն ունենալ. բայց սիրով ականջ էր դնում նրան, սիրով էլ ներկա լինում նրա ֆիզիկական ու քիմիական փորձերին։ Բազարովը հետը մանրադիտակ էր բերել և ամբողջ ժամերով զբաղվում էր դրանով։ Ծառաներն էլ էին նրա հետ կապվել։ Թեև նա նրանց վրա ծիծաղում էր, նրանք զգում էին, որ նա այնուամենայնիվ իրենցից է, աղա չէ։ Դունյաշան հաճույքամբ նրա հետ զրուցում էր, ծիծաղում ու ամեն անգամ մոտիցն արագությամբ անցնելիս աչքի պոչովը խորհրդավոր հայացք էր նետում վրան։ Պյոտրը, որ վերին աստիճանի ինքնասեր ու հիմար մարդ էր, միշտ ճակատը կնճռոտած, մի մարդ, որի բոլոր արժանիքն այն էր, որ քաղաքավարի էր թվում, վանկ-վանկ կարդալ գիտեր և խոզանակով էլ հաճախ իր սերթուկն էր մաքրում, մինչև անգամ նա էլ լուռ ծիծաղում էր ու պայծառանում, հենց որ Բազարովը նրա վրա ուշադրություն էր դարձնում, ճորտերի երեխաները, շան նման վազվզում էին «դոխտուրի» հետևից։ Միայն ծերունի Պրոկոֆիչն էր, որ չէր սիրում նրան, ճաշի ժամանակ մոայլ տեսքով նրան կերակուրներ էր մատուցում, անվանում էր նրան «քերթող» ու «խարդախ» և հավատացնում էր, թե նա իր այտմորուսներով կատարյալ թփերում պառկած խոզ է։ Պրոկոֆիչն էլ յուրատեսակ, Պավել Պետրովիչից ոչ պակաս մի արիստոկրատ էր։

Տարվա ամենալավ օրերը վրա հասան—հունիսի առաջին օրերը։ Սքանչելի եղանակ էր. ճիշտ է, խոլերան հեռվից սպառնալիք էր տալիս, բայց ...ի նահանգի բնակիչներն արդեն նրա այցելություններին սովորել էին։ Բազարովը շատ վաղ էր վեր կենում տեղից և երկու-երեք վերստ գնում, ոչ թե զբոսնելու, չէ՛, նա աննպատակ զբոսանք տանել չէր կարողանում, այլ խոտեր, միջատներ հավաքելու։ Երբեմն իր հետ վերցնում էր նաև Արկադիին։ Վերադառնալու ժամանակ սովորաբար ճանապարհին նրանց մեջ վեճ էր ծագում, և

սովորաբար Արկադին մնում էր հաղթված, թեև իր ընկերոջից ավելի էր խոսում։

Մի անգամ նրանք սովորականից ավելի ուշացան. Նիկոլայ Պետրովիչը գնաց պարտեզ նրանց դիմավորելու և, զովանոցին հասնելով, հանկարծ արագ քայլերի ձայն ու երկու երիտասարդների խոսակցություն լսեց։ Նրանք գալիս էին զովանոցի մյուս կողմից և իրեն չէին կարող տեսնել։

— Դու հորս լավ չես ճանաչում,— ասում էր Արկադին։

Նիկոլայ Պետրովիչը թաք կացավ։

— Հայրդ բարի մարդ է,— ասաց Բազարովը,— բայց արդեն ժամանակից ետ է մնացել, նրա երգը երգված է։

Նիկոլայ Պետրովիչը ականջը սրեց... Արկադին ոչինչ չպատասխանեց։

«Ժամանակից ետ մնացած մարդը» մի երկու վայրկյան կանգնեց անշարժ և ապա դանդաղ քայլերով գնաց դեպի տուն։

— Երեք օր առաջ նայեմ, տեսնեմ Պուշկին է կարդում,— շարունակեց Բազարովը։— Ի սեր աստծո, նրան հասկացրու, որ այդ անհարմար բան է։ Երեխա հո չի՞. ժամանակն է այդ անմիտ բաներից ձեռք քաշել։ Եվ ինչ հաճույք է ներկա ժամանակներում ռոմանտիկ լինել։ Նրան մի որևէ օգտակար բան տուր կարդա։

— Ի՞նչ տամ նրան,— հարցրեց Արկադին։

— Կարծում եմ, որ սկզբում ավելի լավ կլինի տալ Բյուխների՝ Stoff und Kraft[1]։

— Ինքս էլ եմ այդպես կարծում,— հավանություն տվեց Արկադին։— Stoff und Kraft-ը գրված է հանրամատչելի լեզվով։

— Ահա թե մենք ինչպիսին ենք,— ասում էր Նիկոլայ Պետրովիչը նույն օրը ճաշից հետո իր եղբորը, նստած նրա առանձնասենյակում,— հետամնաց մարդկանց շարքն ընկանք, եղբայրս, ուրեմն, մեր երգը երգված է։ Ի՞նչ արած։ Գուցե Բազարովն իրավացի է։ Բայց, խոստովանում եմ, մի բան ինձ ցավ է պատճառում. ես հույս ունեի, մա-

[1] «Նյութը և ուժը»—գերմանացի բնագետ, մատերիալիզմի հայտնի մասսայականացնող Բյուխների աշխատությունը։

նավանդ այժմ, ավելի սերտ, ավելի բարեկամաբար կապվել Արկադիի հետ, մինչդեռ բանից պարզվում է, որ ես ետ եմ մնացել, իսկ նա առաջադիմել է, և մենք իրար հասկանալ չենք կարող։

— Ախր, ինչու է նա մեզանից առաջ գնացել։ Եվ ինչո՞վ է մեզանից այդքան տարբերվում,— անհամբերությամբ բացականչեց Պավել Պետրովիչը։— Այդ բոլորը այն պարոնն է, նիհիլիստն է որդուդ գլուխը լցրել։ Ինչպես ատում եմ այդ հեքիմին. իմ կարծիքով նա ուղղակի խաբեբա է։ Հավատացած եմ, որ նա, իր բոլոր գործերով հանդերձ, բնագիտության մեջ էլ շատ առաջ չի գնացել։

— Ոչ, եղբայր, այդ բանը մի ասի, Բազարովը խելոք ու հասկացող մարդ է։

— Եվ ինչ զզվելի ինքնասիրություն ունի,— դարձյալ ընդհատեց Պավել Պետրովիչը։

— Այո,— նկատեց Նիկոլայ Պետրովիչը,— ինքնասեր մարդ է։ Բայց, ինչպես երևում է, առանց դրան անկարելի է. միայն մեկ բանի խելքս չի հասնում։ Կարծեմ, ես ամեն բան անում եմ, որպեսզի այս դարից ետ չմնամ. գյուղացիների գործը կարգավորեցի, ֆերմա հիմնեցի, այնպես որ մինչև անգամ ամբողջ նահանգում ինձ կ ա ր մ ի ր են անվանում. կարդում եմ, սովորում եմ, առհասարակ աշխատում եմ ժամանակակից պահանջներին համապատասխան լինել, իսկ նրանք ասում են, որ իմ երգը երգված է արդեն։ Ինչ ասեմ, եղբայր, ինքս էլ եմ սկսում մտածել, որ իրոք իմ երգը երգված է։

— Ինչո՞ւ այդպես։

— Ահա թե ինչու։ Այսօր ես նստել էի, Պուշկին էի կարդում... Որքան հիշում եմ, բաց էի արել Ց ի գ ա ն ն ե ր ը... Մեկ էլ Արկադին մոտեցավ ինձ և, անխոս, փաղաքուշ ցավակցության արտահայտությունը դեմքին, գիրքը կամացուկ խլեց ձեռքիցս, ինչպես որ երեխայի հետ են վարվում, և առաջիս դրեց մի ուրիշը, գերմաներեն գիրք... ժպտաց ու գնաց, և Պուշկինն էլ հետը տարավ։

— Մի՞թե։ Իսկ ի՞նչ գիրք տվեց։

— Ահա, այս գիրքը։

Եվ Նիկոլայ Պետրովիչը սերթուկի հետևի գրպանից հանեց

Բյուխների տխրահռչակ գրքույկի իններորդ հրատարակությունը։

Պավել Պետրովիչը վերցրեց գրքույկը ու շուռ ու մուռ տվեց։

— Հըմմ,— մռնչաց նա։— Արկադի Նիկոլայիչը հոգ է տանում քո դաստիարակության մասին։ Հը, ինչ է, փորձեցի՞ր կարդալ։

— Փորձեցիր։

— Հետո՞։

— Կամ ես հիմար եմ, կամ այդ բոլորը անմիտ բաներ են։ Երևի ես եմ հիմար։

— Մի՞թե գերմաներենը չես մոռացել,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Գերմաներեն հասկանում եմ։

Պավել Պետրովիչը դարձյալ ձեռքի մեջը շուռ ու մուռ տվեց գիրքն ու աչքի տակով եղբորը նայեց։ Երկուսն էլ լռեցին։

— Հա, ի դեպ,— սկսեց Նիկոլայ Պետրովիչը՝ ցանկանալով խոսքը փոխել։— Կոլյազինից նամակ ստացա։

— Մատվեյ Իլյիչի՞ց։

— Այո։ Նա եկել է ....-ի նահանգի գործերը քննելու։ Այժմ նա մեծ մարդ է դարձել և ինձ գրում է, թե իբրև ազգական ուզում է հետներս տեսնվել, և ինձ, քեզ ու Արկադիին հրավիրում է քաղաք։

— Պիտի գնա՞ս,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Ո՛չ։ Իսկ դո՞ւ։

— Ես էլ չեմ գնա։ Շատ հարկավոր է հիսուն վերստ քարշ գամ, թե ինչ է՝ նրա երեսը տեսնեմ։ Mathieu-ն ուզում է ներկայանալ մեզ իր բոլոր փառքով. սատանան նրա հետ։ Բավական է նրան նահանգի խունկը։ Առանց մերինին էլ յոլա կգնա։ Մեծ բան է կարծես գաղտնի խորհրդական լինելը։ Եթե ես շարունակեի ծառայել, քարշ տայի այդ հիմարությունը, այժմ գեներալ-ադյուտանտ կլինեի։ Այս էլ կա, որ ես էլ, դու էլ արդեն հետամնաց մարդիկ ենք։

— Հա՛, եղբայր. երևի ժամանակն է դագաղ պատվիրելու ու ձեռներս էլ կրծքներիս խաչելու,— հոգոց հանելով նկատեց Նիկոլայ Պետրովիչը։

— Չէ, ես այդպես շուտ անձնատուր չեմ լինի,— մրթմրթաց եղբայրը,— Այդ հեքիմի հետ մենք դեռ կռիվ կունենանք. ես այդ նախազգում եմ։

Ընդհարումը պատահեց հենց նույն օր երեկոյան՝ թեյի միջոցին։ Պավել Պետրովիչը ընդունարան մտավ արդեն կռվի պատրաստ. նա գրգռված էր և վճռական։ Միայն առիթ էր փնտրում նա, որպեսզի թշնամու վրա հարձակվի. բայց երկար ժամանակ առիթ չէր ներկայանում։ Բազարովն առհասարակ «ծերուկ Կիրսանովների» ներկայությամբ սակավ էր խոսում (նա այդպես էր անվանում երկու եղբայրներին), իսկ այդ երեկոյան վատ տրամադրություն ուներ և լուռ ու մունջ թեյը խմում էր բաժակ բաժակի հետևից։ Պավել Պետրովիչը անհամբերությունից այրվում էր. վերջապես նրա ցանկությունը կատարվեց։ Հարևան կալվածատերերից մեկի վրա խոսք բացվեց։ «Անպետք, խղճուկ արիստոկրատ»,— անտարբեր կերպով նկատեց Բազարովը, որ հանդիպել էր նրան Պետերբուրգում։

— Թույլ տվեք ձեզ հարցնելու,— սկսեց Պավել Պետրովիչը, և նրա շրթունքները դողդողացին։— Ձեր հասկացողությամբ «անպետք» և «արիստոկրատ» բառերը միևնո՞ւյն նշանակությունն ունեն։

— Ես «խղճուկ արիստոկրատ» ասացի,— պատասխանեց Բազարովը, դանդաղ կերպով թեյի ումպը կուլ տալով։

— Շատ լավ. բայց ես կարծում եմ, որ դուք արիստոկրատների մասին էլ միևնույն կարծիքն ունեք։ Պարտք եմ համարում հայտարարելու ձեզ, որ ես այդ կարծիքին չեմ։ Համարձակվում եմ ասել, որ ամենքն էլ ինձ ճանաչում են որպես մի լիբերալ և պրոգրեսը սիրող մարդ. և հենց դրա համար էլ ես հարգում եմ իսկական արիստոկրատներին։ Հիշեցեք, մեծարգո պարոն (այս խոսքերի վրա Բազարովը աչքը Պավել Պետրովիչի վրա բարձրացրեց), հիշեցեք, մեծարգո պարոն,— կրկնեց նա զայրացած,— անգլիական արիստոկրատներին։ Նրանք իրենց իրավունքներից մի նշանախեց անգամ չեն զիջում, և այդ պատճառով էլ հարգում են նաև ուրիշի իրավունքները. նրանք պահանջում են, որ կատարվեն դեպի իրենց եղած պարտավորությունները, ուստի և իրենք էլ իրենց պարտավորություններն են կատարում։

Արիստոկրատիան էր Անգլիային ազատություն տվողը ու նա է նրան պահպանողը։

— Մենք այդ երգը շատ անգամ ենք լսել,— պատասխանեց Բազարովը,— բայց դրանով ի՞նչ եք ուզում ապացուցել։

— Էստոնք ասելով ուզում եմ ապացուցել, մեծարգո պարոն (Պավել Պետրովիչը երբ բարկանում էր, դիտմամբ գործ էր ածում «էստոնք-էնդոնք» խոսքերը, թեև շատ լավ գիտեր, որ գրական լեզվի քերականությունը նման խոսքեր չէր թույլատրում։ Այդ քմահաճույքը ալեքսանդրյան շրջանի ավանդություններին մնացորդ էր։ Այդ ժամանակվա ականավոր անձինք, երբ հազարից մեկ ուզում էին մայրենի լեզվով խոսել՝ գործ էին ածում մեկը՝ էստոնք, մյուսները՝ էնդոնք, որպեսզի ցույց տան, թե մենք բուն ռուսակներ ենք, և միևնույն ժամանակ մենք ազնվատոհմ իշխաններ ենք, որոնց թույլատրվում է կարևորություն չտալ դպրոցական կանոններին), էնդոնքով ես ուզում եմ ապացուցել, որ առանց սեփական արժանապատվության զգացումի, առանց ինքնահարգման,— իսկ արիստոկրատի մեջ այդ զգացումները զարգացած են,— չկա ոչ մի ամուր հիմք հասարակական bien public-ի համար, հասարակական կառուցվածքի համար։ Անձնավորությունը, անհատը, մեծարգո պարոն, ահա գլխավորը։ Մարդկային անհատը ժայռի նման ամուր պիտի լինի, որովհետև բոլորը կառուցվում է նրա վրա։ Ես շատ լավ գիտեմ, օրինակ, որ դուք իմ սովորությունները, արդ ու զարդը, իմ մաքրասիրությունը գտնում եք ծիծաղելի։ Սակայն այդ ամենը բխում է ինքնահարգման զգացումից. պարտքի գիտակցության զգացումից. այո՛, պարտքի գիտակցումից. ես ապրում եմ գյուղում, խուլ տեղում, բայց ես իմ պատիվը չեմ գցում, ես հարգում եմ իմ մեջ մարդուն։

— Ներեցեք, Պավել Պետրովիչ,— ասաց Բազարովը,— ահավասիկ դուք հարգում եք ձեզ և նստած եք ձեռքերդ ծալած. ի՞նչ շահ դրանից bien public-ի համար։ Եթե դուք ձեզ չհարգեք, դարձյալ միևնույն բանը կանեք։

Պավել Պետրովիչը գունատվեց։

— Այդ արդեն բոլորովին ուրիշ խնդիր է։ Ես այժմ բոլորովին ավելորդ եմ համարում ձեզ բացատրել, թե ինչու եմ ձեռներս ծալած նստել, ինչպես դուք եք ասում։ Ես ուզում եմ միայն ասել, որ արիստոկրատիզմը պրինսիպ է, իսկ մեր ժամանակում, առանց պրինսիպների մեր օրերում ապրել կարող են միայն անբարոյական կամ դատարկ մարդիկ։ Ես այդ Արկադին ասել եմ նրա գալու հենց մյուս օրը, և այժմս էլ կրկնում եմ ձեզ։ Այնպես չէ՞, Նիկոլայ։

Նիկոլայ Պետրովիչը գլխով արեց։

— Արիստոկրատ, լիբերալ, պրոգրես, պրինցիպ,— ասաց Բազարովը,— ինչքան օտար... և անօգուտ բառեր։ Մեր ժողովրդին ամենևին պետք չեն դրանք։

— Հապա ի՞նչ է պետք նրան ձեր կարծիքով։ Ձեզ որ ականջ դնելու լինենք, մենք գտնվում ենք մարդկությունից դուրս, օրենքներից դուրս։ Բայց ախր պատմության տրամաբանությունը պահանջում է...

— Ինչնե՞ր է պետք այդ տրամաբանությունը։ Մենք առանց նրան էլ յոլա ենք գնում։

— Ինչպե՞ս։

— Այնպես։ Դուք, ես կարծում եմ, տրամաբանության կարիք չունեք, որպեսզի, երբ քաղցած եք, հացի պատառ դնեք բերանձերդ։ Մեր ինչ բանն է վերացական հասկացողություններով զբաղվելը։

Պավել Պետրովիչը թափ տվեց ձեռքերը։

— Սրանից հետո ես այլևս ձեզ չեմ հասկանում։ Դուք անպատվում եք ռուս ժողովրդին։ Ձեմ հասկանում, ինչպես կարելի է պրինսիպներ, կանոններ չընդունել։ Ուրեմն հանուն ի՞նչ բանի եք գործում։

— Ես արդեն ձեզ ասացի, հորեղբայր, որ մենք հեղինակություններ չենք ընդունում,— մեջ մտավ Արկադին։

— Մենք գործում ենք հանուն այն բանի, ինչ որ օգտակար ենք համարում,— ասաց Բազարովը։— Ներկայումս ամենաօգտակարը ժխտելն է,— և մենք ժխտում ենք։

— Ամե՞ն բան։

— Ամեն բան։

— Ինչպե՞ս... ոչ միայն գեղարվեստը, պոեզիան... այլև... ասածներդ է ասածը...

— Ամեն բան,— անկարագրելի հանգստությամբ կրկնեց Բազարովը։

Պավել Պետրովիչը աչքերը սևեռեց նրան։ Նա այդ չէր սպասում, իսկ Արկադին մինչև իսկ կարմրեց բավականություններից։

— Բայց սպասեցեք,— խոսեց Նիկոլայ Պետրովիչը։— Դուք ժխտում եք ամեն բան կամ, ավելի ճիշտ արտահայտելով, դուք ամեն բան քանդում եք... Չէ՞ որ հարկավոր է նաև շինել։

— Այդ արդեն մեր գործը չէ... Նախ պետք է տեղ մաքրել։

— Ժողովրդի ներկա դրությունն այդ է պահանջում,— կարևոր շեշտով ավելացրեց Արկադին,— մենք պարտավոր ենք այդ պահանջները կատարել, մենք իրավունք չունենք մեր անձնական եսի գոհացմանը անձնատուր լինել։

Այս վերջին նախադասությունը, ըստ երևույթին, Բազարովին դուր չեկավ, որովհետև նրանից փիլիսոփայության այսինքն ռոմանտիզմի հոտ էր փչում, քանզի Բազարովը փիլիսոփայությունն էլ էր ռոմանտիզմ անվանում. սակայն նա հարկ չհամարեց իր երիտասարդ աշակերտի ասածը հերքել։

— Ո՛չ, ո՛չ,— հանկարծակի պոռթկումով բացականչեց Պավել Պետրովիչը,— չեմ ուզում հավատալ, որ դուք, պարոններ, լավ ճանաչում եք ռուս ժողովրդին, որ դուք նրա պահանջների, նրա ձգտումների ներկայացուցիչներն եք։ Ո՛չ, ռուս ժողովուրդն այնպես չէ, ինչպես որ դուք եք նրան պատկերացնում։ Նա սրբությամբ պահում է ավանդությունները, նա նահապետական է։ Նա առանց հավատի չի կարող ապրել...

— Դրա դեմ չեմ վիճի,— ընդհատեց Բազարովը,— մինչև անգամ պատրաստ եմ համաձայնել, որ դուք այդ բանում իրավացի եք։

— Իսկ եթե ես իրավացի եմ...

— Բայց և այնպես այդ դեռ ոչինչ չի ապացուցում։

— Արդարև ոչինչ չի ապացուցում,— կրկնեց Արկադին այն փորձված շախմատ խաղացողի վստահությամբ, որը կարծես թե նախատեսել էր հակառակորդի անելիքը, ուստի և ամենևին չշփոթվեց։

— Ինչպե՞ս թե ոչինչ չի ապացուցում,— փնթփնթաց

ապշած Պավել Պետրովիչը։— Ուրեմն դուք ձեր ժողովրդի դե՞մ եք գնում։

— Թեկուզ հենց այդպես,— բացականչեց Բազարովը։— Ժողովուրդը կարծում է, թե երբ որ ամպը գոռում է, այդ Եղիա մարգարեն է երկնքում կառքով ման գալիս։ Ի՞նչ է։ Համաձայնե՞մ նրան։ Ասենք նա ռուս է, իսկ ե՞ս, մի՞թե ես ինքս ռուս չեմ։

— Ոչ, այն բոլորից հետո, որ դուք այս բոպեին ասացիք, դուք ռուս չեք։ Ձեմ կարող ձեզ ռուս համարել։

— Իմ պապս հողագործ էր,— գոռոզ հպարտությամբ պատասխանեց Բազարովը։— Հենց ձեր գյուղացիներից որին ուզում եք հարցրեք, թե մեզանից որի՞ն ավելի իրեն հայրենակից կհամարի, ի՞նձ թե ձեզ։ Դուք նույնիսկ նրա հետ խոսել չգիտեք։

— Իսկ դուք հետը խոսում եք և միևնույն ժամանակ էլ նրան արհամարհում։

— Ինչ արած, եթե արժանի է արհամարհանքի։ Դուք կշտամբում եք իմ ուղղությունը, բայց ո՞վ է ձեզ ասում, թե այդ ուղղությունը պատահական է իմ մեջ, որ դա առաջ չի եկել հենց նույն ժողովրդական ոգուց, հանուն որի այսքան մաքառում եք։

— Ինչպես չէ՞։ Խիստ հարկավոր են նիհիլիստները։

— Հարկավոր են թե հարկավոր չեն, այդ մենք չենք որոշում։ Չէ՞ որ դուք էլ ձեզ անօգուտ չեք համարում։

— Պարոններ, պարոններ, անձնավորության մի կըպչեք,— բացականչեց Նիկոլայ Պետրովիչը և վեր կացավ տեղից։

Պավել Պետրովիչը ժպտաց ու, ձեռքը եղբոր ուսին դնելով, նրան նորից իր տեղը նստեցրեց։

— Անհանգիստ մի լինի,— ասաց նա։— Ես գլուխս չեմ կորցնի հենց արժանապատվության այն զգացումի շնորհիվ, որ այնպես սաստիկ ծաղրում է պարոն... պարոն բժիշկը։ Եվ ով գիտե,— շարունակեց նա նորից Բազարովին դիմելով,— գուցե դուք կարծում եք, թե ձեր ուսմունքը մի նո՞ր բան է։ Իզուր եք կարծում։ Ձեր քարոզած մատերիալիզմը մի անգամ չէ, որ քարոզվել է և միշտ էլ սնանկ է եղել...

— Դարձյալ օտար բառ,— ընդմիջեց Բազարովը։ Նա

սկսում էր չարանալ, և նրա դեմքը մի տեսակ պղնձի և կոպիտ գույն ստացավ։— Նախ՝ մենք ոչինչ չենք քարոզում, այդպիսի սովորություն չունինք...

— Հապա ի՞նչ եք անում։

— Ահա թե ինչ ենք անում։ Առաջները, դեռ ոչ շատ վաղուց, մենք ասում էինք, թե մանր պաշտոնյաները կաշառքներ են վերցնում, որ մեզանում ոչ ճանապարհներ կան, ոչ վաճառականություն, ոչ էլ արդար դատաստան...

— Իհարկե, իհարկե, դուք մերկացնողներ եք, կարծեմ այդպես է կոչվում։ Ձեր մերկացումներից շատերին ես ինքս էլ եմ համաձայնում, բայց...

— Իսկ հետո մենք գլխի ընկանք, որ մեր վերքերի մասին խոսելը, լոկ խոսելը արժեք չունի, որ այդ մեզ տանում է միայն դեպի գոհհկություն և տեսամոլություն. տեսանք, որ մեր խելոքները, այսպես կոչված առաջավոր մարդիկ ու մերկացնողներն էլ բոլորովին բանի պետք չեն, որ մենք դատարկ բաներով ենք զբաղված, խոսում, դատում ենք ինչ-որ արվեստի մասին, անգիտակցական ստեղծագործության մասին, պառլամենտականության մասին, փաստաբանության մասին և սատանան գիտե, թե էլ ինչ բաների մասին, երբ խնդիրը հանապազօրյա հացի մասին է, երբ ամենակոպիտ սնապաշտությունը մեզ խեղդում է, երբ մեր բոլոր բաժնետիրական ընկերությունները սնանկանում են միմիայն ազնիվ մարդկանց պակասության պատճառով, երբ հենց ազատությունը, որի համար ձեռ ու ոտ է ընկնում կառավարությունը, հազիվ թե մեզ օգուտ բերի, քանի որ մեր գեղջուկը պատրաստ է ինքն իրենից գողանալու, միայն թե խմիչքի տա գինետանը։

— Այդպես,— ընդհատեց Պավել Պետրովիչը,— այդպես. այդ բոլորի մեջ դուք համոզվեցիք և վճռեցիք ինքներդ ոչ մի բան լրջորեն չձեռնարկել։

— Եվ վճռել ենք ոչ մի բան չձեռնարկել,— մռայլված կրկնեց Բազարովը։ Նա հանկարծ սկսեց ինքն իր վրա զայրանալ, թե ինչո՞ւ նա այդքան երկար ու բարակ խոսեց այս աղայի առաջ։

— Այլ միայն հայհոյե՞լ։

— Եվ հայհոյել։

— Եվ այդ կոչվում է նիհիլի՞զմ։

— Եվ այդ կոչվում է նիհիլիզմ,— կրկնեց նորից Բազարովը, այս անգամ մի առանձին հանդգնությամբ։

Պավել Պետրովիչը աչքերը թեթևակի կկոցեց։

— Ահա թե ինչ,— արտասանեց նա տարօրինակ հանգարտ ձայնով։— Նիհիլիզմը պետք է ամեն ցավի դարման անի և դուք, դուք մեր փրկիչներն եք ու հերոսները։ Այդպես։ էլ ինչի՞ եք դուք ուրեմն ուրիշներին, հենց թեկուզ այդ նույն մերկացնողներին, վատաբանում։ Մի՞թե դուք էլ բոլորի նման լոկ շաղակրատելով չե՞ք զբաղված։

— Ուրիշ բանով չգիտեմ, բայց այդ մեղքը մենք չունեինք,— ատամի արանքից ասաց Բազարովը։

— Ուրեմն ի՞նչ եք անում։ Գործո՞ւմ եք, ինչ է։ Թե՞ պատրաստվում եք գործելու։

Բազարովը ոչինչ չպատասխանեց։ Պավել Պետրովիչը նստած տեղը ցնցվեց, բայց իսկույն էլ ինքն իրեն զսպեց։

— Հըմ... Գործել... քանդել...— շարունակեց նա։— Բայց ինչպե՞ս քանդել, չիմանալով նույնիսկ, թե ինչո՞ւ։

— Մենք քանդում ենք, որովհետև մենք ուժ ենք,— նկատեց Արկադին։

Պավել Պետրովիչը նայեց իր եղբորորդուն ու քմծիծաղեց։

— Այո, ուժ, ուատի և հաշիվ չի տալիս,— ասաց Արկադին ու շտկվեց տեղը։

— Թշվառական,— աղաղակեց Պավել Պետրովիչը. նա այլևս բոլորովին անկարող էր իրեն զսպելու։— Գոնե դու մտածիր, թե Ռուսաստանում ինչ ես պաշտպանում քո այդ զռեհիկ խրատաբանությամբ։ Ոչ. դա հրեշտակին էլ կարող է համբերությունից հանել։ Ուժ։ Վայրենի կալմիկի մեջ էլ, մոնղոլի մեջ էլ ուժ կա—բայց ինչների՞ս է պետք։ Մեզ համար թանկ է քաղաքակրթությունը, այո, այո, մեծարգո պարոն, մեզ համար թանկ են նրա պտուղները։ Մի ասեք, թե չնչին են այդ պտուղները. ամենավերջին գրչակը un barbouilleur[1], վարձված հասարակ դաշնակահարը, որին մի երեկոյի համար տալիս են հինգ կոպեկ, նույնիսկ նրանք

[1] Անպետք գրող։ Ս. Թ.։

ավելի են օգտակար, քան դուք, որովհետև նրանք քաղաքակրթության ներկայացուցիչներն են, այլ ոչ թե մոնղոլական կոպիտ ուժի։ Դուք ձեզ առաջավոր մարդիկ եք երևակայում, մինչդեռ ձեր տեղը կալմիկի կիբիտկայում է։ Ո՞ւժ։ Հիշեցեք, վերջապես, պարոնայք ուժեղներ, որ դուք միայն երկու ջուխտ մի կենտ եք, իսկ մյուսները՝ միլիոններ, որոնք թույլ չեն տա ձեզ ոտնատակ տալու իրենց սրբազան հավատալիքները, որոնք կջախջախեն ձեզ։

— Թե կջախջախեն՝ այդպես էլ պետք է,— ասաց Բազարովը։— Միայն էն վաղ էր, որ էշը կաղ էր։ Մենք այնքան էլ քիչ չենք, ինչպես դուք եք կարծում։

— Ի՞նչ։ Դուք հանաք չե՞ք անում, կարծելով, որ ամբողջ ժողովրդի հախից կգաք։

— Ինչպես գիտեք, Մոսկվան այրվեց կոպեկանոց մոմից,— պատասխանեց Բազարովը։

— Լավ, լավ։ Նախ՝ համարյա դիվական գոռոզություն, իսկ հետո էլ՝ ծաղր։ Ահա, ահա թե ինչով է հափշտակվում երիտասարդությունը, ահա թե ինչից են հաղթահարվում երեխաների անփորձ սրտերը։ Ահա, նայեցեք, դրանցից մեկը ձեր կողքին է նստած. քիչ է մնում, որ նա ձեր առաջ մոմվառի, ուրախացեք (Արկադին երեսը շուռ տվեց և ունքերը կիտեց)։ Եվ այս վարակն արդեն սաստիկ տարածվել է։ Ինձ պատմում էին, որ Հռոմում մեր նկարիչները Վատիկան ոտք չեն դնում։ Ռաֆայելին համարյա թե համարում են անխելք, որովհետև նա իբր թե հեղինակություն է։ Իսկ իրենք գարշելու չափ անզոր են ու անարդյունք. իսկ իրենց երևակայությունը «Աղջիկը աղբյուրի մոտ» նկարից դենը չի անցնում։ Այդ էլ գոնե մի բա՞ն լինի։ Աղջկա պատկերն էլ դուրս է բերված վատթար։ Ձեր կարծիքով, կեցցեն նրանք, այնպես չէ՞։

— Իմ կարծիքով, Ռաֆայելն էլ քոռ կոպեկ չարժե,— առարկեց Բազարովը,— և դրանք էլ Ռաֆայելից լավ չեն։

— Կեցցեք, կեցցեք։ Լավ լսիր, Արկադի... ահա ինչ ոճով պետք է արտահայտվեն ժամանակակից երիտասարդները։ Եվ ինչպես ձեր հետևից չգնան սրանք։ Առաջներում երիտասարդներն ուսանում էին, չէին ուզում տգետի համբավ ունենալ, ուստի և ակամա աշխատում էին։ Իսկ այժմ

բավական է, որ նրանք ասեն՝ «Աշխարհքումս ամեն ինչ դատարկ բան է»՝ պրծավ գնաց։ Երիտասարդներն ուրախացան։ Եվ, իսկապես, առաջ նրանք պարզապես տխմարներ էին, իսկ այժմ հանկարծ նիհիլիստներ դարձան։

— Եվ ահա ձեր գոված արժանապատվության զգացումը դավաճանեց ձեզ,— սառնությամբ նկատեց Բազարովը, մինչդեռ Արկադին ամբողջապես բորբոքվեց, և աչքերը փայլատակեցին։— Մեր վեճը շատ հեռու գնաց... Թերևս, ավելի լավ է դադարեցնենք։ Իսկ ես այն ժամանակ միայն պատրաստ կլինեմ համաձայնել ձեզ հետ,— ասաց նա, տեղից վեր կենալով,— եթե դուք ինձ կներկայացնեք գեթ մի որոշում մեր արդի ընտանեկան կամ հասարակական կյանքից, որը լիակատար և անխնա ժխտման առիթ չտար։

— Այդպիսի միլիոնավոր որոշումներ կներկայացնեմ,— բացականչեց Պավել Պետրովիչը,— միլիոնավոր։ Այ, թեկուզ հենց համայնքը, օրինակ։

Ծաղրական սառը ժպիտը ծռեց Բազարովի շրթունքները։

— Էհ, համայնքի մասին,— ասաց նա,— ավելի լավ է խոսեք ձեր եղբոր հետ։ Կարծեմ նա այժմ արդեն փորձով իմացավ, թե ինչ բան է համայնքը, ինչ բան է համայնական երաշխավորությունը, ժուժկալությունն ու դրա նման բաները։

— Ընտանիքը, վերջապես ընտանիքն այնպես, ինչպես որ նա գոյություն ունի մեր գյուղականների մեջ,— գոչեց Պավել Պետրովիչը։

— Կարծում եմ, որ այդ հարցը ևս ավելի լավ է հենց ձեզ համար մանրամասնաբար չքննել։ Երևի լսած կլինեք հարանապիղծների մասին։ Լսեցեք ինձ, Պավել Պետրովիչ, ավելի լավ է ձեզ մի երկու օր մտածելու ժամանակ տվեք, որովհետև միանգամից դժվար թե մի որևէ բան գտնեք։ Մի լավ խորհեցեք մեր բոլոր դասակարգերի մասին և ամեն մեկի վրա առանձին կանգ առեք, իսկ մինչ այդ ես ու Արկադին էլ...

— Ամեն բան ծաղր ու ծանակ դարձնեք,— վրա բերեց Պավել Պետրովիչը։

— Ո՛չ, գորտեր շերտատենք։ Գնանք, Արկադի, ցտեսություն, պարոննե՛ր։

Երկու ընկերները դուրս գնացին։ Եղբայրները մնացին մենակ և սկզբում միայն միմյանց երեսի էին նայում։

— Ահա,— վերջապես սկսեց Պավել Պետրովիչը։— Ահա մեր ներկա երիտասարդությունը։ Դրանք են ահա—մեր ժառանգները։

— Ժառանգները,— թախծալի հառաչանքով կրկնեց Նիկոլայ Պետրովիչը։ Նա վեճի ամբողջ ընթացքում կարծես ասեղների վրա էր նստած, և միմիայն զողտուկ, հիվանդագին նայում էր Արկադիին։— Դիտե՞ս ես ինչ հիշեցի, եղբա՛յր։ Մի՛ անգամ լուսահոգի մայրիկի հետ վեճ ունեցա, նա բղավում էր, չէր ուզում ինձ ականջ դնել... Վերջապես ես նրան ասացի, թե դուք իբր չեք կարող ինձ հասկանալ, որ մենք իբր թե երկու տարբեր սերունդների ենք պատկանում։ Մայրիկը սաստիկ նեղացավ. իսկ ես մտածեցի. ի՞նչ անեմ։ Հաբը դառն է, մինչդեռ հարկավոր է կուլ տալ։ Այժմ ահա մեր հերթն է հասել, և մեր ժառանգները կարող են մեզ ասել. դուք մեր սերնդի մարդ չեք, կուլ տվեք հաբը։

— Դու արդեն չափազանց բարեհոգի ես ու համեստ,— առարկեց Պավել Պետրովիչը,— ես, ընդհակառակը, հավատացած եմ, որ մենք քեզ հետ ավելի ենք իրավացի, քան այս պարոնիկները, թեպետ և գուցե փոքր ինչ հնացած vieilli[1] լեզվով ենք մեր մտքերը արտահայտում, և չունենք նրանց հանդուգն անձնապաստանությունը... Եվ ինչ փքված է դարձել ներկա երիտասարդությունը։ Երբ հաբց ես տալիս դպրանցից մեկն ու մեկին, որ գինուցն եք ուզում, կարմիր թե սպիտակ, «ես սովորություն ունեմ գերադասելու կարմիրը» պատասխանում է նա բամբ ձայնով և դեմքի մի այնպիսի կարեւոր արտահայտությամբ, որ կարծես այդ միջոցին ամբողջ տիեզերքը նրան է մտիկ տալիս...

— Էլ թեյ չե՞ք ուզում,— հարցրեց Ֆենիչկան դռնից ներս նայելով, մինչ ընդունարանում լսվում էին վիճողների ձայները, նա սիրտ չէր անում ներս մտնելու։

— Ոչ, կարող ես ասել, որ հեշտաեռը վերցնեն,— պատասխանեց Նիկոլայ Պետրովիչը և վեր կացավ, նրան ընդառաջ գնաց։ Պավել Պետրովիչը կտրուկ ձեռով ասաց նրան. bon soir[1], և գնաց իր առանձնասենյակը։

[1] Հին, հնացած (ֆրանս.)։

XI

Կես ժամ հետո Նիկոլայ Պետրովիչը գնաց պարտեզ, իր սիրելի հովանոցը։ Տխուր մտքերը պաշարել էին նրան։ Առաջին անգամն էր, որ նա պարզ զգում էր իր անջատվածությունը որդուց։ Նա նախազգում էր, որ օր-օրի այդ անջրպետը պիտի ավելի ու ավելի մեծանար։ Ուրեմն զուր էր նա ձմեռը Պետերբուրգում ամբողջ օրերով նստում նոքաուզին գրքեր կարդում, զուր էր երիտասարդների խոստակցություններին ականջ դնում. զուր էր ուրախանում, երբ հաջողվում էր իրեն նրանց կրակոտ ճառերի մեջ իր խոսքն էլ մտցնել։ «Եղբայրս ասում է, թե մենք ենք իրավացի,— մտածում էր նա,— և, ամեն մի ինքնասիրություն մի կողմ թողնելով, ինձ էլ այնպես է թվում, որ նրանք ավելի են հեռու ճշմարտությունից, քան մենք, բայց միևնույն ժամանակ ես զգում եմ, որ նրանք ունեն մի այնպիսի բան, մի տեսակ առավելություն, որը մենք չունենք... Երիտասարդությո՞ւնն է, արդյոք։ Ո՛չ. երիտասարդությունը չէ միայն։ Արդյոք այդ առավելությունն այն չէ՞, որ նրանց մեջ ավելի քիչ են ազայության հետքերը, քան թե մեր մեջ»։

Նիկոլայ Պետրովիչը պուխք քաշ գցեց ու ձեռքով երեսը շփեց։

«Բայց մերժել բանաստեղծությունը,— մտածեց նա նոքից,— չսիրել նկարչությունը, բնությունը...»։

Եվ նա չորս կողմը նայեց, կարծես կամենալով հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է բնությունը չսիրել։ Արդեն երեկոյանում էր. արևը ծածկվել էր կաղամախիների անտառի հետևը, որը գտնվում էր պարտեզից կես վերստ հեռու, նրա տավերն ընկած էր անշարժ դաշտերի վրա և վերջ չուներ։ Անտառի երկարությամբ մութ, նեղ ճանապարհով կիսարշավ գնում էր մի գյուղացի՝ սպիտակ ձի նստած. նա ամ-

[1] Բարի երեկո (ֆրանս.)։

բողջովին երևում էր պարզ կերպով, ամբողջովին՝ նույնիսկ ուսի կարկատանն էլ, չնայած, որ ստվերի միջովն էր գնում. Հաճելի և պարզորոշ երևում էին ձիու ոտի շարժումները։ Արևի ճառագայթներն էլ իր հերթին մուտք էին գործում անտառը և, թավուտի միջից թափանցելով, մի այնպիսի ջերմ լույսով էին ողողել կաղամախիների բները, որ եղևնու բների էին նմանում, իսկ թավ տերևները համարյա կապույտ գույն էին ստացել, իսկ անտառի վերևը տարածված էր բաց-կապույտ երկինքը, որ վերջալույսի ճառագայթներից թեթևակի կարմրել էր։ Ծիծեռնակները թռչում էին բարձրում. քամին բոլորովին հանդարտվել էր. ուշացած մեղուները ծուլաբար ու քնատ բզզում էին հասմիկի ծաղիկների միջև. մլակները սյունի նման վխտում էին հեռու ձգված մեն-մենակ ճյուղի վերևը։ «Ախ, ինչ սքանչելի է, աստված իմ»,— մտածեց Նիկոլայ Պետրովիչը և արդեն սկսել էր իր սիրած ոտանավորը ասել, բայց հանկարծ միտքն ընկան Արկադին, Stoff und Kraft-ը և լռեց, բայց շարունակում էր մնալ միևնույն տեղում, շարունակում էր անձնատուր լինել խոհերի վշտալի ու բերկրարիթ խաղին։ Նա սիրում էր անուրջների մեջ ընկնել. գյուղական կյանքը նրա մեջ այդ հատկությունն էր զարգացրել։ Վա՜ղ է, որ նա նույնպես երազում էր՝ իջևանատանը որդու ճանապարհը պահելիս, իսկ այն օրից հետո արդեն փոփոխություն էր տեղի ունեցել, արդեն պարզվել էին դեռևս այն ժամանակ անորոշ հարաբերությունները... և այն էլ ինչպես։ Դարձյալ միտքն ընկավ լուսահոգի կինը, բայց ոչ այնպես, ինչպես որ նա սովոր էր տեսնել նրան երկար տարիների ընթացքում՝ անտնտես, բարի տանտիկին, այլ որպես նորատի աղջիկ՝ բարակ իրանով, անմեղ-փորձող հայացքով և պինդ հյուսած ծամը մանկական վզովն ընկած։ Հիշեց նա, թե ինչպես էր տեսել նրան առաջին անգամ։ Այն ժամանակ ինքը դեռ ուսանող էր։ Նրան հանդիպել էր իր բնակած տան աստիճանների վրա և հանկարծ նրան զարնվելով, շուտ էր եկել, որ ներողություն խնդրի. բայց այսքանն էր միայն կարողացել թոթովել՝ «pardon, monsieur»[1], իսկ նա գլուխը խոնարհել էր, քմծիծաղել, և հանկարծ կարծես վախեցած

[1] Ներեցեք, պարոն (ֆրանս.)։

փախել գնացել էր, իսկ աստիճանների պտույտքին շտապ նայել էր նրան, լուրջ դեմք ընդունել ու կարմրել։ Այնուհետև հիշեց իր առաջին վեհերոտ այցելությունները, կես-բերան խոսքերը, կես-ժպիտները, և ապշությունը, թախիծը, խոյանքը և վերջապես այն հեղձուցիչ բերկրանքը... Ո՞ւր կորան այն ամենը։ Նա դարձավ իր կինը։ Ինքն այնպես բախտավոր էր, որ քչերին է վիճակվում երկրիս վրա... «Բայց,— մտածում էր նա,— այդ քաղցր, առաջին վայրկյանները, ինչու չպետք է ապրեին նրանք հավերժական, անմահական կյանքով»։

Նա չէր աշխատում իր համար պարզել իր մտքերը. սակայն զգում էր, որ կցանկար այդ երանավետ ժամանակների հիշատակը պահպանած լինել մի ավելի զորեղ բանով, քան թե լոկ հիշողությունն էր. կուզենար նորից շոշափել իր Մարիայի մտերմությունը, զգալ նրա ջերմությունն ու շունչը, և նրան արդեն թվում էր, որպես թե նա իր վերևն էր...

— Նիկոլայ Պետրովիչ,— մոտիկից լսվեց Ֆենիչկայի ձայնը,— ո՞ւր եք։

Նիկոլայ Պետրովիչը ցնցվեց. նա ոչ ցավ զգաց, ոչ խղճի խայթ... Նա չէր կարող մինչև անգամ հնարավոր համարել, որպեսզի իր կնոջն ու Ֆենիչկային համեմատեն իրար հետ, բայց նա ափսոսեց, որ Ֆենիչկան եկավ իրեն փնտրելու։ Ֆենիչկայի ձայնը միանգամից նրան հիշեցրեց իր սպիտակած մազերը, իր ծերությունը, իր ներկան...

Դյութական աշխարհը, ուր նա նոր էր ոտք դրել, որը արդեն ծագում էր անցյալ միգամած ալիքների միջից, շարժվեց ու չքացավ։

— Այստեղ եմ ես,— պատասխանեց նա,— գնա, կգամ։ «Ահավասիկ աղայության հետքերը»,— անցավ նրա մտքով։ Ֆենիչկան լռիկ մտիկ տվավ զովանոցի մեջն ու անհետացավ։ Իսկ նա զարմացած նկատեց, որ մինչ ինքը անուրջներին էր անձնատուր եղել, արդեն գիշերը վրա էր հասել։ Զորս կողմն ամեն բան մթնել ու լռել էր, և Ֆենիչկայի դեմքը նրա աչքի առաջ խիստ դժգույն ու մանր թվաց։ Նա վեր կացավ և ուզում էր տուն վերադառնալ. բայց քնքշացած սիրտը չէր կարողանում հանգստանալ իր կրծքի մեջ, և նա սկսեց ծանրծանր ման գալ պարտեզում՝ մերթ մտախոհ մտիկ տալով

տների տակ, մերթ աչքերը բարձրացնելով դեպի երկինքը, որտեղ աստղերն արդեն պար բռնած իբար աչքով էին անում։ Նա երկար ժամանակ, համարյա մինչև հոգնելը, ման եկավ, իսկ ներսը ինչ-որ անհանգստություն, որոնոդ, անբոլոր ու տխուր անհանգստություն ամենևին չէր հանդարտվում։ Ոհ, ինչպես պիտի ծիծաղեր այժմ Բազարովը, եթե իմանար, թե ինչ էր կատարվում իր ներսում այդ միջոցին։ Արկադին ինքն էլ կդատապարտեր նրան։ Նրա, քառասունչորսամյա մարդու, գյուղատնտես և տնարար մարդու աչքերն արտասվակալեցին անառիթ արտասուքով։ Դա թավջութակից հարյուր անգամ վատթար էր։

Նիկոլայ Պետրովիչը շարունակում էր ման գալ և սիրտ չէր անում մտնել տուն, իր խաղաղ ու հարմարավոր բույնը, որը իր բոլոր լուսավոր պատուհաններով այնպես հրապուրիչ կերպով նայում էր իրեն։ Նա ուժ չուներ բաժանվելու խավարից, պարտեզից, դեմքի վրա թարմ օդի զգացողությունից և իր թախծից, անհանգստությունից...

Ճանապարհի շրջադարձում նրա առաջն ելավ Պավել Պետրովիչը։

— Այդ ի՞նչ է պատահել քեզ,— հարցրեց նա Նիկոլայ Պետրովիչին.— երեսիդ գույն չկա, կարծես ուրվական լինես։ Դու տկար ես. ինչո՞ւ չես պառկում։

Նիկոլայ Պետրովիչը կարճ խոսքերով պատմեց նրան իր հոգեկան վիճակը և հեռացավ։ Պավել Պետրովիչը հաստավ մինչև պարտեզի վերջը և նույնպես մտքի մեջ ընկավ, նույնպես աչքը դեպի երկինք բարձրացրեց։ Բայց երա գեղեցիկ, սև աչքերի մեջ, բացի աստղերի լույսից, ոչինչ չանդրադարձավ։ Նա ռոմանտիկ չէր ծնվել և նրա՝ պճնասերին հատուկ, ֆրանսիական ձևի մարդասյաց չար ու կրքոտ հոգին չգիտեր անուրջներով տարվել...

— Գիտես ի՞նչ կա,— նույն դիշերը Բազարովն ասում էր Արկադիին։— Մի հոյակապ միտք է հղացել իմ գլխում։ Հայրդ այսօր ասում էր, թե ձեր այն նշանավոր ազգականից նամակ է ստացել։ Հայրդ չի գնալու. եկ ես ու դու գնանք ...-ն, չէ՞ որ այդ պարոնը քեզ էլ է կանչում։ Տեսնում ես, թե ինչպիսի եղանակ է անում այստեղ։ Իսկ մենք մի քիչ

քամուն կտանք մեզ, քաղաքը կտեսնենք։ Մի հինգ-վեց օր ման կգանք ու բավական է։

— Իսկ այնտեղից դու կվերադառնա՞ս այստեղ։

— Ո՛չ, պետք է հորս տեսության գնամ։ Գիտես, որ նա ...-ից երեսուն վերստ հեռավորության վրա է։ Վաղուց է ես նրան չեմ տեսել, մորս՝ նույնպես, պետք է ծերունիներին մխիթարել։ Նրանք լավ մարդիկ են, մանավանդ՝ հայրս— ղվարճալի մարդ է։ Ես ախր նրանց միակուռ որդին եմ։

— Նրանց մոտ երկա՞ր ես մնալու։

— Չեմ կարծում։ Երևի ձանձրալի կլինի։

— Իսկ վերադարձիդ մեզ մոտ չե՞ս մտնի։

— Չգիտեմ... տեսնեմ։ Հը։ Ինչ կասես։ Գնո՞ւմ ենք։

— Ինչու չէ,— ծուլորեն նկատեց Արկադին։

Նա իր սրտում շատ ուրախացավ ընկերոջ արած առաջարկությանը, բայց պարտք համարեց իր այդ զգացմունքը ծածկելու։ Զուր չէր, որ նա նիհիլիստ էր։

Մյուս օրն Արկադին Բազարովի հետ ...-ն գնաց։ Մարֆինոյի երիտասարդությունը նրանց գնալուն ափսոսաց. Դունյաշան մինչև անգամ լաց էլ եղավ... Սակայն ծերունիները ակսեցին ազատ շունչ քաշել։

XII

Այն *** քաղաքը, ուր մեկնեցին երկու ընկերները, գտնվում էր մի երիտասարդ նահանգապետի իշխանության տակ, որը առաջադեմ, բայց միևնույն ժամանակ նաև բռնակալ մարդ էր, մի երևույթ, որը սովորաբար պատահում է Ռուսաստանում։ Նա արդեն իր կառավարության առաջին իսկ տարում ոչ միայն ընդհարվել էր նահանգական ազնվականության պարագլուխ, ձիաբուծարանի տեր և հյուրասեր մարդու՝ գվարդիայի պաշտոնաթող շտաբս-ռոտմիստրի հետ, այլև իր սեփական պաշտոնյաների հետ։ Այդ առթիվ ծագած վեճերն այնպիսի չափերի էին հասել, որ Պետերբուրգում մինիստրությունն անհրաժեշտ գտավ հատուկ հավատարմատար անձ ուղարկել, հանձնարարելով տեղն ու տեղը քննել գործը։ Իշխանության ընտրությունն ընկավ Մատվեյ Իլյիչ Կոլյազինի վրա, այն Կոլյազինի որդու, որի խնամատարության տակ

մի ժամանակ գտնվում էին երիտասարդ Կիրսանովները։ Նա էլ էր «երիտասարդներից», այսինքն՝ նոր էր քառասունն անցել, բայց արդեն պետական բարձր պաշտոնների աչք ուներ և կրծքին երկու կողմից մի-մի աստղ էր կրում։ Թեև այդ աստղերից մեկը, խոստովանանք լինի, օտար պետության մի հասարակ աստղ էր։ Սա էլ, նահանգապետի նման, որին եկել էր դատելու, առաջադիմական էր համարվում և, արդեն նշանավոր դիրք ուներ, բայց նման չէր նշանավոր դիրք ունեցողների մեծամասնության։ Իր մասին նա շատ մեծ համարում ուներ. նրա փառասիրությունը չափ ու սահման չուներ, բայց իրեն պահում էր պարզ, նայում էր խրախուսաբար, ականջ էր դնում ներողամտաբար և այնպես բարեսրտորեն ծիծաղում էր, որ սկզբի շրջանում կարող էր մինչև անգամ «հրաշալի մարդ» թվալ։ Կարևոր դեպքերում նա գիտեր սակայն, ինչպես ասում են, մարդկանց աչքին թոզ փչել։ «Եռանդն անհրաժեշտ բան է»,— ասում էր նա այդպիսի դեպքերում, «l'énergie est la première qualite d'un homme d'état»[1], բայց, չնայելով դրան, նա միշտ խաբվում էր և ամեն մի փոքր ի շատե փորձված պաշտոնյա նրա գլխին։ Մատվեյ Իլյիչը մեծ հարգանքով էր խոսում Գիզոյի մասին, և աշխատում էր բոլորին ու ամեն մեկին հասկացնել, որ ինքը հնապաշտ և հետամնաց բյուրոկրատների թվին չի պատկանում, որ ինքն անուշադիր չի թողնում հասարակական կյանքի ոչ մի նշանավոր երևույթ... Բոլոր այդպիսի խոսքերը շատ լավ ծանոթ էին նրան։ Նա մինչև անգամ հետևում էր, թեպետ և անհոգ վեհությամբ, ժամանակակից գրականության զարգացմանը, այնպես, ինչպես որ հասակավոր մարդը փողոցում՝ հանդիպելով երեխաների խմբին, երբեմն գնում է նրանց հետևից։ Իսկապես Մատվեյ Իլյիչը շատ չէր զանազանվում Ալիքսանդրյան շրջանի այն պետական գործիչներից, որոնք՝ պատրաստվելով Պետերբուրգում ապրող տիկին Սվեչինայի տունը երեկույթի գնալ, առավոտյան Կոնդիլյակից[2] մի-մի էջ էին կարդում։

[1] «Եռանդը պետական մարդու ամենակարևոր հատկությունն է (ֆր.)։

[2] Էտիեն Կոնդիլյակը (1715—1780 թթ.) ֆրանսիացի փիլիսոփա և քաղաքատնտես էր։ Ս. Թ.։

Միայն թե սրա ձևերը ուրիշ էին, ավելի ժամանակակից էին։ Նա ճարպիկ պալատական էր, խիստ խորամանկ մարդ, և ուրիշ ոչինչ. ոչ մի գործից գաղափար չուներ, խելք չուներ, բայց իմանում էր իր սեփական գործերը առաջ տանել. այդ տեղ արդեն ոչ ոք չէր կարող նրան թամքել. իսկ գլխավորն էլ այդ էր։

Մատվեյ Իլյիչը Արկադիին ընդունեց լուսամիտ պաշտոնյային հատուկ բարեհոգությամբ, ավելին ասենք, ծիծաղերես։ Սակայն նա զարմացավ, երբ իմացավ, որ հրավիրված ազգականները գյուղումն էին մնացել։ «Քո հայրիկը միշտ տարօրինակ մարդ է եղել»,— նկատեց նա իր փառահեղ խալաթի փնջերը ձեռքի մեջ վեր-վեր ձգելով, և հանկարծ, դառնալով դեպի մի ծառայողի, որը ամենայն խնամքով կոճկել էր իր նշանազգեստի բոլոր կոճակները, մտախոհ կերպարանքով բացականչեց՝ «ի՞նչ է»։ Երիտասարդը, որի շրջազգեստները երկար ժամանակ լուռ մնալուց արդեն իրար էին կպած, տեղից վեր կացավ և տարակուսանքով իր մեծավորի երեսին նայեց։ Սակայն Մատվեյ Իլյիչը ստորադրյալին տարակուսանքի մեջ գցելուց հետո այլևս նրա վրա ուշադրություն չդարձրեց։ Մեր մեծավորները սովորաբար սիրում են իրենց ստորադրյալներին շփոթեցնել, այդ նպատակին հասնելու համար նրանց գործ դրած միջոցները բավական տարբեր են։ Ի միջի այլոց հետևյալ միջոցը բավական գործածական է, «is quite à favourite»[1], ինչպես ասում են անգլիացիք. մեծավորը հանկարծ դադարում է ամենահասարակ խոսքերն անգամ հասկանալուց, իրեն խուլ է ձևացնում։ Նա, օրինակի համար, կհարցնի, թե ի՞նչ օր է այսօր։

Նրան հարգանքով զեկուցում են՝ «Այսօր ուրբաթ է, Ձերդ մե-ծու-թ-թ-թյուն»։

— Հը՞, ի՞նչ, ի՞նչ է։ Ի՞նչ եք ասում,— լարված կրկնում է բարձրաստիճան պաշտոնյան։

— Այսօր ուրբաթ է, Ձերդ մմ..մ..թյուն։

— Ինչպե՞ս, ի՞նչ, ի՞նչ բան է ուրբաթը։ Ի՞նչ ուրբաթ։

— Ուրբաթ է, Ձերդ ...թ...թթթ...թ...թյուն, շաբաթվա մի օրն է։

— Ի՞նչ է, չինի՞ ուզում ես ինձ դաս տալ։

[1] Ամենասիրված (անգլ.)։

Մատվեյ Իլյիչը, թեև ազատամիտ էր համարվում, բայց և այնպես հո մեծավո՞ր էր։

— Քեզ խորհուրդ եմ տալիս, բարեկամս, որ նահանգապետին այցելության գնաս,— ասաց նա Արկադիին,— հասկանում ես, իհարկե, այս խորհուրդը որ տալիս եմ ոչ թե այն պատճառով է, որ հետևող եմ հին հասկացողություններին, թե անհրաժեշտ է խոնարհության համար գնալ իշխանավորներին գլուխ տալու, այլ պարզապես այն պատճառով, որ նահանգապետը լավ մարդ է. մանավանդ որ հավանորեն ցանկանում էլ ես այստեղի հասարակության հետ ծանոթանալ... Հասկով եմ, հասարակությունից փախչող չես։ Իսկ նա վաղը չէ մյուս օրը մեծ պարահանդես է տալիս։

— Դուք լինելո՞ւ եք այդ պարահանդեսին,— հարցրեց Արկադին։

— Պարահանդեսը նա իմ պատվին է տալիս,— համաբյա ափսոսանքով ասաց Մատվեյ Իլյիչը։— Պարել կարողանո՞ւմ ես։

— Պարում եմ, բայց ոչ լավ։

— Իզուր։ Այստեղ սիրուն կանայք-աղջիկներ կան. համ էլ ամոթ է, որ երիտասարդը պարել չիմանա։ Դարձյալ այս որ ասում եմ՝ ամենևին չկարծես, թե հին հասկացողությունների հետևանք է ասածս. ամենևին չեմ կարծում, թե մարդու խելքը ոտներումն է, բայց բայրոնականությունը ծիծաղելի բան է։ Il a fait son temps[1]։

— Ես բոլորովին էլ բայրոնականությունից չէ, որ...

— Ես քեզ կծանոթացնեմ այստեղի տիկինների հետ, քեզ կառնեմ իմ թևերիս տակ,— ընդհատեց Մատվեյ Իլյիչը և ինքնագոհ ժպտաց։— Չես մրսի, չէ՞։

Ներս մտավ ծառան ու հայտնեց, որ եկել է տրքունական պալատի նախագահը, կնճռոտած շրթունքներով քաղցրահայաց մի ծերուկ, որը բնության սաստիկ սիրահար էր, մանավանդ ամառային օրը, երբ, նրա խոսքերով, «ամեն մի մեղվիկ ամեն մի ծաղկից վերցնում է հարկիկ...»։ Արկադին դուրս եկավ։

Նա Բազարովին գտավ այն պանդոկում, ուր իջևանել էին և երկար համոզում էր նրան, որ նահանգապետի մոտ գնան։

— Ի՞նչ արած,— ասաց վերջապես Բազարովը,— ջուրն ընկնողը անձրևից չի վախենա։ Որ եկել ենք կալվածատերերին տեսնելու, դե արի տեսնենք։

Նահանգապետը երիտասարդներին սիրալիր ընդունելություն ցույց տվեց, բայց նրանց չնստեցրեց ու ինքն էլ չնստեց։ Նա շարունակ շտապում էր ու անհանգիստ դրության մեջ էր. առավոտից հագնում էր նեղ համազգեստն ու կապում էր չափազանց պինդ փողկապը, ոչ կուշտ ուտում էր, ոչ կուշտ խմում, շարունակ կարգադրություններ էր անում։ Նահանգում նրա անունը Բուրդալու էին դրել, ոչ թե ակնարկելով հայտնի ֆրանսիացի քարոզչին, այլ բուրդան[1]։

Նահանգապետը Կիրսանովին և Բազարովին հրավիրեց իր մոտ՝ պարահանդեսի, իսկ երկու րոպե անց նորից կրկնեց հրավերը, ենթադրելով, որ նրանք եղբայրներ են և Կայսարով անվանեց։

Նահանգապետի մոտից դուրս գալով նրանք տուն էին դառնում, որ հանկարծ այդտեղով անցնող կառքի միջից դուրս թռավ կարճ հասակով, սլավյանոֆիլի զգեստով մի մարդ ու «Եվգենի Վասիլիչ» կանչելով վազեց դեպի Բազարովը։

— Հը, այդ դո՞ւք եք, հերը Սիտնիկով,— ասաց Բազարովը՝ շարունակելով քայլել մայթով,— ո՞ր խաչից։

— Երևակայեցեք, բոլորովին պատահաբար,— պատասխանեց սա և, դեպի կառքը շուռ գալով, մի հինգ անգամ ձեռքով արավ ու կանչեց,— հետևներիցս արի, հետևներիցս։— Հայրս այստեղ գործ ուներ,— շարունակեց նա առվի վրայից թռչելով,— ինձ խնդրեց, որ... Այսօր լսեցի եկել եք և արդեն ձեր բնակարանն էլ գնացել եմ... (Հիրավի, երկու բարեկամ իրենց հյուրանոցը վերադառնալուց գտան Սիտնիկովի այցետոմսը, երկու ծայրը ծալած, և վրան գրած նրա անունը՝ մեկ երեսին ֆրանսերեն, իսկ մյուս երեսին՝ սլավոներեն

[1] Դրա ժամանակն անցել է (Ֆրանս.)։

[1] Ռուսերեն բուրդա բառից, որ նշանակում է պղտոր հեղուկ, մրուր։ Լուի Բուրդալու (1632—1704 թթ.) — ֆրանսիացի հայտնի հիզվիտ քարոզիչ։

2 Պարոն (գերմ.)։

ծաղկազարդ տառերով)։ Հուսով եմ, նահանգապետի մոտից չեք գալիս։

— Մի հուսաք, ուղղակի նրա մոտից ենք գալիս։

— Հա, այդ դեպքում ես էլ կգնամ... Եվգենի Վասիլիչ, ծանոթացրեք ինձ ձեր... նրանց հետ...

— Սիտնիկով, Կիրսանով,— մրթմրթաց Բազարովն առանց կանգ առնելու։

— Ինձ համար պատիվ եմ համարում,— շարունակեց Սիտնիկովը, կողե-կող առաջ անցնելով, քաղցր ժպտալով և շտապով հանեց իր չափազանց ընտիր ու վայելուչ ձեռնոցը։

— Խիստ շատ էի լսել... Ես Եվգենի Վասիլիչի վաղուցվա ծանոթը և, կարող եմ ասել, աշակերտն եմ։ Իմ վերածնությունս նրան եմ պարտական։

Արկադին մտիկ տվավ Բազարովի աշակերտին։ Նրա լպստած դեմքի մանր, սակայն հաճելի գծագրության վրա անհանգիստ ու բութ արտահայտություն էր երևում. փոքրիկ, ասես թե դեպի ներս սեղմած աչքերը հառած դիտում էին անհանգիստ, նրա ծիծաղն էլ անհանգիստ էր, կարճ ու չորչոր։

— Կհավատա՞ք,— շարունակեց նա,— առաջին անգամ որ Եվգենի Վասիլևիչը իմ ներկայությամբ ասաց, թե չպետք է հեղինակություն ճանաչել, այնպես ոգևորվեցի... կարծես աչքերս միանգամից բացվեցին։ Ահավասիկ, մտածում էի, վերջապես գտա մի մարդ։ Ի դեպ, Եվգենի Վասիլևիչ, անպատճառ պետք է դուք այստեղ այցելեք մի տիկնոջ, որը կատարելապես կարող է ըմբռնել ձեզ և որի համար ձեր այցելությունը կատարյալ տոն կլինի։ Երևի նրա անունը լսած էլ կլինեք։

— Ի՞նչ կին է,— ակամա հարցրեց Բազարովը։

— Կուկշինա, Eudoxie, Եվդոկիա Կուկշինա։— Մի զարմանալի կին է, êmancipée[1] բառի բուն իմաստով, առաջավոր մի կին է։ Գիտե՞ք ինչ կա։ Եկեք բոլորս էլ միասին գնանք նրա մոտ։ Նրա բնակարանն այստեղից երկու քայլ է։ Այնտեղ էլ կնախաճաշենք։ Հո դեռ չե՞ք նախաճաշել։

[1] Էմանսիպացիայի ենթարկված (ֆր.)—ազատագրված, հին կենցաղային հասկացողություններից ու նախապաշարումներից ազատ կին։

— Ոչ։

— Շատ էլ լավ եք արել։ Նա, գիտեք, ամուսնուց առանձին է ապրում, ոչ ոքից կախում չունի։

— Սիրո՞ւն կին է,— ընդհատեց Բազարովը։

— Ը... չէ, չի կարելի ասել։

— Էլ ո՞ւր եք մեզ քարշ տալիս նրա մոտ։

— Ահ, հանաքչի, հանաքչի... Նա մեզ համար շամպայն գինի կբանա։

— Հա՞։ Իսկույն երևում է գործնական մարդը։ Ի դեպ, ձեր հայրը դարձյալ կապալի գործերո՞վ է զբաղվում։

— Այո,— շտապով պատասխանեց Սիտնիկովն ու ճըղճըղալով ծիծաղեց։— Հը՞։ Ի՞նչ եք ասում։ Գնո՞ւմ ենք։

— Չգիտեմ, ճշմարիտ։

— Դու ուզում էիր մարդ տեսնել, գնա էլի,— կիսաձայն նկատեց Արկադին։

— Հապա դո՞ւք, պ. Կիրսանով,— վրա բերեց Սիտնիկովը։— Դուք էլ համեցեք, առանց ձեզ չի կարելի։

— Ախր ինչպե՞ս կարելի է հանկարծ բոլորս միասին վրա տանք։

— Վնաս չունի, Կուկշինան պատվական կին է։

— Շամպայն գինի կլինի՞,— հարցրեց Բազարովը։

— Երեք շիշ կլինի,— բացականչեց Սիտնիկովը։— Դա ես երաշխավորում եմ։

— Ինչո՞վ։

— Սեփական գլխովս։

— Ավելի լավ կլինի՝ հոգդ քսակով։ Սակայն եկեք գնանք։

XIII

Մոսկվայի տների ձևով շինած փոքրիկ աղնվականական տնակը, որտեղ ապրում էր Ավդոտյա Նիկիտիշնա (կամ Եվդոքսիա) Կուկշինան, գտնվում էր*** քաղաքի նոր այրված փողոցներից մեկում։ Հայտնի է, որ Ռուսաստանի նահանգական քաղաքները հինգ տարին մի անգամ այրվում են։ Դռանը ծուռ խփած այցետոմսի վերևից երևում էր զանգակի կոթը, իսկ նախասենյակում նրանց դիմավորեց գլխաբաց

ծածկած մի կին, որ ոչ աղախնի նման էր, ոչ էլ ընկերակցուհու—հայտնի նշանը տանտիկնոջ առաջադիմական ձրգտումների։ Սիտնիկովը հարցրեց, թե Ավդոտյա Նիկիտիշնան տա՞ն է։

— Այդ դո՞ւք եք, Victor,— կողքի սենյակից լսվեց մի բարակ ձայն։— Ներս մտեք։

Գլխազարդով կինն իսկույն անհետացավ։

— Մենակ չեմ,— ասաց Սիտնիկովը ճարպկությամբ հանելով վրայի վենգերկան, որի տակից անթև բաճկոնի կամ երկար վերարկվի պես մի բան երևաց, և Արկադիի ու Բազարովի վրա համարձակ հայացք ձգեց։

— Միևնույն է,— պատասխանեց ձայնը։ —Entrez[1]։

Երիտասարդները ներս մտան։ Նրանց մտած սենյակն ավելի առանձնասենյակի էր նմանում, քան թե ընդունարանի։ Թղթերը, նամակները, հաստ ամսագրերի համարները, որոնց թերթերը մեծ մասամբ կտրված չէին, թափթփված էին փոշոտ սեղանի վրա. ամեն տեղ երևում էին քաշած ծխախոտի սպիտակ մնացորդները։ Կաշվե գահավորակի վրա թեք էր ընկած դեռևս նորատի, շիկահեր, մազերը մի փոքր շաղ եկած մի կին, մետաքսյա, ոչ այնքան թարմ հագուստով, կարճիկ բազուկներին խոշոր ապարանջաններ, գլխին հյուսկեն ծածկոց ձգած։ Նա վեր կացավ գահավորակի վրայից և անփույթ կերպով ուսերին քաշելով սպիտակ աքիսի մորթուց կարած, բայց արդեն դեղնած մուշտակը, ծուլծուլ ասաց.

— Բարև, Victor,— և սեղմեց Սիտնիկովի ձեռքը։

— Բազարով, Կիրսանով,— Բազարովին նմանելով կըտրուկ ասաց Սիտնիկովը։

— Համեցեք,— արտասանեց Կուկշինան, և Բազարովի վրա սևեռելով իր կլոր աչքերը, որոնց արանքում կարծես որբացած մնացել էր քիթը՝ փոքրիկ, կարմիր, ծայրը դեպի վեր ցցած, ավելացրեց,— ես ձեզ ճանաչում եմ,— և նրա ձեռքն էլ սեղմեց։

Բազարովը նոթերը կիտեց։ Այդ էմանսիպացված կնոջ փոքրիկ ու տգեղ կերպարանքում որևէ այլանդակ բան չկար.

[1] Մտեք։

մթայն դեմքի արտահայտությունը անհաճո ապավորություն էր գործում տեսնողի վրա։ Մարդ ակամա ուզում էր հարցնել նրան. «Ի՞նչ է, քաղցա՞ծ ես։ Կամ ձանձրանո՞ւմ ես։ Կամ քաշվո՞ւմ ես։ Ինչո՞ւ ես լարված մնացել։» Սիտնիկովի նմանը նրա սիրտն էլ շաբաթնակ ասես մի բան կրծում էր։ Նա խոսում ու շարժվում էր շատ ազատ, բայց միևնույն ժամանակ՝ անհամարձակ։ Հավանորեն նա ինքն իրեն մի բարեհոգի ու պարզ էակ էր համարում, մինչդեռ ինչ ուզում է ասեր, միշտ այնպես էր թվում, թե հենց այդ բանն է, որ նա չէր ուզում անել. նրա ամեն արածն էլ, ինչպես երեխանքն են ասում, սաքքովի էր գալիս, այսինքն պարզ, բնական չէր երևում։

— Այո՛, այո՛, Բազարով, ես ձեզ գիտեմ,— կրկնեց նա (գավառական և Մոսկվայի շատ կանանց նման նա էլ սովորություն էր արել հենց ծանոթություն առաջին օրից տղամարդկանց ազգանունով կոչել)։— Սիգար կուզե՞ք։

— Սիգարը իր հերթին,— վրա բերեց Սիտնիկովը, որ արդեն վեր էր ընկել բազկաթոռի վրա ու ոտները վերև բարձրացրել.— մեզ նախաճաշ տվեք. սատիկ քաղցած ենք։ Ասացեք, որ մի շիշ էլ շամպայն հանեն։

— Փափկամոլ,— ասաց Եվդոքսիան և ծիծաղեց։ Սիծաղելիս ատամների վրա երևում էին նրա վերևի լինդերը։

— Ես կյանքի հարմարությունները սիրում եմ,— իր խոսքին կարևորություն տալով, արտասանեց Սիտնիկովը։— Այդ բանն իմ ազատամիտ լինելուն արգելք չէ։

— Ցե՛, արգելք է, արգելք,— բացականչեց Եվդոքսիան, և ոտաուհիներից մեկին պատվիրեց, որ նախաճաշի ու մեկ էլ շամպայն գինու պատրաստություն տեսնի։— Դո՞ւք ինչ կարծիքի եք,— ասաց նա Բազարովին դիմելով։— Հավատացած եմ, ինձ համաձարձիք կլինեք։

— Կարծում եմ՝ ոչ,— պատասխանեց Բազարովը։— Մի կտոր միսը լավ է, քան մի պատառ հացը, նույնիսկ քիմիական տեսակետից։

— Իսկ դուք պարապո՞ւմ եք քիմիայով։ Այդ իմ ամենասիրած բանն է։ Մինչև անգամ ես ինքս մի մանրիկ եմ հնարել։

— Մանրի՞կ։ Դո՞ւք։

— Այո, ես։ Եվ գիտե՞ք ինչ նպատակով. տիկնիկների գլուխներ շինելու նպատակով, որպեսզի չկոտրվեն։ Ախր ես էլ գործնական մարդ եմ։ Բայց դեռ պատրաստ չէ։ Հարկավոր է Լիբիխի գրվածքը կարդալ։ Ի դեպ, «Մոսկովսկիե վեդոմոստիի» մեջ կարդացե՞լ եք կանանց աշխատանքի մասին Կիսլյակովի գրած հոդվածը։ Խնդրեմ, կարդացեք։ Կանանց խնդիրը հո ձեզ հետաքրքրո՞ւմ է։ Նույնպես և ուսումնարաններ՝ը։ Ինչո՞վ է պարապում ձեր բարեկամը։ Ի՞նչ է նրա անունը։

Տիկին Կուկշինան իրար հետևից քնքշացած անհոգությամբ թափում էր իր հարցերը, չսպասելով պատասխանի։ Երես առած երեխաները իրենց դայակների հետ այդպես են խոսում։

— Ինձ կանչում են Արկադի Նիկոլայիչ Կիրսանով,— ասաց Արկադին,— ես ոչնչով էլ չեմ պարապում։

Եվդոքսիան ծիծաղեց։

— Այդ լավ բան է՞։ Ինչ է, դուք չե՞ք ծխում։ Վիկտոր։ գիտե՞ք, ձեզ վրա բարկացած եմ։

— Ինչի՞ համար։

— Ասում են, թե դուք դարձյալ սկսել եք Ժորժ Սանդին գովաբանել։ Նա մի հետամնաց կին է և ուրիշ ոչինչ։ Ինչպե՞ս կարելի է նրան համեմատել Էմերսոնի հետ։ Ոչ մի գաղափար չի արտահայտում ոչ դաստիարակության մասին, ոչ էլ մարդակազմության, ոչ մի բանի մասին։ Հավատացած եմ, նա սաղմնաբանության անունն անգամ չի լսել, իսկ մեր ժամանակում—առանց դրան կարելի՞ բան է։ (Եվդոքսիան մինչև անգամ ձեռներով զարմացական շարժում արավ)։ Ախ, ինչ հրաշալի հոդված է գրել Ելիսեևին այդ մասին։ Հանճարեղ պարոն է։ (Եվդոքսիան շարունակ «մարդ» ասելու տեղ «պարոն» էր ասում)։ Բազարով, նստեցեք կողքիս գահավորակի վրա։ Գուցե չգիտեք, ես սաստիկ վախենում եմ ձեզանից։

— Ինչո՞ւ։ Հետաքրքրական է իմանալ։

— Դուք վտանգավոր պարոն եք. խիստ քննադատ եք։ Ախ, աստված իմ, մինչև անգամ ծիծաղս գալիս է, այնպես եմ խոսում, կարծես հետամնաց կալվածատեր կանանցից լինեմ։ Ասենք, հենց կալվածատեր էլ եմ։ Կալվածքս կառավարում եմ ինքս և, երևակայեցեք, իմ գյուղապետ Երոֆեյը զարմանալի տիպար է, ճիշտ և ճիշտ Կուպերի Պատֆայնդերն է, մի առանձին բնական բան կա նրանում։ Ես վերջնականապես բնակություն եմ հաստատել այստեղ։ Անտանելի քաղաք է, չէ՞։ Բայց ի՞նչ արած։

— Քաղաք է քաղաքի պես,— անտարբերությամբ նկատեց Բազարովը։

— Բայց և այնպես այստեղ մանր-մունր շահեր են միմիայն, և այդ է սարսափելին։ Առաջներում ձմեռները Մոսկվայում էի ապրում... բայց այժմ այնտեղ ապրում է իմ կողակիցը, մսիո Կուկշինը։ Ասենք Մոսկվան էլ այժմ... չգիտեմ ճշմարիտ, նույնպես նախկինը չէ։ Ուզում եմ արտասահման գնալ. անցյալ տարի արդեն բոլորովին պատրաստվել էի ճանապարհ ընկնելու։

— Իհարկե, Փարի՞զ,— հարցրեց Բազարովը։

— Փարիզ և Հայդելբերգ։

— Ինչո՞ւ Հայդելբերգ։

— Ախր Բունզենն այնտեղ է։

Բազարովը ոչ մի բան չգտավ ասելու։

— Pierre Սապոժնիկովը... ճանաչո՞ւմ եք։

— Ոչ, չեմ ճանաչում։

— Ինչ եք ասում. Pierre Սապոժնիկովը... այն, որ շարունակ լինում է Լիդիա Խոստատովայի մոտ։

— Ես այդ տիկնոջն էլ չեմ ճանաչում։

— Այդ պարոնն ահա հանձն է առել ինձ ուղեկցելու։ Փառք աստուծո, ես ազատ եմ, զավակներ չունեմ... Այս ի՞նչ էր ասացի՝ փառք աստուծո։ Է՛հ, ասենք, այդ միևնույն է։

Եվդոքսիան ծխախոտից դեղնած իր մատներով ոլորեց, գլանակ շինեց, լեզվով թուղթը թրջեց, ծծեց ու կպցրեց։ Ներս մտավ աղախինը ափսեն ձեռին։

— Ահա և նախաճաշը։ Ուզում եք ուտե՞լ։ Վիկտոր, չիշը բաց արեք. այդ ձեր գծով է։

— Այո՛, այո, իմ գծով է,— քրթմնջաց Սիտնիկովը և դարձյալ ճղճղալով ծիծաղեց։

— Այստեղ սիրուն կանայք կա՞ն,— հարցրեց Բազարովը երրորդ բաժակը խմելիս։

— Կան,— պատասխանեց Եվդոքսիան,— բայց բոլորն էլ դատարկամիտ բաներ են։ Օրինակ mon amie Օդինցովան վատ չէ։ Միայն ափսոս, որ մի քիչ վարքը... Ասենք, այդ էլ ոչինչ, բայց ոչ մի ազատ հայացք, ոչ մի ընդարձակություն, ոչ մի... այնպիսի բան։ Պետք է ամբողջ դաստիարակության սիստեմը փոխել։ Ես այդ մասին արդեն մտածել եմ. մեր կանայք շատ վատ են դաստիարակված։

— Նրանց հետ դուք ոչինչ չեք կարող անել,— վրա բերեց Սիտնիկովը։— Պետք է նրանց արհամարհել, և ես արհամարհում եմ նրանց, լիովին ու կատարելապես։ (Արհամարհելու հնարավորությունն ու իր արհամարհանքը արտահայտելը Սիտնիկովի ամենահաճելի զգացողությունն էր. նա մանավանդ հարձակվում էր կանանց վրա, առանց կասկածելու, որ մի քանի ամսից հետո ինքը պետք է իր կնոջ առաջ սողար լոկ այն պատճառով միայն, որ նա ի ծնե իշխանուհի Դուրդոլեոսովան էր)։ Նրանցից և ոչ մեկն էլ չարժե, որպեսզի մենք, լուրջ տղամարդիկս, նրանց մասին խոսենք։

— Եվ նրանց բնավ հարկավոր էլ չէ, որ մեր զրույցները հասկանան,— ասաց Բազարովը։

— Այդ ո՞ւմ մասին եք խոսում,— մեջ մտավ Եվդոքսիան։

— Սիրուն կանանց մասին։

— Ի՞նչ։ Ուրեմն դուք Գրուդոնին համակարծի՞ք եք։

Բազարովն ամբարտավանությամբ շտկվեց։

— Ես ոչ ոքի համակարծիք չեմ։ Ես իմ կարծիքներն ունեմ։

— Կորչի հեղինակությունը,— գոռաց Սիտնիկովն ուրախացած, որ առիթ ներկայացավ խիստ արտահայտելու իր կարծիքն այն մարդու ներկայությամբ, որի առաջ նա այնպես ստրկանում էր։

— Բայց ինքը Մակոլեյը[1],— սկսեց սկսել Կուկշինան...

— Կորչի Մակոլեյը,— որոտաց Սիտնիկովը։— Դուք պաշտպանո՞ւմ եք այդ կանանց։

— Այդ կանանց չէ, այլ կանանց իրավունքները, որոնց ես երդվել եմ մինչև արյանս վերջին կաթիլը պաշտպանել։

1 Թոմաս Բաբինգտոն Մակոլեյ (1800—1859)—անգլիացի պատմագրաններ։

— Կորչի,— բայց Սիտնիկովն այստեղ կանգ առավ,— ես այդ չեմ ժխտում,— ասաց նա։

— Ոչ, ես տեսնում եմ, որ սլավյանոֆիլ եք։

— Ոչ, ես սլավյանոֆիլ չեմ, թեպետ, իհարկե...

— Ոչ, ոչ, ոչ։ Դուք սլավյանոֆիլ եք։ Դուք Դոմոստրոյի[1] հետևող եք։ Ձեզ սազ կգա ձեռքի մտրակ պահել։

— Մտրակը վատ բան չէ,— նկատեց Բազարովը,— բայց ահավասիկ մենք հասանք վերջին կաթիլին...

— Ի՞նչ բանի,— ընդհատեց Եվդոքսիան։

— Շամպայնի, ամենահարգելի Ավդոտյա Նիկիտիշնա, շամպայնի և ոչ ձեր արյան։

— Ես չեմ կարող անտարբեր լսել, երբ հարձակվում են կանանց վրա,— շարունակեց Եվդոքսիան։— Այդ սարսափելի, սարսափելի է։ Փոխանակ նրանց վրա հարձակվելու, ավելի լավ է Միշելի De l'amour[2] գիրքը կարդացեք։ Հրաշալի բան է։ Պարոններ, եկեք սիրո մասին խոսենք,— ավելացրեց Եվդոքսիան, ձեռքը թալուկ կերպով գահավորակի ճմռթված բարձի վրա ձգելով։

Հանկարծական լռություն տիրեց։

— Ոչ, ի՞նչ հարկ կա սիրո մասին խոսել,— ասաց Բազարովը,— այ, դուք հիշեցեք Օդինցովայի մասին... Կարծեմ այսպես ասացիք։ Ո՞վ է այդ տիկինը։

— Զքնաղ, չքնաղ արարած,— ճչաց Սիտնիկովը։— Ես ձեզ կծանոթացնեմ։ Շատ խելոք, հարուստ, այրի կին։ Դրժբախտաբար բավարար չափով զարգացում չունի—լավ կլիներ, որ մեր Եվդոքսիայի հետ մոտիկից ծանոթ լիներ։ Ձեր կենացը, Եվդոքսի, եկեք բաժակներս չրխկացնենք։ «Et toc, et toc, et tin-tin-tin. Et toc, et toc, et tin-tin-tin»[3].

— Վիկտոր, դուք չարաճճի եք։

Նախաճաշը երկար շարունակվեց։ Շամպայնի առաջին շշին հաջորդեց երկրորդը, երրորդը և մինչև անգամ չորրորդը... Եվդոքսիան անդադրում դատարկաբանում էր։ Սիտնի-

1 «Դոմոստրոյը» Մոսկվայի մի քահանայի՝ Սիլվեստրի (1560 թ.) շարադրված գիրքն է, որի մեջ կրոնական բնույթի խորհուրդներ ու խրատներ կան ընտանիքի և այլ հարցերի մասին։

2 «Սիրո մասին» (ֆրանս.)։

3 Զայնանմանություն։

կովը նրան արձագանքում էր։ Երկար ժամանակ խոսում էին, թե ի՞նչ բան է ամուսնությունը՝ նախապաշարմո՞ւնք թե հանցանք, և մարդիկ ինչպես են ծնվում՝ միատեսա՞կ թե ոչ։ և իսկապես ինչո՞ւմն է անհատականությունը։ Վերջապես բանն այնտեղ հասավ, որ Եվդոքսիան, խմած գինուց բոլորովին կարմրած, և տափակ եղունգներով խանգարված դաշնամուրի ստեղները բախելով սկսեց խռպոտ ձայնով երգել նախ՝ գնչուական երգեր, հետո էլ Սեյմուր-Շիֆֆի «Նիրհում և քնկոտ Գրանադան» ռոմանսը, իսկ Սիտնիկովը գլխին վզնոց փաթաթած կատարում էր թալկահար սիրեկանի դերը, հետևյալ խոսքերն արտասանելով.

Եվ քու շրթունքդ իմ շրթանց հետ
Ի չերմ համբույր մի դրոշմվին։

Վերջապես Արկադին չհամբերեց։ «Պարոններ այս արդեն Բեդլամի[1] նման մի բան դարձավ»,— նկատեց նա բարձր ձայնով։ Բազարովը, որ երբեմն միայն խոսակցության միջոցին մեկ-մեկ ծաղրական խոսքեր էր բաց թողնում և ավելի շամպայնով էր զբաղված, բարձրաձայն հորանջեց, վեր կացավ և, առանց տանտիկնոջը մնաս բարև ասելու, Արկադիի հետ միասին դուրս եկավ տնից։ Սիտնիկովն էլ նրանց հետևից դուրս թռավ։

— Ինչպե՞ս է, հը՞, ինչպե՞ս է,— ասում էր նա շողոքորթաբար մեկ աջ և մեկ ձախ վազելով,— ասացի ախր, որ զարմանալի անձնավորություն է։ Ահա թե ինչպիսի կանայք են մեզ պետք։ Սա իր տեսակի մեջ բարոյական, վեհ երևույթ է։

— Իսկ քո հոր այն հաստատությունն է՞լ բարոյական երևույթ է,— ասաց Բազարովը, մատով պանդոկը ցույց տալով, որի մոտից այդ միջոցին անցնում էին։

Սիտնիկովը դարձյալ ճչալով ծիծաղեց։ Նա սաստիկ ամաչում էր իր ծագումից և չէր իմանում, վիրավորվե՞ր թե ուրախանար Բազարովի այդ անսպասելի դու-ով խոսելուց։

1 Բեդլամ—հոչակավոր գժանոց Լոնդոնում։

XIV

Մի քանի օր հետո նահանգապետի պարահանդեսը կայացավ։ Մատվեյ Իլյիչը իսկապես «հանդեսի հերոսն էր»։ Նահանգական պարագլուխն ամենքին ու ամեն մեկին հայտնում էր, թե եկել է միմիայն ի հարգանս Մատվեյ Իլյիչի, իսկ նահանգապետը մինչև անգամ պարահանդեսում, մինչև անգամ անշարժ կանգնած ժամանակ շարունակում էր «կարգադրություններ անել»։ Մատվեյ Իլյիչի վարմունքի քնքշությունը կարող էր հավասարվել միայն նրա վեհությանը։ Նա շոյում էր ամենքին, ոմանց՝ նողկանքի արտահայտությամբ, իսկ ոմանց էլ հարգանքի արտահայտությամբ, «en vrai chevalier français[1] քաղցրաբանում էր կանանց առաջ և շարունակ խոշոր, զիլ ու առանձնակի ծիծաղով ծիծաղում, ինչպես վայել էր բարձրաստիճան պաշտոնյային։ Նա թափ տվեց Արկադիի մեջքն ու բարձր ձայնով նրան իր «աղգականն» անվանեց։ Բազարովին, որը մի հին ֆրակ էր հագել, արժանացրեց մի մտաղբաղ, բայց ներողամիտ հայացքի, հաբևանցիորեն, այտի վրայով, նայելով նրա վրա, և արձակեց մի անորոշ, բայց բարեհամբույր մռնչոց, որի միջից կարելի էր որոշել միայն «ես... շշտ...»։ Նա մատը մեկնեց Սիտնիկովին ու երեսին ժպտաց, բայց միայն գլուխը շուռ տված։ Մինչև անգամ իրեն, Կուկշինային էլ, որ պարահանդես էր եկել առանց կրինոլինի և կեղտոտ ձեռնոցներով, բայց դրախտահավ մազերում, մինչև անգամ Կուկշինային ասաց. «enchanté»[2]։ Շատ մեծ բազմություն կար և երիտասարդների պակասություն չկար. ոչ-զինվորականներն ավելի պատերի տակ էին խռնված, մինչդեռ զինվորականները եռանդագին պարում էին, մանավանդ նրանցից մեկը, որ վեց շաբաթվա չափ Փարիզում մնալով, սովորել էր մի քանի խիզախ բացականչություններ, ինչպես «zut», «Ah, fichtrrrre», «pst, pst, mon bibi» և այլն։ Նա այդ բացականչություններն արտասանում էր կատարելությամբ, իսկը փարիզյան շիկով, և միևնույն ժամանակ ասում էր՝ «si j'aurais» փոխանակ

1 Ինչպես ճշմարիտ ֆրանսիացի ասպետ (ֆրանս.)։
2 Հիացած եմ (ֆրանս.)։

ասելու «si j'avais», «absolument»[1], «անշուշտ» մտքով, մի խոսքով, արտահայտվում էր այն վելիկոռուսա-ֆրանսիական բարբառով, որի վրա այնքան ծիծաղում են ֆրանսիացիները, երբ նրանք մեզ հարկ չեն զգում հավատացնելու, թե մենք խոսում ենք իրենց լեզվով, հրեշտակների պես «comme des anges»[2]։

Ինչպես գիտենք, Արկադին լավ չէր պարում, իսկ Բազարովը ամենևին չէր պարում. նրանք երկուսով քաշվել էին մի անկյուն։ Նրանց միացավ նաև Սիտնիկովը։ Նա, իր դեմքին արհամարհական ծաղրի արտահայտություն տալով ու թունալից նկատողություններ շաղ տալով, հանդգնաբար նայում էր շուրջը և ըստ երևույթին իսկական հաճույք էր զգում։ Հանկարծ նրա դեմքի արտահայտությունը փոխվեց և, Արկադիի կողմը դառնալով, ասես թե շփոթված, ասաց. «Օդինցովան եկավ»։

Արկադին շուռ եկավ և տեսավ սև զգեստով մի բարձրահասակ կին, որ կանգնել էր դահլիճի դռան մեջ։ Կնոջ կեցվածքի արժանավորությունը ապշեցրեց նրան։ Նրա հոլանի թևերը գեղեցիկ կերպով ընկած էին վայելչակազմ իրանի երկարությամբ. ֆուքսիայի ոստերը փայլուն մազերի վրայով գեղեցիկ փռվել էին նրա ողորկ ուսերի վրա. փոքրինչ ցածր սպիտակ ճակատի տակից խաղաղ ու խելոք, արդարև խաղաղ, և ոչ մտախոհ, նայում էին պայծառ աչքերը, և շրթունքները ժպտում էին հաղիվ նկատելի ժպիտով։ Մի տեսակ փաղաքուշ ու մեղմ ուժ էր բուրում նրա դեմքը։

— Ծանո՞թ եք հետը,— հարցրեց Արկադին Սիտնիկովին։

— Մոտ ծանոթ եմ։ Ուզո՞ւմ եք ծանոթացնեմ։

— Ինչու չէ... Միայն այս կադրիլից հետո։

Օդինցովայի վրա Բազարովն էլ ուշադրություն դարձրեց։

— Սա ի՞նչ կերպարանք է,— ասաց նա։— Մյուս կանանց նման չէ։

Կադրիլը վերջանալուց հետո Սիտնիկովը Արկադիին տարավ Օդինցովայի մոտ. բայց դժվար թե նա մոտիկ ծանոթ

1 Բոլորովին (ֆրանս.)։

2 Ինչպես հրեշտակներ։

եղած լիներ Օդինցովային, որովհետև ինքն էլ շփոթվեց խոսելու միջոցին։ Օդինցովան նայեց նրա վրա մի քիչ տարաձայնությամբ։ Սակայն երբ լսեց Արկադիի ազգանունը՝ Օդինցովայի դեմքն ուրախ արտահայտություն ստացավ։ Նա հարցրեց, Նիկոլայ Պետրովիչի որդին չէ՞ արդյոք։

— Այո, նրա որդին եմ։

— Ձեր հորը երկու անգամ եմ տեսել, բայց շատ եմ լսել նրա մասին,— շարունակեց տիկինը,— շատ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալուս։

Այդ միջոցին մի ադյուտանտ սրարշավ մոտեցավ նրան ու կադրիլի հրավիրեց։ Նա համաձայնեց։

— Մի՞թե պարում եք,— հարգանքով հարցրեց Արկադին։

— Այո։ Ինչո՞ւ եք կարծում, թե ես չեմ պարում։ Կամ գուցե ձեզ թվում է, որ ես շատ եմ պառավ։

— Քավ լիցի... ինչպես կարելի է։ Դե որ այդպես է, թույլ տվեք ձեզ մազուրկայի հրավիրել։

Օդինցովան զիջողաբար ժպտաց։

— Համեցեք,— ասաց նա և նայեց Արկադիին չէ թե բարձրից, այլ ուղղակի այնպես, ինչպես որ ամուսնացած քույրերն են նայում իրենց շատ փոքրիկ եղբայրների վրա։

Օդինցովան փոքր-ինչ մեծ էր Արկադիից, քսանինների մեջն էր, բայց նրա ներկայությամբ Արկադին իրեն զգում էր դպրոցական, ուսանողիկ, կարծես թե նրանց մեջ տարիքի տարբերությունը անհամեմատ ավելի լիներ։ Մատվեյ Իլյիչը փառահեղ կերպարանքով ու շողոմ խոսքերով մոտեցավ նրան։ Արկադին մի կողմ քաշվեց, բայց շարունակում էր դիտել նրան։ Նա ամբողջ կադրիլի միջոցին ևս աչքը նրանից չէր հեռացնում։ Օդինցովան միատեսակ ազատությամբ էր խոսում թե իր պարակցի և թե բարձրաստիճան պաշտոնյայի հետ. նա գլուխն ու աչքերը ծանրությամբ պտտեց և մի երկու անգամ հանդարտ կերպով ծիծաղեց։ Նրա քիթը, ինչպես սովորաբար համարյա բոլոր ռուսներինը, մի քիչ հաստ էր, և մաշկի գույնն էլ այնքան մաքուր չէր. բայց և այնպես Արկադին վճռեց, որ նա իր կյանքում այդպիսի սիրուն կին երբեք չէր տեսել։ Օդինցովայի ձայնը Արկադիի ականջից չէր հեռանում. ասես թե այդ կնոջ շորի

ծալքերն անգամ ուրիշ կանանց շորի ծալքերից տարբեր էին նստում, ավելի վայելչատես ու լայն, և նրա մարմնի շարժումներն էլ առանձնապես սահուն էին և միևնույն ժամանակ բնական։

Երբ մազուրկայի առաջին հնչյունների հետ Արկադին իր դամայի մոտ նստեց, նրան տիրեց ամաչկոտությունը, ուզում էր նրա հետ խոսել և միմիայն ձեռներով մազերն էր շփում, ոչ մի բառ չէր գտնում ասելու։ Բայց այդ երկար չտևեց. Օդինցովայի խաղաղությունը համակեց և նրան, քառորդ ժամ չանցած նա արդեն ազատորեն պատմում էր իր հոր, հորեղբոր Պետերբուրգում և գյուղում անցկացրած կյանքի մասին։ Օդինցովան քաղաքավարությամբ ականջ էր դնում նրա պատմածներին, հովհարը թեթևակի բաց ու խուփ անելով։ Արկադիի շատախոսությունն ընդհատվում էր, երբ Օդինցովային պարի էին հրավիրում։ Սիտնիկովը, ի միջի այլոց, նրան երկու անգամ հրավիրեց։ Օդինցովան վերադառնում էր և նորից տեղը նստում, ձեռքն առնում հովհարը. բայց նրա կուրծքն անգամ սովորականից ավելի արագ չէր շարժվում։ Իսկ Արկադին նորից էր վերսկսում իր շատախոսելը, և կատարելապես երջանիկ զգալով իրեն, որ մոտիկ է Օդինցովային, որ խոսում է հետը նայելով նրա աչքերին, նրա գեղանի ճակատին, նրա ամբողջ սիրուն, վեհ և խելացի դեմքին։ Օդինցովան ինքը քիչ էր խոսում, բայց նրա խոսքերից երևում էր կյանքի ճանաչողությունը։ Արկադին նրա մի քանի ուրիշ դիտողություններից եզրակացրեց, որ այս նորատի կինն արդեն շատ բան է զգացել և շատ բան մտածել...

— Ասացեք, ո՞ւմ հետ էիք կանգնած,— հարցրեց Օդինցովան,— երբ Սիտնիկովը ձեզ բերեց ինձ ներկայացնելու։

— Դուք նրան նկատեցի՞ք,— իր հերթին հարցրեց Արկադին։— Ինչ երևելի դեմք ունի, այնպես չէ՞։ Դա իմ ընկերն է, Բազարով ազգանունով։

Արկադին սկսեց խոսել «իր բարեկամի» մասին։ Նա այնքան մանրամասն, այնպիսի ոգևորությամբ էր նրա մասին խոսում, որ Օդինցովան շուռ եկավ և ուշադրությամբ նայեց Բազարովի վրա։ Մինչդեռ՝ մազուրկան մոտենում էր իր ավարտին։ Արկադին ափսոսում էր, որ պիտի բաժանվի իր դամայից. նա մոտ մի ժամ շատ լավ ժամանակ անցկացրեց նրա հետ։ Ճիշտ է, նա այդ բոլոր ժամանակը շարունակ զգում էր, որ Օդինցովան դեպի իրեն կարծես թե ներողամտաբար էր վերաբերվում, որ ինքը որպես թե պարտավոր էր շնորհապարտ լինել նրան... բայց երիտասարդ սրտերը դրանից չեն նեղվում։

Երաժշտությունը դադարեց։

— Merci,— ասաց Օդինցովան տեղից վեր կենալով։— Դուք խոստացաք ինձ մոտ այցելության գալ. հետներդ բերեք նաև ձեր ընկերոջը։ Շատ հետաքրքրական կլինի ինձ համար տեսնելու մի մարդ, որը համարձակություն ունի ոչ մի բանի չհավատալ։

Նահանգապետը մոտեցավ Օդինցովային, հայտնեց, որ ընթրիքը պատրաստ է և մտազբաղ դեմքով տվեց իր թևը։ Օդինցովան գնալիս շուռ եկավ, որպեսզի մի վերջին անգամ էլ ժպտա, Արկադիին գլխով անի։ Արկադին խոնարհ գլուխ տվեց, նրա հետևից նայեց (որքա՜ն վայելչակազմ թվաց նրա իրանը, որ զեղված էր սև մետաքսի մոխրավուն փայլով) և մտածելով՝ «այս րոպեիս նա արդեն մոռացավ իմ գոյության մասին», զգաց իր ներսում մի տեսակ վայելուչ հեզություն։

— Հը՞,— հարցրեց Բազարովը Արկադիին, հենց որ նա իր մոտ, անկյունը վերադարձավ։— Բավականություն ստացա՞ր։ Այս րոպեին ինձ մի պարոն ասաց, որ այդ տիկինը օյ-օյ-օյ. բայց այդ պարոնը, թվում է ինձ, որ տխմարի մեկն է։ Լավ, իսկ, քո կարծիքով, ինչպե՞ս է նա, ճիշտ օյ-օյ-օ՞յ է։

— Ես այդ արտահայտությունը չեմ հասկանում,— պատասխանեց Արկադին։

— Այ քեզ բան։ Ինչ անմեղն ես եղել։

— Այդ դեպքում ես չեմ հասկանում քո պարոնին։ Անկասկած, Օդինցովան խիստ քաղցրաբարո կին է, բայց այնպես սառն ու խիստ է պահում իրեն, որ...

— Վախեցիր էն ջրից... գիտես էլի առակը,— վրա բերեց Բազարովը։— Ասում ես սառն էր։ Հենց համն էլ դրա մեջն է։ Պաղպաղակ հո սիրո՞ւմ ես։

— Դուցե,— քթի տակ թոթովեց Արկադին,— այդ մասին

ես չեմ կարող բան ասել։ Ուզում է հետդ ծանոթանալ և խնդրեց, որ գնալիս քեզ էլ հետս տանեմ։

— Երևակայում եմ, թե իմ մասին ինչեր ասած կլինեն Ասենք շատ էլ լավ ես արել։ Տար ինձ էլ։ Ով էլ որ լինի նա, սոսկ նահանգական մի էգ առյուծ թե Կուկշինայի նման մի «էմանցիպե», այնպիսի ուսեր ունի, ինչպիսիք վաղուց չեմ տեսել։

Բազարովի ցինիկությունը Արկադիի սրտին դիպավ, բայց, ինչպես այդ հաճախ պատահում է, նա իր բարեկամին հանդիմանեց ոչ այն բանի համար, որը իրեն դուր չէր եկել...

— Ինչո՞ւ չես ընդունում, որ կանանց մեջ էլ մտքի ազատություն լինի,— ասաց նա կիսաձայն։

— Նրա համար, եղբայրս, որ ինչքան ես եմ նկատել, կանանց մեջ միմիայն անճոռնիներն են ազատ մտածում։

Խոսակցությունը հենց այստեղ էլ դադարեց։ Երկու երիտասարդներն ընթրիքից անմիջապես հետո տուն դարձան։ Կուկշինան նյարդոտ զայրույթով, բայց և վեհերկոտ ծիծաղեց նրանց հետևից։ Նրա ինքնասիրությունը խորը վիրավորվել էր նրանից, որ ոչ մեկը և ոչ մյուսը իր վրա ուշադրություն չէ դարձրել։ Պարահանդեսում նա ամենից երկար մնաց և գիշերվա ժամը չորսին Սիտնիկովի հետ Փարիզի ձևով պուլկա-մազուրկա պարեց։ Այս խրատական տեսարանով էլ վերջացավ նահանգապետի պարահանդեսը։

XV

— Տեսնենք կաթնասուններին որ դասակարգին է պատկանում այս անձը,— մյուս օրը Բազարովն ասում էր Արկադիին՝ Օդինցովայի իշխանած հյուրանոցի սանդուղքներով միասին վեր բարձրանալիս։— Սիրտս վկայում է, որ այստեղ ինչ-որ բան այնպես չէ։

— Զարմանում եմ քեզ վրա,— բացականչեց Արկադին։— Ի՞նչ։ Դու, դու, Բազարովդ, հետևում ես այն նեղ բարոյականության, որը...

— Տարօրինակ մարդ ես,— անհոգությամբ ընդհատեց Բազարովը։— Մի՞թե չգիտես, որ մեր բարբառով և մեզ նման մարդկանց համար «այնպես չէ» նշանակում է «լավ է»։ Ասել է օգուտ կա։ Մի՞թե այսօր ինքդ չէի՞ր ասողը, թե տարօրինակ է եղել նրա ամուսնությունը, թեև, իմ կարծիքով, հարուստ ծերուկի մարդու գնալը ամենևին էլ տարօրինակ բան չէ, և, ընդհակառակը, խոհեմություն է։ Ես քաղաքի ասեկոսեներին չեմ հավատում, բայց սիրում եմ կարծել, ինչպես ասում էր մեր նահանգապետը, որ դրանք արդարացի են։

Արկադին ոչինչ չպատասխանեց և բախեց համաբի դուռը։ Նշանազգեստ հագած մի երիտասարդ սպասավոր երկու բարեկամներին տարավ մի ընդարձակ սենյակ, որ, ինչպես սովորաբար բոլոր ռուսական հյուրանոցների սենյակները, վատ էր կահավորված, բայց զարդարված էր ծաղիկներով։ Շուտով ներս մտավ նաև Օդինցովան՝ առավոտյան պարզ զգեստը հագին։ Գարնան արևի լույսով նա ավելի ևս նորատի էր թվում։ Արկադին Բազարովին ներկայացրեց նրան և ծածուկ զարմանքով նկատեց, որ կարծես թե Բազարովը շփոթվեց, մինչդեռ Օդինցովան, երեկվա նման, բոլորովին հանգիստ էր։ Բազարովը ինքն էլ զգաց, որ շփոթվեց և ինքն իր վրա զայրացավ։ «Ա՜յ քեզ բան՝ կնիկարմատից վախեցա»,— մտածեց նա և Սիտնիկովից ոչ վատ ընկավ բազկաթոռի վրա ու սկսեց չափից անց համարձակությամբ խոսել, իսկ Օդինցովան իր պարզ աչքերը նրա վրայից չէր հեռացնում։

Աննա Սերգեևնա Օդինցովայի հայրը Սերգեյ Նիկոլայիչ Լոկտևն էր, մի հայտնի գեղեցիկ, շահախարդախ և թղթամոլ մարդ, որը մի տասնհինգ տարի Պետերբուրգում ու Մոսկվայում իր դիրքը պահպանելուց և աղմուկ հանելուց հետո վերջավերջո թղթախաղում ամեն բան տանուլ տվեց ու ստիպված եղավ բնակություն հաստատել գյուղում, որտեղ սակայն շուտով մեռավ, մի փոքրիկ կարողություն թողնելով իր երկու դուստրերին՝ Աննային, որ քսան տարեկան էր և Կատերինային, որ տասներկու տարեկան էր։ Նրանց մայրը, օր Խ... իշխանական աղքատացած տոհմի աղջիկ էր, մեռել էր Պետերբուրգում դեռ այն միջոցին, երբ ամուսինը լիակատար ուժի մեջ էր։ Հոր մահից հետո շատ ծանր վիճակի մեջ էր մնացել Աննան։ Պետերբուրգում նրա ստացած փայ-

լուն կրթությունը նրան չէր պատրաստել տնտեսական և կյանքի հոգսերը տանելու, գյուղական խուլ անկյունում ապրելու համար։ Ամբողջ գավառակում չուներ մի մարդ, որից գոնե խորհուրդ հարցներ։ Հայրը խույս էր տալիս հարևանների հետ հարաբերություն ունենալուց. նա արհամարհում էր նրանց, և նրանք էլ նրան էին արհամարհում, ամեն մեկը իր տեսակետով։ Սակայն Աննան գլուխը չկորցրեց և անմիջապես բերել տվեց իր մորաքրոջը, իշխանադուստր Ավդոտյա Ստեպանովնա Խ....-ին, մի շար և ինքնահաճ պառավ, որ քրոջ աղջկա տանը բնակություն հաստատելով, բոլոր ամենալավ սենյակները իրեն վերցրեց. առավոտից մինչև երեկո շարունակ գրգռվում էր ու փնթփնթում, և մինչև անգամ պարտեզում զբոսնելիս էլ անպատճառ իր հետն էր վերցնում իր միակ ճորտ սպասավորին, որ մռայլ դեմքով մի մարդ էր՝ կապտագույն երիզավոր հնացած, սիսեռագույն համազգեստը հագին, եռանկյուն գլխարկով։ Աննան համբերատարությամբ դիմանում էր մորաքրոջ բոլոր քմահաճույքներին, բոլոր ժամանակը զբաղվում էր քրոջ դաստիարակությամբ, և թվում էր, թե արդեն հաշտվել էր անհայտության մեջ թառամելու մտքի հետ... Բայց բախտը ուրիշ կերպ տնօրինեց։ Նրան պատահաբար տեսավ Օդինցով անունով մեկը, քառասունվեց տարեկան մի շատ հարուստ, տարօրինակ բնավորության տեր, մաղձոտ, հաստլիկ, ծանր ու թթված մի մարդ, որը սակայն հիմար չէր և ոչ էլ շար։ Նա սիրահարվեց Աննային և առաջարկեց ամուսնանալ։ Աննան համաձայնեց նրա կինը լինել, իսկ նա մի վեց տարի ապրեց Աննայի հետ և մեռնելիս իր բոլոր կայքը նրան թողեց։ Աննա Սերգեևնան ամուսնու մահից հետո մոտ մի տարի գյուղից չհեռացավ, հետո քրոջ հետ արտասահման գնաց, բայց եղավ միմիայն Գերմանիայում, ձանձրացավ և վերադարձավ ապրելու իր սիրելիր Նիկոլսկոյե գյուղը, որ գտնվում էր ... քաղաքից քառասուն վերստի չափ հեռու։ Այնտեղ նա ուներ մի փառահեղ, շատ լավ կահավորված տուն, մի հիանալի պարտեզ՝ ջերմոցով. հանգուցյալ Օդինցովը իրեն համար ոչինչ չէր խնայում։ Աննա Սերգեևնան շատ քիչ էր գալիս քաղաք, մեծ մասամբ գործով, և այն էլ երկար չէր մնում։ Նահանգում նրան չէին սիրում. սաստիկ սղմուկ

էին հանում Օդինցովի հետ ամուսնանալու առթիվ, ամեն տեսակ ստահոդ բաներ էին պատմում նրա մասին, հավատացնում էին, որ նա հորն օգնելիս է եղել խաբեբայական արարքներում, թե արտասահման գնալն ևս զուր տեղը չի եղել, այլ հասարակությունից մի բանի անախորժ հետևանքները ծածկելու անհրաժեշտությունից... «Ինչ բանի եղածը հասկանո՞ւմ եք»,— ավելացնում էին զայրացած պատմողները։ «Աշխարհքի չարն ու բարին տեսած կին է»,— ասում էին նրա մասին. իսկ նահանգում հայտնի սրախոսը սովորաբար ավելացնում էր «և քոքվածն է»։ Այդ բոլոր ասեկոսեները հասնում էին նրան. բայց նա չիմանալու էր տալիս, ազատ և բավական վճռական բնավորություն ուներ։

Օդինցովան մեջքը բազկաթոռի կռնակին դեմ տված ու ձեռքը ձեռքին դրած նստել էր ու Բազարովին էր ականջ դնում։ Սա, սովորականին հակառակ, բավական շատ էր խոսում և պարզապես աշխատում էր զբաղեցնել իր խոսակցին. այս բանն էլ զարմացրեց Արկադիին։ Նա չէր կարողանում վճռել, թե արդյոք Բազարովն իր նպատակին հասնո՞ւմ էր թե ոչ։ Դժվար էր Աննա Սերգեևնայի դեմքից հասկանալ, թե նա ինչպիսի տպավորություն էր ստանում. նրա դեմքը շարունակ միևնույն արտահայտությունն ուներ՝ բարեհամբույր ու նուրբ. նրա գեղանի աչքերը փայլում էին ուշադրությունից, բայց անվրդով ուշադրությունից։ Այցելության սկզբի րոպեներին Բազարովի կոտրատվելը վատ տպավորություն արեց նրա վրա, մի այնպիսի տպավորություն, որ անում է անախորժ հոտը կամ սուր ճիչը. բայց նա իսկույն էլ հասկացավ, որ Բազարովը շփոթություն զգաց, և այդ բանը մինչև անգամ նրան գոհունակություն պատճառեց։ Գռեհիկ խոսակցությունները Օդինցովային զզվանք էին պատճառում, իսկ գռեհկության մեջ Բազարովին չէր կարող կշտամբել։ Արկադիին այդ օրը վիճակված էր շարունակ զարմանալ։ Նա սպասում էր, որ Բազարովը կսկսի Օդինցովայի հետ, որպես խելացի կնոջ հետ, խոսել իր համոզմունքների և հայացքների մասին. չէ՞ որ ինքը՝ Օդինցովան ցանկություն հայտնեց լսել մի մարդու, որը «համարձակություն ունի ոչ մի բանի չհավատալու», իսկ դրա փոխարեն Բազարովը խոսում էր բժշկականության, հոմեոպատիայի, բուսաբանության մա-

սին։ Բանից երևաց, որ Օդինցովան առանձնության մեջ զուր ժամավաճառ չէր լինում. նա մի քանի լավ գրքեր էր կարդացել և կանոնավոր ռուսերեն էր խոսում։ Նա խոսք բացարեց երաժշտության մասին, բայց նկատելով, որ Բազարովը գեղարվեստ չէր ընդունում, աննկատելի խոսք դարձրեց բուսաբանության վրա, չնայելով որ Արկադին փորձեց խոսել ժողովրդական մեղեդիների նշանակության մասին։ Օդինցովան դարձյալ նրա հետ վարվում էր այնպես, ինչպես կրտսեր եղբոր հետ. ըստ երևույթին Օդինցովան գնահատում էր նրա պատանեկական պարզասրտությունն ու բարությունը, ուրիշ ոչինչ։ Երեք ժամից ավելի տևեց նրանց անշտապ, բազմակողմանի և կենդանի զրույցը։

Բարեկամները վերջապես վեր կացան տեղներից և սկսեցին հրաժեշտ տալ։ Աննա Սերգեևնան հաճույքամբ նայեց նրանց վրա, իր գեղեցիկ, սպիտակ ձեռքը երկուսին էլ մեկնեց և, մի քիչ մտածելով, անվճռական, բայց լավ ժպիտով ասաց.

— Եթե դուք, պարոններ, ձանձրանալուց չեք վախենում, եկեք ինձ մոտ, Նիկոլսկոյե։

— Ինչ եք ասում, Աննա Սերգեևնա,— բացականչեց Արկադին,— ինձ համար ես դա հատուկ բախտավորություն կհամարեմ...

— Իսկ դո՞ւք, մսիո Բազարով։

Բազարովը միայն գլուխ տվեց, և Արկադին վերջին անգամ ևս զարմացավ, նա նկատեց, որ բարեկամը նույնիսկ կարմրեց։

— Հետո՞,— ասում էր նա Բազարովին փողոցում,— գարձյա՞լ այն կարծիքին ես, որ նա օյ-օյ-օյ է։

— Ով է իմանում։ Տեսնում էիր ինչպես էր նա ինքն իրեն սառցրել,— առարկեց Բազարովն ու, մի քիչ լուռ մնալուց հետո, ավելացրեց,— դքսուհի է, թագուհի։ Միայն պակասում է, որ գլխին թագ ունենա ու մեկ էլ շորի պոչը բռնած պահեն։

— Մեր դքսուհիներն այդպես ռուսերեն չեն խոսում,— նկատեց Արկադին։

— Դժվար օրեր է տեսել, եղբայր սիրելի, մեր հացիցն է կերել։

— Բայց և այնպես չքնաղ կին է,— ասաց Արկադին։

— Ինչ ճոխ մարմին ունի,— շարունակեց Բազարովը,— ինչ անդամահատարան տանելու բան է։

— Հերիք է, ի սեր աստծո, Եվգենի, բանի նման չէ ասածդ։

— Դե լավ, մի բարկանա, քնքշիկ։ Ասված է. առաջին տեսակից է։ Պետք է մի անգամ նրա գյուղը գնալ։

— Ե՞րբ։

— Թեկուզ հենց վաղը չէ մյուս օրը։ Այստեղ էլ ինչ գործ ունենք։ Կուկշինայի հետ շամպա՞ն պիտի խմենք։ Ազգականիդ, այն ազատամիտ պաշտոնյայի՞ն ականջ պիտի դնենք... Հենց վաղը չէ մյուս օրն էլ սլանանք։ Ի դեպ՝ հորս դաստակերտն էլ այնտեղից հեռու չէ։ Նիկոլսկոյեն ախր ...-ի ճամփի՞ն է։

— Այո։

— Optime[1]։ Հապաղելու կարիք չկա. հապաղում են միմիայն անխելքները—մեկ էլ խելոքները։ Ասում եմ ճոխ մարմին ունի։

Երեք օրից հետո երկու ընկերները Նիկոլսկոյե էին գնում։ Պայծառ օր էր և ոչ շատ ցաք, և փոստային կուշտ ձիերը, թեթևակի շարժելով կշկռած ու հյուսած պոչերը, ուրախ-ուրախ առաջ էին վազում։ Արկադին նայում էր ճանապարհին ու ժպտում, ինքն էլ չիմանալով, թե ինչ բանի համար։

— Շնորհավորիր ինձ,— հանկարծ բացականչեց Բազարովը,— այսօր հուլիսի 22-ն է, իմ անվանակոչության օրը։ Տեսնենք, թե ս. Եվգենին ինչպիսի խնամք է տանում ինձ համար։ Այսօր ինձ սպասում են տանը,— ավելացրեց նա ձայնը ցածրացնելով... — Բան չկա, կսպասեն, ի՞նչ մի կարևորություն կա։

XVI

Աննա Սերգեևնայի բնակած դաստակերտը գտնվում էր մի բաց, փոքր-ինչ զառիվայր բլրի վրա, իսկ նրան մոտիկ կառուցված էր դեղին քարաշեն եկեղեցին՝ իր կանաչ կտուր-

[1] Շատ լավ (լատ.)։

բով, սպիտակ, սյուներով և գլխավոր մուտքին քաշած al fresco նկարով, որ «իտալական ճաշակով» ներկայացնում էր «Քրիստոսի հարությունը»։ Մանավանդ աչքի էր ընկնում առաջին շարքում գետնին փռված մի գեր ու կլոր թխահեր զինվորական՝ սաղավարտը գլխին։ Եկեղեցու հետևից երկշարք ձգված էր գյուղը, տեղ-տեղ հարդյա կտուրների վրայից երևացող ծխնելույզներով։ Կալվածատիրոջ տունն ու եկեղեցին շինված էին միևնույն ոճով, այն ոճով, որը մեզանում հայտնի է Ալեքսանդրյան անունով. այդ տունն ևս դեղին էր ներկած, ուներ կանաչ կտուր, սպիտակ սյուներ, իսկ ճակատին տոհմանիշ նկարած։ Երկու շենքն էլ նահանգական ճարտարապետն էր կառուցել հանգուցյալ Օդինցովի հավանությամբ, որը տանել չէր կարողանում ոչ մի դատարկ և ինքնակամ, ինչպես ինքն էր ասում, նորամուծություններ։ Տունը երկու կողմից պաշարել էին հին պարտեզի մութ ծառերը. խուզած եղևիններից կազմված ճեմուղին տանում էր դեպի տան գլխավոր մուտքը։

Մեր բարեկամներին նախասենյակում դիմավորեցին երկու բարձրահասակ, համազգեստ հագած սպասավորներ. նրանցից մեկն անմիջապես գնաց սենեկապանին իմաց տալու։ Սենեկապանը, որ սև ֆրակ հագած մի հաստ մարդ էր, անմիջապես եկավ և հյուրերին գորգածածկ աստիճաններով առաջնորդեց մի առանձին սենյակ, ուր արդեն պատրաստել էին երկու մահճակալ՝ արդուզարդի բոլոր պարագաներով։ Ինչպես երևում էր, ամեն տեղ կարգ ու կանոն կար, ամեն բան մաքուր էր, ամեն տեղ մի տեսակ անուշ հոտ էր բուրում, ինչպես մինիստրական ընդունարաններում։

— Աննա Սերգեևնան խնդրում է, որ կես ժամից հետո շնորհ բերեք իր մոտ,— հայտնեց սենեկապանը։— Որևէ ասելիք չունե՞ք։

— Ոչինչ չունենք ասելու,— ասաց Բազարովը,— եթե մի փոքր բաժակ օղի հրամցնեք, վատ չի լինի։

— Շատ բարի,— ասաց սենեկապանը փոքր-ինչ զարմացած և, կոշիկները ճռճռացնելով, հեռացավ գնաց։

— Ինչպիսի գրանժանր[1] է,— նկատեց Բազարովը,— կարծեմ այդպե՞ս է ձեր լեզվով կոչվում։ Իսկը դքսուհի է։

— Լավ դքսուհի է,— առարկեց Արկադին,— որ հենց առաջին անգամից իր մոտ հրավիրեց այնպիսի թունդ արիստոկրատների, ինչպես ես ու դու ենք։

— Մանավանդ ես, որ ապագա բժիշկ եմ, և բժշկի որդի, տիրացուի թոռ... Դիտե՞ս, որ ես տիրացուի թոռ եմ...

— Ինչպես Սպերանսկին,— ավելացրեց Բազարովը, փոքրինչ լռելուց հետո ու շրթունքները ծռելով։— Բայց և այնպես շատ փարթամ կյանք է ստեղծել այս տիկինը, ահ, շատ փարթամ։ Արդյոք մենք էլ ֆրակ չհագնե՞նք։

Արկադին միայն ուսերը վեր քաշեց... բայց նա էլ էր մի քիչ շփոթված։

Կես ժամից Բազարովն ու Արկադին ընդունարան գնացին։ Սա մի ընդարձակ, բարձր սենյակ էր, որը թեպետ բավական շքեղ էր կահավորված, բայց մեջը մի առանձին ճաշակ չէր նկատվում։ Ծանր, թանկագին կահույքը սովորական վեհ կարգով դարսած էր պատերի երկայնքով. պատերին կպցրած էր դարշնագույն ոսկեզօծ նկարներով պաստառ. հանգուցյալ Օդինցովն այդ պաստառը հատուկ բերել էր տվել Մոսկվայից իր մի բարեկամ գինեվաճառի ձեռքով, որ միևնույն ժամանակ միջնորդի դեր էր կատարում։ Միջին գահավորակի վերևը պատից կախ էր արած մի տոգած, խարտյաշ տղամարդու պատկեր, որ կարծես անբարեմիտ կերպով նայում էր հյուրերին։ «Երևի ինքն է,— շշնջաց Բազարովը Արկադիին և քիթը կնճռոտելով, ավելացրեց,— չփախչե՞նք»։ Բայց այդ միջոցին ներս մտավ տան տիկինը։ Նա հագել էր թեթև դիպակյա զգեստ. դեպի ականջների հետևը հարթ սանրած մազերը նրա մաքուր ու թարմ դեմքին կուսական արտահայտություն էին տալիս։

— Շնորհակալ եմ, որ խոսքներդ կատարեցիք,— սկսեց տիկինը,— մնացեք ինձ մոտ հյուր և հավատացեք, որ այստեղ վատ տեղ չէ։ Ձեզ կծանոթացնեմ քրոջս հետ. նա լավ դաշնամուր է նվագում։ Ասենք այդ ձեզ համար, մսիո Բազարով, նշանակություն չունի. բայց դուք, մսիո Կիրսանով,

[1] Բարձր, հանդիսավոր ոճ (ֆրանս.)։

կարծեմ երաժշտություն սիրում եք։ Իմ մոտ, բացի քրոջից, կենում է նաև պառավ մորաքույրս, մեկ էլ երբեմն-երբեմն թուղթ խաղալու է գալիս հարևաններից մի պարոն. ահա մեր ամբողջ հասարակությունը։ Իսկ այժմ— նստենք։

Օդինցովան այս փոքրիկ ճառը սկզբից մինչև վերջը մեկիկ-մեկիկ արտասանեց, ասես թե անգիր արած լիներ. հետո դարձավ դեպի Արկադին։ Բանից երևաց, որ իր մայրը ճանաչելիս է եղել Արկադիի մորը և մինչև անգամ նրա սիրո հավատարմատարն է եղել դեպի Նիկոլայ Պետրովիչը։ Արկադին սկսեց ոգևորությամբ խոսել իր հանգուցյալ մոր մասին. իսկ Բազարովն այդ միջոցին զբաղվեց ալբոմը թերթելով։ «Ինչպես խելոքացել եմ»,— մտածում էր նա ինքն իրեն։

Այդ միջոցին մի դեղեցիկ քերծե, կապույտ վզնոցը վզին, եղունգներով գետինը չխկչխկացնելով վազեց եկավ ընդունարան. իսկ նրա հետևից մտավ մի տասնութ տարեկան, սև մազերով, թուխ, փոքր-ինչ կլոր, հաճելի դնմքով, մանր սև աչքերով աղջիկ։ Նա ձեռին ծաղիկներով լի կողով ուներ։

— Ահավասիկ ձեզ և իմ Կատյան,— ասաց Օդինցովան՝ գլխով քրոջը ցույց տալով։

Կատյան թեթևակի խոնարհվելով բարևեց, նստեց քրոջ կողքին ու սկսեց ծաղիկները ջոկել։ Քերծեն, որի անունը Ֆիֆի էր, պոչը շարժելով մոտեցավ երկու բարեկամներին և իր սառը դնչով հերթով հրեց նրանց ձեռքը։

— Այդ բոլորը քո՞ քաղածն է,— հարցրեց Օդինցովան։

— Այո իմ,— պատասխանեց Կատյան։

— Իսկ մորաքույրը թեյի կգա՞։

— Պիտի գա։

Երբ Կատյան խոսում էր՝ շատ քաղցր ժպտում էր, ամոթխած ու անկեղծ, և նայում էր, ներքևից վերև, ծիծաղելիգաժան էր թվում։ Նրա մեջ ամեն ինչ դեռ կանաչ-գարուն էր՝ թե ձայնը, թե ամբողջ երեսի աղվամազը, թե վարդագույն ձեռքերը՝ սպիտակավուն բոլորակներով ափերի մեջ և թե թեթևակի սեղմված ուսերը... Նա շարունակ կարմրում էր ու արագ-արագ շունչ առնում։

Օդինցովան դեպի Բազարովը դարձավ։

— Եվգենի Վասիլիչ,— սկսեց նա,— դուք միմիայն քաղաքավարությունից եք թերթում ալբոմը։ Մինչդեռ դա ձեզ չի հետաքրքրում։ Ավելի լավ է մոտեցեք մեզ և եկեք մի բանի մասին վիճենք։

Բազարովը մոտ եկավ։

— Ի՞նչ բանի մասին եք հրամայում,— ասաց նա։

— Ինչի մասին ուզեք։ Նախազգուշացնեմ, որ ես սաստիկ վիճաբանող եմ։

— Դո՞ւք։

— Ես։ Կարծես թե այդ բանը ձեզ զարմացնում է։ Ինչո՞ւ։

— Որովհետև, ինչքան կարող եմ դատել, դուք հանդարտ ու սառը բնավորություն ունեք, իսկ վիճելու համար հարկավոր է հուզվել, հափշտակվել։

— Ինչպե՞ս այդքան շուտ կարողացաք ինձ ճանաչել։ Նախ՝ ես անհամբեր եմ և համառ. կուզեք Կատյային հարցրեք, և երկրորդ՝ ես շատ շուտ եմ հափշտակվում։

Բազարովը Աննա Սերգեևնային նայեց։

— Գուցե՝ դուք ավելի լավ պիտի իմանաք։ Ուրեմն վիճե՞լ եք ուզում—համեցեք։ Ես ձեր ալբոմի մեջ նայում էի Սաքսոնական Շվեյցարիայի տեսարանները։ Իսկ դուք նկատեցիք, որ այդ բանը չի կարող ինձ գրավել։ Դուք այդ ասացիք այն պատճառով, որ չեք ենթադրում, թե իմ մեջ գեղարվեստական հասկացողություն կլինի. ճիշտ է, իմ մեջ այդ չկա, բայց տեսարանները ինձ կարող էին հետաքրքրել, օրինակ, երկրաբանական տեսակետից, լեռների կազմության տեսակետից։

— Ներեցեք. դուք որպես երկրաբան ավելի շուտ կդիմեք գրքի, հատուկ աշխատության, քան նկարի։

— Նկարը ինձ առարկայորեն կներկայացնի այն, ինչ որ գրքի մեջ տասը երեսի վրա ասվում է։

Աննա Սերգեևնան լուռ մնաց։

— Հետևապես դուք ոչ մի կաթիլ գեղարվեստական հասկացողություն չունի՞ք,— ասաց նա արմունկով սեղանին կոթնելով, և այս շարժումով իր դեմքը Բազարովին մոտեցնելով։— Այդ ինչպե՞ս եք կարողանում առանց դրան յուլա գնալ։

— Եվ ինչի՞ս է դա պետք, թույլ տվեք հարցնել։

— Հենց ասենք նրա համար, որպեսի կարողանաք մարդկանց ճանաչել և ուսումնասիրել։

Բազարովը քմծիծաղեց։

— Նախ, որ դրա համար կա կյանքի փորձ. իսկ երկրորդ՝ կասեմ ձեզ, որ չարժե նեղություն քաշել առանձին անհատները ուսումնասիրել։ Բոլոր մարդիկ, ինչպես մարմնով, այնպես էլ հոգով, նման են միմյանց. ամեն մեկս էլ ունենք ուղեղ, փայծաղ, սիրտ, թոք, որոնք միատեսակ են կազմված. և այսպես կոչված բարոյական հատկություններն էլ ամենքի մեջ միևնույնն են—չնչին ձևափոխությունները նշանակություն չունեն։ Բավական է վերցնել մի մարդկային անհատ. որպեսզի կարողանաք դատել մյուսների մասին։ Մարդիկ նույնն են, ինչ անտառի ծառերը. ոչ մի բուսաբան չի սկսի ջոկ-ջոկ ուսումնասիրել ամեն մի կեչի ծառ։

Կատյան, որ առանց շտապելու ծաղիկները ջոկում տեղավորում էր, տարակուսանքով աչքը Բազարովի վրա ձգեց, և նրա արագ ու անհոգ հայացքին հանդիպելով, մինչև ականջի արմատները կարմրեց։ Աննա Սերգեևնան գլուխը շարժեց...

— Անտառի ծառերը,— կրկնեց նա։— Ուրեմն ձեր կարծիքով ոչ մի տարբերություն չկա անխելք և խելոք, չար և բարի մարդկանց մեջ։

— Ոչ, կա՝ ինչպես հիվանդ և առողջ մարդու մեջ։ Թոքախտավորի թոքերը այնպես չեն, իհարկե, ինչպես որ են իմ ու ձեր թոքերը, թեպետ և միատեսակ կազմություն ունեն։ Մենք մոտավորապես գիտենք, թե ինչի՞ց են առաջանում մարմնական ցավերը, իսկ բարոյական ցավերն առաջանում են վատ դաստիարակությունից, ամեն տեսակ դատարկ բաներից, որով մանկությունից լցնում են մարդկանց գլուխները։ Մի խոսքով՝ հասարակության այլանդակ դրությունից։ Ուղղեցեք հասարակությունը՝ և հիվանդությունները կվերանան։

Բազարովն այս ամենը մի այնպիսի ձևով էր ասում, որ կարծես թե միևնույն ժամանակ էլ ինքն իրեն մտածելիս լիներ. «Ինձ համար միևնույն է. ուզում ես հավատա, ուզում ես՝ մի հավատա»։ Նա իր երկար մատներով շփում էր այտոսրուսը, իսկ աչքերը սենյակի անկյուններն էին վազվզում։

— Ես կարծում եմ,— ասաց Աննա Սերգեևնան,— թե երբ հասարակությունն ուղղվի, էլ ոչ անխելք մարդիկ կլինեն, ոչ էլ չա՞ր մարդիկ։

— Գոնե, եթե հասարակությունը կանոնավոր կերպով կազմակերպված լինի, այն ժամանակ բոլորովին նշանակություն չի ունենա, թե մարդս անխե՞լք է թե խելոք, չա՞ր է թե բարի։

— Այո, հասկանում եմ. ամենքն էլ միատեսակ փայծաղ կունենան։

— Հենց այդպես էլ է, տիկին։

Օդինցովան դեպի Արկադին դարձավ։

— Իսկ դուք ի՞նչ կարծիք ունեք, Արկադի Նիկոլայիչ։

— Ես Եվգենիի հետ համամիտ եմ,— պատասխանեց նա։

Կատյան ճակատի տակից նրան նայեց։

— Պարոններ, դուք ինձ զարմացնում եք,— ասաց Օդինցովան—բայց. մենք դեռ կխոսենք։ Իսկ այժմ ես լռում եմ, մորաքույրս թեյ խմելու է գալիս. պետք է խնայենք նրա ականջները։

Աննա Սերգեևնայի մորաքույրը, իշխանադուստր Խ....ը, որ մի վտիտ, փոքրիկ, բռունցքի մեծությամբ կուլ եկած դեմքով և անշարժ պառավ էր, ճերմակ կեղծամի տակից դեմքով և անշարժ պառավ էր, ճերմակ կեղծամի տակից փայլող չար աչքերով, ներս մտավ և, հյուրերին հազիվ բարևելով, նստեց թավշապատ լայն բազկաթոռի մեջ, ուր նրանից զատ, ոչ ոք իրավունք չուներ նստելու։ Կատյան փոքրիկ աթոռակը դրեց նրա ոտների տակ. պառավը նրան շնորհակալություն չհայտնեց, մինչև անգամ վրան էլ չնայեց, միայն դեղին շալի տակ, որը համարյա ամբողջ վտիտ մարմինը ծածկել էր, ձեռները շարժեց։ Նա դեղին գույնը սիրում էր, նրա գլխազարդի վրան էլ պայծառ դեղին գույնի ժապավեններ կային։

— Ինչպե՞ս էիք գիշերս, մորաքույր,— ձայնը բարձրացնելով հարցրեց Օդինցովան։

— Այս շունը դարձյա՞լ այստեղ է,— ի պատասխան քրթմնջաց պառավը, և նկատելով, որ Ֆիֆին երկու անհատատ քայլ արեց դեպի իրեն, բացականչեց,— կորի, կորի։

Կատյան Ֆիֆիին կանչեց և բաց արեց դուռը։

Ֆիֆին ուրախ-ուրախ դուրս թռավ, հուսալով, որ զբոսնելու են գնալու, բայց դռան եռևում մենակ մնալով, սկսեց դուռը չանկոտել ու ոռնալ։ Իշխանուհին խոժոռվեց։ Կատյան ուզում էր տեղից վեր կենալ...

— Կարծում եմ թեյը պատրաստ կլինի,— ասաց Օդինցովան։— Գնանք, պարոններ։ Համեցեք թեյ անուշ անելու, մորաքույր։

Իշխանուհին լուռ ու մունջ տեղից վեր կացավ և առաջ ինքը դուրս եկավ ընդունարանից։ Ամենքն էլ նրա հետևից սեղանատուն գնացին։ Լիվրե հագած փոքրիկ կազակը աղմուկով սեղանից հեռացրեց բարձերով պատած, նույնպես նվիրական բազկաթոռը, որի մեջ նստեց իշխանուհին. Կատյան, որ թեյ էր ածում, առաջ նրան տվեց գավաթը, որի վրա տոհմանիշն էր դրոշմված։ Պատավը գավաթի մեջ մեղր լցրեց (նա կարծում էր, որ թեյը շաքարով խմելը թե մեղք է և թե թանկ է նստում, թեպետ և ինքը ոչ մի բանի համար ոչ մի կոպեկ չէր ծախսում), և հանկարծ խոպոտ ձայնով հարցրեց.

— Ի՞նչ է գրում իշխան Իվանը։

Ոչ ոք պատասխան չտվեց։ Բազարովն ու Արկադին շուտով գլխի ընկան, որ նրա վրա ուշադրություն չէին դարձնում, թեպետ և հետը հարգանքով էին վարվում։ «Տպավորության համար են պահում, որովհետև իշխանական ծնունդ է», մտածեց Բազարովը... Թեյից հետո Աննա Սերգեևնան առաջարկեց զբոսնելու գնալ, բայց սկսեց անձրև շաղալ, և ողջ հասարակությունը, բացի իշխանուհուց, ընդունարան վերադարձավ։ Եկավ նաև թղթախաղի սիրահար հարևանը, Պորֆիրի Պլատոնիչ անունով, մի հասա ու ալեվոր մարդ, կարճ, ասես հեսանած ոտներով, խիստ քաղաքավարի և ծիծաղկոտ։ Աննա Սերգեևնան, որ ավելի Բազարովի հետ էր խոսում, հարցրեց, թե արդյոք չի՞ ուզում ըստ հինավուրց սովորության, պրեֆերանս խաղալ։ Բազարովը համաձայնեց՝ ասելով, թե հարկավոր է, որ նախօրոք պատրաստվի առաջիկայում ստանձնելիք գավառական բժշկի դերը կատարելու։

— Զգույշ կացեք,— նկատեց Աննա Սերգեևնան,— տեսեք, ես ու Պորֆիրի Պլատոնիչը ձեզ կջարդենք։ Իսկ դու, Կատյա,— ավելացրեց նա,— Արկադի Նիկոլայիչի համար մի բան նվագիր. նա երաժշտություն սիրում է. մենք էլ, ի դեպ, կլսենք։

Կատյան առանց հաճության մոտեցավ դաշնամուրին։ Արկադին էլ թեև իսկապես երաժշտություն սիրում էր, նույնպես առանց հաճության գնաց նրա հետևից, նրան թվաց, թե Օդինցովան գլխից հեռացնում է իրեն, մինչդեռ արդեն նրա սրտի մեջ, ինչպես նրա տարիքն ունեցող ամեն մի երիտասարդի մեջ, եռ էր գալիս մի տեսակ անմեկին ու անհանգստացուցիչ, սիրո նախազգացման պես մի զգացողություն։ Կատյան բաց արեց դաշնամուրի խուփը և առանց Արկադիի վրա նայելու, ցած ձայնով ասաց.

— Ի՞նչ կուզեք, որ նվագեմ։

— Ինչ որ սրտներդ ուզում է,— անտարբեր պատասխանեց Արկադին։

— Ավելի շատ ինչպիսի՞ երաժշտություն եք սիրում,— կրկնեց Կատյան, առանց իր դիրքը փոխելու։

— Կլասիկ,— միևնույն ձայնով պատասխանեց Արկադին։

— Մոցարտ սիրո՞ւմ եք։

— Մոցարտ սիրում եմ։

Կատյան հանեց Մոցարտի ցե-մոլ սոնատ-անուրջը։ Նա շատ լավ էր նվագում, թեպետ և նվագածը փոքր-ինչ շոր ու ցամաք էր։ Առանց աչքը նոտաներից հեռացնելու, շրթունքները պինդ սեղմած, անշարժ և ուղիղ նստել էր նա, և մինչև սոնատն ավարտելու ժամանակ նրա դեմքը փոքր-ինչ վառվեց և արձակված մազերի մի փոքրիկ խոպոպ ընկավ սև հոնքի վրա։

Արկադիի վրա ավելի ազդեց սոնատի վերջին մասը, այն մասը, ուր անհագ նվագի զմայլելի զվարթության մեջ հանկարծ ծագում են խիստ թախծալի, համարյա եղերական վշտի բռնկումները...

Բայց Մոցարտի ձայների ներգործությունից նրա մեջ առաջացած մտքերը Կատյայի վերաբերմամբ չէին։ Արկադին

նրան մտիկ տալով միայն մտածում էր. «Իսկապես, այս աղջիկը վատ չի նվագում, ինքն էլ վատը չէ»։

Կատյան, սոնատը վերջացնելով, առանց ձեռքը ստեղներից հեռացնելու, հարցրեց՝ «Բավակա՞ն է»։ Արկադին հայտնեց, որ չի համարձակվում նրան ավելի նեղություն տալ, և սկսեց Մոցարտի մասին նրա հետ խոսել. և հարցրեց Կատյային, թե ի՞նքն է իր այդ սոնատը հավանել, թե՞ ուրիշն էր նրան առաջարկել։ Բայց Կատյան միօրինակ այո կամ ոչ էր ասում, նա իր մեջ քաշվել, թաք էր կացել։ Այդպիսի դեպքում նա հեշտությամբ դուրս չէր գալիս. նրա դեմքն էլ համառ, համարյա բութ արտահայտություն էր ստանում։ Նա չէ թե քաշվող էր, բայց կասկածամիտ էր և իրեն դաստիարակող քրոջից աչքը մի քիչ վախեցել էր, մի բան, որ Աննա Սերգեևնայի մտքովն էլ չէր անցնում։ Արկադին ի վերջո մոտ կանչելով Ֆիֆիին, որ ներս էր եկել, սկսեց ձևի համար շփել նրա գլուխը։ Կատյան նորից իր ծաղիկները սկսեց ջոկել։

Իսկ այդ միջոցին Բազարովը իրար հետևից խաղատուզանք էր դնում հա գնում։ Աննա Սերգեևնան շատ վարպետ էր խաղում։ Պորֆիրի Պլատոնիչն էլ ամոթով մնացողը չէր։ Բազարովը տանուլ տվեց թեպետ քիչ, բայց և այնպես նրա համար զգալի բան։ Ընթրիքի ժամանակ Աննա Սերգեևնան դարձյալ բուսաբանության մասին խոսք բաց արեց։

— Վաղը առավոտյան եկեք զբոսանքի գնանք,— ասաց նա Բազարովին,— ուզում եմ ձեզանից իմանալ դաշտային ծաղիկների լատիներեն անուններն ու նրանց հատկությունները։

— Ինչնե՞րդ է հարկավոր լատիներեն անունները,— հարցրեց Բազարովը։

— Ամեն բանի մեջ կարգ ու կանոն պետք է,— պատասխանեց տիկինը։

— Ինչ հրաշալի կին է եղել այդ Աննա Սերգեևնան,— բացականչեց Արկադին, երբ որ իր բարեկամի հետ մենակ մնաց իրենց հատկացրած սենյակում։

— Այո,— պատասխանեց Բազարովը,— խելքը գլխին կին է։ Ով է իմանում ինչե՞ր է տեսել։

— Այդ ի՞նչ մտքով ես ասում,— Եվգենի Վասիլիչ։

— Լավ մտքով, լավ, հարգելի պարոն, Արկադի Նիկոլայիչ։ Հավատացած եմ, որ նա իր կալվածքն էլ է լավ կառավարում։ Բայց հրաշալին նա չէ, այլ նրա քույրը։

— Ի՞նչ, այդ թուխ աղջի՞կը։

— Այո, այդ թուխ աղջիկը։ Գիտես, թարմ է, ձեռք չի տրված, և՛ վեհերոտ է, և՛ լռակյաց է, և՛ ամեն բան, ինչ որ ուզես։ Ա՛յ, ում հետ արժե զբաղվել։ Նրան ինչպես որ ուզես, այնպես կդարձնես, մինչդեռ մյուսը էկն անցած խմոր է։

Արկադին ոչինչ չպատասխանեց Բազարովին, և յուրաքանչյուրը նրանցից իր առանձին մտքերով պառկեց քնելու։

Այդ երեկո Աննա Սերգեևնան էլ մտածում էր հյուրերի մասին։ Բազարովը նրան դուր էր եկել իր կտրուկ դատողությամբ և կոտրատվելու սովորություն չունենալու համար։ Բազարովը նրա համար մի նոր, դեռ իրեն չհանդիպած մարդ էր, իսկ նա ինքը հետաքրքրվող բնավորություն ուներ։

Աննա Սերգեևնան բավական տարօրինակ կին էր։ Նա, ազատ լինելով որևէ նախապաշարմունքից, չունենալով նաև մի որևէ զորեղ հավատալիք, միևնույն ժամանակ ոչ մի բանի առաջ տեղի չէր տալիս և ոչ մի տեղ էլ չէր գնում։ Շատ բան նա պարզ տեսնում էր, շատ բան զբաղեցնում էր նրան, բայց և ոչ մի բան լիովին չէր գոհացնում նրան, և դժվար թե նա լիովին էլ գոհացումն ուզենար։ Նրա միտքը միաժամանակ և՛ հետախուզող էր, և՛ անտարբեր. նրա տարակուսանքները երբեք մինչև մոռացության աստիճանի չէին խաղաղում և երբեք մինչև հուզմունքի աստիճանի չէին աճում։ Եթե հարուստ և անկախ չլիներ, գուցե նա մտներ կռվի մեջ, իմանար ի՞նչ բան է կիրքը... Բայց նրա կյանքը թեթև էր, չնայելով, որ երբեմն ձանձրույթ էր զգում, և նա, առանց շտապելու, երբեմն միայն հուզվելով, օրերն անց էր կացնում իրար հետևից։ Երբեմն նրա աչքի առաջն էլ բռնկվում էին պայծառ գույները, բայց երբ նրանք մարում էին, նա հանգստանում էր և երբեք չէր ափսոսում նրանց համար։ Մինչև անգամ նրա երևակայությունը թբուչում անցնում էր այն սահմաններից դուրս, որ սովորական

բարոյականի օրենքներով թուլլատրելի էր համարվում. բայց այդ ժամանակ ևս նրա սրյունը խաղաղ հոսում էր նրա զմայլելի, վայելչակազմ և խաղաղ մարմնի մեջ։ Պատահում էր, որ դուրս գալով տաքացած ու քնքշացած անուշաբույր լոգարանից, նա սկսում էր անուշքների մեջ ընկնել՝ մտածելով կյանքի ունայնության, վշտի, աշխատանքի և չարիքի մասին... Հոգին լցվում էր հանկարծական համարձակությամբ, եռում էր ազնիվ ձգտումներով. բայց հենց որ կիսաբաց պատուհանից փչում էր թափանցող քամին, Աննա Սերգեևնան, բոլորովին կուչ եկած՝ սկսում էր գանգատվել և հանդարյա զայրանալ, և այդ րոպեին նրան միայն մի բան էր պետք՝ որ այդ անպիտան քամին չփչի իր վրա։

Ինչպես այն բոլոր կանայք, որոնք դեռ չեն կարողացել սիրել, Աննա Սերգեևնան էլ մի բան էր ուզում, բայց թե ինչ՝ ինքն էլ չէր իմանում։ Իսկապես նա ոչինչ չէր ուզում, թեպետ իրեն թվում էր, թե ամեն բան ուզում է։ Հանդուցյալ Օդինցովին նա դժվարությամբ էր հանդուրժում (նա հաշվով էր Օդինցովի հետ ամուսնացել, թեպետ և նա, հավանորեն, չէր համաձայնվի նրա կինը դառնալու, եթե նա Օդինցովին բարի մարդ չհամարեր) և գաղտնի զզվանք ածեց դեպի բոլոր աղամարդիկն էլ, որոնց նա պատկերացնում էր որպես փնթի, ծանր և դանդաղկոտ, անզոր, տաղտկացուցիչ էակներ։ Մի անգամ արտահայտվում մի ինչ-որ տեղ հանդիպել էր ասպետական դեմքով, բայց ճակատի տակից փայլող ազնիվ կապույտ աչքերով մի երիտասարդի, գեղեցիկ շվեդացու. երիտասարդը զորեղ տպավորություն էր գործել նրա վրա, բայց այդ բանը արդեք չեզավ Ռուսաստան վերադառնալու։

«Տարօրինակ մարդ է այս բժիշկը», մտածում էր Աննա Սերգեևնան պտտված իր փառահեղ անկողնում, ժանեկավոր բարձերի վրա և մետաքսյա թեթև վերմակի տակ... Նա իր հարկից ժառանգել էր նրա՝ գեղի չքեղությունն ունեցած հաղումների մի մասը։ Նա խիստ սիրում էր իր հանցագործ, բայց բարի հորը, իսկ հայրն էլ պաշտում էր աղջկան և որպես իրեն հավասարի, բարեկամաբար հանաքներ էր անում հետը, և լիովին վստահում էր նրան, հետը խորհուրդ անում։ Նա իր մորը հազիվ էր հիշում։

«Տարօրինակ մարդ է այս բժիշկը», կրկնում էր նա ինքն իրեն։ Նա ձգվեց-մեկնվեց, ժպտաց, ձեռները գլխի վերևը գցեց, հետո աչքի անցկացրեց մի ֆրանսիական հիմար վեպի մի երկու թերթ, գիրքը ձեռքից վայր գցեց և, բոլորովին մաքուր ու սառն, քնեց մաքուր ու քաղցրաբույր սպիտակեղենի մեջ։

Հետևյալ առավոտ նախաճաշից անմիջապես հետո Աննա Սերգեևնան Բազարովի հետ գնաց բուսաբանությամբ պարապելու և վերադարձան ճաշից առաջ։ Արկադին ոչ մի տեղ չգնաց և մի ժամի չափ Կատյայի հետ անցկացրեց։ Կատյայի հետ նա ձանձրույթ չզգաց։ Կատյան ինքն առաջարկեց նրա համար երեկվա սոնատը կրկնել, բայց երբ վերջապես Օդինցովան վերադարձավ, երբ Արկադին տեսավ նրան— խսկույն սիրտը ճմլվեց... Օդինցովան պարտեզով գալիս էր հոգնած քայլերով. այտերը կարմրել էին, աչքերը, հարդյա գլխարկի տակ, սովորականից ավելի էին փայլում։ Նա մատների արանքում պտույտ էր ածում մի վայրի ծաղկի նուրբ ցողունը, թեթև թիկնոցը իջել էր արմունկների վրա, և գլխարկի լայն մոխրագույն ժապավենները կպել էին կրծքին։ Բազարովը, ինչպես միշտ, ինքնավստահ և իր անհոգ սովորական քայլվածքով հետևում էր նրան, բայց նրա դեմքի զվարթ և մինչև անգամ սիրալիր արտահայտությունը Արկադիին դուր չեկավ։ Բազարովը ատամների արանքով «բարև» ասելով գնաց սենյակ, իսկ Օդինցովան մտամոլոր սեղմեց Արկադիի ձեռքն ու նույնպես անցավ մոտից։

— «Բարև»...— մտածեց Արկադին։— «Մի՞թե մենք այսօր չէի՞նք տեսնվել»։

XVII

Ժամանակը (ինչպես հայտնի է) երբեմն թռչում է թըռչունի պես, երբեմն էլ սողում է սողունի պես։ Բայց մարդուս համար լավ է լինում մանավանդ այն ժամանակ, երբ նա մինչև անգամ չի էլ նկատում շո՞ւտ է անցնում ժամանակը, թե դանդաղ։ Բազարովն ու Արկադին էլ հենց այդպես անցկացրին մի տասնհինգ օր Օդինցովայի տանը։ Այդ բանին մասամբ նպաստում էր այն կարգ ու կանոնը, որ Օդինցովան

մտցրել էր իր տան ու կենցաղավարության մեջ։ Նա ճշտությամբ պահպանում էր այդ կարգ ու կանոնը և ուրիշներին էլ ստիպում նույնն անելու։ Օրվա ընթացքում ամեն բան իր ժամանակին էր կատարվում։ Առավոտյան ժամը ուղիղ ութին ամենքը հավաքվում էին թեյ խմելու. թեյից հետո մինչև նախաճաշ յուրաքանչյուրն ինչ ուզում էր, այն էր անում։ Տանտիկինն ինքը զբաղվում էր կառավարչի (կալվածքը վարձով էր տրված), սենեկապանների, տնտեսուհիների հետ։ Ճաշից առաջ դարձյալ բոլորով հավաքվում էին զրույց անելու կամ ընթերցանությամբ պարապելու. երեկոն նվիրվում էր զբոսանքի, երաժշտության, թղթախաղի. ժամը տասնմեկին Աննա Սերգեևնան քաշվում էր իր սենյակը, հաջորդ օրվա համար կարգադրություններ անում և պառկում քնելու։ Ամենօրյա կյանքի այս չափած-ձևած, փոքր-ինչ հանդիսավոր կանոնավորությունը Բազարովին դուր չէր գալիս. «Կարծես սլլում ես ռելսերով»,— հավատացնում էր նա, համազգեստ հագած սպասավորները, կազմ-պատրաստ կանգնած սենեկապանները վիրավորում էին նրա դեմոկրատական զգացմունքը։ Նրա կարծիքով, թե որ բանն այդտեղ է հասել, ապա ուրեմն պետք էր անգլիական ձևով էլ ճաշել, այսինքն՝ ֆրակով ու սպիտակ փողպատով։ Նա մի անգամ այդ մասին բացատրվեց հենց իր՝ Աննա Սերգեևնայի հետ։ Սա իրեն այնպես էր պահում, որ ամեն մեկն էլ առանց քաշվելու կարող էր նրա առաջ իր կարծիքները հայտնել։ Օդինցովան լսեց նրա ասածներն ու պատասխանեց՝ «Ձեր տեսակետից դուք իրավացի եք և, գուցե, այս դեպքում իմ արածս խանդամություն է, բայց գյուղում չի կարելի առանց կարգ ու կանոնի ապրել. ձանձրույթը կհաղթահարի», և շարունակում էր իր ուզածի պես անել։ Բազարովը քըրթմընջում էր, բայց եթե նրա ու Արկադիի համար ժամանակը այդպես թեթև էր անցնում Օդինցովայի մոտ, պատճառն այն էր, որ այդ տանն ամեն բան «սլլում էր, ինչպես ռելսերի վրա»։ Այդ բոլորով հանդերձ, հենց Նիկոլսկոյն գալու առաջին իսկ օրվանից փոփոխություն առաջացավ Բազարովի մեջ, դեպի որը Աննա Սերգեևնան ակնհայտ կերպով բարեհաճ էր, թեպետ քիչ էր պատահում, որ հետը համա-

կարծիք լիներ։ Բազարովի մեջ սկսեց երևան գալ մի ներքին վրդովմունք, որ առաջ չկար. շուտ էր գրգռվում, խոսում էր ակամա, նայում էր բարկացկոտ, և մի տեղ հանգիստ նստել չէր կարողանում, կարծես ասեղի վրա նստած լիներ։ Իսկ Արկադին, որ վերջնականապես ինքն իրեն վճռել էր, թե սիրահարված է Օդինցովային, սկսեց խաղաղ թախծության անձնատուր լինել։ Ասենք այդ թախիծը նրան արգելք չէր լինում Կատյայի հետ մոտիկանալու. դա նույնիսկ նրան նպաստեց քաղցր, բարեկամական հարաբերություններ հաստատելու Կատյայի հետ։ «Նա ինձ չի գնահատում։ Հոգ չէ... Բայց ահա այս բարի էակը ինձ չի մերժում»,— մտածում էր նա, և նրա հոգին վերստին ճաշակում էր վեհանձն զգացողության քաղցրությունը։ Կատյան աղոտ կերպով ըմբռնում էր, որ Արկադին մի ինչ-որ ստոփանք էր որոնում իր հասարակության մեջ, և չէր մերժում ոչ նրան և ոչ էլ իրեն կիսամոթխած, կիսավստահ բարեկամության անմեղ հաճույքում։ Աննա Սերգեևնայի ներկայությամբ նրանք իրար հետ չէին խոսում. Կատյան քրոջ սուր հայացքի տակ միշտ կուչ էր գալիս, իսկ Արկադին, ինչպես որ այդ վայել էր սիրահարված մարդուն, չէր կարող ուշադրություն դարձնել ոչ մի ուրիշ բանի վրա, քանի իր սիրո առարկան մոտիկ է։ Բայց նա իրեն միայն Կատյայի հետ էր լավ զգում։ Նա զգում էր, որ անկարող էր Օդինցովային զբաղեցնել։ Արկադին քաշվում էր և գլուխը կորցնում, երբ նրա հետ մենակ էր մնում։ Օդինցովան նույնպես չէր իմանում, թե ինչ ասեր նրան. Արկադին դեռ շատ երիտասարդ էր նրա համար։ Ընդհակառակը, Կատյայի հետ Արկադին բոլորովին ազատ էր. նա ներողամտաբար էր վերաբերվում Կատյային, չէր արգելում նրան արտահայտելու իր տպավորությունները, որ երաժշտությունը, կարդացած վիպակը, ոտանավորը և ուրիշ զատարկ բաներ առաջացնում էին նրա մեջ՝ առանց նկատելու, որ այդ դ ա տ ա ր կ բ ա ն ե ր ը իրեն, Արկադիին էլ էին զբաղեցնում։ Իսկ Կատյան էլ իր կողմից նրան արգելք չէր լինում թախծելու։ Արկադին իրեն լավ էր զգում Կատյայի հետ, Օդինցովան՝ Բազարովի հետ, ուստի սովորաբար այնպես էր պատահում, որ երկու զույգերը, մի քիչ ժամանակ միասին լինելուց հետո, իրարից բաժանվում էին, ամեն մի

զույգ մի կողմ էր քաշվում, մանավանդ զբոսանքների ժամանակ։ Կատյան պաշտում էր բնությունը, Արկադին էլ էր սիրում, թեպետ չէր համարձակվում խոստովանել։ Օդինցովան դեպի բնությունը բավական անտարբեր էր, նույնն էր և Բազարովը։ Մեր բարեկամների համարյա մշտապես իրարից անջատ լինելը առանց հետևանքների չմնաց. նրանց փոխհարաբերությունները սկսեցին փոխվել։ Բազարովն այլևս Արկադիի հետ Օդինցովայի մասին չէր խոսում, նույնիսկ դադարեց Օդինցովայի «աղնվականական հակումների» վրա հարձակվել։ Ճիշտ է, առաջվա նման այժմ էլ էր Կատյային գովում և Արկադիին միայն խորհուրդ էր տալիս չափավորել այդ աղջկա զգայական հակումները, բայց նրա այդ գովասանքները հապճեպ էին, խորհուրդները չոր, և առհասարակ նա այժմ Արկադիի հետ զրուցում էր առաջվանից շատ ավելի քիչ... Նա կարծես նրանից խույս էր տալիս, կարծես նրանից ամաչում էր...

Արկադին այս ամենը նկատում էր, բայց իր դիտողությունները պահում էր իր մեջ։

Այս բոլոր «նորության» իսկական պատճառն այն զգացմունքն էր, որ Օդինցովան առաջացրել էր Բազարովի մեջ, մի զգացմունք, որ տանջում, կատաղեցնում էր նրան, և որից նա անմիջապես արհամարհական քրքիջով ու ցինիկ հայհոյանքով հրաժարվելով կհրաժարվեր, եթե մեկնումեկը թեկուզ հեռավոր կերպով ակնարկ աներ այն մասին, ինչ որ նրա մեջ կատարվում էր։ Բազարովը սաստիկ կնասեր էր, սիրում էր կանանց գեղեցկությունը, բայց սերը իդեալական իմաստով կամ, ինչպես ինքն էր ասում, ռոմանտիկորեն, անհեթեթություն, աններելի հիմարություն էր կոչում, ասպետական զգացմունքները մի տեսակ այլանդակություն կամ հիվանդություն էր համարում, և շատ անգամ էր զարմանք հայտնել, թե ինչո՞ւ Տոգհենբուրգին, բոլոր մինեզենգերների ու տրուբադուրների հետ միասին, դեղին տունը չեն նստեցրել։ «Եթե կինը քեզ դուր է գալիս, աշխատիր նպատակիդ հասնել,— ասում էր նա,— իսկ եթե չի կարելի, դե՛, հարկավոր էլ չէ. նրանից շուտ եկ. աշխարհքիս երեսին հո մենակ դա չէ՞»։ Օդինցովան նրան դուր էր գալիս, այդ կնոջ մասին տարածված լուրերը, նրա մտքերի ազատությունն ու անկախությունը, դեպի Բազարովը տածած անկասկած համակրությունը, այս ամենը, ըստ երևույթին, Բազարովի օգտին էին։ Սակայն Բազարովը շուտով հասկացավ, որ «նրանից բան չի դուրս գա», իսկ նրանից շուտ գալ, երես դարձնել, ի զարմանս նրա, ուժ չուներ։ Հենց որ Օդինցովան միտքն էր ընկնում, սկսում էր արյունը բորբոքվել, ասենք նա հեշտությամբ կարող էր իր արյունը հանդարտեցնել, բայց նրա մեջ մի ուրիշ բան էր բուն դրել, որը նա երբեք չէր ենթադրում, որը նա շարունակ ծաղրել էր, որը գրգռում էր նրա ամբողջ ինքնասիրությունը, վրդովում հպարտությունը։ Աննա Սերգեևնայի հետ ունեցած խոսակցությունների ժամանակ նա առաջվանից էլ ավելի էր արտահայտում իր անտարբեր արհամարհանքը դեպի ամեն ռոմանտիկ բան. իսկ երբ մենակ էր մնում, զայրույթով ընդունում էր, որ հենց ինքն էլ ռոմանտիկ է։ Այն ժամանակ գնում էր անտառ, սկսում էր խոշոր քայլերով մաս գալ ու հանդիպած ճյուղերը ջարդոտել, հազիվ լսելի ձայնով, իրեն էլ, Օդինցովային էլ կշտամբել, կամ թե չէ՝ գնում, մտնում էր խոտանոցը կամ մարագը, աչքերը պինդ փակում և ինքն իրեն ստիպում քնել, որը, իհարկե, հաջողվում էր ոչ ամեն ժամանակ։ Մեկ էլ հանկարծ նրան թվում էր, թե երբևիցե այդ ողջախոհ ձեռները իր վզովը կփաթաթվեն, թե այդ հպարտ շրթունքներն արձագանք կտան իր համբույրներին, թե այդ խելոք աչքերը քնքշությամբ, այո՛, քնքշությամբ կանգ կառնեն իր աչքերի վրա, և դրանից գլուխը կպտտվի և մի վայրկյան ինքը մոռացության մեջ կընկնի, մինչև որ դարձյալ իր մեջ կբորբոքվի զայրույթը։ Նա հաճախ որսում էր իրեն ամեն տեսակի «ամոթալի» խոհերում. ասես թե դևը նրան գրգռելիս լիներ։ Երբեմն նրան այնպես էր թվում, թե Օդինցովայի մեջ էլ է փոփոխություն առաջանում, որ նրա դեմքի արտահայտության մեջ մի նոր բան է երևում, որ գուցե... Բայց այդպիսի պարագային նա սովորաբար ոտները գետնին էր խփում կամ ատամները կրճատացնում և բռունցքով ինքն իրեն սպառնում։

Մինչդեռ Բազարովը շատ էլ չէր սխալվում։ Նա խիստ ներգործություն էր ունեցել Օդինցովայի երևակայության վրա, նա զբաղեցնում էր Օդինցովային և վերջինս նրա մասին շատ էր մտածում։ Բազարովի բացակայությամբ Օդինցովան չէր

կարոտում, չէր սպասում նրան, բայց երբ որ Բազարովը գալիս էր, նա իսկույն կենդանանում էր։ Օդինցովան հաճույքով նրա հետ մնում էր մենակ, հաճույքով հետը զրուցում էր, նույնիսկ այն միջոցին, երբ Բազարովը զայրացնում էր նրան կամ նրա ճաշակը, գեղեցիկ սովորությունները վիրավորում։ Ասես թե Օդինցովան ուզում էր թե նրան փորձել և թե իրեն ստուգել։

Մի անգամ Բազարովը պարտեզում Օդինցովայի հետ զրոսնելիս հանկարծ մռայլ ձայնով ասաց, որ շուտով մտադիր է գնալ գյուղ՝ հորը տեսության... Օդինցովան գույնը գցեց, կարծես թե մի բան նրա սիրտը ծակեց, և այնպես ծակեց, որ ինքն էլ զարմացավ, և հետո երկար մտածում էր, թե արդյոք այդ ի՞նչ էր նշանակում։ Բազարովը իր գնալու մասին այն մտքով չասաց, որ նրան փորձի, որ տեսնի, թե դրանից ինչ դուրս կգա. նա երբեք չէր «հնարում»։ Այդ օրը առավոտյան նա տեսնվել էր իր նախկին սպասավորի, այժմ իր հոր գործակատար Տիմոֆեյիչի հետ։ Այդ Տիմոֆեյիչը, որ խունացած դեղին մազերով, քամուց վառված կարմիր դեմքով և արտասուքի կաթիլներից կուչ եկած աչքերով մի փորձված, ճարպիկ ծերուկ էր, անակնկալ կերպով, հաստ մոխրա-կապտավուն մահուդե կարճիկ կիսամուշտակը հագին, մեջքին փոկի կտոր կապած, ձյութով օծած կոշիկները ոտին, բուռավ Բազարովի առաջ։

— Հը, ծերուկ, բարև,— բացականչեց Բազարովը։

— Աստուծու բարին ձեզ, իմ հոգի, Եվգենի Վասիլիչ,— սկսեց խոսել ծերունին և զվարթագին ժպտաց, որի պատճառով նրա ամբողջ դեմքը կնճիռներով ծածկվեց։

— Հը, ինչո՞ւ ես եկել։ Չլինի՞ թե հետևիցս են ուղարկել։

— Ինչ եք ասում, տեր իմ, ինչպե՞ս կարելի է,— թոթովեց Տիմոֆեյիչը (նա հիշեց աղայի խիստ պատվերը, որ ճանապարհ դնելիս տվել էր իրեն)։— Աղայիս գործերով քաղաք էի գնում, լսեցի ձերդ ողորմածության այստեղ լինելու մասին, դե ճամփի վրա էր, ասեցի, գնամ մի տեսնեմ... Թե չէ ինչպես կարելի է հրամանոցդ անհանգիստ անել։

— Դե լավ, մի խաբիր,— ընդհատեց նրան Բազարովը։— Մի՞թե այստեղով է գնում քաղաքի ճանապարհը։

Տիմոֆեյիչը ծամծմեց և ոչինչ չապատասխանեց։

— Հայրս առո՞ղջ է։

— Փառք աստուծո, առողջ է։

— Մա՞յրս էլ։

— Արինա Վլասևնան էլ, փառք աստուծո։

— Ինձ երևի սպասում են։

Ծերունին իր փոքրիկ գլուխը մի կողմ թեքեց։

— Ախ, Եվգենի Վասիլիչ, ախր ինչպես չսպասեն։ Հավատա աստծուն, ծնողներիդ նայելիս՝ սրտիցս արյուն է կաթում։

— Դե, լավ, լավ. մի նկարագրի։ Նրանց ասա, որ շուտով կգամ։

— Շատ բարի,— հառաչելով պատասխանեց Տիմոֆեյիչը։

Ծերունին տնից դուրս գալով, երկու ձեռքով գլխարկը քաշեց գլխին, բարձրացավ դուրսը դարպասի առաջ թողած աղքատիկ ճեպակառքը ու թեթև վազքով ճանապարհ ընկավ, միայն թե ոչ քաղաքի ուղղությամբ։

Նույն օրը երեկոյան Օդինցովան Բազարովի հետ միասին նստած էր իր սենյակում, իսկ Արկադին դահլիճում մաս էր գալիս ու Կատյայի նվագը ականջ դնում։ Իշխանուհին վերև, իր սենյակումն էր. նա առհասարակ հյուրեր չէր սիրում, մանավանդ այս «նորելուկ լկտիներին», ինչպես ասում էր նա։ Հանդիսավոր սենյակներում նա ինքն իրեն ուշում էր միայն. մինչդեռ իր սենյակում, իր աղախնի առաջ, երբեմն այնպիսի հայհոյանքներ էր թափում, որ գլխազարդը կեղծամի հետ վեր-վեր էր թռչկոտում գլխի վրա։ Օդինցովան այս ամենը գիտեր։

— Ինչպե՞ս թե ուզում եք գնալ,— ասաց նա,— հապա ձեր խոստո՞ւմը։

Բազարովը սթափվեց։

— Ո՞ր խոստումը։

— Մոռացե՞լ եք։ Ուզում էիք ինձ քիմիայից մի քանի դաս տալ։

— Ինչ արած։ Հայրս ինձ սպասում է, այլևս հապաղել չի կարելի։ Ասենք դուք կարող եք կարդալ Pelouse et

Frémy-ի «Notions générales de Chimie»[1], լավ գիրք է ու պարզ էլ գրված։ Ինչ որ պետք է, դուք նրա մեջ կգտնեք։

— Իսկ հիշո՞ւմ եք, ինձ հավատացնում էիք, թե գիրքը չի կարող փոխարինել... չեմ հիշում, թե ինչպես ասացիք. բայց գիտեք, թե ես ինչ եմ ուզում ասել... Հիշո՞ւմ եք։

— Ինչ արած,— կրկնեց Բազարովը։

— Ի՞նչ կա գնալու,— ասաց Օդինցովան ձայնը ցածրացնելով։

Բազարովը նայեց նրան։ Օդինցովան գլուխը ետ գցած, բազկաթոռի մեջքին, մինչև արմունկները բաց թևերը ծալել էր կրծքին։ Մի հատ լամպարի լույսի տակ, որի վրա թղթից շինած ցանց էր անցկացրած, նրա դեմքը դժգույն էր։ Սպիտակ լայն շրջազգեստը իր նուրբ ծալքերով ամբողջովին ծածկել էր նրան. հազիվ երևում էին նրա ոտների ծայրերը, նույնպես իրար վրա բերած։

— Իսկ ինչի՞ համար մնալ,— պատասխանեց Բազարովը։

Օդինցովան գլուխը թեթևակի շրջեց։

— Ինչպե՞ս թե ինչի համար։ Մի՞թե ձեզ համար ուրախ չէ ինձ մոտ։ Թե դուք կարծում եք, որ այստեղ չե՞ն ափսոսա ձեր գնալու համար։

— Համոզված եմ։

Օդինցովան լռեց։

— Իզուր եք այդպես կարծում։ Ասենք ես ձեր ասածին չեմ հավատում։ Դուք չէիք կարող այդ բանը լրջորեն ասել։

Բազարովը շարունակում էր անշարժ նստել։

— Եվգենի Վասիլևիչ, ինչի՞ եք լռել։

— Ի՞նչ ասեմ ձեզ։ Առհասարակ շարժե մարդկանց մասին ափսոսալ, իսկ իմ մասին առավել ևս։

— Այդ ինչո՞ւ։

— Ես դրական, անհետաքրքիր մարդ եմ։ Խոսել չգիտեմ։

— Դուք, Եվգենի Վասիլևիչ, ուզում եք, որ ձեզ հաճոյախոսություններ անեմ։

— Ես այդպիսի սովորություն չունեմ։ Մի՞թե դուք ինքներդ չգիտեք, որ կյանքի գեղարվեստական կողմն ինձ մատչելի չէ, այն կողմը, որ դուք այնքան գնահատում եք։

Օդինցովան թաշկինակի անկյունը կծեց։

— Մտածեցեք ինչ ուզում եք,— ասաց նա,— բայց երբ գնաք, ես տաղտկություն կզգամ։

— Արկադին կմնա,— ասաց Բազարովը։

Օդինցովան թեթևակի թոթվեց ուսը։

— Ես տաղտկություն կզգամ,— կրկնեց նա։

— Իրա՞վ։ Համենայն դեպս ձեր ձանձրույթը երկար չի տևի։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում։

— Նրա համար, որ ինքներդ եք ինձ ասել, թե դուք ձանձրույթ կզգաք այն ժամանակ միայն, երբ որ ձեր կարգ ու կանոնը խանգարվում է։ Դուք ձեր կյանքը այնպես անսխալ ճշտությամբ կարգավորել եք, որ այստեղ չի կարող ոչ տաղտուկ լինել, ոչ կարոտ զգալ... և ոչ էլ որևէ ծանր զգացմունք։

— Եվ դուք կարծում եք, թե ես անսխալակա՞ն եմ... այսինքն, որ ես խիստ կանոնավոր դրությա՞ն մեջ եմ դրել կյանքս։

— Ինչ ասել կուզի։ Ահավասիկ, օրինակ, մի քանի րոպեից ժամը տասը կխփի, և արդեն առաջուց գիտեմ, որ դուք ինձ կվռնդեք։

— Ոչ, չեմ վռնդի, Եվգենի Վասիլևիչ, կարող եք մնալ։ Բացեք այս պատուհանը... շունչս կտրվում է։

Բազարովը վեր կացավ և հրեց պատուհանը։ Փեղկը միանգամից թրխկալով բացվեց... Բազարովը չէր կարծում, թե այդպես հեշտ է բացվում. նրա ձեռքերը դողում էին։ Խավար, քնքուշ գիշերը նայում էր սենյակի մեջ. երկինքը համարյա թե սև էր, ծառերը թեթևակի սոսափում էին, և ազատ, մաքուր օդի թարմ հոտը լցվեց սենյակի մեջ։

— Բաց թողեք վարագույրը և նստեցեք,— ասաց Օդինցովան։— Ձեր գնալուց առաջ ես ուզում եմ մի քիչ զրուցել ձեզ հետ։ Ձեր մասին մի որևէ բան պատմեցեք. դուք երբեք ձեր մասին չեք խոսում։

— Ես, Աննա Սերգեևնա, աշխատում եմ ձեզ հետ զրուցել օգտակար բաների մասին։

---

1 Ֆրեմի և Տրեմի— «Քիմիայի հիմունքները» (ֆրանս.)։

— Շատ համեստ եք... Բայց ես կուզեի մի քանի բան իմանալ ձեր մասին, ձեր ընտանիքի մասին, ձեր հոր մասին, որի պատճառով մեզանից հեռանում եք։

«Ինչո՞ւ է այդպիսի խոսքեր ասում»,— մտածեց Բազարովը։

— Ամենևին հետաքրքրական բաներ չեն դրանք,— ասաց նա բարձր ձայնով,— մանավանդ ձեզ համար. մենք հասարակ մարդիկ ենք...

— Հապա ես, ձեր կարծիքով, արիստոկրատուհի՞ եմ։

Բազարովը աչքը Օդինցովայի վրա գցեց։

— Այո,— չափազանցրած խստությամբ ասաց նա։

Օդինցովան ծիծաղեց։

— Տեսնում եմ, դուք ինձ քիչ եք ճանաչում, թեև հավատացնում եք, թե բոլոր մարդիկ իրար նման են և որ չարժե նրանց ուսումնասիրել։ Մի ժամանակ ես իմ կյանքը կպատմեմ ձեզ... բայց առաջ դուք ձերը պատմեցեք։

— Ես ձեզ քիչ եմ ճանաչում,— կրկնեց Բազարովը։— Գուցե դուք իրավացի եք, ով գիտե, գուցե արդարև յուրաքանչյուր մարդ մի հանելուկ է։ Թեկուզ հենց դուք, օրինակ, դուք հասարակությունից խույս եք տալիս, հասարակությունից ճնշվում եք, և ձեզ մոտ ապրելու հրավիրեցիք երկու ուսանողի։ Ինչո՞ւ դուք ձեր այդ գեղեցկությամբ, ձեր այդ խելքով ապրում եք գյուղում։

— Ինչպե՞ս։ Այդ ինչպե՞ս ասացիք,— աշխուժությամբ վրա բերեց Օդինցովան։— Իմ... գեղեցկությա՞մբ։

Բազարովը հոնքերը կիտեց։

— Այդ միևնույն է,— փնթփնթաց նա,— ուզում էի ասել, որ լավ չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք գյուղում բնակվում։

— Այդ բանը չեք հասկանում... Բայց հո ինքներդ ձեզ ինչ-որ կերպ բացատրո՞ւմ եք այդ բանը։

— Այո... ինձ թվում է, թե դուք այն պատճառով եք շարունակ միևնույն տեղում մնում, որ ինքներդ ձեզ շատ եք փափուկ կյանքի վարժեցրել, որովհետև դուք շատ եք սիրում հեշտ, հարմարավոր կյանք վարել, իսկ մնացած ուրիշ բաների վերաբերմամբ անտարբեր եք։

Օդինցովան դարձյալ ծիծաղեց։

— Դուք կտրականապես չեք ուզում հավատալ, որ ես էլ ընդունակ եմ հափշտակվելու։

Բազարովը հոնքերի տակից նրան նայեց։

— Հետաքրքրությամբ՝ գուցե. բայց ոչ այլապես։

— Իրա՞վ։ Այժմ ես հասկանում եմ, թե մենք ինչո՞ւ իրար հետ մտերմացանք։ Չէ որ դուք էլ եք ինձ նման։

— Մենք մտերմացանք... — խուլ ձայնով ասաց Բազարովը։

— Հա՜... ախր ես մոռացա, որ դուք ուզում էիք գնալ։

Բազարովը վեր կացավ։ Լամպարը աղոտ վառվում էր մթնած, անուշաբույր, առանձնացած սենյակի մեջտեղում, երբեմնակի տատանվող եղեգնյա վարագույրի արանքից ներս էր զեղվում գիշերվա գրգռիչ թարմությունը, լսվում էր նրա խորհրդավոր շշունջը։ Օդինցովայի մարմնի ոչ մի մասնիկը չէր շարժվում. բայց գաղտնի հուզմունքը կամաց-կամաց համակում էր նրան... Նույնը փոխանցվում էր նաև Բազարովին։ Վերջինս հանկարծ զգաց, որ ինքը մեն-մենակ է նրատի, գեղանի կնոջ հետ...

— Այդ ո՞ւր,— դանդաղությամբ արտասանեց Օդինցովան։

Բազարովը ոչինչ չպատասխանեց և նստեց աթոռակի վրա։

— Այդպես ուրեմն, դուք ինձ համարում եք մի խաղաղ, քնքշացած, երես առած էակ,— շարունակեց Օդինցովան միևնույն ձայնով, առանց աչքը պատուհանից հեռացնելու։— Մինչդեռ, որքան ես ինձ գիտեմ, ես շատ անբախտ եմ։

— Անբախտ եք։ Ինչո՞ւ։ Մի՞թե դուք կարող եք որևէ նշանակություն տալ ստոր բամբասանքներին։

Օդինցովայի դեմքը մռայլեց։ Նա վշտացավ, որ Բազարովը միտքն այդպես հասկացավ։

— Այդ բամբասանքները, Եվգենի Վասիլևիչ, մինչև անգամ իմ ծիծաղս էլ չեն շարժում, և ես այնքան եմ հպարտ, որ չեմ թույլ տա նույնիսկ, որ ինձ անհանգիստ անեն։ Ես անբախտ եմ այն պատճառով... որ իմ մեջս չկա ապրելու փափագ, ցանկություն չկա։ Կասկածանքով եք վրա նայում. երևի մտածում եք՝ այս ասում է «արիստոկրատուհին», որը ամբողջապես ժանյակների մեջ է թաղված, նրա-

տած է մախմուրե բազկաթոռի վրա։ Ես չեմ ծածկում. սիրում եմ այն, որը դուք փափուկ կյանք եք անվանում, բայց միևնույն ժամանակ ես ապրելու քիչ ցանկություն ունեմ։ Ինչպես գիտեք, այնպես էլ հաշտեցրեք այս հակասությունը։ Ասենք՝ ձեր աչքում այդ ամենը ռոմանտիզմ է։

Բազարովը գլուխը շարժեց։

— Դուք առողջ եք, անկախ, հարուստ. ուրիշ ի՞նչ է պետք։ Էլ ի՞նչ եք ուզում։

— Ինչ եմ ուզում,— կրկնեց Օդինցովան և հառաչեց։— Ես սաստիկ հոգնել եմ. ծերացել. ինձ թվում է, թե շատ ժամանակ է, որ ապրում եմ։ Այո, ես ծեր եմ,— ավելացրեց նա՝ թիկնոցի ծայրերը մերկ ձեռների վրա քաշելով։ Նրա աչքերը հանդիպեցին Բազարովի աչքերին, և նա մի փոքր կարմրեց։— Որքան հիշողություններ են մնում իմ հետևում—Պետերբուրգի կյանքս, հարստություն, ապա աղքատություն, ապա հորս մահը, ամուսնությունս, հետո ինչպես որ հարկն էր, արտասահման գնալս... Հիշողություններս շատ են, բայց հիշելու բան չկա, և առաջիկայում իմ առջև երկար ու երկար ճանապարհ է, իսկ նպատակ չկա... Ես չեմ էլ ուզում առաջ գնալ։

— Դուք այդչափ հիասթափվա՞ծ եք,— հարցրեց Բազարովը։

— Ոչ,— ընդմիջումներով ասաց Օդինցովան,— բայց ես բավարարված չեմ։ Ինձ թվում է, եթե ես կարողանայի մի բանի ամուր կապվել...

— Դուք սիրել եք ուզում,— ընդհատեց Բազարովը,— բայց սիրել չեք կարող. ահա թե որն է ձեր դժբախտությունը։

Օդինցովան սկսեց իր թիկնոցի թևերը դիտել։

— Մի՞թե չեմ կարող սիրել։

— Հազիվ թե։ Բայց ես իզուր այդ բանը դժբախտություն անվանեցի։ Ընդհակառակն, նա է ավելի շուտ ցավակցության արժանի, ում այդ բանը պատահում է։

— Ի՞նչ է պատահում։

— Սիրել։

— Դուք այդ որտեղի՞ց գիտեք։

— Լսելով գիտեմ,— բարկացած պատասխանեց Բազարովը։

«Դու կոկետություն ես անում,— մտածեց նա,— ձանձրույթ ես զգում և պարապությունից ինձ գրգռում ես, մինչդեռ ես...»։ Արդարև, նրա սիրտը ուզում էր դուրս պրծնել։

— Մանավանդ որ դուք գուցե և շատ խստապահանջ եք,— ասաց նա ամբողջ մարմնով առաջ խոնարհված ու բազկաթոռի եզերքի ժապավենի հետ խաղալով։

— Գուցե։ Իմ կարծիքով՝ կա՛մ բոլորը, կա՛մ ոչինչ։ Կյանքի դիմաց կյանք։ Թե իմը վերցրիր, տուր քոնը, և այդ ժամանակ արդեն առանց ափսոսանքի ու անդարձ։ Թե չէ՝ ավելի լավ է ոչինչ չի հարկավոր։

— Վատ բան չէ,— նկատեց Բազարովը,— արդարացի պայման է, և ես զարմանում եմ, թե ինչպե՞ս է եղել, որ մինչև օրս... ձեր ուզածը չեք գտել։

— Իսկ դուք կարծում եք, թե հե՞շտ բան է լիովին անձնատուր լինել մի որևէ բանի։

— Հեշտ չէ, եթե սկսես մտածել, սպասել, ինքդ քեզ մեծ գին տալ, այսինքն՝ թանկ գնահատել քեզ, մինչդեռ առանց երկար-բարակ մտածելու անձնատուր լինելը շատ հեշտ է։

— Ինչպե՞ս ինքդ քեզ գին չտաս։ Թե որ ես ոչ մի արժեք չունենամ, էլ ո՞ւմն է պետք իմ անձնվիրությունը։

— Այդ արդեն իմ գործը չէ. այդ արդեն ուրիշի գործն է՝ քննել իմ գինը։ Գլխավորը՝ պետք է կարողանալ անձնատուր լինել։

Օդինցովան բազկաթոռի մեջքից մի քիչ բաժանվեց։

— Այնպես եք խոսում, կարծես թե դուք այդ ամենը փորձել եք,— սկսեց նա։

— Խոսքը վրա եկավ՝ ասացի, Աննա Սերգեևնա, գիտեք, այդ ամենը իմ խելքի բանը չեն։

— Բայց դուք ինքներդ կկարողանայի՞ք անձնատուր լինել։

— Չգիտեմ, չեմ ուզում պարծենալ։

Օդինցովան ոչինչ չասաց, և Բազարովն էլ լռեց։ Ընդունարանից դաշնամուրի ձայներ հասան նրանց։

— Ինչո՞ւ է Կատյան այսպես ուշ ժամանակ նվագում,— նկատեց Օդինցովան։

Բազարովը տեղից վեր կացավ։

— Հա, ուղիղ որ արդեն ուշ է, ձեր քնելու ժամանակն է։

— Սպասեցեք, ո՞ւր եք շտապում... պետք է ձեզ միայն մի խոսք ասեմ։

— Ի՞նչ խոսք։

— Սպասեցեք,— շշնջաց Օդինցովան։ Նրա աչքերը կանգ առան Բազարովի վրա. թվում էր, թե ուշադրությամբ դիտում էր նրան։

Բազարովը քայլեց սենյակի մեջ, հետո հանկարծ մոտեցավ նրան, շտապ ասաց «մնաք բարով», նրա ձեռքն այնպես պինդ սեղմեց, որ քիչ էր մնում, թե տիկինը ճչար, ու դուրս գնաց։ Օդինցովան իրար կպած մատները շրթունքներին տարավ, վրան փչեց, և հանկարծ, բուռն կերպով վեր թռչելով բազկաթոռի վրայից, արագ քայլերով դեպի դուռը գնաց, կարծես թե կամենալով Բազարովին ետ կանչել... Աղախինը ներս մտավ սենյակ՝ արծաթե մատուցարանի վրա դրված ջրամանով։ Օդինցովան կանգ առավ, պատվիրեց աղախնին հեռանալ, նստեց և նորից ու նորից սկսեց միտք անել։ Նրա մազերի հյուսը բացվել էր և սև օձի նման ընկել ուսի վրա։ Դեռ երկար ժամանակ լամպարը վառ էր Աննա Սերգեևնայի սենյակում, և երկար ժամանակ նա մնացել էր անշարժ և ժամանակ առ ժամանակ մատներով շփում էր իր ձեռները, որոնց դիպչում էր գիշերային ցուրտը։

Իսկ Բազարովը մի երկու ժամ անց, ցողից թրջված կոշիկներով, գզգզված ու թթված, վերադարձավ իր ննջարանը։ Արկադին, գիրքը ձեռին, սերթուկի բոլոր կոճակները կոճկած, նստած էր գրասեղանի առաջ։

— Դու դեռ չե՞ս պառկել,— ասաց նա մի տեսակ դժկամությամբ։

— Այսօր Աննա Սերգեևնայի հետ երկար նստեցիք,— ասաց Արկադին՝ նրա հարցին չպատասխանելով։

— Այո, մինչ դուք Կատերինա Սերգեևնայի հետ դաշնամուր էիք նվագում, ես էլ նրա հետ էի նստել ամբողջ ժամանակ։

— Ես չէի նվագում... — սկսեց Արկադին ու լռեց։ Նա

զգում էր, որ արցունքները լցվում էին աչքերը, մինչդեռ չէր ուզում իր ծաղրասեր ընկերոջ առաջ լաց լինել։

XVIII

Մյուս օրը, երբ Օդինցովան թեյի եկավ, Բազարովը երկար ժամանակ նստել էր գլուխը գավաթի վրա կախած, ու մեկ էլ հանկարծ նայեց նրան... Օդինցովան շուտ եկավ նրա կողմը, ասես թե նա իրեն հրեց, և Բազարովին էլ թվաց, թե տիկնոջ դեմքը մի գիշերվա մեջ թեթև կերպով գժգունել էր։ Օդինցովան շուտով գնաց իր սենյակը և մեկ էլ նախաճաշի եկավ։ Առավոտից եղանակն անձրևային էր, զբոսնելու հնար չկար։ Բոլորն էլ ընդունարանում էին հավաքվել։ Արկադին վերցրեց ամսագրի վերջին համարն ու սկսեց կարդալ։ Իշխանուհին, ըստ իր սովորության, սկզբում իր դեմքի վրա զարմանք արտահայտեց, ասես թե Արկադին մի ինչ-որ անվայել բան էր մտադրվում անել, ապա չար հայացքը սևեռեց Արկադիի վրա, բայց վերջինս նրա վրա ուշադրություն չդարձրեց։

— Եվգենի Վասիլևիչ,— ասաց Աննա Սերգեևնան,— եկեք գնանք իմ սենյակը... Ուզում եմ ձեզ հարցնել... Երեկ դուք մի ձեռնարկի անուն տվիք...

Օդինցովան վեր կացավ և դեպի դուռը գնաց։ Իշխանուհին մի այնպիսի արտահայտությամբ սկսեց իր չորս կողմը նայել, կարծես թե ուզում էր ասել. «Տեսեք, տեսեք, թե ինչպես եմ զարմանում», և դարձյալ հայացքը Արկադիի վրա սևեռեց, բայց սա ձայնը բարձրացրեց, իր կողքին նստած Կատյայի երեսին նայեց ու շարունակեց կարդալը։

Օդինցովան արագ քայլերով հասավ իր առանձնասենյակը։ Բազարովը առանց աչքերը վեր բարձրացնելու, միայն իր առաջից սահող մետաքսյա զգեստի նուրբ սուլոցին ու խշշոցին ականջ դնելով, աշխուժությամբ հետևում էր նրան։ Օդինցովան նստեց նույն բազկաթոռի վրա, որի վրա նախօրեին նստած էր, Բազարովն էլ իր երեկվա տեղը նստեց։

— Ուրեմն ինչպե՞ս էր այն գրքի անունը,— սկսեց Օդինցովան փոքր ինչ լռելուց հետո։

— Pelouse et Frémy, Notions générales...— պատաս-

խանեց Բազարովը։—Ասենք, կարելի է ձեզ հանձնարարել նաև Ganot-ի Traité élémentaire de physique expérimentale[1] Այդ գրքի պատկերներն ավելի պարզ են և առհասարակ այդ դասագիրքը...

Օդինցովան մեկնեց ձեռքը։

— Ներեցեք ինձ, Եվգենի Վասիլևիչ, ես ձեզ այստեղ դասագրքերի մասին դատողություններ անելու համար չկանչեցի։ Ես ուզում էի մեր երեկվա խոսակցությունը վերսկսել։ Այնպես հանկարծակի հեռացաք... Ձեզ ձանձրալի չի՞ լինի։

— Ես պատրաստ եմ ձեզ լսելու, Աննա Սերգեևնա։ Բայց երեկ ինչի՞ մասին էինք խոսում մենք։

Օդինցովան խեթ հայացք ձգեց Բազարովի վրա։

— Մենք, կարծեմ, երջանկության մասին էինք խոսում։ Ես իմ մասին էի պատմում ձեզ։ Ի դեպ՝ ահա ես հիշեցի «երջանկություն» խոսքը։ Ասացեք, ինչի՞ցն է, որ նույնիսկ երբ մենք հրճվում ենք, օրինակ, երաժշտությամբ, լավ երեկոյով, համակրելի մարդու հետ զրուցելով, ինչո՞ւ այդ ամենը թվում է, ավելի շուտ իբրև ակնարկ ինչ-որ անսահման, որևէ մի տեղ գոյություն ունեցող երջանկության մասին, քան թե իսկական երջանկություն է, այսինքն մի այնպիսի երջանկություն, որը մեր ձեռին է։ Այդ ինչի՞ց է։ Կամ գուցե դուք ոչ մի այդպիսի բան չե՞ք զգում։

— Դուք հո գիտե՞ք առածը՝ «Այնտեղ լավ է, ուր մենք չկանք»,— պատասխանեց Բազարովը,— մանավանդ որ երեկ հենց ինքներդ էիք ասողը, թե բավարարված չեք։ Այդպիսի մտքեր իսկապես, գլխիս մեջ չեն ծագում։

— Գուցե դրանք ձեզ ծիծաղելի՞ են թվում։

— Ոչ, բայց այդպիսի մտքեր գլխումս չեն ծագում։

— Իրա՞վ։ Գիտեք, ես շատ կուզենայի իմանալ, թե դուք ինչ բանի մասին եք մտածում։

— Ինչպե՞ս։ Ես ձեզ չեմ հասկանում։

— Լսեցեք. ես վաղուց էի ուզում ձեզ հետ բացատրվել։ Կարիք չկա ձեզ ասելու, այդ ինքներդ էլ լավ գիտեք, որ դուք սովորական մարդկանցից չեք։ Դուք դեռ երիտասարդ եք, և ամբողջ կյանքը ձեր առջևն է։ Ինչ բանի եք պատրաստվում, ի՞նչ ապագա է սպասում ձեզ։ Ուզում եմ ասել. ի՞նչ նպատակի եք ձգտում, ո՞ւր եք գնում, ի՞նչ կա ձեր սրտում։ Մի խոսքով, դուք ո՞վ եք, ի՞նչ եք։

— Դուք ինձ զարմացնում եք, Աննա Սերգեևնա։ Ձեզ հայտնի է, որ ես պարապում եմ բնական գիտություններով, իսկ թե ես ո՞վ եմ...

— Այո, ո՞վ եք։

— Ես արդեն հայտնեցի ձեզ, որ ես գավառական բժիշկ եմ լինելու։

Աննա Սերգեևնան անհամբեր շարժում արեց։

— Ինչո՞ւ են այդ խոսքերը։ Ինքներդ դրան չեք հավատում։ Արկադին կարող էր ինձ այդպիսի պատասխան տալ, և ոչ դուք։

— Բայց ինչո՞վ է Արկադին...

— Հերիք է։ Մի՞թե կարելի է, որ դուք մի այդպիսի համեստ գործունեությամբ բավականանայիք, և հենց ինքներդ չե՞ք շարունակ պնդում, թե ձեզ համար բժշկությունը գոյություն չունի։ Դուք և՝ ձեր այդ ինքնասիրությամբ՝ գավառական բժի՜շկ։ Դուք ինձ այդպիսի պատասխան եք տալիս, որպեսզի խույս տաք ինձանից, որովհետև դուք ոչ մի վստահություն չեք տածում դեպի ինձ։ Բայց գիտե՞ք, որ, Եվգենի Վասիլևիչ, ես կարող էի հասկանալ ձեզ, գնահատել ձեզ, ես ինքս էլ ձեզ նման աղքատ ու ինքնասեր եմ եղել. գուցե ես էլ անցել եմ այնպիսի փորձությունների միջով, ինչպես և դուք եք անցել։

— Այդ ամենը շատ լավ, Աննա Սերգեևնա, բայց ներեցեք ինձ... Ընդհանրապես ես սովոր չեմ իմ մտքերս պարզելու, և իմ ու ձեր մեջ մի այնպիսի հեռավորություն կա...

— Ի՞նչ հեռավորություն։ Դուք դարձյալ կասեք, թե ես արիստոկրատուհի եմ։ Հերիք է, Եվգենի Վասիլևիչ, կարծեմ արդեն ապացուցեցի, որ...

— Դրանից բացի,— ընդհատեց Բազարովը,— ի՞նչ հարկ կա խոսել ու մտածել ապագայի մասին, որը մեծ մասամբ մեզանից չի կախված։ Առիթ կլինի մի բան անելու՝ շատ լավ, իսկ եթե առիթ չի լինի՝ գոնե այսքանովն էլ գոհ կլինես, որ նախապես իզուր տեղը չես դատարկախոսել։

— Բարեկամական զրույցը դատարկախոսություն՞ եք

[1] Գանո—«էքսպերիմենտալ ֆիզիկայի տարրական դասագիրք» (Ֆր.)։

համարում... Կամ գուցե դուք ինձ, որպես կնոջ, վստահության արժանի չե՞ք համարում։ Դուք չէ՞ որ մեզ ամենքիս էլ արհամարհում եք։

— Ձեզ որ չեմ արհամարհում, Աննա Սերգեևնա, այդ ինքներդ էլ գիտեք։

— Ոչ, ես ոչինչ չգիտեմ... բայց ենթադրենք, թե հասկանում եմ, որ ձեր ապագա գործունեության մասին դուք ցանկություն չունեք խոսելու, բայց այն, ինչ որ այժմս տեղի է ունենում ձեր ներսում։

— Տեղի է ունենում,— կրկնեց Բազարովը,— ասես թե ես մի պետություն եմ կամ հասարակություն։ Համենայն դեպս, այդ ամենևին հետաքրքրական չէ. և այն էլ, որ մի՞թե մարդս միշտ կարող է բարձր ձայնով պատմել այն, ինչ որ իր ներսում «տեղի է ունենում»։

— Ձեմ հասկանում, թե ինչո՞ւ չի կարելի ասել այն, ինչ որ սրտումդ ունես։

— Դուք կարո՞ղ եք,— հարցրեց Բազարովը։

— Կարող եմ,— մի քիչ տատանվելուց հետո ասաց Աննա Սերգեևնան։

Բազարովը գլուխը խոնարհեց։

— Դուք ինձանից բախտավոր եք։

Աննա Սերգեևնան հարցական նրան նայեց։

— Ինչպես կուզեք,— շարունակեց նա,— բայց էլի ինձ մի բան ասում է, թե իզուր տեղը չէ, որ մենք իրար մոտեցանք, որ մենք լավ բարեկամներ կլինենք։ Ես հավատացած եմ, որ ձեր այդ, ինչպես ասեմ, լարվածությունը, ձեր զսպվածությունը վերջապես կչքանա։

— Իսկ դուք իմ մեջ նկատե՞լ եք զսպվածություն... էլի, ինչպես ասացիք... լարվածությո՞ւն։

— Այո։

Բազարովը վեր կացավ ու մոտեցավ պատուհանին։

— Եվ դուք կցանկայիք գիտենալ այդ լարվածությանս պատճառը, կուզեիք իմանալ, թե ի՞նչ է տեղի ունենում ներսո՞ւմս։

— Այո,— պատասխանեց Օդինցովան, մի տեսակ ինքն իրեն համար էլ դեռ անհասկանալի երկյուղով։

— Եվ չե՞ք նեղանալ։

— Ոչ։

— Ո՞չ,— Բազարովը մեջքը Օդինցովային դարձրած էր կանգնել։— Ուրեմն իմացեք, որ ես ձեզ հիմարաբար, գժվածի նման սիրում եմ... Ահա, այժմ իմացաք։

Օդինցովան երկու ձեռքն էլ առաջ մեկնեց, իսկ Բազարովը ճակատը դեմ տվավ լուսամուտի ապակուն։ Նա խեղդվում էր. նրա ամբողջ մարմինը ակներև կերպով թպրտում էր, բայց դա պատանեկական վեհերկոտության դողը չէր, անդրանիկ խոստովանության քաղցր սարսափը չէր նրան պաշարածը. դա բուռն և ծանր կիրքն էր նրա մեջ շարժվում, մի կիրք, որ նման էր ցասման և, գուցե նաև, դրա նման մի բանի... Օդինցովան և սարսափեց, և խղճաց նրան։

— Եվգենի Վասիլևիչ,— խոսեց նա, և ակամա քնքշություն լսվեց նրա ձայնի մեջ։

Բազարովն արագ շուռ եկավ, լափող հայացք ձգեց Օդինցովայի վրա, և, նրա երկու ձեռքից բռնելով, քաշեց ու սեղմեց իր կրծքին։

Օդինցովան իսկույն չազատվեց նրա գրկից. բայց մի ակնթարթ հետո նա արդեն կանգնել էր հեռու անկյունում և այնտեղից Բազարովին էր նայում։ Բազարովը նետվեց դեպի նա...

— Դուք իմ միտքս չհասկացաք,— շշնջաց Օդինցովան շոապ երկյուղով։ Թվում էր, թե բավական է Բազարովը մի քայլ էլ աներ, և Օդինցովան պիտի ճչար... Բազարովը շրթունքները կծեց ու դուրս գնաց։

Կես ժամից հետո աղախինը Բազարովից մի երկտող բերեց Աննա Սերգեևնային. «Պետք է այսօր անե՞թ գնամ այստեղից, թե՞ կարող եմ մինչև վաղը մնալ»։ «Ի՞նչ հարկ կա գնալու։ Ես ձեզ չէի հասկանում, դուք էլ իմ միտքը չհասկացաք»,— պատասխանեց Աննա Սերգեևնան, իսկ ինքը մտածեց՝ «Ինքս ինձ էլ չէի հասկանում»։

Մինչև ճաշ Օդինցովան դուրս չեկավ, և ձեռները ետևը դրած, երբեմն-երբեմն կանգ առնելով մերթ պատուհանի ու մերթ հայելու առաջ, շարունակ ետ ու առաջ ման էր գալիս իր սենյակի մեջ և թաշկինակով դանդաղ-դանդաղ սրբում վիզը, որի վրա նրան շարունակ թվում էր, թե այրող բիծ կա։ Նա ինքն իրեն հարցնում էր, թե ի՞նչն էր իրեն դրդում Բա-

գարովին ստիպելու, որ անկեղծ լինի, և թե արդյոք ինքը մի բան չէ՞ր կասկածում... «Մեղավոր եմ,— ասաց նա բարձրաձայն,— բայց չէի կարող նախատեսել, որ կարող է մի այդպիսի բան լինել»։ Նա մտքի մեջ էր ընկնում ու կարմրում՝ մտաբերելով Բազարովի համարյա գազանային դեմքը, երբ նա իր վրա հարձակվեց...

«Թե՞»,— արտասանեց նա հանկարծ և կանգ առավ ու խապտպիկը թափ տվեց... Նա իրեն տեսավ հայելու մեջ, իր եռ գցած գլուխը՝ խորհրդավոր ժպիտը կիսախուփ, կիսաբաց աչքերին ու շրթունքներին, կարծես թե այդ բոպեին մի այնպիսի բան էր ասում նրան, որից ինքն էլ շփոթվեց...

«Ո՜չ,— վերջապես վճռեց նա,— ով է իմանում բանը որտեղ կհասներ, այդպիսի բանով կատակ անել չի կարելի, էլի աշխարհիս երեսին ամենալավը հանգստությունն է»։

Նրա հանգիստը չխախտվեց. բայց նա տխրեց, մինչև իսկ մի անգամ էլ լաց եղավ, թեպետ ինքն էլ չհասկացավ, թե ինչու. այնուամենայնիվ այդ լացը հասցրած վիրավորանքից չէր առաջացել։ Նա իրեն վիրավորված չէր զգում, հապա ավելի մեղավոր էր զգում։ Զանազան անորոշ զգացմունքների ներգործությունից, սահող կյանքի գիտակցությունից և նոր բան զգալու ցանկությունից դրդված նա իրեն ստիպել էր հասնելու մինչև որոշ սահմանի, իրեն ստիպել էր նայելու այդ սահմանի մյուս կողմը, և այնտեղ տեսավ մինչև անգամ ոչ թե անդունդը, այլ դատարկություն... կամ այլանդակություն։

XIX

Որքան էլ Օդինցովան ինքն իրեն զսպելիս լիներ, որքան էլ որ ամեն տեսակ նախապաշարմունքներից բարձր կանգնած լիներ, դարձյալ, երբ ճաշին սեղանատուն եկավ, իրեն անհարմար դրության մեջ էր զգում։ Ասենք ճաշը բավական հաջող անցավ։ Եկավ Պորֆիրի Պլատոնիչը, զանազան անեկդոտներ պատմեց. նա նոր էր քաղաքից վերադարձել։ Ի միջի այլոց հաղորդեց, որ նահանգապետը իր հատուկ հանձնարարության պաշտոնյաներին պատվիրել է, որպեսզի խթաններ գործածեն, որ եթե դեպք լինի նրանց ձիով մի տեղ ուղարկելու, շուտ կատարվի։ Արկադին ցածր ձայնով զրուցում էր Կատյայի հետ և քաղաքականություն բանեցնելով՝ իշխանական ծառայություններ էր մատուցում։ Բազարովը խոժոռած՝ համառ լռություն էր պահում։ Օդինցովան մի երկու անգամ բացահայտ, ոչ թե ծածկապես, նայեց Բազարովի խիստ և մաղձոտ դեմքին, որ աչքերը ցած գցած և արհամարհական վճռականություն էր դրոշմել դեմքի ամեն մի գծի վրա, և մտածում. «ո՜չ... ո՜չ... ո՜չ...»։ Ճաշից հետո բոլորով միասին գնացին պարտեզ և Օդինցովան, տեսնելով, որ Բազարովն ուզում է իր հետ առանձին խոսել, մի քանի քայլ մի կողմ քաշվեց ու կանգ առավ։ Բազարովը մոտեցավ նրան և այստեղ ևս աչքերը չբարձրացնելով՝ խուլ ձայնով ասաց.

— Ես պետք է ձեզանից ներողություն խնդրեմ, Աննա Սերգեևնա։ Դուք չեք կարող ինձ վրա չբարկանալ։

— Ոչ, ես ձեզ վրա չեմ բարկացել, Եվգենի Վասիլիչ,— պատասխանեց Օդինցովան,— բայց վշտացած եմ։

— Ավելի վատ։ Համենայն դեպս ես լավ պատժվեցի։ Հավանորեն դուք ևս համաձայն կլինեք, որ իմ դրությունը շատ հիմար դրություն է։ Դուք ինձ գրել էիք. «Ի՞նչ հարկ կա գնալու»։ Իսկ ես չեմ կարող և չեմ էլ ուզում մնալ։ Վաղն այստեղ չեմ լինի։

— Եվգենի Վասիլիչ, ինչո՞ւ եք...

— Ինչո՞ւ եմ գնում։

— Ոչ, ես չէի ուզում ասել։

— Անցածը չի կարելի վերադարձնել, Աննա Սերգեևնա... իսկ վաղ թե ուշ այդ բանը պիտի լիներ։ Հետևաբար հարկավոր է, որ ես գնամ։ Միմիայն մի պայմանով կարող էի ես այստեղ մնալ. բայց այդ պայմանը երբեք չի կարող կատարվել։ Դուք հո, ներեցեք հանդգնությանս, ինձ չե՞ք սիրում և երբեք էլ չեք սիրի, այնպես չէ՞։

Բազարովի աչքերը մի վայրկյան փայլատակեցին սև հոնքերի տակից։

Աննա Սերգեևնան չէր պատասխանում նրան։ «Ես այս մարդուց վախենում եմ»,— անցավ նրա մտքով։

— Մնաք բարով,— ասաց Բազարովը կարծես թե նրա միտքը հասկանալով ու քայլերը դեպի տուն ուղղեց։

Աննա Սերգեևնան կամացուկ նրա հետևից գնաց, և, Կատ-

յային կանչելով, նրան թևանցուկ արեց։ Մինչև երեկո նա Կատյայից չհեռացավ։ Օդինցովան թղթախաղի չնստեց, և շարունակ ծիծաղում էր, որը սակայն ամենևին չէր սազ գալիս նրա դժգույն ու շփոթված դեմքին։ Արկադին տարակուսանքի մեջ էր և դիտում էր նրան, ինչպես որ երիտասարդներն են դիտում, այսինքն՝ շարունակ ինքն իրեն հարց էր տալիս, թե այդ ի՞նչ է նշանակում։ Բազարովը փակվեց իր սենյակում. սակայն թեյի եկավ։ Աննա Սերգեևնան ուզում էր նրան մի որևէ բարի խոսք ասել, բայց չէր իմանում, թե ինչպես խոսք բանա...

Մի անակնկալ դեպք նրան ազատեց դժվարությունից. սենեկապանը զեկուցեց Սիտնիկովի գալու մասին։

Դժվար է խոսքով ասել, թե երիտասարդ առաջադիմականը ինչպիսի աշխուժով ներս ընկավ։ Իրեն հատուկ պրրոկերես բնավորությամբ վճռած լինելով գնալ գյուղ մի կնոջ մոտ, որին հազիվ էր ճանաչում, որը նրան երբեք չէր հրավիրել, բայց որի տանը, իր հավաքած տեղեկությունների համաձայն, հյուր էին այնպիսի խելոք ու իրեն մոտիկ անձեր, բայց և այնպես սաստիկ քաշվում էր և փոխանակ կանխապես սերտած ներողության խոսքերն ասելու և բարևները տալու, ինչ-որ անմիտ բան դուրս տվեց, թե իբր Եվգոքսիա Կուկշինան իրեն ուղարկել է իմանալու Աննա Սերգեևնայի առողջության մասին, և որ Արկադի Նիկոլայիչը, նույնպես միշտ մեծագույն գովասանքով է խոսելիս եղել... Այստեղ նա կանգ առավ և այն աստիճան շշկլվեց, որ նստեց իր սեփական գլխարկի վրա։ Բայց որովհետև նրան դուրս անող չեղավ և Աննա Սերգեևնան նրան մինչև անգամ իր մորաքրոջն ու քրոջը ներկայացրեց, նա շուտով ուշքի եկավ ու սկսեց բլբլացնել։ Կյանքում հաճախ գռեհկության հայտնվելն էլ օգտակար է լինում. նա թուլացնում է չափազանց ձգված լարերը, սթափեցնում է անձնապաստան կամ ինքնամոռացության հասած զգացմունքները, նրանց հիշեցնելով իրար հետ ունեցած սերտ ազգակցությունը։ Սիտնիկովի գալով ամեն բան մի տեսակ ավելի բութ, պարզ և դատարկ ձև ստացավ. ամենքն էլ ավելի կուշտ ընթրեցին և սովորականից կես ժամ էլ առաջ ցրվեցին քնելու։

— Այժմ ես կարող եմ քեզ կրկնել այն խոսքերը,— անկողնի մեջ պառկած՝ ասում էր Արկադին Բազարովին, որը նույնպես հանվում էր,— որն ինքդ մի անգամ ասացիր ինձ. «ինչո՞ւ ես այդպես տխուր, չլինի՞ թե մի որևէ սրբազան պարտականություն ես կատարել»։

Քանի ժամանակից ի վեր երկու երիտասարդների միջև հաստատվել էր մի տեսակ կեղծ անհոգ հեգնական վերաբերմունք, որը միշտ ծածկված դժգոհության կամ շարտահայտված կասկածանքների նշան է համարվում։

— Ես վաղը հորս մոտ եմ գնում,— ասաց Բազարովը։

Արկադին մի քիչ վեր բարձրացավ ու արմունկին հենվեց։ Նա թե զարմացավ և թե չգիտես ինչու՝ ուրախացավ։

— Հա,— ասաց նա,— և դրա համար էլ տխո՞ւր ես։

Բազարովը հորանջեց։

— Շատ կիմանաս—շուտ կծերանաս։

— Հապա Աննա Սերգեևնա՞ն,— շարունակեց Արկադին։

— Աննա Սերգեևնան ի՞նչ։

— Ուզում եմ ասել՝ մի՞թե քեզ բաց կթողնի։

— Հո վարձված չեմ։

Արկադին մտածմունքի մեջ ընկավ, իսկ Բազարովը պառկեց և երեսը շուռ տվեց դեպի պատը։

Մի քանի րոպե լուռ անցավ։

— Եվգենի,— հանկարծ բացականչեց Արկադին։

— Հը։

— Էգուց ես էլ կգամ։

Բազարովը ոչինչ չպատասխանեց։

— Միայն թե ես տուն կգնամ,— շարունակեց Արկադին,— միասին կգնանք մինչև Խոխլովների գյուղը, իսկ այնտեղ դու Ֆեդոտից ձիեր կվերցնես ու կգնաս։ Ես ուրախությամբ կուզենայի ծանոթանալ ձերոնց հետ, բայց վախենում եմ, որ քեզ էլ նեղություն տամ, նրանց էլ։ Հո հետո դարձյա՞լ կգաս մեզ մոտ։

— Իրերս ձեզ մոտ եմ թողել,— ասաց Բազարովը, առանց շուռ գալու։

«Հապա ինչո՞ւ նա չի հարցնում, թե ես ինչո՞ւ եմ գնում։ Եվ այն էլ իր նման, անակնկալ կերպով»,— մտածեց Արկադին։ «Հիրավի, ես ինչո՞ւ եմ գնում և նա ինչո՞ւ է գնում»,— շարունակեց նա իր խորհրդածությունները։ Նա բավարար

պատասխան չէր գտնում իր հարցին, և նրա սիրտը լցվում էր ինչ-որ դառը բանով։ Զգում էր, որ ծանր էր լինելու բաժանվել այդ կյանքից, որին նա ընտելացել էր. բայց մենակ մնալն էլ մի տեսակ տարօրինակ բան կլիներ։ «Երևի նրանց մեջ մի բան է պատահել,— մտածում էր ինքն իրեն,— ինչո՞ւ Բազարովի գնալուց հետո ես պետք է ցցված մնամ Աննա Սերգեևնայի աչքի առաջ, այդպիսով ես բոլորովին կձանձրացնեմ նրան և վերջին ունեցածս էլ կկորցնեմ»։ Նրա աչքի առաջ պատկերացավ Աննա Սերգեևնան, հետո կամաց-կամաց նորատի այրի կնոջ գեղեցիկ դեմքի միջից առաջ եկան ուրիշ դիմագծեր։

«Կատյան էլ է մեղքս գալիս»,— շշնջաց Արկադին երեսը բարձին արած, որի վրա աչքից արցունք էր կաթել... Նա հանկարծ գլխի շարժումով մազերը ետ գցեց և բարձր ձայնով ասաց. «Այդ էր մնացել, որ հիմար Սիտնիկովն էլ այստեղ գար»։

Բազարովը նախ շարժվեց անկողնի մեջ, ապա հետևյալն ասաց.

— Ինչպես տեսնում եմ, սիրելիս, դու դեռ հիմար ես։ Սիտնիկովները մեզ անհրաժեշտ են։ Ինձ, դու հասկացիր, ինձ այդպիսի տխմարներ հարկավոր են։ Աստվածները հո չեն պուլիկ թրծելու...

«Այ քեզ բան»... ինքն իրեն մտածեց Արկադին, և այստեղ միայն նրա առաջ մի վայրկյան պարզվեց Բազարովի ինքնասիրության անհատակ վիհը. «Ասել է, թե ես և դու աստվածնե՞ր ենք։ Այսինքն աստվածը դու ես, չինի՞ տխմարն էլ ես եմ»։

— Այո,— մռայլած կրկնեց Բազարովը,— դու դեռ հիմար ես։

Օդինցովան շատ էլ չզարմացավ, երբ մյուս օրը Արկադին ասաց, որ Բազարովի հետ ինքն էլ պիտի գնա. նա անուշադիր ու հոգնած էր թվում։ Կատյան լուռ ու մունջ հայացքով նայեց Արկադիին. իշխանուհին մինչև անգամ շալի տակից երեսին խաչ հանեց, այնպես, որ Արկադին չէր կարող այդ չնկատել։ Դրա փոխարեն Սիտնիկովը բոլորովին գլուխը կորցրեց։ Նա հենց այդ րոպեին էր նոր շորերով և ոչ թե սլավյանոֆիլական զգեստով պճնված նախաճաշի

նստել։ Նախընթաց օրը նա իրեն ծառայող սպասավորին զարմացրել էր իր հետ բերած սպիտակեղենի շատությամբ, և հանկարծ իր ընկերներն իրեն թողնում են։ Նա դես ու դեն ընկավ, ոնց որ անտառի բերանին կանգ առած հալածական նապաստակը, և հանկարծ, համարյա վախեցած, համարյա գոռալով՝ հայտնեց, որ ինքն էլ է ուզում գնալ։ Օդինցովան նրան չստիպեց մնալ։

— Իմ ուղեկառքս շատ հանգիստ է,— ավելացրեց դրժբախտ երիտասարդը՝ դիմելով Արկադիին,— կարող եմ ձեզ տեղ հասցնել, իսկ Եվգենի Վասիլիչը կարող է ձեր տարանտասով գնալ։ Այսպես ավելի հարմար էլ կլինի։

— Բայց ախր այդ բոլորովին ձեր ճանապարհի վրա չէ, և մեր տունն էլ հեռու է։

— Ոչինչ, ոչինչ. ես ժամանակ շատ ունեմ, մանավանդ որ այդ կողմերում ես գործ էլ ունեմ։

— Բահրայի՞ գործ,— հարցրեց Արկադին, արդեն չափազանց արհամարհանքով։

Բայց Սիտնիկովը մի այնպիսի հուսահատության մեջ էր, որ սովորականին հակառակ, մինչև անգամ չծիծաղեց էլ։

— Հավատացնում եմ, կառքս շատ հանգիստ կառք է,— փնթփնթաց նա,— ամենքիս էլ տեղ կլինի։

— Մսյո Սիտնիկովին մի վշտացնենք մերժումով,— ասաց Աննա Սերգեևնան...

Արկադին նայեց Աննա Սերգեևնայի երեսին և գլուխը նշանակալի կերպով խոնարհեց։

Հյուրերը նախաճաշից հետո գնացին։ Օդինցովան Բազարովին հրաժեշտ տալիս պարզեց ձեռքը նրան ու ասաց.

— Մենք էլի կտեսնվենք, այնպես չէ՞։

— Ինչպես կհրամայեք,— պատասխանեց Բազարովը։

— Այդ դեպքում՝ կտեսնվենք։

Առաջինը Արկադին դուրս եկավ մուտքից. նա բարձրացավ Սիտնիկովի կառքը։ Նրան հարգանքով կառք նստեցրեց սենեկապանը, բայց Արկադին ուրախությամբ կուզեր նրան ծծել կամ թե լաց լինել։ Բազարովը տարանտասի մեջ նստեց։ Խոխլովների գյուղակին հասնելով, Արկադին սպասեց, մինչև որ իշևանատերը, Ֆեդոտը, ձիերը լծեց և, մոտենալով

տարանտասին, առաջվա ժպիտը երեսին ասաց Բազարովին.

— Եվգենի, ինձ էլ վերցրու հետդ. ուզում եմ ձեզ մոտ գալ։

— Նստիր,— ասաց Բազարովը ատամների արանքից։

Սիտնիկովը, որ աշխուժով, շվշվացնելով ման էր գալիս իր կառքի անիվների չորս կողմը, այս խոսքերը լսելով բերանը բաց մնաց, իսկ Արկադին անտարբեր կերպով վերցրեց նրա կառքի միջից իր իրերը, նստեց Բազարովի կողքին և, քաղաքավարությամբ գլուխ տալով իր առաջվա ուղեկցին, կանչեց կառապանին՝ «քշի՛ր»։ Տարանտասը սլացավ ու շուտով աչքից չքացավ... Սիտնիկովը, բոլորովին շվարած, մտիկ տվեց իր կառապանին, բայց կառապանը մտրակով կողքից լծած ձիու պոչի մոտ մի բան էր ուղղում։ Այն ժամանակ Սիտնիկովը թռավ, նստեց իր կառքը և մոտից անցնող երկու գյուղացիների վրա գոռալով՝ «ծածկեցեք գլխարկներդ, հիմարներ», ճանապարհ ընկավ դեպի քաղաք, ուր նա շատ ուշ հասավ և մյուս օրը Կուկշինայի տանը սկսեց սաստիկ հարձակվել այդ երկու «գոռող ու անկիրթ» երիտասարդների վրա։

Արկադին, Բազարովի տարանտասը նստելով, պինդ սեղմեց նրա ձեռքը և երկար ժամանակ ոչինչ չէր ասում։ Թվում էր, թե Բազարովը հասկացել ու գնահատել էր թե այս ձեռք սեղմելը և թե այդ լռությունը։ Նախընթաց գիշերը նա ամենևին չէր քնել և չէր ծխել, և համարյա թե քանի օր էր բան չէր կերել։ Գլխին պինդ քաշած գլխարկի տակից խիստ աչքի էր ընկնում նրա լղարած կիսադեմը։

— Դե, ախպեր,— խոսեց նա վերջապես,— մի հատ գլանակ տուր... Համ էլ նայիր, տես, լեզուս դեղին հո չէ՞։

— Դեղին է,— պատասխանեց Արկադին։

— Իհարկե... ահա գլանակն էլ համ չունի։ Լավ չեմ։

— Ուղիղ որ, այս վերջին ժամանակներս փոխվել ես,— նկատեց Արկադին։

— Հոգ չէ։ Կլավանամ։ Մի բան եմ միայն մտածում. մայրս շատ սրտացավ կին է. որ փորդ չտռզացնես և օրական էլ մի տասն անգամ բան չուտես՝ դարդից կմեռնի։ Իսկ

հայրս, ոչինչ, նրա բանն ուրիշ է. նա ինքը ամեն տեղ եղել է, հազար ու մի նեղ օրեր տեսած մարդ է։ Ոչ, անկարելի է ծխել,— ավելացրեց նա և սիգարը շպրտեց ճանապարհի փոսու մեջ։

— Այստեղից մինչև քո կալվածքը քսանհի՞նգ վերստ է,— հարցրեց Արկադին։

— Քսանհինգ է։ Այ, այդ իմաստունին հարցրու։

Նա ցույց տվեց կառապանի տեղում նստած գյուղացուն, որ Ֆեդոտի մշակն էր։

Բայց իմաստունը պատասխանեց, թե՝ «ով ա գիտում, վերստերը ով ա չափել», ու շարունակեց ցած ձայնով կըշտամբել մեջտեղը լծած ձիուն, որ գլխով «աքացում է», այսինքն՝ որ գլուխը շարժում է։

— Այո, այո,— խոսեց Բազարովը,— թող այս ձեզ դատի, պատանի քարեկամս, խրատական լավ օրինակ է։ Ստատանան գիտի, թե ինչ բան էր մեր այս արածը։ Մարդս կախված է մազից, ամեն մի րոպե կարող է նրա տակը անդունդ բացվել, իսկ նա դեռ ինքն էլ է իրեն ամեն տեսակ անախորժություններ ստեղծում, իր կյանքը փչացնում։

— Ինչի՞ մասին է ակնարկդ,— հարցրեց Արկադին։

— Ես ոչ մի ակնարկ չեմ անում, ուղղակի ասում եմ, որ մենք երկուսս էլ շատ հիմարաբար էինք մեզ պահում։ Էլ ինչ ասել։ Ես դեռևս անդամահատության սենյակում նկատել եմ, որ ով չարանում է իր ցավի վրա, նա էլ անպատճառ կհաղթահարի այն։

— Ասածներդ լավ չեմ հասկանում,— ասաց Արկադին,— կարծեմ թե դու գանգատվելու պատճառ չունեիր։

— Որ ասածներս լավ չես հասկանում, ուրեմն հետևյալը պիտի ասեմ քեզ. ավելի լավ է ճամփին նստած խիճ մանրացնես, քան թույլ տաս, որ կին ասածդ թեկուզ մտիդ ծայրին տիրանա։ Այս ամենը...— Քիչ էր մնում Բազարովն իր սիրած «ռոմանտիզմ» խոսքն արտասաներ, բայց իրեն զսպեց ու ասաց,— հիմարություն է։ Դու այժմ ինձ չես հավատա, բայց ես քեզ պիտի ասեմ. ահա մենք երկուսս էլ կանանց ջրջանի մեջ էինք ընկել, և այդ հաճելի էր մեզ, բայց այդպիսի հասարակությունը թողնել-հեռանալը միևնույնն է, թե տաք եղանակին վրադ սառը ջուր լցնես։ Տղա-

մարդ ասածդ ժամանակ չունի այդպիսի դատարկ բաներով զբաղվելու. իսպանական մի լավ առած ասում է, որ տղամարդը պետք է դաժան լինի։ Ա՛յ, հենց ասենք դու,— ավելացրեց նա կառապանի տեղում նստած գյուղացուն դառնալով,— դու, այ խելոք, կին ունե՞ս։

Գյուղացին շուռ եկավ ու երկու բարեկամներին ցույց տվեց իր տափակ երեսն ու կիսակլոր աչքերը։

— Կնի՞կ։ Ունեմ, ինչի չպիտի ունենամ որ։

— Դու նրան ծեծո՞ւմ ես։

— Կնկա՞նս։ Ինչի չէ, մեկ-մեկ պատահում ա։ Առանց պատճառի չենք ծեծում։

— Եվ շատ էլ լավ ես անում։ Իսկ նա քեզ ծեծո՞ւմ է։

Գյուղացին ձիգ տվեց սանձը։

— Էդ ինչ բան առեցիր, պարոն։ Սիրտդ հանաք էր ուզում...— Նա, ինչպես երևում է, վիրավորվեց։

— Լսո՞ւմ ես, Արկադի Նիկոլայիչ։ Իսկ ինձ ու քեզ ծեծեցին... ահա թե ինչ է նշանակում կրթված մարդ լինել։

Արկադին ակամայից ծիծաղեց, իսկ Բազարովը երեսը մյուս կողմը դարձրեց և բոլոր ճանապարհին այլևս բերանը բաց չարեց։

Քսանհինգ վերստը Արկադիին ամբողջ հիսուն վերստ թվաց։ Բայց ահա վերջապես մի բավական թեք բլրի լանջին երևաց փոքրիկ գյուղը, ուր Բազարովի ծնողներն էին ապրում։ Գյուղակի կողքին, մատաղահաս կեչուտի պուրակում երևում էր ազնվականական տնակը հարդածածկ տանիքով։ Առաջին խրճիթի առջև երկու գյուղացի, գլխարկները գլխին, կանգնած իրար հայհոյում էին։ «Ահագին էշ ես, բայց իշու քուռակի չափ էլ խելք չունես»,— ասում էր մեկը։ «Իսկ քու կնիկդ ջադու է»,— պատասխանում էր մյուսը։

— Դրանց ազատ վարվեցողությունից ու խոսակցության զվարճալի ոճից կարող ես նկատել,— ասաց Բազարովը Արկադիին,— որ հորս գյուղացիները շատ էլ ճնշված չեն։ Ահա հենց հայրս ինքն էլ իր բնակարանի պատշգամբն է դուրս գալիս։ Երևում է զանգի ղողանջը լսել է։ Նա է, նա, կեր-պարանքից ճանաչում եմ։ Էհե՞, ինչպես է խեղճ մարդը սպիտակել։

XX

Բազարովը գլուխը դուրս հանեց տարանտասի միջից, իսկ Արկադին ընկերոջ հետևից երկարացրեց գլուխը և ազնվատիրական տնակի պատշգամբում տեսավ մի բարձրահասակ, վտիտ մարմնով մարդ, գզգզված մազերով, արծվի բրակ քթով, զինվորական հին սերթուկ հագած և կոճակներն արձակած։ Նա ոտները չոռած կանգնել էր, երկար ծխամորճը բերնին, աչքերն արևից կկոցելով։

Ձիերը կանգ առան։

— Վերջապես շնորհ արեցիր,— ասաց Բազարովի հայրը՝ շարունակելով ծխամորճը ծխել, թեև այդ ծխամորճը առանց այն էլ շարունակ թռչկոտում էր նրա մատների արանքում։— Գե, դուրս արի, դուրս արի, պաչպչվենք։

Նա սկսեց գրկախառնվել որդու հետ...

«Ենյուշա, Ենյուշա»,— լսվեց մի կանացի դողդոջուն ձայն։ Դուռը կոնակի վրա բացվեց, և շեմքում երևաց մի կլորիկ, ցածլիկ պառավ կին՝ սպիտակ գլխազարդով և կարճ խայտաբղետ կապա հագած։ Նա ախ արեց, օրորվեց և երևի վայր կընկներ, եթե Բազարովը չբռներ։ Նրա փափլիկ ձեռքերը մի ակնթարթում փաթաթվեցին որդու վզով, գլուխը սեղմեց նրա կրծքին, և ամեն ինչ լռեց։ Միայն պառավի խուլ հեկեկոցն էր լսվում։

Ծերունի Բազարովը խորը շունչ էր քաշում և առաջվանից ավելի աչքերը կկոցում։

— Դե, Արիշա, հերիք է, հերիք, վերջ տուր,— խոսեց նա Արկադիին նայելով, որ անշարժ կանգնած էր տարանտասի մոտ։ Մինչդեռ կառապանի տեղում նստած գյուղացին մինչև անգամ երեսն էր շուռ տվել։— Ամենևին հարկ չկա։ Ի սեր աստծո, վերջ տուր։

— Ախ, Վասիլի Իվանիչ,— թոթովում էր պառավը,— ախր ինչքան ժամանակ է սպասում եմ... իմ աչքիս լույս աղավնյակիս... և առանց ձեռները ետ քաշելու, Բազարովից հեռացրեց իր արտասուքից թրջված, ճխլված ու խանդակաթ դեմքը, մի տեսակ երանավետ ու ծիծաղելի աչքերով նայեց որդուն և նորից կրծքին կպավ։

— Իհարկե, ինչ խոսք, որ այս ամենը բնական է,—

ասաց Վասիլի Իվանիչը,— բայց ավելի լավ է ներս գնանք։ Ահավասիկ, Եվգենիի հետ հյուր էլ է եկել։ Ներեցեք,— ավելացրեց նա, Արկադիին դառնալով ու ոտները իրար կցելով,— դե՛, հասկանում եք, էլի։ Իհարկե, կանացի թուլություն է, մեկ էլ մայրական սիրտը...

Մինչդեռ իր շրթունքներն էլ, հոնքերն էլ ցնցվում էին, կզակը դողդողում էր... բայց նա ըստ երևույթին ուզում էր իրեն հաղթահարել և համարյա թե անտարբեր ձևանալ։ Արկադին գլուխը խոնարհեց։

— Ճիշտ որ, ներս գնանք, մայրիկ,— ասաց Բազարովը և թուլացած պառավին ներս տարավ։ Մորը հանգիստ բազկաթոռի մեջ նստեցնելուց հետո, նա մի անգամ էլ համբուրվեց հոր հետ և Արկադիին ներկայացրեց նրան։

— Հոգով շատ ուրախ եմ ծանոթանալուս,— ասաց Վասիլի Իվանովիչը,— միայն ներողամիտ եղեք,— այստեղ ամեն բան պարզ, զինվորական ձևով է։ Արինա Վլասևնա, ի սեր աստուծո, հանգստացիր, այդ ի՞նչ փոքրոգություն է։ Մեր հյուրը պիտի դատապարտի քեզ։

— Հոգյակ,— արտասվելով ասաց պառավը,— ձեր հրամանոց անուն-ազգանունն իմանալու պատիվը չունեմ։

— Արկադի Նիկոլայիչ,— ցած ձայնով, վեհությամբ ասաց Վասիլի Իվանովիչը։

— Ներող եղեք անխելք պառավիս։— Նա քիթը մաքրեց և գլուխը մեկ աջ, մեկ ձախ ծռելով, մեկը մյուսի հետևից խնամքով սրբեց աչքերը։— Նե՛րեք ինձ։ Ես արդեն կարծում էի, թե պիտի մեռնեմ գնամ և չարժանանամ մեկ էլ հո... ոգ... ոգյակիս տեսության...

— Տեսա՞ք որ արժանացանք, տիկին,— վրա բերեց Վասիլի Իվանովիչը։— Տանյուշա,— ասաց նա մի տասներեք տարեկան, բոբիկ ոտներով, բաց կարմրագույն չթե շոր հագած աղջկա, որ վախվխելով մտիկ էր տալիս դռան հետևից,— տիրուհուն մի բաժակ ջուր բեր մատուցարանով, իմացա՞ր։ Իսկ ձեզ, պարոններ,— ավելացրեց նա մի տեսակ հնաձև զվարճությամբ,— թույլ տվեք հրավիրել պաշտոնաթող հին զինվորի առանձնասենյակը։

— Թող գոնե մի անգամ էլ համբուրեմ քեզ, Ենյուշա,—

հառաչեց Արինա Վլասևնան։ Բազարովը կռացավ դեպի նա,— ի՞նչ սիրուն տղամարդ ես դարձել։

— Դե լավ, ասենք սիրունը սիրուն չէ,— նկատեց Վասիլի Իվանովիչը,— բայց, ինչպես ասում են, օմմֆե[1]։ Իսկ այժմ հուսամ թե դու, Արինա Վլասևնա, քո մայրական զգացմունքներիդ հագուրդ տալուց հետո, հոգ կտանես նաև մեր թանկագին հյուրերին կշտացնելու մասին, որովհետև, ինչպես գիտես, լո-լո-լոյով փոր չի կշտանա։

Պառավը վեր կացավ բազկաթոռից։

— Այս րոպեիս, Վասիլի Իվանիչ, սուփրան կգցենք, ինքս խոհանոց կվազեմ, ինքնաեռ դնել կտամ, ամեն բան կլինի, ամեն բան։ Հանա՞ք բան է. երեք տարի է նրան ոչ տեսել եմ, ոչ ուտացրել, ոչ խմացրել։

— Դե, ուրեմն, տանտիկինս, լավ նայիր, որ ամոթով չմնաս. իսկ դուք, պարոններ, համեցեք իմ հետևից։ Ահավասիկ, Տիմոֆեիչն էլ եկել է քեզ բարի գալուստ մաղթելու։ Երևի՞ այդ քաֆթառ շոմն էլ է ուրախացել։ Հը՞, հո ուրա՞խ ես, քաֆթառ շուն։ Համեցեք հետևիցս։

Եվ Վասիլի Իվանովիչը ոտքերը իրար տալով ու հին մուճակները չըմփացնելով հուզված առաջ գնաց։

Նրա ամբողջ բնակարանը բաղկացած էր վեց մանրիկ սենյակներից։ Դրանցից մեկը, այն, ուր որ տարավ մեր բարեկամներին, առանձնասենյակ էր կոչվում։ Երկու պատուհանների միջև եղած բոլոր տարածությունը բռնել էր հաստ ոտնանի մի սեղան, որի վրա թափած թղթերը վաղուցվա փոշուց սևացել, կարծես մխից բռնված լինեին, պատերին կախած էին թրքական հրացաններ, մտրակներ, թուր, աշխարհագրական երկու քարտեզ, ինչ-որ անատոմիական նկարներ, Հուֆելանդի[2] պատկերը, սև շրջանակի մեջ առած մի մազահյուս վենզել և ապակեծածկ մի վկայական. կեչու փայտից շինած երկու ահագին պահարանների արանքում կար տեղ-տեղ փոս ընկած ու ծակծկած կաշվե գահավորակ.

---

[1] Օմմֆե (ֆրանս. homme fait) հայտնի տղամարդ է։

[2] Հուֆելանդը հռչակավոր բժիշկ էր (1762—1836). ուներ մի քանի նշանավոր գրվածքներ։ Ս. Թ.։

դարակների վրա անկարգ կերպով խոնված էին գրքեր, տուփիկներ, թռչունների խրտվիլակներ, մանր պուլիկներ, շշեր, մի անկյունում ընկած էր մի կոտրված էլեկտրական մեքենա։

— Ձեզ արդեն նախազգուշացրել եմ, հարգելի հյուր,— սկսեց Վասիլի Իվանիչը,— որ մենք այստեղ ապրում ենք այնպես, ինչպես թե ճամփի վրա բանակում...

— Դե բավական է, հայրիկ, ի՞նչ ես ներողություն խնդրում,— ընդհատեց Բազարովը։— Կիրսանովը շատ լավ գիտե, որ մենք Կրեսոսներ չենք և որ դու պալատում չես ապրում։ Ո՞րտեղ ենք նրան տեղավորելու, այս է բանը։

— Ի՞նչ ես ասում, Եվգենի. ես այստեղ, կողքի տանը, շատ լավ սենյակ ունեմ, այնտեղ շատ հանգիստ կլինի նրա համար։

— Ուրեմն առանձին տուն է՞լ ունես։

— Ինչպես չէ։ Հապա այն, որ բաղնիք էր,— մեջ մտավ Տիմոֆեիչը։

— Այսինքն բաղնիքի կողքին,— շտապով վրա բերեց Վասիլի Իվանովիչը։— Այժմ հո ամառ է... Այս րոպեիս կգնամ, ինչ որ պետքն է կկարգադրեմ. իսկ դու, Տիմոֆեիչ, լավ կանեիր, մինչև այդ, նրանց իրերը ներս բերեիր։ Իսկ քեզ, Եվգենի, իհարկե, իմ առանձնասենյակն եմ տալիս։ Suum cuique[1]։

— Այ քեզ բան։ Տարօրինակ ծերուկ է և շատ լավ էլ մարդ,— ավելացրեց Բազարովը, հենց որ Վասիլի Իվանովիչը դուրս գնաց։— Սա էլ քո հորդ պես խենթուկի մեկն է, միայն թե ուրիշ տեսակի։ Շատ է շատախոսություն անում։

— Կարծեմ մայրդ էլ շատ պատվական կին է,— նկատեց Արկադին։

— Այո, պարզ կին է։ Տես ինչ ճաշ է տալու։

— Հայրիկդ այսօր ձեզ չէր սպասում, տավարի միս չեն բերել տվել,— ասաց Տիմոֆեիչը, որ նոր էր ներս բերել Բազարովի ճամպրուկը։

— Առանց տավարի մսի էլ յոլա կգնանք. որ չկա՝ ի՞նչ կարող ենք ասել։ Աղքատությունը, ասում են, արատ չէ։

[1] Ցուրաքանչյուրին՝ իրենը (լատ.)։

— Ինչքա՞ն գյուղացի ունի հայրդ,— հարցրեց հանկարծ Արկադին։

— Կալվածը հորս չէ, այլ մորս. կարծեմ տասնհինգ շունչ։

— Ընդամենը քսաներկուս,— տհաճությամբ ասաց Տիմոֆեիչը։

Լսվեց հողաթափերի քսաքստոցը, ու Վասիլի Իվանովիչը նորից ներս մտավ։

— Մի քանի րոպեից ձեր սենյակը պատրաստ կլինի ձեզ ընդունելու,— հանդիսավոր եղանակով բացականչեց նա,— Արկադի... Նիկոլայիչ, կարծեմ այսպես է ձեր հրամանոց անունը։ Այս էլ ձեզ ծառա,— ավելացրեց նա ցույց տալով իր հետ ներս մտնող, կարճ խուզած մազերով մի տղայի, որ հագել էր մինչև արմունկները ծակ կապտագույն կապա, իսկ ոտներին էլ՝ ուրիշի կոշիկներ։— Անունը Ֆեդկա է։ Թեպետ որդիս արգելում է, բայց դարձյալ պիտի կրկնեմ—ներողամիտ եղեք։ Ասենք տղան ծխամորճ լցնել գիտե։ Դուք հո ծխո՞ւմ եք։

— Ես ավելի սիգար եմ ծխում։

— Շատ էլ խելոք բան եք անում։ Ես ինքս պրեֆերանս[1] տալիս եմ սիգարին, բայց մեր այս հեռու ընկած կողմերում շատ դժվար է սիգար գտնելը։

— Դե հերիք աղքատ Ղազարոսի երգը երգես,— նորից ընդհատեց Բազարովը։— Ավելի լավ է եկ, այստեղ նստիր, գահավորակի վրա ու թող մի կուշտ վրադ նայեմ։

Վասիլի Իվանովիչը ծիծաղեց ու նստեց։ Նա երեսով շատ նման էր իր որդուն, միայն ճակատը ավելի ցած էր ու նեղ, և բերանը մի փոքր լայն, և շարունակ էլ շարժման մեջ էր, ուսերը վեր-վեր գցում, կարծես թե շորը թևերի տակից հոպ էր տալիս, աչքերը թարթում էր, շուտ-շուտ հազում, գոկորդը մաքրում ու մատները շարժում, մինչդեռ որդին աչքի էր ընկնում իր մի տեսակ անհոգ անշարժությամբ։

— Աղքատ Ղազարոսի երգը երգես,— կրկնեց Վասիլի Իվանովիչը։— Դու մի կարծիր, Եվգենի, թե ես ուզում եմ, այսպես ասած, հյուրի գութը շարժել, թե՝ տես, ինչպիսի

[1] Նախապատվություն (ֆրանս.)։

խուլ տեղ ենք ընկել։ Ընդհակառակը, ես այն կարծիքի եմ, թե մտածող մարդու համար խուլ անկյուն չկա։ Գոնե ես աշխատում եմ, ինչպես ասում են, մամուռով չծածկվել, ժամանակի հոսանքից ետ չմնալ։

Վասիլի Իվանովիչը գրպանից հանեց դեղին մետաքսյա նոր թաշկինակը, որ Արկադիի սենյակը գնալիս կարողացել էր շտապով վերցնել, և օդի մեջ շարժելով շարունակեց.

— Թողնենք այն, որ ես, օրինակ, ինձ համար բավական զգալի զոհաբերություն անելով՝ գյուղացիներին ճորտությունից ազատելով հողս կիսովի բահրայով տվի նրանց։ Ես այդ բանն իմ պարտավորությունը համարեցի, և հենց խոշոր հումությունն էլ այդ է պահանջում, թեպետ մյուս հողատերերը մտքերովն անգամ չեն անցկացնում այդ. խոսքս գիտության, կրթության մասին է։

— Այո. ահավասիկ տեսնում եմ Друг здравия գրքերից, 1855 թվականի,— նկատեց Բազարովը։

— Այդ ինձ իմ մի հին ընկերս է ուղարկում հանուն ծանոթության,— շտապով ասաց Վասիլի Իվանովիչը,— բայց մենք, օրինակ, ասենք, գանգրանությունից էլ գաղափար չունենք,— ավելացրեց նա, սակայն ավելի Արկադիին դառնալով և ցույց տալով մի գիպսե ոչ այնքան մեծ գանգ, որ գրված էր պահարանի մեջ և բաժանված թվահամարյալ քառակուսիների,— Շենլյանն էլ մեզ անծանոթ չէ, Ռադեմախերն էլ։

— ... նահանգում դեռ հավատո՞ւմ են Ռադեմախերին,— հարցրեց Բազարովը։

Վասիլի Իվանովիչը հազաց.

— Նահանգում... Իհարկե, պարոններ, դուք ավելի գիտեք. մենք ո՞րտեղից կարող ենք ձեզ հետ ոտք մեկնել։ Դուք հա մեր տեղն եք բռնելու։ Իմ ժամանակներս էլ մի որևիցե հումորալիստ Հոֆման, մի որևիցե Բրոուն իր վիտալիզմով շատ ծիծաղելի էին թվում, բայց մի ժամանակ ինչ հռչակ ունեին։ Երևի մի նոր մարդ ձեզ համար բռնել է Ռադեմախերի տեղը, դուք խոնարհվում եք նրա առաջ, բայց մի քսան տարուց գուցե նրա վրա էլ ծիծաղեն։

— Քեզ մխիթարելու համար ասեմ,— ասաց Բազարովը,— որ ընդհանրապես մենք այժմ բժշկության վրա ծիծաղում ենք և ոչ ոքի առաջ չենք խոնարհվում։

— Ինչպե՞ս թե ծիծաղում եք։ Չէ՞ որ բժիշկ ես ուզում լինել։

— Հա, ուզում եմ, բայց մեկը մյուսին չի խանգարում։

Վասիլի Իվանովիչը միջին մատով տպտպացրեց ծխամորճը, որի մեջ դեռ տաք մոխիր էր մնացել։

— Դե, գուցե, չեմ վիճի։ Ախր ես ի՞նչ եմ որ։ Պաշտոնաթող զինվորական բժիշկ, վալատու[1], իսկ այժմ էլ, ահավասիկ, հողագործ եմ դարձել։ Ես ձեր պապի բրիգադում եմ ծառայել,— դիմեց նա դարձյալ Արկադիին,— դիմեց նա դարձյալ Արկադիին,— հապա, հապա. շատ բան է գլխովս անցկացել։ Ինչ տեսակ ընկերությունների մեջ ասես չեմ եղել, ում հետ չեմ գործ ունեցել։ Ես, հենց ես ինքս, այն մարդն եմ, որին դուք այժմ տեսնում եք ձեր առաջ, ես իշխան Վիտհենշտեյնի և Ժուկովսկու[2] զարկերակներն եմ շոշափել։ Իսկ մնացյալներին, որ հարավային բանակի մեջն էին, դուք հասկանում եք, (և այստեղ Վասիլի Իվանովիչը խորհրդավոր կերպով հուպ տվեց շրթունքները), բոլորին հինգ մատիս պես գիտեի։ Ասենք, ինձ ի՞նչ կար որ. ես միայն իմ նշտարս գիտեի, ուրիշ ոչինչ։ Իսկ ձեր պապը շատ պատվական մարդ էր, իսկական զինվորական։

— Խոստովանիր, տխմարի մեկն էր,— ծույլ-ծույլ ասաց Բազարովը։

— Ախ, Եվգենի, այդ ի՞նչ լեզվով ես խոսում, ախր մի միտք արա... Իհարկե, գեներալ Կիրսանովը այն մարդկանցից չէր, որ...

— Է, թող դրան,— ընդհատեց Բազարովը։— Ես որ մոտենում էի այստեղին, հիանում էի քո կեչու անտառին նայելով. շատ լավ է ձգվել։

Վասիլի Իվանովիչն աշխուժացավ։

— Իսկ հիմա պարտեզին էլ նայիր, տես ինչ է դարձել։ Ամեն մի ծառը ինքս եմ տնկել։ Միրգ էլ կա, հատապտուղ էլ, ամեն տեսակ բժշկական բույսեր էլ։ Դուք ինչքան ուզում

[1] Voilà tout (ֆրանս.)—ահա և ամենը։

[2] Մեկը ռուսական ֆելդմարշալ, մյուսը բանաստեղծ։ Ս. Թ.։

եք ձեր գլխին զոռ տվեք, պարոն երիտասարդներ, բայց և այնպես Պարացելսինը կատարյալ ճշմարտություն է ասել. in herbis, verbis et lapidibus[1]... Ես սխալ, ինչպես գիտես, այլևս բժշկությամբ չեմ պարապում. բայց դարձյալ շաբաթը մի երկու անգամ հարկավոր է լինում հինը միտքս բերել։ Գալիս են խորհուրդ հարցնելու, հո չե՞մ կարող վզակոթերին տալով քշել։ Պատահում է, որ աղքատները գալիս են օգնություն են խնդրում։ Դե այստեղ ամենևին բժիշկ էլ չկա։ Հարևաններիցս մեկը, երևակայիր, պաշտոնաթող մայոր է, նույնպես բժշկություն է անում։ Նրա մասին հարցնում եմ, թե բժշկություն սովորե՞լ է։ Ինձ ասում են ոչ, չի սովորել. ավելի մարդասիրությունից դրդված է անում... Հա, հա, հա... մարդասիրությունից դրդված։ Լավ է, չէ՞. հա, հա, հա, հա...

— Ֆեդկա, ծխամորճս լցրու,— խստությամբ ասաց Բազարովը։

— Կամ թե մի ուրիշ բժիշկ գալիս է այստեղ հիվանդի մոտ,— մի տեսակ հուսահատ կերպով շարունակում էր Վասիլի Իվանովիչը,— իսկ հիվանդն արդեն ad patres[2], և ծառան բժշկին չի էլ թողնում, որ ներս մտնի՝ ասելով, թե այժմ այլևս հարկավոր չէ։ Բժիշկը, որ այս բանին չէր սպասում, շփոթվում է և հարցնում. «Հը՞, աղան մեռնելուց առաջ զկրոտո՞ւմ էր»,— «Զկոտում էր»,— «Շա՞տ էր զկոտում»,— «Շատ»։— «Դե, լավ է ուրեմն»,— ասում է ու շուտ գալիս գնում։ Հա՜, հա՜, հա՜։

Մենակ ծերունին ծիծաղեց։ Արկադին դեմքին ժպիտ արտահայտեց։ Բազարովը միայն խորը ներս քաշեց ծխախոտի ծուխը։ Խոսակցությունն այս ձևով մոտ մի ժամ տևեց, այդ միջոցին Արկադիին հաջողվեց գնալ իր սենյակը, որը թեպետ բաղնիքի նախասենյակ էր, բայց շատ հարմար ու մաքուր։ Վերջապես ներս մտավ Տանյուշան ու հայտնեց, որ ճաշը պատրաստ է։

Տեղից առաջ վեր կացավ Վասիլի Իվանովիչը։

— Պարոններ, գնանք։ Ներեցեք, եթե ձանձրույթ պատճառեցի։ Գուցե տանտիկինը ձեզ ավելի դոհացնի, քան թե ես։

Ճաշը թեև շտապ էր պատրաստված, շատ լավ, մինչև անգամ շատ առատ էր. միայն գինին մի քիչ վատը դուրս եկավ. գինին, որ համարյա սև խերես էր և Տիմոֆեիչը քաղքում մի ծանոթ վաճառականից էր գնել, պղնձի՞ ասեմ, թե սոճու խեժահամ էր տալիս. ճանճերն էլ մի կողմից էին խանգարում։ Սովորական ժամանակները մի ճորտ տղա ճանճ կանաչ ճյուղով քշում էր ճանճերը, բայց Վասիլի Իվանովիչը երկյուղ կրելով, թե միգուցե նոր սերնդի գաղափարությանն արժանանա, այս անգամ տղային հեռացրել էր։ Արինա Վլասևնան ժամանակ էր գտել նաև զուգվելու. նա գլխին դրել էր մետաքսյա ժապավեններով շամչիկ և ուսերին գցել կապտագույն շալ։ Հենց որ իր ենյուշային տեսավ, նորից լաց եղավ, բայց այս անգամ ամուսինը հարկ չզգաց նրան հանգստացնելու, որովհետև նա ինքը շուտով արցունքները սրբեց, որպեսզի նրանք շալի վրա չկաթեն։ Ուտողները միայն երիտասարդներն էին, տանտերերը վաղուց էին ճաշել։ Ճաշին ծառայում էր Ֆեդկան, որ անսովոր կոշիկներից դժվարանում էր, և նրան էլ օգնում էր տղամարդու դեմքով, միաչքանի մի կին Անֆիսուշկա անունով, որ տանտեսուհու, թռչնապանի ու լվացարարի պաշտոն էր վարում։ Վասիլի Իվանովիչը ճաշի միջոցին բոլոր ժամանակման էր գալիս սենյակի մեջ և բոլորովին երջանիկ ու նույնիսկ երանավետ տեսքով խոսում, թե իրեն սաստիկ երկյուղ է պատճառում Նապոլեոնի քաղաքականությունը և իտալական խնդրի խճճված դրությունը։ Արինա Վլասևնան Արկադիին չէր նկատում, նրան համեցեք չէր անում. բոունքը դեմ տված իր կլորիկ դեմքին, որին մի քիչ փքված, բալի գույն շրթունքները և թշերի ու հոնքի վերևի խալերը խիստ բարեհոգի արտահայտություն էին տալիս, աչքը որդուց չէր հեռացնում ու շարունակ հոգոց էր քաշում։ Նա սաստիկ ուզում էր իմանալ, թե արդյոք որքա՞ն ժամանակով է որդին եկել, բայց վախենում էր հարցնել։ «Իսկ եթե ասի «երկու օրով»,— մտածում էր նա, ու սիրտը քիչ էր մնում թուլանար։ Խորոված ից հետո Վասիլի Իվանովիչը մի քանի

1 Խոտերում, խոսքերում և քարերում (լատ.)։

2 Գնացել է նախնիների մոտ (լատ.)։

վայրկյան անհետացավ և ապա բաց արած կես չիշ շամպայն գինին ձեռին ներս մտավ։

— Ահավասիկ,— բացականչեց նա,— թեպետ խուլ անկյունում ենք ապրում, բայց գիտենք նաև հանդիսավոր դեպքերում մեզ ուրախացնել։

Նա լցրեց երեք գինու և մի օղիի բաժակ շամպայն, առաջարկեց «անգնահատելի այցելուների» կենացը և միանգամից, ըստ զինվորական սովորության, դատարկեց իր բաժակը, իսկ Արինա Վլասևնային էլ ստիպեց խմել օղու փոքրիկ բաժակով մինչև վերջին կաթիլը։ Երբ հերթը մուրաբային հասավ, Արկադին, որ ոչ մի քաղցր բան չէր սիրում, բայց և այնպես պարտք համարեց նոր պատրաստված չորս տեսակ զանազան մուրաբաների համն էլ տեսնել, մանավանդ որ Բազարովը կտրականապես հրաժարվեց նրանցից և իսկույն սիգարը կպցրեց։ Հետո հանդես եկավ հում սերով, կարագով ու կրենդելներով թեյը. ապա Վասիլի Իվանովիչը ամենքին պարտեզ տարավ, որպեսզի երեկոյան գեղեցկությամբ զմայլվեն։ Նստարանի կողքից անցնելիս նա Արկադիին շշնջաց.— Սիրում եմ այստեղ նստած արևի մայր մտնելը դիտել ու փիլիսոփայություն անել. անապատականին վայել է այդ։ Իսկ այնտեղ, մի քիչ հեռու, Հորացիոյի սիրած ծառերից եմ տնկել։

— Այդ ի՞նչ ծառեր են,— լսելով հարցրեց Բազարովը։

— Հապա ինչպե՞ս... ակացիները։

Բազարովը սկսեց հորանջել։

— Կարծեմ ժամանակն է ուղևորներին Մորֆեոսի գիրկը մտնել,— նկատեց Վասիլի Իվանովիչը։

— Այսինքն՝ քնելու ժամանակն է,— վրա բերեց Բազարովը։— Այդ իրավացի ասացիր։ Իսկապես որ ժամանակն է։

Մորը բարի գիշեր ասելով՝ նա համբուրեց նրա ճակատը, իսկ մայրն էլ գրկեց նրան և թիկունքից, թաքուն, երեք անգամ խաչակնքեց։ Վասիլի Իվանովիչը Արկադիին տարավ, հասցրեց իր սենյակը և նրան մաղթեց «մի այնպիսի բարերար հանգիստ, որպիսին ես եմ ճաշակել ձեր երջանիկ տարիներում»։ Եվ արդարև, Արկադին շատ լավ քնեց իր նախաբաղնիսում, որտեղից անանուխի հոտ էր գալիս, իսկ երկու ճպուռ փոխեփոխ քնաբեր ճռինչ էին արձակում վառարանի հետևից։ Վասիլի Իվանովիչը Արկադիի մոտից գնաց իր առանձնասենյակը և որդու ոտների կողմը գահավորակի վրա թեք ընկնելով ուզում էր նրա հետ զրույց անել, բայց Բազարովն անմիջապես նրան ճանապարհ դրեց՝ պատճառաբանելով, որ ուզում է քնել, բայց ինքը մինչև առավոտ չքնեց։ Աչքերը լայն բաց արած, նա շարացած հայացքով նայում էր մթությանը, մանկության հիշողությունները չէին դադարում նրա վրա, մանավանդ որ վերջին դառը տպավորություններից էլ ազատված չէր դեռ։ Արինա Վլասևնան նախ ջերմ կերպով աղոթեց. հետո էլ շատ երկար ժամանակ զրուցում էր Անֆիսուշկայի հետ, որը իր տիրուհու առաջ արձանի նման ցից եղած և միակ աչքը նրան հառած, խորհրդավոր շշունջով հաղորդում էր նրան Եվգենի Վասիլևիչի վերաբերմամբ արած իր բոլոր դիտողություններն ու ենթադրությունները։ Ուրախությունից, գինուց, սիգարի ծխից պառավի խելքը բոլորովին թռել էր. ամուսինն ուզեց հետը խոսել, և միայն ձեռքը թափ տվավ։

Արինա Վլասևնան նախկին ժամանակների իսկական ազնվական կանանցից էր. պետք էր, որ նա երկու հարյուր տարի առաջ, հին-մոսկովյան ժամանակներում ապրած լիներ։ Նա շատ կրոնասեր ու զգայուն կին էր, հավատում էր ամեն տեսակ նշանների, գուշակությունների, գրքացների, երազների, հավատում էր ընկնավորներին, ուրվականներին, ժողովրդական դեղերին, հինգշաբթվա աղին, աշխարհիս մոտալուտ վախճանին. հավատում էր, որ եթե տյառընդառաջի երեկոյան ժամին մոմերը չհանգած տուն հասնեն, կնշանակի, որ հնդկացորենը լավ է լինելու, և թե սունկն այլևս չի աճի, թե որ նրան մարդու աչքը դիպչի. հավատում էր, թե սատանան ջուր եղած տեղեր է սիրում, և թե ամեն մի չհուդ կրծքին արյան բիծ ունի. վախենում էր մկնից, օձից, գորտից, ծտից, տզրուկից, որոտից, սառը ջրից, միջանցիկ քամուց, ձիուց, այծից, կարմրաշեկ մարդուց ու սև կատվից, և ճպուռն ու շունը անսուրբ կենդանի էր համարում. չէր ուտում ոչ հորթի միս, ոչ աղավնի, ոչ խեցգետին, ոչ պանիր, ոչ ծնեբեկ, ոչ գետնատանձ, ոչ նապաստակ, ոչ ձմերուկ, որովհետև կտրած ձմերուկը Հովհաննես Մկրտչի գլուխն էր հիշեցնում, իսկ ծովախխունջների մասին առանց զզվանքի

չէր կարողանում խոսել. սիրում էր ուտել և խիստ էլ պաս էր պահում. օրական տասը ժամ կքներ, բայց որ Վասիլի Իվանովիչի գլուխը ցավեր, ամենևին գլուխը բարձի չէր դնի, բացի Ալեքսիսից կամ Անտոնի տնակից ոչ մի գիրք չէր կարդացել, տարեկան մեկ, շատ-շատ երկու նամակ կգրեր, իսկ տնտեսական գործերում հմուտ էր շոր մրգեղեններ ու քաղցրավենիք պատրաստելում, թեպետ և ձեռքը ոչ մի բանի չէր կպցնի, և առհասարակ տեղից տհաճությամբ էր շարժվում։ Արինա Վլասևնան շատ բարի կին էր, և յուր տեսակով, ամենևին անխելք չէր։ Նա գիտեր, որ աշխարհքիս մեջ կան աղաներ, որոնք պետք է հրամաններ տան, և հասարակ ժողովուրդ, որը պետք է ծառայի,— ուստի և չէր գարշում ոչ ծառայամտությունից և ոչ երկրպագությունն տալուց, բայց ծառաների հետ մեղմ էր վարվում և երբեք ոչ մի մարդու չէր դատապարտի, թեպետ երբեմն էլ սիրում էր բամբասանք անել։ Երիտասարդ ժամանակը շատ սիրունատես էր, կլավիկորդ էր նվագում և փոքր-ինչ ֆրանսերեն բացատրվում. բայց իր ամուսնու հետ (որին նա հակառակ իր կամքին էր գնացել) վարած երկարամյա թափառական կյանքի ընթացքում գիրացել, լխկել էր և նվագելն էլ էր մոռացել, ֆրանսերենն էլ։ Նա իր որդուն սիրում էր և նրանից անասելի կերպով վախենում. կալվածքի կառավարությունը թողել էր Վասիլի Իվանովիչին և էլ ոչ մի բանի չէր խառնվում, մենակ երբ ծերուկը կսկսեր սպասված բարեփոխությունների և իր ծրագրերի մասին խոսել, հոգոց կհաներ, թաշկինակը շարժելով երեսին հով կաներ՝ վախից ունքերը ավելի ու ավելի վեր կբարձրացներ։ Նա կասկածամիտ էր, շարունակ մի մեծ դժբախտություն էր սպասում և հենց որ մի տխուր բան հիշեր, լաց կլիներ... Այժմ արդեն այդպիսի կանայք վերջանում են։ Չգիտեմ՝ պե՞տք է այդ բանով ուրախանալ։

XXI

Արկադին անկողնից վեր կենալով բաց արավ պատուհանը, և առաջին բանը, որ նրա աչքին ընկավ, Վասիլի Իվանովիչն էր։ Բուխարական գիշերազգեստը հագին, թաշկինակով մեջքը կապած, ծերունին եռանդագին փորում էր

բանջարանոցում։ Նա իր երիտասարդ հյուրին տեսավ և, բահի կոթին կոթնած, կանչեց.

— Ողջույն, ինչպե՞ս քնեցիք գիշերը։

— Շատ լավ,— պատասխանեց Արկադին։

— Իսկ ես այստեղ, ինչպես տեսնում եք, ոմն Ցինցինատի նման[1], ուշ հասնող բողկի համար մարգեր եմ պատրաստում։ Այժմ այնպիսի ժամանակ է հասել, փա՞ռք աստուծո, որ ամեն մարդ պետք է իր ձեռքով իր հացը դատի, չպետք է ուրիշների վրա հուսալ. մարդ պետք է ինքն աշխատի։ Եվ բանից երևում է, որ Ժան-Ժակ Ռուսսոն իրավացի է։ Մի կես ժամ առաջ, պարոնին ասեմ, ինձ բոլորովին ուրիշ դրության մեջ կտեսնեիք։ Մի կնոջ, որ նրանց լեզվով ասած, թանչք ուներ, իսկ մեր լեզվով դիզենտերիա՝ ես... ինչպես ասեի, որ լավ լիներ... ափիոն էի ներարկում, իսկ մի ուրիշի էլ ատամը հանեցի։ Դրան առաջարկեցի եթերով քնացնել... բայց նա չհամաձայնեց։ Այս բոլորը ես անում եմ gratis[2]—ա ն ա մ ա տ յ ո ր[3]։ Էհ, ասենք, ինձ համար դա նոր, չտեսնված բան չէ, ես հո պլեբեյ եմ, homo novus[4]— ոչ թե տոհմիկ ազնվականներից, ինչպես իմ կողակիցս է... Ջլի՞ք հաճիլ գալ այս ստվերոտ տեղը թեյից առաջ առավոտյան թարմությունը ծծելու։

Արկադին դուրս եկավ և մոտեցավ նրան։

— Կրկին անգամ բարի եկաք,— ասաց Վասիլի Իվանովիչը զինվորականի ձևով ձեռքը տանելով իր աղտոտած թասակին, որ դրել էր գլխին։— Գիտեմ, դուք սովոր եք փարթամության, զվարճությունների, սակայն աշխարհիս մեծամեծներն անգամ չեն գարշում խրճիթի առաստաղի տակ մի քիչ ժամանակ անցկացնելու։

— Այդ ինչ եք ասում,— առարկեց Արկադին,— ես ի՞նչ մեծամեծ եմ։ Եվ շքեղ կյանքի էլ վարժված չեմ։

— Սպասեցեք, սպասեցեք,— սիրալիր ծամածռությամբ պատասխանեց Վասիլի Իվանովիչը,— թեպետ ես այժմ արդ-

[1] Ցինցինատ—հռոմեական նշանավոր զորական և պետական գործիչ (5-րդ դ. ն. մ. թ.), որ հետո երկրագործ դարձավ։ Ս. Թ.։

[2] Անվարձ (լատ.)։

[3] En amateur (ֆրանս.)—իբրև սիրող։

[4] Նոր մարդ եմ (լատ.)—ոչ ազնվատոհմիկ։

դեն բանի պետք չեմ գալիս, բայց ես էլ աշխարհք տեսած մարդ եմ, աչքս որ մեկի վրան ձգեմ, իսկույն կհասկանամ, թե ի՞նչ մարդ է առաջիս։ Ես էլ իմ տեսակի հոգեբան եմ ու դիմազետ։ Թե որ այս, համարձակվում եմ ասել, շնորհքը չունենայի, վաղուց կորել, ոտի տակ էի գնացել։ Առանց ձեզ հաճոյախոսություն արած լինելու ասեմ, որ ինձ անկեղծորեն ուրախացնում է այն բարեկամությունը, որ նկատում եմ իմ որդու և ձեր մեջ։ Հենց այս րոպեիս տեսա նրան, նա ըստ իր սովորության, որ հավանորեն ձեզ էլ հայտնի կլինի, շատ վաղ վեր կացավ տեղից և վազեց դեպի շրջակայքը։ Թույլ տվեք հարցնեմ՝ վաղո՞ւց եք ծանոթ իմ Եվգենիի հետ։

— Այս ձմեռվանից։

— Լավ։ Մի բան էլ հարցնեմ։ Բայց լավ չի՞ լինի նրաստենը։ Թույլ տվեք, իբրև հայր, ամենայն անկեղծությամբ մի բան էլ հարցնելու. ի՞նչ կարծիքի եք իմ Եվգենիի մասին։

— Ձեր որդին իմ տեսած մարդկանց մեջ ամենանշանավորներից մեկն է,— աշխուժով պատասխանեց Արկադին։

Հանկարծ Վասիլի Իվանովիչի աչքերը մեծ-մեծ բացվեցին, և թշերը թեթև կարմրեցին։ Բահը ձեռքից վայր ընկավ։

— Ուրեմն կարծում եք, որ...— սկսեց նա։

— Հավատացած եմ,— վրա բերեց Արկադին,— որ ձեր որդին մեծ ապագա ունի և նա կփառավորի ձեր անունը։ Հենց մեր առաջին հանդիպումից համոզվեցի ես այդ բանին։

— Ինչպես... ինչպես եղավ այդ,— հազիվ արտասանեց Վասիլի Իվանովիչը։ Սքանչացման ժպիտը լայն բաց արեց նրա շրթունքները և էլ չանհետացավ։

— Ուզում եք իմանալ, թե մեր հանդիպումն ինչպես եղավ։

— Այո... և առհասարակ...

Արկադին սկսեց պատմել ու խոսել Բազարովի մասին էլ ավելի ոգևորված, ավելի ջերմությամբ, քան այն երեկոյան, երբ Օդինցովայի հետ մազուրկա էր պարել։

Վասիլի Իվանովիչը լսում էր, լսում նրա պատմածը։ քիթը սրբում, թաշկինակը երկու ձեռների մեջ ոլորում, հազում էր, մազերը խառնում։ Վերջապես էլ չհամբերեց ու կոացավ դեպի Արկադին, նրա ուսը համբուրեց։

— Դուք ինձ կատարելապես բախտավորեցրիք,— ասաց նա՝ շարունակելով ժպտալ,— ձեզ այսքանն ասեմ, որ ես... պաշտում եմ որդուս. էլ չեմ ասում պառավս. դե ինչ ասել կուզի, մայր է ախր, բայց ես չեմ համարձակվում իմ զգացմունքները որդուս ներկայությամբ արտահայտել, որովհետև նա այդ բանը չի սիրում։ Նա թշնամի է զգացմունքների տեսակ զեղումների. շատերը մինչև անգամ նրան դատապարտում են նրա այդ բարքի անհողդողդության համար և այդ բանը հպարտություն կամ անզգայություն են համարում, բայց այդպիսի մարդկանց սովորական չափով չպետք է չափել, այնպես չէ՞։ Հենց, օրինակ, ասենք, նրա տեղը մեկ ուրիշը որ լիներ, շարունակ իր ծնողներից պիտի քաշեր ու քաշեր, մինչդեռ նա, կհավատա՞ք, որ ասեմ մի կոպեկ ավելորդ փող չի վերցրել։ Աստված վկա։

— Նա անշահասեր, ազնիվ մարդ է,— նկատեց Արկադին։

— Արդարև անշահասեր։ Եվ ես, Արկադի Նիկոլայիչ, ոչ միայն պաշտում եմ նրան, այլև նրանով պարծենում եմ, և իմ բոլոր փառասիրությունն այն է, որ մի ժամանակ նրա կենսագրության մեջ գրված լինի. «Նրա հայրը մի հասարակ զինվորական բժիշկ էր, որ սակայն շատ վաղ հասկացավ նրա ինչ եղածը և ոչինչ չխնայեց նրա կրթության համար...»։— Ծերուկի ձայնը կտրվեց։

Արկադին սեղմեց նրա ձեռքը։

— Ի՞նչ եք կարծում,— փոքր լռությունից հետո հարցրեց Վասիլի Իվանովիչը։— Ձեր գուշակած հռչակը նա հա բժշկական ասպարեզում չէ՞ ստանալու։

— Իհարկե բժշկական ասպարեզում չէ, թեպետ և նա այդ կողմից էլ առաջին գիտնականներից կլինի։

— Հապա ո՞ր ասպարեզում, Արկադի Նիկոլայիչ։

— Այդ այժմ դժվար է ասել, բայց նա հռչակավոր կլինի։

— Հռչակավոր կլինի,— կրկնեց ծերունին ու մտքի ծովն ընկավ։

— Արինա Վլասևնան համեցեք են անում թեյ անուշ անելու,— ասաց Անֆիսուշկան՝ ահագին սկուտեղով հասուն մորը ձեռին անցնելով նրանց կողքից։

Վասիլի Իվանովիչը սթափվեց։

— Մոռի հետ սառը հում սեր էլ կա՞։

— Կա։

— Նայիր սառը լինի, հա։ Մի քաշվեք, Արկադի Նիկոլայիչ, մի քիչ շատ վերցրեք։ Ինչո՞ւ Եվգենին չի երևում։

— Այստեղ եմ,— Արկադիի սենյակից լսվեց Բազարովի ձայնը։

Վասիլի Իվանովիչը արագությամբ շուռ եկավ։

— Հը... ուզում էիր բարեկամիդ այցելես, հա. բայց ուշացար, amice[1], և մենք արդեն երկար բարակ զրուցեցինք իրար հետ։ Այժմ պետք է գնալ թեյ խմել, մայրիկդ կանչում է։ Ի դեպ, ես հետդ խոսելիք ունեմ։

— Ի՞նչ բան։

— Այստեղ մի գյուղացի կա, տառապում է իկտերով...

— Այսինքն դեղնացավո՞վ։

— Այո, քրոնիկական և շատ ծանր իկտեր։ Ես նրան գետնալեղի եմ տվել, խնձորածաղիկ, գազար եմ ուտացնում, սոդա խմացրի, բայց այս ամենը միայն պալլիատիվ միջոցներ են. հարկավոր է մի վճռական բան անել։ Թեպետ դու բժշկության վրա ծիծաղում ես, բայց հավատացած եմ, որ կարող ես ինձ մի լավ խորհուրդ տալ։ Բայց այդ հետո։ Իսկ այժմ գնանք թեյ խմենք։

Վասիլի Իվանովիչն աշխուժությամբ վեր թռավ նստարանի վրայից և երգեց «Ռոբերտից»[2].

Օրենք, օրենք մեզ դնենք,
Որ ու... որ ուրախ ապրենք։

— Զարմանալի կենսունակ մարդ է,— ասաց Բազարովը պատուհանից հեռանալով։

Կեսօր եղավ։ Համատարած, սպիտակավուն ամպերի քողի տակից այրում էր արևը։ Ամեն ինչ լուռ էր. մենակ աքլորները գյուղում ձայն ձայնի էին տվել ու ամեն մարդու մեջ, որ նրանց լսում էր, քնարքության ու տաղտկության տարօրինակ զգացում էին առաջացնում. մեկ էլ վերքը, ծառերի կատարին մի տեղ լալկան ձայնով հնչում էր մատաղ բազեի անլուռ ճիչը։ Արկադին ու Բազարովը, գետնին մի երկու գիրկ խշխշուն չոր, բայց դեռ կանաչ գույնի ու հոտավետ խոտ ձգած, պառկած էին խոտի մի փոքր դեզի սավերում։

— Այն կաղամախին միտս է գցում մանկությունս,— սկսեց խոսել Բազարովը,— դա բսնած է մի փոսի եզրին, որ մնացել է աղյուսե ցախատնից, և ես այն ժամանակ հավատացած էի, թե այդ փոսն ու կաղամախին կախարդանք ունեն, այնտեղ ես երբեք չէի ձանձրանում։ Այն ժամանակ չէի հասկանում, թե չձանձրանալուս պատճառն այն էր, որ երեխա էի։ Իսկ այժմ մեծացել եմ և՝ այդ կախարդանքն արդեն այլևս ուժ չունի։

— Ընդամենն ինչքա՞ն ժամանակ ես անցկացրել այստեղ,— հարցրեց Արկադին։

— Երկու տարի շարունակ. հետո մենք սկսեցինք ուրիշ տեղեր գնալ։ Թափառական կյանք էինք վարում. մեծ մասամբ քաղաքներում էինք քարշ գալիս։

— Իսկ այս տունը վաղո՞ւց է շինած։

— Վաղուց։ Այդ իմ պապի, մորս հոր շինածն է։

— Ի՞նչ մարդ է եղել պապդ։

— Սատանան գիտե՝ ինչ մարդ է եղել։ Մի ինչ-որ սեկոնդ-մայոր։ Սուվորովի ձեռքի տակ է եղել և շարունակ Ալպերն անցնելու պատմությունն էր անում։ Երևի հնարում էր։

— Ես էլ ասում եմ ինչի՞ ընդունարանում Սուվորովի պատկերն է կախած։ Իսկ ես ձեր տան նման այսպիսի հին ու տաքուկ տնակներ սիրում եմ. նրանց հոտն էլ մի ուրիշ տեսակ է։

— Կանթեղի ձեթի ու կորնգանի հոտ է,— հորանջելով ասաց Բազարովը։— Եվ ճանճ էլ ինչքան սիրտդ ուզի այդ սիրուն տնակներում... Ֆա՜։

— Մի ինձ ասա, մանկությանդ ժամանակ քեզ չէի՞ն ճնշում,— ասաց Արկադին փոքր-ինչ լռությունից հետո։

— Տեսնո՞ւմ ես հո ինչպիսի ծնողներ են։ Խիստ մարդիկ չեն։

[1] Բարեկամ (լատ.)։

[2] «Ռոբերտ-դեր»— Մեյերբերի օպերան։

— Եվգենի, սիրո՞ւմ ես նրանց։

— Սիրում եմ, Արկադի։

— Հապա նրանք ինչպե՞ս են սիրում քեզ։

Բազարովը լռեց։

— Գիտե՞ս ինչ եմ միտք անում,— ասաց նա վերջապես՝ ձեռները գլխի հետևը ձգելով։

— Չգիտեմ։ Ի՞նչ։

— Միտք եմ անում՝ բախտավոր են ծնողներս։ Հայրս վաթսուն տարեկան է ու էլի աշխատում է, խոսում «պալիատիվ» միջոցների մասին, մարդիկ է բժշկում, գյուղացիների վերաբերմամբ մեծահոգություն բանեցնում, մի խոսքով՝ քեֆ է անում։ Մայրս էլ վատ չի ապրում։ Նրա օրը այնքան զբաղմունքներով, ախ ու օխերով է լցված, որ աչք բանալու ժամանակ չունի, իսկ ես...

— Իսկ դո՞ւ։

— Իսկ ես միտք եմ անում—ահավասիկ, այստեղ, պառկած եմ դեզի ստվերում... Այս նեղլիկ տեղը, որ ես բռնել եմ, բոլորովին մանր բան է համեմատած մնացյալ տարածության հետ, որ ես չկամ և որի համար իմ գոյությունը ոչինչ նշանակություն չունի, և ժամանակի այն մասը, որ ես պիտի ապրեմ, շատ և շատ չնչին բան է հավիտենականության առաջ, ուր ես չեմ եղել և չպիտի էլ լինեմ... Մինչդեռ այս ատոմի, մաթեմատիկական այս կետի մեջ արյունը դառնում է, ուղեղն աշխատում, նա էլ մի բան է ուզում... Ի՜նչ խենթություն։ Ի՜նչ անմիտ բան։

— Բայց քեզ ասեմ, որ այն, ինչ որ ասացիր, վերաբերում է նաև առհասարակ բոլոր մարդկանց։

— Ուղիղ ես ասում,— վրա բերեց Բազարովը։— Ուզում էի ասել, թե ահավասիկ նրանք, այսինքն ծնողներս, զբաղված են և իրենց չնչինության մասին չեն մտածում, դա նրանց անհանգստություն չի պատճառում... իսկ ես... ես միայն տաղտուկ ու շարություն եմ զգում։

— Չարությո՞ւն, ինչո՞ւ շարություն։

— Ինչո՞ւ։ Ինչպե՞ս թե ինչու։ Մի՞թե մոռացար։

— Ամեն բան էլ միտս է, բայց և այնպես ես այնպես եմ համարում, որ դու շարանալու իրավունք չունես։ Դու դժբախտ ես, համաձայն եմ, բայց...

— Է՛, ինչպես տեսնում եմ, Արկադի Նիկոլայիչ, դու էլ սերն այնպես ես հասկանում, ինչպես և բոլոր նորագույն երիտասարդները։ Ջո՜ւ, ջո՜ւ, ջո՜ւ կանչում են վառեկին, բայց հենց որ վառեկը սկսում է մոտ գալ՝ իրենք թողնում են փախչում։ Ես այդպես չեմ։ Բայց հերիք է այս մասին։ Մի բանի որ դարման չես կարող անել, դրա մասին խոսելն էլ ամոթ է։— Նա շուռ եկավ մի կողքի։— Ըհը՛, տե՛ս, կորիճ մրջյունը կիսամեռ ճանճ է քարշ տալիս։ Քարշ տուր, ախպե՛ր, քարշ տուր։ Նրա դիմադրելուն մի նայիր, օգուտ քաղիր այն բանից, որ դու, որպես կենդանի, իրավունք ունես կարեկցության զգացումը չընդունելու և ոչ թե մեզ նման կոտրատվելու։

— Այդ բանը գոնե դու չասեիր, Եվգենի, դու ե՞րբ ես քեզ կոտրել։

Բազարովը գլուխը վեր բարձրացրեց։

— Հենց միայն դրանով էլ պարծենում եմ։ Քանի որ ինքս ինձ չեմ կոտրել, կնիկարմատն էլ կարող չէ ինձ կոտրել։ Ամեն։ Վերջացավ։ Այլևս բառ անգամ չես լսի ինձանից այդ մասին։

Երկու բարեկամն էլ բավական ժամանակ լուռ պառկած էին։

— Հըմ,— սկսեց Բազարովը,— տարօրինակ էակ է մարդս։ Որ կողքից, այն էլ հեռվից նայում ես այս խուլ կյանքի վրա, որ վարում են «հայրերը», թվում է, թե դրանից լավ բան չկա։ Կեր, խմի և գիտցած եղիր, որ ամենականոնավոր, ամենախելացի բանն ես անում։ Բայց չէ. ձանձրույթը կճնշի։ Ուզում ես մարդկանց հետ լինել, թեկուզ հայհոյել նրանց, բայց մարդկանց հետ լինել։

— Պետք է կյանքն այնպես կառուցել, որ նրա ամեն մի ակնթարթը նշանավոր լինի,— մտախոհ ասաց Արկադին։

— Ինչ խոսք։ Նշանավորը թեպետ սուտ էլ է լինում, դարձյալ քաղցր է. սակայն կարելի է աննշանի հետ էլ հաշտվել... բայց այդ մանր, դատարկ վեճերը, բանսարկությունները... փորձանք են դրանք։

— Չնչին վեճերը, բանսարկությունները գոյություն չունեն մարդուս համար, թե որ նա ինքը չուզենա դրանց վրա ուշադրություն դարձնել։

— Հրմ... այդ դու ընդհանուր տեղի հակառակ բան ասացիր։

— Ի՞նչ է։ Ի՞նչ ես հասկանում այդ ասելով։

— Ահա ինչ. ա՛յ, օրինակ, ասենք, լուսավորությունն օգտակար է, սա ընդհանուր տեղն է. իսկ ասել, թե լուսավորությունը վնասակար է, այս էլ ընդհանուրի հակառակ տեղն է, դատողություն է։ Դա ըստ երևույթին կարծես թե սիրուն ձև է, բայց իսկապես միևնույն բանն է։

— Բայց ո՞ւր է, ո՞ր կողմն է ճշմարտությունը։

— Ո՞ւր է։ Իբրև արձագանք կպատասխանեմ քեզ. ո՞ւր է։

— Այսօր դու մելամաղձիկ տրամադրության մեջ ես, Եվգենի։

— Իրա՞վ։ Երևի արևը ինձ թուլացրել է, մեկ էլ որ շատ մոռ չպետք է ուտել։

— Ուրեմն ավելի լավ է մի քիչ ննջենք,— նկատեց Արկադին։

— Վատ չի լինիլ. միայն թե երեսիս չնայես. քնած մի-ջոցին ամեն մարդու երես էլ ապուշ արտահայտություն է ստանում։

— Իսկ քեզ համար միևնույն չէ՞, թե ուրիշները ինչ են մտածում քո մասին։

— Չգիտեմ, ինչ ասեմ քեզ։ Իսկական մարդը դրա մասին հոգ չպիտի տանի. իսկական մարդը նա է, որի մասին մտածելու հարկ չկա. պետք է նրան միայն հնազանդվել կամ ատել։

— Տարօրինակ է, ես ոչ ոքի չեմ ատում,— ասաց Արկադին մի փոքր մտածելով։

— Իսկ ես՝ շատերին։ Դու քնքուշ սիրտ ունես, թույլ, անվճռական ես։ Քու ինչ բանն է ատելը... Դու քաշվում ես, քեզ վրա քիչ վստահություն ունես...

— Իսկ դու,— ընդհատեց նրան Արկադին,— վստա՞հ ես քեզ վրա։ Դու մե՞ծ կարծիք ունես քո մասին։

Բազարովը լռեց։

— Երբ ես պատահեմ մի մարդու, որը իմ առաջ տեղի չի տալիս,— ասաց նա հատ ընդ հատ,— այն ժամանակ ես իմ մասին ունեցած կարծիքս կփոխեմ։ Ատե՛լ։ Ահա, օրինակ, դու այսօր ասացիր, ձեր գյուղապետ Ֆիլիպի տնակի մոտից անցնելիս,— այնքան լավն է այդ տնակը, սպիտակ է,— ա՛յ, ասացիր դու, Ռուսաստանը այն ժամանակ կատարելության կհասնի, երբ վերջին գեղջուկն էլ այսպիսի բնակարան կունենա, և ամեն մեկը մեզնից պարտավոր է դրան նպաստել... Իսկ ես ատեցի այդ վերջին գեղջուկին, Ֆիլիպին թե Միդորին, որի համար ես կաշվիցս դուրս պիտի գամ և որը ինձ շնորհակալություն էլ չի ասի... և ինչի՞ և է պետք նրա շնորհակալությունը։ Լավ, ասենք թե նա ապրեց սպիտակ խրճիթում, իսկ իմ մարմնից կոատուկ կբուսնի, լավ, հետո՞։

— Հերիք է, Եվգենի... ասածներդ լսողը ուզի-չուզի պիտի համաձայնի այն մարդկանց հետ, որոնք կշտամբում են, թե մենք սկզբունք չունենք։

— Դու էլ քո հորեղբոր նման ես խոսում։ Ընդհանրապես սկզբունքներ չկան, մի՞թե մինչև այժմ դեռ չես հասկացել այդ. այլ միայն կան զգացողություններ։ Ամեն բան դրանից է կախված։

— Ինչպե՞ս։

— Հենց այդպես։ Օրինակ ես՝ ես ժխտական ուղղության եմ հետևում զգացողություններիս պատճառով։ Ինձ հաճույք է պատճառում ժխտելը, իմ ուղեղն այդպես է կազմված, պրծավ գնաց։ Ինչո՞ւ քիմիան դուր է գալիս ինձ։ Ինչո՞ւ դու սիրում ես խնձորը. նույնպես զգացողության շնորհիվ։ Այդ ամենը մեկ բան է։ Մարդիկ երբեք դրանից խորը չեն թափանցել։ Այս բանը ամեն մարդ քեզ չի ասի, հենց ես էլ ուրիշ անգամ այլևս չեմ ասի։

— Լավ, ուրեմն ազնվությունն է՞լ զգացողություն է։

— Անշուշտ։

— Եվգենի,— տխուր ձայնով սկսեց Արկադին...

— Հը՞։ Ի՞նչ է։ Ճաշակովդ չէ՞ր,— ընդհատեց Բազարովը։— Չէ՛, եղբա՛յր։ Որ մի անգամ սկսել ես ամեն բան հնձել՝ մի կանգնիր, գերանդին հասցրու քո ոտներին էլ... Սակայն մենք բավական փիլիսոփայություն արինք։ «Բնությունը քնի լուությունն է սփոռում»,— ասում է Պուշկինը։

— Նա երբեք այդպիսի բան չի ասել,— ասաց Արկադին։

— Է՛հ, որ չի ասել, անշուշտ որպես բանաստեղծ կարող էր և պարտավոր էր ասել։ Ի դեպ. երևի նա զինվորական ծառայության մեջ է եղել։

— Պուշկինը երբեք զինվորական չի եղել։

— Բայց ախր նրա գրվածքի ամեն մի երեսին կպատահես,— ի մարտ, ի մարտ Ռուսիայի պատվի պաշտպանության համար։

— Այս ինչ չեղած բաներ ես հնարում։ Ախր վերջապես զրպարտություն է այդ։

— Զրպարտությո՞ւն։ Ինչ մի կարևոր բան է։ Այ թե ինչպիսի խոսքերով մտածեցիր վախեցնել։ Ինչ զրպարտություն ուզում ես բարձիր մարդու վրա, բայց և այնպես նա դարձյալ քսան անգամ ավելի վատին է արժանի։

— Ավելի լավ է, քնենք,— սրտնեղած ասաց Արկադին։

— Մեծագույն ուրախությամբ,— պատասխանեց Բազարովը։

Բայց ոչ մեկի քունն էր տանում և ոչ մյուսի։ Ինչ-որ համարյա թշնամական մի զգացմունք համակում էր երկու երիտասարդների սիրտն էլ։ Մի հինգ րոպեից հետո նրանք բաց արին աչքերը և լռելյայն իրար երեսի նայեցին։

— Նայիր,— ասաց հանկարծ Արկադին,— չինարուց մի չոր տերև պոկ եկավ ու ցած է ընկնում, նրա շարժումները բոլորովին նման են թիթեռնիկի թռիչքին։ Տարօրինակ չէ՞։ Ամենատխուր ու մեռածը նման է ամենաուրախ ու կենդանի բանի։

— Ոհ, բարեկամս, Արկադի Նիկոլայիչ,— բացականչեց Բազարովը,— մի բան եմ խնդրում՝ գեղեցիկ մի խոսի։

— Խոսում եմ այնպես, ինչպես կարողանում եմ... Եվ վերջապես, սա ի՞նչ բռնակալություն է։ Գլխումս մի միտք ծագեց, ինչո՞ւ չպիտի արտահայտեմ։

— Լավ. բայց ինչո՞ւ ես էլ չպետք է իմ միտքն արտահայտեմ։ Իմ կարծիքով, գեղեցիկ խոսելը անպարկեշտ բան է։

— Հապա ի՞նչն է պարկեշտ։ Հայհոյե՞լը։

— Էհե՛, ինչպես տեսնում եմ, դու ճիշտ որ մտադիր ես գնալ հորեղբորդ հետքերով։ Ինչքան պիտի ուրախանար այդ ապուշը, եթե ասածդ լսեր։

— Ի՞նչ անվանեցիր Պավել Պետրովիչին։

— Ինչ որ հարկն էր, այն էլ ասացի՝ ապուշ։

— Այդ արդեն անհանդուրժելի է,— բացականչեց Արկադին։

— Հը, ազգակցական զգացումդ խոսեց,— հանդարտ ասաց Բազարովը։— Ես նկատել եմ՝ այդ բանը շատ համառ կերպով մնում է մարդկանց մեջ. մարդ ամեն բանից պատրաստ է հրաժարվել, ամեն տեսակ նախապաշարմունքներից հեռանալ, բայց խոստովանել, որ, օրինակ, իր եղբայրը, որը ուրիշների թաշկինակներն է գողանում, գող է, այդ նրա ուժերից վեր է։ Եվ հիրավի, իմ եղբայրը իմն է՝ և հանճար չէ՞... կարելի՞ բան է այդ։

— Պարզ արդարամտության զգացումն էր և ոչ թե ազգականության զգացումը, որ բողոքեց քո դեմ,— գրգռված պատասխանեց Արկադին։— Բայց որովհետև դու այդ զգացումը չես հասկանում, այդպիսի զգացողություն չունես, ուստի և չես էլ կարող դրա մասին դատել։

— Ուրիշ խոսքով՝ Արկադի Կիրսանովը իմ հասկացողությունից խիստ բարձր է. խոնարհվում եմ ու լռում։

— Ի սեր աստուծո, հերիք է, Եվգենի. մենք վերջ ի վերջո կկռվենք։

— Ա՛հ, Արկադի, շնորհ արա. եկ մի անգամ լավ կռվենք, իրար ջարդենք ոչնչացնելու չափ։

— Այսպիսով մենք, ով գիտե, վերջացնենք նրանով...

— Որ ծեծվե՞նք,— վրա բերեց Բազարովը։— Ինչ կա որ։ Այստեղ, խոտի վրա մի այսպիսի գեղանկար պայմանների մեջ, աշխարհքից ու մարդկային աչքից հեռու, վնաս չունի։ Բայց դու իմ հախից չես գա։ Ես իսկույն քո կոկորդից կբռնեմ...

Բազարովը շռեց իր երկար ու կոշտ մատները... Արկադին շուռ եկավ ու ասես թե կատակով, պատրաստվեց դիմադրելու... բայց իր բարեկամի դեմքի արտահայտությունն այնպես չարագուշակ թվաց, մի այնպիսի սպառնալիք տեսավ նրա շրթունքների ծուռ ծաղրի, նրա բորբոքված աչքերի մեջ, որ ակամա վախեցավ...

— Ահա թե ուր եք քաշվել,— այդ միջոցին լսվեց Վասիլի Իվանովիչի ձայնը, և ծերունի զինվորական բժիշկը, տնագործ կտավե պիջակը հագին, նույնպես տնագործ հարդյա գլխարկը գլխին, ցցվեց երիտասարդների առաջ։— Ես ձեզ փնտրեցի, փնտրեցի... Բայց շատ լավ տեղ եք ընտրել և գեղեցիկ զբաղմունքի էլ անձնատուր եղել։ «Գետնին» պառկած

«երկինք» նայել... Գիտեք, մի առանձին իմաստ կա դրա մեջ։

— Ես երկնքին նայում եմ միայն այն ժամանակ, երբ ուզում եմ փոշտալ,— փնթփնթաց Բազարովը և, Արկադիի կողմը դառնալով, ցած ձայնով ավելացրեց։— Ափսոս որ խանգարեց։

— Դե լավ, հերիք է,— շշնջաց Արկադին և ծածուկ իր բարեկամի ձեռքը սեղմեց։ Սակայն ոչ մի բարեկամություն չի կարող այսպիսի ընդհարումների երկար դիմանալ։

— Նայում եմ ձեզ, իմ երիտասարդ խոսակիցներս,— ասում էր Վասիլի Իվանովիչը գլուխն օրորելով և հենված իր պատրաստած ձեռնափայտին, որ ճարպկորեն ոլորված մի բան էր և որի կոթը թուրքի գլխի էր նման,— նայում եմ ու չեմ կարող չզվարճանալ։ Որքան ուժ, որքան ամենածաղիկ երիտասարդություն, ընդունակություններ, տաղանդ կա ձեր մեջ։ Կարծես... Կաստորն ու Պոլլուքսը լինեք[1]։

— Ահա դիցաբանության անցավ,— ասաց Բազարովը։— Իսկույն երևում է, որ ժամանակին լավ լատինագետ ես եղել։ Կարծեմ շարադրության համար արծաթե մեդալ էլ ես ստացել, չէ՞։

— Դիոսկուրներ, Դիոսկուրներ,— կրկնեց Վասիլի Իվանովիչը։

— Դե լավ, հերիք է, հայր, շատ մի քնքշանա։

— Քանի տարի է չենք տեսնվել, մի անգամ կարելի է,— մրթմրթաց ծերունին։— Ասենք ես ձեզ, պարոններ, հաճոյախոսություններ անելու համար հո չեմ եկել, այլ նախ հայտնելու, որ շուտով ճաշելու ենք, իսկ երկրորդ, ուզում էի քեզ նախագիտակ անել, Եվգենի... Դու խելոք մարդ ես, ճանաչում ես մարդկանց, կանանց էլ ես ճանաչում, ուստի և կներես... Մայրիկդ քո գալստյան առիթով ուզեցել էր մաղթանք կատարել տալ։ Չկարծես թե ես եկել եմ քեզ կանչելու, որ այդ մաղթանքին ներկա լինես. մաղթանքն արդեն եղավ վերջացավ. բայց տեր Ալեքսեյը...

— Տերտե՞ր։

1 Կաստորն ու Պոլլուքսը, հռոմեական ավանդությունների երկվորյակներ (դիոսկուրներ)— հունաց Զևս աստծո որդիքը. հայտնի են որպես անբաժան և անձնվեր ընկերներ։ Ե. Բ.։

— Այո, քահանան. մնաց հետներս ճաշելու... Չէի կարծում, թե բանն այդպես կլինի, մինչև անգամ խորհուրդ էի տալիս չկանչել... բայց չգիտեմ՝ ինչպե՞ս եղավ... միտքս չհասկացավ... Դե, Արինա Վլասևնան էլ... Մանավանդ որ այդ քահանան շատ լավ ու հասկացող մարդ է։

— Ճաշին հո իմ բաժինը չի՞ ուտելու,— հարցրեց Բազարովը։

Վասիլի Իվանովիչը ծիծաղեց։

— Ինչ ես ասում։

— Էլ ինձ ուրիշ բան հարկավոր չէ։ Ես ամեն մարդու հետ էլ պատրաստ եմ սեղան նստելու։

Վասիլի Իվանովիչն իր գլխարկն ուղղեց։

— Ես առաջուց համոզված էի,— ասաց նա,— որ դու վեր ես ամեն նախապաշարմունքից։ Ես հո ծեր մարդ եմ, վաթսուներկու տարի է ապրում եմ աշխարհիս երեսին. մինչև անգամ ես էլ ազատ եմ նախապաշարմունքից (Վասիլի Իվանովիչը չէր համարձակվում խոստովանել, որ ինքն էր մաղթանք ուղղելու... Նա յուր կնոջից պակաս կրոնասեր չէր)։ Իսկ տեր Ալեքսեյը սաստիկ ուզում էր ծանոթանալ հետդ։ Այ կտեսնես, դու նրան կհավանես։ Նա թղթախաղի էլ չէ չի ասի և նույնիսկ... բայց այս մեր մեջը մնա... չիբուխ էլ է քաշում։

— Ավելի լավ. ճաշից հետո կնստենք երալաշ խաղալու, և ես նրան կտանեմ։

— Հա՜-հա՜-հա՜, տեսնենք։ Նայիր, որ ատամդ չառնի։

— Չգիտեմ, գուցե հին փեշա՞կդ էլի բանեցնես,— առանձին շեշտով ասաց Բազարովը։

Վասիլի Իվանովիչի բրոնզագույն դեմքը քիչ կարմրեց։

— Չե՞ս ամաչում, Եվգենի... Անցածն անցավ, գնաց։ Ես հենց այժմ պատրաստ եմ ահա նրանց առաջ խոստովանվել, որ երիտասարդությանս ժամանակ այդ ախտն ունեի. և ի՞նչ պատիժ կրեցի դրա համար։ Բայց այս ինչքա՞ն տաք է։ Թողեք ձեր կողքին ես էլ նստեմ։ Հո չե՞մ խանգարի։

— Ամենևին,— պատասխանեց Արկադին։

Վասիլի Իվանովիչը տնքալով նստեց խոտի վրա։

— Ձեր այս մահիճը, պարոններիս ասեմ, ինձ հիշեցնում է,— սկսեց նա,— վարած զինվորական, վրանաբնակ կյանքս, վերքեր կապելու համար նշանակված տեղերը, նույնպես այս-

պես դեզերի մոտ. և դեռ դրան էլ փառք աստուծո։— Նա հառաչեց։— Շատ, շատ նեղություններ եմ տեսել կյանքումս։ Ահա հենց, օրինակ, եթե թույլ կտաք, ես ձեզ մի հետաքրքրական դեպք պատմեմ Բեսսարաբիայում պատահած ժանտախտի մասին։

— Որի համար դու Վլադիմիրի շքանշա՞ն ստացար,— վրա բերեց Բազարովը...— Գիտենք, գիտենք... Ի դեպ. ինչի՞ չես շքանշանդ կախում։

— Չէ՞ որ ասացի նեխապաշարմունքներ չունեմ,— քրքջմընջաց Վասիլի Իվանովիչը (նա դեռ նախօրյակին էր պատվիրել, որպեսզի սերթուկի վրայից կարմիր ժապավենի կտորը պոկեն), և սկսեց ժանտախտի դեպքը պատմել։— Մի սրան նայիր, քնել է,— շշնջաց նա հանկարծ Արկադիին, որ բարեսրտությամբ աչքով արավ։— Եվգենի, վեր կաց,— ավելացրեց նա բարձր ձայնով։— Ճաշելու գնանք...

Տեր Ալեքսեյը, որ մի բարձրահասակ ու լիքը տղամարդ էր, խիտ ու խնամքով սանրած մազերով, բաց մանիշակագույն մետաքսյա վերարկվի վրայից ասեղնագործ գոտի կապած, շատ ճարպիկ ու սուր մարդ դուրս եկավ։ Նա, ասես թե հասկանալով, որ Բազարովն ու Արկադին իր օրհնությանը կարոտ չեն, առաջ ինքը շտապեց նրանց ձեռքը սեղմելու, և առհասարակ իրեն շատ ազատ էր պահում։ Ոչ իր հարգը վայր դցեց և ոչ էլ ուրիշների պատվին դիպավ. հարմար տեղին ինքն էլ ծիծաղեց սեմինարիայում ավանդված լատինարենի վրա, և իր առաջնորդի պատիվն էլ պաշտպանեց. երկու գավաթ օղի խմեց, իսկ երրորդից հրաժարվեց։ Արկադիի առաջարկած սիգարը վերցրեց, բայց չծխեց՝ ասելով, թե տունկտանի։ Մի քիչ անհաճելի էր նրա մի սովորությունը, որ նա շարունակ ձեռքը կամաց-կամաց ու զգուշությամբ բարձրացնում էր վերև ու աշխատում էր երեսին նստած ճանճերը բռնել և երբեմն ճզմում էր ճանճը։ Նա գոհության չափավոր արտահայտությամբ նստեց կանաչ սեղանի առաջ և վերջացրեց նրանով, որ Բազարովից 2 ռ. 50 կ. ասսիգնացիա տարավ։ Արինա Վլասևնայի տանը արծաթ դրամով հաշվելու մասին գաղափար անգամ չունեին... Նա առաջվա պես նստել էր որդու կողքին (նա թուղթ չէր խաղում), առաջվա պես նա բռունցքը դեմ էր արել թշին, և միայն վեր էր կենում տեղից,

որպեսզի հրամայի նոր ուտելիք բերելու։ Նա վախենում էր որդուն գուրգուրել, և Բազարովն իր վարմունքով նրան սիրտ չէր տալիս, այնպես չէր անում, որ նա փաղաքշեր որդուն, մանավանդ որ Վասիլի Իվանովիչն էլ նրան խորհուրդ էր տալիս, որ որդուն շատ «չանհանգստացնի»։ «Ծրիտասարդներն այդպիսի բաներ չեն սիրում»— պնդում էր նա (էլ ավելորդ է ասել, թե ինչ ճաշ կլիներ այդ օրը։ Տիմոֆեիչն ինքն անձամբ ձի նստած լուսաբացին սլացել էր չերկասյան տավարի մի բերելու. գյուղապետն էլ մյուս կողմն էր գնացել արքայածուկ, պերկես ու խեցգետին բերելու, մենակ սունկի համար կնանիք 42 կոպեկի սև փող ստացան)։ Բայց Արինա Վլասևնայի աչքերը, որ անթարթ կերպով Բազարովին էին հառած, մենակ անձնվիրություն ու քնքշանք չէին արտահայտում, նրանց մեջ երևում էր նաև թախիծ՝ խառն հետաքրքրության ու երկյուղի հետ, մի տեսակ հեզ կշտամբանք։

Ասենք Բազարովը ամենևին տրամադրություն էլ չուներ որոշելու, թե ինչ էին արտահայտում իր մոր աչքերը. նա հաղիվ էր մորը բան ասում, այն էլ կարճ հարցմունք էր լինում։ Մի անգամ նա «բախտը բերելու» համար խնդրեց մոր ձեռքը, մայրը իր փափուկ ձեռքը կամացուկ դրեց նրա կոշտ ու լայն ափի վրա։

— Հը,— հարցրեց նա փոքր-ինչ սպասելուց հետո,— չոգնե՞ց։

— Ավելի վատ եղավ,— անտարբեր ծաղրով պատասխանեց Բազարովը։

— Նրանք շատ են համարձակ խաղում,— ասես վշտակցելով ասաց հայր Ալեքսեյը ու իր գեղեցիկ մորուքը շփեց։

— Նապոլեոնի կանոնն է, տեր հայր, Նապոլեոնի կանոնը,— վրա բերեց Վասիլի Իվանովիչը։— Գնա, մոնոյից (տուզ) գնա։

— Հենց այդ բանն էլ նրան սուրբ Հեղինեի կղզին հասցրեց,— ասաց տեր Ալեքսեյը և մոնոն կտրեց կոզիրով։

— Ենյուշիկ, հաղարջի ջուր չե՞ս ուզում,— հարցրեց Արինա Վլասևնան։

Բազարովը միայն ուսերը թոթվեց։

— Չէ,— ասում էր նա մյուս օրը Արկադիին,— վաղն այստեղից կգնամ։ Զանձրալի է. ուզում եմ աշխատել, իսկ այստեղից

տեղ հնարավոր չէ։ Գարձյալ ձեր գյուղը գնանք. բոլոր գործիքներս այնտեղ եմ թողել։ Ձեզ մոտ գոնե կարելի է առանձին քաշվել ու դուռդ էլ վրայիցդ գոցել։ Ապա թե ոչ այստեղ հայրս համ շարունակ կրկնում է՝ «իմ առանձնասենյակը քո տրամադրության տակ է, քեզ ոչ ոք չի խանգարի», համ էլ ինձանից մի քայլ չի հեռանում։ Բայց և խիղճս էլ չի տալիս, որ նրանից փախչեմ ու վրայիցս դուռը գոցեմ։ Մայրս էլ այդպես։ Լսում եմ, թե ինչպես պատի մյուս կողմում հառաչում, ախ է քաշում. իսկ գնում եմ մոտը՝ ասելու էլ բան չեմ գտնում։

— Մայրդ շատ կվշտանա,— ասաց Արկադին,— հայրդ էլ նույնպես։

— Ես հետո էլի կվերադառնամ։

— Ե՞րբ։

— Հենց որ Պետերբուրգ գնալու լինեմ։

— Մանավանդ ավելի է մեղքս գալիս մայրդ։

— Ի՞նչ պատահեց, չլինի՞ հատապտուղներով շահեց քեզ։

Արկադին աչքերը ցած գցեց։

— Եվգենի, դու դեռ մորդ չես ճանաչում։ Նա ոչ միայն շատ պատվական կին է, հապա և խելացի կին է, հավատա։ Այսօր առավոտյան նա կես ժամ հետս խոսում էր, և ինչպես խելոք ու գործնական կերպով։

— Երևի շարունակ իմ մասին էր խոսում։

— Խոսքը մենակ քո մասին չէր։

— Կարելի է. դու կողմնակի մարդ ես, ավելի լավ կարող ես տեսնել։ Թե որ մի կին կարողանում է կես ժամ խոսակցություն ունենալ — այդ արդեն լավ նշան է։ Սակայն ես՝ այնուամենայնիվ կհեռանամ։

— Քեզ համար ծանր կլինի նրանց այդ բանը հայտնելը։ Նրանք հենց մի բերան այն են խոսում, թե ի՞նչ ենք անելու երկու շաբաթից հետո։

— Հեշտ չի լինի։ Հակառակի պես էլ այսօր հորս գրգռել եմ, այս օրերս նա իր հարկատու գյուղացուն ծեծել է տվել։ և շատ էլ լավ է արել։ Այո՛, այո՛, այդպես սարսափով մի նայիր վրաս, շատ լավ է արել, որովհետև նա սաստիկ գող է ու հարբեցող, բայց հայրս ամենևին չէր կարծել, թե ես

այդ բանը կիմանամ։ Նա շատ ամաչեց, իսկ հիմա էլ ահա նրան պիտի վշտացնեմ... Փույթ չէ։ Մինչև հարսանիքը կլավանա։

Բազարովը ասաց՝ «փույթ չէ», բայց ամբողջ օրն անց կացավ և հետո միայն սիրտ արավ իր մտադրությունը Վասիլի Իվանովիչին հայտնել։ Վերջապես առանձնասենյակում, արդեն գիշեր բարի ասելիս, նա արհեստական կերպով հորանջելով ասաց.

— Հա... քիչ էր մնում մոռանայի քեզ ասել... Ասա, որ վաղը մեր ձիերը տանեն Ֆեդոտի մոտ՝ ճանապարհին ձիերը փոխելու համար։

Վասիլի Իվանովիչը զարմացավ։

— Մի՞թե պարոն Կիրսանովը գնում է։

— Այո, ես էլ եմ գնում նրա հետ։

Վասիլի Իվանովիչը կանգնած տեղում շուռ եկավ։

— Գնում ե՞ս։

— Այո... Հարկավոր է։ Խնդրեմ ձիերի համար կարգադրություն անես...

— Լավ...— թոթովեց ծերունին,— ճամփին փոխելու հի... լավ... բայց... բայց։ Ախր ի՞նչ դուրս եկավ։

— Հարկավոր է կարճ ժամանակով նրանց մոտ գնալ։ Ես հետո նորից կգամ։

— Հա՛, կարճ ժամանակ... Լավ։— Վասիլի Իվանովիչը թաշկինակը հանեց և, քիթը սրբելիս, համարյա մինչև գետին կռացավ։— Ի՞նչ արած... ամեն բան կանեմ։ Իսկ ես կարծում էի, թե դու այստեղ... ավելի կմնաս։ Երեք օր... Այո՛, այո՛, երեք տարուց հետո մի քիչ քիչ է, քիչ է, Եվգենի։

— Չէ՞ որ ասում եմ, թե շուտով կվերադառնամ։ Գնալս անհրաժեշտ է։

— Անհրաժեշտ է... Ինչ արած։ Ամենից առաջ պետք է պարտականությունը կատարել... Ուրեմն ձիերը ղրկե՞մ։ Լավ։ Ես էլ, մայրդ էլ, իհարկե, այդ բանը չէինք սպասում։ Ահավասիկ նա հարևանուհուց ծաղիկներ է խնդրել, որպեսզի քո սենյակը զարդարի։ (Վասիլի Իվանովիչն այլևս չհիշեց այն, թե ինչպես ինքն ամեն օր, առավոտյան ծեգին, մուճակները բոբիկ հագած, խորհուրդ էր անում Տիմոֆեիչի հետ և, դողդոջուն ձեռքով պատռած թղթադրամները հանելով մեկը

մյուսի հետևից, պատվիրում էր նրան զանազան բաներ գնել, մանավանդ ավելի ուշք դարձնելով ուտելեղենների ու կարմիր գինու վրա, որը, ինչքան կարելի էր նկատել, երիտասարդներին շատ էր դուր եկել)։ Գլխավոր բանը ազատությունն է... պետք չէ ճնշել, պետք չէ...

Նա հանկարծ լռեց և քայլերն ուղղեց դեպի դուռը։

— Մենք շուտով կտեսնվենք, հայրիկ, ուղիղ եմ ասում։

Բայց Վասիլի Իվանովիչը, առանց ետ դառնալու, միայն ձեռքով արավ ու դուրս եկավ։ Ննջարան մտնելով տեսավ, որ կինն արդեն անկողնումն էր և որպեսզի նրան չզարթեցնի, սկսեց շշնջալով աղոթք անել։ Սակայն կինը զարթնեց։

— Դո՞ւ ես, Վասիլի Իվանիչ,— հարցրեց նա։

— Ես եմ, հոգիս։

— Ենյուշիկի մոտի՞ցն ես գալիս։ Գիտե՞ս, վախենում եմ, որ գահավորակի վրա նրա տեղը հանգիստ չէ։ Անֆիսուշկային ասացի, որ նրան տա քո ճանապարհի ներքնակն ու նոր բարձերը. մեր բմբուլե ներքնակը կտայի — բայց նա, որքան հիշում եմ, փափուկ բանի վրա պառկել չի սիրում։

— Վնաս չունի, հոգիս, անհոգ եղիր։ Նա հանգիստ է։ Տեր, քավյա զիս մեղավորս,— հազիվ լսելի ձայնով շարունակեց նա իր աղոթքը։ Վասիլի Իվանովիչը խղճաց իր պառավին և չուզեց նրան գիշերն ասել, թե ինչ վիշտ էր կրելու նա։

Մյուս օրը Բազարովն ու Արկադին ճանապարհ ընկան։ Արդեն առավոտից տան մեջ ամենքն էլ տխրել էին. ամանները Անֆիսուշկայի ձեռքից վայր էին ընկնում. մինչև անգան Ֆեդկան էլ տարակուսանքի մեջ էր ընկել, և վերջ ի վերջո գնաց ու կոշիկները ոտքից հանեց։ Վասիլի Իվանովիչը սովորականից դուրս վայր ու վերի մեջ էր, ըստ երևույթին նա ինքն իրեն զսպում էր, սիրտ տալիս, խոսում էր բարձր ձայնով և ոտներով աղմկոտ ձայն հանում, բայց նրա դեմքը երկարել էր, և խուսափում էր որդուն նայելուց։ Արինա Վլասևնան կամացուկ լաց էր լինում. նա բոլորովին կշշկլվեր, և ինքն իրեն չէր կարողանա զսպել, թե որ ամուսինը առավոտ վաղ երկու ժամ շարունակ նրան հորդորած, համոզած չլիներ։ Իսկ երբ Բազարովը շատ անգամ խոստանալուց հետո, թե ամենաուշը մի ամսից դարձյալ կվերադառնա, դուրս պրծավ իրեն

պինդ սեղմած գրկից ու տարանտաս նստեց, երբ ձիերը շարժվեցին, և զանգակը սկսեց զնգզնգալ, և անիվները պտույտ եկան, և էլ կառքի հետևից նայելու բան չէր մնացել, փոշին կ նստել էր, և Տիմոֆեիչը բոլորովին կզացած, երերալով ետ դարձավ դեպի իր խցիկը, երբ երկու ծերեր մնացին մենակ իրենց, ասես նույնպես հանկարծ կզացած ու զառամած տանը՝ Վասիլի Իվանովիչը, որ դեռ մի քանի ակնթարթ առաջ արքաբար պատշգամբում կանգնած թաշկինակն էր շարժում, ընկավ աթոռի վրա ու գլուխը կախեց կրծքին։ «Թողեց մեզ, թողեց,— թոթովում էր նա,— թողեց, մեզ հետ մնալուց ողջունեցավ։ Մենակ, բուի նման մենակ մնացի»,— կրկնեց նա մի քանի անգամ, և ամեն անգամ ձեռքը առաջ էր շարժում, ցուցամատը մյուս մատներից հեռացրած։ Այն ժամանակ Արինա Վլասևնան մոտ եկավ նրան, իր ալևոր գլուխը խոնարհեց նրա ալևոր գլխին և ասաց.

— Ինչ արած, Վասյա։ Որդին կտրած պատառ է։ Նա որ կա՝ մի բազե է, ուզեց՝ թռավ եկավ, ուզեց՝ թռավ գնաց. իսկ մենք ծառի փչակին բուսած սունկի նման կողք-կողքի նստած, տեղներիցս չենք շարժվում։ Մենակ ես եմ քեզ համար մշտական մնալու անփոփոխ, ինչպես նաև դու՝ ինձ համար։

Վասիլի Իվանովիչը երեսից հեռացրեց ձեռքերը և գրկեց իր ընկերուհուն, այնպես ամուր ու ջերմ, որ երիտասարդը, իր ընկերուհուն, այնպես ամուր ու ջերմ, որ երիտասարդ ժամանակն էլ չէր գրկել. կինը մխիթարեց նրան տրխտության պահին։

XXII

Մինչև Ֆեդոտին հասնելը մեր բարեկամները լուռ էին և երբեմն-երբեմն միայն աննշան խոսքեր էին ասում միմյանց։ Բազարովը, ինքն իրենից այնքան էլ գոհ չէր։ Արկադին դժգոհ էր նրանից։ Մանավանդ, որ նա իր սրտում զգում էր այն պատուհաս թախիծը, որ հայտնի է միմիայն խիստ երիտասարդ մարդկանց։ Կառապանը փոխեց ձիերը և, իր տեղը նստելով, հարցրեց՝ ա՞ջ թե ձախ։

Արկադին ցնցվեց։ Աջ կողմի ճանապարհը քաղաք էր գնում. ձախը Օդինցովայի գյուղը։

Նա Բազարովին նայեց։

— Եվգենի,— հարցրեց նա,— ձա՞խ։

Բազարովը երեսը շուռ տվեց։

— Ինչ հիմարություն,— փնթփնթաց նա։

— Գիտեմ հիմարություն եղածը,— պատասխանեց Արկադին...— Ինչ կա որ։ Մի՞թե առաջին անգամն է։

Բազարովը գլխարկը ցած քաշեց ճակատին։

— Ինչ ուզում ես արա,— ասաց նա վերջապես։

— Քշիր դեպի ձախ,— կանչեց Արկադին։

Տարանտասը դեպի Նիկոլսկոյե ուղղվեց։ Բայց բարեկամները, վճռելով հիմարություն անել, առաջվանից էլ ավելի լուռ մնացին, և նույնիսկ զայրացած էին թվում։

Արդեն Օդինցովայի տան պատշգամբում սենեկապանի ցույց տված ընդունելությունից կարող էին բարեկամները հասկանալ, որ հանկարծ մտքներն ընկած բանը կատարելով՝ անխոհեմություն էին գործել։ Ակնհայտ էր, որ նրանց չէին սպասում։ Նրանք բավական երկար ժամանակ և բավական հիմար կերպարանքով նստած էին ընդունարանում։ Օդինցովան վերջապես դուրս եկավ։ Նա իր սովորական բարեհամբույր բնավորությամբ բարևեց նրանց, բայց զարմացավ, որ այդպես շուտով էին վերադարձել և, որքան կարելի էր դատել նրա շարժումների ու զրույցի դանդաղությունից, շատ էլ ուրախ չէր նրանց վերադարձի համար։ Նրանք շտապեցին հայտնելու, որ միայն ճանապարհի վրա հանդիպել են այստեղ և թե մի չորս ժամից ճանապարհ կընկնեն դեպի քաղաք։ Օդինցովան միմիայն մի թեթև բացականչություն արձակեց։ Արկադիի միջոցով բարև ուղարկեց նրա հորը, և մարդ ուղարկեց իր մորաքրոջը կանչելու։ Իշխանուհին եկավ բոլորովին քնաթաթախ, և այդ հանգամանքն ավելի ևս ժանտ արտահայտություն տվեց նրա կնճռոտ, պառավական դեմքին։ Կատյան տկար էր և սենյակից դուրս չեկավ։ Արկադին հանկարծ զգաց, որ ինչքան Աննա Սերգեևնային էր ուզում տեսնել, գոնե նույնքան էլ ուզում էր տեսնել նաև Կատյային։ Չորս ժամն անցկացավ դեսից դենից աննշան խոսակցություններով. Աննա Սերգեևնան առանց ժպտի էր թե խոսում, թե լսում։ Միայն

հենց մնաս բարովի միջոցին ասես թե նախկին բարեկամությունը երևան եկավ նրա հոգու մեջ։

— Այժմ մելամաղձոտություն է եկել վրաս,— ասաց նա,— բայց դրա վրա ուշադրություն մի դարձրեք և մի քիչ ժամանակից դարձյալ եկեք. ես այս երկուսիդ էլ եմ ասում։

Բազարովն էլ, Արկադին էլ պատասխանի տեղ լուռ գլուխ տվին, կառք նստեցին և, այլևս առանց մի տեղ դադար առնելու, տուն, Մարյինո վերադարձան, ուր և մյուս օրը երեկոյան հաջողությամբ հասան։ Ամբողջ ճանապարհին ոչ սա և ոչ էլ նա Օդինցովայի անունն անգամ չտվին, մանավանդ Բազարովը, որ համարյա բերանն էլ բաց չարավ, և մի տեսակ զայրացած լարմամբ շարունակ մի կողմ, ճանապարհից հեռու էր նայում։

Մարյինոյում նրանց գալու վրա ամենքն էլ սաստիկ ուրախացան։ Որդու երկարատև բացակայությունը սկսել էր Նիկոլայ Պետրովիչին անհանգստացնել. նա բացականչեց, ոտքերը շարժեց, նստած տեղը վեր թռավ գահավորակի վրա, երբ որ Ֆենիչկան, ծիծաղն աչքերին, ներս վազեց և հայտնեց, որ «երիտասարդ աղաներն» եկան. նույն ինքը Պավել Պետրովիչն էլ մի տեսակ հաճելի հուզում զգաց և ներողամտաբար էլ ժպտաց վերադարձած շրջմոլիկների ձեռները ուժգին թոթվելով։ Սկսեցին խոսել, հարց ու փորձ անել,— ավելի Արկադին էր խոսում, մանավանդ ընթրիքին, որ կես գիշերից շատ ուշ տեսեց։ Նիկոլայ Պետրովիչը պատվիրեց մի քանի շիշ պորտեր բերել, որ նոր էին Մոսկվայից ստացել, և այնքան խմեց, որ այտերը մուգ գույն ստացան, և ինքը շարունակ ծիծաղում էր ոչ այն է երեխայական, ոչ այն է նյարդային ծիծաղով։ Ընդհանուր ոգևորությունը ծառաներին էլ վարակեց։ Դունյաշան խելագարի պես ետ ու առաջ էր վազվզում ու շարունակ դռները չբխկացնում. իսկ Պյոտրը նույնիսկ գիշերվա ժամը երկուսն անց դեռ փորձում էր կիթառի վրա վալս-կազակ նվագել։ Լարերը աղեկտուր ու հաճելի հընչում էին անշարժ օդի մեջ, բայց կրթված սենեկապանի նվագածից, բացի սկզբնավորությունից, ոչինչ չէր դուրս գալիս. քնությունը նրան երաժշտական ընդունակությունից, ինչպես նաև ամեն մի ընդունակությունից, զրկել էր։

Մինչդեռ Մարյինոյում կյանքն այնքան էլ գեղեցիկ չէր դա-

ռավորվում, և խեղճ Նիկոլայ Պետրովիչի գործերը բավականին շատ էին։ Ֆերմայի հոգսերն օր օրի ավելանում էին — անմխիթար, անիմաստ հոգսեր։ Վարձու բանվորների հետ գործ ունենալը անտանելի էր դառնում։ Ոմանք պահանջում էին, որ իրենց հաշիվները փակեն կամ ռոճիկներն ավելացնեն, ոմանք էլ ստանում էին կանխավճարը ու թողնում գնում։ Ձիերը հիվանդանում էին. ձիերի սարքը ասես կրակի մեջ վառվում էր. աշխատանքը անհոգաբար էին կատարում, Մոսկվայից բերել տված կալսելու գործիքը յուր ծանրության պատճառով մնացել էր անպետք։ Մյուս մեքենան հենց առաջին անգամից փչացրել էին։ Գոմանոցի կեսը այրվել էր այն պատճառով, որ ընդծիններից մի կույր պառավ խանձակոթն առած քամի ժամանակ գնացել էր, որ իր կովը մուխի բռնի, չարից ազատի... Թեպետ և, նույն պառավի ասելով, բոլոր փորձանքն առաջացել էր այն բանից, որ աղայի խելքին փչել էր չեղած-չտեսնված պանիրներ ու կաթնային տնտեսություն ստեղծել։ Կառավարիչը հանկարծ ծուլացավ և մինչև անգամ սկսեց հաստանալ, ինչպես որ սովորաբար հաստանում է ամեն մի ռուս մարդ, որ «բոլ հաց» է գտնում։ Հենց որ նա հեռվից նկատում էր Նիկոլայ Պետրովիչին, որպեսզի ցույց տա իր հոգածությունը, տաշեղի կտոր էր արձակում մոտովն անցնող խոճկորի հետևից կամ սպառնալիք էր տալիս կիսամերկ երեխային, սակայն ժամանակի մեծ մասը նա քնով էր անցկացնում։ Գյուղացիները ժամանակին բահրան չէին բերում, անտառից գողություն էին անում. համարյա ամեն գիշեր պահապաններն «ագարակի» արոտատեղերում բռնում կամ զոռով խլում էին գյուղացոց ձիերը։ Նիկոլայ Պետրովիչը սկզբում փողով տուգանք էր նշանակել արտ կամ խոտատեղ արածացնելու համար, բայց սովորաբար բանը վերջանում էր նրանով, որ մի կամ երկու օր բռնած ձիերը աղայի կերով պահպանելուց հետո, իրենց տերերին էին վերադարձնում։ Ի լրումն այս ամենի, գյուղացիներն սկսեցին իրար հետ վիճել. եղբայրները պահանջում էին, որ բաժանվեն. նրանց կանայք մի տան մեջ չէին յոլա գնում, հանկարծ կռիվ ծեծկռտոց էր սկսվում, և ամենքը խոսքը մեկ արածի պես ոտի էին ելնում, ամենքն էլ վազում, հավաքվում էին նրա գրասենյակի պատշգամբի առաջ, զոռով ներս էին մտնում, շատ անգամ

քիթ ու մուրթ ջարդած, հարբած, և օրենք, դատաստան պահանջում. բարձրանում էր աղմուկ-աղաղակ, մեջ ու մեջ լսվում էին կանանց լացակումած ճիչ ու տղամարդկանց հայհոյանք։ Պետք էր թշնամի կողմերի դատը տեսնել, մինչև ձայնը խզելու աստիճան գոռալ, առաջուց արդեն համոզված, որ էլի կանոնավոր վճիռ կայացնել հնարավոր չպիտի լինի։ Հնձի ժամանակ մարդ չկար. մի հարևանը, որ մի բարետես մարդ էր, պայմանավորվել էր ամեն մի դեսյատինը երկու ռուբլով հնձելու համար հնձվորներ ուղարկել, ու ամենաանխիղճ կերպով խաբեց. իր գեղջկուհիներն էլ շլսված գներ էին ուզում, մինչդեռ ցորենը հասկերի միջից թափվում էր, միևնույն ժամանակ հնձելու բանն էլ գլուխ չեկավ, միևնույն ժամանակ Որբախնամ խորհուրդը սպառնում է և պահանջում, որ տոկոսներն անմիջապես առանց հետաձգելու վճարվի...

— Էլ ուժ չունեմ,— շատ անգամ հուսահատված բացականչում էր Նիկոլայ Պետրովիչը,— չի սազի, որ ինքս հետները ծեծկվեմ, ստանովոյի հետևից ուղարկելը սկզբունքներիս դեմ է. իսկ առանց պատժի սպառնալիքի ոչինչ չի կարելի անել։

— Du calme, du calme[1],— նկատում էր դրան Պավել Պետրովիչը, իսկ ինքը մոմոում էր, դեմքը մռայլում ու բեղերը ճգճգում։

Բազարովն իրեն այս «անախորժություններից» հեռու էր պահում, մեկ էլ նրան, որպես հյուրի, չէր էլ սազի, որ ուրիշների գործերին խառնվի։ Մարյինո գալու մյուս օրն ևեթ նա սկսեց զբաղվել իր գորտերով, իր ինֆուզորիաներով, քիմիական բաղադրություններով, և բոլոր ժամանակ զբաղված էր դրանցով։ Արկադին, ընդհակառակը, իր պարտականությունը համարեց, եթե հորը չօգներ էլ, գոնե ցույց տալ, թե պատրաստ է օգնելու։ Նա համբերությամբ ականջ էր դնում նրա ասածներին և մի անգամ էլ մի ինչ-որ խորհուրդ տվեց՝ չէ թե նրա համար, որ հետևեն իր խորհրդին, այլ որպեսզի իր մասնակցությունը հայտնի։ Տնտեսական զբաղմունքները նրան զզվանք չէին պատճառում. նա նույնիսկ բավականությամբ երազում էր գյուղատնտեսական գործունեության մասին, բայց այդ միջոցներին նրա գլխում ուրիշ մտքեր էին վխտում։ Ար-

[1] Անվրդովություն, անվրդովություն (ֆրանս.)։

կադին ինքն էլ զարմանում էր, որ շարունակ Նիկոլսկոյեի մասին էր մտածում. առաջ եթե նրան ասող լիներ, թե նա Բազարովի հետ միևնույն հարկի տակ ապրելով կարող է տաղտկանալ, այն էլ ինչպիսի՞ հարկի՝ ծնողական,— նա միայն ուսերը վեր կքաշեր. մինչդեռ նա հիրավի տաղտկություն էր զգում, և աչքը դուրսն էր։ Նա մտածում էր, մինչև հոգնելու աստիճան զբոսնել, բայց այդ էլ չօգնեց։ Մի անգամ հոր հետ խոսելիս իմացավ, որ հոր մոտ կա Օդինցովայի մոր գրած մի քանի բավական հետաքրքրական նամակները, որ նա գրել էր Արկադիի հանգուցյալ մորը. և մինչև այդ նամակները չստացավ, հոր օձիքը բաց չթողեց. իսկ Նիկոլայ Պետրովիչն այդ նամակները գտնելու համար ստիպված էր մի քսան արկղ ու սնդուկ քրքրել, տակն ու վրա անել։ Այս կիսամաշ թղթերին տիրանալուց հետո Արկադին կարծես հանգստացավ. ասես թե նա իր առաջ տեսավ այն նպատակը, որին պետք է դիմեր։ «Ես այդ երկուսիդ էլ եմ ասում,— շարունակ շշնջում էր նա,— ինքն ավելացրեց»։ «Կգնամ, կգնամ, ինչ ուզում է լինի»։ Բայց նա մտաբերեց վերջին այցելությունը, սառն ընդունելությունը և իր նախկին անհամարձակությունը, և վրան երկչոտություն եկավ։ Երիտասարդության «իցե թե»-ն, բախտը փորձելու և մենակ, առանց որևէ մեկի հովանավորության իր ուժերը փորձելու գաղտնի ցանկությունը վերջապես հաղթանակեցին։

Մարյինո գալուց տասն օր էլ չէր անցել, որ դարձյալ, կիրակնօրյա դպրոցների կազմությունն ուսումնասիրելու պատրվակով, նա դեպի քաղաք էր արշավում, իսկ այնտեղից էլ Նիկոլսկոյե։ Նա շարունակ քշել էր տալիս կառապանին և սլանում դեպի Նիկոլսկոյե այնպես, ինչպես դեպի պատերազմ է արշավում երիտասարդ սպան. և՛ վախենում էր նա, և՛ ուրախ էր. անհամբերությունը նրան խեղդում էր։ «Գլխավորն այն է, որ չպետք է մտածել»,— կրկնում էր նա ինքն իրեն։ Կտրիճ կառապանի էր հանդիպել. նա կանգ էր առնում ամեն մի օղետան առաջ ու ասում՝ «կոնծե՞նք» կամ «չկոնծե՞նք», բայց որ կոնծեց, էլ ձի խնայել չկար։ Ահա վերջապես երևաց ծանոթ տան բարձր կտուրը... «Այս ի՞նչ է իմ արածը»,— հանկարծ անցավ նրա մտքով։ «Է՛հ, մեկ է, հո ետ չեմ դառնալու»։ Եռաձի կառքը սլանում էր, կառապանը հույ

էր տալիս ձիերին ու սուլում։ Ահա կամուրջն էլ դղրդաց ձիերի ոտների ու անիվների տակ, մոտեցավ խուզած եղևնիների ծառուղուն... Մուգ կանաչի միջից փայլեց կանացի վարդագույն զգեստը, հովանոցի թեթև ծոպերի տակից երևաց նորատի դեմքը... Նա ճանաչեց Կատյային, և սա էլ նրան ճանաչեց։ Արկադին հրամայեց կառապանին՝ կանգնեցնել տաքացած ձիերին, ցած թռավ կառքից և մոտեցավ Կատյային։ «Այս դո՞ւք եք եղել,— ասաց Կատյան և հետզհետե բոլորովին կարմրատակեց,— եկեք քրոջս մոտ գնանք. նա այստեղ, պարտեզումն է, նա ուրախ կլինի ձեզ տեսնելով»։

Կատյան Արկադիին առաջնորդեց պարտեզ։ Արկադին այս հանդիպումը խիստ բախտավոր նշան համարեց. նա Կատյային որ տեսավ, սաստիկ ուրախացավ. կարծես մոտիկ հարազատին տեսած լիներ։ Ամեն բան հաջող էլ դուրս եկավ. ոչ սենեկապան, ոչ էլ գալու մասին զեկուցում։ Ճանապարհի պտույտի մոտ նա տեսավ Աննա Սերգեևնային, որ մեջքը դեպի իրեն դարձրած կանգնած էր։ Ոտքի ձայն լսելով՝ Օդինցովան ետ նայեց։

Արկադին նորից արդեն շփոթվելու վրա էր, բայց Օդինցովայի առաջին խոսքերը նրան իսկույն հանգստացրին։ «Բարև ձեզ, փախստական»,— ասաց նա իր միապաղաղ, փաղաքուշ ձայնով, և ժպտալով ու աչքը արևի լույսից ու քամուց կկոցելով՝ գնաց նրան ընդառաջ։

— Այս որտե՞ղ գտար նրան, Կատյա։

— Ես ձեզ համար, Աննա Սերգեևնա, մի այնպիսի բան եմ բերել,— սկսեց Արկադին,— որ երբեք չէիք սպասի...

— Դուք ձեզ բերիք, այդ ամենից լավն է։

XXIII

Բազարովը հեգնական ցավակցությամբ ճանապարհ դնելով Արկադիին ու նրան հասկացնելով, որ նա շատ լավ գիտե նրա ուղևորության իսկական նպատակը, վերջնականապես առանձնացավ և տենդային աշխատանքի անձնատուր եղավ։ Այլևս Պավել Պետրովիչի հետ վեճի չէր բռնվում, մանավանդ որ սրա ներկայությամբ նա չափազանց արիստոկրատիկ դիրք էր բռնում և իր կարծիքներն ավելի բացականչություններով էր արտահայտում, քան թե բառերով։ Միայն

մի անգամ Պավել Պետրովիչը սկսեց նիհիլիստի հետ վեճի բռնվել Օստզեի նահանգի ազնվականների իրավունքների առթիվ, որ այդ ժամանակ մի տեսակ մոդա էր դարձել, բայց հանկարծ իսկույն էլ կանգ առավ ու սառն քաղաքավարությամբ ասաց.

— Ասենք, մենք չենք կարող միմյանց հասկանալ. եկ գոնե, պատիվ չունեմ ձեզ հասկանալու։

— Ինչ ասել կուզի,— բացականչեց Բազարովը։— Մարդս կարող է ամեն բան հասկանալ, թե ինչպես է դողդողում եղեգը, թե ինչ է կատարվում արևի վրա. բայց թե ինչպես կարող է մի ուրիշ մարդ այնպես չխնչել, ինչպես ինքն է խնչում, նա այդ բանը հասկանալ չի կարող։

— Ինչ է այդ, սրամտությո՞ւն է,— հարցական եղանակով ասաց Պավել Պետրովիչը և մի կողմ քաշվեց։

Սակայն երբեմն նա խնդրում էր Բազարովին՝ թույլ տալ իր փորձերին ներկա լինելու և մինչև մի անգամ իր անուշահոտ ու գերազանց դեղերով լվացած դեմքը մոտեցրեց մանրադիտակին, որպեսզի տեսնի, թե ինչպես թափանցիկ infusoria կուլ է տալիս փոշու նման մի կանաչ բան և մեծ խնամքով ծամծմորում իր մի տեսակ արագաշարժ բռունցքներով, որ գտնվում էին սրա կոկորդի մեջ։ Եղբորիցն ավելի Բազարովին այցելում էր Նիկոլայ Պետրովիչը. նա հենց ամեն օր էլ կգար, ինչպես ինքն էր ասում, «սովորելու», եթե տնտեսական հոգսերը նրան չզբաղեցնեին։ Նա երիտասարդ բնագետին նեղություն չէր տալիս. սենյակի մի անկյունը քաշված, նստում էր և ուշադրությամբ դիտում, երբեմն-երբեմն միայն մի որևէ զգույշ հարց տալիս։ Ճաշերին և ընթրիքների ժամանակ նա աշխատում էր խոսք ձգել բնագիտության, քիմիայի կամ երկրաբանության մասին, որովհետև մյուս բոլոր խնդիրները, նույնիսկ տնտեսական խնդիրները, էլ չենք ասում քաղաքականները, չէին կարող՝ չասենք ընդհարումների, գոնե դժգոհության առիթ դառնալ։ Նիկոլայ Պետրովիչը հասկանում էր, որ իր եղբոր՝ դեպի Բազարովը տածած ատելությունն ամենևին չէր նվազել։ Ի միջի այլոց մի չնչին դեպք ապացուցեց այդ բանը։ Խոլերան սկսել էր շրջակայքում էլ տեղ-տեղ երևան գալ, և նույնիսկ Մարյինոյից էլ երկու հոգի կորզեց։ Գիշերը Պավել Պետրովիչը բավական

սուր ցավեր ունեցավ։ Նա մինչև լույս տանջվեց, բայց Բազարովի օգնությանը չդիմեց, և մյուս օրը, երբ պատահեցին իրար, Բազարովի հարցին, թե «ինչո՞ւ իրեն չկանչեցին», գեռևս բոլորովին գունատ, բայց արդեն խնամքով սանրված ու սափրված, պատասխանեց. «Կարծում եմ հենց ինքներդ, որքան միտս է, ասում էիք, թե բժշկության չեք հավատում»։ Այսպես ահա անցնում էին օրերը։ Բազարովը լարված և մոլի դեմքով աշխատում էր... Բայց Նիկոլայ Պետրովիչի համար կար մեկը, որի հետ Բազարովը, չասենք սիրտը թեթևացնում էր, բայց սիրով զրույց էր անում... Այդ էակը Ֆենիչկան էր։

Նա Ֆենիչկային հանդիպում էր մեծ մասամբ առավոտյան վաղ, պարտեզում կամ բակում. Բազարովը Ֆենիչկայի սենյակը չէր գնում, իսկ Ֆենիչկան էլ միայն մեկ անգամ էր մոտեցել նրա դռանը, որպեսզի հարցնի, թե արդյոք Միտյային լողացնի՞ թե ոչ։ Ֆենիչկան ոչ միայն հավատում էր նրան, ոչ միայն նրանից չէր վախենում, այլև նրա մոտ նա իրեն ավելի ազատ ու համարձակ էր պահում, քան թե նույնիսկ Նիկոլայ Պետրովիչի մոտ։ Դժվար է ասել, թե ինչի՞ց էր այդ, գուցե դա նրանից էր, որ Ֆենիչկան անգիտակցաբար զգում էր, թե Բազարովի մեջ չկա այն ամենը, ինչ որ հատուկ է ազնվականին, այն ամենը, ինչ բարձր է և որը թե գրավում է և թե վախեցնում։ Նրա աչքում Բազարովը թե լավ բժիշկ էր և թե պարզ մարդ։ Նա, առանց քաշվելու, Բազարովի ներկայությամբ զբաղվում էր իր երեխայով, և մի անգամ, երբ հանկարծ գլուխը պտույտ եկավ ու սկսեց ցավել, մինչև իսկ Բազարովի ձեռքից գդալով դեղ խմեց։ Նիկոլայ Պետրովիչի ներկայությամբ Ֆենիչկան կարծես թե Բազարովից հեռու էր պահում իրեն, բայց նա այդ անում էր ոչ թե խորամանկությամբ, այլ մի տեսակ վայելչության զգացումից։ Նա Պավել Պետրովիչից այժմ ավելի էր վախենում. Պավել Պետրովիչը մի քանի ժամանակից ի վեր հետամուտ էր լինում նրան և անակնկալ կերպով, իր անգլիական զգեստը հագած, սրահայաց, անշարժ դեմքով, ձեռները գրպանը դրած, երևան էր գալիս նրա թիկունքում։ «Հենց իմանաս գլխիդ սառը ջուր է ածում»,— գանգատվում էր Ֆենիչկան Դունյաշային, իսկ

վերջինս պատասխանի փոխարեն հոգոց էր հանում և մտածում մի ուրիշ «անզգա» մարդու մասին։ Բազարովը, ինքն էլ այդ չկասկածելով, դարձել էր Դունյաշայի սրտի դաժան բռնակալը։

Բազարովը Ֆենիչկային գուր էր գալիս. Ֆենիչկան էլ նրան էր դուր գալիս. Ֆենիչկայի հետ խոսելիս մինչև անգամ նրա դեմքի արտահայտությունն էլ փոխվում էր, պարզ, համարյա բարի էր դառնում, իսկ նրա սովորական անհոգությանը միանում էր նաև մի տեսակ կատակախառն ուշադիր վերաբերմունք։ Ֆենիչկան օր-օրի սիրունանում էր։ Նորատի կանանց կյանքում լինում է մի շրջան, երբ նրանք սկսում են ամառային վարդի նման բացվել, ծաղկել, մի այդպիսի շրջան սկսվեց նաև Ֆենիչկայի համար։ Ամեն բան, նույնիսկ հուլիսյան տոթը, որ տիրում էր այդ միջոցին, նպաստում էր այդ բանին։ Սպիտակ, նուրբ զգեստ հագած, նա ինքն էլ ավելի էր սպիտակ ու նուրբ թվում. արևը նրա երեսը չէր այրում, թեթև տոթը, որից նա չէր կարող խուսափել, թեթևակի կարմրացնում էր նրա այտերն ու ականջները, և խաղաղ գալկություն զեղելով նրա ամբողջ մարմնի մեջ, արտահայտվում էր նրա գեղանի աչքերի մեջ նվազկոտ թմբիրով։ Նա համարյա թե չէր կարողանում աշխատել. ձեռքերը իրենք իրենց սահում, ընկնում էին ծնկների վրա։ Հազիվ էր մանում գալիս, և շարունակ ախ քաշում և զանգատվում ծիծաղելի անզորությամբ։

— Լավ կլինի մի քիչ շուտ-շուտ լողանաս,— ասում էր նրան Նիկոլայ Պետրովիչը։ Նա մի մեծ, կտավով ծածկած լողարան էր շինել իր լճակներից մեկի վրա, ուր դեռ ջուրը չէր ցամաքել։

— Ախ, Նիկոլայ Պետրովիչ, մինչև լճակ եմ գնում, հոգիս դուրս է գալիս, մինչև գամ դարձյալ հոգիս դուրս է գալիս։ Ախր պարտեզում մի շվաք տեղ չկա։

— Այդ ճիշտ ես ասում, որ շվաք չկա,— պատասխանում էր Նիկոլայ Պետրովիչը և ունքերը տրորում։

Մի անգամ, առավոտյան ժամը յոթին, Բազարովը, զբոսանքից վերադառնալիս, վազուց արդեն ծաղկաթափ եղած, բայց դեռևս խիտ ու կանաչ մնացած յասամանի զովանոցում հանդիպեց Ֆենիչկային, որը, ըստ սովորականին, սպիտակ

ծածկոցը գլխին ձգած, նստել էր նստարանի վրա. նրա կողքին հավաքված էր մի ահագին կույտ կարմիր ու ապխտակ դեռ ցողից թաց վարդեր։ Բազարովը նրան բարև տվեց։

— Հա, Եվգենի Վասիլևիչ,— ասաց Ֆենիչկան ու ծածկոցի ծայրը մի քիչ վեր քաշեց, որպեսզի տեսնի Բազարովին, ու այդ անելիս նրա թևը մինչև արմունկը մերկացավ։

— Այս ի՞նչ բանի վրա եք այստեղ,— ասաց Բազարովը նրա կողքին նստելով,— փո՞նջ եք կապում։

— Այո՛, նախաճաշի սեղանի համար։ Նիկոլայ Պետրովիչը սիրում է։

— Բայց մինչև նախաճաշ դեռ շատ ժամանակ կա։ Այս ինչքան ծաղիկ է։

— Հենց նոր քաղեցի, թե չէ տաքը կսկսվի, այլևս դուրս գալ չի լինի։ Հիմի է մի քիչ շունչ քաշելու ժամանակը։ Եռ այս տոթից բոլորովին թուլացել եմ։ Վախենում եմ հիվանդանամ։

— Այդ ի՞նչ երևակայություն է։ Հապա զարկերակդ տես՝՝՝

է պետք իմ երիտասարդությունը։ Ապրում եմ մեն-մենակ, մի շոր գլուխս է...

— Այդ միշտ ձեզնից է կախված։

— Հենց բանն էլ այն է, որ ինձնից չի կախված։ Գոնե մեկը ինձ խղճար։

Ֆենիչկան աչքի ծայրով նայեց Բազարովին, բայց ոչինչ չասաց։

— Այդ ի՞նչ գիրք է ձեզ մոտ,— հարցրեց Ֆենիչկան մի քիչ հետո։

— Ա՞յս։ Այս մի լուրջ գիտնականի խորիմաստ գիրք է։

— Եվ դուք դարձյալ սովորո՞ւմ եք։ Ձե՞ք ձանձրանում։ Առանց այդ էլ դուք, կարծում եմ, արդեն ամեն բան գիտեք։

— Երևի դեռ ոչ ամեն բան։ Հապա փորձեցեք մի քիչ կարդալ։

— Ես դրանից ամենևին բան չեմ հասկանա։ Ռուսերե՞ն է,— հարցրեց Ֆենիչկան երկու ձեռքով վերցնելով ծանր կազմած գիրքը։— Ինչքան հաստ է։

— Ռուսերեն է։

— Միևնույն է, ոչինչ չեմ հասկանա։

— Ես այդ նրա համար չեմ ասում, որ բան հասկանաք։ Ես ուզում եմ միայն նայել ձեզ, թե դուք ինչպես եք կարդում։ Երբ դուք կարդում եք, ձեր քթի ծայրը շատ սիրուն կերպով շարժվում է։

Ֆենիչկան, որ կամացուկ սկսել էր գիր կապելով կարդալ «Կրեոզոտի մասին» հոդվածը, ծիծաղեց ու վայր գցեց գիրքը, որ նստարանի վրայից սահելով ընկավ ներքև։

— Ես նույնպես սիրում եմ, երբ դուք ծիծաղում եք,— ասաց Բազարովը։

— Հերիք է։

— Ես սիրում եմ, երբ որ դուք խոսում եք։ Կարծես առվակ է խոխոջում։

Ֆենիչկան շուռ տվեց գլուխը։

— Ինչ տեսակ մարդ եք,— ասաց նա, մատներով ծաղիկների հետ խաղալով։— Եվ ինչպես կարող եք ականջ դնել իմ խոսվածքին։ Դուք այնպիսի խելոք կանանց հետ եք զրույցներ ունեցել։

— Է՛հ, Ֆեդոսյա Նիկոլաևնա։ Հավատացեք ինձ՝ աշխարհս բոլոր խելոք կանայք ձեր թևիկի արմունկը չարժեն։

— Դուք էլ բան ասացիք,— շշնջաց Ֆենիչկան ու ձեռները հավաքեց։

Բազարովը գետնից վերցրեց գիրքը։

— Սա բժշկարան է, ինչո՞ւ եք գցում։

— Բժշկարա՞ն,— կրկնեց Ֆենիչկան և շուռ եկավ նրա կողմը։— Գիտե՞ք։ Ախր այն օրից, որ այն կաթիլները տվիք ինձ, հիշո՞ւմ եք, Միտյաս այնպես լավ է քնում որ։ Չգիտեմ ինչպես շնորհակալ լինեմ ձեզ. այնքան բարի եք, ճիշտ եմ ասում։

— Եվ իսկապես, պետք է բժիշկներին վարձատրել,— ծիծաղելով նկատեց Բազարովը։— Հո ինքներդ էլ գիտեք, որ բժիշկները շահասեր մարդիկ են։

Ֆենիչկան աչքը գցեց Բազարովի վրա. նրա դեմքին ընկած սպիտակավուն շողքից նրա աչքերն ավելի ևս մութն էին թվում։ Նա չգիտեր՝ Բազարովը կատակ էր անում, թե լուրջ էր ասում։

— Եթե ուզում եք, ինչո՞ւ չէ, ուրախությամբ... Նիկոլայ Պետրովիչից կհարցնեմ...

— Կարծում եք, թե փո՞ղ եմ ուզում,— ընդհատեց նրա խոսքը Բազարովը։— Ո՛չ, փող չէ ձեզանից ուզածս։

— Հապա ի՞նչ,— ասաց Ֆենիչկան։

— Ի՞նչ,— կրկնեց Բազարովը։— Ապա գուշակեցեք։

— Ես ի՞նչ գուշակող եմ։

— Ուրեմն ես ինքս կասեմ, ուզում եմ... այս վարդերից մեկը։

Ֆենիչկան նորից ծիծաղեց և մինչև անգամ ձեռներն իրար խփեց, այնքան ծիծաղելի թվաց նրան Բազարովի ուզածը։ Նա ծիծաղում էր և միևնույն ժամանակ զգում էր իր ինքնասիրությունը շոյված։ Բազարովը աչքը հառած նրան էր նայում։

— Համեցեք, համեցեք,— ասաց վերջապես Ֆենիչկան և, կռանալով նստարանի վրա, սկսեց վարդ ջոկել։— Կարմի՞րը կուզեք, թե սպիտակը։

— Կարմիրը և շատ էլ խոշորը չլինի։

Ֆենիչկան ուղղվեց։

— Ահա, վերցրեք,— ասաց նա, բայց իսկույն էլ ետ քա-

չեց երկարացրած ձեռքը և շրթունքները կծելով՝ նայեց զոնվանոցի մուտքին, ապա ականջ դրեց։

— Ի՞նչ կա,— հարցրեց Բազարովը։— Նիկոլայ Պետրովի՞չն է։

— Ոչ... Նրանք դաշտ են գնացել... և ես նրանից չեմ էլ վախենում... բայց Պավել Պետրովիչը... Ինձ այնպես թվաց...

— Թե ի՞նչ։

— Ինձ թվաց թե նրանք այս տեղերում ման են գալիս։ Ոչ... մարդ չկա։ Վերցրեք։— Եվ Ֆենիչկան վարդը Բազարովին տվեց։

— Ինչո՞ւ պետք է Պավել Պետրովիչից վախենաք։

— Նրանք շարունակ ինձ վախեցնում են։ Որ ասես թե մի բան ասի՝ չէ՛, բայց այնպես տարօրինակ կերպով են նայում։ Բայց դե դուք էլ չեք սիրում նրան։ Հիշում եք, դուք առաջ շարունակ վիճում էիք իրար հետ։ Ես չէի էլ իմանում, թե ինչի վրա էր ձեր վեճը, բայց տեսնում էի, որ դուք նրան այսպես էլ էիք շուռ տալիս, այնպես էլ...

Ֆենիչկան ձեռքով ցույց տվեց, թե ինչպես էր իր կարծիքով Բազարովը շուռ տալիս Պավել Պետրովիչին։

Բազարովը ժպտաց։

— Իսկ եթե նա ինձ սկսեր հաղթե՞լ,— հարցրեց նա,— իմ կողմը կպահեի՞ք։

— Ի՞նչ իմ խելքիս բանն է ձեր կողմը պահելը։ Չէ՛, ձեզ հետ հեշտ չէ գլուխ դնել։

— Կարծո՞ւմ եք։ Իսկ ես գիտեմ մի ձեռք, որ եթե ուզենա, կարող է մի մատով ինձ գլորել։

— Այդ ի՞նչ ձեռք է։

— Իբրև թե չեք իմանում։ Հապա մի հոտ քաշեք, տեսեք ինչ լավ հոտ ունի ձեր տված վարդը։

Ֆենիչկան վիզը մեկնեց ու դեմքը վարդին մոտեցրեց... Գլխի թաշկինակը սահեց, ուսերին ընկավ. բացելով սև, փայլուն, թեթևակի գզգզված մազերը։

— Սպասեցեք, ուզում եմ ես էլ ձեզ հետ միասին հոտ քաշել,— ասաց Բազարովը, կռացավ և պինդ համբուրեց բացված շրթունքները։

Ֆենիչկան ցնցվեց, երկու ձեռքը դեմ արեց նրա կրծքին,

բայց դեմ արեց թույլ կերպով, և Բազարովը կարող էր կըրկնել և շարունակել իր համբույրը։

Յասամանների հետևից չոր հազ լսվեց։ Ֆենիչկան մի ակնթարթում հեռացավ ու քաշվեց նստարանի մյուս ծայրը։ Երևաց Պավել Պետրովիչը, թեթևակի գլուխ տվեց և մի տեսակ զայրագնած թախծությամբ ասելով՝ «այստե՞ղ եք», գնաց։ Ֆենիչկան անմիջապես բոլոր վարդերը հավաքեց և զոնվանոցից դուրս գնաց։ «Հոգուդ մեղք արիք, Եվգենի Վասիլիչ»,— շշնջաց նա հեռանալիս։ Անկեղծ հանդիմանություն կար այդ շշունչի մեջ։

Բազարովը մտաբերեց նորերս պատահած մի ուրիշ դեպք, և ամոթ զգաց, և արհամարհական զայրույթ։ Բայց նա իսկույն էլ թոթվեց գլուխը, հեգնանքով շնորհավորեց իր՝ «պաշտոնապես կնամոլների դասը» մտնելը և գնաց իր սենյակը։

Իսկ Պավել Պետրովիչը դուրս եկավ պարտեզից և համբաքայլ հասավ անտառ։ Նա բավական երկար մնաց այնտեղ, և երբ նախաճաշին վերադարձավ, Նիկոլայ Պետրովիչը հոգատարությամբ հարցրեց, թե առո՞ղջ է — այնքան էր նրա դեմքը մթագնել։

— Գիտես, ես մեկ-մեկ մաղձային հիվանդություն եմ զգում,— հանգիստ կերպով պատասխանեց նրան Պավել Պետրովիչը։

XXIV

Երկու ժամից հետո նա բախում էր Բազարովի դուռը։

— Պետք է ներողություն խնդրեմ, որ խանգարում եմ ձեր գիտական զբաղմունքները,— ասաց նա, նստելով պատուհանի մոտ աթոռի վրա և երկու ձեռքով հենվելով իր գեղեցիկ ձեռնափայտին, որի գլուխը փղոսկրյա էր (նա սովորաբար առանց ձեռնափայտի էր ման գալիս),— բայց ես ստիպված եմ խնդրելու, որ ձեր ժամանակից, շատ չեմ ուզում, մի հինգ րոպե նվիրեք ինձ։

— Իմ բոլոր ժամանակս էլ պատրաստ եմ ձեզ նվիրելու,— պատասխանեց Բազարովը, որի դեմքի վրայով, հենց որ Պավել Պետրովիչը իր շեմքը ոտք դրեց, մի բան անցավ։

— Ինձ համար հինգ րոպեն էլ հերիք է։ Եկել եմ ձեզ մի հարց առաջարկելու։

— Հա՞րց։ Այդ ինչի՞ մասին։

— Ահավասիկ, հաճեցեք լսել։ Ձեր այս տունը ոտք դնելու առաջին օրերը, երբ ես դեռ ինձ չէի զրկում ձեզ հետ զրույց անելու հաճույքից, շատ խնդիրների մասին լսել եմ ձեր դատողությունները. բայց որքան հիշում եմ, ոչ մեր մեջ, ոչ էլ իմ ներկայությամբ երբեք խոսք չի եղել մենամարտի, դուելի մասին առհասարակ։ Թույլ տվեք իմանալ, դուք ի՞նչ կարծիքի եք այդ մասին։

Բազարովը, որ վեր էր կացել Պավել Պետրովիչին ընդառաջ գնալու համար, նստեց սեղանի ծայրին ու ձեռները խաչեց։

— Ահա իմ կարծիքը,— ասաց նա,— վերացական տեսակետից դուելը անհիմնություն է, իսկ գործնական տեսակետից՝ դա ուրիշ բան է։

— Այսինքն՝ ուզում եք ասել, եթե միայն կարողացա ձեր միտքը հասկանալ, որ տեսականորեն ինչ հայացք էլ ունենալու լինեք դուելի մասին, իրապես չէիք թույլ տա, որ ձեզ վիրավորանք հասցնեին, և բավարարությո՞ւն կպահանջեիք։

— Դուք լիովին հասկացաք իմ միտքը։

— Շատ լավ։ Շատ ուրախ եմ այդ բանը լսելու ձեզնից։ Ձեր խոսքերը ինձ ազատում են անհայտ դրությունից...

— Անվճռական դրությունից, ուզում եք ասել։

— Այդ միևնույն բանն է. ես միտքս այնպես եմ արտահայտում, որ ինձ հասկանան. ես... սեմինարական մուկ չեմ։ Ձեր խոսքերն ինձ ազատում են մի տխուր անհրաժեշտությունից։ Ես վճռել եմ ձեզ հետ մենամարտել։

Բազարովն աչքերը չռեց։

— Ինձ հե՞տ։

— Անպատճառ ձեզ հետ։

— Բայց ի՞նչ բանի համար, ներեցեք։

— Կարող էի ձեզ պատճառը բացատրել,— սկսեց Պավել Պետրովիչը։— Բայց ավելի լավ եմ համարում լռել այդ մասին։ Իմ ճաշակով դուք այստեղ ավելորդ եք, ես ձեզ տեսնել չեմ կարող, ես ձեզ արհամարհում եմ, և եթե այսքանը ձեզ հերիք չէ...

Պավել Պետրովիչի աչքերը փայլեցին... Բազարովի աչքերն էլ բոցավառվեցին։

— Շատ լավ,— ասաց նա։— Ուրիշ բացատրություն հարկավոր չէ։ Քեֆներդ ուզել է ձեր ասպետական ոգին իմ վրա փորձել։ Կարող էի ձեզ այդ հաճույքը պատճառելուց հրաժարվել, բայց թող ինչ լինելու է լինի։

— Սրտագին շնորհապարտ եմ ձեզ,— պատասխանեց Պավել Պետրովիչը,— և այժմ կարող եմ հուսալ, որ դուք իմ մարտահրավերը կընդունեք և չեք թողնի, որ բռնի միջոցների դիմեմ։

— Այսինքն, առանց այլաբանությունների որ ասելու լինեք, այդ ձեռնափայտի՞ն,— սառնարյունությամբ նկատեց Բազարովը։— Միանգամայն ճիշտ է։ Ամենևին կարիք չկա, որ ինձ վիրավորեք։ Մանավանդ որ դա շատ էլ անվտանգ բան չէ։ Դուք կարող եք ջենտլմեն էլ մնալ... Ես ջենտլմենի նման էլ ընդունում եմ ձեր հրավերը։

— Սքանչելի է,— ասաց Պավել Պետրովիչը և ձեռնափայտը անկյունը դրեց։— Մենք այս րոպեիս մի քանի խոսք կասենք մեր դուելի պայմանների մասին, բայց նախ կուզեի իմանալ, արդյոք, ձեր կարծիքով, հարկավո՞ր է, որ ձեի համար մի փոքրիկ կռիվ սարքենք, որպեսզի դա ինձ առիթ տա ձեզ դուելի կանչելու։

— Ոչ, ավելի լավ է առանց ձևականությունների։

— Ինքս էլ այդպես եմ կարծում։ Նույնպես անտեղի եմ համարում խորամուխ լինել մեր ընդհարման իսկական պատճառների մեջ։ Մենք իրար տանել չենք կարողանում։ Դրանից ավելի էլ ուրիշ ինչ է պետք։

— Էլ ուրիշ ի՞նչ է պետք,— հեգնորեն կրկնեց Բազարովը։

— Իսկ ինչ վերաբերում է մենամարտի պայմաններին, քանի որ մենք սեկունդանտներ (վկաներ) չպիտի ունենանք, ո՞րտեղից ենք վկա գտնելու։

— Իսկապես, որտեղից ենք գտնելու։

— Ուստի ես պատիվ ունեմ ձեզ առաջարկելու հետևյալը — մենամարտենք վաղը, առավոտյան կանուխ, ասենք՝ ժամը վեցին, անտառի հետևը, ատրճանակներով. տասը քայլի վրա...

— Տասը քայլի վրա՞։ Է՛հ, լավ։ Ուրեմն այդ տարածության վրա մենք իրար ատում ենք։

— Կարելի է նաև ութի վրա,— նկատեց Պավել Պետրովիչը։

— Ինչո՞ւ չէ, կարելի է։

— Ատրճանակ կարձակենք երկ-երկու անգամ, իսկ ամեն մեկս, համենայն դեպս, գրպաններումս կունենանք նախապես գրված նամակ, որի մեջ մեր մահվան պատճառը մեզ կվերագրենք։

— Ա՛յ, ես այդ բանին այնքան էլ համաձայն չեմ,— ասաց Բազարովը։— Մի քիչ ֆրանսիական ռոմանի գույն է ստանում, անհավանական բան է թվում։

— Գուցե։ Բայց համաձայնեցեք, որ հաճելի բան չէ հո, որ վրադ մարդասպանության կասկած լինի։

— Համաձայնում եմ։ Բայց այդ տխուր մեղադրանքից ազատվելու միջոցը կա։ Թեպետ մարտավկաներ չպիտի ունենանք, որտեղի՞ց ենք վկա գտնելու։

— Ո՞վ է այդ վկան, թույլ տվեք իմանալ։

— Հենց Պյոտրը։

— Ի՞նչ Պյոտր։

— Ձեր եղբոր սենեկապանը։ Նա ժամանակիս կրթության բարձրության վրա կանգնած մարդ է, և իր դերը կկատարի այդպիսի դեպքերում կոմիլֆո[1]։

— Ինձ թվում է, դուք, մեծապատիվ պարոն, կատակ եք անում։

— Ամենևին։ Որ իմ առաջարկը լավ քննեք, կհամոզվեք, որ դա շատ խելքի մոտիկ ու պարզ էլ բան է։ Մենամարտը հո գաղտնիք մնալ չի կարող։ Իսկ Պյոտրին ինչպես հարկն է պատրաստելն ու ջարդի տեղը բերելը ես իմ վրա կառնեմ։

— Դուք շարունակում եք կատակ անել,— աթոռից վեր կենալով ասաց Պավել Պետրովիչը։— Սակայն ձեր տված սիրալիր պատրաստակամությունից հետո ես իրավունք չունեմ ձեզանից դժգոհ լինելու... Ուրեմն ամեն ինչ կարգին է... Ի դեպ, ատրճանակներ չունե՞ք։

— Որտեղի՞ց ունենամ ատրճանակներ, Պավել Պետրովիչ։ Ես զինվորական չեմ։

[1] Ինչպես հարկն է (ֆրանս.)։

— Այդ դեպքում առաջարկում եմ ձեզ իմ ատրճանակները։ Դուք կարող եք հավատացած լինել, որ արդեն հինգ տարի է, ինչ ես չեմ կրակել նրանցով։

— Այդ շատ մխիթարական տեղեկություն է։

Պավել Պետրովիչը վերցրեց իր ձեռնափայտը...

— Ապա, մեծապատիվ պարոն, ինձ մնում է միայն ձեզ շնորհակալություն հայտնել և թողնել, որ դուք վերստին ձեր պարապմունքին դառնաք։ Մնաք բարով։

— Մինչ հաճելի տեսություն, մեծարգո տեր իմ,— ասաց Բազարովը հյուրին ճանապարհ դնելով։

Պավել Պետրովիչը դուրս գնաց, իսկ Բազարովը կանգ առավ դռան առաջ և հանկարծակի բացականչեց. «Թո՛ւ, գրողը տանի, ինչ գեղեցիկ և ինչ անմիտ բան։ Ինչպիսի կատակերգություն խաղացինք։ Մարզված շները ահա այսպես են հետին թաթերի վրա պար գալիս։ Իսկ մերժել անկարելի էր. ով գիտե, նա ինձ կխփեր էլ, և այն ժամանակ... (Բազարովը հենց միայն այդ մասին միտք անելուց գունատվեց. նրա ամբողջ ինքնասիրությունը ըմբոստացավ)։ Այն ժամանակ պիտի բռնեի նրան ու կատվի ձագի նման խեղդեի»։ Նա նորից ձեռքն առավ իր մանրադիտակը, բայց սիրտն արդեն պղտորվել էր և հանգիստը, որ հարկավոր էր դիտողություններ անելու համար, անհետացել։ «Նա այսօր տեսավ մեզ,— մտածում էր Բազարովը,— բայց մի՞թե այս բոլորը նա արեց իր եղբոր պաշտպանության համար։ Եվ վերջապես ինչ մի մեծ բան է համբույրը։ Այստեղ մի ուրիշ բան կա։ Հա, չլինի՞ թե նա ինքն է սիրահարված։ Իհարկե, սիրահարված է. լույսի պես պարզ է։ Բայց դու մի տես, թե ինչ ձև է տալիս բանին... Բանը շատ վատ է,— վճռեց նա վերջապես,— որ կողմից ուզում ես նայիր, շատ վատ բան եղավ։ Նախ՝ պետք է ճակատդ դեմ անես գնդակին, և համենայն դեպս պետք կլինի այստեղից հեռանալ, գնալ, բացի դրանից, այստեղ կա նաև Արկադին... ու այդ աստծու խեղճը, Նիկոլայ Պետրովիչը։ Շատ վատ բան եղավ, շատ վատ»։

Առանձնապես խաղաղ և տաղտուկ անցավ այդ օրը։ Ֆենիչկան հենց գիտենաս աշխարհքիս երեսին չլիներ. քաշվել էր իր սենյակն ու նստել, ինչպես մուկն իր բնում։ Նիկոլայ Պետրովիչը մտահոգ կերպարանք ուներ։ Նրան հաղորդել էին,

որ այն ցորենի արտում, որի վրա նա ամենից ավելի հույս ուներ, ժանգ է երևացել։ Պավել Պետրովիչը իր սառը քաղաքավարությամբ ամենքին, նույնիսկ Պրոկոֆևիչին էլ, ճնշում էր։ Բազարովը սկսել էր հորը նամակ գրել, բայց պատռեց ու սեղանի տակ շպրտեց։ «Կմեռնեմ՝ կիմանան էլի,— մտածում էր նա,— ասենք ես չեմ էլ մեռնի։ Ո՛չ, ես դեռ երկար եմ քարշ գալու աշխարհքիս երեսին»։ Նա Պյոտրին պատվիրեց, որ մյուս օրը վաղ լուսաբացին իր մոտ գա, կարևոր գործով։ Պյոտրը կարծեց, թե նա ուզում է իր հետ Պետերբուրգ տանել։ Բազարովը ուշ պառկեց, և ամբողջ գիշերը նրան տանջում էին անկարգ երազներ... Օդինցովան պտույտ էր գալիս նրա առաջ, դա նրա մայրն էր։ Նրա հետևից գնում էր սև բեխիկներով մի փոքրիկ կատու, և այդ կատուն ծեծնիչկան էր. իսկ Պավել Պետրովիչը նրան թվում էր մի մեծ անտառի նման, որի հետ բայց և այնպես պետք է նա մենամարտեր։ Ժամը չորսին Պյոտրը զարթեցրեց նրան։ Բազարովը իսկույն հագնվեց ու նրա հետ դուրս եկավ տնից։

Հիանալի զով առավոտ էր. մանր, երփներանգ ամպերը խումբ-խումբ ընկել էին բաց պայծառ կապուտակի վրա. մանրահատ ցողը շաղել էր տերևների ու արոտների վրա, փայլում էր արծաթի նման սարդոստայնի վրա. թաց, սևացած հողը ասես թե դեռ պահպանել էր արշալույսի կարմիր հետքերը։ Ամբողջ երկնքից թափվում էր արտույտների երգը։ Բազարովը հասավ անտառին, նստեց հովում, անտառի ծայրին, և միայն այդ ժամանակ Պյոտրին հայտնեց, թե ինչպիսի ծառայություն էր սպասում նրանից։ Կրթված սպասավորը վախից քիչ էր մնում սրտաճաք լիներ. բայց Բազարովը նրան հանգստացրեց՝ հավատացնելով, թե նա ոչ մի բան չպիտի անի, միայն հեռվում կանգնած պիտի նայի, և թե նա դրա համար ոչ մի պատասխանատվության չի ենթարկվելու։ «Մինչդեռ,— ավելացրեց նա,— ինքդ մտածիր, թե ինչպիսի նշանավոր դեր ունես կատարելու»։ Պյոտրը ձեռքերը շարժեց, աչքերը ցած գցեց և, կաս-կանաչ կտրած, թիկն տվեց կեչուն։

Մարյինոյից եկող ճանապարհը բոլորում էր անտառակը. այդ ճանապարհի վրա երեկվանից նստած փոշուն ոչ անիվ էր կպել, ոչ ոտք։ Բազարովն ակամա նայում էր այդ ճանապարհի երկարությամբ, պոկում էր խոտերը ու կրծոտում, և շարունակ ինքն իրեն կրկնում. «էհ ինչ հիմարություն արի»։ Առավոտյան ցուրտը ստիպեց նրան մի երկու անգամ ցնցվել... Պյոտրը թախծությամբ նայեց նրան, բայց Բազարովը միայն քմծիծաղեց. նա չէր վախենում։

Ճանապարհի կողմից ձիու ոտնաձայներ լսվեցին... Ծառերի հետևից երևաց մի գյուղացի։ Նա առջևից քշում էր երկու բխոված ձի և, Բազարովի մոտից անցնելիս, առանց գլխարկը հանելու, տարօրինակ կերպով նայեց նրան. ըստ երևույթին այս բանը, իբրև վատ նշան, շփոթեցրեց Պյոտրին։ «Ա՛յ այս մարդն էլ է վաղ վեր կացել,— մտածեց Բազարովը,— բայց գոնե գործով, իսկ մե՞նք»...

— Կարծես թե գալիս են,— շշնջաց Պյոտրը։

Բազարովը գլուխը բարձրացրեց ու տեսավ Պավել Պետրովիչին։ Ցանցանկար բարակ պիջակ ու ձյան պես սպիտակ վարտիք հագած, նա արագ-արագ ճանապարհով առաջ էր գալիս. թևի տակ նա բերում էր մի արկղ՝ կանաչ մահուդով փաթաթած։

— Ներեցեք, կարծեմ ձեզ մի քիչ սպասել տվի,— ասաց նա գլուխ տալով նախ Բազարովին, ապա՝ Պյոտրին, որի անձնավորության մեջ նա այդ րոպեին հարգում էր մարտավկայի պես մեկին։— Զուզեցի իմ սպասավորին զարթեցնել։

— Վնաս չունի,— պատասխանեց Բազարովը,— մենք ինքներս էլ հենց նոր եկանք։

— Հա՞, ավելի լավ։— Պավել Պետրովիչը չորս կողմը նայեց։— Մարդ չի երևում, ոչ ոք չի խանգարի... Կարո՞ղ ենք սկսել։

— Սկսենք։

— Կարծում եմ նոր բացատրություններ չեք պահանջի։

— Չեմ պահանջում։

— Կհաճեք ինքնե՞րդ լցնելու,— հարցրեց Պավել Պետրովիչը արկղի միջից ատրճանակները հանելով։

— Ոչ, ինքներդ լցրեք, իսկ ես տեղը կչափեմ։ Իմ ոտներն ավելի երկար են,— ավելացրեց Բազարովը հեգնաբար։— Մեկ, երկու, երեք...

— Եվգենի Վասիլիչ,— դժվարությամբ թոթովեց Պյոտրը

(նա ամբողջ մարմնով դողում էր, ինչպես տենդով բռնված),— կամքը ձերն է, ես հեռանում եմ։

— Ցորս... հինգ... հեռացիր, եղբայր, հեռացիր. մինչև անգամ կարող ես ծառի հետևը մտնել ու ականջներդ էլ խցել, միայն թե աչքերդ մի փակիր. իսկ որ մեկն ու մեկը վայր ընկնի, վազիր վերցրու։ Վեց... յոթ... ութ...— Բազարովը կանգ առավ։— Բավակա՞ն է,— ասաց նա՝ Պավել Պետրովիչին դառնալով,— թե երկու քայլ էլ ավելացնեմ։

— Ինչպես ուզում եք,— ասաց սա երկրորդ գնդակը հաստցնելով ատրճանակի փողի մեջ։

— Է՛հ, թող երկու քայլ էլ ավելի լինի։— Բազարովը կոշկի քթով գետնի վրա խազ քաշեց։— Ահա սահմանը։ Ի դեպ, սահմանից քանի՞ քայլ պիտի հեռանանք։ Սա էլ կարևոր խնդիր է։ Երեկ այս մասին խոսք չեղավ։

— Կարծում եմ, տասը քայլ,— պատասխանեց Պավել Պետրովիչը՝ երկու ատրճանակներն էլ Բազարովին տալով։— Հաճեցեք ընտրել։

— Հաճում եմ։ Բայց համաձայնեցեք, Պավել Պետրովիչ, որ ծիծաղելու չափ տարօրինակ է մեր մենամարտը։ Հապա դուք մի մեր վկայի դեմքին նայեք։

— Դուք շարունակ ուզում եք կատակ անել,— պատասխանեց Պավել Պետրովիչը։— Ես մեր մենամարտի տարօրինակ լինելը չեմ ժխտում, բայց պարտավորություն եմ համարում ձեզ զգուշացնել, որ ես մտադիր եմ լրջորեն մենամարտել։ A bon entendeur, salut[1]-և։

— Ո՛հ, ամենևին չեմ կասկածում, որ մենք վճռել ենք ոչնչացնել միմյանց, բայց ինչո՞ւ չծիծաղել և չմիացնել utie dulci[2]։ Ահա այսպես՝ դուք ինձ ֆրանսերեն կասեք, իսկ ես՝ լատիներեն։

— Ես լրջորեն պիտի մենամարտեմ,— կրկնեց Պավել Պետրովիչը և իր տեղը գնաց։ Բազարովն էլ սահմանագծից հաշվեց մի տասը քայլ ու կանգնեց։

— Պատրա՞ստ եք,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Միանգամայն։

[1] Ով ականջ ունի, թող լսի (ֆրանս.)։
[2] Օգտավետը հաճելի հետ (լատ.)։

— Կարող ենք մոտենալ։

Բազարովը կամացուկ առաջ գնաց, և Պավել Պետրովիչն էլ, ձախ ձեռքը գրպանը դրած և կամաց-կամաց ատրճանակի փողը բարձրացնելով, նրա վրա շարժվեց... «Ուղիղ քթիս է նշան առնում,— մտածեց Բազարովը,— և ինչպիսի խնամքով էլ կկոցում է աչքերը, ավազակ։ Խոստովանանք լինի, անախորժ զգացողություն է։ Ես էլ նրա ժամացույցի շղթային կնայեմ...»։ Մի բան սուր կերպով ֆշշաց Բազարովի ականջի մոտ, և նույն րոպեին ատրճանակի կրակոցը լսվեց։ «Լսեցի, ասել է թե վնաս չկա»,— իսկույն անցավ Բազարովի մտքով։ Նա մի քանի քայլ արավ և առանց նշան առնելու քաշեց ձգանը։

Պավել Պետրովիչը թեթևակի ցնցվեց և ձեռքը ազդրին տաքավ։ Արյունը բարակ շիթով ծոր տվեց նրա սպիտակ վարտիքի վրա։

Բազարովը ատրճանակը մի կողմ ձգեց ու մոտեցավ իր հակառակորդին։

— Վիրավորվեցի՞ք,— ասաց նա։

— Դուք իրավունք ունեիք պահանջելու, որ ես սահմանի վրա լինեի կանգնած,— ասաց Պավել Պետրովիչը.— իսկ սա ոչինչ բան է։ Ըստ պայմանի իրավունք ունենք մի-մի անգամ էլ կրակել։

— Է՛, այդ արդեն, ներեցեք, մի ուրիշ անգամվա կմնա,— պատասխանեց Բազարովը և ձեռքը ձգեց Պավել Պետրովիչի մեջքին, որն արդեն սկսել էր գունատվել։— Այժմ արդեն ես մենամարտող չեմ, այլ բժիշկ, և ամենից առաջ պետք է ձեր վերքը նայեմ։ Պյոտր, այստեղ արի։ Պյոտր, որտե՞ղ ես թաքնվել։

— Չնչին բան է... Ես ոչ ոքի օգնության կարիքը չունեմ,— ծանր-ծանր ասաց Պավել Պետրովիչը,— և... պետք է... մեկ էլ...— Նա ուզում էր ձիգ տալ իր բեղերը, բայց ձեռքը թուլացավ, աչքերը փակվեցին, և նա ուշագնաց եղավ։

— Այ քեզ նորություն։ Ուշագնաց եղավ։ Ինչի՞ց էր արդյոք,— ակամա բացականչեց Բազարովը՝ Պավել Պետրովիչին խոտերի վրա պառկեցնելով։— Տեսնենք՝ ինչ է եղել։— Նա թաշկինակը հանեց, արյունը սրբեց, վերքի չորս կողմը շոշափեց...— Ոսկորն անվնաս է,— փնթփնթաց քթի տակ,—

գնդակը երեսանց է անցել, մյուս կողմից դուրս է եկել, մենակ vastus externus մկանն է վնասվել։ Երեք շաբաթից թեկուզ պար արի... Իսկ ուշագնաց եղավ։ Ախ այս նյարդային մարդիկ։ Տեսնում ես կաշին ինչպես նուրբ է։

— Սպանվե՞լ են,— շշնջաց նրա հետևում Պյոտրի դողդոջ ձայնը։

Բազարովը ետ նայեց։

— Ախպերս, շուտ գնա ջուր բեր։ Նա դեռ ինձանից էլ քեզանից էլ երկար կապրի։

Բայց կատարելագործված սպասավորը կարծես թե նրա ասածը չէր հասկանում ու տեղից չէր շարժվում։ Պավել Պետրովիչը դանդաղ բաց արեց աչքերը։ «Մեռնում է»,— շշնջաց Պյոտրը ու սկսեց երեսը խաչակնքել։

— Իրավացի եք... Ինչ հիմար կերպարանք է,— բռնազբոսիկ ժպիտով ասաց վիրավոր ջենտլմենը։

— Անպիտան, դե շտապիր ջուր բեր,— բղավեց Բազարովը։

— Չի՛ հարկավոր... Սա բոպեական vertige[1] էր միայն... Օգնեցեք, նստեմ... այ այսպես... հերիք է, որ այս քերծվածքը մի բանով կապենք, և ես ոտով էլ կգնամ տուն, կամ թե չէ կարելի է հետևիցս կառք ուղարկել։ Մենամարտը, եթե ուզում եք, չի վերսկսվում։ Դուք ազնվաբար վարվեցիք... այսօր, նկատեցեք՝ այսո՛ր։

— Հարկ չկա անցյալի մասին հիշել,— առարկեց Բազարովը,— իսկ ինչ վերաբերում է ապագային, դրա վրա էլ շարժե երկար գլուխ մաշել, որովհետև ուզում եմ անմիջապես ծլկել։ Թողեք այժմ ձեր ոտքը կապեմ. վերքը վտանգավոր չէ, բայց էլի լավ է արյունը դադարեցնել։ Բայց նախ և առաջ պետք է այս մահկանացուին սթափեցնել։

Բազարովը թոթվեց Պյոտրի օձիքն ու նրան կառքի ուղարկեց։

— Տես, եղբորս չվախեցնես,— ասաց նրան Պավել Պետրովիչը,— նրան բան չասես։

Պյոտրը սլացավ. և մինչև նա վազում էր կառք բերելու, երկու հակառակորդները լուռ նստած էին գետնին։ Պավել Պետրովիչն աշխատում էր Բազարովին չնայել. բայց էլի չէր

[1] Գլխապտույտ (ֆրանս.)։

ուզում նրա հետ հաշտվել. նա ամաչում էր իր կովասիրությունից, իր անհաջողությունից, ամաչում էր իր այդ բոլոր արարմունքից, թեև զգում էր, որ դա ավելի հաջող վախճան չէր կարող ունենալ։ «Գոնե այստեղ ցցված չի լինի,— հանգստացնում էր նա ինքն իրեն,— այդքանից էլ գոհ եմ»։ Սանր, անհարմար լռությունը շարունակվում էր։ Երկուսն էլ լավ դրության մեջ չէին։ Նրանցից ամեն մեկն զգում էր, որ մյուսն իրեն հասկանում է։ Բարեկամների համար այդ գիտակցությունը հաճելի է, բայց շատ անհաճո է թշնամիների համար, մանավանդ երբ ոչ բացատրվել կարելի է, ոչ էլ իրարից բաժանվել։

— Հո պինդ չե՞մ կապել,— վերջապես հարցրեց Բազարովը։

— Ոչ, ոչինչ, շատ լավ է,— պատասխանեց Պավել Պետրովիչը, և մի քիչ հետո ավելացրեց,— եղբորս խաբել չի կարելի, նրան պետք է ասել, որ քաղաքականության խնդիրների առթիվ ընդհարվեցինք։

— Շատ բարի,— ասաց Բազարովը։— Կարող եք ասել, որ ես բոլոր անգլիասերներին անարգեցի։

— Եվ շատ էլ լավ կլինի։ Ինչ եք կարծում, ի՞նչ է մտածում մեր մասին այս մարդը,— շարունակեց Պավել Պետրովիչը՝ ցույց տալով այն գյուղացուն, որը մենամարտից մի քանի բոպե առաջ Բազարովի մոտով քշել, տարել էր ոտները կապած ձիերը, և այժմ ճանապարհով վերադառնալիս «աղաներին» տեսնելով, գլխարկը հանեց, գլուխ տվեց։

— Ով է իմանում,— պատասխանեց Բազարովը.— ամենից հավանականն այն է, որ ոչինչ էլ չի մտածում։ Ռուս գյուղացին այն խորհրդավոր անծանոթն է, որի մասին մի ժամանակ այնքան շատ խոսում էր տիկին Ռադկլիֆը[1]։ Ո՞վ կարող է հասկանալ։ Նա ինքն էլ իրեն չի հասկանում։

— Հը։ Այդպե՞ս եք կարծում,— սկսեց Պավել Պետրովիչը և հանկարծ բացականչեց,— նայեցեք ինչ է արել ձեր հիմար Պյոտրը։ Եղբայրս սրարշավ այստեղ է գալիս։

Բազարովը շուռ եկավ և տեսավ Նիկոլայ Պետրովիչին

[1] Անն Ռադկլիֆֆ — անգլիական վիպասանուհի, «Ուդոլֆյան գաղտնիքներ» վեպի հեղինակը։

կառքում նստած, գունատ դեմքով։ Դեռ կառքը չկանգնած նա ցած թռավ ու դեպի եղբայրը վազեց։

— Այս ի՞նչ բան է,— ասաց նա հուզված ձայնով,— այս ի՞նչ բան է, Եվգենի Վասիլիչ։

— Ոչինչ չկա,— պատասխանեց Պավել Պետրովիչը,— իզուր քեզ անհանգստացրել են։ Մենք պարոն Բազարովի հետ մի փոքր ընդհարվեցինք, և ես դրա համար մի փոքր պատժվեցի։

— Եվ ինչպե՞ս ծագեց դա, ի սեր աստուծո։

— Ի՞նչպես ասեմ։ Պարոն Բազարովը սըր Ռոբերտ Պիլլի[1] մասին անարգանքով խոսեց։ Շտապեմ ավելացնելու, որ այդ բոլորի մեջ մեղավորը մենակ ես եմ, իսկ պարոն Բազարովն իրեն շատ լավ պահեց։ Ես նրան մենամարտի կանչեցի։

— Բայց վրադ արյուն կա։

— Ինչ է, դու կարծում էիր իմ երակներում ջո՞ւր է հոսում։ Ասենք այս արյուն առնելն ինձ համար օգուտ էլ է։ Այնպես չէ՞, բժիշկ։ Օգնիր ինձ կառք նստելու, և մելամաղձության մեջ ընկնելու կարիք չկա։ Վաղն առողջ կլինեմ։ Ա՛յ, այդպես, շատ լավ։ Քշիր, կառապան։

Նիկոլայ Պետրովիչը ոտքով կառքի հետևից գնաց։ Բազարովն ուզում էր ետ մնալ...

— Պետք է ձեզ խնդրեմ, որպեսզի մինչև քաղաքից բժիշկ գալը դուք նայեիք եղբորս,— ասաց Նիկոլայ Պետրովիչը։

Բազարովը լուռ գլուխը խոնարհեց։

Մի ժամ անց Պավել Պետրովիչն արդեն ոտքը հմուտ կերպով կապված, պառկել էր անկողնի մեջ։ Ամբողջ տունը տակնուվրա էր եղել. Ֆենիչկայի սիրտը գնաց, Նիկոլայ Պետրովիչը ծածուկ ձեռքի ոսկորներն էր սեղմում, իսկ Պավել Պետրովիչը ծիծաղում էր, հանաքներ անում, մանավանդ Բազարովի հետ։ Նա հագել էր բատիստե բարակ շապիկ, առավոտյան շքեղ կապա ու ֆես, չէր թողնում, որ պատուհանների վարագույրներն իջեցնեն և զվարճալի կերպով դանդաղվում էր, որ ստիպված էր կերակրեղենից զրկվել։

Սակայն գիշերը նրա տաքությունը բարձրացավ. գլուխը

1 Ռոբերտ Պիլլ-որդին — անգլիական քաղաքական գործիչ։

սկսեց ցավել։ Քաղաքից բժիշկ եկավ։ (Նիկոլայ Պետրովիչը ականջ չդրեց եղբոր ասածին, և վերջապես Բազարովն ինքն էլ էր այդ ուզում. նա ամբողջ օրը, դեղնած ու չարացած դեմքով, նստած էր իր սենյակում և միայն շատ կարճ միջոցով գնում էր հիվանդի մոտ։ Մի երկու անգամ նա հանդիպեց Ֆենիչկային, բայց սա սարսափահար ետ էր փախչում նրանից)։ Նոր բժիշկը խորհուրդ տվեց գործածել զովարար խմիչքներ, սակայն նա ևս հաստատեց Բազարովի հավաստիացումները, թե ոչ մի վտանգ չկա։ Նիկոլայ Պետրովիչը նրան ասաց, որ եղբայրը անզգուշությամբ ինքն իրեն վիրավորել է, որին բժիշկը պատասխանեց՝ «Հը՛մ», բայց հենց որ մի 25 ռուբլիանոց ստացավ՝ պատասխանեց. «Ասացեք։ Այդպիսի բան ճիշտ որ հաճախ է պատահում»։

Տանը ոչ ոք ոչ պառկեց և ոչ էլ հանվեց։ Նիկոլայ Պետրովիչը շարունակ մատների ծայրերին մտնում էր եղբոր մոտ և մատների ծայրերով դուրս գալիս, իսկ Պավել Պետրովիչը շատ անգամ մոռանում էր ու թեթևակի տնքում, նրան ֆրանսերեն ասում էր «couchez-vous»[1], և խմելու բան էր խնդրում։ Մի անգամ Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկային ստիպեց, որ բաժակով լիմոնադ տա նրան։ Պավել Պետրովիչը աչքերը հառած նայեց նրան և ամբողջ բաժակը մինչև տակը դատարկեց։ Առավոտյան դեմ տաքությունը մի քիչ ավելացավ, հիվանդը սկսեց թեթևակի զառանցել։ Պավել Պետրովիչը սկզբում անկապ խոսքեր էր արտասանում. հետո հանկարծ բաց արավ աչքերը և եղբորը տեսնելով իր անկողնի մոտ, հոգածությամբ իր վրա խոնարհված՝ ասաց.

— Այնպես չէ՞, Նիկոլայ, Ֆենիչկան ընդհանուր նմանություն ունի Նելլիի հետ։

— Ի՞նչ Նելլի, Պաշա։

— Ինչպե՞ս թե ինչ Նելլի։ Իշխանուհի Ռ...ն։ Մանավանդ դեմքի վերին մասը. C'est de la même famille[2]։

Նիկոլայ Պետրովիչը ոչինչ չպատասխանեց, բայց ինքն իրեն մտածեց, թե ինչքան տևական են լինում մարդկանց

1 Պառկեցեք դուք։

2 Միևնույն ընտանիքից (ֆրանս.)։

մեջ հին զգացողությունները։ «Տես, երբ երևան եկավ»,— մտածեց նա։

— Ո՛հ, ինչպես եմ սիրում այդ դատարկ էակին,— հառաչեց Պավել Պետրովիչը, թախծությամբ ձեռները գլխի հետևը ձգելով։— Ես չեմ հանդուրժի, որ պրտկերեսի մեկը հանդգնի կպչել...— թոթովեց նա մի քիչ հետո։

Նիկոլայ Պետրովիչը միայն հառաչեց. նա չէր կասկածում, թե ումն էին վերաբերում այդ խոսքերը։

Մյուս օրը, ժամը ութին Բազարովը եկավ Նիկոլայ Պետրովիչի մոտ։ Նա արդեն իր իրերը կապել, կապկպել էր և բոլոր գորտերը, միջատները և թռչունները բաց թողել։

— Մնաս բարովի՞ եք եկել,— ասաց Նիկոլայ Պետրովիչը՝ նրան դիմավորելու համար տեղից վեր կենալով։

— Շատ ճիշտ է։

— Ես ձեզ հասկանում եմ, և միանգամայն հավանություն եմ տալիս։ Խեղճ եղբայրս, իհարկե, մեղավոր է, և դրա համար էլ իր պատիժն ստացավ։ Նա ինքն ասաց ինձ, թե ձեզ այնպիսի դրության մեջ է դրել, որ դուք այլ կերպ վարվել չէիք կարող։ Հավատացած եմ, որ չէիք կարող խույս տալ այդ մենամարտից, որ... որը որոշ չափով բացատրվում է լոկ այն հակառակությամբ, որ կար ձեր հայացքների մեջ։ (Նիկոլայ Պետրովիչն այս ասելիս շփոթում էր բառերը)։ Եղբայրս հին հասկացողությունների մարդ է, դյուրագրգիռ և համառ... էլի փառք աստուծո, որ բանն այդպես վերջացավ։ Ես, ինչ որ հարկավորն է, արել եմ, որպեսզի այս բանը չտարածվի...

— Ես ձեզ մոտ կթողնեմ հասցես. եթե որևէ բան պատահի,— անհոգ կերպով նկատեց Բազարովը։

— Հույս ունիմ, որ ոչինչ էլ չի պատահի, Եվգենի Վասիլիչ... Շատ ցավում եմ, որ ձեր այստեղ, իմ տանը մնալը այսպես... այսպիսի վախճան ունեցավ։ Այդ ինձ ավելի ևս վիշտ է պատճառում նրա համար, որ Արկադին...

— Ես, երևի, նրա հետ կտեսնվեմ,— ընդհատեց Բազարովը,— որի մեջ այսպիսի «բացատրություններն» ու «վրշտակցությունները» անհամբերության զգացում էին զարթեցնում,— հակառակ դեպքում, խնդրում եմ, բարևեցեք նրան իմ կողմից և ընդունեք իմ վշտակցությունը։

— Ես էլ խնդրում եմ... — գլուխ տալով պատասխանեց

Նիկոլայ Պետրովիչը։ Բայց Բազարովը նրա խոսքի վերջին չսպասեց ու դուրս գնաց։

Պավել Պետրովիչն իմանալով, որ Բազարովը գնալու է, ցանկություն հայտնեց նրան տեսնելու, և նրա ձեռքը սեղմեց։ Բայց Բազարովն այս անգամ էլ սառցի նման սառն էր. նա հասկացավ, որ Պավել Պետրովիչն ուզում էր մեծահոգություն ցույց տալ։ Ֆենիչկայի հետ Բազարովը չկարողացավ մնաս բարով անել, միայն պատուհանից իրար նայեցին։ Նրան թվաց, թե Ֆենիչկայի դեմքը տխուր էր։ «Երևի կկորչի,— ասաց նա ինքն իրեն...,— Դեհ, մի կերպ դուրս կգրծնի»։ Մինչդեռ Պյոտրը այն աստիճան զգացվեց, որ գլուխը նրա ուսին դրած լաց էր լինում, մինչև որ Բազարովը նրան չդադարեցրեց հարցնելով. «Աչքդ հո աղբյուր չի», իսկ Դունյաշան հո. իր հուզմունքը ծածկելու համար ստիպված էր անտառ փախչել։ Բազարովը, որ այս բոլոր վշտի պատճառն էր, բարձրացավ կառք, ծխախոտը կպցրեց, և երբ չորս վերստ անցնելուց հետո, ճանապարհի պտույտին հասավ, վերջին անգամ նրա աչքովն ընկավ մի շարքի վրա ձգված Կիրսանովի դաստակերտը և նրա նորաշեն բնակարանի շենքը, նա միայն թքեց ու «անիծյալ ազնվականներ» ասելով ավելի պինդ փաթաթվեց իր վերարկվի մեջ։

Շուտով Պավել Պետրովիչի դրությունը թեթևացավ. բայց հարկադրված էր մեկ շաբաթի չափ անկողնի մեջ մնալ։ Նա բավականին համբերությամբ տանում էր իր, ինչպես ինքն էր ասում, գերությունը, միայն խիստ հոգս էր անում իր արդուզարդի վրա ու շարունակ պատվիրում էր օդքոլոն սրսկել տան մեջ։ Նիկոլայ Պետրովիչն ամսագրեր էր կարդում նրա մոտ, Ֆենիչկան առաջվա նման սպասարկում էր նրան, բերում էր արգանակ, լիմոնադ, թերխաշ ձու, թեյ, բայց ամեն անգամ, երբ մտնում էր Պավել Պետրովիչի սենյակը, գաղտնի սարսափ էր ընկնում վրան։ Պավել Պետրովիչի անակնկալ վարմունքը տանը եղողներին ամենքին էլ վախեցրել էր, իսկ Ֆենիչկային՝ ամենքից ավելի։ Մենակ Պրոկոֆիչը չշփոթվեց, և պատմում էր, որ առաջներում էլ էին աղաները շատ անգամ կռվում իրար հետ, «միայն թե ազնիվ աղաներն իրար հետ, իսկ այսպիսի թոկից փախածնե-

ին, նրանց կոպիտ վարմունքի համար, պատվիրում էին տանել գոմը ու ծեծել»։

Խիղճը Ֆենիչկային համարյա թե չէր կշտամբում. բայց ժամանակ առ ժամանակ տանջվում էր մտածելով, թե կովի իսկական պատճառն ինքն էր. մեկ էլ որ Պավել Պետրովիչը այնպես տարօրինակ աչքով էր նայում իրեն..., այնպես, որ մինչև իսկ մեջքը նրան դարձրած միջոցին անգամ զգում էր նրա հայացքը։ Ներքին անդադար հուզմունքից Ֆենիչկան նիհարեց և, ինչպես սովորաբար լինում է, էլ ավելի սիրունացավ։

Մի անգամ, առավոտյան էր, Պավել Պետրովիչն իրեն լավ էր զգում, և անկողինը թողնելով, բազկաթոռի մեջ նստեց. իսկ Նիկոլայ Պետրովիչը նրա առողջությունը հարցնելուց հետո, գնաց դեպի կալը։ Ֆենիչկան բաժակով թեյ բերեց նրա համար ու, սեղանի վրա դնելուց հետո, ուզում էր գնալ։ Պավել Պետրովիչը նրան չթողեց։

— Ո՞ւր եք այդպես շտապում, Ֆեդոսյա Նիկոլաևնա,— սկսեց նա,— ինչ է, գո՞րծ ունեք։

— Ոչ... Պետք է թեյ պատրաստեմ։

— Առանց ձեզ էլ Դունյաշան կարող է այդ բանն անել. եկեք մի քիչ նստեցեք հիվանդի մոտ։ Ի դեպ՝ ձեզ հետ խոսելիք ունեմ։

Ֆենիչկան անձայն նստեց բազկաթոռի ծայրին։

— Լսեցեք,— ասաց Պավել Պետրովիչը իր բեղի ծայրը ձիգ տալով,— վաղուց է ուզում եմ ձեզ հարցնել, կարծես թե դուք ինձանից վախենում եք։

— Ե՞ս...

— Այո, դուք։ Երբեք երեսիս ուղիղ չեք նայում. ասես թե ձեր խիղճը մաքուր չէ։

Ֆենիչկան կարմրեց, բայց նայեց Պավել Պետրովիչի երեսին։ Պավել Պետրովիչը նրան մի տեսակ տարօրինակ երևվաց, և սիրտը իր կրծքի տակ կամացուկ թրթռաց։

— Խիղճդ հո մաքո՞ւր է,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Ինչո՞ւ չպիտի մաքուր լինի որ,— շշնջաց Ֆենիչկան։

— Քի՞չ պատճառ կա։ Բայց ո՞ւմ առաջ կարող եք դուք մեղավոր լինել։ Ի՞մ առաջ։ Այդ անհավանական բան է։ Այստեղ տան մեջ ապրող ուրի՞շ անձերի առաջ։ Այդ ևս անկարելի բան է։ Հա՛, գուցե, եղբո՞ր առաջ։ Բայց չէ՞ որ դուք նրան սիրում եք։

— Սիրում եմ։

— Ամբո՞ղջ հոգով, ամբո՞ղջ սրտով։

— Ես ամբողջ հոգով սիրում եմ Նիկոլայ Պետրովիչին։

— Ճի՞շտ։ Հապա մի ինձ նայեցեք, Ֆենիչկա (առաջին անգամն էր նրան այդպես անվանում...)։ Դուք գիտեք հո՝ սուտ ասելը մեծ մեղք է։

— Ես սուտ չեմ ասում, Պավել Պետրովիչ։ Եթե Նիկոլայ Պետրովիչին էլ չսիրեմ, էլ ո՞ւր եմ ապրում աշխարհքիս վրա։

— Եվ ոչ ոքի հետ չե՞ք փոխել նրան։

— Ո՞ւմ հետ կարող եմ նրան փոխել։

— Քի՞չ մարդ կա։ Հենց ասենք այն պաքանի հետ, որ այստեղից գնաց։

Ֆենիչկան վեր կացավ տեղից։

— Տեր արարիչ աստված, ինչո՞ւ եք ինձ տանջում, Պավել Պետրովիչ։ Ի՞նչ եմ արել ձեզ։ Ինչպե՞ս կարելի է այդպիսի բան ասել...

— Ֆենիչկա,— տխուր ձայնով ասաց Պավել Պետրովիչը,— ախր ես տեսա...

— Ի՞նչ տեսաք...

— Այնտեղ... զովանոցում։

Ֆենիչկան մինչև մազերի արմատը, մինչև ականջների ծայրը կարմրատակեց։

— Ես ի՞նչ մեղք ունեմ,— հազիվ-հազ կարողացավ ասել նա։

Պավել Պետրովիչը մի փոքր վեր կացավ տեղից։

— Մեղք չունի՞ք։ Չէ՞։ Ամենևի՞ն։

— Աշխարհքիս երեսին ես միմիայն Նիկոլայ Պետրովիչին եմ սիրում և մինչև մահս էլ պիտի սիրեմ,— հանկարծակի սաստկությամբ ասաց Ֆենիչկան, և հեծկլտոցը եկել, խեղդել էր կոկորդը։— Իսկ այն, որ տեսել եք, ես հանդերձյալ կյանքում, ահեղ դատաստանի առաջ էլ կասեմ, որ ես դրանում մեղք չեմ ունեցել, չունեմ, ու լավ է հենց այս բոպեիս գետինը պատռվի, մեջը գնամ, քանց թե այդպիսի կաս-

ղած լինի վրաս, ու ես իմ բարերարիս, Նիկոլայ Պետրովիչի առաջ...

Բայց այստեղ ձայնը նրան դավաճանեց, և միևնույն ժամանակ էլ զգաց, որ Պավել Պետրովիչը քաշեց իր ձեռքն ու սեղմեց... Ֆենիչկան նայեց նրա երեսին ու ապուշ կտրեց։ Պավել Պետրովիչը առաջվանից էլ ավելի սփրթնած էր. աչքերը փայլում էին և ամենից զարմանալին այն էր, որ արտասուքի մի խոշոր կաթիլ երեսի վրայից ցած էր գլորվում։

— Ֆենիչկա,— ասաց նա մի տեսակ շշունջով,— սիրեցեք, սիրեցեք եղբորս։ Շատ բարի, շատ պատվական մարդ է։ Աշխարհիս երեսին ոչ մի մարդու համար չդավաճանեք նրան, ոչ ոքի ասածներին մտիկ չանեք։ Մի լավ մտածեցեք. ինչ սարսափելի բան է սիրել և սեր չստանալ։ Երբեք չթողնեք իմ խեղճ Նիկոլային։

Ֆենիչկայի աչքերը ցամաքեցին, և վախն էլ անցավ,— այնքան մեծ եղավ նրա զարմանքը։ Բայց ինչ զգաց նա, երբ Պավել Պետրովիչը, ինքը Պավել Պետրովիչը նրա ձեռքը իր շրթունքներին սեղմեց, և այդպես էլ, առանց համբուրելու, կպած մնաց ու միայն երբեմն-երբեմն ջղաձգաբար հառաչելով...

«Տեր ողորմյա,— մտածեց Ֆենիչկան,— հիվանդության գրգիռը չի՞ արդյոք»։

Իսկ այդ նույն վայրկյանին մի ամբողջ խորտակված կյանք թրթռում էր Պավել Պետրովիչի մեջ։

Արագ քայլերից աստիճանները ճռճռացին... Պավել Պետրովիչը հրեց, հեռացրեց իրենից Ֆենիչկային, և գլուխը գցեց բարձի վրա։ Դուռը բացվեց և երևաց Նիկոլայ Պետրովիչը ուրախ, զվարթ, կարմրած։ Միտյան նույնպես, հոր նման զվարթ ու կարմրած, շապկանց թռչկոտում էր նրա կրծքի վրա ու մերկ ոտները դեմ տալիս նրա գյուղական վերարկուի խոշոր կոճակներին։

Ֆենիչկան վազեց դեպի նա ու ձեռներով նրան ու որդուն փաթաթվելով՝ գլուխը դրեց Նիկոլայ Պետրովիչի ուսին։ Սա զարմացավ, որովհետև ամոթխած ու համեստ Ֆենիչկան երբեք ուրիշի առաջ գգվանք չէր արտահայտում։

— Այս ի՞նչ է եղել քեզ,— ասաց նա և եղբորը նայելով՝ Միտյային տվեց Ֆենիչկայի գիրկը,— հիվանդությունդ

հա չի՞ ծանրացել,— հարցրեց նա՝ Պավել Պետրովիչին մոտ գալով։

Պավել Պետրովիչը դեմքը թաքցրեց բատիստե թաշկինակի մեջ։

— Ոչ... այնպես... ոչինչ չկա... Ընդհակառակն, ավելի լավ եմ այժմ։

— Իզուր ես շտապել, անկողինը թողած բազկաթոռի մեջ նստել։ Այդ ո՞ւր ես գնում,— ավելացրեց Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկային դառնալով։ Բայց սա արդեն իր հետևից թրխկացրեց դուռը։— Ես եկել էի, որ իմ հսկային քեզ ցույց տամ. նա արդեն հորեղբորը կարոտել էր։ Այդ ինչո՞ւ Ֆենիչկան նրան դուրս տարավ։ Բայց ի՞նչ է եղել քեզ։ Չլինի՞ այստեղ ձեր մեջ մի բան է պատահել։

— Եղբայր,— հանդիսավոր կերպով ասաց Պավել Պետրովիչը։

Նիկոլայ Պետրովիչը ցնցվեց։ Իրեն սկսեց վատ զգալ՝ ինքն էլ չիմացավ ինչու։

— Եղբայր,— կրկնեց Պավել Պետրովիչը,— ինձ խոսք տուր, որ իմ մի խնդիրքս կկատարես։

— Ի՞նչ խնդիրք։ Ասա։

— Շատ կարևոր խնդիրք է։ Ըստ իմ հասկացողության, կյանքիդ ամբողջ երջանկությունը դրանից է կախված։ Ես այս բոլոր ժամանակներս շատ եմ մտածել այն բանի մասին, ինչ որ այժմ ուզում եմ ասել քեզ... Եղբայր, կատարիր քո պարտականությունը, ազնիվ ու պատվավոր մարդու պարտավորությունդ, վերջ դիր այդ գայթակղության ու վատ օրինակին, որ տալիս ես դու, դու՝ որ մարդկանց մեջ ամենապատվականն ես։

— Ի՞նչ ես ուզում ասել, Պավել։

— Ամուսնացիր Ֆենիչկայի հետ... Նա սիրում է քեզ, նա քո որդու մայրն է։

Նիկոլայ Պետրովիչը մի քայլ ետ քաշվեց ու ձեռներն իրար խփեց։

— Դո՞ւ ես այդ ասողը, Պավել, դո՞ւ, որին ես միշտ անկուն հակառակորդ եմ համարել այդպիսի ամուսնությունների։ Այդ դո՞ւ ես ասում։ Բայց մի՞թե չգիտես, որ միմիայն դեպի քեզ ունեցած հարգանքից էր, որ մինչև այժմ չեմ կա-

տարել այն, ինչ որ դու իրավամբ իմ պարտավորությունն անվանեցիր։

— Իզուր ես այդ դեպքում ինձ հարգել,— տխուր ժպիտով պատասխանեց Պավել Պետրովիչը։— Ես սկսում եմ կարծել, որ Բազարովը իրավացի էր, երբ երեսովս էր տալիս իմ արիստոկրատությունը։ Ո՜չ, սիրելի եղբայր, հերիք կոտրտվենք ու հասարակության կարծիքի մասին մտածենք, մենք արդեն ծերացած ու խաղաղ մարդիկ ենք. ժամանակ է այդ ունայն բաները մի կողմ ձգել։ Իսկ ոբ, քո ասածի պես, սկսենք մեր պարտավորությունը կատարել, և դու տես որ, դեռ կարող ենք երջանկություն էլ վաստակել։

Նիկոլայ Պետրովիչը փաթաթվեց եղբորը։

— Դու վերջնականապես աչքերս բաց արիր,— բացականչեց նա։— Ես զուր չէի միշտ պնդում, որ աշխարհիս երեսին ամենաբարի ու խելոք մարդն ես։ Իսկ այժմ տեսնում եմ, որ դու նույնքան և խոհեմ ես, որքան և մեծահոգի ես։

— Հանդարտ, հանդարտ,— ընդհատեց նրան Պավել Պետրովիչը,— խոհեմ եղբորդ վերքը մի ցավացնի, որը, հիսուն տարեկանի հասած՝ ենթասպայի նման մենամարտի էր դուրս եկել։ Ուրեմն վճռված բան է՝ Ֆենիչկան կլինի իմ belle soeur[1]։

— Իմ սիրելի Պավել։ Բայց ի՞նչ կասի Արկադին։

— Արկադի՞ն։ Նա շատ ուրախ կլինի թերևս։ Ամուսնությունը նրա սկզբունքների բանը չէ, բայց դրա փոխարեն հավասարության զգացումը շոյված կլինի նրա մեջ։ Եվ արդարև, տա՞ ինչ կաստայականություն է au dix-neuviéme siécle[2]։

— Ախ, Պավել, Պավել, թող մեկ էլ հանգստանամ քեզ։ Մի վախեցիր, զգույշ կլինեմ։

Երկու եղբայրն հանգստացին։

— Ինչ ես կարծում, քո այդ մտադրությունը այժմ ևեթ չհայտնե՞նք Ֆենիչկային,— հարցրեց Պավել Պետրովիչը։

— Ի՞նչ կա շտապելու,— առարկեց Նիկոլայ Պետրովիչը։— Այդ մասին մի՞թե մեջներդ խոսք է եղել։

[1] Հարսը (ֆրանս.)։

[2] Տասնիններորդ դարում (ֆրանս.)։

— Մեր մեջ խոսակցությո՞ւն։ Quelle ide'e[1]։

— Դե ուրեմն, շատ լավ։ Նախ և առաջ՝ առողջացիր, իսկ այս բանը ձեռներիցս չի փախչիլ. դեռ պետք է մի լավ մտածել, ծանրությեթև անել...

— Հո արդեն վճռե՞լ ես։

— Իհարկե, վճռել եմ և հոգով շնորհապարտ եմ քեզ։ Այժմ ես կգնամ. քեզ հանգստություն է պետք. ամեն տեսակ հուզում վնաս է քեզ... Բայց դեռ կխոսենք։ Քնիր, հոգիս, աստված քեզ առողջություն տա։

«Ինչո՞ւ է նա ինձ այսքան շնորհակալություն հայտնում,— մենակ մնալով մտածեց Պավել Պետրովիչը,— կարծես թե այդ իրենից չէր կախված։ Իսկ ես, հենց որ նա ամուսնացավ, կգնամ հեռու մի տեղ, Դրեզդեն կամ Ֆլորենցիա, և կապրեմ այնտեղ, մինչև որ սատկեմ»։

Պավել Պետրովիչը օդրկոլոնով թրջեց ճակատը և աչքերը խփեց։ Ցերեկվա պայծառ լույսով լուսավորված նրա գեղեցիկ, նիհարած գլուխը ընկած էր ապխտակ բարձի վրա մեռածի նման... Նա հենց մեռած էլ էր։

XXV

Նիկոլսկոյե գյուղում, պարտեզում, բարձրուղեղ հացենու հովին, փայտե նստարանի վրա նստած էին Կատյան ու Արկադին, նրանց մոտ գետնին պառկած էր Ֆիֆին այն գեղարվեստական կիսաբոլորակ ձևով, որ հայտնի է որսորդների մեջ «հուշկապարիկի պառկվածք» անունով։ Արկադին էլ, Կատյան էլ լուռ էին. Արկադին ձեռին բռնել էր կիսաբաց մի գիրք, իսկ Կատյան կողովի մեջ մնացած սպիտակ հացի փշրանքները հավաքում էր ու ձգում ճնճղուկների փոքրաթիվ ընտանիքի առաջ, որոնք, իրենց հատուկ վախկոտ խիզախությամբ, թռչկոտում էին ու ճվողում ուղիղ նրանց ոտների տակ։ Մեղմ քամին, տատանելով հացենու տերևները, թե մթին ճանապարհի վրա և թե Ֆիֆիի դեղին մեջքի վրա, ետ ու առաջ էր շարժում լույսի բաց ոսկեգույն բծերը. միապաղաղ ստվերն ընկած էր Արկադիի ու Կատյայի վրա. հա-

[1] Ինչպիսի միտք (ֆրանս.)։

զիվ երբեմն միայն պայծառ շերտը բոցակիզվում էր Կատյայի մազերի մեջ։ Նրանք լուռ էին. և հենց նրանց այդ լուռ կեցվածքում, նրանց կողք-կողքի նստվածքի մեջ երևում էր վստահ մտերմությունը. ասես նրանցից ոչ մեկը չէր մտածում մյուսի մասին, մինչդեռ իրենց սրտում ուրախ էին, որ միմյանց մոտ են։ Այն օրվանից, երբ նրանց վերջին անգամ տեսանք, նրանց դեմքերն էլ փոխվել էին. Արկադին ավելի խաղաղ էր թվում, իսկ Կատյան՝ ավելի առույգ, համարձակ։

— Դուք չե՞ք գտնում, որ,— սկսեց Արկադին,— ճացենին ռուսերեն շատ հարմար անուն ունի՝ յասեն, ոչ մի ծառ այնպես պայծառ ու պարզ չի երևում օդի մեջ, ինչպես հացենին։

Կատյան աչքերը վեր բարձրացրեց ու ասաց՝ «Այո», իսկ Արկադին մտածեց. «Ա՛յ, սա ինձ չի կշտամբում, որ գեղեցիկ խոսքերով եմ միտքս արտահայտում»։

— Ես Հայնեին չեմ սիրում,— խոսեց Կատյան՝ աչքերով Արկադիի ձեռքի գիրքը ցույց տալով,— ոչ այն ժամանակ, երբ նա լաց է լինում, ոչ այն ժամանակ, երբ ծիծաղում է. այլ սիրում եմ, երբ նա մտախոհ է ու թախծալի։

— Իսկ նա ինձ դուր է գալիս, երբ ծիծաղում է,— նկատեց Արկադին։

— Այդ ձեր մեջ երգիծական հին ուղղության հետքերն են... («Հին հետքերը,— մտածեց Արկադին,— եթե Բազարովը այդ լսեր»)։— Սպասեցեք, մենք ձեզ կփոխենք։

— Ո՞վ է ինձ փոխելու։ Դո՞ւք։

— Ո՞վ, քույրս, Պորֆիրի Պլատոնիչը, որի հետ դուք այլևս չեք կռվում. մորաքույրս, որին դուք երեկ չէ մյուս օրը եկեղեցի ուղեկցեցիք։

— Հո չէի՞ կարող մերժել։ Իսկ ինչ վերաբերում է Աննա Սերգեևնային, գիտեք, որ նա ինքն էլ շատ բաներում համաձայնում էր Բազարովի հետ։

— Այն ժամանակ՝ ձեզ նման՝ քույրս էլ նրա ազդեցության տակ էր։

— Ինձ նմա՞ն։ Մի՞թե դուք նկատում եք, որ ես այժմ ազատվել եմ նրա ազդեցությունից։

Կատյան լռեց։

— Գիտեմ,— շարունակեց Արկադին,— նա երբեք ձեզ դուր չէր գալիս։

— Ես չեմ կարող նրա մասին դատողություն անել։

— Գիտե՞ք ինչ, Կատերինա Սերգեևնա։ Ամեն անգամ, երբ ես լսում եմ այդ պատասխանը, ձեր ասածին չեմ հավատում։ Չկա մի այնպիսի մարդ, որի մասին մեզնից ամեն մեկը չկարողանար դատողություն անել։ Այդ ուղղակի նշանակում է խուսափել։

— Դե որ այդպես է, ես ձեզ կասեմ, որ նա... չէ թե ինձ դուր չի գալիս, այլ զգում եմ, որ նա էլ ինձ օտար է, ես էլ նրան եմ օտար... Հենց դուք ինքներդ էլ օտար եք նրան։

— Ինչո՞ւ։

— Ինչպե՞ս ասեմ... Նա գիշատիչ է, մինչդեռ ես ու դուք ընտելացել ենք։

— Ես է՞լ եմ ընտելացած։

Կատյան գլխով արավ։

Արկադին գլուխը քորեց։

— Ախր, Կատերինա Սերգեևնա, իսկապես ասած, ձեր ասածը վիրավորական է։

— Մի՞թե դուք գիշատիչ կուզեիք լինել։

— Գիշատիչ չէ, այլ ուժեղ, եռանդուն։

— Այդ չի կարելի ուզել... Ահավասիկ ձեր ընկերը չի ուզում այնպես լինել, բայց այդ նրա մեջ կա։

— Հը՛մ։ Ուրեմն դուք կարծում եք, թե նա մեծ ազդեցություն ուներ Աննա Սերգեևնայի վրա։

— Այո՛։ Բայց ոչ ոք չի կարող նրա վրա երկար ազդեցություն ունենալ,— ավելացրեց Կատյան ցած ձայնով։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում։

— Քույրս շատ հպարտ է... Ես այդ չէի ուզում ասել... Նա մեծ նշանակություն է տալիս իր անկախությանը։

— Ո՞վ չի իր անկախությանը մեծ նշանակություն տալիս որ,— հարցրեց Արկադին, ու միևնույն ժամանակ էլ մտքովն անցկացրեց՝ «Ինչի՞ է պետք այն»։ «Ինչի՞ է պետք այն»,— մտածեց նաև Կատյան։ Այն երիտասարդները, որոնք հաճախ մտերմաբար համակարծիք են դառնում, շարունակ հանգում են միևնույն մտքերին։

Արկադին ժպտաց և, մի քիչ Կատյային մոտենալով, շշնջալով ասաց.

— Խոստովանեցեք, որ դուք փոքր-ինչ վախենում եք նրանից։

— Ո՞ւմից։

— Ձեր քրոջից,— նշանակալից կրկնեց Արկադին։

— Իսկ դո՞ւք,— իր կողմից հարցրեց Կատյան։

— Ես էլ, նկատեցեք՝ ասացի — ես էլ։

Կատյան մատը թափ տվեց նրա վրա։

— Այդ ինձ զարմացնում է,— սկսեց Կատյան,— երբեք քույրս այնպես լավ տրամադրված չի եղել դեպի ձեզ, ինչպես այժմ, անհամեմատ ավելի, քան ձեր առաջին գալուստյանը։

— Ահա թե ինչ։

— Մի՞թե դուք այդ չէիք նկատել։ Դա ձեզ չի՞ ուրախացնում։

Արկադին մտքի մեջ ընկավ։

— Ինչո՞վ եմ արժանացել Աննա Սերգեևնայի բարեհաճությանը։ Միգուցե նրանով, որ ձեր մոր նամակները բերի իրեն։

— Դրանով էլ, բայց ուրիշ պատճառներ էլ կան, որը ես չեմ ասի։

— Ինչո՞ւ։

— Չեմ ասի։

— Օ՜, գիտեմ, դուք շատ համառ աղջիկ եք։

— Համառ եմ։

— Եվ դիտող եք։

Կատյան աչքի պոչով նայեց Արկադիին։

— Գուցե այդ ձեզ զարմացնո՞ւմ է։ Ինչի՞ մասին եք մտածում։

— Ես մտածում եմ, թե որտեղի՞ց կարող էր ձեր մեջ մտնել այդ դիտելու ընդունակությունը, որը ճիշտ որ կա ձեր մեջ։ Դուք որ այդպես երկչոտ եք, կասկածամիտ, ամենքից խույս տվող...

— Ես շատ եմ միայնակ ապրել. ուզես-չուզես կմտածես։ Բայց մի՞թե ես ամենքից էլ խույս եմ տալիս։

Արկադին երախտագիտական հայացք ձգեց նրա վրա։

— Այդ ամենը շատ լավ,— շարունակեց Արկադին,— բայց ձեր կացության մեջ եղող մարդիկ, ուզում եմ ասել՝ ձեր կարողությունն ունեցող մարդիկ, քիչ է պատահում, որ այդ շնորհքն ունենան։ Ճշմարտությունը նրանց ականջին, որպես և թագավորների ականջին, դժվար է հասնում։

— Բայց չէ՝ ես հարուստ չեմ։

Արկադին զարմացավ և Կատյայի ասածն իսկույն շրմբռնեց։ «Ճիշտ որ, ախր ամբողջ կալվածքն էլ քրոջն է»,— մտածեց նա. այդ միտքը նրան անհաճո չթվաց։

— Ինչ լավ ասացիք,— ասաց նա։

— Ի՞նչ է որ։

— Ասացիք լավ, հասարակ, առանց ամաչելու և առանց պարծենալու։ Ի դեպ, ես երևակայում եմ այն մարդու զգացմունքը, որը գիտե և ասում է, թե ինքը աղքատ է, պետք է, որ մի առանձին տեսակի սնափառություն լինի։

— Քրոջս շնորհիվ ես ոչ մի այդպիսի բան չեմ զգացել. խոսքը եկավ, դրա համար էլ միայն հիշեցի իմ կարողության մասին։

— Լա՜վ, բայց խոստովանեցեք, որ հենց ձեր մեջն էլ կա մանրիկը այն սնափառության, որի մասին ես այս րոպեիս հիշում էի։

— Օրինա՞կ։

— Օրինակ, դուք հո, ներեցեք իմ հարցը, գուք չէիք ամուսնանա հարուստ մարդու հետ։

— Եթե ես նրան շատ սիրելիս լինեի... Ո՜չ, թվում է ինձ, որ այն ժամանակ էլ չէի ամուսնանա։

— Հա՜, տեսնո՞ւմ եք,— բացականչեց Արկադին և քիչ հետո ավելացրեց։— Իսկ ինչո՞ւ չէիք ամուսնանա։

— Նրա համար, որ երգերի մեջ էլ երգում են անհավասարության մասին։

— Գուցե դուք ուզում եք իշխել կամ...

— Ոչ, ոչ. ինչի՞ս է պետք։ Ընդհակառակը, ես պատրաստ եմ հնազանդվել. միայն անհավասարությունն է ծանր։ Իսկ ինքդ քեզ հարգես ու հնազանդվես՝ ես այդ հասկանում եմ. դա երջանկություն է. բայց լուծի տակ ապրել... Ո՜չ, եղածն էլ հերիք է։

— Եղածն էլ հերիք է,— Կատյայի հետևից կրկնեց Ար-

կադին։— Այո՛, այո՛,— շարունակեց նա,— իզուր չէ, որ դուք էլ Աննա Սերգեևնայի հետ միևնույն արյունից եք։ Դուք էլ այնպես ինքնուրույն եք, ինչպես և նա։ Բայց դուք ավելի ծածկամիտ եք։ Հավատացած եմ, որ երբեք առաջ դուք չեք արտահայտել ձեր զգացմունքը, որքան ուզում է դա խորը և սրբազան լինի...

— Հապա ինչպե՞ս պիտի լիներ,— հարցրեց Կատյան։

— Դուք խելոք էլ եք. դուք էլ նույնպես, եթե ոչ ավելի, կիրթ բնավորություն ունեք, ինչպես և նա...

— Խնդրում եմ ինձ քրոջս հետ մի համեմատեք,— շտապով ընդհատեց Կատյան նրա խոսքը,— այդ խիստ աննպաստ բան է ինձ համար։ Ասես թե մոռացել եք, որ քույրս գեղեցկուհի է, և խելացի, և... մանավանդ ձեզ, Արկադի Նիկոլայիչ, չի վայելի, որ այդպիսի խոսքեր ասեք, այն էլ մի այսպիսի լուրջ դեմքով։

— Այդ ի՞նչ է նշանակում՝ մանավանդ ձեզ, և ինչի՞ց եք եզրակացնում, որ ես կատակ եմ անում։

— Իհարկե, կատակ եք անում։

— Կարծո՞ւմ եք։ Իսկ ինչ կասեիք, եթե ես համոզված եմ այն ամենում, ինչ որ ասում եմ։ Եթե ես գտնում եմ, որ դեռևս այնքան էլ ուժեղ չեմ արտահայտվել։

— Ես ձեր միտքը չեմ հասկանում։

— Իրա՞վ։ Դե լավ. ես այժմ տեսնում եմ որ՝ իսկապես չափազանցրել եմ ձեր դիտելու ընդունակությունը։

— Ինչպե՞ս։

Արկադին ոչինչ չպատասխանեց և երեսը շուռ տվեց, իսկ Կատյան կողովի մեջ մի քանի փշրանք էլ գտավ ու ձգեց ճնճղուկների առաջ. բայց նրա թևի շարժումն այնքան ուժեղ էր, որ ճնճղուկները, առանց փշրանքները ժողովելու, թռան գնացին։

— Կատերինա Սերգեևնա,— խոսեց հանկարծ Արկադին։— Այդ ձեզ համար, հավանորեն, միևնույն բանն է, բայց իմացեք, որ ես ձեզ ոչ թե միայն ձեր քրոջ հետ, այլ աշխարհիս երեսին ոչ ոքի հետ չեմ փոխի։

Նա վեր կացավ տեղից և, կարծես իր լեզվից թռած խոսքերից վախեցած, արագ հեռացավ։

Իսկ Կատյան երկու ձեռքն ու կողովը ձգեց ծնկների վրա

և, գլուխը խոնարհած, երկար նայում էր Արկադիի հետևից։ Փոքր առ փոքր ալկարմիրը թեթևակի ներկեց նրա այտերը. բայց շրթունքները չէին ժպտում, և մութ աչքերը վարանմունք ու մի տեսակ ուրիշ, դեռևս անանուն զգացմունք էին արտահայտում։

— Դու մենա՞կ ես,— նրա կողքին լսվեց Աննա Սերգեևնայի ձայնը։— Կարծեմ Արկադիի հե՞տ եկար պարտեզ։

Կատյան, առանց շտապելու, աչքերը դարձրեց քրոջ վրա (նա գեղանի, նույնիսկ նուրբ ճաշակով հագնված, կանգնել էր ճանապարհի վրա և բաց հովանոցի ծայրով շարժում էր Ֆիֆիի ականջը) և առանց շտապելու ասաց.

— Մենակ եմ։

— Տեսնում եմ,— պատասխանեց քույրը ծիծաղելով,— ուրեմն նա իր սենյակը գնաց։

— Այո։

— Միասին կարդո՞ւմ էիք։

— Այո։

Աննա Սերգեևնան բռնեց Կատյայի կզակից և նրա դեմքը բարձրացրեց։

— Հո չե՞ք կռվել։

— Ո՛չ,— ասաց Կատյան և քրոջ ձեռքը կամացուկ ետ քաշեց։

— Ինչ հանդիսավորությամբ ես պատասխանում, կարծում էի թե նա այստեղ կլինի, ուզում էի առաջարկել միասին ինձ հետ զբոսնելու գնալ։ Ինքն է շարունակ այդ բանն ինձնից խնդրում։ Քաղաքից քեզ համար կոշիկներ են բերել. գնա փորձիր. ես երեկ նկատեցի, որ առաջվա ոտնամաններդ բոլորովին մաշվել են։ Առհասարակ դու հարկավոր ուշադրությունը չես դարձնում դրա վրա, մինչդեռ ինչ սքանչելի ոտներ ունես։ Ձեռներդ էլ սիրուն են... միայն խոշոր են. պետք է ուրեմն ոտներդ ավելի ընդգծես։ Բայց դու կոկետուհի չես։

Աննա Սերգեևնան իր գեղեցիկ հագուստով աղմկելով նույն ծառուղիով շարունակեց առաջ գնալ։ Կատյան վեր կացավ տեղից, առավ Հայնեի հատորը և նույնպես գնաց — բայց ոչ ոտնամանը փորձելու։

«Սքանչելի ոտներ,— մտածում էր նա դանդաղ ու թեթև

ֆերպով բարձրանալով դարավանդի արևակող եղած քարե աստիճաններով,— ասում է՝ սքանչելի ոտներ... Դե լավ, ուրեմն նա այդ ոտների առաջ կլինի»։

Բայց նա անմիջապես ամոթ զգաց և շտապով վերև վազեց։

Արկադին միջանցքով իր սենյակը գնաց. սենեկապանը հետևից հասավ և հայտնեց, թե Բազարովը նրա սենյակումն է։

— Եվգե՞նին,— համարյա վախեցած շշնջաց Արկադին.— վաղո՞ւց է եկել։

— Հենց նոր շնորհ բերին և պատվիրեցին, որ իր գալը Աննա Սերգեևնային իմաց չտանք, այլ հրամայեցին, որ ուղղակի ձեր սենյակը բերենք։

«Չլինի՞ տանը դժբախտություն է պատահել»,— մտածեց Արկադին և, շտապ-շտապ աստիճաններով վեր վազելով, հապճեպ բաց արեց դուռը։ Բազարովի երեսի արտահայտությունը իսկույն հանգստացրեց նրան, թեպետ եթե մի ավելի փորձված աչք լիներ, հավանական է, որ այդ անակնկալ հյուրի առաջվա նման դարձյալ եռանդուն, բայց փոքր-ինչ կորացած կերպարանքի մեջ ներքին հուզմունքի նշաններ նկատեր։ Փոշոտած թիկնոցը հագին, գլխարկը գլխին նստած էր պատուհանի մոտ. նա տեղից չվերկացավ նաև այն ժամանակ, երբ Արկադին աղմկալի բացականչություններով վազվզն ընկավ։

— Այ քեզ անակնկալ բան։ Ո՞ր խաչից,— ասում էր նա շարունակ վեր ու վար անելով սենյակում՝ նման մի մարդու, որ ինքը երևակայում է, և ուրիշներին էլ ուզում է ցույց տալ, թե ուրախանում է։— Տանը հո ամեն բան կարգի՞ն է, ամենքն էլ ողջ, առո՞ղջ են, այնպես չէ՞։

— Ամեն բան կարգին է, բայց ամենքը առողջ չեն,— պատասխանեց Բազարովը։— Շատ մի բլբլացնի, ասա թող կվաս բերեն, նստիր ու լսիր, թե ինչ եմ քեզ հաղորդելու մի քանի, բայց վստահ եմ, բավականին զորեղ խոսքով։

Արկադին հանդարտվեց, իսկ Բազարովը պատմեց Պավել Պետրովիչի հետ ունեցած մենամարտի մասին։ Արկադին շատ զարմացավ և մինչև իսկ տխրեց, բայց հարկ չհամարեց այդ բանն արտահայտել, նա միայն հարցրեց, թե իրո՞ք հորեղբոր վերքը վտանգավոր չէ և, պատասխան ստանալով, թե վերքը շատ հետաքրքրական է, միայն ոչ թե բժշկական տեսակետով, ակամա ժպտաց, մինչդեռ սիրտը ճմլվեց ու ամոթ զգաց։ Բազարովը կարծես այդ հասկացավ։

— Հապա, եղբայր,— խոսեց նա,— ահա ինչ է նշանակում ֆեոդալների հետ ապրել։ Ինքդ էլ ֆեոդալ կդառնաս ու ասպետական մրցախաղերին կմասնակցես։ Ահա, ես էլ վեր կացա և «հայրերի» կողմն ուղղվեցի,— այսպես վերջացրեց Բազարովը իր խոսքերը,— և ճամփից թեքվեցի այստեղ... որպեսզի այս ամենը քեզ պատմեմ, կասեի ես, թե որ անօգուտ սուտը հիմարություն չհամարեի։ Ո՛չ, ես ինքս էլ չգիտեմ, թե ինչու այստեղ եկա։ Գիտես, օգտակար է, որ մարդ երբեմն իր քանքուլից բռնի ու ձիգ տա, ու ինքն իրեն իր միջից արմատահան անի, ա՛յ, ինչպես բողկը մարգից. ես այդ բանն արի այս օրերս... Բայց սիրտս ուզեց մի անգամ էլ նայեմ այն բանին, որից ես ձեռք եմ քաշել, այն մարգին, որի մեջ էի։

— Հույս ունեմ, այդ խոսքերն ինձ չեն վերաբերում,— հուզված առարկեց Արկադին,— հույս ունեմ, որ դու մտադիր չես ինձանից բաժանվել։

Բազարովը զննողաբար աչքը սևեռեց նրա վրա։

— Իբրև թե շատ ես վշտանալու, էլի։ Ինձ թվում է, որ դու արդեն իսկ հեռացել ես ինձանից։ Դու այնպես զվարթ ու մաքուր ես... երևի Աննա Սերգեևնայի հետ բաներդ լավ են գնում։

— Ես ի՞նչ բաներ ունեմ Աննա Սերգեևնայի հետ։

— Մի՞թե նրա համար չես այստեղ եկել քաղաքից, ազավնյակս։ Ի դեպ, ինչպե՞ս են կիրակնօրյա դպրոցների գործերը։ Դու դեռ սիրահարված չե՞ս Աննա Սերգեևնային։ Չլինի՞ արդեն համեստություն անելու ժամանակը եկել է։

— Եվգենի, գիտես, որ ես միշտ անկեղծ եմ եղել քեզ հետ. կարող եմ հավատացնել, երդվում եմ, որ սխալվում ես։

— Հըմմ։ Մի նոր խոսք,— կիսաձայն նկատեց Բազարովը։— Բայց տաքանալու կարիք չկա. ինձ համար այդ հո բոլորովին միևնույն է։ Ռոմանտիկ մարդը կասեր՝ ես զգում եմ, որ մեր ճանապարհները սկսում են բաժանվել։ Իսկ ես ուղղակի ասում եմ. մենք միմյանց զզվեցրել ենք։

— Եվգենի...

— Հոգյակս, այդ ոչինչ. կյանքում դեռ ինչպիսի՞ բաներից են զզվում։ Իսկ այժմ, ժամանակը չի՞, որ մենք իրար մնաս բարև ասենք։ Սկսած այն ժամանակվանից, ինչ ես այստեղ եմ, շատ վատ եմ զգում ինձ, կարծես գլուխս լցված լինի այն նամակներով, որ Գոգոլը գրել է Կալուգայի նահանգապետի կնոջը։ Ի դեպ, չեմ ասել, որ ձիաները արձակեն։

— Ի՞նչ ես ասում, Եվգենի, այդ անկարելի բան է։

— Ինչու։

— Իմ մասին ասելն էլ ավելորդ է, բայց Աննա Սերգեևնայի վերաբերմամբ արածդ վերին աստիճանի անքաղաքավարություն կլինի. նա անպատճառ կուզենա քեզ տեսնել։

— Է, դրանում դու սխալվում ես։

— Իսկ ես, ընդհակառակը, հավատացած եմ, որ ասածս իրավացի է,— առարկեց Արկադին։— Եվ ինչո՞ւ ես կեղծում։ Բանը որ այդտեղ հասավ, հենց ինքդ նրա համար չե՞ս այստեղ եկել։

— Այդ գուցե և ուղիղ է, բայց և այնպես դու միշտ սխալվում ես։

Բայց Արկադիի ասածն ուղիղ էր։ Աննա Սերգեևնան ուզեց Բազարովին տեսնել և սենեկապանի միջոցով նրան իր սենյակը հրավիրեց։ Բազարովը նրա մոտ գնալուց առաջ շորերը փոխեց. բանից երևաց, որ նա իր շորերն այնպես էր դարսել, որ նոր զգեստի հանելը հեշտ լինի։

Օդինցովան նրան ընդունեց ոչ այն սենյակում, ուր նա այնպես անակնկալ կերպով իր սերն էր հայտնել, այլ ընդունարանում։ Նա սիրալիր կերպով մատի ծայրերը մեկնեց Բազարովին, բայց նրա դեմքն ակամա լարված դրություն էր արտահայտում։

— Աննա Սերգեևնա,— շտապեց ասել Բազարովը,— նախ և առաջ պետք է ձեզ հանգստացնեմ։ Ձեր առաջ կանգնած է մի մահկանացու, որը վաղուց արդեն խելքի է եկել և հույս ունի, որ ուրիշներն էլ մոռացել են նրա հիմարությունները։ Ես գնում եմ երկար ժամանակով և, համաձայնեցեք, որ թեպետ ես քնքուշ էակ չեմ, այնուամենայնիվ ինձ համար ուրախալի չէր լինի հեռանալ այստեղից մտածելով, որ դուք զզվանքով եք հիշում ինձ։

Աննա Սերգեևնան խորը շունչ քաշեց, նման այն մարդուն, որը հենց նոր էր բարձրացել լեռան գլուխը, և ժպիտը կենդանացրեց նրա դեմքը։ Նա ձեռքը կրկին անգամ մեկնեց Բազարովին և փոխադարձաբար սեղմեց նրա ձեռքը։

— Անցուկը մոռցուկ է,— ասաց նա,— մանավանդ որ, եթե խղճով ասենք, այն ժամանակ ես էլ մեղանչեցի եթե ոչ իմ կոկետությամբ, գոնե մի ուրիշ բանով։ Մի խոսքով՝ առաջվա նման բարեկամ լինենք։ Այն երազ էր միայն, այնպես չէ՞։ Իսկ ո՞վ է երազները միտքը պահում։

— Ո՞վ է միտքը պահում։ Մանավանդ որ սերը... շինծու զգացմունք է։

— Իրա՞վ։ Ինձ համար շատ հաճելի է այդ լսել։

Այդպես էր խոսում Աննա Սերգեևնան, այդպես էր խոսում և Բազարովը. երկուսն էլ կարծում էին, թե ճշմարիտ են ասում։ Արդյոք ճշմարտություն, կատարյալ ճշմարտություն կա՞ր նրանց խոսքերում։ Նրանք իրենք էլ չգիտեին այդ, ուր մնաց հեղինակը։ Բայց այն ձևով էին զրուցում, ասես կատարելապես իրար հավատալիս լինեին։

Աննա Սերգեևնան, ի միջի այլոց, Բազարովին հարցրեց, թե ինչ էր անում Կիրսանովների տանը։ Քիչ էր մնում Բազարովը նրան պատմեր Պավել Պետրովիչի հետ ունեցած մենամարտի մասին, բայց զսպեց իրեն՝ մտածելով, թե մի գուցե նա կարծի, թե ուզում է իր անձը հետաքրքրական դարձնել, և պատասխանեց, թե ամբողջ ժամանակն աշխատելիս է եղել։

— Իսկ ես,— խոսեց Աննա Սերգեևնան,— սկզբում, աստված գիտե ինչու, թախիծը պաշարել էր ինձ, մինչև անգամ մտածում էի արտասահման գնալ, երևակայեցեք... Հետո այդ անցավ. ձեր ընկեր Արկադի Նիկոլայիչը եկավ, ու ես նորից իմ հունի մեջ ընկա, նորից իմ իսկական դերի մեջ մտա։

— Այդ ի՞նչ դեր է, կարելի՞ է իմանալ։

— Մորաքրոջ, դաստիարակչուհու, մոր դերը, ինչպես ուզում եք անվանեցեք։ Ի դեպ. գիտե՞ք, առաջ ես լավ չէի հասկանում Արկադի Նիկոլայիչի հետ ձեր ունեցած սերտ բարեկամությունը. նրան բավականին աննշան էի համարում։ Բայց այժմ ավելի լավ ճանաչեցի և համոզվեցի, որ նա խե-

լոք է... Իսկ գլխավորը՝ որ նա երիտասարդ է, երիտասարդ... չէ՞ թե ինձ ու ձեզ նման, Եվգենի Վասիլիչ։

— Նա դարձյալ ձեր ներկայությամբ քաշվո՞ւմ է,— հարցրեց Բազարովը։

— Բայց մի՞թե...— սկսեց Աննա Սերգեևնան և, մի քիչ մտածելուց հետո, ավելացրեց,— այժմ նա ավելի է վստահում ինձ, հետս խոսում է։ Առաջ ինձանից խույս էր տալիս։ Ասենք ես էլ նրա ընկերությունը չէի որոնում։ Նա ու Կատյան այժմ մտերիմ բարեկամներ են։

Բազարովի սիրտը նեղացավ։ «Կին ասածդ չի կարող խորամանկություն չբանեցնել»,— մտածեց նա։

— Ասում եք ձեզանից խույս էր տալիս,— սառը ծաղրով արտասանեց Բազարովը,— բայց երևի, ձեզ համար գաղտնիք չմնաց, որ նա սիրահարված էր ձեզ։

— Ինչպե՞ս, նա է՞լ,— դուրս թռավ Աննա Սերգեևնայի շրթունքներից։

— Նա էլ,— խոնարհ գլուխ տալով կրկնեց Բազարովը։— Մի՞թե դուք այդ չգիտեիք և իմ հաղորդածը նորություն է ձեզ համար։

Աննա Սերգեևնան աչքերը ցած գցեց։

— Սխալվում եք, Եվգենի Վասիլևիչ։

— Չեմ կարծում։ Բայց, գուցե ինձ չի վայելի, որ այդ մասին հիշեմ։ «Էլ խորամանկություն չանես»,— ավելացրեց նա ինքն իրեն։

— Ինչո՞ւ հիշել։ Բայց կարծում եմ, որ դուք այս դեպքում էլ բոպեական տպավորությանը շատ մեծ նշանակություն եք տալիս։ Սկսում եմ կասկածել, որ առհասարակ դուք չափազանցնելու հակում ունեք։

— Ավելի լավ է այդ մասին չխոսենք, Աննա Սերգեևնա։

— Ինչո՞ւ չխոսել,— առարկեց տիկինը և ինքն էլ խոսքը ուրիշ բանի վրա դարձրեց։ Բայց և այնպես, Բազարովի ներկայությամբ նա անհարմար էր զգում, թեև նա նրան էլ ասաց, և ինքն իրեն էլ հավատացրեց, թե ամեն ինչ մոռացության է տրված։ Բազարովի հետ ամենահասարակ խոսքեր փոխանակելով, նույնիսկ հետը կատակ անելով, նա երկյուղի թեթև ճնշում էր զգում։ Այդպես, մարդիկ շոգենավի վրա, ծովում, անհոգ կերպով խոսում են, ծիծաղում, ասես ցամաքի վրա

լինեն։ Բայց հերիք է մի աննշան արգելք հանդիպի, մի անսովոր բանի ամենաչնչին նշանն երևա, անմիջապես ամենքի երեսներին էլ կերևա առանձին հուզմունքի արտահայտություն, որը վկայում է նրանց մշտական վտանգի գիտակցության մասին։

Աննա Սերգեևնայի խոսակցությունը Բազարովի հետ երկար չտևեց։ Նա սկսեց մտքերի մեջ ընկնել, անուշադիր պատասխաններ տալ և վերջ ի վերջո առաջարկեց դահլիճ անցնել, որտեղ նրանք գտան իշխանուհուն ու Կատյային։ «Հապա Արկադի Նիկոլայիչն ո՞ւր է»,— հարցրեց տանտիկինը, և իմանալով, որ մի ժամից ավելի է, ինչ նա չի երևացել, մարդ ուղարկեց կանչելու։ Արկադիին շուտ չգտան. նա պարտեզի ամենախուլ անկյունը քաշված և կղակը իրար խաչած ձեռներին հենած, նստել էր մտքերի մեջ ընկած։ Խոր և կարևոր էին այդ մտքերը, բայց ոչ տխուր։ Նա գիտեր, որ Աննա Սերգեևնան մենակ նստած է Բազարովի հետ, բայց, առաջվա նման, խանդ չէր զգում։ Ընդհակառակը, նրա դեմքը հանդարտ կերպով պարզվում էր. ասես թե նա և զարմանում էր մի բանից, և ուրախանում, և վճռում էր մի բան անելու։

XXVI

Հանգուցյալ Օդինցովը նորամուծություններ չէր սիրում, բայց «որոշ չափով աղնվացած ճաշակի փոփոխությունը» թույլ էր տալիս, և այդ իսկ պատճառով էլ իր պարտեզում, ջերմանոցի ու լճակի միջև, ռուսական աղյուսից շինել էր ավել հունական սրահիկի նման մի բան։ Այդ սրահիկի հետևի խուլ պատի մեջ շինել էր ավել վեց որմախորշեր՝ հատկապես արձանների համար, որ ուզում էր արտասահմանից բերել տալ։ Այդ արձանները պետք է ներկայացնեին Առատություն, Լռություն, Մտորում, Մելամաղձոտություն, Ամոթխածություն և Զգայունություն։ Արձաններից մեկը՝ Լռության աստվածուհին, մատը շուրթերին, բերել ու դրել էին իր տեղը, բայց հենց նույն օրը ճորտ երեխաները ջարդեցին քիթը, և թեպետ հարևան ծեփագործը խոստացել էր, որ ինքն արձանի քիթը առաջվանից երկու անգամ ավելի լավ կշինի, բայց և այնպես Օդինցովը հրամայել էր արձանը վերցնել, որը և

գցել էին ծածկած կալի մի անկյունը, ուր երկար տարիներ մնացել էր՝ կանանց մեջ սնոտիպաշտական սարսափ առաջացնելով։ Սրահիկի առջևի մասը վաղուց ծածկվել էր խիտ բուսած թփերով և համատարած կանաչի մեջ միայն սյուների խոյակներն էին երևում։ Սրահիկի մեջ նույնիսկ կեսօրվա շոգին զով էր լինում։ Աննա Սերգեևնան այն օրից, որ այստեղ մի լորտու էր տեսել, չէր սիրում այդտեղ գալ. բայց Կատյան հաճախ գալիս էր նստում մի մեծ քարե նստարանի վրա, որ շինած էր որմախորշերից մեկի ներքևը։ Զովությամբ ու ստվերով շրջապատված, նա կարդում էր, գործում կամ անձնատուր լինում այն կատարյալ լռության զգացողության, որը, հավանորեն, հայտնի է ամենքին էլ, և որի հրապույրն է կազմում այն դրությունը, երբ մենք, հազիվ գիտակցելով, լրիվ ունկնդիր ենք լինում կենսական լայն ալիքին, որ շարունակ հոսում է մեր շուրջը և թե հենց մեր մեջ։

Բազարովի գալու հաջորդ օրը Կատյան նստած էր իր սիրած նստարանի վրա, և նրա կողքին դարձյալ Արկադին էր։ Ինքն էր խնդրել, որ Կատյան իր հետ սրահիկ գա։ Մինչև նախաճաշը դեռ մի ժամի չափ ժամանակ կար. ցողապատ առավոտն արդեն տեղի էր տալիս տաք օրվան։ Արկադիի դեմքը երեկվա արտահայտությունն էր պահպանում։ Կատյան մտահոգ կերպարանք ուներ։ Քույրը, թեյից անմիջապես հետո, նրան կանչել էր իր առանձնասենյակը և, նախապես գուրգուրելով նրան, մի բան, որ միշտ մի փոքր վախեցրել էր Կատյային, խորհուրդ էր տվել, որ զգույշ լինի Արկադիի հետ, մանավանդ խույս տա նրա հետ առանձնացած զրույց անելուց, որ իբր թե արդեն մորաքույրն էլ, տան մեջ բոլորն էլ նկատել են։ Բացի այդ, դեռ նախորդ երեկոյան Աննա Սերգեևնայի տրամադրությունը լավ չէր. հենց ինքը, Կատյան էլ շփոթված՝ պես էր, ասես թե իրեն մեղավոր էր զգում։ Արկադիի խնդրին զիջելով՝ նա ինքն իրեն խոսք տվեց, որ սա վերջինը կլինի։

— Կատերինա Սերգեևնա,— սկսեց Արկադին մի տեսակ վեհերկոտ համարձակությամբ,— այն օրվանից, որ ես պատիվ ունեմ ձեզ հետ միևնույն հարկի տակ ապրել, ու շատ բանի մասին խոսել եմ ձեզ հետ, մինչդեռ կա ինձ համար մի շատ կարևոր... խնդիր, որ դեռ ես չեմ շոշափել։ Դուք

երեկ ասացիք, որ այստեղ ինձ փոխեցին,— ավելացրեց նա, միաժամանակ թե որսալով և թե խույս տալով իր վրա ուղղած Կատյայի հարցական հայացքից։— Արդարև, ես շատ բանում փոխվել եմ, և դուք այդ ամենից լավ գիտեք,— դուք, որին ես, իսկապես, պարտական եմ իմ այդ կրած փոփոխություններով։

— Ե՞ս... ի՞նձ...— ասաց Կատյան։

— Ես այժմ այլևս այն ամբարտավան, կովասեր երեխան չեմ, ինչպես որ էի այստեղ գալիս,— շարունակեց Արկադին։— Իզուր չէ, որ քսաներեքս լրացրել եմ. առաջվա պես դարձյալ ուզում եմ լինել օգտակար, բոլոր ուժերս նվիրել ճշմարտության. բայց այլևս իմ իդեալները այնտեղ չեմ որոնում, ուր առաջ որոնում էի. դրանք ինձ... ավելի մոտիկ են երևում։ Մինչև այժմ ես ինձ չէի հասկանում, այնպիսի նպատակներ էի դնում իմ առաջ, որ ուժերիցս վեր էին... Մոտ ժամանակներս, մի զգացմունքի շնորհիվ, աչքերս բացվեցին... Ես այնքան էլ պարզ չեմ արտահայտվում, բայց հույս ունեմ, որ դուք ինձ կհասկանաք...

Կատյան ոչինչ չէր պատասխանում, բայց Արկադիին նայելուց դադարեց։

— Կարծում եմ,— նորից խոսեց նա արդեն ավելի հուզված ձայնով, մինչ խայտիտը նրանց վերև, կեչու սաղարթի մեջ անհոգաբար իր երգն էր երգում,— կարծում եմ, որ ամեն մի ազնիվ մարդու պարտավորությունն է բոլորովին անկեղծ լինել այն... այն մարդկանց հետ, որոնք... մի խոսքով, իրեն մոտիկ անձանց հետ, ուստի և ես... ես մտադիր եմ...

Բայց այստեղ Արկադիի պերճախոսությունը դավաճանեց իրեն, նա շփոթվեց, կմկմաց և ստիպված էր մի փոքր կանգ առնել։ Կատյան աչքը էլի վերև չէր բարձրացնում։ Թվում էր, թե նա չէր էլ հասկանում, թե ինչ էր ուզածը, և սպասում էր մի ինչ-որ բանի։

— Ես նախազգում եմ, որ ձեզ պիտի զարմացնեմ,— սկսեց Արկադին նորից ուժերը հավաքելով,— մանավանդ որ այդ զգացմունքը մասամբ... մասամբ, նկատեցեք, վերաբերում է ձեզ։ Դուք, հիշում եմ, երեկ ինձ կշտամբում էիք, որ իմ մեջ լրջությունը պակասում է,— շարունակեց Արկադին մի այնպիսի մարդու պես, որը, ճահճի մեջ մտնելով, զգում է,

որ ամեն մի քայլափոխում ավելի ու ավելի է խրվում, բայց և այնպես առաջ է շտապում՝ հուսալով, թե շուտով կազատվի։— Այդ կշտամբանքը հաճախ ուղղվում է... հրիտասարդների դեմ, մինչև իսկ այն ժամանակ, երբ նրանք այլևս կշտամբանքի չեն արժանի, և եթե իմ մեջ ավելի ինքնավստահություն լիներ... («Դե օգնիր ինձ, օգնիր»,— հուսահատաբար մտածում էր Արկադին, բայց Կատյան առաջվա պես գլուխը չէր շրջում)։ Եթե կարողանայի հուսալ...

— Եթե ես կարողանայի հավատալ այն բոլորին, ինչ որ ասում եք,— այդ րոպեին լսվեց Աննա Սերգեևնայի պարզ ձայնը։

Արկադին խկույն լռեց, իսկ Կատյան գույնը գցեց։ Ուղիղ սրահիկը ծածկող թփերի կողքից ճանապարհ էր անցնում։ Աննա Սերգեևնան Բազարովի հետ գնում էր այդ ճանապարհով։ Կատյան ու Արկադին նրանց չէին տեսնում, բայց նրանց ամեն մի խոսքը, շրջազգեստի խշխշոցը, նույնիսկ շնչառությունը լսում էին։ Խոսողները մի քանի քայլ արեցին և հակառակի պես կանգ առան ուղղակի սրահիկի դիմաց։

— Տեսա՞ք,— շարունակեց Աննա Սերգեևնան,— որ երկուսս էլ սխալվեցինք. երկուսս էլ շատ ջահել չենք, մանավանդ ես. մենք արդեն կյանք ենք ունեցել, հոգնել ենք, երկուսս էլ — ի՞նչ կա թաքցնելու — խելոք ենք, սկզբում մենք հետաքրքրվեցինք միմյանցով... իսկ հետո...

— Իսկ հետո ես հոգնեցի,— վրա բերեց Բազարովը։

— Ինքներդ էլ գիտեք, որ մեր տարաձայնության պատճառն այդ չէր։ Ինչ որ է՝ մենք միմյանց կարիքը չունեինք, ահա գլխավոր պատճառը. մեր մեջ խիստ շատ... ինչպես ասեմ... համանման բան կար։ Մենք այդ միանգամից չհասկացանք։ Մինչդեռ Արկադին...

— Դուք կարիք ունե՞ք նրան,— հարցրեց Բազարովը։

— Հերիք է, Եվգենի Վասիլևիչ։ Ասում եք, որ նա անտարբեր չէ դեպի ինձ, և ինձ էլ միշտ այնպես է թվացել, թե նրան ես դուր եմ գալիս։ Գիտեմ, որ ես նրա համար մորաքրոջ տեղ կարող եմ լինել, բայց չեմ ուզում ձեզանից ծածկել, որ սկսել եմ նրա մասին ավելի հաճախ մտածել։ Մի առանձին հրապույր կա այդ նորատի և թարմ զգացմունքի մեջ...

— Հ մ ա յ ք բառը ավելի է գործածական նման դեպքերում,— ընդհատեց Բազարովը. նրա հանդարտ, բայց խուլ ձայնից զգացվում էր, որ մաղձը եռում է նրա մեջ։— Երեկ Արկադին ինչ-որ գաղտնաբանում էր ինձ հետ և ոչինչ չէր ասում ոչ ձեր մասին, ոչ էլ ձեր քրոջ... Դա կարևոր նշան է։

— Նա Կատյայի հետ բոլորովին եղբոր պես է,— խոսեց Աննա Սերգեևնան,— և ես նրա այդ վերաբերմունքը հավանում եմ, թեև գուցե և հարկավոր չէր թույլ տալ, որ նրանք այդքան մտերմանային։

— Ձեր մեջ խոսում է... քույրը, քրոջ զգացմունքը,— ծոր տալով ասաց Բազարովը։

— Իհարկե... բայց ինչո՞ւ ենք մենք կանգնած։ Գնանք։ Ինչ տարօրինակ խոսակցությամբ ենք զբաղված, այնպես չէ՞։ Կարո՞ղ էի սպասել, որ այսպես պիտի խոսեի ձեզ հետ։ Գիտեք, որ ես ձեզանից վախենում եմ... և միևնույն ժամանակ վստահում եմ ձեզ, որովհետև իսկապես դուք շատ բարի եք։

— Նախ որ, ես ամենևին էլ բարի չեմ, երկրորդ՝ որ ես ձեր առաջ բոլոր նշանակությունս կորցրել եմ, և դուք ինձ ասում եք, թե ես բարի եմ... Այդ միևնույնն է, թե մեռելի գլխին ծաղկե պսակ դնեք։

— Եվգենի Վասիլևիչ, մեր ձեռին չէ՞...— ուզում էր սկսել Աննա Սերգեևնան, բայց քամին փչեց, տերևները խշշացրեց և առավ ու տարավ նրա խոսքերը։

— Դուք հո ազա՞տ եք,— ասաց Բազարովը մի քիչ հետո։ Ուրիշ ոչ մի խոսք չէր կարելի որոշել. քայլերը հեռացան... ամեն ինչ լռեց։

Արկադին շուռ եկավ Կատյայի կողմը. Կատյան հենց նույն տեղն էլ նստած էր, միայն թե գլուխը ավելի էր կախել։

— Կատերինա Սերգեևնա,— խոսեց Արկադին դողդոջուն ձայնով,— հավիտյան և անդառնալի սիրում եմ ձեզ, և բացի ձեզանից ոչ ոքի չեմ սիրում։ Ուզում էի ես ձեզ այդ ասել, ձեր կարծիքն իմանալ և խնդրել ձեր ձեռքը, որովհետև ես թե հարուստ չեմ և թե զգում եմ, որ պատրաստ եմ ամեն տեսակ զոհաբերություն անելու... Չե՞ք պատասխանում։ Չե՞ք հավատում ինձ։ Կարծում եք թեթևամտաբար եմ ասում։ Բայց հիշեցեք այս վերջին օրերը։ Մի՞թե վաղուց չեք համոզվել, թե մյուս բոլորը, հասկացեք ինձ, բոլորը, մյուս բոլորը վաղուց է անհետ չքացել։ Նայեցեք ինձ, մի խոսք միայն ասա-

ցեք ինձ... Ես սիրում եմ... ես սիրում եմ ձեզ, հավատացեք ինձ։

Կատյան ծանրախոհ և պայծառ հայացքով նայեց Արկադիին և, երկար մտածելուց հետո, հազիվ ժպտալով, ասաց.

— Այո՛։

Արկադին նստած տեղից վեր թռավ։

— Այո՛։ Դուք ասացիք «այո», Կատերինա Սերգեևնա։ Ի՞նչ է նշանակում այդ խոսքը։ Ա՞յն, թե ես ձեզ սիրում եմ, որ դուք ինձ հավատում եք... թե՞... թե... չեմ համարձակվում ավարտել...

— Այո՛,— կրկնեց Կատյան, և այս անգամ Արկադին նրան հասկացավ։ Նա բռնեց նրա խոշոր, գեղեցիկ ձեռքերը և, հիացմունքից խեղդվելով, սեղմեց իր սրտին։ Նա հազիվ էր կանգնում ոտքի վրա և միայն կրկնում էր. «Կատյա, Կատյա...», իսկ Կատյան մի տեսակ անմեղ, միամիտ լաց եղավ՝ ինքն էլ իր արցունքների վրա ծիծաղելով։ Ով որ իր սիրած էակի աչքին չի տեսել այդպիսի արտասուք, նա դեռ չի զգացել, թե որ աստիճան մարդս կարող է, ամբողջովին երախտագիտությամբ ու ամոթով համակված, երջանիկ լինել աշխարհում։

Մյուս օրը առավոտյան վաղ Աննա Սերգեևնան հրամայեց, որ Բազարովին կանչեն իր առանձնասենյակը, և, ակամա ժպիտը երեսին, նրան տվեց մի ծալած թերթ փոստի թուղթ։ Այդ Արկադիի նամակն էր. դրանով նա խնդրում էր Կատյայի ձեռքը։

Բազարովը իսկույն կարդաց նամակը, և իր վրա ուժ գործադրեց, որպեսզի չարտահայտի այն չարախինդ զգացմունքը, որ վայրկենապես բռնկեց նրա կրծքում։

— Ահա թե ինչ,— ասաց նա,— իսկ դուք, կարծեմ, դեռ երեկ մտածում էիք, թե նա եղբայրական սիրով է սիրում Կատերինա Սերգեևնային։ Այժմ ի՞նչ եք մտադիր անելու։

— Դո՞ւք ինչ խորհուրդ կտաք,— հարցրեց Աննա Սերգեևնան՝ շարունակելով ծիծաղել։

— Կարծում եմ,— պատասխանեց Բազարովը նույնպես ծիծաղելով, նա Աննա Սերգեևնայի նման ոչ ուրախ էր և ոչ էլ ծիծաղն էր գալիս,— կարծում եմ, որ պետք է երիտասարդներին օրհնել։ Ամեն կողմից հաջող ամուսին է. Կիրսանովը լավ կարողություն ունի, նա հոր միանգամայն որդին է, և հայրն էլ լավ մարդ է, չի ընդդիմանա։

Օդինցովան սենյակի մեջ ետ ու առաջ քայլեց։ Նրա դեմքը փոփոխաբար մեկ կարմրում էր, մեկ գունատվում։

— Դուք կարծո՞ւմ եք,— ասաց նա։— Ինչ կա որ, ես արգելք չեմ տեսնում... Ուրախ եմ Կատյայի համար... և Արկադի Նիկոլայիչի համար։ Իհարկե, կսպասեմ հոր պատասխանին։ Հենց իրեն էլ կուղարկեմ հոր մոտ։ Ահա և բանից երևվում է, որ ես իրավացի էի, երբ երեկ ասում էի, թե մենք երկուսս էլ արդեն ծերացել ենք... Ինչպես է, որ ես ոչինչ չեմ նկատել։ Զարմանում եմ։

Աննա Սերգեևնան նորից ծիծաղեց և անմիջապես շուռ եկավ։

— Այժմվա երիտասարդները շատ խորամանկ են դարձել,— նկատեց Բազարովը և նույնպես ծիծաղեց։— Մենք բարյավ,— խոսեց նա դարձյալ, կարճ լռությունից հետո։— Ցանկանում եմ ձեզ ամենահաճելի կերպով ավարտել այդ գործը. իսկ ես հեռվից կուրախանամ։

Օդինցովան շտապով շուռ եկավ դեպի նրա կողմը։

— Մի՞թե գնում եք։ Ինչո՞ւ այժմ դուք չեք ուզում մնալ։ Մնացեք... ձեզ հետ զրույց անելը զվարճալի է... կարծես անդունդի եզրովն ես ման գալիս։ Սկզբում վախվխում ես, բայց հետո վրադ քաջություն է գալիս։ Մնացեք։

— Շնորհակալ եմ ձեր առաջարկության համար, Աննա Սերգեևնա, նույնպես և իմ զրույց անելու տաղանդիս վրա ունեցած լավ կարծիքի համար։ Բայց ես գտնում եմ, որ ես արդեն առանց այդ էլ չափազանց երկար մնացի ինձ համար օտար մթնոլորտում։ Թռչող ձկները միաժամանակ կարող են մնալ օդի մեջ, բայց շուտով պետք է չլմփան ջրի մեջ։ Թույլ տվեք, որ ես էլ չլմփամ իմ տարերքի մեջ։

Օդինցովան նայեց Բազարովին։ Դառն ժպիտը ցնցում էր Բազարովի դեմքը։ «Սա ինձ սիրում էր»,— մտածեց Օդինցովան և խղճաց Բազարովին, և կարեկցաբար ձեռքը մեկնեց նրան։

Սակայն Բազարովն էլ նրան հասկացավ։

— Ոչ,— ասաց նա և մի քայլ ետ քաշվեց։— Թեպետ ես

աղքատ մարդ եմ, բայց դեռ մինչև այժմ ողորմություն չեմ ընդունել։ Մնաք բարյավ։ Ցանկամ առողջություն։

— Համոզված եմ, որ մենք վերջին անգամը չէ, որ տեսնըվում ենք,— ասաց Աննա Սերգեևնան ակամա շարժումով։

— Աշխարհիս երեսին ինչ ասես չի պատահում,— պատասխանեց Բազարովը, գլուխ տվեց և դուրս եկավ։

— Ուրեմն դու որոշել ես քեզ համար բուն հյուսել,— ասում էր նա նույն օրը Արկադիին՝ պպզած նստած իրերը ճամպրուկի մեջ տեղավորելով։— Ինչ կա որ, լավ բան է։ Բայց իզուր էիր ինձանից ծածկում։ Ես քեզանից բոլորովին ուրիշ բան էի սպասում։ Կամ գուցե այդ բանը քեզ է՞լ շշկըլացրեց։

— Իսկապես որ, երբ քեզանից բաժանվում էի, ես դեռ այդ բանը չէի սպասում,— պատասխանեց Արկադին,— բայց ինչո՞ւ ես ինքդ էլ քեզ խաբում՝ ասելով «լավ բան է», կարծես ես չգիտեմ, թե դու ինչ կարծիք ունես ամուսնության մասին։

— Էհ, սիրելի բարեկամ,— ասաց Բազարովը,— այդ ինչ տեսակ ես խոսում։ Տեսնում ես՝ ես ինչ եմ անում. ճամպրուկիս մեջ դատարկ տեղ է մնացել և ես այդ տեղը խոտով եմ լցնում. այդպես նաև մեր կյանքի ճամպրուկում՝ ինչով ուզում ես լցրու, միայն թե դատարկ տեղ չմնա։ Խնդրում եմ, մի նեղանա. դու հավանորեն հիշում ես, թե ինչ կարծիք ունեի ես Կատերինա Սերգեևնայի մասին։ Մի ուրիշ օրիորդ միայն նրա համար է խելոք համարվում, որ խելացի կերպով հառաչել գիտե. բայց քոնը իրեն պաշտպան կկանգնի, և այնպես, որ քեզ էլ իր ձեռների մեջ կհավաքի. էհ, այդպես էլ հարկավոր է։— Նա կափարիչը ծածկեց ու հատակի վրայից վեր կացավ։— Իսկ այժմ հրաժեշտի բոպեին կրկնում եմ... որովհետև խաբվելու կարիք չկա. մենք առմիշտ բաժանվում ենք միմյանցից, և դու էլ ես զգում այդ... Դու խելոք վարվեցիր. դու ստեղծված չես մեր դաուն, անհրապույր, անտուն և սմուրի կյանքի համար։ Քո մեջ ոչ հանդգնություն կա, ոչ էլ շարություն, այլ կա միայն երիտասարդական խիզախություն. այդ մեր գործի համար պիտանի չէ։ Դուք, ազնվականներդ, ազնիվ հեղուությունից կամ ազնիվ եռումից դենը անցնել չեք կարող, իսկ այդ չնչին բան է։ Դուք, օրինակ, չեք

կռվում, բայց արդեն ձեզ կտրիճ եք կարծում։ Իսկ մենք կըռվել ենք ուզում։ Ախր մեր փոշին քո աչքերը կկուրացնի, մեր ցեխը քեզ կկեղտոտի, դու նույնիսկ մեր բարձրությանը չես էլ հասել. դու ակամա զվարճանում ես քեզանով, ինքդ քեզ հայհոյելը քեզ հաճույք է պատճառում. իսկ մեզ համար այդ բանը տաղտկալի է, ուրիշին է հարկավոր հայհոյել, մենք պետք է ուրիշներին կոտրենք։ Դու պատվական երիտասարդ ես. բայց և այնպես թրջված լիբերալ աղա ես՝ վոլատու (այսքան միայն), ինչպես ասում է ծնողս։

— Դու ընդմի՞շտ բաժանվում ես ինձանից, Եվգենի,— տխուր ասաց Արկադին,— և ինձ ասելու ուրիշ խոսք չունե՞ս։

Բազարովը ծոծրակը քորեց։

— Ունեմ, Արկադի, ունեմ. ուրիշ խոսքեր էլ ունեմ ասելու, բայց չեմ ասի, որովհետև այդ ռոմանտիզմ է. այդ նշանակում է բոլորովին մեղկանալ։ Բայց դու շուտով ամուսնացիր ու քեզ համար սեփական բուն դիր ու շատ զավակներ ունեցիր։ Նրանք խելքը գլխին մարդիկ կլինեն արդեն նրա համար, որ ճիշտ ժամանակին ծնված կլինեն, և ոչ թե ինձ ու քեզ նման։ Ըհը, տեսնում եմ ձիերն արդեն պատրաստ են։ Ժամանակն է։ Ամենքին հրաժեշտ տվի... Դե՛հ, համբուրվե՞նք...

Արկադին փաթաթվեց իր նախկին դաստիարակի և ընկերոջ վզին, և արտասուքները թափվեցին նրա աչքերից։

— Ինչ ասել է երիտասարդություն,— հանդարտ արտասանեց Բազարովը։— Բայց ես Կատերինա Սերգեևնայի վրա հույս ունեմ։ Կտեսնես, թե ինչպես ձեռաց կմխիթարի քեզ։

— Մնաս բարով, եղբայր,— ասաց նա Արկադիին՝ բարձրանալով կառքը, և ախոռի կտրանը նստած զույգ ադռավներին ցույց տալով, ավելացրեց,— ահա քեզ։ Ուսումնասիրիր։

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց Արկադին։

— Ի՞նչ։ Մի՞թե դու այդքան թույլ ես բնական պատմությունից կամ մոռացել ես, որ ագռավը ամենապատվավոր ընտանեստեր թռչունն է։ Քեզ օրինակ... Մնաք բարև, սինյոր։

Կառքը դղրդաց ու գնաց։

Բազարովը ճշմարտան ասաց։ Երեկոյան Կատյայի հետ խոսելիս՝ Արկադին բոլորովին մոռացել էր իր դաստիարակին։ Նա արդեն սկսել էր ենթարկվել Կատյայի ազդեցու-

թյան, և սա այդ զգում էր, և չէր զարմանում։ Մյուս օրը Արկադին Մարյինո պիտի գնար Նիկոլայ Պետրովիչի մոտ։ Աննա Սերգեևնան չէր ուզում երիտասարդներին խանգարել, և միմիայն վայելչության համար նրանց խիստ երկար չէր թողնում մենակ։ Նա մեծահոգությամբ նրանցից հեռացրեց իշխանուհուն, որը առաջիկա ամուսնության լուրն իմանալով կատաղության արցունք էր թափում։ Սկզբում Աննա Սերգեևնան վախենում էր, թե միգուցե նրանց երջանկության տեսարանը իր համար մի քիչ ծանր թվա, մինչդեռ բոլորովին հակառակը եղավ. այդ տեսարանը ոչ միայն ծանր չթվաց, այլև նրան զբաղեցնում էր, դա նրան խանդաղատեցնում էր վերջապես։ Աննա Սերգեևնային այդ բանը թե ուրախացնում էր և թե տրտմեցնում։ «Ինչպես երևում է իրավացի էր Բազարովի ասածը,— մտածեց նա,— հետաքրքրություն, լոկ հետաքրքրություն և սեր դեպի հանգիստը, ու եսասիրություն...»։

— Երեխաներ,— ասաց նա բարձրաձայն,— հը՞, սերը արհեստակա՞ն զգացմունք է։

Բայց ոչ Կատյան և ոչ էլ Արկադին նրան նույնիսկ չհասկացան։ Նրանք խույս էին տալիս նրանից. նրանց մտքից չէր հեռանում այն խոսակցությունը, որ ակամա լսել էին։ Աննա Սերգեևնան շուտով նրանց հանգստացրեց, և այդ անելը մի դժվար բան չէր. նա ինքն իրեն հանգստացավ։

XXVII

Ինչքան ծերունի Բազարովները քիչ էին սպասում իրենց որդու գալուն, այնքան ավելի եղավ նրանց ուրախությունը նրա անակնկալ վերադարձի համար։ Արինա Վլասևնան այնքան վեր ու վարի մեջ եղավ, այնքան դես ու դեն ընկավ տան մեջ, որ Վասիլի Իվանովիչը նրան «կաքավահավի» նմանեցրեց. ճիշտ որ, նրա կարճլիկ կոֆտայի պոչիկը նրան մի տեսակ թռչնի տեսք էր տալիս։ Մինչդեռ ինքը, Վասիլի Իվանովիչը մռնչում էր միայն ու ծխամորճի սաթը բերանի մեջ մի կողմ առած կծոտում, մեկ էլ՝ ձեռքով բռնելով վիզը, գլուխը պտտում էր, ասես թե ուզում էր փորձել, նա պի՞նդ էր

ամրացրած, և հանկարծ լայն բաց էր անում բերանը և առանց ձայն հանելու քրքջում։

— Ամբողջ վեց շաբաթ ժամանակով եմ եկել քեզ մոտ, ծերուկ,— ասաց նրան Բազարովը,— ուզում եմ պարապել, տե՛ս, դու ինձ չխանգարես, խնդրում եմ։

— Այնպես կխանգարեմ քեզ, որ կերպարանքս էլ կմոռանաս,— պատասխանեց Վասիլի Իվանովիչը։

Նա իր խոստումը կատարեց։ Որդուն դարձյալ իր առանձնասենյակում տեղավորելով, նա ոչ միայն թաքնվում էր նրանից, այլ կնոջն էլ զսպում էր, որ ավելորդ քնքշության զգացմունքներ չարտահայտի։ «Մենք, մերս,— ասում էր կնոջը,— Ենյուշկայի առաջին գալստյանը մի փոքր ձանձրացրինք, պետք է այժմ ավելի խելոք լինել»։ Արինա Վլասևնան համաձայնում էր ամուսնուն, բայց դրանից շատ բան չէր շահում, որովհետև նա որդուն միայն ճաշի միջոցին էր տեսնում և բոլորովին վախենում էր հետը բերան բաց անել, խոսել։ Երբեմն սկսում էր. «Ենյուշենկա,— ու դեռ Բազարովը հազիվ էր շուռ գալիս դեպի մայրը, նա արդեն ժողովում էր իր ռեդիկյուլի կապերն ու թոթովում,— ոչինչ, ոչինչ, բան չկա», իսկ հետո կգնար Վասիլի Իվանովիչի մոտ ու, երեսը ձեռքին հենած, կասեր. «Հոգիս, ինչպես անենք, որ իմանանք, թե Ենյուշան այսօր ճաշին ի՞նչ է ուզում, բո՞րշչ թե շչի»։ «Ինչի՞ չէիր ինքդ հարցնում իրեն»։ «Հապա որ զահլան տանե՞մ»։ Սակայն շուտով Բազարովն ինքը դադարեց սենյակում փակվելուց, աշխատելու տենդն անցավ և տեղի տվեց թախծալի տաղտկության ու խուլ անհանգստության։ Տարօրինակ հոգնածություն էր նկատվում նրա բոլոր շարժումների մեջ. մինչև անգամ նրա հաստատուն ու փութաջան քայլվածքը փոխվեց։ Նա դադարեց մենակ զբոսնելուց և սկսեց հասարակություն փնտրել. թեյը ընդունարանում էր խմում, Վասիլի Իվանովիչի հետ բանջարանոցում զբոսնում ու լուռ ու մունջ ծխում էր նրա հետ. մի անգամ էլ հայր Ալեքսեյի մասին հարցրեց։ Վասիլի Իվանովիչը սկզբում ուրախացավ այս փոփոխությանը, բայց նրա ուրախությունը երկար չտևեց։ «Ենյուշան աչքս վախեցնում է,— ծածուկ գանգատվում էր նա կնոջը,— չէ թե նա դժգոհ է կամ զայրացած, եթե այդ լիներ՝ ոչինչ. վշտացած է, տխուր է. ահա ինչն է սարսափելին։ Շարունակ լուռ

է, գոնե ինձ ու քեզ վրա բարկանար. նիհարում է, երեսի գույնն էլ այնպես վատ է»։ «Տեր աստված,— շշնջում էր պառավը,— վիզը համայիլ կկախեի, բայց գիտեմ, չի թողնի»։ Վասիլի Իվանովիչը մի քանի անգամ փորձեց շատ զգույշ կերպով Բազարովին հարց ու փորձ անել նրա պարապմունքի, առողջության, Արկադիի մասին... Բայց Բազարովը պատասխանում էր նրան տհաճությամբ ու անփույթ, և մի անգամ էլ, նկատելով, որ հայրը խոսակցության մեջ քիչ-քիչ աշխատում է բան իմանալ, սրտնեղած ասաց.

— Ինչ ես շարունակ շորս կողմս՝ ասես մատներիդ ծայրերի վրա պտույտ-պտույտ անում։ Այդ ձևերդ առաջվանից էլ վատթար է։

— Դե լա՛վ, լա՛վ, բան չկա,— շտապով պատասխանեց խեղճ Վասիլի Իվանովիչը։

Նույնպես անհետևանք մնացին նրա քաղաքական ակնարկները։ Մի անգամ խոսք բանալով գյուղացիների մոտալուտ ազատագրության և առաջադիմության մասին, նա հույս ուներ որդու համակրությունը զարթեցնել, սակայն նա անտարբերությամբ ասաց.

— Երեկ անցնում էի ցանկապատի մոտով, լսեցի, որ այստեղի գյուղական մանուկները՝ փոխանակ մի որևէ հին երգ ասելու, գոռում են՝ «Հաստատ ժամանակը գալիս է. հոգիս սիրո է ծարավ...». ահա քեզ առաջադիմություն։

Երբեմն Բազարովը գնում էր գյուղ և մի որևէ գյուղացու հետ սկսում, ըստ իր սովորության, ծաղրանքով զրույց անել։ «Դե՛հ, ախպերս,— ասում էր նա,— կյանքի մասին քո աշխարհայեցողությունդ բացատրիր ինձ. ախր, ասում են, թե դուք եք Ռուսաստանի ամբողջ ապագան և ուժը, պատմության մեջ ձեզանով է նոր դարաշրջան սկսվելու, դուք եք տալու մեզ իսկական լեզու և թե օրենքներ»։ Գյուղացին կամ ոչինչ չէր պատասխանում կամ մոտավորապես ասում էր այսպիսի խոսքեր. «Մենք կարանք... որ, ինչքան հող ա մեզ բաժին ընկել»։ «Դու ինձ հասկացրու, թե ինչ բան է ձեր համայնքը,— ընդհատում էր Բազարովը նրա խոսքը,— դա հա

այն աշխարհը չէ՞, որ երեք ձկների վրա է հաստատված»[1]։

— Էդ, աղա, աշխարհքն է երեք ձկների վրա,— հանգստացուցիչ եղանակով, նահապետական բարեհոգությամբ բացատրում էր գյուղացին ծոր տալով,— իսկ մեր աշխարհի, այսինքն համայնքի դեմ, հայտնի բան է, աղեքի կամքն է. որովհետև դուք մեր հայրն եք։ Քանի աղեն խստապահանջ լինի, էնքան գյուղացուն սիրելի կլինի։

Այսպիսի խոսքեր լսելով, Բազարովը մի անգամ արհամարհանքով ուսերը վեր քաշեց ու շուռ եկավ, իսկ գյուղացին իր ճամփան շարունակեց։

— Էդ ինչի՞ մասին էր խոսում,— հարցրեց նրան մի ուրիշ, միջին տարիքի ու խոժոռ դեմքով գյուղացի, որ հեռու, իր խրճիթի շեմքին կանգնած՝ նկատել էր նրանց խոսակցությունը։— Ապառիկների մասին հո չէ՞ր։

— Ինչ ապառիկների մասին, ինչ բան,— պատասխանեց առաջին գյուղացին, և նրա ձայնի մեջ նահապետական արտահայտության հետքն անգամ չկար, ընդհակառակն, արհամարհոտ դաժանություն էր զգացվում։— Հենց էնպես, ինչ-որ դուրս էր տալիս. լեզուն քոր էր գալիս։ Հայտնի բան է, աղա է չէ՞, նրա խելքը մի բան կտրում է։

— Ինչ պիտի հասկանա,— պատասխանում էր մի ուրիշ գյուղացի, և գլխարկները թափ տալով ու գոտու ծայրերը հավաքելով, երկուսն էլ սկսեցին իրենց գործերի ու կարիքների մասին խոսել։ Ավա՜ղ։ Ուսերն արհամարհանքով վեր քաշող, գյուղացիների հետ խոսել իմացող Բազարովը (ինչպես որ պարծենում էր նա Պավել Պետրովիչի հետ վիճելիս), այդ ինքնավստահ Բազարովը չէր էլ կարծում, որ գյուղացիների աչքում ինքը այնուամենայնիվ ծաղրածուի պես մի բան էր...

Ասենք, վերջապես նա իր համար զբաղմունք գտավ։ Մի անգամ Վասիլի Իվանովիչը նրա ներկայությամբ կապում էր մի գյուղացու վիրավոր ոտքը, բայց ծերունու ձեռները դողդողում էին, և նա չէր կարողանում վիրակապը կարգին փաթաթել, որդին օգնեց, և այդ օրվանից սկսեց մասնակցել հոր բժշկության գործին, և միևնույն ժամանակ շաբունակե-

[1] Ռուսերեն мир նշանակում է աշխարհ և համայնք։ Ծ. Բ.։

լով ծաղրել այն դարմանելու միջոցները, որ ինքն էր խորհուրդ տալիս գործածել, և հորը, որ անմիջապես գործ էր դնում այդ։ Բայց Վասիլի Իվանովիչին ամենևին չէին շփոթեցնում Բազարովի ծաղրուծանակները, այլ մինչև անգամ մխիթարում էին նրան։ Յուղոտած գիշերազգեստը երկու մատով փորի վրա բռնած ու ծխամորճը ծխելով, նա բավականությամբ լսում էր Բազարովին, և որքան ավելի շարություն կար նրա խոսքերի մեջ, այնքան ավելի էր բարեսրտորեն քրքջում, երևան բերելով իր բոլոր, մինչև վերջին սևացած ատամները։ Նա մինչև անգամ կրկնում էր որդու այդ՝ երբեմն տափակ կամ անիմաստ խոսքերը և, օրինակ, մի քանի օր շարունակ, տեղի թե անտեղի կրկնում էր. «Դե՛, այդ իններորդ բան է», միմիայն այն պատճառով, որ որդին՝ իմանալով, որ նա առավոտյան ժամ էր գնացել, այդ դարձվածքն էր գործածել։ «Փառք աստուծո, թախիծն անցավ,— կրկնում էր նա իր ամուսնուն,— այսօր ինչպես ինձ շշպռեց, տեսնելու բան էր»։ Եվ այն միտքը, թե մի այսպիսի օգնական ուներ, բերկրությամբ և հպարտությամբ էր լցնում նրան։ «Այո՛, այո՛,— ասում էր նա տղամարդի կապա հագած ու պոչավոր գլխանոցով մի որևէ գեղջկուհու՝ գուլյարդի ջրով շիշը կամ քսելու յուղի սրվակը տալով,— դու, սիրելիս, պետք է ամեն մի բոպե աստծուն փառք տաս, որ որդիս այստեղ հյուր է ինձ մոտ. այժմ քեզ ամենագիտական ու նորագույն միջոցով են բժշկում, հասկանո՞ւմ ես դու այդ։ Ֆրանսիացոց կայսրը, Նապոլեոնը, մինչև անգամ նա էլ սրանից լավ բժիշկ չունի»։ Իսկ գեղջկուհին, որ եկել էր հայտնելու, թե «ծակոց է սկսվել» (թեպետ այս խոսքերի իմաստը նա ինքն էլ չէր կարող բացատրել), միայն գլուխ էր տալիս ու ձեռքը թևատակը տանում, ուր նա երեսսրբիչի ծայրին կապած չորս ձու էր բերել։

Բազարովը մի անգամ նույնիսկ ճոթավաճառ փերեզակի ատամը հանեց, և թեպետ այդ ատամը սովորական ատամներից էր, բայց Վասիլի Իվանովիչը իբրև հազվագյուտ բան պահեց այդ և, տեր Ալեքսեյին ցույց տալով, շարունակ կրկնում էր.

— Մի մտիկ արեք, թե ինչ տեսակ արմատներ ունի։ Ինչ ուժ է ունեցել Եվգենին։ Խեղճ փերեզակը տեղից վեր թռավ... Հավատա, կաղնի որ լիներ, այն էլ արմատով դուրս կգար...

— Գովելի է,— խոսեց վերջապես տեր Ալեքսեյը, որ չգիտեր, թե ինչ ասի և ինչպես ազատվի ոգևորությամբ գրգռված ծերունու ձեռքից։

Մի անգամ հարևան գյուղից մի գյուղացի տիֆով հիվանդ իր եղբորը բերեց Վասիլի Իվանովիչի մոտ. խեղճը հարդի վրա երեսն ի վար մեռնում էր. սև բծերը ծածկել էին նրա ամբողջ մարմինը. նա վաղուց էր գիտակցությունը կորցրել։ Վասիլի Իվանովիչը ցավ հայտնեց, որ ոչ ոք միտք չէր արել մի քիչ շուտ դիմելու բժշկության օգնության, և հայտնեց, որ փրկություն չկա։ Հիրավի գյուղացին չկարողացավ եղբորը տուն հասցնել։ Նա այնպես էլ սայլակի մեջ մեռավ։

Երեք օր անց, Բազարովը մտավ հոր սենյակը և հարցրեց, թե, արդյոք, դժոխաքար[1] չունի՞։

— Ունեմ, ինչի՞ դ է պետք։

— Պետք է... վերք այրելու համար։

— Ո՞ւմ վերքը։

— Իմ։

— Ինչպես թե քո։ Ինչո՞ւ համար։ Ի՞նչ վերք է։ Ո՞ւր է։

— Ահա այստեղ, մատիս վրա։ Այսօր գնացել էի այն գյուղը, որտեղից տիֆով հիվանդին բերել էին։ Չգիտեմ ինչու նրանք պատրաստվում են հանգուցյալի մարմինը դիահատել. իսկ ես վաղուց է, որ այդ բանում չեմ վարժվում։

— Հետո՞։

— Հետո այն, որ ես գավառական բժշկին խնդրեցի ինքս անեմ ու մատս կտրեցի։

Վասիլի Իվանովիչը հանկարծ բոլորովին գունատվեց և առանց մի խոսք ասելու, վազեց առանձնասենյակ և անմիջապես վերադարձավ դժոխաքարի կտորը ձեռին։ Բազարովն ուզում էր քարը վերցնել ու գնալ։

— Ի սեր աստուծո,— աղաչական ձայնով ասաց Վասիլի Իվանովիչը,— թող ես ինքս անեմ։

Բազարովը քմծիծաղեց։

— Ինչ սեր ես ունեցել բժշկություն անելու։

---

[1] Դժոխաքարը լյապիսն է, որը գործ են ածում բժշկության մեջ՝ վերքերը վարակաղերծ անելու նպատակով։

— Հանաք մի անի, ի՞նչ աստուծո։ Ցույց տուր մատդ։ Վերքը մեծ չէ։ Չի՞ ցավում։

— Հուպ տուր, մի վախի։

Վասիլի Իվանովիչը կանգ առավ։

— Ի՞նչ ես կարծում, Եվգենի, ավելի լավ չէ՞ր երկաթով այրենք։

— Այդ առաջ պետք էր անել. իսկ այժմ, իսկապես, դժոխաքարն էլ ավելորդ է։ Եթե վարակվել եմ, ուրեմն արդեն ուշ է։

— Ինչպես թե... ուշ է.. — հազիվ կարողացավ արտասանել Վասիլի Իվանովիչը։

— Իհարկե, արդեն չորս ժամից ավելի է անցել։

Վասիլի Իվանովիչը վերքը մի քիչ էլ այրեց։

— Բայց մի՞թե գավառական բժշկի մոտ դժոխաքար չկար։

— Չկար։

— Այս ի՞նչ բան է, տեր աստված։ Բժիշկ է և մի այդպիսի անհրաժեշտ բան չունի։

— Դու մի նրա նշտարները տեսնեիր,— ասաց Բազարովը ու սենյակից դուրս եկավ։

Մինչև իրիկուն և ամբողջ մյուս օրը Վասիլի Իվանովիչը ամեն տեսակ հնարավոր առիթներ էր գտնում որդու սենյակը մտնելու համար և թեպետ նա ոչ միայն նրա վերքի անունը չէր տալիս, այլև աշխատում էր բոլորովին կողմնակի նյութերի մասին խոսել, այնուամենայնիվ այնպիսի համառությամբ էր նայում որդու աչքերին և այնպիսի անհանգստությամբ էր հետևում նրան, որ Բազարովի համբերությունը կտրվեց, և նա սպառնաց, որ կգնա։ Վասիլի Իվանովիչը նրան խոսք տվեց, որ անհանգիստ չի անի, մանավանդ որ Արինա Վլասևնան էլ, որից նա, իհարկե, ամեն բան ծածուկ էր պահել, սկսել էր շարունակ հարց ու փորձ անել, թե ինչի՞ չի քնում, ի՞նչ է եղել նրան։ Ամբողջ երկու օր նա դիմանում էր, թեև որդու տեսքը, որի վրա թաքուն շարունակ դիտում էր, նրան դուր չէր գալիս. բայց երկրորդ օրը ճաշին էլ չհամբերեց։ Բազարովը գլուխը կախ գցած նստել էր և ոչ մի կերակրի ձեռք չէր տալիս։

— Ինչո՞ւ բան չես ուտում, Եվգենի,— հարցրեց նա դեմ-

քին բոլորովին անհոգ արտահայտություն տալով։— Կարծես կերակուրը լավ է պատրաստված։

— Չեմ ուզում, դրա համար էլ չեմ ուտում։

— Ախորժա՞կ չունես։ Իսկ գլո՞ւխդ,— ավելացրեց նա վեհերկոտ ձայնով,— ցավո՞ւմ է։

— Ցավում է. ինչո՞ւ չպիտի ցավի որ։

Արինա Վլասևնան ուղղվեց ու ականջը սրեց։

— Խնդրեմ չնեղանաս, Եվգենի,— շարունակեց Վասիլի Իվանովիչը,— թույլ տուր մի զարկերակդ նայեմ։

Բազարովը տեղից վեր կացավ։

— Ես առանց նայելուդ էլ կասեմ, որ տաքություն ունեմ։

— Դող է՞լ ունեիր։

— Դող էլ ունեի։ Գնամ պառկեմ. իսկ դուք ինձ լորենու ծաղկի թեյ ուղարկեցեք։ Երևի մրսել եմ։

— Գիտեմ, ախր, այս գիշեր հազում էիր,— ասաց Արինա Վլասևնան։

— Մրսել եմ,— ասաց Բազարովը և հեռացավ։

Արինա Վլասևնան սկսեց լորենու ծաղկից թեյ պատրաստելով զբաղվել, իսկ Վասիլի Իվանովիչը մտավ կողքի սենյակը ու անձայն բռնեց գլխի մազերը։

Այդ օրը Բազարովը տեղից էլ չվերկացավ, և ամբողջ գիշերը ծանր, կես մոռացության մեջ ընկած նիրհով անցկացրեց։ Գիշերը ժամը մեկին դժվարությամբ բաց արեց աչքերը, կանթեղի լույսով իր առաջ տեսավ հոր դժգույն դեմքը և պատվիրեց, որ հեռանա. հայրը հնազանդվեց, բայց անմիջապես էլ ոտքի ծայրերով ներս մտավ և, կիսով չափ պահարանի դռնակների հետևը թաք կացած, անընդհատ որդուն էր նայում։ Արինա Վլասևնան էլ պառկած չէր և, առանձնասենյակի դուռը հազիվ բաց արած, անդադար մոտենում էր ականջ դնելու, «թե ինչպես է շունչ քաշում Ենյուշան», ու Վասիլի Իվանովիչին նայելու։ Նա իր ամուսնու միայն անշարժ, կորացած մեջքն էր տեսնում, բայց հենց այդքանն էլ նրան մի քիչ թեթևություն էր պատճառում։ Առավոտյան Բազարովը փորձեց վեր կենալ. գլուխը պտույտ եկավ, քթից արյուն գնաց. նորից պառկեց։ Վասիլի Իվանովիչը լուռ ու մունջ ծառայում էր նրան։ Արինա Վլասևնան ներս մտավ ու հարցրեց, թե ինչպե՞ս է զգում իրեն, Բազարովը պատաս-

խանեց՝ «Մի քիչ լավ եմ» և շուտ եկավ դեպի պատը։ Վասիլի Իվանովիչը երկու ձեռքը թափ տվեց կնոջ կողմը, թե գնա. սա շրթունքը կծեց, որպեսզի լաց չլինի, ու դուրս գնաց։ Կարծես թե տան մեջ հանկարծ ամեն ինչ մթնեց, բոլորի դեմքերն էլ ձգվեցին, տարօրինակ լռություն տիրեց. բակից դեպի գյուղ տարան մի ձայնեղ աքլոր, որը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ էին իր հետ այդպես վարվում։ Բազարովը դեմքը պատին պառկած էր դեռ։ Վասիլի Իվանովիչն ուզեց զանազան հարցերով դիմել նրան։ Բայց այդ հարցերը Բազարովին հոգնեցնում էին, և ծերունին բազկաթոռի մեջ մնաց արձանացած. միայն երբեմն մատներն էր կոտրատում։ Նա մի քանի րոպեով միայն գնում էր պարտեզ, կանգնում էր այնտեղ արձանի նման, ասես աննկարագրելի ապշությամբ բռնված (առհասարակ ապշության արտահայտությունը նրա դեմքից չէր հեռանում) և նորից որդու մոտն էր վերադառնում, աշխատելով խույս տալ կնոջ հարց ու փորձերից։ Կինը վերջապես բռնեց նրա ձեռքից և ջղաձգաբար, համարյա սպառնալով ասաց.

— Դե ասա, ի՞նչ է պատահել նրան։

Այստեղ միայն գլխի ընկավ և, ի պատասխան նրա տված հարցին, հարկադրեց իրեն ժպտալու. բայց ինքն էլ սարսափեց, երբ ժպտալու փոխարեն ինչ-որ մի տեղից ծիծաղ դուրս պրծավ։ Նա առավոտվանից բժշկի հետևից մարդ էր ուղարկել։ Նա կարևոր համարեց այդ բանի մասին նախապես հայտնել որդուն, որպեսզի չլինի թե նեղանա։

Բազարովը գահավորակի վրա հանկարծ շուռ եկավ, աչքերը սևեռած ու բութ հայացքով մտիկ տվեց հորն ու ջուր ուզեց։

Վասիլի Իվանովիչը ջուր տվեց նրան և ի դեպ ճակատն էլ շոշափեց։ Ճակատն այրվում էր։

— Ներուկ,— ասաց Բազարովը խռպոտ ու դանդաղ ձայնով,— բանս բուրդ է։ Ես վարակվել եմ, և մի քանի օրից հետո դու ինձ կթաղես։

Վասիլի Իվանովիչը օրորվեց, ասես թե մեկը ոտներին խփեց։

— Եվգենի,— թոթովեց նա,— այդ ի՞նչ ես ասում... տեր քեզ։ Դու մրսել ես...

— Բավական է,— առանց շտապելու ընդհատեց նրան Բազարովը։— Բժշկին ներելի չէ այդպես խոսել։ Վարակման բոլոր նշաններն էլ կան, ինքդ էլ գիտես։

— Ո՞ւր է... վարակման նշանը, Եվգենի... ի սեր աստծո։

— Հապա սա ի՞նչ է,— ասաց Բազարովը և, շապկի թևը բարձրացնելով, ցույց տվեց հորը մարմնի վրա դուրս տված շարագուշակ կարմիր բծերը։

Վասիլի Իվանովիչը ցնցվեց և ահից սառեց։

— Ասենք,— խոսեց նա վերջապես,— ասենք, եթե... եթե մինչև իսկ... այդպիսի մի բան... վարակումն...

— Պիեմիա[1],— հիշեցրեց որդին։

— Այո... մի տեսակ... համաճարակի նման...

— Պիեմիայի,— խիստ ու որոշակի կրկնեց Բազարովը,— չլինի՞ արդեն տետրակներդ մոռացել ես։

— Հա, հա, իհարկե, թող քու ասածը լինի... Եվ այնուամենայնիվ կրժշկենք քեզ։

— Դրանք դատարկ խոսքեր են։ Բայց բանը այդ չէ։ Ես չէի սպասում, թե այսպես շուտ կմեռնեմ. սա, ճիշտն ասած, մի շատ անախորժ պատահականություն է։ Այժմ դուք մայրիկի հետ պիտի աշխատեք օգուտ քաղել այն բանից, որ ձեր մեջ կրոնը ուժեղ է, ահավասիկ հավատքը փորձի ենթարկելու առիթ։— Նա մի քիչ էլ ջուր խմեց։— Իսկ ես ուզում եմ քեզնից մի բան խնդրել... քանի դեռ գլուխս իմ իշխանության տակ է։ Գիտես, որ վաղը կամ մյուս օրը ուղեղս հրաժարական կտա։ Այժմ էլ ես բոլորովին վստահ չեմ, թե մտքերս պարզ եմ հայտնում, թե ոչ։ Մինչ պառկած էի, ինձ թվում էր, թե շուրջս կարմիր շներ են վազվզում, իսկ դու իմ գլխի վերև փայտմորիկ տեսած որսի շան նման՝ մնացել էիր կանգնած։ Կարծես հարբած լինեմ։ Լա՞վ ես ինձ հասկանում։

— Ինչեր ես ասում, Եվգենի, դու խոսում ես բոլորովին այնպես, ինչպես հարկն է։

[1] Պիեմիա — արյան վարակում (ճուճ.)։

— Ավելի լավ։ Դու ինձ ասացիր, որ ուղարկել ես բժշկի հետևից... Դրանով դու քեզ մխիթարեցիր... Ի՞նձ էլ մխիթարիր. մարդ ուղարկիր...

— Արկադի Նիկոլայիչի՞ն,— վրա բերեց ծերունին։

— Ո՞վ է Արկադի Նիկոլայիչը,— ասաց Բազարովը մտախոհ...— Ախ, հա. այդ ձագը։ Ոչ, նրան ձեռք մի տաք. նա այժմ ագռավ է դարձել։ Մի զարմանար. սա դեռևս զառանցանք չէ։ Դու մարդ ուղարկիր Օդինցովայի մոտ, Աննա Սերգեևնայի, այստեղ կա մի այդպիսի կալվածատեր կին... Ճանաչո՞ւմ ես։— (Վասիլի Իվանովիչը գլխով արեց)։— Կասես. Եվգենի Բազարովը բարև է անում ու ասում, որ մեռնում է։ Դու այդ կանե՞ս։

— Կանեմ... Բայց մի՞թե կարելի բան է, որ դու մեռնես, դու, Եվգենի... Ինքդ դատիր։ Դրանից հետո էլ ո՞ւր մնաց արդարությունը։

— Ես այդ չգիտեմ, միայն թե դու մարդ ուղարկիր։

— Այս րոպեիս կուղարկեմ, ինքս էլ նամակ կգրեմ։

— Ոչ, ի՞նչ կարիք կա... միայն թող ասի, թե բարև էր անում, ուրիշ ոչինչ չի հարկավոր։ Իսկ այժմ ես դարձյալ դեպի իմ շները դառնամ։ Զարմանալի բան է. ուզում եմ միտքս կանգնեցնել մահվան վրա, բայց բան չի դուրս գալիս։ Տեսնում եմ մի ինչ-որ բիծ... և ուրիշ ոչինչ։

Նա դարձյալ ծանրությամբ շուռ եկավ դեպի պատը. իսկ Վասիլի Իվանովիչը դուրս եկավ առանձնասենյակից և, կնոջ ննջարանին հասնելով, հենց ծնկան վրա վեր ընկավ սրբապատկերների առաջ։

— Աղոթիր, Արինա, աղոթիր,— հեկեկաց նա,— մեր որդին մեռնում է։

Բժիշկը, հենց այն գավառական բժիշկը, որի մոտ դժոխաքար չէր գտնվել, եկավ և, հիվանդին քննելով, խորհուրդ տվեց սպասողական եղանակի հետևել, և իսկույն էլ մի քանի խոսք ասաց առողջանալու կարելիության մասին։

— Իսկ դուք տեսած կա՞ք, որ իմ դրության մարդիկ Ելիսյան... գնացած չլինեն,— հարցրեց Բազարովը և հանկարծ բռնեց գահավորակի կողքին դրված ծանր սեղանի ոտքից, ցնցեց ու տեղից շարժեց։

— Ուժս, բոլոր ուժս դեռ տեղն է, բայց մեռնելու եմ...

Ցեր մարդը որ մեռնի, գոնե կյանքից կշտացած կմեռնի, իսկ ես... Դե գնա ու փորձիր ժխտել մահը։ Նա է քեզ ժխտում. պրծավ գնաց։ Այդ ո՞վ է այդտեղ լաց լինում,— ավելացրեց նա քիչ հետո։— Մայրս է։ Խեղճ։ Էլ ո՞ւմ է այսուհետև իր զարմանալի բորշչով կերակրելու։ Իսկ դո՞ւ, Վասիլի Իվանովիչ, կարծես նույնպես լաց ես լինում։ Դե, եթե քրիստոնեությունը չի օգնում, գոնե եղիր փիլիսոփա, ստոյիկ։ Չէ՞ որ պարծենում էիր, որ դու փիլիսոփա ես։

— Ես ինչ փիլիսոփա եմ,— հեկեկաց Վասիլի Իվանովիչն, ու արտասուքի կաթիլները գլորվեցին նրա երեսով։

Ժամ-ժամի Բազարովի դրությունը վատթարանում էր. հիվանդությունն արագ ընթացք ստացավ, որ սովորաբար պատահում է վիրահատական թունավորումների միջոցին։ Նա դեռ հիշողությունը չէր կորցրել և ինչ որ ասում էին՝ հասկանում էր։ Նա դեռ մաքառում էր։ «Չեմ ուզում զառանցել,— շշնջում էր նա բառերը սեղմելով,— ինչ հիմարություն»։ Եվ իսկույն էլ ասում էր. «Հը՛, ուրիշ տասը հաննենք, քանի՞ կմնա»։ Վասիլի Իվանովիչը գնում-գալիս էր գժվածի նման, մեկ այս միջոցն առաջարկելով, մեկ՝ մյուսը, և շարունակ որդու ոտքերն էր ծածկում միայն։ «Սառը սավանի մեջ փաթաթել... սիրտ թափելու դեղ... փորին մանանեխ կպցնել... արյուն առնել»,— ասում էր նա լարված դրությամբ։ Բժիշկը, որին նա աղաչում էր մնալ, համաձայնում էր նրա ասածներին, հիվանդին լիմոնադ էր խմեցնում, իսկ իրեն համար էլ մերթ ծխամորճ էր ուզում, մերթ «ամրապնդող, ջերմացնող» բան, այսինքն՝ օղի։ Արինա Վլասևնան նստել էր դռան կողքի ցածլիկ աթոռի վրա և միայն ժամանակ առ ժամանակ աղոթելու համար էր դուրս գնում։ Մի քանի օր առաջ նրա ձեռքից ընկել էր ու կոտրվել արդուզարդի հայելին, իսկ այս բանը նա միշտ վատ նշան էր համարում։ Ինքը Անֆիսուշկան բան չէր գտնում նրան ասելու։ Տիմոֆեիչը գնացել էր Ոդինցովային իմաց տալու։

Դիշերը Բազարովի համար վատ անցավ... Սաստիկ տաքությունը նրան տանջում էր։ Առավոտյան դեմ մի քիչ թեթևություն զգաց։ Նա խնդրեց, որ Արինա Վլասևնան իր մազերը սանրի, համբուրեց նրա ձեռքը, և մի երկու ումպ թեյ խմեց։ Վասիլի Իվանովիչը մի քիչ կենդանացավ։

— Փառք աստծո,— ասում էր նա,— ճգնաժամը սկսվեց... ճգնաժամն անցավ։

— Դու էլ բան գտար,— ասաց Բազարովը,— այդ ինչ խոսք է. ճգնաժամ։ Գտար նրան, ասացիր, ճգնաժամ, և արդեն մխիթարված ես։ Զարմանալի բան է. մարդը դեռ հավատում է բառերին։ Նրան, օրինակ, ասում են հիմար ու չեն ծեծում, նա տխրում է։ Բայց եթե նրան խելոք ասեն ու փող էլ չտան, նա բավականություն կզգա։

Բազարովի այս փոքրիկ ճառը, որ հիշեցնում էր նրա նախկին կծու «ելույթները», հիացրեց Վասիլի Իվանովիչին։

— Ապրես. հրաշալի է ասված, հրաշալի,— բացականչեց նա ու այնպես ձևացրեց, թե ծափահարում է։

Բազարովը տխուր քմծիծաղեց։

— Հը, ինչպե՞ս է ուրեմն. քո կարծիքով ճգնաժամն անցա՞վ, թե՞ սկսվել է։

— Հիմա դու ավելի լավ ես. ահա թե ինչ եմ ես տեսնում։ Ահա թե ինչն է ինձ ուրախացնում,— պատասխանեց Վասիլի Իվանովիչը։

— Դե, ուրեմն, շատ լավ։ Ուրախանալը երբեք վատ չէ։ Իսկ նրա մոտ, հիշո՞ւմ ես, ուղարկեցի՞ր։

— Ինչպես չէ, ուղարկեցի։

Հիվանդի դրության փոխվելը շարունակվեց ոչ երկար։ Հիվանդության նոպաները կրկնվեցին։ Վասիլի Իվանովիչը նստած էր որդու կողքին։ Ասես մի առանձին տանջանք շարչարում էր ծերունուն. նա մի քանի անգամ ուզեց խոսել, բայց չկարողացավ։

— Եվգենի,— ասաց նա վերջապես,— որդյակս, իմ անգին, սիրելի զավակս։

Այս արտասովոր կոչը ներգործեց Բազարովի վրա... Նա գլուխը փոքր-ինչ շուռ տվեց և, ըստ երևույթին, իրեն ճնշող մոռացության լուծից ազատվելու ջանք գործ դնելով՝ ասաց.

— Ի՞նչ է, հայր իմ։

— Եվգենի,— շարունակեց Վասիլի Իվանովիչը և Բազարովի առաջ ծունկ չոքեց, թեև Բազարովն աչքը չէր բաց արել, չէր կարող նրան տեսնել.— Եվգենի, դու այժմ ավելի լավ ես. աստված կտա կառողջանաս. բայց օգուտ քաղիր այս միջոցից, ինձ ու մորդ մխիթարիր, քրիստոնեական պարտքդ կատարիր։ Որ իմանաս, թե ինչ եմ զգում այս բանը քեզ ասելիս, սարսափելի է. բայց ավելի սարսափելի կլիներ... ախր հավիտյանս է, Եվգենի... մի միտք արա, թե ինչ...

Ծերունու ձայնը կտրվեց, իսկ որդու դեմքի վրայից, թեև դարձյալ պառկած էր աչքերը փակած, մի տարօրինակ բան անցկացավ։

— Եթե այդ ձեզ կմխիթարե, ինչու չէ, չեմ մերժի,— ասաց նա վերջապես,— բայց ինձ թվում է, որ շտապելու բան չկա։ Ինքդ ես ասում, թե այժմ ավելի լավ եմ։

— Լավ ես, Եվգենի, լավ. բայց ով գիտե, հո ամեն բան աստծու ձեռին է, իսկ քրիստոնեական պարտքդ կատարելուց հետո...

— Ո՛չ, դեռ կսպասեմ,— ընդհատեց Բազարովը։— Քեզ հետ ես էլ համաձայն եմ, որ ճգնաժամը սկսվել է։ Իսկ եթե մենք սխալ ենք, ինչ արած, հո ուշակորույս մարդկանց էլ են հաղորդություն տալիս։

— Այդ ինչ ես ասում, Եվգենի...

— Ես կսպասեմ։ Իսկ այժմ ուզում եմ քնել։ Մի խանգարիր ինձ։

Եվ նա գլուխը առաջվա տեղը դրեց։

Ծերունին տեղից վեր կացավ, նստեց բազկաթոռի մեջ և, կզակը ձեռքի մեջ առավ, սկսեց մատները կրծոտել...

Հանկարծ ռեսսորավոր կառքի ձայնը, այն ձայնը, որ առանձնապես նկատելի է լինում գյուղական խուլ տեղում, հասավ ծերունու ականջին։ Թեթև անիվներն ավելի ու ավելի էին մոտենում. ահավասիկ, լսվեց ձիերի փնչոցը... Վասիլի Իվանովիչը վեր թռավ տեղից ու դեպի պատուհանը վազեց։ Բակն էր մտնում չորս ձի լծած մի երկտեղ կառեթ։ Առանց իրեն հաշիվ տալու, թե ինչ կարող էր լինել սա, մի տեսակ անմիտ ուրախությամբ բռնված, դուրս վազեց պատշգամբը... Նշանազգեստ հագած մի սպասավոր բաց արեց կառեթի դուռը. սև քող գցած մի տիկին, վրան սև թիկնոց առած, դուրս էր գալիս կառքից...

— Ես Օդինցովան եմ,— ասաց նա։— Ո՞ղջ է Եվգենի Վասիլիչը։ Դուք հա՞յրն եք։ Հետս բժիշկ եմ բերել։

— Բարի հրեշտակ,— բացականչեց Վասիլի Իվանովիչը և բռնելով տիկնոջ ձեռքը ջղաձգաբար սեղմեց շրթունքին,

մինչդեռ Աննա Սերգեևնայի բերած բժիշկը, ակնոցավոր, գերմանացու կերպարանքով մի կարճլիկ մարդ, առանց շտապելու դուրս էր գալիս կառքի միջից։

— Ողջ է, ողջ է դեռ իմ Եվգենիս, և այժմ արդեն կփրկվի նա։ Կնիկ, ա կնիկ... Երկնքից հրեշտակ է իջել...

— Ի՞նչ է եղել, աստված իմ,— թոթովեց պառավն ընդունարանից դուրս վազելով և, առանց մի բան հասկանալու, հենց այդտեղ, նախասենյակում ընկավ Աննա Սերգեևնայի ոտքերը և սկսեց գժի պես նրա շրջազգեստը համբուրել։

— Ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում,— կրկնում էր Աննա Սերգեևնան, բայց Արինա Վլասևնան նրան ականջ չէր դնում, խոկ Վասիլի Իվանովիչը միայն կրկնում էր. «Հրեշտակ, հրեշտակ»։

— Wo ist der Kranke[1]։ Հիվանդն ո՞ւր է,— վերջապես ասաց բժիշկը զայրացած։

Վասիլի Իվանովիչը ուշքի եկավ։

— Այստեղ է, այստեղ, համեցեք հետևիցս, վերտեսոտեր հեռ կոլլեգա[2],— ավելացրեց նա ըստ հին սովորության։

— Է,— ասաց գերմանացին ու թթու ժպտաց։

Վասիլի Իվանովիչը նրան առանձնասենյակ տարավ։

— Աննա Սերգեևնա Օդինցովայի բերած բժիշկն է,— ասաց նա որդու ականջին կռացած,— ինքն էլ այստեղ է։

Բազարովը հանկարծ բաց արեց աչքերը։

— Ինչ ասացի՞ր։

— Ասում եմ, որ Աննա Սերգեևնա Օդինցովան այստեղ է և այս պարոն բժշկին բերել է քեզ համար։

Բազարովը աչքը շուրջն ածեց։

— Նա այստեղ է... ուզում եմ նրան տեսնել։

— Դու նրան կտեսնես, Եվգենի, բայց առաջ պետք է խոսել պարոն բժշկի հետ։ Որովհետև Սիդոր Սիդորիչը գնաց (դա զավառական բժշկի անունն էր), ուստի և հիվանդության ամբողջ պատմությունը նրանց կպատմեմ, և մենք մի փոքրիկ խորհուրդ կկազմենք։

Բազարովը մտիկ տվեց գերմանացուն։

— Լավ, խոսում եք, շուտ խոսեցեք, միայն թե ոչ լատիներեն, ես լատիներեն չէ՞ որ հասկանում եմ, թե ինչ է նշանակում jam moritur[1]։

— Der Herr scheint des Deutschen mächtig zu sein?[2]— սկսեց էսկուլապի նոր սանը՝ Վասիլի Իվանովիչին դառնալով։

— Իխ... հաբե... ավելի լավ է ռուսերեն խոսեցեք,— ասաց ծերունին։

— Առ, լավ...— և խորհրդակցությունն սկսվեց։

Կես ժամից հետո Աննա Սերգեևնան Վասիլի Իվանովիչի ուղեկցությամբ մտավ առանձնասենյակ։ Բժիշկն արդեն նրան կամացուկ հայտնել էր, թե հիվանդի առողջանալու մասին մտածելն անգամ ավելորդ է։

Աննա Սերգեևնան նայեց Բազարովին... և կանգ առավ դռան մոտ. այն աստիճան ապշեցրեց նրան նրա բորբոքված, բայց և միևնույն ժամանակ մեռելային դեմքը իր պղտոր աչքերով, որոնք ուղղված էին իրեն։ Ուղղակի մի տեսակ սառն ու չարատանջ վախ եկավ վրան. այն միտքը, թե ինքն այսպիսի զգացում չէր ունենա, եթե իսկապես սիրելիս լիներ Բազարովին — վայրկենաբար անցավ նրա մտքով։

— Շնորհակալություն,— ուժ անելով խոսեց Բազարովը,— սրան չէի սպասում։ Բարի գործ է այդ։ Ահավասիկ, ինչպես խոստացել էիք, մի անգամ էլ տեսնվեցինք։

— Աննա Սերգեևնան այնքան բարի էր...— սկսեց Վասիլի Իվանովիչը...

— Հայր, մեզ մենակ թող... Աննա Սերգեևնա, թո՞ւլ եք տալիս։ Կարծեմ այժմ...

Նա գլխով ցույց տվեց իր փռված անզոր մարմինը։

Վասիլի Իվանովիչը դուրս գնաց։

— Դեհ, շնորհակալություն,— կրկնեց Բազարովը։— Ար-

---

[1] Ո՞ւր է հիվանդը (գերմ.)։

[2] Արժանավայել կոլեգա (գերմ.)։

[1] Արդեն մեռնում է։

[2] Պարոնը, կարծես, հասկանում է գերմաներեն։

քայլայլել է ձեր արածը։ Ասում են, թագավորներն էլ են այցելում մեռնողներին։

— Եվգենի Վասիլիչ, ես հույս ունեմ, որ...

— Էհ, Աննա Սերգեևնա, ավելի լավ է ճիշտը ասենք։ Իմ բանը պրծած է։ Անիվի տակն ընկա։ Բանից դուրս է գալիս, որ ապագայի մասին մտածելու հարկավորություն էլ չկար։ Մահը հին բան է, բայց ամեն մեկիս համար էլի նոր է։ Մինչև այժմս դեռ չեմ վախենում... շուտով կհասնի անգիտակցական դրությունը, և վերջ։ (Նա թեթևակի թափ տվեց ձեռքը)։ Է՛հ, ես ուրիշ էլ ինչ ասեմ ձեզ... որ ձեզ սիրո՞ւմ էի. այդ առաջ էլ ոչ մի իմաստ չուներ, իսկ այժմ հո ավելի ևս։ Սերը ձև է, իսկ իմ սեփական ձևն արդեն քայքայվում է։ Ավելի լավ է ասեմ, թե ինչքան դուք հիանալի եք։ Ահավասիկ հենց այժմ էլ կանգնած եք, այնպես գեղեցիկ...

Աննա Սերգեևնան ակամա ցնցվեց։

— Ոչինչ չկա, անհանգիստ մի լինեք... նստեցեք այնտեղ... Ինձ մի մոտենաք. չէ՞ որ հիվանդությունս վարակիչ է։

Աննա Սերգեևնան արագությամբ անցավ սենյակը և նստեց Բազարովի պառկած գահավորակի մոտի բազկաթոռի վրա։

— Վեհանձն եք,— շշնջաց Բազարովը։— Ա՛հ, ինչքան մոտ եք, և ինչ ջահել, թարմ ու մաքուր... այս անպիտան սենյակի մեջ... Դեհ, մնաք բարով։ Ապրեցեք երկար, դա ամենից լավն է, և քանի ժամանակ կա՝ օգտվեցեք։ Դուք մի տեսեք, թե ինչ այլանդակ պատկեր է. կիսակենդան որդ եմ դարձել, բայց էլի ուզում եմ գլուխս բարձրացնել։ Ախր, ես էլ մի ժամանակ մտածում էի՝ ինչքա՞ն գործեր պիտի անեմ, չեմ մեռնի. ինչպես թե մեռնել։ Դեռ գործ կա անելու. ես հո հսկա եմ։ Իսկ այժմ հսկայի ամբողջ բանն ու գործն այն է, թե ինչպես անի, որ վայելուչ կերպով մեռնի, թեպետ ոչ ոքի էլ հոգը չէ նրա մեռնելը... Ինչ ուզում է լինի միևնույն է, պոչ չեմ խաղացնի։

Բազարովը լռեց և սկսեց ձեռքով շոշափել իր բաժակը։ Աննա Սերգեևնան, առանց ձեռնոցները հանելու և երկչոտությամբ շունչ քաշելով, ջուրը տվեց նրան։

— Դուք ինձ կմոռանաք,— նորից խոսեց Բազարովը,— մեռածը ապրողին ընկեր չի։ Հայրս կսկսի ձեզ ասել, թե ինչ

պիսի մարդ է կորցնում Ռուսաստանը... Այդ դատարկ բան է. բայց ծերուկին շաշխատեք հակառակը համոզել։ Ինչքան չլինի էլի մխիթարություն է։ Մորս էլ սիրտ տվեք։ Ձեր շրջանների մեջ ցերեկը ճրագով որ ման գաք, այդպիսի մարդիկ չեք գտնի... Ես պետք եմ Ռուսաստանին... Ոչ, երևում է, պետք չեմ։ Եվ ո՞վ է պետք։ Կոշկակարը պետք է, դերձակը պետք է, մսագործը... միս է ծախում... մսագործը... սպասեցեք, մտքերս խառնվում են... Այստեղ անտառ կա...

Բազարովը ձեռքը ճակատին դրեց։

Աննա Սերգեևնան կռացավ նրա վրա։

— Եվգենի Վասիլևիչ, ես այստեղ եմ...

Բազարովը մեկեն ձեռքը քաշեց և վեր կացավ տեղից։

— Մնաք բարով,— ասաց նա հանկարծական ուժով, և աչքերը վերջին փայլով փայլեցին։— Մնաք բարով... Լսեցեք. ախր... այն ժամանակ ես ձեզ չհամբուրեցի... Փչեցեք մեռնող կանթեղի վրա, և թող նա մարի...

Աննա Սերգեևնան շրթունքները կպցրեց նրա ճակատին։

— Եվ հերիք է,— ասաց Բազարովը և ընկավ բարձի վրա։— Այժմ... խավար է...

Աննա Սերգեևնան կամացուկ դուրս գնաց։

— Ինչպե՞ս է,— շշնջալով հարցրեց նրան Վասիլի Իվանովիչը։

— Քնեց,— պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով։

Բազարովին այլևս վիճակված չէր զարթնել։ Երեկոյան դեմ նա գիտակցությունը բոլորովին կորցրեց, իսկ մյուս օրը մեռավ։ Տեր Ալեքսեյը կրոնական ծեսերը կատարեց նրա վրա։ Երբ վերջին օծումն էին կատարում, երբ որ սուրբ մեռոնը կպավ Բազարովի կրծքին, նրա մի աչքը բացվեց և կարծես թե տեսնելով զգեստավորված քահանային, ծխացող բուրվառը, սրբապատկերի առաջ վառած մոմերը, սարսափի ցնցման պես մի բան վայրկենաբար արտափայլեց նրա մեռելային դեմքի վրա։ Իսկ երբ արձակեց վերջին շունչը, և տան մեջ ընդհանուր կոծ բարձրացավ, Վասիլի Իվանովիչը խելքը կորցրածի պես հանկարծ մոլեգնեց։ «Ես ասում էի, թե կբողոքեմ,— խռպոտ ձայնով կանչում էր նա, բորբոքված ու ծրոմբռված դեմքով՝ օդի մեջ բռունցքը շարժելով, ասես թե մեկին սպառնալիք էր տալիս,— և կբողոքեմ, կբողոքեմ»։ Բայց

Արինա Վլասևնան, արտասվելով, լալագին կախվել էր նրա վզովը, և երկուսը միասին ընկան երեսի վրա։ «Այդպես,— հետո ծառաների սենյակում պատմում էր Անֆիսուշկան,— կողքկողքի խոնարհեցին գլուխները, կեսօրին մակաղող գառների նման...»։

Բայց կեսօրվա տոթն անցնում է, գալիս է երեկոն ու գիշերը, և այնուհետև էլ վերադարձը հանգիստ օթևանը, ուր անուշ նիրհում են տանջվածներն ու խոնջացյալները...

XXVIII

Վեց ամիս անցավ։ Ձմեռ էր. անամպ սառնամանիքի դաժան լռությունը տիրել էր ամեն տեղ. պինդ ձյունը ոտքերի տակ ճռճռում էր. ծառերը պատած էին վարդագույն եղյամով. երկինքը փայլատ զմրուխտի գույն ուներ. ծխնելուղների վրա ծխի քուլաները գլխարկի նման կեցած էին. առավարկյան բացվող դռներից գոլորշին բարդ-բարդ դուրս էր պրծնում. մարդկանց դեմքը կարմիր, ասես թե կծոտած լիներ. մրսած ձիերը հապճեպով առաջ են վազում։ Հունվարյան օրը արդեն մոտենում էր իր վախճանին. երեկոյան ցուրտը ավելի ու ավելի սեղմում էր անշարժ օդը, և արյունագույն վերջալույսը արագ-արագ մարում էր։ Մարյինոյի տան պատուհանները նոր-նոր էին լուսավորվում։ Պրոկոֆիչը սև ֆրակ ու սպիտակ ձեռնոց հագած, առանձնապես հանդիսավոր կերպով յոթը հոգու համար սեղան էր բաց անում։ Դրանից մի շաբաթ առաջ, ծխական փոքրիկ եկեղեցում, սուս ու փուս, համարյա առանց վկաների երկու պսակ էր կատարվել. պսակվել էին Արկադին ու Կատյան և Նիկոլայ Պետրովիչն ու Ֆենիչկան. իսկ այդ միևնույն օրը Նիկոլայ Պետրովիչը հրաժեշտի ճաշ էր տալիս իր եղբորը, որ գործով Մոսկվա էր գնում։ Աննա Սերգեևնան, նորապսակներին առատորեն բաժին հանելով, պսակից անմիջապես հետո նույնպես մեկնեց Մոսկվա։

Ցուրտ ժամը երեքին բոլորն էլ սեղանի շուրջն էին հավաքվել։ Միտյային էլ էին այստեղ նստեցրել. նրա համար արդեն արծաթաթել նախշով ապարոշ կրող դայակ էին բռնել։ Պավել Պետրովիչը բազմել էր Կատյայի ու Ֆենիչկայի միջև.

ամուսիններն էլ իրենց կանանց կողքին էին տեղավորվել։ Մեր ծանոթները վերջին ժամանակներս փոխվել էին. ամենքն էլ կարծես դեղեցկացել ու առնականություն էին ստացել. միայն Պավել Պետրովիչն էր լղարել, որից, սակայն, նրա դեմքի արտահայտիչ գծերն ավելի գեղանի ու գրանսենյորական էին դարձել... Հենց Ֆենիչկան էլ ուրիշ կին էր դարձել։ Մետաքսյա նոր զգեստ հագած, թավշյա լայն գլխազարդը մազերին, ոսկե շղթան վզին անշարժ նստել էր պատկառանքով. նրա վրա երևում էր հարգանք դեպի ինքը, դեպի ամեն բան, որ շրջապատել էր նրան, և մի այնպիսի ձևով էր ժպտում, կարծես ուզում էր ասել՝ «Դուք ինձ ներեցեք. մեղավորը ես չեմ»։ Եվ մենակ նա չէր ժպտացողը. ամենքն էլ ժպտում էին, ու նույնպես ասես թե ներողություն խնդրում, ամենքն էլ մի քիչ անհարմար էին զգում իրենց, մի քիչ տխուր էին, բայց իսկապես լավ էին զգում։ Ամեն մեկն աշխատում էր ծիծաղելի պատրաստակամությամբ ծառայել մյուսին, ասես ամենքն էլ խոսքը մեկ արած՝ մի տեսակ պարզամիտ կատակերգություն էին ներկայացնում։ Ամենից հանգիստը Կատյան էր. նա միամիտ վստահությամբ նայում էր չորս կողմը, և կարելի էր նկատել, որ Նիկոլայ Պետրովիչը արդեն գժվածի պես սիրում էր նրան։ Ճաշը վերջանալուց առաջ Նիկոլայ Պետրովիչը վեր կացավ և, բաժակը ձեռքն առած, ասաց Պավել Պետրովիչին.

— Դու հեռանում ես մեզանից... դու հեռանում ես մեզանից, սիրելի եղբայր,— սկսեց նա,— իհարկե, կարճ ժամանակով. բայց և այնպես չեմ կարող չհայտնել քեզ, որ ես... որ մենք... քանի ես... քանի մենք... Հենց դժբախտությունն էլ այն է, որ մենք ճառեր ասել չգիտենք։ Արկադի, դու ասա։

— Ոչ, հայրիկ, ես պատրաստված չեմ։

— Իսկ ես շատ լավ եմ պատրաստվել։ Պարզապես, եղբայր, թող քեզ համբուրեմ, ցանկանամ ամենայն բարիք, և շուտով վերադարձիր եկ մեզ մոտ։

Պավել Պետրովիչը ամենքի հետ էլ համբուրվեց։ Միտյային էլ, իհարկե. բացի դրանից, համբուրեց նաև Ֆենիչկայի ձեռքը, որը դեռ մի շնորհքով ձեռքը տալ էլ չգիտեր, և երկրորդ անգամ լցրած բաժակը խմելով, խորը հառաչանքով

ասաց — «Բախտավոր լինեք, բարեկամներս։ Farewell»[1]— անգլիական այդ պոչուկը աննկատելի անցավ. սակայն ամենքն էլ զգացված էին։

«Բազարովի հիշատակին»,— շշնջաց Կատյան ամուսնու ականջին և բաժակը խփեց նրա բաժակին։ Արկադին, ի պատասխան դրան, պինդ սեղմեց կնոջ ձեռքը, բայց այդ բաժակը բարձրաձայն առաջարկելու սիրտ չարավ։

Թվում է, թե սա արդեն վերջն է։

Բայց գուցե ընթերցողներից մեկնումեկը ուզում է իմանալ, թե ի՞նչ է անում այժմ, հենց այժմ, մեր նկարագրած անձերից յուրաքանչյուրը։ Մենք պատրաստ ենք գոհացում տալու։

Մոտ ժամանակներս Աննա Սերգեևնան ամուսնացավ, ոչ սիրահարված, այլ համոզմունքով, ռուսական ապագա գործիչներից մեկի հետ, որ մի շատ խելոք, օրենսգետ մարդ է՝ գործնական հաստատուն խոհերով, անդրդվելի կամքով և խոսելու զարմանալի շնորհքով. մի բարի և սառցի նման սառը բնավորությամբ դեռ երիտասարդ մարդ էր։ Նրանք շատ հաշտ են ապրում և շատ կարելի է երջանիկ էլ լինեն... շատ կարելի է և սիրեն իրար։ Իշխանուհի Կ.-ն մեռավ և նույնիսկ մահվան օրն էլ մոռացվեց։ Հայր ու որդի Կիրսանովները բնակություն հաստատեցին Մարյինոյում։ Նրանց գործերը կարգի են ընկնում։ Արկադին գործին տաք կերպով է կպել և նրա «ագարակն» արդեն բավական խոշոր եկամուտ է բերում։ Նիկոլայ Պետրովիչը հաշտարար միջնորդ է դարձել և բոլոր ուժով աշխատում է։ Նա շարունակ շրջում է իրեն հանձնված տեղերը. երկար ճառեր է խոսում (նա այն կարծիքին է, թե գյուղացիներին պետք է «խելքի բերել», այսինքն միևնույն բառերի հաճախ կրկնությամբ նրանց զահլան տանել), բայց դարձյալ, ճիշտն ասած, լիովին գոհ չի կացուցանում ոչ կըրթված ազնվականներին, որոնք սովոր են մերթ շիկով և մերթ մելամաղձորեն խոսել էմանցիպացիայի մասին (ա ն-ը քթի մեջ արտասանելով), ոչ էլ անկիրթ ազնվականներին, որոնք առանց այլևայլության հայհոյում են «էս մ ուն ցիպացիան»։ Սրա համար էլ, նրանց համար շատ էլ կակուղ մարդ է նա։

[1] Մնաք բարով։

Կատերինա Սերգեևնան որդի ունեցավ, անունը Կոլյա, իսկ Միտյան կարգին վազում է ու կանոնավոր էլ խոսում։ Ֆենիչկան, Ֆեդոսյա Նիկոլաևնան, ամուսնուց ու Միտյայից հետո, ոչ ոքի այնպես չի պաշտում, ինչպես իր հարսին, և երբ որ սա նստում է դաշնամուր նվագելու, պատրաստ է ամբողջ օրերով նրանից չբաժանվել։ Ի դեպ, հիշենք նաև Պյոտրին։ Հիմարությունից ու իրեն ծանր պահելուց նա բոլորովին ընդարմացել է, բոլոր է-երը ինչպես յու է արտասանում, բայց նա էլ ամուսնացավ և բավական էլ օժիտ առավ կնոջ հետ, որը քաղաքի պարտիզպանի այն աղջիկն է, որը երկու լավ փեսացուներին մերժեց միմիայն նրա համար, որ ժամացույց չունեին, մինչդեռ Պյոտրը ոչ միայն ժամացույց ուներ, այլև լայքայե անճիտք կոշիկներ։

Դրեզդենում, Բրյուլևյան ճեմանոցում, ժամը երկսի ու չորսի միջև, ամենաբարձր հասարակություն դուրս գալու միջոցին, կարող եք հանդիպել հիսուն տարեկանի մոտ, արդեն բոլորովին ալևորած և ասես թե պոդագրա ունեցող, բայց դեռ գեղեցիկ, նուրբ հագնված մի մարդու, որ իր վրա կրում է այն առանձին դրոշմը, որ ձեռք է բերվում միայն երկար ժամանակ հասարակության ամենաբարձր խավերում ապրելով։ Այդ Պավել Պետրովիչն է։ Նա առողջությունը կազդուրելու համար Մոսկվայից գնաց արտասահման և բնակություն հաստատեց Դրեզդենում, ուր ավելի շատ շփվում է անգլիացիների ու այդտեղից անցնող ռուսների հետ։ Անգլիացիների հետ նա իրեն պահում է պարզ, համարյա համեստ, բայց ոչ առանց արժանապատվության. նրանք փոքր-ինչ ձանձրալի են համարում նրան, բայց նրա մեջ տեսնում ու հարգում են կատարյալ ջենտլմենը «a perfect gentleman»[1]։ Ռուսների հետ ավելի բաց է, ազատություն է տալիս իր մաղձին, ծաղրում է իրեն էլ, նրանց էլ. բայց նրա այս բոլոր արածն էլ շատ սիրալիր, և անհոգ, և վայելուչ է դուրս գալիս։ Նա հետևում է սլավյանոֆիլների հայացքներին. հայտնի է, որ դա բարձր շրջանի մեջ այդ très distingue[2] է համարվում։ Ոչ մի ռու-

[1] Կատարյալ ջենտլմեն։

[2] Շատ հարգի է (ֆրանս.)։

սական բան նա չի կարդում, բայց նրա գրասեղանի վրա դրված կա գեղջկական տրեխի նման շինած արծաթե մոխրաման։ Ռուս զբոսաշրջիկները շատ են նրա հետևից քարշ ընկնում։ Մատվեյ Իլյիչ Կալյազինը, որ ժամանակավոր ընդդիմադիրների մեջ է, Բոհեմյան հանքային ջրերը գնալիս, վեհորեն այցելեց նրան. իսկ բնիկները, որոնց հետ նա, ասենք, քիչ է հանդիպում, քիչ է մնում պաշտեն նրան։ Ոչ ոք այնպես շուտ ու հեշտ կերպով չի կարող պալատական երաժշտության թատրոնի և այլ տոմսեր ձեռք բերել, ինչպես der Herr Baron von Kirsanoff[1]։ Նա ձեռքից եկածին չափ շարունակ բարիք է անում. թեպետ քիչ-քիչ, բայց դարձյալ աղմուկ է հանում, աչքի ընկնում. իզուր հո չէր մի ժամանակ հռչակ վայելում բարձր շրջաններում. բայց ծանր է նրա կյանքը... ավելի ծանր, քան թե նա կարծում է... Բավական է աչքդ ձգես նրա վրա ռուսաց եկեղեցում եղած միջոցին, երբ մի կողմում, պատին կռթնած, երկար մտածում է և, շրթունքները պինդ սեղմած, երկար ժամանակ անշարժ, հետո հանկարծ ուշքի է գալիս և սկսում է համարյա աննկատելի երեսին խաչ հանել...

Կուկշինան էլ է արտասահման ընկել։ Այժմ նա Հայդելբերգում է և արդեն ոչ թե բնական գիտություններն է ուսումնասիրում, այլ ճարտարապետություն, որի մեջ, իր ասելով, նոր օրենքներ է գտել։ Առաջվա նման դարձյալ բարեկամություն է անում ուսանողների հետ, մանավանդ երիտասարդ ռուս ֆիզիկոսների ու քիմիկոսների հետ, որոնցով լցված է Հայդելբերգը, և որոնք, սկզբներում իրերի վրա իրենց ունեցած լուրջ հայացքով զարմացնելով գերմանական միամիտ պրոֆեսորներին, հետագայում նույն պրոֆեսորներին զարմացնում են իրենց կատարյալ անգործությամբ ու բացարձակ ծուլությամբ։ Այդպիսի երկու-երեք քիմիկոսների հետ, որոնք չեն կարողանում թթվածինն ազոտից զանազանել, բայց համակված են ժխտողականությամբ և անձնապաստանությամբ, մեկ էլ մեծ Ելիսեևի հետ, Պետերբուրգի քա-

1 Պարոն բարոն Կիրսանով (գերմ.)։

ռերն է մաշում Սիտնիկովը, որ նույնպես պատրաստվում է մեծ դառնալ և, իր ասելով, Բազարովի «գործն» է շարունակում։ Ասում են, թե մոտ ժամանակներս ինչ-որ մեկը նրան ծեծել է, բայց նա էլ ետ չի մնացել. մի մութ ամսագրում խցկված մի մութ հոդվածի մեջ ակնարկել է, թե իրեն ծեծողը վախկոտի մեկն է։ Նա այդ բանը հեգնություն է համարում։ Հայրը առաջվա նման օգտագործում է նրան, իսկ կինը նրան հիմար... և գրական մարդ է համարում։

Ռուսաստանի հեռավոր անկյուններից մեկում կա մի փոքրիկ գյուղական հանգստարան։ Սովորաբար մեր բոլոր հանգստարանների նման, նա էլ տխուր պատկեր ունի. նրան շրջապատող առուները վաղուց ծածկված են մացառուտով։ Փայտե գորշ խաչափայտերը խոնարհվել են և փտում են իրենց մի ժամանակ ներկած ծածկերի տակ. տապանաքարերը բոլորն էլ տեղահան են եղել, ասես մեկը տակից դրանք դեն է հրում. երկու-երեք ճղնակտոր ծառեր հազիվ հազ շվաք են անում. ոչխարներն անարգել ման են գալիս գերեզմանների վրա... Բայց այդ գերեզմանների մեջ կա մեկը, որին մարդու ձեռք չի կպչում, որին ոչ մի անասուն ոտքի տակ չի տալիս, միայն թռչուններն են նստում նրա վրա և արշալույսին իրենց երգերն երգում։ Երկաթե պարիսպով պատած է նա, նրա երկու ծայրին տնկած է երկու մատղաշ եղևնի. Եվգենի Բազարովն է թաղված այդտեղ։ Մոտիկ գյուղից այդ գերեզմանի մոտ են հաճախակի գալիս երկու արդեն զառամյալ ծերունիներ՝ մարդ ու կին։ Իրար օգնելով, ծանր քայլերով գալիս են նրանք. մոտենում են պարիսպին, գերեզմանի վրա ընկնում ծնկաչոք և երկար ու դառնապես լաց լինում, և երկար, ուշադրությամբ նայում համր քարին, որի տակ պառկած է իրենց որդին, մի երկու կարճ բառ ասում միմյանց, քարի վրայից փոշին սրբում, մեկ էլ եղևնու ճյուղն ուղում, և դարձյալ աղոթում, և չեն կարողանում բաժանվել այն տեղից, որտեղից ասես թե նրանք ավելի մոտ են գտնվում իրենց որդուն, իրենց որդու հիշատակին... Մի՞թե իրենց աղոթքը, իրենց արտասուքը ապարդյուն է մնալու։ Մի՞թե սերը, սուրբ, անձնվեր սերն ամենակարող չէ։ Ո՜հ, ոչ։ Ինչպիսի բուռն, մեղսալից, ըմբոստ

սիրտ էլ ուզում է ծածկված լինի գերեզմանի մեջ, նրա վրա բուսած ծաղիկներն անվրդով նայում են մեզ վրա իրենց անմեղ աչքերով, նրանք միմիայն հավիտենական հանգստի մասին չէ, որ ասում են մեզ, «անտարբեր» բնության այդ մեծ հանգստի մասին, նրանք ասում են նաև հավիտենական հաշտության և անվախճան կյանքի մասին...

1861 թ.

ՈՐՍՈՐԴԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԵՐՄՈԼԱՅՆ ՈՒ ՋՐԱՂԱՅՊԱՆԻ ԿԻՆԸ

Երեկոյան ես ու որսորդ Երմոլայը «գնացինք չուի»... Բայց, գուցե, բոլոր ընթերցողներս չգիտեն, թե ինչ բան է չուի գնալ։ Լսեցեք, ուրեմն, պարոնայք։

Գարնանը՝ արևամուտից քառորդ ժամ առաջ, դուք հրացանով և անշուն մտնում եք պուրակ։ Որևէ տեղ եք փնտրում ձեզ համար անտառի պռնկին մոտիկ, նայում եք ձեր շուրջը, ստուգում եք պիստոնը, ընկերներով աչքով եք անում իրար։ Քառորդ ժամն անցավ։ Արևը մայր մտավ, բայց անտառում դեռ լույս է, օդը մաքուր է և թափանցիկ. թռչունները շատախոսում են. ջահել կանաչը փայլում է զմրուխտի ուրախ փայլով... դուք սպասում եք։ Անտառի ներսը հետզհետե մթնում է. վերջալույսի կարմիր շողերը դանդաղ սահում են ծառերի արմատների ու բների վրայով, բարձրանում հետզհետե վեր ու վեր, ցածի, գրեթե մերկ ճյուղերից անցնում անշարժ, նիրհող կատարներին... Բայց, ահա, կատարներն էլ աղոտացան. կարմիր երկինքը կապտում է։ Անտառի բուրմունքն ուժեղանում է. տաք խոնավություն է փչում թեթևակի. անտառ մտած քամին մարում է ձեր կողքին։ Թռչուններն սկսում են նիրհել. բոլորը միանգամից չէ, տեսակներով. ահա լռեցին սերինոսները, մի քանի րոպե անց՝ շիկահավերը, նրանց ետևից՝ դրախտապանները։ Անտառը հետզհետե մթնում է։ Ծառերը միախառնվում են մի մեծ, սև զանգվածի մեջ. կապույտ երկնքում երկչոտորեն դուրս են գալիս առաջին աստղերը։ Բոլոր թռչունները քնած են։ Միայն կարմրատոտիկները և

փոքրիկ ծառակտուտները դեռ շվշվացնում են քնատ... Ահա նրանք էլ լռեցին։ Մի անգամ ևս ղողանջեց ձեր գլխավերև ցախսարեկի հնչեղ ձայնը. ինչ-որ մի տեղ պիրոլը ճչաց տխուր, սոխակը ձայն հանեց առաջին անգամ։ Սիրտդ տանջվում է սպասողականության մեջ, և հանկարծ,— բայց ինձ միայն որսորդները կհասկանան,— հանկարծ խորին լռության մեջ լսվում է մի ուրիշ տեսակի կոնչոց ու ֆշշոց, լսվում է մի արագ թևաբախում, և կտցարն իր երկար կտուցը գեղեցկորեն թեքած՝ դուրս է թռչում մութ կեչիների ետևից ու դալիս դեպի ձեր կրակոցը։

Ահա ինչ է նշանակում «չուի սպասելը»։

— Այսպես ուրեմն՝ ես ու Երմոլայը գնացինք «չուի». բայց, ներեցեք, պարոնայք. նախ պետք է ծանոթացնեմ ձեզ Երմոլային։

Պատկերացրեք քառասունհինգ տարեկան մի մարդ՝ բարձրահասակ, նիհար, երկար ու բարակ քթով, նեղ ճակատով, մոխրագույն աչքերով, խճճված մազերով ու հաստ, հեգնական շրթունքներով։ Այդ մարդը ամառ-ձմեռ հագնում էր նանկինի կաֆտան՝ գերմանական ձևի, վրան կապում էր շորե գոտի. հագնում էր կապույտ շալվար և դնում էր գառան մորթուց կարած գդակ, որ, ուրախ ժամի, նվիրել էր նրան մի սնանկացած կալվածատեր։ Գոտուց կապում էր երկու տոպրակ, մեկն առջևից, երկու մասի բաժանած՝ վառոդի և մանրագնդակի համար, մյուսը ետևից՝ որսի համար, իսկ բամբակը Երմոլայը հանում էր իր սեփական, ըստ երևույթին, անսպառ գդակից։ Նա՝ ծախած որսի փողով հեշտությամբ կարող էր իր համար փամփշտակալ ու պայուսակ գնել, բայց ոչ մի անգամ չէր էլ մտածել նման գնում կատարելու, և շարունակում էր հրացանը լցնել նախկին ձևով. տեսնողները զարմանում էին նրա հմտության վրա, թե ինչպես է խուսափում մանրագնդակն ու վառոդը թափելու կամ իրար խառնելու վտանգից։ Նրա հրացանը միփողանի էր, կայծքարով։ Թե ինչպես էր այդ հրացանով նշանին խփում, դժվար է երևակայել. բայց խփում էր։ Նա ուներ և մի որսկան շուն, անունը Վալետկա, մի զարմանալի արարած։ Երմոլայը նրան երբեք չէր կերակրում. «Շանը պիտի կերակրե՞մ,— ասում էր նա,— շունը խելոք կենդանի է, իրա համար կեր կգտնի»։ Եվ խո-

կապես, թեև Վալետկան անգամ անտարբեր անցորդին զարմացնում էր իր չափազանց նիհարությամբ, բայց ապրում էր, և երկար ապրեց. նույնիսկ չնայած իր ողորմելի դրության, ոչ մի անգամ չկորավ և ցանկություն չարտահայտեց տիրոջը թողնելու։ Մի անգամ ջահել հասակում նա երկու օրով բացակայեց — սիրով տարված. բայց դա էլ շուտով անցավ։ Վալետկայի աչքի ընկնող հատկությունը՝ նրա զարմանալի անտարբերությունն էր դեպի աշխարհը... Եթե խոսքը շան մասին չլիներ, ես գործ կածեի ֆիլոսոֆիության բառը։ Նա սովորաբար նստում էր կարճ պոչը տակը դրած, հոնքերը կիտում էր, ցնցվում ժամանակ առ ժամանակ և երբեք չէր ժպտում։ (Հայտնի է, որ շները ժպտալու ընդունակություն ունեն. և ժպտում են շատ դուրեկան ժպիտով)։ Նա ծայր աստիճան անճոռնի էր, և տան պարապ ծառաներն առիթ չէին փախցնում թունավոր կերպով ծաղրելու նրա արտաքինը. բայց բոլոր այդ ծաղրանքները և անգամ հալածանքները Վալետկան տանում էր զարմանալի սառնասրտությամբ։ Առանձին բավականություն էր պատճառում նա խոհարարներին, որոնք իսկույն գործից կտրվում էին և գոռգոռոցով ու հայհոյանքով վազում նրա ետևից, երբ նա թուլությամբ, որ հատուկ է ոչ միայն շներին, սոված դունչը կոխում էր գայթակղեցուցիչ տաքություն և դուրեկան բուրմունքներ արձակող խոհանոցի կիսաբաց դռնից ներս։ Որսի ժամանակ նա հոգնածություն չգիտեր և լավ էլ հոտառություն ուներ. բայց եթե պատահաբար հասնում-բռնում էր վիրավորված նապաստակին, հաճույքով ուտում էր նրան, մինչև վերջին ոսկորը՝ մի որևէ զով տեղ, կանաչ թփի տակ, Երմոլայից բավական հեռու, որ հայհոյում էր նրան բոլոր հայտնի և անհայտ բարբառներով։

Երմոլայը պատկանում էր իմ հարևաններից մեկին, մի հնավանդ կալվածատիրոջ։ Հնավանդ կալվածատերերը «կրտսերներ» չեն սիրում և գործ են ածում տանու թռչուններ։ Միայն արտասովոր դեպքերում, այն է՝ ծննդյան, անվանակոչության և ընտրության օրերին, հնավանդ կալվածատերերի խոհարարները ձեռնարկում են երկարակտուց թռչուններ եփել-պատրաստելուն և, ոգևորության մեջ ընկնելով, որ հատուկ է ռուս մարդուն, երբ ինքն էլ լավ չգիտի, թե ինչ է անում, հնարում են դրանց համար այնպիսի բարդ համեմունքներ,

որ հյուրերը մեծ մասամբ հետաքրքրությամբ և ուշադիր նայում են մատուցած ուտելիքին, բայց ճաշակել ոչ մի կերպ չեն համարձակվում։ Երմոլային հրամայված էր տիրոջ համար ամիսը մի անգամ երկու զույգ միրհավ կամ կաքավ բերել, իսկ իրեն թույլ էր տրվում ապրել ուր ուզում է և ինչով ուզում է։ Նրանից ձեռ էին քաշել, որպես մի մարդուց, որը ոչ մի աշխատանքի պիտանի չէ։ Նրան, իհարկե, վառոդ ու մանրագնդակ չէին տալիս, հետևելով ճիշտ այն կանոնին, որով առաջնորդվելով և ինքը՝ Երմոլայը չէր կերակրում իր շանը։ Երմոլայը տարօրինակ մարդ էր՝ անհոգ, ինչպես թռչուն, բավական շատախոս, ցրված և արտաքուստ անշնորհք. շատ սիրում էր խմել, մի տեղ երկար չէր մնում, քայլելիս ոտները քստքստացնում էր ու երերվում դեսուդեն, բայց քստքստացնելով ու երերվելով էլ օրական կտրում էր հիսուն վերստ։ Նա ենթարկվում էր բազմատեսակ արկածների. քնում էր ճահիճներում, ծառերի վրա, կտուրներին, կամուրջների տակ, շատ անգամ էր բռնվել-փակվել նկուղներում ու սարայներում, զրկվել էր հրացանից, շնից, ամենաանհրաժեշտ հագուստից, ենթարկվել էր սաստիկ ծեծերի,— բայց և այնպես, որոշ ժամանակից հետո, տուն էր վերադառնում հագնված, հրացանը ձեռին և շունը հետը։ Նրան ուրախ մարդ համարել չէր կարելի, թեև նա գրեթե միշտ բավական լավ տրամադրության մեջ էր լինում. նա առհասարակ տարօրինակ մարդու տպավորություն էր թողնում։ Երմոլայը սիրում էր զրուցել լավ մարդկանց հետ, մանավանդ մի բաժակ օղու առաջ, բայց ոչ երկար. մեկ էլ տեսար վեր կացավ ու գնաց։— «Ո՞ւր ես գնում, խելառ։ Գիշեր է արդեն»։— Գնում եմ Չապլինո։— «Ի՞նչ գործ ունես Չապլինոյում, որ տասը վերստ պիտի քարշ գաս»։— Գնում եմ էնտեղ՝ գեղացի Սոֆրոնի տանը գիշերեմ։— «Ա՛յ, գիշերի այստեղ էլի»։— Չէ՛, չեմ կարող։ Ու Երմոլայը շան հետ կերթար մութ գիշերով, թփերի ու փոսերի միջով, իսկ գյուղացի Սոֆրոնը, թերևս, իր բակը չթողներ նրան, և դեռ վզակոթին էլ տար, թե ազնիվ մարդկանց մի՛ անհանգստացնի։ Բայց ոչ ոք ձուկ, խեցգետին բռնելու արհեստով չէր կարող համեմատվել Երմոլայի հետ. ոչ ոք չէր կարող նրա պես հոտառությամբ գտնել որսը, հրապուրել լորերին, ընտելացնել բազեներին և ձեռք գցել սոխակներին... Միայն մի

բան չէր կարողանում՝ շներ վարժեցնել. համբերությունը չէր հերիքում։ Երմոլայը ուներ և կին։ Շաբաթը մի անգամ գնում էր մոտը։ Կինն ապրում էր մի ողորմելի, կիսաքանդ խրճիթում, ապրում էր մի կերպ. նախապես երբեք չգիտեր, թե վաղը կո՞ւշտ կլինի արդյոք, և առհասարակ դառը կյանքով էր ապրում։ Երմոլայը, այդ անհոգ ու բարեհոգի մարդը, նրա հետ խիստ և կոպիտ էր վարվում, տանն ահարկու և դաժան տեսք էր ընդունում, ու խեղճ կինը չէր իմանում, թե ինչով գոհացնի նրան, դողում էր նրա ամեն մի հայացքից, վերջին կոպեկով օղի էր առնում նրա համար և վախվխելով ծածկում էր նրան իր մուշտակով, երբ նա վսեմաբար փեշի[1] վրա փռված՝ քնում էր հսկայի քնով։ Ինքս շատ անգամ եմ նկատել նրա մռայլ մոլեգնության ակամա բռնկումները. ինձ դուր չէր գալիս նրա դեմքի արտահայտությունը, երբ նա կծում էր խփած թռչնին։ Բայց Երմոլայը մի օրից ավելի չէր մնում տանը. իսկ տնից դուրս էլի դառնում էր նույն Երմոլայը։ Տանու վերջին ծառան իրեն բարձր էր համարում այս թափառաշրջիկից, և, թերևս, հենց դրա համար էր, որ լավ էին վարվում հետը. իսկ գյուղացիներն սկզբում ետևից էին ընկնում ու բռնում նրան, ինչպես նապաստակին դաշտում, բայց հետո բաց էին թողնում և, մի անգամ արդեն նրան ճանաչելով, էլ բան չէին ասում, նույնիսկ հաց էին տալիս և հետը զրույցի բռնվում... Հենց այս մարդուն ես վերցրել էի ինձ որսկան, և սրա հետ էր, որ «չուի» գնացի կեչու մեծ պուրակը, որ գտնվում էր Իստա գետի ափին։

Վոլգայի նման՝ ռուսական շատ գետերի մի ափը լեռնային է, մյուսը՝ դաշտային։ Իստան էլ այդպես է։ Այդ գետակը չափազանց քմահաճ ընթացք ունի. սողում է օձի պես. կես վերստ ուղիղ չի հոսում, որոշ տեղ էլ, զառիվայր բլրի կատարից, երևում է տասը վերստ երկարությամբ՝ իր ջրաղացներով, լճակներով, բանջարանոցներով, ուռիներով ու խիտ այգիներով շրջապատված։ Իստայում անհամար ձուկ կա (շոգ օրերին գյուղացիները դրանց բռնում են թփերի տակ,

[1] Ռուսական փեշերը մեծ են, փոի չափ. նրանք բռնում են համարյա խրճիթի կեսը. գյուղերում և նույնիսկ քաղաքներում պառկում-քնում են դրանց վրա։ Ծ. Թ.։

ձեռներով)։ Փոքրիկ ջրատիտիկները շվացնելով թռչում են նրա քարքարոտ ափերի երկարությամբ, ուր կան սառն ու պայծառ աղբյուրներ. վայրի բադերը լողալով դուրս են գալիս լճակների մեջտեղը և զգուշությամբ նայում իրենց չորս կողմը. արագիլները կանգնում են ստվերներում, ջրախորշերում և ափերի քանդված տեղերում... Մենք «չուին» մնացինք մի ժամ, սպանեցինք երկու զույգ կոցարներ, և կամենալով մինչև արևի դուրս գալը դարձյալ փորձել մեր բախտը («չուի» կարելի է գնալ և առավոտները նույնպես), որոշեցինք գիշերել մոտակա ջրաղացում։ Դուրս եկանք պուրակից, իջանք բլրից։ Գետը թավալում էր իր մութ-կապույտ ջրերը. օդը խտանում էր գիշերվա խոնավությամբ ծանրանալով։ Մոտենալով ջրաղացին՝ բակի դուռը ծեծեցինք։ Շները վլվլացին բակում։ «Ո՞վ ա», լսվեց մի խռպոտ ու քնատ ձայն։— «Որսկաններ ենք, թողեք գիշերենք»։ Պատասխան չեղավ։— «Կվըճարենք»։— Գնամ տիրոջս ասեմ... Կորեք, անիծյալներ... Ցավն ու մահը պակաս ա դրանցից»։ Լսեցինք, թե ինչպես գործավորը մտավ խրճիթ. շուտով սակայն վերադարձավ։ «Չէ», ասում է, «տերս չի թողնում»։— Ինչո՞ւ չի թողնում։— «Վախենում ա, որսկան մարդիկ եք. հանկարծ, ով ա իմանում, ջրաղացը կրակ գցեք, գյուլլա-բարութ ունեք»։— Ինչեր ես խոսում։— «Առանց էն էլ հերու վառեցին մեր ջրաղացը, գիշերեցին ինչ-որ առուտուրական մարդիկ ու կրակ գցեցին»։— Հապա ի՞նչ անենք, ախպերս, դուրսը հո չենք մնալու։— «Ինչպես գիտեք...»։ Նա գնաց, կոշիկները թխկթխկացնելով։

Երմոլայը հայհոյեց։ «Գնանք գեղը», ասաց նա, վերջապես, հոգոց քաշելով։ Բայց մինչև գյուղը երկու վերստ կար... «Գիշերենք այստեղ՝ դուրսը», ասացի ես, «գիշերը տաք է. ջրաղացպանը փողով ծղոտ կտա»,— Երմոլայը համաձայնեց։ Մենք կրկին սկսեցինք դուռը ծեծել։— «Ի՞նչ եք ուզում, է», —լսվեց նորից մշակի ձայնը.— «ասացինք չի կարելի»։— Բացատրեցինք, թե ինչ ենք ուզում։ Նա գնաց տիրոջ հետ խորհրդակցելու և վերադարձավ նրա հետ միասին։ Բակի դուռը ճռնչաց։ Երևաց ջրաղացպանն ինքը, բարձրահասակ մի մարդ՝ ճարպակալած դեմքով, եզան վզով և կլորիկ ու մեծ

փորով։ Նա համաձայնեց իմ առաջարկին։ Ջրաղացից հարյուր քայլի վրա գտնվում էր ամեն կողմից բաց մի ծածկույթ։ Մեզ համար այնտեղ ծղոտ ու խոտ բերին. մշակը գետի մոտ, կանաչների վրա սամովար դրեց և, պպզելով սկսեց եռանդով փչել... Ածուխները, բռնկվելով, պայծառ լուսավորում էին նրա ջահել դեմքը։ Ջրաղացպանը գնաց կնոջն արթնացնելու, ինքը առաջարկեց ինձ, վերջապես, գիշերել խրճիթում. բայց ես գերադաս համարեցի մնալ բացօթյա։ Ջրաղացպանի կինը մեզ համար կաթ, ձու, գետնախնձոր ու հաց բերեց։ Շուտով սամովարն էլ եռաց, և մենք սկսեցինք թեյել։ Գետից գոլորշի էր բարձրանում, քամի չկար. ջրհավերը ճչում էին մեր շուրջը. ջրաղացի անիվների մոտից թույլ ձայներ էին լսվում. դա կաթիլներն էին ընկնում թիակների վրա, ջուրն անցնում էր ամբարտակի փակիչների միջից։ Մենք մի թեթև կրակ արինք։ Մինչև Երմոլայը գետնախնձոր էր խորովում, ես ննջեցի... Մի թեթև, զուսպ շշնջոց զարթեցրեց ինձ։ Գլուխս բարձրացրի. կրակի առաջ, մի շուռ տված տակառի վրա նստել էր ջրաղացպանի կինը և զրույց էր անում իմ որսկանի հետ։ Ես առաջ էլ՝ նրա շորերից, մարմնի շարժումներից և խոսվածքից նկատել էի, որ ճորտ սպասավոր կնոջ նման է, բայց այժմ միայն լավ դիտեցի նրա դիմագծերը։ Արտաքինից դատելով՝ երեսուն տարեկան կլիներ. նիհար և գունատ դեմքը տակավին պահպանել էր աչքի ընկնող գեղեցկության հետքերը. ինձ դուր եկան մանավանդ նրա խոշոր ու տխրամած աչքերը։ Նա արմունկները հենել էր ծնկներին ու երեսը դրել ձեռներին։ Երմոլայը նստել էր մեջքն ինձ արած և տաշեղներ էր դնում կրակի վրա։

— Ժելտուխինոյում էլի տավարի ցավ կա,— ասում էր ջրաղացպանի կինը.— տեր Իվանի երկու կովը սատկել են... Ցե՛ր, դու ողորմաս։

— Իսկ ձեր խոզերն ի՞նչ էլան,— հարցրեց Երմոլայը։

— Կենում են։

— Դրանցից գոնե մի խոճկոր նվիրեք ինձ։

Ջրաղացպանի կինը լռեց, հետո հոգոց քաշեց։

— Հետինդ ո՞վ է,— հարցրեց նա։

— Աղես ա՝ Կաստամարովսկին։

Երմոլայը եղևնու մի քանի ճյուղ գցեց կրակին. ճյուղերը

Միասին ճարճատեցին, և թանձր, սպիտակ ծուխը տվեց նրա երեսով։

— Մարդդ ինչի՞ մեզ տուն չթողեց։

— Վախում է։

— Տես, հաստափորին... Արինա Տիմոֆեևնա, հոգիս, մի թաս արաղ բեր ինձ։

Ջրաղացպանի կինը վեր կացավ ու չքացավ խավարի մեջ։ Երմոլայը երգեց կիսաձայն.

Ես սիրածիս մոտ գնացի,
Սաղ կոշիկներս մաշեցի...

Արինան վերադարձավ մի փոքրիկ շիշ և բաժակ ձեռին, Երմոլայը մի թեթև ելավ տեղից, խաչակնքեց և օդին միանգամից գլուխը քաշեց։ «Սիրում եմ»,— ավելացրեց նա։

Ջրաղացպանի կինը դարձյալ նստեց տակառի վրա։

— Հը, Արինա Տիմոֆեևնա, դեռ տկա՞ր ես։

— Տկար եմ։

— Ի՞նչ է եղել։

— Հազը տանջում է ինձ գիշերները։

— Աղեն կարծես թե քնեց,— ասաց Երմոլայը մի փոքր լռելուց հետո։— Բժշկի մոտ չգնաս, Արինա, ավելի կվատանաս։

— Չեմ էլ գնում։

— Բայց արի ինձ հյուր։

Արինան գլուխը կախեց։

— Ես իմին՝ կնկանս դուրս կանեմ թե գաս,— շարունակեց Երմոլայը։— Ճիշտ...

— Դուք ավելի լավ կանեք աղային զարթեցնեք, Երմոլայ Պետրովիչ. տեսնում եք, կարտոֆիլը խորովվել է։

— Է, թող խոմփացնի,— անտարբեր նկատեց հավատարիմ ծառաս.— շատ է դեսուդեն արել, դրանից է քնել։

Ես շուռ եկա խոտի վրա։ Երմոլայը վեր կացավ և մոտեցավ ինձ։— «Կարտոֆիլը պատրաստ է, համեցեք կերեք»։

Ես դուրս եկա ծածկույթի տակից. ջրաղացպանի կինը վեր կացավ տակառի վրայից և ուզեց գնալ։ Ես խոսքի բռնվեցի հետը.

— Այս ջրաղացը վաղո՞ւց եք քրեհել։

— Երկրորդ տարին է։

— Իսկ մարդդ որտեղացի՞ է։

Արինան հարցս չլսեց։

— Մարդդ որտեղացի՞ է,— կրկնեց Երմոլայը ձայնը բարձրացնելով։

— Բելևցի է։ Բելևի մեշչանին է։

— Դո՞ւ էլ բելևցի ես։

— Ո՛չ, ես ճորտ էի... աղային էի պատկանում։

— Ի՞նչ աղայի։

— Պարոն Զվերկովին։ Հիմի ազատ եմ։

— Ո՞ր Զվերկովին։

— Ալեքսանդր Սիլիչին։

— Դու նրա կնոջ սպասուհին չե՞ս եղել արդյոք։

— Այդ դուք որտեղի՞ց գիտեք։ Եղել եմ։

Ես կրկնակի հետաքրքրությամբ ու կարեկցությամբ նայեցի Արինային։

— Ես աղայիդ ճանաչում եմ,— շարունակեցի ես։

— Ճանաչո՞ւմ եք,— պատասխանեց նա կիսաձայն ու գլուխը կախեց։

Պետք է ասել ընթերցողին, թե ինչու այդպիսի կարեկցությամբ նայեցի Արինային։ Պետերբուրգում եղած ժամանակս պատահաբար ծանոթացա պ. Զվերկովի հետ։ Նա բավականին կարևոր պաշտոն ուներ. համարվում էր բանիմաց ու գործունյա մարդ։ Նա մի հաստլիկ, զգայուն, լալկան և չար կին ուներ — մի հասարակ ու անտանելի արարած. ուներ և մի որդի, իսկական աղայի տղա՝ երես առած ու հիմար։ Իր՝ պ. Զվերկովի արտաքինը վանող էր. լայն, գրեթե քառանկյունի դեմքից նայում էին մկան աչքերը. քիթը մեծ էր ու սուր՝ բաց քթածակերով. խուզած, սպիտակ մազերը խոզանի պես բարձրանում էին կնճռապատ ճակատից վերև, նուրբ շրթունքներն անդադար շարժվում էին և սիրտ խառնելու չափ քաղցր ժըպտում։ Պ. Զվերկովը սովորաբար կանգնում էր ոտներն իրարից հեռու դրած և հաստ ձեռները գրպանները խոթած։ Մի անգամ պատահեց իրար հետ կառեթով գնացինք քաղաքից դուրս։ Խոսեցինք։ Որպես փորձառու, գործունյա մարդ՝ պ. Զվերկովն սկսեց խրատներ կարդալ՝ ինձ «ուղիղ ճանապարհի» բերելու։

— Թույլ տվեք նկատել ձեզ,— ճղճղաց նա, վերջապես,— դուք բոլորդ, երիտասարդներ, դատում և խոսում եք ամեն բանի մասին առանց երկար մտածելու. դուք լավ չեք ճանաչում ձեր սեփական հայրենիքը՝ Ռուսաստանը, պարոնայք, անծանոթ է ձեզ, այ թե ինչ... Դուք մի գլուխ գերմանական գրքեր եք կարդում։ Այ, օրինակ, դուք ինձ ասում եք և այն, այն բանի մասին, նու, այսինքն այդ ճորտերին չեք ճանաչում, չեք իմանում, դրանք ինչ մարդիկ են։ (Պ. Զվերկովը աղմկով խնչեց և քթախոտ քաշեց)։ Թույլ տվեք պատմեմ, օրինակ, մի փոքրիկ անեկդոտ, դա ձեզ կարող է հետաքրքրել (պ. Զվերկովը հազաց)։ Գիտե՞ք չէ, ինչ կին ունեմ, կարծեմ նրանից բարի կին գտնելը դժվար է։ Նրա նաժիշտները ոչ թե ապրում, այլ դրախտի կյանք են վարում... Բայց կինս մի սկզբունք ունի՝ ամուսնացած նաժիշտ չպահել։ Եվ դա ճիշտ է. երեխաներ պիտի ծնվեն, այս-այն,— էլ ինչպես նայի տիրուհուն, հետևի նրա սովորույթներին. նա էլ գլուխ չի ունենա դրա համար, նրա միտքն զբաղված կլինի ուրիշ բանով։ Պետք է մարդավարի դատել։ Ահավասիկ, մի անգամ անցնում ենք մեր գյուղի միջով, սրանից,— ինչպես ասեմ, որ սուտ դուրս չգամ,— տասնհինգ տարի առաջ։ Տեսնենք տանուտերը մի լավ աղջիկ ունի։ Կինս թե՝ Կոկո,— այսինքն, հասկանո՞ւմ եք, նա ինձ այդպես է կանչում,— այս աղջկան տանենք Պետերբուրգ. նա ինձ դուր է գալիս, Կոկո... Ես թե՝ տանենք, ուրախությամբ։ Տանուտերն, իհարկե, մեր ոտքերն ընկավ. նա այդպիսի երջանկություն, հասկանո՞ւմ եք, սպասել չէր կարող։ Դե, աղջիկն, իհարկե, լաց եղավ։ Դա, իսկապես, դժվար բան է սկզբում. հայրական տուն... առհասարակ... այստեղ զարմանալի ոչինչ չկա։ Սակայն, նա շուտով ընտելացավ մեզ։ Առաջ նրան ուղարկեցինք մեր սպասավոր աղջիկների մոտ բան սովորելու. սովորեցրին, իհարկե... Բայց ի՞նչ եք կարծում... Այդ աղջիկը զարմանալի առաջադիմություն ցույց տվեց։ Կինս ուղղակի շատ սիրեց, հավանեց, և, վերջապես, դարձրեց իր նաժիշտը... նկատեցեք... Եվ պետք է արդարացի լինել. կինս դեռ այդպիսի նաժիշտ չէր ունեցել, բոլորովին չէր ունեցել. պատրաստակամ, համեստ, լռող, ինչպես պահանջվում է։ Բայց կինս էլ, պիտի խոստովանել, նրան չափազանց երես էր տալիս. լավ հագցնում էր, կերակրում էր մեր

սեղանից, թեյ էր խմացնում... Նու, ինչ որ կարելի է երևակայել։ Այսպես դա տասը տարի ծառայեց կնոջս։ Հանկարծ մի գեղեցիկ առավոտ, երևակայեցեք, Արինան,— նրան Արինա էին կոչում,— առանց զեկուցման մտնում է կաբինետս, և թրրմփ՝ ընկնում ոտներս... Ես այդպիսի բան, անկեղծ ասած, տանել չեմ կարող։ Մարդ երբեք իր արժանապատվությունը չպիտի մոռանա, այնպես չէ՞։— Ի՞նչ ես ուզում։— «Աղա, Ալեքսանդր Սիլիչ, շնորհ արեք»։— Ի՞նչ շնորհ։— «Թույլ տվեք մարդու գնամ»։— Ես, պետք է խոստովանեմ, զարմացա։— Բայց դու չգիտե՞ս, հիմար, որ տիրուհիդ ուրիշ նաժիշտ չունի։— «Ես առաջվա պես կծառայեմ տիրուհուս»։— Հիմարություն է, հիմարություն. տիրուհին ամուսնացած նաժիշտներ չի պահում։— «Մալանիան կարող է փոխարինել ինձ»։— Խնդրեմ դատողություններ մի տա։— «Կամքը ձերն է...»։ Ես, խոստովանում եմ, սառած մնացի։ Պետք է ասեմ, ես այսպիսի մարդ եմ. ոչ մի բան ինձ այնպես չի վիրավորում, համարձակ կասեմ, այնպես սաստիկ չի վիրավորում, ինչպես ապերախտությունը... Ձեզ ասելու կարիք չկա,— դուք գիտեք, թե ինչպիսի կին ունեմ. մարմնացած հրեշտակ է, անբացատրելի բարություն... թվում է՝ շարագործն էլ նրան՝ կնոջս կխղճար։ Ես Արինային դուրս արի։ Մտածում եմ, գուցե խելքի գա. չեմ ուզում, գիտեմ, հավատալ մարդու չարության, սև ապերախտության։ Բայց ի՞նչ եք կարծում։ Վեց ամիս հետո այդ Արինան նորից գալիս է ինձ մոտ նույն խնդրանքով։ Այս անգամ ես, խոստովանում եմ, բարկացած դուրս արի նրան, սպառնալիք տվի և որոշեցի կնոջս հայտնել։ Ես զայրացած էի... բայց երևակայեցեք իմ զարմանքը. փոքր անց՝ գալիս է ինձ մոտ կինս՝ արցունքն աչքերին, այնպես հուզված, որ ես նույնիսկ վախեցա։— Ի՞նչ է պատահել։— «Արինան»... Հասկանո՞ւմ եք... ամաչում եմ արտասանել։— Չի կարող պատահել... ո՞վ է։— «Սպասավոր Պետրուշկան»։ Պայթեցի։ Ես այդպիսի մարդ եմ... կիսամիջոցներ չեմ սիրում... Պետրուշկան... մեղավոր չի։ Նրան կարելի է պատժել, բայց նա, իմ կարծիքով, մեղավոր չի։ Արինան... նու, էլ ի՞նչ, էլ ի՞նչ ասել։ Ես, իհարկե, հրամայեցի անմիջապես նրա մազերը կտրել, կտավ հագցնել և ուղարկել գյուղ։ Կինս զրկվեց մի հիանալի նաժիշ-

տից, բայց ուրիշ ելք չկար. տանն անկարգություն հանդուրժել չի կարելի։ Հիվանդ անդամը ավելի լավ է միանգամից կըտրել... Նու, հիմի ինքներդ դատեցեք... նու, դուք հո իմ կնոջը ճանաչո՞ւմ եք. չէ՞ որ նա, նա, նա... հրեշտակ է, վերջապես... Չէ՞ որ նա սովորել էր Արինային, և Արինան այդ գիտեր ու չամաչեց... հը՞, չէ, ասացեք... Ասենք, էլ ինչ ասելու բան կա։ Համենայն դեպս ուրիշ ելք չկար։ Ինձ, հատկապես, երկար ժամանակ զայրացրեց, վիրավորեց այդ աղջկա ապերախտությունը... Ինչ ուզում եք ասեք... սիրտ, զգացմունք մի փընտրեք այդ մարդկանց մեջ։ Ինչքան ուզում ես գայլին կերակրի, նրա ուշքն ու միտքը էլի անտառումն է... Հառաջ, գիտություն։ Բայց ես ուզեցի միայն ցույց տալ ձեզ...

Եվ պ. Զվերկովը, խոսքը չավարտած, գլուխը թեքեց և պինդ փաթաթվեց թիկնոցի մեջ, արիաբար զսպելով իր ակամա հուզումը։

Հիմա ընթերցողը, երևի, կհասկանա, թե ինչու ես կարեկցությամբ նայեցի Արինային։

— Վաղո՞ւց ես ամուսնացել ջրաղացպանի հետ,— հարցրի ես վերջապես։

— Երկու տարի է։

— Հը, մի՞թե աղաղ թույլ տվավ։

— Ինձ գնեցին։

— Ո՞վ։

— Սավելի Ալեքսեյիչը։

— Դա ո՞վ է։

— Ամուսինս (Երմոլայը ժպտաց ինքն իրեն)։ Մի՞թե իմ մասին աղան ձեզ բան է ասել,— ավելացրեց Արինան, կարճ լռությունից հետո։

Չիմացա ինչ պատասխանեմ նրա հարցին։ «Արինա»,— ձայն տվեց ջրաղացպանը։ Արինան վեր կացավ ու գնաց։

— Սրա ամուսինը լա՞վ մարդ է,— հարցրի Երմոլային։

— Ոչինչ։

— Երեխաներ ունե՞ն։

— Մեկը կար, բայց մեռավ։

— Ինչպե՞ս է եղել. դա դո՞ւր է եկել ջրաղացպանին, ինչ... Շա՞տ փրկանք է տվել ջրաղացպանը դրա համար։

— Չեմ իմանում։ Արինան գիր գիտի։ Իսկ դրանց գործի

մեջ դա... էնպես... պետք է։ Նշանակում է՝ դուր է եկել։

— Իսկ դու Արինայի հետ վաղո՞ւց ես ծանոթ։

— Վաղուց։ Ես առաջ նրա տերերի մոտ էի գնում-գալիս։ Նրանց կալվածը էստեղից հեռու չէ։

— Սպասավոր Պետրուշկային էլ ես ճանաչո՞ւմ։

— Պյոտր Վասիլևիչի՞ն։ Ոնց չէ, ճանաչում էի։

— Նա ո՞ւր է հիմա։

— Զինվոր է գնացել։

Մենք լռեցինք։

— Հը, Արինան, կարծես տկար է,— հարցրի, վերջապես, Երմոլային։

— Տկա՞ր է... Բայց էգուց, երևի, լավ որս կունենանք։ Վատ չի լինի, եթե հիմա քնենք։

Վայրի բադերի երամը ճչալով անցավ մեր գլխավերևից, և մենք լսեցինք, թե ինչպես այդ երամն իջավ գետի վրա, մեզնից ոչ հեռու։ Բոլորովին մթնել էր արդեն և սկսել էր ցրտել։ Ցուրակում երգում էր սոխակը։ Մենք մտանք խոտի մեջ ու քնեցինք։

1847*

ՄՈՌԻ ՁՈՒՐ

Օգոստոսի սկզբին հաճախ անտանելի շոգ էր լինում։ Այդ ժամանակ, տասներկուսից մինչև երեքը, ամենախիզախ, կենտրոնացած մարդն էլ անկարող է որս անել, և ամենաանձնվեր շունն էլ սկսում է «որսորդի կոշիկները մաքրել», այսինքն դանդաղ հետևում է նրան, հիվանդագին կերպով աչքերը կուչ ածած և լեզուն չափից ավելի կախ գցած, և տիրոջ հանդիմանությանն ի պատասխան՝ պոչը շարժում է խոնարհությամբ ու շվարած դեմք ցույց տալիս, բայց առաջ չի գնում։ Հենց այդպիսի մի օր գնացել էի որսի։ Երկար չէի ուզում ենթարկվել մի որևէ տեղ, ստվերում, թեկուզ մի ակն-

* Այստեղ և այնուհետև նշվում է երկի առաջին հրատարակության տարեթիվը։ (Ծան. խմբ.)։

թարթ պառկելու գայթակղության, եռանդոտ շունս երկար շարունակում էր թփից թուփ վազել, թեև ինքը, ըստ երևույթին մի կարգին բան չէր սպասում իր տենդագին գործունեությունից։ Հեղձուցիչ շոգը հարկադրեց ինձ, վերջապես, մտածել մեր վերջին ուժերն ու ընդունակությունները խնայելու մասին։ Մի կերպ հասա Խստա գետը, իջա զառիվայրից և դեղին ու խոնավ ավազի վրայով գնացի աղբյուրի կողմը, որը մեր ամբողջ շրջանում հայտնի է «Մոռի ջուր» անունով։ Այդ աղբյուրը բխում է ափի ճեղքվածքից, որը կամաց-կամաց փոխվում մի ոչ մեծ, բայց խոր ձորի, և այդտեղից քսան քայլի վրա ուրախ աղմուկով թափվում է գետը։ Ձորի կողերին կաղնու թփեր են աճել. աղբյուրի մոտերքը՝ կարճ, թավշյա կանաչ. արևի ճառագայթները գրեթե երբեք չեն դիպչում նրա սառը, արծաթյա ջրերին։ Մոտեցա աղբյուրին, կանաչների վրա ընկած էր թխկենու կեղևից շինած մի ջրաման, որ թողել էր երևի մի անցորդ գյուղացի ընդհանուր գործածության համար։ Ես ջուր խմեցի, պառկեցի ստվերում ու նայեցի շուրջը։ Այն տեղը, ուր աղբյուրի ջուրը թափվում էր գետը, նստած էին թիկունքներն ինձ արած երկու ծերունի։ Մեկը բավական պնդակազմ ու բարձրահասակ, մութ-կանաչ, մաքուր կաֆտանը հագին ու գլխարկը գլխին ձուկ էր որսում. մյուսը, նիհար ու փոքրիկ, մուարե սերթուկով ու առանց գլխարկի, ծնկներին բռնել էր որդերով լիքը մի աման ու երբեմն ձեռքը քսում էր ճերմակած գլխին, կամենալով կարծես պաշտպանվել արևից։ Ուշադիր նայելով՝ ճանաչեցի. շումիխինցի Ստյոպուշկան էր։ Խնդրում եմ ընթերցողի թույլտվությունը՝ այդ մարդուն իրեն ներկայացնելու։

Իմ շենից մի քանի վերստ հեռու գտնվում է Շումիխինո մեծ գյուղը, որ ունի մի քարե եկեղեցի։ Այդ եկեղեցու դիմաց մի ժամանակ երևում էին կալվածատերերի ընդարձակ ապարանքներ, շրջապատված զանազան շենքերով, արհեստանոցներով, ախոռներով սայլերի ու կառքերի սարայներով, բաղնիքներով ու խոհանոցներով. կային և առանձին տներ՝ հյուրերի ու գործակատարների համար, ծաղիկների ջերմոց, ճլորթիներ՝ ժողովրդի համար. և ուրիշ շատ թե քիչ օգտակար շենքեր։ Այդ ապարանքներում ապրում էին հարուստ կալվածատերեր, և ամեն բան նրանց մոտ գնում էր իր կարգով,

երբ հանկարծ, մի գեղեցիկ առավոտ, այդ բոլորը այրվեց իսպառ։ Տերերը փոխադրվեցին մի այլ տեղ, ագարակը ամայացավ։ Ընդարձակ մոխրանոցը դարձավ բանջարանոց, ուր տեղ-տեղ մնացին իրար գլխի կիտված աղյուսներ, մնացորդները նախկին հիմքերի։ Հրդեհից ազատված գերաններից ձևաց մի խրճիթ շինեցին և տեղավորեցին այնտեղ այգեպան Միտրոֆանին՝ իր կնոջ՝ Ակսինյայի ու երեխաների հետ։ Միտրոֆանին կարգադրեցին՝ տերերի սեղանի համար, վերստ ու կես ճամփա կտրելով, կանաչի ու բանջարեղեն մատակարարել. Ակսինյային հանձնարարեցին՝ նայել տիրոջյան կովին, որ խոշոր գումարով գնված էր Մոսկվայում, բայց, դժբախտաբար, ծնելու ընդունակությունից զուրկ, և այդ պատճառով գնելու օրից կաթ չէր տվել. նրան տվին նաև մի փոփոլավոր որձ բադ. իսկ երեխաներին, մանկահասակ լինելու պատճառով, ոչ մի պաշտոն չտվին, ինչ որ չխանգարեց նրանց բոլորովին ծուլանալու։ Պատահել է մի երկու անգամ գիշերել եմ այդ այգեպանի մոտ. անցնելիս առել եմ նրանից վարունգներ, որոնք, աստված գիտե թե ինչու, միշտ ջրահամ էին լինում և հաստ, դեղին կլեպով։ Հենց այդ այգեպանի մոտ էլ առաջին անգամը տեսա Ստյոպուշկային։ Բացի Միտրոֆանից, նրա ընտանիքից և ծեր, խուլ երեցփոխ Գերասիմից, որը, ի սեր Քրիստոսի, ապրում էր մի զինվորի կնոջ խցում, էլ ոչ մի ճորտ չէր մնացել Շումիխինոյում, որովհետև Ստյոպուշկային, որին մտադիր եմ ծանոթացնել ընթերցողին, չի կարելի համարել ո՛չ սպասավոր առհասարակ, ո՛չ էլ ճորտ մանավանդ։

Ամեն մարդ գոնե մի որևէ դիրք ունի հասարակության մեջ, որևէ կապեր. ամեն մի ճորտ սպասավորի տրվում է, եթե ոչ ոռճիկ, գոնե, այսպես անվանված «կշռած փայաբաժին». Ստյոպուշկան բացարձակապես ոչ մի նպաստ չէր ստանում, ոչ մեկի հետ ազգակցական կապ չուներ, ոչ ոք չգիտեր նրա գոյության մասին։ Այդ մարդը նույնիսկ անցյալ չուներ. նրա մասին չէին խոսում. և մարդահամարի ժամանակ էլ հաղիվ թե հաշվի առնված լիներ։ Մութ լուրեր էին պտտում, թե ինչ-որ մի ժամանակ, մեկի մոտ կամերդիներ (սենեկապահ) է եղել, բայց թե ո՞վ էր, որտեղացի՞, ո՞ւմ որդին, ինչպե՞ս էր ընկել Շումիխինոյի հպատակների շարքը, ինչպես էր ձեռք

բերել մուարե, անհիշելի ժամանակներից ի վեր հագած կաֆ-
տանը, որտե՞ղ էր կենում, ինչո՞վ էր ապրում, այդ մասին
ոչ ոք բացարձակապես ամենափոքր հասկացողություն չուներ,
և, ճիշտն ասած, ոչ ոքի էլ այդ հարցերը չէին զբաղեցնում։
Ծերունի Տրոֆիմիչը, որ բոլոր ճորտ ծառաների տոհմագրու-
թյունը գիտեր մինչև չորս պորտը, նա էլ մի անգամ միայն
ասաց, թե կարծես հիշում է, որ Ստյոպուշկային ազգական
էր գալիս մի թրբուհի, որին հանգուցյալ աղան՝ բրիգադիր
Ալեքսեյ Ռոմանիչը արշավանքից բերել էր հետը։ Մինչև ան-
գամ, պատահում էր, տոն օրերին, այն օրերին, երբ տերերը
բոլորին հյուրասիրելու համար մեծ սեղան էին բաց անում,
ըստ ռուսական հին սովորության, կարկանդակով ու կանաչ
օղիով, անգամ այդ օրերին Ստյոպուշկան բաց սեղանների
ու տակառների մոտ չէր երևում, գլուխ չէր խոնարհում, աղա-
յի ձեռքը չէր համբուրում, աղայի կենացը չէր խմում, միայն
մի որևէ բարեհոգի մարդ, նրա կողքից անցնելիս, կտար նրան
կերած ու կիսատ թողած կարկանդակի մի կտոր։ Զատկին
նրան շնորհավորում էին, բայց նա գրպանից կարմիր ձու չէր
հանում և, շնչակտուր ու աչքերը թարթելով, չէր առաջար-
կում ջահել աղաներին կամ հենց իրեն՝ տիրուհուն։ Ամառը
ապրում էր մառանում, ձմեռը բաղնիսի ազատ սենյակում.
սաստիկ սառնամանիքին գիշերում էր խոտանոցում։ Նրան
ընտելացել էին, երբեմն նույնիսկ խփում էին, բայց ոչ ոք նրա
հետ չէր խոսում և նա ինքն էլ, կարծես, ի ծնե բերան չէր
բացել։ Հրդեհից հետո՝ այդ անտեր մարդը տեղավորվեց այ-
գեպան Միտրոֆանի մոտ։ Այգեպանը ձեռ չտվեց նրան, ոչ
ասաց ապրի ինձ մոտ, ոչ էլ քշեց։ Ստյոպուշկան այգեպանի
մոտ չէր մնում, ապրում էր բանջարանոցում։ Նա թե ման
գալիս, թե շարժվելիս ձայն, աղմուկ չէր հանում. փոնգտում
ու հագում էր ձեռքի մեջ, ոչ առանց երկյուղի. դես ու դեն էր
ընկնում, գործ անում սուսուփուս, ինչպես մրջյուն. և այդ
բոլորը միայն մի բան ուտելու համար։ Եվ, իսկապես, եթե
առավոտից մինչև երեկո նա չհոգար իր սննդի մասին,—
Ստյոպուշկաս սովամահ կլիներ։ Վատ բան է, որ մարդ առա-
վոտը չիմանա, թե ինչ պիտի ուտի երեկոյան։ Մերթ նստում
էր Ստյոպուշկան ցանկապատի տակ ու կամ բողկ էր կրծում,

կամ գազար, կամ թե չէ կաղամբի կոթ. մերթ դուլլով ջուր
էր կրում ինչ-որ տեղ ու տնքտնքում. մերթ պուտուկի տակ
կրակ էր անում և գրպանից ինչ-որ սև բաներ հանելով՝ գցում
պուտուկի մեջ. մերթ իր նկուղում փայտով մեխեր էր խփում,
հացի համար թարեք շինում։ Եվ այդ բոլորն անում էր լուռ, սու-
սուփուս, ու մեկ էլ տեսար՝ չկա, չքացել է։ Երբեմն հանկարծ
գնում-անհետանում էր երկու օրով, նրա բացակայությունն,
իհարկե, ոչ ոք չէր նկատում... Մեկ էլ տեսար՝ դարձյալ այս-
տեղ է, դարձյալ ցանկապատի մոտ կասկարայի տակ տա-
շեղներ է դնում թաքուն-թաքուն։ Նրա դեմքը փոքր է, աչքերը
դեղին, գլխի մազերը հոնքերին են հասնում, քիթը սուր է,
ականջները մեծ, թափանցիկ, ինչպես չղջիկի թևեր, մորուքը
կարծես երկու շաբաթ առաջ է ածիլված, և երբեք ոչ փոքրա-
նում է, ոչ մեծանում։ Հենց այս Ստյոպուշկային էր, որ հան-
դիպեցի Իստայի ափին՝ մի այլ ծերունու հետ միասին։

Ես մոտեցա նրանց, բարևեցի ու նստեցի կողքներին։
Ստյոպուշկայի ընկերն էլ ծանոթ դուրս եկավ. դա կոմս Պյոտր
Իլյիչ...-ի կողմից ազատ արձակված ճորտ Միխայիլ Սա-
վելևն էր, մականունը՝ Տուման։ Նա ապրում էր բալախովեցի
թոքախտավոր մեշչանինի մոտ, որ իշևան էր պահում, ուր
բավականին հաճախ իշևանում էի և ես։ Օրյոլի մեծ ճանա-
պարհով անցնողները մինչև այսօր էլ կարող են, Տրոյիցկ
գյուղից ոչ հեռու, նկատել մի ահագին փայտաշեն, երկու հար-
կանի տուն, բոլորովին աչքաթող արված, տանիքը քանդված
և լուսամուտները պինդ ծածկած։ Կեսօրին, պայծառ, արև
և լուսամուտները պինդ ծածկած։ Կեսօրին, պայծառ, արև
եղանակին, այդ ավերակը սարսափելի տխուր պատկեր է ներ-
կայացնում։ Մի ժամանակ այստեղ էր ապրում կոմս Պյոտր
Իլյիչը, որ հայտնի աղուհացով մարդ էր, հին դարի հարուստ
տոհմական մարդկանցից մեկը։ Պատահում էր՝ ամբողջ նա-
հանգը հավաքվում էր նրա մոտ, պարում և ուրախանում՝ տա-
նու մարդկանց երաժշտության խլացուցիչ աղմուկների մեջ,
հրթիռների տակ, հռովմեական ջահերով շրջապատված, և
երևի, շատ պառավներ, այժմ այդ ամայի ապարանքի մոտից
անցնելիս, հոգոց կքաշեն ու կհիշեն անցած ժամանակներն ու
անցած ջահելությունը։ Երկար քեֆ էր անում կոմսը. սիրալիր
ժպիտը դեմքին՝ երկար շրջում էր ստորաքարշ հյուրերի ամբո-
խի մեջ. բայց նրա կալվածքը, դժբախտաբար, չբավեց մինչև

կյանքի վերջը։ Սնանկանալով՝ նա գնաց Պետերբուրգ՝ իր համար տեղ փնտրելու և մեռավ հյուրանոցում։ Տումանը նրա ծառաների գլխավորն էր և դեռ կոմսի կենդանության օրով ազատվել էր ճորտությունից։ Դա յոթանասուն տարեկան մարդ էր՝ կանոնավոր ու դուրեկան դեմքով։ Նա գրեթե շարունակ ժպտում էր, ինչպես ժպտում են այժմ միայն Եկատերինայի ժամանակի մարդիկ՝ բարեսրտությամբ ու վեհությամբ. խոսելիս՝ շրթունքներն առաջ էր բերում դանդաղ ու սեղմում. աչքերը կկոցում էր քաղաքավարությամբ և խոսքերն արտասանում փոքր-ինչ քթի մեջ։ Նա քիթը սրբում ու քթախոտ էր քաշում նույնպես առանց շտապելու, կարծես գործ էր անում։

— Հը, Միխայլո Սավելիչ,— սկսեցի ես,— ձուկ բռնե՞լ ես։

— Այ բարեհաճեցեք կողովին նայել. երկու պերկես եմ բռնել և հինգ ծածան... ցույց տուր, Ստյոպկա։

Ստյոպուշկան կողովը քաշեց դեպի ինձ։

— Ինչպե՞ս ես ապրում, Ստեփան,— հարցրի նրան։

— Վվ... վը... վը... Ոչինչ, աղա. կամաց-կամաց,— պատասխանեց Ստեփանը, կակազելով, կարծես լեզվով փթանոցներ էր պտտում։

— Իսկ Միտրոֆանը լա՞վ է։

— Լավ է, ին... ին... ինչ... ինչպես չէ, աղա։

Խեղճը շուտ եկավ։

— Բայց ձուկը ինչ-որ լավ չի բռնվում,— խոսեց Տումանը,— շատ շոգ է, դրանից բոլոր ձկները քաշվել են շվաք տեղեր, քնել... Հապա, մի որդ դիր, Ստյոպա։ (Ստյոպուշկան ամանից մի որդ հանեց, դրեց ձեռի ափին, մի երկու անգամ խփեց նրան, անցրեց կարթի ծայրին, թքեց ու տվեց Տումանին)։ Շնորհակալ եմ, Ստյոպա... Իսկ դուք, աղա,— շարունակեց նա, դիմելով ինձ.— ո՞րս եք անում։

— Ինչպես տեսնում ես։

— Այդպե՞ս... Իսկ ձեր շունը անպիակա՞ն է, թե՞ ֆուրլիական։

Ծերունին սիրում էր առիթ եղած դեպքում ցույց տալ իրեն։ Թե տեսեք, ես էլ աշխարհ եմ տեսել, բան գիտեմ։

— Չգիտեմ ինչ ցեղի է, բայց լավն է։

— Այդպես... Իսկ շատ շներով գնո՞ւմ եք սրսի։

— Երկու ոհմակ ունեմ։

Տումանը ժպտաց և գլուխն օրորեց։

— Այդպես է. մարդ կա շուն շատ է սիրում, մարդ էլ կա՝ ձրի տաս՝ չի վերցնի։ Ես իմ խելքով այնպես եմ կարծում, որ շունը պետք է պահել, այսպես ասած, վայելչության համար... Եվ որպեսզի ամեն ինչ արդեն կարգին լինի. և ձիանքը լինեն կարգին և շուն պահողները, ինչպես հարկն է, կարգին ու ամեն ինչ։ Հանգուցյալ կոմսը,— արքայություն լինի նրան,— կյանքում պետք է ասած, որսորդ չէր եղել, բայց շներ պահում էր և տարենը մի երկու անգամ որսի դուրս գալիս։ Բակում հավաքվում էին շնապահները՝ կարմիր կաֆտաններ հագած, ու փող փչում. նորին պայծառափայլությունը բարեհաճում էր դուրս գալ, ձին մոտեցնում էին նորին պայծառափայլությանը. նորին պայծառափայլությունը նստում էր, իսկ գլխավոր շնպետը նրա ոտները մտցնում էր ասպանդակների մեջ, գլխարկը վերցնում և սանձը գլխարկի մեջ դրած՝ մատուցում նրան։ Նորին պայծառափայլությունը բարեհաճում էր մտրակը շրխկացնել մի տեսակ, իսկ շնպահները հայհույ էին անում ու դուրս գալիս բակից։ Ասպանդակ պահողը ձին քշում էր կոմսի ետևից, իսկ ինքը կոմսը մետաքսե թոկով բռնած, պահում էր իր սիրած երկու շունը ու դիտում շուրջը... Ինքն էլ՝ այդ ասպանդակ պահողը, կարմրաթուշ տղա էր, նստում էր բարձր թամքի վրա ու աչքերը չորս անում... Այսպիսի դեպքերում հյուր էլ էին լինում, իհարկե։ Եվ ուրախություն, և հարգանք... Ախ, ընկավ, անպիտան,— ավելացրեց նա հանկարծ, կարթը քաշելով։

— Հը՞, ասում են, կոմսը լավ կյանք քաշե՞ց,— հարցրի ես։

Ծերունին թքեց որդի վրա և կարթը գցեց ջուրը։

— Ազնվազարմ մարդ էր, իհարկե։ Պատահում էր՝ նրա մոտ գալիս էին Պետերբուրգի առաջավոր մարդիկ։ Պատահում էր՝ կապույտ ժապավենները կրծքներին սեղան էին նստում և ճաշում։ Բայց ինչպե՞ս հյուրասիրել գիտեր։ Պատահում էր՝ ինձանչեր ինձ. «Տուման», կասեր. «վաղը ինձ կենդանի ստերլետ (ձուկ) է հարկավոր, կարգադրիր բերեն, լսո՞ւմ ես»։— «Լսում եմ, ձերդ պայծառափայլություն»։— Կաֆտանները պարիկները, ձեռնափայտերը, առաջին տեսակի դուխիներն

ու լաղեկոլոնները, քթախոտի տուփերը, մեծ-մեծ պատկերները ուղիղ Փարիզից էր բերել տալիս։ Բանկետ էր տալիս,— տե՞ր իմ աստված,— էլ հրավառություններ, էլ նավակով զբոսանք։ Մինչև անգամ թնդանոթ էին արձակում։ Հենց մենակ երաժիշտները քառասուն հոգի էին։ Գերմանացի կապելմեյստեր էր պահում, բայց այդ գերմանացին շատ էր գոռոզացել, ուզում էր աղաների հետ սեղան նստի։ Նորին պայծառափայլությունը հրամայեց քշել դրան. առանց դրան էլ, ասում է, իմ երաժիշտները իրենց գործը հասկանում են։ Հայտնի բան է. տերն ու հրամայողն ինքն էր։ Սկսում էին պարել ու պարում էին մինչև առավոտ, և ամենից շատ լակոսեզ—մատրադուրա... Ա՛յ... ա՛յ... ա՛յ... ընկար։ (Ծերունին ջրից հանեց մի փոքրիկ պերկես)։ Առ, Ստյոպա։— Մեր աղան, ինչպես հարկն է, աղա էր,— շարունակեց ծերունին,— բարի էլ սիրտ ուներ։ Պատահում էր՝ ծեծում էր քեզ, բայց մեկ էլ տեսար մոռացավ։ Մենակ մի բան — մատրոսուհիներ էր պահում։ Ախ, այդ մատրոսուհիները, տեր իմ աստված։ Հենց դրանք էլ քանդեցին նրան։ Ախր դրանց բոլորին էլ հասարակ դասից էր ջոկում։ Էլ, կարծում ես, ինչնե՞րն է պակաս։ Բայց չէ, Եվրոպայի ամենաթանկագին բաներն են ուզում։ Բայց, ասենք, ինչո՞ւ լավ, ուրախ չապրեն, իրանցից ի՞նչ է գնում, տիրոջ հոգին դուրս գա։ Մանավանդ մեկը. Ակուլինա էին ասում, հիմի մեռած է, արքայություն նրան։ Հասարակ կին էր, Սիտովի գզրի աղջիկը, բայց այնպես մի շարն էր։ Պատահում էր՝ խփում էր կոմսի թշերին։ Բոլորովին կախարդել էր նրան։ Իմ աղգականի ճակատը ածիլել տվեց, թե ինչ է՝ այդ աղջկա նոր շորի վրա շոկոլադ էր թափել... ասենք, մենակ նրա ճակատը չէր, որ ածիլել տվեց։ Այո... Բայց և այնպես լավ ժամանակներ էին,— ավելացրեց ծերունին խոր հոգոցով, գլուխը կախեց ու լռեց։

— Բայց ձեր աղան, ինչպես տեսնում եմ, խիստ մարդ է եղել,— սկսեցի ես, փոքր լռությունից հետո։

— Այն ժամանակ դա ընդունված էր, աղա,— վրա բերեց ծերունին, գլուխը շարժելով։

— Հիմի այդպիսի բաներ չեն անում,— նկատեցի ես, աչքերս չհեռացնելով նրանից։

Նա կողքանց նայեց ինձ։

— Հիմի, իհարկե, ավելի լավ է,— թոթովեց նա և կարթը գցեց ավելի հեռու։

Մենք նստել էինք ստվերում, բայց ստվերում էլ շոգ էր։ Ծանր, տաք օդը կարծես մարել էր. տաքացած դեմքդ կարոտով քամի էր փնտրում, բայց քամի չկար։ Արևն անխնա այրում էր կապույտ երկնքից. ուղիղ մեր դիմաց՝ մյուս ափին դեղնին էր տալիս վարսակի դաշտը, և գեթ մի հասկը շարժվեր։ Մի փոքր ցած, գյուղական մի ձի կանգնել էր ծնկնահար ջրի մեջ և ծուլորեն շարժում էր թաց պոչը. երբեմն՝ ջրի վրա կուացած թփի տակից ճողփում էր մի մեծ ձուկ, պղպջակներ էր գոյացնում ջրի երեսին և հանդարտ սուզվում ջրի տակ։ Ճպուռները ճռճռացնում էին դեղնած խոտերի մեջ, լորերը ճչում էին ակամա. բազեները սահուն պտույտներ էին գործում դաշտի վրա և հաճախ կանգ առնում մի տեղ, թևերը շարժում արագ և պոչերը կախում հովհարի պես։ Մենք շոգից ընկճված նստել էինք անշարժ։ Հանկարծ մեր ետև՝ ձորում աղմուկ լսվեց. մեկն իջնում էր դեպի աղբյուրը։ Ետ նայեցի և տեսա հիսուն տարեկան մի գյուղացի՝ փոշոտված, վերնաշապիկ ու տրեխներ հագած, գործվի պարկն ու վերնազգեստը ուսը գցած։ Նա մոտեցավ աղբյուրին, ագահությամբ խմեց ու վեր կացավ։

— Է, վլա՞ս,— ձայն տվեց Տումանը, նայելով նրան,— բարով տեսանք, ախպեր ջան։ Որտեղի՞ց ես գալիս։

— Բարով, Միխայլա Սավելիչ,— խոսեց գյուղացին մոտենալով.— հեռվից եմ գալի։

— Ո՞ւր էիր գնացել,— հարցրեց Տումանը։

— Գնացել էի Մոսկվա՝ աղայի մոտ։

— Ինչի՞։

— Խնդրելու։

— Ի՞նչ խնդրելու։

— Որ կամ հարկը պակասեցնի, կամ նորից իրա համար աշխատեցնի, ճորտ դարձնի։ Որդիս մեռավ, հիմի մենակ էլ չեմ կարողանում...

— Որդիդ մեռա՞վ։

— Մեռավ։ Հանգուցյալը,— ավելացրեց գյուղացին,—

Մոսկվայում կառապանություն էր անում. իմ տեղակ, պետք ա ասել, հարկը տալիս էր։

— Բայց մի՞թե դուք հիմա հարկատու եք։

— Այո։

— Ի՞նչ ասաց աղաղ։

— Ի՞նչ պիտի ասեր։ Քշեց։ Ասում ա՝ ինչպես ես համարձակվում ուղիղ ինձ մոտ գալ. դրա համար կառավարիչ կա, դու, ասում ա, առաջ պարտավոր ես կառավարչին հայտնել... հետո ո՞ւր կարող եմ տեղափոխել քեզ։ Դու, ասում ա, առաջ հլա քու պարտքը տուր։ Բարկացավ բոլորովին։

— Հետո ի՞նչ... դու էլ ետ եկա՞ր։

— Ետ եկա։ Ուզում էի իմանամ հանգուցյալը բան-ման չի թողել, բայց բան դուրս չեկավ։ Նրա աղին ասում եմ, թե՝ ես Ֆիլիպի հերն եմ. իսկ նա թե՝ ես ի՞նչ իմանամ հերն ես։ Հետո, քու որդին, ասում ա, բան չի թողել. դեռ հլա ինձ բան ա պարտ։ է, ես էլ վեր կացա ետ եկա։

Գյուղացին այս բոլորը մեզ պատմում էր ժպտալով, կարծես խոսքը ուրիշի մասին լիներ. բայց նրա փոքրիկ, կուլ եկած աչքերում արցունք երևաց, շրթունքները դողացին։

— Հիմի, ուրեմն, տո՞ւն ես գնում։

— Բա ո՞ւր։ Իհարկե, տուն։ Կնիկս, ով գիտի, հիմի սովից մեռնում ա։

— Դու էլ... այն...— խոսեց հանկարծ Ստյոպուշկան, շփոթվեց, լռեց և սկսեց ձեռքի ամանը խառնել։

— Իսկ կառավարիչի մոտ գնալու ե՞ս,— շարունակեց Տումանը, զարմացած նայեց Ստյոպային։

— Ինչո՞ւ գնամ նրա մոտ... Առանց էն էլ տալիք եմ։ Որդիս ախր մահից առաջ մի տարի հիվանդ ա էլել, ու իրա հարկը չի տվել... ես էլ բան չունեմ, որ տամ... Ի՞նչ անեմ...

Վլասը ծիծաղեց։

— Ի՞նչ, դա վատ բան է, Վլաս,— դանդաղ պատասխանեց Տումանը։

— Ինչո՞վ ա վատ։ Չէ... (Վլասի ձայնը կտրվեց)։ Էս ինչ անտանելի շոգ ա,— շարունակեց նա, թևքով երեսը սրբելով։

— Ձեր աղան ո՞վ է,— հարցրի ես։

— Կոմս***, Վալերյան Պետրովիչը։

— Պյոտր Իլյիչի որդի՞ն։

— Պյոտր Իլյիչի որդին,— պատասխանեց Տումանը։— Հանգուցյալ Պյոտր Իլյիչը՝ դեռ իր կենդանության օրով, Վլասենց գյուղը բաժին տվեց որդուն։ Հը, նա առո՞ղջ է։

— Առողջ է, փառք աստծու,— վրա բերեց Վլասը,— Կարմրել է, երեսը լենք ա տվել։

— Այ, աղա,— շարունակեց Տումանը, դիմելով ինձ,— լավ կլիներ նա սրանց տաներ Մոսկվա, թե չէ դարձրել է հարկատու։

— Մխից ի՞նչ է վերցնում։

— Մխից իննսունհինգ ռուբլի,— թոթովեց Վլասը։

— Այ, տեսնո՞ւմ եք. իսկ հողը շատ քիչ է. եղածը աղայի անտառն է։

— Բայց, ասում են, էդ էլ են ծախել,— նկատեց գյուղացին։

—Դե, այ, տեսնում եք... Ստյոպա, ճիճու տուր... Ստյոպա՞... էդ ի՞նչ բան է. քնել ե՞ս, ինչ է։

Ստյոպուշկան վեր թռավ։ Գյուղացին նստեց մեզ մոտ։ Մենք դարձյալ լռեցինք։ Գետի մյուս ափին մեկն սկսեց երգել, բայց այնքան տխուր... Տխրեց և իմ խեղճ Վլասը...

Կես ժամ հետո մենք ցրվեցինք։

1848

ՕՎՍՅԱՆԻԿՈՎԸ

Պատկերացրեք, սիրելի ընթերցողներ, մի գեր, բարձրահասակ, յոթանասուն տարեկան մարդ՝ փոքր-ինչ Կռիլովին հիշեցնող դեմքով, կախված հոնքերի տակից նայող պայծառ ու խելացի հայացքով, լուրջ ու վայելուչ տեսքով, շափավոր խոսվածքով, դանդաղ քայլվածքով. ահա ձեզ Օվսյանիկովը։ Հագնում էր նա լայն, երկար թևքերով այուրտուկ, որը կոճկում էր վերից վար, վզին կապում էր մետաքսե բաց մանիշակագույն թաշկինակ, ոտներին մաքրած երկարաճիտ ծոպավոր կոշիկներ էին, և առհասարակ արտաքինով նման էր հարուստ վաճառականի։ Ձեռները գեղեցիկ էին, փափկիկ ու

սպիտակ. հաճախ, խոսակցության միջոցին, բռնում էր իր պյուրտուկի կոճակները։ Օվսյանիկովն իր ծանր ու մեծ տեսքով և անշարժությամբ, բանիմացությամբ ու ծուլությամբ, իր բարեհոգությամբ ու համառությամբ ինձ հիշեցնում էր Պետրոս Մեծից առաջ եղած ռուս բոյարներին...։ Նրան շատ կապեր ֆերյազը[1]։ Դա հին դարի վերջին մարդկանցից մեկն էր։ Բոլոր հարևաններն անչափ հարգում էին նրան և պատիվ էին համարում նրա հետ ծանոթ լինել։ Նրա դասի մարդիկ՝ առանձին ազատ տնտեսության տերերը մենակ չէին աղոթում վրան, դեռ հեռվից գլխարկները վերցնելով՝ խոր գլուխ էին տալիս նրան, հպարտանում էին նրանով։ Ընդհանրապես ասած՝ մեզանում մինչև այժմ առանձին տնտեսություն ունեցողին դժվար է տարբերել գյուղացուց. նրա տնտեսությունը գրեթե վատ չէ գյուղացու տնտեսությունից, հորթերը դուրս չեն գալիս հնդկացորենի արտից, ձիերը կաշի և ոսկոր են, ձիու սարքը թոկից է։ Օվսյանիկովը բացառություն էր կազմում ընդհանուր կարգից, թեև ունևոր չէր համարվում։ Մենակ՝ կնոջ հետ ապրում էր իր կոկ, մաքուր տնակում, պահում էր մի քանի ծառա, հագցնում էր նրանց ռուսական ձևով և անվանում էր մշակներ։ Դրանք էլ վարում էին նրա հողը։ Նա իրեն ազնվականի տեղ չէր դնում, կալվածատեր չէր ձևանում, երբեք, ինչպես ասում են, իրեն «չէր կորցնում», առաջին իսկ հրավերով չէր նստի և նոր հյուր ներս մտնելիս՝ անպայման վեր կկենար տեղից, բայց այնպիսի արժանապատվությամբ, այնպես վայելուչ սիրալիրությամբ, որ հյուրն ակամա ավելի խորն էր գլուխ տալիս նրան։ Օվսյանիկովը հին սովորություններին հավատարիմ էր մնում ոչ թե սնահավատությունից (նրա հոգին բավականին ազատ էր), այլ ըստ սովորության։ Նա, օրինակ, չէր սիրում ուեսորներով կառքեր, որովհետև գտնում էր, որ դրանք հանգիստ չեն, և ինքը տեղ էր գնում կամ եռանդակով, կամ փոքրիկ (կաշվե բարձ ունեցող) սայլակով, և ինքն էր քշում իր խայտախար (չալ) ձին։ (Նա պահում էր միայն խայտախարի ձիեր)։ Կառապանը, ջահել, կարմրաթուշ, բոլորշի խուզված մազերով մի

[1] Հին ռուսական վերնազգեստ՝ անօձիք և անկոճակ։ Ս. Բ.։

տղա, կապտագույն վերնազգեստ հագած, ոչխարի մորթուց կարած ցածրիկ գլխարկը գլխին, կաշե գոտին մեջքը կապած, հարգալիր նստում էր նրա կողքին։ Օվսյանիկովը ճաշից հետո միշտ քնում էր, շաբաթ օրերը գնում էր բաղնիս, կարդում էր միայն հոգևոր գրքեր (որի ժամանակ հանդիսավորապես քթին էր դնում իր արծաթյա, կլոր ակնոցը), պառկում և վեր էր կենում վաղ։ Սակայն, մորուքը սափրել էր տալիս և մազերը պահում էր գերմանական ձևով։ Հյուրերին ընդունում էր շատ սիրալիր ու սրտաբաց. բայց մեջքը չէր երկուտակում, չէր խոնարհում նրանց առաջ, դեսուդեն չէր ընկնում, չէր հյուրասիրում ամեն տեսակ չոր ու թթու բաներով։ «Ա՛յ կնիկ»,— ասում էր նա դանդաղ, առանց տեղից ելնելու և գլուխը փոքր-ինչ նրա կողմը թեքելով.— «պարոնների համար մի որևէ քաղցր բան բեր ուտելու»։ Նա հաց ծախելը մեղք բան էր համարում — հացը աստծու շնորհ է. և 40 թվին, ընդհանուր սովի և թանկության ժամանակ, իր ամբողջ պաշարը բաժանեց շրջակա կալվածատերերին ու գյուղացիներին. հետևյալ տարին նրանք շնորհակալությամբ վերադարձրին իրենց պարտքը մթերքով։ Հաճախ հարևանները գալիս էին Օվսյանիկովի մոտ, խնդրում, որ դատի, հաշտեցնի իրենց և գրեթե միշտ ենթարկվում էին նրա վճռին, լսում էին նրա խորհուրդները... Շատերը նրա շնորհիվ վերջնականորեն որոշեցին իրենց հողերի սահմանները։ Բայց կալվածատիրուհիների հետ եղած երկու թե երեք սխալից հետո՝ նա հայտարարեց, թե հրաժարվում է իգական սեռին պատկանող անձանց միջև որևէ տեսակի միջնորդ լինելուց։ Տանել չէր կարող շտապողականություն, տագնապալից փութկոտություն, կանացի շատախոսություն և «իրարանցում»։ Մի անգամ նրա տունը հրդեհ էր ընկել։ Մշակը հևասպառ ներս ընկավ ճչալով. «Հրդե՜հ, հրդե՜հ»։— «Դե, էլ ինչ ես գոռում,— հանգիստ ասաց Օվսյանիկովը,— գլխարկս ու ձեռնափետս տուր»... Նա սիրում էր իր կառքը ինքը վարել։ Մի անգամ մի ջահել ձի կառքը վազեցրեց սարն ի վար դեպի ձորը. «Դե, հերիք է, հերիք. ջահել բուռակ ես՝ կընկնես-կսատկես,— բարեհոգությամբ նկատեց ձիուն Օվսյանիկովը և, մի ակնթարթից հետո թե՛ նա, թե՛ եռանդակը, թե՛ եռանդակի ետևը նստած տղան և թե՛ ձին, բոլորը միասին գլորվեցին ձորը։ Բարե-

բախտաբար, ձորի հատակը լիքն էր ավազով։ Ոչ ոք չվնասվեց, միայն ձիու ոտը դուրս ընկավ։ «Հը, ա՛յ, տեսա՞ր,— հանգիստ ձայնով շարունակեց Օվսյանիկովը, գետնից վեր կենալով,— քեզ ասացի, չէ՞»։ Նա իր նման էլ կին էր ջոկել։ Տատյանա Իլինիչնա Օվսյանիկովան բարձրահասակ կին էր, վայելչատես և լուսկյաց, մշտապես մի դարշնագույն մետաքսե գլխաշոր կապած։ Սառը տեսք ուներ, թեև ոչ ոք ոչ միայն չէր գանգատվում նրա խստությունից, այլ, ընդհակառակը, շատ աղքատներ նրան մայրիկ էին անվանում ու բարերար։ Կանոնավոր դիմագծերը, խոշոր թուխ աչքերը, նուրբ շուրթերն այժմ էլ վկայում էին նրա երբեմնի գեղեցկության մասին։ Օվսյանիկովը երեխաներ չուներ։

Ես Օվսյանիկովին ծանոթացել էի իմ հարևան Ռադիլովի տանը. ծանոթությունից երկու օր հետո գնացի նրա մոտ։ Տանն էր։ Մեծ կաշվե բազկաթոռի մեջ նստած՝ Հայսմավուրք էր կարդում։ Մի մոխրագույն կատու մոռում էր նրա ուսին նստած։ Նա ինձ ընդունեց, իր սովորության համեմատ, սիրալիր ու վայելչաբար, որից հետո սկսեցինք զրուցել։

— Ճիշտն ասացեք, Լուկա Պետրովիչ,— ասացի ես ի միջի այլոց,— չէ՞ որ առաջներում, ձեր ժամանակը ավելի լավ է եղել։

— Կային բաներ, որ ճիշտն ասած, լավ էին,— ասաց Օվսյանիկովը,— հանգիստ էինք ապրում. բավականություն շատ կար, ճիշտ է... Բայց և այնպես հիմա ավելի լավ է. իսկ ձեր երեխաների ժամանակ, ավելի լավ կլինի, աստուծով։

— Իսկ ես, Լուկա Պետրովիչ, կարծում էի, թե պիտի գովեք հին ժամանակը։

— Չէ, հին ժամանակը գովելու առանձին բան չունի։ Այ հենց, օրինակի համար ասենք, դուք կալվածատեր եք, այնպիսի կալվածատեր, ինչպես ձեր հանգուցյալ պապը, բայց նրա պես էլ իշխանություն չեք ունենա. դուք ինքներդ, ասենք, այդպիսի մարդ չեք։ Հիմի էլ ուրիշ աղաներ են նեղում մեզ. բայց, ինչպես երևում է, դրանից ազատվել չենք կարող։ Համբերենք տեսնենք... Չէ՛, ես էլ էն չեմ տեսնի, ինչ տեսել եմ երիտասարդ ժամանակ։

— Ի՞նչ, օրինակ։

— Այ, օրինակի համար, հենց էլի ձեր պապի մասին

ասեմ։ Չորավոր մարդ էր. մեզպիսներին շատ էր նեղացնում։ Դուք երևի կիմանաք,— ասենք ինչպես դուք ձեր հողը չիմանաք,— հողի էն կտորը, որ Զեպլիգինից գնում էր դեպի Մալինինի հողամասը... Դուք հիմի վարսակ եք ցանել էնտեղ... Բայց նա մերն է ախր, բոլորը, ինչքան կա, մերն էր։ Պապդ է մեզանից խլել. մի օր ձի նստած դուրս է գալիս դաշտ, ձեռով ցույց է տալիս մեր հողն ու ասում՝ իմ հողն է, ու տիրեց։ Հայրս, հանգուցյալը (աղորմի իրան), արդարամիտ մարդ էր, բայց նույնպես տաքարյուն, չհամբերեց,— ո՞վ կուզի իր ապրանքը կորցնի,— և դատարանին խնդիրք տվեց։ Նա խնդիրքը տվեց մենակ, մյուսները, որոնց հողերը նույնպես խլել էր պապդ, խնդիրք չտվին,— վախեցան։ Գնում են պապիդ հայտնում, թե Պյոտր Օվսյանիկովը գանգատ է տվել քեզանից, որ իրա հողը բարեհաճել եք խլել... Ձեր պապն անմիջապես մեր տունն է ուղարկում իր շնպահ Բաուլին՝ մի քանի մարդկանց հետ... Հորս վերցրին ու տարան ձեր պապական կալվածքը։ Ես այդ ժամանակ փոքրիկ տղա էի, ոտաբոբիկ վազեցի նրա ետևից։ Եվ ի՞նչ... Հորս բերին ձեր տան բակը և լուսամուտների առաջ ծեծեցին... Ձեր պապը կանգնել էր պատշգամբում ու նայում էր, իսկ տատը նստել էր լուսամուտի մոտ և նույնպես նայում էր։ Հայրս կանչում-աղաչում էր. «Ի սեր աստծո, Մարիա Վասիլևնա, օգնեցեք, դուք գոնե խնայեցեք»։ Բայց նա շարունակ բարձրանում էր տեղից ու նայում։ Այդպիսով հորիցս խոսք առան, որ հրաժարվում է իր հողից և հրամայեցին շնորհակալ լինել, որ կենդանի բաց թողին։ Այդպես էլ մեր հողը մնաց ձեզ։ Գնացեք հլա մի ձեր գեղացիներին հարցրեք, թե էդ հողը ինչպե՞ս է կոչվում։ Կոչվում է Դազանակաասի, որովհետև դազանակով է խլված։ Այ սրա համար էլ մենք՝ փոքր մարդիկս, շատ էլ չպետք է ափսոսանք հին կարգերի համար։

Ես չգիտեի ի՞նչ պատասխանեմ Օվսյանիկովին և չէի համարձակվում նայել նրա երեսին։

— Այդ ժամանակներք մի ուրիշ հարևան էլ ունեցանք մենք՝ Կոմովը, Ստեփան Նիկանորիչը։ Դա հոգս ավելի մենք՝ տանջեց, ամեն կերպ։ Հարբեցող մարդ էր և սիրում էր հյուրասիրել մարդկանց։ Եվ հենց որ խմում էր, ֆրանսերեն

ասում էր «սերոն»[1], ու պռոշները լպստում, էլ պրծավ... Մարդ էր ուղարկում՝ բոլոր հարևաններին հրավիրում։ Ռռաձի կառքերը պատրաստ կանգնած էին դռանը, չգնայիր — ինքն էր գալիս ձիերը չափ գցած... Ու այնպես էլ տարօրինակ մարդ էր։ Որ խմած չլիներ սուտ չէր խոսի, բայց հենց որ հարբում էր՝ սկսում էր պատմել, թե Պիտերում երեք տուն ունի Ֆոնտանկայի ափին, մեկը կարմիր է՝ մի ծխնելույզով, մյուսը դեղին է՝ երկու ծխնելույզով, իսկ երրորդը կապույտ է՝ առանց ծխնելույզի,— և թե երեք որդի ունի (իսկ ինքը ամուսնացած էլ չէր). մեկը հետևազորի մեջ է, մյուսը հեծելազորի, երրորդն էլ՝ ինքն իր համար... Եվ ասում էր, թե յուրաքանչյուր տանն ապրում է մի որդին, թե ավագ որդուն այցելում են ծովակալներ, երկրորդին՝ գեներալներ, իսկ կրտսերին՝ միայն անգլիացիները։ Քեֆի ժամանակ վեր էր կենում ու ասում. «Իմ ավագ որդու կենացը, նա ամենահարգելին է» — ու լաց էր լինում։ Ու վա՜յ էր, թե մեկը հրաժարվեր։ «Կսպանեմ,— ասում էր,— և չե՛մ թողնի թաղեն»... Մեկ էլ վեր էր թռչում ու գոռում. «Պարեցեք, ժողովուրդ աստուծո, ձեր ուրախության և իմ միխիթարության համար»։ Է՛, պիտի պարես. մեռնես էլ՝ պիտի պարես։ Իր ճորտ աղջկերանց տանջել էր բոլորովին։ Պատահում էր՝ ամբողջ գիշերը մինչև առավոտ երգում էին խմբով. ով ձայնը բարձրացնում էր ավելի, նրան էլ պարգև էր տալի։ Իսկ երբ հոգնում էին երգելուց՝ գլուխը դնում էր ձեռների վրա ու տխրում. «Ախ, անտեր որբ եմ. ինձ մենակ են թողնում, ինձ մոռանում են»։ Ձիապաններն աղջկերանցն իսկույն հա՜յ էին տալիս, աշխուժի բերում։ Հայրս դուր էր եկել դրան. ի՞նչ կարող ես անել։ Քիչ էր մնացել հորքս մեռցներ և կմեռցներ իսկապես, բայց, լավ էր, ինքը մեռավ. հարբած վեր ընկավ աղավնատնից... Ա՜յ ինչ տեսակ հարևաններ ունեինք մենք։

— Ինչպես ժամանակները փոխվել են,— նկատեցի ես։

— Այո՜, այո՜,— հաստատեց Օվսյանիկովը... Բայց այս էլ պիտի ասել. հին տարիներն ազնվականներն ավելի ճոխ էին ապրում։ Էլ չեմ խոսում մեծատոհմիկների մասին. Մոսկվայում տեսել եմ ո՞նց են ապրում դրանք։ Ասում են՝ հիմի նրանց կյանքն էլ է փոխվել։

[1] C'est bon — սա լավ է։ (Ֆրանս.)

— Դուք Մոսկվայում եղե՞լ եք։

— Եղել եմ, վաղո՜ւց, շատ վաղուց։ Հիմի ես յոթանասունհինգ տարու մեջն եմ մտել, իսկ Մոսկվա գնացի տասնվեց տարեկան։

Օվսյանիկովը հոգոց քաշեց։

— Այնտեղ ո՞ւմ տեսաք։

— Շատ մեծամեծների տեսա, շա՜տ, ապրում էին իրենց համար ազատ, փառքի ու պատվի մեջ։ Միայն թե հանգուցյալ կոմս Ալեքսեյ Գրիգորևիչ Օրլով-Չեսմենսկուն ոչ մեկը չէր հասնում։ Իսկ Ալեքսեյ Գրիգորիչին ես շուտ-շուտ էի տեսնում. քեռիս նրա մոտ ծառայապետ էր։ Կոմսն ապրում էր Կալուժսկիե վորոտայի մոտ, Շաբոլովկում։ Ա՜յ իշխան մարդ էր, հա՜։ Այդպիսի վայելչություն, այդպիսի ողորմած մարդ՝ երևակայել դժվար է և պատմել անկարելի։ Հենց մենակ բոյը, հայացքը ի՞նչ արժեր։ Քանի չէիր ճանաչում, չէիր մտել տունը՝ վախենում էիր, քաշվում. բայց հենց որ մտնում էիր՝ թվում էր արևը տաքացրեց քեզ, ուրախանում էիր ամբողջովին։ Ամեն մարդ կարող էր մտնել մոտը, ամեն ինչի սեր ուներ։ Զիարշավի ժամանակ ինքն էր ձին քշում, և ամեն տեսակ մարդու հետ. երբեք միանգամից առաջը չէր տա, չէր վիրավորի, բայց վերջում կտար-կանցներ բոլորին. ու այնպես սիրալիր էր՝ հակառակորդին կմխիթարեր, նրա ձին կգովեր։ Պահում էր առաջնակարգ աղավնիներ։ Պատահում էր՝ դուրս էր գալիս բակը, նստում բազկաթոռի մեջ և հրամայում աղավնիները թռցնել. իսկ չորս կողմը, տանիքներին մարդիկ էին կանգնում հրացաններով, որ հարձակվող բազեներին խփեն։ Կոմսի ոտների մոտ դնում էին ջրով լիքը մի արծաթե մե՛ծ կոնք. նա ջրի մեջ նայում էր աղավնիներին։ Հարյուրավոր խեղճ, աղքատ նրա հացով էին ապրում... Ու ինչքա՜ն փող էր բաժանում։ Իսկ եթե բարկանում էր՝ որոտում էր ամպի նման։ Բայց մեկ էլ տեսար՝ ժպտում է արդեն։ Այնպես քեֆ էր տալիս՝ ողջ Մոսկվան հարբում էր... Եվ ի՞նչ խելոք մարդ էր։ Սիրում էր և կոխ բռնել։ Տուլայից, Խարկովից, Տամբովից, ամեն կողմից ածդահաներ էին բերում նրա մոտ։ Ում հաղթում էր՝ պարգևատրում էր. իսկ եթե մեկն իրեն էր հաղթում՝ առատ ընծաներ էր տալիս ու շրթունքները համբուրում... Հետո, Մոսկվա եղած ժամանակս՝ մի այնպիսի որս

կազմակերպեց, որ Ռուսաստանում չի եղել երբեք։ Ինչքան որսորդ կար ամբողջ տերության մեջ՝ բոլորին հյուր կանչեց իր մոտ և օր նշանակեց, և երեք ամիս ժամանակ տվեց։ Ու եկա՜ն, հավաքվեցին։ Շներ բերին անթիվ-անհամար, ու որսկան, որսկան հրաձիգ, ինչ ասեմ, մի ամբողջ զորքի չափ։ Առաջ քեֆ արին, ինչպես հարկն է, հետո դուրս եկան դաշտը։ Դրանց տեսնելու համար ժողովուրդ հավաքվեց անթիվ-անհամա՜ր... Ու ի՞նչ եք կարծում... Ձեր պապի շունը բոլորին տվեց անցավ։

— Միլովիդկան հո՞ չէր,— հարցրի ես։

— Միլովիդկան էր, Միլովիդկան... Ու ահա կոմսը սկսեց խնդրել-աղաչել պապիդ. «Ծախիր այդ շունը ինձ, վերցրու ի՞նչ ուզում ես»։ «Ոչ, կոմս», ասավ ձեր պապը, «ես վաճառական չեմ. անպետք փալասն էլ չեմ ծախի, իսկ պատվի համար կնոջս էլ պատրաստ եմ զիջել, բայց ոչ Միլովիդկային... Ավելի շուտ ինքս ինձ գերության կտամ»։ Եվ Ալեքսեյ Գրիգորևիչը գովեց նրան. «սիրում եմ» ասավ։ Վերադառնալիս՝ ձեր պապը շանը տուն բերեց կառեթով, իսկ երբ Միլովիդկան մեռավ՝ երաժշտությամբ թաղեց նրան պարտեզում— թաղեց ու շան վրա էլ տապանագիր քար դրեց։

— Ա՛յ տեսնում ես, Ալեքսեյ Գրիգորևիչը ոչ ոքի չէր նեղացնում,— նկատեցի ես։

— Միշտ այդպես է լինում. փոքր մարդիկ քիթներն ավելի բարձր են պահում։ Իսկ նա մեծ մարդ էր։

— Իսկ ի՞նչ մարդ էր այդ Բաուչը,— հարցրի ես, մի փոքր լռելուց հետո։

— Այդ ինչպե՞ս է, որ Միլովիդկայի մասին լսել եք, Բաուչի մասին՝ չէ... Դա ձեր պապի գլխավոր շնպահն էր։ Ձեր պապը նրան Միլովիդկայից պակաս չէր սիրում։ Հանդուգն մարդ էր. ինչ էլ հրամայեր ձեր պապը՝ իսկույն կկատարեր, թրից էլ չէր վախենա... Մտրակի շաչյունով ու աղմուկով որսն այնպես էր քշում — անտառը զրնգում էր։ Հետո հանկարծ կողքի էր ընկնում, ձիուց իջնում էր ու պառկում... Իսկ երբ շները նրա ձայնը չէին լսում, պրծավ։ Որսի հետքը կթողնեին ու էլ ինչ անեիր, ինչ գնով ուզում է լինի՝ չէին հետևի։ Ա՛յ թե ձեր պապը բարկանո՜ւմ էր. «Ես չեմ հանգստանա մինչև որ այդ ծույլ ավարային չկախեմ։ Կրունկները կոկորդովն եմ դուրս քաշելու»։ Բայց բանը վերջանում էր նրանով, որ մարդ էր ուղարկում իմանալու, թե ի՞նչ է ուզում, ինչո՞ւ չի որսը դուրս քշում։ Իսկ Բաուչն այդպիսի դեպքերում սովորաբար օղի էր պահանջում, խմում, վեր կենում ու նորից ձենը գցում անտառով մեկ։

— Կարծեմ, դուք նույնպես սիրում եք որսորդությունը, Լուկա Պետրովիչ։

— Կսիրեի... Ճիշտ է. բայց ոչ հիմի. հիմի իմ ժամանակն անցել է... իսկ ջահել տարիքիս... գիտեք, անհարմար էր կոշումիս պատճառով։ Մենք ազնվականների հետ ոտ չպիտի մեկնենք։ Ճիշտ է. մեր դասից, պատահում էր, հարբեցող ու անընդունակ մարդիկ մոտենում էին աղաներին... բայց օգուտն ի՞նչ... Միայն իրենց էին խայտառակում։ Տալիս էին նրան մի քոստոտ ձի. գլխարկը վերցնում գցում էին գետին. մտրակը, իբր թե ձիուն էին վրա բերում, բայց խփում էին նրան. իսկ նա շարունակ ծիծաղում էր և ուրիշներին ծիծաղեցնում։ Չէ, այ ինչ կասեմ ձեզ. ինչքան հասարակ ես, քեզ այնքան զգույշ պիտի պահես՝ թե չէ կխայտառակվես։

— Այո,— շարունակեց Օվսյանիկովը հոգոց քաշելով,— շատ բան է անցել-գնացել իմ աչքի առաջ։ Ուրիշ ժամանակներ են եկել հիմի։ Մեծ փոփոխություն եմ տեսնում, մանավանդ ազնվականների մեջ։ Մանր կալվածատերերը — բոլորը կա՛մ ծառայության մեջ են, կա՛մ էլ իրենց առաջվա տեղը չեն նստում։ Իսկ խոշորները՝ նրանց ճանաչել էլ չի լինում։ Հողերը բաժանելու ժամանակ մի կուշտ նայեցի այդ խոշորներին։ Պետք է ձեզ ասեմ՝ մարդու սիրտը ուրախանում է նրանց նայելիս. վարվել գիտեն, քաղաքավարի են։ Բայց ա՛յ ինչն է զարմացնում ինձ. ամեն տեսակ գիտություն են սովորել, խոսում են այնպես լավ, կարգին, որ հոգիդ փառավորվում է, բայց մի կարգին գործ չեն հասկանում, մինչև անգամ իրանց օգուտն էլ չեն զգում. հենց նրանց ճորտը՝ կառավարիչը ծռում է նրանց ուզածի պես։ Դուք, գուցե, ճանաչեք Կարալյովին, Ալեքսանդր Վլադիմիրիչին, ինչո՞վ ազնվական չի։ Գեղեցիկ, հարուստ, սովորել է «համալսարանում», կարծյոք, եղել է և արտասահմանում. լավ խոսում է, բոլորի ձեռը սղմում։ Ճանաչո՞ւմ եք... դե, ուրեմն լսեցեք։ Անցած շաբաթ հավաքվեցինք մենք

Բերյոզովկա գյուղում։ Մեզ հրավիրել էր հաշտարար միջնորդը՝ Նիկիֆոր Իլյիչը։ «Պետք է, պարոններ, ասում է, հողերը սահմանագծել, սա խայտառակություն է, մեր շրջանը բոլորից ետ է մնացել. սկսենք»։ Ու ահա սկսեցին։ Ասեկոսներ, վեճ, ինչպես կարգն է. մեր լիազորներն սկսեցին կոտրտվել։ Բայց առաջինը աղմուկ բարձրացրեց Օվչիննիկով Պորֆիրին... Եվ ի՞նչի համար էր այդ մարդը դալմաղալ անում... Ինքը մի թիզ հող չունի. եղբոր հանձնարարությամբ էր կարգադրություններ անում։ Գոռում էր՝ «Չէ, դուք ինձ չեք կարող խաբել. չէ, ես ձեր ասած մարդը չեմ. պլանը տվեք այստեղ. հողաչափին կանչեցեք գա»։— «Ի՞նչ է, ասում են, վերջապես ձեր պահանջը»։— «Ո՛նց չէ, հիմար եք գտել, դուք կարծում եք ես իսկույն իմ պահանջը կհայտնե՞մ ձեզ... չէ՛, դուք պլանները տվեք այստեղ, ա՛յ թե ինչ»։ Իսկ ինքը ձեռը խփում է պլաններին։ Մարֆա Դմիտրևնային սարսափելի վիրավորեց։ Մարֆա Դմիտրևնան ճչում էր. «Ինչպե՞ս եք դուք համարձակվում իմ բարի անունը խայտառակել»։— «Ես,— ասում է,— ձեր բարի անունը իմ զամբիկին էլ չէի ցանկանա»։ Զոռով մադերա խմացնելով՝ ազատվեցինք։ Նրան հանգստացրինք, մյուսներն աղմուկ բարձրացրին։ Իսկ Կարալյով Ալեքսանդր Վլադիմիրովիչը մի անկյունում նստած՝ ձեռնափայտի գլուխը կծում էր ու գլուխն օրորում։ Ամոթից գետինն էի մտնում։ Ի՞նչ կմտածի մարդը մեր մասին։ Մեկ էլ վեր կացավ Ալեքսանդր Վլադիմիրիչս, ու այնպես է երևում, որ խոսել է ուզում։ Միջնորդը շաղվեց, շփոթվեց. «Պարոններ, պարոններ,— ասում է,— Ալեքսանդր Վլադիմիրիչը խոսել է ուզում»։ Եվ չի կարելի չգովել ազնվականներին. բոլորն իսկույն լռեցին։ Եվ ահա Ալեքսանդր Վլադիմիրովիչը սկսեց. ասում է՝ մենք, կարծես, մոռացել ենք, թե ինչի՞ համար ենք հավաքվել. հողերի սահմանագծումը, անպայման, ձեռնտու է հողատերերի համար, բայց դա իսկապես ի՞նչի համար է. նրա՞ համար, որ գյուղացու գործը թեթևանա, աշխատելը հարմար լինի, որպեսզի նա իր բեգյարը կատարի. թե չէ նա հիմա իր հողը չի ճանաչում և շատ ժամանակ հինգ վերստ ճամփա է կըտրում, որ գնա վարի... Հետո Ալեքսանդր Վլադիմիրիչն ասեց, թե կալվածատիրոջ համար հանցանք է՝ հոգ չտանել գյուղացիների բարեկեցության մասին, թե, վերջապես, եթե առողջ

դատենք, նրանց օգուտը մեր օգուտն է՝ բոլորը մեկ է. լավ լինեն նրանք, լավ կլինենք և մենք. վատ լինեն նրանք, վատ կլինենք և մենք... և թե, ուրեմն, հանցանք է ու անմտություն՝ համաձայնության չգալ շնչին բաների պատճառով... Ու խոսեց, խոսեց... այնպես էր խոսում, որ մարդու հոգին փառավորվում էր... Ազնվականները՝ բոլորը քիթները կախեցին. ես ինքս քիչ մնաց արտասվեի։ Ճիշտն ասած, հին գրքերում այդպիսի ճառեր չեն լինում... Բայց ինչո՞վ վերջացավ։ Ինքը շորս դեսյատին մամռակալած ճահիճը չզիջեց և ծախել չուզեց։ Ասում է՝ «Ես այդ ճահիճը կշորացնեմ իմ մարդկանցով և այնտեղ մահուդի գործարան կշինեմ։ Ես, ասում է, այդ տեղն արդեն ընտրել եմ դրա համար. ես իմ հաշիվներն ունեմ այդ մասին...»։ Այդպես էլ ցրվեցինք, ոչինչ չարած։ Իսկ Ալեքսանդր Վլադիմիրիչը մինչև հիմա էլ իրեն արդար է համարում և շարունակ մահուդի գործարանի մասին է խոսում, բայց ճահիճը չորացնելուն չի ձեռնարկում։

— Բայց իր կալվածն ինչպե՞ս է կառավարում։

— Շարունակ նոր կարգեր է մտցնում։ Գյուղացիները չեն հավանում, բայց նրանց պետք չէ լսել։ Շատ լավ է անում Ալեքսանդր Վլադիմիրիչը։

— Այդ ինչպե՞ս, Լուկա Պետրովիչ։ Ես կարծում էի՝ դուք կողմնակից եք հին կարգերին։

— Ես՝ ուրիշ։ Ես հո ազնվական չեմ, ոչ էլ կալվածատեր։ Իմ տնտեսությունն ի՞նչ է որ... Ես ուրիշ կերպ էլ չեմ կարող։ Աշխատում եմ արդար վարվել ու օրենքով՝ այդ էլ հերիք է։ Ջահել պարոններն առաջվա կարգերը չեն սիրում. գովում եմ նրանց... Ժամանակն է խելքի գալու։ Բայց միայն թե, ա՛յ ի՞նչն է ցավալի. ջահել պարոնները խելքներին շատ են զոռ տալիս։ Գյուղացու հետ վարվում են ինչպես խաղատիկնիկի հետ. դես են պտտում, դեն են պտտում, կոտրում ու դեն շպրտում։ Թե՛ ճորտ գործակատարը և թե՛ գերմանացի կառավարիչը մեկ են. գյուղացուն էլի իրենց բուռն են հավաքում։ Այդ ջահել պարոններից մեկը գոնե օրինակ ցույց տար, թե այ ինչպե՞ս է հարկավոր կառավարել... Ինչո՞վ է վերջանալու սա։ Մի՞թե այսպես էլ պիտի մեռնեմ ու այդ նոր կարգերը չտեսնեմ... Սա ի՞նչ առակ է, հինը մեռավ, իսկ նորը, ջահելը դեռ չի ծնվում։

Ես չգիտեի ի՞նչ պատասխան տամ Օվսյանիկովին։ Նա ետ նայեց, ավելի մոտեցավ և շարունակեց կամաց.

— Իսկ Վասիլի Նիկոլայիչ Լյուբոզվոնովի մասին լսե՞լ եք։

— Չէ, բան չեմ լսել։

— Մի բացատրեք ինձ, խնդրեմ, թե դա ի՞նչ հրաշք է։ Խելքս բան չէր կտրում։ Ինձ հենց նրա գյուղացիները պատմեցին, բայց ես նրանց ասածը լավ չեմ հասկանում։ Նա, ինչպես գիտեք, ջահել մարդ է. ժառանգությունը վերջերս, մոր մահից հետո է ստացել։ Գալիս է դա իր պապական կալվածքը։ Գյուղացիները հավաքվում են իրենց աղային տեսնելու։ Վասիլի Նիկոլայիչը դուրս է գալիս նրանց առաջ։ Նայում են գյուղացիները,— զարմանալի բան,— աղան հագել է պլիսե վարտիք, կարծես կառապան լինի, կոշիկների եզրերն էլ նախշած են. հագել է կարմիր վերնաշապիկ ու կաֆտանը նույնպես կառապանի կաֆտանի նման է. մորուք է թողել, գլխին դրել է մի տարօրինակ գլխարկ, դեմքն էլ տարօրինակ է,— հարբած է՝ հարբած չի, բայց բոլորովին էլ խելքը գլխին չի։ «Բարև ձեզ,— ասում է,— տղերք։ Աստված օգնական»։ Գյուղացիները երկուտակվելով՝ գլուխ են տալիս, բայց անխոս քաշվո՛ւմ են։ Եվ նա ինքն էլ կարծես քաշվում է։ Սկսում է մի ճառ ասել դրանց. «Ես ռուս եմ,— ասում է,— դուք՝ էլ եք ռուս. բոլորը, ինչ ռուսական է՝ սիրում եմ... իմ հոգին ռուսական հոգի է, արյունս էլ ռուսական է»... Ու հանկարծ հրամայում է. «Հապա, զավակներս, երգեցեք ռուսական ժողովրդական մի երգ»։ Գյուղացիների ծնկները դողում են, իրենց կորցնում են բոլորովին։ Համարձակի մեկը ձենը բարձրացնում է, որ երգի, բայց իսկույն կռանում է, մյուսների ետևը թաքնվում... Բայց ա՛յ ինչի վրա պիտի զարմանալ. մեզանում եղել են և այդպիսի կալվածատերեր, կստաղի աղաներ, հայտնի քեֆ անողներ, ճիշտ և հագնվել են կառապանի պես, իրենք էլ պարել են, կքթառ են նվագել, երգել ու խմել են ճորտերի հետ, գյուղացիների հետ քեֆ են արել. իսկ դա, այդ Վասիլի Նիկոլաևիչը՝ ոնց որ աղջիկ, շարունակ գրքեր է կարդում, կամ գրում է, կամ թե չէ բարձր ձայնով շարականներ է ասում, մարդու հետ չի խոսում, իրան հեռու է պահում ու իր համար շրջում է պարտեզում, կարծես սրտում մի ցավ ունի կամ տխրություն։ Նախկին կառավարիչը առա-

ջին օրերը իրեն կորցնում է բոլորովին. Վասիլի Նիկոլաևիչի գալուց մի քանի օր առաջ գյուղացիների տներն է գնում, բոլորին գլուխ է տալիս. երևում է՝ կատուն զգացել է, թե ո՛ւմ միսն է կերել։ Իսկ գյուղացիք լավ հույսերով մտածում են. «Մեզ չես խաբի. պատասխան կտաս արածներիդ համար. էն ժամանակ ցույց կտանք քեզ, կեղեքիչ անաստված»... Իսկ դրա փոխարեն ի՞նչ եղավ, ո՞նց ասեմ,— տերն ինքը չի կարող հասկանալ, թե ինչ դուրս եկավ։ Վասիլի Նիկոլաևիչը կանչում է կառավարչին իր մոտ և ասում (իսկ ինքը կարմրում է և, այնպես էլ, գիտեք, մի տեսակ արագ շունչ քաշում). «Արդար եղիր, ոչ մեկին մի՛ նեղիր, լսո՞ւմ ես»։ Ու այդ օրվանից էլ դեռ նրան իր մոտ չի կանչել։ Իր սեփական կալվածում ապրում է օտարի պես։ Կառավարիչը, ինչ խոսք, հանգստացավ. իսկ գյուղացիները չեն համարձակվում Վասիլի Նիկոլաևիչին մոտենալ. վախենում են։ Բայց ա՛յ ինչն է դարձյալ զարմանքի արժանի. աղան և՛ գլուխ է տալիս նրանց և՛ նայում է ժպտալով, բայց գյուղացիները դողում են սարսափից։ Սա ի՞նչ հրաշք է, ասացեք մի տեսնեմ... Կամ թե չէ ես եմ ծերացել, հիմարացել, բան չեմ հասկանում։

Եվ Օվսյանիկովին պատասխանեցի, որ պարոն Լյուբոզվոնովը, երևի, հիվանդ է։

— Ի՞նչ հիվանդ։ Այնքան հաստ է՝ երեսը քամակից երևում է, շատ էլ ջահել է... է՛, ասենք, ով է իմանում։ (Եվ Օվսյանիկովը մի խոր հոգոց քաշեց)։

— Է, աղնվականներին թողնենք մի կողմ,— սկսեցի ես,— ի՞նչ կասեք աղատ տնտեսություն ունեցող գյուղացիների մասին, Լուկա Պետրովիչ։

— Ոչ, այդ բանից արդեն ազատեցեք ինձ,— ասաց նա արագ,— իսկապես... կարող էի ասել... բայց ի՞նչ։ (Օվսյանիկովը ձեռը թափ տվեց)։ Ավելի լավ է թեյ խմենք... Գյուղացիները, ասենք, գյուղացիներ են, իսկ մենք, ուղիղն ասած, մենք ո՞նց անենք։

Նա լռեց։ Թեյ բերին։ Տատյանա Իլինիչնան տեղից վեր կացավ ու նստեց մեզ մոտ։ Երեկոյի ընթացքում նա մի քանի անգամ դուրս եկավ անաղմուկ և նույնպես հանդարտ վերադարձավ։ Սենյակում լռություն էր տիրում։ Օվսյանիկովը ծանր ու մեծ, դանդաղ խմում էր բաժակ բաժակի ետևից։

— Այսօր, Միտյան մեզ մոտ էր,— կամացուկ ասաց Տատյանա Իլինիչնան։

Օվսյանիկովը հոնքերը կիտեց։

— Ի՞նչ էր ուզում։

— Եկել էր ներողություն խնդրելու։

Օվսյանիկովը գլուխն օրորեց։

— Դե, հիմի ասացեք տեսնեմ,— շարունակեց նա, դիմելով ինձ,— ի՞նչ անենք մեր ազգականների հետ։ Նրանցից հրաժարվել չենք կարող... Հրես աստված ինձ էլ մի ազգական է տվել։ Խելոք տղա է, ժիր, խոսք չկա. լավ սովորեց, բայց ես նրանից օգուտ չեմ սպասում։ Արքունական ծառայության մեջ էր, ծառայությունը թողեց, թե՝ չեն թողնում առաջ գնամ... է՛, ազնվական հո՞ չի։ Ազնվականներին էլ իսկույն գեներալ չեն դարձնում։ Ու հիմի ապրում է առանց որևէ գործի... Բայց այդ դեռ ոչինչ, սկսել է հիմի վատ գործերի մեջ մտնել։ Գյուղացիների համար խնդիրքներ է շարադրում, զեկույցներ է գրում, հարյուրապետին խրատներ է տալիս, հողաչափին մերկացնում է, օղեմտներն է գնում, ամեն տեսակ մարդկանց հետ նստում է, վեր կենում։ Դե՛, փորձանքն էլ այսպես բաներից է գալիս։ Պրիստավն արդեն մի քանի անգամ սպառնալիք է տվել նրան։ Բայց նա, լավ է, կարողանում է կատակներ անել. ծիծաղեցնում է նրանց ու հետո էլ նրանց ճաշը եփում... Բայց հերիք է, նա հո քու սենյակում նստա՞ծ չի,— ավելացրեց նա, դիմելով կնոջը,— ես քեզ, ախր, լավ եմ ճանաչում. դու, ախր, սրտացավ ես՝ նրան հովանավորում ես։

Տատյանա Իլինիչնան աչքերը խոնարհեց, ժպտաց ու կարմրեց։

— Է, այդպես էլ գիտեի,— շարունակեց Օվսյանիկովը։— Ա՛խ դու, չարաճճի։ Դե, ասա թո՛ղ գա։ Թող այդպես լինի։ Մեր թանկագին հյուրի խաթեր՝ կներեմ հիմարին... Դե ասա՛, ասա՛ գա...

Տատյանա Իլինիչնան մոտեցավ դռանը և ձայն տվեց. «Միտյա՛»։

Միտյան քսանութ տարեկան տղա էր՝ բարձրահասակ, բարեկազմ ու գանգուր մազերով. ներս մտնելով և ինձ տեսնելով՝ կանգ առավ շեմքում։ Հագինը գերմանական զգեստ էր,

բայց ուսերի անբնական մեծության բուֆերը միայն պարզ ապացույց էին, որ այն ձևել է ոչ միայն ռուս, այլև Ռուսաստանում ապրող դերձակ։

— Դե, մոտ արի, մոտ արի,— ասաց ծերունին,— ի՞նչ ես ամաչում։ Շնորհակալ եղիր քեռակնկանիցդ, ներված ես... Այ, պարոնս, խնդրեմ ծանոթ եղեք,— շարունակեց նա, Միտյային ցույց տալով,— հարազատ ազգականս է, բայց հետը յոլա գնալ չեմ կարողանում։ (Մենք գլուխ տվինք իրար)։ Դե, ասա տեսնեմ, էլ ի՞նչ բան ես խառնշտել։ Ինչո՞ւ են գանգատվում քեզանից, ասա տեսնեմ։

Միտյան, ըստ երևույթին, չէր կամենում իմ ներկայությամբ բացատրվել ու արդարանալ։

— Հետո՛, քեռի,— քրթմնջաց նա։

— Չէ, հետո չէ, հիմի ասա,— շարունակեց ծերունին։— Գիտեմ, պարոն կալվածատերից ամաչում ես. ավելի լավ պատժվի՛ր։ Դե, խոսիր... Մենք լսում ենք։

— Ամաչելու բան չունեմ,— աշխույժով սկսեց Միտյան ու գլուխը թափ տվեց։— Ինքներդ դատեցեք, քեռի։ Ռեշետիլովի ազատ տնտեսատերերը գալիս են ինձ մոտ և ասում. օգնիր, խպեր ջան։— Ի՞նչ կա։— Ա՛յ ինչ. մեր հացի ամբարները կարգին-սարքին են, այսինքն էնպես, որ դրանից էլ լավ չի կարող լինել. հանկարծ մեզ մոտ մի չինովնիկ է գալիս, թե կարող լինել. հանկարծ մեզ մոտ մի չինովնիկ է գալիս, թե՝ ձեր ամբարները նայել։ Նայում է ու թե՝ ձեր ամբարները անկարգ դրության մեջ են. պարտավոր եմ հայտնել իշխանությանը։— Անկարգությունը ո՞րն է։— Այդ արդեն իմ գիտենալու բանն է,— ասում է... Քիչ էր մնացել, ասում են, որ հավաքվենք-որոշենք, չինովնիկին, ինչպես հարկն է, տեսնենք, բայց ծերունի Պրոխորիչը խանգարեց. ասում է. էդպես հո նրանց համի կգցես։ Դա ինչ բան է, իսկապես. մի՞թե դրանց համար դատաստան չկա... Մենք ծերունուն լսեցինք, բայց չինովնիկը բարկացավ և գանգատ տվեց։ Ու հիմի մեզ կանչում են պատասխան տանք։— Բայց ճի՞շտ է արդյոք, որ ձեր ամբարները կարգին են,— հարցնում եմ ես։ Իհարկե, կարգին են, վկա է աստված... ու օրենքի սահմանած չափով էլ հաց կա մեջը... Դե, ասում եմ, էլ վախենալու բան չունեք, դու թուղթ գրեցի դրանց համար... Եվ դեռ հայտնի չէ, թե գործը ո՞ւմ օգտին կվճռվի... Իսկ թե ինչո՞ւ են այս առթիվ ինձ

ձանից գանգատվել ձեզ՝ հասկանալի բան է. ամեն մարդու շապիկ իր մարմնին մոտ է։

— Ամենքինը , բայց երևում է քոնը չէ,— ասաց ծերունին կիսաձայն,— իսկ այդ ի՞նչ խառնակչություն ես սկսել շուտոլոմովցի գյուղացիների հետ։

— Իսկ դուք որտեղի՞ց գիտեք։

— Նշանակում է՝ գիտեմ, որ ասում եմ։

— Ես այստե՛ղ էլ արդար եմ. դարձյալ ինքներդ դատեցեք։ Շուտոլոմովցի գյուղացիներից՝ նրանց հարևան Բեզպադինը չորս դեսյատին հող է վերցրել-վարել։ Ասում է իմ հողն է։ Շուտոլոմովցիները այդ հողին հարկ են տալիս, նրանց կալվածատերը գնացել է արտասահման, ով պիտի հիմի պաշտպանի նրանց, ինքներդ դատեցեք։ Իսկ նրանց հողը անվիճելի է. դարերից ի վեր ճորտական։ Եկան դրանք ինձ մոտ, թե՝ խնդիրք գրի։ Ես էլ գրեցի։ Իսկ Բեզպադինը իմացավ ու սկսեց սպառնալիքներ տալ. «Ես, ասում է, այդ Միտկայի ոսկորները բողազից կհանեմ կամ թե չէ գլուխն ուսերից կթոցնեմ»... Տեսնենք, ինչպես է թոցնում. առայժմ վրաս է։

— Դե լավ, մի՛ պարծենա. քու գլուխը փորձանքից չի ազատվի,— ասաց ծերունին,— դու բոլորովին խենթ մարդ ես։

— Բայց, քեռի, չէ՞ որ դու ինքդ ես ասել...

— Գիտեմ, գիտեմ, ի՞նչ ես ասելու,— ընդհատեց նրան Օվսյանիկովը։— Ճիշտ է՝ մարդ պետք է արդարությամբ ապրի և պարտավոր է մերձավորին օգնել։ Դեպք է լինում, որ իրան էլ չպիտի խնայի... Բայց մի՞թե դու միշտ այդպես ես վարվում։ Քեզ օգետուն չե՞ն տանում, չե՞ն խմացնում, և գլուխ չե՞ն խոնարհում, թե՝ Դմիտրի Ալեքսեիչ, քեզ մատաղ, օգնիր, իսկ շնորհակալությունը մենք գիտենք ոնց կհայտնենք,— ու արծաթ մանեթանոց կամ թուղթ փող են դնում բուռդ։ Հը՞, այդպես բան չի՞ լինում. ասա՛, չի լինո՞ւմ։

— Այդ բանում ես իսկապես մեղավոր եմ,— պատասխանեց Միտյան, աչքերը խոնարհելով,— բայց չքավորներից չեմ վերցնում և կեղծավորություն չեմ անում։

— Հիմի չես վերցնում, իսկ երբ որ դրությունդ վատանա— կվերցնե՛ս։ Կեղծավորություն չես անում... հը՛մ։ Ուրեմն բոլոր ժամանակ սրբերի ես օգնում... Իսկ Թորկա Պերեխոդովին մոռացե՞լ ես... Ո՞վ էր նրա համար շարչարվում, ո՞վ էր նրան հովանավորում. հը՞։

— Պերեխոդովն իր մեղքից տուժեց, ճիշտ է։

— Արքունական փող էր վատնել... Հանաք բան չի։

— Բայց, քեռի, նկատի առ՝ աղքատություն, ընտանիք...

— Աղքատությո՛ւն, աղքատությո՛ւն... Հարբեցող մարդ էր, պրծավ գնաց։

— Նա դարդից է հարբեցող դառել,— նկատեց Միտյան, ձայնն իջեցնելով։

— Դարդի՞ց։ Է՛, դու էլ օգնեիր, եթե խղճով ես այդպես, և հարբած մարդու հետ ինքդ չնստեիր օղետանը։ Շատ էլ լավ է խոսում, դա ի՞նչ զարմանալի բան է։

— Նա շատ բարի մարդ է...

— Քեզ համար բոլորը բարի են... Հը,— շարունակեց Օվսյանիկովը, կնոջը դառնալով,— ուղարկեցիր նրան... դե՛, դու գիտես...

Տատյանա Իլինիչնան գլխով արավ։

— Այս քանի օր է որտե՞ղ ես, չես երևում,— խոսեց կրկին ծերունին։

— Քաղաքումն էի։

— Բոլոր ժամանակ, իհարկե, բիլիարդ էին խաղում, թեյ խմում, կիթառ ծնգծնգացնում, դասարաններում թրև գալիս. խնդիրքներ գրում, վաճառականների տղաների հետ ժամանակ անցկացնում։ Այդպես չի՞... Ասա տեսնեմ։

— Համարյա թե,— ժպտալով ասաց Միտյան... Ա՜խ, քիչ մնաց մոռանայի։ Ֆունտիկովը՝ Անտոն Պարֆենիչը խնդրում էր կիրակի օրն իր մոտ ճաշի գնալ։

— Չեմ գնա այդ հաստափորի մոտ։ Անպետք ձուկն է տալու, այն էլ փչացած յուղով։ Աստված նրա հետ։

— Հետո Ֆեոդոսիա Միխայլովնային պատահեցի։

— Այդ Ֆեոդոսիան ո՞վ է։

— Միկուլինցի Ֆեոդոսիան, որ կալվածատեր Գարպենչենկոն գնեց աճուրդի ժամանակ։ Նա ապրում էր Մոսկվայում, կար էր անում և տիրոջը կանոնավոր հարկ վճարում՝ հարյուր ութսուն ռուբլի տարեկան։ Նա իր գործը լավ գիտի. Մոսկվայում լավ պատվերներ էր ստանում։ Բայց Գարպեն-

չենկոն հիմի գրել-բերել է տվել նրան, ու պահում է այնպես, և մի գործի չի դնում։ Ֆեոդոսիան պատրաստ է փրկանք տալ և ազատվել ճորտությունից. այդ ասել է աղային էլ. բայց աղան ոչ մի որոշում չի հայտնում։ Քեռի, դուք Գարպենչենկոյի հետ հո ծանոթ եք, չե՞ք կարող արդյոք մի խոսք ասել... Իսկ Ֆեոդոսիան իրեն ազատելու համար լավ փրկանք կտա։

— Չլինի՞ քու փողով է ուզում գլուխը փրկել. հը՞։ Դե, դե, լավ, կասեմ, կասեմ։ Միայն չգիտեմ,— շարունակեց ծերունին դժգոհ դեմքով,— այդ Գարպենչենկոն, մեղա քեզ աստված, շատ ագահ մարդ է, մուրհակներ է առնում, շահով փող է տալիս, կալվածներ է ձեռք բերում աճուրդով... Եվ ո՞վ բերեց նրան մեր կողմերը։ Ա՜խ, այդ եկվորները։ Նրան բան հասկացնելը դժվար է, բայց տեսնենք։

— Աշխատեցեք, քեռի։

— Լա՜վ, կաշխատեմ։ Միայն թե դու զգույշ կաց, զգույշ։ Դե, դե, մի՛ արդարանա... Աստված քեզ հետ, աստված քեզ հետ... Միայն սրանից հետո զգույշ կաց, թե չէ, աստված վկա, Միտյա, բանդ վատ կլինի, կկորչես... Ես հո միշտ չեմ կարող քեզ փրկել... ես ինքս անզոր մարդ եմ։ Դե, գնա, աստված քեզ հետ։

Միտյան դուրս եկավ։ Տատյանա Իլինիչնան գնաց նրա ետևից։

— Դրան թեյ տուր,— ձայն տվեց Օվսյանիկովը կնոջ ետևից։— Հիմար տղա չի,— շարունակեց նա,— բարի էլ սիրտ ունի, բայց վախենում եմ գլուխը մի բան գա... Բայց, ներեցեք, որ այսքան ժամանակ դատարկ բաներով եմ զբաղեցնում ձեզ։

Նախասենյակի դուռը բացվեց։ Ներս մտավ մի կարճահասակ, ալեհեր մարդ՝ թավշյա սերթուկով։

— Ա՜, Ֆրանց Իվանիչ,— բացականչեց Օվսյանիկովը,— բարև ձեզ. ինչպե՞ս եք։

Թույլ տվեք, սիրելի ընթերցող, ծանոթացնել ձեզ և այս պարոնի հետ։

Ֆրանց Իվանիչ Լեժյոնը (Lejeune), իմ հարևանը և Օրյոլի նահանգի կալվածատերը. այնքան էլ սովորական ձևով չէր արժանացել ռուս ազնվականի պատվավոր կոչման։ Նա ծնվել էր Օռլեանում, ֆրանսիացի ծնողներից, և Նապոլեոնի հետ

միասին եկել էր Ռուսաստանը նվաճելու, որպես թմբկահար։ Սկզբում ամեն ինչ շատ լավ էր գնում, և մեր ֆրանսիացին Մոսկվա մտավ գլուխը բարձր բռնած՝ հաղթական։ Բայց վերադարձի ճանապարհին խեղճ m-r Lejeune-ը, կիսով չափ սառած վիճակում, առանց թմբուկի. ընկավ Սմոլենսկի գյուղացիների ձեռքը։ Սմոլենսկի գյուղացիները գիշերը փակեցին նրան մահուդի գործարանի մի դատարկ սենյակում, իսկ մյուս օրն առավոտյան տարան նրան կանգնեցրին սառած գետի վրա, այն տեղը, ուր սառույցը ծակ էր, ու սկսեցին խնդրել de la grrrrande armée[1]-ի թմբկահարին՝ հարգել իրենց, այսինքն՝ սուզվել սառույցի տակ։ M-r Lejeune-ը չկարողացավ համաձայնել նրանց առաջարկին և, իր հերթին, սկսեց ֆրանսերենով համոզել Սմոլենսկի գյուղացիներին՝ բաց թողնել իրեն հայրենի Օռլեանը գնալու։ «Այնտեղ, messieurs», ասում է նա, «ապրում է մայր, une tendre mère»[2]։ Բայց գյուղացիները, հավանաբար, չիմանալով Օռլեան քաղաքի աշխարհագրական դիրքը, շարունակում են առաջարկել նրան՝ ջրասույզ ճանապարհորդություն ոլորապտույտ Գնիլոտերկ գետի հոսանքով, և արդեն սկսում են խրախուսել նրան՝ թեև հարվածներ հասցնելով վզին ու ողնաշարին, երբ հանկարծ, հուրախություն Լեժյոնի, զանգակի ձայն է լսվում, և մի ահագին, ետևը նախշուն գորգ գցած, եռաձի սահնակ գալիս կանգնում է գետափին։ Սահնակում նստած է լինում մի հաստ, կարմրադեմ կալվածատեր՝ գայլի մորթուց կարած մուշտակը հագին։

— Այդ ի՞նչ եք անում,— հարցնում է նա գյուղացիներին։

— Ֆրանցուզ ենք ջուրը քցում, աղա։

— Ա՜,— անտարբեր ասում է կալվածատերն ու երեսը շրջում։

— Monsieur! Monsieur!— կանչում է խեղճը։

— Հը՜ը՜,— հանդիմանանքով ասում է գայլի մուշտակը,— տասներկու ազգով Ռուսաստանի վրա եկաք, Մոսկվան վառեցիք, անիծյալ, Իվան Վելիկիի տաճարի խաչը գողացաք, իսկ

---

1 Մեծ բանակ (ֆրանս.)։

2 Մի քնքուշ մայր (ֆրանս.)։

հիմի՝ մուսյո՛, մուսյո՛... հիմի պոչն իրեն է քաշել։ Տեղն է քեզ պես գողին... Քշիր, Ֆիլկա՛։

Ձիերը շարժվեցին։

— Բայց չէ, կանգնի՛ր,— ավելացնում է կալվածատերը։— է՛յ, մուսյո, մյուզիկ գիտե՞ս։

— Sauvez moi, sauvez moi, mon bon monsieur![2].— կրկնում է Լեժյոնը։

— Տես ի՛նչ ժողովուրդ է. մեկը սրանցից ռուսերեն չի իմանում։ Մյուզիկ, մյուզիկ, ավե մյուզիկ վու? սավե՞։ Դե՛, խոսիր էլի։ Կոմպրենե՞. սա՞վե մյուզիկ վու. ֆորտեպյանոյի վրա ժուե սավե՞։

Լեժյոնը հասկացավ, վերջապես, թե ինչ է ուզում կալվածատերը, և գլուխը շարժեց դրական։

— Oui, monsieur, oui, oui, je suis musicien: je joue tous les instruments possibles! Oui, monsieur... Sauvez moi, monsieur![1]

— Դե, բախտավոր ես, որ պատահեցի,— ասում է կալվածատերը։— Տղերք, բաց թողեք դրան. ահա ձեզ քսան կոպեկ արաղի փող։

— Շնորհակալ ենք, աղա, շնորհակալ ենք։ Համեցեք, տարեք սրան։

Լեժյոնին սահնակ են նստեցնում։ Ուրախությունից շունչը կտրում է, լաց է լինում, դողում, գլուխ է տալիս, շնորհակալություն է հայտնում կալվածատիրոջը, կառապանին, գյուղացիներին։ Հագին լինում է վարդագույն ժապավեններով մի կանաչ ֆուֆայկա, իսկ սառնամանիքը մարդ է փետացնում։ Կալվածատերը անխոս նայում է նրա կապտած մարմնին, փետացած անդամներին, փաթաթում է խեղճին իր մուշտակի մեջ ու բերում տուն։ Ծառաները հավաքվում են։ Ֆրանսիացուն անմիջապես տաքացնում են, կերակրում ու հագցնում։ Կալվածատերը տանում է նրան իր աղջկերանց մոտ։

— Ահա, երեխեք,— ասում է նրանց,— ձեզ համար ուսուցիչ եմ գտել։ Շարունակ գլուխս տանում էիք, թե մեզ երաժշտություն սովորեցրու ու ֆրանսերեն. ահա ձեզ և՛ ֆրանսիացի, և՛ դաշնամուր նվագող... Դե, մուսյո՛,— շարունակում է նա, ցույց տալով իր անպետք դաշնամուրը, որը գնել էր հինգ տարի առաջ, մի հրեայից,— արվեստդ ցույց տուր մեզ. ժուե՛[1]։

Լեժյոնը մարող սրտով նստում է աթոռին. նա կյանքում դաշնամուրի ձեռ տված չէր։

— Դե, ժուե, դե, ժուե,— կրկնում է կալվածատերը։

Խեղճը հուսահատությամբ խփում է ստեղներին, ինչպես թմբուկին, ու նվագում է, ինչպես պատահում է... «Ես այնպես էի կարծում,— պատմում էր նա հետո,— թե փրկիչս կբռնի օձիքիցս ու տնից դուրս կնետի»։ Բայց, ի մեծ զարմանս այդ ակամա իմպրովիզատորի, կալվածատերը, մի փոքր սպասելով, հավանությամբ թոթվում է նրա ուսը։ «Լավ է, լավ է,— ասում է նա,— տեսնում եմ, որ գիտես. գնա հիմի հանգստացիր»։

Երկու շաբաթից հետո՝ Լեժյոնը այդ կալվածատիրոջ մոտից գնում է մի ուրիշ հարուստ ու կրթված մարդու մոտ, դուր է գալիս նրան իր ուրախ ու հեզ բնավորության շնորհիվ, պսակվում է նրա դաստիարակչուհու հետ, ծառայության է մտնում, ազնվական է դառնում, իր աղջիկը տալիս է օրյոլցի կալվածատեր, պաշտոնաթող դրագոն և ոտանավոր գրող Լորիզանևին ու ինքն էլ տեղափոխվում է Օրյոլում ապրելու։

Ահավասիկ հենց այս Լեժյոնն էր կամ ինչպես հիմա կոչում են նրան, Ֆրանց Իվանիչը, որ իմ ներկայությամբ մտավ Օվսյանիկովի սենյակը։ Օվսյանիկովի հետ բարեկամական հարաբերության մեջ էր...

Բայց, գուցե, ընթերցողն արդեն ձանձրացել է ինձ հետ Միասին Օվսյանիկովի մոտ նստելուց, ուստի և պերճախոսությամբ լռում եմ։

1847

1 Փրկեցե՛ք ինձ, փրկեցե՛ք ինձ, իմ բարի՛ պարոն (ֆրանս.)։

2 Այո՛, պարոն, այո՛, այո՛, ես երաժիշտ եմ, ես նվագո՞ւմ եմ ամեն տեսակի գործիքներ։ Այո՛, պարոն... Փրկեցե՛ք ինձ, պարո՛ն (ֆրանս.)։

1 Նվագի՛ր (ֆրանս.)։

ԼԳՈՎ

— Գնանք Լգով,— ասաց մի անգամ ինձ ընթերցողներիս արդեն հայտնի Երմոլայը,— էնտեղ բոլ բադ կորսանք։

Թեև իսկական որսորդի համար վայրի բադը առանձին գրավիչ բան չի ներկայացնում, բայց առայժմ ուրիշ որս չունենալով (բանը սեպտեմբերին էր. վայրի կտցարները դեռ չէին երևում, իսկ կաքավների ետևից վազվզելը ձանձրացրել էր ինձ), ես լսեցի իմ որսկանին, և գնացինք Լգով։

Լգովը դաշտային մեծ գյուղ է, ունի մի շատ հին, քարե, միգմբեթանի եկեղեցի և երկու ջրաղաց՝ Ռոստոտ ճահճային գետակի վրա։ Այդ գետակը Լգովից հինգ վերստ անց փոխվում դառնում է մի ընդարձակ լճակ, որի շուրջը, մասամբ և մեջտեղը, խիտ եղեգնուտներ են։ Այս եղեգնուտների արանքներում ու խաղաղ խորշերում ճտեր հանել ու ապրում էին անթիվ անհամար բադեր, ամեն տեսակից էլ։ Նրանց փոքրիկ երամները պտտվում էին ջրի վրա, իսկ կրակոցից այնպիսի ամպ էր բարձրանում, որ որսորդն ակամա բռնում էր գլխարկը և ծոր տալիս. ո՜ւ ո՜ւ...

Ես ու Երմոլայն ուզում էինք գնալ լճակի երկարությամբ, բայց նախ, բադը, որպես զգույշ թռչուն, ափի մոտ չի մնում, երկրորդ, եթե անգամ անփորձի մեկը ենթարկվեր մեր կրակոցին ու զրկվեր կյանքից, այդ դեպքում էլ մեր շներն անկարող էին հանել նրանց խիտ եղեգնի միջից. չնայած իրենց ազնիվ անձնազոհությանը՝ նրանք չէին կարող ո՛չ լողալ, ո՛չ քայլել, այլ միայն իրենց թանկագին քթերը կտրելու էին եղեգնի սուր ծայրերով։

— Չէ,— ասաց Երմոլայը վերջապես,— բանը վատ է. նավակ պիտի ճարել... Գնանք ետ՝ Լոգով։

Գնացինք։ Հազիվ մի քանի քայլ էինք արել, մեկ էլ ուռի թփերի տակից մեր դեմը ելավ մի բավականին անպիտան որսի շուն, իսկ նրա ետևից երևաց միջահասակ մի մարդ՝ կապույտ, սաստիկ մաշված սերթուկով, դեղնավուն ժիլետով ու գրի-դելեն կամ բլյու-դամուր գույնի վարտիքով, որի ծայրերը շտապ-շտապ խրել էր ծակ կոշիկների ճտքերի մեջ. վզին կարմիր թաշկինակ էր կապած և միփողանի հրացան ուսը գցած։ Մինչև մեր շները, իրենց ցեղին հատուկ սովորությամբ, չինական արարողություններով, հոտոտում-ծանոթանում էին իրենց համար նոր անձնավորության հետ, որն ըստ երևույթին վախենում, պոչը քաշում էր իրեն, ականջները ցցում և արագ շուռ գալիս ամբողջ մարմնով, առանց ծնկները ծալելու և ատամներն իրար խփելով,— անծանոթը մոտեցավ մեզ և անչափ քաղաքավարությամբ գլուխ տվեց։ Արտաքինից դատելով՝ նա քսանուհինգ տարեկան կլիներ. նրա երկար, շեկ մազերը ցցվել էին անշարժ փնջերով. փոքրիկ, թուխ աչքերը թարթում էին սիրալիր,— ամբողջ դեմքը, սև թաշկինակով կապած, կարծես ատամի ցավի պատճառով, քաղցր ժպտում էր։

— Թույլ տվեք ներկայանալ,— սկսեց նա մեզմ ու շողոմ ձայնով.— ես այստեղի որսկան Վլադիմիրն եմ... լսելով ձեր գալուստը և իմանալով, որ դուք հաճել եք գնալ մեր լճակի ափը, որոշեցի, եթե ձեզ համար անախորժ չի լինի՝ առաջարկել ձեզ իմ ծառայությունը։

Որսկան Վլադիմիրը խոսում էր ոչ ավել, ոչ պակաս, քան գավառական ջահել դերասան, որը կատարում է առաջին սիրահարների դեր։ Ես ընդունեցի նրա առաջարկը և, դեռ Լգով չհասած, կարողացա իմանալ նրա կյանքի պատմությունը։ Նա ազատ արձակված ճորտ էր. պատանի հասակում երաժշտություն էր սովորել, հետո սենեկապան էր եղել, գիր գիտեր, կարդացել էր, որքան նկատեցի, մի քանի գրքույկներ և, այժմ, ապրելով, ինչպես շատերն են ապրում Ռուսաստանում, առանց կոպեկի, առանց մշտական զբաղմունքի, կերակրվում է համարյա երկնքի մանանայով։ Նա արտահայտվում էր չափազանց նուրբ և ըստ երևույթին հպարտանում էր իր ձևերով. ով գիտի նաև սարսափելի կնամոլ էր և, ամենայն հարվանականությամբ, հաջողություն ուներ. ռուս աղջիկները սիրում են պերճախոսությունը։ Ի միջի այլոց, նա ինձ հասկացրեց, թե երբեմն այցելում է հարևան կալվածատերերին, հյուր է գնում քաղաք, և պրեֆերանս է խաղում, և ծանոթ է մայրաքաղաքի մարդկանց։ Ժպտում էր վարպետորեն և բազմազան ձևերով. մանավանդ սազում էր նրան համեստ զուսպ ժպիտը, որը խաղում էր նրա շրթունքներին, երբ ունկընդրում էր ուրիշի խոսքին։ Նա ձեզ լսում էր, միանգամայն համաձայնում ձեզ հետ, բայց և այնպես իր սեփական ար-

Ժանապատվությունը չէր կորցնում, և կարծես ուզում էր զգացնել տալ, որ ահիթն եկած ժամանակ, ինքն էլ կարող է իր կարծիքը հայտնել։ Երմոլայը, որ շատ էլ կրթված մարդ չէր և ոչ էլ «նրբություն» ուներ, սկսեց նրան «խայթել»։ Պետք էր տեսնել, թե Վլադիմիրը ինչպիսի քմծիծաղով է նրան «դուք» ասում։

— Այդ թաշկինակն ինչո՞ւ եք կապել,— հարցրի ես նրան։— Ատամի ցավ ունե՞ք։

— Ո՛չ,— վրա բերեց նա,— սա ավելի շուտ անզգուշության կործանարար հետևանք է։ Ես մի ընկեր ունեի, լավ մարդ էր, բայց ոչ որսկան, ինչպես այդ լինում է հաճախ։ Եվ մի օր ահա նա ինձ ասում է. սիրելի բարեկամ, ինձ հետդ որսի տար. ուզում եմ իմանալ, թե դա ինչ տեսակի զվարճություն է։ Ես, իհարկե, չուզեցի ընկերոջս մերժել։ Ինքս հրացան գտա նրա համար և հետս որսի տարա։ Մենք, ինչպես կարգն է, որս արինք, հետո խելքներիս փչեց հանգստանալ։ Ես նստեցի ծառի տակ, նա էլ իմ դիմաց ու սկսեց հրացանը դեսուդեն անել, ինձ նշան բռնել։ Խնդրեցի թողնի այդ բանը, բայց, իր անփորձության շնորհիվ, չլսեց։ Հրացանը տրաքեց, և ես զրկվեցի ծնոտիցս ու աջ ձեռքիս ցուցամատից։

Հասանք Լգով։ Թե՛ Վլադիմիրը և թե՛ Երմոլայը՝ երկուսն էլ վճռեցին, որ առանց նավակի անկարելի է որս անել։

— Սուչոկը մի տափակ նավակ ունի,— ասաց Վլադիմիրը,— բայց չգիտեմ, որտեղ է պահել։ Պետք է գնալ մոտը։

— Ո՞ւմ մոտ,— հարցրի ես։

— Այստեղ մի մարդ է ապրում, փոքր անունը Սուչոկ։

Վլադիմիրը Երմոլայի հետ գնաց Սուչոկի մոտ։ Ես նրանց ասացի, որ իրենց կսպասեմ եկեղեցու մոտ։ Հանգստարանի գերեզմաններին նայելիս՝ տեսա մի սևացած քառանկյունի սափոր-արձան՝ հետևյալ արձանագրություններով. մի կողմը ֆրանսերեն տառերով. Ci git Theophile Henri, vicont de Blangy մյուս կողմը՝ «Սույն քարի տակ ամփոփված է ֆրանսահպատակ կոմս Բլանժիի աճյունը. ծնվել է 1737, մեռել է 1799 թվին, ընդամենը ապրել է 62 տարի». երրորդ կողմը՝ «Հանգիստ նրա աճյունին, իսկ չորրորդ կողմը.—

Սույն քարի տակ պառկած է ֆրանսիացի էմիգրանտ.
Հայտնի ցեղից էր, ուներ և տաղանդ.
Սպանված կնոջն ու ընտանիքը լալով,
Թողեց հայրենիքը, տիրաններից ստնակոխ.
Ռուսական երկրի ափերը գալով,
Ծերության օրով գտավ հյուրընկալ ապաստան.
Կրթում էր մանկանց, հանգստացնում ծնողներին...
Տերը հանգիստ ավեց այստեղ նրա ոսկորներին։

Իմ մտածումները խզեցին Երմոլայը, Վլադիմիրը և այն մարդը, որ Սուչոկ տարօրինակ մականունն ուներ։

Բոբիկ, գզլտված և մազախռիվ Սուչոկը թվում էր գործից հեռացրած ճորտ սպասավոր և կլիներ վաթսուն տարեկան։

— Դու նավակ ունե՞ս,— հարցրի ես։

— Նավակ ունեմ,— պատասխանեց նա խուլ և ջարդված ձայնով,— բայց շատ վատն ա։

— Ինչո՞ւ։

— Արանքները բացվել են։

— Մեծ բան չի,— վրա բերեց Երմոլայը,— կանեփի թելով կլցնենք։

— Իհարկե, կարելի ա,— հաստատեց Սուչոկը։

— Իսկ դու ո՞վ ես։

— Աղայի ձկնորսը։

— Բա էլ ի՞նչ ձկնորս ես, որ նավակդ այդ վիճակում է։

— Մեր գետում ախր ձուկ չկա։

— Զուկը ճահճի ժանգոտ ջուրը չի սիրում,— լրջությամբ նկատեց իմ սրսկանը։

— Դե,— ասացի Երմոլային,— գնա կանեփ գտի ու նավակը կարգի բեր, բայց շուտ արա։

Երմոլայը գնաց։

— Բայց այդպես մենք, կարող է պատահել, ջրի տակն անցնենք,— ասացի ես Վլադիմիրին։

— Ասված ողորմած է,— պատասխանեց նա։— Համենայն դեպս պիտի կարծել, որ լիճը խոր չի։

— Այո, խոր չի,— նկատեց Սուչոկը, որը խոսում էր մի տեսակ տարօրինակ, կարծես քնաթաթախ։— Հատակը տիղ ա ու խոտ։ Բայց փոս տեղեր էլ կան։

— Բայց եթե խոտը շատ է,— նկատեց Վլադիմիրը,— այդ ժամանակ թիավարել չի լինի։

— Բա տափակ նավակը ո՞վ ա թիավարում որ։ Պետք ա բոթելով առաջ տանել։ Ես ձեզ հետ կգամ, էնտեղ ես փայտ ունեմ,— բայց կարելի ա թիով էլ։

— Թիով անհարմար է. տեղեր կլինի, որ հատակը խոր կլինի,— ասաց Վլադիմիրը։

— Ճիշտ ա, անհարմար ա։

Ես նստեցի գերեզմանաքարին՝ Երմոլային սպասելու։ Վլադիմիրը, քաղաքավարության համար, փոքր-ինչ մի կողմ քաշվեց և նույնպես նստեց։ Սուչոկը շարունակեց մնալ իր տեղում կանգնած, գլուխը կախ և ձեռները ըստ հին սովորության, ետևը դրած։

— Ասա խնդրեմ,— սկսեցի ես,— դու վաղո՞ւց ես այստեղ ձկնորս։

— Արդեն յոթ տարի ա,— պատասխանեց նա վեր թռչելով։

— Իսկ առաջ ինչո՞վ էիր զբաղվում։

— Առաջ կառապան էի։

— Բայց ո՞վ հեռացրեց քեզ կառապանությունից։

— Նոր տիրուհին։

— Ի՞նչ տիրուհի։

— Որ մեզ առավ։ Դուք նրան չեք ճանաչում. Ալյոնա Տիմոֆեևնան, հաստ կին է... հասակն առած։

— Բայց խելքին ի՞նչ փչեց, որ քեզ ձկնորս դարձրեց։

— Եսիմ։ Եկավ իրա հայրական կալվածքից՝ Տամբովից, հրամայեց բոլոր ճորտ ծառաներին հավաքել, ու ինքը դուրս եկավ մեզ մոտ։ Մենք առաջ հլա մոտեցանք ձեռը համբուրելու, նա, ոչինչ, չբարկացավ... Իսկ հետո սկսեց մեկ-մեկ կարգով հարցուփորձ անել մեզ՝ ինչո՞վ ես զբաղվել, ի՞նչ պաշտոն ես ունեցել։ Հերթը հասավ ինձ, հարցնում ա՝, ի՞նչ գործի ես ելել։ Ասում եմ՝ կառապան։— Կառապա՞ն. է՛, դու ի՞նչ կառապան ես, մի վրդ նայիր. դու ի՞նչ կառապան ես։ Հարկավոր չի, որ կառապան լինես, եղիր իմ ձկնորսը և միրուքդ ածիլիր։ Իմ այստեղ գալու ժամանակը մեկ-մեկ ձուկ կբռնես-կբերես, հասկացա՞ր... Ա՛յ, էդ օրվանից էլ ձկնորս

եմ համարվում։— Հետո, ասում ա, տե՛ս, լճակս կարգին կպահես... Բայց լճակը ո՞նց կարելի ա կարգին պահել։

— Դու առաջ ո՞ւմ էիր պատկանում։

— Սերգեյ Սերգեյիչ Պեխտերևին։ Իբրև ժառանգություն մնացինք նրան։ Բայց նա էլ երկար տիրություն չարավ մեզ, ընդամենը վեց տարի։ Հենց դրա մոտ էլ կառապանություն էի անում... ոչ թե քաղաքում, նա էնտեղ ուրիշներն ունի, այլ գյուղում։

— Եվ երիտասարդ ժամանակից շարունակ կառապան ես եղե՞լ։

— Ի՞նչ շարունակ... Ես կառապան էլա մենակ Սերգեյ Սերգեյիչի օրով, իսկ առաջ խոհարար էի, բայց էլի ոչ թե քաղաքի խոհարար, այլ էնպես, գեղում։

— Ո՞ւմ խոհարարն էիր։

— Առաջվա տիրոջս, Աֆանասի Նեֆեդիչի, դա Սերգեյ Սերգեյիչի քեռին էր։ Լգովը հենց նա, Աֆանասի Նեֆեդիչն առավ, իսկ Սերգեյ Սերգեյիչին անցավ իբրև ժառանգություն։

— Ո՞ւմից առավ։

— Տատյանա Վասիլևնայից։

— Ի՞նչ Տատյանա Վասիլևնա։

— Էն, որ հերու չէ մեկել տարին մեռավ, Բալախովի մոտ... չէ, չէ. Կարաչյովի մոտ։ Աղջիկը մեռավ... մարդու չէր գնացել։ Չեք ճանաչո՞ւմ։ Մենք նրա ձեռքն անցանք հորից՝ Վասիլի Սեմյոնիչից։ Նրա ձեռքին մենք երկար մնացինք... մոտ քսան տարի։

— Դու նրա մոտ էիր խոհարարություն անո՞ւմ։

— Առաջ, ճիշտ ա, խոհարար էի, հետո կոֆիշենկ (սրճապետ) եղա։

— Դա ի՞նչ է։

— Կոֆիշենկ։

— Դա ի՞նչ պաշտոն է։

— Եսիմ, աղա։ Բուֆետում էի ծառայում և Անտոն էի կոչվում ու ոչ թե Կուզմա։ Խանումն էդպես էր հրամայել։

— Քո իսկական անունը Կուզմա՞ է։

— Կուզմա ա։

— Ու բոլոր ժամանակ կոֆիշե՞նկ էիր։

— Չէ, բոլոր ժամանակ չէ. դերասան էլ եմ էլել։

— Մի՞թե։

— Ինչպես չէ... Թատրոնում խաղում էի։ Մեր տիրուհին իր տան մեջ թատրոն ուներ։

— Ի՞նչ դեր էիր կատարում։

— Ի՞նչ եք հրամայում։

— Թատրոնում ի՞նչ էիր անում։

— Բա դուք չգիտե՞ք։ Ինձ տանում էին հագցնում-կապցնում. էդպես ես հագած-կապած մարդ էի գալիս, կամ կանգնում, կամ նստում, ոնց որ հարկավոր էր։ Ասում էին՝ էս բանն ասա.— ասում էի։ Մի անգամ էլ կույր խաղացի... Ամեն մի կոպիս տակ մի-մի սիսեռ դրին... Իհարկե։

— Հետո ի՞նչ ես եղել։

— Հետո էլի խոհարար դառա։

— Իսկ ինչո՞ւ նորից խոհարար դարձրին։

— Ախպերս փախավ, դրա համար։

— Իսկ քո առաջվա տիրուհու հոր մոտ ի՞նչ էիր անում։

— Ամեն տեսակ պաշտոններ ունեի. առաջ դազախի շոր հագած ծառա էի, ֆալետոր եմ եղել, այգեպան, հետո էլ գըլխավոր շնպահ։

— Շնպա՞հ... Ուրեմն շներով որսի ես գնացել։

— Գնացել եմ, բայց մի անգամ ձիու վրա նստած ընկա ու ձին վնասվեց։ Մեր մեծ աղան շատ խիստ էր. հրամայեց ինձ ծեծեն ու Մոսկվա տանեն, կոշկակարի աշկերտ տան։

— Ինչպե՞ս թե աշկերտ։ Դու հո երեխա՞ չէիր, որ շնպահ նշանակեցին։

— Էսպես քսան տարեկանից ավել էի։

— Բայց քսան տարեկանն էլ ի՞նչ աշկերտ կարող է լինել։

— Նշանակում ա, ոչինչ, կարելի էր, քանի որ աղան հրամայում էր։ Բայց, լավ էր, շուտով մեռավ, ինձ էլի ետ բերին գյուղ։

— Խոհարարության արհեստը ե՞րբ ես սովորել։

Սուշոկը բարձրացրեց իր նիհար ու դեղին դեմքը և ժըպտաց։

— Բա էդ սովորելու բա՞ն ա որ... Բա կնանիք ո՞նց են եփում։

— Էհ,— ասացի ես,— շատ բան ես տեսել, Կուզմա, կյանքումդ։ Իսկ հիմա որպես ձկնորս ի՞նչ ես անում, երբ լճում ձուկ չկա։

— Ես, աղա, գանգատավոր չեմ։ Փառք աստծո, որ ձկնորս դարձրին։ Թե չէ մի ուրիշի, ինձ նման մի ծերունու՝ Անդրեյ Պուպիրին, տիրուհին հրամայեց թղթի գործարանը աշխատելու ուղարկել։ Զրի հաց ուտելը, ասում ա, հանցանք ա... Իսկ Պուպիրը դեռ հույս ուներ, թե կողորման. նրա ազգականը աղայի գրասենյակի վարիչն ա. խոստացել էր նրա մասին խոսել խանումի հետ։ Լավ խոսեց... Իսկ Պուպիրն իմ աչքի առաջ ազգականի ոտքերն ընկավ։

— Ընտանիք ունե՞ս։ Ամուսնացած եղե՞լ ես։

— Չէ, աղա, չեմ եղել։ Հանգուցյալ Տատյանա Վասիլևնան,— արքայություն ըլի նրան,— ոչ մեկին իրավունք չէր տալիս կնիկ առնելու։ Ով կհամարձակվեր։ Պատահում էր՝ ասում էր. «Ես, տեսնում եք, ապրում եմ, աղջիկ եմ մնում. ինչ խելառություն ա,— ասում էր,— ամուսնանալը ինչի՞ ա պետք»։

— Իսկ հիմի ինչո՞վ ես ապրում։ Ռոճիկ ստանո՞ւմ ես։

— Ի՞նչ ռոճիկ, աղա... Մի փոր հաց են տալիս, փառք աստծու, շատ շնորհակալ եմ։ Աստված մեր տիրուհու կյանքը երկար անի։

Երմոլայը վերադարձավ։

— Նավակը պատրաստ ա,— ասաց նա սառը։— Դու գնա ձողդ բեր։

Սուշոկը գնաց ձողը բերելու։ Այն բոլոր ժամանակ, երբ ես խոսում էի խեղճ ծերունու հետ, որսկան Վլադիմիրը նայում էր նրան արհամարհական ժպիտով։

— Տխմար մարդ է,— խոսեց նա, երբ ծերունին գնաց,— բոլորովին անկիրթ է, մուժիկ և ուրիշ ոչինչ։ Նրան տանու ծառա համարել չի կարելի... մի գլուխ պարծենում էր... Նա ի՞նչ դերասան է, ինքներդ դատեցեք։ Իզուր հաճեցիք անհանդըստանալ և նրա հետ խոսել։

Քառորդ ժամ անց՝ մենք արդեն նստած էինք Սուշոկի նավակում։ (Շանը մենք թողինք խրճիթում, կառապան Եգուդիլի հսկողության տակ)։ Շատ էլ հարմար չէր, բայց որսկան մարդիկ անփույթ են։ Նավակի ետին բութ ծայրին կանգնել էր Սուշոկը և «բոթում» էր, ես ու Վլադիմիրը նստել էինք նավա-

կի լայնությամբ գցած տախտակին։ Երմոլայը տեղավորվեց առաջին կողմը, հենց քթի մոտ։ Ջնայած կանեփի թելերին, շուտով մեր ոտների տակ ջուր երևաց։ Բարեբախտաբար եղանակը խաղաղ էր, և լճակը կարծես քնած լիներ։

Մենք առաջ էինք գնում բավական դանդաղ։ Ծերունին կպչուն տիղմի միջից դժվարությամբ էր դուրս քաշում իր երկար ձողը, որ ամբողջապես փաթաթված էր լինում կանաչ թելերով։ Ճահճային շուշանի համատարած, կլորիկ տերևները նույնպես խանգարում էին մեր նավակի ընթացքը։ Վերջապես, հասանք եղեգնուտին, և սկսվեց մեր զվարճությունը։ Բադերն աղմուկով բարձրանում, «պոկվում» էին լճակից, տեսնելով մեր անակնկալ երևալը իրենց տիրապետության սահմաններում, մեր հրացանները կրակում էին նրանց ետևից, և ուրախ բան էր մի տեսնել, թե ինչպես այդ կարճապոչ թռչունները գլուխկոնծի էին տալիս օդում ու ծանր շրպում ջրի երեսին։ Բոլոր խփված բադերին մենք, իհարկե, չէինք կարող վերցնել. թեթև վիրավորվածները սուզվում էին, սպանվածներից մի քանիսն ընկնում էին եղեգնուտի մեջ՝ այնպիսի տեղեր, որ Երմոլայի սրատես աչքերը չէին կարողանում նրանց գտնել, բայց և այնպես մինչև ճաշ նավակը պոնկեպոունկ լցվեց որսով։

Վլադիմիրը, ի մեծ մխիթարություն Երմոլայի, բոլորովին լավ չէր կրակում և յուրաքանչյուր անհաջող կրակոցից հետո զարմանում էր, նայում էր հրացանին ու փողը փչում, տարակուսում էր և, վերջապես, մեզ բացատրեց պատճառը, թե ինչու է ինքը վրիպում։ Երմոլայը, ինչպես միշտ, հաղթական էր, ես՝ բավականին վատ, ըստ սովորության։ Սուչոկը նայում էր մեզ՝ ջահել հասակից ծառայության մեջ եղած մարդու աչքերով և երբեմն ճչում էր. «Հրե, հրե, մի թռչուն էլ»,— ու մեջքը քորում էր ոչ թե ձեռներով, այլ շարժման մեջ դրած ուսերով։ Հիանալի եղանակ էր. սպիտակ, կլոր ամպերը բարձր ու հանդարտ անցնում էին մեր վերևից և պարզ անդրադառնում ջրում. եղեգնը խշխշում էր մեր չորս կողմը. լճակը տեղ-տեղ, ինչպես պողպատ, փայլում էր արևի տակ։ Մենք պատրաստվում էինք վերադառնալ գյուղ, երբ հանկարծ մի բավական անախորժ բան պատահեց մեզ։

Մենք վաղուց կարող էինք նկատել, որ ջուրը կամաց-կամաց, շարունակ լցվում է նավակը։ Վլադիմիրին հանձնարարված էր ջուրը դուրս ածել այն ամանով, որը իմ շրջահայաց որսկանը, համենայն դեպս, թոցրել էր մի անուշադիր գեղջկուհուց։ Բանն ինչպես հարկն է, լավ էր գնում, քանի Վլադիմիրն իր պարտականությունը չէր մոռանում։ Բայց որսի վերջում, կարծես հրաժեշտի համար, բադերն սկսեցին բարձրանալ այնպիսի երամներով, որ մենք հազիվ էինք կարողանում հրացաններս լցնել։ Բուռն հրացանաձգության ժամանակ մենք ուշադիր չեղանք դեպի մեր նավակի դրությունը, երբ հանկարծ, Երմոլայի ուժեղ շարժումից (նա աշխատում էր սպանված թռչունը վերցնել ջրի երեսից ու ամբողջ մարմնով ընկավ նախկին պունկին) մեր խարխուլ նավը թեքվեց, ջուր առավ և հանդիսավորապես գնաց դեպի հատակը, բարեբախտաբար, ոչ խոր տեղում։ Մենք ճչացինք, գոռացինք, բայց արդեն ուշ էր. մի րոպե հետո՝ մենք մինչև բկներս ջրի մեջ էինք, սպանված բադերի լողացող մարմիններով շրջապատված։ Այժմ առանց քրքիջի չեմ կարող հիշել ընկերներիս վախեցած ու գունատ դեմքերը (երևի իմ դեմքը ևս կարմիր չէր այն ժամանակ), բայց այն րոպեին, խոստովանում եմ, ծիծաղելու մասին անգամ չէի կարող մտածել։ Մեզնից ամեն մեկն իր հրացանը բռնել էր գլխից վեր, Սուչոկն էլ, երևի տերերին ընդօրինակելու սովորությամբ, իր ձողը բարձրացրեց վեր։

Առաջինը լռությունը խախտեց Երմոլայը։

— Թուհ, անիծյալ,— քրթնջաց նա, ջրի մեջ թքելով,— էս ինչ ձախորդություն էր։ Բոլորը քու արածն է, ծեր սատանա,— ավելացրեց նա, Սուչոկին դիմելով.— էդ ի՞նչ տեսակ նավակ ես պահում։

— Ներողություն,— կմկմաց ծերունին։

— Դու էլ պակասը չես,— շարունակեց որսկանը, գլուխը Վլադիմիրի կողմը դարձնելով,— աչքերդ որտե՞ղ էին. ինչո՞ւ ջուրը դուրս չածիր. դու, դու, դու...

Բայց Վլադիմիրն արդեն առարկելու մասին չէր մտածում. նա դողում էր տերևի պես, ատամները կափկափում էին, և անմտորեն ժպտում էր։ Ուր կորավ նրա պերճախոսությունը, նուրբ քաղաքավարության և սեփական արժանապատվության զգացումը։

Անիծյալ նավակը թույլ օրորվում էր մեր ոտների տակ... Նավաբեկության վայրկյանին ջուրը մեզ չափազանց սառը թվաց, բայց շուտով ընտելացանք։ Երբ առաջին վախն անցավ՝ ես շուրջս նայեցի։ Մեր չորս կողմը, տասը քայլի վրա, եղեգներ էին։ Հեռվում, նրանց կատարների վրայից երևում էր ափը։ «Բանը վատ է», մտածեցի ես։

— Ի՞նչ անենք,— հարցրի Երմոլային։

— Այ հրես կտեսնենք. էստեղ հո չենք գիշերելու,— պատասխանեց նա։— Առ, հրացանս բռնի,— ասաց նա Վլադիմիրին։

Վլադիմիրը անխոս հնազանդվեց։

— Գնամ ծանծաղ գտնեմ,— շարունակեց Երմոլայը մի այնպիսի վստահությամբ, որ կարծես ամեն մի լճում անպայման գոյություն պիտի ունենար ծանծաղուտ. նա ձողն առավ Սուչոկից ու գնաց դեպի ափը, զգուշությամբ հատակը շոշափելով։

— Բայց դու լողալ գիտե՞ս արդյոք,— հարցրի նրան։

— Չէ, չգիտեմ,— լսվեց նրա ձայնը, եղեգնուտի այն կողմից։

— Դե որ էդպես ա՝ կխեղդվի,— անտարբեր նկատեց Սուչոկը, որը առաջ էլ վախեցավ ոչ թե վտանգից, այլ մեր բարկությունից, և այժմ, միանգամայն հանգստացած, երբեմն միայն շունչ էր քաշում և, թվում էր, հարկ չի զգում իր դիրքը փոխելու։

— Անտեղի պիտի կորչի,— ավելացրեց Վլադիմիրը լայագին։

Ժամից ավելի էր Երմոլայը չէր վերադառնում։ Այդ ժամը մեզ հավիտենություն թվաց։ Սկզբում եռանդով ձայն էինք տալիս իրար. հետո նա սկսեց ուշ-ուշ պատասխանել մեր կանչերին, վերջապես, բոլորովին լռեց։ Գյուղում երեկոյան զանգերը տվին։ Մենք իրար հետ չէինք խոսում, նույնիսկ աշխատում էինք իրար չնայել։ Բաղերը պտտվում էին մեր գլխավերևը, մի քանիսը ուզում էին նստել մեր կողքին, բայց հանկարծ բարձրանում էին վեր ու ճչալով թռչում-հեռանում։ Մենք սկսում էինք փայտանալ։ Սուչոկն աչքերը թարթում էր, կարծես պատրաստվում էր քնելու։

Վերջապես, ի մեծ ուրախություն մեր, Երմոլայը վերադարձավ։

— Հը՞, ի՞նչ կա։

— Ափումն էի. բարակ տեղ գտա... Գնանք։

Մենք ուզում էինք անմիջապես ճանապարհ ընկնել, բայց նա նախ ջրի տակ գրպանից հանեց թոկը, սպանված բադերի ոտները կապեց իրար, թոկի երկու ծայրը առավ ատամների տակ ու առաջ ընկավ. Վլադիմիրը նրա ետևից, ես էլ Վլադիմիրի ետևից։ Սուչոկը մնաց վերջը։ Մինչև ափը մոտ երկու հարյուր քայլ էր։ Երմոլայը գնում էր համարձակ ու առանց կանգ առնելու ձայն էր տալիս. «Դեպի ձախ, էստեղ աջ կողմը խոր ա». կամ՝ «դեպի աջ,— էստեղ ձախ կողմը խոր ա»... Երբեմն ջուրը հասնում էր մինչև կոկորդներս, և մի երկու անգամ խեղճ Սուչոկը, որ բոլորիցս կարճահասակն էր, ջրի տակովն եղավ ու պղպջակներ թողեց։ «Դե, դե, դե»,— ահարկու գոռում էր նրա վրա Երմոլայը, և Սուչոկը ձեռներն էր թափահարում, ծուլ լինում և դուրս գալիս բարակ տեղը, բայց ծայրահեղ լոպեներին էլ չէր համարձակվում սերթուկիս փեշը բռնել։ Տանջված, կեղտոտ ու թրջված՝ հասանք, վերջապես, ափ։

Երկու ժամ անց՝ մենք բոլորս արդեն, հնարավորության չափ չորացած, նստել էինք մի մեծ խոտանոցում և պատրաստվում էինք ընթրել։ Կառապան Եգուդիլը, չափազանց դանդաղաշարժ, ծանր ու քնատ մի մարդ, կանգնել էր դռան մոտ և քթախոտով հյուրասիրում էր Սուչոկին։ (Ես նկատել եմ, որ կառապանները Ռուսաստանում շատ շուտ են մտերմանում)։ Սուչոկը քթախոտը քաշում էր մեծ ախորժակով. թքում էր, հազում և, ըստ երևույթին, մեծ բավականություն էր զգում։ Վլադիմիրը հոգնած տեսք էր ընդունել, գլուխը թեքել էր մի կողմ և շատ քիչ էր խոսում։ Երմոլայը սրբում էր մեր հրացանները։ Շները չափից ավելի արագ շարժում էին պոչները՝ ապուրի սպասելով. ձիերը դոփում էին գետինը և խրխնջում ծածկի տակ... Արևը մայր էր մտնում. նրա վերջին ճառագայթները տարածվել էին լայն, կարմիր շերտերով. ոսկեզօծ ամպերը ցրվում էին երկնքի երեսով, հետզհետե ավելի մանրանալով, կարծես մաքրված, սանրված ալիքներ... Գյուղից երգի ձայներ եկան։

ԲԵԺԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

Հուլիսի գեղեցիկ օր էր, մեկն այն օրերից, որոնք լինում են այն ժամանակ միայն, երբ եղանակը անփոփոխ լավ է մնում։ Վաղ առավոտից երկինքը պարզ է. արշալույսը չի վառվում հրդեհով, այլ բացվում է հեզիկ կարմրությամբ։ Արևը ո՛չ հրեղեն է, ո՛չ շիկացած, ինչպես կիզիչ երաշտի ժամանակ, ոչ էլ գունատ բոսորագույն է, ինչպես փոթորկից առաջ, բայց պայծառ է ու ճաճանչափայլ, հանդարտ լողալով դուրս է գալիս մի բարակ, փոքրիկ ամպի տակից, փայլում է թարմացած ու սուզվում նրա մանիշակագույն մեզը։ Զգված ամպիկի վերին բարակ ծայրը շողշողում է օձագալար. այդ փայլը նման է կոփած արծաթի փայլի... Բայց ահա ժայթքում են կրկին ուրախ ճառագայթները, և խնդուն ու վեհապանծ, կարծես վեր թռչելով, բարձրանում է հզոր լուսատուն։ Կեսօրին մոտ սովորաբար հայտնվում են բազմաթիվ կլոր, բարձր ամպեր՝ գորշ ոսկեգույն ու նուրբ սպիտակ երիզներով։ Անսահմանորեն տարածված գետի մեջ ցրված է կղզիների նման, որոնց շուրջը հոսում են հարթ, կապույտ և խոր թափանցիկ ջրեր, նրանք գրեթե չեն շարժվում իրենց տեղից, հետո դեպի հորիզոնն են գնում նրանք ու խմբվում իրար մոտ և նրանց արանքում այլևս կապույտ չի երևում. բայց նրանք նույնպես լազուր են, ինչպես երկինքը. նրանք ամբողջովին թափանցված են լույսով ու ջերմությամբ։ Հորիզոնի թեթև, գունատ մանիշակագույն տեսքը չի փոխվում ամբողջ օրը և չորս կողմը միատեսակ է. ոչ մի տեղ չի մթնում, փոթորիկ չի խտանում. միայն մի քանի տեղ, վերից վար, կապույտ շերտեր են ձգվում. մաղում է հազիվ նկատելի անձրևը։ Երեկոյան դեմ այդ ամպերը չքանում են. նրանցից վերջինները՝ սևավուն ու անորոշ, ինչպես ծուխ, վարդագույն քուլաներով պառկում են մայր մտնող արևի դիմաց, այնտեղ, ուր արևը իջնում է նույնպես հանդարտ, ինչպես հանդարտ բարձրացել էր երկինք, կարմիր փայլը երկար չի մնում մթնած երկրի վրա, և, մեղմ թարթելով, ինչպես խնամքով տարվող մոմ, վառվում է այնտեղ երեկոյան աստղը։ Այդպիսի օրերին բոլոր գույները մեղմացած են, պայծառ, բայց ոչ

վառ. ամեն ինչի վրա մի տեսակ հուզիչ հեզության կնիք կա։ Այդպիսի օրերին շոգը երբեմն շատ սաստիկ է լինում, երբեմն նույնիսկ տոչորվում է դաշտերի վրա, բայց քամին քշում, ցրիվ է տալիս խտացած տապը, և պտտվող քամին՝ կանգնած եղանակի անկասկած նշանը, բարձր սպիտակ սյուներով անցնում է արտերի ճանապարհով։ Զոր ու մաքուր օդում բուրում են բարձմենակը, հնձած հաճարն ու հնդկացորենը. գիշերամուտին անգամ խոնավություն չեք զգում։ Այսպիսի եղանակ է ցանկանում հողագործը հացի բերքը հավաքելու համար...

Ճիշտ այդպիսի մի օր ես միրհավ էի որսում Տուլայի նահանգի Զերնի գավառում. բավականին լավ որս արի. լիքը որսապարկս անգթորեն կտրում էր ուսս. բայց վերջալույսը հանգչում էր արդեն, ու դեռևս պայծառ, բայց մայր մտած արևի շողերով այլևս չլուսավորված օդում սկսել էին թանձրանալ ու տարածվել սառն ստվերները, երբ ես որոշեցի, վերջապես, վերադառնալ տուն։ Արագ քայլերով անցա երկար տեղ տարածված թփերը, բարձրացա բլուրը և, կաղնու մանր ծառերով լիքը և հեռվում ցածրիկ, սպիտակ եկեղեցի ունեցող հարթության փոխարեն տեսա բոլորովին այլ, ինձ անծանոթ տեղեր։ Առջևս ձգվում էր մի նեղ հովիտ, ուղիղ դիմացս դիք պատի պես բարձրանում էր կաղամախիների նոսր պուրակը։ Ես տարակուսանքով կանգ առա ու շուրջս նայեցի... «Էհե,— մտածեցի,— բոլորովին այլ տեղ եմ ընկել. շատ եմ թեքվել դեպի աջ» և, ինքս էլ իմ սխալմունքի վրա զարմանալով, արագ-արագ իջա բլրից, ու ինձ անմիջապես մի անախորժ, անշարժ խոնավության մեջ զգացի, կարծես նկուղ էի մտել. խիտ, բարձր կանաչը՝ հովտի խորքում, ամբողջովին թաց, սպիտակին էր տալիս հարթ սփռոցի պես. այդ կանաչների վրայով քայլելը սարսափելի էր մի տեսակ։ Ես շտապով դուրս եկա մյուս կողմը և, ձախ բռնելով, գնացի կաղամախիների անտառի երկարությամբ։ Ոտքիկներն արդեն պտտվում էին նրանց քնած կատարների վերև. պտտվում էին խորհրդավոր ու դողում մութ, պայծառ երկնքում. արագ և ուղիղ անցավ վերևից ուշացած մայր բազեն, շտապելով իր բույնը։ «Ա՛յ, հենց որ դուրս գամ այն անկյունը,— մտածում էի ինքս ինձ,—

հենց այդտեղ ճամփա կլինի. իսկ ես մի վերստաչափ ավելորդ պտույտ եմ տվել»։

Ես հասա, վերջապես, անտառի պռունկ, բայց այնտեղ ոչ մի ճամփա չկար։ Ինչ-որ ցածրիկ թփեր էին տարածվում առջև, իսկ նրանցից այն կողմ, հեռու-հեռու, երևում էր ամայի դաշտը։ Ես կրկին կանգ առա։ «Սա ի՞նչ հանելուկ է... Այս ի՞նչ տեղ եմ ես»։— Սկսեցի հիշել՝ ինչպես և ուր գնացի օրվա ընթացքում... «Հա՜, սա Պարախինի թփերն են»,— բացականչեցի վերջապես. «Ճիշտ որ. հրեն, այնտեղ էլ, երևի Սինգեևի պուրակն է... Բայց ինչպե՞ս այստեղ ընկա։ Այսքան հեռո՞ւ... Տարօրինակ է։ Հիմա էլի պետք է ձախ գնամ»։

Թփերի միջով դեպի ձախ գնացի։ Մինչդեռ գիշերը մոտենում էր ու թանձրանում, ինչպես փոթորկաբեր ամպ. թվում էր՝ երեկոյան գոլորշիների հետ ամեն կողմից բարձրանում և անգամ վերևից թափվում էր մթությունը։ Նկատեցի մի կանաչով ծածկված արահետ. բռնեցի այդ արահետն ու գնացի, ուշադրությամբ առջևս նայելով։ Շուրջս ամեն ինչ արագորեն մթնում ու լռում էր, միայն լորերն էին ճչում երբեմն։ Գիշերային մի թռչուն, որ անձայն ու ցած թռչում էր անաղմուկ թևերով՝ համարյա դիպավ ինձ և, վախեցած, իրեն գցեց մի կողմ։ Դուրս եկա թփերից ու մի միջնակ բռնած գնացի դաշտի միջով։ Արդեն դժվարությամբ էի տարբերում հեռուն գտնվող առարկաները. դաշտն անորոշ սպիտակին էր տալիս շուրջս. նրանցից դենը, յուրաքանչյուր րոպե հսկայական քուլաներով բարձրանում էր մռայլ խավարը։ Սառչող օդի մեջ քայլերս հնչում էին խուլ։ Գունատված երկինքը նորից սկսեց կապտել, բայց դա արդեն գիշերվա կապույտ էր։ Փոքրիկ աստղերը առկայծեցին ու շարժվեցին նրա վրա։

Այն, ինչ ընդունել էի պուրակի տեղ, պարզվեց, որ մութ ու կլոր բլուր է։ «Այս որտե՞ղ եմ վերջապես»,— կրկնեցի դարձյալ բարձրաձայն, կանգ առա երրորդ անգամ և հարցական նայեցի իմ անգլիական դեղնախալ շանը՝ Դիանկին, որ ամենախելացին էր բոլոր չորքոտանի արարածներից։ Բայց չորքոտանի արարածներից ամենախելացին միայն պոչը շարժեց, հոգնած աչքերը թարթեց տխրությամբ և ոչ մի գործնական խորհուրդ չտվեց ինձ։ Ես ամաչեցի նրանից ու շտապեցի առաջ գնալ. հանկարծ կարծես գլխի ընկա, թե ուր պիտի գնամ. շրջեցի բլուրի մյուս կողմը և դուրս եկա մի ոչ խոր չորս կողմը վարած ձորակ։ Անմիջապես տարօրինակ մի զգացում տիրեց ինձ։ Ձորակը ուղիղ կաթսայի տեսք ուներ՝ թեք կողերով. հատակին՝ ոտի վրա կանգնած էին մի քանի մեծ, սպիտակ քարեր։ Թվում էր՝ նրանք իջել են այդտեղ գաղտնի խորհրդակցելու, և այնքան խուլ ու համր էր այդ ձորակը, այնքան տափակ, և երկինքն այնպիսի տխրությամբ էր կախվել նրա վրա, որ սիրտս ճմլվեց։ Մի ինչ-որ փոքրիկ գազան գանգատավոր ծվծվոց բարձրացրեց քարերի արանքում։ Շտապեցի ետ դառնալ դեպի բլուրը։ Տուն գնալու ճանապարհ գտնելու հույսս դեռ չէի կորցրել. բայց այստեղ վերջնականապես հավաստիացա, որ մոլորվել եմ բոլորովին և, այլևս չաշխատելով ճանաչել ինձ շրջապատող տեղերը, որ արդեն ծածկվել էին մեգով, գնացի ինձ համար, աստղերին նայելով... Կես ժամի չափ գնում էի այդպես, դժվարությամբ ոտները փոխելով։ Թվում էր կյանքումս այսպիսի ամայի տեղեր չեմ եղել, ո՜չ կրակ էր երևում մի տեղ, ո՜չ էլ ձայն էր լսվում։ Մի բլուր հետևում էր մյուսին, դաշտերն անվերջ ձգվում էին դաշտերի ետևից, թփերը կարծես հանկարծ դուրս էին ցցվում գետնից, հենց քթիս առջև։ Ես շարունակ քայլում էի և արդեն պատրաստվում էի թեք ընկնել մի որևէ տեղ մինչև առավոտ, երբ հանկարծ տեսա՝ կանգնած եմ մի սարափելի անդունդի վրա։

Ես արագ ետ քաշեցի մեկնած ոտս և գիշերվա մթնշաղի միջով տեսա հեռվում, ներքևը մի մեծ հարթավայր։ Լայն գետը, կիսաշրջան կազմելով, անցնում էր նրա միջով. ջրի պողպատյա փայլը, որ հաղիվ շողում էր երբեմն, ցույց էր տալիս նրա ընթացքը։ Բլուրը, որի վրա գտնվում էի, իջնում էր հանկարծ, գրեթե ուղղահայաց. նրա վիթխարի գծագրությունները, սևին տալով, ջոկվում էին օդի կապտավուն պարապությունից, և ուղիղ իմ տակ, բլուրի ուղղահայաց լանջի ծայրին, հենց գետի կողքին, որ այդ տեղում երևում էր անշարժ, մթին հայելու նման, կարմիր բոցերով վառվում ու ծխում էին միմյանց մոտ երկու խարույկ։ Նրանց շրջակայքում մարդիկ էին շարժվում, ստվերներ էին օրորվում, երբեմն պայծառ լուսավորվում էր մի փոքրիկ ու խուճուճ գլխի առաջին մասը...

Վերջապես իմացա, թե ուր եմ ընկել։ Այդ մարգագետինը մեր կողմերում հռչակված է Բեժին-մարգագետին անունով... Բայց ոչ մի հնար չկար տուն վերադառնալու, մանավանդ դիշեր ժամանակ, հոգնածությունից ոտներս թուլացել էին։ Որոշեցի մոտենալ խարույկներին և այն մարդկանց հետ, որոնց ընդունեցի չարվադարների տեղ, սպասել լուսաբացին։ Բլրի ուղղահայաց լանջով հաջողությամբ իջա ցած, բայց հաղիվ էի բռնածս վերջին թուփը բաց թողել ձեռիցս, երբ հանկարծ երկու մեծ, սպիտակ, բրդոտ շուն՝ կատաղի հաչոցով վրա պրծան ինձ։ Մանկական զրնգուն ձայներ բարձրացան խարույկների շուրջը. երկու-երեք փոքրիկ տղա վեր կացան գետնից։ Ես արձագանքեցի նրանց հարցական ճիչերին։ Նրանք մոտ վազեցին, շներին իսկույն ետ կանչեցին, որոնց մանավանդ զարմացրեց իմ Դիանկին, ու ես մոտեցա նրանց։

Ես սխալվել էի՝ կրակի շուրջը նստոտած մարդկանց չարվադարների տեղ դնելով։ Դրանք պարզապես գյուղական երեխաներ էին՝ հարևան շենից. ձիեր էին պահում։ Ամառվա շոգ ժամանակը մեզանում ձիերը գիշերը դուրս են անում դաշտում կերակրվելու, քանի որ ցերեկը ճանճերն ու բոռերը նրանց հանգիստ չեն տալիս։ Զիերին երեկոյան դեմ դուրս անելը և առավոտ լուսաբացին տուն բերելը մեծ տոն է գյուղի երեխաների համար։ Անգլխարկ, մի հին կիսամուշտակ հագած՝ նստում են նրանք ամենաժիր, նիհար ձիերի վրա և սլանում ճիչով, աղմուկով, ձեռն ու ոտը թափահարելով. ծուլ են լինում ու զվարթ քրքջում։ Թեթև փոշին բարձրանում է դեղին սյունով և տարվում ճանապարհով. համաչափ ոտնատրոփը տարածվում է հեռուն. ձիերը վազում են ականջները խլշած. բոլորի առջևից՝ պոչը ցցած վազում է մի որևէ բրդոտ, շեկ ձի՝ կոծոծները խճճված բաշի մեջ։

Ես տղաներին ասացի, որ մոլորվել եմ, ու նստեցի մոտները։ Նրանք հարցրին, թե որտեղացի եմ, լռեցին, քաշվեցին։ Խոսեցինք մի քիչ։ Պառկեցի մի թփի տակ ու սկսեցի դիտել շուրջս։ Տեսարանը սքանչելի էր. խարույկների շուրջը դողդողում և, խավարին դեմ առնելով, կարծես մարում էր կրակի կարմրավուն անդրադարձումը. կրակը, բռնկելով, երբեմն արտացոլումներ էր նետում այդ շրջագծի այն կողմը. լույսի բարակ լեզուն լիզում էր թփերի մերկ ճղները և արագ չքա-

նում. սուր, երկար ստվերները, մի ակնթարթ առաջ վազելով, իրենց հերթին գալիս հասնում էին կրակներին. խավարը կռվում էր լույսի հետ։ Երբեմն, երբ բոցը թույլ էր վառվում, և լույսի շրջագիծը նեղանում էր, առաջ եկած խավարի միջից երևում էր հանկարծ մի ձիու գլուխ՝ ճակատին մի ճերմակ գիծ կամ ամբողջովին սպիտակ. ուշադիր և բութ հայացքով նայում էր ձեզ, մի երկար խոտ ծամելով և նորից ծածկվում խսկույն։ Լսվում էր միայն, թե ինչպես ձին շարունակում է ծամել ու փնչացնել։ Լուսավորված տեղից դժվար է տեսնել, թե ինչ է կատարվում մթան մեջ, և այդ պատճառով մոտերքում ամեն ինչ թվում էր սև վարագույրով պատած, բայց հեռուն՝ հորիզոնի կողմը՝ մութ կերպով երևում էին բլուրներն ու անտառները։ Մթին, մաքուր երկինքը հանդիսավոր ու անսահման բարձր փռված էր նրանց գլխավերև՝ իր ամբողջ խորհրդավորությամբ։ Կուրծքս ճնշվում էր քաղցրությունից, շնչելով այն առանձնահատուկ ու թարմ բուրմունքը՝ ոռոսական ամառ գիշերվա բուրմունքը։ Շուրջս համարյա ոչ մի աղմուկ չէր լսվում... Միայն երբեմն մոտիկ գետում հանկարծ ճողփում էր մի մեծ ձուկ, գետափի եղեգը շրջում էր թույլ, ալիքներից օրորվելով... Միայն խարույկներն էին հանդարտ ճաթճաթում։

Տղաները նստած էին նրանց շուրջը. այդտեղ նստել էին և այն երկու շունը, որոնք քիչ մնաց ինձ ծվատեին։ Նրանք դեռ երկար ժամանակ չէին կարողանում հաշտվել իմ ներկայության հետ, և քնատ աչքերը կկոցելով ու խեթ նայելով կրակին, երբեմն մռմռում էին սեփական արժանապատվության զգացումով. սկզբում մռռում էին, ապա թեթևակի վնգստում, ափսոսելով կարծես, որ չկարողացան իրագործել իրենց ցանկությունը։ Տղաներն ընդամենը հինգ հոգի էին՝ Ֆեդյան, Պավլուշան, Իլյուշան, Կոստյան ու Վանյան (նրանց անուններն իմացա նրանց խոսակցությունից և այժմ մտադիր եմ ծանոթացնել նրանց ընթերցողին)։

Առաջին տղային, որ ամենից մեծն էր, Ֆեդյային կարող էիք համարել տասնչորս տարեկան։ Դա մի վայելչակազմ տղա էր՝ սիրուն ու նուրբ դիմագծերով, խուճուճ, խարտյաշ մազերով, պայծառ աչքերով և մշտական կես-ուրախ, կես-ցրված ժպիտով։ Բոլոր նշաններից երևում էր, որ հարուստ

ընտանիքի զավակ է և դաշտ է եկել ոչ թե կարիքից, այլ այնպես, զվարճության համար։ Նրա հագինը մի նախշուն չիթ վերնաշապիկ էր՝ դեղին երիզով. վրան գցել էր մի նոր կարճ վերնազգեստ, որ հազիվ էր պահում ուսերին. կապույտ գոտուց կախված էր սանրը։ Կարճ ճտքերով կոշիկներն իսկապես իրենն էին և ոչ հորը։ Երկրորդ տղան՝ Պավլուշան սև, խռիվ մազեր ուներ, մոխրագույն աչքեր, այտոսկրերը լայն էին, դեմքը գունատ, չեչոտ, բերանը մեծ, բայց կանոնավոր, գլուխը մեծ էր, ինքը կարճլիկ ու անդյուրաթեք։ Ինչ խոսք, որ տգեղ տղա էր, բայց և այնպես ինձ դուր եկավ, շատ խելացի հայացք ուներ, նայում էր ուղիղ և, բացի դրանից, ձայնի մեջ ուժ էր զգացվում։ Նա իր շորերով պարծենալ չէր կարող. ամբողջը մի հասարակ վերնաշապիկ էր և կարկատած վարտիք։ Երրորդի՝ Իլյուշայի դեմքը բավականին աննշան էր. կռացած, երկար քիթ ուներ, որ արտահայտում էր ինչ-որ բութ, հիվանդոտ հոգացողություն. իրար սեղմած շուրթերը չէին շարժվում, իրար կցած հոնքերը չէին բաժանվում. նա շարունակ կարծես աչքերը կկոցում էր կրակից։ Նրա դեղին, գրեթե սպիտակին տվող մազերը սուր-սուր փնջերով դուրս էին թափվել թաղիքե գլխարկի տակից, որը երկու ձեռքով քաշում էր նա ականջների վրա։ Նոր տրեխներ ուներ և ոտի փաթաթաններ. հաստ պարանը, որ երեք անգամ պատ էր տվել մեջքով, խնամքով գրկել էր նրա մաքուր, սև վերնազգեստը։ Թե՛ նա, թե՛ Պավլուշան հազիվ լինեին տասներկու տարեկան։ Չորրորդը՝ Կոստյան, որ կլիներ տասը տարեկան, ինձ հետաքրքրում էր իր խոհուն ու տխուր նայվածքով։ Նրա դեմքը մեծ չէր, նիհար էր, պեպենոտ, ներքին մասը սրված, սկյուռի դեմքի նման. շուրթերը հազիվ էին նկատվում. բայց տարօրինակ տպավորություն էին թողնում նրա խոշոր, սև ու խոնավ փայլ ունեցող աչքերը. նրանք, թվում էր, ուզում էին ինչ-որ բան ասել, որի համար լեզուն, գոնե նրա լեզուն, խոսք չէր գտնում։ Նա փոքրահասակ էր, նիհար և հագնված էր բավականին աղքատ։ Վերջինին՝ Վանյային, սկզբում քիչ մնաց չնկատեմ էլ. նա պառկած էր գետնին ու ճիլոպով ծածկված. երբեմն միայն ճիլոպի տակից հանում էր շեկ, խուճուճ գլուխը։ Այդ տղան կլիներ ընդամենը յոթ տարեկան։

Այսպես ուրեմն, մի թփի տակ պառկած, նայում էի տղա-

ներին։ Մի փոքրիկ կաթսա կախված էր խարույկներից մեկի վրա. մեջը «կարտոշկա» էին եփում։ Կաթսային նայում էր Պավլուշան. գետնին չոքած՝ նա ձեռքի տաշեղը շուտ-շուտ կոխում էր եփ եկող ջրի մեջ։ Ֆեդյան պառկել էր՝ արմունկին հենված և վերնազգեստի փեշերը փռած։ Իլյուշան նստել էր Կոստյայի կողքին և աչքերը կկոցում էր շարունակ։ Կոստյան գլուխը կախել էր փոքր-ինչ և նայում էր հեռուն։ Վանյան չէր շարժվում իր ճիլոպի տակ։ Ես ձևացրի, թե քնած եմ։ Կամաց-կամաց տղաները կրկին խոսել սկսեցին։

Սկզբում խոսում էին դեսից-դենից, վաղվա աշխատանքների մասին, ձիերի մասին. բայց հանկարծ Ֆեդյան դիմեց Իլյուշային և, ընդհատված զրույցը կարծես վերսկսելով՝ հարցրեց նրան.

— Հը, էդպես ուրեմն, քաջք տեսար, հա՞։

— Չէ, ես չեմ տեսել. նրան տեսնել չի էլ կարելի,— ասաց Իլյուշան խոպոտ ու թույլ ձայնով, որի հնչյունը ավելի քան համապատասխանում էր նրա դեմքի արտահայտությանը,— լսել եմ... Մենակ ես չեմ լսել։

— Բայց նա ձեզ մոտ ի՞նչ տեղ է ապրում։

— Թուղթ թրջելու տեղը։

— Է, դուք գործարան եք գնո՞ւմ որ։

— Ոնց չէ, գնում ենք։ Ես ու ախպերս՝ Ավդյուշան, թուղթ հարթող ենք։

— Տես հլա—բանվորներիս տեսեք...

— Է, բա ո՞նց նրա ձենը լսեցիր,— հարցրեց Ֆեդյան։

— Ա՛յ ոնց։ Պատահեց մի անգամ ես ախպորս հետ, մեկ էլ Ֆեոդոր Միխևսկու, Իվաշկայի, մեկ էլ Կրասնի Խոլմեցի Իվաշկայի, հետո Սուխորուկով Իվաշկայի հետ, կային ուրիշ տղերք էլ, բոլորս կլինեինք տասը հոգի, երկրորդ հերթի աշխատողներ. բայց պետք է գիշերը մնայինք թուղթ թրջելու սենյակում, այսինքն՝ ոչ թե էնպես, մեր կամքով պտի մնայինք,— Նազարովը՝ վերակացուն, չթողեց մեր տները գնանք. ինչ կա. ասում ա, մեկ էլ տուն գնաք, երեխաներ եք. էգուց շատ գործ կա, ասում ա, տուն մի գնաք։ Մենք էլ մնացինք ու բոլորս պառկեցինք մի տեղ. մեկ էլ Ավդյուշան սկսեց, թե ի՞նչ կանենք, տղերք, եթե հանկարծ քաջք երևա... Խոսքը դեռ չէր վերջացրել Ավդեյը, հանկարծ մեկը շարժվեց մեր գլխա-

վերևը. մենք պառկած էինք ներքև, իսկ նա ման էր գալի վերևում, անիվի մոտ։ Լսում ենք՝ ման է գալի, տախտակները կռանում, ճռճռում են ոտների տակ. անցավ մեկ էլ մեր գլխավերևից. ջուրը հանկարծ թափվեց անիվի վրա ու ձենը լցրեց սենյակը։ Անիվը չիկչիկաց ու պտտվեց. իսկ ջրի բերանը վաղուց փակած էր։ Զարմանում ենք՝ ո՞վ փակը բաց արավ, որ ջուրն եկավ. բայց անիվը պտտվեց, պտտվեց ու կանգնեց։ Նա գնաց էլի դեպի վերևի դուռը, հետո սկսեց նարդիվանով իջնել, կարծես սկի չէր վռազում... Հետո մոտեցավ մեր դռանը, սպասեց, սպասեց, մեկ էլ դուռը բացվեց հանկարծ։ Վեր թռանք, մտիկ ենք անում՝ հեչ մարդ չկա... Հանկարծ տեսնենք. մեծ ամաններից մեկը ժաժ եկավ, բարձրացավ, թռավ օդի մեջ ու պտտվեց, մեկը կարծես ողողում էր նրան, ու էլի գնաց իրա տեղը։ Հետո մի ուրիշ ամանի ունկ դուրս եկավ մեխից ու էլի գնաց-կախվեց այդ մեխից. հետո մեկը կարծես գնաց դեպի դուռը, ու հանկարծ էնպես մի հազաց, բողազը քերելով, ոնց որ ոչխար... Բոլորս իրար գլխով դիպանք ու մոտեցանք իրար... Ինչքան վախեցա՞նք, ինչքա՞ն, էդ ժամանակ։

— Տես,— խոսեց Պավլուշան։— Ինչի՞ էր հազում որ։

— Եսիմ. կարելի ա՝ նամությունից էր։

Բոլորը ծիծաղեցին։

— Հը՛, կարտոշկան եփե՞ց,— հարցրեց Ֆեդյան։

Պավլուշան մոտենալով շոշափեց կաթսայի կարտոֆիլը։

— Չէ, դեռ հում ա... Տես, էլի ճողփաց.— ավելացրեց նա՝ երեսը գետի կողմը դարձնելով,— ով գիտի կարող ա... Հրեն մի աստղ ընկավ։

— Տղերք, ձեզ մի բան պատմեմ,— խոսեց Կոստյան բարակ ձայնով,— լսեցեք՝ ինչ պատմեց հերս ինձ մի քանի օր առաջ։

— Հը՛, լսում ենք,— հովանավորողի տեսքով ասաց Ֆեդյան։

— Գավրիլին, մեր թաղի դուրգարին ճանաչում եք, չէ՞։

— Հա՛, ճանաչում ենք։

— Բա գիտե՞ք, թե ինչո՞ւ ա էդպես տխուր ու ինչո՞ւ շարունակ չի խոսում. գիտե՞ք։ Այ ինչու ա տխուր. մի անգամ

դա, հերս ա ասում, գնում ա, ախպեր ջան, մերին՝ կաղին հավաքելու։ Գնում ա կաղին հավաքելու ու ճամփեն կորցնում ա։ Աստված գիտի, թե որտեղ ա ընկնում, դես ա գնում, ախպեր ջան, դեն ա գնում՝ չէ՛. ճամփա չի գտնում. գիշերն էլ արդեն կոխում ա։ Նստում ա մի ծառի տակ. արի սպասեմ, ասում ա, առավոտը բացվի։ Նստում ա ու ննջում։ Ննջում ա ու լսում ա հանկարծ, որ մեկը կանչում ա իրան։ Նայում ա՝ մարդ չկա։ Նորից ննջում ա՝ էլի են կանչում։ Սա նորից նայում ա, նայում՝ մեկ էլ տեսնում ա ծառի ճյուղին նստած մի փերի. օրորվում ա ճյուղի վրա ու նրան կանչում իր մոտ. կանչում ա ու ծիծաղո՛ւմ, ծիծաղո՛ւմ... Լուսնյակն էլ լավ լիս ա տալի, էնպես լավ, որ ամեն բան երևում ա, ախպեր ջան։ Էդ փերին կանչում ա նրան, իսկ ինքը ամբողջովին պայծառ սպիտակ նստել է ծառի ճյուղին, ոնց որ մի շարմաղ ձուկ, արծաթի պես պսպղում ա... Դուրգար Գավրիլը մնում ա սառած, ախպեր ջան, իսկ փերին էլի ծիծաղում ա ու ձեռքով կանչում նրան իր մոտ։ Էն է Գավրիլը վեր ա կենում, ուզում ա գնալ փերու մոտ, բայց, աստծու կամքով խելքի ա գալի, խաչակնքում ա... Բայց ինչքա՞ն դժվարությամբ ա խաչ քաշում, տղերք, ասում ա՝ ձեռը ոնց որ քարից ըլեր, վեր չէր բարձրանում... Ախ, դու... Հա հենց որ խաչակնքում ա, ախպեր ջան, փերիս ծիծաղը կտրում ա ու լաց ա ըլում հանկարծ... Լաց ա ըլում, ախպեր ջան, ու աչքերը մազերով սրբում, իսկ մազերը կանաչ են, ոնց որ կանեփ։ Նայում է Գավրիլը, նայում է նրան ու սկսում հարցուփորձ անել. «Ինչի՞ ես լաց ըլում, այ փերի»։ Իսկ փերին պատասխանում ա. «Դու չպետք է խաչակնքեիր», ասում ա, «Ուրախ կապրեիր ինձ հետ մինչև կյանքիդ վերջը, իսկ լաց եմ ըլում, տանջվում եմ նրա համար, որ խաչ քաշեցիր. բայց մենակ ես չեմ տանջվելու, դու էլ տանջվիր մինչև կյանքիդ վերջը»։ Էստեղ, ախպեր ջան, էդ փերին չքանում ա. իսկ Գավրիլն իսկույն գլխի ա ընկնում, թե ոնց դուրս գա մերուց... Բայց էդ օրվանից էլ աչքունքը չի բացվում, տխուր ման ա գալի շարունակ։

— Ասիր, էլի,— խոսեց Ֆեդյան կարճ լռությունից հետո,— էդ ո՞նց կըլի, որ մերու շարքը փչացնի քրիստոնյա մարդու հոգին... Չէ՞ որ Գավրիլը, ասում ես, նրան չլսեց։

— Արի տես, որ էդպես ա,— ասաց Կոստյան։— Գավրի-

լան էլ ասել ա, թե՝ նրա ձենը շատ բարակ ու տխուր ա էլել։

— Էդ քու հերն ի՞նքն ա պատմել,— շարունակեց Ֆեդյան։

— Ինքը։ Նա պատմում էր՝ ես պառկած լսում էի։

— Զարմանք բան ա։ Ինչո՞ւ ա Գավրիլը տխրել որ... Ուրեմն փերին նրան հավանել ա, որ կանչել ա։

— Այո, հավանել ա,— վրա բերեց Իլյուշան։— Իհարկե. փերին ուզել ա նրան խուտուտ ածի, այ ինչ ա ուզել։ Էդ հենց փերիների գործն ա։

— Այ, էստեղ էլ պետք ա որ փերիներ ըլեն,— նկատեց Ֆեդյան։

— Չէ,— ասաց Կոստյան,— էստեղ մաքուր, ազատ տեղ ա։ Մենակ գետն ա մոտիկ։

Բոլորը լռեցին։ Հանկարծ հեռվում, ինչ-որ մի տեղ, լսվեց մի ձիգ, զիլ, գրեթե հեծող ձայն, մեկը այն գիշերային անհասկանալի ձայներից, որ լսվում են երբեմն խորին լռության մեջ, բարձրանում են, մնում օդում և դանդաղորեն տարածվում, վերջապես, կարծես մարելով։ Ականջ ես դնում, և կարծես ոչինչ չկա, բայց զրնգում է։ Մեկը, կարծես, երկա՜ր-երկար ճչաց հենց հորիզոնի տակ, մի ուրիշը կարծես արձագանք տվեց նրան անտառից՝ բարակ ու սուր քրքիջով, և մի թույլ, շաչող սուլոց անցավ գետն ի վար։ Տղաներն իրար նայեցին ու վեր թռան։

— Խաչը օգնական,— շշնջաց Իլյան։

— Ի՜, ագռավներ,— ճչաց Պավելը,— ինչի՞ իրար անցաք։ Տեսեք, կարտոլը եփել ա։ (Բոլորը մոտեցան կաթսային և սկսեցին ուտել գոլորշի արձակող կարտոֆիլը. մենակ Վանյան չշարժվեց տեղից)։ Ինչո՞ւ չես վեր կենում,— ասաց Պավելը նրան։

Բայց նա դուրս չեկավ իր ճիլոպի տակից։ Կաթսան շուտով ամբողջովին դատարկվեց։

— Բայց լսե՞լ եք, տղեք,— սկսեց Իլյուշան,— մի քանի օր առաջ ինչ ա պատահել մեզանում՝ Վարնավիցում...

— Գետի մո՞տ,— հարցրեց Ֆեդյան։

— Հա, քանդված տեղը։ Համա վատ տեղ ա, հա՜, ու խուլ։ Չորս կողմը փոսեր են, ձորեր, ձորերը լիքը օձեր։

— Է, ի՞նչ ա պատահել, ասաց տենանք...

— Այ ինչ ա պատահել։ Դու, Ֆեդյա, շատ կարելի ա չգի-

տես, բայց էնտեղ ջրում խեղդված մի մարդ ա թաղված. նա խեղդվել ա շատ վաղուց, երբ գյուլը (լճակը) դեռ խոր ա եղել. միայն գերեզմանը մինչև հիմա էլ երևում ա, էն էլ շատ քիչ, մի փոքրիկ թումբ ա... Հա, էս քանի օրը կառավարիչը կանչում ա շնպահ Երմիլին. ասում ա՝ գնա, մթամ, Երմիլ, փոշտը բեր. Մեզանում միշտ Երմիլն ա փոշտի գնում։ Վեր է կենում Երմիլը գնում փոշտի, բայց քաղաքում ուշանում ա ու ետ գալիս. մի քիչ կոնծած ա ըլում։ Գիշերն էլ պայծառ, լուսավոր գիշեր ա. լուսնյակը փայլում ա... Գալիս ա Երմիլն ու էդ քանդված տեղով անցնում։ Գնում ա էդպես շնպահ Երմիլն ու տեսնում ա հրես խեղդվածի գերեզմանի վրա մի գառ՝ սպիտակ, սիրուն, խուճուճ մազերով, ման ա գալի։ Երմիլը մտածում ա. վերցնեմ տանեմ-ուտեմ, զուր տեղը պտի կորչի, ձիուց վեր ա գալի ու գառը վերցնում... Իսկ գառը հեչ ձեն չի հանում։ Գնում ա Երմիլը ձիու մոտ, ձին աչքերը շռում ա, փնչացնում, գլուխը թափ տալի. բայց Երմիլը նրան «տպռու» ա ասում, նստում ա գառը գրկած ու գնում։ Նա գառին ա նայում, գառն էլ ուղիղ նրա աչքերին։ Սարսափ ա զգում շնպահ Երմիլը. չեմ հիշում, չեմ տեսած, ասում ա, որ ոչխարն էդպես մարդու աչքերի նայի. բայց, ոչինչ. սկսում ա ձեռը քսել դրա բրդին ու «գառնուկս, գառնուկս» ասել։ Իսկ ոչխարը հանկարծ ատամները ղնչրտացնում ա ու ինքն էլ Երմիլին՝ «գառնուկս, գառնուկս»...

Պատմողն իր վերջին խոսքը դեռ չէր ավարտել, երբ հանկարծ երկու շունն էլ միանգամից վեր թռան, հաչոցով նետվեցին կրակից դենը և չքացան խավարի մեջ։ Բոլոր տղաները վախեցան։ Վանյան վեր թռավ իր ճիլոպի տակ։ Պավլուշան ճչալով վազեց շների ետևից։ Նրանց հաչոցն արագ հեռանում էր... Լսվեց խրտնած ձիերի անհանգիստ վազքը։ Պավլուշան բարձր կանչում էր. «Բողար, Ժուչկա»... Մի քանի րոպեից հետո շների հաչոցը լռեց. Պավլուշայի ձայնը գալիս էր արդեն հեռվից... Անցավ էլի մի փոքր ժամանակ. տղաները տարակուսած նայում էին իրար, սպասելով կարծես, թե ինչ է լինելու։ Հանկարծ վազող ձիու դոփյունն լսվեց. նա միանգամից կանգ առավ հենց խարույկի մոտ, և նրա բաշը բռնած, նրա մեջքից ցած թռավ Պավլուշան։ Շները նույնպես եկան մտան

լույսի շրջագիծը և իսկույն նստեցին՝ կարմիր լեզուները հանած։

— Ի՞նչ կար, ի՞նչ ա պատահել,— հարցրին տղաները։

— Ոչինչ,— պատասխանեց Պավլուշան, ձեռը թափ տալով ձիու վրա,— էնպես, շներն ինչ-որ հոտ առան։ Կարծեցի գել ա,— ավելացրեց նա անտարբեր ձայնով, կրծքով մեկ արագ շնչելով։

Ես ակամա հիացա Պավլուշայով։ Նա շատ լավն էր այդ բոպեին։ Նրա տգեղ դեմքը, որ կենդանացել էր ձիուն նստելուց, վառվում էր համարձակ քաջությամբ և վճռականությամբ։ Առանց ձեռնափայտի, գիշերը, առանց տատանվելու, նա մեն-մենակ վազեց գայլի վրա... «Ի՞նչ հիանալի տղա է»,— մտածում էի ես, նրան նայելով։

— Իսկ շները տեսա՞ն էդ գելին,— հարցրեց վախկոտ Կոստյան։

— Էստեղ գել շատ կա,— պատասխանեց Պավլուշան,— բայց նրանք միայն ձմեռն են անհանգստացնում։

Նա կրկին թիկն տվեց խարույկի առաջ։ Գետնին նստելով՝ նա ձեռը գցեց շներից մեկի բրդոտ վիզը, և ուրախացած կենդանին գլուխը երկար չէր թեքում, երախտագիտական հպարտությամբ կողքանց Պավլուշային նայելով։

Վանյան դարձյալ մտավ իր ճիլոպի տակ։

— Իսկ դու, Իլյուշա, ինչ-որ սարսափելի բան էիր պատմում,— խոսեց Ֆեդյան, որը, որպես հարուստ գյուղացու որդի, առաջնախոսի դեր էր կատարում (նա ինքը խոսում էր քիչ, կարծես վախենում էր արժանապատվությունը գցել)— շները հաչացին, խանգարվեց... Ճիշտ որ, լսել եմ. էդ տեղն, ասում են, շատ վատ տեղ ա...

— Վարնավիցի՞ն... Իհարկե. էն էլ ինչքա՞ն։ Էնտեղ, ասում են, գեղացիք շատ անգամ են տեսել իրենց ծեր, մեռած աղային։ Ման ա գալիս, ասում են, երկարափեշ կաֆտան հագած ու մի գլուխ ախուվախ ա անում, ինչ-որ բան ա փընտրում գետնի երեսին։ Մի անգամ Տրոֆիմիչ պապը հանդիպում ա նրան, թե աղա, Իվան Իվանիչ, էդ ի՞նչ ես փնտրում։

— Տրոֆիմի՞չն ա հարցնում նրան,— զարմացած ընդհատեց Ֆեդյան։

— Հա, նա ա հարցնում։

— Այ, դրանից հետո ղոչաղ կասեմ Տրոֆիմիչին... է, բա նա ի՞նչ ա ասում։

— Կախարդական խոտ եմ փնտրում, ասում ա։ Ու խոսում ա էնպես խուլ, ձենը փորը գցած.— կախարդական խոտ։— Իսկ քու ինչի՞ն ա պետք, աղա, էդ կախարդական խոտը։— Ճնշում ա, ասում ա, գերեզմանս ճնշում ա, Տրոֆիմիչ. ուզում եմ դուրս գամ, դո՛ւրս...

— Տե՛ս հլա,— նկատեց Ֆեդյան,— կարծես քիչ ա ապրել։

— Ինչ զարմանք բան ա,— խոսեց Կոստյան,— ես կարծում էի, մեռելներին կարելի ա մենակ մեռելոցին տեսնել։

— Մեռելներին կարելի ա ամեն սհաթ էլ տեսնել,— համոզված վրա բերեց Իլյուշան, որը, որքան կարողացա նկատել, բոլորից ավելի լավ գիտեր գյուղական հավատալիքները...— Իսկ մեռելոցին կարող ես տեսնել էն կենդանի մարդկանց էլ, ովքեր մեռնելու են, այսինքն՝ ում հերթն եկել ա էդ տարի մեռնելու։ Բավական է միայն մարդ գնա-նստի եկեղեցու գավթում ու բոլոր ժամանակ ճամփին նայի։ Նրանք կգան կանցնեն ճամփով, այսինքն՝ նրանք, ովքեր էդ տարի պիտի մեռնեն։ Մեր գեղում՝ անցած տարի, պառավ Ուլյանան գնացել էր եկեղեցու գավթում նստել։

— Հետո մեկն ու մեկին տեսե՞լ էր— հետաքրքրությամբ հարցրեց Կոստյան։

— Ոնց չէ։ Առաջ հլա մի երկար նստում ա, ոչ մարդ ա տեսնում, ոչ բան ա լսում... Միայն կարծես ինչ-որ մի տեղ մի փոքրիկ շուն ա հաչում... Մեկ էլ տեսնում ա՝ ճամփով մի տղա ա գնում մետակ շապիկ հագած։ Նայում ա տեսնում՝ Իվաշկա Ֆեդոսևն ա...

— Էն, որ գարունքը մեռա՞վ,— ընդհատեց Ֆեդյան։

— Նա ինքը... Գնում ա ու գլուխն էլ չի բարձրացնում...— Բայց Ուլյանան ճանաչում ա նրան... Իսկ հետո նայում ա, տեսնում ա մի կնիկ ա գալի։ Լավ մտիկ ա անում, մտիկ անում,— օ՜ տեր աստված,— նա ինքն ա գալիս ճամփով, ինքը Ուլյանան։

— Ի՞նքը,— հարցրեց Ֆեդյան։

— Աստված վկա, ինքը։

— Հետո ինչ, չէ՞ որ նա դեռ չի մեռել։

— Ախր տարին էլ դեռ չի անցել։ Բայց գու հլա մի նրան լավ նայիր. քիթը բռնես, հոգին կտա։

Բոլորը դարձյալ լռեցին։ Պավլուշան մի բուռ չոր ցախ գցեց կրակի վրա։ Սևացան նրանք հանկարծ բռնկած բոցի վրա, ճարճատեցին, ծխացին, ծուվեցին՝ վառվող ծայրերը բարձրացնելով։ Լույսի անդրադարձումը, դողդողալով, ընկավ բոլոր կողմերի վրա։ Հանկարծ որտեղ-որտեղ մի ճերմակ աղավնի եկավ ուղիղ այդ անդրադարձումի վրա, վախեցած պտույտ գործեց միևնույն տեղում, ամբողջովին տաք լույսով ողողված, ու չքացավ, թևերը զրնգացնելով։

— Երևում ա տնից ետ ա ընկել,— նկատեց Պավլուշան։— Հիմի թռչելու ա, մինչև մի բանի դեմ կառնի, ու որտեղ դեմ առնի, էնտեղ էլ գիշերը կմնա մինչև առավոտ։

— Սա, Պավլուշա,— խոսեց Կոստյան,— ինչպես երևում ա արդար հոգի չէր, որ երկինք էր թռել, հը՞։

Պավլուշան մի քանի ցախ էլ գցեց կրակի վրա։

— Շատ կարելի ա,— ասաց նա վերջապես։

— Ասա մի տեսնեմ, Պավլուշա,— սկսեց Ֆեդյան,— ձեր գեղո՞ւմ էլ տեսաք արևի խավարումը։

— Ո՞նց չէ։

— Դուք էլ վախեցա՞ք։

— Ինչու մենակ մենք։ Մեր աղեն, որ առաջ մեզ հասկացնում էր, թե խավարում ա ըլելու, հենց որ խավարումն էլավ՝ ինքը, ասում են, էնքան վախեցավ, որ տեսնելու բան էր. իսկ նրա տան կերակուր եփող կնիկը, հենց որ խավարումն ըլում ա, փետը վերցնում ա ու կերակրի բոլոր բղուղները[1] ջարդում փեչի մեջ. «էլ ով պտի ուտի,— ասում ա,— աշխարհիս վերջը եկավ...»։ Իսկ մեր գեղում, ախպեր ջան, էնպես բաներ էին ասում, որ, թե՝ մթամ, սպիտակ գելեր են դուրս գալու, մարդկանց ուտելու են, մարդակեր ղշեր են գալու, ու ինքը՝ Տրիշկան[2] էլ երևալու ա մարդկանց աչքին։

— Էդ Տրիշկան ո՞վ ա,— հարցրեց Կոստյան։

— Բա գիտես ո՞չ,— տաքացած վրա բերեց Իլյուշան։— Ուրեմն աշխարհից բեխաբար մարդ ես, որ չես իմանում Տրիշ-

[1] Ռուսական գյուղերում կերակուրը եփում են մեծ մասամբ փեչի մեջ՝ բղուղներով։ Ծ. Թ.

[2] Տրիշկան Նեռի մոտավոր գաղափարն է։

կան ով ա։ Դա մի էնպես զարմանալի մարդ ա, որ գալու ա գալու ա, ու նրան ո՛չ կարելի ա բռնել, ո՛չ էլ կարելի ա մի բան անել. էդպես զարմանալի մարդ ա ըլելու։ Կուզենան, օրինակ, քրիստոնյաները նրան բռնեն. փետեր վերցրած կերթան նրա վրա, կշրջապատեն, բայց նա խաբս կտա, էնպես խաբս կտա, որ մարդիկ կսկսեն իրար ջարդել։ Բանտ դնեն նրան, ասենք նա ջուր կուզի մի ունկավոր ամանով. ջուր կբերեն էդ ունկավոր ամանով, նա իրեն կքցի էդ ջրամանը, դե հիմի տղա ես արի նրան գտի։ Ոտները շղթա կդնեն, նա ձեռները կխփի իրար՝ շղթաները խկույն կընկնեն ոտներից։ Ու կերթա էդ Տրիշկան գեղեր ու քաղաքներ ու կսկսի գլխահան անել քրիստոնյա ժողովրդին... Իսկ նրան դժվար կըլի ձեռ տալ... էդպես մարդ ա ըլելու էդ զարմանալի, խորամանկ մարդը։

— Հա,— շարունակեց Պավլուշան իր դանդաղ ձայնով,— էդպես։ Դրան էլ սպասում էին մեր գեղում։ Ծերերն ասում էին, թե հենց որ երկնքի խավարումն սկսվի՝ էն ժամանակ Տրիշկան կգա։ Խավարումն սկսվեց։ Ամբողջ ժողովուրդը դուրս թափվեց փողոցն ու հանդը. սպասում են, տեսնեն, ինչ ա ըլելու։ Իսկ մեր տեղը, ոնց որ գիտեք, բաց տեղ ա, ամեն ինչ երևում ա։ Մտիկ են անում, մեկ էլ տեսնում են գեղի է՛-էն ծերից, բլրի գլխից մի մարդ ա գալի, մի զարմանալի գլխով մարդ... Բոլորը ծղրտում են. «Վա՛յ, Տրիշկան գալիս ա, վա՛յ, Տրիշկան գալիս ա», ու փախչում են դեսուդեն։ Մեր տանուտերը մտնում ա առուն, նրա կնիկը մտնում ա դարպասի փետ

լուսադեմի ցողը։ Լուսին չկար երկնքում. նա այդ պահին ուշ էր դուրս գալիս։ Անթիվ ոսկեցոլուն աստղերը, թվում էր, հանդարտ, առկայծելով, բոլորը հոսում-գնում են դեպի Հարդագողի ճանապարհը, և իսկապես, նայելով նրանց, դուք ինքներդ կարծես զգում էիք երկրագնդի փութկոտ, անկարգ վազքը... Հանկարծ մի տարօրինակ, սուր, հիվանդագին ճիչ լսվեց երկու անգամ՝ իրար ետևից, գետի կողմից և, մի քանի ակնթարթ հետո, կրկնվեց հեռվում...

Կոստյան ցնցվեց... «Ի՞նչ էր»։

— Դա ձկնակուլին ա,— հանգիստ պատասխանեց Պավլուշան։

— Ձկնակուլի՞ (ձկնկուլ),— կրկնեց Կոստյան...— իսկ էն ի՞նչ կըլեր, Պավլուշա, որ երեկ իրիկուն լսեցի,— ավելացրեց նա, քիչ լռելով,— գուցե իմանաս...

— Ի՞նչ ես լսել։

— Այ ինչ լսեցի։ Կամենկի Գրյադից գնում էի Շաշկինո. առաջ հլա գնում էի մեր կաղնուտով, հետո գնացի դաշտով,— գիտես, էն տեղը, որ ճամփեն ծռվում ա հանկարծ,— էնտեղ չէ՞ որ մի մեծ փոս կա՝ գարունքվա անձրևի ջրով լիքը, գիտես, նրա չորս կողմն էլ դամիշ ա բռնել-բարձրացել. էսպես գնում եմ, ախպեր ջան, էդ փոսի կողքով, հանկարծ մի նվոց ա գալի ու գյոլից, էնպես տխուր, էնպես ողբալի ձենով՝ ո՜ւ, ո՜ւ... ո՜ւ-ո՜ւ...ո՜ւ-ո՜ւ... Սարսափը ջանս կալավ, տղերք։ Ժամանակն ուշ ա ու էդ ձենն էնպես տխո՜ւր։ Քիչ էր մնում ինքս էլ լաց ըլեմ... Սա ի՞նչ կըլեր, հը՞։

— Հերու չէ մեկել տարին գողերը անտառապահ Ակիմին գցել էին էդ գյոլը, խեղդել,— նկատեց Պավլուշան,— շատ կարելի ա նրա հոգին ա էդպես նվում։

— Բայց ախր, տղեք,— խոսեց Կոստյան իր առանց այն էլ խոշոր աչքերը չռելով։— Ես չէի իմանում, որ Ակիմին էդ գյոլումն են խեղդել, թե չէ շատ կվախենայի։

— Մեկ էլ, ասում են, որ կան մի տեսակ պստլիկ գորտեր,— շարունակեց Պավլուշան,— որոնք էդպես տխուր ձեն են հանում։

— Գորտե՞ր. է, չէ, դրանք գորտեր չեն... (Ձկնկուլը կրկին ճչաց գետի վրա)։— Տես,— ակամա ասաց Կոստյան,— ոնց որ սատանա ծղրտա։

— Սատանան ձեն չի հանում, նա համր ա,— վրա բերեց Իլյուշան.— նա մենակ ծափ ա տալի ու բլբլացնում։

— Իսկ դու սատանա տեսե՞լ ես, ինչ ա,— հեգնանքով ընդմիջեց նրան Ֆեդյան։

— Չեմ տեսել, աստված հեռու տանի. բայց ուրիշները տեսել են։ Էս քանի օրը դա մեր գեղացիներից մեկի առաջը կտրում ա. պտտում ա դրան անտառում, պտտում ա, ու բոլոր ժամանակ մի թալի (բացուտի) չորս կողմը... Լուսպեծին զոռով ազատվում ա էդ մարդն ու տուն գալի։

— Է, էդ մարդը տեսե՞լ ա։

— Տեսել ա։ Ասում ա կանգնել էր մե՜ծ, մեծ, սև ծառի ետևը ծածկված. լավ չես ջոկում, կարծես լուսնյակից ա թաքնվում ու նայում ա, նայում ահագին աչքերով, նայում ա ու աչքերը բացուխուփ անում...

— Ո՜ւհ,— բացականչեց Ֆեդյան, թեթևակի ցնցվելով և ուսերը ծուլ անելով,— թո՛ւ...

— Մարդ իմանա էդ գարշելին ինչի՞ ա աշխարհ եկել,— նկատեց Պավլուշան։

— Ուշունց մի տալ. մեկ էլ տեսար լսեց,— նկատեց Իլյուշան։

Դարձյալ լռություն տիրեց։

— Տեսե՛ք, տեսե՛ք, տղերք,— լսվեց հանկարծ Վանյայի մանկական ձայնը,— մտիկ արեք աստղերին, ոնց որ մեղուները ձագ (պար) տան։

Նա իր թարմ, փոքրիկ դեմքը հանեց ճիլոպի տակից, հենվեց բռունցքին և դանդաղ վեր բարձրացրեց իր խոշոր, խոնարհ աչքերը։ Մյուս տղաներն էլ իրենց աչքերը բարձրացրին երկինք և երկար նայեցին աստղերին։

— Հը, Վանյա,— սիրալիր հարցրեց Ֆեդյան,— քիրդ, Անյուտկան առո՞ղջ ա։

— Առողջ ա,— պատասխանեց Վանյան, փոքր-ինչ կակազելով։

— Նրան ասա՝ ինչո՞ւ մեզ մոտ չի գալի...

— Չեմ իմանում։

— Դու նրան ասա, թող գա։

— Կասեմ։

— Դու նրան ասա, որ ես նրան նվեր կտամ։

— Իսկ ինձ կտա՞ս։

— Քեզ էլ կտամ։

Վանյան հոգոց քաշեց։

— Չէ, ինձ հարկավոր չի։ Ավելի լավ ա նրան տուր. նա շատ խելոք, բարի աղջիկ ա։

Եվ Վանյան գլուխն էլի դրեց գետնին։ Պավլուշան վեր կացավ և դատարկ կաթսան ձեռն առավ։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Ֆեդյան։

— Գետը՝ ջրի. ծարավ եմ, ուզում եմ խմեմ։

Շները վեր կացան ու գնացին նրա ետևից։

— Տես, գետը չընկնես,— ձայն տվեց Իլյուշան նրա ետևից։

— Ինչո՞ւ պիտի ընկնի որ,— ասաց Ֆեդյան,— կզգուշանա։

— Հա, կզգուշանա։ Ամեն բան պատահում ա. նա կկռանա ջուր վերցնելու, իսկ ջրի փերին ձեռը կբռնի ու կքաշի իրա մոտ։ Հետո կսկսեն, թե տեսեք, խեղճը ջուրն ընկավ... Ի՞նչ ընկնել, ի՞նչ բան... Հրե՛, ղամիշների մեջ մտավ,— ավելացրեց նա ականջ դնելով։

Եղեգները, իսկապես, ետ գնալով խշխշացին։

— Իսկ ճի՞շտ ա,— հարցրեց Կոստյան,— որ շաշ Ակուլինան խելքը ետ ա տվել էն օրվանից, երբ ջրի մեջ ա ընկել։

— Հա, էդ օրվանից... Բայց, ասում են, առաջ սիրուն ա էլել։ Ջրի քաջքն ա նրան փչացրել։ Կարծել ա ջրից շուտով չեն հանի։ Ու իրա տեղը, ջրի տակին փչացրել՝ ա նրան։

(Ես ինքս մի քանի անգամ պատահել եմ այդ Ակուլինային։ Ցնցոտիապատ, սարսափելի նիհար, ածուխի պես սև դեմքով, պղտոր նայվածքով և մշտապես ատամներն իրար կցած՝ ժամերով պտտվում է միևնույն տեղը, ճանապարհի վրա, ոսկրացած ձեռները կրծքին սեղմած, և դանդաղորեն մի ոտից մյուսին է հենվում, ինչպես վայրի գազանը վանդակում։ Նա մարդկանց ասածից բան չի հասկանում և երբեմն միայն քրքջում է ջղաձգաբար)։

— Բա ասում են,— շարունակեց Կոստյան,— Ակուլինան նրա համար է ջուրն ընկել, որովհետև սիրեկանը խաբել ա նրան։

— Հենց դրա համար։

— Իսկ Վասյային հիշո՞ւմ ես,— ուրախությամբ ավելացրեց Կոստյան։

— Ի՞նչ Վասյա,— հարցրեց Ֆեդյան։

— Էն որ խեղդվեց,— պատասխանեց Կոստյան,— այ հենց էս գետում։ Ի՞նչ աղա էր. ա՜խ, ինչ աղա էր։ Իսկ մերը՝ Ֆելիկսիտան ո՞նց էր սիրում նրան՝ Վասյային։ Ու կարծես ղգում էր Ֆելիկսիտան, որ տղեն ջրով ա մեռնելու։ Պատահում էր, Վասյան գալիս էր մեզ հետ ամառը գետում լողանալու— մերը իրեն ուտում էր, ձեռն ու ոտը դող էր ընկնում։ Ուրիշ կնանիք ոչինչ, գնում էին իրանց բանին, իսկ Ֆելիկսիտան ձեռի տաշտը դնում էր գետնին ու սկսում կանչել. «Ետ արի՛, ետ արի՛, աչքիս լույս, ետ արի՛, թառլան ջան»։ Թե ինչպես ջուրն ընկավ խեղդվեց, աստված գիտի։ Նա խաղալիս ա լինում գետի ափին, մերն էլ էդտեղ խոտ ա հավաքում. հանկարծ լսում ա, որ մեկը կարծես փուչիկներ ա բաց թողնում ջրի երեսին. նայում ա տեսնում մենակ Վասյայի գդակն ա լողում ջրի երեսին։ Այ էդ օրվանից էլ Ֆելիկսիտի խելքը գլուխը չի գալի. գալիս ա ու պառկում էն տեղը, որտեղ խեղդվել ա տղեն. պառկում ա, տղեք, ու երգում, հիշո՞ւմ եք, Վասյան միշտ էդպես երգ էր ասում, մերն էլ նրա երգած երգն ա ասում ու լաց ըլում, լաց ըլում, դառը գանգատ անում աստծուն...

— Հրե՛ Պավլուշան գալիս ա,— ասաց Ֆեդյան։

Պավլուշան, ջրով լիքը կաթսան ձեռին, մոտեցավ կրակին։

— Հը, տղեք,— սկսեց նա,— բանը վատ ա։

— Ի՞նչ կա,— շտապ հարցրեց Կոստյան։

— Վասյայի ձենը լսեցի։

Բոլորը ցնցվեցին։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— թոթովեց Կոստյան։

— Աստված վկա։ Կռացա ջուր վերցնեմ թե չէ, լսում եմ՝ հանկարծ կանչում են Վասյայի ձայնով ու կարծես ջրի տակից. «Պավլուշա, ա՛յ Պավլուշա, արի էստեղ»։ Ետ դարձա։ Բայց ջուրը վերցրի։

— Օ՜հ, տեր աստված, տեր աստված,— ասացին տղաները, խաչակնքելով։

— Էդ քեզ ջրի քաջքն ա կանչել, Պավլուշա,— ավելացրեց

Ֆեդյան։— Իսկ քիչ առաջ մենք հենց Վասյայի մասին էինք խոսում։

— Է՛, դա վատ նշան ա,— ծոր տալով ասաց Իլյուշան։

— Ոչինչ,— ասաց Պավլուշան վճռական և նստեց դարձյալ,— ինչ որ մարդու ճակատին գրած ա՝ էն էլ կըլնի։

Տղաները ձայները կտրեցին։ Երևում էր, որ Պավլուշայի խոսքերը խոր տպավորություն թողին նրանց վրա։ Նրանք սկսեցին կրակի առաջ չոր բան փռել, կարծես պատրաստվում էին քնելու։

Պավլուշան ականջ դրեց։

— Էդ վիրու (վայրի) հավերն են թռչում. նրանց ձենն ա։

— Ո՞ւր են թռչում։

— Էնտեղ, ուր, ասում են, ձմեռ չի ըլում։

— Բա էդպես երկիր կա՞ որ։

— Կա։

— Հեռո՞ւ ա։

— Հեռո՞ւ, հեռո՞ւ ա, տաք ծովերից դենը։

Կոստյան հոգոց քաշեց ու աչքերը փակեց։

Երեք ժամ էր անցել արդեն, ինչ եկել-նստել էի տղաների մոտ։ Լուսինը դուրս եկավ վերջապես. ես նրան անմիջապես չնկատեցի— այնքան փոքր էր։ Այդ անլուսին գիշերը, թվում էր, էլի այնպես սքանչելի, ինչպես առաջ... Բայց դեպի երկինք էին խոնարհում արդեն շատ աստղեր, որ քիչ առաջ բարձր կանգնած էին երկնքում. չորս կողմն ամեն ինչ լռել էր բոլորովին, ինչպես սովորաբար ամեն բան լռում էր միայն առավոտյան դեմ. ամեն ինչ քնել էր լուսադեմի ամուր, անշարժ քնով։ Օդում այլևս սուր բուրումներ չկային, նորից կարծես խոնավություն էր տարածվել... կարճատև են ամառվա գիշերները... տղաների զրույցները մարեցին խարույկների հետ միասին... Շներն անգամ ննջում էին, ձիերը, որքան կարողացա ջոկել աստղերի թույլ լույսով, նույնպես պառկել էին և գլուխները քարշ գցել... Մի տեսակ մոռացություն եկավ վրաս, որ հետո փոխվեց նինջի։

Մի թարմ հոսանք դիպավ երեսիս։ Աչքերս բաց արի— առավոտը բացվում էր։ Արշալույսի կարմրությունը դեռ չէր երևում ոչ մի տեղ, բայց արևելքն արդեն սպիտակին էր տալիս։ Չորս կողմն ամեն ինչ երևում էր, թեև անորոշ։ Գունատ-

մոխրագույն երկինքը պայծառանում էր, ցրտում, կապույտին տալիս. աստղերը մերթ թարթում էին թույլ լույսով, մերթ չքանում, գետինը խոնավացավ, տերևները քրտնեցին. տեղ-տեղ կենդանի հնչյուններ, ձայներ լսվեցին, և վաղորդյան զեփյուռը վեր կացավ արդեն շրջելու և թռչկոտելու։ Թեթև, ուրախ դող անցավ մարմնովս։ Արագ վեր կացա ու գնացի դեպի երեխաները։ Նրանք մեռածի պես քնած էին անբոց վառվող խարույկների շուրջը։ Մենակ Պավլուշան վեր կացավ կիսով չափ ու աչքերը հառեց վրաս։

Ես գլխով արի նրան ու ճամփա ընկա շամանդաղով ծածկված գետի երկարությամբ։ Հազիվ հեռացել էի երկու վերստ, երբ շուրջս արդեն և՛ լայն թաց մարգագետինը, և՛ կանաչին տվող բլուրները, անտառից անտառ, և՛ ետևս գտնվող երկար, փոշոտ ճանապարհը, և՛ գետը, որ ամոթխած կապույտին էր տալիս նոսրացող շամանդաղի տակ, ողողվեցին ջահել, տաք լույսի նախ ալ, ապա կարմիր ու ոսկեգույն ճառագայթների հոսանքով... Ամեն ինչ շարժվեց, զարթնեց, երգեց, աղմկեց, լեզու առավ։ Ամեն կողմ շողարձակ ալմաստներով կարմրեցին ցողի խոշոր կաթիլները. դեմիցս լսեցի առավոտյան զանգերի պարզ, պայծառ ձայները, որ նույնպես կարծես լվացվել-մաքրվել էին առավոտյան զովից, և հանկարծ կողքովս սրընթաց անցավ հանգստացած ձիերի թաբունը, որոնց քշում էին իմ ծանոթ տղաները...

Ես, ցավելով պիտի ավելացնեմ, որ այդ տարի Պավլուշան մեռավ։ Նա ջրում չխեղդվեց, այլ ձորից ընկավ ու մեռավ։ Ափսո՛ս, հիանալի տղա էր։

1851

ԾԵՐՈՒՆԻ ԿԱՍՅԱՆԸ

Ես որսից վերադառնում էի թխկթխկացող սայլակով, ուամառային ամպամած օրվա հեղձուցիչ տոթից նվաղած (հայտնի է, որ այդպիսի օրերին շոգը երբեմն էլ ավելի անտանելի է լինում, քան պայծառ օրերին, մանավանդ, երբ

քամի չի լինում), ննջում էի ու օրորվում, մոայլ համբերությամբ ամբողջովին անձնատուր լինելով մանր, սպիտակ փոշու քայքայիչ ներգործությանը, որը անդադար բարձրանում էր կոխոտված ճանապարհից, չորացած ու ճռնչացող անիվների տակից։ Հանկարծ իր արտասովոր անհանգստությամբ և մարմնի տագնապալից շարժումներով ուշադրություն գրավեց իմ կառապանը, որ մինչև այդ ակնթարթը ավելի խոր էր ննջել, քան ես։ Նա թափահարեց երասանները, անհանգիստ շարժումներ արեց իր նստելատեղում և սկսեց բղավել ձիերի վրա, շարունակ նայելով ինչ-որ մի կողմ։ Ես դիտեցի շրջակայքը։ Մենք գնում էինք լայնարձակ, հերկած հարթավայրով խիստ թեք, ալիքաձև տափերով փռված էին ցածրադիր, նույնպես հերկած բլուրները. հայացքդ ընդգրկում էր ընդամենը մի հինգ վերստ ամայի տարածություն։ Հեռվում միայն կեչու պուրակներն էին իրենց կլորավուն ատամնաձև կատարներով խախտում երկնակամարի գրեթե ուղիղ գիծը։ Նեղ արահետները ձգվում էին դաշտերով մեկ, կորչում էին ձորահովիտներում, ոլոր-մոլոր բարձրանում բլրակներով, և այդ արահետներից մեկի վրա, որ մեզնից հինգ հարյուր քայլ հեռավորությամբ առջևում կտրում էր մեր ճանապարհը, ես ինչ-որ թափոր նկատեցի։ Կառապանս հենց դրան էր նայում։

Դա թաղման թափոր էր։ Առջևից, դանդաղընթաց սայլով, որին մի ձի էր լծած, գնում էր քահանան. նրա կողքին նստել էր տիրացուն և քշում էր սայլը. սայլի ետևից չորս գլխաբաց մուժիկ տանում են սպիտակ կտավով պատած դագաղը. երկու կին քայլում էին դագաղի ետևից։ Նրանցից մեկի բարակ, աղիողորմ ձայնը հանկարծ հասավ ականջիս. ես լարեցի լսողությունս. կինը լալիս էր։ Ամայի դաշտերով մեկ տխուր հընչում էր այդ մելամաղձոտ, միալար, անհուսալիորեն թախծալի հեծկլտանքը։ Կառապանս արագացրեց ձիերի ընթացքը, նա ուզում էր այդ թափորից առաջ անցնել։ Ճանապարհին մեռելի հանդիպելը վատ նշան է։ Նախքան մեռելը կհասներ մեզ, կառապանիս իրոք հաջողվեց առաջ անցնել ու սլանալ ճանապարհով, բայց մենք թափորից հարյուր քայլ էլ չէինք հեռացել, երբ մեր սայլը սաստիկ ցնցվեց, ծռվեց, քիչ մնաց շուռ գար։ Կառապանս կանգնեցրեց թափ առած ձիերը, ձեռքը թափ տվեց ու թքեց։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես։

Կառապանս լուռ և առանց շտապելու իջավ սայլից։

— Ախր ի՞նչ է պատահել։

— Սենին է կոտրվել... վառվել է,— մոայլ պատասխանեց նա ու հանկարծ այնպիսի ցասումով շտկեց կողքից լծած ձիու լանջափոկը, որ ձին ճռճվեց, կողքի ծռվեց, սակայն չընկավ, փնչաց, թափահարեց ու սկսեց ատամով հանգիստ քորել առջևի ոտքի սրունքը։

Ես իջա և մի քանի րոպե կանգնեցի ճանապարհին՝ տարտամորեն անձնատուր լինելով անախորժ տարակուսանքի զգացմունքին։ Աջ անիվը համարյա բոլորովին ընկել էր սայլակի տակ և կարծես համր հուսալքմամբ բարձրացրել իր թոքը։

— Հիմա ի՞նչ անենք,— վերջապես հարցրի ես։

— Այ թե ով է մեղավոր,— ասաց կառապանս ու մտրակով ցույց տվեց թափորը, որ արդեն հասել էր ճանապարհին ու մոտենում էր մեզ։— Ախր ես միշտ էլ այդ նկատել եմ,— շարունակեց նա,— մեռելին հանդիպելը վատ նշան է... Այո՛...

Եվ նա կրկին անհանգստացրեց կողքից լծած ձիուն, որը, տեսնելով նրա անբարյացակամությունն ու խստությունը, բարվոք համարեց անշարժ մնալ և միայն երբեմն ու անվրդով թափահարում էր պոչը։ Ես մի քիչ ետ ու առաջ քայլեցի ու դարձյալ կանգ առա անիվի մոտ։

Այդ պահին մեռելը հասավ մեզ։ Ճանապարհից կամացուկ շեղվելով, տխուր սգերթը անցավ մեր սայլի կողքով։ Ես ու կառապանս հանեցինք գլխարկներս, բարևեցինք քահանային, հայացքներ փոխանակեցինք դագաղը տանողների հետ։ Նրանք դժվարությամբ էին փոխում քայլերը, բարձրանում էին նրանց լայն կրծքերը։ Դագաղի ետևից գնացող երկու կանանցից մեկը շատ պառավ էր ու գունատ. նրա անշարժ դիմագծերը, որոնք խիստ աղճատվել էին վշտից, խստաբարո, հանդիսավոր կարևորության արտահայտություն էին պահպանում։ Նա քայլում էր լուռ, նիհար ձեռքը երբեմն տանելով բարակ, ներս ընկած շուրթերին։ Մյուս կնոջ, մոտ քսանհինգ տարեկան դեռատի կնոջ աչքերը կարմիր ու թրջված էին և ամբողջ դեմքը ուռել էր լացից։ Հասնելով մեզ, նա դադարեցրեց լացը ու թևքով ծածկեց դեմքը... բայց ահա մեռելը մեզնից առաջ ան-

ցավ, կրկին դուրս եկավ ճանապարհ, ու դարձյալ լսվեց կնոջ աղիողորմ, սրտաճմլիկ ողբը։ Անխոս նայելով հեռացող, հա-մաչափ ճոճվող դագաղին, կառապանս դիմեց ինձ.

— Հյուսն Մարտինին են թաղում, Ռյաբովո գյուղից է,— ասաց նա։

— Դու այդ որտեղի՞ց գիտես։

— Կանանցից ճանաչեցի։ Պառավը նրա մայրն է, իսկ լա-հելը կինն է։

— Նա հիվա՞նդ էր, թե ինչ։

— Այո, տենդ ուներ... Երկու օր առաջ կալվածքի կառա-վարիչը մարդ էր ուղարկել բժշկին կանչելու, բայց բժշկին տանը չէին գտել... Լավ հյուսն էր, մի քիչ կոնծում էր, բայց լավ հյուսն էր։ Տես թե կնիկը ոնց է լացուկոծ անում... Հըմ, հայտնի բան է, կնկա արցունքները հո փողով չեն առնվում։ Կնկա արցունքները հենց ջուր են որ կան... Այո։

Եվ նա թեքվեց, գլուխն անցկացրեց կողքի ձիու սանձի տակից ու երկու ձեռքով կառչեց աղեղից։

— Բայց և այնպես, մենք ի՞նչ ենք անելու,— հարցրի ես։

Իմ կառապանը սկզբում ծունկը հենեց մեջտեղի ձիու ուսին, մի երկու անգամ թափահարեց աղեղը, շտկեց թամբը, հետո դարձյալ անցավ կողքի ձիու երասանի տակից և միա-ժամանակ հրելով դրա մռութը, մոտեցավ անիվին,— մոտե-ցավ ու աչքը չկտրելով անիվից, կապայի փեշի տակից դան-դաղ հանեց կեչու կեղևից շինած քթախոտատուփը, դանդաղ դուրս քաշեց դրա կափարիչը՝ բռնելով դրա թոկից, երկու հաստ մատները դանդաղ խոթեց քթախոտատուփի մեջ (երկու մատները հազիվ տեղավորվեցին տուփի մեջ), առաջուց ծռմռեց քիթը, ընդհատումներով քաշեց քթախոտը՝ յուրա-քանչյուր անգամ քաշելիս տնքտնքալով, ու հիվանդագին կկո-ցելով և թարթելով արցունքոտված աչքերը, խոր մտածմունքի մեջ ընկավ։

— Հը, ի՞նչ կասես,— վերջապես հարցրի ես։

Կառապանս քթախոտատուփը խնամքով դրեց գրպանը, առանց ձեռքերի օգնության և միայն գլխի շարժումով գլխարա-կը իջեցրեց հոնքերին ու մտազբաղ բարձրացավ իր նստելու տեղը։

— Ո՞ւր ես գնալու,— զարմանքով հարցրի ես։

— Հաճեցեք նստել սայլին,— հանգիստ պատասխանեց նա ու վերցրեց երասանները։

— Ախր ինչպե՞ս պիտի գնանք։

— Կգնանք, էլի։

— Հապա սոնի՞ն։

— Հաճեցեք նստել։

— Ախր սոնին կոտրվել է...

— Կոտրվելը կոտրվել է։ Դե, մինչև նորագյուղ մի կերպ կհասնենք, էլի... այսինքն կամաց կգնանք։ Հրեն, պուրակից դենը, աջ կողմում նորագյուղ[1] կա, անունը Յուդին է։

— Դու կարծում ես, թե կհասնե՞նք։

Կառապանս ինձ պատասխանի չարժանացրեց։

— Ավելի լավ է ես ոտքով գնամ,— ասացի ես։

— Ոնց որ կկամենաք...

Եվ նա թափահարեց մտրակը։ Ձիերը առաջ շարժվեցին։

Մենք իրոք որ հասանք նորագյուղ, թեև առջևի աջ անիվը հազիվ էր դիմանում և արտասովոր, տարօրինակ պտույտներ էր գործում։ Մի բլրակի վրա քիչ մնաց, որ դուրս ընկներ, բայց կառապանս բղավեց կատաղի ձայնով, ու մենք հա-ջողությամբ իջանք բլրակից։

Յուդին կոչված նորագյուղը բաղկացած էր վեց ցածլիկ ու փոքրիկ խրճիթներից, որոնք արդեն ծռմռվել էին, թեև հավա-նորեն վերջին ժամանակներում էին կառուցվել։ Խրճիթների մի մասի բակերը ցանկապատված չէին։ Մտնելով այդ նորա-գյուղը, մենք ոչ մի մարդու չհանդիպեցինք. փողոցում նույն-իսկ հավեր ու շներ էլ չէին երևում, բացի միայն մեկ, սև ու կարճապոչ շնից, որը, մեզ տեսնելով, հապճեպ դուրս թռավ բոլորովին չորացած տաշտից, ուր նրան հավանորեն ծարավն էր քշել, ու անմիջապես, առանց հաշելու, արագ նետվեց դար-պասի տակ։ Ես մտա առաջին խրճիթը, բացեցի միջանցքի դուռը, կանչեցի տանտերերին. ոչ ոք ինձ չպատասխանեց։ Ես մի անգամ էլ կանչեցի. մյուս դռան ետևից լսվեց կատվի սո-վալլուկ մի ձայն։ Ոտքով բացեցի դուռը. մի լղար կատու ան-

[1] Նորագյուղ (выселки կամ выселок) — փոքրիկ ավան այն գյուղա-ցիների, որոնք կալվածատիրոջ կամքով գյուղերից նոր վայր էին տեղա-փոխվում։ Ս. Թ.

ցավ կողքիցս. մթության մեջ փայլում էին նրա կանաչ աչքերը։ Ես շեմքից ներս նայեցի, սենյակը խավար էր, ծխոտ ու դատարկ։ Դուրս ելա բակ, այստեղ էլ ոչ ոք չկար... ցանկապատի ետևից բառաչեց մի հորթ. կաղ, գորշ մի սագ մի կողմ քաշվեց։ Ես անցա երկրորդ խրճիթը. երկրորդ խրճիթում էլ ոչ ոք չկար։ Դուրս ելա բակ...

Պայծառ լուսավորված բակի հենց մեջտեղում, ինչպես ասում են, արևկող տեղում, գլուխը կապայով ծածկած, երեսնիվայր պառկել էր մի տղա, ինչպես այդ թվաց ինձ։ Նրանից մի քանի քայլ հեռու, ծռմռված սայլակի կողքին, ծղնտե ծածկի տակ կանգնած էր վտիտ մի ձիուկ՝ պատռտված ձիասարքով։ Արևի լույսի շիթերը ընկնելով խարխուլ կտուրի անցքերից, փոքրիկ, խայտաբղետ, լուսեղ բծեր էր առաջացրել նրա բրդոտ, թուխ կարմրավուն մորթու վրա։ Նույն տեղում, բարձր սարեկաբույնի մեջ ծլվլում էին սարյակները՝ իրենց օդային տնակից հանգիստ հետաքրքրությամբ նայելով ներքև։ Ես մոտեցա քնածին, սկսեցի արթնացնել նրան։

Նա բարձրացրեց գլուխը, տեսավ ինձ և իսկույն վեր թռավ... «Ի՞նչ, ի՞նչ ես ուզում, ի՞նչ կա»,— քնաթաթախ փնթփնթաց նա։

Ես նրան մի փոքր ուշ պատասխանեցի. ինձ խիստ ապշեցրել էր նրա արտաքինը։ Երևակայեցեք, մոտ հիսուն տարեկան մի թզուկ՝ փոքրիկ, թուխ և կնճռոտված դեմքով, սուր քթիկով, շագանակագույն, հազիվ նկատելի աչքերով և գանգուր, խիտ, սև մազերով, որոնք լայն նստել էին նրա փոքրիկ գլխին, ինչպես սնկի գլուխը իր տոտիկին։ Նրա ամբողջ մարմինը չափազանց թուլակազմ էր ու նիհար, և ուղղակի անկարելի է խոսքերով հաղորդել, թե որչափ արտասովոր ու տարօրինակ էր նրա նայվածքը։

— Ի՞նչ ես ուզում,— դարձյալ հարցրեց նա։

Ես նրան բացատրեցի, թե ինչումն էր բանը. նա լսում էր ինձ՝ դանդաղ թարթող իր աչքերը չկտրելով ինձնից։

— Արդյոք մենք չե՞նք կարող մի նոր սոնի ճարել,— վերջապես հարցրի ես։— Ես հաճույքով կվճարեի։

— Իսկ դուք ովքե՞ր եք, որսորդնե՞ր եք, թե ինչ,— հարցրեց նա՝ հայացքով ոտից գլուխ չափելով ինձ։

— Որսորդներ ենք։

— Երևի երկնքի թռչուններ, անտառի գազաններ եք խփում, հա՞... բա մեղք չէ՞, որ աստծու թռչուններ եք զարկում, անմեղ արյուն թափում։

Տարօրինակ ծերուկը խիստ ծոր տալով էր խոսում։ Նրա ձայնի հնչյունը նույնպես զարմացրեց ինձ։ Այդ ձայնը որևէ զառամություն չէր արտահայտում, զարմանալի քաղցր էր, երիտասարդական և գրեթե կանացիորեն քնքուշ։

— Ես սոնի չունեմ,— մի քիչ լռելուց հետո ավելացրեց նա,— սա անպետք է (նա ցույց տվեց իր սայլակը), ձեր սայլը երևի մեծ է։

— Իսկ գյուղում կարելի՞ է գտնել։

— Սա ի՞նչ գյուղ է որ... Այստեղ ոչ ոք չունի... Մարդիկ տանն էլ չեն, բոլորը աշխատանքի են։ Գնացեք,— հանկարծ ավելացրեց նա և դարձյալ պառկեց գետնին։

Այդպիսի եղրափակում ես բոլորովին չէի սպասում։

— Լսիր, ծերունի,— ասացի ես՝ ձեռքս դնելով նրա ուսին,— բարի եղիր, օգնիր։

— Գնացեք, աստված ձեզ հետ։ Ես հոգնել եմ, քաղաք էի գնացել,— ասաց նա ինձ ու կապան քաշեց գլխին։

— Բարի եղիր, օգնիր, ես... ես կվճարեմ,— շարունակեցի ես։

— Քո վճարը ինձ հարկավոր չէ։

— Խնդրում եմ, ծերունի...

Նա կիսով չափ բարձրացավ տեղից ու նստեց՝ մի ոտքը դնելով մյուսի վրա։

— Դե ի՞նչ կա որ, ես քեզ կտանեի կտրատված անտառը։ Այստեղ վաճառականները գնել են անտառը. աստված նրանց դատավոր լինի, կտրում են ծառերը, գրասենյակ են կառուցել, աստված նրանց դատավոր լինի։ Այնտեղ դու կարող ես սոնի պատվիրել կամ պատրաստի սոնի գնել։

— Հիանալի է,— ուրախ բացականչեցի ես։— Հիանալի է... Գնանք։

— Կաղնու լավ սոնի,— շարունակեց ծերուկը՝ առանց տեղից վեր կենալու։

— Հեռո՞ւ է այդ կտրատված անտառը։

— Երեք վերստ է։

— Ինչ արած, մենք կարող ենք քո սայլով գնալ։

— Ո՛չ, ո՛չ...

— Դե, գնանք, գնանք, ծերուկ, կառապանը մեզ սպասում է փողոցում,— ասացի ես։

Ծերունին դժկամ վեր կացավ և իմ ետևից դուրս եկավ փողոց։ Կառապանս ջղայնացած վիճակում էր. նա ուզում էր ջրել ձիերը, բայց ջրհորում չափազանց քիչ ջուր կար, այն էլ վատ համ ուներ, իսկ դա, ինչպես ասում են կառապանները, առաջին գործն է... Սակայն, տեսնելով ծերունուն, նա ժպտաց, գլխով արեց ու բացականչեց.

— Օ՜, Կասյանչիկ, բարև։

— Բարև, Երոֆեյ, արդար մարդ,— տխուր ձայնով պատասխանեց Կասյանը։

Ես կառապանիս իսկույն հաղորդեցի Կասյանի առաջարկը։ Երոֆեյը հայտնեց իր համաձայնությունը և սայլը քշեց բակ։ Մինչդեռ նա կանխամտածված հոգացողությամբ արձակում էր ձիերը, ծերունին կանգնել էր ուսը դարպասին հենած, և տխուր նայում էր մերթ նրան, մերթ ինձ։ Նա կարծես տարակուսանքի մեջ էր. որքան ես կարող էի նկատել, մեր հանկարծակի այցելությունը այնքան էլ չէր ուրախացնում նրան։

— Մի՞թե քեզ էլ են տեղափոխել,— հանկարծ նրան հարցրեց Երոֆեյը՝ հանելով աղեղը։

— Ինձ էլ։

— Հըմ,— քրմթնջաց կառապանս։— Գիտե՞ս ինչ, հյուսկ Մարտինը... դու հո ճանաչո՞ւմ ես Ռյաբովցի Մարտինին։

— Ճանաչում եմ։

— Նա մեռավ։ Մենք տեսանք, թե ինչպես նրան տանում էին թաղելու։

Կասյանը ցնցվեց։

— Մեռա՞վ,— ասաց նա ու կիտեց հոնքերը։

— Այո, մեռավ։ Ինչո՞ւ դու նրան չբուժեցիր, հը՞։ Չէ՞ որ դու, ինչպես ասում են, բուժում ես, դու բուժող ես։

Ըստ երևույթին կառապանս ծաղրում, ձեռ էր առնում ծերունուն։

— Իսկ սա քո սա՞յլն է,— ավելացրեց նա՝ ուսով ցույց տալով բակում կանգնած սայլը։

— Իմն է։

— Այ քեզ սայլ,— ասաց կառապանս ու, վերցնելով սայլի քեղիներից, քիչ մնաց շուռ տար այն...— Հըմ, սայլիս մտիկ... Հապա ինչո՞վ եք դուք կտրատված անտառը գնալու... Մեր ձին չի լծվի այս քեղիներին. մեր ձիերը մեծ են, իսկ սրանք ի՞նչ են։

— Չգիտեմ, թե դուք ինչով եք գնալու,— պատասխանեց Կասյանը,— գուցե այս կենդանիո՞վ,— ավելացրեց նա և հոգոց հանեց։

— Դրանո՞վ,— վրա բերեց Երոֆեյը, ու մոտենալով Կասյանի յաբուին, աջ ձեռքի երրորդ մատով արհամարհաբար բոթեց նրա վիզը։— Ի-ի՜հ, գրողի տարած, քնել է,— կշտամբանքով ավելացրեց նա։

Ես Երոֆեյին խնդրեցի շուտ լծել ձին։ Ուզում էի Կասյանի հետ գնալ կտրատված անտառը. այնտեղ հաճախ ցախաքլորներ են լինում։ Երբ սայլակը արդեն բոլորովին պատրաստ էր, ես իմ շան հետ մի կերպ տեղավորվեցի դրա ծոմոված, խարխուլ հատակի վրա, Կասյանն էլ գունդուկծիկ եղած, դեմքին նորից տխուր արտահայտություն տալով, տեղավորվեց սայլակի առջևի մասում։ Երոֆեյը մոտեցավ ինձ ու խորհրդավոր տեսքով շշնջաց.

— Լավ արեցիք, պարոն, որ գնացիք դրա հետ։ Ախր գիտե՞ք, նա խելքից պակաս է։ Մականունն էլ Լու է։ Ես չգիտեմ, թե դուք ինչպես կարող էիք նրան հասկանալ...

Ես ուզում էի Երոֆեյին ասել, որ մինչև հիմա Կասյանը ինձ միանգամայն խելոք մարդ է թվում, բայց կառապանս իսկույն նույն ձայնով շարունակեց.

— Դուք միայն հետամուտ եղեք, թե արդյոք նա ձեզ կտանի՞ այնտեղ, ուր հարկավոր է։ Հաճեցեք սոնին ինքներդ ընտրել, հաճեցեք լավ սոնի վերցնել... Հը, Լու,— բարձրաձայն դիմեց նա Կասյանին,— ձեզ մոտ կարելի՞ է հաց ճարել։

— Փնտրիր, գուցե կգտնվի,— պատասխանեց Կասյանը, թափահարեց երասանները, ու մենք ճանապարհվեցինք։

Ինձ խիստ զարմացրեց այն, որ նրա ձիուկը ամենևին էլ վատ չի վազում։ Կասյանը ամբողջ ճանապարհին համառորեն լռություն էր պահպանում և իմ հարցերին կցկտուր և դժկամ էր պատասխանում։ Մենք շուտով հասանք կտրատված անտառը, հետո էլ գրասենյակը, բարձր մի խրճիթ, որ միակն էր

փոքր հեղեղատի եզրին, որը կտրված էր հապճեպ կառուցված ամբարտակով և լճակի էր վերածված։ Այդ գրասենյակում ես հանդիպեցի երկու երիտասարդ գործակատարների՝ ձյան պես սպիտակ ատամներով, անուշ աչքերով, անուշ և ճարտար լեզվով ու անուշ, խորամանկ ժպիտով, նրանցից սոնի գնեցի ու գնացի կտրատված անտառը։ Ես կարծում էի, թե Կասյանը կմնա ձիու մոտ, կսպասի ինձ, բայց նա հանկարծ մոտեցավ ինձ ու հարցրեց.

— Հը՛, գնում ես թռչունները զարկելու։

— Այո, եթե գտնեմ։

— Ես կգամ քեզ հետ... կարելի՞ է։

Ու մենք գնացինք։ Ծառերը կտրատված էին ընդամենը մի վերստ տարածությամբ։ Խոստովանում եմ, ես Կասյանին ավելի շատ էի նայում, քան թե իմ շանը։ Իզուր չէ, որ նրան Լու էին անվանել։ Ոչ մի բանով չծածկված նրա գլուխը (ասենք նրա մազերը ամեն տեսակ գդակի տեղ էին ծառայում) այնպես էլ աչքի էր ընկնում թփերի մեջ։ Նա արտասովոր ճարպկությամբ էր քայլում և քայլելիս կարծես ցատկոտում էր, անդադար կռանում, ինչ-որ խոտաբույսեր էր պոկում, դնում ծոցը, քթի տակ ինչ-որ փնթփնթում և շարունակ նայում էր ինձ և իմ շանը, այն էլ զննող, տարօրինակ հայացքով։ Ցածր թփերում, «մանրուքներում» և ծառահատած տեղերում հաճախ լինում են փոքրիկ, գորշ թռչնակներ, որոնք հաճախ տեղափոխվում են մի ծառից մյուսի վրա ու սվսվում, հանկարծակի չքանում թփերի մեջ։ Կասյանը ընդօրինակում էր դրանց ձայները, մատղաշ մի լորիկ ծլվլոցով թռավ նրա ոտքերի տակից, և նա էլ ծլվլաց լորիկի ետևից. մի արտույտ, թափահարելով թևերը և հնչեղ երգելով, իջավ նրա գլխավերևը, Կասյանը ընդօրինակեց արտույտի երգը։ Ինձ հետ նա էլի չէր խոսում...

Եղանակը հիանալի էր, էլ ավելի հիանալի, քան առաջ, բայց շոգը դեռ չէր մեղմանում։ Պայծառ երկնքով դանդաղ սահում էին բարձր և նոսր ամպերը, որոնք դեղնավուն սպիտակ էին, ինչպես գարնանը դեռ չհալված ձյան մնացորդները, տափակ ու երկարավուն էին, ինչպես իջեցրած առագաստները։ Նրանց նախշավոր, բամբակի պես փափլիկ ու թեթև ծայրերը յուրաքանչյուր ակնթարթ դանդաղ, բայց նկատելիորեն փոխվում էին. դրանք, այդ ամպերը հալչում էին, ու դրանցից

ստվերներ չէին ընկնում։ Ես ու Կասյանը երկար շրջում էինք կտրատված անտառում։ Մատղաշ շյուղերը, որ դեռ մի արշինից էլ բարձր չէին, իրենց բարակ, կոկիկ ցողուններով շրջապատել էին սևացած, ցածր կոճղերը. կլոր, ծակոտկեն խիլերը, գորշ ծայրերով հենց այն խիլերը, որոնցից աբեթ են պատրաստում, կպել էին այդ կոճղերին. գետնամորին իր վարդագույն բեղիկներն էր արձակել նրանց վրա. սնկերը հենց այդտեղ խիտ նստած էին ընտանիքներով։ Մեր ոտքերը շարունակ դեմ էին առնում երկար խոտաբույսերին, որոնք արեւից խիստ տաքացել էին։ Մեր աչքերը ամենուրեք շաղվում էին ծառերի մատղաշ, կարմրավուն տերևների պայծառ, մեղմաղյա փայլից. ամենուրեք երփներանգում էին կռունկի աչքի կապուտակ փնջերը, հավկուրի ոսկեւուն բաժակները, զառամանուշակի կիսով չափ բաց կապույտ, կիսով չափ դեղին ծաղիկները. տեղ-տեղ, լքած ճանապարհների կողքին, որոնց վրա աճած կարմիր, մանր խոտաբույսերի շերտերը ցույց էին տալիս անիվների հետքերը, բարձրանում էին փայտեղենի կուտակները, որոնք դարսված էին սաժեններով, սևացել էին հողմից ու անձրևից. նրանցից շեղակի քառանկյան ձևով ստվերներ էին ընկել. ուրիշ ստվերներ ոչ մի տեղ չկային։ Զեփյուռը մերթ սուրում էր, մերթ դադարում. հանկարծ փչում է ուղղակի դեմքիդ ու կարծես խաղ է անում, շուրջդ ամեն ինչ շրջում է, շարժվում, օրորվում, շքեղաշուք տատանվում են ձարխոտերի ճկուն ծայրերը. նայում ես և ուրախանում... բայց ահա զեփյուռը կրկին դադարեց, ու ամեն ինչ դարձյալ կանգնեց։ Միայն ծղրիդներն են միահամուռ ծղրտում, ասես ցասկոտել են. հոգնեցուցիչ է այդ անդուլ, միալար ու չոր ձայնը։ Դա ընթանում է դեպի կեսօրվա աննահանջ շոգը, ասես նրանից է առաջացել, ասես նրա կանչով է դուրս եկել թեժացած հողից։

Թռչունների ոչ մի ձագի չհանդիպելով, մենք, վերջապես, հասանք մի նոր ծառահատված վայր։ Այնտեղ նոր կտրված կաղամախիները տխուր փռվել էին գետնին, ճզմել խոտաբույսերը և մանր թփերը։ Մի քանի կաղամախիների տերևները դեռ կանաչ են, բայց արդեն թառամել են, թույլ կախվել անշարժ ոստերից. տեղ-տեղ էլ տերևներն արդեն չորացել են ու ծռմռվել։ Թարմ, ոսկեւուն սպիտակ տաշեղներից, որոնք

կուտակված էին վառ, խոնավ կոճղերի շուրջը, մի առանձին, խիստ հաճելի, դառն բույր էր զգացվում։ Հեռվում, անտառի եզրում, խուլ թրխկում էին կացինները, ու ժամանակ առ ժամանակ հանդիսավոր ու լուռ, ասես գլուխ տալով ու տարածելով ձեռքերը, տապալվում էր գեղագանգուր մի ծառ...

Երկար ժամանակ ես ոչ մի թռչուն չէի գտնում։ Վերջապես, օշինդրով պատած լայն կաղնու թփից թռավ մի մարգահավ։ Ես խփեցի. նա օդում շուռ եկավ ու ընկավ։ Լսելով կրակոցը, Կասյանը ձեռքով արագ ծածկեց աչքերը ու չշարժվեց, մինչև որ ես լցրի հրացանը ու վերցրի մարգահավը։ Իսկ երբ ես առաջ գնացի, նա մոտեցավ այն տեղին, ուր ընկել էր սպանված թռչունը, կռացավ դեպի այն խոտաբույսերը, որոնց վրա մի քանի կաթիլ արյուն էր ընկել, օրորեց գլուխը, երկչոտ նայեց ինձ... Այնուհետև ես լսեցի նրա շշնջոցը՝ «Մեղք է... ա՜խ, ա՜յ քեզ մեղք»։

Վերջապես շոգը մեզ ստիպեց մտնել պուրակ։ Ես նետվեցի պնդուկի բարձր թփի տակ, որի վերևում մատղաշ, գեղակազմ թխկին գեղեցիկ տարածել էր իր թեթև ոստերը։ Կասյանը նստեց մի կտրված կեչու հաստ ծայրին։ Ես նայում էի նրան։ Վերևում թույլ օրորվում էին տերևները, ու նրանց աղոտ կանաչավուն ստվերները մեղմակի ետ ու առաջ էին սահում ծերունու փոքրիկ դեմքի և նիհար մարմնի վրայով, որը մի կերպ փաթաթված էր սև կապայով։ Նա չէր բարձրացնում գլուխը։ Նրա լռությունից ձանձրանալով, ես պառկեցի մեջքիս վրա ու սկսեցի դիտել հեռավոր, պայծառ երկնքի ֆոնի վրա մեղմորեն օրորվող, խճողված տերևների խաղը։ Զարմանալի դուրեկան զբաղմունք է՝ մեջքի վրա պառկել անտառում և վերև նայել։ Ձեզ թվում է, որ դուք նայում եք անհատակ ծովին, թե դա լայն փռված է ձեր տակին, թե ծառերը չեն բարձրանում գետնից, այլ ինչպես ահագին բույսերի արմատներ, իջնում են, ուղղահայաց ընկնում ապակենման պայծառ այն ալիքների մեջ։ Ծառերի տերևները մերթ զմրուխտափայլում են, մերթ խտանում և ոսկևուն, համարյա սև զանգված կազմում։ Որևէ տեղ, հեռվում, բարակ ոստի ծայրին, ջինջ երկնքի կապուտակ մի կտորի ֆոնի վրա անշարժ կանգնած է մենավոր մի տերև, ու դրա կողքին օրորվում է մի այլ տերև՝ իր շարժմամբ հիշեցնելով ձկնառատ ջրատա-

բածության խաղը, կարծես թե այդ շարժումը ինքնակամ է և քամուց չի առաջանում։ Կախարդական ստորջրյա կղզիների նման մեղմորեն սահում և մեղմորեն անցնում են սպիտակ, կլորավուն ամպերը, և ահա հանկարծ այդ ամբողջ ծովը, այդ ճաճանչափայլ օդը, այդ ոստերն ու տերևները, որոնք ողողված են արևով, այդ ամենը հոսում է, երերում, թռուցիկ փայլ արձակում ու թարմ, դողդոջ թոթովանք է սկսվում, որը հանկարծակի առաջացած ալեծածանքի անվերջ, մանր ծփյունի է նմանվում։ Դուք չեք շարժվում, դուք նայում եք. ու անկարելի է բառերով արտահայտել, թե ինչպիսի բերկրանքով, անդորրությամբ ու հաճույքով է լցվում ձեր սիրտը։ Դուք նայում եք. այն խորին, հստակ լազուրը ձեր շուրթերին իր պես անաղարտ ժպիտ է առաջացնում, երկնքով մեկ սահող ամպերի պես և կարծես նրանց հետ մեկտեղ ձեր հոգու մեջ դանդաղ անցնում են երջանիկ հուշերը, ու ձեզ շարունակ թվում է, որ ձեր հայացքը թռչում է հեռո՜ւ-հեռո՜ւ, ձեզ տանում այն անդորրը, շողշողուն անհունը, ու անկարելի է կտրվել այդ բարձունքից, այդ անհունից...

— Պարոն, պարոն,— հանկարծ իր հնչեղ ձայնով ասաց Կասյանը։

Ես զարմանքով քիչ բարձրացա իմ տեղից, մինչև այժմ նա հազիվ էր պատասխանում իմ հարցերին, իսկ հիմա հանկարծ ինքը սկսեց խոսել։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրի ես։

— Ինչի՞ համար դու սպանեցիր թռչնակը,— հարցրեց նա՝ ուղիղ նայելով դեմքիս։

— Ինչպե՞ս թե ինչի համար... Մարգահավը լավ միս ունի՝ կարելի է ուտել։

— Դու դրա համար չէ, որ սպանեցիր նրան, պարոն. իբր թե ուտելու ես։ Դու նրան քո զվարճության համար սպանեցիր։

— Բայց չէ՞ որ դու էլ, օրինակ, սագեր կամ հավեր ես ուտում։

— Այդ թռչուններին աստված է տնօրինել մարդու համար, իսկ մարգահավը ազատ, անտառային թռչուն է։ Եվ միայն նա չէ. շատ են դրանք, ամեն տեսակ անտառային, դաշտային, գետային, ճահճային, մարգային, վերի ու վարի

արարածները, մեղք է դրանց սպանելը, թող ապրեն, ինչքան որ կարող են։ Իսկ մարդու համար ուրիշ ուտելիք է տրված. ուրիշ է նրա ուտելիքն ու խմելիքը, ինչպես և ձեռքի տակ եղած արարածները։ Հնուց այդպես է եղել։

Ես զարմանքով նայեցի Կասյանին։ Նրա խոսքերը հեղվում էին ազատորեն. նա դրանք չէր փնտրում, նա խոսում էր մեղմ ոգևորությամբ և հեզաբարո լրջությամբ՝ երբեմն փակելով աչքերը։

— Քո ասելով, ուրեմն ձուկ սպանելն է՞լ մեղք է,— հարցրի ես։

— Ձկան արյունը սառն է,— կտրուկ առարկեց Կասյանը։— Ձուկը համր արարած է։ Նա չի վախենում, չի զվարճանում։ Ձուկը անխոս արարած է։ Նա ոչինչ չի զգում։ Նրա արյունն էլ անկենդան է... Արյունը,— մի փոքր լռելուց հետո շարունակեց ծերուկը,— արյունը սուրբ բան է։ Արյունը չի տեսնում աստծու արևը, արյունը թաքնվում է լույսից... մեծ մեղք է լույս աշխարհ հանել արյունը, մեծ մեղք է, օ՜, մեծ մեղք ու սարսափ...

Նա հոգոց հանեց ու կիտեց հոնքերը։ Խոստովանում եմ, ես կատարյալ զարմանքով նայեցի տարօրինակ ծերունուն։ Նրա խոսքը մուժիկի խոսք չէր. այդպես չեն խոսում հասարակ մարդիկ, ճոռոմաբաններն էլ այդպես չեն խոսում։ Դա կշռադատված, հանդիսավոր ու տարօրինակ լեզու է... Ես ոչ մի նման բան չէի լսել։

— Խնդրեմ ասես, Կասյան, դու ինչո՞վ ես զբաղվում,— հարցրի ես՝ աչք չկտրելով մի փոքր կարմրած նրա դեմքից։

Նա իմ հարցին պատասխանեց հապաղումով։ Նրա հայացքը մի ակնթարթ այս ու այն կողմ դարձավ։

— Ապրում եմ ինչպես որ աստված է պատվիրում,— վերջապես ասաց նա,— էհ, ինչո՞վ պիտի զբաղվեմ։ Փոքրուց խելքս պակաս է, աշխատում եմ, քանի դեռ ուժ կա, լավ չեմ աշխատում։ Առողջություն չկա, ձեռքերս թույլ են։ Ը-ը՜մ, գարնանը սոխակներ եմ որսում։

— Սոխակնե՞ր ես որսում... Հապա ինչո՞ւ էիր ասում, թե չպետք է ձեռք տալ ամեն տեսակ անտառային, դաշտային և այլ արարածներին։

— Նրանց չպետք է սպանել, այդ ճիշտ է։ Մահը առանց

այդ էլ նրանց կտանի։ Այ, վերցնենք, թեկուզ, հենց հյուսն Մարտինին. ապրեց հյուսն Մարտինը, երկար չապրեց ու մեռավ, հիմա նրա կինը ողբում է, փոքրիկ երեխաների դարդն է քաշում... Մարդն ու կենդանին մահվան դեմ ոչինչ չեն կարող անել։ Մահը չի էլ փախչում ու նրանից չես էլ փախչի. միայն թե նրան չպետք է օգնել... Ես սոխակներին չեմ սպանում, աստված չանի։ Ես նրանց որսում եմ ոչ թե տանջելու, սպանելու, այլ մարդկանց բավականություն, մխիթարանք և ուրախություն պատճառելու համար։

— Նրանց որսալու համար դու Կո՞ւրսկ ես գնում։

— Գնում եմ թե՛ Կուրսկ և թե՛ ավելի հեռու, ինչպես որ պատահի։ Մենակ գիշերում եմ ճահիճներում, դաշտում, խուլ տեղերում. մի տեղ կզաքիսներն են սվսվում, մի տեղ նապաստակներն են վնգվնգում, մի տեղ էլ բադաքլորներն են ճռվողում... Երեկոները նկատում եմ, առավոտները ականջ եմ դնում, արշալույսին թփերի վրա թակարդ եմ դնում... Մեկ էլ տեսար սոխակը երգեց, քաղցր, տխրալի երգեց։

— Եվ դու դրանք ծախո՞ւմ ես։

— Տալիս եմ լավ մարդկանց։

— Էլ ի՞նչ ես անում։

— Ո՞նց թե ինչ։

— Ինչո՞վ ես զբաղված։

Ծերունին մի փոքր լռեց։

— Ոչնչով էլ զբաղված չեմ... ես վատ աշխատող եմ։ Բայց գրի սևն ու սպիտակը ջոկում եմ։

— Դու գրագե՞տ ես։

— Գիր գիտեմ։ Աստված և բարի մարդիկ են օգնել։

— Ընտանիք ունե՞ս։

— Որտեղի՞ց։ Չունեմ։

— Ինչո՞ւ է այդպես... Մեռե՞լ են, թե ինչ։

— Ոչ, այնպես, էլի, կյանքում գործս վատ գնաց։ Էհ, ամեն բան աստծու կամքով է, մենք բոլորս նրա կամեցողությամբ ենք ապրում. իսկ մարդը պետք է արդար լինի, այ թե ինչ։ Այսինքն թե դա աստծուն հաճելի է։

— Ազգականներ է՞լ չունես։

— Կան... բայց... այնպես, էլի...

Ծերունին շփոթվեց։

— Ես լսեցի, որ իմ կառապանը հարցնում էր քեզ, թե ինչո՞ւ դու չբուժեցիր Մարտինին։ Մի՞թե դու կարողանում ես բուժել,— հարցրի ես։

— Քո կառապանը արդար մարդ է,— մտազբաղ պատասխանեց ինձ Կասյանը,— միայն թե նա էլ մեղքից հեռու չէ։ Ինձ բուժող են անվանում... Ես ի՞նչ բուժող եմ որ... Եվ ո՞վ կարող է բուժել... Ամեն բան աստծուց է։ Բայց, իրավ, կան բույսեր... կան ծաղիկներ, որոնք իսկապես որ օգնում են։ Այ, օրինակ, կատվալեզուն օգտակար է մարդու համար. ջղախոտը՝ նույնպես, դրանց մասին խոսելը վատ բան չէ. մաքուր բույսեր են, աստծունն են։ Իսկ մյուսները այդպես չեն, օգնում են, բայց դա մեղք բան է, նրանց մասին խոսելն էլ մեղք է։ Աղոթելն էլ է օգնում... Դե, իհարկե, կան նաև այդ տեսակ խոսքեր... Ով հավատում է, կփրկվի,— ձայնը ցածրացնելով ավելացրեց ծերունին։

— Դու Մարտինին ոչինչ չտվի՞ր,— հարցրի ես։

— Ուշ իմացա,— պատասխանեց ծերունին։— Բայց մեկ է, ինչ որ գրված է մարդու ճակատին, այն էլ կկատարվի։ Հյուսքն Մարտինը չէր ապրելու այս աշխարքում, բանը այդպես էր։ Ոչ, ով որ չի ապրելու, նրան արևն էլ չի տաքացնի։ Ինչպես մեկ ուրիշին, հացն էլ նրան օգուտ չի տա, ինչ-որ մի բան է տանում նրան... Էհ, աստված ողորմի նրա հոգուն։

— Ձեզ վաղո՞ւց են տեղափոխել մեր կողմերը,— կարճատև լռությունից հետո հարցրի ես։

Կասյանը ցնցվեց։

— Ոչ, վաղուց չէ, չորս տարի է։ Առաջվա բարինի օրով մենք բոլորս ապրում էինք մեր նախկին տեղերում, բայց խնամակալությունը տեղափոխեց։ Մեր առաջվա բարինը բարեհոգի էր, հեզաբարո, երկնային արքայություն նրան։ Դե իհարկե, խնամակալությունը արդարացի վարվեց. երևի այդպես էր հարկավոր։

— Իսկ առաջ դուք որտե՞ղ էիք ապրում։

— Մենք Կրասիվայա Մեչայից ենք[1]։

— Այստեղից դա շա՞տ է հեռու։

[1] Կրասիվայա Մեչա— գետ Օրյոլի մարզի արևելյան մասում, Դոնի վտակը։ Ս. Թ.

— Հարյուր վերստ կլինի։

— Այնտեղ ավելի լա՞վ էր։

— Լավ էր... լավ... այնտեղ լայնարձակություն էր, մոտիկում՝ գետ, լավ էր մեր բույնը, իսկ այստեղ նեղվածք է, հողը չոր է... այստեղ մենք որբացել ենք։ Այնտեղ, Կրասիվայա Մեչայի մոտերքը, բարձրանում ես բլուրը, բարձրանում ես ու, տեր իմ աստված, ինչ ասես, որ չես տեսնում՝ գետ, մարգագետիններ, անտառ, մի տեղ էլ եկեղեցի, մի այլ տեղ էլի մարգագետիններ։ Աչքդ հեռուն է տեսնում, հեռուն։ Նայում ես, նայում ու չես կշտանում։ Էհ, այստեղ, ճիշտ է, հողը վատ չէ, կավախառն է, լավ հող է, ասում են գյուղացիները. ամեն տեղ բոյիս չափ հաց կբուսնի։

— Ճշմարիտն ասա, ծերուկ, երևի դու ուզում ես քո ծնընդավայրում լինել, այնպես չէ՞։

— Այո, կուզենայի տեսնել։ Ասենք ամեն տեղ էլ լավ է։ Ես ընտանիք չունեցող, տանը չնստող մարդ եմ։ Դե, ո՞նց կարող եմ շատ նստել տանը։ Իսկ երբ ճամփա ես գնում, ճամփա ես գնում,— ծերունին բարձրացրեց ձայնը,— սիրտդ թեթևանում է, այո։ Թե արևն է ընկնում քեզ վրա, թե աստծուն ես ավելի պարզ երևում, թե երգդ է ավելի լավ հնչում։ Մի տեղ պիտանի բույս է աճել. նկատում ես, պոկում։ Մի տեղ ջուր է վազում, նայում ես՝ աղբյուր է, մաքուր ջուր. կռանում ես ու խմում։ Վերևում երգում են թռչունները... Կուրսկից այն կողմ տեսնում ես տափաստանները, տափաստանային տեղերը, այ քեզ զարմանք, այ քեզ բավականություն, աստծու բարիք։ Ու ասում են մարդիկ՝ դրանք տարածվում են մինչև տաք ծովերը, ուր ապրում է գամայուն թռչունը,— դրսի քաղցրաձայն թռչունը,— ու ծառերից ձմռանն էլ, աշնանն էլ տերևներ են աճում, ու ամեն մարդ ապրում է լիության մեջ և արդար կարգերում... Եվ ահա ես կուզենայի այնտեղ գնալ... Որտե՞ղ ասես, որ ես չեմ գնացել։ Ռոմյոն էլ եմ գնացել, Սիմբիրսկ— հիանալի քաղաքն էլ, ոսկեգմբեթ Մոսկվան էլ։ Գնացել եմ մինչև ապրուստ տվող Օկա գետը, կապուտակ Ցնա գետը, Մայր Վոլգան, ու տեսել եմ շատ մարդկանց, բարի քրիստոնյաների, եղել եմ քաղաքներում... Եվ ահա կուզենայի գնալ այնտեղ... Ու միայն ես, մեղավորս չեմ, որ այսպես եմ... Ուրիշ շատ քրիստոնյաներ են տրեխներով շրջում, մուրացկա-

նություն անում, արդարություն փնտրում... Այո, իսկ տանը ի՞նչ պետք է անես, հը՞։ Մարդուս մեջ արդարություն չկա, այ թե ինչ...

Այս վերջին բառերը Կասյանը արտասանեց շուտասելուկով, համարյա անըմբռնելի. հետո նա էլի ինչ-որ բան ասաց, որը ես նույնիսկ չկարողացա լսել, իսկ նրա դեմքը այնպիսի տարօրինակ արտահայտություն ստացավ, որ ես ակամա հիշեցի «խելքից պակաս» բառերը։ Նա կիտեց հոնքերը, հազաց ու կարծես թե ուշքի եկավ։

— Ինչպիսի՞ արեգակ է,— ցածր ձայնով ասաց նա։— Ինչպիսի՞ բարեբախտություն, տեր աստված։ Որքա՞ն տաք է անտարում։

Նա թոթվեց ուսերը, մի փոքր լռեց, մտացրիվ նայեց շուրջը ու կամաց երգեց։ Ես չկարողացա լսել նրա ծորուն երգի բառերը, բացի հետևյալ երկու տողից։

Իմ անունը Կասյան է,
Մականունս — Լու...

«Է-հե՛, սա մոգոնում է...»,— մտածեցի ես։

Հանկարծ նա ցնցվեց ու լռեց՝ ակնապիշ նայելով անտառի կողմը։ Ես շուռ եկա ու տեսա մի փոքրիկ գյուղացի աղջիկ, մոտ ութ տարեկան, կապույտ շրջազգեստով, վանդակավոր գլխաշորով, արևից սևացած, մերկ ձեռքին գործած, փոքրիկ կողով։ Մեզ հանդիպելը հավանորեն բոլորովին անսպասելի էր նրա համար։ Նա անշարժ կանգնել էր կաղնուտի դալար թավուտում, ստվերախիտ, փոքրիկ մարգագետնում, երկչոտ նայում էր ինձ իր սև աչքերով։ Ես հազիվ կարողացա հայացքով զննել նրան. նա իսկույն թաքնվեց ծառի տակ։

— Աննուշկա, Աննուշկա, եկ այստեղ, մի վախենա,— փաղաքուշ կանչեց ծերունին։

— Վախենում եմ,— լսվեց բարալիկ ձայնը։

— Մի վախենա, մի վախենա, եկ ինձ մոտ։

Աննուշկան լուռ թողեց իր դարանը, շրջանցեց ծառերը, կամացուկ մոտեցավ ծերունուն. նրա մանկական ոտքերի տակ հազիվ էին շշշում խիտ խոտաբույսերը։ Նա ոչ թե ութ տարեկան աղջիկ էր, ինչպես սկզբում թվաց ինձ իր կարճ հասակով, այլ կլիներ տասներեք կամ տասնչորս տարեկան։ Նրա ամբողջ մարմինը փոքր էր ու նիհար, բայց բարեկազմ ու ճկուն, իսկ գեղեցիկ, փոքրիկ դեմքը շատ նման էր Կասյանի դեմքին, թեև Կասյանը գեղեցիկ չէր։ Նույն սուր դիմագծերը, նույն տարօրինակ, խորամանկ դյուրահավատություն արտահայտող, խոհուն ու խորաթափանց հայացքը ու նույն շարժումները... Կասյանը նայեց նրան. աղջիկը նրա առջև կողքի էր կանգնած։

— Հը, սո՞ւնկ էիր հավաքում,— հարցրեց Կասյանը։

— Այո, սունկ,— երկչոտ ժպիտով պատասխանեց աղջիկը։

— Շա՞տ գտար։

— Շատ,— աղջիկը շեշտակի նայեց նրան և դարձյալ ժպտաց։

— Սպիտակ սնկեր էլ կա՞ն։

— Կան և սպիտակները։

— Հապա, ցույց տուր, ցույց տուր... (աղջիկը վար դրեց կողովը և կիսով չափ բարձրացրեց կռատուկի լայն տերևը, որով ծածկված էին սնկերը)— օ՜-օ՜,— ասաց Կասյանը՝ թեքվելով կողովի վրա,— ինչ լա՜վն են։ Ապրե՛ս, Աննուշկա։

— Սա քո աղջի՞կն է, թե ինչ, Կասյան,— հարցրի ես։ (Աննուշկայի դեմքը թույլ շիկնեց)։

— Ոչ, այնպես, էլի, ազգականուհի է,— կեղծ անհոգությամբ ասաց Կասյանը։— Դեհ, Աննուշկա, գնա,— իսկույն ավելացրեց նա,— Գնա։ Միայն թե զգույշ...

— Ինչո՞ւ նա ոտքով գնա,— ընդհատեցի ես ծերունուն։— Մենք նրան սայլով տեղ կհասցնենք...

Աննուշկան շիկնեց, կակուչի գույն ստացավ, երկու ձեռքով վերցրեց կողովի թոկը և անհանգիստ նայեց ծերունուն։

— Ոչ, ոտքով էլ կերթա, այդ նրա համար ի՞նչ է որ,— նույնպես անտարբեր, ծուլորեն առարկեց ծերունին։— Գնա, Աննուշկա։

Աննուշկան արագ հեռացավ դեպի անտառը։ Կասյանը նայեց նրա ետևից, հետո հոնքերը կիտեց ու քմծիծաղ տվեց։ Այդ երկար քմծիծաղում, Աննուշկային նրա ասած մի քանի բառերում, հենց նրա ձայնի հնչյուններում,— երբ նա խոսում էր աղջկա հետ,— անմեկին, կաթոգին սեր ու քնքշություն

կար։ Ծերունին դարձյալ նայեց նրա կողմը, ուր գնացել էր աղջիկը, դարձյալ ժպտաց ու, շփելով դեմքը, մի քանի անգամ օրորեց գլուխը։

— Ինչո՞ւ դու նրան այդպես շուտ ճանապարհեցիր,— հարցրի ես ծերունուն։— Ես նրանից սնկեր կգնեի...

— Դուք տանն էլ կգնեք, երբ ուզենաք,— պատասխանեց նա՝ առաջին անգամ գործածելով «դուք» բառը։

— Նա լավ, սիրունիկ աղջիկ է։

— Ոչ... այնպես, էլի,— մի տեսակ դժկամորեն պատասխանեց ծերունին և հենց այդ վայրկյանից սկսեց առաջվա պես լուռ մնալ։

Տեսնելով, որ նրան դարձյալ խոսեցնելու իմ բոլոր ջանքերը ապարդյուն են անցնում, ես գնացի կտրատված անտառը։ Այն էլ ասած՝ շոգը մի քիչ անցել էր, բայց իմ անհաջողությունը կամ, ինչպես մեզ մոտ ասում են, ձախորդությունը շարունակվում էր, ու ես իմ մարգահավով ու նոր սոնիով վերադարձա նորագյուղ։ Երբ մոտենում էինք տանը, Կասյանը հանկարծ դարձավ ինձ.

— Պարոն, պարոն,— ասաց նա,— ախր ես մեղավոր եմ քո առաջ. ես բոլոր թռչուններին հեռացրի քեզանից։

— Ո՞նց թե։

— Ես այդ գիտեմ։ Քո վարժեցրած շունը լավն է, բայց ոչինչ չկարողացավ անել։ Հը՞մ, մարդիկ, իբր թե նրանք շատ բան կարող են անել։ Ահա և գազանը, իսկ նրան ի՞նչ են դարձրել։

Իզուր կլիներ Կասյանին համոզել, որ անկարելի է «կախարդել» թռչուններին, այս պատճառով էլ ես նրան ոչինչ չպատասխանեցի։ Մեր սայլը մտավ խրճիթի բակը։

Աննուշկան խրճիթում չէր. նա արդեն տեղ էր հասել ու սնկերով լցված կողովը թողել խրճիթում։ Երոֆեյը տեղը դրեց նոր սոնին՝ նախապես խիստ ու անարդարացի գնահատական տալով դրան։ Մի ժամից հետո ես մեկնեցի՝ Կասյանին տալով մի քիչ փող, որ նա սկզբում փորձեց չընդունել, իսկ հետո փողը ձեռքին պահած՝ մտածեց ու դրեց ծոցը։ Այդ ընթացքում նա գրեթե ոչ մի խոսք չասաց. նա առաջվա պես կանգնել էր դարպասին հենված, չէր պատասխանում իմ կառապանի կըշտամբանքներին ու շատ սառն հրաժեշտ տվեց ինձ։

Հենց որ ես վերադարձա, կարողացա նկատել, որ իմ Երոֆեյը նորից մռայլ տրամադրության մեջ է... Հիրավի, գյուղում նա ոչ մի ուտելիք չէր գտել, ձիերի ջրելատեղը վատ էր։ Մենք մեկնեցինք։ Նա իր տեղում նստել էր տհաճությամբ, որը արտահայտվում էր նույնիսկ նրա ծոծրակի վրա։ Նա շատ էր ուզում խոսել ինձ հետ, բայց սպասելով իմ առաջին հարցին, ցահմանափակվում էր թեթև, ցածրաձայն փնթփնթոցով ու ցահմանափակվում էր թեթև, երբեմն էլ խայթող խոսքերով։ «Ա՛յ քեզ գյուղ,— քրթմնջում էր նա,— գյուղի՞ս մտիկ։ Գոնե կվաս լիներ, այդ էլ չկար... է՞-է՞-հե՞։ Բա ջո՞ւրը, թյո՞ւ (նա հնչեղ թքեց)։ Ո՞չ վարունգ, ո՞չ կվաս, ոչինչ չկա... էյ, դու,— բարձրաձայն ավելացրեց նա՝ դիմելով աջ կողմի ձիուն,— ես ճանաչում եմ քեզ, կեղծավորի մեկը։ Սիրում ես կեղծավորություն անել... (Եվ նա մտրակով խփեց այդ ձիկեղծավորությունն անել... (Եվ նա մտրակով խփեց այդ ձի։ Խորամանկ է դարձել անպիտան ձին, իսկ առաջ ինչպիսի՞ հնազանդ կենդանի էր... դեհ, դեհ, աչքդ այս ու այն կողմ մի ծռի...»։

— Ասա խնդրեմ, Երոֆեյ,— դիմեցի ես նրան,— ի՞նչ մարդ է այդ Կասյանը։

Երոֆեյը ինձ շուտ չպատասխանեց. նա առհասարակ կըշռադատող և չշտապող մարդ էր. բայց ես իսկույն կարողացա գլխի ընկնել, որ իմ հարցը զվարճացրեց ու հանգստացրեց նրան։

— Հա՞, Լո՞ւն,— վերջապես ասաց նա, թափահարելով երասանները։— Տարօրինակ մարդ է, իսկապես խև, մի ուրիշ։ այդպիսի տարօրինակ մարդ շուտ չես գտնի։ Ախր նա, զորօրինակ, ոչ ավելի և ոչ պակաս, մեր այս շեկոյի պես է. ձեռքերը ծալած նստել է, այսինքն աշխատելուց ձեռ քաշել... Դե իհարկե, նա ի՞նչ աշխատող է, հալից ընկել է, բայց և այնպես... փոքրուց նա այդպես է։ Սկզբում նա իր հորեղբայրների հետ կառապանություն էր անում. նրանք եռաձի կառքեր էին բանեցնում։ Հա, իսկ հետո դրանից երևի ձանձրացավ, թողեց։ Սկսեց տանը ապրել, բայց չէր էլ նստում. անհանգիստ մարդ է, հենց լու է որ կա։ Լավ է, որ նրա աղան բարի էր, չէր ստիպում գործ անել։ Այն ժամանակներից նա հենց այդպես է գալիս, ոնց որ անտեր ոչխար։ Ասված գիտե, թե ինչու այդքան տարօրինակ է. մեկ լռում է, ոնց որ կոճղ, մեկ էլ

հանկարծ սկսում է խոսել, իսկ թե ինչ է ասում, գլուխ չես հանի։ Մի՞թե դա խելոք վարմունք է։ Ամենևին էլ ոչ։ Անխելք մարդ է որ կա։ Միայն թե լավ է երգում։ Այդ կողմից ոչինչ, շնորհքով է։

— Ճի՞շտ է, որ նա բուժում է։

— Որտեղի՞ց... Դա նրա ի՞նչ գործն է, քանի որ այդ տեսակ մարդ է։ Սակայն նա ինձ բուժեց գեղձերի հիվանդությունից... Դե, հիմար մարդ է, էլի,— մի փոքր լռելուց հետո ավելացրեց Երոֆեյը։

— Դու նրան վաղո՞ւց ես ճանաչում։

— Վաղուց։ Կրասիվայա Մեչայի մոտերքը, Սիչովկա գյուղում ես ու նա հարևաններ էինք։

— Իսկ անտառում մեզ հանդիպած աղջիկը՝ Աննուշկան, նրա ազգականուհի՞ն է, թե ինչ։

Երոֆեյը ուսի վրայով նայեց ինձ ու բերանը բանալով ժպտաց։

— Հա՜-հա՜... այո, ազգականուհին է։ Նա որբ է. մայր չունի և հայտնի էլ չէ, թե ով է եղել նրա մայրը։ Դե, երևի ազգականուհին է, էլի, շատ նման է նրան... Նրա մոտ է ապրում։ Ինչ ասել կուզի, ժիր աղջիկ է, լավ աղջիկ է, և նա, ծերուկը, շատ է սիրում նրան. լավ աղջիկ է։ Կհավատա՞ք դուք, նա, ծերուկը, մտածում է աղջկան գրագիտություն սովորեցնել։ Նրանից կարելի է այդ բանը սպասել. այդ տեսակ արտասովոր մարդ է։ Փոփոխամիտ է, մինչև իսկ տուտուց է... Օ-հո՜,— հանկարծ կառապանս ինքն իրեն ընդհատեց ու, կանգնեցնելով ձիերը, կողքի թեքվեց ու սկսեց հոտոտել օդը։— Ասես խանձահոտ է գալիս, չէ՞։ Այդպես է որ կա։ Օֆ, այս նոր սրունին... Չէ՞ որ ես մազուքթել էի... գնամ ջուր ճարեմ. ահա և լճակ։

Ու Երոֆեյը դանդաղ իջավ իր նստելատեղից, արձակեց դույլի կապը, դրանով գնաց դեպի լճակը, ու վերադառնալով, բավականությամբ լսում էր սռնակալի թշշոցը, երբ դրա վրա ջուր լցրեց... Ընդամենը տասը վերստ տարածություն անցնելիս նա ստիպված եղավ վեց անգամ ջուր լցնել սռնու վրա, և արդեն բոլորովին մթնել էր, երբ մենք տուն վերադարձանք։

ԲՈՒՐՄԻՍՏՐԸ

Իմ կալվածքից տասնհինգ վերստ հեռավորությամբ ապրում է ինձ ծանոթ մի մարդ, երիտասարդ կալվածատեր, պաշտոնաթող գվարդիական սպա Արկադի Պավլիչ Պենոշկինը։ Նրա կալվածքում վայրի թռչուններ շատ կան, տունը կառուցված է ֆրանսիացի մի ճարտարապետի պլանով, սպասավորները անգլիական ձևով են հագնված, նա հիանալի ճաշեր է տալիս, հյուրերին սիրալիր է ընդունում, բայց և այնպես նրա մոտ դժկամորեն ես գնում։ Նա խելոք ու դրական մարդ է, գերազանց դաստիարակություն է ստացել, ինչպես ընդունված է. ծառայել է, մուտք գործել բարձր հասարակության մեջ, իսկ հիմա մեծ հաջողությամբ տնտեսությունով է զբաղվում։ Արկադի Պավլիչը, հենց իր խոսքերով ասած, խիստ է, բայց արդարացի, հոգում է իր հպատակների բարօրության մասին ու պատժում նրանց՝ հենց նրանց բարօրության համար։ «Նրանց հետ պետք է վարվել ինչպես երեխաների հետ,— ասում է նա այս դեպքում,— տգիտություն, mon cher, il faut prendre cela en considération»[1]։ Իսկ ինքը այսպես կոչված տխուր անհրաժեշտության դեպքում խուսափում է կտրուկ և ուժեղ շարժումներից և չի սիրում ձայնը բարձրացնել, բայց ավելի շատ բոթում է ձեռքով ու հանգիստ ասում՝ «Չէ՞ որ ես քեզ խնդրել էի, սիրելիս», կամ՝ «Ի՞նչ է պատահել քեզ, բարեկամս, ուշքի եկ», ըստ որում միայն թեթև սեղմում է ատամները ու ծոմռում բերանը։ Նա կարճահասակ է, լավ կազմվածքով, խիստ սիրունատես է, ձեռքերն ու եղունգները միանգամայն մաքուր է պահում։ Նրա կարմիր շրթունքներից և այտերից ուղղակի առողջություն է կաթում։ Ծիծաղում է հընչեղ ու անհոգ, սիրալիր կկոցում է պայծառ, շագանակագույն աչքերը։ Հագնվում է գերազանց ու ճաշակով, ստանում է ֆրանսերեն գրքեր, նկարներ և լրագրեր, բայց ընթերցանություն այնքան էլ չի սիրում։ Մի կերպ կարդացել է «Թափառական հրեան»։ Վարպետորեն թուղթ է խաղում։ Առհասարակ, Արկադի Պավլիչը համարվում է մեր նահանգի ամենակրթված

[1] Սիրելիս, այդ պետք է ուշադրության առնել (ֆրանս.)։

ազնվագիտաններից և ամենանախանձելի փեսացուներից մեկը. կանայք գժվում են նրա համար և առանձնապես գովաբանում են նրա շարժուձևերը։ Նա զարմանալի լավ է պահում իրեն, զգույշ է ինչպես կատու և իր կյանքում ոչ մի անախորժ գործի չի մասնակցել, թեև սիրում է հարմար առիթին իրեն ճանաչել տալ և շփոթեցնել ու ընդհատել երկչոտ մարդուն։ Վատ հասարակությունից բոլորովին զզվում է,— վախենում է վարկաբեկվել։ Քեֆի ժամանակ իրեն հայտարարում է էպիկուրի երկրպագու, թեև ընդհանրապես փիլիսոփայության մասին վատ կարծիք է հայտնում՝ այն անվանելով գերմանական մտավորականների մշուշային սնունդ, երբեմն էլ ուղղակի անհեթեթություն։ Երաժշտություն նույնպես սիրում է. թուղթ խաղալիս երգում է քթի տակ, բայց զգացմունքով։ Լյուչիա և Սոմնանբուլա օպերաներից նույնպես որոշ տեղեր է հիշում, բայց երգելիս միշտ ինչ-որ բարձր է բռնում։ Զմռանը գնում է Պետերբուրգ։ Նրա տանը արտասովոր կարգ ու կանոն է տիրում. նույնիսկ կառապաններն էլ ենթարկվել են նրա ազդեցության և ամեն օր ոչ միայն սրբում են խամութները և մաքրում կապաները, այլև լվանում են իրենց երեսները։ Ճիշտ է, Արկադի Պավլիչի սպասավորները մի տեսակ աչքի տակով են նայում, բայց մեզ մոտ, Ռուսիայում, մռայլ մարդուն քնաթաթախ մարդուց չես տարբերի։ Արկադի Պավլիչը խոսում է մեղմ ու դուրեկան ձայնով, բառերը շեշտելով, ու կարծես յուրաքանչյուր բառը հաճույքով է բաց թողնում իր գեղեցիկ ու անուշահոտ հեղուկ քսած բեղերի միջից։ Գործ է ածում ֆրանսերեն շատ արտահայտություններ։ Օրինակ՝ «Mais c'est impayable», «mais comment donc»[1] այլն։ Այս ամենով հանդերձ, ես գոնե այնքան էլ հաճույքով չեմ այցելում նրան, և եթե չլիներին ցախաքլորներն ու կաքավները, հավանորեն նրա հետ բոլորովին կկտրեի ծանոթությունս։ Ինչ-որ տարօրինակ անհանգստություն է ձեզ տիրում նրա տանը. նույնիսկ կոմֆորտն էլ ձեզ չի ուրախացնում, ու ամեն անգամ, երեկոյան, երբ ձեր առաջ հայտնվում է խուճուճված մազերով, կապույտ լիվրեյով, գերբային կոճակներով սպասավորը ու սկսում է ստորաքարշությամբ քաշել-հանել ձեր սապոգները,

[1] «Բայց դա հիանալի է», «Դե, իհարկե» (ֆրանս.)։

դուք զգում եք, որ եթե նրա գունատ ու նիհար կերպարանքի փոխարեն ձեր առաջ հանկարծակի հայտնվեին դաշտային աշխատանքներից հենց նոր բարինի վերցրած հաղթանդամ մի երիտասարդի լայն այտոսկրերը ու չափից դուրս բուք քիթը,— երիտասարդի, որը արդեն տասը տեղից պատռել է բարինի նոր շնորհած կապան,— դուք անչափ կուրախանայիք և հաճույքով կենթարկվեիք սապոգի հետ միասին հենց մինչև ազդոսկրի գլուխը ձեր ոտքից զրկվելու վտանգին։

Չնայելով դեպի Արկադի Պավլիչը իմ տածած հակակրանքին, մի անգամ ես գիշերը նրա մոտ անցկացրի։ Մյուս օրը վաղ առավոտյան ես պատվիրեցի լծել կառքս, բայց նա չէր ուզում ինձ բաց թողնել առանց անգլիական ձևով նախաճաշելու և ինձ տարավ կաբինետ։ Թեյի հետ մեզ մատուցեցին կոտլետ, թերխաշ ձու, կարագ, մեղր, պանիր և այլն։ Մաքուր, սպիտակ ձեռնոցներ հագած երկու սպասավոր արագ և լուռ կատարում էին մեր ամենաչնչին ցանկությունները։ Մենք կանտել էինք պարսկական բազմոցին։ Արկադի Պավլիչը հագել էր մետաքսե լայն անդրավարտիք, սև, թավշյա բաճկոն, չինական դեղին, անկրունկ մուճակներ, գլխին դրել կապույտ ծոպով ֆես։ Նա թեյ էր խմում, ծիծաղում, զննում էր եղունգները, ծխում, կողքի տակ բարձեր դնում և առհասարակ իրեն շատ լավ էր զգում։ Նկատելի բավականությամբ և կուշտ նախաճաշելուց հետո Արկադի Պավլիչը իր համար մի գավաթ կարմիր գինի լցրեց, մոտեցրեց շրթունքներին և հանկարծ կիտեց հոնքերը։

— Ինչո՞ւ գինին տաքացրած չէ,— բավական խիստ ձայնով հարցրեց նա սպասավորներից մեկին։

Սպասավորը շփոթվեց, քարացածի պես կանգ առավ ու գունատվեց։

— Ախր ես քեզ եմ հարցնում, սիրելիս,— հանգիստ շարունակեց Արկադի Պավլիչը՝ աչք չկտրելով նրանից։

Դժբախտ սպասավորը տատանվեց, ճմռթեց անձեռոցիկի ծայրը և ոչ մի բառ չասաց։ Արկադի Պավլիչը կախեց գլուխը ու մտազբաղ, աչքի տակով նայեց նրան։

— Pardon, mon cher[1],— ասաց նա հաճելի ժպիտով,

[1] Ներեցեք, սիրելիս (ֆրանս.)։

ձեռքը մտերմաբար դնելով ծնկիս, ու նորից աչքերը չռեց սպասավորի վրա։— Դե գնա,— ավելացրեց նա մի քիչ լռելուց հետո, բարձրացրեց հոնքերը ու զանգահարեց։

Ներս մտավ հաստ, թխադեմ, սևավարս, ցածրաճակատ ու բոլորովին ճարպակալած աչքերով մի մարդ։

— Ֆյոդորի մասին կարգադրություն անել,— ցածր ձայնով և բոլորովին հանգիստ ասաց Արկադի Պավլիչը։

— Լսում եմ,— պատասխանեց հաստ մարդը և դուրս ելավ։

— Voila, mon cher, les desagrements de la campagne[1],— ուրախ ասաց Արկադի Պավլիչը։— Ո՞ւր եք գնում, մնացեք, մի քիչ էլ նստեք։

— Ոչ, ես պետք է գնամ,— պատասխանեցի ես։

— Դարձյալ որսի՞։ Ախ, այդ որսորդնե՞րը։ Դուք հիմա ո՞ւր եք գնալու։

— Այստեղից քառասուն վերստ հեռու, Ռյաբովո։

— Ռյաբովո՞։ Ախ, աստված իմ, այդ դեպքում ես կգամ ձեզ հետ։ Ռյաբովոն ընդամենը հինգ վերստ է հեռու իմ Շիպիլովկայից, իսկ ես վաղուց Շիպիլովկայում չեմ եղել. չէի կարողանում ժամանակ գտնել։ Գործը լավ գնաց. դուք այսօր Ռյաբովոյում որս կանեք, իսկ Երեկոյան կգաք ինձ մոտ։ Ce sera charmant[2]. Մենք միասին կընթրենք, մեզ հետ կտանենք խոհարարին, դուք ինձ մոտ կգիշերեք։ Հիանալի է, հիանալի,— ավելացրեց նա առանց իմ պատասխանին սպասելու,— C'est arrange[3]... է՛յ, ո՞վ կա այնտեղ։ Հրամայեցեք մեզ համար կառք լծել, շո՛ւտ։ Դուք Շիպիլովկայում չե՞ք եղել։ Ես սիրտ չէի անի առաջարկել ձեզ գիշերն անցկացնել իմ բուրմիստրի խրճիթում, թեև գիտեմ, որ դուք պահանջկոտ չեք և Ռյաբովոյում խոտի մարագում էլ կգիշերեք... Գնանք, գնանք։

Ու Արկադի Պավլիչը ինչ-որ ֆրանսիական ռոմանս երգեց։

— Դուք գուցե չգիտեք, որ այնտեղ իմ մուժիկները միայն

[1] Ահա, թանկագինս, գյուղական կյանքի անախորժությունները (ֆրանս.)

[2] Դա սքանչելի կլինի (ֆրանս.)։

[3] Որոշված է... (ֆրանս.)։

հողատուրք են վճարում,— շարունակեց նա՝ օրորվելով երկու հոգեթերի վրա։— Կոնստիտուցիա է, ի՞նչ կարող ես անել։ Սակայն հողատուրքը ինձ կանոնավոր են վճարում։ Ճիշտն ասած, ես նրանց վաղուց կոռով կաշխատեցնեի, բայց հողը քիչ է, ես զարմանում եմ, թե նրանք ինչպես են ծայրը ծայրին հասցնում։ Սակայն c'est leur affaire[1], այնտեղ ես լավ բուրմիստր ունեմ, une forte te'te[2] պետական մարդ է։ Դուք կտեսնեք... Ինչ լավ է, որ մենք այնտեղ ենք գնում։

Էհ, ինչ արած։ Առավոտյան ժամը ինների փոխարեն մենք մեկնեցինք երկուսին։ Որսորդները կհասկանան իմ անհամբերությունը։ Արկադի Պավլիչը, ինչպես ինքն էր արտահայտվում, սիրում էր հարմար առիթին իրեն հաճույք պատճառել, ու իրեն հետ այնքան շատ սպիտակեղեն, պաշարեղեն, հագուստ, օծանելիք ու այլևայլ ուղեփուփեր վերցրեց, որ մի որևէ խնայող և լրջախոհ գերմանացու այդ ամբողջ բարիքը մի տարի կբավականանար։ Ամեն անգամ սարից իջնելիս Արկադի Պավլիչը կարճ, բայց ազդու խոսքեր էր ասում կառապանին, ու ես դրանից կարող էի եզրակացնել, որ իմ ծանոթը խիստ վախկոտ է։ Սակայն ճանապարհորդությունը միանգամայն բարեհաջող կատարվեց. միայն մի տեղ, վերջին օրերում նորոգված կամրջի վրա սայլը խոհարարի հետ շուռ եկավ, ու ետևի անիվով ճզմեց նրա փորը։

Արկադի Պավլիչը տեսնելով տնաբույս Կարեմի[3] ընկնելը, թունդ վախեցավ և իսկույն հրամայեց հարցնել, թե հո չե՞ն վնասվել նրա ձեռքերը։ Դրական պատասխան ստանալով, անմիջապես հանգստացավ։ Այդ ամենով հանդերձ, մենք բավական երկար էինք գնում. ես ու Արկադի Պավլիչը նստած էինք միևնույն կառքում և ճանապարհորդության վերջում ես մահացու թախիծ զգացի, մանավանդ որ մի քանի ժամվա ընթացքում իմ ծանոթը բոլորովին ուժասպառ եղավ և արդեն սկսում էր լիբերալ վերաբերմունք ցույց տալ։ Վերջապես մենք ժամանեցինք, և ոչ թե Ռյաբովո, այլ ուղղակի Շիպիլովկա. բանը այդպես եղավ։ Այն օրը ես առանց այդ էլ չէի

[1] Այդ նրանց գործն է (ֆրանս.)։

[2] Խելոք մարդ է (ֆրանս.)։

[3] Կարեմ — Փարիզում 1830—1840 թվականներին հայտնի խոհարար։

կարող որս անել, դրա համար էլ ճարահատյալ ենթարկվեցի վիճակիս։

Խոհարարը մեզնից մի քանի բոպեով շուտ ժամանեց. ու քստ երևույթին արդեն կարողացել էր կարգադրություններ անել և ում հարկն էր նախազգուշացնել, որովհետև երբ մենք հասանք գյուղի ծայրը, մեզ դիմավորեց գյուղապետը (բուրմիստրի որդին), հաղթանդամ ու շիկահեր մի մուժիկ սաժենաչափ հասակով, ձի նստած ու առանց գլխարկի, հագին կոճակներն արձակած նոր կապա։ «Ո՞ւր է Սոֆրոնը»,— հարցրեց նրան Արկադի Պավլիչը։ Գյուղապետը սկզբում ճարպկությամբ թռավ ձիուց, մինչև գոտկատեղը կռանալով, գլուխ տվեց բարինին ու ասաց. «Բարև ձեզ, տեր իմ, Արկադի Պավլիչ», հետո բարձրացրեց գլուխը, շտկվեց ու զեկուցեց, որ Սոֆրոնը գնացել է Պերով, բայց արդեն մարդ են ուղարկել նրան կանչելու։ «Դեհ, եկ մեր ետևից»,— ասաց Արկադի Պավլիչը։ Գյուղապետը քաղաքավարության համար ձին մի կողմ տարավ, հեծավ ու վարգեց կառքի ետևից՝ գդակը ձեռքին պահած։ Մենք գնացինք գյուղի միջով։ Մեզ հանդիպեցին մի քանի մուժիկ, դատարկ սայլեր նստած. նրանք կալից էին գալիս ու երգեր էին երգում՝ ցատկոտելով ամբողջ մարմնով և օդում թափահարելով ոտքերը. բայց տեսնելով մեր կառքը և գյուղապետին, հանկարծակի լռեցին, հանեցին իրենց ձմեռային փափախները (ամառ էր) ու քիչ բարձրացան տեղերից՝ ասես սպասելով հրամանների։ Արկադի Պավլիչը ողորմածաբար բարևեց նրանց։ Ըստ երևույթին գյուղով մեկ տագնապալից հուզմունք առաջացավ։ Վանդակավոր շրջազգեստներ հագած կնանիք տաշեղներ էին շպրտում գլխի չընկնող կամ չափից դուրս ջանադիր շների վրա. մի կաղ ծերունի, որի մորուքը հենց աչքերի տակից էր սկսվում, կիսով չափ ջրած ձին ետ քաշեց ջրհորից, հայտնի չէ ինչի համար խփեց նրա կողքին ու ապա գլուխ տվեց։ Երկար շապիկներով տղաները ճղճղոցով վազում էին դեպի խրճիթները, փորերի վրա պառկում էին բարձր շեմքին, կախում գլուխները, վեր-վեր գցում ոտքերը և այդ կերպ խիստ ճարպկորեն գլորվում դեպի ներս, խավար հաշտերը, որտեղից այլևս դուրս չէին գալիս։ Նույնիսկ հավերն էլ արագաքայլ մտնում էին դարպասների տակ։ Մի ժիր աքաղաղ սև կրծքով, որը ատլասե ժիլետի էր նման,

ու կարմիր պոչով, որը տնկված էր մինչև կատարը, փորձեց մնալ ճանապարհի վրա և արդեն պատրաստվում էր կանչելու, սակայն հանկարծ շշկլվեց ու նույնպես փախավ։ Բուրմիստրի խրճիթը գտնվում էր մյուս խրճիթներից քիչ հեռու, խիտ, կանաչ կանեփուտի մեջտեղում։ Մենք կանգ առանք դարպասի առաջ։ Պարոն Պենոչկինը վեր կացավ, գեղեցիկ շարժումով վրայից գցեց Թիկնոցը և իջավ կառքից՝ սիրալիր նայելով շուրջը։ Բուրմիստրի կինը մեզ դիմավորեց ցածր գլուխ տալով և մոտեցավ բարինի ձեռքը համբուրելու։ Արկադի Պավլիչը նրան թույլ տվեց համբուրել ուղածի չափ և բարձրացավ մուտքի սանդուղքով։ Միջանցքում, մութ անկյունում կանգնած էր գյուղապետի կինը և նույնպես գլուխ տվեց, բայց չհանդգնեց մոտենալ և համբուրել բարինի ձեռքը։ Այսպես կոչված ցուրտ խրճիթում, որ գտնվում էր միջանցքի աջ կողմում, ուրիշ երկու կանայք էին զբաղված. նրանք այնտեղից դուրս էին տանում այլևայլ անպետք իրեր, փայտե ամաններ, սառած քուրքեր, յուղի կճուճներ, օրորոցը՝ մի կույտ խայտաբղետ փալասներով ու երեխայով։ Բաղնիքի ցախավելներով ավլում էին աղբը։ Արկադի Պավլիչը նրանց դուրս արեց ու նստեց նստարանին, սրբապատկերների առաջ։ Կառապանները սկսեցին ներս տանել սնդուկները, տուփերը և այլ իրերը՝ ամեն կերպ ջանալով չափավորել իրենց ծանր սապոգների թփթփոցը։

Մինչ այս մինչ այն, Արկադի Պավլիչը գյուղապետին հարցուփորձ էր անում բերքի, ցանքի և այլ տնտեսական խնդիրների մասին։ Գյուղապետը պատասխանում էր բավարար, բայց մի տեսակ ալարելով ու անհաստատ, ասես մրսած մատներով կապան էր կոճկում։ Նա կանգնել էր դռան մոտ և հաճախ այս ու այն կողմ էր նայում՝ ճանապարհ տալով ճարպիկ սպասավորին։ Ինձ հաջողվեց նրա հուժկու ուսերի ետևում տեսնել, թե ինչպես բուրմիստրի կինը միջանցքում կամաց թակում էր ինչ-որ կնոջ։ Հանկարծ թխկթխկաց մի սայլ և կանգ առավ խրճիթի առաջ. ներս մտավ բուրմիստրը։

Այդ պետական մարդը, ինչպես նրան անվանում էր Արկադի Պավլիչը, կարճահասակ էր, թիկնեղ, ալեզարդ ու ամբակազմ, կարմիր քթով, փոքրիկ, կապույտ աչքերով ու հովհարաձև մորուքով։ Ի դեպ, ասենք, որ այն ժամանակներից,

երբ սկիզբ է առել Ռուսիան, այնտեղ չի եղել մի դեպք, որ ուռճացած և հարստացած մարդը չունենար լայն ու թավ մորուք. որևէ մեկը իր ամբողջ կյանքում փոքրիկ, սեպաձև մորուք է թողել, ու հանկարծ, մեկ էլ տեսար, դեմքը շրջապատվել է փարթամ մազ ու մորուքով, ինչպես սրբապատկերի դեմքը լուսապսակով. որտեղի՞ց է այդքան մազը։ Բուրմիստրը երևի քեֆ էր արել Պերովում. դեմքը խիստ ուռած էր և նրանից գինու հոտ էր գալիս։

— Ախր դուք, մեր հայրեր, մեր բարերարներ, վերջապես, հաճեցիք ժամանել,— խոսեց նա ծոր տալով և այնպիսի հուզված դեմքով, որ կարծես հենց այն է, արցունքներ թափելու...

— Ձեր ձեռքը, տեր իմ, ձեր ձեռքը,— ավելացրեց նա՝ արդեն առաջուց դեպի առաջ ձգելով շրթունքները։

Արկադի Պավլիչը բավարարեց նրա ցանկությունը։

— Հը, ի՞նչ կա, Սոֆրոն եղբայր, քեզ մոտ ինչպե՞ս են գնում գործերը,— հարցրեց նա սիրալիր ձայնով։

— Ախ, դուք, մեր հայրեր,— բացականչեց Սոֆրոնը,— ինչպես կարող են դրանք, գործերը վատ գնալ։ Օ՜, դուք մեր հայրեր, մեր բարերարներ, ձեր ժամանումով հաճեցիք լուսավորել մեր գյուղը, մեզ երջանկացրիք մինչև մեր կյանքի վերջը։ Փա՜ռք քեզ, տեր, փա՜ռք քեզ, տեր. Արկադի Պավլիչ, ձեր ողորմածությամբ ամեն ինչ բարեհաջող է գնում։

Այստեղ Սոֆրոնը մի փոքր լռեց, նայեց բարինին ու ասաց զգացումների նոր թափով տարված (գինովությունն էլ հո իր գործն էր անում), երկրորդ անգամ խնդրեց, որ բարինը իր ձեռքը տա համբուրելու, և առաջվանից էլ ավելի ոգևորված շարունակեց.

— Ախ դուք, մեր հայրեր, բարերարներ... այս ի՞նչ է, ասված վկա, ուրախությունից խելքս թռցրել եմ... ասված վկա, նայում եմ ու չեմ հավատում... Ախ, դուք, մեր հայրեր...

Արկադի Պավլիչը նայեց ինձ, քմծիծաղեց ու հարցրեց «Hest-ce pas que c'est touchaut»[1]։

— Այո, տեր իմ, Արկադի Պավլիչ,— շարունակեց անխոնջ բուրմիստրը,— ախր դա ո՞նց կլինի, դուք ինձ բոլորովին

[1] Մի՞թե սա հուզիչ չէ (Ֆրանս.)։

տխրեցնում եք, տեր իմ. ձեր ժամանելու մասին չհաճեցիք ինձ լուր ուղարկել։ Հապա որտե՞ղ եք գիշերն անցկացնելու։ Այստեղ մաքուր չէ, աղբ է...

— Ոչինչ, Սոֆրոն, ոչինչ,— ժպտալով պատասխանեց Արկադի Պավլիչը,— այստեղ լավ է։

— Ախր ո՞ւմ համար է լավ, մեր հայրեր, մեզ պես մուժիկի համար է լավ. իսկ դուք... ախ դուք, իմ հայրեր, բարերարներ, ախ դուք, իմ հայրեր... Ներեցեք ինձ, հիմարիս, հոգիս վկա, խելքս թռցրել եմ, բոլորովին հիմարացել։

Այդ պահին ընթրիք մատուցեցին. Արկադի Պավլիչը սկսեց ուտել։ Մերունին դուրս արեց իր որդուն, որպես թե կծանրացնես օդը։

— Էհ, ո՞նց է, ծերուկ, քաշեցի՞ք հողերի սահմանները,— հարցրեց պարոն Պենոչկինը, որը պարզապես ցանկանում էր մուժիկական լեզվով խոսել և ինձ աչքով էր անում։

— Քաշեցինք, տեր իմ, քաշեցինք քո ողորմածությամբ։ Երկու օր առաջ ստորագրեցինք ցուցմունքը։ Խլինովսկիները սկզբում նազուտուզ էին անում... ուղղակի նազուտուզ էին անում, հայր։ Պահանջում էին... պահանջում, աստված գիտե, թե ինչ էին պահանջում, ախր խենթեր են, հայր, անխելք մարդիկ են։ Իսկ մենք, հայր, քո ողորմածությամբ շնորհակալություն հայտնեցինք ու բավարարեցինք Միկոլայ Միկոլայիչին, միջնորդին. ամեն բան քո հրամանով էինք անում, հայր, ինչ որ դու բարեհաճել էիր հրամայել, այնպես էլ անում էինք, ու Եգոր Դմիտրիչի գիտությամբ էինք ամեն ինչ անում։

— Եգորը ինձ զեկուցել է,— փքվելով ասաց Արկադի Պավլիչը։

— Ինչպես չէ, տեր իմ, Եգոր Դմիտրիչը, իհարկե։

— Դե, ուրեմն, հիմա դուք գո՞հ եք։

Սոֆրոնը հենց դրան էր սպասում։

— Ախ, դուք, մեր հայրեր, մեր բարերարներ,— ծոր տվեց նա նորից,— գթացեք դուք ինձ... ախր մենք մեզ համար, մեր հայրեր, գիշեր-ցերեկ աղոթում ենք աստծուն... Հողը իհարկե քիչ է...

Պենոչկինը ընդհատեց նրան։

— Դե լավ, լավ, Սոֆրոն, գիտեմ, դու ջանադիր ծառա ես... ինչպե՞ս է հացահատիկի բերքը։

Սոֆրոնը շունչ առավ։

— Էհ, մեր հայրեր, բերքը այնքան էլ լավ չէ։ Հա, տեր իմ, Արկադի Պավլիչ, թույլ տվեք ձեզ զեկուցել, թե ինչ պատահեց (Այստեղ Սոֆրոնը, տարածելով ձեռքերը, մոտեցավ պարոն Պենոչկինին, թեքվեց ու կկոցեց մի աչքը)։ Մեր հողում մի մեռել գտնվեց։

— Ինչպե՞ս։

— Ինքս էլ բան չեմ հասկանում, տեր իմ, մեր հայրեր. երևում է, որ դա սատանայի գործ է։ Լավ է, որ ուրիշի սահմանի մոտ էր, միայն թե, մեղքներս ինչո՞ւ թաքցնենք, մեր հողումն էր։ Ես իսկույն հրամայեցի նրան քարշ տալ ուրիշի հողը, քանի դեռ այդ կարելի էր. հետո պահակ կարգեցի և մերոնց ասացի, որ այդ մասին լռեն։ Ինչ որ պետք էր, բացատրեցի գավառամասի պրիստավին, թեյ խմեցրի, շնորհակալ եղավ... բանը այդպես եղավ, տեր իմ, մեռելը մնաց ուրիշի հողում, թե չէ մեռելը գլխիս երկու հարյուր ռուբլու գլխացավանք կնստեր։

Պարոն Պենոչկինը շատ ծիծաղեց իր բուրմիստրի խորամանկ վարմունքի առիթով ու մի քանի անգամ գլխով ցույց տալով նրան, ինձ ասաց՝ «Quel gaillard, ah?»[1]։

Մինչ այս մինչ այն, օրը բոլորովին մթնեց։ Արկադի Պավլիչը հրամայեց հավաքել սեղանը և խոտ բերել։ Սպասավորը խոտի վրա սավաններ փռեց, բարձեր դրեց, մենք պառկեցինք։ Հետևյալ օրվա համար հրաման ստանալով, Սոֆրոնը գնաց իր տունը։ Արկադի Պավլիչը քուն մտնելուց առաջ էլի մի քիչ խոսեց ռուս մուժիկի գերազանց հատկությունների մասին և ավելացրեց, որ Սոֆրոնի կառավարչության օրով Շիպիլովկայի գյուղացիները մի գրոշ էլ պարտք չեն մնացել... Պահապանը սկսեց զարկել տախտակին։ Ինչ-որ մի խրճիթից երեխայի լացի ձայն էր լսվում... Մենք քնեցինք։

Մյուս օրը բավական վաղ վեր կացանք։ Ես պատրաստվեցի մեկնել Ռյաբովո, բայց Արկադի Պավլիչը ցանկանում էր ինձ ցույց տալ իր կալվածքը և ինձ խնդրեց մնալ։ Ես ինքս էլ դեմ չէի իրոք համոզվելու պետական մարդու, Սոֆրոնի գերազանց հատկությունների նկատմամբ։ Եկավ բուրմիստրը։

[1] «Ի՞նչ ճարպիկն է, չէ՞» (Ֆրանս.)։

Նա կապույտ կապա էր հագել, կարմիր գոտի կապել։ Նա երեկվանից ավելի քիչ էր խոսում, ուշադիր և ակնապիշ նայում էր բարինի աչքերին, սահուն ու խելացի էր պատասխանում։ Մենք նրա հետ գնացինք կալը։ Սոֆրոնի որդին, երեք արշին հասակ ունեցող գյուղապետը, որ ըստ բոլոր նշանների խիստ հիմար մարդ էր, նույնպես եկավ մեզ հետ, մեզ միացավ նաև բուրմիստրի գրագիրը, Ֆեդոսևիչը՝ պաշտոնաթող զինվոր ահագին բեղերով և դեմքի տարօրինակ արտահայտությամբ. կարծես նա շատ ժամանակ առաջ արտասովոր չափով զարմացել էր ինչ-որ բանի վրա և մինչև այժմ զարմացած էր մնում։ Մենք դիտեցինք կալը, հացի խուրձերը չորացնելու մարագները, սարայները, հողմաղացը, անասնաբակը, աշնանացանի կանաչ ծիլերը, կանեփուտները, ամեն ինչ իսկապես որ գերազանց վիճակում էր. միայն թե մուժիկների տխուր դեմքերը ինձ տարակուսանք էին պատճառում։ Սոֆրոնը բացի օգտակարից, հոգում էր նաև հաճելիի մասին. բոլոր առուների շուրջը ուռենի էր տնկել, կալի դեզերի միջև շավիղներ էր բացել և ավազ լցրել, հողմաղացի վրա սարքել էր հողմացույց. բաց երախով ու կարմիր լեզվով արջ, աղյուսաշեն անասնաբակին հունական ֆրոնտոնի նման ինչ-որ բան էր կպցրել և ֆրոնտոնի տակ սպիտակ ներկով, սխալներով գրել էր՝ «կառուցված է Շիպիլովկա գյուղում, հազար ութ հարյուր քառասուն թվին։ Սույն անասնաբակը»։ Արկադի Պավլիչը բոլորովին սրտաշարժվել էր, սկսեց ֆրանսերեն լեզվով շարադրել հողատուրքային կարգի օգուտները, սակայն ավելացրեց, որ կոռը ավելի ձեռնտու է կալվածատերերի համար, ու էլ ի՞նչ ասես, որ չավելացրեց... Սկսեց բուրմիստրին խորհուրդներ տալ, թե ինչպես պետք է կարտոֆիլ ցանել, ինչպես անասունների համար կեր մթերել և այլն։ Սոֆրոնը ուշադրությամբ լսում էր բարինի խոսքերը, երբեմն առարկում էր, բայց արդեն Արկադի Պավլիչին ո՛չ հայր, ո՛չ էլ բարերար էր հորջորջում և շարունակ պնդում էր, թե իրենց հողը քիչ է և չէր խանգարի նոր հողեր գնել։ «Ի՞նչ կա որ,— ասում էր Արկադի Պավլիչը,— գնեցեք իմ անունով, ես դեմ չեմ»։ Սոֆրոնը այդ խոսքերին ոչինչ չէր պատասխանում, միայն մորուքն էր ոլորում։— «Սակայն այժմ չէր խանգարի գնալ անտառ»,— ասաց պարոն Պենոչկինը։ Իսկույն մեզ համար հեծ-

կան ձիեր բերին. մենք մեկնեցինք անտառ կամ ինչպես մեզ մոտ ասում են՝ «ծմակ»։ Այդ «ծմակում» մենք տեսանք խուզ տեղեր և բազմաթիվ վայրի թռչուններ, ու Արկադի Պավլիչը դրա համար գովաբանեց Սոֆրոնին և տփտփացրեց նրա ուսին։ Պարոն Պենոչկինը անտառաբուծության վերաբերմամբ ռուսական հասկացողությունների կողմնակից էր և իսկույն ինձ պատմեց, իր ասելով, խիստ զվարճալի մի դեպք, թե ինչպես մի կատակասեր կալվածատեր խելքի էր բերել իր անտառապահին՝ պոկելով նրա մորուքի մոտավորապես կեսը, իբրև ապացույց, որ ծառերը կտրատելու դեպքում անտառը ավելի խիտ չի աճում։ Սակայն ուրիշ տեսակետներով թե՛ Սոֆրոնը և թե՛ Արկադի Պավլիչը, երկուսն էլ չէին խուսափում նորամուծություններից։ Երբ մենք վերադարձանք գյուղ, բուրմիստրը մեզ տարավ տեսնելու քամհար մեքենան, որ նա նոր էր ստացել Մոսկվայից։ Քամհարը իրոք լավ էր աշխատում, բայց եթե Սոֆրոնը դիտենար, թե ինչպիսի անախորժություն էր սպասում թե՛ իրեն և թե՛ բարինին այս վերջին զբոսանքի ժամանակ, նա հավանորեն մեզ հետ տանը կմնար։

Ահա թե ինչ պատահեց։ Դուրս գալով մարագից, մենք տեսանք հետևյալ պատկերը։ Դռնից մի քանի քայլ հեռու, կեղտոտ լճակի մոտ, ուր անփույթ լողում էին երեք բադեր, կանգնել էին երկու մուժիկ, մեկը մոտ վաթսուն տարեկան ծերունի, մյուսը մոտ քսան տարեկան տղա, երկուսն էլ լայն, կարկատած շապիկներով, ոտաբոբիկ ու գոտու փոխարեն պարաններ կապած։ Բուրմիստրի գրագիրը, Ֆեդոսեիչը եռանդով ինչ-որ բան էր պահանջում նրանցից և հավանորեն նրանց կհամոզեր հեռանալ, եթե մենք ավելի երկար մնայինք մարագում, բայց, տեսնելով մեզ, նա լարի պես ձգված կանգնեց և տեղնուտեղը քարացավ։ Նույն տեղում կանգնել էր գյուղապետը՝ բերանը բաց և վարանող բռունցքներով։ Արկադի Պավլիչը մոայլվեց, կծեց շրթունքը և մոտեցավ մուժիկներին։ Սրանք երկուսն էլ լուռ գլուխ տվին մինչև նրա ոտքերը։

— Ի՞նչ եք ուզում, ինչի՞ մասին եք խնդրում,— հարցրեց նա խիստ ձայնով և մի քիչ քթի միջից խոսելով։ Մուժիկները իրար նայեցին և ոչ մի բառ չասացին, միայն կկոցեցին աչքը, ասես արևից, ու սկսեցին արագ շնչել։

— Դեհ, ի՞նչ կասեք,— դարձյալ հարցրեց Արկադի Պավլիչը և իսկույն դիմեց Սոֆրոնին,— ո՞ր ընտանիքից են։

— Տոբոլեևների ընտանիքից են,— դանդաղ պատասխանեց բուրմիստրը։

— Հը, ինչո՞ւ եք լռում,— դարձյալ հարցրեց պարոն Պենոչկինը,— լեզու չունե՞ք, ինչ է։ Դե դու ասա, ի՞նչ ես ուզում,— ավելացրեց նա՝ դիմելով ծերունուն։— Հ՛ը, մի վախենա, հիմար։

Ծերունին երկարացրեց իր թուխ, կնճռոտված վիզը, ծռմբռելով բացեց կապտած շրթունքները, խռպոտ ձայնով ասաց՝ «Պաշտպանիր, տեր»,— նա ծունկ չոքեց ու ճակատը հասցրեց գետնին։ Երիտասարդ մուժիկը նույնն արեց։ Արկադի Պավլիչը հպարտությամբ նայեց նրանց ծոծրակներին, վեր գցեց գլուխը ու մի քիչ իրարից հեռացրեց ոտքերը։

— Այդ ի՞նչ բան է, ո՞ւմ դեմ ես գանգատվում։

— Ներիր, տեր, թող շունչ առնեմ... հոգիներս հանել է։ (Ծերունին դժվարությամբ էր խոսում)։

— Ո՞վ է հոգիդ հանել։

— Սոֆրոն Յակովլիչը, տեր։

Արկադի Պավլիչը մի փոքր լռեց։

— Անունդ ի՞նչ է։

— Անտիպ է, տեր։

— Իսկ սա ո՞վ է։

— Տղաս է, տեր։

Արկադի Պավլիչը դարձյալ մի փոքր լռեց ու շարժեց բեղերը։

— Լավ, ինչո՞վ է հոգիդ հանել,— հարցրեց նա՝ բեղերի միջից նայելով ծերունուն։

— Տեր, բոլորովին տնաքանդ է արել։ Երկու որդիներս առանց հերթի զինվորության է տվել, հիմա էլ երրորդ որդուս է տանում։ Երեկ, իմ տեր, տարավ վերջին կովս ու ծեծեց պառավիս, այ թե սա ինչ արեց։ (Ծերունին ցույց տվեց գյուղապետին)։

— Հը՛մ,— ասաց Արկադի Պավլիչը։

— Մի՛ թող, որ բոլորովին ավերվենք, տեր։

Պարոն Պենոչկինը կիտեց հոնքերը։

— Այնուամենայնիվ, ի՞նչ է նշանակում սա,— ցածր ձայնով ու դժգոհ տեսքով հարցրեց նա բուրմիստրին։

— Հարբած մարդ է, գործից փախչում է,— պատասխանեց բուրմիստրը՝ առաջին անգամ գործածելով «սլովոերը» (С տառը)[1]։— Ահա արդեն հինգերորդ տարին է, որ ապառքից ձեռք չի քաշում։

— Սոֆրոն Յակովլևիչը ապառքը մուծեց իմ փոխարեն, իմ տեր,— շարունակեց ծերունին,— հինգերորդ տարին է, որ մուծել է, ու այն օրերից ինձ ուժիցս վեր պարտքի տակ է գցել, իմ տեր, և ահա...

— Իսկ դու ինչո՞ւ ես պարտք մնացել,— ցասկոտ հարցրեց պ-րն Պենոչկինը։ (Ծերունին կախեց գլուխը)։— Երևի սիրում ես հարբեցողություն անել, թրև գալ օղեմտներում, հա՞։ (Ծերունին զարմանքից բացեց բերանը)։— Ես ձեզ ճանաչում եմ,— տաքացած շարունակեց Արկադի Պավլիչը,— ձեր գործն է՝ խմել ու պառկել վառարանի վրա, իսկ լավ մուժիկը պետք է պատասխան տա ձեզ համար։

— Նաև կոպիտի մեկն է,— ավելացրեց բուրմիստրը պարոնի խոսքերին։

— Դե, այդ արդեն ինքնին հասկանալի է։ Դա միշտ այդպես է լինում. դա ես շատ անգամ եմ նկատել։ Ամբողջ տարին ցոփություն, կոպտություն է անում, իսկ հիմա պարոնի ոտքե՞րն է ընկնում։

— Իմ տեր, Արկադի Պավլիչ,— հուսաբեկ ասաց ծերունին,— ողորմած եղիր, ես ի՞նչ կոպիտ եմ որ։ Ոնց որ աստծու առաջն եմ ասում, էլ ճար չի մնացել։ Ինձ հետ լավ չի վարվում Սոֆրոն Յակովլևիչը, ինչի՞ համար, թող աստված նրան դատավոր լինի։ Բնավեր է անում, իմ տեր... Այս վերջին որդուս... սրան էլ... (Ծերունու դեղնած ու խորշոմած աչքերում արցունքներ երևացին)։— Ողորմած եղիր, տեր իմ, պաշտպանիր...

— Հո մենակ մեզ չէ, որ շարչարում է,— փորձեց խոսել ջահել մուժիկը։

[1] Սլովոեր— «С» և «Е» տառերի հին-սլավոնական անունը։ Առաջվա ժամանակներում «С» մասնիկը ավելացնում էին բառերին՝ իբրև խոնարհության և ստորաքարշության նշան։

Արկադի Պավլիչը հանկարծ տաքացավ։

— Իսկ քեզ ո՞վ է հարցնում, հը՞։ Քեզ չեն հարցնում, ուրեմն լռիր... Սա ի՞նչ բան է, լռել, ասում են քեզ։ Լռե՛լ... Ախ, աստված իմ, ախր սա ուղղակի բունտ է։ Ոչ, ախպեր, խորհուրդ չեմ տալիս ինձ մոտ բունտ անել... ինձ մոտ... (Արկադի Պավլիչը մի քայլ առաջ անցավ, բայց հավանորեն հիշելով իմ ներկայությունը, ընկրկեց և ձեռքերը դրեց գբրպանները)։ Le voug demande bien pardon, mon cher[1],— ասաց նա բռնազբոսիկ ժպիտով, զգալիորեն իջեցնելով ձայնը։— C'est le mauvais côte de la médaille...[2]։ Դեհ, լավ, լավ,— շարունակեց նա առանց մուժիկներին նայելու,— ես հրաման կտամ... լավ, գնացեք։ (Մուժիկները չէին վեր կենում)։— Դեհ, ես հո ասացի ձեզ... լավ։ Դեհ գնացեք, ասացի, որ հրաման կտամ։— Արկադի Պավլիչը շուռ եկավ՝ մեջքը դարձնելով նրանց կողմը։ «Անվերջ դժգոհություններ»,— քթի տակ ասաց նա ու լայն քայլերով գնաց տուն։ Սոֆրոնը քայլեց նրա ետևից։ Բուրմիստրի գրագիրը չռեց աչքերը՝ ասես պատրաստվում էր ինչ-որ շատ հեռու տեղ ցատկել։ Գյուղապետը մի կողմ քշեց լճակի վրա գտնվող բադերը։ Մուժիկները մի քիչ էլ կանգնած մնացին, նայեցին իրար և առանց ետ նայելու դանդաղ հեռացան։

Երկու ժամից հետո ես արդեն Ռյաբովոյում էի և պատրաստվում էի որսի գնալ Անպադիստի, ինձ ծանոթ մուժիկի հետ։ Մինչև իմ մեկնելը Պենոչկինը կշտամբում էր Սոֆրոնին։ Ես Անպադիստի հետ խոսեցի Շիպիլովկայի գյուղացիների, պ-րն Պենոչկինի մասին, հարցրի նրան, թե արդյոք չի՞ ճանաչում այնտեղի բուրմիստրին։

— Սոֆրոն Յակովլևի՞ն... Հը՞մ։

— Նա ի՞նչ մարդ է։

— Շուն է և ոչ թե մարդ. մինչև Կուրսկ էլ որ գնաս, այդպիսի շուն չես գտնի։

— Ինչո՞ւմն է բանը։

— Շիպիլովկան միայն անունով է պատկանում այն... ը-ը... Պենկինին. այդ գյուղի տեր ու տիրականը ոչ թե նա է, այլ Սոֆրոնը։

[1] Ես ներողություն եմ խնդրում, թանկագին (ֆրանս.)։

[2] Սա մեդալի հակառակ կողմն է (ֆրանս.)։

— Մի՞թե։

— Տիրում է ոնց որ իր բարիքին։ Գյուղացիները միշտ նրան պարտք են մնում, բատրակների պես աշխատում նրա համար. ուր ասես քշում է նրանց, մեկին սայլով, մյուսին հենց այնպես... ուզղակի նրանց հոգին հանել է։

— Նրանց հողը կարծեմ քի՞չ է։

— Քի՞չ է։ Նա հենց միայն Խլինովսկիներից ութսուն դեսյատին է վարձում, մերոնցից էլ հարյուր քսան դեսյատին. ահա քեզ և ամբողջ երկու հարյուր դեսյատին։ Նա միայն հողով չի զբաղվում. օգուտ է ստանում թե՛ ձիերից, թե՛ անասուններից, կուպրից, յուղից, կանեփից, էլ որ մեկն ասեմ... խելոք է, շատ խելոք ու հարուստ այդ անիծվածը։ Միայն թե կովարար է։ Գազան է և ոչ թե մարդ. հենց շան մեկն է որ կա։

— Հապա ինչո՞ւ գյուղացիները նրա դեմ չեն գանգատվում։

— Թեկուզ գանգատվեն, բարինի շա՜տ պետքն է։ Ապառքներ չեն լինում, նրա՜ն ինչ։ Արի ու գանգատվիր. նա այնպես հուպ կտա, որ գանգատն էլ, ամեն բան էլ կմոռանաս...

Ես հիշեցի Անտիպին ու պատմեցի Անպադիստին, թե ինչ էի տեսել։

— Հը՜մ,— ասաց Անպադիստը,— հիմա նա կուտի ծերուկին, բոլորովին տանջամահ կանի։ Գյուղապետը հիմա կսկսի թակել ծերուկին։ Տես թե ինչ անբախտն է այդ Անտիպը։ Եվ ինչի՞ համար է տանջվում... Գյուղական ժողովում մի քիչ կպել էր նրա, բուրմիստրի քեֆին, էլ չէր կարողացել համբերել... Մեծ բան է, էլի՜։ Եվ ահա սա սկսեց կրծոտել Անտիպին։ Հիմա բոլորովին կուտի։ Ախր նա, այդ շունը, մեղա քեզ աստված, լավ գիտե, թե ում կարող է ճնշել։ Ավելի հարուստ և ավելի մեծ ընտանիքներով ծերունիներին ձեռք չի տալիս, իսկ այստեղ կատաղել է։ Անտիպի տղաներին այդ անիրավ սրիկան առանց հերթի զինվորության տվեց, շան մեկն է, էլի մեղա քեզ, աստված։

Մենք գնացինք որսի։

Զայլցբրունն, Սիլեզիա,
հուլիս, 1847 թ.

ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Աշուն էր։ Ես հրացանով արդեն մի քանի ժամ թափառում էի դաշտերում։ Հավանորեն մինչև երեկո չէի վերադառնա իջևան, որ գտնվում էր Կուրսկի մեծ ճանապարհի վրա, ուր ինձ սպասում էր իմ եռաձի կառքը։ Սակայն չափազանց մանր և ցուրտ անձրևը, որ հենց առավոտից պառավ աղջկա նման համառորեն ու անգթաբար հետամուտ էր ինձ, ստիպեց, վերջապես, որևէ մոտիկ վայրում գոնե ժամանակավոր ապաստան փնտրել։ Մինչդեռ ես կշռադատում էի, թե որ կողմը գնամ, հանկարծ նկատեցի ցածլիկ մի քողտիկ, որ գտնվում էր սիսեռ ցանած դաշտի կողքին։ Ես մոտեցա քողտիկին, ներս նայեցի ու ծղնոտե ծածկի տակ տեսա մի ծերունու, այնքան զառամած, որ իսկույն վերհիշեցի այն մեռնող այծը, որ Ռոբինզոնը գտել էր իր կղզու մի անձավում։ Ծերունին պպզել էր, կկոցում էր խամրած, փոքրիկ աչքերը ու հապճեպորեն, բայց զգույշ, նապաստակի նման ծամում էր չոր և պինդ սիսեռահատիկը, անդադար գլորելով դա բերանի մի կողմից մյուսը (խեղճը ոչ մի ատամ չուներ)։ Նա այնքան էր տարվել իր զբաղմունքով, որ չնկատեց ինձ։

— Պապի, այ պապի,— ասացի ես։

Նա դադարեցրեց ծամելը, բարձրացրեց հոնքերը և ճիգ անելով բացեց աչքերը։

— Ի՞նչ է,— մշմշաց նա խռպոտ ձայնով։

— Այստեղ մոտիկ գյուղ կա՞,— հարցրի ես։

Ծերունին դարձյալ սկսեց ծամել։ Նա ինձ չէր լսել։ Ես հարցս կրկնեցի ավելի բարձր ձայնով։

— Գյո՞ւղ... դու ի՞նչ ես ուզում։

— Անձրևից պաշտպանվել։

— Ի՞նչ։

— Անձրևից պաշտպանվել։

— Հա՜,— նա քորեց արևից սևացած իր ծոծրակը,— դե, դու, ըմմ, գնա,— ասաց նա հանկարծ՝ անորոշ թափահարելով ձեռքերը,— ը-ը... հենց կերթաս անտառի կողքից, հենց կերթաս, ճամփա կլինի, դու ճամփան թող, գնա աջ կողմը, հենց մի գլուխ աջ, աջ, աջ... Այնտեղ կլինի Անանևոն։ Հետո էլ Սիտովկա կհասնես։

Ես դժվարությամբ էի հասկանում ծերունուն։ Բեղերը խանգարում էին նրան, լեզուն նրան չէր ենթարկվում։

— Դու որտեղացի՞ ես,— հարցրի ես նրան։

— Ի՞նչ։

— Որտեղացի՞ ես։

—Անանևոյից։

— Այստեղ ի՞նչ ես անում։

— Ի՞նչ։

— Այստեղ դու ի՞նչ ես անում։

— Պահապան եմ։

— Իսկ ի՞նչ ես պահպանում։

— Սիսեռը։

Ես չէի կարող չծիծաղել։

— Ներողություն, քանի՞ տարեկան ես։

— Էհ, աստված գիտի։

— Երևի, տեսողությունդ վատ է, հա՞։

— Ի՞նչ։

— Տեսողությունդ վա՞տ է։

— Վատ է։ Պատահում է, որ ոչինչ չեմ լսում։

— Էլ ո՞նց կարող ես պահապան լինել։

— Այդ բանը մեծերը գիտեն։

«Մեծերը»,— մտածեցի ես ու կարեկցաբար նայեցի խեղճ ծերունուն։ Նա շոշափեց կուրծքը, ծոցից հանեց մի պատառ չոր հաց ու սկսեց ծծել երեխայի նման, դժվարությամբ ներս քաշելով առանց այն էլ փոս ընկած այտերը։

Ես գնացի դեպի անտառ, դարձա աջ և շարունակ քայլեցի այդ ուղղությամբ, ինչպես ինձ խորհուրդ էր տվել ծերունին, ու, վերջապես, հասա մի մեծ գյուղ, քարաշեն եկեղեցիով, որը կառուցված էր նոր ճաշակով, այսինքն սյունազարդ էր։ Կալվածատիրոջ ընդարձակ տունը նույնպես սյունազարդ էր։ Դեռ հեռվից անձրևի խիտ ցանցի միջով նկատեցի մի խրճիթ՝ տախտակե կտուրով ու երկու ծխնելույզով, որոնք մյուս ծխնելույզներից ավելի բարձր էին։ Ամենայն հավանականությամբ դա գյուղապետի բնակարանն էր, դեպի ուր ուղղեցի քայլերս՝ հույս ունենալով այնտեղ գտնել ինքնաեռ, թեյ, շաքար և ոչ այնքան թթված սերուցք։ Իմ մրսած շան ուղեկցությամբ ես բարձրացա մուտքի փոքրիկ սանդուղքով, մտա

նախասենյակ, բացեցի մյուս դուռը, բայց խրճիթի սովորական իրերի փոխարեն տեսա թղթերով պատած մի քանի սեղան, երկու կարմիր պահարան, կեղտոտված թանաքամաններ, խիստ երկար փետրագրիչներ և այլն։ Սեղաններից մեկի առաջ նստել էր մոտ քսան տարեկան, ուռած և հիվանդոտ դեմքով, փոքրիկ աչքերով, ճարպակալած ճակատով և մազակալած քունքերով մի երիտասարդ։ Նա, ինչպես հարկն է, հագել էր նանկայից կարված մոխրագույն կապա, որի օձիքը և որովայնին ընկնող մասը նախշած էին։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց նա ինձ՝ վեր գցելով գլուխը, ինչպես ձի, որը չի սպասում, թե բռնելու են իր մռութից։

— Այստեղ գործակատա՞ր է ապրում... կամ...

— Այստեղ կալվածքի գլխավոր գրասենյակն է,— ընդհատեց նա ինձ։— Ես հերթապահ եմ... Մի՞թե դուք չտեսաք ցուցանակը, հապա դա ինչի՞ համար էր կպցրած։

— Որտե՞ղ կարող եմ հագուստս չորացնել։ Գյուղում որևէ մեկը ինքնաեռ ունի՞։

— Ո՞նց չի լինի,— փքվելով ասաց մոխրագույն կապայով երիտասարդը,— գնացեք տեր Տիմոֆեյի մոտ կամ թե չէ կալվածատան սպասավորների խրճիթը, կամ թե չէ Նազան Տարասիչի, կամ թե չէ թռչնապահուհի Ագրաֆենայի մոտ։

— Այդ ո՞ւմ հետ ես խոսում հիմարի մեկ, չես թողնում մարդ քնի, հիմար,— լսվեց մեկի ձայնը հարևան սենյակից։

— Ահա մի ինչ-որ պարոն է եկել, հարցնում է, թե որտեղ կարող է շորերը չորացնել։

— Ի՞նչ պարոն է։

— Չգիտեմ։ Հրացանով է ու հետն էլ շուն կա։

Հարևան սենյակում ճռճռաց մահճակալը։ Դուռը բացվեց, ու ներս մտավ մոտ հիսուն տարեկան, հաստափոր, ցածրահասակ մի մարդ՝ եզան պարանոցով, դուրս ընկած աչքերով, խիստ կլոր աչքերով ու պլպլան դեմքով։

— Ի՞նչ եք ցանկանում,— հարցրեց նա։

— Ուզում եմ չորացնել հագուստս։

— Այստեղ դրա տեղը չէ։

— Ես չգիտեի, որ սա գրասենյակ է. սակայն ես պատրաստ եմ վճարել...

— Դե ի՞նչ կա որ, այստեղ էլ կարելի է,— ասաց հաստա-

փորը,— համեցեք այստեղ։ (Նա ինձ տարավ մյուս սենյակը, բայց ոչ այն սենյակը, որտեղից ինքը դուրս էր եկել)։ Այստեղ լա՞վ կլինի ձեզ համար։

— Լավ կլինի... Իսկ չի՞ կարելի թեյ և սերուցք ստանալ։

— Ինդրեմ, հիմա։ Դուք առայժմ հաճեցեք հանվել և հանգստանալ, իսկ թեյը այս րոպեիս պատրաստ կլինի։

— Իսկ սա ո՞ւմ կալվածքն է։

— Տիկին Լոսնյակովայի, Ելենա Նիկոլաևնայի։

Նա դուրս ելավ։ Ես նայեցի շուրջս. իմ սենյակը գրասենյակից բաժանող միջնորմի տակ դրված էր մի ահագին, կաշվեպատ բազմոց. բարձր թիկնակներով, նույնպես կաշվեպատ երկու աթոռ ցցված էին փողոցի կողմը նայող միակ պատուհանի երկու կողմում։ Երեք ահագին, յուղաներկ նկարներ էին կախված պատերից, որոնք պատած էին կանաչ, վարդանախշ պաստառներով։ Մի նկարի վրա պատկերված էր որսկան շուն՝ կապույտ վզկապով և «Ահա իմ խնդումը» մակագրությամբ. շան ոտքերի մոտ գետ էր նկարված, իսկ գետի հակադիր ափում՝ սոճու տակ նստած էր անչափ մեծ և ականջը քիչ բարձրացրած մի նապաստակ։ Մյուս նկարում երկու ծերունի ձմերուկ էին ուտում. ձմերուկի ետևից, հեռվից երևում էր հունական սյունազարդ մի նախասրահ, «զոհունակության տաճար» մակագրությամբ։ Երրորդ նկարում պատկերված էր կիսամերկ մի կին պառկած վիճակում, կարմիր ծնկներով և շատ հաստ կրունկներով։ Շունս անմիջապես, գերբնական ճիգերով մտավ բազմոցի տակ և ըստ երևույթին այնտեղ շատ փոշի գտավ, որովհետև սկսեց սարսափելի փռշտալ։ Ես մոտեցա պատուհանին։ Փողոցի միջով, կալվածատիրոջ տանից մինչև գրասենյակ, շեղակի ուղղությամբ տախտակներ էին դրված. դա խիստ օգտակար կանխազգուշություն էր, որովհետև մեր սևահողի և երկարատև անձրևի շնորհիվ շուրջը սարսափելի ցեխ էր։ Հետին կողմով դեպի փողոցը նայող կալվածատան մոտ տեղի էր ունենում այն, ինչ-որ սովորաբար տեղի է ունենում կալվածատների մոտ. չթե, խունացած շրջազգեստներով աղջիկները ետ ու առաջ էին թրևում. սպասավորները գնում էին ցեխի միջով, կանգ էին առնում ու մտազբաղ քորում մեջքները. տասնապետի կապած ձին ծուլորեն թափահարում էր պոչը ու, մռութը բարձրացրած, կրծոտում է ցանկապատը. հավերը կռթկռթում էին. վտիտ հնդուհավերը անդադար ձայնում էին միմյանց։ Մուգ և խոնավ մի շենքի, հավանորեն բաղնիքի մուտքի սանդուղքին նստել էր կիթառը ձեռքին մի հաղթանդամ երիտասարդ և ոգեշնչված երգում էր հեռակալ հայտնի ռոմանսը։

«Ես կթողնեմ այս վայրերը գեղանի,
Ու այստեղից հեռու-հեռու կգնամ» և այլն

Հաստափոր մարդը մտավ իմ սենյակը։

— Հիմա ձեզ թեյ կբերեն,— հաճելի ժպիտով ասաց նա ինձ։

Մոխրագույն կապայով երիտասարդը, գրասենյակի հերթապահը, թղթախաղի հին սեղանի վրա դրեց թեյամանը, բաժակը և կոտրած ափսեիկը, մի աման սերուցք և մի կապ կրենդելներ, որոնք կայծքարի նման կարծր էին։ Հաստափոր մարդը դուրս ելավ։

— Ո՞վ է դա, գործակատա՞ր է,— հարցրի ես հերթապահին։

— Ամենևին ոչ. գլխավոր գանձապահ էր, իսկ հիմա գլխավոր գրասենյակային ծառայող է դարձել։

— Մի՞թե ձեզ մոտ գործակատարներ չկան։

— Ամենևին ոչ։ Կա բուրմիստր, Միխայիլ Վիկուլովը, իսկ գործակատար չկա։

— Կառավարիչ կա՞։

— Ինչպես չէ, կա. գերմանացի է, Լինդամանդոլը, Կառլ Կառլիչը, միայն թե նա կարգադրություններ չի անում։

— Հապա ո՞վ է ձեզ մոտ կարգադրություններ անում։

— Ինքը, տիրուհին։

— Ահա թե ինչ... Իսկ ձեր գրասենյակում քանի՞ ծառայող կա։

Երիտասարդը մտածմունքի մեջ ընկավ։

— Վեց մարդ։

— Ովքե՞ր են,— հարցրի ես։

— Այ թե ովքեր են. սկզբում կլինի Վասիլի Նիկոլաևիչը, գլխավոր գանձապահը, հետո Պյոտրը, նրա եղբայր Իվանը,

Մյուս Իվանը, գրասենյակի ծառայողներ Կոսկենկին, Նարկիզովը, նույնպես գրասենյակի ծառայող, ու ես. էլ ո՞ր մեկի անունը տամ։

— Ձեր տիրուհին շա՞տ սպասավորներ ունի։

— Գրեթե հարյուր հիսուն մարդ։

Երկուսս էլ մի փոքր լռեցինք։

— Ոնց է, դու լա՞վ ես գրում,— դարձյալ հարցրի ես։

Երիտասարդը լայն ժպտաց, գլխով արեց, գնաց գրասենյակ ու մի գրոտած թերթ բերեց։

— Ահա իմ գրածը,— ասաց նա՝ շարունակելով ժպտալ։

Ես նայեցի. գորշավուն թղթի քառորդամասի վրա գեղեցիկ ու խոշոր տառերով գրված էր հետևյալը.

ՀՐԱՄԱՆ

Անանևոյի կալվածատան գլխավոր գրասենյակից,
բուրմիստր Միխայլո Վիկուլովին, № 209

«Քեզ հրամայվում է սույնը ստանալուց անմիջապես հետո պարզել, թե անցյալ գիշեր ով է հարբած վիճակում և անվայել երգերով անցել Ա (Ն) գլխական այգով, արթնացրել և անհանգստացրել դաստիարակչուհի, ֆրանսուհի մադամ Էնժենիին և ինչու պահապանները չէին հսկում և ով էր այգում պահապան նստել ու այդպիսի անկարգություններ թույլ տվել։ Քեզ հրամայում է վերոգրյալի մասին մանրամասն հետախուզել և անհապաղ զեկուցել գրասենյակին։

Գլխավոր գրասենյակային ծառայող
Նիկոլայ Խվոստով»։

Հրամանը դրոշմված էր գերբային մեծ կնիքով, հետևյալ մակագրությամբ. «Անանևոյի կալվածատան գլխավոր գրասենյակի կնիք», իսկ հրամանի տակ գրված էր՝ «Ճշտությամբ կատարել։ Ելենա Լոսնյակովա»։

— Սա տիրուհին ի՞նքն է գրել,— հարցրի ես։

— Իհարկե ինքը, ինչպես միշտ։ Թե չէ հրամանը ուժ չի ունենա։

— Դուք այդ հրամանը բուրմիստրի՞ն եք ուղարկելու։

— Ոչ։ Ինքը կգա և կկարդա։ Այսինքն կկարդան նրա մոտ,

նա գրագետ չէ։ (Հերթապահը դարձյալ մի փոքր լռեց)։— Հը՞, ո՞նց է, լա՞վ է գրված,— ժպտալով ավելացրեց նա։

— Լավ է։

— Ճիշտն ասած, ես չեմ հորինել։ Կոսկենկինն է դրա վարպետը։

— Ինչպե՞ս... Մի՞թե ձեզ մոտ հրամանները սկզբում հորինվում են։

— Հապա ինչպե՞ս։ Հո միանգամից մաքուր չե՞ն գրվում։

— Իսկ դու ինչքա՞ն ռոճիկ ես ստանում,— հարցրի ես։

— Երեսունհինգ ռուբլի և հինգ ռուբլի էլ կոշիկներ գնելու համար։

— Եվ դու գո՞հ ես։

— Հայտնի բան է, գոհ եմ։ Ամեն մարդ չի ընկնի մեր գրասենյակը։ Ճիշտն ասած, ինձ աստված ինքն է օգնել։ Իմ հորեղբայրը սպասավորների պետն է։

— Եվ դու քեզ լա՞վ ես զգում։

— Լավ։ Ճիշտն ասած, վաճառականների մոտ, այսինքն, զորօրինակ, մեզ նմանների համար ավելի լավ է։ Վաճառականների մոտ մեզ նմանների դրությունը շատ լավ է։ Այ, երեկ, Վենյովից մի վաճառական եկավ մեզ մոտ. նրա աշխատողը ինձ ասում էր, որ դրությունը լավ է, ինչ ասել կուզի...

— Մի՞թե վաճառականները ավելի շատ ռոճիկ են տալիս։

— Ամենևին ոչ։ Նա վզակոթիդ տալով կվռնդի քեզ, եթե դու նրանից ռոճիկ պահանջես։ Ոչ, դու վաճառականի մոտ հավատարմությամբ ու խղճով ծառայիր։ Ուտել-խմելդ, հագուստդ, ամեն բան լավ կլինի։ Թե որ նրան գոհացնես, ավելի շատ բան կտա... Ռոճիկն ի՞նչ է որ, ամենևին էլ հարկավոր չէ... Վաճառականը պարզ կյանք է վարում, ռուսավարի, մեր սովորությամբ է ապրում. երբ նրա հետ ճանապարհ ես գնում, նա թեյ է խմում, դու էլ թեյ խմիր. ինչ որ նա ուտում է, դու էլ կեր։ Վաճառականը... դե ո՞նց ասեմ, վաճառականը այն չէ, ինչ որ բարինն է։ Վաճառականը խելառություն չի անում. թե որ բարկանա, կթակի ու պրծավ գնաց։ Հայհոյանք չի թափում, չի անպատվում... իսկ բարինի մոտ լինելը փորձանք է. ամեն բան նրա ուզածով չի, այսինչ բանը լավ չի, այսինչ դեպքում չգոհացրիր նրան։ Թե որ նրան մի բաժակ ջուր կամ ուտելիք ես տալիս, ասում է՝ «Թյու, ջրից հոտ է գալիս, թյո՞

տուելիքից հոտ է գալիս»։ Դուրս ես բերում, մի քիչ կանգնում դռան ետևում ու դարձյալ բերում ես նույնը. «Այ, հիմա լավն է, հիմա հոտ չի գալիս»,— ասում է նա։ Հապա տիրուհինե՞րը, էհ, ի՞նչ ասեմ, հապա օրիորդնե՞րը...

— Ֆեդյուշկա,— գրասենյակից լսվեց հաստափորի ձայնը։

Հերթապահը արագ դուրս ելավ։ Ես խմեցի մի բաժակ թեյ, պառկեցի բազմոցին և քնեցի։ Երկու ժամ քնեցի։

Արթնանալով, ես ուզեցի վեր կենալ, բայց ծուլացա, աչքերս փակեցի, բայց էլ քունս չտարավ։ Միջնորմի ետևում, գրասենյակում, կամացուկ խոսում էին։ Ես սկսեցի ականջ դնել։

— Այդպես, այդպես, Նիկոլայ Երեմեիչ,— ասում էր մի ձայն,— այդպես։ Այդ չի կարելի հաշվի չառնել, չի կարելի, ճիշտ խոսք... Հըմ (խոսողը հառաչեց)։

— Հավատացեք ինձ, Գավրիլա Անտոնիչ,— առարկեց հաստափորի ձայնը,— մի՞թե ես չգիտեմ այստեղի կարգերը, ինքներդ դատեցեք։

— Հապա ո՞վ պիտի գիտենա, Նիկոլայ Երեմեիչ, կարելի է ասել, որ դուք այստեղ առաջին դեմքն եք։ Հա, ո՞նց կլինի բանը,— շարունակեց ինձ ծանոթ ձայնը։

— Ի՞նչ ենք որոշելու, Նիկոլայ Երեմեիչ, թույլ տվեք հետաքրքրվել։

— Ի՞նչ պիտի որոշենք, Գավրիլա Անտոնիչ։ Գործը, այսպես ասած, ձեզնից է կախված. դուք կարծես թե անտարբեր եք։

— Ներեցեք, ի՞նչ եք ասում, Նիկոլայ Երեմեիչ։ Մեր գործը առևտրական, վաճառականական գործ է. մեր գործը գնելն է։ Կարելի է ասել, որ մենք դրա վրա ենք հենվում, Նիկոլայ Երեմեիչ։

— Ութ ռուբլի,— բառերը շեշտելով ասաց հաստափորը։ Խոսակիցը շունչ առավ։

— Նիկոլայ Երեմեիչ, բարեհաճում եք շատ պահանջել։

— Ուրիշ կերպ չի կարելի, Գավրիլա Անտոնիչ. ոնց որ ասածու առաջ եմ ասում, չի կարելի։

Տիրեց լռություն։

Ես կամացուկ, քիչ բարձրացա ու նայեցի միջնորմի ճեղքից։ Հաստափորը նստել էր մեջքը դեպի ինձ։ Նրա դիմաց նստել էր մի վաճառական, մոտ քառասուն տարեկան, նիհար ու գունատ, ասես դեմքին ձեթ էր քսված։ Նա անդադար անտղում էր մորուքը, խիստ արագ թարթում աչքերը ու շարժում շրթունքները։

— Կարելի է ասել, որ այս տարի արտերը հիանալի ծիլ են տվել,— դարձյալ խոսեց նա,— ճանապարհին նայում էի ու զմայլվում։ Հենց Վորոնեժից սկսած, հիանալի են ծիլերը, կարելի է ասել՝ առաջին տեսակի են։

— Ճիշտ է, ծիլերը վատ չեն,— պատասխանեց գլխավոր գրասենյակային ծառայողը,— միայն թե գիտե՞ք, Գավրիլա Անտոնիչ, աշնանը լավ են ծլում, իսկ գարնանը տեսնենք ոնց կլինի։

— Իրոք այդպես է, Նիկոլայ Երեմեիչ. ամեն ինչ աստծո կամքով է. բարեհաճեցեք կատարյալ ճշմարտությունն ասել... ձեր հյուրը կարծեմ արթնացավ։

Հաստափորը շուռ եկավ... ականջ դրեց...

— Ոչ, քնած է։ Ասենք գուցե և արթուն է...

Նա մոտեցավ դռանը։

— Ոչ, քնած է,— կրկնեց նա և վերադարձավ իր տեղը։

— Դե ի՞նչ անենք, Նիկոլայ Երեմեիչ,— դարձյալ սկսեց վաճառականը,— պետք է վերջացնել գործը... Որ այդպես է, Նիկոլայ Երեմեիչ,— շարունակեց նա՝ անընդհատ թարթելով աչքերը,— որ այդպես է, երկու մոխրագույն և մի սպիտակ[1] ձերդ ողորմածության, իսկ այնտեղ (նա գլխով ցույց տվեց կալվածատան կողմը) վեց ու հիսուն։ Գալի՞ս է թե ինչ։

— Չորս մոխրագույն,— պատասխանեց գործակատարը։

— Լավ, երեք։

— Չորս մոխրագույն առանց սպիտակի։

— Երեք, Նիկոլայ Երեմեիչ։

— Երեք և կես և ոչ մի կոպեկ պակաս։

— Երեք, Նիկոլայ Երեմեիչ։

— Էլ չասեք, Գավրիլա Անտոնիչ։

— Այսքան էլ չհամաձայնվող մա՛րդ,— փնթփնթաց վա-

[1] Մոխրագույն— 50 ռուբլի, սպիտակ— 25 ռուբլի։ Սովորական խոսակցության ժամանակ թղթադրամներն անվանում էին ըստ նրանց գույնի։ Ս. Թ.

ճառականը։— Որ այդպես է, ավելի լավ է ես տիրուհու հետ գործը կվերջացնեմ։

— Ինչպես կուզեք,— պատասխանեց հաստափորը,— վաղուց պետք է այդպես անեիք։ Իսկապես, ինչու այստեղ անհանգստանանք... Այդպես ավելի լավ կլինի։

— Դե լավ, լավ, Նիկոլայ Երեմեիչ։ Մի բարկանաք։ Ես դա հենց այնպես ասացի։

— Ոչ, ինչո՞ւ, արեք ձեր ուզածը...

— Ասում եմ՝ դե լավ, էլի... Ասում եմ՝ կատակեցի... էհ, ի՞նչ արած, վերցրու քո երեք ու կեսը։

— Հարկավոր էր չորս վերցնել, բայց ես, հիմարս, շտապեցի,— մոթմոթաց հաստափորը։

— Ուրեմն այնտեղ, տանը, վեց և կես, Նիկոլայ Երեմեիչ, վեց և կեսով հաց կտրվի՞։

— Արդեն ասված է՝ վեց և կես։

— Ուրեմն գալիս է, Նիկոլայ Երեմեիչ (վաճառականը իր բացած մատներով խփեց գրասենյակի ծառայողի ձեռքին)։ Էհ, աստված հաջողություն տա։ (Վաճառականը վեր կացավ)։ Ուրեմն ես, մեծարգո Նիկոլայ Երեմեիչ, հիմա կգնամ տիրուհու մոտ, կասեմ, որ զեկուցեն իմ գալու մասին ու տիրուհուն կհայտնեմ, որ Նիկոլայ Երեմեիչը որոշեց վեց և կիսով տալ։

— Այդպես էլ ասացեք, Գավրիլա Անտոնիչ։

— Իսկ հիմա հաճեցեք ստանալ։

Վաճառականը գործակատարին մի փոքրիկ կապ թղթադրամ տվեց, գլխով արեց, երկու մատով վերցրեց իր լայնեզր գլխարկը, թոթվեց ուսերը և օրորվելով դուրս ելավ՝ թունդ ճռճռացնելով սապոգները։ Նիկոլայ Երեմեիչը մոտեցավ պատին, ու որքան ես կարողացա նկատել, սկսեց հաշվել վաճառականի տված թղթադրամները։ Կիսով չափ բացված դռնից երևաց խիտ այտամորուքով, շիկահեր մի գլուխ։

— Հը, ի՞նչ եղավ, ամեն ինչ կարգի՞ն է,— հարցրեց գլուխը։

— Ամեն ինչ կարգին է։

—Որքա՞ն։

Հաստափորը սրտնեղելով թափահարեց ձեռքը և ցույց տվեց իմ սենյակը։

— Հա, լավ,— ասաց գլուխը և չքացավ։

Հաստափորը մոտեցավ սեղանին, նստեց, բացեց մի մատյան, հանեց համրիչը ու սկսեց ետ ու առաջ գցել դրա հատերը՝ գործի դնելով ոչ թե ցուցամատը, այլ աջ ձեռքի երրորդ մատը. դա ավելի վայելուչ է։

Ներս մտավ հերթապահը։

— Ի՞նչ կասես։

— Սիդորը եկել է Գոլոպլյոկիից։

— Հըմ, կանչիր նրան։ Կաց, կաց... գնա տես, օտար բարին քնա՞ծ է, թե՞ արթնացել է։

Հերթապահը զգույշ մտավ իմ սենյակը։ Ես գլուխս դրի բարձի փոխարեն իմ օգտագործած որսապարկին ու փակեցի աչքերս։

— Քնած է,— շշնջաց հերթապահը՝ վերադառնալով գրասենյակ։

Հաստափորը քթի տակ փնթփնթաց։

— Դե կանչիր Սիդորին,— վերջապես ասաց նա։

Ես նորից քիչ բարձրացա։ Ներս մտավ շատ բարձրահասակ մի մուժիկ, մոտ երեսուն տարեկան, առողջակազմ, կարմրաթուշ, շեկ մազերով և փոքրիկ, խուճուճ մորուքով։ Նա մի քիչ աղոթեց սրբապատկերի առաջ, գլուխ տվեց գլխավոր գրասենյակային ծառայողին, երկու ձեռքով վերցրեց լայնեզր գլխարկը ու ձիգ կանգնեց։

— Բարև, Սիդոր,— ասաց հաստափորը՝ չխկչխկացնելով համրիչը։

— Բարև ձեզ, Նիկոլայ Երեմեիչ։

— Է, ի՞նչ կա, ինչպես է ճանապարհը։

— Լավ է, Նիկոլայ Երեմեիչ։ Մի քիչ ցեխոտ է։ (Մուժիկը խոսում էր դանդաղ ու ցածրաձայն)։

— Կինդ առո՞ղջ է։

— Առողջ է։

Մուժիկը շունչ առավ և մի ոտքը առաջ դրեց։ Նիկոլայ Երեմեիչը փետրագրիչը դրեց ականջի ետևը ու քիթը մաքրեց։

— Է, ինչի՞ համար ես եկել,— շարունակեց նա իր հարցերը՝ վանդակավոր թաշկինակը դնելով գրպանը։

— Լսիր, Նիկոլայ Երեմեիչ, մեզնից ատաղձագործներ են պահանջում։

— Էհ, ի՞նչ կա որ, չկա՞ն ձեզ մոտ։

— Ինչպե՞ս չկան, Նիկոլայ Երեմեիչ. ամառանոցը անտառն է, հայտնի բան է։ Միայն թե աշխատանքի ժամանակ է, Նիկոլայ Երեմեիչ։

— Աշխատանքի ժամանակ է։ Բանը հենց այն է, որ դուք տիրում եք աշխատել ուրիշների համար և ոչ թե ձեր տիրուհու համար։ Ձեզ համար դա միևնույն է։

— Ճիշտ է, միևնույն է, Նիկոլայ Երեմեիչ... միայն թե...

— Ի՞նչ։

— Վարձը շատ քիչ է...

— Իբր թե քիչ է։ Այ թե ինչպես եք երես առել։

— Այն էլ ասեմ, Նիկոլայ Երեմեիչ, ընդամենը մի շաբաթվա աշխատանք կլինի, բայց մի ամիս կպահեն։ Մեկ էլ տեսար նյութեղենը պակասեց, մեկ էլ տեսար ուղարկեցին այգի, ճամփաները մաքրելու։

— Դե ի՞նչ արած։ Տիրուհին ինքն է բարեհաճել հրաման տալ, ես ու դու ի՞նչ կարող ենք ասել։

Սիդորը լռեց ու սկսեց կոթնել մի ոտքից մյուսին։

Նիկոլայ Երեմեիչը թեքեց գլուխը ու շարունակեց արագ-արագ չխկչխկացնել համրիչը։

— Մեր... մուժիկները... Նիկոլայ Երեմեիչ...— վերջապես խոսեց Սիդորը՝ կմկմալով յուրաքանչյուր բառի վրա,— հրամայել են սա... տալ... ձերդ ողորմածությանը... (Նա իր ահագին ձեռքը տարավ կապայի ծոցը և սկսեց այնտեղից դուրս քաշել ծալված, կարմիր նախշերով մի երեսսրբիչ)։

— Ի՞նչ ես անում, ի՞նչ, հիմար, գժվե՞լ ես, ինչ է,— հապճեպորեն ընդհատեց նրան հաստափորը,— գնա, գնա իմ խրճիթը,— շարունակեց նա՝ գրեթե դեպի դուրս հրելով ապշած մուժիկին։— Այնտեղ հարցրու կնոջս... նա քեզ թեյ կտա, ես հիմա կգամ, դե գնա։ Դե ասում եմ գնա, էլի։

Սիդորը դուրս եկավ։

— Այ քեզ արջ...— նրա ետևից փնթփնթաց գլխավոր դրասենյակային ծառայողը, օրորեց գլուխը ու նորից սկսեց չխկչխկացնել համրիչը։

Հանկարծ փողոցից և մուտքի սանդուղքից լսվեցին բղավոցներ՝ «Ահա Կուպրիան, Կուպրիան, Կուպրիային գետին չես

գցիր», ու մի քիչ հետո դրասենյակ մտավ ցածրահասակ, հյուծված մի մարդ՝ չափազանց երկար քթով, խոշոր, անշարժ աչքերով և խիստ հպարտ կեցվածքով։ Նա հագել էր հին, պատառոտված սերթուկ, ադելաիդի կամ ինչպես մեզ մոտ ասում են՝ օդելլոիդի գույնի, պլիսե օձիքով և մանրիկ կոճակներով։ Նա շալակով բերել էր մի կապ վառելափայտ։ Նրա մոտ խմբվել էին հինգ հոգի սպասավորներ, ու բոլորը բղավում էին՝ «Կուպրիան, Կուպրիային գետին չես գցի։ Կուպրիային վառարան վառող են դարձրել, վառարան վառող»։ Բայց սերթուկով ու պլիսե օձիքով մարդը ոչ մի ուշադրություն չէր դարձնում իր ընկերների վայրագության վրա և իր դեմքի արտահայտությունը բոլորովին չփոխվեց։ Չափածո քայլերով նա մոտեցավ վառարանին, վար դրեց իր բեռը, շտկվեց, ետևի գրպանից հանեց քթախոտի տուփը, չռեց աչքերը և սկսեց քիթը քաշել մանրած մոխրի հետ խառնած իշավույտը։

Աղմկարար խմբի ներս մտնելու պահին հաստափորը կիտեց հոնքերը ու տեղից վեր կացավ, բայց տեսնելով, թե ինչումն է բանը, ժպտաց և միայն հրամայեց չբղավել, ասելով, որ հարևան սենյակում մի որսորդ է քնած։

— Ի՞նչ որսորդ է,— միաժամանակ հարցրին երկու մարդ։

— Կալվածատեր է։

— Հը՛մ։

— Թող աղմկեն,— ձեռքերը տարածելով ասաց պլիսե օձիքով մարդը,— ի՞նձ ինչ, միայն թե ինձ չկպչեն։ Ինձ վառարան վառող են դարձրել...

— Հա՛, հա՛, վառարան վառող,— ուրախ վրա բերեց խումբը։

— Տիրուհին էր հրամայել,— ուսերը թոթվելով շարունակեց նա։— Իսկ դուք դեռ սպասեք... ձեզ խոզարած էլ կդարձնեն։ Իսկ որ ես դերձակ եմ, լավ դերձակ, որ Մոսկվայում ամենալավ դերձակների մոտ եմ սովորել և գեներալների հագուստ եմ կարել... դա ինձանից ոչ ոք չի խլի։ Իսկ դուք ի՞նչ եք հոխորտում, ի՞նչ։ Կալվածատիրոջ իշխանությունից ազատվե՞լ եք, թե՞ ինչ։ Դուք ձրիակերներ, մակաբույծներ եք, ուրիշ ոչինչ։ Թե որ ինձ ազատ թողնեն, ես անոթի չեմ մեռնի, չեմ կորչի. տուր ինձ անձնագիր, ու ես լավ բահրա կմուծեմ, կբա-

վարարեմ աղաներին։ Իսկ դուք ի՞նչ եք որ, կկորչեք, ճանճերի պես կկոտորվեք, պրծավ-գնաց։

— Այ թե ոնց դուրս տվիր,— ընդհատեց նրան պեպենոտ ու բաց շիկահեր մի երիտասարդ՝ կարմիր փողկապով ու պատառոտված արմունկներով,— դու անձնագիր էլ ես ունեցել, բայց տղաները քեզնից մի կոպեկի էլ բահրա չեն տեսել, ու մի գրոշ էլ քեզ համար չես վաստակել. ոտքերդ զոռով քարշ տվիր տուն, ու այն ժամանակներից հագիդ հենց մի կապա է լինում։

— Դե ի՞նչ կարող ես անել, Կոստանդին Նարկիզիչ,— առարկեց Կուպրիանը,— մարդը սիրահարվեց ու կորավ, հոդը ն եկավ գլխին։ Դու նախ ինձ պես ապրիր, հետո նախատիր ինձ։

— Եվ ո՞ւմ վրա սիրահարվեցիր,— մի այլանդակ արարածի վրա։

— Ոչ, դու այդ մի ասա, Կոստանդին Նարկիզիչ։

— Ո՞ւմ ես համոզում, չէ՞ որ ես նրան տեսել եմ. անցյալ տարի Մոսկվայում իմ աչքերով եմ տեսել։

— Անցյալ տարի իսկապես որ նա մի քիչ փչացել էր,— պատասխանեց Կուպրիանը։

— Ո՛չ, պարոններ, այդ թողնենք,— արհամարհական ու անփույթ ձայնով ասաց բարձրահասակ, նիհար մի մարդ, որը պզուկոտ դեմքով էր, գանգրացրած ու յուղած մազերով, երևի անձնական սպասավորն էր,— թող Կուպրիան Աֆանասևիչը մեզ համար մի երգ երգի։ Հապա, սկսեք, Կուպրիան Աֆանասևիչ։

— Այո՛, այո՛,— վրա բերին մյուսները,— Հա, էլի, Ալեքսանդրան օյին խաղաց Կուպրիանի գլխին, ինչ ասել կուզի... Երգիր, Կուպրիա... (կալվածատան սպասավորները խոսելով տղամարդու մասին, քնքշության համար հաճախ իգական վերջավորություններ են գործածում)։— Դե, երգի՛ր։

— Այստեղ երգելու տեղ չէ,— կտրուկ առարկեց Կուպրիանը,— սա կալվածատան գրասենյակ է։

— Լավ, քեզ ի՞նչ, երևի ուզում ես գրասենյակային ծառայող դառնալ, հա՞,— կոպիտ ծիծաղելով պատասխանեց Կոստանդինը։

— Ամեն բան կալվածատան իշխանությունից է կախված,— ասաց Կուպրիանը։

— Տես, թե որտեղից բռնեց, ինչպիսին է, օ՜, օ՜, օ՜։

Ու բոլորը քրքջացին. ոմանք քրքջալիս ցնցվում էին։ Բոլորից բարձր ծիծաղում էր մոտ տասնհինգ տարեկան մի տղա, հավանորեն սպասավորների միջավայրում եղած արիստոկրատի որդի. նրա հագին կար բրոնզե կոճակներով բաճկոնակ, բաց կապույտ փողկապ, ու փորը արդեն սկսել էր հաստանալ։

— Լսիր, Կուպրիա,— ինքնագոհ ասաց Նիկոլայ Երեմեիչը, որը ըստ երևույթին ուրախ ու թեթև տրամադրության մեջ էր,— խոստովանիր, չէ՞ որ վառարանի վառող լինելը լավ չէ, բոլորովին դատարկ գործ է։

— Ի՞նչ կա որ, Նիկոլայ Երեմեիչ,— պատասխանեց Կուպրիանը,— հիմա դո՛ւք մեզ մոտ գլխավոր գրասենյակային ծառայող եք, այդ ճիշտ է, վիճելու բան չէ. բայց հո դուք էլ աշքից ընկած եք եղել ու նույնպես մուժիկական խրճիթում եք ապրել։

— Տես, հա՜-ա՜, շափը մի անցկացնի,— տաքանալով նրան ընդհատեց հաստափորը,— քեզ հետ կատակ են անում. դու պետք է այդ զգայիր ու շնորհակալ լիներիր, որ զբաղվում են քեզնով։

— Խոսքը տեղն եկավ, Նիկոլայ Երեմեիչ, ներեցեք...

— Հա, էլի խոսքը տեղն եկավ։

Դուռը բացվեց ու ներս վազեց կազակին հագած մի դեռահաս ծառա։

— Նիկոլայ Երեմեիչ, տիրուհին կանչում է ձեզ։

— Ո՞վ կա տիրուհու մոտ,— հարցրեց հաստափորը։

— Ակսինյա Նիկիտիչնան և Վենյովից եկած վաճառականը։

— Այս րոպեիս կգնամ։ Իսկ դուք, ախպեր տղերք,— շարունակեց նա համոզիչ ձայնով,— ավելի լավ է այստեղից հեռացեք նորընծա վառարանապանի հետ. մեկ էլ տեսար վրա հասավ գերմանացին ու գնաց գանգատվեց։

Հաստափորը շտկեց մազերը, հազաց ձեռքի մեջ, որ համարյա բոլորովին ծածկված էր սերթուկի թևքով, կոճկվեց ու գնաց տիրուհու մոտ՝ քայլելիս լայն-լայն դնելով ոտքերը։

Քիչ հետո նրա ետևից Կուպրիայի հետ գնաց նաև ամբողջ խումբը։ Մնաց միայն իմ հին ծանոթը՝ հերթապահը։ Նա փորձեց նորոգել փեներագրիչները, բայց հենց նստած տեղում քնեց։ Մի քանի ճանճեր իսկույն օգտվեցին հարմար առիթից ու նստեցին նրա բերանի շուրջը։ Մի մոծակ իջավ նրա ճակատին, կանոնավոր շռեց ոտքերը և իր ամբողջ խայթոցը խոթեց փափուկ մարմնի մեջ։ Առաջվա շիկահեր և այտամորուքով գլուխը նորից երևաց դռան ետևից, նայեց ու իր բավական տգեղ իրանի հետ մտավ գրասենյակ։

— Ֆեդյուշկա, այ Ֆեդյուշկա, շարունակ քնում ես,— ասաց գլուխը։

Հերթապահը բացեց աչքերը ու վեր կացավ աթոռից։

— Նիկոլայ Երեմեիչը տիրուհու մո՞տ գնաց։

— Տիրուհու մոտ գնաց, Վասիլի Նիկոլաևիչ։

«Հըմ,— մտածեցի ես,— ահա նա, գլխավոր գանձապահը»։

Գլխավոր գանձապահը սկսեց քայլել սենյակում։ Ասենք նա ավելի շատ գաղտագողի շարժումներ էր անում, քան քայլում, և, առհասարակ, կատվի էր նմանվում։ Նրա ուսերի վրա երերվում էր հին, սև, խիստ նեղ փեշերով ֆրակը։ Նա մի ձեռքը դրել էր կրծքին, իսկ մյուսով անդադար շոշափում էր ձիու մազից պատրաստած իր երկար ու նեղ փողկապը ու լարված տմբտմբացնում էր գլուխը։ Սապոգները այծի մորթուց էին, առանց ճռճռոցի, և նա խիստ փափուկ էր փոխում քայլերը։

— Այսօր կալվածատեր Ցագուշկինը ձեզ էր հարցնում,— ասաց հերթապահը։

— Հըմ, հարցնո՞ւմ էր։ Ի՞նչ էր ասում։

— Ասում էր, թե երեկոյան գնալու է Տյուտյուրևի մոտ ու սպասելու է ձեզ, թե հարկավոր է Վասիլի Նիկոլաևիչի հետ խոսել մի գործի մասին, իսկ թե ինչ գործի, նա չասաց, ավելացնելով, թե Վասիլի Նիկոլաևիչը այդ գիտե։

— Հը՞մ,— ասաց գլխավոր գանձապահը և մոտեցավ պատուհանին։

— Նիկոլայ Երեմեիչը գրասենյակո՞ւմ է,— նախասենյակից լսվեց մի բարձր ձայն, ու բարձրահասակ, ըստ երևույթին բարկացած մի մարդ շեմքից ներս մտավ։ Նա անիանոն,

բայց արտահայտիչ ու համարձակ դեմքով էր և բավական մաքուր էր հագնված։

— Նա այստեղ չէ՞,— հարցրեց եկվորը՝ արագ նայելով շուրջը։

— Նիկոլայ Երեմեիչը տիրուհու մոտ է,— պատասխանեց գանձապահը։— Ի՞նչ եք ուզում, ասացեք ինձ, Պավել Անդրեիչ, գուցե կարող եք ասել ինձ... ի՞նչ եք ուզում։

— Ի՞նչ եմ ուզում։ Դուք ուզում եք գիտենալ, թե ես ինչ եմ ուզո՞ւմ։ (Գանձապահը հաղիվ գլխով արեց)։ Ես ուզում եմ խելքի բերել նրան, անպետք հաստափորին, ստոր զբաղարտչին... Ես նրան ցույց կտամ զրպարտել։

Պավելը ընկավ աթոռին։

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, Պավել Անդրեիչ։ Հանգստացեք... Ինչպե՞ս չեք ամաչում։ Դուք մի մոռանաք, թե ում մասին եք խոսում, Պավել Անդրեիչ,— թոթովում էր գանձապահը։

— Ում մասի՞ն։ Իմ ի՞նչ գործն է, որ նրան գլխավոր գրասենյակային ծառայող են կարգել։ Հըմ, ինչ ասել կուզի, դրա համար է՛լ ուրիշ մարդ չկար։ Այստեղ է ասված, որ այծին բանջարանոց են թողել։

— Բավական է, բավական է, Պավել Անդրեիչ, բավական է, թողեք այդ... դրանք դատարկ բաներ են։

— Հըմ, աղվեսը գնացել է պոչը խաղացնելու... Ես կսպասեմ նրան,— ցասկոտ ասաց Պավելը ու ձեռքը խփեց սեղանին։— Օ, ահա նա գալիս է,— ավելացրեց Պավելը՝ նայելով պատուհանին,— անունը տուր, սուփրեն գցի։ Համեցե՛ք։ (Պավելը վեր կացավ)։

Նիկոլայ Երեմեիչը մտավ գրասենյակ։ Նրա դեմքը ուրախությունից փայլում էր, բայց Պավելին տեսնելիս նա մի փոքր շփոթվեց։

— Բարև ձեզ, Նիկոլայ Երեմեիչ,— նշանակալից ասաց Պավելը՝ գանդաղ մոտենալով նրան,— բարև ձեզ։

Գլխավոր գրասենյակային ծառայողը ոչինչ չպատասխանեց։ Դռնից երևաց վաճառականի դեմքը։

— Ինչո՞ւ չեք բարեհաճում ինձ պատասխանել,— շարունակեց Պավելը։— Ասենք՝ ոչ... ոչ,— ավելացրեց նա,— այսպես չպետք է վարվել։ Բղավելուց և հայհոյելուց բան չի դուրս

գա։ Ոչ, ավելի լավ է դուք ինձ հանգիստ ասացեք, ինչո՞ւ եք ուզում կործանել։ Դեհ, ասացեք, ասացեք։

— Այստեղ ձեզ հետ բացատրվելու տեղ չէ,— ոչ առանց հուզմունքի առարկեց գլխավոր գրասենյակային ծառայողը,— և հետո, դրա ժամանակը չէ։ Միայն թե, ճիշտն ասած, ես զարմանում եմ. որտեղի՞ց վերցրիք, թե ես ցանկանում եմ ձեզ կործանել կամ հալածում եմ։ Եվ վերջապես, ես ինչպե՞ս կարող եմ ձեզ հալածել։ Դուք ինձ մոտ, գրասենյակում չեք աշխատում։

— Չէ՛ մի, այդ էր պակաս,— պատասխանեց Պավելը,— բայց դուք ինչո՞ւ եք կեղծում, Նիկոլայ Երեմեիչ... Չէ՞ որ դուք ինձ հասկանում եք։

— Ո՛չ, չեմ հասկանում։

— Ո՛չ, հասկանում եք։

— Ո՛չ, աստված վկա, չեմ հասկանում։

— Դեռ երդվում էլ եք։ Որ այդպես է, ավելի լավ է ասեք, որ չեք վախենում աստծուց։ Ինչո՞ւ հանգիստ չեք թողնում խեղճ աղջկան։ Ի՞նչ եք ուզում նրանից։

— Դուք ո՞ւմ մասին եք խոսում, Պավել Անդրեիչ,— կեղծ զարմանքով հարցրեց հաստափորը։

— Այ քեզ բան։ Չգիտե՞ք, ինչ է, ես Տատյանայի մասին եմ խոսում։ Վախեցեք աստծուց, ինչի՞ համար եք վրեժ առնում։ Ամաչեցեք, դուք ամուսնացած մարդ եք, ձեր երեխաները հասակով արդեն իմ չափ կլինեն, իսկ ես... ես ամուսնանալ եմ ուզում. ես ազնվաբար եմ վարվում։

— Այստեղ ես ինչո՞վ եմ մեղավոր, Պավել Անդրեիչ։ Տիրուհին ձեզ թույլ չի տալիս ամուսնանալ, նրա տիրական կամքն է։ Այստեղ ես ինչացո՞ւ եմ։

— Դո՞ւք եք ինչացու, դուք չե՞ք, որ թաքուն համաձայնության եք եկել այն պառավ ջադուի, մառանապետուհու հետ։ Դուք չե՞ք, որ բամբասանքներով եք զբաղվում, հը՞։ Ասացեք, դուք չե՞ք, որ ամեն տեսակ չեղած բաներ եք բարդում անպաշտպան աղջկա վրա։ Ձեր մեղքով չէ՞ր, որ նրան հանեցին լվացարարուհու գործից և ման լվացող դարձրին։ Ձեր մեղքով չէ՞, որ նրան ծեծում են, հալածում... Ամաչեցեք, ամաչեցեք, դուք ծեր մարդ եք։ Մեկ էլ տեսար կաթվա՞ծ ահար եղաք... Պետք է պատասխան տաք աստծուն։

— Հայհոյեցեք, Պավել Անդրեիչ, հայհոյեցեք... Երկար չի՞ տևի ձեր հայհոյանքը։

Պավելը ցասկոտեց։

— Ի՞նչ, սպառնո՞ւմ ես ինձ,— զայրույթով ասաց նա.— Դու կարծում ես, թե ես վախենո՞ւմ եմ քեզնից։ Ո՛չ, աղբերացու, ես քո գիտեցածը չեմ, ինչի՞ց պիտի վախենամ... Ես ամեն տեղ էլ ինձ համար հաց կգտնեմ։ Իսկ քո բանը ուրիշ է. դու միայն ա՛յստեղ կարող ես ապրել, բամբասել, գողանալ...

— Տես թե ոնց է գոռոզացել,— նրան ընդհատեց գլխավոր գրասենյակային ծառայողը, որը նույնպես սկսում էր կորցնել համբերությունը։— Բուժակ է, էլի, հենց միայն բուժակ, հեքիմի մեկը, բայց այնպես է խոսում, որ կարծես թե կարևոր անձնավորություն լինի։

— Այո՛, բուժակ եմ, իսկ առանց բուժակի ձերդ ողորմածությունը հիմա գերեզմանոցում փտած կլիներ... Սատանությունը հիմա գերեզմանոցում փտած կլիներ... Սատանան ինձ դրդեց բուժել սրան,— քթի տակ փնթփնթաց Պավելը։

— Դո՞ւ ինձ բուժեցիր... Ոչ, դու ուզում էիր թունավորել ինձ. դու ինձ հալվեի հյութ խմեցրիր,— վրա բերեց գրասենյակային ծառայողը։

— Ի՞նչ արած, եթե քեզ վրա բացի հալվեի հյութից, ուրիշ ոչինչ չէր կարող ազդել։

— Հալվեի հյութը արգելված է բժշկական վարչության կողմից,— ասաց Նիկոլայը։— Ես դեռ գանգատվելու եմ քո դեմ... Դու ուզում էիր ինձ ուժասպառ անել, այ թե ինչ։ Բայց տերը թույլ չտվեց։

— Բավական է, պարոններ, բավական է,— փորձեց միջամտել գանձապահը։

— Թող,— բղավեց գրասենյակային ծառայողը,— նա ուզում էր թունավորել ինձ, դու սա հասկանո՞ւմ ես։

— Շատ պետքս էր... Լսի՛ր, Նիկոլայ Երեմեիչ,— հուսալքված ասաց Պավելը,— վերջին անգամ եմ խնդրում քեզ... դու ինձ ստիպեցիր այսպես վարվել, համբերությունս սպառվում է։ Մեզ հանգիստ թող, հասկանո՞ւմ ես, թե չէ մեզնից մեկի բանը վատ կլինի, լավ իմացիր։

Հաստափորը չարացավ։

— Ես քեզնից չեմ վախենում, լսո՞ւմ ես, համբակի մեկը,— գոռաց նա։— Ես քո հոր հախին էլ եմ եկել, ես նրա պոզերն էլ եմ ջարդել, տե՛ս, թող սա քեզ խրատ լինի։

— Ինձ մի հիշեցրու հորս մասին, Ալեքսեյ Երեմեիչ, մի՛ հիշեցրու։

— Դու գլխիս կարգադի՞ր ես, ինչ է։

— Քեզ ասում են՝ մի՛ հիշեցրու։

— Իսկ քեզ ասում են՝ չափը մի կորցնի... Դու կարծում ես, թե շա՜տ ես հարկավոր տիրուհուն, բայց եթե նա ընտրելու լինի երկուսիցս մեկին, դու քո տեղում չես մնա, աղավնյակս։ Ոչ ոքի չի թույլատրվում բունտ անել, լավ իմացիր։ (Պավելը դողում էր կատաղությունից)։ Իսկ այն աղջկան, Տատյանային, նեղելը տեղին է... Դու դեռ կաց, նրան ավելի վատ բան է սպասում։

Պավելը բարձրացրած ձեռքերով առաջ նետվեց, ու գրասենյակային ծառայողը ծանր փռվեց գետնին։

— Շղթայել դրան, շղթայել,— տնքալով ասաց Նիկոլայ Երեմեևը։

Ես հանձն չեմ առնում նկարագրել այս տեսարանի վերջավորությունը. ես առանց այդ էլ վախենում եմ, թե արդյոք չե՞մ փիրավորել ընթերցողի զգացմունքները։

Նույն օրը ես տուն վերադարձա։ Մի շաբաթ անց ես իմացա, որ տիկին Լոսնյակովան թե՛ Պավելին և թե՛ Նիկոլային թողել էր իր մոտ ծառայելու, իսկ աղջկան, Տատյանային, աքսորել էր. երևի նա այլևս հարկավոր չէր։

1847

ԲԻՐՅՈՒԿ

Երեկոյան մեն-մենակ եռանդակով վերադառնում էի որսից։ Մինչև տուն դեռ ութ վերստ կար։ Իմ լավ մատակ ձին աշխույժ վազում էր փոշոտ ճամփով, երբեմն փնչացնելով ու ականջները շարժելով։ Հոգնած շունս, կարծես կապված, ոչ մի քայլ ետ չէր մնում ետին անիվներից։ Փոթորիկ էր պատրաստվում։ Առջևս՝ մի ահագին մանիշակագույն ամպ դանդաղորեն բարձրանում էր անտառի ետևից։ Գլխավերևիցս անցնում և դեռևս էին գալիս երկարավուն, մոխրագույն ամպեր. թփերն ահով օրորվում էին ու սվսվում։ Հեղձուցիչ օդը փոխվեց հանկարծ խոնավ սառնության. ստվերները թանձրանում էին։ Երասանակը խփեցի ձիուն. իջա ձորը. անցա ցամաքած գետը, որի շուրջն աճել էին ուռենու թփեր, բարձրացա սարը և մտա անտառ։ Ճանապարհը գնում էր տխլի խիտ թփուտների միջով, ուր արդեն տիրում էր մութը. առաջի գնում դժվարությամբ։ Եռանդակը թռչկոտում էր հարյուրամյա կաղնիների և լորենիների պինդ արմատների վրայից, որոնք կտրում էին ճամփան։ Ուժեղ քամին հանկարծ դնդաց վերևում, ծառերն ալեկոծվեցին. անձրևի խոշոր կաթիլները զարկեցին, թակեցին տերևներին, կայծակը փայլատակեց, և փոթորիկն սկսվեց։ Վարար անձրև թափվեց։ Ես ձին քշեցի քայլով ու շուտով ստիպված եղա կանգ առնել. ձիս խրվեց ցեխի մեջ, իսկ ես առջևս բան չէի տեսնում։ Մի կերպ ապաստանեցի մի մեծ թփի տակ։ Կուչ եկած և երեսս ծածկած՝ համբերությամբ սպասում էի անձրևի կտրվելուն, երբ հանկարծ, կայծակի փայլով, աչքիս մի կերպարանք երևաց ճամփի վրա։ Սկսեցի ուշադիր նայել այն կողմը՝ նույն կերպարանքը կարծես գետնից դուրս եկավ. կանգնեց եռանդակիս մոտ։

— Ո՞վ է,— հարցրեց մի հնչեղ ձայն։

— Իսկ դո՞ւ ով ես։

— Ես էստեղի անտառապահն եմ։

Ես անունս տվի։

— Հա՜, ճանաչում եմ. տո՞ւն եք գնում։

— Այո։ Բայց տեսնո՞ւմ ես՝ ինչ փոթորիկ է...

— Այո, փոթորիկ է,— պատասխանեց ձայնը։

Սպիտակ փայլակը ոտից գլուխ լուսավորեց անտառապահին. դրան իսկույն հետևեց կայծակի շառաչյուն ու կարճ հարված։ Անձրևը կրկնապատկվեց։

— Շուտ չի կտրի,— շարունակեց անտառապահը։

— Ի՞նչ անենք հիմա։

— Ես ձեզ իմ խրճիթը կտանեմ,— ասաց նա։

— Բարի եղիր։

— Համեցեք նստեք։

Նա մոտեցավ ձիու գլխին, սանձը բռնեց ու քաշեց։ Ճանապարհ ընկանք։ Ես բռնեցի եռանդակի բարձը, որ օրորվում էր «ինչպես նավակը ծովում», ու ձայն տվի շանս։ Եղեգ մագյանս ծանր-ծանր ոտները խփում էր ցեխին, սահում, գայթում. անտառապահը լծափայտերի առաջ օրորվում էր աջ ու ձախ, կարծես ուրվական։ Գնացինք բավականին երկար տեղ. վերջապես, առաջնորդս կանգ առավ։ «Ըհը, տուն հասանք, աղա»,— ասաց նա հանգիստ ձայնով։ Բակի դուռը ճռնչաց, մի քանի շան լակոտներ հաչեցին միասին։ Ես գլուխս բարձրացրի և, փայլակի լույսով տեսա ընդարձակ բակի մեջտեղը մի փոքրիկ խրճիթ. բակը շրջապատված էր ցանկապատով։ Լուսամուտներից մեկում աղոտ լույս էր փայլում։ Անտառապահը ձին տարավ մինչև տան սանդուղքները և դուռը ծեծեց։— «Իսկույն, իսկույն»,— լսվեց մի բարակ ձայն, դրան հետևեց բոբիկ ոտների թփթփոց — փակը ճռնչաց, և տասներկու տարեկան մի աղջիկ՝ կարճ շապիկ հագած, լապտերը ձեռին երևաց շեմքում։

— Աղային լուս արա,— ասաց անտառապահը նրան,— իսկ ես ձեր եռանդակը ծածկի տակ կքաշեմ։

Աղջիկը նայեց ինձ ու մտավ խրճիթ։ Ես հետևեցի նրան։

Անտառապահի խրճիթը բաղկացած էր մի սենյակից՝ մրոտած, ցածրիկ ու դատարկ։ Մի պատռտված մուշտակ կախված էր պատից։ Նստարանի վրա ընկած էր միփողանի հրացան, անկյունում թափված էին փալասներ, երկու մեծ պուտուկ դրված էին փեչի կողքին։ Սեղանի վրա վառվում էր մարիկը, որի լույսը մերթ բարձրանում էր, մերթ իջնում հանգչելու չափ։ Սենյակի ուղիղ մեջտեղը կախված էր երեխայի ճոճը, որ կապված էր մի երկար ձողի ծայրի։ Փոքրիկ աղջիկը լապտերը հանգցրեց, նստեց մի փոքրիկ աթոռի վրա և սկսեց աջ ձեռով ճոճն օրորել, ձախով մարիկը շտկել։ Նայեցի շուրջս՝ սիրտս ճմլվեց, տխուր բան է գիշերը գյուղացու խրճիթ մտնելը։ Երեխան ճոճում շնչում էր ծանր ու արագ։

— Դու այստեղ մենա՞կ ես,— հարցրի աղջկան։

— Մենակ եմ,— պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով։

— Դու անտառապահի աղջի՞կն ես։

— Այո,— շշնջաց նա։

Դուռը ճռնչաց և անտառապահը, գլուխը կռացնելով, լոք տվեց շեմքից ներս։ Նա լապտերը վերցրեց հատակից, մոտեցավ սեղանին ու վառեց։

— Ո՞վ գիտի, մարիկն սովոր չեք,— ասաց նա ու գլուխը թափ տվեց։

Նայեցի նրան։ Այդպիսի կորովի մարդ շատ քիչ էի տեսել։ Նա բարձրահասակ էր, թիկնեղ և փառավոր կազմվածքի տեր։ Թաց շապկի տակից երևում էին ուժեղ մկանները։ Սև, խուճուճ մորուքը կիսով չափ ծածկում էր նրա մռայլ ու առնական դեմքը, իրար կպած լայն հոնքերի տակից համարձակ նայում էին փոքրիկ, թուխ աչքերը։ Նա ձեռքը թեթևակի կանթեց մեջքին ու կանգնեց առջևս։

— Ես շնորհակալություն հայտնեցի նրան և հարցրի անունը։

— Ինձ Ֆոմա են ասում,— պատասխանեց նա.— իսկ ավելի անունս Բիրյուկ[1] է։

— Ա, Բիրյուկը դո՞ւ ես։

Ես կրկնապատիկ հետաքրքրությամբ նայեցի նրան։ Իմ որսկան Երմոլայից և ուրիշներից շատ պատմություններ էի լսել անտառապահ Բիրյուկի մասին, որից շրջակա գյուղացիները վախենում էին, ինչպես կրակից։ Նրանց ասելով աշխարհում դեռ այդպիսի՝ իր գործին հմուտ մարդ չի եղել։ «Մի շալակ ցախ չի թողնի տանեն անտառից. ինչ ժամանակ էլ լինի, թեկուզ կեսգիշեր, վրա է հասնում կարկուտի պես, և վայ նրան, ով հակառակեց. ուժեղ է, իբրև թե, ու սատանի պես ճարպիկ... Եվ ոչ մի բանով չի կարելի նրան կաշառել. ո՛չ օղիով, ո՛չ փողով. ոչ մի բան նրան չի գրավում։ Քանի անգամ մարդիկ պատրաստվել են գլուխն ուտել, բայց չի աջողվում»։

Ահա ինչպես էին խոսում հարևան գյուղացիները Բիրյուկի մասին։

— Ուրեմն դու Բիրյո՞ւկն ես,— կրկնեցի.— ես լսել եմ քո մասին։ Ասում են՝ ոչ մի մարդու չես խնայում։

---

[1] Բիրյուկ անվանում են մենակ ու մռայլ մարդուն։ Նշանակում է գայլ։

— Իմ պաշտոնն եմ կատարում,— պատասխանեց նա մռայլ.— տիրոջս հացը ձրի չեմ ուտում։

Նա կացինը հանեց գոտուց, նստեց հատակին և սկսեց մարին կտրտել։

— Կին չունե՞ս,— հարցրի նրան։

— Չէ,— պատասխանեց և կացինը վրա բերեց ուժով։

— Մեռե՞լ է, երևի։

— Չէ... հա... մեռել է,— ավելացրեց նա ու շուռ եկավ։— Փախավ մեր կողմերով անցնող քաղաքացու հետ,— արտասանեց նա դաժան ժպիտով։ Աղջիկը գլուխը կախ գցեց. երեխան զարթնեց ու ճչաց. աղջիկը մոտեցավ ճոճին։— Առ, տուր իրան,— ասաց Բիրյուկը, աղջկա ձեռը դնելով մի կեղտոտ ծծուկ։— Այ, սրան էլ թողեց,— շարունակեց նա կիսաձայն, երեխային ցույց տալով։ Քիչ հետո նա մոտեցավ դռանը, կանգ առավ ու ետ դարձավ։

— Դուք, կարծեմ, աղա,— սկսեց նա,— մեր հացը չեք ուտի, բայց ես հացից սավայ...

— Ես քաղցած չեմ։

— Դե, ինչպես գիտեք։ Սամավար կդնեի ձեզ համար, բայց թեյ չունեմ... Գնամ տեսնեմ ձեր ձին ոնց է։

Նա դուրս գնաց և դուռը ծածկեց թպպոցով։ Ես մի անգամ էլ նայեցի շուրջս։ Երեքին ինձ առաջվանից ավելի տխուր թվաց։ Սառած ծխի դառը հոտը անախորժ կերպով ճնշում էր շնչառությունս։ Աղջիկը տեղից չէր շարժվում և ոչ էլ աչքն էր բարձրացնում. երբեմն հրում էր ճոճը և ամաչելով ուսին քաշում կախ ընկած շապիկը. նրա մերկ ոտները չէին շարժվում։

— Անունդ ի՞նչ է,— հարցրի ես։

— Ուլիտա,— ասաց նա էլ ավելի քարշ գցելով իր տխուր դեմքը։

Անտառապահը եկավ ու նստեց նստարանին։

— Փոթորիկն անցնում է,— նկատեց նա մի փոքր լռությունից հետո.— եթե կուզեք՝ ես ճամփա կգցեմ ձեզ մինչև անտառի պռունկը։

Ես վեր կացա։ Բիրյուկը հրացանը վերցրեց և նայեց վառոդարանին։

— Դա ինչո՞ւ համար է,— հարցրի ես։

— Անտառում անկարգություն են անում։ Մարդյանի ձորում ծառ են կտրում,— ավելացրեց նա ի պատասխան իմ հարցական հայացքին։

— Մի՞թե այստեղից լսելի է։

— Բակից լսվում է։

Մենք միասին դուրս եկանք։ Անձրևը կտրել էր։ Հեռվում դեռ կուտակված էին ամպերի ծանր զանգվածներ, երբեմն բռնկվում էին փայլակները, բայց մեր գլխավերևն արդեն տեղ-տեղ երևում էր մութ կապույտ երկինքը, աստղերն առկայծում էին արագորեն անցնող ցանցառ ամպերի միջից։ Անձրևից թրջված և քամուց ալեկոծ ծառերի ուրվագծերը սկսեցին երևալ խավարի միջից։ Ականջ դրինք։ Անտառապահը գլխարկը վերցրեց ու գլուխը կախեց։ «Հը... հրե՛,— ասաց նա հանկարծ ու ձեռը մեկնեց,— տես, ինչ դիշեր է ընտրել»։ Ես տերևների աղմուկից բացի ոչինչ չէի լսում։ Բիրյուկը ձին դուրս քաշեց ծածկի տակից։ «Ես էսպիսով, ով գիտի,— ավելացրեց նա,— վրա չհասնեմ նրան»։ «Ես կգամ քեզ հետ... Ուզո՞ւմ ես»։ «Լավ,— պատասխանեց նա և ձին ետ ետ տանելով՝ մտցրեց ծածկի տակ,— մենք մի շնչում կբռնենք նրան, իսկ հետո ես ճամփա կգցեմ ձեզ։ Գնանք»։

Ճամփա ընկանք։ Բիրյուկն առջևից ես ետևից։ Զարմանալի էր, թե ինչպես էր նա ճամփա գտնում, բայց երբեմն միայն կանգ էր առնում, այն էլ նրա համար, որ ականջ դնի կացնի ձայնին. «Այ,— մոթմոթում էր նա ատամների արանքից,— լսո՞ւմ եք. լսո՞ւմ եք»։ «Որտե՞ղ է, է՛»։ Բիրյուկը թոթվում էր ուսերը։ Մենք իջանք ձորը, քամին կտրեց մի վայրկյան. կացնի համաչափ հարվածները պարզ հասան ականջիս։ Բիրյուկը նայեց ինձ և գլուխն օրորեց։ Մենք առաջ գնացինք թաց ձարխոտերի և եղինջների միջով։ Լսվեց մի խուլ ու երկարատև թնդյուն...

— Ծառը գցեց...— փնթփնթաց Բիրյուկը։

Մինչ այդ, երկինքը շարունակում էր մաքրվել, պարզվել. անտառը փոքր-ինչ լուսացավ։ Մենք վերջապես դուրս եկանք ձորից։ «Էստեղ սպասեք»,— շշնջաց ինձ անտառապահը, կռացավ և հրացանը դեպի վեր բարձրացնելով, չքացավ թփերի մեջ։ Ես լսողությունս լարեցի։ Քամու մշտական աղմուկի միջից, թվում էր ոչ շատ հեռվից, թույլ ձայներ եմ լսում. կացինն զգուշությամբ խփում էր ճղերին, անիվները ճռնչում

էին, ձին փնչացնում էր... «Ո՞ւր. կանգնի՛ր»,— որոտաց հանկարծ Բիրյուկի երկաթյա ձայնը։ Մյուս ձայնը հնչեց ողբագին, երկչոտ... Կռիվ սկսվեց. «Ներողությո՛ւն, ներողությո՛ւն,— կրկնում էր շնչակտուր Բիրյուկը,— ձեռիցս չեն պրծնի»... Ես նետվեցի աղմուկի կողմը և, ամեն քայլափոխիս ընկնելով, հասա կռվի վայրը։ Կտրած ծառի մոտ, գետնին, շարժվում էր անտառապահը. նա գողին դրել էր տակը և գոտիկով նրա ձեռները կապում էր ետևից։ Մոտեցա։ Բիրյուկը վեր կացավ և նրան ոտքի կանգնեցրեց։ Տեսա թրջված, ցնցոտիներով և երկար, գզգզված մորուքով մի գյուղացի։ Մի քոսոտ ձի՝ կիսով չափ շուլով ծածկված, կանգնած էր հենց այդտեղ, սայլակին լծված։ Անտառապահը չէր խոսում, գյուղացին նույնպես լուռ էր. նա միայն գլուխն էր թափ տալիս։

— Բաց թող դրան,— շշնջացի ես Բիրյուկի ականջին,— ես կվճարեմ ծառի համար։

Բիրյուկը անխոս, ձախ ձեռով բռնեց ձիու ճակատի մազերի փունջը, աջը գցեց գողի գոտուն։ «Դե, շուռ արի, ավարա։

— «Կացինը հրեն, վերցրու»,— մոթմոթաց գյուղացին։ «Չի կորչի»,— ասաց անտառապահն ու կացինը բարձրացրեց։ Մենք ճամփա ընկանք։ Ես գնում էի նրանց ետևից... Անձրևը նորից սկսեց կաթկթել և շուտով թափվեց հեղեղի պես։ Դժվարությամբ տուն հասանք։ Բիրյուկը բռնած ձին բաց թողեց բակի մեջտեղը, գյուղացուն տարավ սենյակ, ձեռի կապերը թուլացրեց ու նստեցրեց անկյունում։ Փոքրիկ աղջիկը, որ կարծես քնել էր փեշի մոտ, վեր թռավ և անխոս երկյուղով նայեց մեզ։ Ես տեղավորվեցի նստարանի վրա։

— Տեսար, անձրևն էլի սկսվեց,— նկատեց անտառապահը,— պտի սպասել։ Չե՞ք ուզում պառկել։

— Շնորհակալ եմ։

— Ես սրան, ձեր խաթեր համար, մառանում կփակեի,— շարունակեց նա, ցույց տալով գյուղացուն.— բայց փակը...

— Թող մնա այստեղ, ձեռ մի տա,— ընդհատեցի նրան։

Գյուղացին հոնքերի տակից նայեց ինձ։ Ես մտքումս խոսք տվի ինձ, ինչ էլ լինի, ազատել խեղճին։ Նա անշարժ նստել էր աթոռին։ Լապտերի լույսով կարողացա տեսնել նրա ցամաք, կնճռապատ դեմքը, կախ ընկած դեղնավուն հոնքերը, անհանգիստ աչքերը և մարմնի նիհար անդամները... Փոքրիկ աղ-

ջիկը պառկեց հատակին՝ նրա ոտների մոտ և նորից քնեց։ Բիրյուկը նստել էր սեղանի մոտ՝ գլուխը ձեռին հենած։ Ծղրիդը ճռճռում էր անկյունում... անձրևը ծեծում էր տանիքը և իջնում լուսամուտներից. մենք բոլորս լուռ էինք։

— Ֆոմա Կուզմիչ,— խոսեց հանկարծ գյուղացին խուլ ու ընկճված ձայնով.— այ Ֆոմա Կուզմիչ։

— Ի՞նչ ես ուզում։

— Բաց թող։

Բիրյուկը չպատասխանեց։

— Բաց թող... չքավոր մարդ եմ... բաց թող։

— Ճանաչում եմ ձեզ,— մռայլ վրա բերեց Բիրյուկը,— ձեր սաղ գեղն էդպես է, բոլորդ գող եք։

— Բաց թող,— կրկնեց գյուղացին,— աղքատ, օրվա հացի կարոտ ենք... բաց թող։

— Աղքատ եք... Ոչ ով գողություն անելու իրավունք չունի։

— Բաց թող, Ֆոմա Կուզմիչ... մեղք եմ։ Ձեր կառավարիչը, ինքդ գիտես, հոգիս կհանի։

Բիրյուկը ետ դարձավ։ Գյուղացին դողում էր, տենդը կարծես ցնցում էր նրան։ Նա գլուխը թափահարում էր և ծանր շնչում։

— Բա՛ց թող,— կրկնեց նա հուսահատությամբ,— բաց թող։ ասուված վկա, ինչ արժի կտամ։ Աստված վկա, աղքատությունից եմ արել... երեխեքս սոված են, ինքդ գիտես։ Դժվար եմ ապրում։

— Բայց գողություն մի անի։

— Գոնյա ձիուս,— շարունակեց գյուղացին,— ձիուս բաց թող... նրանով ենք ապրում... բաց թող։

— Ասում են՝ չի կարելի։ Ես էլ ծառա մարդ եմ. ինձանից կպահանջեն։ Ձեզպեսներին չպետք է երես տալ։

— Բաց թող։ Կարիքն ստիպեց, Ֆոմա Կուզմիչ, կարիքը, բաց թող։

— Գիտեմ ձեզ, գիտեմ։

— Դե բաց թող։

— Դե, հանգիստ նստի, թե չէ, հո գիտե՞ս։ Աղային չե՞ս տեսնում, ինչ է։

Խեղճը գլուխը կախեց... Բիրյուկը հորանջեց ու գլուխը

դրեց սեղանին։ Անձրևը դեռ չէր կտրում։ Սպասում էի տեսնեմ, ինչ է լինելու։

Գյուղացին հանկարծ ուղղվեց։ Նրա աչքերը բոցավառվեցին, և դեմքին կարմրություն երևաց։ «Դե առ, կեր, խեղդվի, առ»,— սկսեց նա, աչքերը կուչ ածելով և շրթունքների ծայրերն փչեցրած,— առ, անիծյալ հոգեհան, խմիր քրիստոնյայի արյունը, խմի՛ր»...

Անտառապահը շուռ եկավ։

— Քեզ եմ ասում, քեզ, անխիղճ արնախում, քեզ։

— Հարբա՞ծ ես, ինչ է, որ ուշունց ես տալիս,— խոսեց անտառապահը զարմացած։— Խելքդ ե՞տ ես տվել, ինչ է։

— Հարբած... չըլի քու փողով եմ հարբել, անիծյալ հոգեհան, գաղա՛ն, գաղա՛ն, գաղա՛ն։

— Հա՛յ, դու... ես քե՛զ...

— Ինձ համար մին ա, կորչելու եմ. ո՞ւր գնամ առանց ձիու։ Խփի՛ր, միանգամից վերջացրու. սովից մեռած, թե էդպես, մին ա։ Թող ամեն ինչ կորչի՝ կին, երեխա— բոլորը թող սատկեն... իսկ դու, կաց, քեզ էլ կտեսնենք։

Բիրյուկը վեր կացավ։

— Խփի՛, խփի՛,— ասաց գյուղացին մոլեգին ձայնով,— խփի՛, խփի՛... (Աղջիկը վեր թռավ տեղից ու աչքերը հառեց նրան), խփի՛, խփի՛...

— Զենդ կտրի,— գոռաց անտառապահը և երկու քայլ արավ դեպի նա։

— Հերիք է, հերիք է, Ֆոմա,— գոռացի ես,— թող նրան... ասված նրա հետ։

— Չեմ կտրի,— շարունակեց գյուղացին։— Մին ա որ սատկելու եմ։ Հոգեհան, գազան, չես էլ սատկում, պրծնենք... Սպասիր հլա, թագավորությունդ երկար չես քաշի, բողազդ կկտրեն, կաց հլա։

Բիրյուկը բռնեց նրա ուսը... Ես նետվեցի գյուղացուն օգնելու...

— Չեռ մի տա, աղա,— գոռաց անտառապահն ինձ վրա։

Ես նրա սպառնալիքից չէի վախենա և արդեն ձեռս պարզում էի, բայց, ի մեծ զարմանս իմ, նա մի շարժումով գոտին պոկեց գյուղացու արմունկներից, վզից բռնեց, գլխարկն աչքերը քաշեց, դուռը բաց արավ ու դուրս գցեց նրան։

— Գրողի ծոցը գնա ձիուգ հետ,— գոռաց նա գյուղացու խանից,— տես, մեկ էլ որ ձեռս ես ընկե՛լ...

Նա վերադարձավ խրճիթ և սկսեց անկյունում խառնել ինչ-որ։

— Է՛, Բիրյուկ,— ասացի ես վերջապես,— զարմացրիր ինձ։ Ինչպես տեսնում եմ դու լավ տղա ես։

— Է՛, հերիք է, աղա՛,— կտրեց նա խոսքս բարկությամբ,— մարդու բան չասեք։ Ավելի լավ է ես ճամփա գցեմ ձեզ,— ավելացրեց նա,— չեք կարող ապասել, երևի, մինչև անձրևը կտրի։

Բակում թխկթխկացին գյուղացու սայլի անիվները։

— Տես, գնաց,— քրթմնջաց անտառապահը,— բայց ես նրա՛ն...

Կես ժամ հետո նա հրաժեշտ տվեց ինձ անտառի պոնկին։

1848

ԵՐԿՈՒ ԿԱԼՎԱԾԱՏԵՐ

Բարեհաճ ընթերցողներ, ես արդեն պատիվ ունեցա ձեզ ներկայացնելու իմ մի քանի պարոնայք հարևաններին. թույլ տվեք ինձ այժմ, ի դեպ (մեզ նման գրողի համար ամեն ինչ ի դեպ է) ձեզ ծանոթացնել էլի երկու կալվածատերերի հետ, որոնց մոտ ես հաճախ որս էի անում. միանգամայն հարգված, բարեմիտ մարդիկ, որոնք մի քանի գավառների ընդհանուր հարգանքն են վայելում։

Սկզբում կնկարագրեմ պաշտոնաթող գեներալ-մայոր Վյաչեսլավ Իլլարիոնովիչ Խվալինսկուն։ Պատկերացրեք մի մարդ, որը բարձրահասակ է ու մի ժամանակ բարեկազմ է եղել, իսկ հիմա մի քիչ թոռոմած է, բայց ամենևին էլ զառամյալ չէ, նույնիսկ ծերացած էլ չէ, գտնվում է հասուն հասակում, ինչպես ասում են՝ իր ուժերի ծաղկման շրջանում։ Ճշմարիտ է, մի ժամանակ կանոնավոր և այժմ դեռ հաճելի դիմագծերը մի քիչ փոխվել են, այտերը կախ ընկել, աչքերի տակ խիստ կնճիռներ են ճառագայթաձև դասավորվել, մի քանի ատամներ արդեն չկան, ինչպես Պուշկինի հավաստիացմամբ ասել է Սաադին, բայց շիկագույն մազերը բաց կապույտ գույն են

առել շնորհիվ ինչ-որ դեղի, որ գնվել էր Ռոմենի ձիերի տոնավաճառում, մի ջհուդից, որը իրեն հայ էր ձևացնում. բայց Վյաչեսլավ Իլարիոնովիչը առույգ է քայլում, հնչեղ ծիծաղում, զրնգացնում խթանները, ոլորում բեղերը, վերջապես, իրեն ծեր հեծելակ է անվանում, մինչդեռ հայտնի է, որ իսկական ծերունիները իրենց երբեք ծերեր չեն անվանում։ Նա սովորաբար հագած է լինում ամբողջովին կոճկված սերթուկ, երկար փողկապ, օսլայած օձիք և զինվորական ձևի գորշ, բծավոր անդրավարտիք. լայնեզր գլխարկը դնում է հենց ճակատին՝ բաց պահելով ամբողջ ծոծրակը։ Նա շատ բարի մարդ է, բայց բավական տարօրինակ հասկացողություններ ու սովորություններ ունի։ Օրինակ՝ նա ոչ մի կերպ չի կարողանում ոչ հարուստ կամ աստիճան չունեցող ազնվականների հետ վարվել ինչպես իրեն հավասար մարդկանց հետ։ Խոսելով դրանց հետ, նա սովորաբար դրանց նայում է կողքից՝ այտը քիպ հենելով կոշտ ու սպիտակ օձիքին կամ հանկարծ նրանց վրա է նետում իր պայծառ ու անշարժ հայացքը, մի քիչ լռում է ու շարժում գլխի մազերի տակ եղած ամբողջ մաշկը. նույնիսկ բառերն էլ այլ կերպ է արտասանում. օրինակ՝ չի ասում «благодарю, Պավել Վասիլիչ», կամ՝ «пожалуйте сюда, Միխայլո Իվանիչ», այլ ասում է՝ «боллдарю, Պալլ Ասիլիչ», կամ՝ па-ажалте сюда, Միխայիչ Վանիչ»։ Իսկ այն մարդկանց հետ, որոնք հասարակության ստորին աստիճաններում են գտնվում, նա էլ ավելի տարօրինակ է վարվում. նրանց բոլորովին չի նայում, ու նախքան իր ցանկությունը նրանց բացատրելը կամ հրաման տալը, մտահոգ ու երազկոտ տեսքով մի քանի անգամ իրար ետևից կրկնում է՝ «ինչպե՞ս է անունդ... ինչպե՞ս է անունդ»՝ արտասովոր կտրականությամբ շեշտը դնելով «ինչպես» բառի վրա, իսկ մնացածը շատ արագ է արտասանում, որով ամբողջ ասացվածքը խիստ նմանվում է արու լորի կանչին։ Նա սարսափելի ժլատ է ու մշտահոգ. իր կալվածքի կառավարիչ է վերցրել մի պաշտոնաթող վախմիստրի, որը մալոռուս է, արտասովոր չափով հիմար մարդ։ Ասենք, տնտեսավարելու գործում մեզ մոտ դեռ ոչ ոք չի գերազանցել Պետերբուրգի մի կարևոր պաշտոնյայի, որը իր գործակատարի զեկուցագրերից իմանալով, որ իր կալվածքում խրճանոցները հաճախ հրդեհի են մատնվում,

որով շատ հաց է կորչում, խստագույն հրաման տվեց՝ խրճանոցում խուրձեր չտեղավորել այնքան ժամանակ, մինչև որ կրակը բոլորովին մարի։ Նույն աստիճանավորի խելքին փչեց իր բոլոր դաշտերում կակաչ ցանել, ըստ երևույթին առաջնորդվելով այն պարզ հաշվով, թե կակաչը արինձից թանկ է, հետևաբար կակաչ ցանելը ավելի ձեռնտու է։ Հենց նա էլ իր ճորտ կանանց հրամայել էր Պետերբուրգից ուղարկած նմուշի ձևով կոկոշնիկներ[1] դնել գլխներին. և իսկապես, մինչև այժմ նրա կալվածքներում կանայք գլխներին կոկոշնիկներ են դնում... միայն թե կիչկաների[2] վրայից... Սակայն վերադառնանք Վյաչեսլավ Իլլարիոնովիչին։ Վյաչեսլավ Իլլարիոնովիչը սարսափելի սիրում է գեղեցիկ սեռը, ու հենց որ իրենց գավառական քաղաքի բուլվարում սիրունիկ կին է տեսնում, անմիջապես ընկնում է նրա ետևից, բայց և իսկույն սկսում է կաղալ,— ահա քեզ ուշագրավ հանգամանք։ Թուղթ խաղալ նա սիրում է, միայն թե ստորին կոչման մարդկանց հետ. սրանք իրեն «Ձերդ գերազանցություն» են հորջորջում, իսկ ինքը նրանց կոթում ու գզում է, ինչքան որ հաճելի լինի իր հոգուն։ Իսկ երբ նա առիթ է ունենում խաղալ նահանգապետի կամ մի որևէ աստիճանավոր անձնավորության հետ, նրա մեջ զարմանալի փոփոխություն է կատարվում. նա թե՛ ժպտում է, թե՛ գլխով անում և թե՛ նայում է նրանց աչքերին. մեղրի պես անուշ է լինում... նույնիսկ տանուլ է տալիս ու չի գանգատվում։ Վյաչեսլավ Իլլարիոնովիչը քիչ է կարդում և կարդալու ժամանակ անդադար շարժում է բեղերն ու հոնքերը, ասես դեմքով մեկ ներքևից ալիք է բաց թողնում։ Վյաչեսլավ Իլլարիոնովիչի դեմքի այդ ալիքաձև շարժումը առանձնապես ուշագրավ է լինում, երբ նա առիթ է ունենում (իհարկե հյուրերի ներկայությամբ) նայելու «Journal des Débats»[3]-ի էջերը։ Ընտրությունների ժամանակ նա բավական նշանակալից դեր է խաղում, բայց ժլատության հետևանքով հրաժարվում է ազնվականների պարագլխի պատ-

[1] Կոկոշնիկ — հնամյա գլխարկ, որ դնում էին գլխավորապես աղջիկները։ Ս. Թ.։

[2] Կիչկա — հնամյա գլխարկ, որ դնում էին միայն ամուսնացած կանայք։ Ս. Թ.։

[3] «Բանավեճի ժուռնալ» (ռեակցիոն ուղղության ֆրանսիական լրագիր)։ Ս. Թ.։

վավոր կոչումից։ «Պարոնայք,— սովորաբար ասում է նա իրեն դիմող ազնվականներին՝ խոսելով հովանավորություն և ինքնուրույնություն արտահայտող ձայնով,— շատ շնորհակալ եմ պատիվ անելու համար. բայց ես որոշել եմ ազատ ժամանակս անցկացնել մենության մեջ»։ Ու ասելով այս խոսքերը, գլուխը մի քանի անգամ շարժում է աջ ու ձախ, հետո էլ արժանապատվությամբ կզակն ու այտերը հպում է փողկապին։ Երիտասարդության տարիներին նա համհարզ է եղել ինչ-որ մի նշանավոր անձնավորության մոտ, որին միայն անունով ու հայրանունով է անվանում, ոչ այլ կերպ։ Ասում են, որ իբր թե միայն համհարզի պարտականությունները չէին, որ կատարում էր նա, իբր թե, օրինակ, հագնելով շքահանդեսի լրիվ տարազ և նույնիսկ կոճկելով շափռատները, նա բաղնիքում լողացնում էր իր պետին. բայց հո չի՞ կարելի ամեն մի լուրի հավատալ։ Ասենք, գեներալ Խվալինսկին ինքն էլ չի սիրում խոսել իր պաշտոնական ասպարեզի մասին, որ առհասարակ բավական տարօրինակ է. կարծեմ նա պատերազմներին էլ չի մասնակցել։ Գեներալ Խվալինսկին մենակ ապրում է մի փոքրիկ բնակարանում. նա իր կյանքում ամուսնական երջանկություն չի զգացել և այս պատճառով էլ մինչև այժմ համարվում է փեսացու և նույնիսկ շահեկան փեսացու։ Իսկ նրա մառանապետուհին, որ մոտ երեսունհինգ տարեկան, սևաչյա, սևահոնք, չաղ, թարմ, բեղերով մի կին է, լի օրերին օսլայած շրշաշրշան հագուստներով է շրջում, իսկ կիրակի օրերին նաև շղարշ թևքեր է հագնում։ Վյաչեսլավ Իլլարիոնովիչը իրեն լավ է պահում մեծ, հրավիրովի ճաշերին, որ կազմածատերերը տալիս են նահանգապետների և այլ իշխանավորների պատվին. կարելի է ասել, որ այստեղ նա միանգամայն իր դերումն է։ Այդպիսի դեպքերում սովորաբար նա նստում է եթե ոչ նահանգապետի աջ կողքին, ապա նրանից ոչ այնքան հեռու. ճաշի սկզբում ավելի շատ տարված է քննում սեփական արժանապատվության զգացումով, ու դեպի ետ թեքվելով, առանց գլուխը աջ ու ձախ դարձնելու, հայացքը շեղակի նետում է դեպի ներքև, հյուրերի կլորիկ ծոծրակներին և կանգուն օձիքներին, սակայն ճաշի վերջում քիֆովանում է, սկսում է ժպտալ դեպի բոլոր կողմերը (նահանգապետի կողմը նա ճաշի սկզբից է ժպտում), Երբեմն էլ

նույնիսկ կենաց է առաջարկում ի պատիվ գեղեցիկ սեռի, մեր մոլորակի զարդարանքի, ինչպես ասում է նա։ Գեներալ Խվալինսկին հաճելի է նաև բոլոր հանդիսավոր և հասարակական առնախմբություններում, քննություններում, եկեղեցական արարողություններում, ժողովներում և ցուցահանդեսներում, օրհնանք ընդունելու մեջ նույնպես վարպետ է։ Իրար ճանապարհ տալու տեղերում, գետանցներում և այլ նման վայրերում Վյաչեսլավ Իլլարիոնովիչի սպասավորները չեն աղմկում ու չեն ճչում. ընդհակառակը, մարդկանց մեջ ճանապարհ բանալով կամ զգուշացնելով դիմացից եկող կառեթին, կոկորդային հաճելի բարիտոնով ասում են՝ «Թույլ տվեք, թույլ տվեք, թողեք անցնի գեներալ Խվալինսկին» կամ՝ «Գեներալ Խվալինսկու կառքն է...»։ Ճշմարիտ է։ Խվալինսկու կառքը բավական հին ձևի է. լակեյների լիվրեն բավական մաշված է (կարծես հոգիով թե հարկավոր է հիշատակել, որ դա գորշ է ու կարմիր եզրակներով). ձիերը նույնպես բավական ապրել ու ծառայել են իրենց կյանքում, բայց Վյաչեսլավ Իլլարիոնովիչը պճնության հավակնություն չունի և աչքի թող փչելը նույնիսկ անվայել է համարում իր կոչման նկատմամբ։ Խվալինսկին առանձնապես օժտված չի խոսելու ձիրքով կամ գուցե առիթ չի ունենում ցույց տալու իր պերճախոսությունը, որովհետև ոչ միայն վեհ, այլև ընդհանրապես առարկություն չի հանդուրժում և միշտ խուսափում է ամեն տեսակ երկար խոսակցություններից, մանավանդ, եթե այդ խոսակցությունները երիտասարդ մարդկանց հետ են լինելու։ Դա իրոք ավելի ճիշտ է. թե չէ այժմյան ջահելների հետ երկար խոսելը փորձանք է. մեկ էլ տեսար հնազանդությունը մի կողմ թողին ու էլ չհարգեցին մեծերին։ Բարձրագույն անձանց առաջ Խվալինսկին մեծ մասամբ լռում է, իսկ ստորադաս անձանց հետ, որոնց ըստ երևույթին արհամարհում է, բայց հետները ծանոթություն պահպանում, խոսում է կցկտուր ու խստորեն, անդադար գործածելով այսպիսի արտահայտություններ՝ «Դուք, ասենք, դա-տարկ բաներ եք ասում», կամ՝ «Ես, վերջապես, ստիպված կլինեմ, հարգելի պարոնս, ձեզ դիտողություն անել», կամ՝ «Վերջապես, դուք, այնուամենայնիվ, պետք է գիտենաք, թե ում հետ գործ ունեք» և այլն։ Նրանից առանձնապես վախենում են փոստապետները, մշտական ատենակալ-

ները և կայարանների վարիչները։ Տանը իր մոտ ոչ ոքի չի ընդունում, ու ինչպես ասում են, խիստ ժլատ է ապրում։ Այդ ամենով հանդերձ նա շատ լավ կալվածատեր է։ «Հին, փորձված ծառայող է, անշահախնդիր և սկզբունքներով մարդ է. vieux grognard»[1],— նրա մասին ասում են հարևանները։ Մի նահանգական դատախազ իրեն թույլ է տվել ժպտալ, երբ իր ներկայությամբ հիշատակում են Խվալինսկու գերազանց և պատկառելի հատկությունները, ի՞նչ ասես, որ չի անում նախանձը...

Սակայն հիմա անցնենք մյուս կալվածատիրոջը։

Մարդարի Ապոլլոնիչ Ստեգունովը ոչնչով նման չէ Խվալինսկուն. նա հազիվ թե որևէ տեղ ծառայած լինի ու երբեք գեղեցիկ չի համարվել։ Մարդարի Ապոլլոնիչը կարճահասակ, թմբլիկ, ճաղատ մի ծերուկ է կրկնակի կզակով, փափլիկ ձեռքերով ու հաստ փորով։ Նա միանգամայն աղուհացով մարդ է ու կատակասեր է. ինչպես ասում են՝ ապրում է իր բավականության համար. ձմռանն ու ամռանը զոլավոր, բամբակած խալաթ է հագնում։ Նա միայն մի բանով է նման Խվալինսկուն. նույնպես ամուրի է։ Ունի հինգ հարյուր ճորտ։ Մարդարի Ապոլլոնիչը բավական մակերեսորեն է զբաղվում իր կալվածքով. դարից ետ չմնալու համար տասը տարի առաջ Մոսկվայում Բուտենովից գնեց մի կալսիչ մեքենա, փակեց մարագում և դրանով էլ հանգստացավ։ Երբեմն ամառային մի պայծառ օր հրամայում է կառք լծել և գնում է դաշտ՝ դիտելու հացաբույսերը և տերեփուկներ քաղելու։ Մարդարի Ապոլլոնիչը բոլորովին հին ձևով է ապրում։ Նրա տունն էլ հին կառուցվածքի է. նախասենյակում կվասի, ճարպամոմերի ու կաշվի թունդ հոտ է տարածված. նույն տեղը, աջ կողմում դրված է բուֆետը՝ բլոճներով ու սրբիչներով. սեղանատանը կան տոհմական դիմանկարներ, ճանճեր, խորդենու մեծ ծաղկման ու փչացած դաշնամուր, հյուրասենյակում՝ երեք բազմոց, երեք սեղան, երկու հայելի և խոպոտ ժամացույց՝ սևացած էմալով և բրոնզե քանդակավոր սլաքներով. կաբինետում՝ թղթերով սեղան, կապտավուն գույնի շիրմաներ, որոնց վրա անցյալ հարյուրամյակի այլևայլ երկերից պոկած նկարներ են կպցրած, պահարաններ՝ հոտ արձակող գրքերով, սարդերով ու սև փոշիով, փափլիկ բազկաթոռ. պատուհանը իտալական ձևի է, այգու կողմի դուռն էլ պինդ փակված է... Մի խոսքով, ամեն ինչ սովորական է։ Մարդարի Ապոլլոնիչը ունի բազմաթիվ սպասավորներ, ու նրանք բոլորը հագնվում են հնամյա ձևով. երկար, կապույտ կապարներ՝ բարձր օձիքներով, գորշավուն անդրավարտիքներ և կարճ, դեղնավուն բաճկոնակներ։ Նրանք հյուրերին ասում են՝ «տեր իմ»։ Նրա տնտեսությունը վարում է բուրմիստրը. երկարամորուք մի մուժիկ, իսկ տունը՝ դարշնագույն գլխաշոր կապող, կնճռոտ ու ժլատ մի պառավ։ Մարդարի Ապոլլոնիչի ախոռում կան այլևայլ չափի երեսուն ձիեր. նա շրջում է տանը շինած հարյուր հիսուն փթանոց կառքով։ Նա շատ սրտաբաց է ընդունում հյուրերին և հիանալի է հյուրասիրում, այսինքն ռուսական խոհանոցի շշմեցնող հատկությունների շնորհիվ, ընդհուպ մինչև երեկո, նրանց զրկում է պրեֆերանսից բացի որևէ բանով զբաղվելու հնարավորությունից։ Ինքը երբեք ոչնչով չի զբաղվում և նույնիսկ այլևս չի կարդում «Երազահանը»։ Մեզ մոտ, Ռուսիայում, դեռ բավական շատ են այդպիսի կալվածատերերը. հարց է ծագում, ինչի՞ց դրդված և ինչի՞ համար ես սկսեցի խոսել նրա մասին... Թույլ տվեք ինչի՞ համար ես սկսեցի խոսել նրա մասին... Թույլ տվեք պատասխանի փոխարեն ձեզ պատմեմ Մարդարի Ապոլլոնիչի մոտ իմ կատարած այցելություններից մեկի մասին։

Ես նրա մոտ ժամանեցի ամռանը, երեկոյան ժամը յոթին։ Նոր էր վերջացել երեկոյան ժամերգությունը, ու քահանան, երիտասարդ մի մարդ, որը, ըստ երևույթին, խիստ երկչոտ էր ու վերջին ժամանակներում էր ավարտել սեմինարիան, նստած էր հյուրասենյակում, դռան մոտ, աթոռի ծայրին։ Մարդարի Ապոլլոնիչը, ըստ իր սովորության, ինձ միանգամայն սիրալիր ընդունեց. նա անկեղծորեն ուրախանում էր յուրաքանչյուր հյուրի գալու համար և առհասարակ, շատ քաղաքավարի մարդ էր։ Քահանան վեր կացավ ու վերցրեց լայնեզր գլխարկը։

— Սպասիր, սպասիր, տեր հայր,— ասաց Մարդարի Ապոլլոնիչը՝ բաց չթողնելով իմ ձեռքը,— մի գնա... Ես հրամայել եմ ձեզ համար օղի բերել։

[1] Փնթփնթան ծերուկ (ֆրանս.)։

— Ես չեմ խմում,— շփոթվելով քրթմնջաց քահանան ու կարմրեց մինչև ականջները։

— Դատարկ բան է։ Ձեր կոչումն ունեցողը ինչպե՞ս կարող է չխմել,— պատասխանեց Մարդարի Ապոլլոնիչը։— Միշկա՛, Յուշկա՛, օղի բերեք տեր հոր համար։

Յուշկան, մոտ ութսուն տարեկան, բարձրահասակ ու նիհար մի ծերունի, մի ըմպանակ օղի բերեց մուգ ներկած մատուցարանով, որը մարմնագույն բծերով էր պատած։

Քահանան հրաժարվում էր։

— Խմիր, տեր հայր, նազուտուզ մի անի,— կշտամբանքով ասաց կալվածատերը։

Խեղճ երիտասարդը հնազանդվեց։

— Դե հիմա կարող ես գնալ, տեր հայր։

Քահանան սկսեց գլուխ տալ։

— Դե լավ, լավ, գնա... հիանալի մարդ է,— շարունակեց Մարդարի Ապոլլոնիչը՝ նայելով նրա ետևից,— ես շատ գոհ եմ նրանից. միայն թե դեռ չահել է։ Նա քարոզներ է տալիս ու գինի չի խմում։ Էհ, դուք ինչպե՞ս եք, պատվելիս... Ի՞նչ եք անում, ինչպե՞ս եք։ Գնանք պատշգամբ, տես ինչ հիանալի երեկո է։

Մենք անցանք պատշգամբ, նստեցինք ու սկսեցինք խոսել։ Մարդարի Ապոլլոնիչը նայեց ներքև ու հանիրծ սարսափելի հուզվեց։

— Այն ո՞ւմ հավերն են, այն ո՞ւմ հավերն են,— բղավեց նա։— Այն ո՞ւմ հավերն են այգում մանգալիս... Յուշկա, Յուշկա, շուտ գնա իմացիր, թե այդ ո՞ւմ հավերն են այգում մանգալիս։ Այդ ո՞ւմ հավերն են։ Քանի՞ անգամ եմ արգելել, քանի՞ անգամ եմ ասել։

Յուշկան վազ տվեց։

— Այ քեզ անկարգություններ, դա սարսափելի է,— ավելացրեց Մարդարի Ապոլլոնիչը։

Դժբախտ հավերը, որոնցից երկուսը բծավոր էին ու մնացածը սպիտակ և փուխուլափոր,— ինչպես ես այդ հիշում եմ հիմա,— հանգիստ շարունակում էին մանգալ խնձորենիների տակ, երբեմն կոթկոթոցով արտահայտում էին իրենց զգացմունքները։ Հանկարծ Յուշկան, առաջ գրգռվի, մահակը ձեռքին և ուրիշ երկու չափահաս տղաներ միահամուռ

նետվեցին նրանց վրա։ Սկսվեց մի զվարճալի տեսարան։ Հավերը ճչում էին, թափահարում թևերը, ցատկոտում, խլացուցիչ կոթկոթում. սպասավորները վազում էին, սայթաքում, ընկնում. բարինը պատշգամբից մոլեգնաբար բղավում էր՝ «բռնի՛ր, բռնի՛ր, բռնի՛ր, բռնի՛ր, բռնի՛ր, բռնի՛ր, բռնի՛ր... Այդ ո՞ւմ հավերն են, այդ ո՞ւմ հավերն են»։ Վերջապես, մի սպասավորի հաջողվեց բռնել փուփուլավոր հավը, նրան կրծքով սեղմել գետնին, ու հենց այդ ժամանակ փողոցից, այգու ցանկապատից ներս ցատկեց մոտ տասնմեկ տարեկան մի աղջիկ, գզգզված մազերով և ճիպոտը ձեռին։

— Հըմ, այ թե ում հավերն են,— ցնծությամբ բացականչեց կալվածատերը,— կառապան Երմիլի հավերն են։ Նա իր Նատալկային ուղարկել է հավերը տանելու... երևի Պարաշային չի ուղարկել,— ցածր ձայնով ավելացրեց կալվածատերը և նշանակալից ժպտաց։— Է՛յ, Յուշկա, քող հավերին, բռնիր Նատալկային։

Բայց նախքան շնչասպառ եղած Յուշկան կհասներ վախեցած աղջկան, որտեղից որտեղ հայտնվեց մառանապետուհին, բռնեց նրա ձեռքից ու մի քանի անգամ շրմփացրեց խեղճ աղջկա մեջքին...

— Ա՛յ, այդպես, ա՛յ, այդպես,— բացականչեց կալվածատերը,— շրը՛մփ, շրը՛մփ, շրը՛մփ... Իսկ հավերը վերցրու, Ավդոտյա...— ավելացրեց նա բարձրաձայն ու ժպտուն դեմքով դիմեց ինձ,— լավ էր հետապնդումը, չէ՞, պատվելիս։ Նայելուց նույնիսկ քրտնեցի։

Ու Մարդարի Ապոլլոնիչը քրքջաց։

Մենք մնացինք պատշգամբում։ Երեկոն խկապես որ արտասովոր կերպով լավ էր։

Մեզ թեյ մատուցեցին։

— Ասացեք, Մարդարի Ապոլլոնիչ,— դիմեցի ես կալվածատիրոջը,— ձեր մուժիկնե՞րն են տեղափոխվել այնտեղ, ճանապարհի մոտ, ձորակի այն կողմը։

— Այո՛... ի՞նչ կա որ։

— Այդ ինչպե՞ս կարելի է, Մարդարի Ապոլլոնիչ, չէ՞ որ դա մեղք է։ Մուժիկներին խիստ վատ, նեղ խրճիթներ են տրամադրված, շուրջը ոչ մի ծառ չկա. նույնիսկ ջրափոս էլ չկա.

մի ջրհոր կա, այն էլ անպետք է։ Մի՞թե դուք չէիք կարող ուրիշ տեղ գտնել... Եվ հետո, ասում են, որ դուք նրանցից նույնիսկ հին կանեփուտներն էլ եք գրավել։

— Դե ի՞նչ կարող ես անել, երբ հողերի սահմանազատում է եղել,— պատասխանեց Մարդարի Ապոլլոնիչը։— Այդ սահմանազատումը ահա թե որտեղ է նստած (նա ցույց տվեց իր ծոծրակը)։ Ես այդ սահմանազատումից ոչ մի օգուտ չեմ նախատեսում։ Իսկ որ ես նրանցից գրավել եմ կանեփուտները ու այնտեղ ջրափոսեր չեմ փորել, այդ ես ինքս էլ գիտեմ, պատվելիս։ Ես հասարակ մարդ եմ, հին ձևով եմ վարվում։ Իմ կարծիքով բարինը պետք է բարին լինի, մուժիկը՝ մուժիկ... Այ թե ինչ։

Հասկանալի է, որ այդպիսի պարզ և համոզիչ փաստարկին ոչ մի պատասխան չէր կարող լինել։

— Այն էլ ասեմ,— շարունակեց նա,— մուժիկները վատ են, աչքից ընկած։ Մանավանդ երկու ընտանիք. դեռ հանգուցյալ հայրս, երկնային արքայություն նրան, բարեհաճ չէր դրանց նկատմամբ, ամենևին բարեհաճ չէր։ Իսկ ես ահա թե ձեզ ինչ կասեմ. եթե հայրը գող է, ուրեմն որդին էլ գող է, այլ կերպ չի կարող լինել... Օ՜, արյունակցությունը, արյունակցությունը մեծ բան է։ Ես պետք է անկեղծորեն խոստովանեմ, որ այն երկու ընտանիքից մի քանիսին հերթից դուրս զինվորության եմ տվել, այս ու այն կողմ քշել, բայց չեն բնաջնջվում, ի՞նչ կարող ես անել։ Հա՛ շատանում են անիծվածները։

Մինչ այս մինչ այն, օդը բոլորովին հանդարտվեց։ Միայն երբեմն քամի էր փչում, ու վերջին անգամ տան մոտ սուրալով, մեր ականջին հասցրեց ախոռի կողմից լսվող համաչափ և արագ զարկերի ձայնը։ Մարդարի Ապոլլոնիչը թեյով լեցուն ափսեիկը հենց նոր էր մոտեցրել շրթունքներին և արդեն լայնացնում էր քթածակերը,— իսկ առանց դրան, ինչպես հայտնի է, ոչ մի բնիկ, իսկական ռուս չի կուլ տալիս թեյը,— երբ կանգ առավ, ականջ դրեց, գլխով արեց, խմեց թեյը ու, ափսեիկը դնելով սեղանին, ամենաբարի ժպիտով ու ասես ակամայից արձագանքելով հարվածներին, փնթփնթաց՝ «շրմփ-թրմփ, շրմփ-թրմփ, թրմփ»։

— Այդ ի՞նչ է,— զարմանքով հարցրի ես։

— Այնտեղ իմ հրամանով պատժում են մեղավորին։ Բարեհաճո՞ւմ եք ճանաչել բուֆետապան Վասյային։

— Ի՞նչ Վասյա։

— Այն տղային, որ այսօր ճաշին սպասարկում էր մեզ։ Դեռ մեծ այտամորուք էլ է պահում։

Ամենավայրագ զայրույթն անգամ կմեղմանար Մարդարի Ապոլլոնիչի պայծառ ու հեզ հայացքի հանդեպ։

— Այդ ի՞նչ է, երիտասարդ, այդ ի՞նչ է,— գլուխն օրորելով ասաց նա,— ես հո չարագործ չե՞մ, որ դուք այդպես եք նայում ինձ։ Ո՞վ ասես, որ չի պատժում։ Ինքներդ գիտեք։

Քառորդ ժամից հետո ես հրաժեշտ տվի Մարդարի Ապոլլոնիչին։ Անցնելով դյուղի միջով, ես տեսա բուֆետպան Վասյային։ Նա քայլում էր փողոցով և ընկույզ էր ուտում։ Ես կառապանիս հրամայեցի կանգնեցնել ձիերը և կանչեցի Վասյային։

— Հը, աղբերացու, այսօր քեզ պատժեցի՞ն,— հարցրի ես։

— Դուք այդ որտեղի՞ց գիտեք,— պատասխանեց Վասյան։

— Ինձ քո բարինը ասաց։

— Ինքը բարի՞նը։

— Ինչի՞ համար էր նա քեզ պատժելու հրաման տվել։

— Տեղն էր, հայր իմ, տեղն էր։ Մեզ մոտ դատարկ բաների համար չեն պատժում. մեզ մոտ այդպիսի սովորություն չկա։ Մեր բարինը այդպես չէ, մեր բարինը... այդպիսի բարին ամբողջ նահանգում չես գտնի։

— Գնացինք,— ասացի ես կառապանիս։ «Ահա նա, հին Ռուսիան»,— մտածում էի ես վերադարձի ճանապարհին։

1852

ՆՐԳԻԶՆԵՐ

Կալատովկա փոքրիկ գյուղը, որ երբեմնի պատկանել է մի կալվածատիրուհու, իսկ այժմ համարվում է Պետերբուրգում ապրող ինչ-որ գերմանացու սեփականություն, ընկած է մերկ բլրի լանջին, որը վերից վար ճեղքված է մի սարսափելի ձորով, այդ ձորը, բերանն անդունդի պես բացած, քանդված

ու հեղեղատված, անցնում է հենց փողոցի մեջտեղով. և գետից վատթար է,— գետի վրա գոնե կարելի է կամուրջ գցել,— ու չքավոր գյուղի երկու մասը բաժանում է իրարից։ Մի քանի վտիտ թփեր վախկոտ կպել են նրա ավազուտ կողերին, իսկ հատակին, որ չոր է ու դեղին, ինչպես պղինձ, ընկած են կավաքարերի հսկայական սալեր։ Ինչ խոսք, որ պատկերը տխուր է, բայց շրջակայքի բոլոր բնակիչներին Կալատովկայի ճանապարհը լավ հայտնի է. նրանք այնտեղ գնում են սիրով և հաճախ։

Ձորի հենց ծայրին, մի քանի քայլ դենը այն կետից, որ սկսվում է ձորը նեղ ճեղքվածքով, կանգնած է մի քառանկյունի խրճիթ, կանգնած է մեն-մենակ, մյուսներից առանձնացած։ Նրա կտուրը ծածկված է ծղոտով և ծխնելույզ ունի։ Լուսամուտներից մեկը, ինչպես մի սուր աչք, նայում է ձորին և ձմռան երեկոներին ներսից լուսավորված, երևում է հեռվից՝ սառնամանիքի աղոտ մշուշի միջից և անցորդ գյուղացիների համար առկայծում է ուղեցույց աստղի նման։ Դռան ճակատին փակցված է մի կապույտ տախտակ՝ «Էս խրճիթը օդեռուն է, անունը՝ Ապաստան»։ Այդ օդեռանը օրին ծախվում է սահմանված գնից, երևի, ոչ էժան, բայց այնտեղ ավելի ջանասիրությամբ են հաճախում, քան շրջակայքի նման օդեռները։ Դրա պատճառը օդեվաճառ Նիկոլայ Իվանիչն է։

Նիկոլայ Իվանիչը՝ մի ժամանակ վայելչակազմ, գանգրահեր ու կարմրաթուշ տղա, իսկ այժմ չափազանց հաստ, արդեն ճերմակած, ուռած դեմքով խորամանկ, բարեհոգի աչքերով ու ճարպոտ ճակատով, որը ծածկված էր պարանի նման կնճիռներով,— քսան տարուց ավելի էր, ինչ ապրում էր Կալատովկայում։ Նիկոլայ Իվանիչը ժիր և ուշիմ մարդ է, ինչպես օդեվաճառների մեծ մասը։ Նա ոչ առանձին սիրալիրություն ունի, ո՛չ զրուցասիրություն. բայց հյուրեր գրավելու և իր մոտ պահելու շնորհքն ունի. այդ հյուրերը մի տեսակ ուրախությամբ են նստում նրա վաճառասեղանի առաջ, նրա հանգիստ ու հյուրընկալ, բայց սուր հայացքի տակ։ Նիկոլայ Իվանիչը շատ ողջամիտ մարդ է. նա շատ է իմանում, թե՛ դրալվածատերերի, թե՛ գյուղացիների և թե՛ մեշչանների վիճակը. դժվարին դեպքերում նա կարող էր օգտակար խորհուրդներ տալ, բայց որպես զգույշ ու նենգաբեր մարդ, գերադաս է համարում մնալ մի կողմ քաշված, և երբեմն միայն հեռավոր, կարծես առանց որևէ նպատակի արտասանված ակնարկներով ցույց է տալիս այցելուներին,— և այն էլ սիրած այցելուներին,— ճշմարիտ ուղիներ։ Նա շատ լավ հասկանում է, թե ինչն է հետաքրքրում ռուս մարդուն՝ ձիերի, տավարի մեջ, փայտեղենի, աղյուսի ամանեղենի և կաշվի գործում, երգերում ու պարերում։ Երբ առեստուր չի լինում, նա, սովորաբար, պարզի պես ընկնում-նստում է գետնին՝ իր խրճիթի դռան առաջ, բարակ ոտները տակին ծալելով, և քաղցր խոսքեր է փոխանակում այցելուների հետ։ Նա շատ բան է տեսել իր կյանքում, տեսել է մահը մի քանի տասնյակ մեռելավանների, որ եկել են նրա մոտ «զուգաձի» համար, գիտի բոլորը, ինչ կատարվում է շուրջը՝ հարյուր վերստի վրա, և երբեք բան չի ասի, ցույց չի տա անգամ, թե իրեն հայտնի է և այն, ինչ ամենաթափանցամիտ ոստիկանն էլ չի կարող կասկածել։ Լռում է իր համար, ծիծաղում ինքն իրեն ու բաժակները շարժում։ Հարևանները հարգում են նրան. քաղաքացիական գեներալ Շչերեպետենկոն, որ առաջին բարձրաստիճան կալվածատերն է գավառում, ամեն անգամ, նրա տնակի մոտից անցնելիս, ներողամտաբար գլուխ է տալիս նրան։ Նիկոլայ Իվանիչը ազդեցիկ մարդ է. մի հայտնի ձիագողի ստիպեց վերադարձնել ձին, որ տարել էր նա իր ծանոթներից մեկի բակից, խելքի բերեց հարևան շենի գյուղացիներին, որ չէին ուզում նոր կառավարչին ընդունել և այլն։ Բայց չպետք է կարծել, թե նա այդ արավ ի սեր արդարության, մերձավորին օգնած լինելու համար, ո՛չ, նա ուղղակի աշխատում է կանխել այն բոլորը, ինչ կարող է որևէ կերպ խախտել իր հանգստությունը. Նիկոլայ Իվանիչը կին ունի և երեխաներ։ Կինը, որ ժիր, արագիլի ու սրաչքի մեկն է, վերջապես, մարդու նման, նա էլ է փոքր-ինչ հաստացել մարմնով։ Նա ամեն ինչ վատահում է կնոջը, և կինը մարդու փոխարեն պահում է փոքրիկ տակը։ Ճղճիմարար հարբեցողները վախենում են նրանից։ Նիկոլայ Իվանիչի կնոջից. սա նրանց չի սիրում, օգուտը ջիր, տղմոտից շա՛տ, նրան ավելի դուր են գալիս լուսակյացները ու մեռելները։ Նիկոլայ Իվանովիչի երեխաները դեռ փոքր են. առաջին երեխաները բոլորը մեռել են, բայց մնացածները

նման են ծնողներին. հաճելի է նայել այդ առողջ երեխաների խելացի դեմքերին։

Հուլիսի անտանելի շոգ էր, երբ ես, շանս հետ, դանդաղաքայլ բարձրացա Կալատովկայի ձորի երկարությամբ դեպի Ապաստան օդեստունը։ Արևը երկնքից կրակ էր թափում, խաշում և այրում էր անխնա. օդն ամբողջ լցված էր հեղուցիչ փոշով։ Ագռավները կտուցները բաց արած, տխրությամբ նայում էին անցորդներին, կարծես նրանց օգնությունը խնդրելով. մենակ ճտերն էին զվարթ, փետուրները ուռցրած՝ առաջվանից ավելի էին ծլվլում, բակերն էին մտնում, խրմբերով թռչում էին փոշոտ ճանապարհից, գորշ ամպի նման անցնում էին կանաչ կանեփների վրայից։ Ծարավը տանջում էր ինձ։ Մոտերքում ջուր չկար. Կալատովկում ինչպես և դաշտային մյուս շատ գյուղերում, աղբյուրներ և ջրհորներ չինելու պատճառով, խմում են լճակի կեղտաջուրը... Բայց ինչպե՞ս կարելի է այդ զզվելի լափը ջուր անվանել։ Ուզում էի Նիկոլայ Իվանովիչից խնդրել գարեջուր կամ կվաս։

Պետք է խոստովանել, որ տարվա ոչ մի ժամանակն էլ Կալատովկան ուրախ պատկեր չի ներկայացնում, բայց մանավանդ տխուր զգացում է հարուցում նա, երբ հուլիսի շողշողուն արևը իր անողոք ճառագայթներով ողողում է և՛ մութ դեղնագույն տանիքները, և՛ այս խոր ձորը, և՛ խանձված փոշոտված արոտավայրը, ուր անհույս թափառում են նիհար, երկար ոտներով հավերը, և՛ նախկին կալվածատիրական տան մնացորդը, որի շորս կողմն աճել են եղինջներ ու վայրի խոտեր, և՛ սագի փետուրներով ծածկված սև, կարծես խանձված լճակը, որ երիզված է կիսաչոր ցեխով և ունի կողքի վրա ծռված մի պատնեշ, որի կողքին, մանրիկ ոտներով կոճռված, մոխրագույն հողի վրա ոչխարները, հազիվ շնչելով ու շոգից փոշտալով, տխրությամբ սեղմվում են իրար և տխուր համբերատարությամբ գլուխները կռացնում որքան կարելի է ցած, սպասելով կարծես, թե ե՞րբ է անցնելու, վերջապես, այս անտանելի շոգը։ Հոգնած քայլերով մոտեցա, վերջապես, Նիկոլայ Իվանովիչի բնակարանին, հարուցանելով, ինչպես կարգն է, երեխաների զարմանքը, որ հասնում էր լարված, անմիտ հայեցողության, և՛ շների զայրույթը, որ արտահայտվեց մի այնպիսի խռպոտ ու չար հաչոցով, որ թվում էր՝

նրանց փորոտիքը կտրտվում է, այնպես, որ իրենք էլ հետս սկսեցին հազալ, շնչակտուր լինել, երբ հանկարծ օդեստան շեմքին երևաց մի բարձրահասակ տղամարդ՝ գլուխը բաց, ֆրիզե շինել հագած ու կապույտ գոտիով գոտեպնդված։ Արտաքինից ճորտ էր երևում. խիտ, սպիտակ մազերը անկարգ ցցվել էին շոր, կուշ եկած դեմքի վրա։ Կանչում էր ինչ-որ մեկին, ձեռներն արագ շարժելով, որոնք ավելի էին տարածվում, քան ինքը ցանկանում էր։ Երևում էր՝ արդեն խմած է։

— Արի՛, դե՛ արի,— թոթովում էր նա, խիտ հոնքերը դժվարությամբ բարձրացնելով,— արի՛, Մորգաչ, արի՛, ի՞նչ մարդ ես, տո, սողում ես կարծես։ Դե լավ բան չի։ Քեզ սպասում են էստեղ, իսկ դու քարշ ես գալիս... Արի՛։

— Դե, գալիս եմ, գալիս եմ,— լսվեց մի դողդոջուն ձայն, և խրճիթի ետևից դուրս եկավ կարճահասակ, հաստ ու կաղլիկ մի մարդ։ Նրա վրա կար մի բավականին մաքուր, մանուկ վերնազգեստ, որի միայն մի թևն էր հագել. բարձր, սրածայր գդակը, որ քաշել էր ուղիղ հոնքերի վրա, նրա կլորիկ, թմբլիկ դեմքին տալիս էր խորամանկ և ծաղրական արտահայտություն։ Նրա փոքրիկ, դեղին աչքերը շարունակ պրրալտում էին, բարակ շրթներից չէր հեռանում զուսպ, լարված ժպիտը, իսկ սուր ու երկար քիթը ղեկի նման անամոթաբար ցցվել էր առաջ։ Գալիս եմ, սիրելիս,— շարունակեց նա, կաղ քայլվածքն ուղղելով օդեստան կողմը,— ինչո՞ւ ես կանչում։ Ո՞վ ա ինձ սպասում.

— Ինչո՞ւ եմ քեզ կանչում,— հանդիմանանքով ասաց Ֆրիզե շինել հագած մարդը։— Է, ի՞նչ տարօրինակ մարդ ես, Մորգաչ, քեզ կաբակ են կանչում, իսկ դու դեռ հարցնում ես՝ ինչո՞ւ։ Քեզ լավ մարդիկ են սպասում՝ Թուրք Ցաշկան և Դիկի Բարինը, մեկ էլ ժիզդրեցի վերակացուն։ Ցաշկան ու վերակացուն գրազ են եկել ու մի չափ գարեջուր են դրել, թե տեսնենք ով կհաղթի, ո՛վ ավելի լավ կերգի, այսինքն... հասկանո՞ւմ ես։

— Ցաշկան պիտի երգի՞,— եռանդով հարցրեց Մորգաչ կոչվող մարդը։— Սո՞ւտ չես ասում, Օբալդույ։

— Ես ստախոս չեմ,— արժանապատվությամբ պատասխանեց Օբալդույը— սուտը դու ես խոսում։ Երբ գրազ են

եկել՝ նշանակում է երգելու են, բողոքի մեկը, լիրբ, անպիտան Մորգաչ։

— Դե գնանք, ցանցառ,— ասաց Մորգաչը։

— Դե գոնե համբուրիր ինձ, հոգի ջան,— թոթովեց Օբալդույը գիրիը լայն բանալով։

— Տե՛ս Եղոպոսին,— արհամարհանքով պատասխանեց Մորգաչը, արմունկով նրան հրելով և երկուսն էլ, կռանալով, ցածրիկ դռնով մտան ներս։

Այդ խոսակցությունը հետաքրքրություն գրգռեց։ Շատ անգամ էի լսել Թուրք Ցաշկայի մասին, որպես այդտեղի լավագույն երգչի, և հանկարծ ինձ առիթ է ներկայանում լսել նրան մի ուրիշ երգչի հետ մրցելու ժամանակ։ Ես քայլեր արագացրի և օդեռուն մտա։

Իմ ընթերցողներից շատ քչերն են, երևի, առիթ ունեցել գյուղական օդեռներ տեսնելու, բայց որոշ մարդը ամեն տեղ մտնում է։ Այդ օդեռները շատ պարզ սարք ու կարգ ունեն. նրանք սովորաբար կազմված են լինում մի մութ հաշտից և ներսը ճերմակած սենյակից, որը երկու մասի է բաժանված մի տախտակե պատով, որի այն կողմը այցելուներից ոչ ոք իրավունք չունի մտնելու։ Այդ պատի մեջ, ընդարձակ կաղնե վահառասեղանի վերևը, բացված է մի մեծ, երկարությամբ տարածվող անցք։ Այդ վահառասեղանի կամ դախլի վրա ծախվում է գինին։ Տարբեր մեծությամբ կնքված շտոֆները շարքով շարված են դարակներին, ուղիղ անցքի դիմաց։ Այցելուներին տրամադրած խրճիթի առաջին մասում լինում են նստարաններ, երկու-երեք գատարկ տակառ, սեղան։ Գյուղական օդեռները մեծ մասամբ բավականին մութն են լինում, և եթե, համարյա նրանց՝ գերանից շինած պատերին չեք տեսնի վառ նկարված պատկերներ. մինչդեռ շատ քիչ խրճիթ է լինում առանց այդ պատկերների։

Երբ ես մտա Ապաստան օդեռունը, այնտեղ արդեն բավականին բազմամարդ հասարակություն կար։

Վահառասեղանի ետևը, ինչպես կարգն է, համարյա անցքի ամբողջ լայնությամբ, կանգնած էր Նիկոլայ Թվանիչը՝ մի նախշուն չթե վերնաշապիկ հագին, և ուռած այտերին մի ծուռ ծպիտ, իր լիքն ու սպիտակ ձեռով օդի էր լցնում հենց նոր ներս մտած ընկերների՝ Մորգաչի և Օբալդույի համար. իսկ նրանց ետևից, անկյունում, լուսամուտի կողքին երևում էր նրա սրահայաց կինը։ Սենյակի մեջտեղը կանգնած էր Թուրք Ցաշկան՝ նիհար և բարեկազմ, քսաներեք տարեկան մի մարդ, որ հագել էր մի երկաթափեշ, կապույտ գույնի կաֆտան։ Նա գործարանային բանվորի տեսք ուներ և, թվում էր, այնքան էլ լավ առողջության տեր չէր։ Նրա փոս ընկած այտերը, խոշոր, անհանգիստ, մոխրագույն աչքերը, ուղիղ քիթը՝ նուրբ, շարժական պնչներով, ճերմակ, ետ գնացած ճակատը՝ ետ տանրած խարտյաշ գանգուրներով, հաստ, բայց գեղեցիկ ու արտահայտիչ շրթունքները, նրա ամբողջ դեմքը վկայում էր, որ նա տպավորվող ու կրքոտ մարդ է։ Նա շատ հուզված էր, աչքերը թարթում էր, անկանոն շնչում, ձեռները դողում էին, ինչպես տենդի մեջ, և նա, իսկապես, տենդ ուներ, այն անհանգիստ հանկարծական տենդը, որը ծանոթ է բոլոր այն մարդկանց, որոնք խոսում կամ երգում են հասարակության առաջ։ Նրա կողքին կանգնած էր քառասուն տարեկան մի տղամարդ, որը լայն թիկունք ուներ, լայն դեմք, նեղ ճակատ, թաթարական նեղ աչքեր, կարճ ու տափակ քիթ, քառանկյունի ծնոտ, սև, փայլուն, խոզի մազի պես կոշտ մազեր։ Նրա թուխ կապարափայլ դեմքի, մանավանդ գունատ շրթունքների արտահայտությունը կարելի էր համարել գրեթե վայրագ, եթե այդ արտահայտությունն այնպես հանգիստ, մտահոգ չլիներ։ Նա համարյա չէր շարժվում և միայն դանդաղորեն շուրջն էր նայում, ինչպես եզը լծի տակից։ Նա հագել էր մի ինչ-որ հնամաշ սերթուկ, որը պղնձե տափակ կոճակներ ուներ. ահագին վիզը փաթաթել էր մի հին, սև, մետաքսե թաշկինակ։ Նրան անվանում էին Դիկի Բարին։ Ուղիղ նրա դիմացը, սրբապատկերի ներքևը, նստած էր Ցաշկայի մրցակիցը՝ ժիզդրեցի վերակացուն. դա միջահասակ, երեսուն տարեկան լեցուն տղամարդ էր՝ չեչոտ և խուճուճ մազերով, բութ, վերցցված քթով և կենդանի, թուխ աչքերով ու ցանցառ մորուքով։ Նա, ձեռներն իր տակը դրած, եռանդով շուրջն էր նայում, խոսում էր անփույթ և ոտները թրխկացնում։ Հագինը մոխրագույն մահուդից կարած բարակ վերնազգեստ էր՝ պլիսե օձիքով, որից որոշակի ջոկվում էր կարմիր վերնաշապիկի օձիքը, որ ամուր կոճկված էր նրա բկի շուրջը։ Հակառակ անկյունում, դռնից դեպի աջ, սեղանի մոտ նստած էր մի

ինչ որ գյուղացի՝ գորշ ու հնամաշ վերնազգեստով, որի թիկունքին մի ահագին ծակ կար։ Արևի լույսը նոսր ճառագայթներով ընկնում էր երկու փոքրիկ՝ փոշոտ ապակիներով լուսամուտներից և, թվում էր, չէր կարողանում հաղթահարել սենյակի սովորական մթությունը. բոլոր առարկաները լուսավորված էին ժլատ լույսով, կարծես լույսի բծերով։ Բայց դրա փոխարեն՝ այնտեղ համարյա զով էր. տոթի ու շոգի զգացումը ծանր բեռի պես ընկավ ուսերիցս, հենց որ ոտս շեմքից ներս դրի։

Իմ գալը,— ես այդ կարողացա նկատել,— սկզբում շփոթեցրեց Նիկոլայ Իվանիչի հյուրերին. բայց տեսնելով, որ Նիկոլայ Իվանիչը բարևեց ինձ, որպես ծանոթի, նրանք հանգստացան և այլևս ուշադրություն չդարձրին վրաս։ Ես գարեջուր խնդրեցի և նստեցի անկյունում, պատված վերնազգեստով գյուղացու կողքին։

— Դե, էլ ի՞նչ կա,— գոռաց հանկարծ Օբալդույը, օդին գլխին քաշելով և ձեռներն առաջվա պես տարօրինակ շարժելով, ինչպես երևում էր, նա առանց այդ շարժումների ոչ մի խոսք չէր ասում։— Էլ ինչի՞ եք սպասում։ Սկսում եք, դե սկսեցեք, էլի՛։ Հը՞։ Ցաշա՞։

— Սկսեցեք, սկսեցեք,— հավանություն տվեց Նիկոլայ Իվանիչը։

— Ուզում եք սկսենք,— ստանությամբ ու ինքնավստահ ծպիտով ասաց վերակացուն,— ես պատրաստ եմ։

— Դե սկսեցեք, սկսեցեք, տղերք,— ճղճղաց Մորգաչը։

Բայց չնայած բոլորի միահամուռ ցանկությանը, ոչ ոք չսկսեց, վերակացուն նույնիսկ չելավ նստարանից. բոլորը կարծես սպասում էին ինչ-որ բանի։

— Սկսեցեք,— մռայլ ու խիստ ասաց Դիկի Բարինը։

Սաշան ցնցվեց։ Վերակացուն վեր կացավ, գոտին պնդացրեց ու հազաց։

— Ո՞վ սկսի,— հարցրեց նա թեթևակի փոխված ձայնով Դիկի Բարինից, որ շարունակում էր անշարժ կանգնած մնալ սենյակի մեջտեղը, հաստ ոտներն իրարից հեռու դրած և ձեռները, համարյա մինչև արմունկները, շալվարի գրպանները կոխած։

— Դու, դու սկսիր,— թոթովեց Օբալդույը,— վերակացուին դիմելով,— դու սկսիր, ախպեր ջան։

Դիկի Բարինը հոնքերի տակից նայեց նրան։ Օբալդույը ձվծվացրեց, շփոթվեց, նայեց առաստաղին, ուսերը թոթվեց ու լռեց։

— Վիճակ գցենք,— ծոր տալով ասաց Դիկի Բարինը։— Մի չափ օղի տուր։

Նիկոլայ Իվանիչը կռացավ, տնքտնքալով հատակից վերցրեց մի չափ օղի և դրեց վաճառասեղանին։

Դիկի Բարինը նայեց Ցաշկային և ասաց՝ «դե՛»։

Ցաշկան գրպանները խառնեց, պղնձե մի դրամ գտավ և ատամով նշան արավ։ Վերակացուն կաֆտանի տակից հանեց կաշվե մի նոր դրամապանակ, առանց շտապելու արձակեց նրա թելը և, բազմաթիվ մանր դրամներ բուռը լցնելով, շոկեց մի նոր պղնձե դրամ։ Օբալդույը բռնեց իր հնամաշ գլխարկը, և Ցաշկան ու վերակացուն այնտեղ նետեցին իրենց դրամները։

— Դու շոկիր,— ասաց Դիկի Բարինը, դիմելով Մորգաչին։

Մորգաչը ինքնագոհ ժպտաց, երկու ձեռքով բռնեց գլխարկը ու թափահարեց։

Անմիջապես խորին լռություն տիրեց։ Դրամները թուլ զնգացին, միմյանց դիպչելով։ Ես ուշադիր նայում էի շուրջս, բոլոր դեմքերի վրա լարված սպասողականություն կար. Դիկի Բարինն ինքը աչքերը կկոցել էր. իմ հարևանը՝ պատված վերնաշորով գյուղացին, անգամ նա վիզը երկարել էր հետաքրքրությամբ։ Մորգաչը ձեռը կոխեց գլխարկը և հանեց վերակացուի դրամը. բոլորը շունչ քաշեցին։ Ցաշկան կարմրեց, իսկ վերակացուն ձեռքը քսեց մազերին։

— Ասում էի, որ դու պիտի սկսես,— բացականչեց Օբալդույը,— ասում էի, չէ՞։

— Դե, դե, ձենդ գլուխդ մի գցի,— արհամարհանքով նկատեց Դիկի Բարինը։— Սկսիր,— ասաց նա, վերակացուին գլխով անելով։

— Ի՞նչ երգեմ,— հարցրեց վերակացուն հուզվելով։

— Ինչ ուզում ես,— պատասխանեց Մորգաչը,— ինչ ուզում ես, էն էլ երգի։

— Իհարկե, ինչ ուզում ես,— ավելացրեց Նիկոլայ Իվա-

նիշը դանդաղորեն ձեռները կրծքին խաչելով։— Էդ քո կամքն ա, որը կուզես երգի. միայն թե լավ երգի. իսկ հետո մենք խղճով կորոշենք։

— Իհարկե, խղճով,— վրա բերեց Օբալդույը և լիզեց դատարկ բաժակի պռունկը։

— Թողեք, ախպեր ջան, մի հազամ, բուկս մաքրեմ,— ասաց վերակացուն, ձեռը կոկորդին տանելով։

— Դե, դե, շուտ, սկսիր,— ասաց Դիկի Բարինը և աչքերը խոնարհեց։

Վերակացուն մտածեց մի փոքր, գլուխը թափ տվեց ու առաջ եկավ։ Ցաշկան աչքերը հառեց նրան...

Բայց նախքան մրցությունը նկարագրելը, ես ավելորդ չեմ համարում մի քանի խոսք ասել պատմությանս գործող անձերի մասին։ Դրանցից մի քանիսի կյանքն ինձ ծանոթ էր արդեն, երբ հանդիպեցի նրանց Ապատան օղետանը. մյուսների մասին տեղեկություն հավաքեցի հետո։

Սկսենք Օբալդույից։ Այդ մարդու իսկական անունը Եվգրաֆ Իվանով էր. բայց նրան ամբողջ շրջակայքում ուրիշ կերպ չէին կանչում, քան Օբալդույ, ինքը ևս իրեն մեծարում էր այդ կոչումով. այնպես լավ էր կպել անունը նրան։ Եվ իրոկապես, այդ անունն ավելի լավ էր սազում նրա աննշան, մշտապես անհանգիստ դիմագծերին։ Դա մի քեֆասեր, ամուրի, տանու ճորտ էր, որից իր սեփական տերերը շատ վաղուց ձեռ էին քաշել և որը, ոչ մի պաշտոն չունենալով և մի կոպեկ ռոճիկ չստանալով, այնուամենայնիվ հնար էր գտնում ամեն օր ուրիշի հաշվին քեֆ անել։ Նա ուներ շատ ծանոթներ, որոնք օղի ու թել էին խմեցնում նրան, իրենք էլ չիմանալով ինչու, որովհետև նա հասարակության մեջ ոչ միայն զվարճաբան չէր, այլ ընդհակառակը, բոլորին ձանձրացնում էր իր անմիտ դատարկախոսությամբ, անտանելի անհերսությամբ, մարմնի հիվանդագին շարժումներով, և անընդհատ, անբնական քրքիջով։ Նա չէր կարողանում ո՛չ երգել, ո՛չ պարել, կյանքում ոչ միայն խելացի խոսք չէր ասել, այլև մի լուրջ բան. ամբ ու ձուխ սուտ էր ասում։ Բայց և այնպես մեր շրջանում՝ քառասուն վերստի վրա չէր լինում մի կերուխում, որտեղ չներևար նրա երկար ու վտիտ հասակը հյուրերի մեջ,— այդպես արդեն ընտելացել էին նրան և նրա ներկայությունը տանում էին, ինչպես անխուսափելի չարիք։ Ճիշտ է, նրան վերաբերվում էին արհամարհանքով, բայց նրա անհեթեթ բռնկումները կարողանում էր գսպել միայն Դիկի Բարինը։

Մորգաշը բնավ նման չէր Օբալդույին։ Նրան էլ սազում էր իր Մորգաշ (աչքեր թարթող) կոչումը, թեև նա աչքերն ուրիշներից շատ չէր թարթում. հայտնի բան է. ռուս ժողովուրդը փթթ անուններ տալու վարպետ է։ Չնայած իմ բոլոր ջանքերին՝ մանրամասն իմանալ այդ մարդու անցյալը, նրա կյանքում ինձ համար,— և երևի ուրիշ շատերի համար էլ,— մնացին մութ կետեր (ինչպես ասում են գրքի մարդիկ)՝ ծածկված անհայտության խորին խավարով։ Իմացա միայն, որ մի ժամանակ կապապան է եղել մի պառավ, անզավակ կնոջ մոտ, փախել է իրեն վստահած կառքն ու ձիերն առած, կորել է մի ամբողջ տարի և, երևի, համոզվելով, որ թափառական, աղեստյի կյանքը ձեռնտու չի, վերադառնում է իր կամքով, բայց արդեն կաղ. ընկնում է տիրուհու ոտները և, մի քանի տարվա մեջ, օրինակելի վարքով ուղղելով իր հանցանքը, արժանանում է վերջապես տիրուհու լիակատար վստահությանը, դառնում գործակատար, իսկ տիրուհու մահից հետո, հայտնի չէ ինչպես, ազատվում է ճորտությունից, գրվում-դառնում է մեջլան, վարձով վերցնում է հարևանների բանջարանոցները, հաստատանում, և այժմ ապրում է իր քեֆին, ուրախ։ Սա փորձված մարդ է, խելքը գլխին, ո՛չ բարի և ո՛չ չար, այլ ավելի հաշվով. նա ճանաչում է մարդկանց և կարողանում է օգտվել նրանցից։ Զգույշ է և միաժամանակ հնարագետ, ինչպես աղվես. շատախոս է, ինչպես պառավ կին, բայց երբեք բանից բան չի թոցնի, իսկ ուրիշներին կստիպի ամեն բան ասել, երբեք պարզամիտ չի ձևանում, ինչպես անում են ուրիշ խորամանկ մարդիկ, և դժվար էլ կարող էր ձևանալ. երբեք ավելի թափանցող ու խելացի աչքեր չեմ տեսել, քան նրա փոքրիկ, խորամանկ աչքերը։ Դրանք երբեք պարզ, հասարակ չեն նայում, շարունակ գիտում են, զննում։ Մորգաշը երբեմն շաբաթներով մտածում է մի բանի, ըստ երևույթին, հասարակ ձեռնարկելիք բան, բայց մեկ էլ մի այնպիսի համարձակ գործ է անում, որ թվում է պիտի խրվի... տեսնում ես՝ ամեն ինչ հաջող գնաց։ Բախտավոր է և հավատում է իր բախտին, հավատում է զանազան նշաններին։ Նա առհասարակ շատ սնա-

հավատ է։ Նրան չեն սիրում, որովհետև ինքն էլ ոչ մեկով չի հետաքրքրվում, բայց հարգում են։ Նրա ամբողջ ընտանիքը բաղկացած է միակ որդուց, որի համար գժվում է, և որը մի այդպիսի հոր կողմից դաստիարակված, երևի, շատ առաջ կերթա։ «Բայց պատիկ Մորգաչը հորն ա քաշել»,— այժմյանից արդեն խոսում են ծերերը՝ պատերի տակ նստոտած, ամառվա երեկոները զրուցելիս. և բոլորը հասկանում են, թե դա ինչ է նշանակում, ու էլ ոչ մի խոսք չեն ավելացնում։

Թուրք Ցաշկայի ու վերակացուի մասին երկար խոսելու կարիք չկա։ Ցաշկան Թուրք է կոչվում նրա համար, որովհետև ծագումը գերի Թրքուհուց է. նա հոգով արվեստագետ է, այս խոսքի բովանդակ իմաստով, իսկ արհեստով՝ թղթի գործարանի բանվոր է։ Ինչ վերաբերում է վերակացուին, որի վիճակը, խոստովանում եմ, մնաց ինձ անհայտ, նա ինձ թվաց քաղաքի ճարպիկ և ժիր մեշչանին։ Իսկ Դիկի Բարինի մասին արժի մի քիչ ավելի երկար խոսել։

Առաջին տպավորությունը, որ թողնում էր ձեզ վրա այդ մարդու տեսքը, դա մի ինչ-որ կոպիտ, ծանր, անդիմադրելի ուժի զգացումն էր։ Նա անճոռնի կազմվածք ուներ ու երկաթե առողջություն, և, տարօրինա՜կ բան, նրա արջային կերպարանքը զուրկ չէր յուրօրինակ գրացիայից, որ առաջանում էր, թերևս, սեփական զորության նկատմամբ ունեցած կատարյալ վստահությունից։ Առաջին անգամից դժվար էր որոշել, թե որ դասին է պատկանում այդ Հերկուլեսը. նա նման չէր ո՛չ ճորտի, ո՛չ մեշչանի, ո՛չ աղքատացած գրագրի, ո՛չ էլ սնանկացած մանր-կալվածատեր ազնվականի, որ շներ է պահում ու կռիվներ սարքում. նա հենց ինքն էր, որ կար։ Ոչ ոք չէր իմանում, թե նա որտեղից է ընկել մեր գավառը. ասում էին, որ նա ծագում է առանձին տնտեսություն ունեցող գյուղացիներից[1] (однодворцев) և իբր թե մի ժամանակ ծառայության մեջ է եղել, բայց հաստատ ոչինչ չգիտեին այդ մասին և ումից պիտի իմանային,— իրենց հո չէր կարելի. չկար նրանից ավելի լռակյաց ու մռայլ մարդ։ Նույնպես ոչ ոք չէր կարող հաստատապես ասել, թե նա ինչով է ապրում, ոչ մի արհեստով չէր զբաղվում, ոչ ոքի մոտ հյուր չէր գնում, ոչ ոքի հետ համարյա ծանոթություն չէր հաստատում, բայց փող ուներ, ճիշտ է, քիչ, բայց ուներ։ Նա իրեն ոչ թե համեստ էր պահում,— նրա մեջ առհասարակ համեստ բան չկար,— այլ հանգիստ. նա ապրում էր այնպես, կարծես շուրջը մարդ չէր նկատում և ուղղակի ոչ ոքի կարիքը չէր զգում։ Դիկի Բարինը (այդպես էին կոչում նրան, իսկ նրա իսկական ազգանունը Պերեվլեսով էր) մեծ ազդեցություն ուներ և սիրով, թեև նա ոչ մի այն ոչ մի իրավունք չուներ որևէ մեկին հրամայելու, այլ ինքն անգամ ամենափոքրիկ ցանկությունը չէր արտահայտում հնազանդեցնելու այն մարդկանց, որոնց հետ շփվում էր պատահաբար։ Նա խոսում էր՝ մարդիկ հնազանդում էին. ուժը միշտ իրենը անում է։ Նա համարյա օղի չէր խմում, կանանց հետ չէր լինում և սաստիկ սիրում էր երգ։ Այդ մարդու մեջ խորհրդավոր շատ բան կար. թվում էր՝ նրա ներսը մռայլորեն նիրհում են ինչ-որ վիթխարի ուժեր, նա, երևի, գիտեր, որ եթե դրանք գլուխ բարձրացրին ու շղթայազերծ եղան, պիտի խորտակեն և՛ իրեն, և՛ բոլորը, ինչի էլ դիպչեն. և ես շատ չեմ սխալվի, եթե ասեմ, որ այդ մարդու կյանքում նման բունկում եղել է արդեն, որի փորձից խրատված և կործանումից հաղիվ փրկված, այժմ անողոք կերպով ինքն իրեն զսպած է պահում։ Նրա մեջ ինձ զարմացնում էր մանավանդ մի ինչ-որ բնածին վայրագության և նույնպես բնածին ազնվության խառնուրդ, որ ես չեմ տեսել ոչ մի այլ մարդու մեջ։

Այսպես ուրեմն, վերակացուն առաջ եկավ, աչքերը փակեց վականին դուրեկան էր ու քաղցր, թեև փոքր-ինչ խռպոտ, նա այդ ձայնը խաղացնում էր բզզան խաղալիքի պես. անդադար գեղգեղում էր ու կլկլացնում վերից վար և անդադար վերադառնում վերին նոտաներին, որոնք պահում ու երկարացնում էր առանձին ջանասիրությամբ, լռում էր, և ապա հանկարծ վերցնում նախկին եղանակը՝ մի տեսակ շախով, ճարպիկ ու կռվազան արիությամբ։ Նրա ելևէջները երբեմն

---

[1] Հին ճորտատիրական Ռուսաստանում մարդկանց առանձին դաս էր. նրանցից յուրաքանչյուրն ուներ առանձին փոքրիկ հողամաս, իր առանձին անտեսությամբ, որի համար և նրանք կոչվում են однодворец։ Աղքատացած ազնվականները երբեմն մտնում էին նրանց շարքը, այդ պատճառով однодворец-ները, ճորտերի համեմատությամբ, օգտվում էին որոշ արտոնություններով և իրենք ևս իրավունք ունեին ճորտեր պահելու։ Ճորտատիրության վերացումով՝ վերացան և իրենց արտոնությունները։ Ս. Թ.։

բավականին համարձակ էին, երբեմն բավականին ծիծաղելի, գիտակ մարդուն նրանք մեծ բավականություն կպատճառեին, գերմանացին կգայրանար դրանից։ Դա ռուսական tenore di gratia, ténor léger էր։ Նա երգում էր մի ուրախ պարեղանակ, որի խոսքերը, որքան կարողացա լսել անվերջ զարդարանքների ու բացականչությունների միջից, հետևյալն էին.

Распашу я молода-молоденька,
Землицы маленько;
Я посею, молода-молоденька,
Цветика аленька.

Նա երգում էր. բոլորը լսում էին նրան մեծ ուշադրությամբ։ Նա ըստ երևույթին զգում էր, թե գործ ունի հասկացող մարդկանց հետ, և այդ էր պատճառը, որ, ինչպես ասում են, դաշվից դուրս էր գալիս։ Մեր կողմերում, իսկապես, հասկանում էին ինչ բան է երգը, և իզուր չէ, որ Ծրյոլի մեծ ճանապարհի վրա գտնվող Սերգենևկ գյուղը հռչակված է ամբողջ Ռուսաստանում իր դուրեիան եզանակներով։ Ծրիար երգում էր վերակացուն, շատ ուժեղ համաձիրանք չհարուցելով ունկնդիրների մեջ. նրան պակասում էր ձայն պահող, խոր, վերջապես, մի հաջող ելևէջի ժամանակ, որը անգամ իրեն՝ Դիկի Բարինին հարկադրեց ժպտալ, Օբալդույը չկարողացավ իրեն պահել և ուրախությունից բացականչեց։ Բոլորը ցնցվեցին։ Օբալդույն ու Մորգաչը սկսեցին կիսաձայն երգել ու ճչալ... «Ծիր, սրտալի երգիր, անզգա՛մ... Ջիր, չա՛ր արարած... Էլի՛» և այլն։ Նիկոլայ Իվանիչը վաճառասեղանի հետևից աջ ու ձախ հավանություն էր տալիս գլխով։ Օբալդույը, վերջապես, ոտները փոխելով՝ խփեց գետնին և ուսը ցնցեց,— իսկ Ցաշկայի աչքերը վառվում էին ածուխների պես. նա ամբողջովին դողում էր տերևի նման ու ցրված ժպտում։ Մենակ Դիկի Բարինի դեմքը չփոխվեց, և նա առաջվա պես էլի չշարժվեց տեղից։ բայց հայացքը, որ հառել էր վերակացուին, փոքր-ինչ մեղմացավ, թեև շրթունքների արտահայտությունը մնաց արհամարհական։ Ընդհանուր ուրախության նշաններից քաջալերված, վերակացուն բոլորովին ոգևորվեց, ու սկսեց ձայնի այնպիսի խաղեր, լեզվով այնպես էր տրաքացնում ու թմբկահարում, կոկորդով այնպես գեղգեղում, որ, երբ, վերջապես,

հոգնած, գունատ և տաք քրտինքով ծածկված՝ նա, ամբողջ մարմնով ետ գնալով՝ արձակեց իր վերջին մարող ձայնը՝ ունկնդիրները պատասխանեցին նրան մի ընդհանուր, հաստուն ու մոլեգին ճիչով։ Օբալդույը նրա վզովն ընկավ և իր երկար, ոսկրոտ ձեռներով սկսեց ուրախությունից խեղդել նրան։ Նիկոլայ Իվանիչի ճարպոտ դեմքին կարմրություն երևաց, և նա կարծես ջահելացավ։ Ցաշկան, խելագարի պես, բացականչեց՝ «կեցցե՛, կեցցե՛», մինչև իսկ իմ հարևանը՝ մաշված վերնազգեստով գյուղացին՝ չհամբերեց և, բռունցքը սեղանին զարկելով, գոչեց. «Ա՛յ, լա՛վ էր, գրողը տանի, շա՛տ լավ էր»։ և հանարձակ թքեց մի կողմ։

— Կեցցե՛ս, ախպեր ջան, ուրախացիր,— ճչում էր Օբալդույը, հալից ընկած վերակացուին բաց չթողնելով իր գրկից,— ուրախացիր, խոսք չունեմ։ Դու տարար, ախպեր ջան, տարար։ Շնորհավորում եմ։ Մի չափ օղին քունն ա։ Ցաշկան քեզ չի հասնի... ասում եմ՝ չի հասնի... Եվ դու ինձ հավատա (Եվ նա վերակացուին նորից սեղմեց իր կրծքին)։

— Գե, թող նստի, իսկ ես նրա կենացը կխմեմ,— ասաց Օբալ-Մորգաչը,— թող մարդը նստի. տեսնում ես հոգնել ա... Քեզ հիմարն ես, տո. իսկապես հիմար ես։ Ի՞նչ ես տզրուկի պես կպել։

— Գե, թող նստի, իսկ ես նրա կենացը կխմեմ,— ասաց Օբալդույը և մոտեցավ վաճառասեղանին։— Քու հաշվին, ախպեր ջան,— ավելացրեց նա, վերակացուին դառնալով։

Վերակացուն գլխով արավ, նստեց, գլխարկից հանեց երեսսրբիչն ու սկսեց երեսը սրբել. իսկ Օբալդույը ագահությամբ օղու բաժակը գլխին քաշեց և, մոլի հարբեցողների սովորությունն համաձայն, կռնչացնելով, տխուր, մտազբաղ տեսք ընդունեց։

— Լավ ես երգում, ախպեր ջան, լավ,— փաղաքշանքով նկատեց Նիկոլայ Իվանիչը։— Հերթը հիմի քունն է, Ցաշկա, տես, մի քաշվի։ Տեսնենք ով ում, տեսնենք... Բայց վերակացուն լավ է երգում, ասված վկա, լավ է։

— Շա՛տ լավ ա,— նկատեց Նիկոլայ Իվանիչի կինը և ժպտալով նայեց Ցաշկային։

— Լավ ա՛,— կրկնեց հարևանս կիսաձայն։

— Հա, էգ դու որտեղի՞ց,— գոռաց հանկարծ Օբալդույը և

գյուղացուն մոտենալով, մատը մեկնեց դեպի նա, ծուլ-ծուլ եղավ ու սկսեց բարձրաձայն քրքջալ։— Տես, սուսուփուս նըստել է։ Ինչի՞ ես եկել, հը՞,— գոչեց նա ծիծաղելով։

Խեղճ գյուղացին շփոթվեց և այն է՝ ուզում էր վեր կենալ հեռանալ, երբ հանկարծ լսվեց Դիկի Բարինի պղնձյա ձայնը։

— Սա ի՞նչ անտանելի անասուն է,— արտասանեց նա, ատամները կրճտելով։

— Ես... ոչինչ,— թոթովեց Օբալդույը,— ես, ոչինչ... էնպես...

— Դե, լավ, ձենդ կտրի,— վրա բերեց Դիկի Բարինը։— Ցաշկա, սկսիր։

Ցաշկան ձեռով բռնեց բուկը։

— Ինչ-որ մի տեսակ է... ինչ-որ... հըմ... Չգիտեմ, խակապես, ինչ-որ...

— Դե, լավ, մի ամաչի։ Ամոթ է... Ի՞նչ ես նազուտուզ անում... Երգի, ինչպես աստված հրամայում է...

Եվ Դիկի Բարինը, աչքերը ցած խոնարհելով, սպասեց։

Ցաշկան լռեց, նայեց չորս կողմը և երեսը ծածկեց ձեռով։ Բոլորը աչքերը հառեցին նրան, մանավանդ վերակացուն, որի դեմքին սովորական ինքնավստահության և հաջողության հաղթանակի միջից երևաց մի ակամա, թեթև անհանգստություն։ Նա մեջքը դեմ արավ պատին և ձեռները նորից դրեց տակը, բայց էլ ոտները չէր խաղացնում։ Իսկ երբ, վերջապես, երբ Ցաշկան երեսը բաց արավ՝ նրա երեսը գունատ էր մեռելի դեմքի պես. աչքերը հազիվ էին փայլում ցած խոնարհած արտևանունքների տակից։ Նա խոր շունչ քաշեց ու երգեց... Նրա ձայնի առաջին հնչյունը թույլ էր ու անհարթ և, թվում էր, թե դա նրա կրծքից դուրս չեկավ, այլ եկավ ինչ-որ մի հեռու տեղից, կարծես պատահաբար թռավ-ընկավ սենյակը։ Տարօրինակ ազդեցություն արավ այդ դողացող, ղողանջող հնչյունը բոլորիս վրա. մենք իրար նայեցինք, իսկ Նիկոլայ Իվանիչի կինը ուղղվեց տեղնուտեղը։ Այդ առաջին հնչյունին հետևեց մի ուրիշը, ավելի հաստատուն ու ձիգ, բայց տակավին դողդոջուն, ինչպես լարը, երբ հանկարծ մատի ուժգին հարվածի տակ հնչելով՝ դողդողում է վերջին, արագորեն մարող դողդոջյունով, երկրորդին հետևեց երրորդը և, հետզհետե տաքանալով ու ընդարձակվելով, հոսեց տխուր երգը։ «Не

одна вополе дороженка пролегала», երգում էր նա, և մենք բոլորս զգացինք մի տեսակ քաղցրություն ու սարսուռ։ Խոստովանում եմ, այդպիսի ձայն քիչ եմ լսել. այդ ձայնը թեթևակի ճաթած էր ու հնչում էր պատռվածի պես. նա մինչև իսկ սկզբում հնչեց մի տեսակ հիվանդագին. բայց նրա մեջ կար և՛ անխառն ու խոր կիրք, և՛ ջահելություն, և՛ ուժ, և՛ քաղցրություն, և մի տեսակ գրավիչ, անհոգ թախիծ։ Ռուսական. անկեղծ, ջերմ սիրտ էր հնչում այդ երգի մեջ, ու հափշտակում ձեր սիրտը, դիպչում նրա ռուսական լարերին։ Երգը աճում-տարածվում էր։ Ցաշկան ըստ երևույթին հափշտակության մեջ էր. նա այլևս չէր քաշվում, ամբողջովին անձնատուր էր եղել իր տարերքին. նրա ձայնն այլևս չէր դողդոջում— նա դողում էր կրքի այն հազիվ նկատելի ներքին դողդոջով, որ նետի պես խրվում է լսողի սիրտը, և անդադար ամրանում էր, ուժեղանում ու ծավալվում։ Հիշում եմ, մի անգամ, երեկոյան, մակընթացության ժամանակ, հեռվում ահարկու ձայնով աղմկող ծովի տափակ, ավազոտ ափին՝ տեսա մի մեծ սպիտակ ճայ. նա անշարժ նստած՝ մետաքսե կուրծքը դեմ էր արել արշալույսի կարմիր ցոլքերին, և երբեմն միայն դանդաղորեն բացում-լայնացնում էր իր երկար թևերը ծանոթ ծովի ու ելնող կարմիր արևի հանդեպ. լսելով Ցաշկային, հիշեցի այդ ճային, նա երգում էր, մոռացած և՛ իր մրցակցին, և՛ մեզ բոլորիս, բայց, ըստ երևույթին, ինչպես առույգ լողորդը ալիքներից, նա բարձրանում էր մեր անխոս, բուռն համակրանքից։ Նա երգում էր, և նրա ձայնի յուրաքանչյուր հնչյունից զգում էիր հայրենի և անասելի լայն մի բան, կարծես ծանոթ տափաստանը տարածվում էր քո առաջ, գնալով դեպի հեռուն, անսահման հեռուն։ Զգացի, որ արցունքները եռում էին սրտումս և բարձրանում դեպի աչքերս. հանկարծ մի խուլ, զսպված հեկեկանք զարմացրեց ինձ... ետ նայեցի՝ օղեվաճառի կինը լաց էր լինում, կրծքով լուսամուտի գոգին ընկած։ Ցաշկան մի արագ նայվածք գցեց նրա վրա և գեղգեղաց առաջվանից բարձր ու անուշ ձայնով. Նիկոլայ Իվանիչը աչքերը խոնարհեց ցած, Մորգաչը շուռ եկավ. Օբալդույը ամբողջովին մեղմացած, կանգնել էր հիմարի պես բերանը բացգյուղացին կամացուկ հեկեկում էր անկյունում, տխուր շշունջով գլուխն օրորելով, իսկ Դիկի Բարինի երեսով, բոլորովին

կիտած հոնքերի տակից դանդաղ գլորվում էր արցունքի մի խոշոր կաթիլ. վերակացուն սեղմած բռունցքը դեմ արավ ճակատին ու էլ չշարժվեց... Չգիտեմ ինչով կվերջանար այս բոլորը, եթե Յաշկան իր երգը չվերջացներ մի բարձր, չափազանց նուրբ հնչյունով. նրա ձայնը կարծես կտրվեց։ Ոչ ոք ծպտուն չհանեց, անգամ չշարժվեց. բոլորը կարծես սպասում էին, թե էլ չի՞ երգելու արդյոք, բայց նա թևերը բացեց, ասես մեր լռությունից զարմացած, հարցական նայվածքով նայեց շուրջը՝ մեզ բոլորիս և տեսավ, որ ինքը հաղթել է...

— Յաշա,— ասաց Դիկի Բարինը, ձեռը դրեց նրա ուսին ու լռեց։

Բոլորս կանգնած էինք քարացածի պես։ Վերակացուն կամաց վեր կացավ ու մոտեցավ Յաշկային. «Դա քոնն է... դու տարար»,— արտասանեց նա, վերջապես, դժվարությամբ և նետվեց սենյակից դուրս...

Նրա արագ, վճռական շարժումը կարծես խախտեց մի կախարդված դրությունը. բոլորը հանկարծ խոսեցին աղմկալից, ուրախ։ Օբալդույը վեր թռավ, սկսեց թոթովել ու ձեռները թափահարել հողմաղացի թևերի նման։ Մորգաչը կռզալով մոտեցավ Յաշկային և սկսեց համբուրել նրան։ Նիկոլայ Իվանիչը վեր կացավ և հանդիսավորապես հայտարարեց, որ իր կողմից ավելացնում է մի չափ օղի ևս. Դիկի Բարինը ծիծաղեց մի տեսակ բարի ծիծաղով, որ ոչ ոք չէր սպասում տեսնել նրա դեմքին, իսկ գյուղացին իր անկյունում, թևքերով աչքերը, այտերը, քիթն ու մորուքը սրբելով՝ կրկնում էր. «Ալ լա՜վ էր, ես իմ աստվածը, լավ էր. շան որդի ըլեմ, թե լավ չէր, լա՜վ էր», իսկ Նիկոլայ Իվանիչի կինը, ամբողջովին կարմրած, վեր կացավ ու դուրս գնաց։ Յաշկան երեխայի պես հոգնվում էր իր հաղթանակով, նրա դեմքն ամբողջ կերպարանափոխվել էր, մանավանդ աչքերը փայլում էին երջանկությունից։ Նրան քարշ տվին դեպի վաճառասեղանը. Յաշկան մոտ կանչեց գյուղացուն. օղեվաճառի որդուն ուղարկեց վերակացուի ետևից, որին սակայն նա գտնել չկարողացավ, ու քեֆն սկսվեց։— Դու դեռ պիտի երգես մեզ համար. մինչ իրիկուն պիտի երգես մեզ համար,— կրկնեց Օբալդույը, ձեռները գլխից վերև բարձրացնելով։

Ես մի անգամ ևս նայեցի Յաշկային ու դուրս եկա

Ցուզեցի մնալ՝ վախենում էի տպավորությունս փչացնեմ։ Բայց շոգն անտանելի էր առաջվա պես։ Նա կարծես կախված էր երկրի վրա՝ թանձր, ծանր մի շերտով, մութ կապույտ երկնքի երեսին, թվում էր, պտտվում են ինչ-որ մանր, պայծառ կրակներ։ Ամեն ինչ լուռ էր. և մի անհույս, ճնշված բան կար թուլացած բնության այդ խորին լռության մեջ։ Ես հասա մի խոտանոց և պառկեցի հենց նոր հնձած, բայց արդեն համարյա թե չորացած խոտի վրա։ Երկար չէի կարողանում ննջել. ականջներումս երկար հնչում էր Յաշկայի անդիմադրելի ձայնը... Վերջապես, շոգն ու հոգնածությունը իրենցն արին այնուամենայնիվ, և ես քնեցի մեռելային քնով։ Երբ զարթնեցի՝ ամեն ինչ մթնել էր արդեն. շուրջս թափթփված խոտը ուժեղ բուրմունք էր արձակում և համարյա խոնավացել էր. կիսաբաց տանիքի բարակ ձողերի արանքից թույլ թարթում էին գունատ աստղերը։ Ես դուրս եկա խոտանոցից։ Վերջալույսը վաղուց արդեն հանգել էր. և հորիզոնի վրա հազիվ սպիտակին էր տալիս նրա վերջին հետքը. բայց քիչ առաջ կծացած օդում, գիշերային թարմության միջից զգացվում էր դեռ տաքությունը, և կուրծքս տակավին ծարավի էր մի գոմ զեփյուռի։ Քամի չկար, չկային և ամպեր. երկինքն ամեն կողմ մաքուր էր և թափանցիկ մութ, հանդիստ առկայծում էր անթիվ, բայց հազիվ նկատելի աստղերով։ Գյուղում ճրագներ էին երևում, ոչ շատ հեռու, պայծառ լուսավորված օդեմտից գալիս էր անկարգ, խառն աղմուկ, որի մեջ, թվում էր, ես ճանաչեցի Յաշկայի ձայնը։ Ժամանակ առ ժամանակ այնտեղից գալիս էր բուռն ծիծաղի ձայն։ Մոտեցա լուսամուտին և երեսս դեմ արի ապակուն։ Ահ տեսա մի անուրախ, թեև խայտաբղետ ու գենդանի պատկեր։ Բոլորը հարբած էին, բոլորը, սկսած Յաշկայից։ Նա, կուրծքը բաց, նստել էր նրբատարանին և խպոտ ձայնով մի ինչ-որ պարեղանակ երգելով, ծուլորեն զարկում էր կիթառի լարերին։ Խոնավ մազերը փնջերով կախվել էին նրա տարտափելի գունատ դեմքի վրա։ Օղետան մեջտեղը, Օբալդույը, բոլորովին «տեղահան եղած» ու առանց կափտանի, ծուլ-ծուլ լինելով՝ պարում էր գորշ վերնազգեստով գյուղացու առաջ. իսկ գյուղացին, իր հերթին, դժվարությամբ թպպացնում ու քստքստացնում էր թուլացած ոտները և, անմտորեն ժպտալով իր խճճված մորուքի միջից,

երբեմն թափահարում էր մի ձեռը, կարծես կամենում էր ասել՝ «ինչ էլ չլինի»։ Նրա դեմքից ավելի ծիծաղելի բան չէր կարող լինել. որքան էլ հոնքերը վեր էր ձգում, ծանրացած կոպերը չէին կամենում բարձրանալ, և այնպես էլ մնում էին պառկած հազիվ նկատելի, պղտորված, բայց քաղցրացած աչքերի վրա։ Նա գտնվում էր լավ կոնծած մարդու այն վիճակի մեջ, երբ ամեն մի անցորդ նրա դեմքին նայելով, անպայման կասեր. «Լավ ես, ախպեր, շատ լավ ես»։ Մորգաչն ամբողջովին, խեցգետնի պես կարմրած և ռունգներն ուռցրած, կծու ծիծաղով ծիծաղում էր անկյունում. մենակ Նիկոլայ Իվանիչն էր (ինչպես և պատշաճ է իսկական օղեվաճառին), որ պահպանել էր իր անփոփոխ պաղարյունությունը։ Սենյակում շատ նոր մարդիկ կային, բայց Դիկի Բարինին նրանց մեջ չտեսա։

Ես շուտ եկա և արագ քայլերով սկսեցի իջնել բլրից, որի վրա ընկած է Կալատովկան։ Այդ բլրի ստորոտում տարածվում է մի ընդարձակ հարթավայր. ողողված երեկոյան մշուշի մառախլապատ ալիքներով՝ այդ հարթավայրը թվում էր էլ ավելի անսահման և կարծես ձուլվում էր մթնած երկնքի հետ։ Խոշոր քայլեր անելով՝ իջնում էի ձորի երկարությամբ ընկած ճանապարհով, երբ հանկարծ հարթավայրի հեռվից՝ ինչ-որ տեղից լսվեց տղայի մի զիլ ձայն։ «Անտրոպկա՜... Անտրոպկա՜-ա՜-ա՜»,— կանչում էր նա համառ, արտասովոր հուսահատությամբ, վերջին վանկը երկարորեն ծոր տալով։

Նա լռում էր երկու վայրկյան և նորից սկսում կանչել։ Նրա զիլ ձայնը տարածվում էր անշարժ, թեթև նիրհած օդի մեջ։ Համարյա երեսուն անգամ կանչեց նա, տվեց Անտրոպկա անունը, երբ հանկարծ, վերջապես, դաշտի հակառակ ծայրից, կարծես մի ուրիշ աշխարհից, եկավ հազիվ լսելի պատասխանը.

— Ինչ ա-ա-ա՜։

Տղայի ձայնն անմիջապես ուրախ բարկությամբ կանչեց.

— Արի էստեղ, գրողի տարա-ա-ա՜ծ։

— Ի՞նչ կա-ա-ա՜,— պատասխանեց մյուսը, բավական ժամանակ անց։

— Արի, արի, հերդ ուզում ա քեզ ծե-ե-եծի,— շտապ կանչեց առաջին ձայնը։

Երկրորդ ձայնն այլևս չպատասխանեց, և տղան նորից

սկսեց կանչել Անտրոպկային։ Նրա կանչերը, ավելի ու ավելի պակասելով ու նվազելով, դեռ հասնում էին ականջիս, երբ արդեն բոլորովին մթնել էր, և ես հասել էի ծայրը անտառի, որը շրջապատում է մեր գյուղը և ընկած է Կալատովկայից չորս վերստ հեռու...

«Անտրոպկա-ա-ա՜», թվում էր լսում եմ դեռ գիշերվա ստվերներով լցված օդի մեջ։

1850

ԿԵՆԴԱՆԻ ՄԱՍՈՒՆՔ

Краай родной долготерпенья,
Край ты русского народа.

Ф. Тютчев.

Ֆրանսիական առածն ասում է. «Չոր ձկնորսը և թրջված որսորդը տխուր պատկեր են ներկայացնում»։ Ոչ մի հակում չունենալով դեպի ձկնորսությունը, չեմ կարող դատել, թե ինչ է զգում ձկնորսը լավ պայծառ եղանակին և որքան, վատ եղանակին, բավականություն, որ պատճառում է նրան առատ որսը և մոռացնել տալիս թաց լինելու անախորժությունը։ Բայց որսորդի համար անձրևը կատարյալ աղետ է։ Հենց մի այդպիսի աղետի ենթարկվեցինք ես ու Երմոլայը մի օր, երբ գնացել էինք Բելևի գավառը միրհավ որսալու։ Արշալույսից սկսած անձրևը չէր դադարում։ Ինչեր ասես չարինք, որ նրանից ազատվենք։ Գլխից հետ ծածկվում էինք և՛ մեր ռետինե անձրևաթափերով կանգնում էինք և ծառերի տակ, որ քիչ կաթի վրաներս... Անձրևաթափերը, էլ չասենք թե խանգարում էին կրակելուն, այլև անամոթ կերպով ջուրը անցանում էին. իսկ ծառերի տակ, ճիշտ է, սկզբում կարծես չէր կաթում, բայց հետո սաղարթի մեջ հավաքված ջուրը թափվում էր հանկարծ, յուրաքանչյուր ճյուղ թրջում էր մեզ ջրհորդանի պես. սառը շիթերը մտնում էին օձիքիս տակ և հոսում ողնաշարիս երկարությամբ... Սա արդեն համը տարավ, ինչպես արտահայտվեց Երմոլայը։

— Չէ, Պյոտր Պետրովիչ,— բացականչեց նա վերջա-

պես։— Էսպես չի՛ կարելի... Էսօր էլ որս անել չի լինի։ Շները թրջված մուկ են դառել, հրացաններս չեն տրաքում։ Թո՛ւ։ Էսպես էլ բա՞ն։

— Ի՞նչ անենք հապա,— հարցրի ես։

— Այ ինչ։ Գնանք Ալեքսեևկա։ Դուք, գուցե, չեք իմանում, մի էդպես ագարակ կա, որ պատկանում է ձեր մայրիկին. էստեղից ութ վերստի վրա է։ Գիշերը կմնանք էնտեղ, իսկ վաղը...

— Կվերադառնա՞նք այստեղ։

— Չէ, էստեղ չէ... Ալեքսեևկայից դենը որսի լավ տեղեր գիտեմ... Էնտեղի միրհավը էստեղ եղածից շատ լավն է։

Ես էլ չհարցրի հավատարիմ ուղեկցիս, թե ինչու ինձ ուղիղ այդ տեղերը չէր տարել, և նույն օրը հասանք մայրիկիս ագարակը, որի գոյության մասին, պետք է խոստովանեմ, մինչ այդ դաղափար չունեի։ Ագարակում մի տուն կար, շա՛տ հին, բայց որովհետև մեջը մարդ չէր ապրում, այդ պատճառով մաքուր էր. գիշերը նրա մեջ անցրի բավականին հանգիստ։

Հետևյալ օրը զարթնեցի շատ վաղ։ Արևը հենց նոր ծագել էր, երկնքում ամպի կտոր անգամ չկար. չորս կողմը ամեն ինչ փայլում էր առավոտյան թարմ ճառագայթների ու երեկվա հեղեղի փայլով։ Մինչ սայլակս սարքում էին, որ լծեն, ես գնացի փոքրիկ, երբեմն պտղատու, այժմ վայրի պարտեզում շրջելու, որը ամեն կողմից տունը շրջապատել էր իր հյութեղ բուրմունքով։ Ա՜խ, որքան լավ էր ազատ օդի մեջ, պարզ երկնքի տակ, ուր հրճվանքով թրթռում էին արտույտները և որտեղից թափվում էին նրանց հնչուն ձայների արծաթե հուլունքները։ Նրանք իրենց թևերի վրա, երևի, տարել էին ցողի կաթիլներ ու նրանց երգերն այժմ թվում էին ցողաթաթախ։ Ես մինչև անգամ գլխարկս հանեցի և շունչ քաշեցի հաճույքով՝ ամբողջ կրծքով... Ոչ այնքան խոր ձորակի լանջին, ցանկապատի հենց կողքին, երևում էր մի մեղվանոց. մի նեղ արահետ, օձի նման գալարվելով, խիտ անպետք խոտերի ու եղինջների միջով գնում էր դեպի մեղվանոցը։

Այդ արահետը բռնած՝ գնացի հասա մեղվանոց։ Նրա կողքին կար ծառերի ճյուղերից շինած մի ստվար, ուր ձմեռը փեթակներ են դնում։ Կիսաբաց դռնից նայեցի ներս. մութն էր, լուռ ու չոր. անանուխի և թուրինջ խոտի հոտ էր գալիս։ Անկյունում շինված էր մի տախտակամած, որի վրա, վերմակով ծածկված, պառկած էր մի փոքրիկ էակ... Ուզում էի հեռանամ...

— Աղա, ա՛յ աղա։ Պյոտր Պետրովիչ,— լսեցի մի թույլ ու խոպոտ ձայն։

Կանգ առա։

— Պյոտր Պետրովիչ։ Եկեք այստեղ, խնդրում եմ,— կրկնեց ձայնը։ Դա գալիս էր անկյունից, հենց իմ նկատած տախտակամածից։

Ես մոտեցա և զարմանքից արձանացա։ Առջևս պառկած էր մարդկային կենդանի էակ, բայց ի՞նչ բան էր դա։

Գլուխը բոլորովին չոր, միատեսակ բրոնզագույն, կատարյալ հին սրբանկար. քիթը բարակ, ինչպես դանակի բերան. շուրթերը համարյա չեն երևում, միայն ատամներն ու աչքերն են սպիտակին տալիս, և գլխաշորի տակից ճակատին են թափվում դեղին մազերի ցանցառ փնջերը։ Ծնոտի մոտ, վերմակի ծալի վրա, շարժվում են փայտիկների պես մատներ ունեցող ձեռները, որ նույնպես բրոնզագույն են։ Նայում եմ ուշադիր. դեմքը ոչ միայն անճոռնի չի, այլ մինչև իսկ սիրուն է, բայց սարսափելի ու անսովոր։ Այդ դեմքն ինձ սարսափելի էր թվում հենց նրանով, որ որքան էլ ճիգ, չանք էր թափում, բայց չէր կարողանում մետաղյա այտերի վրա ժպիտ գոյացնել։

— Դուք ինձ չե՞ք ճանաչում, աղա՛,— շշնջաց կրկին ձայնը, որը կարծես իսկույն շոգիացավ հազիվ շարժվող շուրթերից։— Ասենք որտեղի՞ց պիտի ճանաչես։ Ես Լուկերիան եմ... Հիշո՞ւմ եք, ձեր մայրիկի մոտ՝ Սպառկում խմբապար էի ղեկավարում... Հիշո՞ւմ եք, այն ժամանակ երգ ասող աղջիկ էի։

— Լուկերիա՛,— բացականչեցի ես։— Այդ դո՞ւ ես։ Մի՞թե։

— Այո՛, աղա՛, ե՛ս եմ, ե՛ս։ Լուկերիան եմ։

Չիմացա ինչ ասեմ և շշմածի պես նայում էի այդ մութ, անշարժ դեմքին, որ իր պայծառ և մեռելային աչքերը հառել էր վրաս։ Անկարելի բան է։ Այս մումիան՝ Լուկերիան, որը առաջին գեղեցկուհին էր մեր ճորտ սպասավորների մեջ,— բարձրահասակ, լեցուն, սպիտակամորթ ու կարմիր,— լավ

ծիծաղող, պարող, երգող մի աղջիկ։ Լուկերիան, այն խելացի Լուկերիան, որին այնպես սիրահարված էին մեր բոլոր երիտասարդները և որի համար ծածուկ հառաչում էի և ես՝ տասնվեց տարեկան պատանիս։

— Ասա մի տեսնեմ, Լուկերիա,— ասացի ես վերջապես,— ի՞նչ է պատահել քեզ։

— Էսպես փորձանք եկավ գլխիս։ Դուք, աղա, մի խորշնք ինձանից, նստեցեք ա՛յ էն կոտի վրա, մի քիչ մոտիկ, թե չէ ձայնս չեք լսի... տեսեք ի՞նչ ուժեղ ձայն ունեմ... է՛, շատ ուրախ եմ, որ ձեզ տեսա։ Էդ ինչպե՞ս է, որ Ալեքսեևկա եք ընկել։

Լուկերիան խոսում էր շատ կամաց և թույլ, բայց առանց դադարի։

— Ինձ որսկան Երմոլայը բերեց այստեղ։ Բայց դու պատմիր...

— Դժբախտությանս մասին պատմե՞մ։ Համեցեք, աղա ջան։ Ինձ էս բանը պատահել է վաղուց, վեց թե յոթը տարի առաջ։ էն ժամանակ հենց նոր էին նշանել ինձ Վասիլի Պոլյակովի հետ, հիշո՞ւմ եք, հաղթանդամ տղա էր, խուճուճ մազերով, ձեր մայրիկի մոտ բուֆետչան էր։ Դուք էդ ժամանակ արդեն գյուղում չէիք. գնացել էիք Մոսկվա սովորելու։ Ես ու Վասիլին սիրով կապվեցինք իրար. ուշք ու միտքս նրա հետ էր. իսկ դա գարնանն էր։ Մի անգամ ահա գիշերը... լուսաբացն էլ հեռու չի... քունս չի տանում. սոխակն էլ պարտեզում էնպես մի զարմանալի քաղցր երգո՞ւմ է... Համբերություս չտվեց, վեր կացա, գնացի դուռը՝ ականջ դնելու։ Երգո՞ւմ է սոխակը, երգո՞ւմ է... և հանկարծ ինձ թվաց, թե մեկը Վասիլի ձայնով կանչում է ինձ, էնպես կամաց՝ Լուշա՞... Ես քնաթաթախ նայեցի ձայնի կողմը, ետ-ետ գնացի և հանկարծ, թրը՞փ, ընկա գետին։ Կարծեմ, շատ էլ չէի ջարդվել, դրանից էր, որ շուտ վեր կացա ու սենյակս վերադարձա։ Միայն թե ներսս կարծես, փորիս մեջ, մի բան էր կտրվել... Թողեք շունչ քաշեմ... մի րոպե... աղա ջան։

Լուկերիան լռեց, և ես զարմանքով նայեցի նրան։ Զարմացրեց ինձ մանավանդ այն, որ նա իր պատմությունն անում էր գրեթե ուրախ, առանց ախ ու վախի, առանց որևէ գանգատի և կարեկցություն խնդրելու։

— Էդ դեպքից հետո,— շարունակեց Լուկերիան,— ես սկսեցի ոտիս վրա չորանալ. ցավ եկավ վրաս. դժվարությամբ սկսեցի ման գալ, ոտներս էլ արդեն թուլացան. չեմ կարողանում ո՛չ կանգնել, ո՛չ նստել. ուզում եմ միշտ պառկեմ. ո՛չ խմել եմ ուզում, ո՛չ ուտել. քանի գնում՝ վատանում եմ։ Ձեր մայրիկը, որպես բարի մարդ, ինձ թե՛ բժիշկներին ցույց տվեց, թե՛ հիվանդանոց ուղարկեց։ Բայց ո՛չ մի թեթևություն։ Ու մինչև անգամ ոչ մի բժիշկ էլ չկարողացավ ասի, թե էդ ինչ ցավ էր եկել վրաս։ Ինչե՞ր ասես չարին էդ բժիշկներն ինձ հետ. տաքացրած երկաթով մեջքս դաղեցին, նստացրին մանրացած սառցի մեջ, էլի ոչ մի օգուտ։ Բոլորովին կաշի ու ոսկոր կտրեցի... էդ ժամանակ աղան ու խանումը վճռեցին որ ինձ բժշկելու էլ կարիք չկա, իսկ աղայի տանը սախատ պահելն անհարմար է... և ուղարկեցին ինձ էստեղ, որովհետև ես էստեղ ազգականներ ունեմ։ Հրես ապրում եմ, ինչպես տեսնում եք։

Լուկերիան կրկին լռեց, կրկին աշխատեց ժպտալ։

— Բայց այդ սարսափելի՛ է, քո դրությունը,— բացականչեցի ես... և չիմանալով էլ ի՞նչ ասեմ՝ հարցրի,— իսկ Պոլյակով Վասիլի՞ն։— Հարցս շատ հիմար էր։

Լուկերիան աչքերը շրջեց փոքր ինչ։

— Պոլյակո՞վը։ Մի քիչ տխրեց, վշտացավ ու պսակվեց մի ուրիշի հետ. էդ աղջիկը Գլիննոյե գյուղից էր։ Գիտե՞ք Գլիննոյե գյուղը։ Ձեզանից հեռու չի։ Աղջկա անունը՝ Ագրաֆենա էր։ Պոլյակովը ինձ շատ էր սիրում, բայց ջահել մարդ էր, հո չէր կարող ազապ մնալ։ Իսկ ես ի՞նչ ընկեր կարող էի լինել նրան։ Բայց նա լավ, բարի կին գտավ, և հիմա երեխաներ էլ ունեն։ Նա էստեղ, հարևան գյուղումը կառավարիչ է. ձեր մայրիկը անձնագիր տվեց ու բաց թողեց, և հիմա, փա՛ռք աստծու, շատ լավ է։

— Դու ուրեմն միշտ էդպես պառկա՞ծ ես,— հարցրի կրկին։

— Այ էսպես պառկած եմ, աղա ջան, յոթը տարի է։ Ամառն էստեղ եմ պառկում, էս քաղաքում, իսկ երբ ցուրտն սկսում է՝ ինձ տանում են բաղնիքի ազատ սենյակը, էնտեղ եմ պառկում։

— Իսկ ո՞վ է քեզ նայում, խնամում։

— Է՛, բարի մարդիկ էստեղ էլ կան։ Անտեր չեն թողնում։ Ինձ շատ քիչ խնամք է պետք։ Ուտել՝ համարյա ոչինչ չեմ ուտում, իսկ ջուրը՝ հրեն, թասի մեջ. միշտ պատրաստ, մաքուր, աղբյուրի ջուր։ Ջուրը ինքս էլ կարող եմ վերցնել, մի ձեռս դեռ բանում է։ Էստեղ մի որբ աղջիկ կա, մեկ մեկ գալիս է, շնորհակալ եմ։ Քիչ առաջ էստեղ էր... Ջպատահեցի՞ր։ Էնպես լավիկն է, շարմաղ, սպիտակ։ Նա ծաղիկներ է բերում ինձ համար։ Ես ծաղիկներ շատ եմ սիրում, շա՜տ։ Բաղի ծաղիկներ չունենք, կային, բայց վերջացել են. իսկ չէ՞ որ հանդի ծաղիկներն էլ լավն են. նրանք բաղի ծաղիկներից ավելի լավ հոտ ունեն։ Հենց թեկուզ շուշանը... Ինչքա՜ն հոտ ունի։

— Հապա չե՞ս ձանձրանում, չես տխրում, իմ խեղճ Լուկերիա։

— Ի՞նչ արած։ Սուտ չասեմ՝ առաջ շատ մութն էր էստեղ. հետո սովորեցի, տանում եմ, ոչի՛նչ. կան էնպեսները, ավելի վատ դրության մեջ են։

— Ինչպե՞ս թե։

— Մարդ կա, որ գլուխ դնելու տեղ չունի սկի։ Էնպես էլ կա— կույր է կամ խուլ։ Իսկ ես, փառք աստծո, շատ լավ տեսնում եմ և ամեն ինչ լսում եմ, ամե՛ն ինչ։ Խլուրդը, որ գետնի տակին փորում է, էն էլ եմ լսում։ Ամենաթույլ, աննշան հոտն էլ կարող եմ առնել։ Հնդկացորենը ծաղկի հանդում, թե լորին պարտեզում՝ ինձ ասել հարկավոր չի. առաջինը ես եմ իմանում։ Միայն թե մի բարակ քամի գա էն կողմից։ Չէ՛, ես շնորհակալ եմ իմ փայ աստծուց, շատերն ինձանից վատ դրության մեջ են լինում։ Հենց է՛ս վերցնենք. ուրիշ մեկը շատ հեշտությամբ կարող է մեղք գործել. իսկ ինձանից մեղքն ինքը հեռացել է։ Մի երկու օր առաջ տեր Ալեքսեյը՝ տերտերը ճաշակ տվեց ինձ ու ասաց՝ խոստովանելն ավելորդ է. մի՞թե քո դրությամբ դու կարող ես մեղք գործել։ Բայց ես նրան պատասխանեցի՝ հապա մտքով անցրած մե՞ղքը, տեր հայր։— Է՛հ,— ասում է ու ծիծաղում— գա մեծ մեղք չի։

— Բայց ես էդ մտքի մեղքն էլ չունեմ,— շարունակեց Լուկերիան,— քանի որ ինձ սովորեցրել եմ չմտածել և... բան չհիշել։ Էդպես ժամանակն ավելի շուտ է անցնում։

— Ես, խոստովանում եմ, զարմացա։ Դու շարունակ մենմենա՞կ ես, Լուկերիա. ինչպե՞ս կարող ես արգելել, որ մրտքեր չգան գլուխդ։ Թե՞ բոլոր ժամանակ քնում ես։

— Օ, չէ՛, աղա ջան։ Ես միշտ չեմ կարողանում քնել։ Շատ էլ մեծ ցավեր չունեմ, բայց ներսս տնքում է, ոսկորներս նույնպես, ու էդ տնքոցը չի թողնում քնեմ, ինչպես պետք է։ Չէ... էսպես պառկում եմ ինձ համար ու չեմ մտածում. զգում եմ, որ կենդանի եմ, շունչ եմ քաշում՝ պրծավ։ Նայում եմ, լսում։ Մեղուները ճանճանոցում (մեղվանոց) բզզում են, բվվում. աղունիկը կտրանն է նստում՝ կզզում. թուխսը ճուտերը հետը գալիս է փշրանքներ հավաքելու. մեկ-մեկ էլ ծիտ է ներս թռչում կամ թիթեռ, շա՜տ լավ եմ զգում։ Նախանցյալ տարի մինչև անգամ ծիծեռնակներն էն անկյունում բույն շինեցին ու ձագեր հանեցին։ Ինչքա՜ն հետաքրքիր էր։ Մեկը թռած գալիս էր մտնում բույնը, ձագերին կերակրում ու դո՛ւրս։ Տեսնում ես մեկ էլ՝ նրան փոխարինելու եկավ մյուսը։ Երբեմն ներս չէր մտնում, միայն անցնում էր բաց դռան առջևից, իսկ ձագերն իսկույն ծվծվում էին ու կտուցները բաց անում... Սպասում էի, որ մյուս տարին էլ կգան, բայց էստեղացի մի որսկան, ասում են, սպանել է նրանց։ Եվ ինչի՞ է թամահ արել։ Բզեզի չափ բան է ծիծեռնակը... Օ՛, էդ որսկան-աղաներդ ի՞նչ չարն եք։

— Ես ծիծեռնակներ չեմ սպանում,— շտապեցի նկատել։

— Իսկ մի անգամ,— սկսեց կրկին Լուկերիան,— ինչ ծիծաղ բան եղավ։ Վազեվազ ներս եկավ մի նապաստակ։ Շներն էին ետևից ընկել, ուղիղ ներս ընկավ... նստեց ինձ շատ մոտիկ, երկար նստեց, շարունակ հոտ էր քաշում ու բեղերը շարժում՝ կատարյալ աֆիցեր։ Նայեց ինձ էլ։ Հասկացավ, ուրեմն, որ անվնաս մարդ եմ։ Վերջապես, վեր կացավ ու, ծուլ-ծուլ լինելով, գնաց դեպի դուռը, շեմքից ետ նայեց ու պո՛ւկ։ Էնպես ծիծաղելին էր։

Լուկերիան նայեց երեսիս, իմանալու՝ պատմածն արդյոք ծիծաղելի չէ՞ր։ Նրան հաճույք պատճառելու համար ծիծաղեցի։ Նա չորացած շուրթերը կծեց։

— Դե, ձմեռը, իհարկե, վատ է ինձ համար. քանի որ մութն է. մոմը ափսոսում ես վառել, բայց վառես ինչի՞ համար։ Շատ էլ գիր գիտեմ, միշտ էլ կարդալու սեր ունեմ, բայց

Ի՞նչ կարդամ։ Էստեղ ոչ մի գիրք չկա, բայց թեկուզ լիներ էլ, ո՞նց պիտի բռնեի էդ գիրքը։ Տեր Ալեքսեյը, մտքերս ցրելու համար, օրացույց բերեց. բայց տեսավ օգուտ չկա, վերցրեց-տարավ։ Շատ էլ մութն է էստեղ, բայց միշտ լսելու բան կա. Ճպուռն է ճռռացնում կամ մուկն է սկսում կրծել։— Էդ ժամանակ լավ է. չես մտածում։

— Կամ թե չէ աղոթք եմ կարդում,— շարունակեց Լուկերիան՝ փոքր-ինչ հանգստանալով։— Բայց շատ քիչ աղոթք գիտեմ։ Ինչ էլ կարիք կա աստծուն ձանձրացնելու։ Ի՞նչ պիտի խնդրեմ նրանից։ Նա ինձանից լավ գիտի, թե ինձ ի՞նչ է հարկավոր։ Նա որ խաչ է տվել ինձ՝ նշանակում է՝ սիրում է։ Էդպես պիտի հասկանանք։ Կարդում եմ Հայր Մեր, Մայր-Աստվածածին, Ամենայն Հեծելոց, ու էլի պառկում եմ առանց մտածելու։ Եվ ոչի՞նչ։

Անցավ երկու րոպե։ Ես լռությունը չխզեցի և չշարժվեցի իմ կոտի վրա, որ նստարանի տեղ էր ծառայում ինձ։ Առաջիս պառկած այդ կենդանի, դժբախտ արարածի քարե անշարժությունը ասես հաղորդվեց ինձ. ես էլ կարծես քարացա։

— Լսիր, Լուկերիա,— սկսեցի ես վերջապես։— Լսիր, ինչ առաջարկ եմ անելու քեզ։ Ուզում ես կարգադրեմ՝ քեզ հիվանդանոց տանեն, քաղաքի լավ հիվանդանոց։ Ո՞վ է իմանում, գուցե, դեռ բժշկեն։ Համենայն դեպս մենակ չես լինի...

Լուկերիան հազիվ հոնքերը շարժեց։

— Ա՛խ, չէ, աղա ջան,— ասաց նա անհանգիստ շշունջով,— հիվանդանոց մի տանեք, տեղիցս մի շարժեք ինձ։ Էնտեղ ավելի կտանջվեմ. էլ ի՞նչս բժշկեն... Մի անգամ բժիշկ էստեղ եկավ. ուզում էր ինձ քննել։ Խնդրեցի՝ ձեռ մի տաք ինձ, ի սեր աստծո։ Ո՞ւմ ես ասում, սկսեց շուռ տալ դես ու դեն, ձեռներս, ոտներս ճմռեց, տրորեց. ասում է՝ ես էս անում եմ գիտնականության համար. ես հենց էդպես բանի համար ծառայող մարդ եմ, գիտնական։ Եվ դու, ասում է, մի համարձակվի հակառակել ինձ, որովհետև ինձ իմ աշխատանքների համար շքանշան են տվել, և ես էլ հենց ձեզ՝ հիմարներիդ համար եմ աշխատում։ Քաշքշեց, քաշքշեց ինձ, հիվանդությանս անունը տվեց ու գնաց։ Իսկ հետո մի ամբողջ շաբաթ ոսկորներս տնքում էին։ Դուք ասում եք՝ մենակ եմ լինում, միշտ մենակ։ Չէ, միշտ չէ։ Ինձ մոտ եկողներ կան։

Ես հանգիստ եմ, չեմ խանգարում։ Գեղի աղջկերք են գալիս, ասում-խոսում. կամ ուխտավոր մի կնիկ է գալիս ու պատմություններ անում Երուսաղեմի մասին, Կիևի մասին, սուրբ քաղաքների մասին։ Ասենք, մենակ մնալիս էլ չեմ վախենում։ Մինչև անգամ հլա լավ է... Չէ, աղա ջան, ինձ տեղիցս մի շարժեք, հիվանդանոց մի տանեք... Շնորհակալ եմ, բարի եք, բայց ինձ տեղահան մի անեք, հոգի ջան։

— Դե, ինչպես կուզես, Լուկերիա, ինչպես կուզես։ Ես քո օգուտի համար եմ ասում...

— Գիտեմ, աղա, որ իմ օգուտի համար ես ասում։ Բայց ո՞վ կարող է ուրիշին օգնել։ Ո՞վ ում հոգին կմտնի։ Թող ամեն մարդ իրեն օգնի։ Ա՛յ, չեք հավատա՝ երբեմն պառկում եմ էսպես մենակ... ու կարծես, բացի ինձանից, ամբողջ աշխարհում էլ մարդ չկա։ Մենակ ե՛ս եմ կենդանի։ Ու թվում է ինձ, թե վրաս մի բան է իջնում... Մտածմունքի մեջ եմ ընկնում— մինչև անգամ զարմանալի է։

— Այդ ժամանակ ինչի՞ մասին ես մտածում, Լուկերիա։

— Էդ էլ, աղա, ոչ մի կերպ չի կարելի ասել. բացատրել դժվար է։ Հետո էլ մոռանում ես։ Գալիս է ոնց որ ամպ, հոսում է. մի տեսակ շուրջս թարմանում, լվանում է, իսկ թե դա ինչ բան էր՝ չես հասկանում։ Միայն կարծում եմ, եթե մոտս մարդիկ լինեին՝ էդպես բան չէր լինի և ես էլ ոչինչ չէի զգա, բացի իմ դժբախտությունից։

Լուկերիան դժվարությամբ հոգոց քաշեց։ Կուրծքը նրան նույնպես չէր հնազանդում, ինչպես և մարմնի մյուս անդամները։

— Ինչպես տեսնում եմ, աղա,— սկսեց նա նորից,— դուք ինձ շատ եք խղճում։ Է՛, շա՛տ մի խղճաք, իսկապես։ Ես, օրինակ, այ ինչ կասեմ ձեզ. երբեմն հիմա էլ... դուք հիշո՞ւմ եք, չէ, մի ժամանակ ինչքա՞ն ուրախ աղջիկ էի։ Կրակի կտոր էի՞... բայց գիտե՞ք ինչ։ Ես հիմա էլ եմ երգում։

— Երգե՞ր... դո՞ւ։

— Այո, երգեր, հին երգեր՝ խմբապարի, Ջրօրհնեքի, ամեն տեսակ։ Էդ երգերից ախր շատ գիտեի և հիմա էլ չեմ մոռացել։ Բայց պարի երգեր չեմ երգում։ Իմ էս դրությամբ դրանք պետք չեն։

— Ինչպե՞ս ես երգում... ինքդ քո մե՞ջ։

. — Ինքս իմ մեջ էլ, բարձր ձայնով էլ։ Շատ բարձր չեմ կարում, բայց բոլորը կարելի է հասկանալ։ Ձեզ ասի, որ մի աղջիկ է գալիս ինձ մոտ։ Որբ է, բայց խելքը գլխին։ Ես նրան չորս երգ եմ սովորեցրել։ Թե՞ չեք հավատում։ Սպասեք, ես հիմա...

Ու Լուկերիան իրեն հավաքեց... Այն միտքը, թե այդ կիսամեռ արարածը պատրաստվում է երգել, ակամա սարսափ գցեց սիրտս։ Բայց նախքան մի խոսք ասելս լսեցի մի ձի՛գ, հազիվ լսելի, բայց մաքուր ու ճիշտ հնչյուն... Նրան հետևեց երկրորդը, երրորդը։ Լուկերիան երգում էր «Во лузях» երգը։ Նա երգում էր, առանց քարացած դեմքի արտահայտությունը փոխելու, աչքերը առաջվա պես մի կետի հառած։ Բայց այնպես հուզիչ էր հնչում նրա խեղճ, ճիգով դուրս եկող, ծիի քուլայի պես օրորվող ձայնը, այնպե՞ս էր ուզում նա սիրտը դնել իր ձայնի մեջ։ Ես այլևս սարսափ չէի զգում. սիրտս մի անասելի թախիծ էր ճնշում։

— Օ՜հ, չեմ կարող,— ասաց նա հանկարծ,— ուժս չի պատում... Շատ ուրախացա ձեզ համար։

Նա աչքերը փակեց։

Ես ձեռս դրի նրա փոքրիկ, սառը մատների վրա... Նա նայեց ինձ, և նրա ոսկեմազ թերթերունքներով երիզված թուխ կոպերը նման հին դարերի արձանների կոպերին նորից փակվեցին։ Մի ակնթարթ հետո նրանք պսպղացին կիսախավարում... Արցունքները թրջել էին նրանց։

Ես, առաջվա պես, մնացի անշարժ։

— Ի՞նչ եմ անում,— ասաց հանկարծ Լուկերիան մի անըսպասելի ուժով և, աչքերը լայն բանալով, աշխատեց արցունքները ցած գլորել։— Ամոթ չի՞։ Էս ի՞նչ եմ անում։ Վաղուց ինձ էսպես բան չէր պատահել... Էն օրվանից, երբ Պոլյակով Վասյան եկավ մոտս՝ անցած գարնանը։ Քանի նստած խոսում էր հետս՝ ոչինչ, բայց հենց որ գնաց՝ էլ չկարացի ինձ պահել, լաց եղա մեն-մենակ։ Որտեղի՞ց եկավ արցունքս... Աղա՛,— ավելացրեց Լուկերիան,— թաշկինակ կունենաք... Չխորշեք, խնդրեմ, աչքերս սրբեցեք։

Ես շտապեցի նրա ցանկությունը կատարել և թաշկինակս տվի նրան։ Նա սկզբում չէր ուզում վերցնել... Թե ինչի՞ս է պետք այդ տեսակ նվերը։ Թաշկինակը շատ հասարակ էր,

բայց մաքուր ու ճերմակ։ Հետո նա իր թույլ մատներով բռնեց այն ու էլ ձեռը չբացեց։ Ընտելանալով մութին, որի մեջ գտնվում էինք երկուսս էլ, ես կարողացա տեսնել նրա դիմագծերը, կարողացա նկատել այն թեթև կարմրությունը, որ երևաց նրա բրոնզագույն դեմքի վրա, կարողացա նրա դեմքի վրա,— ինձ գոնե այդպես թվաց,— նկատել նրա վաղեմի գեղեցկության հետքերը։

— Այ, աղա, հարցնում էիք,— խոսեց կրկին Լուկերիան,— քնո՞ւմ եմ ես թե չէ։ Շատ քիչ է պատահում, որ քնեմ, բայց ամեն անգամ քնելիս՝ երազ եմ տեսնում, լավ երազներ։ Ինձ հիվանդ երբեք չեմ տեսնում. երազում ես միշտ առողջ եմ ու ջահել... Միայն մի վատ բան կա. զարթնում եմ, ուզում եմ մի լավ ձգվեմ, բայց ոնց որ շղթաներով կապված լինեմ։ Մի անգամ ի՞նչ հրաշալի երազ տեսա։ Կուզե՞ք պատմեմ։ Դե՛, լսեցեք։ Տեսնում եմ, մթամ թե, հանդումն եմ. չորս կողմս հացի արտեր են՝ բարձր, հասած, ոսկու նման... Եվ իբրև թե մոտս մի շեկլիկ շուն կա, կատաղածի մեկը է ինձ կծի։ Եվ իբրև թե ձեռիս մի մանգաղ կա, ոչ թե հասարակ մանգաղ, այլ իսկական լուսնյակի պես, երբ նա մանգաղի նման է լինում։ Ու էդ լուսնյակով, մթամ, էդ հաճարը պետք է մաքուր հնձեմ։ Բայց շոգն ինձ շատ թուլացնում է, լուսնյակը կուրացնում է աչքերս, ու ծուլություն է գալիս վրաս. իսկ չորս կողմս տերեփուկներ են ծաղկում, այնքա՜ն խոշոր։ Բոլորը գլուխները դարձնում են իմ կողմը։ Մտածում եմ՝ քաղեմ ես տերեփուկները։ Վասյան խոստացել է գալ, առաջ հլա մի պսակ կշինեմ ինձ համար. իսկ հնձելու դեռ ժամանակ կա։ Սկսում եմ քաղել տերեփուկները, բայց նրանք հալվում են մատներիս արանքում ու կորչում։ Ու չեմ կարողանում պսակ շինեմ ինձ համար։ Բայց լսում եմ, որ մեկը արդեն գալիս է դեպի ինձ, մոտենում է կամաց-կամաց ու կանչում. Լուշա՛, Լուշա՛... Վա՛յ, ասում եմ, ափսոս, չկարողացա պսակ շինել։ Միևնույն է, այս լուսնյակը տերեփուկների տեղակ կդնեմ գլխիս։ Լուսնյակը ապարոշի նման դնում եմ գլխիս ու ինքս էլ իսկույն փայլում եմ ու լուսավորում չորս կողմս, դաշտը... Մեկ էլ տեսնեմ՝ հասկերի վրայով մեկը արագ-արագ գալիս է դեպի ինձ, ոչ թե Վասյան, այլ ինքը Քրիստոսը։ Թե ինչպե՞ս ճանաչեցի, որ դա Քրիստոսն էր՝ չեմ

իմանում, նրան էդպես չեն նկարում, բայց նա՛ էր։ Անմի-
րուք, բարձրահասակ, ջահել, ամբողջովին սպիտակ հագած,
միայն գոտին է ոսկի, եկավ ու ձեռքը մեկնեց ինձ։ «Մի վա-
խի, ասում է, իմ զուգված-զարդարված հարսնացու, հետևիր
ինձ. դու ինձ մոտ, արքայության մեջ, խմբապարեր կղեկա-
վարես ու դրախտի երգեր կերգես»։ Ես վրա ընկա նրա ձեռը
համբուրեմ։ Շունն իսկույն բռնեց ոտս... բայց մենք թռանք-
բարձրացանք վե՜ր։ Նա առաջից... Թևերը բացվեցին երկն-
քովը մեկ, երկար ինչպես ճայի թևեր, ես էլ նրա ետևից։ Իսկ
շունը մնաց ինձնից ետ։ Ես էստե՛ղ միայն հասկացա, որ էդ
շունն իմ ցավն է և որ երկնային արքայության մեջ նա տեղ
չի ունենա։

Լուկերիան մի բոպե լռեց։

— Մի անգամ էլ երազ տեսա,— սկսեց նա նորից,— բայց
գուցե տեսիլք էր դա, չգիտեմ։ Տեսնում եմ, կարծես պառ-
կած եմ հենց էս քձոլանում ու մեկ էլ ինձ մոտ են գալիս հան-
գուցյալ ծնողներս՝ հայրիկս ու մայրիկս, ու գլուխ են տա-
լիս ինձ խոր, բայց իրանք ոչինչ չեն խոսում։ Հարցնում եմ
նրանց, թե ինչո՞ւ եք դուք՝ հայրիկ ու մայրիկ, գլուխ տալիս
ինձ։ Նրա համար, ասում են, քանի որ էս աշխարհում դու
շատ ես տանջվում, դրանով մենակ քու հոգին չես թեթևացրել,
այլ մեր բեռն էլ ես վերցրել։ Եվ հիմի մեր բեռը շատ հեշտա-
ցել է մեզ համար։ Քու մեղքերը քավել պրծել ես, հիմի մերն
ես քավում։ Էս ասելով՝ ծնողներս նորից գլուխ տվին ինձ ու
էլ չերևացին. շուրջս պատերն էին երևում։ Հետո կասկածնե-
րի մեջ ընկա, թե էդ ինչ էր, որ պատահեց ինձ։ Մինչև ան-
գամ տերտերին էլ պատմեցի հաղորդության ժամանակ։ Նա
էնպես էր կարծում, թե դա տեսիլք չի եղել, որովհետև տեսիլք
տեսնում են միայն հոգևորականները։

— Ա՛յ, մի անգամ էլ տեսեք ինչ երազ տեսա,— շարունակեց Լուկերիան։— Տեսնում եմ նստած եմ մի մե՛ծ ճամփի
վրա, ուռի թփի տակ, մի տաշած ձեռնափայտ ձեռիս, պարկը մեջքիս, գլուխս էլ կապել եմ աղլուխով՝ իսկական ուխ-
տավոր։ Ու պետք է գնամ հեռու-հեռու մի ուխտ։ Կողքովս անցնում-գնում են շատ ուխտավորներ. գնում են կամաց,
կարծես ակամա, ու բոլորը մի կողմի վրա. բոլորի դեմքն էլ տխուր է և բոլորն էլ շատ նման են իրար։ Ու տեսնում եմ՝

դրանց միջով շտապով գնում է մի կին, մի գլուխ մյուսներից
բարձր. շորերն էլ ուրիշ տեսակ են, կարծես մեր՝ ռուսական
շորերից չլիներ։ Դեմքն էլ ուրիշ տեսակ է. պաս պահողի
դեմք՝ խի՜ստ։ Ու բոլորը կարծես ետ-ետ են գնում ու ճամ-
փա տալիս նրան. բայց հանկարծ նա թեքվեց և եկավ ուղիղ
դեմ՝ ինձ։ Կանգնեց ու նայում է. իսկ աչքերը կարծես բաղեի աչ-
քեր լինեն՝ դեղին, խոշոր ու պայծա՜ռ-պայծառ։ Եվ ես հարցնում
եմ նրան. ո՞վ ես դու։ Իսկ նա ասում է ինձ. «Ես քու մահն
եմ»։ Փոխանակ վախենալու, ես, հակառակը, ուրախ եմ, խա-
չակնքում եմ։ Ու էդ կինը՝ իմ մահը՝ ասում է ինձ. «Ափսոսում
եմ քեզ, Լուկերիա, բայց քեզ հետս տանել չե՛մ կարող։ Մնաս
բարով»։ Տե՜ր աստված, մի էնպե՜ս տխրություն եկավ վրաս...
«Տա՛ր ինձ,— ասում եմ,— հոգի ջան, տա՛ր ինձ»։ Մահս ետ
դառավ ու խոսեց... Հասկանում եմ, որ նա ինձ համար ժա-
մանակ է նշանակում, բայց մի տեսակ պարզ չի... Իբրև թե՝
ս. Պետրոսի տոնից հետո... էս խոսքի վրա զարթնեցի... Ա՛յ,
էսպես զարմանալի՜ երազներ եմ տեսնում ես...

Լուկերիան աչքերը բարձրացրեց վեր... մտածմունքի մեջ
ընկավ...

— Միայն վատը ա՛յ սա է. պատահում է՝ ամբողջ շաբաթ
է անցնում, ոչ մի անգամ աչքս չեմ կպցնում։ Հերու մի խա-
նում անցավ դեսը, ինձ տեսավ և անքնության դեմ մի դեղ
տվեց. ասավ՝ տասը կաթիլ կընդունես։ Շատ օգնեց, լավ
քնում էի... Բայց դեղս հիմա հատել է... Չե՞ք իմանում ի՞նչ
դեղ է դա և որտեղի՞ց կարելի է ձեռք բերել։

Խանումը Լուկերիային տվել էր, երևի, աֆիոն։ Ես խոս-
տացա, որ մի շիշ այդպիսի դեղ կուղարկեմ և կրկին բարձրա-
ձայն զարմանք հայտնեցի նրա համբերատարությանը։

— Էհ, աղա,— ասաց նա։— Ի՞նչ եք ասում։ Ի՞նչ համբե-
րատարություն է իմը։ Ա՛յ մեծ էր իսկապես Սիմոն Սյունա-
կյացի համբերությունը. երեսուն տարի մնացել է սյունի վրա
կանգնած։ Իսկ մի ուրիշ սուրբ մարդ հրամայել է, որ իրեն
մինչև կուրծքը թաղեն հողի մեջ, և մրջյունները կերել են երե-
սը... Մեկ էլ ա՛յ ինչ պատմեց ինձ մի տիրացու. մի երկիր է
լինում, էդ երկրին տիրում են հագարացիք, բոլոր բնակիչնե-
րին տանջում են ու սպանում. ինչ էլ անում է ժողովուրդը՝ ո՛չ
մի կերպ իրեն ազատել չի կարողանում։ Էդ ժողովրդի մեջ

երևում է մի սուրբ կույս, վերցնում է մի մեծ թուր, երկու փթանոց զրահներ է հագնում, գնում է հագարացիների վրա ու բոլորին քշում ծովի էն կողմը։ Քշում պրծնում է թե չէ, ասում է նրանց. «Հիմա վառեցեք ինձ, որովհետև էդպես ուխտ եմ արել, որ կրակի մահով մեռնեմ իմ ժողովրդի համար»։ Հագարացիք էլ վերցնում են դրան ու վառում. էդ օրվանից ժողովուրդն ազատվում է։ Ա՛յ, սա՛ մեծ բան է, մե՞ծ հերոսություն է։ Իսկ ես ի՞նչ եմ որ։

Զարմացա ինքս ինձ, թե ո՞ւր և ինչպե՞ս է հասել Ժաննա դ'Արկի լեգենդը, և հարցրի Լուկերիային, թե քանի՞ տարեկան է։

— Քսանութ... կամ քսանինը... Երեսուն չկամ։ Բայց տարիներ հաշվելուց ի՞նչ օգուտ։ Ա՛յ, մեկ էլ ի՞նչ կասեմ ձեզ...

Լուկերիան հանկարծ մի տեսակ խուլ հազաց ու տնքաց...

— Դու շատ ես խոսում,— նկատեցի ես,— դա կարող է վնասել քեզ։

— Ճիշտ է,— շշնջաց նա հազիվ լսելի ձայնով,— մեր զրույցը վերջացավ։ Հիմի, երբ կերթաք, կլռեմ ինչքան ասես։ Բայց սիրտս գոնե թեթևացրի...

Սկսեցի մնաս բարև ասել նրան, կրկնեցի իմ խոստումը՝ նրան դեղ ուղարկելու, խնդրեցի՝ մի անգամ էլ լավ մտածի ու ասի, թե արդյոք որևէ բանի կարիք չունի՞։

— Ինձ ոչինչ հարկավոր չի, ամեն բանից գոհ եմ, փա՞ռք աստծո,— դժվարությամբ, բայց խանդաղատանքով ասաց նա։— Աստված բոլորին առողջություն տա։ Ա՛յ, լա՞վ կլիներ, աղա ջան, ձեր մայրիկին համոզեիք,— էստեղի գեղացիք աղքատ են,— որ մի քիչ սրանց հարկը պակասեցներ։ Հողը քիչ է, վարելահող չկա... Աղոթարար կըլնեն ձեզ համար... Իսկ ինձ ոչինչ հարկավոր չի, ամեն բանից գոհ եմ։

Ես Լուկերիային խոսք տվի, որ նրա խնդիրը կկատարեմ, և այն է՝ մոտենում էի դռանը... նա նորից կանչեց ինձ։

— Հիշո՞ւմ եք, աղա,— ասաց նա, և մի զարմանալի բան շողաց նրա աչքերի մեջ ու շուրթերի վրա,— հիշո՞ւմ եք ի՞նչ մազեր ունեի։ Հիշո՞ւմ եք, մինչև ծունկս էր հասնում։ Երկար ժամանակ սիրտ չէի անում... էդպես մազերը... Բայց ո՞նց սանրեի իմ էս դրության մեջ... Կտրեցի... Այո՛... Դե՛, ներեցեք, աղա ջան։ Էլ չեմ կարող։

Նույն օրը, նախքան որսի գնալը, Լուկերիայի մասին խոսեցի ագարակի կառավարչի հետ, և նրանից իմացա, որ Լուկերիային գյուղում «Կենդանի Մասունք» են անվանում, և որ նա ոչ մեկին անհանգստություն չի պատճառում. ո՛չ տրտունջ են լսում նրանից և ո՛չ բողոք։ «Ինքը ոչինչ չի պահանջում և, ընդհակառակը, ամեն բանից շնորհակալ է. հանգիստ, հանդարտ ապրում է իր համար։ Աստված պատժել է,— այսպես եզրակացրեց կառավարիչը,— երևի իր մեղքերի համար. բայց դա մեր բանը չի։ Ասենք թե, օրինակի համար, դատապարտում ենք նրան. չէ՞, մենք նրան չենք դատապարտում։ Թող մնա իր համար»։

Մի քանի շաբաթ անց լսեցի, որ Լուկերիան մեռել է։ Մահը նրա ետևից եկել էր իրոք... «ս. Պետրոսի տոնից հետո»։ Պատմում էին, որ նա իր մահվան օրը շարունակ զանգահարություն է լսել, թեև Ալեքսեևկա ագարակից մինչև եկեղեցին հինգ վերստից ավելի է, և օրն էլ լի օր է եղել։ Բայց Լուկերիան ասել է, թե զանգահարությունը ոչ թե եկեղեցուց է գալիս, այլ «վերևից»։ Նա, երևի, չի համարձակվել ասելու՝ երկնքից։

1874

ՄՈՒՄՈՒ

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում սպիտակ սյուներով և ծռված պատշգամբով մի գորշ տան մեջ ապրում էր երբեմնի մի ազնվական կին՝ բազմաթիվ ճորտ ծառաներով շրջապատված։ Նրա որդիները ծառայում էին Պետերբուրգում, աղջիկներն ամուսնացել էին։ Նա շատ սակավ էր երևում հասարակության շրջաններում և իր ժլատ ու տխուր ծերության տարիներն անց էր կացնում առանձնության մեջ։ Նրա կյանքի անուրախ ու մռայլ ցերեկը վաղուց էր անցել, բայց նրա երեկոն էլ գիշերից խավար էր։

Նրա ծառայողների մեջ ամենից աչքի ընկնողը դռնապան Գերասիմն էր, բարձրահասակ ու վիթխարի մի տղամարդ, որ ի ծնե խուլ ու համր էր։ Տիրուհին նրան բերել էր գյուղից, ու նա մեն-մենակ, եղբայրներից բաժան՝ ապրում էր մի փոքրիկ խրճիթում։ Անսովոր ուժի տեր՝ նա չորս մարդի բան էր անում մենակ։ Տեսնողը հաճույք էր զգում, թե ինչպես է նա վարում, հնձում, կալսում։ Մշտական լռությունը առանձին հանդիսավորություն էր տալիս նրա աշխատանքին։ Նա երևելի ռանչպար էր և, եթե նրա դժբախտությունը չլիներ, ամեն մի աղջիկ սիրով կառներ նրան։ Բայց ահա Գերասիմին բերին Մոսկվա, երկարաճիտ կոշիկներ առան, ամառվա համար կաֆտան կարեցին, ձմեռվա համար քուրք, ձեռը բահ ու ավել տվին ու դռնապան կարգեցին։

Հենց սկզբից իր նոր կյանքը բնավ դուր չեկավ նրան։ Մանկությունից նա սովոր էր դաշտային աշխատանքի ու գյուղական կյանքի։ Տեղափոխվելով՝ նա չէր հասկանում ինչ էր կատարվում հետը, ձանձրանում էր և տարակուսում այնպես, ինչպես տարակուսում է մի արջառ, որին հանկարծ կանաչ թարմ խոտից կտրելով վերցնում են ու դնում երկաթուղու վագոնը և շխկոցով ու թխկոցով տանում, թե ուր՝ հայտնի չէ։ Իր նոր գործը, գյուղական ծանր աշխատանքից հետո, Գերասիմին խաղ ու պար էր թվում. կես ժամում նա ամեն ինչ վերջացնում էր ու բակի մեջտեղը կանգնում և բերանբաց նայում անց ու դարձ անող մարդկանց, կամենալով կարծես իմանալ իր անհասկանալի կյանքի բացատրությունը, կամ թե չէ քաշվում էր որևէ անկյուն և, թին ու ավելը հեռուն շպրտելով, երեսնիվայր ընկնում գետին և ժամերով անշարժ պառկում կրծքի վրա, ինչպես գերված մի գազան։ Բայց մարդն ընտելանում է ամեն բանի, և Գերասիմն էլ, վերջ ի վերջո, ընտելացավ քաղաքի կյանքին։ Գործը մեծ չէր. նրա պարտականությունն այն էր, որ բակը մաքուր պահի. օրական երկու անգամ տակառով ջուր բերի, փայտ կտրի և ջարդի խոհանոցի ու տան համար, օտար մարդիկ չթողնի և գիշերները պահապան կանգնի։ Եվ, պետք է ասած, նա իր պարտականությունը եռանդով կատարում էր։ Երբեք բակում չէիր տեսնի չոփի մի կտոր կամ թափված աղբ։ Ցեխ ժամանակ, երբ ձին չկարողանար ջրի տակառը հանել մի որևէ ցեխ տեղից, բավական էր միայն, որ Գերասիմն ուսով հրեր, ոչ միայն տակառի սայլակը, ձին ինքն էլ էր ծուլ լինում տեղից, կամ երբ սկսում էր փայտ ջարդել, կացինը նրա ձեռքին զրնգում էր սպակու պես և տաշեղներն ու փայտի կտորտանքը թռչում էին ամեն կողմ. իսկ ինչ վերաբերում է գողերին, դա արդեն այն բանից հետո, երբ մի անգամ գիշերը, երկու գող բռնելով՝ նրանց ճակատները խփել էր իրար, այնպես էր խփել, որ հետո նրանց թեկուզ ոստիկանություն չտաներ էլ, թաղում բոլորն սկսեցին հարգել նրան, մինչև անգամ ցերեկվա անցորդները, արդեն ոչ թե գողեր, այլ պարզապես անծանոթ մարդիկ, ահարկու դռնապանին տեսնելիս, հեռու էին անցնում։

Տան մյուս սպասավորների հետ Գերասիմը ոչ թե բարեկամական, այլ մոտիկ հարաբերության մեջ էր։ Նա դրանց համարում էր յուրայիններ։ Նրանք Գերասիմի հետ բացատրվում էին նշաններով, և Գերասիմը նրանց հասկանում էր,

ճշտությամբ կատարում էր նրանց բոլոր հրամանները, բայց իր իրավունքները նույնպես գիտեր, ոչ-ոք ծառայողներից չէր համարձակվի նստել նրա տեղը՝ սեղանի շուրջը։ Գերասիմն առհասարակ խիստ և լուրջ բնավորություն ուներ. նա ամեն բանում կարգ էր սիրում. մինչև անգամ աքաղաղները նրա ներկայությամբ չէին համարձակվում կռվել, այլապես վայ նրանց։ Տեսներ, թե չէ, խկույն երկուսի ոտքերից էլ կբռներ, մի քանի անգամ անիվի պես կպտտեր, կշպրտեր յուրաքանչյուրին մի կողմ։ Տիրուհու բակում կային և սագեր, բայց սագը հայտնի է, որ լուրջ ու խոհեմ թռչուն է։ Գերասիմը նրանց վերաբերվում էր հարգանքով, հետևում էր, կերակրում։ Նրան տվել էին մի խուց, որ գտնվում էր խոհանոցի գլխին։ Այդտեղ նա իր համար իր ճաշակով կաղնու տախտակներից շինել էր չորսոտանի մի թախտ, իսկական հսկայի մի թախտ, որ եթե հարյուր փութ բան դնեիր վրան, չէր ճկվի։ Թախտի տակ գտնվում էր մի պինդ սնդուկ, անկյունում դրված էր նաև սեղան, իսկ սեղանի կողքին մի եռոտանի նստարան։ Գերասիմն իր խուցը փակում էր կողպեքով և բանալին կախում գոտուց։ Չէր սիրում, որ մոտը մարդիկ գնան-գան։

Այսպես անցավ մի տարի։ Եվ այդ տարվա վերջում Գերասիմին պատահեց մի փոքրիկ դեպք։

Պառավ տիրուհին, որի մոտ նա դռնապանություն էր անում, ամեն բանում հետևում էր հին սովորություններին և պահում էր բազմաթիվ սպասավորներ. նրա տանը կային ոչ միայն լվացարարուհիներ, կար անողներ, հյուսներ, դերձակներ ու դերձակուհիներ. կար մինչև իսկ ձիու սարք կարող. նույն այդ մարդը համարվում էր անասնաբույժ և մարդկանց բժիշկ, կար և տնային բժիշկ՝ տիրուհու համար, կար վերջապես մի կոշկակար՝ անունը Կապիտոն Կլիմով, սարսափելի հարբեցողի մեկը։ Կլիմովն իրեն համարում էր անուշադրության մատնված և ըստ արժանվույն չգնահատված, կրթված և մայրաքաղաքի մարդ, որն անգործ չպիտի ապրեր Մոսկվայում, ինչ-որ մի խուլ անկյունում, և եթե խմում էր, ինչպես ինքն էր արտահայտվում ընդհատումներով ու կուրծքը ծեծելով, խմում էր հենց վշտից։ Եվ ահա մի անգամ խոսք բացվեց տիրուհու մոտ՝ սպասավորների գլխավոր Գավրիլի հետ,

որին, նրա դեղին, մանրիկ աչքերից ու բադի քթից դատելով, աստված հենց ինքն էր կարծես որոշել սպասավորների պետ լինելու։ Տիրուհին ցավ հայտնեց Կապիտոնի խախտված բարոյականության վերաբերյալ, որին հենց մի օր առաջ գտել էին փողոցում ընկած։

— Հը, ի՞նչ կասես, Գավրիլա,— խոսեց հանկարծ տիրուհին,— չպսակե՞նք դրան, ի՞նչ ես կարծում։ Գուցե խելքի գա։

— Ինչո՞ւ չէ, կարելի է պսակել,— պատասխանեց Գավրիլան,— և շատ էլ լավ կլինի։

— Հա, բայց ո՞վ կառնի նրան։

— Իհարկե։ Ասենք, ինչպես ձեզ հաճելի է։

— Կարծես, Տատյանան նրան դուր է գալիս, հը՞։

Գավրիլան ուզում էր առարկել ինչ-որ, բայց շուրթերը սեղմեց։

— Այո... Թող նշանվի Տատյանայի հետ,— վճռեց տիրուհին, բավականությամբ քթախոտ քաշելով,— լսո՞ւմ ես։

— Լսում եմ,— ասաց Գավրիլան ու հեռացավ։ Վերադառնալով իր սենյակը (որը գրեթե լիքն էր երկաթակապ սընդուկներով), Գավրիլան նախ դուրս արավ կնոջը և ապա նստեց լուսամուտի առաջ ու սկսեց մտածել։ Տիրուհու անսպասելի կարգադրությունը ըստ երևույթին մտատանջության մեջ գցեց նրան։ Վերջապես, նա վեր կացավ, կարգադրեց Կապիտոնին կանչել։ Կապիտոնը եկավ... Բայց նախքան սրանց խոսակցությունն ընթերցողին հայտնելը, ավելորդ չենք համարում մի քանի խոսքով պատմել, թե ով էր այդ Տատյանան, որի հետ Կապիտոնը պիտի պսակվեր, և ինչու տիրուհու կարգադրությունը շփոթեց Գավրիլային։

Տատյանան, որ լվացարարուհու պաշտոն ուներ (նրան, որպես հմուտ և բանիմաց լվացարարուհու, հանձնում էին նուրբ սպիտակեղենը), քսանութ տարեկան կին էր՝ փոքր, նիհար, խարտյաշ, ձախ աչքի վրա էլ խալեր ուներ։ Ձախ աչքին խալ ունենալը Ռուսաստանում համարվում էր վատ նշան, որ գուշակում է դժբախտ կյանք... Ջահել ժամանակը նա վատ էր ապրել. երկու մարդու շափ բանել էր և երբեք փայփայանք չէր տեսել. հագցնում էին նրան վատ, ստամփայփայանք չէր տեսել. հագցնում էին նրան վատ, ստանում էր ամենաքիչ ռոճիկը. նա համարյա թե ազգական չուներ։ Մի ինչ-որ ծեր մառանապետ, որին, գործին անընդունակ

լինելու պատճառով թողել էին գյուղում, նրան քեռի էր գալիս, մյուս քեռիներն էլ մուժիկ էին,— ահա բոլորը։ Մի ժամանակ նա գեղեցկուհի էր համարվում, բայց գեղեցկությունը շատ շուտով թռավ նրանից, նա շատ խոնարհ, կամ, ավելի լավ է ասել, վախեցած բնավորության տեր էր, իր նկատմամբ միանգամայն անտարբեր էր, ուրիշներից սարսափելի վախենում էր. մտածում էր միայն գործը ժամանակին վերջացնել, երբեք ոչ ոքի հետ չէր խոսում և դողում էր տիրուհու անունը լսելիս, թեև տիրուհին նրա երեսը գրեթե չէր տեսնում։ Երբ Գերասիմին գյուղից բերին, նա քիչ մնաց սարսափից ուշաթափվեր նրա կերպարանքը տեսնելով ու ամեն կերպ աշխատում էր չհանդիպել նրան, պատահում էր նույնիսկ աչքերը փակում էր նրա կողքով անցնելիս, տնից լվացքատուն գնալու ժամանակ։ Գերասիմն առաջ առանձին ուշադրություն չէր դարձնում նրա վրա, հետո սկսեց նրան տեսնելիս ծիծաղել, ժպտալ, ապա և նայել սկսեց նրան, վերջապես բոլորովին աչք չէր հեռացնում նրանից։ Տատյանան դուր եկավ նրան, արդյոք դեմքի հեզ արտահայտությամբ թե վեհերոտ շարժումներով՝ աստված գիտի։ Մի անգամ Տատյանան անցնում էր բակով, տիրուհու օսլայած կոֆտան չռած մատներով զգուշությամբ բարձր բռնած... Հանկարծ ինչ-որ մեկը պինդ բռնեց նրա արմունկը։ Նա շուռ եկավ և ճչաց. ետևը կանգնած էր Գերասիմը։ Հիմարի պես ծիծաղելով և քնքշորեն մզզալով՝ նա Տատյանային մեկնեց մի շաքար աքլոր, որի պոչն ու թևերը ոսկեգույն էին։ Տատյանան ուզում էր հրաժարվել, բայց Գերասիմը զոռով աքլորը դրեց նրա ձեռքը, գլուխն օրորեց, հեռացավ և, շուռ գալով, մի անգամ էլ ինչ-որ սիրալիր բան մզզաց։ Այդ օրվանից Գերասիմն է՛լ նրան հանգիստ չէր տալիս, ուր էլ գնար Տատյանան, Գերասիմը հայտնվում էր այնտեղ, դիմավորում էր նրան, ժպտում, մզզում, ձեռները թափահարում, գրպանից հանկարծ մի ժապավեն հանում ու նրան տալիս, ավելով մաքրում էր փոշին նրա անցնելու ճամփից։ Խեղճ աղջիկը ուղղակի չգիտեր, ինչ անի։ Շուտով ամբողջ տունն իմացավ համր դռնապանի արարքները։ Սկսեցին ծիծաղել ու կասակներ անել Տատյանայի հետ։ Սակայն բոլորը չէին համարձակվում Գերասիմին ծաղրել. նա հանաքներ չէր սիրում. նրա ներկայությամբ Տատյանային էլ թողնում էին

հանգիստ։ Գոհ լիներ թե դժգոհ, այնուամենայնիվ Տատյանան անցավ նրա հովանավորության տակ։ Ինչպես բոլոր խուլ ու համրերը՝ Գերասիմը շատ շուտ էր գլխի ընկնում և շատ լավ էր հասկանում, ե՛րբ են ծիծաղում իր կամ Տատյանայի վրա։ Մի անգամ ճաշից հետո, սպիտակեղենի վրա հսկող կինը, Տատյանայի անմիջական մեծը, սկսեց նրան, ինչպես ասում են, ձեռ առնել և այն դրության հասցրեց նրան, որ խեղճ Տատյանան չգիտեր ինչ անել, և քիչ մնաց բարկությունից լաց լիներ։ Հանկարծ Գերասիմը վեր կացավ, մեկնեց իր ահագին ձեռքը, դրեց հանդերձապետի գլխին ու այնպիսի մռայլ կատաղությամբ նայեց նրա դեմքին, որ նա կուչ եկավ և կպավ սեղանին։ Բոլորը լռեցին։ Գերասիմը նորից գդալը ձեռն առավ ու սկսեց ուտել։ «Տես, է, խուլ սատանա»,— ՀՀԸնառավ ու սկսեց ուտել։ Հ։ Բոլորը ցրվ

Այժմ ընթերցողը հեշտությամբ կհասկանա այն շփոթության պատճառը, որ տիրեց սպասավորների պետ Գավրիլային՝ տիրուհու հետ ունեցած զրույցից հետո։ «Տիրուհին,— մտածեց նա լուսամուտի մոտ նստելով,— իհարկե կխղճա Գերասիմին, բայց և այնպես նա անլեզու արարած է, տիրուհուն հո չի կարելի հայտնել, թե՝ ա՛յ, Գերասիմը Տատյանային սիրում է։ Եվ վերջապես, ճիշտն ասած, նա ի՞նչ ամուսին կարող է լինել։ Իսկ մյուս կողմից, բավական է, որ, ների՛ր, տեր, այդ սատանան իմանա, թե Տատյանային Կապիտոնին են տալիս, նա ամբողջ տունը տակն ու վրա կանի։ Չէ՞ որ նրան էլ խոսք հասկացնել չի լինի»...

Կապիտոնի գալը կտրեց Գավրիլայի մտքի թելը։ Թեթևամիտ կոշկակարը ներս մտավ, ձեռքերը դրեց ետևը և արձակ-համարձակ պատին հենվելով՝ աջ ոտը խաչաձև դրեց ձախի վրա և գլուխը թափ տվեց։ Իբր թե ահա և ես։ Ի՞նչ եք ուզում։

Գավրիլան նայեց Կապիտոնին և մատերով խփեց լուսամուտի շրջանակին։ Կապիտոնը փոքր-ինչ կկոցեց իր փոքրիկ կապարյա աչքերը, բայց չխոնարհեց, մնչև անգամ ժպտաց թեթևակի և ձեռը տարավ սպիտակավուն մազերին, որոնք ցցվել էին այս այն կողմի վրա։ Էհ, ես եմ էլի։ Էլ ի՞նչ ես նայում։

— Լավ ես,— խոսեց Գավրիլան ու լռեց.— լավ ես, խոսք չկա։

Կապիտոնը ուսերը թոթվեց միայն։ «Իսկ դու չլինի՞ ինձանից լավ ես»,— մտածեց նա ինքն իրեն։

— Հլա մի քեզ նայիր, մի նայիր հլա,— շարունակեց հանդիմանանքով Գավրիլան,— հը, էդ ի՞նչ ա քու հալը։

Կապիտոնը հանգիստ նայեց իր մաշված, պատռված սերթուկին, իր կարկատած վարտիքին, առանձին ուշադրությամբ նայեց իր ծակծկված կոշիկներին և նորից աչքը գցեց սպասավորների պետի երեսին։

— Ի՞նչ ա որ։

— Ի՞նչ,— կրկնեց Գավրիլան։— Ի՞նչ, դեռ հարցնում ես՝ ի՞նչ։ Ոնց որ սատանա լինես, ա՛յ ինչ։

Կապիտոնը աչքերը թարթեց արագ։

«Հայհոյեցեք, հայհոյեցեք, Գավրիլա Անդրեյիչ»,— նորից մտածեց նա ինքնիրեն։

— Դու էլի հարբած ե՞ս եղել,— սկսեց Գավրիլան,— եղել ես, չէ՞։ Դե՛, պատասխանի, է՛։

— Թույլ առողջությանս պատճառով ենթարկվել եմ, իսկապես, խմիչքներին,— ասաց Կապիտոնը։

— Թույլ առողջությանս պատճառով... Քեզ քիչ պատիժ են տալիս, ափսոս։ Դեռ Պիտերում էլ ուսում է առել... Լավ ուսում ես առել։ Զրի հաց ես ուտում միայն։

— Այդ դեպքում, Գավրիլա Անդրեյիչ, ինձ դատել կարող է միայն աստված ինքը, և ուրիշ ոչ ոք։ Մենակ նա գիտե, թե ինչ մարդ եմ ես և ճի՞շտ է արդյոք, որ հաց ձրի եմ ուտում։ Իսկ ինչ վերաբերում է հարբեցողության, այդ դեպքում մեղավորը ես չեմ, այլ ավելի շուտ մի ընկեր. նա ինձ գրավեց ու ինքը հեռացավ, իսկ ես...

— Իսկ դու, թրջված հավի պես մնացիր փողոցում։ Էհ, գլուխդ կորցրած մարդ ես։ Բայց բանն էդ չի,— շարունակեց նա ու լռեց,— տիրուհին ուզում է, որ դու պսակվես։ Լսո՞ւմ ես։ Նա կարծում է, որ դու, պսակվելով, խելքի կգաս։ Հասկանո՞ւմ ես։

— Ինչո՞ւ չեմ հասկանում։

— Էդպես ուրեմն։ Իմ կարծիքով, լավ կլինի քեզ մի բան մեջ հավաքել։ Էհ, դա արդեն տիրուհու գործն է։ Հը, ի՞նչ կասես, համաձա՞յն ես։

Կապիտոնը ծիծաղեց։

— Ամուսնությունը լավ բան է մարդուս համար, Գավրիլա Անդրեյիչ. և ես, իմ կողմից, ամենայն ուրախությամբ։

— Էդպես, ուրեմն,— ասաց Գավրիլան և մտածեց ինքն իրեն, որ խոսք չկա, լավ է ասում մարդը։— Միայն թե՝ ա՛յ ինչ կա,— շարունակեց նա բարձր,— քեզ համար էլ լավ հարսնացու չեն ընտրել։

— Իսկ ո՞ւմ են ընտրել, թույլ տվեք հետաքրքրվել։

— Տատյանային։

— Տատյանային...

Եվ Կապիտոնը աչքերը չռեց ու պոկվեց պատից։

— Հը, ինչո՞ւ հուզվեցիր... Մի՞թե նրան չես հավանում։

— Ինչո՞ւ չեմ հավանում, Գավրիլա Անդրեյիչ, նա լավ

աղջիկ է, աշխատող, համեստ... Բայց չէ՞ որ դուք ինքներդ գիտեք, Գավրիլա Անդրեյիչ, որ էն գրողի տարածը, վայրենին՝ Տատյանայի վրա աչք ունի...

— Գիտեմ, ախպերս, բոլորը գիտեմ,— ընդհատեց նրան Գավրիլան վրդովված,— բայց չէ՞ որ...

— Բայց ախր, Գավրիլա Անդրեյիչ, նա ինձ կսպանի, աստված վկա, ճանճի պես կսպանի. նրա ձեռքը, դուք հո տեսել եք, ինչ ձեռք ունի նա. դա ուղղակի հսկայի ձեռք է։ Ինքը խուլ է, խփում է ու չի լսում, թե ինչպես է խփում։ Ձեռները թափահարում է էնպես, կարծես երազի մեջ լինի, և ոչ մի հնար չկա զսպելու։ Ինչո՞ւ, որովհետև, ինքներդ գիտեք, Գավրիլա Անդրեյիչ, դա ուղղակի ինչ-որ գազան է, հրեշ, Գավրիլա Անդրեյիչ, հրեշից էլ վատ... Հիմա նրա ձեռից ինչո՞ւ պիտի տանջվեմ. չէ՞ որ ես էլ մարդ եմ։

— Գիտեմ, գիտեմ, լավ...

—Օ, տեր աստված, շարունակեց կոշկակարը տաքացած,— ե՞րբ պիտի վերջանա այս բոլորը։ Այս ի՞նչ բախտ է իմ բախտը։ Երեխա ժամանակ ինձ ծեծում էր գերմանացի տերս, հետո սկսեց իմ հարազատ եղբայրը, վերջապես, հիմա էլ հասած տարիքիս ինչի եմ արժանանում։

— Է, հիմարի գլուխ,— ասաց Գավրիլան։— Ի՞նչ ես ավել պակաս խոսում։

— Ո՞նց թե ինչ, Գավրիլա Անդրեյիչ, ես ծեծից չեմ վախենում, Գավրիլա Անդրեյիչ։ Թող տերս չորս պատի մեջ պատժի ինձ, բայց մարդկանց ներկայությամբ մարդատեղ դնի ինձ, ես էլի մարդկանց շարքում կլինեմ, իսկ այս դեպքում, նա ո՞վ է, որ ես նրանից պատիժ կրեմ...

— Դե գնա կորի՛,— առանց շտապելու ընդհատեց նրան Գավրիլան։

Կլիմովը շուռ եկավ և հեռացավ։

— Բայց ասենք թե նա չկա,— ձայն տվեց Գավրիլան նրա հետևից։— Դու ինքդ համաձա՞յն ես։

— Հայտնում եմ իմ համաձայնությունը,— ասաց Կապիտոնը և հեռացավ։

Նա պերճախոսությունից չէր հրաժարվում անգամ ծայրահեղ ծանր վիճակում։

Գավրիլան մի քանի անգամ գնաց-եկավ սենյակում։

— Դե՛հ, հիմա կանչեցեք Տատյանային,— խոսեց նա վերջապես։

Մի քանի վայրկյանից սուս ու փուս ներս մտավ Տատյանան և կանգնեց շեմքին։

— Ի՞նչ կհրամայեք, Գավրիլա Անդրեյիչ,— ասաց նա համեստ ձայնով։

Գավրիլան ուշադիր նայեց նրան։

— Հը,— ասաց նա,— Տանյուշա, կուզե՞ս մարդու գնալ. տիրուհին քեզ համար մարդ է գտել։

— Լսում եմ, Գավրիլա Անդրեյիչ։ Իսկ ո՞ւմ է ընտրել տիրուհին ինձ համար,— ավելացրեց Տատյանան անհամարձակ։

— Կլիմովին, կոշկակարին։

— Լսում եմ։

— Նա, ճիշտ է, թեթևամիտ մարդ է, բայց տիրուհին հույս ունի քեզ վրա։

— Լսում եմ։

— Բայց ցավն այն է... չէ՞ որ այդ խուլ-համր Գերասիմը քեզ հետևում է։ Եվ ինչո՞վ ես դու այդ արջին գրավել։ Նա՝ այդ արջը՝ չէ՞ որ կարող է քեզ սպանել։

— Կսպանի, Գավրիլա Անդրեյիչ, անպայման կսպանի։

— Կսպանի՞... Մենք այդ կտեսնենք։ Ո՞նց թե կսպանի. նա մի՞թե իրավունք ունի քեզ սպանելու, ինքդ դատիր։

— Ես չգիտեմ, Գավրիլա Անդրեյիչ, ունի թե չունի։

— Տես, դու հո նրան էնպես բան չես խոստացել...

— Ի՞նչ եք հրամայում...

Գավրիլան լռեց և մտածմունքի մեջ ընկավ։

— Խեղճ, հնազանդ արարած։ Դե, լավ,— ավելացրեց նա,— մենք դեռ կխոսենք, իսկ առայժմ գնա, Տանյուշա, տեսնում եմ խոնարհ աղջիկ ես։

Տատյանան շուռ եկավ, թեթևակի հենվեց դռան շրջանակին ու գնաց։

«Է՛հ, տիրուհին գուցե հենց վաղն էլ մոռանա այդ պսակի մասին,— մտածեց Գավրիլան,— ես ինչի՞ եմ անհանգստանում որ։ Իսկ էդ շար Գերասիմին մենք կկոացնենք... Եթե չի կարող մի բան անել, ոստիկանության իմաց կտանք»... Ուսփորձի մի բան անել,

տինա Ֆեոդորովնա,— կանչեց նա բարձր ձայնով իր կնոջը,— սամավարը դիր, սիրելիս...

Տատյանան այդ օրն ամբողջ գրեթե դուրս չեկավ լվացքատնից։ Սկզբում նա լաց եղավ, հետո արցունքները սրբեց ու առաջվա պես ձեռնարկեց աշխատանքի։ Կապիտոնը մինչև ուշ գիշեր նստեց գինետանը մի ինչ-որ մռայլ տեսքով ընկերոջ հետ և մանրամասն պատմում էր նրան, թե ինչպես ինքը Պետերբուրգում ապրում էր մի աղա պարոնի մոտ, որի ձեռքից ամեն բան կգար, եթե մի փոքրիկ պակասություն չունենար— խմում էր և կանացի սեռով շատ էր հետաքրքրվում... Մռայլադեմ ընկերը գլխով էր անում միայն, բայց երբ Կապիտոնը հայտնեց, վերջապես, որ ինքը, մի դիպվածի բերումով, վաղը պետք է իրեն սպանի, մռայլադեմ ընկերը նկատեց, թե քնելու ժամանակ է։ Եվ նրանք լուռ բաժանվեցին իրարից։

Մինչդեռ Գավրիլայի սպասելիքները չարդարացան։ Տիրուհուն այնպես էր զբաղեցնում Կապիտոնին պսակելու միտքը, որ նա գիշերը նույնիսկ միայն դրա մասին էր խոսում տանն ապրող կանանցից մեկի հետ, որին պահում էր հատկապես նրա համար, որ անքնության դեպքերում հետը խոսի, և որը գիշերային կառապանի պես ցերեկն էր քնում։ Երբ Գավրիլան թեյից հետո մտավ տիրուհու մոտ զեկուցելու, տիրուհու առաջին հարցը եղավ.— Հը՞, ինչպե՞ս է, հարսանիքը գլուխ է գալի՞ս։ Գավրիլան, պարզ է, պատասխանեց, որ բանն ավելի քան հաջող է գնում, և որ Կապիտոնը այսօր նորից կգա տիրուհուն շնորհակալություն հայտնելու։ Տիրուհին իրեն մի տեսակ լավ չէր զգում և երկար չզբաղվեց գործերով։ Գավրիլան վերադարձավ իր սենյակը և մի խորհրդակցություն հրավիրեց։ Գործն, իսկապես, պահանջում էր հատուկ խորհրդակցություն։ Տատյանան չէր առարկում, իհարկե, բայց Կապիտոնը հայտարարում էր ի լուր ամենքի, որ ինքը մի գլուխ ունի, և ոչ թե երկու կամ երեք... Գերասիմը խստորեն ու արագ նայում էր բոլորին, չէր հեռանում աղջկանոցի դռնից և, թվում էր, գլխի է ընկնում որ ինչ-որ բան է պատրաստվում իրեն ի վնաս։ Ժողովականները (դրանց թվում էր և ծեր բուֆետապանը, որին քեռի Խվոստ էին ասում և որից բոլորը հարգանքով խորհուրդ էին հարցնում, թեև

նրանից միայն այս էին լսում.— «այ թե ինչ» կամ՝ «այո, այո, այո») սկսեցին նրանից, որ համենայն դեպս վտանգից ապահով լինելու համար, Կապիտոնին փակեցին մի մութ սենյակում ու սկսեցին միտք անել։ Ուժի դիմելը հեշտ էր, իհարկե, բայց աստված ոչ անի, աղմուկ բարձրանար, տիրուհին կանհանգստանար, այդ էր վտանգը։ Ինչպե՞ս անել։ Միտք արին, միտք արին և որոշեցին վերջապես։ Բազմիցս նկատված էր, որ Գերասիմը հարբածներին տանել չէր կարողանում... Տան առաջին նստած՝ նա ամեն անգամ երեսը շրջում էր զզվանքով, երբ կողքից երերուն քայլերով ու գլխարկի պահպանակը (կազիրոկը) ականջին թեքած անցնում էր հարբած մի մարդ։ Որոշեցին Տատյանային սովորեցնել, որ նա հարբած ձևանա և երերվելով, օրորվելով անցնի Գերասիմի մոտով։ Խեղճ աղջիկը երկար չէր համաձայնում, բայց համոզեցին. Տատյանան ինքն էլ տեսնում էր, որ իր երկրպագուից այլ կերպ չի կարող ազատվել։ Ու գնաց։ Կապիտոնին բաց թողին, բանը այնուամենայնիվ նրան էր վերաբերում։ Գերասիմը նստած էր տան մուտքի առաջ և թիով խաղում էր հողի հետ... Թոլոր անկյուններից, ծածկված լուսամուտների հետևից՝ հետևում էին նրան... Խորամանկությունը ավելի քան հաջողվեց։ Տատյանային տեսնելով՝ Գերասիմը նախ, ըստ սովորության, սիրալիր մզզոցով գլխով արավ, հետո ուշադիր նայելով, թին գցեց, վեր թռավ տեղից, մոտեցավ Տատյանային, երեսը մոտեցրեց նրա երեսին... Տատյանան վախից ավելի ևս երերաց ու աչքերը ծածկեց... Գերասիմը բռնեց նրա ձեռքը, վազեց բակի միջով և Տատյանայի հետ միասին մտնելով խորհրդի սենյակը, հրեց նրան դեպի Կապիտոնը։ Տատյանան վախից քարացավ... Գերասիմը կանգնեց, նայեց նրան, թափ տվեց ձեռքը, քմծիծաղ տվեց և ծանր քայլերով գնաց իր սենյակը։ Մի ամբողջ օր նա դուրս չեկավ այնտեղից։ Կառապան Անտիպկան պատմում էր հետո, որ ինքը դռան ճեղքից տեսել է, որ իբր թե Գերասիմը՝ մահճակալին նստած և ձեռքը այտին դրած՝ հանդարտ, երբեմն միայն մզզալով երգում է, այսինքն օրորվում է, աչքերը փակում և գլուխը թափահարում, ինչպես կառապան, երբ երգում է իր աղիողորմ երգը։ Այդ տեսնելով՝ Անտիպկան սարսափում է և ճեղքից հեռանում։ Երբ մյուս օրը Գերասիմը դուրս եկավ իր

խցից՝ նրա վրա առանձին փոփոխություն չէր նկատվում։ Նա կարծես ավելի մռայլվել էր, և Տատյանայի ու Կապիտոնի վրա ամենափոքր իսկ ուշադրություն չդարձրեց։ Նույն այդ երեկոն նրանք ներկայացան տիրուհուն, և մի շաբաթ հետո պսակվեցին։ Հարսանիքի օրը Գերասիմը իր վարքը ոչ մի բանով չփոխեց. միայն գետից վերադարձավ առանց ջրի. ինչպես էր պատահել՝ տակառը ճանապարհին կոտրել էր. իսկ գիշերը ախոռում նա այնպես եռանդով մաքրեց ու թիմարեց իր ձին, որ նա Գերասիմի երկաթե բռունցքների տակ դողդողում էր ու շուտ-շուտ հենվում այս կամ այն ոտի վրա։

Այս բոլորը կատարվեց գարնանը։ Անցավ էլի մի տարի, որի ընթացքում Կապիտոնը վերջնականապես իրեն տվեց խմելու և, որպես միանգամայն անպետք մարդ, կնոջ հետ միասին սայլով ուղարկվեց հեռավոր մի գյուղ։ Մեկնելու օրը սկզբում նա շատ պարծենում էր և հավատացնում, թե ուր էլ ուղարկեն իրեն, ինքը չի կորչի, բայց հետո տրամադրությունն ընկավ, սկսեց գանգատվել, թե իրեն տանում են անկիրթ մարդկանց մոտ, և վերջը այնպես թուլացավ, որ մինչև իսկ սեփական գլխարկը չկարողացավ գլխին դնել։ Երբ ամեն ինչ պատրաստ է արդեն, և գյուղացիները երասանները բռնած սպասում էին միայն «բարի ճանապարհ» խոսքին, Գերասիմը դուրս եկավ իր խցից, մոտեցավ Տատյանային և նվիրեց նրան, ի հիշատակ, մի կարմիր շթե գլխաշոր, որ մի տարի առաջ գնել էր նրա համար։ Տատյանան, որ մինչև այդ վայրկյանը գլխովն անցած բոլոր ձախորդությունները տարել էր միանգամայն անտարբերությամբ, այստեղ սակայն չդիմացավ, աչքերը լցվեցին արցունքով և, սայլ նստելիս, երեք անգամ համբուրվեց Գերասիմի հետ։ Գերասիմն ուզում էր ուղեկցել նրան մինչև ուղեկալը և սկզբում գնում էր սայլակի կողքից, բայց հանկարծ կանգ առավ, ձեռքը թափ տվեց և գնաց գետի երկարությամբ։

Իրիկնադեմ էր։ Գերասիմը հանգիստ անցնում էր գետափով և նայում ջրին։ Հանկարծ նկատեց, որ ինչ-որ բան հենց ափի մոտ շարժվում է տիղմի մեջ։ Նա կռացավ, տեսավ մի փոքրիկ շան լակոտ՝ սև ու սպիտակ բծերով, որ, չնայած բոլոր ջանքերին, ոչ մի կերպ չէր կարողանում ջրից դուրս գալ, բարձրանում էր. սահում և դողդողում էր իր ամբողջ թաց

մարմնով։ Գերասիմը նայեց խեղճ շնիկին, հետո մի ձեռքով վերցրեց, կոնատակը դրեց նրան, և մեծ-մեծ քայլերով շտապեց տուն։ Երբ հասավ ու մտավ իր խուցը, փրկած շանը դրեց իր թախտի վրա, ծածկեց յուր հաստ վերնազգեստով, ապա նախ վազեց գոմը՝ ծղոտի, հետո խոհանոց՝ մի բաժակ կաթի։ Վերադարձավ, վերարկուն զգուշությամբ վեր քաշեց, ծղոտը փռեց շան տակը ու կաթը դրեց թախտի վրա՝ նրա առաջ։ Խեղճ շնիկը ընդամենը երեք շաբաթական էր. աչքերը նոր բացվել էին, մի աչքը նույնիսկ մի քիչ մեծ էր մյուսից, բան լակել դեռ չէր կարողանում. դողում էր և աչքերը կուչ ածում։ Գերասիմը երկու մատով բռնեց նրա գլուխը և դունչը մեկնեց կաթին։ Փոքրիկ շունը հանկարծ սկսեց ագահաբար լակել կաթը և փնչացնել միաժամանակ։ Գերասիմը նայում էր նրան, նայում և հանկարծ ծիծաղից թուլանում։ Նա ամբողջ գիշեր քարշ եկավ այդ փոքրիկ շան հետ. սրբեց, չորացրեց նրան, ծածկեց և վերջապես քնեց նրա կողքին մի ուրախ ու խաղաղ քնով.

Ոչ մի մայր այնպես չէր խնամի իր երեխային, ինչպես Գերասիմն էր խնամում իր շնիկը։ Փոքրիկ շունն սկզբում շատ թույլ էր, նիհար ու տգեղ, բայց հետզհետե իրեն հավաքեց, լցվեց, իսկ ութ ամիս հետո, շնորհիվ իր ազատարարի անխոնջ հոգատարության, դարձավ իսպանական ցեղի մի լավ շուն՝ երկար ականջներով, մազոտ խողովակաձև պոչով և արտահայտիչ խոշոր աչքերով։ Նա զարմանալի կապված էր Գերասիմին և մի քայլ անգամ չէր հեռանում նրանից. բոլոր ժամանակ հետևում էր նրան, պոչը շարունակ շարժելով։ Գերասիմը նրա անունը դրեց Մումու (համրերը գիտեն, որ իրենց հանած մզզոցը գրավում է ուրիշների ուշադրությունը)։ Տան մարդիկ բոլորն էլ սիրեցին շանը և նույնպես Մումու էին կանչում նրան։ Մումուն անչափ խելոք էր. մոտենում, քննում էր բոլորին, բայց սիրում էր միայն Գերասիմին։ Գերասիմն ինքը գժի պես սիրում էր նրան... ուստի նրան դուր չէր գալիս, որ ուրիշները շոյում են իր շանը, վախենո՞ւմ էր, ինչ է, հայտնի չէ։

Գերասիմին առավոտները Մումուն էր զարթեցնում՝ փեշից քաշելով, սանձից բռնած՝ սայլակի մոտ էր բերում ջրկիր ձիուն, որի հետ լավ բարեկամ էր. դեմքին լրջություն տված՝

Գերասիմի հետ գնում էր գետ, հսկում էր նրա ավելներն ու թիերը և ոչ ոքի մոտ չէր թողնում իր տիրոջ խցին։ Գերասիմը նրա համար դռան մեջ մի անցք էր շինել, և Մումուն կարծես զգում էր, որ ինքը միայն Գերասիմի խցում է լիակատար տեր ու այդ պատճառով, ներս մտնելուն պես իսկույն ինքնագոհ դեմքով թռչում էր թախտին։ Նա գիշերը բոլորովին չէր քնում, բայց և այնպես չէր հաշում, ինչպես որևէ հիմար մի շուն, որ հետին թաթերին նստած, դունչը դեպի վեր, աչքերը փակ հաչում է ձանձրույթից, այնպես, աստղերի վրա, և սովորաբար երեք անգամ իրար ետևից։ Ոչ։ Մումուն այդպես չէր, նա իր բարակ ձայնը երբեք իզուր տեղը չէր հանի։

Նա իր ձայնը հանում էր այն ժամանակ միայն, երբ օտար մի մարդ էր մոտենում իրենց պարսպին, կամ որևէ մի տեղ կասկածելի աղմուկ էր բարձրանում կամ շրշյուն... Մի խոսքով՝ Մումուն երևելի պահակություն էր անում։ Ճիշտ է, նրանից բացի՝ բակում կար մի ծեր շղթայակապ շուն, որին սակայն երբեք, մինչև անգամ գիշերները, բաց չէին թողնում, և ինքն էլ, զառամած լինելով՝ ազատություն չէր էլ պահանջում. իր համար կուշ եկած, պառկում էր բնում և երբեմն միայն լսեցնում էր իր խռպոտ հաչոցը, որը իսկույն էլ կըտրում էր, կարծես ինքն էլ զգալով, որ դա անօգուտ է։ Մումուն տիրուհու տունը բոլորովին չէր մտնում, և երբ Գերասիմը փայտ էր տանում ներս, նա մնում էր դուրսը և սանդուղքի մոտ անհամբեր սպասում Գերասիմին՝ ականջները սրած, գլուխը բարձրացնելով մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ, նայած թե որ կողմից էր դռների թխկոց լսվում։

Այդպես անցավ մի տարի ևս։ Գերասիմը շարունակում էր դռնապահությունը և շատ գոհ էր իր վիճակից, երբ հանկարծ մի անսպասելի դեպք պատահեց... Այն է՝ գարնան մի գեղեցիկ օր տիրուհին իր տան ապրող ազգականուհիների հետ անց ու դարձ էր անում հյուրասենյակում։ Տրամադրությունը լավ էր, հանաքներ էր անում, ծիծաղում. հետի աղջիկներն էլ ծիծաղում էին և նույնպես հանաքներ անում, բայց առանձին ուրախություն չէին զգում. տանն այնքան էլ ուրախ չէին լինում, որ տիրուհու վրա ուրախություն էր գալիս, որովհետև, ամենից առաջ նա բոլորից պահանջում էր, որ անկեղծորեն

ու լիասիրտ մասնակցեն իր ուրախության, և երկրորդ, նրա այդ ուրախ բոպեները երկար չէին տևում և, սովորաբար, փոխվում էին մռայլ ու կծու տրամադրության։

Քաղցր ժպիտը շուրթերին՝ հյուրասենյակում զբոսնելով, տիրուհին մոտեցավ լուսամուտին։

Լուսամուտի առջև ծաղկանոց էր շինված, և հենց այդ բոպեին ծաղկանոցի մեջտեղը, վարդի թփի տակ, Մումուն պառկած՝ եռանդով ոսկոր էր կրծում։ Տիրուհին նկատեց նրան։

— Ա՛հ,— բացականչեց նա հանկարծ,— սա ի՞նչ շուն է։

Ազգականուհին, որին դիմեց տիրուհին, շփոթվեց և չիմացավ ինչ պատասխանի։

— Ը... ը... գիտեմ,— կմկմաց նա,— կարծես... Համրինն է... է...

— Ա՛հ,— ընդհատեց տիրուհին,— ինչ սիրուն շնիկ է, ասացեք այստեղ բերեն։ Վաղո՞ւց է նրա մոտ։ Ինչպե՞ս է, որ ես մինչև հիմա չեմ տեսել... Ասացեք բերեն։

Ազգականուհին իսկույն թռավ նախասենյակ։

— Տղա՛, ա՛յ տղա,— բացականչեց նա,— Մումուին բերեք այստեղ։ Շո՛ւտ։ Ծաղկանոցումն է։

— Դրա անունը Մումո՞ւ է,— հարցրեց տիրուհին,— շատ լավ անուն է։

— Այո, շատ,— պատասխանեց ազգականուհին։— Շո՛ւտ, Ստեպան, շուտ։

Ստեպանը, մի երիտասարդ, որ սպասավորի պաշտոն ուներ, նետվեց ծաղկանոց և այն է՝ քիչ էր մնացել բռներ Մումուին, բայց շունը ճարպկորեն դուրս պրծավ նրա մատների տակից և պոչը ցցած վազեց Գերասիմի մոտ, որ այդ ժամանակ խոհանոցի առաջ դատարկում էր ջրի տակառը։ Ստեպանը վազեց նրա ետևից և աշխատեց բռնել տիրոջ ոտների մոտ, բայց Մումուն շարունակ թռչկոտում էր ու խաբս տալիս։ Գերասիմը ժպտալով նայում էր այդ քաշկռտուքին։ Երկար քարշ գալուց հետո՝ Ստեպանը վերջապես գլուխը բարձրացրեց և նշաններով արագ հասկացրեց Գերասիմին, թե տիրուհին ահա քո շունն ուզում է, պիտի իր մոտ տանել։ Գերասիմը մի քիչ զարմացավ, բայց կանչեց Մումուին, վերցրեց և տվեց Ստեպանին։

Ստեպանը բերեց նրան հյուրասենյակ և դրեց հատակին։

Տիրուհին փաղաքշական կանչեց նրան իր մոտ։ Մումուն, որ իր օրում այդպիսի շքեղ սենյակում չէր եղած՝ վախեցավ սաստիկ և նետվեց դեպի դռները, բայց, Ստեպանի կողմից ետ մղվելով՝ դողդողաց ու պատին կպավ։

— Մումո՛ւ, Մումո՛ւ, արի ինձ մոտ, արի տիրուհու մոտ,— ասում էր տիրուհին.— արի, հիմար... մի՛ վախիր... արի՛։

— Մոտեցի՛ր, Մումու, մոտեցի՛ր,— ասում էին տիրուհուն շրջապատող կանայք։— Մոտեցի՛ր։

Բայց Մումուն տխուր նայում էր շուրջը և տեղից չէր շարժվում։

— Մի բան բերեք, թող ուտի,— ասաց տիրուհին,— ինչ հիմարն է, տիրուհուն չի մոտենում։ Ինչի՞ց է վախենում։

— Դեռ չի ընտելացել,— ասաց կանանցից մեկը անհամարձակ։

Ստեպանը փոքրիկ պնակով կաթ բերեց և դրեց Մումուի առջև, բայց Մումուն մինչև անգամ հոտ էլ չքաշեց. նա բոլոր ժամանակ դողում էր և առաջվա պես դիտում շուրջը։

— Ա՛հ, ինչ հիմարն ես,— արտասանեց տիրուհին մոտենալով և կռանալով, ուզեց շոյել նրան, բայց Մումուն դողահար գլուխը թեքեց և ատամները չխկացրեց։

Տիրուհին ձեռքը ետ քաշեց արագ։

Մի ակնթարթ լռություն տիրեց։ Մումուն մի թույլ կլանչոց արձակեց, ասես ափսոսում էր արածի համար և ներողություն խնդրում։

Տիրուհին հետ քաշվեց և հոնքերը կիտեց։ Շան հանկարծակի շարժումը վախեցրեց նրան։

— Ա՜խ,— բացականչեցին շրջապատող կանայք բոլորը միասին,— խոմ չկծե՞ց (Մումուն իր կյանքում երբեք ոչ ոքի չէր կծել).— ա՜խ-ա՜խ։

— Կորցրու դրան,— խոսեց պառավը փոխված ձայնով.— Զզվելի՜ շուն։ Ի՜նչ կատաղածն է։

Եվ դանդաղ շուռ եկավ ու գնաց դեպի իր առանձնասենյակը։ Ազգականուհիները վախով նայեցին իրար և ուզեցին հետևել նրան, բայց տիրուհին կանգնեցրեց նրանց, սառը նայեց բոլորին ու արտասանեց. «Ո՞ւր եք գալիս որ. ձեզ հո չեմ կանչում», և գնաց։

Կանայք հուսահատ ձեռները թափ տվին Ստեպանի վրա, Ստեպանը շանը բռնեց և գցեց դուրս, ուղիղ Գերասիմի ոտնաթի մոտ։ Կես ժամ հետո արդեն տանը թագավորում էր մի խոր լռություն. պառավ տիրուհին նստել էր իր բազմոցին փոթորկաբեր ամպից էլ մռայլ։

Մինչև երեկո նրա տրամադրությունը վատ էր. ոչ ոքի հետ չխոսեց, թուղթ չխաղաց և գիշերն անցրեց վատ։ Իսկ հետևյալ օրը կանչեց իր մոտ սպասավորների պետ Գավրիլային։

— Ասա, խնդրեմ,— սկսեց նա,— այդ ի՞նչ շուն էր, որ ամբողջ գիշերը հաչում էր մեր բակում և չթողեց քնեմ։

— Շուն... ո՞րը... գուցե խուլի շունը,— խոսեց Գավրիլան կմկմալով։

— Չգիտեմ խուլի՞ն էր, թե մի ուրիշինը, միայն չթողեց, որ քնեմ։ Ես զարմանում եմ՝ այդքան շատ շներ ինչի՞ համար են։ Հետաքրքիր է։ Չէ՞ որ մենք մեր բակում շուն ունենք։

— Ինչպես չէ, կա...

— Դե, էլ ի՞նչ. ավելորդ շունը մեր ինչի՞ն է պետք։ Անկարգություններ է անելու միայն։ Նայող չկա, ավագ չկա, այ թե ինչ։ Եվ խուլի ինչի՞ն է հարկավոր շունը։ Ո՞վ է նրան թույլ տվել, որ իմ բակում շուն պահի։ Երեկ մոտեցա լուսամուտին, տեսնեմ դա, ծաղկանոցում պառկած, ինչ-որ կեղտոտ բան է բերել ու կրծում է. իսկ այնտեղ չէ որ վարդեր են տնկված։

Տիրուհին լռեց։

— Այսօր իսկ դրան չտեսնեմ... լսո՞ւմ ես։

— Լսում եմ։

— Այսօր իսկ... առայժմ գնա։

Գավրիլան դուրս եկավ։

Նախասենյակում պառկած էր Ստեպանը. զարթեցրեց նրան և կամաց ինչ-որ բան հրամայեց, որին Ստեպանը պատասխանեց կես հորանջելով, կես ծիծաղելով։ Գավրիլան գնաց, իսկ Ստեպանը վեր թռավ տեղից, կաֆտանն ու կոշիկները հագավ և դուրս եկավ՝ շեմքում կանգնեց։ Ձանցավ հինգ րոպե, Գերասիմը երևաց, իր անբաժան Մումուի ուղեկ-

ցությամբ, փայտի մի ահագին կտրոց շալակին (տիրուհին հրամայել էր, որ իր ննջարանն ու առանձնասենյակը տաքացնեն նույնիսկ ամառը)։ Գերասիմը կողքանց կանգնեց դռան առջև, ուսով հրեց այն և իր բեռով մտավ ներս։ Մումուն, ըստ սովորության, մնաց նրան սպասելու։ Այդ ժամանակ Ստեպանը, հարմար րոպեից օգտվելով, հարձակվեց հանկարծ նրա վրա, ինչպես որսորդը ճտի վրա, սեղմեց նրա կուրծքը գետնին, գրկեց և մինչև անգամ գլխարկը չծածկելով՝ վազեվազ դուրս եկավ բակից, նստեց առաջին պատահած կառքը և գնաց ուղիղ Օխոտնի րյադ։ Այստեղ նա գնորդ գտավ. Մումուին ծախեց հիսուն կոպեկի՝ այն պայմանով միայն, որպեսզի նա մի շաբաթ գոնե կապած պահի նրան, և ինքն իսկույն վերադարձավ. բայց դեռ տուն չհասած՝ կառքից իջավ և, տան բոլորքը շրջան անելով, ետևի փողոցից, պարսպի վրայով թռավ բակը. դռնով վախենում էր գնալ, որ Գերասիմին չհանդիպի։

Ասենք, նրա անհանգստությունն ավելորդ էր։ Գերասիմը վաղուց բակում չէր։ Տնից դուրս գալով՝ նա անմիջապես դեռ ու դեն ընկավ Մումուին որոնելու. նա դեռ չէր հիշում, որ Մումուն երբևիցե չսպասեր իր վերադարձին, ու այս ու այն կողմ ընկնելով՝ սկսեց փնտրել, կանչել նրան իրեն հատուկ ձայնով... վազեց իր խուցը, խոտանոցը, նետվեց փողոց, դեսդեն... Մումուն չկա, Մումուն կորել է։ Գերասիմը դիմեց մարդկանց, ամենահուսահատ նշաններով հարց ու փորձ արավ, հողից կես արշին բարձր ցույց տալով՝ պատկերացրեց Մումուին ձեռներով... Ծառայողներից ոմանք, իսկապես չիմանալով ուր է չքացել Մումուն, գլուխները շարժում էին միայն, մյուսները, որ գիտեին, պատասխանի փոխարեն ծիծաղում էին, իսկ սպասավորների ավագը ծանր ու մեծ կերպարանք ընդունելով՝ սկսեց բղավել կառապանների վրա։ Այդ ժամանակ Գերասիմը դուրս եկավ բակից։

Օրը մթնում էր արդեն, երբ նա վերադարձավ։ Նրա հոգնած տեսքից, անհաստատ քայլվածքից և փոշոտված շորերից կարելի էր ենթադրել, որ Մոսկվայի կեսը ոտի տակ է տվել։ Նա կանգնեց տիրուհու տան լուսամուտների դիմաց, աչքը ածեց սանդուղքը, ուր յոթ ծառա էր հավաքված կանգնած, ետ դարձավ և մի անգամ էլ կանչեց «Մումուն։ Մումուն չերևաց։ Գերասիմը նորից հեռացավ։ Բոլորը նայեցին նրա ետևից, բայց ոչ մեկը ոչ ժպտաց, ոչ էլ մի խոսք ասավ։ Իսկ հետևյալ առավոտ ամեն բանի հետաքրքիր ձիապահ Անտիպկան խոհանոցում պատմում էր, որ խուլն ամբողջ գիշեր հառաչել է։

Հետևյալ ամբողջ օրը Գերասիմը չերևաց, այնպես, որ նրա փոխարեն ջրի գնաց կառապան Պատապը։ Տիրուհին սպասավորների ավագ Գավրիլային հարցրեց, թե կատարվա՞ծ է արդյոք իր հրամանը։ Գավրիլան պատասխանեց, որ կատարված է։ Մյուս առավոտ Գերասիմը իր խցից դուրս եկավ աշխատանքի։ Ճաշին եկավ հաց կերավ և դարձյալ գնաց առանց սրան կամ նրան գլուխ տալու։ Նրա դեմքը, որ առանց այն էլ զուրկ էր կենդանությունից, ինչպես բոլոր խուլ ու համրերինը, այժմ կարծես քարացել էր։ Ճաշից հետո նա կըրկին դուրս եկավ բակից, բայց կարճ ժամանակով. վերադարձավ և իսկույն գնաց խոհանոց։

Գիշերն իջավ, լուսնյակ, պայծառ մի գիշեր։ Գերասիմը պառկած հառաչում էր և շարունակ շուռ ու մուռ գալիս անկողնում. մեկ էլ հանկարծ զգաց, որ կարծես փեշը քաշում են. նա ամբողջ մարմնով դողաց, բայց գլուխը չբարձրացրեց և մինչև անգամ աչքերը փակեց. բայց նորից ահա փեշը քաշեցին՝ առաջվանից ավելի ուժգին։ Գերասիմը վեր թռավ... Նրա առաջ՝ թոկի կտորը վզին, կանգնած էր Մումուն ու պոչը շարժում էր շարունակ։

Երկարաձիգ մի ճիչ դուրս թռավ Գերասիմի անխոս կրծքից. նա բռնեց Մումուին ու սեղմեց կրծքին. Մումուն մի ակնթարթում լիզեց նրա քիթը, աչքերը, բեղերը և միրուքը... Գերասիմը կանգնեց, մտածեց, զգուշությամբ դուրս եկավ խոտանոցից, նայեց շուրջը և, հավաստիանալով, որ իրեն ոչ ոք չի տեսնի՝ շտապեց իր խուցը։ Դեռ առաջուց Գերասիմը գլխի էր ընկել, որ շունն ինքն իրեն չի կորել, որ նրան տարել են, երևի տիրուհու հրամանով. ծառայողները նշաններով բացատրել էին նրան, թե ինչպես նրա Մումուն ուզեցել էր տիրուհուն կծի, ուստի և Գերասիմը վճռեց միջոցներ ձեռք առնել։ Ամենից առաջ նա Մումուին հաց տվեց, փայփայեց, պառկեցրեց ու ծածկեց, հետո սկսեց մտածել ու ամբողջ գիշերը մտածում էր, թե ինչպե՞ս անի, որ Մումուին մի լավ տեղ

թաքցնի։ Վերջապես հնարը գտավ. ամբողջ ցերեկը Մումուին կթողնի խցի մեջ և երբեմն միայն կգա տեսնելու, գիշերը կտանի դուրս։ Դռան անցքը նա պինդ խցեց հին վերարկուով և ինքը. լույսը նոր բացված, բակում էր արդեն, կարծես ոչինչ էլ չէր պատահել. նա պահպանել էր նույնիսկ (անմեղ խորամանկություն) իր դեմքի տխուր արտահայտությունը։ Խեղճ խուլի մտքով չէր էլ կարող անցնել, որ Մումուն իր կլանչոցով կմատնի իրեն։ Եվ, իսկապես, շուտով տան մարդիկ բոլորն էլ իմացան, որ համրի շունը վերադարձել է և այժմ տանը փակված է։ Բայց Գերասիմին ու շանը խղճալուց, մասամբ էլ գուցե Գերասիմի երկյուղից, զգացնել տվին, որ իրենք նրա գաղտնիքը իմացել են։ Սպասավորների ավագը ծոծրակը քորեց միայն և ձեռը թափ տվեց. «Է՛հ, աստված իր հետ։ Գուցե տիրուհին չի էլ իմանում»։ Իսկ համրը երբեք այնպիսի ջանասիրություն չէր ցույց տվել, ինչպես այդ օրը. նա սրբեց, մաքրեց ամբողջ բակը, խոտերը արմատահան արավ, ծաղկանոցի ցանկի փայտերը կարգի բերեց, մի խոսքով՝ աշխատում, շարշարվում էր այնպես, որ մինչև անգամ տիրուհին էլ ուշադրություն դարձրեց նրա ջանասիրության վրա։ Օրվա ընթացքում Գերասիմը մի երկու անգամ թաքուն գնաց փակված շանը տեսնելու, իսկ գիշերը նա Մումուի հետ միասին պառկեց, ոչ թե խոտանոցում, այլ խցում և միայն ժամը երկուսին դուրս եկավ նրա հետ մաքուր օդում զբոսնելու։ Ու բակում բավական երկար զբոսնելով՝ նա ուզում էր վերադառնալ արդեն, երբ տան պարսպից այն կողմ, փողոցում ինչ-որ խշշոց լսվեց։ Մումուն ականջները սրեց, մոռաց, մոտեցավ պարսպի պատին, հոտոտեց և սկսեց բարձրաձայն հաչել։ Ինչ-որ հարբած մի մարդ եկել էր այնտեղ գիշերելու։

Այդ ժամանակ տիրուհին հենց նոր աչքը կպցրել էր երկարատև «ջղային հուզումից» հետո. այդպիսի հուզումներ միշտ պատահում էին նրան չափազանց կուշտ ընթրիքից հետո։ Շան հանկարծակի հաչոցը զարթեցրեց նրան. նրա սրտի զարկերն ավելացան. «Աղջիկնե՛ր, աղջիկնե՛ր,— նվաղելով կանչեց նա,— աղջիկնե՛ր, աղջիկնե՛ր»։ Աղջիկները վախվխորած ներս մտան ննջարան։ «Օ՛յ, օ՛յ, մեռնում եմ,— խոսեց տիրուհին վշտահար, ձեռքերն այս ու այն կողմ տարածելով,— դարձյալ, դարձյալ այդ շունը... Օ՛յ, մարդ ուղարկեցեք բժշկի հետևից. դրանք ինձ ուզում են սպանել... Շո՛ւնը, դարձյալ այդ շունը։ Օ՛յ»։ և նա գլուխը ետ ձգեց, որ նշան էր ուշաթափության։ Վազեցին բժշկի ետևից։ Նա եկավ, տիրուհուն ուշքի բերեց և հետո, հանգստության համար, կաթիլներ տվեց։ Տիրուհին ընդունեց կաթիլները և անմիջապես արտասվախառն ձայնով սկսեց գանգատվել շնից, ծառայողների ավագ Գավրիլայից, իր բախտից և այն բանից, որ իրեն՝ խեղճ, պառավ կնոջը, բոլորն աչքաթող են արել, որ ոչ ոք իրեն չի խղճում և բոլորն էլ իր մահն են ցանկանում։ Մինչ այդ՝ Մումուն շարունակում էր հաչել, իսկ Գերասիմն ապարդյուն կանչում էր նրան պարսպի մոտից։ «Ահա... ահա... դարձյալ...»— խոսեց տիրուհին, և նրա աչքերը նորից կուլ գնացին։ Բժիշկը ինչ-որ բան շշնջաց աղջկան, նա վազեց նախասենյակ, զարթեցրեց Ստեպանին, իսկ Ստեպանը վազեց Գավրիլային զարթեցնի և Գավրիլան բորբոքված հրամայեց տան բոլոր ծառայողներին ոտքի հանել։

Գերասիմը ետ նայեց, լուսամուտներում տեսավ լույս ու ստվերներ, նրա սիրտը վատ բան զգաց, Մումուին թևի տակ առավ, վազեց մտավ իր խուցը և դուռը փակեց։ Մի քանի րոպե հետո հինգ մարդ ուզում էին բանալ նրա դուռը, բայց նիգերի դիմադրությանը հանդիպելով՝ կանգ առան։ Եկավ Գավրիլան՝ սաստիկ հևալով և բոլորին հրամայեց մինչև առավոտ մնալ այդտեղ ու հսկել, իսկ ինքը շտապեց սպասավոր աղջիկների սենյակը և նրանց գլխավորի՝ Լյուբով Լյուբիմովնայի միջոցով հրամայեց հայտնել տիրուհուն, որ շունը, դրժբախտաբար, նորից ինչ-որ տեղից ետ է եկել, որ վաղն ևթ նա կենդանի չի լինի, և տիրուհին թող ողորմած լինի՝ չբարկանա ու հանգիստ մնա։ Տիրուհին հավանորեն այնքան էլ շուտ չէր հանգստանա, եթե բժիշկը տասներկու կաթիլի փոխարեն քառասուն չտար, այդ ազդեց նրան և քառորդ ժամից արդեն նա քնած էր խոր ու խաղաղ քնով. իսկ Գերասիմը, ամբողջովին գունատ, պառկել էր իր մահճակալին և Մումուի բերանը պինդ սեղմել։

Հետևյալ առավոտ տիրուհին զարթնեց բավական ուշ։ Գավրիլան սպասում էր նրա զարթնելուն, որպեսզի Գերասիմի տան վրա հարձակվելու հրաման տա, իսկ ինքը պատրաստ-

վում էր տիրուհու հանդիմանություններն ու նախատինքը լսելու։ Բայց ոչինչ էլ չեղավ։ Անկողնում պառկած տիրուհին հրամայեց իր մոտ կանչել աղջիկներից մեկին։

— Լյուբով Լյուբիմովնա,— սկսեց հանդարտ ու թույլ ձայնով. (սիրում էր նա երբեմն հալածված ու որբացած թշվառ ձևանալ. էլ ինչ ասել կուզի, որ այդ ժամանակ տան բոլոր մարդիկ իրենց անհարմար էին զգում). Լյուբով Լյուբիմովնա, տեսնում եք ինչ դրության մեջ եմ՝ գնացեք, հոգիս, Գավրիլա Անդրեյիչի մոտ, խոսեք նրա հետ. Մի՞թե մի շուն նրա համար ավելի թանկ է իր տիրուհու հանգստությունից ու կյանքից։ Ես չէի կամենա այդ բանին հավատալ,— ավելացրեց նա խորապես հուզված,— գնացեք, հոգիս, բարի եղեք, գնացեք Գավրիլա Անդրեյիչի մոտ։

Լյուբով Լյուբիմովնան գնաց Գավրիլայի սենյակը։ Հայտնի չէ թե ինչ խոսք ու զրույց եղավ նրանց մեջ, բայց մի քիչ անց մարդկանց մի ահագին ամբոխ բակի միջով շարժվեց դեպի Գերասիմի խուցը։ Առջևից գնում էր Գավրիլան, նրա երկու կողմից՝ սպասավորներն ու խոհարարները։ Լուսամուտից նայում էր քեռի Խվոստը և կարգադրություններ անում, այսինքն ձեռքերը շարժում էր միայն։ Ամենքի ետևից, թոչկոտելով ու ծամածռություններ անելով, գնում էին փոքրիկ տղաներ, որոնց մի մասը եկել էին հարևան բակից։ Գերասիմի խուցը տանող սանդուղքին նստել էր մի պահակ, դռների մոտ կանգնել էին երկուսը՝ փայտավորված։ Սկսեցին սանդուղքով բարձրանալ ու բռնեցին նրա ամբողջ երկարությունը։ Գավրիլան մոտեցավ դռանը, բռունցքով ծեծեց ու կանչեց.

— Բա՛ց։

Լսվեց խեղդված հաչոց, բայց պատասխան չեղավ։

— Ասում եմ՝ բաց,— կրկնեց նա։

— Ախր, Գավրիլա Անդրեյիչ,— նկատեց ներքևից Ստեպանը,— չէ՞ որ խուլ է, չի լսում։

Ամենքը ծիծաղեցին։

— Հապա ի՞նչ անենք,— ասաց վերևից Գավրիլան։

— Այդտեղ դռան վրա ծակ տեղ կա,— պատասխանեց Ստեպանը,— փայտով շարժեցեք էնպես։

Գավրիլան կռացավ։

— Նա ծակը ինչ-որ վերարկու է կոխել։

— Դուք էլ վերարկուն դեպի ներս բռթեցեք։

Նորից բութ հաչոց լսվեց։

— Տե՛ս, տե՛ս, ինքն իրեն մատնում է,— նկատեցին ամբոխի միջից և նորից ծիծաղեցին։

Գավրիլան ականջի ետևը քորեց։

— Չէ, ախպեր,— ասաց նա վերջապես,— վերարկուն բռթիր ինքդ, եթե ուզում ես։

— Լավ, համեցեք։

Եվ Ստեպանը բարձրացավ վերև, փայտը վերցրեց, վերարկուն հրեց ներս ու սկսեց փայտը ծակի մեջ խաղացնելով կրկնել՝ «դուրս արի, դուրս արի»։ Նա դեռ փայտը տարուբերում էր, երբ հանկարծ խուցի դուռը արագ բացվեց, սպասավորների ամբողջ խումբը գլխիվայր գլորվեց սանդուղքից, և ամենից առաջ Գավրիլան։

— Դե՛, դե՛, դե՛,— կանչեց Գավրիլան ներքևից,— խելոք կաց, ա՛յ...

Գերասիմն անշարժ կանգնեց շեմքում։ Ամբոխը հավաքվեց սանդուղքի ոտների մոտ։ Գերասիմը գերմանական կաֆտան հագած այդ մանր մարդկանց նայում էր բարձրից, և ձեռները թեթևակի կողքին կանթած։ Իր գյուղական կարմիր վերնաշապիկով նա մի հսկա էր թվում նրանց առաջ։

Գավրիլան մի քայլ արավ առաջ գնալու։

— Տե՛ս, ա՛յ,— ասաց նա,— չարություն մի ա՛նի։

Եվ սկսեց նշաններով հասկացնել, որ տիրուհին նրա շունը պահանջում է անպատճառ. տուր այդ շունը իսկույն, թե չէ վատ կլինի։

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց շունը, ձեռքը տարավբերեց իր վզի մոտ այնպես, կարծես օղակ էր գցում ու հարցական դեմքով նայեց ծառայողների ավագին։

— Այո՛, այո՛,— ասաց Գավրիլան գլուխը շարժելով,— անպատճա՛ռ։

Գերասիմն աչքերը ցած գցեց, հետո հանկարծ ցնցվեց, կրկին ցույց տվեց Մումուին (որ բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած, պոչը շարժում էր անմեղ և ականջները խլրտում), նորից իր վզի վրա խեղդելու նշան ցույց տվեց և նշանակալից ձևով ձեռը խփեց կրծքին, որով կարծես հայտարա-

բում էր, որ ինքն իր վրա էր վերցնում Մումուին ոչնչացնելու գործը։

— Չէ, դու կխաբես,— շարժեց ձեռքը Գավրիլան իբրև պատասխան։

Գերասիմը նայեց նրան, արհամարհանքով ծիծաղեց, կըրկին ձեռքը կրծքին խփեց և դուռը շրխկոցով փակեց։

Բոլորը լուռ իրար նայեցին։

— Սա ի՞նչ է նշանակում,— սկսեց Գավրիլան,— նորից փակվեց։

— Թողեք, Գավրիլա Անդրեյիչ,— ասաց Ստեպանը,— նա ասածը կանի, եթե խոստանում է։ Նրա բնավորությունն էդպես է։ Եթե խոստանում է՝ էլ պրծավ։ Էդ բանում նա մեզ նման չի. ինչ որ ճիշտ է, ճիշտ է։ Այո։

— Էհ, գուցե, տեսնենք,— ասաց Գավրիլան.— իսկ մեկը թող էլի մնա էստեղ։ Եկ, Երոշկա,— ավելացրեց նա, դիմելով մի ինչ-որ խեղճ մարդու, որ այդպիսի էր համարվում,— մի բան որ գործ չունես, փայտը վերցրու և այստեղ նստիր, հենց որ մի բան եղավ՝ իսկույն վազիր ինձ մոտ։

Երոշկան փայտը վերցրեց և նստեց սանդուղքի առաջին աստիճանին։ Ամբոխը ցրվեց, բացի մի քանի հետաքրքիրներից ու փոքրիկ տղաներից. իսկ Գավրիլան վերադարձավ տուն և հրամայեց աղջիկների միջոցով հայտնել տիրուհուն, որ ամեն ինչ կատարված է։

Այդ իրարանցումից մի ժամ հետո խուցի դուռը բացվեց, և Գերասիմը դուրս եկավ. նա հագել էր իր տոնական կաֆտանը։ Նա իր հետ դուրս բերեց Մումուին՝ վիզը թոկը դրած։ Երոշկան մի կողմ քաշվեց և նրան ճանապարհ տվեց անցնելու։ Գերասիմը գնաց դեպի բակի դուռը։ Բակում եղած փոքրիկ տղաները լուռ աչքերով հետևեցին նրան։ Գերասիմը նույնիսկ ետ չնայեց, գլխարկը ծածկեց միայն փողոցում։ Գավրիլան նույն Երոշկային ուղարկեց նրա ետևից նայելու։ Երոշկան, հեռվից տեսնելով, որ Գերասիմը շան հետ միասին ճաշարան մտավ, սպասեց նրա դուրս գալուն։

Ճաշարանում Գերասիմին ճանաչում և նրա նշանները հասկանում էին։ Նա իր համար մսով կերակուր խնդրեց և նստեց՝ արմունկներով սեղանին հենված։ Մումուն՝ նրա աթոռի մոտ կանգնած, խելացի աչքերով նայում էր նրան։ Նրա մազերը լավ հարթված էին. երևում էր, որ քիչ առաջ սանրել են նրան։ Գերասիմին կերակուր բերին։ Նա հաց բրդեց նրա մեջ, միսը կտոր-կտոր արավ և ափսեն դրեց հատակին։ Մումուն սկսեց ուտել իր սովորական բարեկիրթ ձևով, դունչը հազիվ կերակրին մոտեցնելով։ Գերասիմը երկար նայում էր նրան, հանկարծ արցունքի երկու խոշոր կաթիլ ընկան նրա աչքերից. մեկն ընկավ շան թեք ճակատին, մյուսը՝ կերակրի մեջ։ Նա դեմքը ծածկեց ձեռքերով։ Մումուն կերավ կերակրի կեսը և մի կողմ քաշվեց դունչը լիզելով։ Գերասիմը ելավ տեղից, վճարեց կերակրի գինը և դուրս եկավ։ Երոշկան, Գերասիմին տեսնելով, ցատկեց անկյունի մյուս կողմը և երբ Գերասիմն եկավ անցավ իր մոտով, նա կրկին հետևեց նրան։

Գերասիմը գնում էր առանց շտապելու՝ Մումուի թոկը բռնած։ Հասնելով փողոցի անկյունը՝ նա կանգ առավ կարծես մտածմունքի մեջ, և հանկարծ արագ քայլերով դիմեց դեպի գետը։ Ճանապարհին նա մտավ նոր կառուցվող մի տան բակ և այնտեղից երկու աղյուս բերեց կռնատակը դրած։ Հասնելով գետը, նա ափով գնաց-հասավ մի տեղ, ուր ցցերին կապված երկու նավակ էին կանգնած. նա Մումուի հետ միասին ցատկեց դրանցից մեկի մեջ։ Բանջարանոցի ծայրում խփված վրանից դուրս եկավ մի կաղ ծերուկ և պոռաց նրա վրա։ Բայց Գերասիմը գլխով արեց միայն և այնպես ուժեղ թիավարել սկսեց, որ, թեև գետի հոսանքին հակառակ, մի ակնթարթում հարյուր սաժեն առաջ սլացավ։ Ծերուկը կանգնեց, կանգնեց, մեջքը քորեց նախ ձախ, ապա աջ ձեռքով և կաղալով վերադարձավ նորից իր վրանը։

Գերասիմը շարունակ թիավարում էր ու թիավարում։ Ահա Մոսկվան ետ մնաց։ Ահա գետի ափերին տարածվում են մարգագետիններ, բանջարանոցներ, դաշտեր, պուրակներ, երևացին խրճիթներ։ Գյուղի հոտ էր գալիս։ Գերասիմը թիերը ձգեց, գլուխը սեղմեց Մումուին, որ նստած էր նրա առջև՝ չոր տախտակի վրա։

Հատակը լցված էր ջրով և այդպես մնաց անշարժ, ուժեղ բազուկներով շան մեջքը գրկած։ Իսկ նավակը մինչև այդ ալիքներով կամաց-կամաց տարվում էր ետ՝ դեպի քաղաք։ Վերջապես, Գերասիմն ուղղվեց արագ և ինչ որ ցավագին մի կատաղություն դեմքին, վերցրած աղյուսները թոկով կա-

պեց իրար, հետո թոկի ծայրերը կապեց Մումուի վիզը. բարձրացրեց ու բռնեց նրան գետի վրա ու վերջին անգամ նայեց նրան... Մումուն հավատով ու աներկյուղ նայեց տիրոջը և պոչը շարժեց կամացուկ։ Գերասիմը երեսը շուռ տվեց, աչքերը փակեց և ձեռները բաց թողեց... ու լսեց ոչինչ, ոչ ընկնող Մումուի սուր կլանչոցը, ոչ էլ ջրի ծանր ճողփյունը. ամենաաղմկոտ օրը լուռ և անշշուկ էր նրա համար, ինչպես ոչ մի խաղաղ գիշեր անձայն չէ մեզ համար. և երբ նա աչքերը բաց արավ նորից, առաջվա պես գետի երեսով, կարծես միմյանց հալածելով, շտապով վազում էին փոքրիկ ալիքները և առաջվա պես ճողփյունով զարնվում նավակի կողերին, և միայն հեռուն, դեպի ափն էին վազում ինչ-որ լայն կորագծեր։

Երոշկան, հենց որ Գերասիմը թաքնվեց նրա աչքից, վերադարձավ տուն և պատմեց ինչ տեսել էր։

— Դե, իհարկե,— նկատեց Ստեպանը.— Գերասիմը նրան ջուրը կգցի։ Արդեն կարող եք հանդարտ լինել, քանի որ խոստացել էր...

Ամբողջ օրը Գերասիմը չերևաց։ Նա ճաշվա հացին չեկավ։ Երեկոյան էլ, երբ բոլորը հավաքվեցին ընթրիքի, նա չկար։

— Ի՞նչ զարմանալի տղա է այդ Գերասիմը,— ճղճղալով խոսեց հաստլիկ լվացարարուհին,— մի՞թե կարելի է մի շան համար էդպես կոտորվել... Չեմ հասկանում...

— Ախր Գերասիմն էստեղ էր,— գոչեց հանկարծ Ստեպանը՝ գդալով իր համար քաշովի վերցնելով։

— Ի՞նչպես։ Ե՞րբ։

— Երկու ժամ առաջ։ Ինչպես չէ. փողոցի դռան մոտ պատահեցինք։ Նա էստեղից էր գնում. հայաթից նոր էր դուրս գալի։ Ուզեցի շան մասին հարցնեմ, քեֆը տեղը չէր։ Ինձ էլ բոթեց. ինչպես երևում է, ուզում էր ասել՝ հեռո՛ւ, մի՛ խոսի, ու մի էնպես դմբուզ հասցրեց վզակոթիս, օ՛յ, օ՛յ, օ՛յ։— Եվ Ստեպանն ակամա քմծիծաղով կուչ եկավ ու վիզը քորեց։

Բոլորը ծիծաղեցին Ստեպանի վրա և ընթրիքից հետո գնացին քնելու։

Մինչդեռ նույն այդ ժամանակ Տ-ի խճուղով շտապով և առանց կանգ առնելու քայլում էր մի հսկա՝ պարկը մեջքին ու մի երկար ձեռնափայտ ձեռին։ Դա Գերասիմն էր։ Նա գնում էր առանց ետ նայելու, շտապում էր տուն, իրենց գյուղը։

Խեղճ Մումուին ջուրը գցելուց հետո՝ նա վազեց իր խուցը, հապճեպ մի քանի բան-ման հավաքեց դրեց հին տապճակի մեջ, կապոց արավ, ուսը գցեց ու հայդա։ Ճանապարհը նա լավ գիտեր, դեռ այն ժամանակից. երբ իրեն բերին Մոսկվա։ Այն գյուղը, որտեղից տիրուհին բերել էր նրան, ընկած էր խճուղուց քսանհինգ վերստ հեռու։ Նա գնում էր մի անընկճելի խիզախությամբ, կատաղի և ուրախ վճռականությամբ։ Գնում էր, ու նրա աչքերն ագահաբար և ուղիղ նայում էին առաջ։ Նա շտապում էր այնպես, կարծես պառավ մայրը սպասում էր նրան հայրենի գյուղում, կարծես կանչել էր իր մոտ օտար երկրում և օտար մարդկանց մեջ երկար թափառելուց հետո... Հենց նոր իջած ամառային գիշերը խաղաղ էր ու տաք. մի կողմից, այնտեղ, ուր արևը մայր մտավ, երկինքը դեռ սպիտակին էր տալիս և թեթևակի կարմրած էր անհետացող օրվա վերջին ցոլքերով, մյուս կողմից բարձրանում էր գորշ-կապույտ աղջամուղջը։ Հարյուրավոր լորեր աղմկում էին ամեն կողմ, և նրանց հետ մրցելու համար կարծես ջրահավերը ձայնակցում էին իրար։ Գերասիմը, սակայն, նրանց լսել չէր կարող. նա չէր կարող լսել նաև գիշերային մեղմ սոսափյունը ծառերի, որոնց կողքով անցնում էր. բայց նա զգում էր հասնող հաճարի ծանոթ հոտը, որ բուրում էր շարունակ մութ դաշտերից, զգում էր, թե ինչպես քամին, իր հայրենի քամին, քնքշաբար զարնվում էր իր երեսին և խաղում մազերի ու միրուքի հետ. տեսնում էր իր առաջ սպիտակին տվող ճանապարհ, իրենց տան ճանապարհը, որ ձգվում էր նետի պես ուղիղ. նա տեսնում էր երկնքում անթիվ աստղեր, որ լուսավորում էին նրա ուղին, և առյուծի նման քայլում էր նա առույգ ու կայտառ, այնպես, որ երբ ծագող արեգակը իր տամուկ կարմիր շողերով լուսավորեց մեծ քայլերով հեռացող հսկային. Մոսկվայի և նրա միջև ընկած էր արդեն երեսունհինգ վերստ...

Երկու օրից հետո նա իր տանն էր արդեն, ի մեծ զարմանս այն զինվորի կնոջ, որին տեղավորել էին նրա խրճիթում։ Սրբապատկերի առաջ աղոթելուց հետո՝ նա գնաց տանուտերի մոտ։ Տանուտերը մի քիչ զարմացավ. բայց խոտհունձը հենց նոր սկսել էր. Գերասիմին, որպես ընտիր մշակի, հենց այդտեղ ձեռը գերանդի տվին, և առաջվա պես գնաց հունձ

անելու, տեսնելով նրա ձեռի թափն ու հնձած լասերը...

Իսկ Մոսկվայում, Գերասիմի փախչելու հետևյալ օրը, տան սպասավորները զբաղվեցին նրանով։ Գնացին նրա խուցը, ման եկան, հետո հայտնեցին Գավրիլային։ Նա եկավ նայեց, ուսերը վեր քաշեց և վճռեց, որ համրը կամ փախել է, կամ խեղդվել իր շան հետ միասին։ Իմաց տվին ոստիկանության, հայտնեցին տիրուհուն։ Տիրուհին բարկացավ, լաց եղավ և հրամայեց, ինչ էլ լինի գտնել նրան. հավատացրեց, որ ինքը երբեք չի հրամայել շանը ոչնչացնել և, վերջապես, այնպես մի շշպռեց Գավրիլային, որ նա ամբողջ օրը գլուխը շարժում էր և ասում. «Հը՛մ»...

Վերջապես, գյուղից լուր եկավ, թե Գերասիմն այնտեղ է։ Տիրուհին մի քիչ հանգստացավ. սկզբում ուզում էր հրամայել, որ նրան անմիջապես ետ բերեն Մոսկվա, բայց հետո հայտնեց, որ այդ տեսակ ապերախտ մարդը իրեն հարկավոր չէ։ Ասենք, դրանից հետո նա ինքը շուտով մեռավ, իսկ ժառանգների հոգսը Գերասիմը չէր. նրանք մոր մնացած ծառայողներին էլ բաց թողին։

Եվ մինչ այսօր էլ Գերասիմն ապրում է մեն-մենակ իր մենավոր խրճիթում. առողջ և ուժեղ է առաջվա պես, մենակ չորս մարդու բան է անում և առաջվա պես էլի լուրջ է ու ծանր։ Բայց հարևանները նկատել են, որ նա, Մոսկվայից վերադառնալուց հետո, ոչ մի կնոջ հետ չի խոսում, երեսին անգամ չի նայում, ոչ մի շուն չի պահում մոտը։

«Ասենք,— խոսում են գյուղացիները,— շունը նրա ինչի՞ն է պետք. ոչ մի գող մոտ չի գա նրա դռանը»։

Այս համբավն է պատում համրի հսկա ուժի մասին։

—

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՅՈՒՂԸ

Հուլիս ամսվա վերջին օրն է։ Շուրջս հազարավոր վերստերով Ռուսաստանն է, հայրենի երկիրը։

Հավասար կապույտով ծածկված է ամբողջ երկինքը, միայն մի ամպիկ կա այնտեղ, որ չգիտես լողում է, թե հալվում։ Քամի չկա։ Տապ է... Օդը՝ նոր կթած կաթ։

Արտույտները զնգում են, մեծախպիպ աղավնիները ղունղունում, ծիծեռնակները լուռ ճախրում են, ձիերը փնչացնում են ու ծամում, շները չեն հաչում և, հանդարտ կանգնած, պոչերն են խաղացնում։

Թե ծխի, թե խոտի հոտ է գալիս, մի քիչ էլ կպրածյուքի, քիչ էլ կաշվի։ Կանեփի արտերն արդեն ուժ են առել և արձակում են իրենց ծանր, բայց դուրեկան բույրը։

Խորահատակ, բայց զառիվայր ձորակ։ Ձորակի կողքերով մի քանի շարք ձգվում են լայնազլուխ, դեպի վար շերտավորված ուռիներ։ Ձորամիջով վազում է առվակը. նրա հատակին փոքրիկ քարերը փայլփլուն ծփանքի միջից ասես դողում են։ Հեռվում, երկրի ու երկնքի ծայրավերջում, մեծ գետի կապտավուն գիծն է։

Ձորակի երկարությամբ՝ մի կողմում մաքուր ամբարներ, ամուր փակված դռներով վանդակներ, մյուս կողմում՝ եղևնափայտից շինված նրբատաշ կտուրներով հինգ-վեց խրճիթներ։ Ցուրաքանչյուր տանիքի վրա՝ սարյակի բույնի բարձր ձող. յուրաքանչյուր մուտքի վերև՝ թիթեղյա թավաթաշ ձիուկ։

Լուսամուտների անհարթ ապակիները ցոլցլում են ծիածանի գույներով։ Փեղկերի վրա ծաղկեփնջերով սափորներ են նկարված։ Ամեն մի խրճիթի առաջ կանոնավոր դրված է մի կոկ նստարան, հողաթախտերի վրա կծկվել են թափանցիկ ականջները սրած կատուները։ Բարձր շեմքերի ետևում մթին են տալիս զով նախասենյակները։

Ես պառկած եմ հենց ձորակի եզրին փռված տապճակի վրա. շուրջս նոր հնձած, թմրեցնելու չափ բուրավետ խոտի կույտեր։ Հեռատես տերերը խոտը փռել են խրճիթների առաջ. թող մի քիչ էլ չորանա արևի տակ. իսկ հետո կլցնեն խոտանոցը։ Ա՜յ թե հիանալի կլինի դրա վրա քնելը։

Յուրաքանչյուր շեղջի միջից դուրս են ցցվել մանկական գանգրահեր գլուխներ։ Փուփուլավոր հավերը միջատներ ու մժեղներ են որոնում խոտի մեջ. սպիտակադունչ քոթոթը թավալվում է խճճված խոտերում։

Մաքուր ու ցած գոտկած վերնաշապիկներով ու երկարավիզ ծանր կոշիկներով շիկագանգուր տղաները, կրծքով հենված շլծված սայլակին, աշխուժորեն խոսակցում են, սրտանց քրքջում։

Լուսամուտից նայում է կլորադեմ նորահարսը. ծիծաղում է՝ չգիտես ջահելների խոսք ու զրույցի, թե՞ խոտակույտերում վխտացող մանուկների վրա։

Մի ուրիշ նորահարս, ուժեղ ձեռներով, ջրհորից քաշում է մեծ, ջրով լիքը դույլը... փոկի ծայրին դողդողում և օրորվում է դույլը, թափելով երկայն, հրափայլ, կաթիլներ։

Իմ առաջ կանգնած է պառավ տանտիկինը՝ նոր, նախշուն բաճկոնակով, նոր հողաթափերով։

Խոշոր, ուռուցիկ ուլունքները երեք շարք պատել են նրա թխամորթ և նիհար վիզը. ճերմակած գլխին, մինչև մարած աչքերը վար թողած, կապել է կարմիր պուտերով դեղին գլխաշոր։

Բայց սիրալիր են ժպտում պառավական աչքերը. ժպտում է ամբողջովին կնճռոտ դեմքը։ Երևի յոթերորդ տասնամյակն է ապրում պառավը... Բայց հիմա էլ դեռ երևում է, որ ժամանակին գեղեցկուհի է եղել։

Լայն բաց արած աջ ձեռքի արևառ մատները, նա պահում է սառը, մառանից հենց նոր հանած, դեռ սերը լքված կաթով լիքը կճուճը. կճուճի կողերը ծածկված են ցողի կաթիլներով, ասես ուլունքներով։ Ձախ ձեռքի ափով պառավը հրամցնում է ինձ դեռ տաք հացի մի մեծ կտոր։— «Կե՛ր, քեզ անուշ, ճամփորդ հյուր»։

Հանկարծ կանչեց աքաղաղը և փութկոտ թափահարեց թևերը. նրան ի պատասխան, առանց շտապելու, բառաչեց գոմում փակված հորթուկը։

— «Ա՜յ թե վարսակ է, հա՜»,— լսվում է իմ կառապանի ձայնը։

Օ՜, ռուսական ազատ գյուղի հանգիստ, բարիք ու առատություն։ Օ՜, անդորր ու բարեբեր կյանք։

Եվ մտածում եմ ես. ինչերի՞ս է պետք Սուրբ Սոֆիայի գմբեթի խաչը ցարդրադում և այն ամենն, ինչին այսպես հետամուտ ենք մենք, քաղաքի մարդիկս։

Փետրվար, 1878

ԶՐՈՒՅՑ

Ոչ Յունգֆրաուին, ոչ էլ Ֆինստերարհորնին դեռ մարդու ոտք չի դիպել։

Ալպյան լեռների գագաթները... Սեպեզր քարափների մի ամբողջ շղթա... լեռների հենց սիրտը։

Լեռների վրա՝ բաց-կանաչ, պայծառ ու համր երկինքը։ Ուժեղ, խիստ սառնամանիք, կարծրացած, շողշողուն ձյուն. ձյունի տակից դուրս են ցցվել սառցապատ, հողմահար ժայռերի մռայլ գագաթները։

Երկու զանգվածներ, երկու հսկաներ բարձրանում են հորիզոնի երկու կողմերում՝ Յունգֆրաուն և Ֆինստերարհորնը։

Եվ ասում է Յունգֆրաուն հարևանին.

— Ի՞նչ նոր բան կասես։ Դու ավելի լավ ես տեսնում։ Ի՞նչ կա ներքևում։

Անցնում է մի քանի հազար տարի. մի րոպե։

Եվ ի պատասխան՝ որոտում է Ֆինստերարհորնը.

— Համատարած ամպերը ծածկել են երկիրը... Սպասի՛ր։

Անցնում են նորից հազարամյակներ. մի րոպե։

— Դե՛, իսկ ա՞յժմ,— հարցնում է Յունգֆրաուն։

— Այժմ տեսնում եմ. այնտեղ, ներքևում էլի նույնն է՝ խայտաբղետ, մանր։ Ջրերը կապույտին են տալիս, անտառները՝ սևին, քարաշեղջերը գորշագունում են։ Նրանց մոտերքը դեռևս վխտում են նույն մժղուկները, գիտե՞ս, այն երկոտանիները, որոնք դեռ ոչ մի անգամ չկարողացան ապականել ոչ քեզ, ոչ ինձ։

— Մարդի՞կ։

— Այո՛, մարդիկ։

Անցնում են հազարավոր տարիներ. մի րոպե։

— Դե՛, իսկ ա՞յժմ,— հարցնում է Յունգֆրաուն։

— Կարծես մժղուկները պակասել են,— դղրդում է Ֆինստերարհորնը,— ներքևն ավելի է պարզվել, ջրերը սեղմվել են, անտառները նոսրացել։

Անցնում են կրկին հազարավոր տարիներ. մի րոպե։

— Ի՞նչ ես տեսնում դու,— ասում է Յունգֆրաուն։

— Մեր շուրջը՝ մոտերքը ասես մաքրվեց,— պատասխանում է Ֆինստերարհորնը,— դեհ, իսկ այնտեղ, հեռվում, հովիտների մեջ դեռ բծեր կան և մի բան էլ շարժվում է։

— Իսկ հիմա՞,— հարցնում է Յունգֆրաուն, ուրիշ հազարամյակներ, մի րոպե անց։

— Հիմա լավ է,— պատասխանում է Ֆինստերարհորնը,— ամեն տեղ հաճելի է, ուր էլ նայում ես՝ բոլորովին սպիտակ... ամենուր մեր ձյունն է, հավասար ձյունը և սառույցը։ Ամեն ինչ սառել է։ Այժմ լավ է, հանգիստ։

— Լա՛վ,— ասում է Յունգֆրաուն։— Սակայն բավականին շաղակրատեցինք մենք, ծերո՛ւկ։ Ննջելու ժամանակն է։

— Ժամանակն է։

Քնած են վիթխարի լեռները. հավետ լռած երկրի վրա քնած է կանաչ, լուսափայլ երկինքը։

Փետրվար, 1878

ՊԱՌԱՎԸ

Ես մենակ անցնում էի լայնարձակ դաշտով։

Եվ հանկարծ ինձ թվաց, թե ետևիցս թեթև ու՝զգույշ քայլերի ձայն եմ լսում։ Ինչ-որ մեկը քայլում էր իմ հետքերով։

Ես ետ նայեցի և տեսա մի փոքրիկ, կորամեջք պառավ՝ ամբողջովին փաթաթված գորշ ցնցոտիներում։ Նրանց միջից պառավի միայն երեսն էր երևում, դեղին, կնճռոտ, սրաքիթ ու անատամ երեսը։

Ես մոտեցա նրան... նա կանգ առավ։

— Ո՞վ ես դու, ի՞նչ ես ուզում։ Մուրացկա՞ն ես։ Ողորմությա՞ն ես սպասում։

Պառավը չպատասխանեց։ Ես թեքվեցի դեպի նա և նկատեցի, որ նրա երկու աչքն էլ սքողված են կիսաթափանցիկ, սպիտակավուն թաղանթով կամ փառով, ինչպես մի քանի թռչունների մոտ է լինում. դրանով նրանք պաշտպանում են իրենց աչքերը չափազանց վառ լույսից։

Բայց պառավի աչքի այդ թաղանթը չէր շարժվում և բիբերն էլ չէին երևում... որից եզրակացրի, որ նա կույր է։

— Ողորմությո՞ւն ես ուզում,— կրկնեցի ես իմ հարցը,— ինչո՞ւ ես գալիս իմ ետևից։

Սակայն պառավը առաջվա պես չպատասխանեց, այլ միայն մի քիչ կուչ եկավ։

Ես երեսս շուռ տվի նրանից և գնացի իմ ճանապարհով։

Եվ ահա իմ ետևից դարձյալ լսում եմ նույն թեթև, նույն համաչափ, ասես գողունի, քայլերի ձայնը։

«Դարձյալ նույն կինը,— անցավ մտքովս,— ի՞նչ է կպել նա ինձ,— բայց իսկույն մտքումս ավելացրի,— երևի կուրության պատճառով ճանապարհը կորցրել է, այժմ քայլերիս ձայնին ականջ դրած՝ գալիս է իմ ետևից, որ ինձ հետ միասին մի մարդաբնակ տեղ դուրս գա։ Այո՛, այո՛, այդպես է, որ կա»։

Բայց տարօրինակ անհանգստությունը հետզհետե տիրեց իմ մտքին։ Ինձ թվաց, որ պառավը ոչ միայն ինձ հետևում է, այլ ուղղություն է տալիս ինձ, որ նա ինձ հրում է մերթ աջ, մերթ ձախ, և որ ես ակամա հնազանդվում եմ նրան։

Այնուամենայնիվ, ես շարունակում եմ քայլել... Բայց ահա իմ առաջ, հենց ճանապարհի վրա մի բան սևին է տալիս և լայնանում... ինչ-որ փոս... «Գերեզմա՞ն,— անցավ մտքովս,— ահա ո՛ւր է հրում նա ինձ»։

Ես իսկույն շուռ եմ գալիս։ Պառավն էլի կանգնած է իմ առաջ... բայց նա տեսնում է։ Նա նայում է վրաս մեծ-մեծ,

կատաղի, չարագուշակ աչքերով... գիշատիչ թռչունի աչքերով։ Ես մոտենում եմ նրա դեմքին, նրա աչքերին... դարձյալ նույն մթագնած թաղանթը, նույն կույր ու բութ դեմքը։

«Ա՜խ,— մտածում եմ ես,— այս պառավն իմ ճակատագիրն է, այն ճակատագիրը, որից մարդ չի ազատվի»։

«Չի ազատվի, չի ազատվի։ Ի՜նչ խելագարություն... պետք է փորձել»։ Եվ ես նետվում եմ մի կողմ, ուրիշ ուղղությամբ։

Ես գնում եմ շտապ... բայց թեթև քայլերը, առաջվա նման շրշում են ետևս, մոտիկ, մոտիկ... Եվ առաջս էլի սեվին է տալիս փոսը։

Ես դարձյալ ճանապարհս ծռում եմ մի այլ կողմ... Եվ էլի շրշյունն իմ ետևից, և նույն ահեղ բիծն իմ առաջ։

Եվ ուր էլ որ նետվում եմ, հալածված նապաստակի պես՝ դարձյալ նույնն է, նույնը։

«Սպասիր,— մտածում եմ ես,— արի խաբեմ նրան, ոչ մի կողմ չգնամ»,— և ես մի ակնթարթում նստում եմ գետնին։

Պառավը կանգնած է իմ ետևը, երկու քայլ հեռու։ Էլ ձայն չի գալիս, բայց զգում եմ, որ նա այստեղ է։

Եվ հանկարծ տեսնում եմ այն բիծը, որ հեռվից սևին էր տալիս, ինքն է լողում, սողում դեպի ինձ։

Աստվա՜ծ իմ։ Ես ետ եմ դառնում։ Պառավը ուղիղ նայում է ինձ, և անատամ բերանը ծամածռված է հեգնանքով...

— Չե՜ս ազատվի։

Փետրվար, 1878

ՇՈՒՆԸ

Սենյակում երկուսս ենք — իմ շունը և ես... Դուրսը ոռնում է սոսկալի, կատաղի փոթորիկը։

Շունը նստած է իմ առաջ և ուղիղ աչքերիս է նայում։ Ես նույնպես նրա աչքերին եմ նայում։

Նա ինձ կարծես մի բան է ուզում ասել։ Նա համր է, անխոս, նա ինքն իրեն չի հասկանում, բայց ես հասկանում եմ նրան։

Ես հասկանում եմ, որ այս վայրկյանին թե նրա և թե իմ մեջ ապրում է նույն զգացումը, որ մեր միջև ոչ մի տարբերություն չկա։ Մենք համանման ենք։ Ամեն մեկիս մեջ վառվում ու փայլում է միևնույն դողդոջուն կրակը։

Վրա կհասնի մահը, թափ կտա նրա վրա յուր սառն ու լայն թևը... Եվ վե՜րջ։

Ո՞վ կիմանա հետո, թե մեզանից որի մեջ ի՞նչ տեսակ կրակ էր վառվում։

Ո՜չ, սա մարդը և կենդանին չեն հայացքներ փոխանակում... Սրանք միմյանց հառած երկու զույգ միանման աչքեր են։

Եվ այդ զույգերից ամեն մեկում, թե կենդանու և թե մարդու, միևնույն կյանքն է, որ այդպես վախվխելով հպվում է մյուսին։

Փետրվար, 1878

ԱԽՈՅԱՆԸ

Ես մի ընկեր-ախոյան ունեի. ոչ աշխատանքի, ոչ պաշտոնի կամ սիրո մեջ, բայց մեր հայացքները երբեք չէին համընկնում, և ամեն անգամ, երբ մենք հանդիպում էինք, մեր միջև անվերջանալի վեճեր էին ծագում։

Մենք վիճում էինք ամեն բանի մասին, գեղարվեստի, կրոնի, գիտության, երկրային ու հանդերձյալ, մանավանդ հանդերձյալ կյանքի մասին։

Նա հավատացյալ և խանդավառ մարդ էր։ Մի անգամ նա ինձ ասաց.

— Դու ամեն բանի վրա ծիծաղում ես, բայց եթե ես քեզանից առաջ մեռնեմ, կգամ, կհայտնվեմ քեզ այն աշխարհից... Տեսնենք դու այն ժամանա՞կ էլ կծիծաղես։

Եվ իրավ, նա ինձանից առաջ մեռավ, մեռավ երիտասարդ հասակում, սակայն անցան տարիներ, և ես մոռացա նրա խոստումը, նրա սպառնալիքը։

Մի անգամ, գիշերը, անկողնումս պառկած, չէի կարողանում, ասենք, չէի էլ ուզում քնել։

Սենյակում մի տեսակ ոչ մութ էր, ոչ լույս։ Ես անթարթ նայում էի դեպի գորշ կիսախավարը։

Եվ հանկարծ ինձ թվաց, թե երկու լուսամուտների մեջտեղում կանգնած է իմ ախոյանը և լուռ ու տխուր վեր ու վար է շարժում գլուխը։

Ես չվախեցա, նույնիսկ չզարմացա... սակայն, տեղիս մի քիչ վեր բարձրանալով և արմունկիս հենվելով, սկսեցի սևեռուն նայել անակնկալ հայտնված կերպարանքին...

Նա շարունակում էր գլուխն օրորել։

— Հը, ի՞նչ է,— վերջապես ձայն հանեցի ես,— դու ցնծո՞ւմ ես, թե՞ ցավակցում։ Ի՞նչ է այդ. նախազգուշացո՞ւմ, թե՞ նախատինք... թե՞ ուզում ես հասկացնել ինձ, որ անիրավացի էիր, կամ երկուսս էլ անիրավացի էինք։ Ի՞նչ ես զգում դու։ Դժոխային տանջա՞նք, թե՞ դրախտային երջանկություն։ Ասա գո՛նե մի խոսք։

Բայց իմ ախոյանը ոչ մի ձայն չհանեց, և միայն առաջվա պես տխուր ու հնազանդ վեր ու վար էր շարժում գլուխը։

Ես ծիծաղեցի... նա չքացավ։

Փետրվար, 1878

ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Ես անցնում էի փողոցով... Ինձ կանգնեցրեց մուրացիկ, զառամյալ մի ծերուկ։

Արտասվալից, բորբոքված աչքեր, կապտած շրթունքներ, գզգզված լաթեր, անմաքուր վերքեր... Օ՜, ինչ այլանդակ կերպով էր կլանել այդ դժբախտ արարածին աղքատությունը։

Նա պարզեց ինձ յուր կարմրած, ուռած, կեղտոտ ձեռքը...

Նա հառաչում էր, նա խեղդված ձայնով օգնություն էր աղերսում։

Ես սկսեցի պրպտել բոլոր գրպաններս... Ոչ քսակ, ոչ ժամացույց, ոչ նույնիսկ թաշկինակ... ես հետս ոչինչ չէի վերցրել...

Իսկ մուրացկանն սպասում էր... Եվ նրա կարկառած ձեռքը թույլ դողում էր ու ցնցվում։

Ինձ կորցրած, շփոթված, ես ամուր սեղմեցի այդ կեղտոտ, դողդոջուն ձեռքը... «Ներողամի՛տ եղիր, եղբա՛յր, ես ոչինչ չունեմ»։

Մուրացկանն իր բորբոքված աչքերը հառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տվին, և նա էլ իր հերթին պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Ի՞նչ արած, եղբայր,— ծամծմեց նա,— դրա համար էլ շնորհակալ եմ։ Այդ էլ ողորմություն է, եղբայր»։

Ես հասկացա, որ ինքս էլ ողորմություն ստացա իմ եղբորից։

Փետրվար, 1878

«ԴՈՒ ԿԼՍԵՍ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՀԻՄԱՐԻ...»

Պուշկին

Դու միշտ ճշմարտությունն էիր ասում, ո՛վ մեր մեծ երգիչ, նույնն ասացիր և այս անգամ։

«Դատաստանը հիմարի և ծաղրանքն ամբոխի»... Ո՞վ չի ճաշակել և՛ մեկը, և՛ մյուսը։

Այդ ամենը կարելի է և պետք է տանել, իսկ ով ուժ ունի, թող արհամարհի։

Բայց կան հարվածներ, որոնք ցավագնորեն ուղղակի հենց սրտին են դիպչում... Մարդն արել է այն ամենը, ինչ կարող էր անել, աշխատել է սրտեռանդ, սիրով, ազնվությամբ։ Եվ ազնիվ հոգիները զզվանքով երես են դարձնում նրանից. ազնիվ երեսները բարկությունից կրակ են կտրում՝ նրա անունը լսելիս։ «Հեռացի՛ր, կորի՛ր»,— գոռում են նրան ազնիվ, երիտասարդ ձայներ։— «Ոչ դու ես մեզ պետք, ոչ քո վաստակը, դու պղծում ես մեր օթևանը։ Դու մեզ չես ճանաչում և չես հասկանում... Դու մեր թշնամին ես»։

Ի՞նչ անի այն ժամանակ այդ մարդը։ Շարունակի աշ-

խատե՞լ, չփորձի՞ իրեն արդարացնել — մինչև անգամ չսպասի՞ ավելի արդարացի գնահատության։

Մի ժամանակ երկրագործներն անիծում էին այն ճանապարհորդին, որ գետնախնձոր էր բերել իրենց՝ հացի փոխարեն, աղքատի ամենօրյա սննդի փոխարեն... Նրանք դեպի իրենց պարզած ձեռքից դուրս էին գցում այդ թանկագին պարգևը, ցեխն էին գցում և ոտներով տրորում։

Այժմ նրանք կերակրվում են այդ պարգևով — և նույնիսկ չեն իմանում իրենց բարերարի անունը։

Էհ, ի՞նչ արած։ Նրանց ինչին է պետք նրա անունը։ Նա առանց անունի էլ իրենց փրկում է սովից։

Աշխատենք միայն, որ մեր տվածն էլ հիրավի օգտակար կերակուր լինի։

Դառն է անիրավացի նախատինքն այն մարդկանց շրթունքներում, որոնց սիրում ես... Բայց կարելի է տանել և այդ...

«Խփի՛ր ինձ, միայն թե լսի՛ր»,— ասում էր աթենացիների առաջնորդը սպարտացիների առաջնորդին։

«Խփի՛ր ինձ, միայն առողջ ու կուշտ եղիր»,— պետք է ասենք մենք։

Փետրվար, 1878

ԳՈՀ ՄԱՐԴԸ

Մայրաքաղաքի փողոցով թռչկոտելով սլանում է մի մարդ՝ դեռևս երիտասարդ։ Նրա շարժումներն ուրախ են, աշխույժ. աչքերը շողշողում են, շրթունքներին խաղում է ժպիտը, դուրեկան կարմրին է տալիս ինքնագոհ դեմքը... Նա ամբողջովին բավականություն է և ուրախություն։

Ի՞նչ է պատահել նրան։ Արդյոք ժառանգությո՞ւն է ստացել։ Աստիճա՞ն են բարձրացրել։ Արդյոք նա շտապում է սիրային տեսակցությա՞ն։ Թե՞ պարզապես լավ նախաճաշել է և լիառատ ուժի, առողջության զգացումն է, որ այդպես խաղում է նրա մարմնի բոլոր մասերում։ Կամ չլինի՞

թե նրա վզից կախել են քո գեղեցիկ ութանկյունի խաչը, ո՞վ լեհական Ստանիսլավ արքա։

Ո՛չ։ Նա մի զրպարտություն է հնարել իր ծանոթի մասին. եռանդագին այն տարածել է, լսել է նույն այդ զրպարտությունը մի ուրիշ ծանոթից և ինքն էլ հավատացել դրան։

Օ՜, որքան գոհ և մինչև անգամ որքան բարի է այս բոպեին այդ պատվական, շատ բան խոստացող երիտասարդը։

Փետրվար, 1878

ԿԵՆՑԱՂԻ ԿԱՆՈՆ

— Եթե դուք ուզում եք տհաճություն պատճառել և մինչև անգամ վնասել ձեր հակառակորդին,— ասում էր ինձ մի ծեր ստահակ,— ապա հանդիմանեցեք նրան հենց այն պակասության կամ արատի համար, որ դուք ձեր մեջն եք զգում։ Դժգոհեցե՛ք... Եվ հանդիմանեցե՛ք։

Նախ և առաջ դա ուրիշներին կստիպե կարծել, որ դուք այդ արատը չունիք։

Երկրորդ՝ ձեր դժգոհությունը կարող է մինչև անգամ անկեղծ լինել... Դուք կարող եք օգտվել սեփական խղճի խայթոցներից։

Եթե դուք, օրինակ, ռենեգատ եք. հանդիմանեցե՛ք ձեր հակառակորդին, որ նա համոզմունք չունի։

Եթե դուք ինքներդ հոգով լակեյ եք, հանդիմանելով ասացեք նրան, որ նա լակեյ է... լակեյ քաղաքակրթության, Եվրոպայի լակեյ, սոցիալիզմի լակեյ։

— Կարելի է մինչև անգամ ասել՝ լակեյ անլակեյության,— նկատեցի ես։

— Ա՛յդ էլ կարելի է,— վրա բերեց ստահակը։

Փետրվար, 1878

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ

Երազ

Ինձ թվում էր, թե գտնվում եմ Ռուսաստանի խուլ անկյուններից մեկում, մի հասարակ գյուղական տան մեջ։

Սենյակը մեծ է, ցածր առաստաղով, երեք լուսամուտով։ Պատերը ներկված են սպիտակ. կահ-կարասի չկա։ Տան առաջ մեծ հարթավայր է, որ, աստիճանաբար ցածրանալով, տարածվում է հեռուն. գորշ, միագույն երկինքը կախված է նրա վրա, որպես վարագույր։

Ես մենակ չեմ։ Ինձ հետ սենյակում մոտ տասը մարդ կա։ Նրանք բոլորն էլ հասարակ մարդիկ են, պարզ հագնված։ Նրանք քայլում են սենյակի երկայնությամբ ու լայնությամբ, լուռ, ասես գաղտագողի քայլերով։ Նրանք խույս են տալիս իրարից և, սակայն, անդադար, տագնապալից հայացքներ են փոխանակում։

Նրանցից ոչ մեկը չգիտի, թե ինչո՞ւ է ինքն ընկել այս տունը և ի՞նչ մարդիկ են նրան շրջապատողները։ Բոլոր դեմքերի վրա անհանգստություն ու վհատություն է նկատվում... Ամենքն էլ հերթով մոտենում են լուսամուտին և ուշի-ուշով նայում դուրս, կարծես դրսից մի բան են սպասում։

Հետո էլի սկսում են սենյակում շրջել աջ ու ձախ, ետ ու առաջ։ Մեր մեջ պտտվում է ոչ բարձրահասակ մի տղա։ Ժամանակ առ ժամանակ նա ճչում է բարակ ու միահնչուն ձայնով. «Հայրի՛կ, վախենո՛ւմ եմ»։— Այդ ճիչից սիրտս տակնուվրա է լինում, և ես էլ եմ սկսում վախենալ... Ինչի՞ց. ինքս էլ չգիտեմ։ Միայն զգում եմ, որ գալիս ու մոտենում է մեծ, մի մեծ աղետ։

Իսկ երեխան ճչում է, հա ճչում։ Ա՜խ, ինչպես հեռանալ այստեղից։ Ի՜նչ հեղձուցիչ է, ի՜նչ հոգնեցուցիչ, ի՜նչ ծանր է... Սակայն հեռանալու հնար չկա։

Այդ երկինքն է՝ ինչպես պատանք։ Քամի էլ չկա... Օդը մահացե՞լ է, ինչ է...

Հանկարծ երեխան ցատկեց դեպի լուսամուտը և գոռաց նույն աղեկտուր ձայնով.

— Նայեցե՛ք, նայեցե՛ք, երկիրը խորտակվեց...

— Ինչպե՞ս, խորտակվե՞ց։— Իսկապես. սկզբում տան առաջ հարթավայր էր, իսկ այժմ այն կանգնած է զարհուրելի լեռան գագաթին, հորիզոնն ընկել, ներքև է գնացել, իսկ տան հենց մոտից, համարյա ուղղահայաց, ցած է իջնում կարծես փորփրած մի սև գահավանդ։

Մենք բոլորս խռնվում ենք լուսամուտի առաջ... Սարսափը սառեցնում է մեր սրտերը։

— Ահա՛ նա, ահա՛ նա,— շշնջում է հարևանս։

Եվ ահա երկրի հեռավոր եզերքի ամբողջ երկայնքով շարժվեց ինչ-որ բան։ Սկսեցին բարձրանալ ու ընկնել ինչ-որ փոքր, կլորավուն թմբիկներ։

«Դա ծովն է,— նույն ակնթարթում անցնում է բոլորիս մտքով,— նա այժմ մեզ բոլորիս տակով կանի... Միայն ինչպես կարող է նա մեծանալ ու վեր բարձրանալ... Այս գահավանդի վրա»։

Եվ սակայն նա մեծանում է, վիթխարի կերպով մեծանում... Այդ արդեն հեռվում գլորվող հատ ու կենտ թմբիկներ չեն... Մի համատարած հրեշային ալիք գրկում է հորիզոնի ամբողջ շրջագիծը։

Նա թռչում, թռչում է դեպի մեզ։ Բուք ու բորանի պես է սլանում նա. գալարվում է, որպես դժոխային խավար։ Ամեն ինչ դողդողում է շուրջը, իսկ այնտեղ, այն կատաղասլաց, հսկա զանգվածի մեջ և՛ ճայթյուն է, և՛ որոտ, և՛ հազարաբերան երկաթե հաչոց...

Ա՜հ, ինչ մռնչյուն ու ոռնոց։ Այդ երկիրն է ոռնում երկյուղից...

Վե՛րջ երկրին, վե՛րջ ամեն ինչին։

Երեխան մի անգամ էլ ճչաց... Ես ուզեցի բռնել ընկերոջիցս, բայց մենք բոլորս էլ արդեն տապալված էինք, տակովն արված, խեղդված. մեզ սրբել-տարել էր այն թանաքի պես սև, սառցալի, որոտագոչ ալիքը։

Խավար է... Հավիտենական խավար։

Հազիվ շունչ քաշելով, ես արթնացա։

Մարտ, 1878

ՄԱՇԱ

Շատ տարիներ առաջ, Պետերբուրգում ապրածս ժամանակ, ամեն անգամ, երբ պատահում էր, որ կառք էի վարձում, զրույցի էի բռնվում կառապանի հետ։

Սիրում էի զրույց անել մանավանդ գիշերաշրջիկ կառապանների հետ, մերձքաղաքային գյուղերից եկած աղքատ գյուղացիների հետ, որոնք մայրաքաղաք էին գալիս մի-մի դեղնագույն, հասարակ սահնակով ու քոսոտ ձիով, հույս ունենալով, որ իրենց կկերակրեն և իրենց տերերին տալիք հողատուրքը կվաստակեն։

Եվ ահա մի անգամ ես այդպիսի մի կառապան վարձեցի... Նա մոտ քսան տարեկան, բարձրահասակ, վայելչակազմ ու քաջառողջ երիտասարդ էր. աչքերը կապույտ էին, այտերը կարմիր, շեկ մազերը օղակ-օղակ գանգուրներով կարկատած գլխարկի տակից դուրս էին թափվում մինչև հոնքերը։ Եվ ինչպե՞ս էին նրա հսկայի ուսերը մտել այդ պատառոտված արմյակի մեջ։

Սակայն կառապանի գեղեցիկ, անմորուս դեմքը տխուր ու մռայլ էր երևում։

Սկսեցի հետը խոսել։ Ձայնի մեջ էլ տխրություն կար։

— Ի՞նչ է, եղբայր,— հարցրի ես նրան,— ինչո՞ւ ես տխուր, չլինի՞ մի դարդ ունես։

Երիտասարդը ոչ իսկույն, պատասխանեց ինձ։

— Ունիմ, տեր իմ, ունիմ — վերջապես մրմնջաց նա,— էն էլ էնպիսին, որից մեծը չկա։ Կնիկս մեռավ։

— Սիրո՞ւմ էիր դու նրան... քո կնկանը...

Երիտասարդը ետ չնայեց ինձ, միայն գլուխը մի քիչ կախեց։

— Սիրում էի, տեր։ Ութերորդ ամիսն է անցել... Բայց մտքիցս չի գնում։ Սիրտս կտոր-կտոր է լինում... Եվ էլի... ախր նրա ինչ մեռնելու ժամանակն էր։ Ջահել էր, առողջ։ Մի օրվա մեջ խոլերան բանը պրծացրեց։

— Եվ բարի՞ կին էր նա։

— Ա՜խ, տե՛ր,— ծանր հառաչեց խեղճը,— էն էլ ինչպես հա՜շտ էինք ապրում։ Ես տանը չէի, երբ նա մեռավ։ Այստեղ, երբ իմացա, որ նրան, ուրեմն, արդեն թաղել են, իսկույն գյուղ, տուն մեկնեցի։ Կեսգիշեր էր արդեն, որ գյուղ հասա։ Մտա մեր խրճիթը, կանգնեցի տան մեջտեղը և սկսեցի կամաց-կամաց ձեն տալ. «Մաշա՛, ա՛յ Մաշա՛»։ Միայն ծղրիդն էր ճռճռում։ Լացս բռնեց, նստեցի գետնին, ձեռքս՝ շրխկ, գետնին տվի. «Անկուշտ փոր,— ասացի,— լափեցիր նրան... Ինձ էլ լափիր, է՛լի։ Ա՜խ, Մա՛շա»։

— Մաշա,— ավելացրեց նա հանկարծ խլացած ձայնով։ Եվ պարանե երասանները ձեռքից բաց չթողնելով, թաթպանով սրբեց աչքից արտասուքը, թափ տվեց, գցեց մի կողմ, շարժեց ուսերը և այլևս ոչ մի բառ չարտասանեց։

Սահնակից իջնելիս ես նրան տասնհինգ կոպեկ ավելի տվի։ Երկու ձեռքով գլխարկից բռնած, նա ինձ խոնարհ-խոնարհ գլուխ տվեց և ապա քշեց իր ձին ձյունե սփռոցով ծածկված ամայի փողոցով, որ լցված էր հունվարյան սառնամանիքի գորշ մշուշով։

Ապրիլ, 1878

ՀԻՄԱՐԸ

Լինում է, չի լինում, մի հիմար է լինում։

Երկար ժամանակ նա ապրում է անհոգ և ուրախ։ Բայց կամաց-կամաց նրան լուրեր են հասնում, որ իրեն ամեն տեղ անմիտ ու գռեհիկ մարդու տեղ են դնում։

Հիմարը շփոթվում է և սկսում տխուր մտածել, թե ի՞նչպես անի, որ այդ անախորժ լուրերին վերջ տա։

Մի անակնկալ միտք վերջապես լուսավորում է նրա մթին ու պստիկ ուղեղը... Եվ նա՝ առանց դանդաղելու, միտքը եկածը կատարում է։

Մի ծանոթ է պատահում նրան փողոցում և սկսում գովել մի հայտնի նկարչի...

— Ներեցե՛ք,— բացականչում է հիմարը,— այդ նկարիչը վաղուց արխիվ է նետված... Դուք այդ չգիտե՞ք։ Ես այդ չէի սպասում ձեզանից... Դուք հետամնաց մարդ եք։

Ծանոթը վախենում է և իսկույն համաձայնում հիմարի հետ։

— Ի՞նչ հիանալի գիրք կարդացի ես այսօր,— ասում է նրան մի ուրիշ ծանոթ։

— Ներեցե՛ք,— բացականչում է հիմարը,— ի՞նչպես չեք ամաչում։ Այդ գիրքը գրող չարժե։ Վաղուց այդ ոչ ոք ձեռքը չի առնում։ Դուք այդ չգիտե՞ք... Դուք հետամնաց մարդ եք։

Այս ծանոթն էլ է վախենում և համաձայնում հիմարի հետ։

— Ինչ հրաշալի մարդ է իմ բարեկամ Ն. Ն.-ը,— ասում է հիմարին երրորդ ծանոթը,— ա՜յ, իսկ և իսկ ազնիվ մարդ։

— Ներեցե՛ք,— բացականչում է հիմարը,— Ն. Ն.-ը հայտնի սրիկա է։ Բոլոր ազգականներին կողոպտեց։ Ո՞վ ասես այդ չի իմանում... Դուք հետամնաց մարդ եք։

Երրորդ ծանոթը նույնպես վախենում է և համաձայնում հիմարի հետ, երես դարձնում յուր բարեկամից։ Եվ ում էլ, ինչ էլ որ գովում են հիմարի առաջ, նա միշտ միևնույն առարկությունն է անում։

Երբեմն էլ ավելացնում է նախատելով.

— Իսկ դուք դեռ հավատո՞ւմ եք հեղինակություններին։

— Չար է, մաղձոտ,— սկսում են կարծիքներ հայտնել հիմարի մասին նրա ծանոթները։— Բայց ի՞նչ գլուխ ունի։

— Եվ ի՞նչ լեզու,— ավելացնում են մյուսները։— Օ՜, այո՛, նա տաղանդ է։

Վերջանում է նրանով, որ մի տարածված հանդեսի հրատարակիչ առաջարկում է հիմարին վարելու հանդեսի քննադատական բաժինը։

Եվ հիմարն սկսում է ամենքին ու ամեն բան քննադատել՝ առանց փոխելու ո՛չ իր խոսելու ձևը, ոչ իր բացականչությունները։

Այժմ նա, որ մի ժամանակ գոռում էր հեղինակությունների դեմ, ինքն է հեղինակություն, իսկ պատանիները երկրպագում են նրան և նրանից վախենում։

Եվ ի՞նչ անեն խեղճ պատանիները։ Թեպետ վայել չէ, առհասարակ, երկրպագել մեկին... բայց դե արի ու մի երկրպագիր — հետամնացների կարգը կընկնես։

Վախկոտների մեջ կյանքը հիմարինն է։

Ապրիլ, 1878

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԳԵՆԴ

Բաղդադում ո՞վ չի ճանաչում մեծ Ջաֆարին, տիեզերքի արեգակին։

Մի անգամ, շատ տարիներ առաջ,— նա դեռ պատանի էր,— Ջաֆարն զբոսնում էր Բաղդադի շրջակայքում։

Հանկարծ նրա ականջին մի խոպոտ ճիչ հասավ. ինչ-որ մեկը հուսահատորեն օգնություն էր կանչում։

Ջաֆարն իր հասակակիցների մեջ աչքի էր ընկնում խոհականությամբ ու կշռադատ խելքով. նա գթասիրտ էր և իր ուժերին վստահ։

Նա վազեց կանչի ուղղությամբ և տեսավ մի խեղճ, զառամյալ ծերունի, որին երկու ավազակ պինդ սեղմել էին քաղաքի պարսպին ու կողոպտում էին։

Ջաֆարը մերկացրեց սուրը և հարձակվեց ավազակների վրա, մեկին սպանեց, մյուսին փախուստի մատնեց։

Ազատված ծերունին ընկավ իր փրկարարի ոտքերը և, նրա հանդերձի քղանցքները համբուրելով, բացականչեց.

— Ո՞վ քաջ պատանի, քո մեծահոգությունն առանց հատուցման չի մնա։ Տեսքով ես մի թշվառ մուրացկան եմ, բայց միայն արտաքուստ։ Ես հասարակ մարդ չեմ։ Վաղը, առավոտյան կանուխ, արի գլխավոր շուկան, ես քեզ կսպասեմ շատրվանի մոտ և դու կհամոզվես, որ իմ ասածը ճշմարիտ է։

Ջաֆարը մտածեց. «Այս մարդը տեսքով իրավ մուրացկան է, սակայն ամեն բան պատահում է։ Ինչո՞ւ չփորձեմ»,— և պատասխանեց.

— Լավ, հայրիկ, կգամ։

Ծերունը նայեց նրա աչքերին ու հեռացավ։

Մյուս առավոտ, հենց որ լույսը բացվեց, Ջաֆարը գնաց շուկա։ Հենված շատրվանի մարմարյա ավազանին՝ ծերունին արդեն սպասում էր նրան։

Նա լուռ բռնեց Ջաֆարի ձեռքը և տարավ նրան մի փոքրիկ այգի, որ չորս կողմից շրջապատված էր բարձր պարիսպներով։

Այդ այգու ճիշտ մեջտեղում, կանաչ բացատում բուսել էր մի արտասովոր ծառ։

Նա նոճու նման էր, միայն տերևները երկնագույն էին։

Երեք պտուղ, երեք խնձոր, կախվել էին բարակ, դեպի վեր ոլորած ճյուղերից. մեկը՝ միջակ մեծության, երկարավուն, կաթնասպիտակ, մյուսը՝ մեծ, կլոր, վառ կարմիր, երրորդը՝ փոքրիկ, թորշոմած, դեղնավուն։

Ամբողջ ծառը թույլ շրշում էր, թեև քամի չկար։

Ծառը զնգում էր մեղմ ու տխուր, ասես ապակուց լիներ, կարծես զգում էր Ջաֆարի մոտենալը։

— Պատանի՛,— ասաց նրան ծերուկը,— պոկի՛ր այս պտուղներից որն ուզում ես, և իմացիր, որ եթե պոկես և ուտես սպիտակը, բոլոր մարդկանցից ամենախելոքը կլինես, եթե պոկես և ուտես կարմիրը, կլինես հարուստ՝ ինչպես հրեա Ռոտշիլդը։ Եթե պոկես և ուտես դեղինը — դուր կգաս պառավ կանանց։ Վճռիր... Եվ մի՛ հապաղիր։ Մի ժամ հետո և՛ պտուղները կթորշոմեն, և՛ ինքը ծառը կանցնի երկրի խուլ խորքը։

Ջաֆարը կախեց գլուխը և մտածեց։

— Ի՞նչ անել,— արտասանեց նա կիսաձայն, կարծես ինքն իր հետ խորհրդակցելով։— Ձափից դուրս խելոք դառնաս, էլ ապրել չես ուզի, դառնաս մարդկանցից ամենահարուստը՝ ամենքը քեզ կնախանձեն. լավն այն է, որ ես պոկեմ և ուտեմ երրորդը, թորշոմած խնձորը։

Նա այդպես էլ վարվեց, իսկ ծերուկը ծիծաղեց անատամ ծիծաղով և ասաց.

— Ո՞վ ամենաիմաստուն պատանի, դու բարի վիճակ հանեցիր։ Ինչի՞դ է հարկավոր սպիտակ խնձորը։ Դու առանց այն էլ Սողոմոնից խելոք ես։ Կարմիր խնձորը նույնպես քեզ պետք չէ... դու առանց այն էլ հարուստ կլինես։ Միայն քո հարստությանը ոչ ոք չի նախանձի։

— Հայտնիր ինձ, ծերունի,— ուշքի գալով ասաց Ջաֆարը,— որտե՞ղ է ապրում մեր տիրապահ խալիֆի պատկառելի մայրը։

Ծերուկը մինչև գետին խոնարհվեց և պատանուն ցույց տվեց ճամփան։

Բաղդադում ո՞վ չի ճանաչում տիեզերքի արեգակին. մեծ և հռչակավոր Ջաֆարին։

Ապրիլ, 1878

ԵՐԿՈՒ ՔԱՌՅԱԿ

Մի ժամանակ կար մի քաղաք, որի բնակիչներն այնքան սաստիկ էին սիրում պոեզիան, որ եթե մի քանի շաբաթ էր անցնում և լույս չէին տեսնում նորանոր գեղեցիկ բանաստեղծություններ, նրանք բանաստեղծական այդպիսի անպտղաբերությունը հասարակական աղետ էին համարում։

Նրանք այն ժամանակ հագնում էին իրենց ամենահին հագուստները, գլխներին մոխիր էին ցանում և, խմբվելով հրապարակներում, արցունք էին թափում, դառն տրտնջում իրենց լքող մուսայից։

Այդպիսի չարաբաստիկ մի օր երիտասարդ բանաստեղծ Հունիոսը հայտնվեց հրապարակում, ուր խռնված էր սգացող ժողովուրդը։

Նա արագ քայլերով բարձրացավ հատկապես պատրաստված ամբիոնը և նշան արեց, որ ցանկանում է բանաստեղծություն արտասանել։

Լիկտորներն իսկույն գավազանները շարժեցին.

— Լռությո՛ւն, ուշադրությո՛ւն,— բարձրաձայն գոռացին նրանք, և ամբոխը լռեց, սպասելով։

— Բարեկամնե՛ր, ընկերնե՛ր,— սկսեց Հունիոսը բարձր, բայց ոչ այնքան հաստատուն ձայնով։

Բարեկամներ, ընկերներ, որ սիրում եք երգ ու տաղ,
Երկրպագու ամենին, ինչ գեղեցիկ է և դաշն.
Թող երբեք չխռովե ձեզ վայրկյանը մութ վշտի,
Կգա ժամը բաղձալի... լույսը մութը կվանի։

Հունիոսը լռեց... Եվ ի պատասխան նրան, հրապարակի ամեն կողմերից բարձրացավ գոռում-գոչյուն, սուլոց, քրքիջ։

Դեպի նա ուղղված բոլոր դեմքերը վառվում էին բարկությունից, բոլոր աչքերը շողում էին չարությամբ, բոլոր ձեռները վեր բարձրանում, սպառնում, բռունցքներ էին ցույց տալիս։

— Ինչո՞վ ուզեց զարմացնել,— մռնչում էին կատաղի ձայներ,— Թո՛ղ կորչի ամբիոնից անշնորհք հանգաստեղծը, հեռացրե՛ք հիմարին։ Հոտած խնձորներ, լակ ձու թափեցեք այդ խեղկատակի գլխին։ Քարեր, քարեր տեղացեք վրան։

Հունիոսն ամբիոնից թավալգլոր ընկավ... Բայց նա դեռ

տուն չէր հասել, երբ ականջին դիպան խանդավառ ծափահարությունների, գովասանական աղաղակների ու բացականչությունների որոտներ։

Տարակուսանքի մեջ ընկած, և սակայն աշխատելով անկատ մնալ (վասնզի վտանգավոր է ամեհի գազանին կատաղեցնելը), Հունիոսը վերադարձավ հրապարակ։

Եվ ի՞նչ տեսավ։

Ամբոխի գլխավերևը, նրա ուսերին, ոսկյա հարթ վահանի վրա, ծիրանի քղամիդը հագին, դափնյա պսակը գանգրահեր գլխին՝ կանգնած էր Հունիոսի ախոյան, երիտասարդ բանաստեղծ Հուլիոսը... Իսկ ժողովուրդը չորս կողմից գոռում էր.

— Փա՜ռք, փա՜ռք, փա՜ռք անմահ Հուլիոսին։ Նա սփոփեց մեզ վշտի, մեր մեծ վշտի պահին։ Նա մեզ մի երգ պարգևեց, որ քաղցր է մեղրից, հնչուն է բամբիռից, բուրավետ է վարդից, մաքուր է երկնային կապույտից։ Տարեք նրան փառավոր հանդեսով. նրա ներշնչված գլուխը հանձնեցեք խնկաբույրի մեղմ ալիքներին, զովացրեք նրա ճակատը դափնյա ոստերի հանդարտ հովհարումով, շռայլեցեք նրա ոտների տակ արաբական զմուռսի բոլոր անուշահոտությունները։ Փա՜ռք նրան։

Հունիոսը մոտեցավ փառաբանողներից մեկին։

— Ասա՛ ինձ, ո՞վ համաքաղաքացի, ի՞նչ բանաստեղծությամբ երջանկացրեց ձեզ Հուլիոսը։ Ավա՜ղ, ես հրապարակում չէի, երբ նա արտասանեց բանաստեղծությունը։

— Այդպիսի բանաստեղծություն՝ և միտը չպահե՞լ,— եռանդուն ձայնով պատասխանեց համաքաղաքացին,— ո՞ւմ տեղն ես գնում դու ինձ։ Լսի՛ր ու ցնծա, ցնծա՛ մեզ հետ միասին։

«Որ սիրում եք երգ ու տաղ»,— այսպես սկսեց աստվածային Հուլիոսը...

Որ սիրում եք երգ ու տաղ, բարեկամներ, ընկերներ.
Երկրպագու ամենին, ինչ դաշն է, մեղմ ու հնչուն,
Թող երբեք չխոովի ձեզ վայրկյանը մեծ ցավի,
Ժամը կգա բաղձալի... տիվը կվանե գիշերը։

— Հը, ի՞նչպես է։

— Ի՞նչ ես ասում,— գոչեց Հունիոսը,— այդ հո իմ բանաստեղծությունն է։ Հուլիոսը երևի ամբոխի մեջ է եղել, երբ ես արտասանեցի այն։ Նա լսել ու միևնույնը կրկնել է, հապիվ մի քանի արտահայտություններ փոփոխած, այն էլ, իհարկե, անհաջող կերպով։

— Ա՜, այժմ իմացա քո ով լինելը... Դու Հունիոսն ես,— առարկեց համաքաղաքացին, հոնքերը կիտելով։— Դու նախանձոտ ես կամ հիմար... Մի բան պատկերացրու, ա՜յ թշվառական, որքան վսեմություն կա Հուլիոսի ասածի մեջ. «Տիվը կվանե գիշերը». իսկ քոնն ինչ-որ անմիտ բան է. «Լույսը մութը կվանե»։ Ի՞նչ լույս, ի՞նչ մութ։

— Մի՞թե այդ միևնույնը չէ...— ուզեց սկսել Հունիոսը։

— Թե մի խոսք ես ավելացրել,— ընդհատեց նրան համաքաղաքացին,— իսկույն ձայն կտամ ժողովրդին... Եվ նա քեզ պատառ-պատառ կանի։

Հունիոսը խելամտորեն լռեց։ Իսկ մի ալեզարդ ծերունի, որ լսել էր նրա խոսակցությունը համաքաղաքացու հետ, մոտեցավ խեղճ բանաստեղծին և, ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

— Հունիոս, դու ասացիր քո սեփականը, բայց անժամանակ, իսկ նա ասաց ոչ իր սեփականը, բայց ժամանակին, հետևապես նա իրավացի է, իսկ քեզ մնում է քո խղճի մխիթարանքը։

Բայց մինչև որ խիղճը, ինչպես կարող էր և ընդունակ էր, իրավն ասած, բավականին վատ, մխիթարում էր մի կողմ քաշված Հունիոսին, հեռվում, ցնծության որոտալից աղաղակների և ամենահաղթ արեգակի ոսկեվառ փոշու միջով, մերթ կարմրին տալով ծիրանաշող քղամիդից, մերթ մթին տալով ստվերասփյուռ դափնիների տակ, առատաբույր խնկի ամպանման ալիքները ճեղքելով, կուրծքը խրոխտ դուրս գցած, մեծապանծ ու համրաքայլ առաջ էր ընթանում Հուլիոսը, որպես գահ բարձրացող արքա... Եվ արմավենու երկայն ոստերը հերթով խոնարհվում էին նրա առաջ, կարծես իրենց հանդարտ ու հնազանդ սոսափյունով արտահայտելիս լինեին նրան հետզհետե նորոգվող երկրպագության այն զգացմունքը, որ այդ ժամին լցվում էր նրանով կախարդված համաքաղաքացիների սրտերը։

Ապրիլ, 1878

ՃՆՃՂՈՒԿԸ

Ես վերադառնում էի որսից և անցնում էի այգու ծառուղով։ Իմ առջևից վազում էր շունը։

Հանկարծ նա դանդաղեցրեց իր քայլերը և սկսեց առաջ գնալ գաղտագողի, կարծես որսի հոտ էր առել։

Ես նայեցի ծառուղու երկարությամբ և տեսա մի ճընճղուկի ձագ, որի կտցի բոլորը դեղնավուն էր և գլուխը ծածկված աղվամազով։ Նա վայր էր ընկել բնից (քամին ուժեղ օրորում էր ծառուղու կեչիները) և նստած էր անշարժ, նորաբույս թևիկներն անօգնական փռած։

Իմ շունը դանդաղորեն մոտենում էր նրան, երբ հանկարծ, մոտիկ ծառից պոկվելով, մեծ, սևակուրծք ճնճղուկը, քարի պես ընկավ շան հենց դնչի առաջ և բոլորովին գըզգըզված, այլանդակված, հուսահատ և աղիողորմ ճիչ արձակելով, մի երկու անգամ թռիչք գործեց դեպի շան բաց ու սրատամ երախը։

Նա նեռվեց ազատելու, իրենով պատսպարելու իր ձագուկը...

Բայց նրա ամբողջ փոքրիկ մարմինը դողում էր սարսափից, նրա ձայնը բիրտացել, խզվել էր, նա շնչասպառված էր, նա իրեն զոհում էր։

Ի՞նչ ահագին հրեշ պիտի երևար նրան շունը և, այնուամենայնիվ, նա չկարողացավ նստած մնալ իր բարձր, անվտանգ ճյուղի վրա... Մի ուժ, նրա կամքից ավելի զորավոր մի ուժ, վայր նետեց նրան այնտեղից։

Տրեզորս կանգ առավ, ետ-ետ քաշվեց... Երևի նա էլ զգաց այդ ուժը։

Ես շտապեցի ետ կանչել շփոթված շանս և հեռացա ակնածությամբ։

Այո՛, մի ծիծաղեք։ Ես ակնածեցի այն փոքրիկ, հերոսական թռչունի առաջ, նրա սիրո պոռթկումի առաջ։

Սերը, մտածում էի ես, ավելի զորեղ է, քան մահն ու մահվան երկյուղը։ Միայն նրանով, միայն սիրով է պահվում ու շարժվում կյանքը։

Ապրիլ, 1878

ԳԱՆԳԵՐԸ

Շքեղ, ուժեղ լուսավորված դահլիճ, բազմաթիվ տղամարդիկ և կանայք։

Բոլոր դեմքերն ուրախ են, զրույցներն աշխույժ... Աղմըկալի խոսակցություն է սկսվել հայտնի մի երգչուհու մասին։ Նրան մեծարում են՝ անվանելով աստվածային, անմահ։ Օ՜, ինչ լավ արձակեց նա երեկ յուր վերջին դայլայլիկը։

Եվ հանկարծ, ասես կախարդական գավազանի զորությամբ, բոլոր գլուխների ու բոլոր դեմքերի բարակ մաշկը պոկվեց, թռավ, և մի ակնթարթում երևան եկավ գանգերի մեռելային սպիտակությունը, կապտավուն անազի գույն տվին մերկացած լնդերքն ու այտոսկրերը։

Սարսափած նայում էի ես, թե ինչպես երերում էին ու շարժվում այդ լնդերքն ու այտոսկրերը, ինչպես մոմերի ու լապտերների լույսի տակ շողշողալով, շուռումուռ էին գալիս այդ ցցված ոսկրե գնդերը — և ինչպես նրանց մեջ պտտվում էին ուրիշ, ավելի փոքրիկ գնդեր — անհամաստ աչքերի գնդերը։

Ես չէի համարձակվում ձեռքս երեսիս տանել, չէի համարձակվում ինձ նայել հայելու մեջ։

Իսկ գանգերը առաջվա պես պտտվում էին... Եվ արագաշարժ լեզուները, սուր-սուր ատամների ետևից, չթի փոքրիկ կտորների նման կարմրին տալով, առաջվա ճիչ ու աղմուկով թոթովում էին, թե ի՞նչ զարմանալի, ի՞նչ աննման կերպով այն անմահ... այո՛, անմահ երգչուհին արձակեց յուր վերջին դայլայլիկը։

Ապրիլ, 1878

ՍԵՎԱԳՈՐԾՆ ՈՒ ՓԱՓԿԱՍՈՒՆԸ

Զրույց

Սևագործ

Ի՞նչ ես մեջ խցկվում։ Ի՞նչ ես ուզում։ Դու մերը չես... Հեռացի՛ր։

Փափկասուն

Ես ձերն եմ, եղբայրներ։

Սևագործ

Ո՞նց չէ, մերն ես։ Ի՞նչ հնարեց։ Հենց ձեռներիս մտիկ արա, տեսնո՞ւմ ես ինչքան կեղտոտ են։ Համ աղբի, համ կպրի հոտ է գալիս նրանցից։ Իսկ քո ձեռները, տե՛ս, ինչպես սպիտակ են և ինչ հոտ է գալիս նրանցից։

Փափկասուն *(պարզելով ձեռները)*

Հոտ առ։

Սևագործ *(հոտ առնելով)*

Այս ի՞նչ հանելուկ է, ասես երկաթի հոտ է գալիս։

Փափկասուն

Այո, հենց երկաթի։ Ամբողջ վեց տարի շղթաներ եմ կրել։

Սևագործ

Իսկ ի՞նչի համար։

Փափկասուն

Նրա համար, որ ձեզ բարիք էի ցանկանում, ուզում էի ազատել ձեզ, խեղճ, խավար մարդկանցդ, ծառացա ձեզ ճնշողների դեմ, ըմբոստացա... Դե, և ինձ նստեցրին։

Սևագործ

Նստեցրի՞ն։ Քեզ ո՞վ էր ասում, որ հակառակվես։

Երկու տարի հետո

Նույն սևագործը *(մի ուրիշի)*

Լսիր, Պետրա՛... Հիշո՞ւմ ես նախանցյալ տարի մի փափկասուն էր քեզ հետ խոսում։

Մյուս սևագործը

Հա, միտս է... ի՞նչ կա։

Առաջին սևագործ

Լսի՛ր, նրան էսօր կախելու են, էդպես հրաման է արձակվել։

Երկրորդ սևագործ

Էլի ըմբոստացե՞լ է։

Առաջին սևագործ

Էլի ըմբոստացել է։

Երկրորդ սևագործ

Հա... ահա թե ինչ, եղբայր Միտրի, չի՞ կարելի, որ մի հնարքով ձեռք գցենք էն թոկը, որից նրան կախ են տալու։ ասում են տան համար դա շատ մեծ բախտավորություն է։

Առաջին սևագործ

Դու էդ ճիշտ ես ասում։ Պետք է փորձել, եղբայր Պետրա՛։

Ապրիլ, 1878

ՎԱՐԴԸ

Օգոստոսի վերջին օրերն էին... Աշունն արդեն վրա էր հասնում։

Արևը մայր էր մտնում։ Անակնկալ հորդ տեղատարափն, առանց որոտմունքի և առանց կայծակի, հենց նոր էր սլացել մեր լայնատարած հարթավայրի վրայով։

Տան առջևի այգին այրվում ու ծխում էր ամբողջովին, լցված վերջալույսի հրդեհով և անձրևի հեղեղով։

Նա նստած էր սեղանի առաջ, հյուրասենյակում, և համառ մտախոհությամբ կիսաբաց դռան միջից նայում էր դեպի այգին։

Ես գիտեի, թե ինչ է կատարվում այդ պահին նրա հոգում, ես գիտեի, որ կարճատև, բայց հոգետանջ կռվից հետո, հենց այդ վայրկյանին, նա անձնատուր է լինում մի զգացմունքի, որին այլևս հաղթել չի կարողանում։

Նա հանկարծ կանգնեց, շտապ դուրս եկավ այգի և անհետացավ։

Անցավ մի ժամ... անցավ երկրորդը, նա չվերադարձավ։

Այն ժամանակ ես վեր կացա և, տնից դուրս գալով, գնացի այն ծառուղով, որով, ես դրանում չէի տարակուսում, գնացել էր և նա։

Ամեն ինչ մթնել էր շուրջը։ Գիշերն արդեն վրա էր հասել, սակայն շավիղի խոնավ ավազի վրա, խավարի միջից անգամ վառ կարմրին տալով, երևում էր կլորավուն մի առարկա։

Ես կռացա... Դա մատաղ, դեռափթիթ մի վարդ էր։ Երկու ժամ առաջ ես այդ վարդը տեսել էի նրա կրծքին։

Ես քնքշությամբ վերցրի ցեխի մեջ ընկած այդ ծաղիկը և, վերադառնալով հյուրասենյակ, այն դրի սեղանի վրա, նրա բազկաթոռի առաջ։

Ահա և նա վերադարձավ վերջապես և, թեթևաքայլ անցնելով սենյակի միջով, նստեց սեղանի առաջ։

Նրա դեմքը և դալկացել և վերակենդանացել էր. նրա իսնարհած, կարծես փոքրացած աչքերն արագ-արագ և բերկրալից շփոթությամբ շարունակ այս ու այն կողմն էին դառնում։

Նա տեսավ վարդը, առավ այն, նայեց նրա տրորված, ցեխոտված թերթիկներին, նայեց ինձ, և նրա հանկարծ սևեռած աչքերում ցոլաց արցունքը։

— Ինչի՞ համար եք լալիս,— հարցրի ես։

— Ահա այս վարդի համար։ Տեսե՛ք, ինչ է դարձել նա։ Այստեղ ես մտածեցի խորիմաստ մի բան ասել։

— Ձեր արցունքը կլվանա այդ ցեխը,— ասացի ես նշանակալից արտահայտությամբ։

— Արցունքները չեն լվանում, արցունքներն այրում են,— պատասխանեց նա և, շրջվելով դեպի կրակարանը, նետեց ծաղիկը մարող բոցի մեջ։

— Կրակն արցունքներից ավելի լավ կայրի,— բացականչեց նա, մի քիչ սիրտ առած, և արցունքից դեռ փայլող չքնաղ աչքերը ծիծաղեցին հանդգնորեն ու երջանիկ։

Ես հասկացա, որ նա ևս այրված էր։

Ապրիլ, 1878

ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Մի ժամանակ մենք սերտ ու մտերիմ բարեկամներ էինք...

Բայց վրա հասավ չարաբաստիկ վայրկյանը, և մենք բաժանվեցինք՝ որպես թշնամիներ։

Անցան շատ տարիներ... Եվ ահա, գալով այն քաղաքը, ուր ապրում էր նա, իմացա, որ նա անհուսալի հիվանդ է և կամենում է տեսնվել ինձ հետ։

Ես գնացի նրա մոտ, նրա սենյակը... Մեր հայացքները հանդիպեցին։

Ես հազիվ ճանաչեցի նրան։ Աստվա՜ծ իմ, ինչ էր դարձրել նրան հիվանդությունը։

Դեղնած, հյուծված, բոլորովին ճաղատ գլխով, սպիտակ, նեղ մորուքով, նստած էր նա դիտմամբ պատռված մի շապիկով... Նա չէր կարողանում տանել ամենաթեթև հագուստի ճնշումը։ Նա հուզմունքից ինձ մեկնեց իր սարսափելի նիհար, ցամաքած ձեռքը, ճիգ անելով մի քանի անհասկանա-

լի բառ շշնջաց, ողջո՞ւյն էր արդյոք, թե՞ նախատինք. ո՞վ գիտե։ Փոթորկվեց նրա ուժասպառ կուրծքը, և մարող աչքերի կծկված բիբերի վրա արցունքի երկու նվազ, վշտատանջ կաթիլներ երևացին։

Սիրտս ճմլվեց... Ես նստեցի նրա կողքին, աթոռի վրա, և, ակամա խոնարհելով հայացքս այդ սարսափի և այլանդակության առաջ, նույնպես պարզեցի ձեռքս։

Բայց ինձ թվաց, թե ձեռքս բռնողը՝ նրա ձեռքը չէր։

Ինձ թվաց, թե մեր միջև նստած է բարձրահասակ, խաղաղադեմ, ճերմակ մի կին։ Երկայն ծածկոցը ոտից գլուխ պատել է նրան... ոչ մի տեղ չեն նայում նրա խորունկ, դըժգույն աչքերը, ոչինչ չեն ասում նրա գունատ, խիստ շրթունքները։

Այդ կինը միացրեց մեր ձեռները... նա ընդմիշտ հաշտեցրեց մեզ։

Այո՜... մահը հաշտեցրեց մեզ...

Ապրիլ, 1878

ՇԵՄՔԸ

Երազ

Ես տեսնում եմ վիթխարի մի շենք։

Առջևի պատի նեղ դուռը բացված է կրնկի վրա։ Դռան ետևում թանձր մառախուղ է։ Բարձր շեմքի առաջ կանգնած է մի աղջիկ... Մի ռուս աղջիկ։

Սառնամանիք է շնչում այդ անթափանց մառախուղը, և սառցային հոսանքի հետ, շենքի խորքից, մարվող մի խուլ ձայն է գալիս։

— Օ՜, դո՜ւ, որ կամենում ես անցնել այս շեմքը, գիտե՞ս, թե ինչ է սպասում քեզ այնտեղ։

— Գիտե՛մ,— պատասխանում է աղջիկը։

— Ցուրտ, քաղց, ատելություն, ծաղր, արհամարհանք, վիրավորանք, բանտ, հիվանդություն և ինքը՝ մահը։

— Գիտե՛մ։

— Լիակատար օտարացում, մենակություն։

— Գիտե՛մ... Ես պատրաստ եմ։ Ես կտանեմ բոլոր տանջանքները, բոլոր հարվածները։

— Ոչ միայն թշնամիներից, այլև հարազատների՞ց, բարեկամների՞ց։

— Այո... և նրանցից։

— Լավ, դու պատրա՞ստ ես զոհաբերության։

— Այո։

— Անիմաստ զոհաբերությա՞ն։ Դու կխորտակվես և ոչ ոք... ոչ ոք նույնիսկ չի իմանա, թե ում հիշատակը հարդի։

— Ինձ հարկավոր չէ ոչ երախտագիտություն, ոչ կարեկցություն, ինձ պետք չէ անուն։

— Դու պատրա՞ստ ես արդյոք ոճրագործության։

Աղջիկը խոնարհեց գլուխը։

— Եվ ոճրագործության եմ պատրաստ։

Ձայնը՝ ոչ իսկույն, վերսկսեց իր հարցումները։

— Արդյոք գիտե՞ս,— խոսեց նա վերջապես,— որ կարող ես հիասթափվել այն բանից, ինչին հավատում ես հիմա, կարող ես հասկանալ, որ խաբվել և իզուր խորտակել ես քո երիտասարդ կյանքը։

— Գիտեմ և այդ։ Բայց և այնպես ես կամենում եմ անցնել։

— Անցի՛ր։

Աղջիկը անցավ շեմքը, և ծանր վարագույրն իջավ նրա ետևից։

— Հիմա՞ր,— կրճտացրեց ատամներն ինչ-որ մեկը ետևից։

— Սո՛ւրբ,— ի պատասխան՝ լսվեց ինչ-որ տեղից։

Մայիս, 1878

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Ես նստած էի բաց լուսամուտի առաջ... առավոտյան, մայիսի մեկի վաղ առավոտյան։

Արշալույսը դեռ չէր ծագել, բայց արդեն գունատվում, արդեն ցրտում էր մութ, տաք գիշերը։

Մշուշը չէր բարձրանում, քամի չէր թափառում, ամեն ինչ միագույն և լուռ էր... Սակայն զգացվում էր զարթոնքի մո-

տիկությունը, և նոսրացած օդն ուներ ցողի խիստ խոնավության հոտ։

Հանկարծ բաց լուսամուտից թեթև զնգոցով ու շրշյունով իմ սենյակը ընկավ մի մեծ թռչուն։

Ես ցնցվեցի, սկսեցի դիտել... Դա թռչուն չէր, դա թեւավոր մի փոքրիկ կին էր, հագած նեղ, երկայն, ալեծածան եղրերով շրջազգեստ։

Նա ամբողջովին գորշ էր, սաղափի գույնի, միայն նրա թևիկների ներսի կողմը կարմրին էր տալիս նոր բացվող վարդի քնքուշ կարմրությամբ։ Հովտաշուշանե պսակը գրկել էր նրա փոքրիկ, կլոր գլխի ցիրուցան գանգուրները, և թիթեռնիկի բեղերի նման սիրամարգի երկու փետուր զվարճալի օրորվում էին նրա փոքրիկ, գեղեցիկ և ուռուցիկ ճակատի վրա։

Նա մի երկու անգամ սլացավ առաստաղի տակով։ Նրա խիստ փոքրիկ դեմքը ծիծաղում էր. ծիծաղում էին և խոշոր, սև-սև, լուսաշող աչքերը։

Քմահաճ սլացումների ուրախ կայտառությունը բեկբեկում էր նրանց ադամանդյա շողերը։

Նա ձեռքին բռնել էր տափաստանի ծաղկի մի երկայն շյուղ։ «Արքայական գավազան» են անվանում դրան ռուս մարդիկ և դա հենց գայիսոնի էլ նման է։

Սրընթաց թռչելով իմ վրայով, նա այդ ծաղկով թեթև դիպով գլխիս։

Ես նետվեցի դեպի նա... Բայց նա արդեն դուրս էր թռել լուսամուտից և սլանում էր...

Այգում, յասամանի թփերի հեռավոր խորքում, նրան ողջունեց տատրակիկն իր առաջին վույվույով, իսկ այն կողմ, ուր նա աներևույթացավ, հանդարտորեն շառագունում էր կաթնափայլ երկինքը։

Ես ճանաչեցի քեզ, ֆանտազիայի դիցուհի։ Դու ինձ այցելեցիր պատահմամբ. դու թռար երիտասարդ բանաստեղծների մոտ։

Օ՜, պոեզիա, երիտասարդությո՜ւն, կանացի, կուսական գեղեցկությո՜ւն... Դուք մի ակնթարթ միայն կարող եք ցոլալ իմ աչքին — վաղ գարնան վաղ առավոտին։

Մայիս, 1878

NECESSITAS, VIS, LIBERTAS[1]

Խորամանդակ

Բարձրահասակ, ոսկրոտ, երկաթե երեսով և անշարժ, բութ հայացքով մի պառավ գնում է մեծ-մեծ քայլերով և փայտի պես չոր ձեռքով առաջ է հրում մի ուրիշ կնոջ։

Այդ վիթխարահասակ, քաջազոր, հաստ ու գեր, Հերկուլեսի մկաններով, եզային վզի վրա փոքրիկ գլուխ ունեցող և կույր կինն իր հերթին հրում է մի փոքրիկ, նիհար աղջկա։

Միայն այս փոքրիկ աղջիկը ունի տեսնող աչքեր, նա դիմադրում է, ետ է դառնում, բարձրացնում է բարակ ու գեղեցիկ ձեռքերը. նրա աշխույժ երեսն արտահայտում է անհամբերություն և անվեհերություն... Նա չի ուզում լսել, նա չի ուզում գնալ այն կողմ, ուր հրում են նրան... Բայց և այնպես ստիպված է հնազանդվել ու գնալ։

Necessitas, vis, libertas

Ով ուզում է, թող թարգմանի։

Մայիս, 1878

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Մեծ քաղաքի մոտով, կառքի լայն ճանապարհով գնում էր մի ծեր և հիվանդ մարդ։

Նա գնում էր երերուն քայլերով, նրա նիհար ոտները խճճվելով, քարշ գալով, սայթաքելով, ընթանում էին ծանր ու թույլ, կարծես ուրիշինը լինեին։ Նրա հագուստը կախ էր ընկել ծվեն-ծվեն, բաց գլուխը հակվել էր կրծքին... Նա ուժասպառ էր։

Նա նստեց ճանապարհի եզրի քարի վրա, առաջ թեքվեց, հենվեց արմունկներին, երկու ձեռքով ծածկեց երեսը, և

[1] Անհրաժեշտություն, ուժ, ազատություն (լատ.)։

ծոմոված մատների արանքով արցունքներն սկսեցին կաթկըթել չոր ու սպիտակավուն փոշու վրա։

Նա հիշեց...

Հիշեց, թե ինչպես ինքն էլ մի ժամանակ առողջ ու հարուստ էր, և ինչպես առողջությունը վատնեց ու հարստությունը բաժանեց ուրիշներին՝ բարեկամներին և չարակամներին... Եվ ահա այժմ ինքը մի կտոր հաց չունի, և ամենքն էլ լքել են իրեն, բարեկամներն ավելի առաջ, քան թշնամիները... Մի՞թե նա այժմ այնքան պետք է ստորանա, որ սկսի ողորմություն խնդրել։ Եվ նրա սիրտը ճնշվում էր դառնությամբ և ամոթով։

Իսկ արցունքները թափվում էին ու թափվում՝ նախշելով սպիտակավուն փոշին։

Հանկարծ նա լսեց, որ մեկն իր անունն է տալիս։

Բարձրացրեց հոգնած գլուխը և իր առաջ տեսավ մի անծանոթի։

Սրա դեմքը հանգիստ էր և ծանրախոհ, բայց ոչ խիստ, աչքերը չինչ էին, բայց ոչ ճառագայթափայլ, հայացքը սրաթափանց էր, բայց ոչ չար։

— Դու քո ամբողջ հարստությունը բաժանեցիր,— լսվեց նրա հանդարտ ձայնը... — բայց դե, հո չե՞ս ափսոսում, որ բարություն ես արել։

— Չեմ ափսոսում,— հաճաչանքով պատասխանեց ծերունին,— միայն թե այժմ, ահա, մեռնում եմ։

— Եթե աշխարհի վրա չլինեին աղքատներ, որ քեզ ձեռք կարկառեին,— շարունակեց անծանոթը,— ո՞ւմ վրա դու կփորձեիր քո առաքինությունը, դու չէիր կարող վարժվել առաքինության։

Ծերունին ոչինչ չասաց և մտածմունքի մեջ ընկավ։

— Այդպես էլ դու այժմ մի՛ հպարտանա, ո՛վ աղքատ,— դարձյալ խոսեց անծանոթը,— գնա՛, ձեռք կարկառիր, դու էլ ուրիշ բարի մարդկանց հնարավորություն տուր, որ նրանք գործով ցույց տան, թե իրենք բարի մարդ են։

Ծերունին սթափվեց, աչքերը բարձրացրեց... Բայց անծանոթն արդեն չքացել էր, իսկ հեռվում, ճանապարհի վրա երևաց մի անցորդ։

Ծերունին մոտեցավ նրան և ձեռք կարկառեց։ Անցորդը դաժան արտահայտությամբ երեսը շրջեց և ոչինչ չտվեց։

Բայց նրա ետևից մի ուրիշն էր գալիս, և նա ծերունուն մի փոքրիկ ողորմություն տվեց։

Ու ծերունին այդ գրոշներով հաց գնեց, և քաղցը թվաց ողորմությամբ ստացած պատառը, և ամոթն այլևս չէր ճնշում նրա սիրտը, այլ, ընդհակառակը, մի անդորր բերկրանք էր լուսավորում նրան։

Մայիս, 1878

ՄԻՋԱՏԸ

Երազումս տեսա, որպես թե մոտ քսան մարդ նստած ենք բաց լուսամուտներով մի մեծ սենյակում։

Մեր մեջ կանայք, երեխաներ, ծերեր կան... Ամենքս էլ խոսում ենք մի շատ հայտնի առարկայի մասին — խոսում ենք աղմկալի և իրար լավ չհասկանալով։

Հանկարծ չոր ճայթյունով ներս թռավ մի մեծ միջատ, երկու վերշոկ երկարությամբ... Ներս թռավ, պտույտներ արավ և նստեց պատի վրա։

Նա նման էր ճանճի կամ պիծակի։ Իրանը կեղտոտ-մուգդարչնագույն էր, տափակ, կոշտ թևերն էլ նույն գույնի, թաթիկները չոռած ու թավամազ, գլուխը մեծ ու անկյունավոր, ինչպես լծակի գլուխ, և այդ գլուխն ու թաթիկները կասկարմիր էին՝ ասես արյունոտ։

Այդ տարօրինակ միջատը գլուխն անդադար վեր ու վար, աջ ու ձախ էր դարձնում, թաթիկները շարժում... հետո հանկարծ պոկվում պատից, շառաչով թռչում սենյակի մեջ և դարձյալ նստում, և դարձյալ մի տեսակ սրտնեղություն ու զզվանք ազդելով՝ երերվում էր, առանց տեղից շարժվելու։

Ամենքիս մեջ էլ նա զզվանք, երկյուղ, նույնիսկ սարսափ էր հարուցանում... Մեզնից ոչ մեկն այդպիսի բան չէր տեսել. ամենքն էլ աղաղակում էին. «Հեռու քշեցեք այդ հրեշին»։ Ամենքն էլ հեռվից թաշկինակներն էին թափահարում... որովհետև ոչ ոք սիրտ չէր անում մոտենալ... Եվ երբ

միջատը թռչում էր, ամենքն էլ ակամա մի կողմ էին քաշվում։

Մեր խոսակիցներից միայն մեկը, մի դալկադեմ երիտասարդ, տարակուսանքով նայում էր մեզ բոլորիս։ Նա ուսերն էր վեր քաշում, ժպտում. նա ամենևին հասկանալ չէր կարողանում, թե ինչ էր պատահել մեզ և ինչու էինք այդպես իրար անցել։ Նա ինքը ոչ մի միջատ չէր տեսնում, չէր լսում նրա թևերի չարագուշակ ճթթոցը։

Հանկարծ միջատը կարծես աչքերը սևեռեց նրա վրա, բզզաց և վար նետվելով դեպի նրա գլուխը՝ խայթեց ճակատը, աչքերից մի քիչ վերև... Երիտասարդը թույլ ախ քաշեց և ընկավ անշունչ։

Սարսափելի ճանճն իսկույն դուրս թռավ... Մենք միայն այդ ժամանակ գլխի ընկանք, թե ինչ հյուր էր դա։

Մայիս, 1878

ԾՀԻ

Մեռել էր պառավ-այրի կնոջ միևնուճար, քսանամյա որդին՝ գյուղի մեջ առաջին աշխատավորը։

Տիրուհին, նույն գյուղի կալվածատիրուհին, իմանալով պառավի վշտի մասին, նրան այցելության գնաց հենց թաղման օրը։ Այրուն նա տանը գտավ։

Խրճիթի կենտրոնում, սեղանի առաջ կանգնած, առանց շտապելու, աջ ձեռքի հավասար շարժումով (ձախը թուլացած կախված էր) ծխոտված կճուճի խորքից գդալ գդալի ետևից նա հանում ու կուլ էր տալիս ջրալի շչին։

Պառավի դեմքը մաշվել ու մթնել էր, աչքերը կարմրել և ուռել էին... Բայց նա ուղիղ և հանգիստ էր կանգնած. ինչպես եկեղեցում։

«Տե՜ր աստված,— մտածեց տիրուհին,— նա կարող է ուտել և այսպիսի բոպեին... ի՜նչ գռեհիկ զգացմունքների տեր են սրանք բոլորն էլ»։

Եվ այստեղ հիշեց տիրուհին, թե ինչպես մի քանի տարի առաջ, կորցնելով իր իննամյա աղջկան, ինքը վշտից հրաժարվեց Պետերբուրգի մոտ գեղեցիկ ամառանոց վարձել և ամբողջ ամառն անցկացրեց քաղաքում։ Իսկ պառավը շարունակում էր խպշտել շչին։

Վերջապես տիրուհին չհամբերեց։

— Տատյանա,— ասաց նա,— ների՛ր, ես զարմանում եմ, մի՞թե դու քո որդուն չէիր սիրում։ Ինչպե՞ս ախորժակդ չես կորցրել, ինչպե՞ս ես կարողանում դու ուտել այդ շչին։

— Իմ Վասյան մեռավ,— կամաց խոսեց պառավը և ցավատանջ արցունքները նորից վազեցին նրա փոս ընկած այտերի վրայով,— ասել է, թե՝ իմ վերջն էլ է... Ողջ-ողջ գլուխս կտրեցին։ Բայց շչին խո չե՞մ կարող դեն ածել, չէ՞ որ մեջն աղ եմ գցել։

Տիրուհին միայն ուսերը թոթվեց և հեռացավ։ Նա աղն էժան էր ձեռք բերում։

Մայիս, 1878

ԼԱԶՈՒՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Օ՜, լազուր թագավորություն, օ՜, թագավորություն լազուրի, լույսի, երիտասարդության և երջանկության։ Ես քեզ տեսա... երազում։

Մենք մի քանի հոգի էինք, գեղեցիկ զարդարված նավակում։ Կարապի կրծքի նման սպիտակ առագաստն ուռչում էր օդախաղաց ռազմադրոշների տակ։

Ես չգիտեի, թե ովքեր էին ընկերներս, բայց ամբողջ էությամբ զգում էի, որ նրանք նույնպես երիտասարդ էին — ուրախ և երջանիկ, ինչպես և ես։

Ես նրանց ամենևին էլ չէի նկատում։ Շուրջս տեսնում էի միայն անեզր լազուր ծովը՝ ամբողջովին բռնված մանր, ոսկեցոլք ծփանքով, իսկ գլխիս վերևը, նույնպիսի անեզր, նույնպիսի լազուր ծով, որի վրայով, կարծես ծիծաղելով, քաջահաղթ լողում էր փաղաքշող արեգակը։

Եվ երբեմն-երբեմն մեր մեջ բարձրանում էր հնչուն ու բերկրառատ ծիծաղ, ինչպես աստվածների ծիծաղը։

Կամ հանկարծ մեկի շրթունքներից դուրս էին թռչում խոսքեր, բանաստեղծություններ՝ ոգևորված հրաշալի գեղեցկությամբ և ներշնչված ուժով... Թվում էր, ինքը երկինքն էր հնչում նրանց ի պատասխան, և չորս կողմից ծովն էր համակրալից ալեկոծվում... Իսկ հետո դարձյալ երջանկալից անդորրություն էր տիրում։

Թեթև սուզվելով փափուկ ալիքների մեջ, լողում էր մեր արագասահ նավակը։ Քամին չէր նրան տանողը։ Նրան վարում էին մեր սեփական խաղուն սրտերը։ Ուր ուզում էինք, այն կողմն էլ նա սլանում էր հնազանդ, ինչպես կենդանի էակ։

Մենք պատահում էինք կղզիների, կախարդական, կիսաթափանցիկ կղզիների, որոնք շողշողում էին թանկագին ակների, հակինթի ու զմրուխտի նման։ Բոլորաձև ափերից արբեցուցիչ անուշահոտություն էր բուրում։ Այդ կղզիներից մի քանիսն սպիտակ վարդերի ու հովտաշուշանների անձրև էին թափում մեզ վրա, մյուսներից հանկարծակի վեր էին սլանում ծիծաղափայլ, երկայնաթև թռչուններ։

Թռչունները ճախրում էին մեր վերև, հովտաշուշաններն ու վարդերը հալվում էին մեր նավակի հարթ կողմերից սահող մարգարտյա փրփուրի մեջ։

Ծաղիկների և թռչունների հետ միախառն մեզ էին հասնում անուշ-անուշ հնչյուններ... դրանք մեզ կանացի ձայներ էին թվում... Եվ ամեն ինչ շրջապատում՝ երկինքը, ծովը, բարձրում ծփացող առագաստը, ղեկի ետևում քրքջացող ջուրը, այդ բոլորը սիրո, երջանիկ սիրո մասին էին խոսում։

Եվ նա, որին ամեն մեկս սիրում էր՝ այստեղ էր... անտեսանելի և մոտիկ։ Եվս մի ակնթարթ, և ահա կփայլատակեն նրա աչքերը, դեմքին կխաղա ժպիտը... Նրա ձեռքը կբռնի քո ձեռքը և քեզ իր ետևից կտանի դեպի անթառամ դրախտը։

Օ՜, լազուր թագավորություն, ես քեզ տեսա... երազում։

Հունիս, 1878

ԾԵՐՈՒԿԸ

Վրա հասան մթին, ծանր օրերը...

Քո ցավերը, սիրելի մարդկանց տկարությունները, ծերության ցուրտն ու խավարը... Բոլորը, ինչ դու սիրում էիր, ինչին անձնատուր եղար՝ անդարձ փլվում է և խորտակվում։ Ճամփադ զառիվայր է գնում։

Ի՞նչ անել ուրեմն։ Վշտանա՞լ։ Մորմոքե՞լ։ Դրանով ոչ քեզ, ոչ էլ ուրիշին կօգնես։

Ջորացող, կուչ եկած ծառի վրա տերևները մանր ու նոսր են, բայց նրա կանաչն էլի նույնն է։

Կծկվիր և դո՛ւ, խորասուզվիր քո մեջ, քո հիշողությունների մեջ և այնտեղ, խորը, շատ խորը, կենտրոնացած հոգուդ խորքում, քո նախկին, միայն քեզ մատչելի կյանքը կշողա իր բուրավետ, տակավին թարմ կանաչով ու գարնան փաղաքշանքով և ուժով։

Բայց զգույշ եղիր... առաջ չնայես, խեղճ ծերուկ։

Հունիս, 1878

ԵՐԿՈՒ ՀԱՐՈՒՍՏ

Երբ իմ առաջ փառաբանում են հարուստ Ռոտշիլդին, որն իր ահագին եկամուտներից ամբողջ հազարներ է բաժին հանում մանուկների կրթության, հիվանդների բժշկության, ծերերի խնամատարության համար, ես գովում եմ և զգացվում։

Սակայն և գովելով, և զգացվելով, ես չեմ կարող չհիշել գյուղական մի չքավոր ընտանիքի, որ իր ավերված տնակում պատսպարեց որբ-ազգականուհուն։

— Կատյային որ վերցնենք,— ասում էր պառավը,— մեր վերջին կոպեկն էլ նրա վրա կգնա, էլ փող չի մնա, որ աղ առնենք, կերակրին գցենք...

— Իսկ մենք կերակուրն առանց աղի էլ կուտենք,— պատասխանեց գեղջուկը, նրա ամուսինը։

Ո՞ւր այս գյուղացին, ո՞ւր Ռոտշիլդը։

Հունիս, 1878

ԹՂԹԱԿԻՑԸ

Երկու բարեկամներ նստած են սեղանի մոտ և թեյ են խմում։

Մի անակնկալ աղմուկ բարձրացավ փողոցում։ Լսվեցին աղեկտուր հառաչանքներ, կատաղի հայհոյանքներ, չարախինդ ծիծաղի պոռթկումներ։

— Ինչ-որ մեկին ծեծում են,— նկատեց բարեկամներից մեկը՝ լուսամուտից դուրս նայելով։

— Ոճրագործի՞, մարդասպանի՞,— հարցրեց մյուսը,— լսի՛ր, ով էլ որ նա լինի, չի կարելի թույլ տալ անդատ դատաստան։ Գնանք պաշտպանենք նրան։

— Բայց մարդասպանի չեն ծեծում։

— Մարդասպան չէ՞։ Ուրեմն գո՞ղ է։ Միևնույն է, գնանք ազատենք նրան ամբոխի ձեռքից։

— Գող էլ չէ։

— Գող էլ չէ՞։ Ուրեմն գանձապա՞հ է, երկաթուղայի՞ն, զորքի մատակարա՞ր, ռուսական մեկենա՞ս, իրավաբա՞ն, բարեմիտ խմբագի՞ր, հասարակական բարեգո՞ծ։ Այնուամենայնիվ, գնանք օգնենք նրան։

— Ո՛չ... դա թղթակցի են ծեծում։

— Թղթակցի՞։ Հա՛, գիտես ի՞նչ, նախ և առաջ մի բաժակ թեյ խմենք։

Հունիս, 1878

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

Տեսիլ էր այդ...

Ինձ երևացին երկու հրեշտակ... երկու ոգի։

Ասում եմ հրեշտակ, ոգի, որովհետև երկուսի մերկ մարմինների վրա ոչ մի հագուստ չկար և յուրաքանչյուրի ուսերի ետևից բարձրանում էին զորեղ, երկայն թևեր։

Երկուսն էլ՝ պատանիներ։ Մեկը՝ մի քիչ գիրուկ, ողորկ մաշկով, սևազանգուր։ Աչքերը շագանակագույն, խումար, խիտ արտևանունքներով։ Հայացքը մարդահաճ, ուրախ և ագահ։ Երեսը չքնաղ, գեղող, մի քիչ հանդուգն, մի քիչ չար։ Կարմիր, փափուկ շրթունքները թեթևակի ցնցվում էին։ Պատանին ժպտում էր, ինչպես իշխանություն ունեցողը — ինքնավստահ և ծուլորեն. շողշողուն մազերի վրա թեթև կերպով հանգչում էր փարթամ մի ծաղկեպսակ, որ համարյա հասնում էր թավշյա հոնքերին։ Ընձաղյուծի խայտաբղետ մորթին, երկու ծայրերը ոսկե նետով ամրացված, բոլորաձև ուսից թեթև կախված էր ցցուն ազդրի վրա։ Թևերի փետուրները վարդագույն շողշողում էին. նրանց ծայրերը կասկարմիր էին, կարծես թրջված կարմիր թարմ արյունով։ Ժամանակ առ ժամանակ այդ փետուրներն արագ-արագ թրթռում էին՝ արծաթաձայն և ախորժալուր շրշյունով, զարնանային անձրևի շրշյունով։

Մյուսը նիհար էր և դեղնավուն մարմնով։ Կողերը համարյա երևում էին յուրաքանչյուր շնչառության պահին։ Մազերը շեկ, նոսր և ցից-ցից, խոշոր, կլոր, բաց մոխրագույն աչքեր... Հայացքն անհանգիստ և տարօրինակորեն փայլուն։ Դեմքի բոլոր գծերը սրված, բերանը փոքրիկ, կիսաբաց, ձկնային ատամներով. սեղմված արծվային քիթ, դուրս ցցված կզակը ծածկված սպիտակավուն աղվամազով։ Այդ չոր շրթունքները երբեք, ոչ մի անգամ չէին ժպտում։

Դա մի կանոնավոր, զարհուրելի, անողոք դեմք էր (ի միջի այլոց առաջինի գեղեցիկ երեսն էլ, թեև սիրուն ու դուրեկան, նույնպես կարեկցություն չէր արտահայտում)։ Երկրորդի գլխի շուրջն ամրացված էին կոտրտված, դատարկ մի քանի հասկեր՝ հյուսված թոշնած խոտով։ Կոշտ գորշագույն կտավով ծածկված մեջքը, ուսերի ետևից ցցված մուգ կապույտ, փայլատ թևերը շարժվում էին դանդաղ և սպառնալից։

Երկու պատանիներն էլ անբաժան ընկերներ էին թվում։

Նրանցից յուրաքանչյուրը հենված էր մյուսի ուսին։ Առաջինի փոքրիկ, փափուկ ձեռքը խաղողի ողկույզի պես դրված էր երկրորդի չոր անրակի վրա, երկրորդի երկայն, բարակ մատներով նեղ դաստակը օձի նման ձգված էր առաջինի կանանցիական քնքուշ կրծքի վրա։

Եվ թվաց, թե մի ձայն եմ լսում։ Ահա թե ինչ ասաց նա. «Քո առաջ կանգնած են Սերն ու Քաղցը, երկու հարազատ

եղբայրներ, երկու արմատական հիմունքները բոլոր գոյությունների։

Այն ամենը, ինչ ապրում է, շարժվում, որպեսզի սնվի. և սնվում է, որպեսզի արտադրի։

Սեր և Քաղց — սրանց նպատակը մեկ է. այն, որ կյանքը չընդհատվի, սեփական և օտարի, միշտ միևնույն համընդհանուր կյանքը»։

Օգոստոս, 1878

ՅՈՒ. Պ. ՎՐԵՎՍԿԱՅԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Բուլղարական մի ավեր գյուղում, հին հարդանոցի ծածկի տակ, որ շտապ պատերազմական հիվանդանոցի էր փոխված, ցեխի մեջ, խոնավ ու հոտած հարդի վրա, երկու շաբաթից ավելի պառկած՝ նա մեռնում էր տիֆից։

Նա ուշքը կորցրել էր, և ոչ մի բժիշկ նույնիսկ չէր նայում նրան. հիվանդ սինվորները, որոնց նա խնամում էր, քանի դեռ ինքը ոտքի վրա կանգնելու ուժ ուներ, հերթով վեր էին կենում իրենց վարակված որջերից, որպեսզի կոտրած կճուճի մի կտորով մի քանի կաթիլ ջուր մոտեցնեն նրա պապակած շրթունքներին։

Նա երիտասարդ էր, գեղեցիկ։ Նրան ճանաչում էր բարձր հասարակությունը, նրա մասին հարցուփորձ էին անում մինչև անգամ բարձրաստիճան անձինք։ Կանայք նախանձում էին նրան, տղամարդիկ վխտում նրա շորս կողմը... երկու-երեք մարդ գաղտնի ու խորը սիրում էին նրան։ Կյանքը նրան ժպտում էր. բայց կա ժպիտ, որ արցունքից վատ է։

Քնքուշ, հեզանուշ մի սիրտ. և անձնազոհության ինչպիսի՜ ուժ, ինչպիսի՜ ծարավ։ Օգնել կարոտյալներին... ուրիշ երջանկություն նա չէր ճանաչում... Եվ չզգաց էլ մինչև վերջը։ Ուրիշ ամեն երջանկություն միայն անցավ նրա մոտով։ Բայց նա դրա հետ վաղուց հաշտվել էր և, ողջ էությամբ բոցավառված անշեջ հավատի կրակով, իրեն նվիրել էր մերձավորներին ծառայելու գործին։

Որպիսի՜ նվիրական գանձեր էր նա պահում այնտեղ, Հոգու խորքում, նրա գաղտնարանում. այդ երբեք ոչ ոք չգիտեր։ Իսկ այժմ, իհարկե, ոչ ոք էլ չի իմանա։

Եվ ի՞նչ կարիք կա։ Զոհը բերված է... գործը կատարված։

Սակայն դառն է մտածել, որ ոչ ոք շնորհակալություն անգամ չասաց նրա դիակի առաջ. թեպետ նա միշտ և քաշվում, և խույս էր տալիս ամեն տեսակի շնորհակալությունից։

Թող ուրեմն նրա սիրելի ստվերը չվիրավորվի այս ուշացած ծաղկի համար, որ ես համարձակվում եմ դնել նրա գերեզմանի վրա։

Սեպտեմբեր, 1878

ԵՍԱՄՈԼԸ

Նրան տրված էր այն ամենը, ինչ հարկավոր էր իր ընտանիքին պատուհաս դառնալու համար։

Նա ծնված էր առողջ, ծնված էր հարուստ և իր ամբողջ բազմամյա կյանքի ընթացքում առողջ ու հարուստ էլ մնալով՝ ոչ մի հանցանք չէր գործած, ոչ մի սխալմունքի մեջ չէր ընկած, ավելորդ խոսք չէր թոցրել բերնից և ոչ մի անգամ չէր վրիպած։

Նա անբիծ, ազնիվ էր... Եվ հպարտ իր ազնվության գիտակցությամբ, դրանով ճնշում էր պմենքին՝ հարազատներին, բարեկամներին, ծանոթներին։

Ազնվությունն էր նրա դրամագլուխը և այդ դրամագլխից նա վաշխառուական տոկոսներ էր ստանում։

Ազնվությունը նրան իրավունք էր տալիս անողորմ լինել և առանց ցուցումի բարություն չանել։ Եվ նա անողորմ էր ու բարություն էլ չէր անում... Որովհետև ցուցումով արած բարությունը — բարություն չէ։

Բացի իր անձից — այնքան օրինակելի — նա երբեք ոչ ոքի համար հոգ չէր տանում և սրտանց վրդովվում էր, երբ ուրիշներն էլ նույն եռանդո՜վ հոգ չէին տանում իր անձի մասին։

Եվ այնուհանդերձ, նա իրեն եսամոլ չէր համարում — և

ամենից ավելի էր պախարակում ու հալածում եսամոլներին և եսամոլությունը։ Դե, իհարկե... ուրիշի եսամոլությունը խանգարում էր նրա եսամոլությանը։

Ինքն իր մեջ ոչ մի թույլ կողմ չգտնելով, նա չէր հասկանում և չէր հանդուրժում ուրիշների թուլությունները։ Նա առհասարակ ոչ ոքի և ոչինչ չէր հասկանում, որովհետև ամբողջապես, ամեն կողմից, ներքևից ու վերևից, ետևից ու առաջից շրջապատված էր միայն ինքն իրենով։

Նա չէր հասկանում մինչև անգամ, թե ինչ ասել է ներել։ Նա ինքն իրեն ներելու կարիք չէր զգում... Եվ ինչո՞ւ ուրիշներին պետք է ներեր։

Սեփական խղճի դատաստանի առաջ, իր սեփական աստծո առաջ, նա, այդ հրաշքը, առաքինության այդ հրեշը, աչքերը վեր ամբառնած, հաստատուն ու պարզ ձայնով արտասանում էր. «Այո՛, ես արժանավոր, ես բարոյական մարդ եմ»։

Նա այդ խոսքերը կկրկնի մահվան մահճում, և այն ժամանակ էլ նրա քար սիրտը չի ցնցվի — մի սիրտ, որ բիծ կամ ճեղքվածք չունի։

Օ՜, ինքնագոհ, անողոք, էժան ձեռք բերված առաքինության այլանդակություն. դու հազիվ թե ավելի գարշելի չես, քան ակներև արատի այլանդակությունը։

Դեկտեմբեր, 1878

ԽՆՋՈՒՅՔ ՎԵՐԻՆ ԷԱԿԻ ՄՈՏ

Մի անգամ վերին էակը մտածեց մի մեծահանդես խնջույք տալ իր երկնաշեն, կապուտակ ապարանքներում։

Բոլոր առաքինություններն էլ հրավիրված էին։ Միմիայն առաքինությունները. Տգամարդկանց նա չէր հրավիրել... Միայն տիկնայք էին հրավիրված...

Շատ շատերն էին հավաքվել՝ մեծերը և փոքրերը։ Փոքր առաքինությունները մեծերից ավելի դուրեկան ու սիրալիր էին։ Սակայն ամենքն էլ գոհ էին երևում և միմյանց հետ քաղաքավարությամբ զրույց էին անում, ինչպես այդ վայել էր մոտ ազգականներին ու ծանոթներին։

Բայց ահա վերին էակը նկատեց երկու գեղեցիկ տիկինների, որոնք կարծես բնավ ծանոթ չէին իրար։

Տանտերը բռնեց այդ տիկիններից մեկի ձեռքը և մոտեցրեց նրան մյուս տիկնոջը։

«Բարերարություն»,— ասաց նա, ցույց տալով առաջինին։

«Երախտագիտություն»,— ավելացրեց նա, ցույց տալով երկրորդին։

Երկու առաքինություններն էլ անասելի զարմացան։ Այն օրից, երբ աշխարհն ստեղծվել էր — իսկ այն վաղուց էր ստեղծվել — նրանք առաջին անգամն էին հանդիպում միմյանց։

Դեկտեմբեր, 1878

ՍՖԻՆՔՍԸ

Դեղնավուն, գորշ, վերևից փխրուն, ներքևից սլնդացած ճռճռացող ավազ... Անվերջ ավազ՝ ինչքան որ աչքդ կտրի։

Եվ այդ ավազոտ անապատի վրա, այդ մահացած փոշու ծովի վրա բարձրանում է եգիպտական սֆինքսի վիթխարի գլուխը։

Ի՞նչ են ուզում ասել այդ մեծ, դուրս պրծած շրթունքները, այդ անշարժ, լայնացած, ցցված ռունգները, և այդ աչքերը, այդ երկար, կիսաքուն, կիսաուշադիր աչքերը՝ կրկնաղեղ, բարձր հոնքերի տակ։

Իսկ նրանք ինչ-որ բան են ուզում ասել. նրանք նույնիսկ խոսում են, սակայն միայն էդիպը կարող է լուծել հանելուկը և հասկանալ նրանց անբարբառ լեզուն։

Վա՜հ. ես ճանաչում եմ այդ դիմագծերը։ Նրանց մեջ արդեն եգիպտական ոչինչ չկա։ Սպիտակ, նեղ ճակատ, դուրս ցցված այտոսկրեր, կարճ քիթ և ուղիղ, գեղեցիկ, սպիտակատամ բերան, փափուկ բեղեր ու գանգուր մորուք և լայն դասավորված այդ փոքրիկ աչքերը... Իսկ գլխին՝ սանրված-

քով բաժանված մազերի գլխարկը։— Այո՛, այդ դո՛ւ ես, Կարպ, Սիդոր, Սիմեոն, յարոսլավցի, ռյազանցի գեղջուկ, իմ հայրենակից, ռուսական ոսկոր։ Վաղո՞ւց ես դու սֆինքսների կարգն անցել։ Կամ, գուցե, դո՞ւ էլ ես ուզում ինչ-որ բան ասել։ Այո, դու ևս սֆինքս ես։

Եվ քո աչքերը, այդ անգույն, բայց խորունկ աչքերը, նույնպես խոսում են... Եվ նույնպես անբարբառ ու հանելուկային է նրանց խոսքը։

Եվ սակայն ո՞ւր է քո Էդիպը։

Ավա՜ղ, միայն մուրմոլկա ծածկելը բավական չէ՝ քո Էդիպը դառնալու համար, ո՜վ համառուսական սֆինքս։

Դեկտեմբեր, 1878

ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍԵՐԸ

Ես կանգնած էի աղեղնաձև փռված գեղեցիկ լեռնաշղթայի առաջ. վերից մինչև վար նրան ծածկում էր կանաչ, մատղաշ անտառը։

Լեռների վրա կապույտին էր տալիս հարավային թափանցիկ երկինքը։ Բարձունքից խաղում էր արևն իր ճառագայթներով, ներքևում, խոտով կիսածածկ, շատախոսում էին կայտառ առվակները։

Եվ ես հիշեցի մի հին զրույց այն մասին, թե ինչպես առաջին դարում, Քրիստոսի ծննդից հետո, հունական մի առագաստանավ լողալիս է եղել Էգեյան ծովում։

Կեսօրվա ժամն է լինում... Եղանակը խաղաղ։ Եվ հանկարծ երկնքում, ղեկակալի գլխավերևը, ինչ-որ մեկը պարզ ասում է.

— Երբ դու կլողաս կղզու մոտով, բարձրաձայն գոչիր։ «Մեռա՜վ Մեծ Պանը»։

Ղեկակալը զարմանում է... վախենում։ Բայց երբ առագաստանավը սլանում է կղզու մոտով, նա հնազանդ գոչում է.

— Մեռա՜վ Մեծ Պանը։

Եվ իսկույն, իբրև պատասխան նրա գոչին, ծովափի ամբողջ երկարությամբ (իսկ կղզին անմարդաբնակ էր) լսվում են բարձրաձայն հառաչանքներ, հեծեծանքներ, երկարատև աղիողորմ բացականչություններ.

— Մեռա՜վ, մեռա՜վ Մեծ Պանը։

Ես հիշեցի այդ զրույցը... և մի տարօրինակ միտք հղացա.— «Ի՞նչ կլինի, եթե ես էլ գոչեմ»,— բայց, տեսնելով շուրջս տիրող ցնծությունը, ես չէի կարող մահվան մասին մտածել. ուստի և, ինչքան ուժ ունեի, գոչեցի.

— Հարյա՜վ, հարյա՜վ Մեծ Պանը։

Եվ իսկույն, օ՜ հրաշք, ի պատասխան իմ բացականչության, կանաչապատ, կիսաշրջան լեռնաշղթայի ամբողջ լայնությամբ տարածվեց բարեմիտ քրքիջ, բարձրացավ ուրախ խոսակցություն և շշուկ։ «Հարյա՜վ նա, հարյա՜վ Պանը»,— աղմկում էին մատաղ ձայներ։ Ամեն ինչ այնտեղ, առջևում, հանկարծ ծիծաղեց. առավել պայծառ, քան արևը՝ վերևում, առավել խաղուն՝ քան խոտերի տակ քչքչացող վտակները։ Լսվեց թեթև քայլերի շտապող դոփյուն, թավ կանաչի միջից փայլատակեց ալեծուփ պարեգոտների մարմարյա սպիտակությունը, մերկ մարմինների կենդանի կարմրությունը... Դրանք հավերժահարսեր էին, հավերժահարսեր, անտառահարսեր, բաքոսուհիներ, որոնք բարձունքներից դեպի տափարակներն էին վազում։

Նրանք միանգամից երևացին անտառի ամբողջ եզերքով։ Սատիրները ծածանվում էին աստվածային գլուխների շուրջը, հոլանի ձեռները բարձրացնում պսակներ ու ծնծղաներ— և ծիծաղը, շողշողուն, օլիմպիական ծիծաղը վազում է և թավալվում նրանց հետ։

Առջևից սլանում է աստվածուհին։ Նա ամենքից բարձր է ու գեղեցիկ։ Ուսին՝ կապարճ, ձեռքին՝ աղեղ, դեպի վեր հյուսած գանգուրների վրա՝ արծաթափայլ լուսնեղջյուրը...

Այդ դո՞ւ ես, Դիանա։

Բայց հանկարծ աստվածուհին կանգ առավ... Եվ իսկույն նրա ետևից կանգ առան բոլոր հավերժահարսերը։ Հնչուն ծիծաղը լռեց, և ես տեսա, թե ինչպես անակնկալ համրացած աստվածուհու երեսը պատեց մեռելային դալկություն։ Ես տեսա, ինչպես քարացան նրա ոտները, ինչպես անպատմելի սարսափը բացեց նրա շրթունքները, չռեց հեռուներին

հառած նրա աչքերը... Ի՞նչ տեսավ նա։ Ո՞ւր էր նայում։

Ես շրջվեցի այն կողմը, ուր նայում էր նա...

Երկնքի հենց եզրին, դաշտերի ցած շրջագծից այն կողմը, քրիստոնեական եկեղեցու սպիտակ զանգակատան վրա, հրեղեն կետի նման վառվում էր ոսկեխաչը... Այդ խաչն էր տեսել աստվածուհին։

Իմ ետևում ես լսեցի անհավասար, խորը մի հառաչանք, որ նման էր կտրված լարի թրթռոցի, և երբ նորից ես շուռ եկա, հավերժահարսերի հետքն էլ չէր մնացել... Առաջվա պես կանաչին էր տալիս լայնատարած անտառը, և միայն տեղ-տեղ խիտ, ցանցահյուս ճյուղերի միջից, երևում էին, հալչում սպիտակության ինչ-որ պատառներ։

Հավերժահարսերի պարեգոտնե՞րն էին դրանք, թե՞ հովիտների խորքերից բարձրացող գոլորշին — չգիտեմ։

Միայն ես շատ ափսոսացի անհետացող աստվածուհիներին։

Դեկտեմբեր, 1878

ԹՇՆԱՄԻՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

Ցմահ տանջանքի դատապարտված բանտարկյալը դուրս պրծավ բանտից և սկսեց փախչել։ Նրա ետևից կրնկակոխ սլանում էր հետապնդողների խումբը։

Նա փախչում էր, ինչքան ուժ ուներ... Հալածողներն սկսեցին ետ մնալ։

Բայց ահա նրա առաջ՝ սեպեզր մի գետ, նեղ, բայց խոր գետ... իսկ նա լողալ չգիտե։

Մի ափից մյուսը ձգված է մի բարակ, փտած տախտակ։ Փախստականը ոտն արդեն դրել է տախտակին... Բայց այնպես պատահեց, որ հենց այնտեղ, գետի մոտ կանգնած էին նրա ամենալավ բարեկամը և նրա ամենաոխերիմ թշնամին։

Թշնամին ձայն չհանեց և միայն ձեռները խաչաձևեց, այնինչ բարեկամն ամբողջ կոկորդով մեկ գոռաց.

— Այդ ի՞նչ ես անում, մարդ աստծու։ Խելքի եկ, անմիտ։ Մի՞թե չես տեսնում, որ տախտակը բոլորովին փտած

է։ Քո ծանրության տակ այն կկոտրվի և դու անխուսափելիորեն կխորտակվես։

— Բայց չէ՞ որ ուրիշ ճանապարհ չկա... Իսկ լսո՞ւմ ես ինձ հալածողների ձայնը,— հուսահատ հառաչեց դժբախտը և ոտքը դրեց տախտակի վրա։

— Չեմ թողնի... Ո՛չ, չեմ թողնի, որ դու կորչես,— աղաղակեց նախանձախնդիր բարեկամը և փախստականի ոտքի տակից դուրս քաշեց տախտակը։ Նույն ակնթարթում նա ընկավ մրրկածուփ ալիքների մեջ և սուզվեց։

Թշնամին ինքնաբավական ծիծաղեց և հեռացավ։ Իսկ բարեկամը նստեց գետի ափին և սկսեց դառնագին ողբալ իր խեղճ... խեղճ բարեկամի կորուստը։

Նրա մտքով անգամ չանցավ... գեթ մի վայրկյան իրեն մեղադրել նրա կորստյան համար։

— Չլսեց ինձ, չլսեց,— շշնջաց նա ընկճված։

— Բայց, էհ,— արտասանեց նա վերջապես,— չէ՞ որ նա իր ամբողջ կյանքը պետք է մաշեր սարսափելի բանտում։ Գոնե այժմ նա էլ չի տանջվում։ Այժմ հանգիստ կզգա իրեն։ Երևի այդ էր վիճակված նրան։

— Բայց և այնպես, մարդկայնորեն ցավալի է։

Եվ բարի հոգին շարունակում էր անմխիթար սգալ իր չարաբախտ բարեկամի կորուստը։

Դեկտեմբեր, 1878

ՔՐԻՍՏՈՍԸ

Ես ինձ տեսա պատանի, գրեթե երեխա՝ ցածլիկ գյուղական եկեղեցում։ Հինավուրց պատկերների առաջ, կարմիր բծերի նման աղոտ պլպլում էին բարակ մեղրամոմերը։

Միածանային պսակները բոլորել էին յուրաքանչյուր փոքրիկ բոց։ Մութ և աղոտ էր եկեղեցու ներսը... Բայց իմ առաջ մեծ բազմություն էր կանգնած։

Բոլորն էլ շիկահեր, գեղջկական գլուխներ։ Ժամանակ առ ժամանակ նրանք սկսում էին երերվել, իջնել ու նորից

բարձրանալ, կարծես հասուն հասկեր, որոնց վրա հանդարտ ալիքներով վազում է ամռան քամին։

Հանկարծ ետևիցս մի մարդ մոտեցավ և կանգնեց կողքիս։

Ես չդարձա նրա կողմը, բայց իսկույն զգացի, որ այդ մարդը Քրիստոսն էր։

Խանդաղատանքը, հետաքրքրությունը, երկյուղը միանգամից պաշարեցին ինձ։ Ես ճիգ գործադրեցի... Եվ նայեցի հարևանիս։ Դեմքը սովորական էր, դեմքը նման էր բոլոր մարդկային դեմքերին։ Աչքերը նայում են մի քիչ վեր, ուշադիր և հանդարտ։ Շրթունքները փակ, բայց ոչ սեղմած, վերին շրթունքը կարծես հանգչում է ներքին շրթունքի վրա։ Ոչ մեծ մորուքը կիսված է։ Ձեռները ծալված ու անշարժ են։ Եվ հագուստն էլ այնպես է, ինչպես ամենքի հագուստը։

«Սա ի՞նչ Քրիստոս է,— անցավ իմ մտքով։— Այսքան պարզ, այսքան հասարակ մարդ։ Չի կարող պատահել։

Ես երեսս շուռ տվի։ Բայց հազիվ աչքս հեռացրել էի այդ պարզ մարդուց, երբ ինձ նորից թվաց, թե հենց ինքը՝ Քրիստոսն է կողքիս կանգնած։

Ես դարձյալ ինձ վրա ուժ գործադրեցի... Եվ դարձյալ տեսա նույն դեմքը, որ նման էր բոլոր մարդկանց դեմքերին, նույն սովորական, թեև անծանոթ դիմագծերը։

Եվ հանկարծ ես ինձ վատ զգացի և ուշքի եկա։ Միայն այդ ժամանակ հասկացա, որ հենց այդպիսի դեմքը, որ նման է բոլոր մարդկանց դեմքերին, ա՛յդ է իսկ և իսկ Քրիստոսի դեմքը։

Դեկտեմբեր, 1878

ՔԱՐԸ

Դուք տեսե՞լ եք ծովափին ընկած հին, գորշագույն քարը, երբ արևոտ, ուրախ օրին, մակընթացության ժամին, կենդանի ալիքներն ամեն կողմից վրա վազելով, հարվածում են նրան, նրա հետ խաղում ու փաղաքշում են, նրա

մամռապատ գլխին թափում դյուրափխրուն, մարգարտաշող, փայլուն փրփուրը։

Քարը միևնույն քարն է մնում, բայց նրա խորշոմած երեսի վրա հայտնվում են վառվռուն գույներ։

Դրանք վկայում են այն հեռավոր ժամանակների մասին, երբ հալված գրանիտը դեռ նոր էր սկսել կարծրանալ և ամբողջապես վառվում էր հրափայլ գույներով։

Այդպես էլ իմ ծերացած սրտի վրա քիչ առաջ ամեն կողմից հորդեցին երիտասարդ, կանացի հոգիներ և նրանց գուրգուրանքից, նրանց փաղաքշալի հպումից, այն բոցավառվեց վաղուց արդեն խամրած գույներով, հին կրակի հետքերով։

Ալիքները նահանջեցին... բայց գույները դեռ չեն ալոտացել, թեև նրանց շորացնում է խստաշունչ քամին։

Մայիս, 1879

ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

Ես կանգնած էի սեպեղը բլրի գագաթին։ Իմ առաջ մերթ ոսկեփայլ, մերթ արծաթափայլ շողշողում էր ծովի պես սփռված հաճարի հասուն արտը։

Բայց կոհակներ չէին վազում այդ ծովի երեսին, չէր խաղում խեղդուկ օդը. սպասվում էր մեծ փոթորիկ։

Իմ շուրջը արևը դեռ լուսավորում էր տաք ու նվազկոտ, բայց այնտեղ, արտի այն կողմը, ոչ շատ հեռու, մուգ կապույտ ամպը հսկայական զանգվածով ընկել էր երկնակամարի ամբողջ կեսի վրա։

Ամեն ինչ շունչը կտրել... ամեն ինչ դալկացել էր արևի վերջին ճառագայթների չարագուշակ փայլի տակ։ Չէր լսվում ոչ մի թռչնաձայն, չէր երևում ոչ մի թռչուն, անգամ ճրնճղուկները թաքնվել էին։ Միայն մի տեղ, մոտերքում, համառ կերպով շրշում ու աղմկում էր ջրածաղկի մենավոր խոշոր տերևը։

Ի՜նչ ուժեղ է բուրում օշինդրը հանդերում։ Ես նայում էի կապտագույն զանգվածին... Եվ սիրտս խռովվում էր։ Դե՛,

շուտ, շուտ,— մտածում էի ես,— փայլի՛ր, փայլատակի՛ր, ոսկե օձ, ճայթի՛ր, որոտ, շարժվի՛ր, գալարվի՛ր, թափվիր, չարաղետ ամպ, վե՛րջ տուր թախծալի հեծությանը։

Բայց ամպը չէր շարժվում, առաջվա պես ճնշում էր լուռումունջ երկիրը... Եվ միայն, ասես, ուռչում և մթնում էր։

Եվ ահա, նրա միագույն կապույտի վրայով սահուն սլացավ ինչ-որ բան, իսկ և իսկ սպիտակ թաշկինակ կամ ձյունի քուլա։ Դա գյուղի կողմից թռչող մի սպիտակ աղավնի էր։

Թռավ, թռավ միշտ միևնույն ուղղությամբ.. սուզվեց անտառի ետևը։

Անցավ մի քանի վայրկյան։ Նույն անողոք լռությունը շարունակվում էր... Բայց տե՛ս։ Արդեն երևում են երկու թաշկինակ, ձյունի երկու քուլա, որոնք ետ են դառնում։ Դրանք երկու սպիտակ աղավնիներ են, որոնք հավասար թռիչքով դեպի տուն են թռչում։

Եվ ահա, վերջապես, ճայթեց փոթորիկը, և ծայր առավ խրախճանքը։

Ես վազեվազ հազիվ տուն հասա։ Ոռնում է քամին, սուրում, որպես խելագար. սլանում են շիկավուն, ցած իջած, ասես ծվեն-ծվեն եղած ամպերը, ամեն ինչ գալարվում է, խառնվում, փայլատակում. կախված սյուների պես օրորվում է հորդ տեղատարափը. կայծակներն աչք են կուրացնում հրավառ կանաչով, թնդանոթի պես կրակում է ընդհատվող որոտը, ծծմբի հոտ է փչում...

Իսկ տանիքի տակ, ձեղանցքի հենց եզրին, իրար կողքի նստած են երկու սպիտակ աղավնի՝ և այն, որ թռել էր ընկերոջ ետևից, և այն, որին բերեց նա, և կարող է պատահել՝ փրկեց։

Երկուսն էլ մեջքներն ուռցրել էին և ամեն մեկն իր թևով զգում էր հարևանի թևի շփումը...

Լավ են զգում նրանք։ Նրանց նայելով, ես էլ եմ ինձ լավ զգում... թեև ես մենակ եմ... մենակ, ինչպես միշտ։

Մայիս, 1879

ՎԱՂԸ, ՎԱՂԸ

Ի՞նչ ունայն, հեզգ և չնչին է համարյա ամեն մի անցած օրը։ Ինչքան քիչ հետք է թողնում նա իր ետևից։ Ինչպես անիմաստ, հիմարաբար վազեցին այդ ժամերն իրար ետևից։

Այնինչ մարդն ապրել է ուզում։ Նա սիրում է կյանքը, նա հույս է դնում այդ կյանքի վրա, իր վրա, ապագայի վրա... Օ՜, որպիսի բարիքներ է նա սպասում ապագայից։

Բայց ինչո՞ւ է նա երևակայում, որ մյուս, գալիք օրերը նման չեն լինի հենց այդ նոր անցած օրվան։

Նա այդ ամենևին չի երևակայում։ Նա առհասարակ չի սիրում խորհել — և լավ է անում։

«Ահա, վաղը, վաղը»,— մխիթարում է նա իրեն, քանի դեռ այդ «վաղը» չի գլորել նրան գերեզման։

Դե, երբ գերեզմանում ես — ակամա կդադարես խորհել։

Մայիս, 1879

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Երազում տեսա, որ մտել էի մի ահագին, ստորերկրյա բարձրակամար տաճար։ Տաճարն ամբողջապես ողողված էր մի տեսակ, նույնպես ստորերկրային, միապաղաղ լույսով։

Տաճարի ճիշտ կենտրոնում նստած էր կանաչագույն ալեծածան հագուստով վեհապանծ մի կին։ Գլուխը ձեռքին խոնարհած, նա կարծես խորասուզված էր մտքերի մեջ։

Ես իսկույն հասկացա, որ այդ կինն ինքը Բնությունն էր, և վայրկենական սարսուռով հոգուս մեջ խորացավ ակնածալի երկյուղածության զգացումը։

Ես մոտեցա նստած կնոջը և, հարգալից գլուխ տալով, բացականչեցի.

— Օ՜, մեր ընդհանուրիս մայր, ինչի՞ մասին ես դու մտածում։ Մարդկության ապագա վիճակի մասին չե՞ս խորհում դու արդյոք։ Ո՞չ այն մասին, թե ինչպես պետք է մարդ-

կությունը հասնի հնարավոր բախտավորության և կատարելության։

Կինը դանդաղորեն ինձ դարձրեց իր մութ, ահեղ աչքերը։ Նրա շրթունքները շարժվեցին և երկաթի զրնգոցի նման մի սուր ձայն գոչեց.

— Ես մտածում եմ, թե ինչպես անեմ, որ լվի մկաններն ավելի ուժ ստանան, որպեսզի նա ավելի հեշտ կարողանա ազատվել իր թշնամիներից։ Հարձակման և դիմադրության հավասարակշռությունը խախտված է... Պետք է այն վերականգնել։

— Ինչպե՞ս,— թոթովեցի ես ի պատասխան։— Ահա թե դու ի՞նչ ես մտածում։ Բայց մի՞թե մենք, մարդիկս չենք քո սիրած զավակները։

Կինը մի քիչ հոնքերը կիտեց։

— Բոլոր արարածներն իմ զավակներն են,— ասաց նա,— և ես նրանց մասին միակերպ եմ հոգում, ու միակերպ էլ նրանց ոչնչացնում։

— Իսկ բարությո՞ւնը... բանականությո՞ւնը... արդարությո՞ւնը,— թոթովեցի ես նորից։

— Դրանք մարդկային խոսքեր են,— հնչեց երկաթե ձայնը։— Ես ոչ բարություն եմ ճանաչում, ոչ չարություն... բանականությունն ինձ համար օրենք չէ, իսկ ի՞նչ է արդարությունը։ Ես քեզ կյանք եմ տվել, ես այն ետ կառնեմ և կտամ ուրիշներին՝ ճիճուներին կամ մարդկանց... Ինձ համար միևնույն է... Իսկ դու առայժմ դեռ պաշտպանվիր և ինձ մի՛ խանգարիր։

Ես ուզեցի նրան առարկել... բայց իմ շուրջը երկիրը խով հառաչեց ու դղրդաց — և ես արթնացա։

Օգոստոս, 1879

«ԿԱԽԵՑԵ՛Ք ՆՐԱՆ»

— Այդ պատահեց 1805 թվականին,— սկսեց իմ վաղեմի ծանոթը,— Աուստերլիցից քիչ առաջ։ Գունդը, ուր ես սպա էի, բնակություն էր հաստատել Մորավիայում։

Մեզ խստիվ արգելված էր անհանգստացնել ու նեղել բնակիչներին. նրանք առանց այդ էլ խեթ-խեթ էին նայում մեզ, չնայած մենք դաշնակիցներ էինք համարվում։

Ես մի սպասավոր ունեի, մորս նախկին ճորտերից, Եգոր անունով։ Ազնիվ ու հեզ մարդ էր։ Ես մանկությունից ճանաչում էի նրան և հետը մտերմի պես էի վարվում։

Ահա մի անգամ այն տանը, ուր ապրում էի, կռիվ, աղմուկ, վայնասուն բարձրացավ — գողացել էին տանտիրուհուս երկու հավը, և նա այդ գողության մեջ իմ սպասավորին էր մեղադրում։ Եգորը արդարանում էր, ինձ վկա էր կանչում... «Նա՛ և գողությո՛ւն, նա, Եգոր Ավտամանո՞վը»։ Ես հավատացնում էի տանտիրուհուս, որ Եգորն ազնիվ է, բայց նա ոչինչ լսել չէր ուզում։

Հանկարծ փողոցի ծայրից լսվեց ձիերի համաչափ քայլերի դոփյուն։ Դա ինքը գլխավոր հրամանատարն էր անցնում իր շտաբի հետ։ Նա դանդաղ էր ընթանում՝ հաստլիկ, ուռած, գլխիկոր, ուսադիրները կրծքի վրա կախ ընկած։

Տանտիրուհին տեսավ նրան և իրեն նետելով ձիու առաջ, ծնկների վրա ընկավ, հերարձակ, գզգզված, սկսեց բարձրաձայն գանգատվել, ձեռքով ցույց տալով սպասավորիս։

— Պարոն գեներալ,— աղաղակում էր նա,— ձերդ պայծառափայլություն, դատաստան արեք, օգնեցեք, փրկեցեք, այս զինվորն ինձ թալանեց։

Եգորը կանգնած էր տան շեմքին, լարի պես ձգված, գլխարկը ձեռին, նույնիսկ կուրծքը դուրս գցած և ոտներն իրար կպցրած, ինչպես ժամապահ, և ոչ մի ձայն-ծպտուն։ Արդյոք փողոցի մեջտեղում կանգ առած այդ գեներալիտե՞տն էր նրան շփոթել, թե՞ վերահաս փորձանքի առաջ էր նա քար կտրել՝ չգիտեմ։ Միայն Եգորը կանգնել և աչքերն էր ճպճպացնում, իսկ ինքը սպիտակ էր, ինչպես գաջը։

Գլխավոր հրամանատարը թեթևակի ու խիստ հայացք ձգելով նրա վրա, զայրացած գոչեց.

— Դե՞...

Կանգնած է Եգորն արձանի պես և ատամներն է բացել։ Կողքից նայելիս, կարծես թե ծիծաղում էր մարդը։

Այն ժամանակ գլխավոր հրամանատարն արտասանեց հատ-հատ.

— Կախեցեք նրան,— և ձիու կողքին խթանելով, առաջ անցավ, նախ կամաց, իսկ հետո շափ գցելով։ Ամբողջ շտաբը սլացավ նրա ետևից։ Միայն մի համհարզ թամբի վրա շուռ գալով, թռուցիկ նայեց Եգորին։

Հրամանն անկատար թողնել անկարելի էր... Եգորին իսկույն բռնեցին և տարան կախելու։

Այստեղ նա բոլորովին անզգայացավ և միայն մի երկու անգամ հազիվհազ բացականչեց.

— Տե՛ր իմ, տե՛ր իմ,— իսկ հետո կիսաձայն ավելացրեց.— Աստված տեսնում է, ես չեմ արել։

Ինձնից բաժանվելիս՝ նա դառնագին լաց եղավ։ Ես հուսահատության մեջ էի։

— Եգո՛ր, Եգո՛ր,— աղաղակեցի ես,— ախր ինչո՞ւ դու ոչինչ չասացիր գեներալին։

— Աստված տեսնում է, ես չեմ արել,— կրկնեց խեղճը, արցունքից խեղդվելով։ Տանտիրուհին ինքն էլ սարսափեց, նա ամենևին չէր սպասում այդպիսի սոսկալի վճռի և իր հերթին լացուկոծ բարձրացրեց։ Նա ամենքին մեկ առ մեկ աղաչում, պաղատում էր, որ խնայեն, հավատացնում էր, որ հավերը գտնվել են, որ ինքը պատրաստ է ամեն բան բացատրել։

Հասկանալի է, որ այդ բոլորն անօգուտ անցավ։ Զինվորական կարգ ու կանոն է, պարո՛ն, կարգապահությո՛ւն։ Տանտիրուհին ավելի ու ավելի բարձրաձայն էր հեծկլտում։

Եգորը, որին քահանան արդեն խոստովանել ու հաղորդություն էր տվել, դիմեց ինձ.

— Ասացեք նրան, ձերդ մեծություն, որ չտանջվի, չէ՞ որ ես իրեն ներեցի։

Ծանոթս, իր ծառայի վերջին խոսքերը կրկնելով, շշընջաց. «Եգորուշկան, սիրելիս, սուրբ մարդ էր», և արցունքի կաթիլները հոսեցին նրա խորշոմած այտերի վրայով։

Օդեսսա, 1879

Ի՞ՆՉ ԿՄՏԱԾԵՄ ԵՍ...

Ի՞նչ կմտածեմ ես այն ժամանակ, երբ մեռնեմ, եթե միայն մտածելու կարողություն ունենամ այդ ժամանակ։

Կմտածե՞մ արդյոք ես այն մասին, որ վատ օգտվեցի

կյանքից, քնած անցկացրի այն, նիրհեցի, չկարողացա ճաշակել նրա բարիքները։

«Ինչպե՞ս։ Արդեն մա՞հ։ Այդպես շո՞ւտ։ Անկարելի է։ Չէ՞ որ ես դեռ ոչինչ չեմ արել... Ես միայն պատրաստվում էի մի բան անել»։

Արդյոք կսկսե՞մ մտաբերել անցածը, մտքով կա՞նգ կառնեմ կյանքիս անցած-գնացած մի քանի պայծառ վայրկյանների վրա, թանկագին պատկերների ու դեմքերի վրա։

Հիշողությանս մեջ կպատկերանա՞ն արդյոք վատթար գործերը, և տարաժամ ապաշավանքի այրող վիշտը կպաշարի՞ իմ հոգին։

Ես կմտածե՞մ արդյոք այն մասին, թե ի՞նչ է սպասում ինձ անդրշիրիմյան կյանքում... Եվ արդյոք մի բան սպասո՞ւմ է ինձ այնտեղ։

Ո՛չ... ինձ թվում է, որ ես կաշխատեմ ոչինչ չմտածել և կստիպեմ ինձ որևէ հիմար բանով զբաղվել, որպեսզի միայն կարողանամ ուշադրությունս հեռացնել իմ առաջ սևին տվող դժան խավարից։

Իմ ներկայությամբ մեռնող մի մարդ գանգատվում էր, որ չեն ուզում իրեն բոված կաղին տալ ուտելու... Եվ միայն այնտեղ, նրա մարած աչքերի խորքում՝ մահացու վիրավորված թռչնի գնդակահար թևի պես՝ դողում ու թրթռում էր մի բան։

Օդեսսա, 1879

«ԻՆՉ ԳԵՂԵՑԻ՛Կ, ԻՆՉ ԹԱ՛ՐՄ ԷԻՆ ՎԱՐԴԵՐԸ...»

Ինչ-որ մի տեղ, մի ժամանակ, վաղուց, շատ վաղուց, ես կարդացի մի բանաստեղծություն։ Ես այն շուտով մոռացա... Բայց առաջին տողը մնաց հիշողությանս մեջ։

«Ինչ գեղեցի՛կ, ինչ թա՛րմ էին վարդերը...»

Հիմա ձմեռ է, սառնամանիքը եղյամել է լուսամուտի ապակիները, մութ սենյակում վառվում է մեկ հատիկ մոմ։

Կծկված, ես նստել եմ անկյունում, իսկ գլխիս մեջ հնչում ու հնչում է.

«Ինչ գեղեցի՜կ, ինչ թա՜րմ էին վարդերը...»

Ու տեսնում եմ ես ինձ քաղաքից դուրս, ռուսական մի տան ցած լուսամուտի առաջ։ Ամռան երեկոն մեղմ հալվելով փոխվում է գիշերի։ Տաք օդը հափրուկի և լորենու բույր ունի, իսկ լուսամուտում, պարզած ձեռքին հենված և գլուխն ուսին խոնարհած, նստած է մի աղջիկ և լուռ ու սևեռուն նայում է երկնքին, կարծես սպասում է առաջին աստղերի հայտնվելուն։ Ի՜նչ անկեղծ, ոգևորված են մտախոհ աչքերը, ինչպե՜ս սրտաշարժ, անմեղ են բացված աղերսող շրթունքները, ինչպե՜ս հավասար է շնչում դեռ լրիվ չծաղկած, դեռ ոչնչով չհուզված կուրծքը, ինչպե՜ս անբիծ ու քնքուշ է մատաղ դեմքի գծագրությունը։ Ես չեմ հանդգնում խոսել նրա հետ, բայց որքան նա թանկ է ինձ համար, ինչպես բաբախում է իմ սիրտը։

«Ինչ գեղեցի՜կ, ինչ թա՜րմ էին վարդերը...»

Իսկ սենյակս ավելի ու ավելի է մթնում... Ճարճատում է այրուքով պատված մոմը. ցած առաստաղի վրա օրորվում են սահուն ստվերները։ Դրսում մոլեգնում ու ճկճկում է սառնամանիքը և թվում է, թե լսում եմ աղաղակալի, պառավական մի շշուկ...

«Ինչ գեղեցի՜կ, ինչ թա՜րմ էին վարդերը...»

Իմ առաջ կանգնում են այլ պատկերներ... Լսվում է գյուղական ընտանեկան կյանքի ուրախ աղմուկը։ Երկու շիկահեր գլխիկներ, հենված իրար, իրենց փայլուն աչիկներով ժիր նայում են ինձ, զսպված ծիծաղից ցնցվում են նրանց վառվռուն այտերը, ձեռքերը փաղաքշանքով իրար են հյուսվում, իրար ընդհատելով հնչում են երիտասարդ, բարի ձայներ, իսկ մի քիչ հեռու, դուրեկան մենյակի խորքում, ուրիշ նույնպես երիտասարդ ձեռքեր, խառնելով մատները, վազվզում են հին դաշնամուրի ստեղների վրայով և լանների վալսը չի կարողանում խլացնել նահապետական հեշտաեռի ջրթմնջյունը...

«Ինչ գեղեցի՜կ, ինչ թա՜րմ էին վարդերը...»

Մոմը պլպլում է ու մարում... Այդ ո՞վ է այնպես խուլ ու խռպոտ հազում այնտեղ։ Ոտներիս մոտ կուչ եկած ցնցվում, դողում է իմ պառավ գամփռը, իմ միակ ընկերը... Ես մրսում եմ... Ես դողում եմ... Իսկ նրանք... բոլորն էլ մեռան... մեռան...

«Ինչ գեղեցի՜կ, ինչ թա՜րմ էին վարդերը...»

Սեպտեմբեր, 1879

ԾՈՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Փոքրիկ շոգենավով Համբուրգից Լոնդոն էի գնում։ Մենք երկու ճանապարհորդ էինք, ես և ուիստիտ ցեղից մի փոքրիկ էգ կապիկ, որին մի վաճառական Համբուրգից նվեր էր ուղարկում իր անգլիացի գործակցին։

Կապիկը բարակ շղթայով կապված էր տախտակամածի վրայի մի նստարանից և դեսուդեն էր ընկնում ու աղիողորմ ճվճվում թռչունի պես։

Ամեն անգամ, երբ անցնում էի նրա մոտով, նա պարզում էր ինձ իր փոքրիկ, սառն ու սև ձեռքը և նայում իր տխուր, համարյա մարդկային աչիկներով։ Ես բռնում էի նրա ձեռքը, ու նա դադարում էր ճվալ ու դեսուդեն ընկնել։

Ամեն ինչ խաղաղ էր։ Անշարժ, արճճագույն սփռոցի նման ծովը փռված էր չորս կողմը։ Նա այնքան էլ մեծ չէր երևում։

Նրա երեսը պատել էր թանձր մառախուղը, որ հասնելով մինչև կայմերի ծայրերը, իր փափկությամբ, իր մեղմ մթությամբ կուրացնում ու հոգնեցնում էր մարդու հայացքը։ Այդ մառախուղի մեջ, աղոտ կարմիր բծի նման՝ կախ էր ընկած արեգակը, իսկ երեկոյան դեմ նա ամբողջապես բոցավառ-

վում էր և խորհրդավոր ու տարօրինակ կերպով կարմրին տալիս։

Շոգենավի քթի տակից դուրս թռչելով իրար ետևից վազում էին ջրի երկար, ուղղատարած ծալքեր, որոնք նման էին մետաքսյա ծանր գործվածքի ծալքերի, նրանք վազում էին և շարունակ լայնանալով ու կնճռոտվելով, վերջապես հարթվում, հավասարվում էին և ծփծփալով չքանում։ Միակերպ ճռնչող անիվների տակ կծկվում էր ուռճացած փրփուրը, կաթի պես սպիտակին տալով և մեղմ վշշալով նա փշրվում, օձագալար հոսանքներով ցիրուցան էր լինում և ապա միաձուլվելով՝ նույնպես կորչում, կուլ գնալով մառախուղին։

Անդադար և աղերսագին, ավելի անախորժ, քան կապկի ճվճվոցը, ծնկծնկում էր ղեկի մոտ կախված զանգակը։

Երբեմն-երբեմն ծովաշուշանն էր ելնում ջրի երես և, իսկույն գլխի վրա շուռ գալով՝ սուզվում մեղմ հուզված ջրի հատակը։

Իսկ նավապետը, որ մի մռայլ, արևավառ երեսով և լռակյաց մարդ էր, ծխում էր իր կարճ ծխամորճը և բարկությամբ թքում պաղած ծովի մեջ։

Իմ բոլոր հարցերին նա կցկտուր մրթմրթոցով էր պատասխանում։ Ակամա ես դիմում էի իմ միակ ուղեկցին՝ կապկին։

Նստում էի նրա կողքին, և նա դադարում էր ճվալ, և դարձյալ իր ձեռքը մեկնում էր ինձ։

Երկուսս էլ զգում էինք անշարժ մառախուղի քնաբեր խոնավությունը և երկուսս էլ միևնույն անգիտակցական մտախոհության մեջ ընկած՝ այսպես մնում էինք իրար կողքի նստած, ասես հարազատներ։

Ես այժմ ժպտում եմ... բայց այն ժամանակ ուրիշ զգացմունք ունեի։

Մենք բոլորս մի մոր զավակներ ենք, և ինձ հաճելի էր, որ այդ խղճուկ, փոքրիկ գազանն այնպես վստահացած՝ հանդարտվում ու փարվում էր ինձ, ասես իր հարազատին։

Նոյեմբեր, 1879

Ն. Ն.

Հանդարտ և սիգափայլ դու անցնում ես կյանքի ուղիով, առանց արցունքի և առանց ժպիտի, հազիվ աշխուժացած անտարբեր ուշադրությամբ։

Դու բարի և խելոք ես... և ամեն ինչ օտար է քեզ, և ոչ ոք քեզ պետք չէ։

Դու չքնաղ ես և ոչ ոք չի կարող ասել՝ արդյոք գնահատո՞ւմ ես դու քո գեղեցկությունը, թե ոչ։ Դու ինքդ անկարեկից ես և ուրիշից չես պահանջում կարեկցություն։

Քո հայացքը խոր է, բայց ոչ մտախոհ։ Եվ դատարկ է այդ պայծառ խորությունը։

Այդպես և Ելիսեյան դաշտերում, Գլյուկի մեղեդիների վեհ հնչյունների տակ, անթախիծ և անուրախ անցնում են վայելչակազմ ստվերները։

Նոյեմբեր, 1879

ԿԱՆԳՆԻ՛Ր

Կանգնի՛ր։ Ինչպես որ ես քեզ տեսնում եմ այժմ, այդպես հարատև մնա՛ իմ հիշողության մեջ։

Շրթունքներիցդ դուրս է թռչում վերջին ոգեշունչ հնչյունը, աչքերդ չեն փայլում և չեն շողշողում, նրանք մթագնում են ծանրացած երջանկությամբ, երանելի գիտակցությամբ այն գեղեցկության, որ քեզ հաջողվեց արտահայտել, այն գեղեցկության, որի ետևից կարծես դու տարածում ես քո հաղթական, քո հոգնատանջ բազուկները։

Արևի լույսից էլ նուրբ ու հստակ ի՞նչ լույս է լցվել մարմնիդ բոլոր մասերում, հագուստիդ ամենամանր ծալքերում։

Ո՞ր աստվածն է իր փայփայիչ շնչով ետ տվել քո ցիրուցան գանգուրները։

Նրա համբույրն այրվում է մարմարիոնի պես գունատ քո ճակատի վրա։

Ահա նա, բացված գաղտնիքը, պոեզիայի, կյանքի, սիրո գաղտնիքը։

Ահա նա, ահա նա՝ անմահությունը։

Ուրիշ անմահություն չկա և հարկավոր էլ չէ։ Այս վայրկյանին դու անմահ ես։

Կանգնի այս վայրկյանը, և դու նորից մոխրի հյուլե ես, կին, մանուկ... Բայց ի՞նչ փույթ քեզ... Այս վայրկյանին դու դարձար բարձր և վեր այն ամենից, ինչ որ անցողական է, ժամանակավոր։ Քո այդ վայրկյանը երբեք չի վերջանա։

Կանգնի՛ր։ Եվ թող որ ես էլ հաղորդակից լինեմ քո անմահությանը, նետիր իմ հոգու մեջ քո հավիտենականության շողը։

Նոյեմբեր, 1879

ԱԲԵՂԱՆ

Ես ճանաչում էի մի սուրբ ու ճգնավոր աբեղայի։ Նա միայն աղոթքի քաղցրությամբ էր ապրում և, դրանով արբեցած, նա այնքա՜ն երկար էր կանգնած մնում եկեղեցու սառը հատակին, որ ոտները ծնկներից ներքև ուռել և նման էին սյուների։ Բայց նա հոգնածություն չէր զգում — կանգնած աղոթում էր։

Ես նրան հասկանում էի, ես գուցե նախանձում էի նրան, բայց թող նա էլ ինձ հասկանար և չմեղադրեր ինձ, ինձ, որին մատչելի չեն նրա ուրախությունները։

Նա հասավ այն բանին, որ ոչնչացրեց իրեն, իր ատելի եսը, բայց չէ՞ որ ես էլ, եթե չեմ աղոթում, այդ ինքնասիրությունից չէ։

Իմ եսն ինձ համար գուցե առավել ճնշող ու զզվելի է, քան նրա եսը՝ իր համար։

Նա գտավ այն, ինչով կարող է մոռանալ իրեն... բայց չէ՞ որ գտնում եմ և ես, թեև ոչ այդպես մշտական։

Նա չի ստում... բայց չէ՞ որ ես էլ չեմ ստում։

Նոյեմբեր, 1879

ՄԵՆՔ ԴԵՌ ԿՊԱՏԵՐԱԶՄԵՆՔ

Որքան չնչին, աննշան մի բան երբեմն կարողանում է բոլորովին վերստեղծել մարդուն։

Խորին մտահոգության մեջ, մի անգամ ես անցնում էի մի մեծ ճանապարհով։

Ծանր նախազգացումները ճնշում էին կուրծքս, վհատությունը տիրել էր ինձ։

Ես բարձրացրի գլուխս... Իմ առաջ, երկու շարք սոսինների միջև, սլաքի պես ձգվում էր հեռու ճանապարհը։

Եվ հենց նրա վրա, այդ ճանապարհի վրա, ինձանից մի տասը քայլ հեռու, ոսկու պես պսպղալով, ամառվա վառվռուն արևի տակ թռչկոտում էր ճնճղուկների մի ամբողջ ընտանիք, թռչկոտում էր աշխույժ, ծիծաղաշարժ, ինքնավստահ կերպով։

Նրանցից մեկը մանավանդ, կողերը շարունակ տափին տալով ու քարճիկն ուռցնելով, հանդուգն կերպով ճկճկում էր — բոլորովին անհոգ շրջապատին։ Տիրակալ էր, և ուրիշ ոչինչ։

Այնինչ վերևը, բարձր երկնքում սավառնում էր ուրուրը, որին, շատ կարելի է, վիճակված էր խժռել հենց նույն այդ տիրակալին։

Ես նայեցի, ծիծաղեցի, ինձ թափ տվի և տխուր մտածմունքներս իսկույն չքացան։ Ես էլ զգացի քաջություն, զգացի անվեհերություն, սեր և եռանդ դեպի կյանքը։

Եվ թող իմ գլխին էլ սավառնի իմ ուրուրը...

— Մենք դեռ կպատերազմենք, սատանան տանի։

Նոյեմբեր, 1879

ԱՂՈԹՔ

Ինչի համար էլ որ աղոթելիս լինի մարդ, նա աղոթում է, որ հրաշք կատարվի։ Ամեն մի աղոթք հանգում է հետևյալին. «Մեծազոր աստված, այնպես արա, որ երկու անգամ երկու՝ չորս չլինի»։

Միայն այդպիսի աղոթքն է իսկական աղոթք, անձից անձ ուղղված։ Աղոթել տիեզերական ոգուն, վերին էակին, կանտյան, հեգելյան զտված, անկերպարան աստծուն — անկարելի է և անմիտ։

Բայց մի՞թե կարող է նույնիսկ ինքը՝ կենդանի, կերպարանավոր աստվածը այնպես անել, որ երկու անգամ երկու՝ չորս չլինի։

Ամեն մի հավատացող պարտավոր է պատասխանել. կարող է, և պարտավոր է նաև իրեն համոզելու այդ բանում։

Բայց եթե նրա բանականությունն ապստամբի՞ այդպիսի մի անմտության դեմ։

Այդտեղ նրան օգնության կհասնի Շեքսպիրը. «Որքա՜ն բաներ կան, Հորա՛ցիո, երկնքում և երկրի վրա...» և այլն։

Իսկ եթե հանուն ճշմարտության սկսեն նրան հակաճառել, այն ժամանակ բավական է, որ նա միայն կրկնի հռչակավոր հարցը. «Ի՞նչ է ճշմարտությունը»։

Եվ ուրեմն սկսենք խմել ու զվարճանալ — և աղոթել։

Հուլիս, 1881

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երազ

Երազ տեսա, գնում էի սև, ցած երկնքի տակ, խոշոր անկյունաձև քարերով ծածկված, ընդարձակ, մեծ տափաստանով։

Քարերի միջով անցնում էր մի արահետ... Ես գնում էի արահետով, ինքս էլ չիմանալով, թե ո՞ւր և ինչո՞ւ։

Հանկարծ իմ դիմաց, արահետի նեղ գծի վրա, բարակ ամպի նման մի բան երևաց... Ես սկսեցի նայել, ամպը դարձավ կին՝ բարեկազմ ու բարձրահասակ, սպիտակ հագուստով, մեջքին՝ նեղ և փայլուն գոտի... Արագ քայլերով նա շտապում էր հեռանալ ինձանից։

Ես չէի տեսնում նրա դեմքը, չէի տեսնում անգամ մազերը, որ ծածկված էին ալիքավոր գործվածքով։ Բայց ամբողջ սրտով ես ձգտում էի նրա ետևից. նա ինձ չքնաղ,

թանկ ու սիրելի էր թվում։ Ես անպայման կամենում էի հասնել նրան, կամենում էի տեսնել նրա դեմքը, նրա աչքերը... Ես կամենում էի տեսնել, ես պետք է տեսնեի այդ աչքերը։

Սակայն ինչքան էլ շտապում էի, նա ինձանից ավելի արագ էր շարժվում, ու ես չէի կարողանում հասնել նրան։

Բայց ահա, նրա առջև, արահետի վրա երևաց հարթ, լայն մի քար... Այդ փակում էր նրա ճանապարհը։ Կինը կանգ առավ նրա առաջ... Եվ ես մոտ վազեցի, ուրախությունից ու սպասումից դողալով, ոչ առանց վախի։

Ես ոչինչ չասացի, բայց նա կամաց շուռ եկավ դեպի ինձ։

Եվ այնուամենայնիվ ես չտեսա նրա աչքերը. նրանք փակ էին։

Նրա դեմքը սպիտակ էր... սպիտակ, ինչպես նրա հագուստը։ Մերկացած ձեռները կախ էին ընկել անշարժ... Նա ամբողջովին ասես քարացել էր։ Այդ կինն ամբողջ իր մարմնով, դեմքի յուրաքանչյուր գծով մարմարե արձանի էր նմանվում։

Դանդաղ, չկորացնելով մարմնի և ոչ մի մասը, նա ետ շրջվեց ու իջավ այն հարթ սալաքարին։

Եվ ահա, ես արդեն պառկած եմ նրա կողքին, պառկած մեջքիս վրա, ամբողջովին ձգված, ինչպես գերեզմանի արձան։ Ձեռներս խաչել եմ կրծքիս ու զգում եմ, որ ինքս էլ եմ քարացել։

Անցավ մի քանի ակնթարթ... Կինը հանկարծ բարձրացավ և հեռացավ։

Ես կամեցա հետևել նրան, բայց չկարողացա շարժվել, չկարողացա շարժել խաչած ձեռներս, և միայն անասելի կարոտով նայում էի նրա ետևից։

Այն ժամանակ նա հանկարծ շուռ եկավ և կենդանի շարժուն դեմքի վրա ես տեսա նրա պայծառ, ճառագայթող աչքերը։

Նա աչքերը հառեց ինձ և լոկ շուրթերով ծիծաղեց... առանց հնչյուն արձակելու, թե՝ «Վեր կաց, եկ ինձ մոտ»։

Սակայն ես տակավին չէի կարողանում շարժվել։

Այն ժամանակ նա մեկ էլ ծիծաղեց և արագ հեռացավ՝ ուրախ օրորելով գլուխը, որի վրա հանկարծ շառագունեց փոքրիկ վարդերից հյուսած պսակը։

Իսկ ես մնացի անշարժ ու համր՝ իմ գերեզմանի սալաքարի վրա։

Փետրվար, 1878

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ

Տարակուսանքի օրերին, հայրենիքիս ճակատագրի մասին ծանր մտածումների օրերին դու ես իմ միակ նեցուկն ու ապավենը, օ՜, մեծ, հզոր արդարախոս և ազատ ռուսաց լեզու։ Առանց քեզ ինչպե՞ս կարող էի չվհատել, տեսնելով այն ամենը, ինչ կատարվում է տանը։ Բայց չի կարելի չհավատալ, որ այդպիսի մի լեզու մեծ ժողովրդին չէ շնորհված։

Հունիս, 1882

ԵՍ ԿԱՐԵԿՑՈՒՄ ԵՄ

Ես կարեկցում եմ ինքս ինձ, ուրիշներին, բոլոր մարդկանց, գազաններին, թռչուններին... բոլոր արարածներին։

Ես կարեկցում եմ երեխաներին ու ծերերին, դժբախտներին ու բախտավորներին... Բախտավորներին ավելի, քան դժբախտներին։

Ես կարեկցում եմ հաղթական, ցնծացող առաջնորդներին, մեծ արվեստագետներին, մտածողներին, պոետներին։

Ես կարեկցում եմ մարդասպանին ու նրա զոհին, այլանդակությանն ու գեղեցկությանը, ճնշվողներին ու ճնշողներին։

Ինչպե՞ս ազատվեմ ես այդ կարեկցությունից։ Նա չի թողնում, որ ես ապրեմ... Նա նույնիսկ ձանձրույթ է։

Օ՜, ձանձրույթ, ձանձրույթ, որ շաղախված ես կարեկցությամբ։ Մարդ դրանից ազատվել չի կարող։

Ավելի լավ է, որ ես նախանձեի, իսկապես։ Եվ ես հենց նախանձում եմ — քարերին։

Փետրվար, 1878

ԱՆԵԾՔ

Ես կարդացի Բայրոնի Մանֆրեդը... Երբ հասա այն տեղը, ուր Մանֆրեդի ձեռքով կործանված կնոջ ոգին նրա վրա արտասանում է իր խորհրդավոր նզովքը, ես ինչ-որ սարսուռ զգացի։

Հիշեցե՛ք. «Թող անքուն լինեն քո գիշերները, թող քո չար հոգին միշտ զգա իմ անտեսանելի, տանջող ներկայությունը, թող նա դառնա ինքն իր դժոխքը»։

Բայց այստեղ ես մի ուրիշ դեպք հիշեցի... Մի անգամ, Ռուսաստանում, ես վկա եղա երկու գյուղացիների՝ հոր և որդու միջև ծագած կատաղի վեճին։

Որդին վերջացրեց նրանով, որ անհանդուրժելի վիրավորանք հասցրեց հորը։

— Անիծի՛ր նրան, Վասիլիչ, անիծիր նզովյալին,— գոռաց ծերուկի կինը։

— Խնդրեմ, Պետրովնա,— պատասխանեց ծերուկը խուլ ձայնով և լայն խաչակնքեց,— թող նա էլ որդի ունենա, որն իր մոր աչքի առաջ թքի իր հոր ալեհեր մորուքին։

Այս անեծքը ավելի սարսափելի թվաց ինձ։

Որդին ուզեց բերանը բաց անել, բայց երերաց ոտների վրա, կապտեց և հեռացավ։

Փետրվար, 1878

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ

Ես ականատես եղա երկու երկվորյակների վեճին։ Ինչպես ջրի երկու կաթիլ, նրանք նման էին իրար ամեն ինչով.

դիմագծերով, դրանց արտահայտությամբ, մազերի գույնով, հասակով, մարմնի կառուցվածքով, և անհաշտելիորեն ատում էին իրար։

Նրանք միատեսակ ջղաձգվում էին ցասումից։ Միատեսակ վառվում էին նրանց՝ իրար մոտեցրած՝ տարօրինակությունն չափ իրար նման դեմքերը։ Միատեսակ շողշողում և սպառնում էին իրար նման աչքերը, միատեսակ ձայնով արտասանված, միևնույն ամենանախատական խոսքերը դուրս էին թռչում միանման ծռմռված շրթունքներից։

Ես չհամբերեցի. բռնեցի մեկի ձեռքից, մոտեցրի նրան հայելուն և ասացի. «Կռվիր ավելի լավ է հենց այստեղ, այս հայելու առաջ... Քեզ համար ոչ մի տարբերություն չի լինի... Իսկ ինձ համար այնքան ծանր չի լինի»։

Փետրվար, 1878

ՄԱՐԵԿ

I

Ես պառկած էի անկողնում, բայց չէի կարողանում քնել։ Հոգսը կրծում էր ինձ, ծանր, ճնշող — միանման մտքերը անցնում էին գլխովս՝ նման մառախլապատ ամպերի համատարած շղթաների, որ անձրևային օրերին անվերջ սահում են բլուրների գորշ բարձունքներով։

Ա՜խ, ես սիրում էի այն ժամանակ անհույս, վշտալից սիրով, ինչպես կարելի է սիրել միայն տարիների ձյունի ու սառնության տակ, երբ կյանքից չխռոված սիրտը մնացել է... ոչ երիտասարդ, ոչ... այլ անհարկի և իզուր երիտասարդի պես։

Սպիտակավուն բծի նման իմ դեմ կանգնած էր պատուհանի ուրվականը, աղոտ երևում էին սենյակի բոլոր իրերը, ամառային օրվա վաղորդյան ծխագույն լույսի մեջ նրանք ավելի անշարժ ու լուռ էին թվում։ Ես նայեցի ժամացույցին. երեքից քառորդ էր պակաս։ Սենյակի պատերից դուրս էլ

նույն անշարժությունն էր զգացվում... Եվ ցող էր, ցողի ամբողջ մի ծով։

Իսկ այդ ցողի մեջ, այգում, հենց իմ պատուհանի տակ, անլռելի, բարձր, ինքնավստահ՝ արդեն երգում, սուլում, դայլայլում էր սև ճարեկը։

Գեղգեղուն հնչյունները հոսում, լցվում էին իմ լուռ սենյակը, լցնում էին իմ լսողությունը, իմ գլուխը ծանրացած անքնության չորությամբ, հիվանդագին մտքերի դառնությամբ։

Հավերժականություն էին շնչում նրանք, այդ հնչյունները, հավերժականության ամբողջ թարմությունը, ամբողջ անտարբերությունը, ամբողջ ուժը։ Հենց բնության ձայնը ես լսեցի նրանց մեջ, այն գեղեցիկ, անգիտակից ձայնը, որ երբեք չի սկսվել և երբեք էլ չի վերջանա։

Ինքնավստահ երգում, գովերգում էր նա, այդ սև ճարեկը. նա գիտեր, որ շուտով, սովորական հաջորդականությամբ կշողա անփոփոխ արևը, նրա երգի մեջ ոչինչ չկար իրենը, անձնականը։ Նա նույն այն սև ճարեկն էր, որ հազար տարի առաջ ողջունեց նույն այդ արևը ու կողջունե ուրիշ հազարավոր տարիներ հետո, երբ այն, ինչ կմնա ինձանից, գուցե անտեսանելի փոշու պես կպտտվի նրա կենդանի, հնչուն մարմնի շուրջը, նրա երգերով պատված օդային ալիքների մեջ։

Եվ ես, խեղճ, ծիծաղելի, սիրահարված, ինքնամփոփ մարդս ասում եմ քեզ. շնորհակալություն, փոքրիկ թռչուն, շնորհակալություն քո ուժեղ և ազատ երգի համար, որ անսպասելիորեն հնչեց պատուհանիս տակ այն անուրախ ժամին։

Նա չմխիթարեց ինձ, և ես էլ մխիթարություն չէի փընտրում... Բայց արցունքով թրջվեցին իմ աչքերը ու իմ կրծքում շարժվեց, բարձրացավ մի պահ անշարժ, մեռյալ բեռը։

Ա՜խ, և այն էակը, մի՞թե այնպես երիտասարդ ու թարմ չէր, ինչպես քո ցնծացող ձայնը, վաղորդյան երգիչ։

Եվ արժե՞ արդյոք ցավել, տառապել և մտածել միայն ինքն իր մասին, երբ շուրջը, ամեն կողմից, հոսում են այն սառը ալիքները, որոնք, եթե ոչ այսօր, վաղը կտանեն ինձ դեպի անեզր օվկիանը։

Արցունքներս հոսում էին... իսկ իմ սիրելի սև ճարեկը, ասես ոչինչ չպատահած, շարունակում էր իր անտարբեր, իր երջանիկ, իր հավերժական երգը։

Օ՜, ինչպիսի՜ արցունքներ լուսավորեց իմ վառվող այտերի վրա վերջապես ծագող արևը։

Բայց ես ժպտում էի առաջվա պես։

8 հուլիսի, 1877

ՃԱՐԵԿ

II

Դարձյալ ես պառկած եմ անկողնում... դարձյալ քունս չի տանում։ Նույն ամառային վաղ առավոտն է պարուրում ինձ ամեն կողմից, և նորից, իմ պատուհանի տակ, երգում է սև ճարեկը, ու սրտումս վառվում է նույն վերքը։

Բայց ինձ չի թեթևացնում թռչունի երգը, ու չեմ մտածում ես իմ վերքի մասին։ Ինձ տանջում են ուրիշ, անթիվ բացված վերքեր. նրանցից բոսորագույն հոսանքով թափվում է հարազատ, թանկագին արյունը, թափվում է անվերջ, անիմաստ, ինչպես բարձր տանիքներից փողոցի կեղտի ու գարշանքի մեջ թափվող անձրևաջուրը։

Հազարավոր իմ եղբայրները, եղբայրակիցները կործանվում են այնտեղ, հեռվում, անառիկ բերդերի պատերի տակ, հազարավոր եղբայրներ, որոնց ապիկար առաջնորդները մահվան հոշոտիչ երախն են նետել։

Նրանք կործանվում են անտրտունջ, նրանց կործանում են առանց զղջման, նրանք իրենց չեն խղճում, նրանց չեն խղճում և այն ապիկար առաջնորդները։

Ոչ արդարներ կան այստեղ, ոչ մեղավորներ. այդ կալսիչն է ծեծում հասկերի խուրձը — դատարկ, թե հատիկավոր — ցույց կտա ժամանակը։ Վերջապես ի՞նչ են նշանակում իմ վերքերը։ Ի՞նչ են նշանակում իմ տանջանքները։ Ես չեմ համարձակվում անգամ լաց լինել, բայց գլուխս այրվում է և սիրտս մարում, ու ես, որպես հանցագործ, թաքցնում եմ գլուխս ատելի դարձած բարձերի մեջ։

Այրող, ծանր կաթիլները հոսում են, սահում են իմ այտերի վրայով... ընկնում են շուրթերիս... Ի՞նչ է այդ։ Արցո՞ւնք... թե՞ արյուն։

Սգոստոս, 1878

ԱՌԱՆՑ ԲՈՒՅՆԻ

Որտե՞ղ ապաստանեմ։ Ի՞նչ անեմ։ Ես, կարծես, միայնակ, անբույն թռչուն եմ։ Փշաքաղված նստել է նա մերկ, չորացած ճյուղի վրա. մնալը խեղդիչ է... իսկ ո՞ւր թռչել։

Եվ ահա նա ուղղում է իր թևերը, սլացիկ և ուղիղ նետվում դեպի հեռուները, ինչպես բազեից հալածված աղավնի,— չի՞ բացվի արդյոք կանաչ, հյուրընկալ մի անկյուն, չի՞ կարելի արդյոք մի տեղ, թեկուզ ժամանակավոր, մի՛ բույն հյուսել։

Թռչունը սավառնում է, սավառնում և ուշադրությամբ նայում ներքև։ Ներքևում դեղին անապատն է, լուռ, անշարժ, մեռած անապատը։

Թռչունը շտապում, անցնում է անապատը և շարունակ նայում ներքև՝ ուշադրությամբ ու թախծոտ։

Ներքևում ծովն է, դեղին, մահացած, ինչպես անապատը։ Ճիշտ է, նա աղմկում ու շարժվում է, բայց անվերջանալի շառաչի, ալիքների միանման տատանումների մեջ դարձյալ կյանք չկա և ոչ էլ պատսպարվելու տեղ։

Հոգնեց խեղճ թռչունը։ Թուլանում է նրա թևերի թափը... Թուլանում է նրա թռիչքը... Գոնե դեպի երկինք թռչեր... Սակայն և բույն չի հյուսվի այդ անհատակ դատարկության մեջ։

Նա վերջապես ծալեց թևերը... Եվ երկարատև շառաչով ընկավ ծովը։

Ալիքը կլանեց նրա... և առաջ գլորվեց առաջվա պես անիմաստ աղմկելով։ Ո՞րտեղ ապաստանեմ ես։ Ժամանակը չէ՞, որ ես էլ ընկնեմ ծովը։

Հունվար, 1878

ԳԱՎԱԹԸ

Սիծաղում եմ... և զարմանում ինքս ինձ վրա։

Անկեղծ է իմ թախիծը, ինձ համար իսկապես ծանր է ապրելը. վշտալի ու անմխիթար են իմ զգացմունքները։ Բայց և այնպես, ես աշխատում եմ փայլ ու գեղեցկություն տալ նրանց, ես պատկերներ ու համեմատություններ եմ փնտրում, ես կոկում եմ իմ խոսքերը, մխիթարվում եմ բառերի հընչունությամբ ու ներդաշնակությամբ։

Ինչպես քանդակագործը, ինչպես ոսկերիչ-վարպետը, ես փութաջան քանդակում, փորագրում, ամեն կերպ զարդարում եմ այն գավաթը, որով ինքս ինձ պիտի թույն մատուցեմ։

ՈՐՄՆ Է ՄԵՂՔԸ

Նա մեկնեց ինձ իր նուրբ, իր գունատ ձեռքը... Իսկ ես սառը կոպտությամբ ետ վանեցի այն։ Տարակուսանք արտահայտվեց երիտասարդ, սիրելի դեմքի վրա, երիտասարդ, բարի աչքերը կշտամբանքով նայեցին ինձ։ Երիտասարդ, անբիծ հոգին չի հասկանում ինձ։

— Ո՞րն է իմ մեղքը,— շշնջում են նրա շրթունքները։

— Քո մե՞ղքը։ Ամենապայծառ հրեշտակը, երկնքի ամենաշողշողուն խորության մեջ, ավելի շուտ կարող է մեղավոր լինել, քան դու։

Բայց և այնպես, իմ հանդեպ մեծ է քո մեղքը։

Կամենո՞ւմ ես ճանաչել այն, այն ծանր մեղքը, որ դու հասկանալ չես կարող, և որն անկարող եմ ես պարզել քեզ։

Ահա՛ այն. դու երիտասարդությունն ես, ես՝ ծերությունը։

ԿԵՆՑԱՂԻ ԿԱՆՈՆ

Ուզո՞ւմ ես լինել հանգիստ։ Շփվիր մարդկանց հետ, բայց ապրիր մենակ, ոչինչ մի նախաձեռնիր և ոչինչ մի ափսոսա։

Ուզո՞ւմ ես լինել երջանիկ։ Սովորիր նախ տառապել։

Ապրիլ, 1878

ՍՈՂՈՒՆԸ

Ես տրորված մի սողուն տեսա։ Ողողված իր մարմնից հոսած արյունաջրով ու լորձունքով, նա դեռ ծռմռվում էր և, ջղաձգորեն բարձրացնելով գլուխը, դուրս էր հանում խայթոցը... Նա սպառնում էր դեռ... սպառնում անզոր։

Ես կարդացի խայտառակված գրչակի ֆելիետոնը։

Խեղդվելով սեփական թուքից, թավալված սեփական գարշահոտ ժահրի մեջ, նա նույնպես ջղաձգվում և ծռմռվում էր... Նա հիշատակում էր «արգելագիծը» — նա առաջարկում էր մենամարտությամբ պաշտպանել իր պատիվը... Ի՞նչ պատիվը։

Ես հիշեցի այն տրորված սողունը՝ իր անփառունակ խայթոցով։

Մայիս, 1878

ԳՐՈՂՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏԸ

Գրողը նստած էր իր առանձնասենյակում, աշխատանքային սեղանի առաջ։ Հանկարծ ներս է մտնում քննադատը։

— Ինչպե՞ս,— բացականչեց նա,— դուք դարձյա՞լ շարունակում եք խզբզել, հորինել՝ այն բոլորից հետո, ինչ ես գրել եմ ձեր դեմ, այն բոլոր մեծ հոդվածներից, փոքր հոդվածներից, թղթակցություններից հետո, որոնց մեջ ես ապացուցել եմ, ինչպես երկու անգամ երկու՝ չորս, որ դուք չունեք և երբեք չեք ունեցել ոչ մի տաղանդ, որ դուք անգամ մայրենի լեզուն եք մոռացել, որ դուք միշտ աչքի եք ընկել տգիտությամբ, իսկ հիմա բոլորովին ցամաքել եք, ծերացել, դարձել լաթ։

Ստեղծագործողը հանգիստ դարձավ դեպի քննադատը։

— Դուք իմ դեմ գրել եք բազմաթիվ հոդվածներ և ֆելիետոններ,— պատասխանեց նա,— այդ անկասկած է։ Բայց հայտնի՞ է ձեզ աղվեսի ու կատվի առակը։ Աղվեսը շատ խորամանկություններ ուներ, բայց և այնպես թակարդն ընկ-

կավ, կատուն միայն մեկն ուներ՝ ծառ բարձրանալը։ Եվ շները նրան չգտան։ Այդպես էլ ես։ Ի պատասխան ձեր բոլոր հոդվածների, ձեզ ամբողջովին երևան եմ հանել մի գրքի մեջ. ձեր խելոք գլխին դրել եմ ծաղրածուի գլխարկը և նրանով դուք կպարեք սերունդների առաջ։

— Սերունդների առա՞ջ— քրքջաց քննադատը,— կարծես թե ձեր գրքերը կհասնեն սերունդներին։ Քառասուն կամ, ամենաշատը, հիսուն տարի անց, դրանք ոչ ոք էլ չի կարդալու։

— Ես ձեզ հետ համաձայն եմ,— պատասխանեց գրողը,— բայց ինձ այդքանն էլ բավական է։ Հոմերոսը հավիտենականությանը նետեց իր Թերսիտեսին, իսկ ձեզ համար՝ կես դարն էլ շատ է։ Դուք նույնիսկ ծաղրածուի անմահությանն էլ արժանի չեք։ Մնաք բարով, պարոն... Կհրամայե՞ք կոչել ձեզ ձեր իսկական անունով... Հազիվ թե դրա կարիքը լինի... Բոլորն էլ կարտասանեն այն, առանց ինձ էլ։

Հունիս, 1878

Օ՜ ԻՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ Օ՜ ԻՄ ԹԱՐՄՈՒԹՅՈՒՆ»

Գոգոլ

«Օ՜ իմ երիտասարդություն, օ՜ իմ թարմություն»,— բացականչում էի երբեմն ես էլ։ Բայց այն ժամանակ, երբ ես արտասանում էի այդ բացականչությունները, ես դեռ երիտասարդ էի ու թարմ։

Այն ժամանակ ես միայն կամենում էի. փայփայել ինձ տխուր զգացմունքներով, բացահայտորեն խղճալ ինձ, գաղտնորեն հրճվել։

Հիմա ես լռում եմ ու չեմ ընկճվում այն կորուստների համար... Նրանք առանց այն էլ կրծում են ինձ. մշտապես, խուլ կերպով։

«Էհ, լավ է չմտածել»,— հավատացնում են գեղջուկները։

Հունիս, 1878

Կ...

Այդ ծվվացող ծիծեռնակը չէ, այդ կայտառ աղավնյակը չէ, որ բարակ, ամուր կտուցով, կարծր ժայռի մեջ բույն է փորում իր համար։

Այդ դու ես, որ օտար, դաժան ընտանիքում, կամաց-կամաց վարժվեցիր և ընտելացար, իմ համբերատար, իմ խելոք։

Հունիս, 1878

ԵՍ ԱՆՑՆՈՒՄ ԷԻ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԵՐՈՎ

Ես անցնում էի բարձր լեռներով,
Եվ լույս գետերով, և հովիտներով.
Եվ այն ամենը, ինչ տեսնում էի,
Ինձ ասում էին մի բանի մասին.
Ես սիրված էի, սիրված էի ես,
Իսկ այլ ամեն բան մոռացա այնպես։

Կապույտ երկինքն էր շողում իմ վերև,
Թռչուններն՝ երգում, տերևները՝ շրշում,
Ժիր ու շարեշար ամպերը թեթև
Ինչ-որ ափ էին թև առած թռչում.
Օրջանկությունն էր չորս կողմը շնչում,
Սակայն իմ սիրտը ա՛յլ բան էր տենչում։

Օ՜, ինձ տանում էր, տանում մի ալիք,
Նման լայնածիր ծովի ալիքին,
Մի լռություն էր համակել հոգիս,
Որ բարձր էր խինդից, բերկրանքից, ցավից,
Ու հազիվ էի ես ինձ հասկանում,—
Ամբողջ աշխարհը ինձ էր պատկանում։

Ինչո՞ւ չմեռա ես այն ժամանակ,
Հետո ես ու դու ինչո՞ւ ապրեցինք,
Եկան տարիներ... անցան տարիներ,
Մեզ ոչինչ, ոչինչ չնվիրեցին,
Որ քաղցր լիներ, որ նա պարզ լիներ,
Անցած այն հիմար ու լույս օրերից։

Նոյեմբեր, 1878

ԵՐԲ ԵՍ ՉԵՄ ԼԻՆԻ...

Երբ ես չեմ լինի, երբ ամենը, ինչ ես էի, կփոշիանա իբրև անյուն, օ, դո՛ւ, իմ միակ ընկեր, օ, դո՛ւ, որին ես սիրել եմ այնքան խորն ու այնպես քնքշորեն, դու, որ գուցե ինձանից երկար ապրես՝ այցի մի՛ գա իմ գերեզմանին... Այնտեղ դու անելիք չունես։

Մի մոռանա ինձ... բայց և մի հիշիր ամենօրյա հոգսերի, հաճույքների ու կարիքի պահերին... Ես չեմ ուզում խանգարել քո կյանքը, չեմ կամենում դժվարացնել նրա խաղաղ ընթացքը։

Սակայն, առանձնության ժամերին, երբ քեզ կպատե այն ամոթխած ու անառիթ թախիծը, որ այնքան ծանոթ է բարի սրտերին, վերցրու մեր սիրած գրքերից մեկը և նրա մեջ փնտրիր այն էջերը, այն տողերը, այն բառերը, որոնցից, պատահում էր, հիշո՞ւմ ես, երկուսիս աչքերից միաժամանակ հոսում էին քաղցր ու անխոս արցունքներ։

Կարդա, փակիր աչքերդ ու մեկնիր ինձ ձեռքդ... Բացակայող ընկերոջդ մեկնիր քո ձեռքը։

Ես ի վիճակի չեմ լինի այն սեղմել իմ ձեռքով, որ անշարժ պառկած կլինի հողի տակ, բայց ինձ համար հիմա մխիթարական է մտածել, որ քո ձեռների վրա գուցե կզգա թեթև մի հպում։

Եվ իմ դեմքը կպատկերվի քեզ ու քո աչքերի փակ արտևանունքների տակից կհոսեն արցունքներ, նման այն արցունքներին, որ մենք, հուզված Գեղեցկությամբ, թափեցինք մի ժամանակ քեզ հետ միասին, օ, դո՛ւ, իմ միակ ընկեր։

օ, դո՛ւ, որին ես սկսել եմ այնքան խորն ու այնպես քնքշորեն։

Դեկտեմբեր, 1878

ԱՎԱՆԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Օրերն իրար ետևից անցնում են անհետ, միօրինակ և արագ։

Սաստիկ արագ թռավ կյանքը, արագ և անաղմուկ, ինչպես գետի հոսանքը գահավիժելուց առաջ։

Թափվում է նա հավասար և հարթ, ինչպես ավազն այն ժամացույցի մեջ, որ պահում է ոսկրոտ ձեռքում Մահվան կերպարանքը։

Երբ ես պառկում եմ անկողնում, և խավարը պատում է ինձ ամեն կողմից, միշտ պատկերանում է հոսող կյանքի այդ թույլ ու անընդհատ խշխշոցը։

Ես չեմ ափսոսում, չեմ ափսոսում այն, ինչ դեռ կարող էի անել... Ինձ համար ծանր է։

Ինձ թվում է, կանգնած է մահճակալիս մոտ այն անշարժ կերպարանքը... Մի ձեռքում ավազի ժամացույցն է, մյուսը նա դրել է իմ սրտի վրա...

Եվ ցնցվում, և ճմլվում է կրծքիս մեջ իմ սիրտը՝ ասես շտապում է զարկելու իր վերջին հարվածները։

Դեկտեմբեր, 1878

ԵՍ ՎԵՐ ԿԱՑԱ ԳԻՇԵՐԸ

Ես վեր կացա գիշերն անկողնուց... Ինձ թվաց, թե մեկը տվեց անունս... այնտեղ, մութ պատուհանից այն կողմ։

Ես դեմքս հպեցի ապակուն, լարեցի լսողությունս, հառեցի հայացքս — և սկսեցի սպասել։

Բայց այնտեղ, պատուհանի այն կողմը, միայն ծառերն էին աղմկում — միակերպ և խառն — և համատարած ծխա-

ցող ամպերը, որ, թեպետև շարժվում էին ու փոխվում անդադար, մնում էին միշտ նույնը և նույնը... Ո՛չ աստղեր երկնքում, ո՛չ կրակներ՝ երկրի վրա։ Տխուր և խեղդիչ է այնտեղ... ինչպես և այստեղ՝ իմ սրտում։

Բայց հանկարծ հեռվում, ինչ-որ տեղ, ծնվեց աղերսալի մի հնչյուն և, աստիճանաբար ուժեղանալով ու մոտիկանալով, հնչեց մարդկային ձայնով ու ցածանալով և նվաղելով՝ սլացավ մոտիցս։

«Մնաս բարով, մնաս բարով, մնաս բարով»,— լսեցի ես նրա նվաղումների մեջ։

Ա՜խ։ Այդ բոլորն իմ անցյալն է, իմ երջանկությունը, բոլորը, բոլորը, ինչ ես փայփայել ու սիրել եմ, ընդմիշտ ու անվերադառնալիորեն հրաժեշտ է տալիս ինձ։

Ես խոնարհվեցի իմ թռած կյանքին, և պառկեցի անկողնում... ինչպես գերեզմանում։

Ա՜խ, երանի թե գերեզմանում։

Հունիս, 1879

ԵՐԲ ԵՍ ՄԵՆԱԿ ԵՄ

Կրկնորդ

Երբ ես մենակ եմ, բոլորովին ու երկար ժամանակ մենակ, հանկարծ ինձ սկսում է թվալ, թե ինչ-որ մեկն էլ է գտնվում նույն սենյակում, նստած իմ կողքին, կամ կանգնած իմ ետևը։

Երբ ես ետ եմ դառնում կամ աչքերս հառում եմ դեպի այն կողմը, որտեղ պատկերացնում եմ նրան, պարզ է, որ ոչ ոքի չեմ տեսնում։ Անհետանում է նույնիսկ նրա ներկայության զգացումը...

Բայց մի քանի ակնթարթից հետո այն նորից է վերադառնում։

Երբեմն գլուխս երկու ձեռքիս մեջ եմ առնում և սկսում մտածել նրա մասին։

Ո՞վ է նա, ի՞նչ է նա... Նա օտար չէ ինձ... Նա ինձ ճանաչում է, ես էլ նրան եմ ճանաչում... Կարծես նա իմ հարազատն է... և մեր միջև անդունդ կա։

Ոչ մի հնչյուն, ոչ մի խոսք չեմ սպասում նրանից... Նա նույնպես համր է, ինչպես և անշարժ... Բայց և այնպես նա ինձ ասում է, ասում է ինչ-որ անորոշ, անհասկանալի, սակայն ծանոթ մի բան։ Նա գիտի իմ բոլոր գաղտնիքները։

Ես նրանից չեմ վախենում... Բայց նրա հետ ինձ անհարմար եմ զգում ու իմ ներքին կյանքի համար չէի կամենա այդպիսի մի վկա ունենալ։ Եվ այնուհանդերձ նրա մեջ առանձին, օտար գոյություն չեմ զգում։ Արդյոք դու իմ կրկնորդը չե՞ս, իմ անցյալ ես։ Այո՛, այդպես էլ կա։ Մի՞թե այն մարդու — ինչպես հիշում եմ ես ինձ — և այժմյան իմ միջև չկա ամբողջ մի անդունդ։

Բայց նա իմ թուլությամբ չէ, որ գալիս է, կարծես նա իր կամքն ունի։

Ուրախալի չէ, եղբայր, մենակության անդուրեկան այցելությունը ոչ քեզ, և ոչ ինձ համար։

Բայց սպասիր... Երբ ես մեռնեմ, մենք կձուլվենք իրար, իմ անցյալ, իմ ներկա ես — ու ընդմիշտ կսլանանք անդառնալի ստվերների աշխարհը։

Նոյեմբեր, 1879

ՍԻՐՈ ՈՒԼԻՆ

Բոլոր զգացումներն էլ կարող են հանգել սիրո, կրքի, բոլորը. ատելությունը, կարեկցությունը, անտարբերությունը, ակնածանքը, բարեկամությունը, ահը, անգամ արհամարհանքը։ Այո՛, բոլոր զգացմունքները... բացի մեկից՝ երախտագիտությունից։

Երախտագիտությունը — պարտք է։ Ամեն մարդ վճարում է իր պարտքերը... Իսկ սերը — փող չէ։

Հունիս, 1881

ՖՐԱԶ

Ես վախենում եմ, ես խուսափում եմ ֆրազներից, բայց ֆրազի ահն էլ դարձյալ պրետենզիա է։

Այդպես, այդ երկու օտար բառերի միջև — պրետենզիայի և ֆրազի միջև — այնպես էլ թավալվում ու օրորվում է մեր բարդ կյանքը։

Հունիս, 1881

ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Պարզություն, պարզություն։ Քեզ անվանում են սուրբ։ Բայց սրբությունը մարդկային գործ չէ։

Հեզությունը, ա՜յ, դա հասկանալի է։ Նա տրորում է, նա հաղթում է հպարտությունը։ Բայց մի մոռանա, հենց հաղթանակի զգացումի մեջ կա արդեն իր հպարտությունը։

Հունիս, 1881

ԲՐԱՀՄԱՆ

Բրահմանը, նայելով իր պորտին, կրկնում է «օմ» բառը, և հենց դրանով մոտենում աստվածության։

Բայց կա՞ մարդկային ամբողջ մարմնի մեջ ավելի նվաղ աստվածային մի բան, մարդկային ունայնության հետ կապն առավել հիշեցնող մի բան, քան հենց այդ պորտը։

Հունիս, 1881

ԴՈՒ ԱՐՏԱՍՎԵՑԻՐ

Դու արտասվեցիր իմ վշտի համար, և ես արտասվեցի իմ հանդեպ ունեցած քո կարեկցությունից։

Սակայն և դու արտասվեցիր քո վշտի համար, միայն դու այն տեսար իմ մեջ։

Հունիս, 1881

ՍԵՐ

Բոլորն ասում են՝ Սերն ամենավսեմ, ամենաերկրային զգացմունքն է։ Ուրիշի ես ը արմատացել է քոնի մեջ, դու ընդլայնվել ես և դու խախտված ես. դու մարմնով հիմա անէացել ես, ու քո ես ը մահացած է։ Բայց միս ու արյուն ունեցող մարդուն վրդովում է նույնիսկ այդպիսի մահը։

Հարություն են առնում միայն անմահ աստվածները։

Հունիս, 1881

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

— Ինչո՞ւ դուք այդպես թանկ եք գնահատում հոգու անմահությունը,— հարցրի ես։

— Ինչո՞ւ։ Որովհետև այն ժամանակ ես կտիրեմ հավիտենական, անկասկածելի Ճշմարտությանը... Իսկ դրա մեջ է, ըստ իս, բարձրագույն երանությունը։

— Ճշմարտությանը տիրելո՞ւ մեջ։

— Իհարկե։

— Ներեցեք. ի վիճակի՞ եք դուք պատկերացնելու հետևյալ տեսարանը։ Հավաքվել են մի քանի երիտասարդ մարդիկ, վիճում են իրար հետ... Եվ հանկարծ ներս է վազում նրանց մի ընկերը։ Նրա աչքերը փայլում են արտասվոր փայլով, նա շնչասպառվում է հիացմունքից, հազիվ կարող է խոսել։ «Ի՞նչ կա, ի՞նչ կա»։— «Բարեկամներս, լսեցեք, ինչ իմացա ես, ինչպիսի ճշմարտություն։ Անկման

անկյունը հավասար է բեկման անկյանը։ Կամ, ահա թե ինչ. երկու կետերի միջև ամենակարճ ճանապարհը ուղիղ գիծն է»։— «Մի՞թե, օ՜, ինչ երանություն»,— գոռում են բոլոր երիտասարդ մարդիկ և հուզված ընկնում են իրար գիրկ։ Դուք ի վիճակի չե՞ք պատկերացնելու այդպիսի մի տեսարան։ Սիծաղո՞ւմ եք... Բանն էլ հենց այդ է. ճշմարտությունը չի կարող երանություն տալ... Ա՛յ, արդարությունը կարող է. նա մարդկային է, մեր երկրային գործը... Արդարությունն ու իրավացիությունը։ Արդարության համար համաձայն եմ և մեռնել։ Ամբողջ կյանքը ճշմարտությունը գիտակցելու վրա է հիմնված։ Բայց ինչպե՞ս «տիրել նրան»։ Եվ դեռ երանություն գտնել նրա մեջ։

Հունիս, 1882

ԿԱՔԱՎՆԵՐԸ

Անկողնում պառկած, հյուծված տևական և անելանելի հիվանդությամբ, ես մտածում էի. ինչո՞վ արժանացա ես դրան, ինչի՞ համար պատժվեցի ես. ես, հատկապես ես։ Այս անարդարացի է, անարդարացի է։

Դեռահաս կաքավների մի ամբողջ ընտանիք — թվով քսան — խոնվել է խիտ ծղնոտի մեջ։ Նրանք սեղմվում են իրար, փորում փխրուն հողը, նրանք երջանիկ են։ Նրանց հանկարծ վախեցնում է շունը։ Նրանք միանգամից խմբով թռչում են, լսվում է կրակոցը, և կաքավներից մեկը՝ ջարդված թևով, ծանր վիրավորված, ընկնում է ու, դժվարությամբ քաշելով տոտիկները՝ մտնում է օշինդրի թփի տակ։

Մինչև շունը նրան կգտնի, դժբախտ կաքավը գուցե նույնպես մտածում է. «Մենք քսան հոգի էինք, բոլորն էլ ինձ պես... ինչո՞ւ հատկապես ես, ես ընկա կրակի տակ և պետք է մեռնեմ։ Ինչո՞վ ես արժանացա դրան, իմ մնացած քույրերի մեջ։ Այս անարդարացի է»։

Պառկի՛ր, հիվանդ արարած, մինչև որ մահը կգտնի քեզ։

Հունիս, 1882

NESSUN MAGGLOR DOLORE[1]

Կապույտ երկինքը, փետուրի պես թեթև ամպերը, ծաղիկների բույրը, երիտասարդ ձայնի քաղցր հնչյունները, ճաճանչափայլ գեղեցիկությունն արվեստի մեծ ստեղծագործությունների, երջանկության ժպիտը՝ կանացի սքանչելի դեմքի վրա, և այդ դյուցական աչքերը... Ինչի՞, ինչի՞ համար են այդ ամենը։

Գարշելի, անօգուտ դեղի մի գդալը՝ երկու ժամը մեկ— ահա, ահա թե ինչ է հարկավոր։

Հունիս, 1882

ԸՆԿԵԼ Է ԱՆԻՎԻ ՏԱԿ

— Ի՞նչ են նշանակում այդ հառաչանքները։

— Ես տանջվում եմ, տանջվում եմ սաստիկ։

— Լսե՞լ ես դու առվակի ճողփյունը, երբ նա զարկվում է քարերին։

— Լսել եմ... Բայց ինչո՞ւ համար է այդ հարցը։

— Հենց նրա համար, որ այդ ճողփյունը և քո հառաչանքները նույն հնչուններն են և ուրիշ ոչինչ։ Միայն, ահա թե ինչ։ Առվակի ճողփյունը կարող է երբեմն շոյել մարդու լսողությունը, իսկ քո հառաչանքները ոչ ոքի էլ չեն խղճահարի։ Դու մի զսպիր դրանք, բայց հիշիր, դրանք բոլորն էլ հնչյուններ են, հնչյուններ, ինչպես կտրվող ծառի ճռնչյունը... Հնչյուններ՝ և ուրիշ ոչինչ։

Հունիս, 1882

---

1 Ոչկա ավելի մեծ վիշտ։

ՈՒ — Ա... ՈՒ — Ա...

Ես այն ժամանակ ապրում էի Շվեյցարիայում։ Շատ երիտասարդ էի, ինքնասեր ու մենակյաց։ Ծանր ու անուրախ էի ապրում։ Դեռ ոչինչ չճաշակած, ես արդեն տխրում, վհատվում ու չարանում էի։ Երկրի վրա ամեն ինչ ինչին ու գռեհիկ էր թվում ինձ և, ինչպես այդ հաճախ պատահում է տակավին երիտասարդ մարդկանց, գաղտնի չարախնդությամբ մի միտք էի փայփայում... ինքնասպանության մասին։ «Կապացուցեմ... վրեժ կառնեմ»,— մտածում էի ես... Բայց ի՞նչ ապացուցել... ինչի՞ համար վրեժ առնել։ Այդ ինքս էլ չգիտեի։ Իմ մեջ պարզապես արյունն էր եռում՝ ինչպես գինին՝ բերանը փակ ամանում... Իսկ ինձ թվում էր, թե պետք է թույլ տալ, որ դուրս թափվի այդ գինին, որ ժամանակն է ջարդելու այդ ճնշող ամանը։ Բայրոնն իմ կուռքն էր, Մանֆրեդն՝ իմ հերոսը։

Մի անգամ երեկոյան, ինչպես Մանֆրեդը, որոշեցի գնալ այնտեղ, դեպի լեռների գագաթները, սառույցներից ավելի բարձր, մարդկանցից հեռու, այնտեղ, ուր նույնիսկ բուսական կյանք չկա, ուր միայն մեռյալ ժայռերի կույտերն են, ուր սառչում է ամեն մի հնչյուն, ուր չի լսվում անգամ ջրվեժների մռնչյունը։

Ի՞նչ էի մտադիր անելու այնտեղ... չգիտեմ։ Գուցե վերջ պետք է տայի իմ կյանքին։

Ես ուղևորվեցի։

Գնում էի երկար, նախ ճանապարհով, հետո արահետով. միշտ վեր էի բարձրանում... դեպի վեր։ Վաղուց էի ետևում թողել վերջին տնակները, վերջին ծառերը։ Քարեր, միայն քարեր կային շուրջս, կտրող սառնությամբ ինձ վրա էր շնչում մոտիկ, բայց դեռ անտեսանելի ձյունը, ամեն կողմից սև քուլաներով առաջ էին շարժվում գիշերային սավանները։

Ես կանգ առա վերջապես։

Ի՜նչ սարսափելի լռություն։

Այդ Մահվան թագավորությունն է։

Եվ այստեղ ես մենակ եմ. միակ կենդանի մարդը, իր բոլոր ամբարտավան վշտերով, հուսահատությամբ ու ատելությամբ... Կենդանի, բանիմաց մարդը, որ հեռացել է կյանքից և չի կամենում ապրել... Գաղտնի սարսափը քարացրեց ինձ, բայց ես ինձ մեծ էի երևակայում. Մանֆրեդն եմ — և բավական է։

— Մենակ եմ։ Ես մենակ եմ,— կրկնում էի,— մենակ՝ մահվան դեմառդեմ։ Արդյոք ժամանակը չէ՞... այո... ժամանակն է։ Մնաս բարով, ինչին աշխարհ, ես դեն եմ շպրտում քեզ։

Եվ հանկարծ նույն ակնթարթում ինձ հասավ տարօրինակ, սկզբում անհասկանալի, բայց կենդանի... մարդկային մի ձայն... Ես ցնցվեցի... Ականջ դրի... Ձայնը կրկնվեց։ Բայց դա մանկան, ծծկեր երեխայի ճիչ էր... Այս անապատային, վայրենի բարձունքում, ուր ամեն մի կյանք թվում էր վաղուց և ընդմիշտ մեռած, մանկան ճի՜չ...

Իմ զարմանքն անսպասելիորեն փոխվեց մի այլ զգացմունքի, շնչասպառվող ուրախության զգացմունքի։ Եվ ես, առանց տարբերելու ճանապարհները, շեշտակի նետվեցի դեպի այդ ճիչը, դեպի այդ թույլ, խղճալի և փրկարար ճիչը։

Շուտով իմ առաջ առկայծեց դողացող մի կրակ։ Ես ավելի արագ վազեցի և մի քանի ակնթարթ հետո տեսա ցածրիկ մի խրճիթ։ Քարից կառուցված, հարթ կտուրներով սեղմված այդպիսի խրճիթները շաբաթներով որպես ապաստան են ծառայում ալպիական հովիվներին։

Ես հրեցի կիսաբաց դուռը և այնպես ընկա խրճիթ, ասես կրնկակոխ ինձ հետապնդում էր մահը։

Նստարանին նստած մի երիտասարդ կին ծիծ էր տալիս մանկանը... Հովիվը, երևի ամուսինը, նստած էր նրա կողքին։ Նրանք երկուսն էլ նայեցին ինձ, բայց ես ոչինչ չկարողացա ասել... միայն ժպտացի ու գլխով արի։

Բայրոն, Մանֆրեդ, ինքնասպանության ցնորք, իմ հպարտություն և իմ վեհություն, ո՞ւր կորաք բոլորդ...

Մանուկը շարունակում էր ճչալ. և ես օրհնեցի և՛ նրանց և՛ նրա մորը, և՛ սրա ամուսնուն։

Օ՜, մարդկային նոր միայն ծնվող կյանքի ջերմ ճիչ, դու փրկեցիր ինձ, դու բուժեցիր ինձ։

Նոյեմբեր, 1882

ԻՄ ԾԱՌԵՐԸ

Ես նամակ ստացա իմ համալսարանական, հարուստ կալվածատեր և արիստոկրատ նախկին ընկերոջից։ Նա ինձ իր մոտ, իր կալվածքն էր հրավիրում։

Ես գիտեի, որ նա վաղուց հիվանդ է, կուրացած, կաթվածահար, և հազիվ էր շարժվում։ Ես մեկնեցի նրա մոտ։ Նրան ես գտա իր լայնարձակ այգու ծառուղիներից մեկում։ Քուրքի մեջ փաթաթված — իսկ այդ ժամանակ ամառ էր — վտիտ, կծկված, աչքերի վերևը կանաչ ծածկոց, նստած էր նա ոչ մեծ սայլակում, որը ետևից հրում էին շքեղ սպասազգեստ հագած երկու սպասավոր։

— Ողջունում եմ ձեզ,— շշնջաց նա գերեզմանային ձայնով,— իմ ժառանգական հողի վրա, իմ դարավոր ծառերի հովանու տակ։

Նրա գլխի վրա վրանի պես փռված էր հզոր, հազարամյա կաղնին։

Եվ ես մտածեցի. «Ով հազարամյա հսկա, լսո՞ւմ ես, քո արմատների մոտ սողացող կիսամեռ ճիճուն քեզ իր ծառն է անվանում»։

Բայց ահա փչեց զեփյուռը ու թեթև խշշոցով սլացավ հսկայի խիտ տերևների միջով... Եվ ինձ թվաց, որ հին կաղնին բարեհոգի ու խաղաղ ծիծաղով պատասխանեց թե՛ իմ մտքերին, թե՛ հիվանդի պարծենկոտությանը։

Նոյեմբեր, 1882

Ո՞ՒՄ ՀԵՏ ՎԻՃԵԼ

— Վիճիր քեզնից խելոք մարդու հետ. նա քեզ կհաղթի... Բայց քո պարտությունից հենց դու կարող ես օգուտ քաղել քեզ համար։

— Վիճիր խելքով քեզ հավասար մարդու հետ. ում կողմն էլ որ մնա հաղթանակը՝ դու համենայն դեպս կճաշակես պայքարի բավականությունը։

— Վիճիր թուլամիտ մարդու հետ. վիճիր ոչ թե հաղթելու ցանկությամբ՝ և դու կարող ես նրան օգտակար լինել։

— Վիճիր նույնիսկ տխմարի հետ։ Ոչ փառք, ոչ էլ օգուտ կստանաս դու... և ինչո՞ւ երբեմն էլ չզվարճանալ։

— Մի վիճիր միայն Վլադիմիր Ստասովի հետ։

Հունիս, 1878

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախօրեին — թարգմ. Եր. Ղազարյան 5
Հայրեր և զավակներ — թարգմ. Մուշե Վարդապետ 192
Որսորդի հիշատակարան . . . . . .
Երմոլայն ու ջրաղացպանի կինը — թարմ. Ստ. Զորյան . 433
Մոռի ջուր — թարգմ. Ստ. Զորյան 445
Օվսյանիկովը — թարգմ. Ստ. Զորյան 455
Լգով — թարգմ. Ստ. Զորյան 476
Բեժին մարգագետինը — թարգմ. Ստ. Զորյան 488
Ծերունի Կասյանը — թարգմ. Հ. Մազմանյան 509
Բուրմիստրը — թարգմ. Հ. Մազմանյան 531
Գրասենյակը — թարգմ. Հ. Մազմանյան 547
Բիրյուկ — թարգմ. Ստ. Զորյան 566
Երկու կալվածատեր — թարգմ. Հ. Մազմանյան 575
Երգիչներ — թարգմ. Ստ. Զորյան 585
Կենդանի մասունք — թարգմ. Ստ. Զորյան 605
Մումու — թարգմ. Ստ. Զորյան 620
Արձակ բանաստեղծություններ — թարգմ. Գարեգին Բեռ . . . 649

Իվան Սերգեևիչ Տուրգենև
ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Иван Сергеевич Тургенев
ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Զուլֆակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ք. Վ. Բարսեղյան

ИБ — 5353

Հանձնված է շարվածքի 17.05.85։ Ստորագրված է տպագրության 25.10.85։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր. 38,64 պայմ. տպ. մամ., 38,95 պայմ. ներկ. թերթ, 33,1 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր՝ 1192։ Գինը՝ 3 ռ. 10 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.